


Ի Լ Ի Ա Վ Ա Ն

ΟΜΟΙΟΤΗΤΑΙΣ



ΠΑΤΡΙΚΟΝ ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΝ ΤΟΥ ΕΡΕΒΑΝ

**ΟΜΗΡΟΥ**




**ΙΛΙΑΣ**

ΜΕΤΑΦΡΑΣΙΣ ΓΙΟ  
ΜΕΡΤΙΣ ΧΕΡΑΝΙΑΝ

ΚΑΘΟΣΙΣ ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΥ ΤΟΥ ΕΡΕΒΑΝ  
ΕΡΕΒΑΝ 1987

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀՈՄԵՐՈՍ**



**ԻԼԻԱԿԱՆ**

Գրաբարից թարգմանեց՝  
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1987

ԳՄԴ 84(0)3  
Հ781

Կ ա գ մ ո ղ՝ Ս. Խ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

«Ուսանողի գրադարան» մատենաշարի խմբագրական հանձնաժողով՝  
ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,  
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐ. Ա., ՄԿՐՏՅԱՆ Լ. Մ.,  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ.

**Հոմերոս**

Հ781 Իլիական /Հոմերոս; Գրաբարից թարգմ.՝ Մ. Խերանյան.— Եր.:  
Երևանի համալս. հրատ., 1987.— 500 էջ.— (Ուսանողի գրան /Երևանի  
պետ. համալս.: Խմբ. հանձնաժողով՝ Համբարձումյան Ս. Ա. (նախա-  
գահ) և ուրիշ.)

470400000—13  
Հ  $\frac{470400000-13}{704(02)-87}$  31—87

ԳՄԴ 84(0)3

ГОМЕР

ИЛИАДА

(На армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван — 1987

## ԹԱՐԳՄԱՆՆԻ ԿՈՂՄԻՑ

Ձեռնարկելով Հոմերոսի «Իլիական»-ի հայերեն թարգմանությանը, լիովին զգացել եմ այդ աշխատանքի լրջությունը և սիրով ու համբերատար տքնությամբ աշխատել եմ հաղթահարել բոլոր դժվարությունները և իմ ուժերի ներածին չափով տալ այդ աշխարհահռչակ երկի թարգմանությունը իմ մայրենի լեզվով:

«Իլիական»-ի վրա աշխատելիս հիմնականում օգտագործել եմ Արսեն Բագրատունու գրաքար թարգմանությունը բնագրից (երկրորդ տպագրություն, 1893 թ., Վենետիկ), որը, ինչպես հայտնի է, լավագույնն է հայերեն թարգմանությունների մեջ իր հարազատությամբ և բանաստեղծական արվեստով: Բացի դրանից, ձեռքիս տակ ունեցել եմ նաև Գնեդիչի ռուսերեն բարձրորակ թարգմանությունը և Ղազիկյանի աշխարհաքար (սրբանսահայ) թարգմանությունը: Այս եռակի աղբյուրների միջոցով ես հնարավորություն եմ ունեցել տեսնելու բնագիր «Իլիականը» իր բոլոր մանրամասնություններով ու նրբերանգներով և աշխատել եմ նույնը հարազատորեն արտացոլել թարգմանության մեջ:

Հեկզամետրը, որով տաղաչափված է բնագիրը, դժվարհաղթահարելի և նույնիսկ անհնարին գտնելով հայերենում, մանավանդ այդօրինակ ծավալուն երկի համար, ես նախընտրել եմ յամբական տասնվեցորոնյա չափը, որը ամենահարմարը կարելի է համարել էպիքական-դյուցազներգական բանաստեղծության համար:

Ջանացել եմ պահպանել իր ժամանակի անտիկ լեզվական արտահայտչական ձևերն ու դարձվածքները՝ խուսափելով կեղծ պանդունանքի մեջ դնելու այն պարզությունը, որը հատուկ է այս երկին:

## ՀՈՄԵՐՈՍԻ ՊՈՆՄՆԵՐԸ

### 1. ԱՍՔ ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հռմբուի՝ ամբողջությամբ մինչև մեր օրերը պահպանված հշանավոր պոեմների՝ «Իլիականի» և «Ռիսականի», ինչպես և շատ ուրիշ՝ չպահպանված պոեմների սյուժեները վերցված են Տրոյական պատերազմի մասին սաքերի ընդարձակ շարքից: Երկու պոեմներից յուրաքանչյուրում այդ ընդարձակ շարքից միայն փոքրիկ դրվագներ են պատկերված: «Իլիականում» պատմվում են Տրոյական պատերազմի տասներորդ տարվա իրադարձությունները, ընդ որում շարադրանքում տեղ չեն գտել պատերազմի ավարտին վերաբերող դեպքերը, այն ավարտվում է տրոյական գլխավոր ռազմիկ Հեկտորի մահվան և թաղման նկարագրությամբ: Բոլոր նախորդող և հաջորդող իրադարձությունների մասին միայն թուղթիկ ակնարկներ են արվում, որոնք վիպում են, որ շարքի ընդհանուր բովանդակությունը շատ լավ ծանոթ է ունենոյիններին: Նույնը կարելի է ասել նաև «Ռիսականի» վերաբերյալ, որտեղ նկարագրվում են Տրոյայից վերադարձի ճանապարհին հերոսի՝ Ոդիսևսի թափառումների վերջին օրերը, նրա ժամանումը Իթակե կղզի և այնտեղ կատարվող իրադարձությունները: Թուղթիկ ակնարկվում են այլ իրադարձություններ, ինչպես, օրինակ, տասնամյա թափառումների ժամանակ Ռիսևսի արկածները (IX—XII), Տրոյայի կործանումը, մյուս հերոսների՝ Նեստորի, Մենելավոսի, Ագամեմնոնի վերադարձը (III—IV) և այլն:

Սակայն մենք գիտենք, որ մ. թ. ա. 8—6-րդ դարերում տալյական շարքի այլ դրվագներ ևս գրական մշակման են ենթարկվել: Այդ պոեմները հայտնի են «կիկլիկյան» (ցիկլիկ) անվան տակ: Մեզ են հասել միայն փոքրիկ պատուհիկներ, իսկ դրանց բովանդակությունը հիմնականում հայտնի է մ. թ. առաջին դարերի արձակ շարադրանքից Պոեմներում հիշատակվող բոլոր դեպքերի կապը պատկերացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ պատերազմի պատճառը հանդիսացող սկզբնական փաստին, շարժառիթ, որ հեքիաթներին է հատուկ:

Տրոյական արքա Պրիամոսի որդին՝ Պարիս-Ալեքսանդրն առևանգել էր Սպարտայի արքա Մենելավոսի գեղեցկուհի կնոջը՝ Հեղինենին: Անարգված Մենելավոսն օգնության է կանչում շատ թագավորների և ռազմիկների՝ Գիոմեդեսին, երկու Ալաքսանդրին, իմաստուն ծերունի Նեստորին, խորամանկ Ռիսևսին և ուրիշների: Բոլորի մեջ խիզախությամբ և ուժով աչքի էր ընկնում Պելևսի և աստվածուհի Թետիսի որդին՝ Արիլեսը՝ հարալյային Թեսալիայում բնակվող միմիդոնների առաջնորդը: Արշավանքի գլուխն է կանգնում Մենելավոսի ավագ եղբայրը՝ Ագամեմնոնը, Միկենքի և Արգոսի արքան: Չանգան դեպքերով, այդ թվում նաև Ագամեմնոնի դստեր՝ Իփիգենիայի զոհաբերումով ուղեկցվող երկարատև ժողովներից հետո սկսվում է ասքերում փառաբանված Տրոյական պատերազմը:

**2. «ԻՒՒԱԿԱՆՆԻ» ԲՈՎԱՆՆՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ըստ վերնագրի՝ «ԻՒՒԱԿԱՆՆԻ» պետք է լինեն այնուհետև Իլիոնի (Տրոյայի) վերաբերյալ: Սակայն իրականում այնտեղ բովանդակությունը շատ ավելի նեղ է, քան նրա անվանումն է. այնտեղ նկարագրվում է հունա-տրոյական պատերազմի միայն մի դրվագը: Պոեմի այլ-ժեճն ստույգ բնորոշվում է նրա առաջին իսկ տողերով.

*Երգեր, Մուսա, բենը երգիր Պելիսածին Աքիլևսի,  
Քենը դժնյա, որ անհամար ցավեր բերեց աքայիցոց:*

Բանաստեղծը դիմում է Մուսային՝ խնդրելով ոգեշնչել իրեն և հուշել երգի բովանդակությունը. դա երգ է Աքիլևսի քենի, զայրույթի մասին:

Այդ քենի պատճառը բացահայտվում է «ԻՒՒԱԿԱՆՆԻ» առաջին «Երգում»<sup>1</sup>: Տրոյացիներն արդեն տասներորդ տարին է դիմակայում են արքայական (հունական) զորքերի պաշարմանը, որոնք բանակել են քաղաքի և ծովի միջև գտնվող հարթավայրում, սաի դուրս քաշված նավերի դիմաց: Աքայացիներն ավերում և ավարում են մոտակա բնակավայրերը, այնտեղից գերիներ են վերցնում: Մի քաղաքի գրավման ժամանակ գերվել է նաև Ապոլլոնի քուրմ Բրիսեսի դուստրը՝ Բրիսեսիսը: Նրան, որպես պատվավոր պարգև, տվել են Ագամեմնոնին: Ագամեմնոնը ոչ միայն հրաժարվում է գերուհուն վերադարձնել հորը, չնայած վերջինիս աղերսանքներին և առաջարկած «ճոխ» փրկագինն, այլև անարգում է և կոպտորեն վռնդում: Վիրավորված քրմի աղաչանքին տեղի տալով՝ արքայացիների վրա զայրահամ Մարտին աստվածը նրանց՝ ժախտախտ է ուղարկում: Նրա սևտեսանելի պաթները սուրում են ճամբարում՝ մահացու հարված հասցնելով մարտիկներին: Աքիլևսը, փորձանքի պատճառը պարզելու համար, ժողով է հրավիրում, և գուշակ Կալքասը բացահայտում է Ագամեմնոնի մեղքը և մատնանշում, որ անհրաժեշտ է բախարսել Բրիսեսի խնդիրը: Վրդովված Ագամեմնոնն իր զայրույթն ուղղում է Աքիլևսի դեմ և հայտարարում, որ Բրիսեսիսի փոխարեն Աքիլևսից կիզի Բրիսեսիսին, որին զորքը, որպես պատվավոր պարգև, տվել էր Աքիլևսին: Կատաղած Աքիլևսն ուզում է ուժով պատշպանել իր իրավունքը, սակայն աստվածունի Աթենասը զսպում է նրան: Այդ ժամանակ Աքիլևսը հայտնում է, որ ինքը և իր միրմիդոններն այլևս չեն մատնացի կռվին և հեռանում է իր ռազմակալանը: Դրանից հետո, աստծուն հանդարտեցնելու համար, զոհեր են մատուցվում, Ագամեմնոնը Բրիսեսիսին վերադարձնում է հորը, իսկ Աքիլևսից խլում է Բրիսեսիսին: Վիրավորված Աքիլևսի խնդրանքով նրա մայրը՝ աստվածունի Թետիսը Օլիմպոս է գնում և Ջևսից խոսք առնում, որ նա կպատժի Ագամեմնոնին և արքայական զորքը՝ ոչ ոքին հասցված վիրավորանքի համար: Երգն ավարտվում է աստվածների խնջույքի նկարագրությամբ:

Երկրորդ երգում պատմվում է, թե ինչպես քնած Ագամեմնոնին Ջևսը ներշնչում է ճակատամարտ սկսել տրոյացիների դեմ, սակայն Ագամեմնոնն սկզբում ցանկանում է ստուգել ռազմիկների տրամադրությունը և նրանց առաջարկում է վերադառնալ հայրենիք: Ջինվորներն այդ առաջարկությունը ուղղակի իմաստով են բնորոշում և զանգվածաբար դիմում են դեպի նավերը: Այստեղ ներկայացվում է Թետիսիսի հետ կապված դրվագը: Երգի ավարտն ընդգրկում է արքայական նավատորմի («Նավահանդես») մանրամասն և սրողական ուժերի համատու թվարկումը:

Երրորդ երգից սկսած նկարագրվում են կռիվները: Տրոյացիները հույների դեմ հանդես են գալիս Պրիամոսի որդու՝ Հեկտորի գլխավորությամբ: Սակայն Պարիսն առաջարկում է՝ ճակատամարտը փոխարինել մենամարտով և կռվի է հրավիրում ցանկացած արքայացու: Մարտահրավերն ընդունում է Հեկտորի ամուսինը՝ Մեգեղավոսը: Մենամարտի ընթացքում

<sup>1</sup> Պոեմի բաժանամբ 24 երգերի սահմանված է ավերակերպան դիտնականների կողմից Տ. Ք. ա. 3-րդ դարում:

զինադադար է կնքվում, որը սրբագործվում է զոհերով: Տրոյական ավազանին աշտարակից հետևում է մեծամարտին, և Հեղինեն, որը նրանց էր մոտեցել, անուն առ անուն թվարկում է արաչական հերոսներին: Մինչդեռ այդ ժամակ Մենելալոսը հակառակորդին գևտին է տապալում, սակայն Ափրոդիտեն Պարիսին ծածկում է սշուշով և տեղափոխում է Տրոյա՝ Հեղինեի ննջասենյակը: Չհասկանալով, թե ուր անհայտացավ Պարիսը, Մենելալոսը փնտրում է նրան ամբողջ դաշտով մեկ:

Այդ ժամանակ (4-րդ երգի սկիզբը) Ջևն առաջարկում է քննարկել Հեղինեին Մենելալոսին վերադարձնելու հարցը: Աթենաս աստվածուհին, որ ցանկանում էր կործանել տրոյացիներին, նրանց դաշնակիցներից մեկին՝ Պանդարոսին, դրոյում է հետ արձակել Մենելալոսի վրա և, դրանով իսկ, խախտել զինադադարը: Վերջը վտանգավոր չէր, սակայն զինադադարի խախտումը աքայացիների վրդովմունքն է հարուցում, նրանք նետվում են տրոյացիների վրա, և մարտը նորոգվում է, ըստ որում, աստվածները հրահրում են հակառակորդներին:

Հինգերորդ երգը գրեթե ամբողջությամբ նվիրված է հույն հերոս Դիոմեդեսի սխարագործությունների նկարագրությանը: Նա բազում տրոյացիների է սպանում, այդ թվում նաև Պանդարոսին, բարով ծանր վիրավորում է տրոյական հերոս Էնիասին, որին փրկության է հասնում նրա մայրը՝ Ափրոդիտե աստվածուհին, և դուրս է քերում մարտադաշտից: Դիոմեդեսը հետապնդում է Ափրոդիտեին և, հաշվի չառնելով, որ իր առջև աստվածուհի է, նրան վիրավորում է ձեռքից: Վերջապես, նա վիրավորում է նաև հենց իրեն՝ պատերազմի աստված Արեսին:

Հույները զգալի գերակշռություն ունեն մարտում (VI): Տրոյական հերոս Գլաուկոսը և Դիոմեդեսը դադարեցնում են մեծամարտը, երբ նրանց խոսակցությունից պարզվում է, որ իրենց հայրերը բարեկամացած են եղել հյուրընկալության կապերով:

Համոզվելով, որ թշնամիների դեմ մարտնչելիս միայն մարդկային ուժերը բավարար չեն, Հեկտորը քաղաք է վերադառնում և հորդորում է մորը՝ Հեկաբեին, մյուս կանանց հետ միասին աղերսել Աթենաս աստվածուհուն, որպեսզի նա քաղաքից հեռու վաճի կործանումը: Ծանապարհին նա այցելում է Պարիսին, որպեսզի պարսավի նրան և հորդորի կռվին մասնակցելու: Ի դեպ, նա ուզում է հակառակորդներին որոնք նրանցին Աստիանաքսեսին (Ուտանիշխան) և հանդիպել կնոջը՝ Ադրմաքեին, սակայն նրան տանը չի գտնում, այլ հանդիպում է Սքեական դարսասների մոտ՝ քաղաքից դուրս գալիս: Այս հանդիպումը նկարագրվում է նրանց տեսակցության նշանավոր դրվագում:

Հեկտորի վերադարձից հետո հաջողությունը թեքվում է տրոյացիների կողմը (VII): Հեկտորը մեծամարտի հրավեր է կարդում աքայացիներին: Վիճակահանությանը նրա դեմ է դուրս գալիս Տելամոնյան Ալաքսը, սակայն մեծամարտն ընդհատվում է մութն ընկնելուն պես, և նրանք նվերներ են փոխանակում: Սպանվածներին թաղելու համար զինադադար է կնքվում: Աքայացիները պարսպապատում են իրենց ճամբարը և խրամատներ են փորում նրա շուրջ:

Հաջորդ օրը (VIII), վերջապես, կատարվում է Ջևի խոստումը, և տրոյացիները պարտության են մատնում աքայացիներին: Դիոմեդեսը, Տևկրոսը և մյուսներն ապարդյուն փորձում են կանգնեցնել տրոյացիներին, որոնք Հեկտորի գլխավորությամբ գրավում են հունական ճամբարի պարսպի մոտ գտնվող բանակատեղին: Երբ վրա են հասնում անհաջողությունները, Ագամեմնոնը գիտակցում է, թե ինչ սխալ է թույլ տվել վիրավորելով Աքիլլեսին (IX), և, բարեկամների խորհրդով, նրա մոտ պատվիրակություն է ուղարկում, որպեսզի հաշտվի հետը: Սակայն վիրավորված Աքիլլեսը անդորվելի է, և պատվիրակությունը ձեռնուձեռն է վերադառնում: Նույն գիշերը (X) Դիոմեդեսն ու Ոդիսևսը, օգտվելով խավարից, հետախուզության են մեկնում: Դաշտում նրանք ձերբակալում են տրոյական լրտես Դոլոնին և, նրանից իմանալով տրոյական ուժերի դասավորությունը և թրակիական արքա Հուսոսի՝ իր հրաշալի ձիերով տրոյացիներին օգնության գալու վերաբերյալ կարևոր լուրը,



թափանցում են տրոյական ճամբար և սպանում նրանց 12 դաշնակիցներին, այդ թվում նաև Հոնեստին, որի նշանավոր ձիերով բարեհաջող վերադառնում են իրենց ճամբարը:

Առավոտյան կոփվը վերսկսվում է (XI). Ազամեմնոնը մեծ սխրանքներ է գործում, իսկ մյուս ուազմիկները օգնում են նրան: Սակայն տրոյացիները եռանդազին հարձակվում են, և հունական շատ զորավարներ, այդ թվում Դիոմեդեսը, Ուլիսեսը, Ազամեմնոնը և ուրիշներ, վիրավորվում են և թողնում մարտադաշտը: Այդ տեսնելով, Աքիլլեսն ուղարկում է իր մտերիմ ընկերոջը՝ Պատրոկլեսին, իմանալու ինչն ինչոց է: Հույները պաշտպանվում են իրենց ճամբարում, իսկ տրոյացիները բոլոր կողմերից նեղում են նրանց (XII): Հեկտորը հսկայական քարով կործանում է դարպասները և ներխուժում ճամբար: Ջլսից թաքուն, հույներին օգնության է հասնում Պոսեյդոնը (XIII): Հունական ճամբարում կատաղի մարտ է ծաղկալվում:

Հունական զորահրամանատարները խորհուրդ են հրավիրում (XIV). այդ ժամանակ աստվածուհի Հերան Ջևսին հրապարտում է և քննեցնում: Օգտվելով դրանից, Պոսեյդոնը խրախուսում է հույներին: Այաքսը քարով հարվածում է Հեկտորին, սակայն ընկերները նրան դուրս են բերում մարտադաշտից: Հույներին հաջողվում է հախահարված տալ տրոյացիներին: Արթուրանալով, Ջևսը հասկանում է Հերայի նենգությունը և բոլոր աստվածներին արգելում օգնել հույներին, իսկ տրոյացիներին հնարավորություն է տալիս զգալի գերակշռություն ձեռք բերել (XV): Հեկտորը դարձյալ ճամբար է ներխուժում և այրում նավերից մեկը: Տելամոնյան Այաքսը նրան դժվարությամբ էտ է մղում. Պատրոկլեսն Աքիլլեսին նկարագրում է հույների ծանր վիճակը և թույլտվություն խնդրում նրանց օգնության գնալու (XVI): Աքիլլեսը նրան թույլ է տալիս ետ մղել տրոյացիներին հունական ճամբարից, սակայն խստիվ պատվիրում է չտարվել հաղթանակով և չհեռանալ ճամբարից, այլ շուտափույթ վերադառնալ ուազմակալան: Առավել մեծ հաջողության համար նա Պատրոկլեսին է տալիս իր զենք ու զրահը: Դրանք տեսնելով, տրոյացիները Պատրոկլեսին ընդունում են Աքիլլեսի տեղ: Կատաղի մարտ է տեղի ունենում: Հաջողությունից ոգևորված Պատրոկլեսը մոռանում է Աքիլլեսի պատվերը և հասնում մինչև Տրոյայի պարիսպները: Սակայն Ապոլլոնից ոգեշնչված տրոյացիները շրջապատում են նրան և նույնիսկ վիրավորում: Վերջապես նրա դեմ է ելնում Հեկտորը: Նրանց մեղամարտն ավարտվում է Պատրոկլեսի մահով: Մարտը թեժանում է նրա դիակի շուրջ (XVII): Հեկտորն ավարտում է նրա զենքն ու զրահը, ուզում է տիրել նաև դիակին, բայց այն դժվարությամբ պաշտպանում են Մեգեյավոսը, Այաքսը և ուրիշներ: Նեստորի որդին՝ Անտիոքը, Աքիլլեսին հայտնում է Պատրոկլեսի մահվան յուրը (XVIII): Աքիլլեսը ողբում է ընկերոջ կորուստը և անիծում իր անգուսպ քենը, որ այդպիսի կորուստի հասցրեց: Նրան սփոփում է մայրը՝ Թետիս աստվածուհին, բայց այժմ Աքիլլեսը մտածում է միմիայն ընկերոջ համար վրեժ լուծելու մասին և նրա զայրույթն ուղղվում է Հեկտորի դեմ: Նա ուզում է մարտի նետվել, սակայն զենքեր չունի, անզեն կանգնում է անրապատենշին և բարձր գոռոցով սարսափահար անում տրոյացիներին: Դրանից օգտվելով՝ հույները փախցնում են Պատրոկլեսի դին:

Աստվածուհի Թետիսն ուղևորվում է Հեփեստոս աստծու դարբնոցը, և սա նրա խընդրանքով նոր զենքեր է կտում Աքիլլեսի համար: Պոսեյդոն մանրամասն նկարագրվում է Հեփեստոսի աշխատանքը, բայց ամենից երկար բանաստեղծյ կանգ է առնում վաճառի նկարագրության վրա, որտեղ պարզորոշ ներկայացված են կենցաղային դրվագներ. դրանք պատկերացում են տալիս հուներույան դարաշրջանի խաղաղ աշխուտանքալին առօրյայի մասին (XVIII, 480—610): Հաջորդ առավոտյան զենքերը պատրաստ էին, և Թետիսը դրանք հանձնում է Աքիլլեսին (XIX): Վերջինս հաշտվում է Ազամեմնոնի հետ և նրանից ընծաներ ընդունում, ապա սպասազինվում է և կռվի ելնում: Նրա մարտավարքին յձված ձիերից մեկը զարմանահրաշ կերպով նրան մոտարտա մահ է գուշակում, սակայն դա նրան չի կասեցնում, քանի որ նրա բոլոր մաքերն ուղղված էին այն բանին. որ իր պարտքը հատուցի սպանված ընկերոջը:

Նոր կոիվ է բորբոքվում: Այս անգամ Ձևը թույլ է տալիս աստվածներին մասնակցել ժանկանագույների ճակատամարտին (XX): Աքիլլեսը բազում տրոյացիների է կոտորում և ամենուր փնտրում է Հեկտորին, սակայն վերջինս, Ապոլլոնի թելադրանքով, խուսափում է նրա հետ հանդիպելուց: Տրոյացիներից ոմանք փախչում են դեպի քաղաք, մյուսները՝ հեպի Քաանթոս գետը (XXI): Աքիլլեսը հասնում է նրանց և անխնա կոտորում՝ գետի նունը լցնելով դիակներով: Գետաատվածը, բարկանալով իր ջրերն ապականելու համար, ելնում է ընդդեմ Աքիլլեսի: Սակայն Հեփեստոսն օգնության է հասնում և, հրկիզելով գետի ջրերը, ստիպում է Քաանթոսին հանդարտվել: Ողջ մնացած տրոյացիները պատուսպարվում են քաղաքի պարիսպների ետևում: Կոիվը թեժանում է նաև աստվածների միջև (XXI, 397—511):

Հեկտորին պաշտպանելու նարտակով Ապոլլոնը, տրոյացի Ագեմոնի կերպարանքն ունած, գրավում է Աքիլլեսի ուշադրությունը և նրան ստիպում հեռանալ մարտադաշտից: Երբ Աքիլլեսը բացահայտում է խաբեությունը, նետվում է Հեկտորին փնտրելու (XXII): Ծերունի՝ Պրիամոսը և մայրը՝ Հեկաբեն իզուր են խնդրում Հեկտորին թարնվել քաղաքի պարիսպների ետևը: Հեկտորը մեծակ է մնում, պարտքի գիտակցումը նրան թույլ չի տալիս իտապել կռիվից: Սակայն, երբ Աքիլլեսը մտնում է, սարսափը պատում է նրան, և նա սկսում է վախշել: Աքիլլեսը հետապնդում է: Նրանք կրեք անգամ պտույտ են գործում քաղաքի պարիսպների շուրջ: Այդ ժամանակ պաշարին նետնող Ձևը կշեռքի նժարներին է դնում: Աքիլլեսի և Հեկտորի վիճակները: Հեկտորի վիճակը ցած է իջնում: Ապոլլոնը պետք է լրի Հեկտորին: Աքիլլեսին օգնության է հասնում Աթենասը: Հեկտորի եղբայրներից մեկի՝ Քեփիոսի կերպարանքով նա կեղծորեն հարդոյում է Հեկտորին ընդունել մարտը: Սակայն երբ Աքիլլեսի նիզակը վրիպում է, Աթենասն անհկատելիորեն նիզակը վերադարձնում է արքայական ներսին: Հեկտորի նիզակը դիպչում է Աքիլլեսի վանագին և ետ մղվում, իսկ Աքիլլեսը երկրորդ հարվածով Հեկտորին գետին է տապալում: Մահից առաջ Հեկտորը աղերսում է Աքիլլեսին իր դիակը վերադարձնել հարազատներին, սակայն ապադրույն: Մեռնելիս նա Աքիլլեսին վաղահաս վախճան է գուշակում՝ Պարիսի և Ապոլլոնի նկտից: Սակայն ոչինչ չէր կարող ետ պահել չարացած և վրեժխնդրության ծարավի Աքիլլեսին: Նա Հեկտորի դիակը կապում է իր մարտակառքից և քարշ տալիս նրան դաշտով մեկ: Տրոյացիները, այդ թվում նաև Պրիամոսն ու Հեկաբեն, պարսպի վրայից տեսնում են այդ ածեը: Անդրոմաքեն լսում է նրանց լացուկոծը: Նա վազում է դեպի աշտարակը և, այդ սարսափելի տեսարանից ուշակորույս, վաթ է ընկնում: Երգն ավարտվում է Անդրոմաքեի ողբով (XXII, 478—515):

Աքիլլեսի վրեժխնդրությունը բավարարված է Հեկտորի մահով և ապա նրա դիակն անարգելով: Սակայն Պատրոկլեսի դիակը դենն անթաղ է, և Աքիլլեսին երազում հայտնելով նրա սովերը շուտափույթ թաղում է խնդրում: XXIII գլխում նկարագրվում են Պատրոկլեսի թաղմանը նախորդող տրոյական գերիների զոհաբերումը, ապա զոհվածի պատվին կազմակերպված խաղերը: Այդ մրցույթին մասնակցում են արքայական բոլոր գլխավոր հերոսները:

«Իլիականի» վերջին՝ XXIV երգում նկարագրվում է, թե ինչպես ծեր Պրիամոսը, աստվածների թելադրանքով, գիշերով ուղևորվում է արքայական ճամբար որդու դիակը վրկագնելու նպատակով: Հերմես աստվածը ուղեկցում է նրան: Սեփական հորը հիշեցնող Պրիամոսի հուզիչ խոսքը ներգործում է արքայական ներսի վրա, որը քիչ առաջ մոլեգնում էր և ծարավի էր արյան: Այժմ միայն Աքիլլեսի զայրույթն իջնում է: Նա վերադարձնում է Հեկտորի դին և նույնիսկ խոստանում է տրոյացիներին՝ տասներկու օրով զինադադար կնքել, որպեսզի կարողանան նրան պատվով թաղել: Այս տեսարանը, որտեղ ցնցող ուժգնությամբ է նկարագրված իր որդու դահնի ձեռքելը համբուրող հոր վիշտը, խորը դրամատիզմով է հագեցված և համաշխարհային գրականության ամենահարաշալի տեղծագործությունների թվին է պատկանում:

Հեկտորի թաղման նկարագրությամբ ավարտվում է «Իլիականը»:

## Ց. «ՈՂԻՍԱԿԱՆՆԻ» ԲՈՎԱՆԳՎԱԿՈՒՓՅՈՒՆԸ

Տրոյական պատերազմի ավարտից մետ առաջնորդները, իրենց շուկաունե-  
րի հետ միասին, ավարով ու գերիներով վերադարձան հայրենիք: Այդ նկարագրվել է մի  
քանի պոեմներում, որոնք միավորված են մեկ շնչհամար՝ «Վերադարձներ» վերնագրի  
տակ: Դրանց թվին է պատկանում նաև «Ողիսակալը», որի բովանդակությունն է կազ-  
մում Ողիսակի վերադարձը դեպի տուն՝ Իթակե կղզին:

Պոեմի առաջին Երգում գործողությունը կատարվում է Իթակեում: Տրոյայի կործա-  
նումից անցել է տասը տարի, սակայն Ողիսակը դեռևս չի կարողանում վերադառնալ հայ-  
րենիք: Կրան խանգարում է Պոսեյդոն աստվածը, որը զայրույթով նետապնդում է նրան իր  
որդուն՝ կիկլոս Կոլիթեմին կորացնելու համար: Վերջապես, զգավելով Պոսեյդոնի բացա-  
կալությունից՝ օլիմպիական մյուս աստվածները որոշում են կայացնում Ռիսևոսին վերա-  
դարձնել հայրենիք: Տանը՝ Իթակեում, Ողիսակին պատում են հավատարիմ կիկլո՝ Պենկո-  
պեն և հոր բացակայությանը հասակ ասած որդին՝ Տելեմաքը: Օգավելով կղզում տիրող  
անիշխանությունից՝ տեղական ազնվականության ներկայացուցիչներից շատերը հավակնում  
են ամուսնանալ Պենկոպեի հետ՝ այն հաշվով, որ նաև իշխանություն ձեռք կբերեն: «Փե-  
սացուններ», թվով 108 հոգի (XVI), իրենց տեր ու տնօրեն են զգում Ռիսևոսի տանը,  
ամեն օր կերվում են սպալում և մսխում նրա ունեցվածքը: Պենկոպեն այնևս ի վիճակի  
չէ դիմագրավել նրանց նկրտումներին, նրա խորամանկությունները բացանայտված են: Ուստ  
երիտասարդ լինելով, Տելեմաքը նույնպես ոչինչ չի կարող անել: Այդ ժամանակ Ողիսակի  
մշտական հովանավորը՝ Աթենասը, նրա բարեկամներից մեկի՝ Մենետրի կերպարանքով  
հաղտնվում է Տելեմաքին և նրան հուշում դիմել Ողիսակի հին ընկերների՝ հոր մասին  
նրանցից որևէ տեղեկություն ստանալու համար:

Հաջորդ օրը (II) Տելեմաքը ժողովողական հավաք է հրավիրում և դիմում ժողովու-  
կաններին՝ խնդրելով իրեն մի նավ տալ, որպեսզի ստաչիկացում մեկնի հորը որոնելու:  
Սակայն «փեսացունները» ժողովը ցրում են՝ այն ապօրինի նստաբեկով, և մերժում են օգ-  
նություն ցույց տալ: Այդ ժամանակ Աթենասն ինքը, ձեր Մենետրի կերպարանքն առած,  
Տելեմաքի համար մի նավ է ձեռք բերում և զգնում է նրան զաղսնի մեկնել: Սկզբում  
Տելեմաքը ժամանում է Պիրոս՝ ձեր Նեստորի մոտ (III), որը նրան շատ սիրալիր է ընդու-  
նում, բայց ոչինչ չի կարողանում հայտնել Ողիսակի մասին: Նա խորհուրդ է տալիս դիմել  
Մենելավոսին: Տելեմաքը լծակառքով մեկնում է Մենելավոսի մոտ՝ Սպարտա, քանի որ  
նա մյուսներից ավելի ոչ էր վերադարձել հայրենիք (IV): Մենելավոսը նրան է հաղոր-  
դում այն տեղեկությունները, որ ինքը առաջել էր Եգիստոսում Էդամ ժամանակ իմաստուն  
Ճերուսի Պրոթեոսից, թե, իբր, Ողիսակը ողջ է և գտնվում է հավիթմանսու Կալիպսոյի  
կղզում:

Միայն սկսած 5-րդ Երգից պատումն անմիջականորեն կապվում է Ողիսակի հետ: Աստ-  
վածները դարձյալ հավաքվել են Օլիմպոսում և որոշում են Ողիսակին վերադարձնելու հույ-  
րենիք: Աստվածների սուրհանդակ Հերմեսն ուղևորվում է Օգիգիա կղզին, որտեղ հավիթ-  
մանսու Կալիպսոյի մոտ հայրենիքի կարտից տաչորվում է Ողիսակը: Հավիթմանսու պի-  
րեղ է նրան և ջանկանում է նրա կիկլո դառնալ՝ խոտտանալով Ողիսակին անմահություն  
պաշտպանել: Հերմեսը Կալիպսոյին հայտնում է աստվածների կամքը, և նա, անկարող լինե-  
լով դրան հակառակել, դառնորեն արտասպում է Ողիսակից բաժանվելիս: Ողիսակը նավ է  
կառուցում և նախապարհվում: Տասնյոթ օր նա բարեհաջող նավում է դեպի հարազատ  
սպիտակ, սակայն վերադարձած Պոսեյդոնը նկատում է նրան և դաժան փոթորիկ է բարձրաց-  
նում: Ռիսևոսին կործանելու համար: Տրվում է փոթորիկի սքանչելի նկարագրությունը: Սա-  
կայն մյուս աստվածներն օգնում են Ողիսակին, ու թեև նրա նավը խորտակվում է, նրան  
հաջողվում է ափ դուրս գալ Աթերիոս կղզում, որտեղ բնակվում էին փեսայները (թեակներ):  
Ալիքենոսի հետ երկարատև պայքար մղելուց հոգևած՝ Ողիսակը խոր թուն է մտնում առափ-  
նյա թփուտներում՝ գետաբերանից ոչ հեռու, թաղվելով տերևների կույտի մեջ:

Ատավոռչան, աստվածունի Աթենասի Աերշնչանքով, իր ստրկութիւնների հետ միասին ծովափ է գալիս արքայադուստր Կավսիկեմ՝ ապիսակեղենը լվանալու (VI): Ողիւնը օգնություն է խնդրում Արամից, և Արամ խորհրդով գնում է տեղի թագավոր Ալքիմոսի ապարանքը (VII), որտեղ ընկնում է թագուհու: Արեւտի ոտքերը և թախանձում օգնել իրեն վերադառնալ հայրենիք: Թագուհին խոստանում է օգնել, որը ապա հաստատում է նաև արքան: Ողիւնը փեակների մոտ սրտաքայք ընդունելություն է գտնում: Նախապետական սովորույթի համաձայն, Ալքիմոսը Արամ պատվին խնջույք է կազմակերպում՝ առանց նույնիսկ Արամին հարցնելու (VIII): Խնջույքի ժամանակ հանդես է գալիս անդ (երգիչ) Գեմոնկոնը, որը գովերգում է Ողիւնի սիրամեքերը Տրոյայի մոտ: Ողիւնը չի կարողանում առանց արցունքների լսել այդ երգերը և դեմքը ծածկում է թիկնոցով: Նկատելով այդ, Ալքիմոսը հարցնում է, թե ինչու է նա լալիս, ուզում է իմանալ Արամին, իսկ երբ իմանում է, խնդրում է Արամ պատմել իր արկածները:

Հաջորդ չորս Երգերում (IX--XII) արվում են Ողիւնի տասնամյա թախառումների պատմությունները. կիլոնների քաղաքի առումը և դրան հաջորդած պարտությունը, յոթֆագուների մոտ ապրելը, որտեղ Արամ ուղեկիցներից ոմանք ճաշակում են լոտոսի պտուղները և աշխարհում ամեն ինչ մոռանալով չեն ուզում նույնիսկ հայրենիք վերադառնալ, հրեշտակոր կիկլոս Գոլիթեմին կուրացնելը, որը խնդել էր Ողիւնի վեց ուղեկիցներին, քամիների աստված Էոլից այցելելը, որտեղ Էոլը Ողիւնին է տալիս քամիներով լցված պարկը, որը նրա ընկերները, Իթակեից ոչ հետո, բաց են անում և դուրս թողնում աչնուղ փակված քամիներին, որի հետևանքով նավերը ետ են քշվում, տասնմեկ նավերի և Ողիւնի ընկերներից շատերի կործանումը մարդակեր-լեստրիգոնների ձեռքով և Արամ փրկվելը մեծ-միակ նավով ու ժամանումը կախարհորհի Կիրկեի կղզին: Կիրկեն Ողիւնի ուղեկիցներից մի քանիսին խոզ է դարձնում, իսկ Ողիւնը Հեյմեսի օգնությամբ կարողանում է հաղթահարել նրա կախարհանքները, որից հետո մի տարի մնում է Արամ մոտ և Արամ հյուրընկալությունը վազելում: Կիրկեն, Ողիւնին օգնելու ցանկությամբ, Արամ խորհուրդ է տալիս հայրենիք վերադառնալուց առաջ այցելել Հադեսի թագավորության շեմը և կանչել գուշակ Տիրեսիոսի սովերը: Դրա համար Ողիւնը գալիս է Օվկիանոսի ափը՝ համոզեթյալ աշխարհի նախաշեմը: Այստեղ Արամ հաջողվում է լսել ոչ միայն Տիրեսիոսի գուշակությունները, այլև զրուցել իր մոր՝ Անթիկեի սովերի հետ, տեսնել շատ հերոսների՝ Ագամեմոնի, Աքիլլեսի, Ալաքսի սովերները, ակամատես լինել մեծ մեղավորների՝ Տանտալոսի, Սիզիֆոսի տառապանքներին և այլն: Զրույցներից նա իմանում է, թե ինչ է կատարվում իր հայրենիքում և սպազայի վերաբերյալ ցուցումներ է ստանում: Ապա հետևում են Կիրկեի կղզուց հեռանալու և այլ արկածների պատմությունները. թե ինչպես Ողիւնը բարեհաջող կերպով անցնում է իրենց երգով նավաստիներին հրապորդող սիրենաների կղզու մոտով, ինչպես մի քանի ընկերների է կորցնում Ակիլլա և Քարիբդա հրեշների մոտով անցնելիս, թե ինչպես Թրինակիսա կղզում իր ընկերները մարթում են արեգակի աստված Հելիոսի սրբազան ցույները, որի համար Ալաք շարդուսիշուր է անում նավը, և Ողիւնի բոլոր ուղեկիցները զոհվում են. միայն ինքը՝ նավաբեկորից կառչելով, փրկվում է. ու աչիքները Արամ հետոմ են Օգիգիս կղզին, ուր ապրում էր հավերժահարս Կալիպսոն: Այսպես է ավարտվում Ողիւնի հիշողությունների պատմությունը:

Լսելով Ողիւնի պատմությունը՝ փեակները Արամ պարզեցնում են տալիս, գինում ու ճանապարհ դնում (XIII): Նավը Իթակեի ափեյն է հասնում գիշերով: Թիափարները բնած Ողիւնին զգուշությամբ դուրս են բերում և իր ընծաների հետ միասին դնում քարանձավը: Արթնանալով, Ողիւնն սկզբում չի ճանաչում հարազատ կղզին, քանի որ Աթենասն այն թանձր մշուշով էր պատել: Ողիւնին ներկայանալով երիտասարդ հովիի կերպարանքով՝ Աթենասը Արամ խորհուրդներ է տալիս, թե ինչպես նա պետք է պաշարի փեսացուների դեմ և Արամ ուղարկում է խոզապահ Եվմեոսի մոտ: Անճանաչելի դարձնելու համար Աթենասը Արամ գառամյալ մուրացիկի կերպարանք է տալիս:

Եվմեոսը հյուրին սրտաքայք է ընդունում (XIV): Ողիւնն իր մասին հնարովի մի բան

է պատմում, սակայն ճիշատակում է, որ ըստ իր տեղեկությունների, Ռդիսկը ողջ է և շուտով պետք է վերադառնա: Այդ ընթացքում Աթենասը երազում հայտնվում է Տելեմաքին, որը դեռևս Մենելայովսի մոտ էր (XV) և նրան պատվիրում է վերադառնալ՝ հայրենիք և գնալ Եվեոսի մոտ: Տելեմաքը գայիս է և Եվեոսին ուղարկում պալատ՝ Պենելոպեին հայտնելու: Վերադարձը (XVI): Ռդիսկը նետ մեծակ մնալով՝ Ռդիսկը նրան հայտնում է իր ուլ լինելը, և նրանք երկուսով սկսում են փնտրություններ անել: Պենելոպեին պատժելու ուղիներ որոնել:

Հաջորդ օրը Տելեմաքը գնում է պալատ (XVII): Ռդիսկը ժամանակ անց Եվեոսն այցելել է քերում նաև Ռդիսկին: Ծանապարհին հովիվ Մելանթոսը, որ փնտրությունների սպասափորն էր դարձել, հայհույում է նրանց ու ծաղրածանակի ենթարկում: Պալատում մտաբանների տեսք ստանալով Ռդիսկը ողորմություն է խնդրում փնտրություններից, որոնցից ամենազանազանը՝ Անտիկոնը, Սուսարանը նետում է նրա վրա: Պենելոպեին դրանից վրդովվում է, իսկ երբ իմանում է, որ այդ մտաբանը Ռդիսկից տեղեկություն ունի, ցանկանում է անձամբ լսել նրան: Փնտրություններն նա շուտափույթ ամուսնության հույսեր է ներշնչում, և նրանք ցրվում են իրենց տները (XVIII): Ռդիսկը գիշերը մնում է պալատներում և Տելեմաքի հետ միասին դուրս է տանում գեները այն դահլիճից, որտեղ տեղի էին ունենում խնջույքները (XIX): Ուշ գիշերով նրան տանում են Պենելոպեի մոտ: Նա հայտնում է, որ ինքը Կրեոն կղզուց է և Ռդիսկին հանդիպել է այն ժամանակ, երբ նա, Տրոյա մեկնելիս, այցելել էր Կրեոն: Նա ճշգրիտ նկարագրում է Ռդիսկի արտաքինը և հագուստը ու ավելացնում, որ, ըստ ստացված լուրերի, Ռդիսկը ողջ է և մոտ ժամանակներս պետք է տուն դառնա: Հուզված Պենելոպեին, չիմանալով ինչպես փոխհատուցել այդ բարի լուրի համար, հրամայում է ծեր ստրկուհի Եվիկլեին՝ Ռդիսկի դալակին, լվանալ հյուրի ոտքերը: Եվիկլեին ոտքի սպիտակ ճանաչում է Ռդիսկին, սակայն վերջինս խտրիվ պատվիրում է ոչ մեկին չքանալ գաղտնիքը:

Հաջորդ օրը փնտրությունները դարձյալ կերտվում են սարքում Ռդիսկի պալատում և ծրագրում են սպանել Տելեմաքին (XX): Պենելոպեին նկուղից քերում է Ռդիսկի աղեղն ու նետերը և առաջարկում է նետաձուլության մրցույթ կազմակերպել: Նա իրեն ամուսին կրնալի նրան, ով կկարողանա իրար ետևից շարված 12 օղակների միջով անցկացնել նետը (XXI): Ուշ մեկը չի կարողանում նույնիսկ աղեղնալարը ձգել: Մինչ այդ, Ռդիսկը, համոզվելով, որ Եվեոսը և մի քանի ուրիշ ծառաներ հավատարիմ են իրեն, նրանց հայտնում է իր ուլ լինելը և պատվիրում պատրաստ լինել կույի: Անտիկոնն առաջարկում է մրցումները նետանգել հաջորդ օրվան, սակայն Ռդիսկը խնդրում է իրեն թույլ տալ արձակել նետը: Տելեմաքը, ուշադրություն չդարձնելով փնտրությունների ծաղրածանակին, նրան է տալիս աղեղը, և նա առանց դժվարության անցկացնում է նետը՝ բոլոր 12 օղակների միջով: Որից հետո Տելեմաքին նշան է անում սկսել մարտը և անսպասելիորեն նետահարում է Անտիկոնին, ապա՝ Եվիկլեին: Վերջապես փնտրությունները գլխի են ընկնում, թե ով է կանգնած իրենց առջև, և սկսում են պաշտպանվել: Ռդիսկին դավաճանած ստրուկներից մեկը նրանց զենք է քերում: Մարտն սկսվում է, որի ժամանակ բոլոր փնտրությունները կոտորվում են: Տելեմաքի խնդրանքով Ռդիսկը խնայում է միայն մուսետիլ Մեդոնտեպին և անդ Թեմիսին, որը խոստանում է գովերգել Ռդիսկի սխրանքները:

Պենելոպեին իր ննջարանում ոչինչ չգիտեր անցուդարձի մասին (XXIII): Եվիկլեին շտապում է նրա մոտ և հայտնում, որ Ռդիսկը վերադարձել է և կոտորել բոլոր փնտրություններին: Այդ լուրը Պենելոպեին միանգամայն անհավանական է թվում, այնուամենայնիվ նա ներքև է իջնում տեսնելու, թե ինչ է տեղի ունեցել: Երբ Ռդիսկը նրան իր մասին հավաստի վկայություններ է տալիս և հիշում, թե ինչպես էր ինքն իր ձեռքով իր կտրած ձիթենու բնի վրա հարդարել իրենց ամուսնական անկողինը, միայն այդ ժամանակ է Պենելոպեին ճանաչում ամուսնուն: Երկար բաժանումից հետո ամուսինների հանդիպման այս տեսարանը մեծ վարպետությամբ է պատկերված:

24-րդ Երգի սկզբում նկարագրվում են սպանված փնտրությունների հողիները դժոխքում: Հետո պատմվում է, թե ինչպես է Ռդիսկը մեկնում իր հոր՝ Լալերտեի մոտ, իսկ

այդ ժամանակ սպանվածների հարազատները ապստամբում են Ռոխնաի դեմ Եվպիթեսի՝ Անտիոնոսի հոր գլխավորությամբ: Ռոխնաը հոր, որդու և հավատարիմ ստրուկների հետ միասին դիմագրավում է նրանց, և երբ ապստամբության առաջնորդներն սպանվում են, մյուսները համաձայնում են խաղաղություն կնքել: Այստեղ գործում աջակցություն է ցույց տալիս Աթենաս աստվածուհին:

#### 4. ՊՈԵՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ

Հռոմերոսի պոեմները խորը ուսումնասիրելու դեպքում կարելի է նկատել, որ դրանք կառուցված են շատ մեծ արվեստով և նրանց գեղարվեստական տեխնիկան շատ հեռու է նախնական ժողովրդական ստեղծագործություններից հատուկ պրիմիտիվ պարզությունից: Յուրաբանչյուր պոեմի բովանդակությունը ոչ միայն մի հերոսի շուրջն է կենտրոնացած, այլև մի գործողության շուրջ. սա դեռևս Արիստոտելն է նկատել: Նա իր «Պոետիկայում» գրել է. «Նա (Հռոմերոսը) «Ռոխնականի» պատումը կենտրոնացրել է, ինչպես ասում ենք, մի գործողության շուրջ. հիշտ այդպես նաև «Իլիականը»:

Եվ իրոք, «Իլիականը» պոեմ է Աքիլլեի քենի վերաբերյալ, և քանաստեղծի ողջ ուշադրությունը դրան է ուղղված: Մյուս բոլոր իրադարձությունները կապվում են Աքիլլեի քենի հետ: Ըստ որում, ամբողջ գործողությունը ներկայացնում է աքայլացիների կողմից Տրոյայի տասնամյա պաշարման միայն հիսուն օրերը և ավարտվում է Հեկտորի համաժողովրդական թաղման հուզիչ տեսարանով: Սակայն նեղիմակը երբեմն անդրադառնում է անցյալին՝ շարադրանքը պարզ դարձնելու համար, ինչպես, օրինակ, աքայլացիների և տրոյացիների ուժերի թվարկումը (II), արալական զորքի գլխավոր հերոսների քննության գրումը, որը տրվում է Հեղինեի քերականով և մի քիչ ուշացած է՝ պատերազմի տասներորդ տարում (III), արալական ճամբարի պայտապատումը՝ դարձյալ պատերազմի տասներորդ տարում (VII): Որոշ դրվագներ կարծես թե օրգանապես կապված չեն հիմնական շարադրանքի հետ, ինչպես, օրինակ, Դիոմեդեսի սխրանքները (V), Հեկտորի և Անդրոմաքեի հանդիպումը (VI), Դիոմեդեսի և Ռոխնաի գիշերային հետախուզությունը (X), Աքիլլեի վահանի նկարագրությունը (XVIII) և այլն:

«Ռոխնականի» բովանդակությունը ևս աչքի է ընկնում իր ամբողջականությամբ: Նրա հիմնական թեման քաղմաշարչար և խորամանկ հերոսի վերադարձն է հայրենիք: Ամբողջ գործողությունը կապվում է հերոսի թափառումների վերջին 40 օրերի հետ, իսկ նրա կրած բոլոր ստատպանքների մասին լրիվ պատկերացում է տրվում Ալքինոս արքայի պալատում խնջույքի ժամանակ Ռոխնաի պատմածից: Գեղարվեստական այս հնարանքը վկայում է հին հունական քանաստեղծական արվեստի զարգացման բարձր մակարդակը: Փոքր-ինչ մեկուսացված է պոեմի սկզբի մասը (I—IV), որտեղ միայն հիշատակվում է Ռոխնաի անունը, իսկ գլխավոր գործող անձը նրա որդին է՝ Տելեմաքը: Կառուցվածքի կառարելությունն ու պոեմի ամբողջականությունը խախտվում են 5-րդ Երգում, որտեղ աստվածների ժողովի նկարագրությունը ընդհանուր ասմամբ Առաջին Երգի սկզբի տեսարանի կրկնությունն է: Պոեմի բովանդակության մեջ առանձնանում են երկու մաս. 1) Ռոխնաի մեկնումը հավերժահարա Կալիպսոյի կղզուց և ժամանումը փեակների երկիրը (V—XII), 2) վերադարձը, Իթակե և փեսացուների հետ տեսած դատաստանը (XIII—XXIII): 24-րդ Երգը մի տեսակ լրացում է, որտեղ նկարագրվում են Ռոխնաի հանդիպումը հոր հետ և սպանված փեսացուների ազգականների ապստամբությունը:

Այսպիսով, պոեմների քննությունը հանգեցնում է երկակի եզրակացության. այդ ըստեղծագործություններից յուրաքանչյուրում, կառուցվածքի անհերքելի ամբողջականությամբ հանդերձ, առանձին հատվածներ քաղմազանություն են դրսևորում, իսկ որոշ դրվագներ էլ շեղվում են պատմի հիմնական բովանդակությունից: Այս հանգամանքը պոեմների ստեղծման վերաբերյալ զանազան մտորումներ է ծնում՝ արդյոք դրանք մեկ-մի ստեղծագոր-

ծողի՞ են պատկանում, թե՞ պոեն են ներմուծված տարբեր ժամանակներում տարբեր երգիչների (անդների) կողմից:

«Հռոմեոսի ստեղծագործությունը հին ժամանակների հիասքանչ համրագիտարանն է»—«Ըլխականի» ոտներեն թարգմանության առաջաբանում գրում է Ն. Դ. Գնեդիչը: Բնութագրելով Հռոմեոսի ստեղծագործական մեթոդը, նա այն դիպուկ կերպով այսպես է բնորոշում. «Հռոմեոսը չի նկարագրում առարկան, այլ կարծես թե աչքիդ առաջ է դնում. դուք այն տեսնում եք: Այս կախարդանքը պարզության և պատումի ուժի մեջ է»<sup>2</sup>: Աշխարհի այսպիսի անմիջական ընկալումը չէր սահմանափակվում մասնավորի և եզակիի վերարտադրությանը, այն հնարավորություն էր տալիս բացահայտել ընդհանուրը, բնորոշը՝ նույնիսկ առասպելական կերպարներում, և, չնայած չափազանցությանը (հիպերբոլա) և բարձրագույն ուժերի միջամտությանը հերոսների վարքագծի արտաքին պատճառարանմանը, արտահայտել մարդկային զգացմունքների և կրթերի: Բնականությունը՝ անհաստատվածությունն ողջ ինքնատիպությանը հանդիսանում էր: Դա բնական, տարբերակիչն ռեալիզմ էր:

Երկու պոեմներում էլ ռեալիստական վառ գույներով են վերարտադրվում իրական կյանքի երևույթները և հունական ցեղերի կենցաղը, և դա այժմ՝ հնագիտության նորագույն հայտնագործություններից հետո, բոլորովին ակնառու է: «Ըլխականում» գերազանցապես ռազմական ժամանակաշրջանի կյանքն է արտացոլված, իսկ «Ռիխականում»՝ զբոսայգիական խաղաղ կյանքի տեսարաններ են:

Պատերազմը «Ըլխականի» հերոսների տարերքն է. բնօրյում, հաճախ մարտը ներկայացվում է ոչ թե որպես ժողովրդական զանգվածների ընդհարում. այլ հանդես են գալիս բացառիկ ուժով, խիզախությամբ և հնտությամբ աչքի ղնկնող առանձին հերոսներ, որոնք հեշտությամբ հասարակ զինվորների մի ողջ բազմություն կարող են կոտորել, իսկ բուն մարտը այդ հերոսների միջև է տեղի ունենում: Մարտնշողներն սկզբում միմյանց վրա են նետում ճիգակները, ապա՝ քարեր, իսկ հետո ձեռնամուկների են անցնում: Այդպիսի մեծամարտերից հատկապես կարևոր է Աքիլլեսի և Հեկտորի մեծամարտը (XXII): «Ըլխականում» հերոսները հաճախ նկարագրվում են մարտավարներով: Ավելի ուշ շրջանում Հուսանատանում այդ մասին միայն հուշ էր մնացել, սակայն կրեոսա-միկենական դարաշրջանի հուշարձանները բազմիցս այդպիսի տեսարաններ են ներկայացնում:

«Ըլխականում» հաճախ նկարագրվում են առանձին հերոսների սիրագործությունները. 5-րդ Երգում՝ Դիոմեդեսինը, 11-ում՝ Ագամեմնոնինը, 16-ում՝ Մենելավոսինը, եթե նա Պատրոկլեսի դին է պաշտպանում արդյացիներից: Սակայն մեծահարաչալի սխրանքը՝ Աքիլլեսի հաղթանակն է Հեկտորի նկատմամբ: Աքիլլեսն, այդպիսով, մարտական սխրանքի մարմնավորումն է:

Մեծամարտից առաջ, սովորաբար, հերոսների միջև երկխոսություն է տեղի ունենում ուժեղը պարծենում է: Թույլի առջև, բացի այդ, մարտիկն ուզում է իմանալ, թե ում. հետո գործ ունի: 6-րդ Երգում (119—233) պատմվում է, թե ինչպես Դիոմեդեսը և արդյացիների դաշնակից Գլավկոսը մեծամարտին նախորդող երկխոսությունից պարզում են, որ իրենց նախնիների միջև հյուրընկալական հարաբերություններ են եղել, ուստի նրանք միմյանց ձեռք են սնդում, զենքեր փոխանակում և հաշտ ու խաղաղ բաժանվում: Երբեմն մեծամարտի համար հատուկ պայմաններ են ստեղծվում. մարտնչողների ազատությունն ապահովելու և կողմնակի օգնության միջամտությունը կանխելու համար զինադադար է կնքվում, որը սրբագործվում է երդումներով և զոհաբերություններով, ինչպես, օրինակ, Պարիսի և Մենելավոսի մեծամարտի ժամանակ (II): Ալաբսի և Հեկտորի մեծամարտը տևում է ժիջև մութ ընկնելը և ընդհատվում է մունեստիկների կանչով. կողմերը նվերներ են փոխանակում: Սակայն ավելի հաճախ ակառժատես ենք լի-

<sup>2</sup> Гнедич И. Ш., Стихотворения, с. 313.

նում դաժան արդյունահեղություն և սպանությունների տեսարանների): Հաղթողն շտապում է ավարել սպանվածի գեները և տիրել նրա դիակին նրա հարազատներից հարուստ փրկակազիս ւտանալու հունար, քանի որ, հին պատկերացմամբ, մահից հետո անթաղ մնալը մեծ դժբախտություն էր: Միայն մեծ ատելությունը կարող է ստիպել հաղթողին հրաժարվել այդ սովորույթից, ինչպես սկզբում անում է Աքիլլեսը՝ Հեկտորից Պատրոկլեսի մահվան վրեժն առնելու:

Ապրելով մշտական պատերազմների ու սպանությունների մթնոլորտում, բանաստեղծն ասեցուցիչ ռեալիզմով է նկարագրում մահվան և մահաձգորեն սեղմում է հողը, ծնկները թողնում են: Հաղթողի դաժանությունն ու բռնությունը ևս վառ կերպով են նկարագրվում: Թեբեի, Լեսբոս կղզու գրավման ժամանակ ամբողջ արական բնակչությունը կոտորվում է, իսկ կանայք գերվում են: Անենագեղեցիկ կանանց, որպես՝ պատվավոր պարգև, տալիս են առաջնորդներին: Պատերազմի այս սարսափներն է մատնացույց անում Փենիքսը՝ հողորդելով Աքիլլեսին զայել իր զայրույթը (IX, 611—13): Քաղաքի գրավման ցնցող պատկեր է նկարագրում Պրիամոսը, երբ Հեկտորին աղերսում է Աքիլլեսի զայրույթից թաքնվել քաղաքի պարիսպների ետևում (XX, 61—70):

«Իլիականում» բանաստեղծը հազվադեպ է անդրադառնում խաղաղ կյանքի տեսարաններին, ուստի առավել մեծ է ուզվի տեսարանների և Հեկտորի ու Անդրոմաքեի՝ խորը մարդկայնությամբ հազեցված հանդիպման տեսարանի նակադրությունը 7-րդ երգում: Բացառություն են նաև խնջույքների և զոհաբերությունների նկարագրությունները (I, II, VII և այլուր): Նախաղ կյանքի տեսարանների ենք հանդիպում նաև համեմատություններում, որոնցով այնքան հարուստ է պոեմը: Հատկապես պետք է հիշատակել այն տեսարանները, որոնք Հեփեստոսը պատկերում է Աքիլլեսի վահանին (XVIII, 492—609): Ի դեմս Հեփեստոսի, տեսնում ենք իսկական արհեստավոր-դարբնի: Այս պատկերները պարզորոշ կերպով արտահայտում են ժողովրդի, նաև հենց իր՝ բանաստեղծի համակրանքը խաղաղ կյանքի նկատմամբ:

«Ռիսակահան», ընդհանրապես, մեզ տեղափոխում է գերազանցապես խաղաղ առօրյա կենցաղի իրավիճակը, թեպետ այդ խաղաղ կյանքը նույնպես հաճախ ընդհատվում է արյունալի իրադարձություններով: Այստեղ ևս շատ ենք հանդիպում խնջույքների նկարագրությունների՝ Ռիսևսի ապարանքում փեսացուների սարքած գինաբուրբերից և արքա Ալքիմոսի խնջույքից մինչև խոզապահ Եվմեոսի համեստ հյուրասիրությունը: Կյանքի տոնական կողմը, ինչպես երևում է, խիստ գրավում է բանաստեղծին: Դրա հետ մեկտեղ «Ռիսակահանում» առկա են նաև երկրի տնտեսական կյանքի շատ մանրամասներ, ինչպես օրինակ, Ալքիմոսի ալգու (7), Եվմեոսի ախոռների (14) նկարագրությունները և այլն: Նույնիսկ կիկլոպ Պոլիֆեմի տնտեսությունը շատ ճշմարտացի է նկարագրվում (9): Մեծ ուշադրություն է հատկացվում կանացի աշխատանքի նկարագրությանը: Դրանով զբաղվում են և՛ թագուհին՝ Պենելոպեն, Հեղինեն, Արետեն, և՛ նրանց սպասուհիները, և՛ հավերժանարս Կալիպսոն, և՛ կախարդուհի Կիրկեն, իսկ փեակների արքայադուստր Նավսիկեն ստրկուհիների հետ գնում է ծովափ՝ սպիտակեղեն լվանալու:

Բանաստեղծի վարպետությունը հատկապես ուժեղ է դրսևորվում առանձին դրվագներում, որոնցից կազմվում է ողջ պատումը: Որոշ դրվագներ իրենց գեղարվեստական ուժով վաղուց ի վեր գնահատվել են իբրև համաշխարհային արժեքներ: Այսպես, խորը դրամատիզմով է հազեցված այն դրվագը, որտեղ ծերունի Պրիամոսը հափքույրում է իր որդիների դահճի՝ Աքիլլեսի ձեռքերը («Իլիական», XXIV): Հեկտորի և Անդրոմաքեի հանդիպման տեսարանն իր ուժով չի զիջում նախորդին: «Ռիսակահանում» հոգեբանորեն ամենանորբ տեսարաններից են Ռիսևսի ոտքերը լվանալիս՝ Եվրիկլեի՝ ոտքի սպիկց նրան ճանաչելը, (XIX), Ռիսևսի և Պենելոպեի երկու հանդիպումների դրվագները, որտեղ Պենելոպեն, որ քսան տարի սպասում էր ամուսնուն, հիմա, տեսնելով նրան իր առջև, չի կարողանում ճանաչել նրան, մինչև որ Ռիսևսից ստույգ վկայություններ չի ստա-



նում: «Ուխականի» սքանչելի դրվագներից է նաև փոթորկի նկարագրությունը 5-րդ Ծրգում: Թեև բանաստեղծն ասում է, թե Պոսելդոնն է առաջ բերում այդ փոթորիկը, սակայն աստծո մասնակցությունն անկաստ է մնում և միայն ինն մարդու աշխարհընկալման արտահայտությունն է: Ամեն ինչ շատ բնական է կատարվում, որպես բնական տարերք. մարդ պետք է ինքը նավաբեկության ենթարկվի, փոթորկի մեջ ընկնի, խեղդվի, ծովի ջուր կուտա, ձեռքը զգի առաջին իսկ պատահած գերանին, որպեսզի կարողանա այսքան ճշմարտացի պատկերել այդ ամենը: Մշտապես ծովի հետ գործ ունեցող հույների համար սա շատ ծանոթ և բնորոշ տեսարան է: Այստեղ ոչ միայն ամեն ինչ շատ ստույգ է նկարագրված, այլև՝ խորը ռեալիզմով, որը, ինչպես տեսանք, շատ լավ հարմարվում է էպոսին հատուկ չափագանցության (հիպերբոլիզմ) և ֆանտաստիկայի հետ:

Այս բոլոր տեսարաններում և մանրամասն նկարագրություններում, չնայած բանաստեղծի ձգտմանը՝ իդեալականացնել հեռավոր անցյալը, արտահայտվում է նրա ժամանակակից կյանքի ճշմարտությունը: Իսկ այդ ֆոնի վրա, որպես արտացոլվող կյանքի ընդհանրացում, իրենց բնորոշ գծերով երևում են դարաշրջանի մարդիկ՝ Հոմերոսի հերոսները:

Պոեմների կառուցվածքում և հիմնական միտքը բացահայտելու համար մեծ դեր է խաղում հատուկ բանաստեղծական հեգմանաբլբ (իրոնիա). որևէ նպատակի ձգտող հերոսն անգամ չի կասկածում, որ իր «անմտությամբ» միշտ հակառակ արդյունքն է առանում: Այսպես, Ագամեմոնը, կարծելով, թե իր ճառով զինվորների ոգին կբարձրացնի, ընդհակառակն, փախուստի է մատնում նրանց (II): Հաճախ մարտիկը շտապում է վերցնել սպանված հակառակորդի գեներքը, սակայն այդտեղ մահը վրա է հասնում հենց իրեն: Սա հատկապես կարևոր է գլխավոր հերոսների կապակցությամբ: Ագամեմոնը հանդգնած էր, որ կարող է յուր գնալ նաև առանց Աքիլլեսի օգնության սակայն խորապես հիասթափվում է, ընդունում իր գործած սխալը և պատգամավորների միջոցով իզուր հաշտություն է խնդրում (IX): Սակայն Աքիլլեսը նույնպես, անզուտպ զայրույթի պահին բացարձակապես մերժում է հաշտությունը, սակայն երբ նրա հետևանքով կորցնում է իր լավագույն ընկերոջը, արդեն ինքն է համաձայնում հաշտվել, Ագամեմոնից ընձաներ է ընդունում և անիծում իր քեզը: Այսպիսի «հեգմանք» պարզ է դառնում, երբ համադրում են իրարից հետո ընկած նման դրվագներ: Այս հնարանքը ապահովում է նման դրվագների ներքին կապը, միաժամանակ բացահայտում է բանաստեղծական մտահղացման միասնականությունը:

#### 5. ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Հոմերոսի պոեմները անհատականորեն կերտված տիպական հերոսների մի ողջ պատկերասրահ են ներկայացնում: «Ուխականի» գործող անձերից յուրաքանչյուրը արտացոլում է հունական ժողովրդական ոգու որևէ կողմը»<sup>3</sup>,—գրում է Բելիսևսկին: Այս եզրակացությամբ չհամաձայնել չի կարելի:

«Ուխականի» կենտրոնական կերպարը թեսալացի երիտասարդ հերոս Աքիլլեսն է՝ Պելևսի և ծովային աստվածուհի Թետիսի որդին: «Աքիլլեսը հերոսական Հունաստանի բանաստեղծական ապոթեոզն է»<sup>4</sup>—պատկեր է նրան բնութագրում Բելիսևսկին: Աքիլլեսը կատարյալ և վեհաճանգ բնավորություն է. նա մարմնավորում է մարտական խիզախության հմերի այն պատկերացումը, որն ամբողջ պոեմի գաղափարական հիմքն է հանդիսանում: Պարտքի զգացումը նրա համար ամեն ինչից վեր է: Ընկերոջ մահվան համար վրեժխնդիր լինելիս նա պատրաստ է զոհաբերել սեփական կյանքը (XIX, 431—33): Նյութ խորթ են խորամանկությունն ու երկերեսանիությունը: Սեփական ուժի և վեհության գիտակցությունը նրան տվորեցրել է հրամայել: Երբ Ագամեմոնը վիրավորում է Աքիլլեսին, նա պատրաստ է տեղ-

<sup>3</sup> Белинский В. Г. Разделение поэзии на роды и виды. Полн. собр. соч., т. 5, с. 38.

<sup>4</sup> Там же, с. 39.

նուտեղը սպանել նրան (I, 202—207): Աքիլլեսի զայրույթը ամենաբուռն ձևերով է դըրսևորվում: Տրոյացիներից Պատրոկլեսի մահվան վրեժն առնելիս նա նման է Ինչ-որ կործանիչ դևի, նա դիակներով է լցնում գետի հունը և մարտնչում հենց գետաստծու դեմ (XXI): Խելահեղություն է նաև Հեկտորի դիակի անարգումը, Պատրոկլեսի գերեզմանի վրա տասներկու տրոյացի գերիների զոհաբերումը: Սակայն այդ անզուսպ հերոսը ազնիվ և քնքուշ սիրտ ունի. ամենքից առաջ նա է անհանգստանում՝ բանակում տարածված համաճարակը տեսնելով, պաշտպանում է ժողովրդին ուժեղների հնարավոր վիրավորանքներից (I, 89—95): Աքիլլեսը հուզիչ հոգատարություն է հանդես բերում Պատրոկլեսի հանդեպ: Հրաշայի է, որ նա ներկայացվում է երգիչ-քանաստեղծի հատկանիշներով (IX, 197): Վերջապես, հետաքրքրական է, որ այդ դաժան, քիմախոտությամբ լցված ռազմիկը փափկում է՝ իր առջև տեսնելով Հեկտորի արտասովոր և աղերսող հորը՝ Պրիամոսին, որը եկել էր որդու դիակի ետևից և հիշեցնում էր իր սեփական հորը:

Աբաշական գորքի գլխավոր հերոսի կերպարին համապատասխանում է տրոյական ռազմիկ Հեկտորի կերպարը: Թեև քանաստեղծը երբեք չի ստուգում, որ Հեկտորը թշնամի ժողովրդի ներկայացուցիչն է և որի նկատմամբ նույն վերաբերմունքը չի կարող լինել, ինչ ցեղակիցների, այնուամենայնիվ նա Հեկտորի կերպարը մեծ համակրանքով է կերտում: Պրիամոսի ծերության պատճառով տրոյական զորահրամանատարությունը ստանձնել է Հեկտորը և նրա վրա է ընկած պատերազմի ողջ ծանրությունը: Դժվար պահերին նա ամենատեղեկուն է և ավելի մեծ վտանգի է ենթարկվում, քան մյուսները: Նա պատվի քարձր գիտակցությամբ է օժտված և բոլորի հարգանքն ու սերն է վայելում: Նրան ճնշում է այն միտքը, որ իր մասին կարող են ասել. «Հեկտորն ուժին համձնապատասխան՝ կորցրեց իր ժողովրդին» (XXII): Եվ մինչ մյուսները պատուպարվում են քաղաքում, Հեկտորը մեծ-մեծակ մնում է մարտի դաշտում: Ո՛չ հոր աղերսանքը, ո՛չ մոր արցունքները չեն կարող են պահել նրան. պատվախանդությունը նրա համար ամեն ինչից վեր է: Զարմանալի չէ, որ նա ծնողների համար բոլոր մյուս զավակներից թանկ է: Պարիսը նույնպես ընդունում է, որ նրա վարքագիծը ճիշտ է, և հանգիստ է ընդունում Հեկտորի կշտամբանքները՝ կովից խույս տալու համար: Հեղինեն նույնիսկ ասում է, որ ինքը՝ պատերազմի մեղավորը, միայն Հեկտորից ոչ մի վիրավորական խոսք չի լսել: «Ջի քաղաքի և բոլորիս ուրախությունն ու փառքն էր նա»—նրա մասին ասում է գուշակուհի Կասանդրան: Անդրոմաքեի հետ համդիպման տեսարանում Հեկտորը երևում է որպես ամուսին և հայր:

Եթե մարտական արիության կատարելատիպը Աքիլլեսն է, ապա խորամանկ և բազմաշարժար հերոսը՝ Ոդիսևսը, կենցաղային իմաստության մարմնավորումն է: «Ոդիսևսնում» նա հանդես է գալիս և՛ որպես զինվորական, և՛ որպես իմաստուն խորհրդատու, սակայն նաև՝ որպես մի՛մարդ, որն ընդունակ է ամեն մի խաբեության (X, 380, III, 201): Տրոյացի Անտենորը նրան հիշում է որպես հրաշայի հոետորի, որը «Երբ կրծքից արձակեր իր առնական ձայնը հուժկու և ձմեռվա ձյունի նման՝ խոսքերն իր ճոխ ու խորիմաստ»՝ ոչ մեկը չէր կարող վիճել նրա հետ: Ոդիսևսի քարոյական հատկանիշներն անմնացորդ բացահայտվում են «Ոդիսևսնում»: Պատահած բազմաթիվ արկածներից բարենաջող դուրս արժնել նրան օգնում են ոչ այնքան արիությունը, որքան ճարակությունը, հնարամտությունն ու մտքի ճկունությունը: Հենց Տրոյայի գրավումը փայտե ձիու միջոցով նրա խորամանկության արտահայտությունն էր: Մշտապես զգույշ լինելով, նա հնարովի պատմությունների մի ողջ պաշար ունի, որոնք պատմում է և՛ Պոլիթեսին, և՛ Եվմեոսին, և՛ Պենելոպեին: Նա այնքան է վարժվել ձևանալ, որ նույնիսկ Իթակե վերադառնալու ճանապարհին երիտասարդ հովվի կերպարանքով իրեն ներկայացած Աթենասին ձոր հնարովի պատմություն է մատուցում: Բեյլիսիկին այս մասին գրել է. «Ոդիսևսը մարդկային իմաստության ասպետն էր. բայց որն է նրա իմաստությունը: Խորամանկությունը, հաճախ՝ կոպիտ ու տափակ, այն, որ մեր առօրյա լեզվում կոչվում է «խաբեություն»: Եվ այնուամենայնիվ, նորածին ժողովրդի աչքում այդ խորամանկությունը չէր կարող չդիտվել իբրև հնարավոր գերիմաստության վեր-

ջին աստիճան»<sup>5</sup>։ Սակայն խորամանկության այդպիսի իդեալականացում խորոզ էր լինել միայն պատմական որոշակի պայմաններում. այդպիսի պայմանները բնորոշ են գաղութարարության շարժման ժամանակներին, երբ վերաբնակվողները, հանդիպելով տեղացի բնակչության դիմադրությանը և բազմապիսի խորամանկություններին ու մեղգություններին, իրենք էլ պետք է հատուկ հնարագիտություն ու ճարակություն ցուցաբերեին։ Այս գծերն են արտահայտված թափառական հերոսի՝ խորամանկ ու բազմաչարար Ռոյսևսի կերպարում։ Այդպիսի պայմաններում նա դրական և առաջադեմ կերպար է։

Պոեմի առաջին մասում Ռոյսևսը ներկայացված է իբրև Պոսեյդոն աստծու ցասումից հետապնդվող բազմաչարչար մի հերոս, որը մարտնչում է զանազան փորձանքների ու հրեշների դեմ և փրկվում իր խորամանկության շնորհիվ։ Երկրորդ մասում նա աչքի է ընկնում իբրև դաժան վրիժառու։ Խորամանկությանը միանում է նրա ճարտարախոսության հրապուրյը. Եվմեոսը երեք օր ու գիշեր լսում է նրա պատմությունները (XVII)։ Բացի դրանից, բանաստեղծը շարունակ ընդգծում է Ռոյսևսի վեհանձնությունը և հայրենասիրությունը. հայրենիքը նա չի փոխում անգամ անմահության հետ, որը նրան խոստանում էր տալ հավերժահարս Կալիպսոն (V, VII)։

Երկու պոեմներում էլ, բացի գլխավոր հերոսներից, հանդես են գալիս շատ երկրորդական հերոսներ, որոնցից շատերը նույնպիսի վատ գույներով են կերտված։ «Ելիականում» դրանք շատ ավելի են, քան «Ռոյսևսականում», որտեղ երկրորդական հերոսները գլխավորի սովերի տակ են մնում։ Բանի որ «Ելիականը» հիմնականում ռազմական թվանդակություն ունի, ուստի նրա գործող անձինք ևս առաջին հերթին աչքի են ընկնում իրենց մարտական հատկանիշներով (Գիոմեդեսը, զույգ Ալաքսանդր, Ատրիդեսները՝ Ազամեմնոնն ու Մենելայոսը)։

Ատրիդեսներից այսպիսի Մրիկեթի արքա Ազամեմնոնը, արշավանքի առաջնորդն է և համարվում է «իշխանապետ» և «ծողովորոց հովիվ»։ Մենելայոսը՝ Սպարտայի արքան, առնանգված Հեղինեի ամուսինն է և պատերազմի գլխավոր շահագրգռված անձը։ Սակայն բանաստեղծը նրանց այնքան էլ հրապուրիչ զգեցրել չի ներկայացնում։ Նրանք երկուսն էլ, հատկապես Ազամեմնոնը, չարաշահում են իրենց բարձր դիրքը։ Ազամեմնոնի ետասիրությունն ու շահամոլությունը Աքիլլեսի հետ գծտության պատճառ են դառնում։ Նա երևակայում է, թե հեշտությանը կկարողանա լույս գնալ առանց Աքիլլեսի զգնության, սակայն շատով ստիպված է լինում ընդունել իր սխալը։ Նա չի զլանում ուրիշներին, ինչպես օրինակ՝ Նեստորին և Ռոյսևսին, նախատել վախկոտության և թուլության համար, սակայն Ռոյսևսը զայրագին շշպոտում է նրան, ասելով, թե նա արժանի չէ իրենց գլխավորելու (XIV), իսկ Գիոմեդեսը նրա երեսին է շարտում դառն ծաղրը.

*Բայց Ջրվանդանն իմաստամիտ քեզ երկուսից մեկը տվեց՝  
Տվեց նա քեզ գավազանով բարձր լինել ամեն մարդուց,  
Բայց չտվեց արիություն, որ իսկ զարդն է իշխանության (IX, 32—39)։*

Մեկ անգամ չէ, որ Ազամեմնոնը բռնակալական հավումներ է ցուցաբերում, սակայն դա չի խանգարում, որ բանաստեղծը մի դրվագում (XI) իբրև հերոսի գովելիքի նրան։

Որպես գլխավոր շահագրգռված անձ, որի պատվի համար մարտնչում էին աքալացիները, Մենելայոսը պետք է որ «Ելիականում» գլխավոր տեղը գրավեր։ Սակայն նա դրան հարմար չի գալիս, և նրա տեղը Ազամեմնոնն է գրավում։ Պարիսի դեմ մեղամարտելիս իրեն վիրավորողի դեմ կոտակված շարությունը վերջապես էլք է գտնում։ Սակայն հիմնականում, որպես ռազմիկ, նա զգալիորեն զիջում է մյուս հերոսներին։ Նրան նշանակալի

<sup>5</sup> Белинский В. Г. Разделение поэзии на роды и виды, Полн. собр. соч., т. 5, с. 34.

դեր է հաստատվում միայն Պատրոկլեսի դիակը փրկելիս: Մեծելավորը հանդես է գալիս նաև «Ողիսականում»: Տեղեմաքը նրա մոտ է գալիս. որպեսզի հոր մասին որևէ բան իմանա, և հանձին նրա շատ հյուրընկալ տանտիրոջ է հանդիպում (IV, XV սկիզբը):

Հրապուրիչ գծերով է ներկայանում ծերունի Նեստորի կերպարը՝ հավերժական ծերունու մի տիպ, որը սիրում է վերհիշել իր երիտասարդության տարիները և խրատներ կարդալ. բոլորը նրան բարձր են գնահատում այն բանի համար, որ նա «իտիենամիտ խորհրդատու» է: Իրեն մեծագույն ռազմիկ է հանդես գալիս արգոսցի Գիոմեդեսը, որը ոչ միայն տրոյացի հերոսներին, այդ թվում նաև Էնիասին է հաղթում, այլև վիրավորում է աստվածներին՝ Ափրոդիտեին և Արեսին: Տեյամոնյան Այաքսն իր բաջությանը գերազանցում է բոլորին, զիջելով միայն Աքիլլեսին: Երբ տրոյացիները Հելտորի գլխավորությանը ներխուժում են աքայական ճամբարը և փորձում այրել նավերը, Այաքսը մեծ-մեծակ դիմագրավում է նրանց: Վերջապես, մեծ համակրանք է առաջացնում Աքիլլեսի մտեղիմ ընկերոջ՝ նրա հետ միասին Պելևսի տանը դաստիարակված Պատրոկլեսի կերպարը: Սկրանքներ գործելով, նա գայթակղվում է Տրոյան գրավելու մտքով և սպանվում Հելտորի ձեռքով:

«Էլիականում» էլի շատ արպալացի հերոսներ կան, ինչպես ծերունի Փեմիքսը՝ Աքիլլեսի դաստիարակը, Իդոմենեսը, կրտսեր Այաքսը Ռիսևեսի որդին, գուշակ Կայքասը և ուրիշներ, սակայն մենք դրանց վրա կանգ չենք առնի, բանի որ նրանք աննշան դեր են խաղում:

Տրոյական հերոսների մեջ Հելտորից հետո աչքի է ընկնում Էնիասը՝ Անթիսեսի և Ափրոդիտեի որդին, որին Գիոմեդեսի հետ մեծամարտում փրկում է մայրը: Մեծ դեր է խաղում նաև Հեղինեին առևանգած Պարիս-Ալեքսանդրը, որը ներկայանում է իբրև փափկասուն կնամուխ: Տրոյացիներն իրենք կարծում են, որ ուրիշի կնոջն առևանգելով, նա նեղ է վարվել: Պարիսը շքեղության մեջ է ապրում, փառքում իր հագուստի գեղեցկությամբ: Նա օգտագործում է տրոյացիների և նրանց յաշմակիցների ուժն ու անձնագոհությունը և համարում Հեղինեին Մեմեդասի տղայի վերադարձնելու խնդրում, թեև պատրաստ է սուստաձենո կերպով փոխհատուցել իր գանձերով: Հելտորն ընդունում է, որ նա քաջ է, սակայն մեղադրում է նրան էսասիրության, թեթևամտության և նրա պատճառով զոհ գնացող հայրենակիցների նկատմամբ գործած հանցանքի համար:

Բացառիկ մնայիչ գծերով է կերտված Տրոյայի արքա ծեր Պրիամոսի կերպարը. սա բազմանդամ ընտանիքով շրջապատված իսկական նահապետի տիպ է: Ծերության պատճառով նա զորահրամանատարության իրավունքը հանձնել է որդուն՝ Հելտորին: Պրիամոսը մեղմ է ու սիրալիր, նույնիսկ արհամարհված և բոլորի կողմից ատելի Հեղինեին նա շատ սրտառու է վերաբերվում: Սակայն դժբախտությունը հետապնդում է նրան, և նրա համար չա բոլոր որդիները զոհվում են Աքիլլեսի ձեռքով: Նույնիսկ աստվածները չեն կարողանում անտարբեր մնալ նրա վշտի հանդեպ, և Հերմեսն ուղեկցում է նրան, երբ նա մեկնում է թշնամու ճամբարը՝ Հելտորի դին փրկագնելու:

«Ողիսականում» կենդանի է պատկերված Տեղեմաքի կերպարը: Պոեմում տրվում է պատանի հերոսի աստիճանական աճը: Թեև հոր՝ Իթակեից մեկնելու օրվանից անցել է բազմ տարի, սակայն պոեմի սկզբում Տեղեմաքը բոլորովին պատանի և ինքնուրույնությունից զուրկ է ներկայանում, և ինքն էլ մորը խոստովանում է այդ (XVIII): Մինչդեռ պոեմի վերջում նա գործում աջակցություն է ցույց տալիս հորը՝ փեսացուների դատաստանն անելիս:

Պոեմներում կան նաև մի շարք կանացի կերպարներ: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ հոմերոսյան կանայք ավելի քիչ են կաշկանդված կյանքի պայմանականություններով, քան նրանց հետագա ժառանգորդուհիները: «Էլիականում» հանդես են գալիս Հելտորի կինը՝ Անդրոմաքեն, մայրը՝ Հելիաքեն, Հեղինեն, Աքիլլեսի գերուհին՝ Բրիսեիսը, «Ողիսականում»՝ Պենելոպեն և Հեղինեն, փեսայների թագուհի Այետեն, արքայադուստր Նավսիկեն, նաև՝ հավերժահարս Կալիպսոն և կախարդուհի Կիրկեն: Առանձնապես արտահայտիչ են Անդրոմաքեի և Պենելոպեի կերպարները:

Անդրոմաքեն Հելտորի հավատարիմ և սիրող կինն է: Նա մշտապես տագնապում է ամուսնու համար, որն իրեն չի խնայում, շարունակ կույի է նետվում և որի «Քաջությունը

իրեն ի կորուստ է մատնելու»։ Երբ Հեկտորը քաղաք է վերադառնում, Անդրոմաքեն, Աորածին երեխային գրկած, Արան բնդառաջ է գալիս, և տեղի է ունենում Արանց հանդիպման Աշանավոր տեսարանը։ Անդրոմաքեի ճակատագիրը ողբերգական է. Աքիլլեսի կողմից Արա հաղթեցի քաղաքի՝ Իպոլիպիան Թեբեի կործանման ժամանակ սպանվում են Արա հայրը և եղբայրները, մայրը Աուլոսպես շուտով մահանում է։ Անդրոմաքեի ողջ կյանքը հիմա ամփոփված է իր սիրելի ամուսնու մեջ։ Սակայն Աա վատ նախագագացում ունի. եթե Աա մեռնի, ի՞նչ կլինի իրեն և իր որդուն։ Հրածեշտ տալով ամուսնուն, Աա տանը ստրկուհիների հետ միասին արդեն ողբում է Արան։ Աղաղակներ լսելով պարսպի վրայից, Անդրոմաքեն շտապում է իմանալ, թե ինչ է պատահել, և հանկարծ տեսնում է, թե ինչպես է Աքիլլեսը դաշտով մեկ քարշ տալիս ամուսնու դին։ Անդրոմաքեն ուշաթափ ընկնում է իր ուղեկիցների ձեռքերին։ Անդրոմաքեն մեկ անգամ էլ երևում է պոեմի վերջում, երբ Հեկտորի բաղման ժամանակ ողբում է ամուսնուն։ Այս հուզիչ կերպարը մեկ անգամ չէ, որ գրավել է Ասև ավելի ուշ շրջանի քանաստեղծներին, ինչպես՝ Մասֆոլին, Եվրիպիդեսին («Անդրոմաքե» և «Տրոլուհիներ» ողբերգություններում) և ուրիշների։

«Ռդիսականում» Պենելոպեն ներկայանում է իբրև ընտանեկան հավատարմության և առաքինության տիպար։ Ռդիսեսից հետո Աա պոեմի գլխավոր գործող անձն է։ Ռդիսեսի քսան տարվա բացակայության ընթացքում Պենելոպեն չի դավաճանել Արա Ակատամբ իր զգացմունքներին և հասնողին հավատում է որ Աա կվերադառնա։ Նա խիստ ծանր կացության մեջ է, որովհետև շրջապատված է անբարյացակամ մարդկանցով, որոնք Արան այրի են համարում և ձգտում են ամուսնանալ հետը՝ գրավելով Ասև թագավորական իշխանությունը։ Ի վիճակի չլինելով պայքարել, Աա ստիպված խորանակության է դիմում։ Երեք տարի շարունակ Պենելոպեն, ծեր սկեպայրի՝ Լայերտեսի հստար թաղման ծածկոց գործելու պատրվակով խաբում է փեսացուներին։ Սակայն Արա խորանակությունը բացահայտվում է և միակ հույսը մնում է այն, որ փեսացուները չեն կարողանա Աետ արձակել Ռդիսեսի հին աղեղից։ Հոգեբանական մեծ խորությամբ են պատկերվում Արա հանդիպումները դեռևս չճանաչված Ռդիսեսի հետ։ Երբ Աա տեսնում է, թե ինչպես փեսացուները իր տանը ծանակում են օտարականին, խիստ վրդովվում է և հիշում, թե ինչպես մի ժամանակ այս տանը բոլորը սրտաբաց ընդունելություն էին գտնում։ Նա Եվմեոսին հարցուփորձ է անում այդ թափառաշրջիկի վերաբերյալ և երբ իմանում է, որ Աա տեղեկություն ունի Ռդիսեսի մասին, անձամբ է ուզում խոսել Արա հետ։ Իսկ երբ Ռդիսեսը, փեսացուներին կոտորելուց հետո, Պենելոպեին հայտնում է իր ով լինելը, Աա երկար ժամանակ չի կարողանում ճանաչել ամուսնուն, աչքերին չի հավատում, և միայն իրենց անձնական կյանքի մի քանի մանրամասների հիշատակումն է Արան համոզում, որ իր առջև այնքան երկար սպասված ամուսինն է (XXIII)։ Պենելոպեն կանացի վեհանձնության և հավատարմության կրատարելատիպ է։

Պենելոպեի հակադրությունն է Հեղինեն «Իլիականում»։ Սակայն Արա հանցանքն անկայություն է։ Կրթից կուրացած, Աա լքել է ամուսնուն՝ Մենելայիսին, սակայն այժմ խորապես զղջում է և խոստովանում այդ Պրիամոսին։ Բացի այդ, Աա համոզվել է, որ Պարիսը, մահուն որի Աա զոհեց իր պատիվը, չի համապատասխանում իր իդեալին. Աա վախկոտություն է ցուցաբերում Մենելայիսի հետ մեհամարտելիս։ Հեղինեն արհամարհում է Արան, սակայն Ակիրոդիտեն դարձյալ տիրաբար Արան Աետում է Պարիսի գիրկը։

Դեռևս Լեսինգն է ուշադրություն դարձրել այն քանին, թե Հոմերոսն ինչպես է Ակարագրում Հեղինեի գեղեցկությունը. Աա առանձին հատկանիշներ չի թվարկում, այլ ցույց է տալիս շրջապատի վրա գործող տպավորությունը։ Երբ Աա հայտնվում է քաղաքի պարսպի վրա, ծերերը՝ Պրիամոսի խորհրդակականները տպավորություններ են փոխանակում.

*Մեղավոր չեն արոյացիք և աքայանք սղծածագետ,*

*Որ այսպիսի կեռչ համար տառապում են շատ տարիներ.  
Ճշմարտապես անմահական աստվածուհու դեմք ունի նա (III):*

«Ողիսականում» դարձյալ հանդիպում ենք Հեղինեին: Նա արդեն վերադարձել է իր օրինական ամուսնու մոտ և վշտացած հիշում է իր խելահեղ հրապուրանքը, որն այդքան խիզախ մարդկանց կյանք արժեցավ (IV):

Մեր առջևով թռուցիկ անցնում է արքայադուստր Նավսիկեի հրապուրիչ կերպարը: Նրա հայրը՝ Ալքինոսը, նրբամտորեն հասկանում է նրա աղջկական գաղտնի երազանքները: Նավսիկեին գնում է ծովափ՝ սպիտակեղեն լվանալու, երազում է տանտիրուհի լինել: Ողիսևաի սլացիկ հասակին նայելով, նա երազում է, որ իր ապագա ամուսինն այդպիսին լինի: Այս միտքն է հետագայում հայտնում նաև Ալքինոսը:

Մրանք են Հոմերոսի պոեմների գլխավոր կերպարները: Նրանք բոլորն էլ աչքի են ընկնում ամբողջականությամբ, պարզությամբ, շատ դեպքում նույնիսկ՝ միամտությամբ, որը բնորոշ էր «մարդկային հասարակության մակնության» դարաշրջանին: Դրանք մեծ ուժով ու կենսունակությամբ են կերտված և օժտված են մարդկային խորը ճշմարտացիությամբ՝ որոնք և ապահովում են այդ կերպարների անմահությունը: Դրա հետ մեկտեղ սրանք իրենց դարաշրջանի համար միանգամայն բնորոշ կերպարներ կարող են համարվել: Բնորոշ հանգամանքներում ժամանակակից իրադրության ճշգրիտ արտացոլումը լինելով, դրանք մեզ լայն պատկերացում են տալիս պարզումնակ, տարերային ռեալիզմի մասին:

## **6. Էպիկական ոճի առանձնահատկությունները**

Հոմերոսյան պոեմների ուսումնասիրությունը ցույց է տալիս դրանց նմանությունը ուրիշ ժողովուրդների դյուցազնական էպոսներին՝ ուրաական բիլևաններին, հին ֆրանսիական «Ռոլանդի երգին», հին գերմանական «Նիբելունգների երգին», կարելա-ֆիննական «Կալևալային» և այլն: Այս բոլոր հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս էպիկական ստեղծագործության ընդհանուր բնույթը, միատեսակ լանաստեղծական հնարանքները, հերոսների նմանությունը, աշխարհընկալման որոշ ընդհանրություններ և այլն: Այսպիսով, կարելի է խոսել ժողովրդա-էպիկական ոճի ընդհանրության մասին, որը բացարվում է նաստրական պայմանների որոշ նմանություններով:

Փորձենք բնութագրել այդ ոճի հիմնական առանձնահատկությունները:

Այս տիպի բոլոր ստեղծագործությունները հանդես են գալիս մեծ պոեմների ձևով և պատմում են հեռավոր անցյալի իրադարձությունների մասին, ըստ որում, պատմվող տարվում է հեցց իր՝ բանաստեղծի կողմից: Այդպիսով, ստացվում է երկու ուղղություն. երևակայությամբ համեմված հիշողություններ անցյալի մասին և բանաստեղծի ժամանակակից իրականության արտացոլում: Պոեմի սյուժեն վսեմ է իր բնույթով, իսկ գործող անձինք առանձնանում են իրենց վեհությանը և ուժով: Քանի որ պատմվող հեռավոր անցյալին է վերաբերում, բանաստեղծն աշխատում է և՛ մարդկանց, և՛ ողջ շրջապատող իրականությունը ներկայացնել հեռավոր անցյալին բնորոշ միամտությամբ: Հիշենք, թե ինչպես են պարծենում հերոսները, ինչպես է արտասվում Աքիլլեսը, երբ նրանից իզուր են հրիսեխին, ինչպես է Ալքինոսը առաջարկում Ողիսևաին իր փեսան դառնալ, ինչպես Ողիսևսը, Դեմոդոկին հյուրավիրելիս, առավել մեծ և լավ մասը իրեն է պահում և այլն:

Մրան զուգընթաց, հունական էպոսն առատորեն օգտագործում է առասպելականի տարրը, որը ոչ այնքան հավատի առարկա է, որքան զուտ պայմանական նշանակություն ունեցող բանաստեղծական արվանդույթի: Դա արտահայտվում է երկայան գործողությամբ՝ մարդկային և աստվածային: Այդպիսով, իրադարձությունները կարծես թե տեղի են ունենում աստվածների կամքով և նույնիսկ նրանց անմիջական մասնակցությամբ: «Դիակականում» հաճախ ենք տեսնում, երբ Ջևսը չի կարողանում ինքնուրույն վճիռ կայացնել հերոս-

ների ճակատագրերի վերաբերյալ և կշեռքին է դնում նրանց վիճակները՝ ինչպես Հեկտորի և Աքիլլեսի, տրոյական և աքայական բանակների, Սարպեդոնի և Պատրոկլեսի և այլ դեպքերում: Հաճախ աստվածները ուղղակի մասնակցություն են ունենում մարտերին, իսկ վերջին մարտում Ջևան ինքն է թույլ տալիս աստվածներին մասնակցելու կոչվին: «Ռոյսակա՞նում» աստվածների միջամտությունը առավել ձևական բնույթ ունի: Աթենասը նաև է ձեռք բերում Տելեմաքի համար, նրա ճանապարհն է լուսավորում կանթեղով և այլն: Նույնիսկ աստվածների գաղտնիքը՝ «Ելիականում»՝ Ջևան և Ապոլլոնի, «Ռոյսակա՞նում»՝ Պոսեյդոնի, պոեմների գործողությունների ընթացքի համար օրգանական ճշանակություն չունեն:

Ասքում բանաստեղծը վեճ հանդարտություն է պահպանում և շատ հազվադեպ են այնպիսի դեպքերը, ինչպիսին է «Ելիականի» 2-րդ Երգում Թերսիդեսի դրվագը, որտեղ բանաստեղծն ակնհայտորեն իր միտումներն է արտահայտում: Իսկ ընդհանրապես, նրա շարտրամբն աչքի է ընկնում իր օբյեկտիվությամբ, բանաստեղծը ոչ մի տեղ չի խոսում իր մասին:

Նա պատմում է հեռավոր անցյալի մասին և այդ անցյալին խորը համակրանքով ու սիրով է վերաբերվում և գուցե չի իմացում այն առավել հրապուրիչ ներկայացնելու համար: Դրա հետևանքով պատմը ձեռք է բերում միտումնավոր «հիպերբոլիկություն»: Հերոսների կենցաղում ամեն ինչ փայլում է ոսկով և գեղեցկությամբ:

Բանաստեղծը գիտակցաբար «արխաիկացնում» է իր պատմը, այն զարդարում հնամենության շղարշով, կրեոսա-միկենական դարաշրջանի հիշողություններով: Այսպես, հոմերոսյան հերոսները խնջույքի սեղանի շուրջ նստում էին. ոչ թե ընկողմանում, ինչպես ընդունված էր պատմական ժամանակաշրջանում, սակայն նրանք կովի էին դուրս գալիս մարտակառքերով, ինչպես կրեոսա-միկենական արիևստի նմուշներում է պատկերվում և ինչը որ գոյություն չունեի այժմի ուշ շրջանում: Հարսանեկան սովորույթներում աչքի է ընկնում այն, որ փեսացուն է գլխագին տալիս հարսնացույի համար, և ոչ թե օժիտ ստանում նրա ծնողներից: Հասկանալի է, որ բանաստեղծը չէր կարող հետևողականորեն անցկացնել այդ «արխաիկացումը», որի հետևանքով երբեմն շարաշրջանները խտանվում են իրար, իսկ արդյունքում, այնուամենայնիվ, նրա ժամանակակից կենցաղային պատկերներն են:

Բանաստեղծը մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսների պատկերմանը: Անհատական հատկանիշներից բացի, անհրաժեշտ է նշել նաև նրանց ընդհանուր հատկությունը, որը բնորոշվում է էպիկական ոճի առանձնահատկություններով: Իրանք սովորական մարդիկ չեն, այլ հսկայական ուժի տեր դյուցազուններ, և բանաստեղծը շարունակ ընդգծում է, որ իր ժամանակի մարդիկ ոչ մի կերպ չեն կարող նրանց հավասարվել: Իր հերոսներին բանաստեղծը մոտեցնում է աստվածներին, նրանց անվանում է «աստվածադի», «աստվածատիպ» և այլն: Դրանով նա ուզում է ընդգծել, որ իր պատմությունը վերաբերում է այն ժամանակներին, երբ աստվածները դեռևս մասնակից էին մարդկանց կյանքին և նրանցից քիչ էին տարբերվում:

Բանաստեղծը կարծես թե հիանում է ինքն իր պատմածով. յուրաքանչյուր մանրուք թանկ է նրա համար, և նա հաճախ է դիմում այդպիսի մանրամասն նկարագրությունների, ուշադրություն չդարձնելով, որ դրանք կասեցնում են գործողության զարգացումը: Մրա հետևանքով ստացվում է միտումնավոր «հապաղում», որ հատուկ է հերոսական էպոսին, և պատմը ինքնատիպ, գուտ էպիկական անկաշկանդություն է փնսրում: Սա է հերոսական էպոսին բնորոշ առանձնահատկություններից մեկը նոր ժամանակների բանաստեղծական հնարանների համեմատությամբ:

Իր ստեղծագործությունը նախատեսելով ունկնդիրների, և ոչ թե ընթերցողների համար, էպիկական բանաստեղծն աշխատում է նրանց հնարավորություն ընձեռել հեշտությամբ ընկալելու բովանդակությունը, ուստի և միևնույն բանը կրկնում է մի քանի անգամ կամ էլ միանման երևույթները նկարագրում է միևնույն արտահայտություններով: Ստացվում են հերոսական էպոսին բնորոշ «կրկնություններ»: Այսպես, օրինակ,

«Իլիակամի» Առաջին Երգում Աքիլլեսի խոսքերը Ագամեմնոնից կրած իր վիրավորանքների մասին նույնությամբ կրկնում են այն, ինչ արդեն հայանի է ունկնդիրներին, ըստ որում, որոշ տողեր կրկնվում են անփոփոխ: Ողիսևսի ուղեկիցներից մեկը՝ Եվրիլոքը, նրան պատմում է, թե ինչպես է կախարդուհի Կիրկեն իրենց ընկերներին խոչ դարձրել, կրկնելով այն տողերը, որոնցում արդեն նկարագրվել էր այդ դեպքը և այլն: Լիուլի հանդիպող այսպիսի կրկնությունները խորթ են ավելի ուշ շրջանի գրականությանը, որտեղ էթե անգամ դրանք կիրառվում են, ապա միայն էպիկական ոճն ընդօրինակելու նպատակով: Այս կրկնություններում հատուկ տեղ են զբաղեցնում որոշ «մշտական բանաձևեր», որոնցով բնութագրվում են բնության երևույթները, կրկնվող գործողությունները՝ հերոսների սպառազինությունը, մարտականքի պատրաստությունը, խնջույքների նկարագրությունները և այլն:

Ուշադրության են արժանի հարստացնող էպիտետները, այսինքն՝ այն բնութագրումները, որոնք ամուր կապված են որոշ հերոսների, աստվածների կամ առարկաների հետ և ունկնդրին անմիջապես տեղեկություն են հաղորդում տվյալ առարկայի կամ անձի բնորոշ հատկանիշների վերաբերյալ: Դրանցից շատերը կազմավորվել են դեռևս միջհունեության շրջանում: Այսպես, Աքիլլեսը մշտապես տնվանվում է «բաջոտն», Ագամեմնոնը՝ «ազգաց հովիվ», Ողիսևսը՝ «խորամանկ», «քաղաքավեր» և այլն: Հաշվել են, որ Աքիլլեսին 46 էպիտետ է տրվում, Ողիսևսին՝ 45:

Էպիտետներ են տրվում նաև անշունչ առարկաներին, կենդանիներին, ողջ բնությանը:

Որոշ դեպքերում էպիտետն այնքան է ներհյուսվել տվյալ առարկային կամ անձին, որ հակադրության մեջ է մտնում այն իրադրությանը, որտեղ այն կիրառվում է: Այսպես, փեսացուների լիտիությունից տառապող Պենելոպեն այնուամենայնիվ նրանց անվանում է «ազնիվ փեսացուներ»:

Նկարագրությունն առավել ցայտուն դարձնելու նպատակով բանաստեղծն աշխատում է յուրաքանչյուր պատկեր ներկայացնել ունկնդիրներին առավել մոտ և հասկանալի լեզվով՝ իբրև համեմատություն գուգանեղներ թերելով շրջապատող կյանքից: Այդ «համեմատությունները» երբեմն ամբողջական պատկերներ են ներկայացնում: Դրանցով առավել հարուստ է «Իլիակամը»:

Առանձին դրվագները միավորելու տեխնիկայով էպիկական պատումն աչքի է ընկնում յուրօրինակ առանձնահատկությամբ՝ միաժամանակ կատարված դեպքերի «ժամանակագրական անհամատեղելիությամբ»: Երբ բանաստեղծը պետք է նկարագրի տարբեր վայրերում տեղի ունեցող երկու տարբեր գործողություն, նա շփվարանում է դրանք միաժամանակ պատկերացնել: Նա աշխատում է ինչ-որ ձևով շրջանցել այդ թվացյալ անձնարացիությունը: Այսպես, «Ողիակամի» Առաջին Երգում նկարագրվում է, թե ինչպես Աթենանը Մենտոսի կերպարանքով հայտնվում է Ողիսևսի ապարանքում և սիրալիր ընդունելություն գտնում Տելեմաքի կողմից: Այնուհետև հավաքվում են փեսացուները և սկսում կերուխումը, իսկ երբ կշտանում են, երգ ու պար են պահանջում: Միայն այդ ժամանակ է Տելեմաքն սկսում հարցուփորձել հյուրին: Երկար գրուցելուց հետո կեղծ Մենտոսը հեռանում է և միայն այդ ժամանակ է բանաստեղծը նկարագրում Թեմիոսի երգը: Այսպիսով, Տելեմաքի և Մենտոսի գրուցի պահին երգը կարծես թե ընդհատվում է և վերսկսվում միայն՝ երբ Տելեմաքը վերադառնում է:

Երբեմն, սակայն, միաժամանակ կատարվող երկու գործողություն նկարագրելու անկարողությունը առավել բարդ իրավիճակ է ստեղծում: «Ողիակամի» Առաջին Երգում նկարագրվում է աստվածների ժողովը, որտեղ որոշվում է Ողիսևսին հայրենիք վերադարձնել: Այդ իրագործելու համար Հերմեսն ուղևորվում է հավերժաճարս Կալիստոյի մոտ և նրան կարգադրում բաց թողնել Ողիսևսին, որին նա իր մոտ էր պահում, իսկ Աթենասը գնում է Ողիսևսի տուն, որպեսզի Տելեմաքին թուշի մեկնել հորը փնտրելու: Դրանից հետո նկարագրվում են Տելեմաքի գործողությունները: Միայն 5-րդ Երգում է բանաստեղծն անդրադառնում Հերմեսին, սակայն նա (բանաստեղծը) արդեն այնքան էր հեռացել սկզբնական



պահից, որ ստիպված է լինում կրկնել (որոշ փոփոխություններով) աստվածների ժողովի սկզբնական տեսարանը:

Իրադարձությունների շարադրանքի հոմերոսյան այս առանձնահատկությունը հիշեցնում է այն հնարանքը, որը դիտվում է նաև սկահակներից մեզ հայտնի վաղ հունական գեղանկարչության մեջ, և որը մշտապես առկա է Հին Եգիպտոսի գեղանկարչության մեջ: Հեռանկարի կանոններին դեռևս ամծանոթ նկարիչը չի կարողանում պատկերել տարբեր պլաններում գտնվող առարկաները և միաստորեն հետին պլանի առարկաները պարզապես պատկերում է առջևում գտնվողների վերևում:

Մի երկու խոսք պոեմների լեզվի վերաբերյալ:

«Իլիականը» և «Ոդիսականը» հունարեն հնագույն գրական լեզվի նմուշներն են: Դրանք գրված են հին հունական խոսվածքով, որը շատ բանով է տարբերվում այդ բարբառով ավելի ուշ շրջանում գրված գրականության լեզվից, ինչպես, օրինակ, բանաստեղծ Անակրեոնի (մ. թ. ա. 6-րդ դար), Հերոդոտի (մ. թ. ա. 5-րդ դար) և այլոց լեզվից: Բարբառի առանձնահատկությունները վկայում են, որ պոեմները վերջնականապես ձևավորվել են փոքրասիական Հոնիայում: Այդ շրջանում, այսինքն՝ Փոքր Ասիայի առաջնայկում և մոտակա կղզիներում (օրինակ, Քիոս կղզում), Բալկանյան թերակղզուց ներգաղթած հույները շատ վաղ ժամանակներից շփման մեջ էին մտել արևելյան ժողովուրդների հետ, որոնք մեծ մշակույթ էին ստեղծել: Այս հանգամանքն, իհարկե, մեծապես նպաստել է այդ շրջաններում հունական մշակույթի արագ բարգավաճմանը:

Սակայն պոեմների այս հունական հիմքի վրա առանձնանում են այլ բարբառների որոշ տարրեր, օրինակ՝ «Ելիզվներ», այսինքն՝ այսպես կոչված «Էոլյան», ավելի ստույգ՝ հին աքայական խոսվածքի տարրեր, որոնք պետք է դիտել իբրև Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հատվածի հույն վերաբնակների բարբառը:

Հոմերոսի լեզուն հույն ժողովրդի բանաստեղծական խոսքի հնագույն նմուշն է: Արտացոլելով Հունաստանի արևելյան շրջանում մշակույթի զարգացումը, դրա հետ մեկտեղ՝ ժողովրդի սուր դիտողականությունը, այն աչքի է ընկնում բառարանային կազմի զարմանալի հարստությամբ և վատ արտահայտչականությամբ: Այդ բառերից շատերը հետագայում գործածությունից դուրս են եկել:

## **7. ՀՈՄԵՐՈՍԻ ԳՈՆԾՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Մենք ոչ մի տեղեկություն չունենք Հոմերոսի և նրա ժամանակի վերաբերյալ. որտե՞ղ, ինչպե՞ս և ե՞րբ են գրվել նրան վերագրվող «Իլիական» և «Ոդիսական» պոեմները: Հանձին Հոմերոսի, տեսնում ենք մի իսկական ժողովրդական երգիչ-բանաստեղծի: Պոեմներում առկա են ժողովրդական երևակայության բազմաթիվ մոտիվներ և կերպարներ. դրանցում արտացոլվում է ժողովրդի նախնական աշխարհընկալումը: Պոեմների գլխավոր հերոսները՝ Աքիլլեսն ու Ոդիսեսը, իրենց դարաշրջանի իդեալների լավագույն արտահայտիչներն են: Մարտական խիզախության տեսակետից ամենակատարյալի մարմնավորումը Աքիլլեսն է, գործնական խելամտության և խորամակնության մարմնավորումը Ոդիսեսն է: Պոեմների մյուս հերոսները վաղ շրջանի հույների կյանքի զանազան կողմերն են ներկայացնում: Ժողովրդի հետ այսպիսի կապը այս պոեմները շատ հասկանալի էր դարձնում նրա լայն զանգվածներին: Սակայն ամենակարևորն այն էր, որ այս պոեմներում արտացոլվում էին հույն ժողովրդի ամենալայն շերտերի մաքերն ու զգացումները: Այդ ժողովրդի ողջ կյանքը՝ կենդանի, վատ կերպարներով հառնում է մեր առջև: Հրաշալի և գեղեցիկ սիրանքների մասին պատմությունները ոգևորիչ ազդեցություն էին գործում ունկնդիրների վրա և բարձրացնում նրանց տրամադրությունը: Որոշ դրվագներում ունկնդիրները ուսանելի խրատներ էին գտնում,, ինչպես, օրինակ, Նեստոր ծերունու խրատներն իր որդուն Անտիոքին («Իլիական» XXIII) կամ Մենեսիոսի խատները՝ Պատրոկլեսին («Իլ.»

XI), Փենիքսիմը՝ Աքիլևսին («Եղիական» IX): Որպես յիգուսի հերոսի իդեալ և բոլոր ժամանակների պատգամ կրկնվում է նրանց պատվիրանը. «քաջ կովեմ, գերազանցեմ ուրիշներին և չամպատվեմ ես վատաբար ազգատոհմը իմ հայրերի» (VI, 208—5): Ողիսեսի կերպարով ներկայացվում է հայրենասիրության բարձրագույն իդեալը. նա հայրենիքը չի փոխում անգամ անմահության հետ:

Հոմերոսի պոեմները հույն ժողովրդի իմաստության իսկական գանձարաններն են: Դրանք չպատկանեցին միայն հունական ցեղերին, որոնց միջավայրում էին ստեղծվել, այլ դարձան ամբողջ հույն ժողովրդի սեփականությունը և նույնիսկ գոյատևեցին նրա ողջ պատմության ընթացքում: Ավանդության համաձայն, Լիկոուգոսը՝ Սպարտայում, իսկ Սոլոնը՝ Աթենքում մտցրեցին Հոմերոսի երգերի կատարումը: Հետագայում հունական բոլոր տերություններում դրանք դարձան կրթության հիմքը դարձան: Աշակերտները անգիր էին անում պոեմի առանձին հատվածներ, քիչ չէին այն մարդիկ, ովքեր ամբողջությամբ բերանացի էին արել պոեմները (Քսենոֆոն, «Սնցուկ»): Պլատոնը նշում է, որ «Հոմերոսը ողջ Հունաստանն է դաստիարակել» («Պետություն», IX): Հելլենիստական դարաշրջանում նույնիսկ Հոմերոսի պաշտամունք գոյություն ուներ: Տերության համար պատիվ էր Հոմերոսի հայրենիք համարվելը. ինչպես ցույց են տալիս այն ժամանակ ստեղծված տողերը՝ «Ըմաստուն Հոմերոսի ծննդավայրը կոչվելու համար լոթ քաղաքներ էին վիճում. Ջմիրոնիան, Քիոսը, Ադոլոսը, Պիլոսը, Արգոսը, Իթակեն և Աթենքը»: Այս երկտողի տարբերակներում հիշատակվում են նաև Հոտոս, Սալամին, Հիոս, Կիոս քաղաքները: Քաղաքների ընդհանուր թիվն է վերջո, տասնմեկն է, որոնք ցրված են հունական աշխարհի ամենատարբեր ծայրերում: Հոմերոսը պիված էր նույնիսկ հունական աշխարհի ամենահեռավոր անկյուններում: Մ. թ. ստատորապես 100 թվականին հույն հոետոր Դիոն Բրիստատոնն այցելում է Օրբիս քաղաքը (Ռեյտրի գետաբերանի մոտ) և սաշում՝ այնտեղ հանդիպելով Հոմերոսի ջերմ երկրպագուներին:

Իր ճառերում նա հաճախ է դիմում Հոմերոսին՝ որպես հեղինակության, իսկ մի ճառում այսպես է բնութագրում նրա բանաստեղծությունը. «Հոմերոսը առաջինն է, միջինը և վերջինը, ով և՛ մամուկին, և՛ հասուն մարդուն, և՛ ծերունուն տալիս է այնքան, որքան նրանք կարող են վերցնել» (XVIII): Կարելի է ասել, որ Հոմերոսը հունական բոլոր քաղաքներում և բոլոր ցեղերի կողմից մեծ սեր ու ճանաչում էր վայելում: Դա վկայում է, որ նա բառիս բուն իմաստով Հունաստանի ժողովրդական բանաստեղծն էր: Նրա պոեմների հետ ծանոթությունն անհրաժեշտ էր յուրաքանչյուր հույնի համար: Հոմերոսը վեր էր կանգնած բոլոր միջցեղային և քաղաքական վեճերից, նա հույն ժողովրդի միասնության խորհրդանիշն էր: Հոմերոսն իսկական ազգային բանաստեղծ է, որ օրինակ է հանդիսացել հետագա ողջ հունական գրականության համար: Բելիևսկին Հոմերոսին անվանել է «Հունական բանաստեղծության հայրը»<sup>6</sup>:

## 8. ՊՈԵՄՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՅԸ ՀՆՈՒՄ

Տոմսական կարգերից պետականին անցնելու վաղ շրջանում արդեն «Եղիականը» և «Ողիսականը» մեծ տարածում էին ձեռք բերել Հունաստանում: Ավանդության համաձայն, Լիկուրգոսը Սպարտայում պոեմների կատարումը մտցրել է մ. թ. ա. 9-րդ դարում: Ավելի հավաստի է, որ 7-րդ դարում դրանք արդեն հայտնի էին Աթենքում և 6-րդ դարի սկզբներին դրանց կատարումը ռապսոդների (գուսան) կողմից մեծ տարածում էր գտել: Սոլոնի և ապա Պիսիստրատի օրոք նույնիսկ միջոցներ էին ձեռք առնվել Աթենաս աստվածուհու պատվին կատարվող Մեծ Պանաթենքի տոնին դրանց կատարման հատուկ կարգ սահմանելու ուղղությամբ: Մոտավորապես այդ ժամանակ է կատարվել, ըստ երևույթին, պոեմների առաջին գրառումը:

<sup>6</sup> Болынский В. Г., Иллада, переведенная И. Гюедичем, Полн. собр. соч., т. 3, с. 308.

Հոմերոսի հարցը բոլորովին նոր փուլ է թևակոխում հելլենիզմի դարաշրջանում, երբ սկսվում է նրա պոեմների լուրջ ուսումնասիրությունը: Հունական աշխարհի մշակութային կյանքի նոր կենտրոնը դարձած Ալեքսանդրիայում մեծ զարգացում է ապրում բանասիրական գիտությունը: Ալեքսանդրյան մեծ գրադարանում հավաքվում էին գրողների ստեղծագործությունների բնագրերը, և մեծ աշխատանք էր տարվում դրանց բազմակողմանի ուսումնասիրության ուղղությամբ: Այդ ձևով սահմանված «հույակավոր հեղինակների կանոնում» Հոմերոսն առաջին տեղն էր զբաղեցնում: Նրա պոեմների ուսումնասիրությանը ըզբաղված էին մի շարք գիտնականներ, որոնցից առավել հայտնի են Ջենոբոսը (IV դ. վերջ, III-ի սկիզբ), Արիստոֆան Բյուզանդացին (մոտ. 257—180), Արիստարքոս Սամոթրակացին (մոտ. 215—145), ավելի ուշ՝ Գիդիմեսը (մ. թ. ա. I դ. վերջերը): Առավելապես ուշադրության արժանի էին Արիստարքոսի աշխատությունները: Նա մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում պոեմների բնագրերը, ըստ որում, մասնագիտորեն նշում է կասկածելի, կրկնվող, անհարազատ տողերը և այլն: Ենթադրվում է, որ «Իլիականի» և «Ոդիսականի» մեզ հասած ձեռագիր բնագրերի հիմքում ընկած է արիստարքոսյան խմբագրությունը: Միայն 19-րդ դարավերջին և 20-րդի սկզբներին Եգիպտոսում հայտնաբերված բազմաթիվ հատվածները («Իլիականից» մոտ 200 և «Ոդիսականից» մոտ 70)՝ գրված պապիրուսների վրա, որոշ պատկերացում տվեցին այն տարբերակների մասին, որոնք հանդիպում էին միջնադարի ստարքյան հրատարակումներում:

Պոեմների՝ այժմ ընդունված հատվածաբաժանումը 24 Երգերի մտցրել է Ջենոբոսը՝ գրադարանում պահելը հեշտացնելու նպատակով: Ինչ վերաբերում է պոեմների հեղինակին, ապա գիտնականների մեծ մասը ենթադրում էր, որ ողջ հերոսական էպոսից Հոմերոսի գրչին են պատկանում միայն «Իլիականը» և «Ոդիսականը»: Մինևույն ժամանակ, կային գիտնականներ, ովքեր ուշադրություն դարձրին պոեմների միջև առկա որոշ էական տարբերություններին և դրանից եզրակացրեցին, որ դրանք միևնույն հեղինակին պատկանել չեն կարող: Այդ գիտնականներին կոչում էին «տրոֆիչներ»: Սակայն Արիստարքոսը ժխտեց նրանց տեսակետը, այսպիսի առաջարկ մտցնելով. «Իլիականը» Հոմերոսը գրել է երիտասարդ տարիքում, իսկ «Ոդիսականը»՝ ծեր, և այս տեսակետը հետագայում ընդունելություն գտավ:

Ալեքսանդրյան գիտնականների այս ուսումնասիրություններն անմիջականորեն մեզ չեն հասել, այլ հայտնի են «սքոլիաներից», այսինքն՝ այդ ուսումնասիրությունների հիման վրա հետագա, մասամբ նույնիսկ բյուզանդական գիտնականների մեկնաբանություններից: Հաստուկ արժեք են ներկայացնում «Իլիականի» վեներտիկյան մի ձեռագրի (10-րդ դար) մեկնությունները: Նրա հայտնաբերումը 1788 թ. ֆրանսիացի գիտնական Վիլլուազոնի կողմից էական դեր խաղաց նոր ժամանակներում հոմերոսյան պոեմների ուսումնասիրության գործում:

Հոմերոսի, իբրև մեծագույն բանաստեղծի, մասին պատկերացումները ժառանգաբար անցան միջնադարյան և Նոր Եվրոպա:

### **9. ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Ողջ միջնադարի ընթացքում Հոմերոսի, և առհասարակ ամբողջ հունական մշակույթի ուսումնասիրությունը Արևմուտքում դադարում է, սակայն բյուզանդական դպրոցներում շարունակում էին կարդալ և ուսումնասիրել Հոմերոսին, սքոլիաներ կազմել, օգտվելով ալեքսանդրյան գիտնականների մեթոդներից՝ վերլուծել նրա բնագրերը:

Վերածննդի դարաշրջանը, երբ անտիկ գրականության նկատմամբ ուշադրությունը հարություն է առնում և նրան բացառիկ նշանակություն է տրվում, Հոմերոսի ստեղծագործության ուսումնասիրության գործում ոչինչ չի ավելացնում: Հոմերոս կարդում էին և հիանում նրա բանաստեղծությամբ:

Հումերոսյան հարցի պատմության մեջ մեծ նշանակություն ունեցավ ֆրանսիացի արքա Ֆրանսուա դ'Օրֆելյակի (մեռ. 1676 թ.) «Դիսերտացիա «Լիլիականի» վերաբերյալ» աշխատությունը, որը նա գրել էր 1664 թ., սակայն այն հրատարակվեց 50 տարի անց՝ 1715 թ.: Այս աշխատությունում առաջին անգամ այն միտքն էր հայտնվում, որ «Լիլիականը» ոչ թե մեկ հեղինակի ստեղծագործություն է, այլ տարբեր երգիչների երգերի ժողովածու, որ հավաքվել է Պիսիստրատից շատ առաջ: Հումերոսի մասին նախորդների բոլոր վկայությունները համադրելով, դ'Օրֆելյակն այն եզրակացության հանգեց, որ Հունները որպես անհատ անձնավորություն գոյություն չի ունեցել, որ «Հումերոս» բառը նշանակել է «կոլյոր», իսկ հումերոսյան «Լիլիականը» կոլյոր երգիչների երգերի հավաքածու է»: 1788 թ. «Լիլիականի» վեներտիկյան ձեռագրի հայտնաբերումով բացահայտվում են նաև նրանում առկա սքոլիաները, որոնցից նորոգյա գիտնականները կարող էին իմանալ հին գիտության նվաճումները պոեմների ուսումնասիրության բնագավառում, որը և նրանց համար հող էր նախապատրաստում հումերոսյան հարցը վերանայելու: Սա կապված է գերմանացի բանասեր Ֆրիդրիխ Ավգուստ Վոլֆի անվան հետ:

Վոլֆի պատրաստած պոեմների հունարեն բնագրի «Առաջաբանը» երկարամյա վեներտի տեղիք տվեց: Ելնելով, ձեռագրերի բազմաթիվ տարբերակներով, Վոլֆը եզրակացրեց, որ հնուն պոեմների միասնական բնագիր գոյություն չի ունեցել: Այնուհետև նա ապացուցում էր, որ Հումերոսի օրոք պոեմները գրառված չեն չէին կարող, քանի որ այդ ժամանակ գրությունը դեռևս այդքան տարածված չէր: Նա ենթադրում էր, որ պոեմները երկար ժամանակ պահպանվել են միայն բանավոր ավանդության և գրառվել են շատ ավելի ուշ: Դ'Օրֆելյակին հակառակ, Վոլֆը պնդում էր, որ դրանք առաջին անգամ գրի են առնվել Պիսիստրատի օրոք (560—527 թթ.): Դրա հետ մեկտեղ, նա անհնար էր համարում այդպիսի հսկայական պոեմների ստեղծումը առանց գրության օժանդակության: «Լիլիականի» առանձին մասեր ազատ կերպով միացած ուսուցիչներ են հիշեցնում:

«Ողիականը», ըստ Վոլֆի, հմտորեն կառուցված երկ է, և չի կարելի կարծել, թե այն այդ տեսքն է ունեցել հենց սկզբից: Սակայն այստեղ էլ կարելի է տարբերակել որոշ բաղկացուցիչ մասեր՝ Տելեմաքի ճանապարհորդությունը, Ողիսևի պատմությունները փեսայների մոտ և այլն: Ըստ երևույթին, այդ հատվածները երկար ժամանակ երգվել են իրեն ինքնուրույն երգեր, իսկ դրանց գլխավոր մասը Հումերոսն է ստեղծել: Ամբողջական մեծածավալ երկ ստեղծել կարող էր միայն հատուկ միտքը, և դա հույների համար շատ ավելի ուշ հնարավոր դարձավ: Ինչպես վկայում են հին հեղինակները, սկզբում պոեմները ոչ թե ամբողջապես էին կատարվում, այլ առանձին հատվածներով, հաճախ խախտելով հերթականությունը: Վոլֆը դրանով է բացատրում որոշ մասերի միջև եղած հակասությունները: Այսպես, օրինակ, «Լիլիականի» XIII Երգում հանդես է գալիս հերոս Պիլեսենեսը, իսկ ավելի առաջ՝ V Երգում նկարագրվում է նրա մահը: Վոլֆը այն կարծիքն է հայտնում, որ Պիսիստրատի օրոք պոեմները ոչ միայն գրառվել են, այլև խմբագրվել, սակայն դրանից հետո էլ դրանք նորից են վերամշակվել, հակասությունները վերացվել են, որոշ դրվագներ փոխարինվել են ուրիշներով, իսկ պոեմների վերջնական խմբագրման արդյունքը ժամանակակից բնագրերն են, որոնք արեքսանդրյան գիտնականների աշխատանքի արգասիքն են: Մի խոսքով, Վոլֆն այն կարծիքին էր, որ պոեմներից յուրաքանչյուրը տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների, սակայն մեծ մասամբ՝ Հումերոսի կողմից ստեղծված ոչ մեծ երգերի արհեստական միավորումն է:

Վոլֆի գիրքը բուն վեներտացի հարցուցեց: Նրա տեսակետը տարբեր կերպ ընդունվեց ժամանակակիցների կողմից: Ոմանք, ինչպես Ֆիխտեն, Հումբոլդտը, Օլեգերը, անվերապահորեն ընդունում էին նրա տեսակետները, ուրիշները, հատկապես՝ Օիլերը և Հումերոսի թարգմանիչ Ֆոսսը, վրդովմունք էին արտահայտում: Վերջիններիս հարեցին նաև Հեգելն ու Գյոթեն:

Այն, ինչ բնագրաբար զգում էին բանաստեղծները, գիտականորեն փորձեց հիմնավորել Նիշը: Նրա տեսակետը, որ ըստ էության նոր չէր, այլ փաստորեն վերականգնում էր

Հոմերոսի մասին նախկին սովորական պատկերացումները հայտնի է «ուճիտար» անվան տակ կամ որպես միասնության տեսություն: Իր աշխատություններում Նիչն առաջին հերթին մասնացույց էր անում, որ հույների մոտ գրագրության անկայությունը շատ ավելի վաղ է եղել, քան ենթադրում է Վոլֆը, և եթե 7-րդ դարում դրանից արդեն օգտվում էին օրենքներ հրատարակելու համար, ապա կենցաղում այն ավելի շուտ էր գործածական: Հետագայում այս կարծիքը հաստատվեց 7-րդ, և նույնիսկ 8-րդ դարերի տառային արձանագրությունների գրառումների, 10—9-րդ դարերի վանկային գրառումների գյուտով, որոնք հայտնաբերվեցին Կիպրոսում, ինչպես նաև կրետա-միկենական արձանագրություններով:

Այնուհետև, Նիչը ժխտեց Վոլֆի այն տեսակետը, թե խոշոր բանաստեղծական երկ ստեղծելու համար անհրաժեշտ է օգտվել գրությունից, այն գրառել: 13-րդ դարական միջնադարյան բանաստեղծ Վոլֆրամ ֆոն Էզենբախը, որ հեղինակ էր 24 հազար տողանոց խոշոր ապոկալիպսիսի, իր իսկ վկայությամբ անգրագետ էր: Այնուհետև, առանձին մասերի միջև հակասություններ են նկատվում նաև այն ստեղծագործություններում, որոնք անվանված մեկ հեղինակի են պատկանում, ինչպես՝ Վիրգիլիոսի «Էնեականում», Գլոթեի «Ճառատում», Շիլլերի «Դոն Կառլոսում»: Հոմերոսի պոեմներում դրանք այնքան աննշան են, որ չեն խախտում գեղարվեստական ամբողջականությունը և նկատվում են միայն մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում: Նիչը հնարավոր էր համարում այն միտքը, թե պոեմների հեղինակը՝ Հոմերոսը, որ ապրել է մ. թ. ա. 9-րդ դարից ոչ ուշ, կարող էր օգտագործած լինել հին ժողովրդական երգերի նյութը: ասկայն դրանք նորից է վերաձևակել՝ յուրաքանչյուր պոեմը ենթարկելով մեկ ընդհանուր գեղարվեստական միտումի:

Նիչի այս ենթադրությունները հաստատվում են նաև մեր ժամանակներում: Հոմերոսյան հարցի շուրջ զգալի գրականություն է ստեղծվել, ասկայն, այնուամենայնիվ, մինչև այժմ այն չի կարելի լուծված համարել:

Հոմերոսյան հարցի շուրջ արտահայտված բոլոր հակասական դատողություններից բացարձակորեն ապացուցված կարելի է համարել հետևյալները. պոեմներն, անկասկած, գեղարվեստական պլանի միասնություն են դրսևորում. պոեմների ստեղծմանը նախորդել է գրկարատև ժողովրդական բանավոր ստեղծագործական շրջան, երբ հյուսվում էին սաքերն և փոքրիկ էպիկական երգեր, որոնք իրենց բնույթով տարբերվում էին «Էպիկականի» և «Ռոմանականի» տիպի մեծածավալ երկերից: Անտարակուսելի են կերպարների միասնությունն ու ամբողջականությունը: Եթե պոեմների պոեմները վերցված են առասպելներից, ապա որոշ հատվածներ, ինչպես՝ Հեկտորի և Անդրոմաքեի հանդիպման դրվագը, Տելեմաքի համապարհորդությունը և այլն, որևէ ընդհանուր բան չունեն առասպելների հետ: Ռոմանտիկ դատաստանը փեսացուների նկատմամբ ամենևին էլ առասպելական պլանով չի ներկայացված, այլ մնան է կենցաղային նովելի: Հենց առասպելներն էլ պոեմում լրիվ կենսունակություն և գեղարվեստական կոնկրետություն են ձեռք բերել:

Հոմերոսյան պոեմների ստեղծման վերաբերյալ ամենաբազմազան հայացքներում ամենաապշեցուցիչն այն է, որ նույնիսկ մինևույն ողողության գիտնականները հաճախ համակարծիք չեն հիմնական կետերում, քանի որ զուտ սուբյեկտիվ կարծիքներով են առաջնորդվում: Նրանցից յուրաքանչյուրը, յուրովի պատկերացնելով սկզբնական պոեմը, հավանաբար բողոքովին կամայականորեն նյութից դուրս է նետում այն մասերը, որոնք, իր կարծիքով, նահանջում են հիմնական մտահղացումից և նրա հետ օրգանապես կապված չեն: Դրա հետևանքով պոեմից դուրս են մղվում ոչ միայն այնպիսի ավարտուն հատվածներ, ինչպես «Էպիկականի», «Դիոմեդեսի սխրանքները» (V), «Առաքելություն Աքիլլեսի մոտ» (IX), «Դոլոնյան դրվագը» (X) և այլն, այլև այնպիսի հրաշալի դրվագներ, ինչպես «Հեկտորի և Անդրոմաքեի հանդիպումը» (VI), «Հեկտորի դիակի յիրկագնումը» (XXIV) և այլն: Որպես նիմնական պոեմին խորթ հատվածներ դուրս է նետվում նաև Ռոմանտի և «Կենցաղային» նուրբ հոգեբանությամբ կերտված հանդիպման տևադարձը («Ռոմանական» XIX, XXIII): Այս բոլոր տվյալները խոսում են գիտական հարցին այսպիսի մոտեցման անհատու կամայականության և անհիմն լինելու մասին:

Եթե փորձենք վերլուծել, թե որն է այս տրոհող տեսությունների թերությունը, ապա կտեսնենք, որ այդ գիտնականների ելակետը ինչ-որ իդեալական բանաստեղծի մասին բոլորովին վերացական պատկերացումն է, և, ոչինչ չիմանալով այդ բանաստեղծի վերաբերյալ, գուտ սուբյեկտիվ կարծիքի վրա հիմնվելով, նրան են վերագրում որոշ հատվածներ և խլում՝ ուրիշները: Այնուհետև, նրանք կամայականորեն ամբողջական ստեղծագործությունը մասնատում են, հաշվի չնստելով դրանք միավորող ներքին կասկի հետ: Բացի դրանից, քննադատները բացահայտում են տարբեր դարաշրջանների շերտավորումներ, հաշվի չառնելով գրական ավանդույթի և էպիկական բանաստեղծի՝ կանխատեսված հնամենացման պահանջները: Իրենց կանխակալ կարծիքներով տարվելով, «տրոհողները» մոռանում են ամենահասարակ և բնական պայմանը՝ որ հսկայածախալ ստեղծագործության մեջ բանաստեղծը կարող է դրսևորել իր տաղանդի ոչ միայն ուժեղ, այլև թույլ կողմերը, ուստի և առանձին հատվածների որակական տարբերությունները չեն կարող սպացույց հանդիսանալ տարբեր հեղինակների մասնակցության: Եթե նման հարցը դժվարություններ է ներկայացնում անգամ նոր ժամանակների գրողների վերաբերյալ, ապա այն ավելի է բարդանում նրանով, որ մենք բացարձակապես ոչինչ չգիտենք Հոմերոսի անձնավորության մասին: Սրանից հետևում է, որ նրա մասին մեր բոլոր դատողությունները պետք է կառուցվեն բացառապես նրա ստեղծագործությունների, դրանց ոճային առանձնահատկությունների և ժանրային պահանջների ուսումնասիրության վրա, այդ պրեմիսերը պետք է պատկերացնել սեղանի բանավոր էպիկական ստեղծագործությունների պայմաններում: Իսկ այդ դեպքում շատ բնական են և՛ կրկնությունները, և՛ նույնիսկ որոշ հակասություններ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պոեմներից յուրաքանչյուրը առանձին վերցրած՝ մեծ բանաստեղծի ստեղծագործությունն է: Սակայն ինչպես անոթի գրականության յուրաքանչյուր ստեղծագործություն, այս պոեմները նա բնականորեն ենթարկվել են աղճատումների՝ բնագրերի ձեռագրային գրառումների ժամանակ, որին նաև ավելանում էին բանավոր ավանդույթի սկզբնական տարբերակները՝ սիւպեր, անհաջող ճշտումներ և նույնիսկ հավելումներ:

Թեև հոմերոսյան հարցը մինչև այժմ չի կարելի սպառված համարել, այնուամենայնիվ՝ այն շատ մեծ դեր է խաղացել համաշխարհային գիտության պատմության մեջ: Նրա կասպե բանահյուսության այլ հարցերի հետ և հունական էպոսի մեծությունը այլ ժողովուրդների էպիկական ստեղծագործություններին ընդհանուր հեռանկարներ են բացում այդ տիպի ըստեղծագործությունների ուսումնասիրության համար: Տարբեր երկրների գիտնականներին այդքան երկար և այդքան խորը զբաղեցրած հոմերոսյան հարցը հսկայական մեթոդաբանական ճշանակություն ունի:

#### 10. ՊՈԵՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Պոեմների ստեղծման ժամանակի վերաբերյալ հետազոտողների կարծիքները խիստ տարբեր են. ոմանք ենթադրում են, որ դրանք «ստեղծվել են երկրորդ հազարամյակի վերջում կամ առաջինի սկզբում, մյուսները, ընդհակառակն, ավելի ուշ շրջանի են վերագրում՝ մ. թ. ա. 7-րդ, կամ նույնիսկ 6-րդ դար: Պոեմներում ճկարագրվում են որոշ առարկաներ, որոնք մեզ հայտնի են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջում կործանված կրետամիկենական մշակույթից: Սակայն այնտեղ նաև բազմիցս հիշատակվում են փյունիկացիները, որոնք Միջերկրական ծովի շրջանում են հայտնվել առաջին հազարամյակի սկզբներին: Հատկապես բնորոշ է փյունիկյան Միդոն քաղաքի և Կիդոնյան գործվածքների հիշատակությունը («Ելիական» VI, 284—85), իսկ այդ քաղաքն ավերվել է ասորական արքա Ասսարադարոսի կողմից 877 թ.: Այս փաստն, այսպիսով, ծայրահեղ թվականն է տալիս: Այդ երկրի բանաստեղծական նյութը և նրանց գեղարվեստական ձևավորման տեխնիկա-

կան փորձառությունը կուտակվել է հարյուրամյակների ընթացքում, մինչև որ հանճարեղ բանաստեղծը ի վիճակի է եղել այն մշակել մեկ ամբողջական ստեղծագործության մեջ:

Արա հետ 'մեկտեղ, հայտնի է, որ մ. թ. ա. 6-րդ դ. Սոյունի և Պիսիստրատի օրոք այս պոեմներն արդեն մուտք էին գործել հունական մշակութային կյանքի ոլորտը, և ուսպտոյները (գուսան) դրանք կատարում էին տոնակատարությունների ժամանակ: 7-րդ դարի քնարական բանաստեղծներ Արքիլոքոսի, Տերպանդրոսի և Միմներմոսի երկերում հիշտակություններ կան Հոմերոսի և նրա ստեղծագործությունների մասին: 1954 թ. հայտնաբերվեց մ. թ. ա. 8-րդ դարի մի գավաթ, որի վրա հունարեն լեզվով բանաստեղծական մի մակագրություն կար՝ 'Նեստորի նշանավոր գավաթի հիշատակությամբ: Արդյո՞ք դա Նեստորի գավաթի նկարագրության («Դիական» IX, 638—40) արձագանքը չէր: Բացի սրանից, Հեսիոդոսի դիդակտիկ էպոսի զարգացումը վերաբերում է 8-րդ դարավերջին և 7-ի սկզբին, և այդ էպոսն ամբողջապես հիմնված է հոմերոսյան բանաստեղծության վրա: Այսպիսով, թվում է, կապկածից վեր է դառնում, որ հոմերոսյան պոեմները ավելի վաղ շրջանում են ստեղծվել: Ամենահավանական թվականը 9—8-րդ դարերը պետք է համարել:

## 11. ՀՈՄԵՐՈՍԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Որոշ հետազոտողներ դնում են նաև այս հարցը. երբևէ Հոմերոսը գոյություն ունեցե՞լ է, և ի՞նչ երկեր է նա ստեղծել:

Ինչպես ասացինք, Հոմերոսի մասին կենսագրական տեղեկություններ մենք չունենք, իսկ այն, ինչ հայտնի է նրա վերաբերյալ, հավաստիությունից գուրկ է: Այսպիսով, մեր պատկերացումը Հոմերոսի մասին զուտ ընդհանուր բնույթի է: Տվյալների իսպառ բացակայությունը նրա գոյությունը ժխտելու հիմք են տալիս, սակայն ստեղծագործության առկայությունը ստիպում է մտածել դրանց ստեղծողի գոյության մասին: Հոմերոսի անճանաչվողության վերաբերյալ հնարավոր բոլոր ենթադրություններն արվել են դեռևս հնում: Ոմանք արտահայտել են այն կարծիքը, թե «Հոմերոս»-ը հասարակ անուն է, որ նշանակել է կամ «տղեկցվող», կամ «պատանդ», կամ էլ «կույր»: Սակայն ժամանակակից հետազոտողները ցույց են տվել այդ բացատրությունների անհիմն լինելը և կամայականությունը: Բազմիցս փորձել են գտնել նաև «Հոմերոս» բառի ստուգաբանական նշանակությունը՝ այն բաղկացուցիչ մասերի բաժանելով՝ «Հոմ» և «եր(ոս)», որոնցից առաջինը նշանակում է «միասին», իսկ երկրորդը ծագել է «հարմարեցնել» բառի արմատից: Այնպես պատկերացում է ստեղծվել մի մարդու մասին, որը ինչ-որ բան է հարմարեցրել կամ մի ամբողջության մեջ է միավորել առանձին երգերը: Սակայն հունական բոլոր անուններն էլ, որ տրվում էին ծնվելիս, ինչ-որ նշանակություն ունեին: Ամեն դեպքում «Հոմերոս» անվան հետ մենք կապում ենք «Դիականի» և «Ոդիսականի» ստեղծողին, որը կարողացել է խորապես հասկանալ և արտահայտել իր ժողովրդի ազգային զգացումները:

Մեր ժամանակներում Հոմերոսի պոեմների նկատմամբ հետաքրքրությունն ամենուրեք աճում է. դրանք թարգմանվում են աշխարհի ժողովուրդների լեզուներով: Հունական էպոսը մեզ համար գեղարվեստական ստեղծագործության հրաշալի մի նմուշ է, որն ավելի արժեքավոր է նրանով, որ այնտեղ «բարբախտում է մարդկային հասարակության մանկության ստեղծագործական ուժը, որտեղ այն զարգացավ ամենագեղեցիկ կերպով» (Կ. Մարքս):

# Ե Ր Գ Ա Ն Ա Չ Ի Ն

ՍՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՔԵՆ

Երգի՛ր, Մուսա, քենը երգի՛ր Պելիսաճին Աքիլլեսի,  
Քենը դըժնյա, որ անհամար ցավեր բերեց արայեցոց,  
Որ բազմաթիվ դյուցազների գահավիժեց դըժոխքն ի վար  
Եվ դին նորանց դարձրեց կեր թըռչունների և շնների:  
Կատարվում էր Արամազդի կամքը այսպես, երբ մի անգամ  
Վեճի մըտան իրարու հետ ու մեկ-մյուսից գըժտըվեցին  
Ատրիդեսը՝ արանց արքան և Աքիլլեսն աստվածազարն:

Իսկ ո՞վ անմահ աստվածներից այդ երկուսին գըցեց իրար,—  
Ապոլլոնը՝ Լատոնեի և մեծագոր Ջևսի որդին,  
10 Որ արքայի դեմ զայրացած՝ բանակի մեջ վառեց ժանտախտ,  
Ու տանջամահ մեռնում էին բազում զինվոր և զորական:  
Ազամեմնոնն անարգելով արհամարհեց Քրիսես քուրմին,  
Որ եկել էր հասել նավերն արայեցոց արագաթև.  
Մեծ փրկյալքով ազատելու իր աղջրկան գերությունից:  
Ջեռքին ուներ աղեղնավոր Ապոլլոնի ցուպը ոսկյա  
Ապարոշի մեջ փաթաթած, խընդրում էր նա արայեցոց  
Եվ մանավանդ՝ գույգ Ատրիդյան ժողովրդի իշխաններին.  
«Ո՛վ Ատրիդներ, և համագունդ այլ ամրաբարձ արայեցիք,  
Ոյիմպարեակ ամենագոր աստվածները թող ձեզ օգնեն  
20 Քանդել քաղաքը Պրիամի և բարո՞վ տուն վերադառնաք:  
Ընդունեցեք փրկյալքը ճոխ և ինձ տըվեք դրստերըս դուք,  
Ակնածելով աստվածորդի արծաթաղեղ Ապոլլոնից»:

Հավան կացան նորա խոսքին այնտեղ բոլոր արայեցիք,  
Պատկանելով Քրիսես քուրմից՝ ընդունելու փրկյալքը ճոխ,  
Բայց Ատրիդես Ազամեմնոնն անբարեհաճ՝ մերժեց նորան  
Ու չարությամբ ետ դարձրեց ըսպառնալից այս խոսքերով.

«Որիչ անգամ քեզ չըտեսնեն այս կողմերում դեգերելիս,  
Մեր գոգավոր նավերի մոտ դու չերևաս այսուհետև.  
Հագիվ թե ցուպն ու վարսակալն աստվածային օգնեն քեզ, ծե՛ր:



30 Չեմ արձակի դըստերդդ ես, մինչև որ նա չըպատավի Արգոսի մեջ, մեր պալատում, հեռու երկրից իր հայրենի՝ Իր ոստայնը գործելով միշտ և պանկելով ինձ հետ մեկտեղ: Գընա՛ դու, ծեր, քո փըրկանքով ու գայրույթս մի՛ գըրգըրիր, Թե ուզում ես գըլուխդ ուսիդ ողջ ու առողջ վերադառնալ»:

Այսպես ասաց, և ծերունին անասց ճըրան ասրսափահար Ու լուռ ու մունջ ելավ գընաց մըռընչալից ծովի ափով: Եվ մեկուսի քաշված ապա թափում էր նա դառն արտասուք, Աղերսելով երկայնավարս Ապոլլոն մեծ թագավորին.

«Լըսիր դու ինձ, արծաթաղե՛ղ, Տենեդոսի հըգոր իշխան,  
40 Որ Քրիսեան ես պահպանում և դիցական Կիլլան բոլոր,  
Թե երբևէ կառուցեցի ես քեզ համար տաճար շըքեղ  
Կամ ցուլերի և այծերի պարարտ ազդրեր զոհ բերեցի,  
Կատարիր այս խնդրանքըս դու. թո՛ղ ամողոք դանայեցիք  
Արցունքներիս համար սուժեն քո ասըասուր սըլաքներով»:

Այսպես ասաց աղերսագին. Ապոլլոնը լըսեց ճըրան Ու գայրացած վար սըլացավ Ոլիմպոսից անմիջապես Իր լայնալիճն ու ամրափակ կապարճները ուղը գըցած: Ծաչում էին ճըրա ուսին նետերը սուր, ահեղասաստ, Երբ որ մըռայլ գիշերվա պես առաջ էր նա սուրում թափով:  
50 Գընաց ճըստեց նավերից գատ և արձակեց նետերն ահեղ,  
Եվ արծաթյա իր աղեղի ճայթումն հընչեց ահագնագայր:  
Նախ գարկեց նա ջորիներին և շըներին արագավազ,  
Բայց մահաբեր նետը հետո ողղելով նա մարդկանց վըրս,  
Հարվածում էր՝ ամենուրեք վառ խարույկներ բորբոքելով:

Ինն օր անվերջ թըռչում էին աստվածային նետերն ահեղ:  
Եվ տասերորդ օրն Աքիլլես կանչեց ամբոխը ժողովի.  
Նըրան միտքը այդ ներշընչեց աստվածուհի աչեղ Հերան,  
Որ հուզված էր ի տես հունաց համատարած կոտորածին:  
Երբ աքայանք ամեն կողմից հավաքվեցին ակըմբահույլ,  
60 Ելավ քաջոտն Աքիլլն այնժամ և մեծաձայն այսպես ասաց.  
«Ո՛վ Ատրիդես, այժըմ, կարծեմ, ժամանակն է, որ նավերով  
Ետ դառնանք մեճք, եթե միայն ճողոպրեինք ահեղ մահից,  
Ջի ձեռք-ձեռքի տըված ժանտախտն ու պատերազմն ընկճում են մեզ:  
Բայց խորհուրդի կանչեճք իսկույն ըղձապատում մեկին այստեղ,  
Կամ մի քուրմի և կամ հըմուտ երագագետ ոմըն մարդու,  
(Քանզի երագն էլ գալիս է իմաստնագույն Արամազդից)  
Որ բացատրի, թե Ապոլլոնն ինչո՞ւ է մեզ նեղում այսքան,

Թերևս նա մեր մի ուխտից և կամ զոհից դըժգոհ է խիստ,  
Եվ կամ գուցե, վայելելով ճենճերն ընտիր ոչխարների  
70 Հաճի մեզնից սարսափելի սրբածությունն այս հեռացնել»:

Այսպես ասաց նա և նրստեց, և նրբանից հետո իսկույն  
Ելավ Կալբաս Թեստորյանը՝ ամենավեհ գուշակ-հըման,  
Որ քաջ գիտեր ամենայն ինչ, գիտեր անցյալն ու ապագան:  
Գուշակության իր շքնորհիվ, որ Ապոլլոնն էր շքնորհել,  
Առաջնորդ էր եղել հունաց նավերին նա մինչև Իլիոն:  
Արդ, ի խընդիր նրբանց բարուն՝ ըսկըսեց նա ճառել այսպես.  
«Մ'վ սիրելիդ Արամազդի, դու Աքիլլե'ս աստվածագարս,  
Ասում ես ինձ, որ ես մեկնեմ սրբամըտությունն Ապոլլոնի:  
Կըբացատրեմ բոլորը ես, բայց դու պիտի ուխտես նրդմամբ,  
80 Որ ինձ կօգնես ճըշմարտապես, լինի խոսքով և կամ գործով,  
Զի անկասկած քաջ գիտեմ ես, որ ինձ վըրա կըբարկանա  
Նա, որ իշխում է մեծագոր՝ արգիացոց վըրա համայն,  
Եվ որին ողջ աքալեցիք հրպատակվում են հընազանդ:  
Թագավորը անեղ է, երբ բարկանում է փոքրի վըրա,  
Եվ եթե նա զըսայի թեկուզ իր վըրդովմունքն առժամապես,  
Մակայն սրբտում ոյս կըբանի, մինչև լուծի վըրեժն իր սև:  
Ուստի և լա՛վ խորհիր, արդյոք կարո՞ղ ես դու ինձ սաշտպանել»:

Պատասխանեց նրբան քաջոտն Աքիլլը և այսպես ասաց.  
«Մի՛ վախենար, պատմիր բոլորն ու պատգամիր, ինչ որ գիտես:  
90 Երդվում եմ ես Արամազդի սիրելագույն Ապոլլոնով,  
Որից, Կալբա՛ս, դանալեցոց հայտնություններ ես պատգամում,  
Քանի ողջ եմ, և աչքերըս տեսնում եմ լույսն արեգական,  
Ոչ ոք պիտի քեզ չըդիպչի, չըբարձրացնի ձեռքը վըրադ  
Եվ ոչ մի հույն, մինչև անգամ ինքը Ատրիդ Ագամեմնոնն,  
Որի համար ասում ես թե արքան է ողջ աքալեցոց»:

Այն ժամանակ հըման անքիժ սիրտ առնելով այսպես ասաց.  
«Ապոլլոնը չի գանգատվում ո՛չ մեր ուխտից և ո՛չ զոհից.  
Այլ Քրիսես ծերունափառ քուրմի համար է բարկացած,  
Որին այնպես խիստ անգոսնեց Ագամեմնոնն այն ժամանակ,  
100 Զարձակելով նըրա դըստերն ու փըրկանքը չընդունելով:  
Ա՛յս է պատճառն անավասիկ, որ Ապոլլոնն աղեղնավոր  
Ցավեր տըվեց մեզ անհամար և տակավին պետք է որ տա,  
Եվ ժանտախտի օրհասը սև մեզնից պիտի չըհեռացնի,  
Մինչև աղչիկն այն գեղաչյա առանց գընման ու վըրկանքի  
Զըտրվի հորն ու չըտարվի դեպի Քրիսես զոհ անբասիր:  
Միայն այնժամ գուցե նըրան ողոքելով մենք հաշտեցնենք»:

Նըստեց այսպես պատգամելով Կայքաս գուշակը Թեստորյան  
Ելավ այնժամ դյուցազն Ատրիդ Ագամեմնոնն իշխանապետ  
Լի բարկությամբ, տըրտմաթաթավ, սիրտը մըռայլ ամպով պատած,  
110 Եվ աչքերը նըման երկու կայծակնացայտ կըրակների,  
Եվ Կայքասին դառնալով նա՛ այսպես խոսեց խոժոռադեմ.

«Չարագուշակ գուժկանըդ դու, ոչ մի լավ բան ինձ չասացիր.  
Սիրելի է սըրտին քո միշտ չարիքների լինել գուշակ:  
Բարի մի բան չավետեցիր, ոչ էլ գըլուխ հանեցիր դու.  
Եվ արդ էլն ճառ ես ասում դանաչեցոց դու մարգարեդ,  
Որ իբրև թե Աղեղնավորն ա՛յն պատճառով է մեզ պատժում,  
Որ ես ինքըս չեմ ընդունել Քրիստիսի փըրկանքը ճոխ,  
Ցանկանալով օրիորդին տանըս պահել, նախընտրելով  
Կիտեմնեստրե իմ կընոջից, որ նըրանից ցած չի մընում  
120 Ո՛չ հասակով և ո՛չ մարմնով, ո՛չ էլ խելքով և կամ գործով:  
Բայց և այնպես, եթե պետք է, և բարվոք եք համարում դուք,  
Պատրաստ եմ ես այժըմնեթ ուղարկելու նորը նըրան,  
Քանզի ազգիս փըրկությունն եմ կամենում ես և ո՛չ կորուստ:  
Բայց անհապաղ պատրաստեցեք դուք ինձ համար մի ա՛յլ սյարզև,  
Որ չըմնամ արգիացոց մեջ միայն ե՛ս անմըրցանակ,  
Ինչ որ վաչել չէ ինձ բընավ, չէ՞ որ ահա տեսնում եք դուք,  
Որ մըրցանակն իմ թանկագին՝ ձեռքիցս արդեն դուրս է գալիս»:

Նըրան այսպես պատասխանեց Աքիլլեսը աստվածազարմ.  
«Ո՛վ մեծափառ Ագամեմնոն, ժըլատ սաստիկ և ընչաքաղց,  
130 Մեծահոգի հույները քեզ ինչպե՞ս պիտի տան մըրցանակ:  
Մենք չըգիտենք այնպիսի տեղ, ուր ավարներ լինեն դիզված,  
Իսկ ինչ որ մենք ավարեցինք, բաժանված է վաղուց արդեն,  
Եվ արդար չէ, որ վերըստին գորքն այն բերի, թափի այստեղ:  
Առայժըմ դու ետ ուղարկիր օրիորդին, իսկ մենք, հետո,  
Աքայանքըս եռապատիկ, քառապատիկ և ավելին  
Կըհատուցենք քեզ փոխարենն, եթե Ջևաը մեզ շնորհի  
Հիմնահատակ քանդել մի օր Տրոյա քաղաքն ամրապարիսպ»:

Նըրան այսպես պատասխանեց Ագամեմնոն արանց արքան.  
«Աստվածատիպ դու Աքիլլես, ինձ մի՛ փորձիր խաբել իզուր,  
140 Քաջ ես թեպետ և խելացի, բայց ինձ ծուղակ չես գըցի դու:  
Մըրցանակըդ պահես դու պինդ, և գըրկվե՛մ ես իմինից.  
Եվ ինձ պատվեր ես տալիս դեռ, որ ես նըրան ետ ուղարկեմ...  
Լինի՛, միայն մի՛ պայմանով, որ ինձ մեծանձն արաչեցիք,  
Ծանելով սիրտն իմ՝ փոխարեն տան մըրցանակ մի համարժեք.  
Իսկ եթե ոչ, ինքըս անձամբ գալով պիտի սեփականեմ

Պարզևը քո կամ Այաքսի, Ռդիսևսի, սակայն, գիտեմ,  
 Ում էլ որ ես ձեռք դիպցընեմ՝ պիտի մորնչա դառնահառաչ:  
 Սակայն թողնենք մենք այս մասին ուրիշ անգամ մըտածելու,  
 Իսկ այժմը շուտ մակույկ գըցենք աստվածային ծովի վըրս,  
 150 Նըշանակենք նավաստիներ քաջաբազուկ և աջողակ,  
 Իրենք մեքը մեր զոհը սուրբ և գեղեցկայա Քրիստիսին:  
 Իշխաններից մեկը թող որ առաջնորդի մակույկը սև.  
 Այաքսը կամ Իդոմենեսն, կամ Ռդիսևսը դյուցազարս,  
 Եվ կամ ինքքդ, Պելիսածին, ահեղագո՛ւլնդ ամենքի մեջ,  
 Որպեսզի դու մատուցելով զոհը՝ շարժես սիրտը նըրս,  
 Ու հաշտեցնես խրոովահույզ հաստադեղին աքայանց հետ»:

Աքիլլն այնժամ ծոռ նայելով՝ նըրան այսպես պատասխանեց.  
 «Ռ՛վ լըրբությանը լըցված հոգի, դու ընչաքաղց ու նենգամիտ.  
 Այսուհետև ո՛վ հույներից պիտի խոսքիդ անսա սիրով,  
 160 Ծամփա գընա հոժարական և կամ կըովի քաջակորով:  
 Վրեժխնդիր ոգով վառված՝ չեկա այստեղ մարտընչելու  
 Տըրոյացոց դեմ տիգազեն, որոնք վընաս չեն տըվել ինձ,  
 Զեն ավարել նըրանք էրբեք ոչ եզներըս և ոչ էլ ձիս,  
 Ոչ էլ Փթիռ մեջ արգավանդ՝ բերրի հունձքերս են աղարտել,  
 Զի մեր միջև կան բազմաթիվ լեռներ պաշտպան ու գոռ ծովեր,—  
 Այլ, ո՛վ լըպիրշ, եկանք այստեղ, քո ետևից, որ դու հըրճվես՝  
 Մենեղալի և քո վըրեժն առնելով քաջ տրովցիներից:  
 Սըրանց մասին, ա՛յ շաներես, չես մըտածում ամենևին  
 Եվ ըսպառնում ես լըրբաբար մըրցանակն իմ խըլել ինձնից,  
 170 Որի համար ես այնքան շատ աշխատեցի քըրտիներ մըտած,  
 Եվ որը ինձ պարզև տըվին պարմանիներն աքայեցի:  
 Զի եղել դեռ, որ մըրցանակն իմ հավասար լինի քոնին,  
 Ամեն անգամ, երբ մի քաղաք են ավերել աքայեցիք.  
 Մինչդեռ կըովի ողջ ծանրությունն այս իմ ուսերն են վերցընում,  
 Իսկ բաշխումի ժամը երբ գա՝ պարզևների մեծը քոնն է,  
 Մինչ ես փոքրիկ, սըրտահաճո մի բան սուսձ իբրև բաժին՝  
 Նավատորմն են վերադառնում՝ հոգնած մարտի տաժանքներից:  
 Ես ինքս հիմա անմիջապես կըհեռանամ դեպի Փթիս,  
 Քանզի հազար անգամ լավ է նավել դեպի հայրենի տուն,  
 180 Քան թե մընալ և քեզ համար հարստություն դիզել այստեղ»:

Նըրան այսպես պատասխանեց Ագամեմնոն արանց արքան.  
 «Վերադարձի՛ր իսկույն նեթ, եթե քո սիրտն այդ է ուզում.  
 Ես քեզ էրբեք չեմ աղաչի, որ ինձ համար մընաս այստեղ.  
 Իմ շուրջը դեռ շատերը կան, որոնք հարզում պատվում են ինձ,

Առավել ևս Դիոսն ըզգոն՝ Արամազդը ամպրոպադեզ:  
Դյուցասընունդ արքաներից ամենեն շատ քեզ եմ ատում,  
Քանզի սրբոտի պիտեյի եմ ամեն անգամ կրոյով ու վեճ,  
Եվ եթե ուժ ունես՝ այդ էլ աստվածներն են պարզելի քեզ:  
Տո՛ւն դարձիր շուտ քո նավերով, ընկերներով քո համախոն,  
190 Իշխիր այնտեղ միրմիրոնաց. հոգ չեմ անում ես քեզ համար,  
Ոչ էլ երկյուղ՝ քո վըրեժից, այլ ըսպառնում եմ ես անա,  
Զի Ապոլլոն Գուշակն արդեն առավ ինձնից Քրիսեիսին,  
Ուղարկում եմ ինքքս նըրան իմ մակուկով ու մարդկանցով  
Եվ վըրանդ գալով անձամբ՝ քո մըրցանակն առնեմ պիտի,  
Գեղատեսիլ Բրիսեիսին, որպեսզի դու լավ հասկանաս,  
Թե քեզանից հըզոյր եմ ես, և ուրիշներն առհասարակ  
Չըհանդըզենն անձը իրենց դընել անձիս զուգայլըշի»:

Այսպես ասաց, ցատունն առավ Պելիսածին Աքիլլեսին,  
Եվ թավամազ կըրծքի ներքո երկմըտում էր սիրտը նըրա՝  
200 Հեռու վաներ բոլորին էլ և ըսպանե՞ր Ատրիդեսին,  
Թե՞ զըսպեր իր գայրույթը բարկ ու ցատունը սանձահարեր:  
Եվ մինչդեռ նա խըռովահույզ ու դառնապես վիրավորված  
Պատրաստվում էր դուրս քաշելու վիթխարի սուրն իր պատշանից՝  
Ինքն Աթենասն իջավ այնտեղ՝ եկած Հերա աստվածուհուց,  
Որ սիրում էր երկուսին էլ և հոգ տանում առհավասար:  
Կանգնեց ետև Պելիսյանի, բըռնեց խարտյաշ գանգուրներից.  
(Միայն նըրան էր երևում, նըրանից գատ ո՛չ այլ ոքի):  
Սոսկաց Աքիլլն ու շուտ գալով՝ տեսավ Պալլաս Աթենասին,  
Որին իսկույն նա ճանաչեց կայծակնացայտ հուր աչքերից,  
210 Ու տեղնուտեղ արագաթև այս խոսքերը ուղղեց նըրան.  
«Ինչո՞ւ եկար, դո՛ւստորդ ահեղ ասպարակիր Արամազդի,  
Ագամեմոնն Ատրիդեսի թըշնամանքնե՞րը տեսնելու:  
Բայց ասում եմ ահավասիկ, և ասածըս կկատարվի,  
Գոռոզոյթյունն ամբարտավան դըրա գըրուխն ուտե՛ պիտի»:

Եվ Ասթենաս աստվածուհին նըրան այսպես պատասխանեց,  
«Եկա, որ քո սըրտմըտությունն ես ամոքեմ, եթե անաս:  
Ինձ ուղարկեց լուսածըղի աստվածուհի Հերան այնտեղ,  
Որ սիրում է երկուսիդ էլ ու հոգ տանում առհավասար:  
Դադարեցրո՛ւ կըռիվըդ դու և մի՛ քաշիր սուրըդ սուրսաշր,  
220 Այլ նախատիր խոսքով նըրան, ինչքան որ քո սիրուն է ուզում,  
Ասում եմ քեզ ահավասիկ, և կատարվի խոսքըս պիտի,  
Օր պիտի գա, որ փոխարենն այս անիրավ թըշնամանքի,

Եռասպտիկ ճոխ պարզևներ տիպի տըրվեն քեզ, Աքիլլես,  
Բայց առայժըմ զըսպիր դու քեզ և մեզ անսա խոհեմաբար»:

Եվ պատասխան տալով նրան՝ այսպես ասաց Աքիլլը քաջ.  
«Պետք է պահել, աստվածուհի, պատվերը ձեր և ձեզ անսալ,  
Թեև սաստիկ եմ զայրացած, բայց լավ է ձեզ հընազանդել.  
Աստվածներին լըսողն երբեք չի մոռացվում աստվածներից»:

- Ասաց և իր ծանրը ձեռքով խըթեց արծաթ երախակալն
- 230 Ու վիթխարի սուրն իր անեղ՝ պատյանի մեջ խըրեց կըրկին,  
Հնազանդելով Այթեմասին, որը դարձավ դեպ Ոլիմպոս՝  
Բընակավայրն անմահների, ասպարակիր Դիոսի մոտ:  
Իսկ Աքիլլը, որը ցասման ամպրոպը դեռ չէր դադարել,  
Վերըսկըսեց նորից սաստիկ հանդիմանել Ատրիդեսին.  
«Ո՛վ դու գինուց ծանրացած մարդ, եղջերվասիրտ և շընաչյա,  
Գուպարի մեջ արիաբար դու չըմրտար ոչ մի անգամ,  
Ոչ էլ հունաց քաջերի հետ դարսն մըտար երբևիցե,  
Քանզի քեզ այդ մահ է յըվում. շա՛տ ավելի լավ է անշուշտ  
Աքայեցոց մեծ բանակում նըստել հանգիստ և ապահով,  
240 Նըստել և քեզ դեմ խոսողի մըրցանակներն հափըշտակել:  
Ազգակործա՛ն դու թագավոր, վատերի ես հըրամայում,  
Թե չէ, Ատրիդ, այս լըրբությունդ այսօր վերջինն էր լինելու:  
Բայց ես անա՛ստում եմ քեզ ու երդվում եմ նըմանապես  
Այս մականի վըրս, որ էլ չի արձակի տերև ու ոստ,  
Քանզի որ նա՛ անդառնալի՛ բունն իր թողեց լեռան վըրս  
Եվ այլևըս այսուհետև նա չի նորից թողթօջելու,  
Զի պըղինձը քերեց նըրս տերևներն ու կեղևն ամուր,  
Եվ որ իրենց ձեռքում անա կըրում եմ արդ իրավարար  
Աքայեցիք՝ Արամազդի օրենքներին ավանդապահ:  
250 Արդ, այս երդումս անավասիկ աղետաբեր կըլինի քեզ.  
Օր կըզա, երբ աքայեցիք Աքիլլեսին փընտրեն պիտի,  
Եվ դու, թեպետև սըրտացավ՝ չըկարենաս օգնել նըրանց,  
Երբ որ Հեկտորն արյունուշտ գետին, փըրի շատ շատերին:  
Ինքըդ այնժամ տազնապահար սիրտըդ պիտի պատսոտես,  
Թե դու ինչո՞ւ չըպատվեցիր աքայացոց քաջագույնին»:

- Այսպես ասաց Պելիսածինն ու ոսկեգամ, բևեռայինդ  
Գավազանը գըցեց գետին և ինքն այնտեղ նըստեց նորից:  
Իսկ Ատրիդեսն անազնազայր մըռձըրում էր քինախընդիր:  
Ելավ այնժամ Պելլանց խոսնակ քաղցրաբարբառ Նեստորը ծեր,  
260 Որի լեզվից մեղրից անուշ՝ խելոք խոսքեր էին ծորում:

Ապրել էր նա պարզաբարբառ մարդկանց երկու սերընդի հետ .  
Որ դիցաչին Պիլոսի մեջ ապրել-սընվել էին առաջ,  
Որոնք բոլորն էլ վաղուց ի վեր անհետացել էին արդեն  
Եվ երրորդի վըրա էր նա թագավորում այդ ժամանակ:

Որպես բարի խորհրդատու՝ Նեստորն աչապես սասց Գրբանց.  
«Վա՛յ մեզ, իրոք աքաչեցոց երկրին մեծ սուգ է ըսպասում.  
Ուրախանա՛ն պիտի Պրիամն ու որդիները Պրիամի.

Ցնծան պիտի ամբողջ հոգով և մշուս բոլոր տըրոյացիք,  
Երբ որ լըսեն ձեր մեջ ծագած այս երկպառակ վեճի մասին,  
270 Ձեր, որ վեր եք ողջ հույներից թե՛ խորհրդում, թե՛ մարտի մեջ:  
Ականջ կախեք դուք իմ խոսքին, զի երկուսդ էլ փոքր եք ինձանից.  
Մի ժամանակ ձեզանի՛ց էլ քաջ մարդկանց հետ ես ապրեցի,  
Եվ այդ մարդիկ բոլորովին չանգոսնեցին ինձ երբևէ:  
Ես ոչ մի տեղ դեռ չեմ տեսել, չեմ էլ տեսնի ես այնպիսիք,  
Ինչպես Դրիաս ու Պիրիթոս ազգապետներն էին խոհեմ,  
Եվ Կենևսը, Եկատիոսն ու Պոլիփեմն աստվածատիպ,  
Ինչպես Թեսևսը Էգեյան՝ հար և Գրման աստվածների:  
Նըրանց Գրման քաջակորով մարդ չըսընեց երկիրն երբեք,  
Ամենաքաջն էին Գրբանք, կըովում էին իրենց Գրման

280 Քաջերի դեմ լեռնաբընակ, և ջարդեցին Գրբանց բոլոր:  
Եվ ապրեցի ես Գրբանց հետ, գալով երկրից մի հեռավոր—  
Պիլոսից և Գրբանց հետ խառն կըովում էի ուժիս չափով,  
Որոնց հետ այժմ ապրողներից ոչ ոք կըովել սիրտ չի անի.  
Սակայն դարձյալ լըսում էին խորհուրդներըս Գրբանք սիրով:  
Լըսեք և դուք, զի լավ բան է լըսել խելոք խոսք ու խըրատ:  
Ազամենո՛ն, Աքիլլեսից մի՛ խըլի դու այդ աղջըկան,  
Աքաչեցի որդոց տըված պարգևը թող մընա Գրբանց:  
Եվ դու էլ մի՛, Պելիասծին, կըովի հըզոր արքայի հետ,  
Քանզի քեզ հետ և Գույն պատվին չէ հավասար վիճակակից

290 Թագավորը մականակիր, որին Չևսը շնորհեց փառք:  
Թեպետև դու քաջ ես իրոք, աստվածուհի մորից ծընված,  
Բայց ավելի՛ հըզոր է նա, քանզի իշխում է շատերին:  
Դու, Ատրիդես, խընդրում եմ քեզ, մրոունչներդ դադարեցրու,  
Մարիբ հուրը քո բարկության Պելիասծին Աքիլլի դեմ,  
Որ պատվարն է ողջ աքաչանց համար այս մեծ պատերազմում»:

Ազամենոնն արանց արքան Գրբան աչապես պատասխանեց.

«Այդ ամենը, ո՛վ ծերունի, շատ Գրբանարիտ խոսեցիր դու,  
Բայց հավակնում է բոլորից բարձր կանգնել Աքիլլը գոռ  
Եվ ամենքի վըրա իշխել, հըրամաններ արձակելով:

300 Բայց և այնպես չեմ հավատում, որ համոզվի դըրան ոչ ոք:

Եթե նրան քաջ օժտեցին աստվածները, սակայն մի՞թե  
Թույլ տրվին, որ թափե բերնից հազար լուտանք ու նախատինք»:

Իսկ Աքիլլեսն աստվածագարն կրտրեց նրա խոսքն ու ասաց.  
«Վատ, արդարև, և անպիտան մարդ կոչվեմ ես, եթե երբեք  
Հրամաններիդ այսուհետև հրնազանդեմ և քեզ անսամ:  
Ուրիշներին հըրամաչիր և ինձ վըրա մի՛ հոխորտա,  
Չեմ ուզում քեզ այսուհետև հըրաստակվել ամենևին:  
Ասում եմ քեզ նըմանապես, և դու այն լավ միտքըդ պահիր,  
Ես աղջըկա համար երբեք ձեռքով պիտի չըմարտընչեմ  
310 Ոչ քեզ, ոչ էլ ուրիշի հետ, զի ձեր տըրվածն եք առնում դուք,  
Սակայն ուրիշ ինչ բան որ կա սըրաթըրոչ իմ սև նավում  
Դու նըրանցից ոչինչ պիտի բըռնի առնել չըմանըրգնես,  
Ապա թե ոչ, լավ իմացիր, թող իմանան նաև սըրանք,  
Որ նույն ժամին տեգիս չորս դին ցայտե պիտի ադյունըդ թուխ»:

Աղեղնաբան այս խոսքերի կրուլից հետո ելան նըրանք  
Ու ցըրեցին ժողովն իրենց՝ աքաչեցոց նավերի մոտ:  
Պեկիսածինը հեռացավ դեպի նավերն հարթահատակ,  
Մենիտյանին և զինակից ընկերներին հետն առնելով:  
Իսկ Ատրիդը ծովը ձըգեց արագընթաց մակույկ մի սև  
320 Եվ ընտրելով քըսան նավակ, գետեղեց զոհն աստվածային,  
Բերեց այնտեղ նավը դըրեց Քրիսեիսին գեղեցկադեմ,  
Եվ Ողիսեսը հանձարեղ մակույկ ելավ իբր առաջնորդ:  
Երբ ճանապարհ ընկան նըրանք, նավեցին թաց ճանապարհով,  
Ատրիդեսը մաքըրվելու հըրաման տըրվեց ժողովըրդին:  
Մաքըրվեցին բոլորն այնժամ ու թափեցին աղտն իրենց ծով,  
Ապա հանուն Ապոլլոնի զոհեր բերին ընտիր-ընտիր  
Արջատների և այծերի՝ ամուլ-անբեր այն ծովափին,  
Մինչև երկինքն էր բարձրանում զոհերի ծովան ու գոլորշին:

Եվ մինչ ճամբարն ըզբաղված էր այս գործերով, Ատրիդ արքան  
330 Չէր դադարում Աքիլլի դեմ ըսպառնանքներ մըմըռալուց,  
Եվ կանչելով իր մոտ երկու հավատարիմ ծառաներին՝  
Տալթիբիուսին և հընազանդ Եվրիբատին, այսպես ասաց.  
«Ծո՛ւտ գընացեք Պեկիսածին Աքիլլեսի վըրանը դուք  
Եվ իր ձեռքից բըռնած այստեղ բերեք չըքնաղ Բրիսեիսին.  
Իսկ թե չըտա, ինքըս անձամբ գալով այնտեղ պիտի խըլեմ  
Մեծ գորուջամբ իմ բազմամբոխ, որ պիտ նըրան ծանըր նըստի»:

Այս ասելով ճամփեց նըրանց ըսպառնալից հոխորտանքով:  
Եվ գընացին նըրանք անբեր ծովի ափով ակամայից  
Ու հասնելով միրմիդոնաց վըրաններին ու նավերին,



- 340 Գըրտան ճըրան իր սև նավի և վըրանի առջև ճըստած:  
 Աքիլլեսը ճըրանց ի տես՝ ամենևին չորախացավ:  
 Մունետիկներն արքայի դեմ, պատկասունքով կանգնած հեռու,  
 Ծըպտուն անգամ չըհանեցին իրենց գալու վերաբերյալ,  
 Բայց նա իսկույն գըլխի ընկավ ու դառնալով ճըրանց՝ ասաց.  
 «Ի՞նչ էք այդպես հեռու կանգնել, սորհանդակներ՝ Արամազդի.  
 Առաջ եկեք, դուք իմ հանդեպ հանցավոր չէք բոլորովին,  
 Զեզ Ատրիդեսն է ուղարկել Բրիսեիսի համար, գիտեմ:  
 Գընա՛ ուստի, քաջ Պատրոկլես, դուրս թեր աղջիկն իրենց ուզած,  
 Տուր, որ տանեն, և թող վըկա լինեն երկուսն այս՝ երջանիկ
- 350 Աստվածների առջև անմահ և մարդկանց մոտ մահկանացու,  
 Եվ իրենց ժանտ թագավորի, որ չեմ կըրվի այսուհետև  
 Ու չեմ փըրկի ուրիշներին կորըստաբեր պատուհասից,  
 Զի նա իրոք մոլեգնում է եղեռնավոր խորհուրդներով  
 Ու չի նայում առաջ ու ետ ամենևին, որ կարենա  
 Փըրկել հունաց կյանքը, որոնք մարտընչում են ճըրա համար»:

Այսպես ասաց, և Պատրոկլեսն իր ընկերոջ հընազանդեց,  
 Եվ վրանից դուրս հանելով գեղեցկատես Բրիսեիսին,  
 Հանձնեց ճըրանց, որոնք իսկույն վերադարձան դեպ աքայանք.  
 Եվ մանկամարդ կինն ակամա հետևում էր ճըրանց հըլլու:

360 Իսկ Աքիլլեսն ընկերներից առանձնացած և մեկուսի  
 Լաց էր լինում մեն ու մենակ ճըստած ձերմակ ծովի ափին  
 Եվ արցունքոտ աչքերն հառած ծովի կապույտ ալիքներին  
 Մորն էր կանչում աղաչագին երկու ձեռքերն առաջ պարզած.  
 «Մայր իմ, քանզի ինձ կարճակյաց ծընեցիր դու այս աշխարհում,  
 Պետք էր գոնե, որ ոլիմպյան Արամազդը որոտագոչ  
 Պարզներ ինձ փառք ու պատիվ, բայց նա բընավ ինձ չըպատվեց,  
 Իշխանապես Ագամեմոնն ինձ անգոսնեց անարգաբար  
 Եվ մըրցանակըն իմ խըլելով, սեփականեց հանիրավի»:

Այսպես ասաց արտասովալից, և նագելի մայրը լսեց,  
 370 Որ ճըստել էր խորքը ծովի, ծերունագարդ ճըրա հոր մոտ:  
 Զերդ շամանդաղ ելավ ձերմակ ալիքներից անմիջապես,  
 Եկավ ճըստեց իր որդու մոտ, որ լալիս էր սըրտակըտուր,  
 Ու զըզվելով ճըրան ձեռքով, այսպես ասաց գորովագին.  
 «Ինչո՞ւ ես դու լալիս, որդյա՛կ, ի՞նչ ցավ հոգին քո պաշարեց,  
 Ասա, խոսիր, որ իմանամ, տեղյակ լինեմ պատահածին»:

Եվ դառնապես հառաչելով ասաց իր մորն Աքիլլը ժիր.  
 «Գիտես արդեն, ի՞նչ կարիք կա պատմել բոլորն իմացողիդ:

Մըտանք թեքե՛՛նք՝ նըվիրական քաղաքը սուրբ Էտիոնի,  
 Եվ քանդելով, կողոպտելով՝ ավարն ամբողջ բերինք այստեղ,  
 380 Որոնք իրենք աքալեցիք բաժանելով արդարապես,  
 Ատրիդեսին տըվին չըբնաղ ու գեղեցկայտ Քրիսեիսին:  
 Սակայն հետո Քրիսեսը ծեր՝ քուրմը գուշակ Ապոլլոնի  
 Պղղընձագգեստ աքալեցոց սրբաթըռիչ նավերն եկավ,  
 Որ ազատի իր աղջըկան, բերելով հետն անբավ փըրկանք:  
 Ջեռքին բըռնած աղեղնավոր Ապոլլոնի ցուպը ոսկյա  
 Վարսակալի մեջ փաթաթած՝ խընդիրք արավ աքալեցոց  
 Եվ մանավանդ գույգ Ատրիդյան ժողովըրդոց իշխաններին:  
 Հավան կացան նըրա խոսքին այնտեղ բոլոր աքալեցիք  
 Պատկատելով քուրմից՝ առնել նըրա բերած փըրկանքը նոխ,  
 390 Իսկ Ատրիդես Ագամեմնոնն անբարեհաճ՝ մերժեց նըրան  
 Եվ չարությանբ ետ ուղարկեց նըրան աստիկ ըսպառնալով:  
 Հեգ ծերունին հույժ բարկացած վերադարձավ եկած նամփով:  
 Եվ Ապոլլոնն իր սիրելու լըսելով լացն աղիողորմ  
 Ողղեց սըլաքն իր մահաբեր արգիացոց վըրա համայն:  
 Մեռնում էին գորք անհաշիվ. թըռչում էին աստվածային  
 Նետերն անդուլ՝ լայնածավալ դեպի բանակն աքալեցոց:  
 Մեկնեց հըմուտ գուշակն այնժամ Հաստադեղի ցասումը մեզ,  
 Իսկ ես աստժուն հաշտեցնելու խորհուրդ էի տալիս նըրանց:  
 Բայց բարկացավ Ագամեմնոնն ըսպառնալիք որոտալով,  
 400 Որ և ահա կատարված է. բանգի խայտակն աքալեցիք  
 Արագահաս նավով նըրան ուղարկում են դեպի Քրիսես  
 Ու տանում են տիրոջ՝ գոհեր. և արքայի մարդիկ դեռ նո՛ր  
 Իմ վըրամից առան տարան չըբնաղագեղ Քրիսեիսին,  
 Որ որդիներն աքալեցոց ինձ տըվեցին որպես պարգև:  
 Եվ արդ, էթե կարող ես դու, հասիր որդուն քո օգնության,  
 Փուլթա, մայր իմ, դեպի Ոլիմպ և աղաչիր Արամազդին,  
 Թե օգնությամբ երբևիցե շահել ես դու սիրտը նըրա:  
 Հաճախ ես դու պարծենալով պատմել իմ հոր ասարանքում,  
 Թե մի անգամ ինքըդ միայն անմահների մեջ բովանդակ  
 410 Մի ծանո ոճրից ազատեցիր Ջըրվանչանին ամպակուտակ,  
 Մինչ մյուսներն ոլիմպիական ջանում էին կապել նըրան՝  
 Հերան աչեղ, Պոսեյդոնը և Աթենաս Պալլասն անգամ:  
 Եվ գընալով աստվածուհիդ նըրա կապերն արձակեցիր,  
 Դեպ Ոլիմպոսը կանչելով հարչուրաձեռն Էտիոնին,  
 Որին բոլոր աստվածները Բրիարես են անվանում,  
 Ջի անցնում էր սա իր հորից իր մեծ ուժով և գորությանբ:  
 Եվ նա գալով՝ Ջըրվանչանի կողքը բազմեց փառքով իր վեհ,  
 Որի ահից աստվածները էլ սիրտ չարին կապել Ջեսին:

Այս բաները հիշեցնելով նըստիւր նըրան դու առընթեր,  
420 Բըռնիր ծընկներն, և թող հաճի լինել տրոյանց նա գորավիզ  
Իսկ ծովափին, նավերի մոտ թող ջարդըվեն աքաչեցիք,  
Որ համն առնեն իրենց գոռոզ, ամբարտավան թագավորի,  
Եվ հասկանա Ատրիոյ արքան, թե ինչպիսի սրխալ գործեց,  
Չըպատվելով արժանապես աքաչեցոց քաջագույնին»:

Եվ պատասխան արվեց որդուն մայրը՝ Թեոխան արտասպալից.  
«Ավա՛ղ, որդչակ, ինչո՞ւ ցավով քեզ ծընեցի, ծընունդ թըշվատ,  
Երանի թե դու նըստեիր նավերի մոտ առանց լացի,  
Քանզի կարճ են կյանքիդ օրերն և քո օրհասն է մոտալուտ:  
Դո՛ւ ոչ միայն սակավակյաց, այլև վըշտոտն ես ամենեն,  
430 Չի չարաբախտ ժամի ես քեզ ծընեցի իմ առագաստում:  
Բայց քեզ համար ես ինքս անձամբ արդ գընալով դեպ Ոլիմպոս,  
Պատմելու եմ փայլակնացայտ Արամազդին, եթե լըսի:  
Իսկ դու նըստիջ և ըսպասիր քո սըրընթաց նավերի մոտ  
Եվ ձեռընթափ եղիր մարտից, աքաչանց դեմ քեն պանելով:  
Ջևար Օվկիան գընաց երեկ էթովպացոց մոտ խընջույքի  
Իր ետևից տանելով նա հույն երջանիկ աստվածների.  
Բայց տասներկու օրից հետո դեպ Ոլիմպոս պիտի դառնա:  
Եվ ես կերթամ աստվածաչին ապարանքը պըղընձակերտ  
Ու փարվելով նըրա ծընկանն, հույս ունեմ թե կըհամոզեն»:

440 Այս ասելով՝ գընաց Թեոխան Աքիլլեսին թողած այնտեղ.  
Սըրտմըտության մեջ գայրագին՝ գեղեցկիրան կընոջ համար,  
Որին բըռնի հափափելով առան տարան իր վըրանից:  
Իսկ Ողիսևը Քրիսե եկալ հասավ իր սուրբ զոհով:  
Ու հագիվ թե նավահանգիստ մըտած նըրանք, հավաքեցին  
Առագաստներն ու ծալելով գետնդեցին սև նավի մեջ.  
Եվ հաստապինդ պարաններով կայմն իջեցրին կայմնկալին  
Ու վարեցին թիակներով նավը դեպի նավակայան,  
Որ գըցելով խարիսխ սպա՛ս պարաններով կապկապեցին:  
Ապա ցամաք ելան բույր պատվիրակներն անմիջապես

450 Եվ հեռաձիգ Ապոլլոնին բերած զոհը դուրս հանեցին  
Ելավ նույնպես Քրիսեիսը լաստափաչտից այս ծովաչու,  
Որին առած բագին տարավ Ողիսևը բազմահանձար,  
Եվ աղջըկան իր սիրելի հորն հանձնելով՝ այսպես ասաց.  
«Ո՛ւ Քրիսես, ինձ ուղարկեց Ագամեմոնն արանց արքան,  
Որ դըստերդ բերեմ և սուրբ զոհ մատուցեմ Ապոլլոնին  
Դանաչեցոց կողմից համայն, որ հաշտըվի արքան մեզ հետ,  
Որ պատճառեց բազմահատաչ աղետ ու սուգ արգիացոց»:

Ասաց, հանձնեց օրհորդին, և ընդունեց ուրախությամբ  
Իր սիրասուն զըստերը հայրն ու շարեցին նըրանք ընդփույթ  
480 Աստվածային զոհը շրթեղ շուրջը բազմի գեղեցկայկերտ:  
Եվ ձեռքները լըվանալով՝ առան ցորնի հատիկը սուրբ,  
Եվ Քրիստեն այն ժամանակ մեծաբարբառ ու ձեռնամարմ՝  
Ապոլլոնին աղոթելով այս սըրտագին խոսքերն ասաց.

«Լսիր ինձ, ո՛վ աղեղնավոր, Տենեդոսի հրզոր դու տեր,  
Որ Քրիստեն ես պահպանում և դիցալկան Կիլլան բոլոր.  
Դեռես նո՛ր լըսեցիր ինձ, և պատվելով քո ծառային,  
Հարվածեցիր ուժգընապես աքայական ժողովրդդին:  
Լըսիր և արդ՛ ու կատարիր նաև այս իմ խընդիրը դու  
Եվ ազատիր դանաչեցոց այս ժանտախտից աղետավոր»:

470 Այսպես ասաց, և Ապոլլոնն արծաթաղեղ լըսեց նըրան:  
Քրիստեսի այդ աղոթքից ու սուրբ հատիկն ցանելուց ետ  
Ջոհերի վիզը ծըռելով փողոտեցին ու քերթեցին  
Եվ ազդրերը կըտրատելով շուրջպատեցին ճարպով համակ  
Ու շուրջ-բոլորը շարեցին հոմ կըտորներ պատառ-պատառ,  
Որոնք փաչտի վըրա շարած այրում էր ծերն ու սև գինին  
Հեղում շիթ-շիթ նըրանց վըրա. իսկ պատանիք իրենց ձեռքին  
Մեկ-մեկ շամփուր հընգամատնչա՝ կանգնած էին կրրակի մոտ:  
Երբ այրվեցին ազդրերն արդեն, ու փորոտին ճաշակեցին,  
Ինչ որ մընաց՝ կըտոր-կըտոր մանըրը շարդած գարկին շամփուր:

480 Ու խընամքով խորովելով առան, ապա հանգըստացած՝  
Հորինեցին անմիջապես կերուխումի մի ճոխ խընջույք  
Եվ կուշտ ու կուռ ճաշակելով վալելեցին խորտիկն համեղ:  
Ապա երբ որ լիացըրին կերուխումի փափազն իրենց,  
Պատանիներն անոթներում լըցրած գինին քերնե-քերան՝  
Բաժակներով բաժանեցին սեղանակից անդամներին:  
Եվ ամբողջ օրն աքայեցի մանուկները օրհներգությամբ  
Առնում էին սիրտն աստըծու նըվագներով գեղեցկաձայն,  
Գովերգելով Ապոլլոնին, որ հրըճվում էր հոգու խորքից:

Իսկ երբ արևը մայր մըրտավ, ու մույթն առավ երկինք-գետին,  
490 Ընկողմանած իրենց նավի պարանների մոտ քընեցին,  
Եվ վարդամատն Առավոտը ծագելու հետ քընիցն էլան,  
Պատրաստվեցին ճամփա ընկնել դեպի բանակն աքայեցոց:  
Ապոլլոնը կորովածիգ հըղեց նըրանց հով հաջողակ,  
Եվ տընկելով կայմը՝ բացին առագաստները ռսայիտակ:  
Քամին լըցրեց առագաստի ծոցն, ու ծըփանքը ծիրանի  
Ծառաչում էր աշավասույր նավի երկու կողմից ուժգին,

- Երբ ալիքները ճեղքելով կըտրում էր սև հավն իր ճամփան:  
 Եվ երբ արդեն ժամանեցին աքայեցոց բանակը մեծ,  
 Մակույկը սև դուրս քաշելով դեպի ցամաք, ավազն ի վեր,  
 500 Տակը դըրին երկար մույթեր իբրև նեցուկ և հեճարան.  
 Եվ նրբանցից ամեն մեկը դեպ իր վըրանն ուղևորվեց:  
 Այնինչ այնտեղ մեն ու մեճակ, իր սըրընթաց հավերի մոտ  
 Նըստած մըխում էր մեկուսի Աքիլեաը Պելիասծին.  
 Չէր երևում ո՛չ քաջերի փառապարզն ժողովներում  
 Ո՛չ էլ մարտում բոլորովին, այլ վըշտահար նըստած այնտեղ՝  
 Հեծում էր նա հառաչագին՝ կարոտ կըռվի և գուպարի:  
 Բայց վերջապես, երբ տասներկուերորդ ծիրանածին այգը ծագեց,  
 Եվ դիք անմահ Դիոսի հետ վերադարձան դեպ Ոլիմպոս,  
 Թեոխար, որ չէր մոռացել որդու պատվերն, առավոտ վաղ  
 510 Ծովից ելած՝ դեպի Ոլիմպ, Արամազդի մոտ ըշտապեց.  
 Եվ նա գըտավ որոտագոչ Արամազդին նըստած այնտեղ,  
 Աստվածներից առանձնացած, Ոլիմպոսի վեճ կատարին:  
 Գընաց նըստեց մոտը և ձախ ձեռքով նըրա ծունկը բըռնած,  
 Աջով՝ կըզակն, աղերս արավ մեծ թագավոր Արամազդին.  
 «Հա՛յր Արամազդ, թե երբևէ օգնել եմ քեզ խոսք ու գործով  
 Անմահների մեջ երջանիկ՝ կատարիր այս խընդիրըս դու:  
 Պատվիր որդուս սակավակչաց, որին այսօր Ատրիդ արքան  
 Արհամարհեց ու պարզևը հափըշտակեց բըռնի կերպով:  
 Իմաստնագո՛չն դու Արամազդ, վըրեժխընդիր եղիր նըրան,  
 520 Տուր հաղթություն տըրոչացոց այնքան, մինչև աքայեցիք  
 Խելքի գալով պատվեն որդուս և մեծարեն արժանապես»:

Ասաց, սակայն ամպակուտակ Արամազդը բան չըխտեց.  
 Նըստել էր նա լուռ, անմըռունչ. Թեոխսն ամուր փարած ծընկան  
 Արամազդին դիմեց դարձյալ երկրորդ անգամ աղերսագին.  
 «Ուրեմըն տուր ինձ մի խոստում և հավաստիք հավանության  
 Եվ կամ մերժիր մի անգամից, զի ոչ ոքից դու վախ չունես,  
 Ասա, որ դու մերժում ես ինձ, որպեսզի ես լավ հասկանամ,  
 Թե, ո՞հ, որքա՞ն անարգագույն մեկն եմ եղել դիցունիչանց մեջ»:

- Եվ Արամազդն ամպրոպային հառաչելով ասաց նըրան.  
 530 «Վատ է, եթե դու Հերաչի ասելությունն իմ դեմ դըրդես,  
 Եվ զայրացնի իմ սիրտը նա իր խոսքերով վայրիվերո,  
 Առանց այդ էլ հաճախակի ցավեցնում է գըլուխըս նա,  
 Փընթփընթալով, թե տըրոչանց օգնում եմ ես պատերազմում:  
 Բայց հեռացիր առայժմ դու՝ Հերան այստեղ քեզ չըտեսնի,  
 Եվ խընդրանքիդ հոգսը թող ինձ, որ ես մինչև վերջը տանեմ»:

Եվ որպէսզի վըստան լինես, երդվում եմ քեզ գըլխովս անա՛,  
Որ իմ կողմից ամենամեծ գըրսակականն է անխափան,  
Ինչ որ գըլխովս եմ երդվում ես, էլ չի փոխվում այնուհետև,  
Կամ չի մընա բոլորովին անհետևանք և անկատար»:

540 Ասաց, կապույտ իր հոնքերով նըշան արավ Ջըրվանյանը,  
Ու շարժվեցին նըրա անմահ գըլխի մազերն աստվածային,  
Եվ դըղըրդեց տատանելով սեծ Ոլիմպոսն իրեն հիմքից:

Այս որոշումն ընդունելուց հետո նըրանք բաժանվեցին:

Արփիանէմ Ոլիմպոսից Թեոխը դէպ ծովը ցատկեց,  
Իսկ Ջևաը իր պալատ գընաց. վեր կենալով այթոններից  
Աստվածները ըշտապեցին գընալ իրենց հորն ընդառաջ,  
Եվ ոչ մեկը չըհանդըզեց նըրա գալուն ըսպատելու:

Գընաց բազմեց Ջևան իր գահին, բայց Հերային ամեն մի բան  
Հայտնի էր քաջ. տեսել էր նա, որ ծովական ծերի չըբնաղ

550 Դուստրը՝ Թեոխն արծաթաթաթիկ. խորհուրդի էր եկել նըրան:

Եվ Ջըրվանյան Ջևան Հերան այս սիրտ ծակող խոսքերն ասաց.

«Ա՛յ նենգամիտ, աստվածներից ո՛վ խորհուրդի եկավ քեզ մոտ,  
Հանո է քեզ ինձնից ծածուկ և առանձին գործեր բըռնել,  
Եվ դու երբեք, ոչ մի անգամ հոժարաբար ու կամովին  
Հանձըն չառար ինձ հայտնելու մըտածումներիդ գաղտնախորհուրդ»:

Եվ պատասխան տըվեց նըրան հայրը բոլոր աստվածների.

«Հերա՛, դու հույս մի՛ ունենա և մի՛ փորձիր իմանալու  
Մըտածումներն իմ ամենայն, որքան էլ որ իմ կինն ես դու.  
Իսկ այն, ինչ որ պետք է լըսել և իմանալ, վըստան եղիր,

560 Լինի նա մարդ և կամ աստված՝ քեզնից առաջ պիտ չիմանա:

Բայց ինչ որ ես աստվածներից առանձին եմ ուզում անել,  
Լավ կանես որ դու այդ մասին ո՛չ հարցընես, ո՛չ էլ քըննես»:

Այն ծամանակ աչեղ Հերան Ջևան այսպէս պատասխանեց.

«Անագորույն դու Ջըրվանյան, այդ ի՞նչ խոսք է ասում ես դու.

Ե՞րբ եմ մի բան ես հարցըրել և կամ քըննել քո գործերից:

Վըճոում ես դու՝ ինչ կամենաս ու կատարում ազատական,

Բայց դողում է սիրտըս աստիկ, թե մի գուցե քեզ ծովական

Ծերի դուստրը՝ արծաթաթաթիկ Թեոխն հանկարծ խաբած լինի,

Որ մուօ-լուսին նըստեց քեզ մոտ ու փաթաթվեց քո ծընկերին,

570 Որին, կարծեմ, խոսք տըվեցիր պատվել քաջոսն Աքիլլեսին

Եվ կոտորել աքաչեցոց բազմութունը նավերի մոտ»:

Եվ Արամազդն ամպրոպային նըրան այսպես պատասխանեց.  
«Կասկածամի՛տ դու անպիտան, լըրտեսում ես ինձ շարունակ,  
Բայց չես կարող ոչինչ անել, այլ պիտ ընկնես աչքիցըս դու,  
Որ քեզ համար հույժ դըժվարին և դառնագույն պետք է լինի:  
Նույնիսկ եթե ասածիդ պես լինի՝ դարձյալ հաճո է ինձ:  
Ձայնըդ կըտրիր, Արստիր տեղդ և անսա՛ իմ հըրամանին,  
Քանզի գուցե չօգնեն քեզ ողջ աստվածները Ոլիմպոսի,  
Երբ որ վըրադ հարձակվեմ ես և քեզ վըրա ձեռք բարձրացնեմ»:

580 Այսպես ասաց, և մեծարգո աչեղ Հերան սարսուխահար  
Քաշվեց հեռու, Արստեց մեկդի սըրտակոտոր և անմըռունչ:  
Հառաչեցին դիք երկնային Արամազդի ապարանքում,  
Իսկ Հեփեստոսը բազմարվեստ ի հաճույս մորն իր սիրելի,  
Հաշտեցնելու համար Արամաց՝ խոսք առնելով՝ այսպես ասաց.

«Արդարև ի՞նչ աղետավոր և դըժընդակ բան կըլինի,  
Թե երկուսովդ մանկանացոց համար կըռվեք ու գըժտվեք,  
Իրար խառնեք աստվածներին. համեղ խընչույքն անգամ պիտի  
Անհամանա, զի հաղթողը պիտի լինի վատթարագույնն:  
Եվ ես մորըս խորհուրդ կըտամ, իմաստուն է թեպետև նա,  
590 Որ քաղցրությամբ սիրտը առնի մեր սիրելի Արամազդ հոր,  
Որպեսզի նա մի Շոր կըռվով խընչույքը մեր չըխըռովի:  
Քանզի եթե ուզի հանկարծ Ոլիմպյանը շահթախաղաց՝  
Աթոռներից մեզ տապալել... զի անսահման հըզոր է նա:  
Բայց դու, մայր իմ, քաղցըր լեզվով Արա մեծ սիրտը ողորջիր,  
Եվ Ոլիմպյանն իսկույն մեզ հետ կըհաշտըլի ու կանուշնա»:

Այսպես ասաց, ցատկեց արագ, երկկանթանի բաժակն առավ  
Եվ դըննելով այն սիրելի մոր ափի մեջ՝ ասաց Արան.

«Համբերությամբ տար դու, մայր իմ, թեպետ սիրտըդ ցաված է խիստ.  
Որ մի գուցե քեզ՝ սիրելուդ հարվածների տակ տեսնեմ ես,  
600 Ու որքան էլ սիրտըս ցավի, ես քեզ օգնել չըկարեճամ,  
Զի դըժվար է և անհընար ընդդիմադրել Ոլիմպյանին:  
Չեմ մոռացել, մի այլ անգամ, երբ օգնության դիմեցի ես,  
Ոտքիցս բըռնած նետեց հեռու ինձ այս շեմքից աստվածային:  
Եվ օրն ի բուն գըլորվելով, մայրամուտին ընկա Լեմնոս՝  
Վըրաս հագիվ կյանքի նըշույլ, կիսակենդան ու կիսաշունչ.  
Եվ սինտացի մարդիկ եկան ընկած տեղից ինձ վերցըրին»:

Հեփեստոսի խոսքի վըրա ժըպտաց Հերա աստվածուհին,  
Եվ ժըպտալով՝ որդու ձեռքից երկկանթանի բաժակն առավ:  
Այդպես աջից ըսկըսելով բոլոր անմասն աստվածներին

610 Մատընվակում էր Հեփեսոսուն աստվածեղեն քաղցր ըմպելին:  
Ու բարձրացավ երջանկափառ անմահների այդ ժողովում  
Ամեն կողմից մի լիաթոք ուրախ քրքրիչ համատարած,  
Երբ որ տեսան տանարի մեջ գործի վրա Հեփեսոսին:

Այսպես ողջ օր, մինչ մայրամուտ ուրախացան ու խընդացին,  
Մինչ հագեցան սրբոներն ամեն ախորժափամ կերուխումից,  
Եվ քընարից քաղցրանըվագ Ապոլլոնի ձեռքում քըռնած,  
Եվ փոխնիփոխ երգ ու տաղից գեղեցկաձայն Մուսաների:

Իսկ երբ մարեց արեգակի շողը վերջին մայրամուտում,  
Ամեն ոք իր հարկը գընաց, ուր գույգ ոտքից կաղ անվանին

620 Ամեն մեկի համար հատուկ կառուցել էր շըքեղ օթյակ:

Իր մահիճը գընաց նաև Արամագըր շանթախաղաց,  
Որտեղ առաջ նընջում էր նա, երբ որ անուշ քունը կըզար.  
Այնտեղ էլած՝ քուն մըտավ նա, կողքն էլ Հերան իր ոսկեգահ:



# Ե Ր Վ Ե Ր Կ Ր Ո Ր Պ

## ԵՐԱԶ. ԲԻՈՎՏԻԱ ԿԱՆՆԱՎԱՀԱՆԵՍ

Նընչում էին գիշերն ի բուն ըսպատագեն մարդիկ ու դիք,  
Արամազդի աչքերիցն էր փախել միայն քունը անուշ.  
**Խըռովանույզ խորհում էր նա՝ ինչպե՛ս պատվեր Աքիլլեսին**  
Եվ աքայանց նավատորմում առաջացներ մեծ կոտորած:  
Եվ ի վերջո այս որոշումն ընդունեց նա իր պրտի մեջ,—  
Հըղել իսկույն չար Երագին Ագամեմնոն արքայի մոտ:  
Եվ կանչելով նա Երագին, այս պրոպոն խոսքերն ասաց.

«Ո՛վ չար Երագ, էլ և գընա դեպի նավերն աքայեցոց  
Եվ մըտնելով վըրանից ներս Ագամեմնոն Ատրիդեսի՝

- 10 Ասա նըրան, ինչ որ ես քեզ պատվիրում եմ ահավասիկ:  
Հըրամայիր, որ հերայանձ աքայեցոց գինե շուտով,  
Զի նա այսօր գըրավելու է Տըրոյան լայնափողոց,  
Քանգի արդեն երկպառակ չեն աստվածները ոլիմպական,  
Հաշտեցրել է նըրանց Հերան իր համոզիչ հորդորներով,  
Եվ ի մոտո տըրոյացոց մեծ աղետներ են ըսպասում»:

Այսպես ասաց, և պատգամը սուած գընաց Երագն իսկույն  
Եվ հասնելով անմիջապես նավատորմիդն աքայեցոց՝  
Ատրիդեսի մոտ սըլացավ և վըրանում գըտավ նըրան,  
Որտեղ խաղաղ և անխըռով, քաղցրը քընով քընում էր նա:

- 20 Կանգնեց նըրա գըլխավերև ծեր Նեստորի կերպարանքով,  
Որին Ատրիդն աքայանց մեջ ամենից շատ էր մեծարում.  
Եվ Նեստորին նըմանվելով՝ Երագն այսպես ասաց նըրան.

«Քընո՞ւմ ես դու, ձիահըմուտ Ատրեսոսի որդիդ արի.  
Չըպեսք է որ խորհըրդական մարդը քընի գիշերն ի բուն,  
Որին հանձնել են ժողովուրդ ու հոգս՝ այսքան գըլխի համար:  
Լըսիր դու ինձ, Արամազդից բանքեր եմ ես գայիս քեզ մոտ,

Որ քեզ վըրա, բարձրում նըստած, հատուկ խընամք ունի և գույթ:  
Նա պատվիրեց, որ վարսագեղ աքալեցոց զինես շուտով,  
Զի դու այսօր առնես պիտի տըրոյացոց ոստանը մեծ,  
30 Քանզի արդեն երկպառակ չեն անմահները ոյիմպական,  
Հաշտեցրել է նորանց Հերան իր համոզիչ հորդորներով,  
Եվ ի մոտո տըրոյացոց մեծ աղետներ են ըսպատում:  
Վող, այս ամենն, ինչ ասացի, միտքըդ պահիր, չըմոռանաս,  
Երբ քունն անուշ, մեղրանըման՝ բաց թողնի քեզ և հեռանա»:

Մեկնեց Երագն այս ասելով, թողած նըրան մըտքերի մեջ,  
Մըտքեր, որոնք բորբորվին գըլուխ գալու բաներ չէին:  
Հախակնում էր Պրիամոսի քաղաքն այդ օր նա գըրավել.  
Տըլսման՝ր, անգետ՝ Արամազդի խորախորհուրդ ծըրագրեղին,  
Որ բյուր ցավեր պիտի բերեր և աղետներ բազմապիսի  
40 Տըրոյացոց և աքալանց՝ դըծոխաբարկ կըռիվներով:  
Զարթնեց քընից. չորս դին իր դեռ հընչում էր ձայնն աստվածային:  
Ելավ նըստեց Ագամեմնոնն ու նոր շապիկ հագավ շըքեղ,  
Թավիշ թիկնոցն առավ վըրան, կապեց ոտքին մուկեր մի գուշգ  
Ու կախելով իր ուսն ի վար վիթխարի սուրն արծաթագուտ՝  
Զեռքը առավ իր հայրական հավերժ անեղծ մականն անբիծ  
Եվ ըշտապեց դեպի նավերը պըղընձագետտ աքալեցոց:

Լայնածավալ Ոյիմպն ի վեր ելնելով Այգն աստվածային,  
Գընում էր լույսն ավետելու Ջևոին և մյուս աստվածներին:  
Իսկ Ատրիդեսն հրրամայեց քարոզներին իր քաջաձայն,  
50 Որ ժողովի հըրավիրեն գիսակազեղ աքալեցոց:  
Հեղեղվում էր հոծ բազմությամբ հըրապարակն հետըզնետն:  
Բայց նա առաջ խորհուրդ արավ Պիլոսածին թագավորի  
Ծերերի հետ խոհեմազարդ, նեստորական նավերի մոտ:  
«Սիրելիներս,— ասաց,— լըսեք, քաղցըր քընիս մեջ այս գիշեր»  
Եկավ Երագն աստվածային՝ քաջ Նեստորին անչափ նըման—  
Կերպարանքով և հասակով, ձայն ու ձևով իսկ և իսկ նա  
Եվ, կանգնելով սընարիս մոտ, ինձ դիմելով, այսպես ասաց.  
«Քընո՞ւմ ես դու, ձիանըմոտ Ատրենոսի որդիդ արի,  
«Խորհըրդական մարդը պետք չէ գիշերն ի քուն տարվի քընով,  
60 «Որին հանձնել են ժողովուրդ ու բազմաթիվ հոգսեր ու ցավ:  
«Լըսիր դու ինձ, Արամազդից սուրհանդակ եմ գալիս քեզ մոտ,  
«Արամազդից, որ քեզ վըրա ունի հատուկ խընամք ու սեր:  
«Նա պատվիրեց, որ վարսագեղ աքալեցոց զինեն արագ,  
«Զի դու այսօր գըրավելու ես Տըրոյան լայնափողոց,  
«Քանզի արդեն երկպառակ չեն աստվածները ոյիմպական,

«Հաշտեցրել է Արրանց Հերան իր համոզիչ հորդորներով,  
«Եվ ի մոտո տըրոյացոց մեծ աղետներ են ըսպատում:  
«Արդ, այս ամենն, ինչ ասացի, միտքդ պահիր, չըմոռանաս»:—  
Այսպես ասաց, թողեց գընաց, ու հեռացավ քունն աչքերես.

70 Հիմա տեսնենք, պիտ կարենա՞նք զինավառել արքայեցոց:  
Բայց ես առաջ խոսքով պիտի փորձեմ Արրանց, ինչպես պետք է,  
Տամ հըրաման, որ ճողոպրեն բազմապըտույտ նավայներով,  
Իսկ դուք էլ այս ու այն կողմից արգելեցեք հորդորաձայն»:

Այսպես ասաց նա ու Արստեց, ու վեր կացավ Նեստուրը ծեր  
Ավագաշատ Պիրոսի տեր ու թագավորն արծաթաբաշ,  
Եվ ի խընդիր Արրանց բարուն՝ խոսք առնելով, այսպես ասաց.

«Ո՛վ սիրելի գորավարներ արգիացոց և իշխաններ,  
Եթե երազն այդ մեզ պատմեր այստեղ մի այլ արքայեցի,  
Նըրան հավատ չընծայելով՝ կասեինք որ սուտ է ասում.

80 Սավայն նա՛ է տեսել, ով որ վեհագույնն է արքայանց մեջ.  
Օն, ուրեմըն, եկեք ի մի զինավառենք արքայեցոց»:

Ասաց Նեստուրն ու դուրս եկավ. ոտքի ելան մակահակիր  
Թագավորներն անմիջապես ժողովըրդոց հովվին հրլու,  
Մինչ ժողովուրդը խոռներամ դիմում էր դեպ հըրապարակ:  
Մեղուների պարսերն ինչպես, որ խումբ առ խումբ ու խոռնախելո,  
Ժայռի ծերպից դուրս խուժելով՝ խուճապում են, խալում առաջ,  
Թևում, թըռչում ողկուզորեն ծաղիկների վըրս գարնան,  
Ոմանք այստեղ, ոմանք այնտեղ սալառնելով բազմագումար,—  
Այդպես Արրանց ազգերն անթիվ վըրաններից ու նավերից

90 Գընում էին գունդ-գունդ դեպի ծովեզերյա հըրապարակ:  
Եվ Ծըռինդը՝ Արամազդի հրեշտակն ետում էր Արրանց մեջ  
Ու քայլերը արագացնում Արրանց՝ դեպի ժողովատեղ:  
Տընքում էր լիք հըրապարակն այդ բազմություն ոտքերի տակ,  
Եվ կար աղմուկ մի խառնաձայն. ինը ձայնեղ մունետիկներ  
Թափում էին մեծ ճիգ ու ջանք լըռեցնելու համար Արրանց,  
Որ ունկընդրեն դյուցազնական, աստվածային արքաներին:  
Ամբոխն հագիվ տեղավորված ու հանդարտած աղմուկն անձայր՝  
Ոտքի ելավ վըսեմաշուք Ագամեմոնն արանց արքան  
Ջեռքին բըռնած ցուպ հոյակապ՝ գործ մեծաշան Հեփեստոսի:  
100 Հեփեստոսը տըվեց ցուպն սղո՝ մեծ թագավոր Արամազդին,  
Եվ Արամազդն այն պարզեց պատվիրակին արգոսասպան,  
Իսկ թագավոր Հերմեսն հետո րնծայեց այն Պելուպեին,  
Եվ Պելուպեն այն ավանդեց ազգաց հովիվ Ատրեոսին,  
Սա մեռնելիս՝ խաշնահարուստ Թիեստին այն թողեց լավանդ,

- Եվ թրեատը՝ Ագամեմոն Ատրիդեսին, որ այն կրրի  
Եվ արի շատ կրղզիների և Արգոսի վըրս համայն:  
Արդ, այդ ցուային հենկամ Ատրիդն այսպես խոսեց արգիացոց.  
«Մի՛ վ սիրելի դամայեցիք, դյուցազուննե՛ր արիսական,  
Ինքն Արամազոք Չըրվանյան ծանրո հոգսեր բարդեց վըրսս.  
110 Անագորո՛ւյն, որ նախապես խոսք տըվեց ինձ ու խոստացավ  
Քանդել Իլիոնն ամրապարիսպ ու հաղթական դառնայ ի տուն:  
Բայց նեկություն նշոթելով արդ, հըրաման է տալիս նա ինձ,  
Որ ձեռ ի ծոց Արգոս դառնամ այսքան մարդու կորրստից էտ:  
Այս է հարկավ կամքը հըզոր, իմաստնագույն Արամազդի,  
Որ կործանեց հիննահատակ բարձրապարիսպ շատ քաղաքներ  
Ու տակալին քանդե պիտի, զի բոլորից հըզոր է նա:  
Ածյուպի բան է աստիկ, որ սերունդներն ապագայում  
Իմանան, որ արաչական անթըվելի ազգը իզոր  
Յստեղազմել է սնկատար մի պատերազմ երկարատև՝  
120 Մակավարիվ մարդկանց ընդդեմ և չի հասել իր ավարտին:  
Ձի էթե մեկը և տըրոյանք, կրուելով դաշն հավաստարիմ,  
Կանենայինք թըվել միմյանց, հավաքվելին տըրոյացիք  
Մի կողմ իրենց մեծ ու փոքրով, և արաչանք ուրիշ մի կողմ,  
Ու տանական հոգուց զատ-զատ խումբ կազմելինք և առնելինք  
Տըրովցիներից յուրաքանչյուր մեր տասնյակին մի մատընխակ՝  
Ծատ տանակակներ, հավասուցեք, անմատըրովակ կըմընային:  
Ուզում եմ ես ասել՝ այսքան մեծաթիվ են արաչեցիք  
Քան քաղաքի մեջ բընակվող տըրոյացիք մանր ու մեծ:  
Մակայն նըրանց նիզականո՞՞ շատ մարդիկ են հասել աստար՝  
130 Քաղաքներից բազմաքանակ, որոնք իմ դեմ գոռոռալով,  
Թույլ չեն տալիս, որ ես քանդեմ Լիոնը բարեբընակ:  
Արդ, իններորդ տարին է մեծն Արամազդի անցնում անս՝,  
Փըրսան փաչտերն մեր նավերի, պարանները փըրթան բորր,  
Տըների մեջ նըստած տըրտում մեր մանուկներն ու մեր կանայք  
Մեզ են մընում անձկակարոտ, բայց այն գործը, որի համար  
Եկանք այստեղ, իր վախճանին հասնելուց դեռ հեռու է շատ:  
Ուստի եկեք բոլորըս մեկ համաձայնվենք իմ խորհորդին  
Ու մեր նավերն առած, իսկույն, փախչենք դեպի մեր հայրենիք,  
Քանզի այլևս անկարող ենք առնել Տրոյան լայնափողոց»:
- 140 Այսպես խոսեց Ագամեմոնն ու բոլորի սիրտը շարժեց,  
Որոնք գաղտնի իր խորհորդին տեղյակ չէին բոլորովին:  
Ու փոթորկվեց ժողովն ինչպես Իկարյան ծովն ալեկոծյալ,  
Երբ որ Հարավն ու Հյուսիսն, Արամազդ հոր ամպից փրթթած,  
Գըրոն գործեն նըրս վըրս, և կամ Չեփոուն, երբ անավոր,

Հուժկու թափով խուժում է արտն ու հասկերը ճոճում ուժգին,  
Հըրապարակն ահա այդպես պեկոճվեց աղբմկահույզ,  
Եվ ամեն ոք խելակորույս դեպի նավերն էր վազ տալիս:  
Փռչին նրանց ոտքի տակից բարձրանում էր ամպի նըման:  
Ըշտասպեցնում էին միմյանց նավերն իսկույն ծովը ձրգել:

150 Մաքրում, ճամփա էին բացում, և երկիւնքն էր հասնում նրանց  
Գոչյունը բունն ու խառնաձայն— ի տո՛ւն, ի տո՛ւն անմիջապես.  
Ու հապըշտապ հանում էին նավերի հաստ մույթերն ամեն:

Աքալեցոց դարձը այդ օր ճակատագրից անհրրաման  
Գըլուխ կրգար, եթե Հերան Աթենասի հետ չըխոսեր:  
«Ալլա՛դ, — ասաց, — դուստրըդ անհաղթ՝ վահանադրոշ Արամազդի,  
Արգիացիք այսպե՛ս պիտի փախուստ տաչին դեպ հաչրնեիք  
Ծովերի լայն մակերեսով, թողած փառքը Պրիամուսին  
Եվ տըրույանց՝ արգիուհի Հեղինեին ամենագեղ,

Որի համար սզնքան կըտրիճ աքալեցի մարդիկ մեռան  
160 Տըրոյալում, հեռու քաղցրը և անձկալի հաչրեճիքից:  
Բայց դու գընա դեպի բանակն աքալեցոց պրըղնձագգեստ  
Եվ ոլոքիչ քո խոսքերով արգելք եղիր այդ փախուստին,  
Մի՛ թողնի, որ ծովը ձրգեն նրանք նավերն իրենց ճոճուն»:

Այսպես ասաց, և Աթենաս աստվածուհին անասց նրբան  
Ու վար սուրաց սավառնաթև Ոլիմպոսի գագաթներից  
Եվ հասնելով անմիջապես նախատորմիղն աքալեցոց՝  
Գըտավ այնտեղ Ողիսեսին Արամազդի պես իմաստուն,  
Որ կանգնել էր ու չէր դիպչում գեղեցկատախտ իր սև նալին,  
Զի մեծ մի ցավ կըրծքին չոքած՝ կեղեքում էր սիրտը նրբա:

170 Մոտենալով նրբան խաժակն աստվածուհին, ասաց իսկույն.  
«Ո՛րվ կալերտի որդիդ արի, բազմաւընար դու Ողիսես,  
Այսպե՛ս պիտի փախչեիք դուք դեպ ձեր երկիրն անձկալարտտ,  
Անիստունակ, վաչր ընկնելով ձեր բազմատախտ նավերի մեջ,  
Թողնելով մեծ փառք ու պարծանք Պրիամուսին և, մանավանդ,  
Տըրոյացոց ձեռքը թողած արգիուհի Հեղինեին,  
Որի համար սզնքան կըտրիճ աքալեցի մարդիկ մեռան  
Տըրոյալում՝ հեռու քաղցրը և անձկալի հաչրեճիքից:  
Այդ, անհասպաղ մրտիր փախչող աքալեցոց բանակը դու  
Եվ նամոզիչ քո խոսքերով արգելք եղիր այդ փախուստին,  
:50 Մի՛ թողնի, որ ծովը ձրգեն նրանք նավերն իրենց ճոճուն»:

Այսպես ասաց, և ճանաչեց ձաչնից Ողիսն աստվածուհուն  
Եվ ըսկըսեց փագել արագ, վար ձրգելով իր վերարկուն,  
Որ վերցրեց նրբա ծառան՝ Եվրիպատես Իթակեցին:

Ըշտապելով Ագամեմնոն Ատրիդեսին նա ընդստաջ,  
Հաւերժ ամեղծ, հայրենախանդ ցուպը նրա ձեռքիցն առավ  
Եվ ըշտապեց դեպի նավերն պղղընձագգեստ արալեցոց:  
Ճամփին նա ինչ թագավորի կամ անվանի մարդու տեսներ,  
Մոտենալով կանգնեցնում էր նրան անուշ իր խոսքերով.  
«Դշտապե՛ր՝ն դու, վաչել չէ քեզ ահաբեկիլել երկշտոի պես.

190 Տեղըդ նըստիր և նըստեցրու քեզ հետ նաև ուրիշներին,  
Քաճգի ըստույգ դու չըգիտես, թե ինչ է միտքն Ատրիդեսի,  
Թերևս փորձում է արալանց ու կըստածի հետո խրատիվ:  
Բողորըս լավ չըլսեցինք, թե ժողովում նա ինչ ասաց,  
Կարող է նա զայրանալով չարիք գործել արալեցոց,  
Զի բարկութունն ահավոր է դշտագաւարնունդ թագավորի,  
Աշամազդից է սրտիւիք, և սիրում է Ջևար նըրան»:

Իսկ երբ ուսմիկ մարդու տեսներ և գոռալիս բըռներ նըրան,  
Հարվածում էր գավազանով ու կըշտամբում նախատալից.

«Թըշվատակա՛ն, տեղըդ նըստիր ու լավ լըսիր քեզնից մեծին,  
200 Դու վատաւիրտ և ապիկար թե՛ մարտի մեջ, թե՛ խորհըրդում:  
Ինչ է, բոլոր արալանքրս թագավորե՛նք պիտի այստեղ,  
Լավ բան չէ, որ շատերն իշխեն, իշխանը մե՛կ պետք է լինի,  
Մե՛կ թագավոր, որին շնորհեց Ջըրվանյան Ջևար նըրամիտ  
Ե՛լ իրավունք, և՛ գալիզան, որ նա իշխե մարդկանց վըրս»:

Այսպես խըրոխտ, իշխանաբար կարգադրում էր արալեցոց,  
Որոնք նորից ամեն կողմից դեպի ատյանն էին դիմում  
Գոշյուններով խստնադատակ, ինչպես երբ որ շտուսչաձայն  
Ծեղն է եռում ափերի մոտ, և ալիքներն են մըռընչում:

Նըստեց ամեն ոք անըըշունջ ու կըսավ իր նըստարանին.

210 Լոկ Թերսիդեսն էր լեզվազար, որ լըռել չէր կարողանում,  
Նա, որ գրվխում ուներ շըփոթ մըտքերի մի խստնիճադանջ,  
Դուրս էր տալիս ափեղ-ցրփեղ՝ արքաներին միշտ հակատակ  
Ու ծիծաղն էր շարժում միայն արալեցոց ամեն բանում:  
Աղքան տրգեղ ու ալլանդակ մարդ չէր եկած դեռ Իլիոն.  
Աչքերը շիլ, մեկ ոտքը կաղ, ուտերը ծուռ, սաւաւտավոր,  
Կոթքըր նեղ էր ու ներս ընկած, գըլուխը սուր սեխի նըման,  
Եվ տըրածալը գըլխի վըրս հագիլ ուներ մի քանի մագ:  
Թըշնամի էր նա մանավանդ Աքիլլեսին և Ոդիսին,  
Որոնց հանախ հանըրգնաբար հայհոյում էր, հանդիմանում,  
220 Բայց այս անգամ նա վեր կացավ Ագամեմնոն արքայի դեմ  
Եվ նըղնըղան իր սուր լեզվով թափեց լրկտի լուտանք ու թուր,

Գրգռելով իր նկատմամբ արայեցոց զայրույթը բարկ,  
Բայց նա դարձյալ անարգաբար նախատում էր Ատրիդեսին:

- «Ագամեմնո՛ն, ի՞նչդ է պակաս, և ի՞նչո՞ւ ես դու տըրտընջում,  
Վերանցերդ լի պողոթնով ու կանանցով ընտիր-ընտիր,  
Որոնց առաջ քեզ ենք բերում մի նոր քաղաք գրավելիս,  
Թե՛ ոսկու է սիրտըդ կարոտ, որ քեզ բերի ձիանրմուս  
Տըրոյացի մի Իլիոնից՝ իբրև փրկանք իր գաղակին,  
Որ կապկապած բերենք քեզ մոտ ես կամ մի այլ արայեցի:  
230 Կամ մանկամարդ կի՞ն ես ուզում, որին պրդծես, պոռնըկանաս  
Եվ քեզ համար պահես միայն. վայել չէ քեզ, իշխան մարդոդ  
Աչդպես դեպի չարիք մըղել արայեցոց որդիներին:  
Է՛յ դուք վախկոտ գարշելիներ, արաչուհիք, ո՛չ արալանք,  
Տուն դառնանք շուտ մեր նավերով, թողնենք դըրան մընա աչտոնդ,  
Որ պարգևներն իր վայելի և որպեսզի լավ հասկանա,  
Թե մենք իրեն պե՞տք ենք, թե ոչ, որ հենց հիմա հանդիմանեց  
Իրենից շատ ավելի քաջ, ազնիվ մարդու՝ Աքիլլեսին  
Ու պարզըք նրա բըռնի հափափելով՝ սեփականեց:  
Բայց Աքիլլեսն աննոգ է խիստ և իր սըրտում լեղի չունի,  
240 Թե չէ, Ատրիդ, այս լըրբությունդ, անշուշտ, վերջինն էր լինելու»:

Աչդպես ասաց, նախատելով Ագամեմնոն ազգապետին,  
Բայց վեր կացավ աստվածային Ռդիան խկոյն ու գայրացած,  
Խեթ նայելով Թերսիդեսին, այսպես գոռաց ըսպառնալից.

- «Է՛յ, Թերսիդես դու լեզվագար, բամբասաներ, ճոռոմախոս,  
Լեզուդ քաշիր և թագավոր մարդկանց խայթել չընճողըզնես.  
Ես չեմ կարծում՝ քեզնից ավել վատթարագույն մեկը լինի,  
Այն մարդկանց մեջ, որ ատրիդյանց հետ միասին Իլիոն եկան:  
Արքաներին բերանդ առած՝ աչդպես մեծ-մեծ մի՛ բրդիր դու,  
Մի՛ քըսիր մոր ու մի՛ խոսիր վերադարձի մասին երբեք,  
250 Քանզի ըստույզ դեռ չըզիտենք, թե գործն ինչո՞վ կըվերջանա,  
Եվ մեր դարձը դեպ հայրենիք արդյո՞ք հաջող պիտի լինի:  
Ի՞նչ ես այդպես դու նախատում Ագամեմնոն ազգապետին,  
Քո ի՞նչ գործն է, թե դանաչանք պարգևներ են բերում նըրան,  
Որ ելել ես ճարտար լեզվով նըրան հայհույն ես կարդում դու  
Բայց ես անա ասում եմ քեզ, և ասածըս կըկատարեմ,  
Եթե մեկ էլ տեսնեմ, որ դու շաղակրատես, ինչպես հիմա,  
Ռդիսեսի գըլուխը թող ողջ չըմընա իր ուսերին,  
Եվ թող որ ինձ Տելեմաքի հայր չըկոչեն, եթե ես քեզ  
Վերարկուից մինչև շապիկ չըմերկացնեմ պատառ-պատառ,  
260 Ամոթանքիդ ծածկույթն անգամ և, ժողովից դուրս քըշելով,  
Քեզ քարջ չըտամ դեպի նավերն՝ գունակոծված ու խուտտաակ»:

- Ասաց, զարկեց գավազանով նրա ուսին ու թիկունքին.  
 Ու կուչ եկավ Թերսիդէսը, շի աչքերից արցունք ցաշտեց,  
 Սեջքի վըրա կանգնեց ուռուցք արունալից ու կապտագույն:  
 Կըսկըծում էր կըծիկ դարձած և արցունքն էր սրբում անձայն:  
 Հաչացքն ապուշ ու ալլանդակ իր շորս կողմը դարձընելով:  
 Աքալեցիք թեն տըխտը, բայց խընդացին նրա վըրա  
 Եվ, նալելով մեկ-մյուսին, իրար այսպես էին ասում.  
 «Իսկասպես որ, ո՛վ աստվածներ, Ողիսեսը շատ բան արեց  
 270 Խորհուրդներով իր խոհական և հըմտությամբ՝ պատերազմում.  
 Եվ հիմա էլ մի գովելի գործ կատարեց աքայանց մեջ  
 Կապկապելով լըկտի լեզուն այդ լըրբախոս շաղակրատի.  
 Այդ անամոթն այսուհետև սիրտ չի անի հանդըզնելու  
 Արքաների դեմ իր լըսիրշ ու լեզվագար պարսավանքով»:  
 Այսպես էին խոսում նըրանք, էրր Ողիսես քաղաքալերն  
 Ռոքի ելավ ցուպը ձեռքին, և Աթենաս խածակն իր մոտ՝  
 Մունետիկի նըման ասատեց ժողովորդին, որ լուռ կենան  
 Եվ կարենան աքալեցիք մինչև վերջին գինվորը՝ պարզ  
 Լըսել նրա պատգամները և խորհուրդներն ի միտ առնել:  
 280 Եվ նա ի սեր նըրանց բարուն՝ այսպես խոսեց խոհեմաբար.  
 «Ո՛վ թագավոր Ագամեմոն, կամենում եմ աքալեցիք,  
 Որ քեզ այսօր նըշավակեն պարգւրսարբատ մարդկանց ասուջ.  
 Չուզեմալով կատար ածել խոստումն իրենց, որ քեզ տըվին,  
 Երբ Արգոսից ձիահըմուտ դեպի այստեղ էին գալիս,  
 Թե տուն պիտի չըդառնային՝ Իլիոնը չըկործանեմ:  
 Սակայն հիմա, նըման փոքրիկ մանուկների, այրի կանանց  
 Լաց են լինում կողկողալով ու տեհչում տուն վերադառնալ:  
 Նըրանց քաշած նեղություններն արդարացնում են տեհչը այդ:  
 Ջի էթե մեկն իր կընոջից հեռու մնալով մի ամսի չարի  
 290 Թախտում է խիստ իր նալի մեջ, որ օրորում են ձմեռվան  
 Փոթորիկներն և ալեկոծ ծովը մըռալ, մըրըրկահուջ,  
 Էլ ի՞նչ պիտի լինեն մերոնք, էրր իններորդ տարին է սա,  
 Որ այստեղ ենք, ուստի և ես չեմ գարմանում բողբոլից,  
 Երբ մահկանա նալերի մոտ լաց են լինում աքալեցիք:  
 Բաց և այնպես ամոթ է խիստ, ուշանալուց հետո արքան,  
 Թողնել գործը մեր անկատար ու ձեռնունայն վերադառնալ:  
 Համբերեցեք, սիրելիներս, ու մի փոքր էլ ըսպասեցեք,  
 Որ իմանանք, ճի՞շտ է, թե ոչ գուշակությունը Կալքասի:  
 Մենք բոլորս էլ լավ ենք հիշում, չենք մոռացել բոլորովին,  
 300 Եվ վըկա է ձեզանից նա, ում խընայեց օրհասը սև:  
 Թըվում է ինձ, թե երեկ էր, կամ նախորդ օր, ո՛չ ավելի,  
 Երբ նավատորմն աքալեցոց հավաքվում էր Ավիսի մեջ,



- Ի մեծ կորուստ ու պատուհաս Պրիամոսը և տըրոյանց:  
 Աղբջորի շուրջ, Գըվիրական բազիկների վըրս, երբ մենք  
 Ջոհում էինք աստվածների համար անմահ՝ ընտիր գոհեր  
 Սաղարթագեղ սոսեհու տակ, ուր քըխում էր մի ջինջ աղբջոր,  
 Մի մեծ Գըշան երեսց մեզ. թիկնակարմիր և ահուկի  
 Վիշապ մի մեծ, որ լույս հառեց Ոլիմպյանը այդ միջոցին,  
 Բազմի տակից դուրս սողալով, դիմեց դեպի հըսկա սուխն:
- 310 Բարձրը ճյուղին ճընճըղուկի փոքրիկ ձագեր կային ութ հատ,  
 Տերևների մեջ ծըվարած, մայրն էլ Գըրանց հետ ինն էին.  
 Ելավ վիշապն ու կույ տըվեց աղվամազիկ այդ ձագերին  
 Եվ մորը, որ թըրթըրում էր իր սիրատուն ձագերի շուրջ  
 Սըրտաճըմիկ ճիչ ու կանչով. գալարվելով Գըրս վըրս,  
 Բըռնեց թևից վիշապն անկուշտ ու կույ տըվեց Գան Գըրան:  
 Հըրաշալի Գըշանն այդ մեծ աստված էր որ ցույց տըվեց մեզ,  
 Ջըրվանյանը կորովամիտ, քարացնելով մեր աչքի դեմ:  
 Մենք կարկամած դիտում էինք երևումն այդ զարմանաբաբանջ:  
 Աստվածներից այս սահագրու Գըշանը երբ մեզ երեսց,  
 320 Ելավ Կալքասն և այդ հըրաշը մեկնելով՝ աչապես խոսեց.
- «Ով վարսագեղ արայեցիք, ինչո՞ւ այդպես դուք համրացար.  
 «Կորովամիտ Արամազդը ցույց տըվեց մեզ Գըշան մի մեծ,  
 «Որ ուշ պիտի կատարվի դեռ, ու պիտ մընա փառքն անկորուստ:  
 «Վիշապն ինչպես, որ ձագերին կերավ իրենց ծընող մոր հետ,  
 «Որոնք բոլորն ութ հատ էին, իրենց մոր հետ ինն ընդամեն,  
 «Այդպես և մենք Լույնքան տարի կըտվենք պիտի Պրիամի դեմ  
 «Ու տասներորդ տարում միայն առնենք տրոյան արձականիստ»:—  
 Աչապես խոսեց Կալքասն այնժամ, որը անշուշտ պիտ կատարվի:  
 Ուստի ամուր, հաստատ կացեք, քաջաարթունք արայեցիք,  
 330 Ըսպանեցեք, մինչև առնենք Պրիամոսի ուտապը մեծ»:

Աչապես ասաց, և մեծագոչ աղաղակով արգիացիք,  
 Որ կըրկենցին Լավերն ամեն սահագնաձա՛ն արձագանցով,  
 Դըրվատեցին խոսքերն ազնիվ աստվածային Ուլիսեսի:  
 Ապա ելավ, աչապես խոսեց Նեստոր սուպետը Գերեհյան.  
 «Երբվում եմ ես աստվածներով, որ դուք փոքրիկ տըլոց Ըրման  
 Անհոգ՝ մարտի գործերի մեջ՝ շաղակրատել գիտեք միայն:  
 Ո՞ր մընացին մեր երդումներն ու մեր ոխտի դաշիճը կոտ.  
 Հըրի՞ն պիտի տըրվեն միթե խոսքն ու երդումն հերումների,  
 Նըվերները մաքուր գիճու և աջ ձեռքերն՝ առհավատշյա  
 340 Մեր միության, իզո՞ւր ենք մենք շատախոսում այսքան երկար  
 Առանց գործին սատարելու ու չենք կարող գըտնել մի էլք:  
 Դու, Ատրիդես, ինչպես առաջ, հաստատակամ և անըրկուն

Առաջնորդի՛ր արգիացոց անեղագոռ մարտերի մեջ.  
Թող որ ոմանք արաչեցոց քամահրանքին լոկ արժանի՝  
Դուրս տան անմիտ և անխոհեմ ու մրտածեն Արգոս դառնալ,  
Դեռ չքատուգած խոստումը մեծ ավետավոր Արամազդի,  
Որ խոստացավ մեզ մեծագոր ինքը Դիոսն ասպարակի  
Այն օրը, երբ արգիացիք մրտան նավերն իրենց արագ  
Ի պարտություն և ի նախնիք ամրապարիսպ տրոյացոց,

- 350 Զի աչ կողմից փառատակմամբ ցույց տրվեց մեզ հաջող նըշան:  
Ուստի ոչ ոք թող չըշտապի անժամանակ վերադառնալ՝  
Ամեն մեկը մի մանկամարդ տղրովուհու հետ չլվառկած,  
Չառած չքքնաղ Հեղինեի առևանգման վրրեժը բարկ:  
Իսկ եթե կա ոք, որ ուզում է անպատճառ տուն վերադառնալ,  
Թող մոտենա իր թրխաթուր ու գեղատալատ լաստափայտին,  
Ռույսեզի իր օրհասը նա ուրիշներից առաջ գրտնի:  
Բայց դու, սրբա, լավ մըտածիր, մըտիկ արա այլոց խոսքին,  
Եվ մի՛ մերժիր այս խորհուրդըս, որ ծերունիս, տալիս եմ քեզ:  
Զինվորներին, Ագամեմնոն, զատիր ցեղ-ցեղ ու տոհմ սու տոհմ,  
360 Որ օգնության հասնեն իրար՝ ցեղը ցեղին, տոհմը տոհմին:  
Եթե այսպես վարվես, և քեզ հընազանդեն արաչեցիք,  
Դու կիմանաս՝ ազգ ու պետից ով է քաջը և ով վախկոտ,  
Զի ամեն ոք պատերազմում իրեն համար պիտի կըռվի,  
Եվ թե քաղաքն աստվածների՞ կամքով է՝ չես կարող տոնել,  
Թե՛ք քո մարդկանց վախկոտ ու վատ ու կըռվի մեջ խակ լինելուց»:

Նըրան այսպես պատասխանեց Ագամեմնոն արանց արքան.  
«Խորհուրդներովդ, ո՛վ ծերունի, բարձր ես կանգնած դու բոլորից,  
Ա՛խ, ո՛ւր էր թե, հայր Արամազդ, և Աթենաս, և Ապոլլոն,  
Այսպիսի տաս արաչեցի խորհրդական ունենայի.

- 370 Այն ժամանակ Պրիամոսի քաղաքն իսկույն հիմնահատակ  
Կրկործանվեր մեր ձեռքերով, կըջընջըվեր թողրովին:  
Բայց Արամազդն ասպարազեն ծանրը հոգսեր դքրեց վրասս,  
Զուր պայքարի և անօգուտ վեճ ու կըռվի մըղելով ինձ:  
Աքիլեսը, և ես, անս, մի աղջրկա համար միմյանց  
Վըշտացնելով գըժտրվեցինք, և սուաջինն ե՛ս բարկացա.  
Իսկ թե մի հեղ մենք հաշտըվենք, համերաշխենք իրարու հետ,  
Այն ժամանակ տրոյացոց կորոսուն անշուշտ չի ուշանա:  
Արդ, ճաշելու գընացեք շուտ, որ պատրաստվեք պատերազմի,  
Թող ամեն ոք տեզն իր սրբի, կարգի դընի գենքն ու զըրահ  
380 Եվ կերակրի առատորեն սրբաթորիչ իր ձիերին.  
Ամեն ոք իր ուշքն ու միտքը ռազմի վըրա թող հարձընի,  
Զըննի կառքի մասերն ամեն, քանզի անեղ պատերազմով

Կրովենք պիտի ողջ օրն ի բուն, կրովենք անդու և անդադար,  
Մինչ գա գիշերն ու սանձ դրճի ռազմի բորբոք մեր ևռանդին:  
Թո՛ղ անձնապահ վահանի փոկն ամեն լանջքի վրրա քրտնի  
Թո՛ղ որ տեգով՝ վաստակաբեկ հոգնի՝ կրովում ամեն բազուկ,  
Քրտիճքի մեջ թող որ լողա՝ կառքը բաշող ամեն մի ձի.  
Իսկ եթե ես տեսնեմ մեկին, որ ուզում է կրովից փախչել  
Եվ գալարուն ճավերի մոտ մընալ՝ պիտի չըկարճնա  
390 Թըռչունների և շրճերի ճանկից փրկել իր լեջը նա»:

Այսպես սասց, և մեծագոչ սղմրկեցին արգիացիք,  
Ինչպես ալիքն արի վրրա, երբ հարավից է գրրոհում,  
Քախվում է բարձր ապառաժին, որին այլևս այնուհետև  
Քաց չեն թողնում կոհակները, որ կողմից էլ քամի փրչե:  
Ելան բոլորն ու վազեցին, ջրիվ եկան ճավերի մեջ.  
Վըրաններից պալան-պալան ծուխը ելավ ու ճաշնցին:  
Ամեն գիճվոր հավերժական աստվածներից մեկն ու մեկին,  
Ում ուզում էր, զոհ էր ձոհում, որ նա իրեն մամից փրկի:  
Իսկ Ատրիդես Ազամեմնոն արանց արքան՝ ամենագոր  
400 Արամազդին զոհ մատուցեց պարարտ մի եզ հինգ տարնկան:  
Կանչեց բոլոր արայեցոց իշխաններին ու ծերերին,  
Նայա Նեստորին, ապա դյուցազն Իդոմեենես թագավորին,  
Հեսոտ երկու Այաքսներին, ու Տիդեսի որդուն կանչնց,  
Վեցերորդը՝ Ռդիսևսին՝ հանճարակցին Արամազդի:  
Ինքն իր կամքով եկավ հասավ Մենելավոսն անելագոտ,  
Քանգի գիտեր, թե հարազատ եղբայրն ինչու է լզբաղված:  
Այդպես՝ եզան շուրջ բոլորած, ձեռքով առան հատիկը սուրբ,  
Եվ ազգապետ Ազամեմնոնն այսպես սասց՝ աղոթելով.

«Վե՛նդ Արամազդ, ամենամեծ, արիիաբքնակ և ամպաթուխ,  
410 Մայր չըմըտնի արկը թող, և թող չիջնի խավարն աղոտ,  
Մինչև որ ես հրդեհակեզ հիմնահատակ չըտապալնեմ  
Պրիամոսի տունն ու դարբանն ամենակույ հրրով աստիկ.  
Եվ Հեկտորի լանջապանակն իր իսկ շըքեղ կըրծքի վրրա  
Չըջախչախես իմ պրդիճնով, և շատերը իր մարդկանցից  
Բերանքսիվայր, փոշիներում, չըկըրծեն հողն անուաներով»:

Սասց, սակայն չըկատարեց Ջևար աղոթքն Ատրիդեսի,  
Զոհն ընդունեց, իսկ արայանց տաժանքներն է՛լ ավելացրեց:  
Այդ աղոթքից ու ցորենի հատիկը սուրբ ցանելուց ետ  
Զոհի գրլուխն ետ ծըռելով փողոտեցին ու քերթեցին,  
420 Գեր ազդրերը կըտրատելով փաթաթեցին ճարպով համակ  
Ու, դըճելով նըրանց չորս դին հում կըտորներ պատառ-պատառ,

Չոր փայտերի կույտի վըրս շարած՝ բոցով խորովեցին,  
Եվ փորոտին շամփուրների վըրս զարկած դրին կըրակ,  
Երբ այրվեցին ազդերը գեր, և փորոտին ճաշակեցին,  
Ինչ որ մընաց՝ կըտոր-կըտոր մանրը ջարդած զարկին շաճիռը  
Եվ խընամքով խորովեցին, ապա իրենց գործն ավարտած՝  
Պատրաստեցին ճոխ կերուխում ու խորտիկը ճաշակեցին:  
Ապա, երբ որ լըրիվ առան կերուխումի փափագն իրենց,  
Ոտքի ելավ Նեստոր ասպետն ու ըսկըսեց խոսել ալսպետ.  
430 «Ո՛վ վեհափառ Ազամեմնոն, վերջ տանք երկար մեր ճառերին,  
Եվ գործը, որ աստված է մեր ձեռքը տալիս՝ չըճըզճըզենք.  
Թող քաջաձայն ու ժիրածիր մունետիկներն անմիջապես  
Պըղընձագեատ աքայեցոց համախըմբեն ճավերի մոտ,  
Իսկ մենք ալսպետ բոլորըս մեկ երթանք բանակն աքայեցոց  
Ու բորբոքենք բոլորի մեջ արիսական բուռն ոգին»:

Այսպես ասաց, ու դեմ չեղավ Ազամեմնոն արանց արքան,  
Հըրամայեց, որ քաջաձայն մունետիկներն անմիջապես  
Գեղեցկավարս աքայեցոց տան հըրավեր պատերազմի:  
Կանչում էին մունետիկներն, ազդարարում շեփորաձայն,  
440 Ու բազմությունն ըսպտազեն դատնում էր ծով ալեծածան:  
Ստրիդեսի շորջն հավաքված արքաները դյուցաւընունդ  
Էշտապեցին անմիջապես կարգալորել ամբոխն այդ հոծ:  
Նըրանց մեջ էր խաժ Աթենաս աստվածունիին՝ ձեռքին քըռնած  
Իր թանկագին, անձերական, անմահացու սապարը պերճ,  
Որից ի վար կախվում էին հարյուր ծուպեր համակ ոսկի,  
Եվ որոնցից յուրաքանչյուրն հարյուր եզան արժեք ուներ.  
Վազվըզում էր իր ասպարով աքայեցոց բազմության մեջ,  
Հորդորում էր ամենուրեք, սիրտ էր տալիս, ոգեկոչում,  
Որ անդադար և անվրկանդ պատերազմեն արիաբար:  
450 Այսպես կըրկին, նըրանց սըրտին քաղցրացավ մարտն ավելի քան  
Վերադառնալն հայրենի տուն՝ սև, գոգավոր նավակներով:  
Հըրդենն ինչպես, որ լսվում է քարձըր լեռան վըրս բուսած  
Մարինների անտառն հըսկա՝ հըրացույքեր արձակելով,  
Այդպես նըրանց այդ արշավում անեղանհաշ լըղիճը շեկ  
Ճառագայթներ էր արձակում արփիաթն դեպի երկինք:

Ձերդ թևավոր թըռչունների երամները խայտաճամուկ—  
Կարապների երկարալիզ, կըռունկների կամ սագերի—  
Կալիսարական ուղիների շորջ, Ասիական մարգագետնում  
Թըռչելուտում են, թևապարում ուրախ-զվարթ այս ու այնտեղ,  
460 Թընդանցնելով մարգագետինն՝ արորանում կարկաշաձայն,—

Այդպէս նըրանք երամ-երամ, վըրաններից ու նաւերից  
Հոյսում են դուրս ու տարածվում Սկամանդրիան դաշտի վըրա,  
Ու թընդում էր դաշտը նըրանց և ձիերի ոտքերի տակ:  
Ինչպէս գարնանն, հովվի բակում նոր դուրս եկած ճաններն անթիվ  
Խըծվըծում են այստեղ-այնտեղ, երբ դույլերում կաթն է հորդում,  
Նույնքան զինված, գիսակազեղ աքալեցիք կային դաշտում  
Տըրոյանց դէմ ռազմի պատրաստ, ծարավ նըրանց տաք արյունին:

Խաշնարածներն ինչպէս դաշտում հոտերն իրենց արածելիս  
Զոկջջկում են ոչխարներին, երբ իրարու են խառնըվում,  
470 Այդպէս նըրանց գորապետներն էին ջոկում մարտիկներին,  
Որ դեպի մարտ արշավէին. նըրանց մեջ էր Ատրիդ արքան՝  
Աչքն ու գըրոխն հար և նըման շանթազըվարն Արամազդին,  
Կործըք՝ կըրծքին Պոսէդոնի, արիսական գոտին մեջքին.  
Եվ, ինչպէս որ նախի մեջ ցույն է ամենն վըսեմաշուք,  
Որ նազում է շըքեղորեն երիցօների երամակում,  
Ինուն այդ օր ճիշտ այդպէս էր ներկայացնում Ատրիդէսին  
Պերճապաճույն ու պանծալի՝ դյուցազների բազմության մեջ:  
Արդ, ասացեք ուրեմըն ինձ, ոլիմպաբնակ ո՛վ Մուսաներ,  
Աստվածունի եք դուք քանզի ամեն ինչին քաջատեղյակ,  
480 Իսկ մենք անգետ՝ շըշուճներ են հասնում մեր ականջին:—  
Ովքե՛ր էին դանայեցոց գորապետներն իշխանազուն,  
Իսկ ամբոխին անուն-անուն թըվել մեկ-մեկ չեմ կարող ես,  
Նույնիսկ եթե ունենայի տասը լեզու ու տաս քերամ,  
Լիճեք քարքառն իմ անըսպատ, և պըղըճէ լինեք սիրտըս:  
Բայց թե դուստրերն Արամազդի՝ Մուսաները ոլիմպական  
Ինձ նիշեցնեն բոլոր նըրանց, որոնք Իլիոն գըրոհեցին,  
Պիտի թըվեմ միայն նավերն, իշխաններին ու պետերին:  
Բիովտացոց պետերն էին Պենէլևը և Լետիոս,  
Եվ նըրանց հետ՝ Արկեսիլավ, Պրոթէյոնովրն ու Կոնիոս,  
490 Բընակվողներն Հիրիեում և Ավլիսի մեջ քարքարոտ,  
Աքիճուում ու Սկոյոսում և Բըրաշատ Ետեճում,  
Թեպէսպում, Գրեպում, Միկալոսում արձականիստ.  
Բընակվողներն Հարմայի շուք, Ելիսէի, Եվրիթրէի,  
Եվ Նըրանք, որ Հիլիէից, Ելեոնից, Պետեոնից,  
Ոկալէից և Մեդեոն դաստակերտից էին եկել,  
Եվտրեւէից և Կոպասից ու Թիսթէից աղավնէշատ.  
Կորոնիայից էին որոնք և խոտավետ Հալիարտից,  
Բընակիչներն Պատեայի, Գլիսանի, նաև նըրանք,  
Որ քարեղեն Ներքին Թերե գյուղաքաղաքն էին ապրում,  
500 Ոնքեառոտում նըվիրական, Պոսէդոնյան պերճ անտառում.

Բընակիչներն ողկուզաւատ Առնեի և սուրբ Նիսայի  
Ու Մեդիայի և, վերջապէս, բընակիչներն Անթետոնի,—  
Սրբանք ճիսուն նալ ունեին, և ամեն մի նալում կային  
Հարյուր ճիսուն կըտրին մարդիկ Բիովտացի հյուցագուններ:

Ասպէտրոնից ու Միգիյան Ռիքունեհից եկածների  
Պետերն էին Ասկալափուն ու Հալմիճուն արիսագարն,  
Ռրոնց ծընեց հաղթ Արեսի ամոթխած կույսն Աստիոքեն  
Ազիդյանուն, Ակտորի տան վերնահարկը բարձրանալով,  
Որ Արեսը գաղտագողի պտուկեց նրա հետ միասին:

510 Արբանք իրենց հետ երեսուն գեղեցկատախտ նալ ունեին:

Աքեդիոսն ու Եպիստրոփը պետերն էին փովկեացոց,  
Զույգ որդիներն մեծահոգի Նավթոլիդյան Իփիտոսի,  
Եվ նրանց, որ ապրում էին Կիսարիսում և Պիթոնում  
Ապտածուտ, Պանոպլետոսն ու Դավիսուն, աստվածային  
Կրիսանուն, բընակիչներին Անիմոլրի, Հիամպոյսի  
Եվ դիցական Կեփիս գետի ափերի և ակունքի մոտ,  
Լիլեայում ապրողների պետերն էին երկուսն այդ ջաջ,  
Եվ քառասուն սև նալ էին տանում սրանք իրենց ետև:  
Փովկեացիք պետերի հետ կանոնաւոր կարգ կազմեցին

520 Բիովտացոց ձախակողմում՝ ռազմի պատրաստ և գինալաւ:

Լոկրիներին առաջնորդում էր Ոյիլյան Աչաքսն արագ,  
Որը թեև երիտասարդ էր Աչաքսից Տելամոնյան,  
Փոքրահասակ, դեռ պատանի, հագած կըտալ զորան, սակայն  
Քաջավարժ էր տեգի, քան թե ողջ ճեղեմներն ու աքայանք.  
Բընակիչները Կինոսի, Կալիստոսի և Ուիոնսի,  
Սկարիեի և Պեսայի, և ցանկալի Ավգիեսի,  
Թրոնիոնի ու Տարփեի— Բոյագրիայի շրջակայքից՝  
Քառասուն սև նալ ունեին իրենց ետև՝ նրվիրական  
Եվքիայի այն կողմ ապրող լոկրացիները քաջամարտ:

530 Իսկ աքաղները բոցաշունչ, բընակիչները Եվքիայի,  
Երիտրայի ու Քալկիսի, և Հիստրեի ողկուզալետ:  
Եվ ծովափնյա Կորինթոնի, և բարձրաբերձ Դիոն քաղաքի,  
Ստիրայի և Կարիստի բնակիչները պէտ ունեին  
Ելեփենոս Բալկեդոնյանն՝ արիսական շառավիղից—  
Մեծանձրնյա աքաղացոց ռապարապետն արիասիրտ.  
Տանում էր նա իր ետևից աքաղներին ժըրագրոյիս,  
Ռրոնք իրենց ծոծրակներին ունեին կախ սև գիսակներ  
Ու վարժ էին սփռյալի կրծքի վրա ջախջախելու  
Լանջասլանակ-զրահն իրենց հացեճու սուր նիզակներով.

540 Քառասուն սև նալ էր տանում Ելեփենոսն իր ետևից:

Բընակիչները՝ բարեկերտ ու բազմամարդ ճոխ Աթենքի.

- Ժողովորդը Երեթթևսի՝ արգասաբեր երկրում ծընված,  
 Ռրոնց սընեց ինքն Աթենաս Պալլասը՝ դուստրն Արամագդի  
 Եվ Արտեցրեց Արրանց հարուստ իր մեհյանում, Աթենքի մեջ,  
 Որտեղ ամեն տարի Արրան արջառների ու գառների  
 Ջոհաբերմամբ հաշտեցնում են քաջորդիներն աթենացոց:  
 Մենեսթևան էր առաջնորդում սրբանց, որդին Պետևոսի,  
 Որի Արման ոչ ոք այնտեղ, մահկանացու և ոչ մի մարդ  
 Անկարող էր ռազմիկն ու ձին կարգել-կազմել պատերազմի,
- 550 Նեստորից զատ, որ տարիքով երիցագույն էր Արրանից:  
 Մենեսթևասի էտևից էլ հիսուն հատ սև Ասլ էր գրնում:  
 Սալամիից Ալաքսն իր հետ տասներկու սև Ասլ էր բերում,  
 Եվ կանգնեցրեց զորքն իր այնտեղ, աթենացոց զընդերի մտա:  
 Բընակիչներն՝ ամրապարիսպ և՛ Տիրիմսի, և՛ Արգոսի,  
 Երմիռն և Ասիռն քաղաքների ծովածոցյա,  
 Էրոնի և Տրիգենի, և այգեվետ Եպիտավրի,  
 Եվ Արրանց, որ Էգինայից ու Մամևոսից էին եկել—  
 Բոլոր սրբանց աքայեցի— զորագրվոյս պետերն էին  
 Դիոմեդեսն անեղագոռ և Աթենէլլ՝ մեծանուն
- 560 Կապանևսի սիրուն որդին, և երրորդը՝ Եվրիպոսն,  
 Որ որդին էր Մեկիստոսի՝ Տալարոնյան թագավորի:  
 Այս բոլորի զորագրվոյսն էր Դիոմեդն անեղագոռ,  
 Որոնք ութսուն հատ սևաթույր Ասլ ունեին իրենց էտև:  
 Բընակիչները՝ բարեկերտ Կորիթոսի և Միկենքի,  
 Եվ բարեշեն Կլեոնի, և Արրանք, որ սայրում էին  
 Ռոնիայում ու Սիկիոնում և հեշտավետ Արեթրեում,  
 Որ ստաշինն Ատրեստոսը թագավորեց, և Արրանք, որ  
 Ասլրում էին Իսայերևսում, Գոնդոլեսում ու Պելլենում,  
 Եգիոնի և ծովափնյա Հելիկեի շուրջ լայնահիստ,—
- 570 Սրբանց հարյուր սև Ասլերի հրամանատարն էր մեծագոր  
 Ատրիդ արքան, որ հետն ուներ կըտրիճների հոծ բազմություն,  
 Որոնց մեջ Աս Գանաճափայլ հագել էր պերճ զենք ու զրրանի  
 Ու փողփողում էր սիգապանձ, զի բարձր էր Աս իր քաջությամբ:  
 Եվ բազմությամբ ժողովրդի, որ բերում էր իր էտևից:  
 Բընակիչներն անձավախիտ և խորանիստ Լակոնեոնի,  
 Ե՛վ Փարիսի, Սպարտայի և Մեսսեի աղավնեվետ,  
 Ամիկլայի բընակիչներն ու բերկրալից Ալգիեսի,  
 Եվ Հելոսի ծովեզերյա, Իտիլոսի և Լասսի,—  
 Սըրբանց վաթսուն սև Ասլերին Մենելալն էր հրրամայում,
- 580 Ագամեմնոն Ատրիդեսի կըրտսեր եղբայրն անեղագոռ,  
 Որն իր զորքը զինավառած՝ դեպի մարտ էր առաջնորդում,  
 «Բաջավըստան» իր կորովի և սունական ուժի վըրս,

Եվ մանավանդ՝ տրրոյանց դեմ հոր վըրեժով բոցավառված,  
Հսկումն չըքնաղ Հեղինէի առնանգման ու հեծոյթանց:

Իսկ Պիլոսի բընակիչներն ու գեղատես Արեւնէի,  
Թըրիոնի՝ չըքնաղ հունից պերճ Էպիսի և Ալփեսի,  
Բընակիչներն Ամփիգեանի, Կիպարիսի, Պտելեոսի  
Եվ Հելոսի ու Դուրիսի, ուր Մուսաներն հանդիպելով  
Երգիչ Թամիր Թրակացուն, որ գալիս էր Իքալիսայից,

590 Իքալեցի Եվրիտոսի մոտից, նրան լըռեցըրին,  
Զի պարծենում էր մեծամիտ՝ ասպարակիր Արամազդի  
Աղջիկներին՝ Մուսաներին անգամ հաղթել երգելու մեջ.  
Կորացրեցին Թրակացուն ու նրանից քընարն առան,  
Մոռացընել տալով նրան երգն ու արվեստն աստվածային:  
Զորապետն էր սըրանց Նեստոր Գերեւնյանը— ասպետը քաջ,  
Որ տանում էր գեղեցկատախտ իննսուն հատ նավ իր ետևից:

Բընակիչներն Արկադիայի՝ Կիլեանի ըստորտում,  
Էպիտոսի շիրմին մոտիկ, ուր ռազմիկներ կան քաջասիրտ,  
Ինչպէս նաև խաշնահարուստ Որքոմեանի, Փեանոսի,

600 Հըռիպէի, Ստրատիէի, Ենիսպէի սըրըրկածուի,  
Մանտիանի, Պարրասիայի, Ստեմփելի ու Տեգիայի—  
Սըրանց վաթսուն նավերի պետ-իշխանն էր սան Անկեոսին՝  
Ազասեմոր թագավորը. յորաքանչյոր նավում կային  
Արկադացի շատ մարտիկներ՝ պատերազմի քաջանըմտ:  
Դրրա համար Ազամեմոնն արանց արքան տըվեց նըրանց  
Գեղեցկատախտ նավեր, որ լուրթ անդունդները նեւքնն ծովի,  
Զի ծովային գործերի մեջ ջանախընդիր չէին նըրանք:

Իսկ ապրողներն աստվածային Էլիսայի և Բուպրասիո—  
Այն վայրերի, որոնց գըրկում են Մերսինոսն ու Հերմիանն

610 Եվ Ալիսյուն ու Ոլեւնյան ժայռը իրենց մեջ են առնում,—  
Ունեին չորս իշխան, որոնց ամեն մեկին հետևում էր  
Տասն արագ նավ՝ բոլորը լի էպիացոց խունն ամբոխով,  
Որոնց պետերն էին արի Ամփիմաքոսն ու Թալսլիոս—  
Մեկը որդին Կտեստի, մյուսն՝ Ակտորյան Եվրիտոսի.  
Երրորդ իշխանն էր Դիորես Ամարինյանը քաջարի,  
Իսկ չորրորդը Պոլիքսիմոսն էր անվեհեր, աստվածակերպ,  
Որ էր որդին Ազասթեանի՝ ավգիասյան թագավորի:

Ովքեր Դուլքիոն և Եքինա սըրբանըվեր կըղզիներից՝  
Ծովից այն կողմ հանդիպակաց Էլիտոսից էին եկել,

620 Առաջնորդն էր նըրանց Մեգես Փիլեսյասը արիաստիպ,  
Որին ծընեց Փիլես ասպետն՝ Արամազդին շատ սիրելի,  
Որը խոռված հորից՝ գընաց Դուլքիոն մի ժամանակ.  
Սա քառասուն հատ սնաթուր նավ էր տանում իր ետևից:



- Կեփալիները մեծափրտ՝ Ռդիսուսին ունեին պետ,  
 Բընիկները Իթակեի, Ներիտոնի տերևաշարժ,  
 Էզիլիփսի և Կրոկի, Չակիգթոսի և Սամոսի,  
 Նակ Արբանք, որ ցամաքում էին ապրում հանդիսակաց.  
 Սրբանց իշխանն էր Ռդիսուսն ըզգոն Արմանագդի,  
 Եվ տասներկու կարմրածընոտ նալ էր տանում իր ետևից:
- 630** Անդրեմոնի Թոաս որդին բերում էր հետն Էտոլացոց՝  
 Բընակիչներին Ռլենոսի, Պիլիների, Պլկրոնի,  
 Քաղկեդասի ծովեզերյա և քարքարոտ Կալիդոնի,  
 (Չի չըկային քաջ Իննսի որդիք այլևս, ինքն էլ չըկար,  
 Մեռած էր և՛ այն ժամանակ Մելեագրը խարտիշագեղ)  
 Թոասն էր քաջ իշխում հիմա Էտոլացոց վըրա համայն,  
 Որ տանում էր իր ետևից քառասուն հատ նալ սևաթույր:  
 Նիզակալոր Իդոմենն էր գորավարում Կրետացոց—  
 Բընիկներին Կնոսոսի և Գորտիների պարքսպասիակ,  
 Միլետոսի և Լիկոսոսի, Լիկասոսի ճերմակաթույր,
- 640** Նակ Փետոսու և Հոիտոն քաղաքների բարեբընակ  
 Եվ շատերի՝ հարյուր քաղաք Կրետեի շրջակայքից:  
 Սրբանց պետերն էին դյուցազն Իդոմենը նիզակազեն  
 Եվ Մերիոնը մարդասպան Ենիային հանգունատիպ,  
 Որոնք ութսուն հատ սևաթույր նալ ունեին իրենց ետև:  
 Տիպոլեմոսը Հերակլյան հրակայազոր ու հաղթանակում  
 Բերում էր հետն Հոդոսից ինը նավեր, հրոդացոց,  
 Որ եռակարգ ապրում էին Հոդոսի շրջակայքում՝  
 Հելիոսում և Լինոսում, Կամիրոսում ճերմակափառ.
- 650** Չորավարն էր սրբանց խիզախ Տիպոլեմը մրկունդալոր,  
 Որին ծղնել էր քաջահաղթ Հերակլեսից Աստիոքեն՝  
 Հերակլեսի կողմից բերված Եփիրոսից գետափրնչա,  
 Ղյուցաւերունը մարդկանց անթիվ քաղաքները ավերելով:  
 Երբ մեծացավ Տիպոլեմն, ապարանքում վալելչակերտ,  
 Ըսպանեց իր քեռուն, որին հայրը նրրա շատ էր սիրում,  
 Լիկիմնիոսին ծերունափառ, արխական շառավիղին,  
 Եվ շինելով նավեր շուտով, շուրջն հավաքեց բազումամբոխ,  
 Չըվեց ծովով փախստական, քանզի նրբան ըսպառնացին  
 Մյուս որդիներն ու թոռները արխասիրտ Հերակլեսի:  
 Փախավ այդպես թափառական, հասավ Հոդոս խելոն ու կըրակ,
- 660** Ապրեց այնտեղ, բաժանվելով երեք ցեղի, որոնց սիրեց  
 Արամագըը, որ տիրում էր աստվածներին ու ողջ մարդկանց,  
 Եվ պարզեց Չևը նրբանց հարրատություն ու շատ բարիք:  
 Իսկ Նիրևը Սիմից երեք համանրման նալ էր բերում,  
 Նիրևը՝ ուստրն Ագլաչայի և Քարոպոս թագալորի,



Աշտուղիան հախտորին

Նիրևար, որ գեղեցկատեսն էր ամենեն դանաչանց մեջ,  
 Որոնք Իլիոն եկան՝ անթիծ Պելիսածին Աքիլլից ետ.  
 Բայց վախկոտ էր, և ետևից գրնում էին քիչ մարտիկներ:  
 Իսկ բընիկները Նիսիրի, Կրասպաթի և Կասոսի,  
 Եվրիսիլի Կով քաղաքի և Կալիդոնյան կրղզիների,  
 670 Որոնց երկու պետերն էին Փոդիպպոսն ու Անտրիփոսը—  
 Ջույգ որդիները Թեսալոս Հերակլեսիան թագավորի,  
 Տաճուն էին կարգով շարված երեսուն սև նավ գոգավոր:  
 Բընակիչները բովանդակ Ալոսյեի և Արգոսի,  
 Տրիքեսի և Ալոսի, ու Փոթիացի մարդիկ թուր,  
 Գեղեցկակին հելլադացիք, որ Միրմիդոնք էին կոչվում,  
 Եվ Հելլենները համորեն և բովանդակ աքաչեցիք,  
 Որոնց հիսուն սև նավերին Աքիլլեսն էր հրրամաչում,  
 Հանգիստ նրստած, կրուլի մասին երբեք չէին էլ մըտածում,  
 Քանզի չըկար նա, որ նրանց այդօր պիտի գորավարեր:  
 680 Քաջոտն Աքիլլն աստվածագարն պառկած էր իր սև նավի մեջ  
 Հույժ բարկացած՝ գեղեցկավարս Բրիսենիսի համար չըքնաղ,  
 Որ առել էր Լիոնեսոսից՝ մեծ հիգ ու ջանք թափելուց ետ,  
 Լիոնեսոսը կործանելով և թեքացոց բերդերն ամուր,  
 Ըզգետնելով Եպիստոփին և Մինեսին մըկընդամով՝  
 Որդիներին Եվենոսի՝ սելեսյան սեգ թագավորի:  
 Նրստել էր նա այդպես տըրտում, բայց պիտ ոտքի ելներ շուտով:  
 Փիլակեի ու ծաղկավետ Պիրասոսի, դաշտորայքի,  
 Որ Դեմետրին էր նըվիրված, և Իտոնի խաշնահարուստ,  
 Եվ Անտրոնի ծովեզերյա ու սիզավետ Պոնելոսի  
 690 Բընիկներին առաջնորդում էր արիսյան Պրոտեսիլավն,  
 Քանի ողջ էր, սակայն արդեն այն ժամանակ հողումն էր նա:  
 Փիլակեսն տունը նըրա մընաց կիսատ ու կիճն՝ այրի.  
 Դարդանացի մի մարդ նըրան ըսպանել էր այն ժամանակ,  
 Երբ առաջինն աքաչանց մեջ՝ նավից ցամաք էր ցատկել նա:  
 Բայց անիշխան չէին նըրանք, Պոդարկեսն էր տանում նըրանց,  
 Կըտրիճ զավակը Փիլակյան Իփիկոսի խաշնահարուստ  
 Ու հարագատ եղբայրը քաջ, մեծահոգի Պրոտեսիլի,  
 Կըրտսերագույնն իր տարիքով, իսկ նա երեց և քաջասիրտ,  
 Պրոտեսիլավն արիական քաջ դյուցազուն. զորքը սակայն,  
 700 Թեպե՛ն ո՛չ անառաջնորդ՝ ցավում էին քաջի համար:  
 Պոդարկեսը քառասուն հատ նավ էր տանում իր ետևից:  
 Բիբեական ծովակի մոտ Փերեսի մեջ սպրողներից,  
 Գլափիրի և Բիբեի, Հավուկոսի, գեղեցկաշեն,  
 Եվ տասներմեկ սև նավերին Եվմեդոսն էր առաջնորդում,  
 Ծըքեղ որդին Ադմետոսի, ծընված ազնիվ Ակլեստրիսից,

- Որ գեղեցիկն էր ամենէն Պելիասի դուստրերի մէջ:  
Իսկ Մեթոնից, Մելիքիայից, Թալմազիից և քարքարոտ  
Ոլիպոնից եկածների գեղեցկատախտ յոթ նախերին  
Քաջահամուտ աղեղնավոր Փիլոկտետն էր առաջնորդում,  
710 Եվ ամեն մէկ նալի վրրա կային հիսուն նախավարներ,  
Աղեղներով կրովելու մէջ քաջահամուտ ու կորովի:  
Բայց Փիլոկտետն այն ժամանակ տանջվում էր խիստ Լեմնու կըղզում,  
Ռրտեղ նրան, օձից խայթված, թողել էին աքայեցիք,  
Որ չարատանջ ու սուկալի բոցերի մէջ վստովում էր նա:  
Նալերի մոտ արգիացիք հիշում էին անձկակարոտ  
Փիլոկտետու թագավորին, թէն չէին անառաջնորդ,  
Այլ հարձորդին քաղաքավեր քաջակորով Ոլիպսի  
Հրոկենից ծընված կըտրին Մեթոնն էր արդ տանում նրանց:  
Տրիկկեից և լեռնային Իթոմեից եկածներին,  
720 Իքալեցի Եվրիտոսի Իքալիայի քաղաքացոց  
Վարում էին Ասկլեպիոսի գույգ որդիներն, երկուսն էլ քաջ,  
Հըմուտ բըծիշկ, ճարտարագետ Պոդալիբիսն ու Մաքալոնն,  
Ռրոնք իրենց հետ ունէին երեսուն սև նալ գոգավոր:  
Ռմենիոնից եկածներին և աղբջորից Հիպերիայի,  
Աստերիոնից ու սարավանդ Տիտանիից լեռնաքրնակ՝  
Եվրիպիոսն էր առաջնորդ, գավակը պերճ Եվեմոնի,  
Եվ սրրա հետ զընում էին քառասուն սև նալ գեղակազմ:  
Արգիասայի բընիկներին, ինչպէս նաև բոլոր նրանց,  
Որ Գիրտոնից և Ռրթեից և Իլիոնից էին եկել,  
730 Եվ ըսպիտակ քաղաքավան Ռոսսոնից բարերընակ,—  
Պոլիպետեսն էր գորավար քաջամարտիկ և կըրակոտ,  
Կըրտսեր որդին Պիրիթոսի, որին ծընեց Ռրմիզդն անմահ,  
Իսկ Պոլիպտին ծընեց չըքնաղ Հիպպոդամեն Պիրիթոսից  
Այն օր, երբ նա պատժեց վայրի և թավամազ հուշկապարկաց  
Եվ վըտարեց Պելիոնից մինչև երկիրն Էթիկեցոց:  
Նա մենակ չէր, նրրա հետ էր և՛ շառավիղ արիսական  
Լեոնդևը՝ որդին մեծանձըն Կորոնի Կենիսածին.  
Ոն ետևից նրանց նույնպէս քառասուն սև նալ էր զընում:  
Իսկ Կիփոսից Գունևը գոռ քըսաներկու նալ էր բերում,  
740 Եվ որի հետ զընում էին պատերազմի տոկուն մարդիկ՝  
Ենիեններն ու ամենի Պերեբները քաջամարտիկ,  
Ռրոնք տըներ էին շինել Դոդոնէում ձըմեռնաճոխ,  
Եվ նրանք, որ մըշակում են հովիտները Տիտարեպի,  
Որ թափում է իր բարերոյի վրտակները Պենիոսում,  
Ռրի արծաթ հորձանքներին չեն խառնըվում նրանք սակայն,  
Այլ վըրայից կարկաշելով սահում անցնում են յուղի պէս,

Զի Ստիքսի ծանրը երդման ուղիներից մի վըտակ է նա:  
 Տեևթերոնյան Պրոթոնսն էր զորապետ մագնետացոց,  
 Բընիկներին տերևաշարժ Պելիոնի և Պենեի,  
 750 Եվ տանում էր իր ետևից քառասուն սև նավ գոգավոր:  
 Արբանք էին դանաչեցոց զորավարներն ու իշխաններն:  
 Ասա՛, Մուսա, ո՞վ էր նրանց մեջ ամենն գերիվերո,—  
 Նըժույգների և մարդկանց մեջ, որոնք մեկտեղ, միահամուտ  
 Գընում էին դեպի գուպար Ատրիդների հետ միասին:  
 Ամենալավ ձիերն էին փերետյատայք արագավազ,  
 Որոնց վարում էր Եվմելոսն օղապարիկ թըռչնոց նըման,  
 Հասակակից և համաբաշ ու թիկնաբերձ կարկընաչափ,  
 Որոնց սընեց արծաթաղեղն Ապոլլոնը Պերիեոսմ,  
 760 Զույգն էլ զամբիկ, որոնք սարսափ էին սըփոում պատերազմում:  
 Իսկ մարդկանց մեջ արիագույնն էր Այաքսը Տելամոնյան,  
 Քանի Աքիլլն էր բացակա, որ քաջագույնն էր բուրից,  
 Նույն և ձիերն, որոնք տանում էին քաջոտն Աքիլլեսին:  
 Բաց նա նըստել էր կորածայր, ծովահածուկ նավատորմում  
 Սըրտում աստիկ ոյս պահելով Ագամեմնոն Ատրիդի դեմ,  
 Իսկ բազմությունն իր քաջերի զըվարճանում էր ծովափին  
 Աղեղ ու տեգ արձակելով և նետելով ըսկոտեղներ.  
 Եվ ձիերը կանգնած հանգիստ՝ ձիալախոր էին ուտում  
 Կտոքերի մոտ՝ անգործ ընկած իշխանների վըրաններում:  
 770 Իսկ իշխաններն՝ արիական իրենց պետին անձկակարոտ՝  
 Ծամբարի մեջ, այստեղ-այնտեղ շըրջում էին մարտից նեոու:

Գընում էին նրանք գունդ-գունդ, և ասես թե երկիրը ողջ  
 Բըռընկվել էր բոց-կըրակով, ու տընքում էր գետինն այնպես,  
 Ինչպես Զևսը շանթազըվարճ զարկեր երկրին Արիմայսի  
 Ու հարվածեր փայլատակմամբ Տիփոնեսի մահիճն այնտեղ:  
 Այդպես նրանք թընդացնելով երկիրն իրենց ոտքերի տակ՝  
 Գընում էին արշավասույր, կըտրելով դաշտ ու դարաստան:

Այդ ժամանակ տըրոյացոց բանքեր եկավ Արամազդից,  
 Մըրկոտն Իրիսն արագաթև՝ աղետաբեր բոթը բերին,  
 780 Երբ որ նրանք ակըմբահույլ՝ երիտասարդ և ծերունի  
 Ժողով էին անում արձակ գավիթի մեջ Պրիամոսի:  
 Նըմանվելով Պրիամոսի արագաքաչ Պոլիտ որդուն,  
 Որն իր ամուր և սըրընթաց սըրունքների վըրա վըտահ՝  
 Դետ էր նըստել Էսիետի շիրմի վըրա բարձադիտակ,  
 Ու զընելով, թե աքայանք ե՞րբ են հանկարծ հարձակվելու,—  
 Արամազդի պատգամաբեր Իրիսն այսպես խոսեց հուզված.

«Ո՛վ ծերունի, հաճելի են քեզ շարունակ երկար ճառեր  
Այնպես, ինչպես մի ժամանակ խաղաղության օրերի մեջ.  
Սակայն պայթեց անավասիկ մի պատերազմ անխուսելի.  
Ծառ անգամ է վիճակվել ինձ ներկա լինել կրոնիկներն,  
790 Բայց երբևէ այսքան սաստիկ մեծ բազմություն չեմ տեսել ես,  
Ավազի պես անթրվելի և տերևի պես անհամար  
Գալիս են լայն դաշտի միջով քաղաքի շուրջ կրոնիլ տալու:  
Քեզ մանավանդ, Հեկտոր, ահա, պատվիրում եմ անել այսպես.  
Պրիամոսի ուտանի մեջ կան շատ մարդիկ միգակակից  
Այլաբարբառ և այլազգի, ուստի ամեն իշխան ու պետ  
Անցնի զորքի գլխուխը թող և զորավար լինի նրբանց,  
Խըմբի իր զորքն ու պատրաստի ահեղագույն ուզմի համար»:

Այսպես սասց, և Հեկտորը ճանաչեց ձայնն սատվածուհու,  
Եվ ջրբերով ժողովն իսկույն, ըշտապեցին գեմք առնելու:  
800 Բացվում էին դարբաս ու դուռ, ու դեպի դուրս էին հորդում  
Ե՛վ հետևակ, և՛ այրուձի շըռընդալից շտապյունով:

Կա քաղաքի դեմ-հանդիման հրեկա բլուր մի քարձրաբերձ,  
Որ դաշտի մեջ առանձնացած տարածվում է բոլորածև,  
Բադիրա են կոչում մարդիկ, իսկ դիք՝ շիրիմ Միոհնեի.  
Անդ՝ ճակատել որոշեցին դաշնակիցներն ու տըրոյանք:

Տըրոյացոց պետն էր Պրիամ թագավորի ավագ որդին՝  
Կորդակաճոճ Հեկտորը քաջ, և նրա հետ զինավառված  
Բյո՛ւր կըտրիճներ միգակակից, ուզմի պատրաստ և ծարավի:

Դարդանացոց գընդին էր պետ Էնիսաը արյասվրտ,  
810 Անքիսեսի ուստրը, որին ծընեց Աստղիկ սատվածուհին,  
Իդա լեռան վրա դյուցազն Անքիսեսի հետ պառկելով:  
Էնիսաը չէր միացնակ, այլ նրա հետ էին նաև  
Զույգ որդիներն Անտեմորի՝ Արքելոքոս և Ակամաս  
Արիսյաններն՝ ամեն մարտի քաջահմուտ և փորձառու:

Իսկ Զելիայի բընակիչներն Իդա լեռան ըստորոտում,  
Տըրոյանք հարուստ, որ խըմում են ջրերը սև Էսեսյոսի՝  
Պետ ունեին Պանդարոսին՝ շըքեղ որդուն Լիկալոնի,  
Որին տըվեց ինքն Ապոլլոնը լայնալիճ աղեղ հուժկու:

Բընակիչներն Ադրեստիայի, Ապեսոսի և Պիտիայի  
820 Ու Տերիայի քարձր լեռան՝ պետ ունեին իրենց գըլխին  
Ադրեստոսին և Ամփիոսին կտավագրահ, կորովասիրտ,  
Զույգ որդիները Պերկոսյան Մերուպեի, որ ավելի  
Գուշակության մեջ էր հըմուտ, քան թե մարտի և գուպարի:  
Սա չէր թողնում պատերազմի գընալ երկու որդիներին,

Քայց որդիներն ականջ չարին հոր պատվերին այն ժամանակ,  
Քանզի մահվան օրհասը սև նըրանց դեպի մարտ էր մըղում:

Պերկոտեի, Պրակտիոնի, Աբիդոսի և վեհապանձ

Արիսթեի ու Սեստոսի բնակիչներին էր գորավար  
Ինքն Ասիոսը Հիրտակչան, որին բերում էին հըսկա

830 Աշխետ ձիեր Արիսթեից՝ ափունքներից Սելլեիսի:

Հիպպոթոսն մըկընդամոլ՝ Պիլեոսի հետ միասին,

Ռրոնք որդիքն էին շըքեղ Պելասգացի Լեթեոսի,

Բերում էին Պելասգացոց գունդը սիզոս Լարիսսայից:

Ակամասը Պիրոսի հետ գունդն էր բերում թըրակացոց,

Ռրոնց սընում է իր ծոցում Հելլենսպոնտոսը հողմածուսի:

Նիզակավոր կիկոնացոց պետն էր Եվփենը տիզազեն,

Որ շառավիղն էր Կեսալյան դիցասընունդ Տրիզենոսի:

Պիրեքսիքեսն էր առաջնորդում աղեղնածիզ պեոններին՝

Բերած հեռու Ամեդոնից ու հորդասոս Աքսիոսից,

840 Ռի վընիտ ջըրերն առատ ծավալվում են երկրի վըրա:

Պափլանգոնաց գունդն էր բերում Պիլեմենը արիասիրտ,

Ենեոներից, ուր սերվում է ցեղը վայրի ջորիների:

Կիտորոսից էին սըրանք, ապրում էին Սեսամոսում,

Պարթենիոս գետի չորս դին, մեծակառույց տըրների մեջ,

Կրոմնայում ու բարձրաբերձ Երիթնայում և Էգիալում:

Հափգոնաց պետերն էին Եպիստրոտին ու Ռիոսը,

Եկած հեռու Ալիբիայից, որ հարուստ է իր արծաթով:

Իսկ Միսացոց՝ Քրոմիսը և Եննոնոս հավահըման,

Քայց չազատվեց հըմայությանը սա իր մահվան սև օրհասից,

850 Այլ արագոտն Էակիդից հաղթահարված՝ գետում խեղդվեց,

Ռրտեղ բազում տըրոյացիք ընկան ձեռքով Էակիդի:

Փըլոուգացոց բերում էին Փորկիսը և դիցանըման

Սականիոսը՝ Սականիից հեռու՝ ուազմի տեհչով վառված:

Անտիփոսն ու Մեսթլեսն էին մեոններին գորավարում,

Ռրդիները Տալեմենի, որոնց ծավի Գիզյան ծընեց.

Բերում էին նըրանք նաև Տմոլոսյան մեոններին:

Կարիացոց՝ Միլետոսի և Փթիրաց լեռան վըրա,

Եվ Մեանդրի գետահովտում ու բարձրահոն Միկալեի

Գազաթներին ապրող մարդկանց առաջնորդում էին շըքեղ

860 Նաստեսը և Ամփիմաքոսն՝ արի որդիք Նոմիոնի,

Ռր ինքն էլ էր գընում մարտի, աղջըկա պես ոսկեպաճույճ:

Անմիտ, բոլոր զարդերն այդ ճոխ շըփըրկեցին նըրան մահից,

Այլ գետի մեջ ընկավ տապաստ՝ Էակիդյան քաջի ձեռքով,

Եվ Աքիլլեսն ահեղագոռ ավարեց ողջ ոսկին նըրա:

Սարպեդոնն էր պետ լիկացոց և Գլավկոսն ականավոր՝

Եկած հեռու Լիկիայից՝ Քասնթոսից հորձանահոս:

# Ե ր գ    Ե ր ր ո ր դ

## ԵՐԴՈՒՄՆԵՐ. ՏԵՍԱՐԱՆ ՊԱՐՍՊԻՑ. ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՎ ՄԵՆԵԼԱՎԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Եվ երբ արդեն կազմ ու պատրաստ էին գորք ու գորագրուխ,  
Տրրոյացիք առաջ անցան խառնադադակ ճիշ ու կանչով.  
Լայն երկրներով հեռուն չըվող կրոունկների պես բազմերամ,  
Որ փախչում են ձրմուսն անվերջ անձրևներից ու հողմերից  
Սըլանում են Օվկիանոսի մակերեսով կըրոնչալով  
Եվ տանում են մահու օրհաս ու կոտորած թըզուկներին,  
Ընդդեմ նըրանց սարսափելի մարտ մղելով բարձր օդում:  
Իսկ բոցաշունչ աքայցիք զընում էին անձայն ու լուռ,  
Ջանախընդիր՝ մեկ-մյուսին լինել կրովում թև ու թիկունք:

- 10    Հարավն ինչպես, որ ծածկում է լեռն անթափանց մառախուղով—  
Հովիվներին անցանկալի, գողերին հեշտ, ինչպես գիշեր,  
Եվ քարընկեց չափով հեռու՝ աչքին ոչինչ չի երևում,  
Այդպես էր փոշին փոթորկվում նըրանց անթիվ ոտքերի տակ,  
Երբ հաղթաբայլ և սրընթաց անցնում էին դաշտի միջով:

- Եվ երբ երկու կողմերն արդեն մոտիկ էին մեկ-մյուսին,  
Տրրոյանց կողմից առաջ նետվեց աստվածատիպ Պարիսը պերճ.  
Ոսին ուներ նա ընձեռնի և լայնալիճ աղեղ ու սուր,  
Եվ ճոճելով երկայնաձիգ երկու գեղարդ պըղընձասայր,  
Կոչ էր անում արգիացի կըտրիճներին առհասարակ,  
20 Որ այնչան լինեն իրեն մենամարտիկ գուպարի մեջ:  
Երբ Արևսի սիրելագույն Մենեկալը տեսավ նըրան,  
Որ իր զընդից առաջ ընկած մոտ էր գայիս մեծ քայլերով,  
Սովալըլուկ առյուծն ինչպես, որ հըրճվում է հանդիպելով  
Եղջերուի կամ այծյամի, որին կանի պատառ-պատառ  
Նույնիսկ եթե նըրա վըրա գան որսորդներ քաջակորով



Եվ բարակներ արագավազ, — Մենեղավոսն այդպես ցընծաց,  
Երբ իր աչքի առջև տեսավ աստվածատիպ Ալեքսանդրին,  
Ջի վերջապես հուշս ունեցավ վրբեժն առնել ապիրասոյց,  
Եվ իր կտրքից անմիջապես վար ցատկեց նա զինավառված:

30 Նախամարտիկ քաջերի մեջ Պարիսը երբ տեսավ նըրան,  
Սուկաց սաստիկ ինքն իր սըրտում ու խելահեղ ետ ընկըրկեց.  
Ինչպես որ մարդ լեռների մեջ տեսնում է մի հրակա վիշապ  
Ու շուտ գալով անմիջապես ետ է փախչում խելակորույս,  
Դեմքը ամբողջ անհից դըժգույն ու ողջ մարմնովն իր դողահար՝  
Պարիսն այդպես փախավ իսկույն, տեսնելով քաջ Մենեղավին:

Այդ տեսնելով, ծալրեց Հեկտորն՝ աստվածատիպ Ալեքսանդրին  
«Տեսքով լոկ քաջ, խրդնուկ Պարիս, կրճամույի, հըրապուրիչ,  
Երանի թե չըծընվեիր ու կորչեիր դու անկընթիկ:

40 Այդ էի ես ուզում սըրտանց, և այդ լավ էր հագա՛ր անգամ,  
Քան թե այսպես դու կեղտի մեջ թաթախվեիր անարգաբար:  
Գիսակագեղ աքայեցիք վըրսդ անշուշտ պիտի խընդան՝  
Քո գեղանի կերսարանքից քաջ ախոյան կարծելով քեզ.

Բայց դու կորով ուժ ասված բան չունես քո մեջ ամենևին:  
Այդ դո՛ւ էիր, որ նավերով ծովագընաց արշավեցիր,  
Ծովեր անցար՝ անձնանըվեր ընկերներով արիսաիրտ  
Եվ անձանոթ մարդկանց միջից, աշխարհներից հեռո՛ւ-հեռո՛ւ,  
Հափափեցիր չըքնաղ մի կին՝ հարսը ռազմիկ կըտրիճների,  
Ի մեծ փորձանք քո հոր և մեզ և մեր բուր ժողովըրդին,  
Իսկ թըշնամյաց ի խընդություն և քեզ՝ համոթ ու նախաստինք:

50 Ինչո՛ւ փախար վախկոտըդ դու արիսական Մենեղավից  
Մըտածեի՛ր, թե ինչ մարդու կին ես առել ծաղկափրթիթ:  
Չէին օգնի քեզ ո՛չ քընար, ո՛չ շընորհներն աստվածային,  
Ո՛չ գանգոտըրըդ գեղանի, երբ քեզ փոշու մեջ թաթախեր:  
Բայց շա՛տ երկշոտ եմ տըրոյանք, սպա թե ոչ մինչև հիմա  
Քարե շապիկ հագած էիր չարիքների քո փոխարեն»:

Աստվածատիպ Պարիսը իր եղբորն այսպես պատասխանեց.  
«Կըշտամբանքըդ նըշմարիտ է, Հեկտոր, և ո՛չ հանիրավի.

60 Անվըկանդ է սիրտը քո միշտ ու կուռ, ինչպես կացինը սուր,  
Երբ անտնտում մայրի ծառի բունն է մըտնում՝ հաստատական  
Եվ գընալով՝ հետըզհետե անեցնում է թափը բազկի:  
Այդպես և դու քո կըրծքի տակ արի, անահ մի սիրտ ունես:  
Բայց Աստղիկի ինձ պարգևած ձիրքերը մի՛ պախարակիր,

Ծրերորհները աստվածատուր խոտերի չեն ամենեին,  
Եվ ինչ նըրանք են պարզևում, այն չի՝ կարող խղել ոչ ոք:  
Իսկ եթե դու կամենում ես, որ ես մըտնեմ գուպարի մեջ,  
Նըստեցրու ողջ տըրոյացոց և աքայանց նըմանապես,  
Եվ երկուսով՝ Մենեյալոսն ու ես միայն մենամարտենք.  
Կըովենք հանուն Հեղինեի ու գանձերի համար նըրա:

- ) Եվ մեզանից մենամարտում ով որ հըզոր, հաղթող լինի,  
Նա թող տիրի ամեն ինչքին, Հեղինեին տանի իր տուն,  
Եվ մյուսները աքայանց հետ կընքելով դաշն ու հաշտություն՝  
Վերադառնաք խաղաղությամբ դեպի Տրոյա արգասաբեր,  
Իսկ ամբարքարձ աքայեցիք դեպ ձիաբույծ Արգոսն իրենց  
Եվ Աքայիս, ուր կան կիներ գեղաչըքնաղ ու վարսագեղ»:

Այսպես ասաց, ու լըսելով նըրան Հեկտորն, ուրախացավ,  
Եվ անցնելով առաջ՝ բըռնեց իր միզակի մեջտեղից նա  
Ու կանգնեցրեց իրենց տեղում տըրոյացոց գընդերը գոռ,  
Մինչ վարսագեղ աքայեցիք տեղում էին նըրա վըրա

- 0 Բըռունցքաչափ քարեր անվերջ ու նետերի տեղատարափ:  
Գոչեց այնժամ Ագամեմնոն արանց արքան ձայնով իր մեծ.  
«Վանգ առեք, ո՛վ արգիացիք, նետ մի՛ նետեք, ո՛վ աքայանք,  
Կորդակաճոճ Հեկտորն, ասես, կամենում է խոսել մեզ հետ»:

Այսպես ձայնեց, ու տեղնուտեղ դարսար առան աքայեցիք,  
Եվ Հեկտորը կանգնած երկու ճակատների միջև՝ ասաց.  
«Լըսեք, տըրոյանք և դուք համայն քաջասըրունք աքայեցիք,  
Խոսքը Պարիս-Ալեքսանդրի, որ այս կըովի պատճառն եղավ.  
Առաջարկում է նա բոլոր տըրոյացոց և աքայանց՝

- Դընել իրենց գեներըրը ցած, բարեբեղուն գետնի վըրա,  
30 Եվ միայն ինքն ու Արեսի սիրելի քաջ Մենեյալոսն  
Կըովեն հանուն Հեղինեի և գանձերի համար նըրա:  
Եվ երկուսից մենամարտում ով որ հըզոր, հաղթող լինի՝  
Նա՛ տիրանա ամեն ինչքին ու կընոջը իր տուն տանի.  
Իսկ մյուսներս իրարու հետ կընքենք դաշինք ու հաշտություն»:

Ասաց Հեկտորն, ու լըռեցին հակառակորդ կողմերն երկու.  
Այն ժամանակ այսպես խոսեց Մենեյալոսն անեղաձայն.

- «Ի՛նձ էլ լըսեք, զի մեծ մի ցավ կեղեքում է սիրտըս ասատիկ.  
Ժամանակն է, որ բաժանվեն աքայեցիք և տըրոյանք,  
Բա՛վ է որքան տատապեցին իմ երեսից այս կըովի մեջ,  
00 Որի պատճառն Ալեքսանդրի հանդըզնությունն եղավ անմիտ:  
Մեզանից նա՛, որին մահ է նախատեսված, թող որ մեռնի,

Եվ մշտաներդ խաղաղությամբ բաժանվեցեք մեկ-մշտսից:  
Տըրոյացիք, այստեղ երկու ճերմակ ու սև գառ բերեք շուտ,  
Արևի և երկրի ի ձոն, մի գառ էլ մենք՝ Արամազդին,  
Կանչեք և քաջ Պրիամոսին, որ ինքն անձամբ կընքե դաշինք,  
Զի որդիներն իր գոռոզ են, ամբարտապան և ուխտադրոժ,  
Որ ոչ մի մարդ չըհանդրգնի Արամազդի ուխտը դըրժել:  
Պատանիներն հեղհեղուկ են ու շարունակ փոփոխամիտ,  
Իսկ ծերունին, ինչ անում է, անում է միշտ ետ ու առաջ,

—110 Որպեսզի գործն արդյունավետ լինի երկու կողմի համար»:

Այսպես ասաց, ուրախացան աքայեցիք և տըրոյանք,  
Հուսալով, որ վերջ կըլինի աղետավոր պատերազմին:  
Երիվարներն ետ քաշելով, ձիերից ցած իջան նըրանք,  
Ու հանելով գեներն իրենց՝ դըրին գետնին, իրարու մոտ.  
Եվ երկուստեք նըրանց միջև մընաց մի նեղ տարածություն:

Հեկտորն իսկույն պատվիրակներ հըղեց դեպի քաղաքն իր հոր՝  
Գառներ բերեն և Պրիամոս թագավորին կանչեն այնտեղ.  
Իսկ թագավոր Ագամեմնոնն ուղարկեց իր Տալթիբիոսին  
Դեպի նավերը գոգավոր, որ նա երրորդ գառը բերի:

—120 Եվ Տալթիբիոսն հընազանդեց աստվածային Ատրիդեսին:

Իրիսն այնժամ բանքեր եկավ ձյունաթևիկ Հեղինեին,  
Նըրա տալոջ դեմքը առած— Անտեհորի որդու կընոջ,  
Որին պահում էր թագավոր Հելիկայոնն Անտեհորյան  
Պրիամոսի չքնաղ դըստեր, որ կոչվում էր Լալոդիկե:  
Գըտավ նըրան արքունիքում ձեռագործով ըզբաղվելիս,  
Պատկերում էր ծիրանավառ վերարկուի վըրա նըրբին՝  
Բազում մարտերն աքայեցոց և տըրոյանց ձիամարզիկ,  
Որ Արեսից իրեն համար բերում էին պատերազմից:  
Մոտենալով Հեղինեին՝ ժըրոտն Իրիսն այսպես ասաց.

130 «Արի և տես, հարսըդ սիրուն, գործերը վեհ և սըխրալի  
Զիամարզիկ տըրոյացոց և աքայանց պըղընձագգեստ,  
Որոնք դեռ նոր մոլեգնաբար, վառված տենչով կոտորածի,  
Մըլում էին արտասավայից արյունոտ մարտ իրարու դեմ,  
Իսկ արդ դադար տըված կըովին՝ նըստել են լուռ իրար դիմաց  
Հենված իրենց ասպարներին և տեգերը մըխած գետին:  
Հիմա պիտի Պարիսը պերճ ու Մենելայն արիսական  
Երկայնաձիգ նիզակներով մեհամարտեն իրարու հետ,  
Եվ հալթողը պետք է որ քեզ իր սեփական կինն անվանի:

- Այս ասելով աստվածունին կարոտ վառեց կրնոջ պրտում
- 140 Դեպ առաջին իր ամուսինն ու ծրնողներն իր հարազատ:  
 Եվ Հեղինեն անմիջապես ճերմակ մի քող առավ վըրան  
 Ու դուրս ելավ իր օթյակից գորովի արտասվելով.  
 Նա մենակ չէր, այլ նրա հետ գընում էին երկու նածիշտ՝  
 Պիտթոնսի դուստրը Էթրեն և Կլիմենն գեղեցկաչվի,  
 Ու հապըշտապ հասան նրանք Ալեսայան դարբասներիս:  
 Պրիամն այնտեղ Պանթոնսի, Թեմիտևսի և Լամպոսի,  
 Կլիտիոսի և շտաավիղ արիսական Հեկտավիոնի  
 Ուկազոնի, Անտեմորի,— երկուսն էլ ծեր խոհեմազարդ,—  
 Նըստել էին ժողովըրդի ծերերի հետ, մարտից քաշված,  
 150 Զի սկսոր էին արդեն, բայց պերճաբան, ճարտարախոս՝  
 Ծըսպոնների նըման, որոնք նըստած ծառի ճյուղերի մեջ  
 Արձակում են ողջ օրն ի բուն փափկահընչյուն ձայներ անվերջ:  
 Այսպես նըստած էին տարեց իշխանները տրոյացոց  
 Աշտարակի վըրա և երբ տեսան չըքնաղ Հեղինենին,  
 Որ դիմում էր դեպի այնտեղ, ըսկըսեցին ըսքանչացած  
 Ցածըր ձայնով մեկ-մյուսին այս սրբաթև խոսքերն ասել.  
 «Մեղավոր չեն տըրոյացիք և աքալանք պըղընձագգեստ,  
 Որ այսպիսի կընոջ համար տատապում են շատ տարիներ.  
 Ծըշմարտապես անմահական աստվածունիու դեմք ունի նա,  
 160 Բայց և սղնպես, ինչ էլ լինի, վերադառնա՝ թող նալերով,  
 Որպեսզի մեր որդոց համար չըդառնա նա կըովախընձոր»:

- Այսպես ասին, բայց Պրիամոսն իր մոտ կանչեց Հեղինենին.  
 «Սիրուն զավակս, արի այստեղ, նըստիք մտքս, որ լավ տեսնեա  
 Դու առաջին քո ամուսնուն և քո բոլոր մոտիկ մարդկանց:  
 Մեղավոր չես դու իմ հանդես, այլ աստվածներն են հանցավոր,  
 Որ դըրդեցին աքալեցոց պատերազմի էլնել իմ դեմ:  
 Նայիր հասա, ո՞վ է մեծանձն աքալեցին այն հոչակապ,  
 Պետք է ասել՝ շատերը կան մի գըլխաչափ բարձր ավելի,  
 Բայց չեն տեսել երբևիցե ես գեղեցիկ նըրա նըման  
 170 Ու վեհաշուք մարդ մի ուրիշ. նըման է նա թագավորի»:

Եվ Հեղինեն հըրաշագեղ նըրան այսպես պատասխանեց.  
 «Ըսկերայր իմ, դու ինձ համար ահեղ ես և պատկասելի.  
 Երանի՜ թե ես մեռնեի այն օրը, երբ քո որդու հետ  
 Այստեղ եկա՝ եղբայրներիս թողած և քողն հարսանեկան,  
 Թողած դըստերն իմ սիրասուն և անձկալի ընկերներիս...  
 Բայց մահն անգամ ինձ գըլացավ ու հալվեցի արտասվելով:  
 Սակայն թող որ, ըսկերայր իմ, պատասխանեմ քո հարցումին:

- Նա ինքն արքա Ագուստնոն Ատրիդեսն է ամենիշխան,  
 Ինչպես և քաջ պատերազմող. եղավ նաև մի ժամանակ
- 180 Նա տազոր ինձ, անամոթիս, եթե երբեք չէ սին երագ»:  
 Այսպես սասց, և ծերունին բացականչեց ըսքանչացած.  
 «Երանի՜ քեզ, երջանկածին և քաջափառ ո՛վ Ատրիդես,  
 Որ ձեռքիդ տակ ունես անթիվ և անհամար աքայեցիք:  
 Եղա երբեմն ես այգեկետ Փոշուգիայում մի ժամանակ,  
 Որտեղ տեսա շատ ձիավարժ փոշուգացիներ քաջամարտիկ,  
 Ժողովուրդները Ատրևսի ու Միգտոնի աստվածակերպ,  
 Որ Սանգարիս գետի ափին հրակա բանակ էին զարկել:  
 Ե՛ս էլ նրանց թվում եղա,՝ որպես համարգ և դաշնակից.  
 Այն օրը, երբ եկան հասան ամազոնները նչրասիրտ,
- 190 Սակայն դարձյալ չէին այսքան, որքան խայտակն աքայեցիք»:

Ռդիսեսին նրկատելով՝ նա հարց տրվեց երկրորդ անգամ.  
 «Ասա՛, հապա, սիրուն զաւլակս, իսկ ո՛վ է նա, որ Ատրիդից  
 Մի գլխաշափ փոքր է թեև, բայց թիկնեղ է և լայնալանջ:  
 Նըրա ամբողջ զեն ու զարդը հանգչում են լուռ գետնի վրրա,  
 Իսկ ինքն, ինչպես խոյ մի խորոխտ՝ ճեմում է բշուր քաջերի մեջ:  
 Նըրան բրդոտ ու սևասուն խոյի հետ եմ համեմատում,  
 Որ ճեմում է ճերմակասուն ոչխարների հոտում ըստվար»:

- Եվ Հեղինեն՝ չըքնաղ ծընունդն Արամագրի՝ պատասխանեց.  
 «Դա Ռդիսեսն է Լայերտյան բազմահրընար և հանճարեղ,  
 200 Որ քարքարոտ Իթակեի ժողովրդի ծոցում սընվեց,  
 Հրնարամիտ ամեն դեպքում և խելացի խորհրդատու»:

- Եվ Անտենորը խոհական նրան այսպես պատասխանեց.  
 «Օ կին, իրոք, ճիշտ ասացիր, գի Ռդիսեսն աստվածային,  
 Երբ քեզ համար Մենելափի հետ միասին բանքեր եկավ,  
 Նըրանց սիրով ընդունեցի հյուր իմ տան մեջ ու պատվեցի.  
 Եվ ես այն օր նրա բարքին ու հանճարին հասու եղա:  
 Երբ միասին մըտնում էին տրոյացոց ատյանը մեր,  
 Մենելափուն իր ուներով բարձրաձիգ էր Ռդիսեսից,  
 Բայց երբ երկուսն էլ նըստեցին, Ռդիսեսն էր շըքեղ ու ճոխ:  
 210 Իսկ երբ հանդես էին գալիս ժողովի մեջ իրենց ճտով՝  
 Մենելափուն անբռնագբոս՝ շըքի պես էր հըռետորում.  
 Համառոտ էր խոսքը նըրա, բայց և հըստակ, հասկանալի,  
 Չէր ճոխաբան, ճոռոմախոս, և կըրտսեր էր իր տարիքով:  
 Բայց Ռդիսեսը հանճարեղ, երբ ոտքի էլներ ծանրաբարո,  
 Հայացքն հողին էր սևեռում, աչքերը ցած խոնարհելով,

Եվ գավազանն առաջ ու ետ նա երբեք չէր տարուբերում,  
Այլ բրոնում էր անշարժ, ամուր՝ տրիսնարամիտ մարդու նըման,  
Եվ թրվում էր անգաղափար ու ցասկոտ ոմն աներնույթ:  
Բայց երբ կըրծքից արձակեք նա իր առնական ձայնը հուժկու,  
220 Եվ ձրմեռվան ձյունի նըման խոսքերն իր ճոխ և խորհմաստ՝  
Ուրիշ ոչ մի մահկանացու չէր մրցակցի Ռդիսակին,  
Եվ նրա դեմքն աստվածային էլ մեզ զարմանք չէր պատճառում»:

Եվ Այաքսին տեսնելով ծերն՝ հարցում արավ երրորդ անգամ.  
«Իսկ ո՞վ է մյուս աքայեցին, այդ քաջալանջ ու հաղթանդամ,  
Որ իր գրվիտով և ուսերով բարձր է բոլոր աքայանց մեջ»:  
Եվ Հեղինեն՝ վեհագույնը ողջ կանանց մեջ՝ պատասխանեց.  
«Այաքսն է դա հաղթահասակ, աքայեցոց պատվարն ամուր,  
Իսկ այն մյուսը աստվածային Իդոմենեսն է դյուցազուն,  
Որի շորջն ե՞ն հավաքվել ողջ գոբապետներն կըրեսացոց:  
230 Մեներպիոսն արիսական նըրան հյուր էր ընդունում մերթ  
Մեր պալատում, երբ գալիս էր Կրեստեից իր հայրենի:  
Տեսնում եմ ես ահավասիկ և մյուս խաչտակն աքայեցոց,  
Որոնց ես լավ եմ ճանաչում, անուններով գիտեմ մեկ-մեկ.  
Բայց չեմ կարող տեսնել, ափսոս, ժողովրդոց գույզ պետերին՝  
Պոլիդեկսին բըռնամարտիկ և Կաստորին ձիահրմուտ—  
Եղբայրներին իմ հարազատ, միևնույն մոր ծոցի պըստող:  
Մի՞թե սրբանց նետ միասին չեկան նըրանք Լակդեմոնից,  
Թե՞ եկել են նըրանք իրենց անդրնդահերձ նավատորմով  
Ու հիմա չեն ուզում մըտնել պատերազմի քաջերի նետ  
240 Վարանամիտ՝ իր ամոթից ու վարմունքից պարսավելի»:

Այսպես ասաց, սակայն նըրանք չէին եկել աքայանց նետ,  
Մընում էին Լակդեմոնում՝ հայրենական երկրում իրենց:  
Նըվիրակներն այդ միջոցին բերում էին դաշինքն ուխտի՝  
Երկու հատ գատ և պծեճի տիկով գինի զըվարթարար,  
Իսկ Իդեոսն՝ անոթ փայլուն ու ոսկեձուլ ըմպանակներ,  
Եվ մոտ գալով՝ այնորին դիմեց իսկույն այս խոսքերով.  
«Վեր կաց, որդիդ Լակդեմոնի, ձիամարզիկ տըրոյացոց  
Եվ ամրաբարձ աքայեցոց ավագանին կանչում է քեզ,  
Մասնակցելու հանդիսավոր դաշնադրության ու սուրբ զոհին:  
250 Ալեքսանդրոսն ու Արեսի սիրելագույն Մեներպիոսն  
Երկալնաբուն նիզակներով պետք է այնտեղ մեճամարտեն,  
Եվ նըրանցից այդ գուպարում ով որ հըզոր, հաղթող լինի՝  
Տիրե պիտի Հեղինեին ու զանձերին նըրա բոլոր:  
Իսկ մյուսներն իրարու նետ կընքելով դաշն ու հաշտություն»

**Դառնան տրոյանք քաղաքն իրենց, իսկ ամրաբարձ արալեցիք՝ Արգոսն իրենց, ուր կան կիներ երկայնավարս ու գեղեցիկ»:**

Այսպես ասաց, և ձերունին սուկաց հրավերն այդ լըսելով,  
Բայց յուրայնոց հըրամայեց կառքը լըծել անմիջապես:  
Եվ երբ արդեն կատարված էր այդ հըրամանն ալեորի,  
260 Նըստեց Պրիամն իր կառքը ճոխ, Անտեճորին իր նետն ստած,  
Քաշեց սանձերն ուժգըճորեն, և ձիերը քառատըրոյի  
Դարբասներից դուրս թըռչելով՝ արագ դ՛պի դաշտ սըլացան:

Եվ երբ հասան աշրոյացոց և արալանց բանակներին,  
Ցած իջնելով շըքեղ կառքից, արոտատատ գետնի վըրս,  
Հայր ու որդի արագաքայլ դէպի ամբոխն առաջացան:  
Ոտքի ելավ անմիջապէս Ագամեմնոն արանց արքան,  
Եվ ճըրս նետ ոտքի ելավ Ռդիսևոր բազմահանճար:  
Մունետիկներն աշնունետն բերին ուխտի զոներն ընտիր  
Եվ խառնելով խառնարանու՛մ գիճիճ՝ ճըրանք ջուր լըցընցին  
270 Արքաների ձեռքին, այնժամ Ատրիդեսը դանակն հանեց,  
Որ շարունակ կախ էր անում իր մեծ սըրի պատշանի մոտ՝  
Կըտրեց մազերը գառների գըրովներից, որոնք իսկույն  
Բաժանվեցին տըրոյացոց և արալանց ալիագանուն,  
Ագա ըդոր աստվածներին աղոթք արավ բազկատարած.

«Հա՛յր Արամագդ, տեղդ Իդայի ամենափստ և վեհապանձ,  
Դո՛ւ, Արեգակդ ամենատես, ամենագոր, և դո՛ւք, գետեր,  
Եվ դու երկիր, որ ետ մահու գիտեք պատժել անագորույն  
Երդըմնազանց դըրոմներին ու վատերին առհասարակ,—  
Վըրկա եղեք և պահեցեք մեր երդումներն անդըրժելի:  
280 Թե՛ ըսպանի մենամարտում Պարիսը պերճ՝ Մենելավիճ,  
Նա՛ լինի տերն Հեղինեի և գանձերին ճըրս թղոր,  
Եվ մենք ի տուն վերադառնանք ծովագըճաց մեր նավերով.  
Իսկ թե՛ սպանի արիսական Մենելավոսն Ալեքսանդրին՝  
Տան տըրոյանք Հեղինեին և ճըրս նետ գանձերն իր ողջ  
Ու վըճարեն արգիսացոց տույժն ու տուգանքն ըստ օրինի,  
Որ հուշ մըճա դարե՛ ի դար և այդ մասին հիշեն հոսվետ:  
Իսկ Պարիսի մահից նետո, եթե՛ Պրիամն ու իր որդիք  
Չըկամենան տուգանքը տալ, ի՛նքըս այնժամ, Ատրիդ արքաս,  
Պիտի մըճամ աչատղ այնքան, շարունակեմ պատերազմել,  
290 Միճչև հաունետ ճըսատակիս, և այս կըրովի վախճանը գա»:

Ասաց, մորթեց գառները նա անգորույն իր պըղըճնով  
Ու ցած դըրեց, որոնք անշունչ ցընցվում էին գետնին ընկած,

Զի սուր պրոֆիցնձն անագորույն ջրլատել էր նրբանց ոգին:  
Ապա նրբանք լի սափորից բաժակներով գինին առած՝  
Զոն ձոնեցին հափերժական աստվածներին աղաչելով.  
Եվ ամեն մի աքալեցի ու տըրովյան այս էր ասում.

«Մե՛ծդ Արամազդ ամենափառ և մյուս անմահ դուք աստվածներ,  
Ով որ դըրժի նախ և առաջ դաշինքն այս մեր և ոխտը սուրբ,  
Դըրուժանի ուղեղը թող գետին թափվի այս գինու պես  
00 Եվ կընոջ հետ ու գավակաց՝ ուրիշները պատկեն թող ուր»:

Այսպես ափն, Չևը սակալն չանսաց նրբանց աղերսանքին.  
Իսկ Պրիամոսն այն ժամանակ վեր կենալով աչսպես ասաց.  
«Ինձ լըսեցեք, ո՛վ իշխաններ, տըրոյացիք և աքալանք,  
Մի՛ նեղանաք, թե ես նորից դեպի քաղաք վերադառնամ,  
Զի չեմ կարող ակամատես լինել որդու իմ սիրասուն  
Եվ Արեսի սիրելագույն Մեներալի մեհամարտին:  
Ինքն Արամազդն ու մյուս անմահ աստվածները գիտեն միայն,  
Թե երկուսից ում է պահված ճակատագրից մահ ու վախճան»:

Այսպես ասաց Պրիամը ծեր և Անտեճոր իր որդու հետ  
310 Կտոք նըստելով, գառներն առած, սանձերը ետ քաշեց ուժգին,  
Ու վերըստին հայր ու որդին վերադարձան դեպի Տրոյա:

Այն ժամանակ Հեկտորը քաջ և Ռոխսան աստվածային  
Կրովի դաշտը չափեցին նախ, ապա պըղնձյա սաղափարտում  
Երկու վիճակ գըցած՝ երկար խառնում էին, թե երկուսից  
Ո՛րը առաջ պըղընձակուտ աշտեն պիտի իր արձակեր.  
Մինչ ժողովուրդը ձեռնամբարձ աղթում էր աստվածներին,  
Եվ ամեն մի աքալեցի ու տըրովյան ա՛յս էր ասում.

«Հայր Արամազդ, տերդ Իդալի ամենափառ և վեհապանձ,  
Այս երկուսից որը երկու ժողովուրդներն իրար խառնեց,  
320 Այնպես արա, որ նա աստիկ ու դըժոխքի բաժին դառնա,  
Իսկ սնուներս իրարու հետ կընքենք սիրո ոխտ ու դաշինք»:

Այս էր ասում ամեն մի մարդ, մինչդեռ Հեկտորն աչքը ետև՝  
Վիճակներն էր շարժում երկու, ու դուրս եկավ՝ նախ՝ Պարիսին:  
Այն ժամանակ բոլորն իսկույն ուղիղ շարքով նըստուեցին  
Յուրաքանչյուրն իր ձիու մոտ և ուր զենքերն էին իրենց:  
Եվ գեղածամ Հեղինեի այրը՝ Պարիսն աստվածային  
Ըսկըսեց իր զենքերն հագնել օրհասական մարտի համար:  
Նախ և առաջ սըրունքները պատեց նա պիրկ սըրունապանով,  
Որ կոճկըվում էր արծաթյա ճարմանդներով ճաճանչափայլ.



330 Հագալ գրրան լանջապանակն իր Լիկայոն հարազատի,  
Ապա կախեց ուրընդանոթ պրղընձյա սուրն արծաթագամ,  
Այնուհետև առավ վահանը հաստաքեստ ու մեծահաղթ,  
Գրլխին դրրեց գեղապատշաճ կոտ սաղավարտ ճարտարաբան,  
Որի ցըցունքն ակեղորեն ճոճվում էր վեհ ու բարձրադիր,  
Ու ձեռքն առավ իրեն հարմար երկայնաբուն հիզակ մի հաղթ:  
Իր գեներն էր հագնում նաև Մենելավոսն արիսական:

Երկու կողմից պատրաստ աչսպես, զինավստված վերից ի վար՝  
Դեպ ասպարեզ առաջացան՝ մեկ-մյուսին խեթ նայելով,  
Եվ սուկացին նրանց ի տես տրրոյացիք և արայանք:

340 Մոտենալով նրանք միմյանց, լի մոլեգին ատելությամբ  
Ճոճում էին երկայնաբուն հիզակները իրարու դեմ:  
Առաջինը Պարիսն ուժգին երկայնասուկեր տեզն իր նետեց  
Ու շեշտ զարկեց բոլորածև մեծ վահանին Ատրիդեսի,  
Բայց չըկոտրեց պրղիճնը կոտ, ու տեզի սուր սայրը ծալվեց  
Հաստ ասպարին զարնըվելով. Մենելավոսն այն ժամանակ  
Վըրա պրծավ իր պրղընձով, աղոթելով Արամազդին.


«Տե՛ր Արամազդ, տուր որ հանեն վրեժըս ինձ դավադրողից,  
Ալեքսանդրից աստվածատիպ, և իմ ձեռքով հաղթիր նրան,  
Որ մեզանից հետո ծրնվող ամեն մի ոք այսուհետև

350 Սուկա չարով հատուցելու օտարասեր հյուրընկալին»:

Աչսպես ասաց և ճոճելով՝ գրցեց նա իր հիզակն երկար,  
Զարկեց Պարիս Պրիամյանի բոլորածև մեծ վահանին.  
Տեզը թափով ասպարն անցավ ու մըխըրճվեց լանջապանում,  
Ու բըզկըտեց աշտեն նրա թույլ կողքի մոտ շապիկը նորք.  
Ցած կրոսացավ Պարիսն ընդփույթ և ազատվեց սև օրհասից:  
Արծաթագամ սուրն իր քաշած՝ Մենելավոսն վըրա հասավ  
Ու հարվածեց ախոյանի սաղավարտի զարգամանակին,  
Բայց թուրն ընկավ նրա ձեռքից եղած երեք թե չորս կըտոր:  
Վայեց Ատրիդ Մենելավոսն աչքերն ուղղած երկինքն ի վեր.

360 «Հա՛յր Արամազդ, չըկա քան քեզ անագորոյն ուրիշ աստված,  
Հույս ունեի ոյսքս հանել վատաբարտ Ալեքսանդրից,  
Կակալն ահա՛ սուրբս շախշախս փըշըրվեց իմ ձեռքերի մեջ,  
Եվ վըրիպեց զարկը բազկիս, զո՛ւր սըլացավ տեզքս սուրսայր»:

Ասաց, հասավ, բըռնեց նրա ձիաձարե սաղավարտից  
Ու քաշ տըվեց Ալեքսանդրին դեպի բանակն արայեցոց:  
Ասեղնագործ փոկը ամուր, որ կըզակի տակից կապված  
Սաղավարտն էր պահպանում պինդ՝ Պարիսի պերճ գըլխի վըրա՝



Պարիսի և Մենելաոսի մենամարտը

- Պարանոցը պրրկում էր ձիգ. կրխեղորվեր նա անկասկած,  
 Եվ Մեներլավն անտարակույս կրժառանգեր փառք ու պարծանք,
- 370 Եթե Աստղիկն՝ Արամազդի դրստրիկը այդ չընըկատեր  
 Ու չըկըտրեր փոկն արջառի՝ ազատելով Ալեքսանդրին:  
 Ատրիդեսի ձեռքում մընաց լոկ սաղավարտը Պարիսի,  
 Եվ Մեներլավն այն ճոճելով՝ նետեց թափով աքայեցոց.  
 Յուրաշիններն այն վերցրին և նա նորից վըրս վազեց  
 Պըղընձաձույլ իր գեղարդով ըսպանելու ախույանին:  
 Բայց այդ պահին վըրս հասավ իսկույն Աստղիկ աստվածուհին  
 Ու Պարիսին ամպով պատած հափըշտակեց մարտադաշտից  
 Ու դեպ քաղաք՝ բուրումնալետ առագաստը տարավ նըրան,  
 Այս փութաց Պարիսի մոտ կանչել չըքնաղ Հեղինենին,
- 380 Որին զըտավ աշտարակում նաժիշտներով շըրջապատված:  
 Աստղիկն ըզգույշ ցընցեց ձեռքով նըրա շըղարշն անուշաբույր  
 Ասվիագործ երկարակյաց այն պատալի դեմքը առած,  
 Որ տարիներ առաջ, երբ դեռ Լակդեմոնում էր Հեղինենն,  
 Նուրբ ասվի էր գործում նըրան, և որին նա շատ էր սիրում:  
 Աստվածուհին այդ պատալի դեմքն առնելով՝ այսպես ասաց.  
 «Եկ, Հեղինե, պալատ գընանք, Պարիսը քեզ տուն է կանչում,  
 Ծընորհաշուք գեղեցկությամբ իր գահույքի վըրս նըստած,  
 Զուգված այնպես, որ չես ասի, թե կըովից է վերադառնում,  
 Այլ, ասես թե պատրաստվել է՝ մի տեղ պարի պիտի գընա,  
 390 Կամ թե պարից ուրախ-զըվարթ հենց նոր է տուն վերադարձել»:  
 Այսպես ասաց և կըրծքի տակ սիրտը շարժեց Հեղինենի,  
 Որ տեսնելով հըրաշագեղ ձյուն-պարանոցն աստվածուհու,  
 Լուսապայծառ աչքերն անուշ ու ցանկալի լանջքը շըքեղ՝  
 Ըսքանչացավ և անուկը տալով՝ այսպես ասաց նըրան.  
 «Ա՛խ, դիցունի, ինչո՞ւ ես դու աշխատում ինձ խաբել դարձյալ,  
 Մի՞թե դու ինձ է՛լ ավելի հեռո՛ւ-հեռո՛ւ պիտի վանես,  
 Բարեբընակ դեպ Փըռուզիս կամ Մեռնիս հանգըստալետ,  
 Որ կա նույնպես քեզնից սիրված, հովանավոր ուրիշ մի մարդ:  
 Քանզի հիմա Մեներլավոսն հաղթել է քաջ Ալեքսանդրին  
 400 Եվ ուզում է ինձ՝ ասելուս առնել դարձյալ ու տուն տանել,  
 Նըրա՞ համար դու եկել ես նյութելու նո՛ր մի նեղություն:  
 Դո՛ւ նըրա մոտ զընա նըստիր, թողած ճամփան աստվածների  
 Եվ այլերս քո ոտքերով Ուիմպոս մի՛ վերադառնա,  
 Այլ նըրա մոտ լաց ու ողբա և հընազանդ եղիր այնքան,  
 Մինչև քեզ կին առնի իրեն կամ աղախին՝ իր տան համար:  
 Իսկ ես այնտեղ էլ չեմ դառնա անկողինն իր հարդարելու  
 Եվ դառնալու ծաղր ու ծանակ տըրոյացի կանանց համար:  
 Թո՛ղ ինձ ուստի և հեռուցիր, քանզի սիրտըս ցաված է խիստ»:

Աստվածունի՜ն հույժ բարկությամբ նրբան այսպես պատասխանեց.  
410 «Մի՛ գորգորիք ինձ, եղկե՛ի, գուցե վերսոդ բարկանալով՝  
Ատե՛մ ես քեզ այնքան, որքան մինչև հիմա սիրել եմ քեզ,  
Եվ երկուստե՛ք՝ տրբոյացոց և աքայանց միջև, անհաշտ  
Նյութե՛մ դժժնյա վերեժ ու ոյս, և դու դաժան մահով կորչեա՛ս»:

Այսպես ասաց, և Հեղինեն՝ զարնը Չևսի, ահաբեկված  
Ելավ գրնաց գաղտագողի, ներկաների աչքից անտես,  
Քողածածուկ իր շղարշով, հետևելով աստվածունին:  
Եվ երբ հասան շրթեղաշուք պալատը պերճ Ալեքսանդրի,  
Աղսխիճները զրնացին իրենց գործով ըզբաղվելու,  
Իսկ Հեղինեն ամենագեղ դեպ առագաստն առաջացավ,  
420 Որտեղ Աստղիկ աստվածունի՜ն աթոռ դրեց Պարիսի դեմ  
Հեղինե՛ի՝ վահանադրոշ Արամազդի դրստեր համար,  
Ու նրստելով նա խրստադեմ հանդիմանեց իր ամուսնուն.  
«Մենամարտի՞ց ես զպիս դու, ա՛հ, երանի թե մեռնե՛իր  
Քաջի ձեռքով, որ իմ նախկին ամուսինն է արիասիրտ.  
Դու պարծենում էիր առաջ, թե քո բազկով և հիզակով  
Գերազանցում ես Արեսի սիրելագույն Մենելային.  
Թե քաջ ես դու, գրնա ձայն տոբ Մենելային խարտիշաներ  
Եվ դուրս արի դու նըրս դեմ մենամարտի երկրորդ անգամ.  
Բաց ո՛չ, խորհուրդ չեմ տա ես քեզ մենամարտել հանդձաբար  
430 Դյուցազնական ու քաջատեղ Մենելայնու Ատրիդի հետ,  
Որպեսզի մի գուցե հանկարծ նըրս տեզին դառնաս դու կեր»:

Հըրաշագեղ Հեղինեին Պարիսն այսպես պատասխանեց.  
«Մի՛ խոցոտիր սիրտըս դու, կին, ինձ դատնապես այսանելով,  
Թե օգնությամբ Աթենասի Մենելայնին ինձ հաղթեց այսօր,  
Մի՛ այլ անգամ ես կըհաղթեմ Մենելայնու արիսյանին,  
Բրովհետև մենք էլ ունենք մեզ օգնական, մոտ աստվածներ:  
Իսկ այժմ, արի, ամուսնական բուռն սիրով պառկենք մեկտեղ,  
Չի այսպիսի այրող տարփանք չեմ ըզգացել երբևիցե,  
Ոչ մինչև իսկ առաջին հեղ, երբ հեշտավետ Սպարտայից  
440 Հատիքշտակած քեզ հապըշտապ փախչում էի իմ նավերով,  
Ու Կրանայե կղզում քեզ հետ մահին մըտա հեշտագըրգիս  
Ինչպես հիմա, որ վատվում եմ քեզ մըտնելու հուր ցանկությամբ»:  
Ասաց, գրնաց դեպ անկողին Հեղինեի ձեռքից բըռնած,  
Ու պառկեցին քանդակածո անկողնու մեջ հանգըստավետ:

Իսկ Ատրիդեսն ամբոխի մեջ վազվըզում էր զազանաբար  
Ու Պարիսին էր որոնում, ամենուրեք աչք ածելով,

Սակայն ոչ ոք տրրոյացի ու դաշնակից զինվորներից  
Չրկարեցան ցույց տալ նրբան անհետացած ախոյանին:  
Չէր թաքցրնի ոչ ոք, եթե Ալեքսանդրին տեսած լիներ,  
450 Ձի բոլորի համար Պարիսն ատելի էր մահվան նրման:  
Այն ժամանակ այսպես խոսեց Ագամեմնոն արանց արքան,  
«Ինձ լըսեցեք, տրրոյացիք և դարդանչանք և սատարներ,  
Հայտնի է, որ հաղթությունը Մենելալին է արիսյան,  
Ուստի այստեղ բերեք իսկույն Հեղինեին իր գանձերով,  
Եվ տուգանքը, տրրոյացիք, վըճարեցեք ըստ պայմանի,  
Որ այս մասին դարե ի դար սերունդները հիշեն ընդմիշտ»:

Յյսպես ասաց, և գովեցին նրբան բոլոր արաչեցիք:

## Ե ր գ Չ ո ր ր ո ր դ

### ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ. ԱԳԱՄԵՄՆՈՆԸ ԶՈՐԱՀԱՆԴԵՍ Է ԱՆՈՒՄ

Ոսկեհատակ սրբահներում, Արամազդի շուրջը բազմած  
Ժողով էին անում բոլոր աստվածները երկնաբլուրնակ,  
Եվ վեհանուշ Հեթեն նրբանց ոսկեքանդակ բաժակներով  
Մատուցվակում էր հոտընկալս աստվածեղեն քաղցր ըմպելիկն:  
Խըմում էին նրբանք կարգով ու նայում վար՝ դեպի Տրոյա,  
Երբ Զրվանյանը Հերային զայրացնելու նրպատակով՝  
Նրբան խայթող այս գրգռոնիչ առակալոր խոսքերն ասաց.

«Մենեղավուն ունի երկու դիցուհիներ իրեն պաշտպան—

Մեկը Հերան արգիսցի, մյուսն Աթենաս Պահպանապետն,

- 10 Սակայն մի կողմ քաշված նրբանք, զվարճանում են նայելով,  
Այնին Աստղիկն իր Պարիսից չի հեռանում բոլորովին  
Եվ նրբանից վանում է միշտ մահվան օրհասն աղետալոր.  
Փոքր-ինչ առաջ փրրկեց նրբան, երբ գրբեթե կորած էր նա:  
Բայց հաղթությունն արիսական Մենեղավինն է անկասկած,  
Իսկ մենք խորհորդ անենք հիմա, թե գործն ինչպե՞ս պիտի շուռ տանք.  
Անագորույն ճակատամարտ ու պատերա՛զմ պիտ հրբահրենք  
Մենք այդ երկու կողմերի մեջ, թե՞ արծարծենք սեր հաշտարար:  
Եթե սա է փափագելին և բոլորին սրբտահանո,  
Պրիամոսի բարեբրնակ քաղաքը թող մընա կանգուն,  
20 Եվ Մենեղավն առնի տանի արգիուհի Հեղինեկն»:

Սասց, Հերան և Աթենասն երկուսը մեկ մըումըռացին,  
Նըտած մեկտեղ տըրոյացոց դեմ չարիքներ որոճալով:  
Արամազդի դեմ սըրտմըտած Աթենասը ձայն չըհանեց,  
Մինչ ամենի մի բարկություն ցունց էր հանում նրբա հոգին.  
Սակայն Հերան չըկարեցավ իր զայրույթը սանձահարել,

- Ու սիրտը սև մաղձով լեցուն այս խոսքերը դուրս պոռթըկաց.
- «Անագորո՛ւյն դու Զրվանյան, այդ ինչ խոսք էր, որ ասացիր, ինչո՞ւ համար հոգևորություններս առ ոչինչ ես համարում դու Զիերս արյուն-քրտուհիք նրտան, ինչպես և ես՝ ի պատուհաս
- 30 Պրիամուսի և իր որդոց՝ գորք ու զինվոր հավաքելով:  
Արա՛, ինչպես ինքրդ գիտես, ինչպես որ քո սիրտն է ուզում, Մենք՝ մրնացած աստվածներըս համաձայն ենք քո արածին»:
- Եվ Արամազդն ամպրոպադեզ նրան այսպես ասաց ցասկոտ.  
«Ա՛յ անպիտան, քեզ ի՞նչ չարիք կամ ի՞նչ վրնաս են պատճառում Պրիամը ծեր և իր որդիք, որ անդադար ատելությամբ ճրգնում ես դու ճիմնահատակ քանդել Էփոն քաղաքը շեն:  
Եվ մինչև որ դու Էփոնի պարիսպներից ու դռներից Ներս չընդունես, լափես ողջ-ողջ Պրիամուսին և իր որդոց  
Եվ մյուս բոլոր տըրոյացոց՝ ոխըդ պիտի չըհագենաս:
- 40 Արա՛, ինչպես կամենում ես, որ այս պայքարը մեր միջև Ավելի մեծ կըլլի առիթ չըտա հանկարծ ապագայում:  
Մի այլ բան էլ պետք է ասեմ, և այն դու լավ միտքդ պահիր.  
Երբ որ իմ էլ սիրտը ուզի քանդել քաղաք մի քո սիրած  
Եվ կործանել ճիմնահատակ՝ պիտ չարգելես զայրույթըս դու,  
Այլ թույլ տաս ինձ, ինչպես որ ես թույլ տըլի քեզ այդ ակամա,  
Զի այն բոլոր քաղաքներից, որոնց մեջ վառ արեգակի  
Եվ աստղագարդ նրկընի տակ մահկանացու մարդն է ապրում,  
Էփոնն է սուրբ՝ ամենաթանկն ու սիրելին արբոխ համար,  
Եվ քաջատեզ Պրիամը ծեր և ժողովուրդը Պրիամի.
- 50 Զի իմ սեղանն ամենևին գուրկ չէր մընում ո՛չ խորտիկից:  
Ո՛չ նրվերից և ո՛չ ճարպից, ինչ պատիվ որ մեզ է վայել»:
- Եվ մեծարգո աչեղ Հերան նրան այսպես պատասխանեց.  
«Սըրտիս համար հույժ սիրելի երեք քաղաք կա մի-միսե՛ն—  
Արգոսը մեծ և Սպարտան և Միկենեն լայնափողոց:  
Զընչի՛ր դըրանք, թե երբևէ դառնան սըրտին քո ատելի.  
Չեմ արգելի, դեմ չեմ լինի, քանզի եթե չուզենամ էլ  
Ու թույլ չըտամ կործանելու՝ միևնույն է, օգուտ չունի,  
Բան չեմ շահում բոլորովին, զի սուկայի գորեղ ես դու:  
Սակայն պետք չէ հօդըս ցընդեն հոգևորություններն իմ բազմաջան,
- 60 Զի ե՛ս էլ եմ աստվածունի և քեզ հետ նույն զարմից սերած,  
Եվ Զրվանի կորոյամիտ՝ երիցագույն ծընունդն եմ ես,  
Երկու կողմից՝ նախ ծագումով և ապա որ կինդ եմ կոչվում,  
Քո, որ իշխում ես համրեմ անմահներին երկնաբընակ:  
Սակայն արի զիջենք իրար ու տեղի տանք՝ դու ինձ, ես քեզ,  
Եվ թող բոլոր հավերժ անմահ աստվածները հետևեն մեզ:  
Արդ, փութապես և անհասպաղ տո՛ւր հըրաման Աթենասին,

Որ զընա մարտն արյունահեղ՝ տըրոյացոց և աքայանց,  
Եվ թող ջանա այնպէս անել, որ տըրոյա՛նք նախ և առաջ  
Գըրծեն դաշինքն ու հարվածեն խրոխտապանն աքայեցոց»:

70 Այսպէս ասաց, և դեմ չեղալ աստվածահայր Զևար հըզոր,  
Որ դառնալով Աթենասին՝ այս սրբաթև խոսքերն ասաց.  
«Գընա՛ շուտով դեպի բանակն աքայեցոց ու տըրոյանց  
Եվ աշխատիր այնպէս անել, որ տըրոյա՛նք նախ և առաջ  
Գըրծեն դաշինքն ու հարվածեն խրոխտապանն աքայեցոց»:

Այս ասելով, բոցավառեց արդեն վառված Աթենասին,  
Որ շուտափույթ վար սրլացալ Ոլիմպոսի բարձունքներից  
Բոցանճաննչ աստղի նըման, որ Զրվանչանը նըրբամիտ  
Ուղարկում է որպէս նըշան նախորդներին ու բանակին,  
Եվ որից բլոր ու անհամար կայծակներ են թափվում կարմիր:

80 Այդպէս՝ Պալլաս Աթենասը վար սրլացալ դեպի երկիր  
Ու նըրանց մեջ արձանացալ, և ապշեցին նրանք ի տես:—  
Աքայեցիք պըղընճագետս և քաջածի տըրոյացիք,  
Եվ ամեն ոք հիազարհոր՝ իր ընկերոջն այս էր ասում.  
«Անշուշտ նորից արյունահեղ մեծ պատերազմ է պայթելու,  
Եվ կամ գուցե սեր արծարծի Զևար երկու կողմերի մեջ,  
Նա, որ մարդկանց կրոնիների մատակարարն է շարունակ»:

Այսպէս էին ասում իրար աքայեցիք և տըրոյանք.

Իսկ Աթենաս Պալլասն անեղ՝ տըղամարդու կերպարանքով—  
Անտենորյան Լաւրոյոկի՝ մըտալ տըրոյանց բազմության մեջ

90 Ու փընտրում էր ուշի-ուշով աստվածակերպ Պանդարոսին:  
Եվ նա գըտալ Լիկայոնի ուժեղ որդուն կանգնած այնտեղ,  
Ծուրջը բոլոր վահանավոր մարդկանց գընդեր հաստաքազուկ,  
Որոնց իր հետ բերել էր նա հոսանքներից Էսեսպոսի:  
Մոտենալով նըրան Պալլասն այս սրբաթև խոսքերն ասաց.

«Պիտի լըսե՛ս սրդոյ: դու ինձ, Լիկայոնի որդի՛դ արի,  
Միրտ պիտ անե՛ս թոցընելու Մենելային սղլաք մի սուր  
Եվ վառտակէս տըրոյանց մեջ փառք ու պատիվ հերոսաւաար,  
Եվ մանավանդ որ Պարիսից մեծ պարգևներ դու կըստանաս,  
Եթե տեսնի արիսական Մենելայինս Ատրիդեսին»

100 Պարտված նետով քո աղեղի և խայտուկի վըրա ելած:  
Մ՛ն ուրեմըն, անմիջապէս նըշան բըռնիր Մենելային  
Եվ ուխտ արա լուսածընունդ Ապոլլոնին արծաթաղեղ  
Չոնեղ գառների անդրանկածին, երբ որ Զելե վերադառնա»:



- Այսպէս ասաց աստվածուհին և այդ խենթին հըրապտրեց:  
 Հանեց նա իր աղեղն իսկույն շինված քոշի կեռ կոտոշից,  
 Ռոին գարկեց դարանամուտ, էրբ նա ժայռից դուրս էր գալիս,  
 Խոցեց սրտից, ու փուլ եկավ նա ողջ մարմնով ժայռի վըրս,  
 Կոտոշները կարծրր ու կեռ՝ տասներկեց թիզ էին նըրս,  
 Ռոռնք հըղկեց վարպետորեն մի անվանի եղջերագործ
- 110 Ու հագցըրեց երկու ոսկչա օղեր նըրս սուր ծայրերին:—  
 Արդ, եղջերյա աղեղն իր այդ լարեց՝ գետնին դեմ տըված նա,  
 Իսկ ընկերներն վահանն իրենց բըռնել էին նըրս դիմաց,  
 Որ մի գուցե քաջ աքայանք հարձակվեին նըրս վըրս,  
 Նսխքան որ նա կըխոցուտեր արիսակսն Մենեղավին:  
 Նա կապարճի խուփը բացեց ու հանեց նետ մի նորաթեք,  
 Հաստատեց այն լարի վըրս և ուխտ արավ արծաթաղեղ  
 Ապողոնին գոհաբերել պարարտ գառներ անդրանկածին.  
 Երբ որ Ձեղե նըվիրական իր քաղաքը վերադառնա:  
 Ապա քաշեց նա լարը պիրկ՝ նետակոթի հետ միասին
- 120 Արջառաչիւն ու աղեղի երկաթը իր կըրծքին հըպեց,  
 Եվ էրբ քաշեց աղեղը հաղթ լայնալիճը շըրջանաձև՝  
 Լարն ըշկահեց շառաչալից, լիճը ճայթեց ահագնաձայն  
 Ու սայրասուր նետը թըռավ դեպի կանգնած ըսպայակույն:

- Բայց, Մենեղավ, չըմոռացան քեզ աստվածներն երջանկափառ,  
 Եվ մանավանդ, ավարառու դուստրը հըգոր Արամագրի,  
 Որ կանգնելով դեմըդ ընդփույթ՝ շեղեց սըլաքը դառնաթույն  
 Եվ քո մարմնից հեռու վանեց, ինչպէս մայրը սիրագորով,  
 Որ քըշում է ճանճն երեսից անուշ քընով քընած մանկան:  
 Այդպէս և նա՛ նետը ուղղեց դեպի այնտեղ, ուր կամարի
- 130 Ծարմանդներն եճ ոսկեճաճանչ և ուր զըրահն է կըրկնակի:  
 Նետը դիպավ նըրս գոտուն և կամարից անցավ թափով,  
 Ծակեց անցավ շանթի նըման և զըրահը զարմանարվեստ  
 Ու տախտակը մարմնապաշտպան— պատ ու պատվար՝ նետերի դեմ—  
 Եվ դյուցազնի կողքը խըրված՝ մորթը քերծեց թեթևակի,  
 Ռոի վերքից անփիջապէս բըխեց արշուն բոտորագույն:

- Ինչպէս մեռնիդ կամ կարիացի մի կին փըղոսկըր ըսպիտակ  
 Ներկում է վառ կարմիր գույնով, որ ձիերին շրուշակ լինի,  
 Եվ պահվում է սենյակի մեջ ավարառու ասպետներից,  
 Թագավորի համար նըվեր և ի մեծ շուք նըրս փառաց՝
- 140 Թե՛ իբրև զարդ ձիու համար և թե՛ պարծանք այն հեճնողին,—  
 Մենեղավո՛ւս, այդպէս նաև ազդրերը քո գեղապարտւր  
 Եվ սըրունքներդ մինչև չըքնաղ կրունկդ կարմիր ներկըվեցին:

Ազամեմնոն արանց արքան սուկաց արյունն այդ տեսնելով,  
 Սուկաց նաև նետահարված Մեներայիսն արիսական,  
 Բայց տեսնելով, որ նետի ծայրն ու կարթը դուրս էին ընկած՝  
 Սիրտն ու հոգին մըտան նորից իր կրծքից ներս, ու շունչ քաշեց:  
 Այն ժամանակ Ատրիդ արքան Մեներայի ձեռքից բրոնած,  
 Սիրտը սաստիկ ցավով լեցուն՝ աղաղակեց դառնակրակիծ.

«Մի՛թե, եղբայր իմ հարազատ, կընքեցի այս դաշինքը ես,

- 150 Որպեսզի քեզ մե՞ն ու մե՞նակ կըրմի մըղեմ տըրոյանց դեմ,  
 Որ նենգաբար նետահարեն, ոտնահարած ուխտ ու երդում:  
 Սակայն իզուր պիտի չանցնեն երդումներն ու դաշինքը մեր,  
 Ոչ էլ արյունը գառների— նըվերը մեր անապական  
 Ու ձեռքերի հավատարիմ սեղմումները երկու կողմից.  
 Զի թեպետև ոլիմպականն առայժմ նըրանց ոչինչ չարավ,  
 Բայց կըպատժի ուշ կամ կանուխ, ու չարաչա՛ր տուժեն պիտի  
 Նըրանք իրենց գըլուխներով՝ կանանց, որոնց հետ միասին:  
 Հաստա՛տ գիտեմ, և նախապես վըկայում է սիրտըս արդեն,  
 Կըգա օրը, կըկործանվի նըվիրական քաղաքն Իլիոն,
- 160 Եվ սատակեն պիտի Պրիամն ու ժողովուրդն իր քաջագեն,  
 Երբ Զըվանյանը բարձրագամ՝ Արամազըն արփիաբընակ  
 Դըրծանքի դեմ այս զայրացած՝ ինքը անձամբ ցընցե պիտի  
 Մատախապատ սասպարն իր մեծ ջողորի դեմ առնավասար,  
 Գիտեմ, դըրուժն այս երբևէ նա անպատիժ չի թողնելու:  
 Բայց դու սըրտիս դատըն կըսկիծ պիտի դառնաս, Մեներայվե՛,  
 Եթե մեռնես, ա՛հ, վաղածամ և կընքես քո մահկանացուն,  
 Եվ ես մե՞նակ, մեծ կորուստով դեպի Արգոս վերադառնամ,  
 Զի աքայանք պիտի ուզեն վերադառնալ անմիջապես  
 Երկիրն իրենց հայրենական, և մենք թողնենք արգիուրի
- 170 Հեղինեին՝ ի փառքս մեծ Պրիամոսին և տըրոյանց,  
 Եվ ոսկորներդ, ավաղ, պիտի փըտեն այստեղ, Տըրոյայում,  
 Որտեղ ընկար դու կարեվեր, և մընաց մեր գործն անկատար.  
 Եվ ապա ոմն ամբարտավան ու սինլըքոր տըրոյացի  
 Կոխկըրտելով գերեզմանդդ՝ գոչե պիտի գոռոզաբար.  
 «Օ՛խ, թե այսպե՛ս առներ արքա Ազամեմնոնն ոյսն ամենքից,  
 Ինչպես որ այժմ այստեղ քերեց աքայեցոց բանակն իզուր  
 Եվ ետ գընաց կորագըլուխ, ամոթալարտ ու ձեռնուճայն,  
 Կորսվ դատարկ իր նավերով դեպի երկիրն իր հայրենի,  
 Թողած այստեղ, օտար հողում Մեներային անեղագոռ»:—
- 180 Այսպես պիտի ասի գոռոզ յուրաքանչյուր տըրոյացի,  
 Թող որ բացվե՛ր երկիրն այնժամ ու կուլ տար ինձ իր անդընդում»:

Սրբոտապընդեց Գրրան խարոյաշ Մենելավոսն այս խոսքերով.  
«Մի՛ վախենար և աքայանց գորքին նույնպես մի՛ վախենցի,  
Զի նետը սուր՝ վրտանգավոր ու մահատի՞ տնդ չըդիպավ.  
Պաշտպանեցին ինձ նրկարեն կամար-գոտին և ի ներքուստ  
Զըրահն ամուր, որ շինեցին պղղընձագործ վարպետ մարդիկ»:

Վըրա բերեց ուրախացած Ագամեմնոնն այդ լուսելիս.  
«Ո՛ր էր, եթե այդպես լիներ, սիրելիդ իմ Մենելավոս,  
Արդ, ուրեմըն թող որ քըննի բըծիշկը քո վերքը և թող  
190 Դընի վըրան ըսպեղանի, որ սև ցավերդ հանգըստանան»:

Այս ասելով՝ կանչեց ձայնեղ Տայթիբիոս մունետիկին.  
«Գընա՛ իսկույն,— ասաց Գրրան,— այստեղ կանչիդ Մաքավոնին՝  
Ասկլեպիոս մեծահըմուտ բժշկապետի գիտակ որդուն,  
Թող գա տեսնի աքայանց պետ արիսակյան Մենելավին,  
Որին զարկեց կորովաձիգ աղեղնավոր տըրոյացի  
Կամ լիկեցի ոմն իր նետով՝ իրեն ի փառս և մեզ ի սուգ»:

Այսպես ասաց Ագամեմնոնն ու Տայթիբիոսը հընազանդ  
Վազեց գընաց դեպի գունդը պղղընձագետ աքայեցոց,  
Որոնելով դյուցազըն վեհ Մաքավոնին, որին գրտավ  
200 Տրիկեից իր հետ քերած վահանավոր բազմության մեջ:  
Մաքավոնին մոտենալով՝ այս սըրաթև խոսքերն ասաց.  
«Օ՛ն, Ասկլեպյան, արի գընանք, Ատրիդ արքան կանչում է քեզ,  
Որ գաս տեսնես աքայանց պետ արիսակյան Մենելավին,  
Որին զարկեց կորովաձիգ աղեղնավոր տըրոյացի  
Կամ լիկեցի ոմն իր նետով՝ իրեն ի փառս և մեզ ի սուգ»:

Այսպես ասաց ու կըրծքի տակ սիրտը Գրրա ցավով ցընցեց,  
Ու դուրս գալով՝ անցան արագ աքայեցոց մեծ բանակով.  
Եվ երբ հասան այնտեղ, ուր քաջ Մենելավոսն էր վիրավոր,  
Ծըրչապատված իշխանների հոծ բազմությամբ, շուտ մոտտեցավ  
210 Եվ կամարի միջից Գրրա դուրս քաշեց նետն անմիջապես,  
Որի բոլոր կարթերը կեռ ետ քաշեչիս կտրտվեցին:  
Քանդեց կարգով՝ գոտին, զըրահն ու կամարը մարտարարվետ,  
Ու տեսնելով վերքը քաշի, ուր դառնաթույն սըլաքն ընկավ,  
Քամեց վերքի արյունը նախ, ըսպեղանի դըրեց ապա,  
Որ Քիրոնը մի ժամանակ սովորեցրեց հորն իր՝ սիրով:  
Եվ մինչ Գրրանք Մենելավին դարմանելով էին ըզբաղ՝  
Վահանավոր տըրոյացիք հարձակվեցին Գրրանց վըրա.  
Եվ աքայանք գենքերն հագան՝ պատրաստվելով պատերազմի:

- Այնտեղ թըմրած չէիր տեսնի Ագամեմնոն դյուցազունին,  
**20** Ոչ էլ վախկոտ ու սրբոտաբեկ և դասալիք պատերազմից,  
 Այլ ամեն ժամ ժիր ու պատրաստ՝ ուզմի համար փառապարգև:  
 Բաց թողնելով պրըղնձադրվագ կառքն ու ձիերը վրընչուն,  
 Որոնց մի կողմ առած պահում էր ըսպասյակն հավատարիմ՝  
 Եվրիմեդոնն— արի որդին Պիրեոսյան Պըտոլեմի,  
 Որին հաճախ պատվիրում էր չըհեռանալ իրեն մտտից,  
 Երբ բազմամբոխ իր գընդերին հրամայելուց հոգնում էր նա,—  
 Վազվըզում էր ոտքով հիմա և մի գընդից մյուսն էր անցնում  
 Եվ ձիավարժ աքայանցից ում որ տեսներ քաջակորով՝  
 Մոտ գընալով անմիջապես քաջալերում էր կըտրիճին:
- 30** «Արգիսացի՛ք, մի թուլանաք ձեր կորովի քաջությունից  
 Զի Արամազդ հայրը երբեք դորոժներին չէ գորավիզ,  
 Նըրանք, որ նախ և առաջինն եղան դըրոժ իրենց երդման,  
 Նըրանց փափուկ մարմինները անգողերս, անշուշտ, ուտեն պիտի,  
 Եվ մենք պիտի նըրանց կանանց ու դեռատի մանուկներից  
 Գերի տանենք մեր նավերով ու քաղաքը նըրանց բանդեմք»:

Իսկ վատասիրտ ու վեհերոտ՝ պատերազմից փախչողներին  
 Կըշտամբում էր նա գայրագին նախատալից այս խոսքերով.  
 «Ողորմելի՛ արգիսացիք, չե՛ք ամաչում, ինչո՞ւ այդպես  
 Կանգնել եք դուք ապուշ կըտրած, անշարժ՝ նըման եղնորթների,  
**40** Որոնք երբ որ հոգնում են մի լայնածավալ դաշտ անցնելուց  
 Կանգ են առնում անուժ, անգոր, չուզեմալով առաջ գընալ:  
 Այդպես եք դուք, որ ապշահար կանգ եք առել ու չեք կըռվում:  
 Ինչ է, միթե ըպասում եք, որ տըրոյանք գան ու հասնեն  
 Միևչև ճերմակ ա՛փը ծովի, ուր կանգնել են նավերը մեր,  
 Որպեսզի դուք այն ժամանակ տեսնեք արդյոք թե ձեզ վըրա  
 Զրվանյանը ամպրոպադեզ տարածո՞ւմ է իր հովանին»:

Այսպես ահա իշխանաբար անցնելով նա գընդից ի գունդ  
 Ու վաշտից վաշտ՝ եկավ հասավ կըրեռացոց ջոկատներին,  
 Որոնք գինված կանգնած էին շուրջը դյուցազն Իդոմենի,  
**250** Իդոմենի, որ նախամարտ գընդումն էր հանց հուժկու վարագ,  
 Եվ Մերիոնն արիասիրտ հետին գունդն էր ոգևորում:  
 Ուրախացավ նըրանց ի տես Ագամեմնոն արանց արքան  
 Եվ այս շոյող խոսքերն ասաց Իդոմենես թագավորին.

«Դանայանց մեջ ամենից շատ քեզ եմ հարգում, Իդոմենես,  
 Թե՛ մարտի մեջ, թե՛ կոչումընում, երբ աքայանց ավազանին  
 Խառնարանում խառնում է սև ընտիր գինին մեծահարկի,  
 Որտեղ, միևչդեռ այլ վարսագեղ աքայեցիք առհասարակ  
 Բաժինն իրենց կըմպեն չափով՝ քո բաժակը լեցուն է միշտ,

Ինչպես և իմ, ամեն անգամ, երբ խըմելու փափագ ըզգանք:  
260 Բայց նայիր որ և ա՛յս անգամ դու խիզախես գուպարի մեջ,  
Ինչպես առաջ ես պարծեցել ու մարտընչել հերոսաբար»:

Նըրան այսպես պատասխանեց Իդոմենես կըրետացին.  
«Ազամեննո՛ւն, ես միշտ էլ քո զենընկերն եմ հավատարիմ.  
Խոստումըս ես կըկատարեմ, ինչպես որ քեզ խոսք եմ տըվել.  
Իսկ դու գընա մյո՛ւս վարսագեղ աքայեցոց հորդորելու,  
Որ մարտը մեր շուտ ըսկըսենք տըրոյանց դեմ երդմնագանց,  
Որոնց միայն այսուհետև մընում է մահ և կոտորած,  
Քանզի իրե՛նք նախ և առաջ դըրուժ եղան իրենց ուխտին»:

Այսպես ասաց, և Ատրիդեսն առաջ անցավ զըվարթասաիրոս,  
270 Տեսավ երկու Այաքսներին կազմ ու պատրաստ պատերազմի.  
Տանում էին ճըրանք ամպրոպ մի հետևակ մարտիկների:  
Ամպի նըման, որ բըլուրի ծայրից հովիվն է նըշմարում,  
Երբ Ջեփյուրի շընչով քըշված դեպի ծովն է սուրում արագ,  
Կուարի պես սև՝ հեռուներից բերելով մեծ մըրրիկ իր հետ,  
Եվ հովիվը ահաբեկված քըշում է հոտն իր քարանձավ,—  
Այդպես՝ երկու Այաքսների հետ դեպի մարտ էին գընում  
Դյուցասարնունը կըտրիճների գումարտակներ ըսպառազեն:  
Այդ տեսնելով՝ ուրախացավ Ազամեննոն արանց արքան  
Եվ դեպ նըրանք բարձր ձայնով այս թևավոր խոսքերն ասաց.

280 «Ո՛վ Այաքսեր, զորավարնե՛ր դուք ամրաբարձ աքայեցոց,  
Հրաման չունեն տալու ես ձեզ, ոչ էլ հարկ կա հորդոր կարդալ,  
Զի դուք արդեն արիաբար հուր եք շընչում ձեր քաջերին:  
Ո՛ր էր եթե, ո՛վ Արամազդ, և Աթենաս, և Ապոլլոն,  
Որ բոլորն էլ իրենց կըրծքում այդպիսի սիրտ ունենալին.  
Այն ժամանակ Պրիամոսի քաղաքն իսկույն մեր ձեռքերով  
Կըքանդըվեր բոլորովին, կըկործանվեր հիմնահատակ»:

Այսպես ասաց և թողնելով նըրանց՝ գընաց Նեստորի մոտ,  
Եվ քաջաձայն Պելլանց խոսնակ ալևորին գըտավ այնտեղ,  
Որ կարգի էր դընում իր գորքն ու հորդորում պատերազմի՝  
290 Պելլագոնի, Քրոմիոսի, Ալաստորի և Հեմոնի,  
Եվ հուսկ ապա Բիաս հըզոր ազգապետի հետ միասին:  
Նեստորը նախ հեծելագորքն ու կառքերը կարգի դըրեց,  
Հետևակներն ապա անթիվ, որ գուպարին պատվար լինեն,  
Եվ նըրանց մեջ նա թույամորթ տըկարներից լըցրեց բոլոր,  
Որ չուզողներն էլ ըստիպված պատերազմեն ակամայից:  
Եվ ուղղելով իր խոսքը նախ այրուձիին՝ նա պատվիրեց,  
Որ լավ զըսպեն ձիերն իրենց և ամբոխին չըխառնըվեն.

«Հեծյալներից թող որ ոչ ոք իր քաջության վրրա վրստան  
2ըխիզախի մեն ու մենակ տըրոյացոց դեմ ելնելու,  
300 Եվ ոչ էլ ետ ընկրկի թող, որ չըլլքի կըովողներին:  
Իսկ ով որ իր կառքում նըստած հանդիսի մի ուրիշ կառքի,  
Դեպ թըշնամին թող երկարի երկայնածիֆ իր նիզակով,  
Հարմարագույն և ապահով միջոցն է սա կըովելու մեջ,  
Մեր նախնիներն այսպես էին քանդում քաղաք ու պարիսպներ,  
Ունենալով իրենց կըրծքում ոգի ըզգոն ու սիրտ խոհեմ»:

Մարտերի մեջ քաջահըմուտ ծերն այսպես էր խըրատ տալիս:  
Այդ տեսնելով՝ Ատրիդն ուրախ այս սըրաթն խոսքերն ասաց.  
«Երանի՜ թե, ով ծերունի, ինչպես որ սիրող է կըրծքիդ մեջ,  
Ծունկերդ այդպես քեզ հետ գային և լիներ քո ուժն անդերև.  
310 Բայց ծերությունն անագորույն մաշում է քեզ. ո՛ր էր, եթե  
Ծերությունըդ ուրիշն առներ, և դառնալիք դու պարմանի»:

Նեստոր ասպետը Գերեմյան նորան այսպես պատասխանեց.  
«Ես էլ, Ատրիդ, կուզենայի լինել այնպես, ինչպես էի,  
Երբ խըլեցի կյանքը՝ պարթն Երկթալյուն դյուցազունի,  
Բայց ասովածներն ամեն լավ բան մեկտեղ՝ մարդու չեն պարզևում:  
Երիտասարդ էի այնժամ, իսկ այժմ ծեր և դողդոջուն,  
Բայց այսպես էլ պիտի մընամ հեծելագոր բանակիս հետ  
Եվ տամ հորդոր ու խըրախույս, մեզ՝ ծերերիս պատիվ է դա.  
Իսկ քաջերն այս, որ ինձանից կըրտսերագույն են տարիքով,

320 Նետ արձակեն թող քաջաբար վըստամի իրենց բազկի վըրա»:  
Այպես ասաց, և Ատրիդես արքան առաջ անցավ ուրախ,  
Գըտավ որդուն Պետեոսի՝ Մենեսթեսին ձիանարզիկ,  
Որ կանգնել էր իր շուրջն առած պատերազմող աթենացոց:  
Այնտեղ, նըրա մոտ էր նույնպես Ողիսեսը բազմահանճար,  
Փոքր-ինչ անդին կեփալեկյաց զընդերն էին կանգնած անգործ,  
Որոնք դեռևս չէին մըտել ռազմի անեղ նոռզեոում,  
Քանզի զընդերը ձիավարժ տըրոյացոց և աքալանց  
Նոր-նոր էին խըլըրտում դեռ առաջ գալով այստեղ-այնտեղ.  
Եվ ըսպասում էին նըրանք, որ աքալան ուրիշ մի դունդ

330 Տըրոյացոց վըրա վազի, ու նոր իրենք մարտն ըսլըսեն:  
Այդ տեսնելով հանդիմանեց Ազամեմոնն արանգ արքան,  
Ու գաչուցած, խըրոխտածայն այս սըրաթն խոսքերն ասաց.  
«Ով դու որդիդ Պետեոսյան, դյուցազապընունդ թագավորի,  
Եվ դու, խարդախ ու խորամանկ, չարահըմար, նենգ Ողիսես,  
Ինչո՞ւ եք դուք կանգնել հեռու և ըսպասում ուրիշներին,  
Դուք, որ բոլոր քաջերի մեջ նախահարձակ պիտ լինեիք

Եվ դիմագրավ խիզախեիք, վառելով մարտ հրրաբորբոք:  
Դուք իմ կողմից առաջինն եք կանչվում միշտ խրրախճանքի,  
Երբ պատրաստեն արայեցիք կոշունք իրենց ավագանուն:  
340 Սիրում եք դուք խընչույքներում համով-հոտով խորովածներ,  
Անուշ գինին, որ խըմում եք, ինչքան որ ձեր սիրտը ցանկա,  
Միճդե՛տ հիմա դուք հաճույքով կրդիտեիք, եթե տաս գունդ  
Ձեզ կանխելով՝ մարտ մղդեին իրենց անգույթ երկաթներով»:

Խեթ ասելով անրա վըրա՝ Ողիսն այսպես պատասխանեց.  
«Ատամներիդ միջից, Ատրի՛դ, այդ ինչպիսի՞ խոսք էր թըռավ.  
Ինչպե՛ս ես դու ծույլ ասում մեզ ու վեհերոտ պատերազմում:  
Երբ որ վառենք տըրոյանց դեմ քարկ ու բորբոք ճակատամարտ,  
Այն ժամանակ պիտի տեսնես, եթե տեսնել դու կամենաս,  
Տեղեմաքի սիրուն հորը ձիամարզիկ տըրոյացոց  
350 Առաջամարտ գընդերի մեջ՝ քաջերի հետ մաքառելիս:  
Իսկ դու, արքա, այդ նախատիմքն իզուր ես մեզ տալիս հիմա»:  
Ողիսնայի այդ գայրույթից զըղջաց արքա Ազամեննոնն  
Ու ժըպտերես, լեզուն փոխած՝ անրան այսպես պատասխանեց.  
«Ողի՛դ մեծանձրն Լայերտի, դու, Ողիսնս բազմահընար,  
Ես քեզ սըրտանց չեմ կըշտամբում, ու հըրաման չունեմ տալու,  
Քանզի գիտեմ, որ քո կըրծքում լավ խորհորդներ ունես պահած,  
Ու խորհում ես խոհեմաբար նույնը, ինչ որ ես եմ խորհում:  
Գընա հիմա, և եթե քեզ ես վըշտացրի իմ խոսքերով,  
Մենք կըբալե՛նք նետո, և դիք թող որ ջընջեն հուշն այդ իսպար»:

360 Այսպես ասաց և թողնելով անրանց զընաց ուրիշներին,  
Եվ Տիդեսի որդուն գըտավ՝ Դիոմեդեսին մեծահոգի,  
Որ կանգնել էր ջըբեղորեն լըծված կառքում իր փստահեղ  
Սեթենելի հետ միասին՝ Կապանեսի ջըբեղ որդու:  
Ազամեննոն արանց արքան մոտենալով Դիոմեդին՝  
Հանդիմանեց հույժ բարկացած անրան խալթող այս խոսքերով.  
«Վա՛յ ինձ, որդիդ արիասիրտ ու ձիավարժ քաջ Տիդեսի,  
Ինչո՛ւ ես դու այդպես վախով նայում քո դեմ ռազմադաշտին:  
Այդպիսի վախ ու զարհուրանք չէր ճանաչում հայրդդ երբեք,  
Այլ քաջերի գըլուխն անցած մաքառում էր թըշնամու դեմ:  
370 Ես չեմ եղել, դըժբախտաբար, անրկա անրա կըրիվներին,  
Բայց տեսնողներն ասում են, թե քաջագույնն էր նա բոլորից:  
Պատմում են, որ առանց կրովի մըտավ Միկենք նա իբրև հյուր,  
Հետը դչուցազն Պոլիմիկեն, որ ժողովի գորքեր բազում  
Եվ մարտընչի անվիրական պարիսպների դեմ Թեբեի.  
Խընդորում էին, որ տան իրենց երևելի դաշնակիցներ:

Եվ համաձայն եղան նրբանք տալ աշդպիսիք, Ջնսը, սակայն,  
Փոխեց նրբանց միտքը մեկեն չարագուշակ նըշաններով:  
Թողին նրբանք և գընացին, ու շատ երկար ճամփա անցան,  
Մինչ Աստղոս եկան հասան կընյունաքեր և խոտավետ:

- 380 Այնտեղ քո հորն աքայեցիք պատգամավոր ուղարկեցին,  
Եվ Տիդեսը գընաց գըտավ կաղմեացոց որդիներին  
Անեղագոր Էտեռկի տանը նըստած խըրախնանքի:  
Թեև մեճակ և անճանոթ՝ կաղմեացոց մեջ բազմաթիվ  
Չըվախեցավ քո հայրը քաց, նույնիսկ կըովի հըրավիրեց  
Եվ բորդին մեճամարտում հաղթում էր նա հաջողությամբ:  
Այսպես՝ նրբան Աթեճասը պաշտպան էր և հովանավոր.  
Բայց ձիավարծ կաղմեացիք հույծ ռարկացած նըրա վըրա՝  
Ետ դառնալիս դարանակալ պարմանիներ դըրին հիսուն,  
Որոնք երկու պետ ունեին— Գոլիտոնդեսն Ավտոփեճյան  
390 Եվ Էմոնյան Մեռնը քաց՝ նըման անմահ աստվածների,—  
Սակայն նրբանց էլ սև օրհնա ուղարկեց քաց Տիդեսն անահ,  
Ըսպանելով բորդ նըրանց, թողեց նա մեկ հոգի միայն,  
Լոկ Մեռնին, որ տուն դառնա աստվածների նըշաններով:  
Էտոլացի Տիդեսն այսպես մարդ էր անվախ, իսկ իր որդին  
Կըովում վախկոտ ու վատասիրտ և խոսքի մեջ միայն ճարտար»:  
Ասաց, սակայն ձայն չըհանեց Գիոմեդեսն արհասիրտ,  
Ակնածելով պատկառելի Ագամեճոն թագավորից:  
Իսկ փառահեղ Սթեճելուն այսպես՝ նրբան պատասխանեց.  
«Սուտ մի՛ խոսիր, ո՛վ Ատրիդես, դու որ գիտես արդար խոսել,  
400 Մեճք կըլանճանք մեր հայրերից շատ ավելի լավը լինել:  
Մեճք էլ առանք, և ավելի՛ սակավաթիվ գինվորներով,  
Յոթնադըրոնյան Թեքեն և իր պարիսպները արիսական,  
Աստվածների նըշաններով և օգնությամբ Արամագոյի.  
Մինչդեռ նըրանք ողջ գոհվեցին իրենց անմիտ մոլորությամբ:  
Արդ, մի՛ դընի նույն պատվի մեջ որդիներին և հայրերին»:

Գիոմեդեսն իր ընկերոջ նաչելով սուր, այսպես ասաց.  
«Է՛, սիրելիս, տեղըդ նըստիր և ականջ դիր իմ խոսքերին:  
Ես չեմ նեղվում Ագամեճոն ազգապետի կըշտամբանքից,  
Որ կըովի է խըրախոտում ըսպատագեն աքայեցոց,

- 410 Ջի փառքն իրենն է լինելու, աքայեցիք եթե հաղթեն,  
Հալածելով տըրոյացոց և գըրավեն Իլիոնը սուրբ.  
Իսկ սուկալի ցավ կըլինի, թե հաղթըվեն աքայեցիք:  
Բայց դու արի, որ ցույց տանք մեճք մեր քաջությունն արիսական»:



Ասաց և իր զեն ու զարդով կառքից գետին ցատկեց արագ,  
Եվ նրա լայն կրծքի վրա շաշեց պղծիճճ ահեղորսն,  
Վախ ազդելով մինչև անգամ ամենաքաշ, անահ մարդուն:

- Ինչպես հողմից քրշված հուժկու ալիքները լեռնանըման,  
Որ ծովափին են զարնըվում ահեղագոշ մըրընչյունով,  
Դիզվում են նախ ծովի վրա, ապա խուժում մեծամըրունչ
- 420 Դեպի ցամաք ու բարձրանում ծովափընչա ժայտերն ի վեր  
Ու գահավեժ ժայտերն ի վար ծայթթում են հոդ աղի փըրփուր,—  
Դանայեցոց գընդերն այդպես կարգով շարված իրար ետն  
Խըրոխտապանձ ու խուռներամ զընում էին դեպի գուպար:  
Հըրամայում էր բարձրաձայն յուրաքանչյուր պետն իր զընդին,  
Եվ մյուսներն արագաքայլ զընում էին լուռ, անշըշունջ,  
Այնպես որ մարդ չէր կարծի թե բազմությունն այդ անթըվելի,  
Որ հետևում էր պետերին՝ ձայն ունենար իր կրծքի մեջ:  
Վառվում էին պղըրճափայլ նրանց զենքերն ու ասպազեն,  
Եվ այդպես ճոխ զինավառված զընում էին պատերազմի:
- 430 Իսկ տըրոյանք, ինչպես անթիվ ոչխարների ըստվար մի հոտ,  
Որ, երբ հարուստ մարդու բակում կըթում են կաթը ձյունաթույր,  
Բառաչում են անվերջ իրենց գառնուկների ձայնին ի լուր,  
Լըցրել էին բանակն այդպես ահագնաձայն աղաղակով,  
Չէր տարբերվում խոսք ու բարբառ, այլ կար աշմուկ մի խառնագոշ  
Ամեն կողմից այդտեղ եկած բազմալեզու ազգ ու ցեղի:  
Արեսն էր բուռն խըրախոսում, դրդում կըրվի տըրոյացոց,  
Իսկ աքայանց՝ ինքն Աթենաս Պալլաս ծավի աստվածուհին:  
Ինքը Երկյուղն էր նրանց հետ և Արհապիրքն ու Քենն անհագ,  
Քենն՝ Արեսի քույրն հարագատ և ընկերը արյունառուշտ,
- 440 Որ փոքր է նախ ու գետնահուպ, հետո արդեն բարձրահասակ,  
Գլուխն երկընթին՝ մեծ քայլերով շըրջում է լայն երկրի վրա:  
Նա էր, ահա, որ զընդից գունդ վառվըզելով այդ ժամանակ  
Բոցավառեց բոլորի մեջ կըրվի մոլուցք աղետաբեր:

- Եվ երբ նըրանք հասան այնտեղ, ուր որ պիտի ճակատենն,  
Իրար առան նիզակ ու տեգ, վահան-ասպար, զըրահ ու զեն,  
Եվ քաշազեն կըտրիճների թափն ու կորովը կատաղի  
Իրար էին բախվում ուժգին ու խոցոտում, խեղում իրար:  
Լըսվում էին ամեն կողմից շըրընդալից շաշ ու շառաշ,  
Կըրվողների գոչունը գոռ, մեռնողների ճիչն ու հառաշ,
- 450 Խըրոխտաձայն ըսպառնալիք, և արյունն էր հոսում առատ:  
Ինչպես գարնան ձյունահալքից, հորդած ջըրերն ահագնամեծ  
Շառաշաձայն հեղեղներով զըրորվում են լեռներն ի վար

Եվ ուղիներով առատահոս լըցվում ձորերն անդրնդախոր,  
Որոնց գոռումն ահագնագոչ լըսում է պարզ հովիվն հեռվից,—  
Այդպես նըրանց գոչյունն ահեղ լըցրել է դաշտն անձայրածիր:

Առաջինը Անտիլոքուն ըսպանեց այր մի քաջազեն՝  
Եքնաբոլոս Թալիսյանին՝ տըրոյանց զընդից առաջամարտ,  
Որին զարկեց ձիավարայա սաղավարտի կուռ խորանից,  
Լայն ճակատին, ու մըխըրճվեց պըղինձը սուր՝ ոսկորի մեջ:  
460 Մուօը պատեց աչքերն իսկույն ու տապալվեց գետնատարած,  
Ինչպես հրակա բուրգն է փըլչում կըովի պահին ահեղասատ:  
Ելեփենորն՝ արի իշխան ու թագավորն արանտների,  
Նետերի տակ, ոտքից բըռնած դուրս էր քաշում ըսպանվածին,  
Որ զենքերը կապտի նըրա, բայց չըհասավ նըպատակին,  
Մեծահոգի Ագեճորը դիակապուտն այդ տեսնելով,  
Նըրա կողքից, որ ծըռվելիս առպարից մերկ էր մընացել,  
Խոցեց նըրան մահահարված իր սըլաքով. պըղընձասայր,  
Որը տապաստ գետին ընկավ ու տեղնուտեղ շունչը փըչեց:  
Սըրա վըրա արայեցիք և տըրոյանք բորբոքվեցին  
470 Ու զագագած գայլերի պես հարձակվեցին իրար վըրա:

Զարկեց Այաքս Տելամոյանն արի որդուն Անթեմյոնի,  
Ծաղկափըթիթ ու դեռահաս Սիմոյիսյան այն պատանուն,  
Որին ծընեց մայրն Իդայից Սիմոյիսի ափն իջնելով,  
Երբ զընում էր ծընողանց հետ տեսնելու իր ոչխարներին:  
Այս պատճառով ահա նըրան Սիմոյիսյան էին կոչում,  
Բայց սիրասուն ծընողներին ոչխարներով չըհատուցեց,  
Զի Այաքսից տիգահարված գետին փըռվեց արնաշաղախ:  
Հենց առաջին հարվածն իջավ ժիր պատանու աջ ըստիքին,  
Եվ անցնելով պըղինձը թափ՝ տեզը ելավ թիկունքից դուրս  
480 Ու տապալեց պերճ պատանուն փոշեթաթավ քարդու նըման,  
Որին, անձ Վարթամորեն մարգագետնում, ջըրի ափին,  
Երկնաըրաց հասակն ի վեր արձակելով ճյուղեր հուլթի՝  
Կըտրեց փայլուն երկայթը սուր՝ ճարտարարվեստ կառագործի,  
Եվ նըրանից անիվների ճտղեր շինեց կառքի համար,  
Իսկ ինքն այնտեղ ընկած քիչ-քիչ գորանում է ջըրի ափին,  
Այդպես Այաքսն աստվածային՝ պըղընձյա տեզով իր սայրասուր  
Գետին փըռեց Անթեմյոնի Սիմոյիսյան պերճ պատանուն:  
Այն ժամանակ Պրիամոյան Անտիփոսը երփնազըրահ  
Գումարտակի միջից ցասկոտ նետեց սուր տեզն իր Այաքսին,  
490 Բայց վըրիպեց իր նըշանից ու Լևկոսին դիպավ թափով,  
Ողիսևսի ընկերակցին, երբ դիակը դուրս էր հանում,

Որ փուլ եկավ անմիջապես, և դիակը ձեռքից ընկավ:  
Ռդիսևը իր ընկերոջ մահվան վրա հույժ բարկացած՝  
Սուաչ նետովեց խիզախաբար փայլակնացայտ իր նիզակով,  
Գրնաց մոտիկ և նայելով շուրջը՝ փայլուն տեզն արձակեց:  
Տըրոչացիք այդ տեսնելով՝ ընկերկեցին ասրափահար:  
Իզուր չանցավ սուրսայր աշտեն վրիժավառ Ռդիսևի,  
Այլ հարվածեց Դեռնկոնին՝ Պրիամոսի այն հարձորդուն,  
Որ եկել էր սըրաթըրիչ ճայեկներով՝ Աքիդոսից:

500 Արդ, Ռդիսևը զայրացած իր զինակցի մահվան վրա,  
Նըրա քունքին նըշան առավ պըղընձասայր իր սըլաքով,  
Որը թափով ծակեց անցավ ու դուրս եկավ մյուս քունքից.  
Եվ խավարչտին մութը նըրա ծածկեց աչքերն անմիջապես,  
Գետին փըռվեց ողջ հասակով, ու շաչեցին գեներն իր շուրջ:  
Ընկերկեցին տըրոչացիք և մինչևիսկ Հեկտորն արի,  
Իսկ արգոսյանք մարտադաշտից դուրս հանեցին դիերն իրենց  
Ու նոր թափով թլուան սուաչ, բայց Ապոլլոնը բարկացած,  
Որ դիտում էր Պերգամայից, խըրախույս կարդաց տըրոչացոց.

«Զխախըրո՛խտ տըրոչացիք, տեղի մի՛ տաք արգիացոց,

510 Քանզի նըրանց մարմինները քարից և կամ երկաթից չեն,  
Որ դիմանան մորթապատառ պըղինձներին ձեր աչրասուր.  
Ոչ էլ Աքիլլն է կըռվի մեջ՝ որդին Թետիս վարսագեղի,  
Որ սըրտակեզ իր մաղձն է սև ծամում այնեղ՝ նավերի մոտ»:

Այսպես գոռաց աստվածն ահեղ, մինչ աքայանց մեծ բանակում  
Արամազդի կառափնածին դուստր Աթենաս աստվածուհին  
Սիրտ էր տալիս վընաստներին, վազվըզելով այս ու այնտեղ:

Հասավ մահվան օրհասը սև Ամարինկյան Դիորեսին.  
Բըռունցքաչափ, կոշտուփըռոշտ մի քար եկավ հանկարծակի  
Զարկեց նըրա աչ սըրունքին, և զարկողն էր թըրակացոց

520 Պետ Պրիոս Իմբրույանը, նա, որ եկել էր Ենոսից:  
Ոսկորները փըշըրվեցին, և նա ընկավ փոշեթավալ,  
Երկու ձեռքերն ընկերներին պարզած մահվան հոգելարքում:  
Բայց Պրիոսն իր նիզակը նըրա պորտի մեջ իլըրեց խոր  
Ու դուրս թափեց ողջ փորոտին, և նա փակեց աչքերն ընդմիշտ:

Եվ Հուոլյան Թոսան այնժամ նեսեց տեզն իր Պրիոսին,  
Հարվածելով նըրան կըրծքից, ըստինքներից փոքր-ինչ վերև.  
Տեզը խըրվեց թոքերի մեջ, և մոտ գալով Թոսուն արագ  
Քաշեց աշտեն նըրա կըրծքից և հանելով դաշույնը սուր՝  
Փորը խըրեց և փորոտին դուրս թափելով՝ հոգին ատավ:

530 Բայց Թոսաը չըկարեցավ զինագերծել ըստանվածին,

Քանզի նրբան պաշարեցին ցցունագես թրակացիք,  
Որին, թեպետև հաղթանդամ, կորովալի ու ջըլասպինդ՝  
Ետ մըղեցին, և նա հագիվ գըլուխն իր ողջ առավ-փախալ:  
Այսպես՝ երկուն էլ դիտապաստ գըլորվեցին. իրարու մոտ—  
Թըրակացոց և էպիանց գորավարներն ըսպատագեն:  
Եվ ուրիշ շատ քաջարիներ ընկնում էին երկու կողմից:  
Եվ էթե ոմն անխոցելի գար անվըտանգ հասներ այնտեղ,  
Եվ Աթենաս Պալլասն ինքը նրբա ձեռքից ամուր բրոնած  
Պըտըտցըներ մարտադաշտում, պըղընձագեն քաջերի մեջ,  
540 Ետ վանելով ամեն վայրկյան սուր նետերի տարալին անվերջ՝  
Ապշե՛ր պիտի ու զարմանար, քանզի այդ օր երկու կողմից՝  
Աքաչեցոց և տըրոյանց բանակներից առհավասար  
Շատ մարտիկներ բերանքսիվայր գըլորվեցին իրար վըրա:

# Ե ր գ < ի ն գ ե ր ո ր դ

## ՔԱԶՈՒԹՅՈՒՆ ԴԻՈՄԵԴԵՍԻ

Բայց Աթենաս Պալլասն այնժամ լըցրեց Տիդյան Դիոմեդեսին  
Նոր կորովով և քաջությամբ, որ համորեն աքայանց մեջ  
Նշանավոր լինի այդ օր և ժառանգի փառք ու պարծանք:  
Լուսապայծառ հըրով անշեջ վառվում էին ու բոցկըլտում  
Նըրա ասպարն ու սաղափարտն աշնանային աստղի նըման,  
Որ փայլում է լուսացընցող՝ լըվացվելով Օվկիանոսում:  
Այսպես ահա նըրա գըլխից և ուտերից բոց էր ցայտում  
Երբ դիցունհին մըդեց նըրան փոթորկահույզ գուպարի մեջ:

Տըրոյանց մեջ Դարես անվամբ հարուստ մի մարդ կար անբասիր:

- 10 Հեփեստոսի քուրմը անբիծ, որը երկու որդի ուներ,  
Մեկը Փեգեսն, մյուսն Իդեոս՝ ուազմի հըմուտ և քաջասիրտ:  
Սըրանք իրենց ընկերներից առանձնացած, երկուսը մեկ  
Նըրա վըրա հարձակվեցին, որ հետիոտն էր ընթանում:  
Երկու կողմից գըրոհելով, երբ որ ընդհուպ հասան իրար,  
Նախ Փեգեսը նըրա վըրա արձակեց տեգն իր սըրասայր,  
Բայց գեղարդի սըլաքն անցավ Տիդյանի ձախ ուսի վրայով:  
Ապա Տիդյան Դիոմեդեսն արձակեց իր հուժկու աշտեն,  
Եվ սըլաքը նըրա ուժեղ ձեռքով նետված՝ գուր չըթըռավ,  
Այլ շեշտ կըրծքից հարվածելով՝ նըրան կառքից ցած գըլորեց:
- 11 Իդեոսը թըռավ կառքից ու փախա առավ խելակորույս  
Իր ըսպանված եղբորն անգամ պաշտպանելու սիրտ չանելով:  
Եվ փըրկություն չէր լինելու նաև նըրան սև օրհասից,  
Բայց Հեփեստոսն ամպով պատած փըրկեց նըրան փախընդելով,  
Որ չըմընա ծեր հայրը հեգ բոլորովին անմըխիթար:  
Իսկ Տիդեսի խիզախ որդին նըժույզներին տիրանալով՝  
Հանձնեց նըրանց՝ ընկերներին, որ նավերը տանեն արագ:

Տըրոյացիք երբ որ տեսան Դարեւի գույգ որդիներին՝  
Մին փախըստոյա, մյուսը տապաստ ընկած այնտեղ կառքերի մոտ,  
Խիստ հուզվեցին, բայց Աթենաս կապուտաչա սաստվածունին  
**30** Բուն Արեւի ձեռքից բրնձած՝ այս խոսքերը ասաց նրան.  
«Արե՛ս, Արես պարըսպաքանդ, արյունառուշտ ու մարդակուլ,  
Մի՛թե երբեք չենք թողնելու, որ տըրոյանք և աքալանք  
Կըովեն միայն իրենք իրենց, և Արամազդ հայրն անաչառ  
Շընորհի այնժամ փառք ու պարծանք երկու կողմից մեկն ու մեկին,  
Եվ մենք ազատ մընանք մեր հոր՝ Արամազդի բարկութունից»:

Այսպես ասաց ու դուրս հանեց մարտադաշտից բուն Արեւին  
Եվ տանելով՝ նրստեցըրեց Սկամանդրի ափը նրան:  
Դանալեցիք տըրոյացոց հալածեցին այդ ժամանակ  
Եվ նրանցից ամեն մեկը ըսպասալար մի սպանեց:

**40** Առաջինը Ագամեմոնն արանց արքան գարկեց այդտեղ  
Հալիզոնաց զորավարին և իր կառքից ցած գըլորեց.  
Սա փախչելու վըրա էր, երբ տեզը եկավ թիկնամեջքին,  
Երկու ուսի մեջտեղը ճիշտ ու լանջքից դուրս եկավ թափով,  
Ողիոսը ընկավ թընդամաք, ու շաչեցին զենքերն իր շուրջ:  
Իդոմենեար ըսպանեց մեռնացու Փեսոսս որդուն,  
Որ եկել էր բարեբեղուն և սիզափես Տաունիից.  
Զարկեց նրան կորովազեն Իդոմենը կառք նըստելիս,  
Խոցեց տեզով երկայնաձիգ ու գըլորեց կառքից գետին,  
Եվ ընկերներն Իդոմենի կողոպտեցին նրան իսկույն:

**50** Հետո Ատրիդ Մենելայոսն ըսպանեց սուր իր ճիզակով  
Սկամանդրին՝ Ստրոփիոսի որդուն— որսի հրմուտ վարպետ,  
Որին ինքը Արտեմիսն էր սովորեցրել քաջանըշան  
Զարնել յնուն անտաստուն բոլոր վայրի երեկներին:  
Սակայն չօգնեց նրան այնժամ Արտեմիսը նետազըվարն,  
Եվ ոչ էլ նետն իր հետաձիգ, որով նա միշտ պարծենում էր:  
Եվ Ատրիդես Մենելայոսն երկայնաձիգ իր ճիզակով  
Զարկեց նրան թիկնամեջքից՝ իր սոջնեից փախուստ տալիս.  
Բերնի վըրա նա վայր ընկավ, և շաչեցին զենքերն իր շուրջ:  
Իսկ Մերիոնոսը ըսպանեց Հարմոնիդես հյուննի որդուն՝

**60** Փերեկլոսին, որ ճարտար էր, հրմուտ ամեն սրվեստի մեջ  
Քանգի Պալլաս Աթենասի սիրելին էր շընորհաշուք:  
Նա՛ էր շինել Ալեքսանդրի նավերն ամուր և համաչափ—  
Նախապատճառ տըրոյացոց աղետների, նաև իրեն,  
Որ անգետ էր և անտեղյակ աստվածների պատգամներին:  
Կըրընկակոյս հալածելով Մերիոնը հասավ նրան,  
Զարկեց մեջքի աջակողմից, տեզը խըրվեց ոսկորից նրա.

- Ծունկի եկավ նա վայելով, ու մահն իր գիրկն առավ նրան:  
 Իսկ Մեզեսը Պատեոսին՝ Անտենորի որդուն զարկեց,  
 Որը թեպետև հարձորդի, բայց Թեանովը՝ հարազատ
- 70** Չավակներին իր հավասար սընեց ի սեր իր ամուսնու:  
 Փիկայանը աշտենավոր՝ մոտենալով նրան ընդհուպ՝  
 Սըլաքասուր միգակը իր ծոծրակի մեջ մըխեց նրա,  
 Լեզուն կըտրեց պըղինձը սուր ու դուրս եկավ ատամներից,  
 Եվ ցուրտ պըղինձն ակուսներով խայծելով նա ցած տապալվեց:  
 Իսկ Եվրիպիլ Եվեմոնյանն՝ աստվածաստիպ Հիփսեհորին՝  
 Դոլոպեսի որդուն զարկեց, որը քուրմն էր Ակամանդրի,  
 Եվ ժողովուրդն իբր աստրծու նրան պատիվ էր ընծայում:  
 Եվրիպիլուն արիասիրտ, շքեղ որդին Եվեմոնի  
 Զեռքին դաշույն, երբ փախչում էր՝ ետևն ընկած, ծանրը ձեռքով
- 80** Չարկեց ուսին Հիփսեհորի ու դաստակը կըտրեց սրբով.  
 Արնաշաղախ դաստակն իսկույն ընկավ գետին, և անողոք  
 Ծակատագիրն ու ծիրանի մահը աչքերը փակեցին:  
 Մըրցում էին սըրանք այսպես բոցաբորբոք գուպարի մեջ,  
 Սակայն ոչ ոք չէր իմանում, թե ո՞րտեղ էր Տիդյանը քաջ,  
 Աքայեցո՞ց հետ էր արդյոք, թե՞ տըրոյանց գընդերի մեջ:  
 Մոլեզնում էր մարտադաշտում նա գետի պես հեղեղազայր,  
 Որ հորդառատ իր հորձանքով կամուրջներ է քարոքանդում.  
 Որի առաջ չեն դիմանում ո՛չ թումբերը հաստատապինդ  
 Եվ ո՛չ հուռթի այգիների ցանկապատերը վիթխարի,
- 90** Երբ գալիս է Արամազդի անձրևներից մեծավարար  
 Եվ փըշացնում երիտասարդ մըշակների վաստակը ողջ:  
 Այդպես Տիդյան Դիոմեդեսն էր հալածում տըրոյացոց,  
 Որոնք թեպետև բազմամբոխ՝ փախչում էին իր առջևից:

Լիկայոնի կըտրիճ որդին, երբ որ տեսավ Դիոմեդին,  
 Որ դաշտի մեջ հալածում էր տըրոյանց գընդերն իր առջևից,  
 Լարեց իսկույն աղեղն իր կոր և աջ ուսին նըշան առավ.  
 Չարկեց ուղիղ լանջապանին, սըլաքն անցավ ուժգին թափով  
 Ու դուրս եկավ այն մյուս կողմից՝ շաղախելով զըրաճն արյամբ:  
 Այդ տեսնելով գոռաց ուրախ՝ Լիկայոնի շքեղ որդին.

- 100** «Օ՛ն, քաջասիրտ տըրոյացիք, հարձակվեցե՛ք արիաքար,  
 Քանզի դիպա ես իմ նետով աքայեցոց քաջագույնին  
 Եվ չեմ կարծում, թե նա իմ սուր նետին երկար կըդիմանա,  
 Եթե իրոք ինքն Ապոլլոնն ինձ Լիկիայից բերեց այստեղ»:

Այսպես ասաց, նետը սակայն չընկճեց Տիդյան Դիոմեդին,  
 Ետ քաշվելով նա կանգ առավ իր ձիերի ու կտրքի մոտ

Եվ ձայն տրվեց Սթենեդուին՝ Կապանսեի արի որդուն.

«Օ՛հ, սիրելիդ իմ Կապանյան, իջիր կառքիցդ անմիջապես  
Եվ ուսիցըս այս դառնաթույն նետը իսկույն քաշիր դուրս հան»:

Սթենեդուն անմիջապես երկձի կառքից ցատկեց գետին  
110 Ու սրրաթև սըլաքը դուրս կորզեց ուսից Դիոմեդի.  
Եվ տաք արյունը դուրս ժայթքեց դյուցազունի վերնագրահից:  
Այն ժամանակ ահեղագոռ Դիոմեդեսն այս ուխտն արավ.  
«Լըսի՛ր դու ինձ, դուստրըդ անհաղթ՝ ասպարակիր Արամազդի,  
Թե երբևէ հորըս և ինձ գորավիզ ես եղել սիրով  
Անագորոյն պատերազմում, օգնիր և ա՛յժմ ինձ, Աթենաս.  
Տո՛ւր ըսպանել ինձ այն մարդուն, որն ինձ ահա նետահարեց  
Եվ հիմա էլ յուրայնոց մոտ հոխորտում է գոռոզաբար,  
Թե արևի լույսը երկար անկարող եմ ես վայելել»:

Այսպես ասաց պաղատագին, Աթենասը լքեց նըրան,  
120 Թեթևացրեց անդամները և, Տիդյանին մոտենալով,  
Արագաթև այս խոսքերը ուղղեց նըրան աստվածուհին.  
«Արիացի՛ր, Դիոմեդես, և մարտընչի՛ր տըրոյանց դեմ,  
Քանզի կործքըդ լըցրի արդեն այն կորովով և գորությամբ,  
Ինչպես քո հայրն՝ ասպարանո՞՞ Տիդյան ասպետն ուներ սըրտում,  
Եվ մըշուշը, որ պատել էր աչքերը քո, փարատեցի,  
Որպեսզի դու լա՛վ ճանաչես՝ ո՛րն է աստված և որը՝ մարդ:  
Զգուշացիր, Դիոմեդես, անմահների հետ չըկըովես,  
Ով էլ փորձել քեզ կամենա, իսկ եթե գա Արամազդի  
Դուստրը Աստղիկ աստվածուհին, խոցի՛ր նըրան քո պըղիճձով»:

130 Այսպես ասաց և հեռացավ կապուտաշյա աստվածուհին,  
Իսկ Դիոմեդն առաջամարտ զընդերի մեջ մըտավ նորից,  
Եվ սիրտը, որ լի էր կըովի մեծ եռանդով տըրոյանց դեմ,  
Բոցավառվեց է՛լ ավելի բարկ կըրակով, ինչպես առյուծ,  
Որին դաշտում, ոչխարների իր հոտի մոտ, հովիվն հանկարծ  
Դեպի փարսխ վազած պահին վիրավորի, բաց չըսպանի,  
Մղեզնում է, և այնուհետ անօգուտ է ընդդիմանալ,  
Բակն է ցատկում, ու սարսափում, զարհուրում է հոտն անպաշտպան,  
Կոտակվում են իրար վըրա, խըռնըվում են խուճապահար,  
Մինչդեռ առյուծը կուշտ ու կուռ դուրս է նետվում բակից արագ,—  
140 Դիոմեդեսն ահեղագոռ նետվեց այդպես՝ տըրոյանց մեջ:

Նախ ըսպանեց Աստինոս և Հիպենոր արքաներին.  
Մեկին խոցեց ծըծերից վեր պըղընձակուռ իր նիզակով



Եվ մյուսին՝ հրակա սրբով զարկեց ուսին, անրակի մոտ,  
Եվ ուսն վրզից ու թիկունքից կըտրեց իսկույն ու զրցեց վար:  
Նըրանց թողած վազեց զընաց դեպի Աքասն ու Պոլիդոս՝  
Ջույգ որդիները ակտր երազագետ Եվրիդամի,  
Որոնց ծերը չըգուշակեց, երբ պատերազմ էին մեկնում:  
Ջարկեց ճըրանց ու կողոպտեց Դիոմեդեսն արիասիրտ:  
Դիմեց ապա դեպի Թոռնն ու Քըսանթոսը՝ Փենոփսի  
150 Որդիներին, երկուսն էլ ծեր օրերի հույս ու հեճարան,  
Որոնցից զատ ուրիշ որդի չունեի ծերը ժառանգ իրեն,  
Երկուսին էլ անուշ կյանքից զըրկեց Տիդյանն անեղազոտ,  
Թողնելով հորն անմըխիթար վիշտ անամոք ու հառաչանք.  
Պատերազմից ետ չըդարձան որդիները ողջ և առողջ  
Եվ կայքն ամբողջ բաժանեցին ազգականներն իրենց միջև:

Հետո բըռնեց նա Դարդանյան Պրիամոսի երկու որդոց՝  
Էքեմմոսին ու Քրոմիոսին՝ երկուսին էլ նույն կառքի մեջ,  
Այուրեմ ինչպես, որ նետվում է անտառակի մեջ արածող  
Նախիրի մեջ ու պոկում է վիզը կովի կամ երինջի՝  
160 Տիդյանն այդպես երկուսին էլ կառքից գետին տապալելով,  
Ջինազերծեց եղբայրներին ու մծույզներն զըրավելով,  
Տըվեց նա իր ընկերներին, տանելու դեպ նախատորմիդ:

Էնիասը երբ տեսավ ճըրան տըրոյացոց կոտորելիս,  
Վազեց այնտեղ, ուր նիզակներն էին շաչում ու շառաչում,  
Որոնելու ամբոխի մեջ աստվածատիպ Պանդարոսին:  
Գըտավ որդուն Լիկայոնի ըսքանչելի ու հաստաբուն  
Ու կանգնելով դեմ-հանդիման՝ այս խոսքերը ողղեց ճըրան.  
«Ո՛վ Պանդարոս, ո՛ր եմ աղեղ ու նետերըդ, ո՛ր քո փառքը,  
Քաջերի մեջ չըկար այստեղ ոչ մեկը որ մըրցեր քեզ հետ,  
170 Ոչ էլ այնտեղ Լիկիայում, որ քեզ հասներ իր քաջությամբ:  
Վե՛ր բարձրացրու ձեռքերդ հիմա, Արամազդին աղոթելով,  
Եվ լարելով աղեղըդ մեծ մի նետ նետիր դու այն մատդուն,  
Որ հասցըրեց իր մոլուցքով շատ չարիքներ տըրոյացոց,  
Քանզի փըշրեց ծունկը բազում քաջակողով կըտրիճների.  
Միայն թե աստված չըլինի նա, մեր մի զոհի համար մեր դեմ  
Դըժգոհ, մեզ հետ քեճի մըտած, զի քեճն անեղ է աստըծու»:

Լիկայոնի շըքեղ որդին ճըրան այսպես պատասխանեց.  
«Ո՛վ Էնիաս, պըղընձագեն տըրոյացոց խորհըրդական,  
Ես այդ մարդուն ամեն բանով նըմանեցնում եմ Տիդյանին,  
180 Դատելով իր սաղավարտից, ասպարից և նըծույզներից.

- Սակայն մարդ է նա, թե աստված՝ ես չըզիտեմ որոշակի:  
 Իսկ թե ինչպես ես եմ կարծում, քաջ Տիրեալի որդին է դա,  
 Ուրեմն առանց աստըծու չէ, որ կրույում է մոլեգնաբար,  
 Այլ կա իր մոտ աստվածներից մեկը ուսերն ամպով ծածկած,  
 Որ սրբահասու նետը սուրսայր հետու վանեց նրա մարմնից:  
 Ջի ես արդեն արձակեցի մի նետ նրան և աջ ուսից  
 Հարվածելով կոտ գրահին՝ մյուս կողմից դուրս հանեցի,  
 Կարծելով թե նրան արդեն ուղարկեցի Դժոխքը ես.  
 Բայց ո՛չ, անշուշտ աստվածներից մեկը ինձ հետ քեն ունի խիստ:
- 190** Սըրանից գատ՝ չունեմ ոչ կառք, ոչ հեծնելու երիվարներ,  
 Լիկայոնում, ես իմ տանը ունեմ շքեղ տասնըմեկ կառք  
 Դեռակառույց ու նորակերտ, շուրջանակի քողածածուկ.  
 Տուրաքանչյուր կառքը ունի երկու լըծկան երիվարներ,  
 Որոնք ընտիր ճերմակ գարի և զուտ հաճար են ճաշակում:  
 Լիկայոնը, քաջամարտիկ ծերը դեռևս այն ժամանակ  
 Իր պալատում, ինձ մեկնելիս խորհուրդ տրվեց ու պատվիրեց,  
 Որ կառք նրատեմ և տըրոյանց այնպե՛ս լինեմ հրամանատար,  
 Բայց ես, ախտս, մըտիկ չարի, որն իսկապես լավ կըլիներ:  
 Առատ կերի սովոր ու վարժ իմ ձիերին մեղքեմալով,  
**200** Որ կարող են կերի կարոտ մընալ խազմում, մարտերի մեջ.  
 Տանը թողի նըծույզներիս ու հետիոտն նկա Տրոյա,  
 Իմ աղեղի վըրա վըստահ, որ չունեցավ ոչ մի օգուտ:  
 Երկու զորեղ իշխանների՝ Դիոմեդին և Ատրիդին  
 Նըջանառու եղս և լոկ արյուն առա մի քանի շիթ,  
 Եվ իզուր տեղ զայրացնելով՝ զըրզըռեցի նրանց իմ դեմ:  
 Ուրևն իզուր ու չար բախտով առա աղեղն իմ ցրցից վար  
 Այն օրը, երբ որոշեցի շընորճ անել քաջ Հեկտորին,  
 Ջորավարել տըրոյացոց այս կըրվի մեջ, աքայանց դեմ:  
 Եթե դառնամ և իմ աչքով տեսնեմ քաղցըր հայրեմիքն իմ,  
**210** Տեսնեմ կընոջըս իմ անձկալի և սարսառնքն իմ բարձրահարկ,  
 Օտարածին մի մարդ, անշուշտ, պիտի զըլուխն իմ թըրցընի,  
 Եթե ես այս լայնալիճըս չըջախջախեմ ինքս իմ ձեռքով  
 Ու չըզըցեմ կըրակի մեջ, որ ինձ իզուր ընկեր եղավ»:

Եվ տըրոյանց պետ էնիսան ասաց Պանդարոսին.  
 «Լիկայոնյա՛ն, մի՛ դու այդպես խոսիր, ուրիշ հընար չըկա,  
 Պետք է որ մենք մեր կառքերով ու սըրարշավ նըծույզներով  
 Կըրվի ելնենք ու փորձենք մեր զենքերը այդ քաջի վըրա:  
 Օ՛ն, բարձրացիր իմ կառքը շուտ, որ տեսնես թե այս տըրոյան  
 Երիվարներս ինչպե՛ս գիտեն դաշտի միջով ամենուրեք

**220** Թե՛ հալածել արագավազ, և թե՛ փախչել սըրաթըռիչ,

<sup>7</sup> Նըրանք դարձյալ մեզ անվըտանգ դեպի քաղաք կըթողցնեն,  
Եթե Տիդյան Դիոմեդին տա վերբատին փառք Արամազդ:  
Դու առ ահա մըտրակն այս պինդ ու փողփողուն սանձերը այս,  
Իսկ ես կառքի վըրա կանգնած՝ պատերազմեմ իմ զենքերով,  
Կամ ուզում ես՝ ինքքդ կըովիր, ձիերի հոգան ինձ թողնելով»:

Լիկալոնի շքեղ որդին նըրան այսպես պատասխանեց.  
«Լավ կըլինի ինքքդ վարես երիվարներդ, Էնիա՛ս,  
Ծանոթ ձեռքով առաջնորդված՝ կառքն ավելի լավ կըքաշեն.  
Զի փախչելու եթե լինենք անեղազոտ Դիոմեդից՝

**230** Մի գուցե թե խըրտչեն հանկարծ, կամ մոլորվեն ողիկորույս  
Եվ չուզենան պատերազմից դուրս հանել մեզ՝ ձայնիդ կարոտ,  
Ու մեզ վըրա հարձակվելով՝ ըսպանի մեզ երկուսիս էլ  
Որդին մեծամձրն Տիդեսի՝ Դիոմեդեսն անեղազոտ,  
Եվ ավարի, սոնի տանի նըծույզներդ սալասըմբակ:  
Ուստի կառքդ ինքքդ վարիր, հոգ տանելով նըծույզներիդ,  
Իսկ ես մեր դեմ դուրս եկողին կընդունեմ սուր իմ նիզակով»:

Այսպես ասաց նա և ընդույթ նըկարագեղ կառքը ցատկեց,  
Եվ ձիերը արշավասույր վարեցին դեպ Տիդյանն անեղ:

**240** Մթենելուք՝ Կասրասնի պաշտոն որդին տեսավ նըրանց  
Ու դառնալով Դիոմեդին այս սըրաթև խոսքերն ասաց.

«Սիրելիդ իմ Դիոմեդես, որդիդ շքեղ քաջ Տիդեսի,  
Երկու քաջեր եմ տեսնում ես վառված քո դեմ մարտընչելու,  
Երկուսն էլ հաղթ և կորույի, մեկն աղեղի քաջահընուտ  
Պանդարոսն է մեծակորով՝ խիզախ որդին Լիկալոնի.  
Մյուսն Էնիասն է Անքիսյան, մայրը՝ Աստղիկ աստվածուհին:  
Եվ, կառք նըստենք, փախչենք արագ, և դու աղբյե մի՛ խիզախիր՝  
Նախահարձակ զընդդէմ մեջ, որ չըստուծես քաղցըր հոգիդ»:

Եվ նալելով նըրան խոժոռ՝ Դիոմեդեսն այսպես ասաց.

«Դու փախչելուց մի՛ խոսիր գուր, ինձ համոզել չես կարող դու.  
**250** Ես սովոր չեմ բոլորովին խուսափելով պատերազմել,  
Ոչ էլ երբեք անաքեկվել, զի ուժ ունեմ ես տակավին:  
Ամոթ է ինձ կառք իսկ նըստել, ոտքո՛վ կերթամ ես նըրանց դեմ,  
Զի Աթենաս Պալլասը ինձ չի թողնում որ ես վախենամ:  
Սըրաթըռիչ նըծույզները երկուսին էլ ես չեմ տանի,  
Եթե նույնիսկ նըրանցից մեկն ազատվի իմ հուժկու հարկից:  
Քեզ այլ բան էլ պետք է ասեմ, և դու այն լավ միտքդ պահիր,  
Եթե երբեք ամենիմաստ Աթենասն ինձ փառք պարգևի  
Երկուսին էլ ըսպանելու, դու սըրափազ նըծույզներիս  
Սանձերն ամուր կապած կառքի շըրջանակին՝ մեր կառքը թող

260 Եվ սրբացիր անմիջապես դեպի ձիերն Էնիասի,  
 Եվ ձիերն այդ ավարելով՝ տա՛ր բարձրագեն աքայեցոց:  
 Նըրանք ազնիվ այն ցեղից են, որ Արամազդն անեղագոչ  
 Տրովսիսն տրվեց ի փոխարեն Արրա որդու՝ Գանիսելի:  
 Այդ պատճառով բաժագույնն են երկրում եղած ձիերի մեջ:  
 Այդ սերունդից էր գողացավ Անքիսեսը մարդոց արքան  
 Լավմեդոնից գաղտագողի և ճակերի վըրա քաշեց,  
 Եվ որոնցից իր պաշատում վեցը ծընունդ ունեցավ Աս:  
 Չորսին պահեց իրեն համար, գիրացնելով իր փարայսում,  
 Տըվեց երկուսն Էնիասին, որոնք այնպես լավ են փայլում,  
 270 Եթե դըրանց գերի առնենք, մեզ համար մեծ պատիվ է դա»:

Մինչդեռ երկու քաջերն այսպես խոսում էին իրարու հետ,  
 Հասան Արրանք արշավակի մըտրակելով ձիերն իրենց,  
 Եվ առաջինն այսպես խոսեց շրքեղ որդին Լիկայոնի.

«Արիասիրտ ու մարտագոռ զավակդդ դու քաջ Տիդեսի,  
 Քեզ հիրավի չընկնեց դառըն սրլաքըս սուր, փրքինը իմ,  
 Արդ, աշտեով արի կըովենք, այդպես գուցե թե՛ հաջողեմ»:

Այսպես սասց և ճոճելով Աետեց աշտեն երկայնաստվեր,  
 Ու շեշտակի զարկեց թափով Դիոմեդի կոտ ասպարին,  
 Եվ պրըղնձյա սրլաքը սուր ծակելով այն՝ գրահին հասավ,

280 Ու բարձրագոռ բացականչեց շրքեղ որդին Լիկայոնի.

«Արլաքս անա կողքդդ խոցեց ու դուրս եկավ, էլ այսուհետ  
 Չեմ կարծում ես, որ դիմանաս, տըվիր դու ինձ փառք ու պատիվ»:

Դիոմեդեսը անասան Արրան այսպես պատասխանեց.  
 «Վըրիպեցիր դու վերըստին, բայց և այնպես, կարծում եմ ես,  
 Թե՛ դուք սփտի դադար չառնեք, մինչև որ մեկը ձեզանից  
 Գետնատարած չընկնի տապաստ և արյունովն իր սեփական  
 Չըհագեցնի բուռն Արեսին՝ գուպարողին քաջամարտիկ»:

Ասաց, Աետեց, և Աթեհասն ուղղեց աշտեն պրըղնձասայր  
 Դեպի Արրա քիթն աչքախառն, և պրղինձը անպարտելի  
 290 Անցավ սպիտակ ակոսներով և արմատից կըտրեց լեզուն  
 Եվ ծընոտի տակից իսկույն դուրս ելավ սուր տեգը թափով.  
 Ցած գըլորվեց շրքեղ կառքից, ու շաչեցին փայլակնացայտ  
 Ջենքերն իր շուրջ, խրրոնեցնելով Արծուզներին սարսափահար.  
 Հողըս ցընդեց ուժը Արրա, ու տեղնուտեղ շունչը փըչեց:

Վըրա հասավ Էնիասն իր երկար տեգով և ասպարով,  
 Վախենալով, որ մի գուցե աքայեցիք դին ավարեն:  
 Պըտըտվում էր շուրջը Արրա՝ ուժին վըստահ առյուծի պես,  
 Իր Աիզակը և բոլորշի վահանը միշտ առջև բըռնած,



Գիտմեղեկի սխրամբները.

Պատրաստ՝ մահվան գիրկ ճամփելու, ով էլ որ իր ստաջ էլներ,  
300 Եվ գոռում էր ահեղաձայն. Տիդյանն առավ հըսկա մի քար,  
Որ այժմ ապրող մահկանացու մարդկանց միջից երկու հոգի  
Չէին կարող գետնից կըտրել, նա միայնակ տարավ-քերեց  
Եվ նըրանով Էնիասի սըրունքներին զարկեց ուժգին,  
Միշտ այնտեղին, որտեղ մարդու զիստն երանքին է միանում,  
Որ և որոջ են անխանում. ջախջախելով ժայռն ահագին՝  
Կըտրեց երկու նյարդերը և կաշին պոկեց անմիջապես,  
Դյուցազնը քաջ գետինն ընկավ հաստ ձեռքերով հողին հեճված,  
Եվ գիշերը սևաթորսի վըռվեց նըրա աչքերի շուրջ:

Էնիասը՝ արանց արքան, կորչելու էր սյդտեղ, անշուշտ,  
310 Եթե Աստղիկ աստվածուհին, դուստրը հըզոր Արամազդի,  
Մայրը նըրա, որին ծընեց քաջ տավարած Անքիսեսից,  
Այդ չըտեսներ և սըրաթև՝ Ոլիմպոսից չիջներ այդտեղ.  
Տարածեց նա թևերը լույս իր պիտելի որդու վըրա,  
Ու պարուրեց ամպի նըման շքեղ իր շըղարշով,  
Որ մի գուցե աքայեցի կըտրիճներից մեկը հանկարծ  
Հարվածելով որդուն կըրծքից՝ առնի նըրա քաղցըր հոգին,  
Այդպես Աստղիկն իր սիրեցյալ որդուն մարտից դուրս էր հանում:

Կապանեսի որդին այնժամ հիշեց պատվերը Տիդյանի,  
Միասըմբակ ձիերը իր քաշեց կըովի շտաչից դուրս,  
320 Երասաններն արագ-արագ կապեց կառքի շըրջանակին,  
Ինքը նետովեց գեղեցկարաջ դեսպի ձիերն Էնիասի,  
Եվ խըբելով տըրոյանցից տարավ դեսպի աքայեցիք  
Ու սիրելի իր ընկերոջ՝ Դեիպիլի ձեռքը հանձնեց,  
Որին բոլոր ընկերներից ավելի էր մեծարում նա,  
Որովհետև ամեն բանում համամիտ էր նա իրեն հետ:  
Իսկ ինքը իր կառքը նըստած, առավ փալլուն երասաններն  
Ու ձիերը սպասըմբակ քրշեց դեսպի Տիդյանը քաջ,  
Որ Աստղիկին էր հայածում անագորույն իր պըղիճնով,  
Իմանալով, որ սպիկար դիցունի էր, ո՛չ նըրանցից,  
330 Որոնք գիտեն քաջազնաբար հըրամայել մարտադաշտում,  
Երբ Տիդեսի շոքեղ որդին կըրընկակոխ հասավ նըրան,  
Վիրավորեց իր նիզակով նըրա ձեռքի թաթն երեսից,  
Եվ քերծելով պըղընձասար աշտեն փափուկ մորթն ըսպիտակ՝  
Դաստակի մոտ ներձեց նըրա աստվածային շըղարշը նուրբ,  
Որ հշուված էր ճարտարապես Ծընորհների շող-մատներով:  
Վազեց արշունն անմահական աստվածուհու,— ավիշը այն,

Որ հոսում է երջանկափառ աստվածներից ոլիմպական,  
Զի ցորեն չեն ուտում Արրանք, ոչ էլ գինի են խրմում սև,  
340 Այդ պատճառով արյուն չունեն և անմահ են կոչվում Արրանք:  
Ծիչ հանելով աստվածուհին՝ ձեռքից իր բաց թողեց որդուն,  
Որին առավ ինքն Ապոլլոնն ու պարտրեց կապույտ ամպով,  
Որ մի գուցե մի ձիավարժ, պրոլընձազգեստ դանայեցի  
Սուր պրոլինձով խոցի Արրան ու դուրս կորզի անուշ հոգին:

Դիոմեդեսն անել ձայնով աստվածուհու վրրա գոռաց.  
«Դո՛ւստրըդ հրզոր Արամազդի, թող հեռացիր մարտադաշտից.  
Հերիք չէ՞ քեզ, որ թույլ կանանց խարում ես դու, պատրում Արրանց,  
Եթե երկար դեռ ըսպասես, սոսկա՛ս պիտի պատերազմից,  
Ու սարսափես, հեռվից անգամ անել կրովի ձայնն առնելիս»:

350 Այսպես ասաց, և Աստղիկը մեկնեց դրժնյա ցավերով լի,  
Որին ժրրոտ Իրիսն առած՝ մարտադաշտից հանեց արագ,  
Մորմոքվում էր սուր ցավերից, սևանում էր մորթը չըքնաղ:  
Մարտադաշտի ձախակողմում հանդիպեց նա բուն Արեսին,  
Նըստել էր նա՝ իր Արժույզներն ու տեղը մութ ամպով պատած:  
Աստղիկն այդտեղ իր սիրելի եղբոր ոտներն ընկավ լալով  
Եվ խրնդրում էր պաղատագին տալ Արժույզներն իր ոսկեսար.  
«Գըթա՛ դու ինձ, սիրուն եղբայր, Արժույզներդ շընորհիր ինձ,  
Որ սըլանամ դեպ Ոլիմպոս՝ քընակավայրն անմահների:  
Տանջվում եմ ես խորը վերքով, որ տըվեց ինձ մահկանացու  
360 Տիդյանը, որ Արամազդի վրրա անգամ կրհանդրզներ»:

Այսպես ասաց, և Արեսը Արժույզները տըվեց Արրան,  
Աստվածուհի Աստղիկն ելավ կառքը Արստեց ցաված սըրտով,  
Եվ Իրիսը Արրա կողքին՝ երասանները ձեռքն առավ  
Ու մըտրակեց, և սըլացան երիվարներն հոժարակամ  
Եվ շուտափույթ հասան Ոլիմպ՝ քընակավայրն անմահների,  
Որ կանգնեցրեց կառքը Իրիսն ու արձակեց ձիերն իսկույն,  
Նըրանց սուաջ սուստորեն լըցնելով կեր աստվածային:  
Իսկ Աստղիկը գընաց փարվեց իր Դիոնե մոր ծընկերին,  
Որը դըստերն իր գիրկն առած՝ փարիպչելով ասաց Արրան.  
370 «Դուստր իմ սիրուն, անմահներից ո՛վ քեզ այդպես վիրավորեց,  
Իբրև թե դու Արրան հայտնի մի մեծ չարիք պատճառեիր»:

Եվ ժըպտասեր Աստղիկն այնժամ Արրան այսպես սրստախանեց.  
«Ինձ Տիդեսի որդին խոցեց, Դիոմեդեսն ամբարտալան,  
Երբ որ մարտից հանում էի սիրուն որդուս՝ Էնիասին,  
Որն ամենեն սիրելին է և թանկագին սըրտիս համար:

Աքայեցոց և տըրոյանց մեջ չէ կոիվն այսուհետև,  
Այլ դանալանք անմահների դեմ են հիմա կրոիվ մըղում»:

- Եվ Դիոնեն՝ հըրաշափառ աստվածուհին ասաց նըրան.  
«Տոկա՛, դուստր իմ, որքան էլ մեծ լինեն ցավերդ, դու մի՛ տըխրիր»:
- 380 Զի շատերըս ոլիմպարնակ աստվածներից մարդկանց ձեռքով  
Կըրել ենք ծանր ու խոր վըշտեր՝ մասնակցելով նըրանց կըրովին:  
Կըրեց Արեսն, երբ որ հուծկու Ոտոսը և Եփիալտեսն  
Ալովեի որդիք նըրան կապկապեցին պիրկ կապերով,  
Եվ տասներմեկ ամիս մընաց նա բանտի մեջ պղղընձակերտ:  
Պատերազմի անհագ Արեսն այդ զընդանում պիտի կորչեր,  
Թե էրիքեն՝ չըքնադագեղ նըրանց խորթ մայրը՝ Հերմեսին  
Լուր չըբերեր, որ վերջապես նըրան հլուծված հանեց բանտից:  
Կըրեց նույնպես Հերան, որին վիրավորեց աջ ըստինքից  
Ամփիտրոնի հըզոր որդին սուր սըլաքով իր եռասայր,  
390 Անտանեյի ցավերի մեջ տանջվում էր նա այդ ժամանակ:  
Մանդարապետն անգամ կըրեց իր մարմնի մեջ նետ սայրասուր,  
Երբ որ նըրան նույն այդ մարդը, ասպարակիր Ջևաի որդին  
Ըստվերների դըռան շենքում նետահարեց իր աղեղով.  
Վեր ելավ նա դեաի Ջևաի արքունիքը, Ոլիմպր չայն  
Սըրտակոտոր ու ցավատանջ. մըխվել էր նետը դառնաթույն  
Նըրա ուժեղ, հաղթ ուսի մեջ ու տանջում էր նըրա հոգին:  
Պեռնն այնժամ դըրեց վերքին ցավահալած ըսպեղանի  
Ու բըժըշկեց, որովհետոս նա չէր ծընված մահկանացու:  
Հանձնապատասա՛ն եղեռնագործ, որ հանդըզեց մինչև անգամ
- 400 Ոլիմպարնակ աստվածներին վիրավորել իր աղեղով:  
Ինքը խաժակն աստվածուհին, Աթենասը դըրդեց քո դեմ  
Տիդյան անեղ Դիոմեդին, բայց խակամիտն այդ չըզիտե,  
Թե ով էլ որ անմահների դեմ հանդըզնի մըտնել ի մարտ՝  
Նա չի կարող երկար ապրել, ու մանուկներն այլևս երբեք  
Պատերազմից վերադարձած հոր ծընկերին չեն նըստելու:  
Ուստի Տիդյան Դիոմեդեսն էլ, թեպետև քաջամարտիկ,  
Թող մըտածի, որ կարող է քեզնից քաջի հետ կըրվելու,  
Եվ որ գուցե բազմահանձար Ատրեստոսի դուստր Էգալիան  
Զարթնի քընից հանկարծակի ու ձայն տա իր նածիշտներից՝
- 410 Անձկակարոտ ծաղկափրթիթ իր ամուսնուն քաջակորով,  
Նազելի կինն՝ աքսայեցոց ձիախըրոխտ Դիոմեդեսի»:

Ասաց, երկու թաթիկներով սըրբեց ավիշը դաստակից,  
Ատոդջացավ ձեռքը դըստեր, ու մեղմացան ցավերը խոր:  
Աղոտեղ Հերան և Աթենասն, որ ամեն բան տեսնում էին,



Նետում էին Արամազդին սիրտ խոցոտող, կրծու խոսքեր.  
Եվ ըսկըսեց ճախ Աթենաս աստվածուհին, այս ասելով.

«Հայր Արամազդ, կրքարկանա՞ս վըրաս, եթե մի քան ասեմ,  
Խեղճ Կիպրուհին, երբ ուզել է դըրդել ոմըն աքայուհու,  
Որ նա հարի տըրոյացոց, որոնց շատ է սիրում հիմա,  
420 Գեղեցկազգեստ ու պընճասեր աքայուհու մի գըզվելիս,  
Ոսկի ճարմանդն իր թաթիկի քեղըրթել է մորթը փափուկ»:

Այսպես ասաց, ու ծիծաղեց հայրը մարդկանց, աստվածների,  
Եվ կանչելով ոսկեղեցիկ Աստղիկին մոտն՝ ասաց ճըրան.

«Ռուստր իմ քընքուշ, պատերազմի գործերը քեզ չեն պատկանում,  
Ռու ըզբաղվիր ամուսնական հեշտ ու անուշ քո գործերով,  
Ռազմի մասին թող որ հոգան Աթենասն ու Արեսը բուռն»:

Եվ մինչ այստեղ սըրանք այսպես խոսում էին իրարու հետ,  
Էնիասի վըրա վազեց Ռիոմեդեսն անեղագոռ,  
Թեև գիտեր, որ Ապոլոնն էր պաշտպանում դյուցազունին:

430 Չակնածելով անգամ գորեղ աստըծուց ճա՛ միտք էր դըրել  
Որ ըսպաներ Էնիասին և կողոպտեր զենքերը պերճ:  
Երեք անգամ նա հարձակվեց հույժ ծարավի ճըրա արյան,  
Եվ երեք հեղ Ապոլոնը ճըրա ասպարն մըղեց մի կողմ,  
Բայց երբ չորրորդ անգամ ցասկոտ գըրոն տըվեց դիվանըման՝  
Ըսպառնալից ձայնով գոռաց Ապոլոնը աղեղնավոր.

«Ըզգուշ, Տիդյան, ե՛տ ընկըրկիր, մի՛ հանդըզնիր չափվել ինձ հետ,  
Հավասարվել անմահներից, զի ճըման չեն քընավ իրար  
Չարմը անմահ աստվածների և երկրակոխ քայող մարդկանց»:

Այսպես ասաց, և ընկըրկեց Տիդեսի քաջ որդին դուզն ինչ,  
440 Խուսափելով կորովածիզ Ապոլոնի բարկությունից:

Իսկ Ապոլոնը ամբոխից դուրս կորզելով Էնիասին՝  
Պերգամաչի մեջ դըրեց սուրբ, ուր ինքն ունի շըքեղ տաճար:  
Այնտեղ Լեսովն ու Արտեմիսը անմատույց սըրբարանում  
Բըժըշկեցին ճըրան շուտով, շընորհելով պատիվ ու փառք:  
Բայց Ապոլոնն արծաթաղեղ շինել տըվեց մի խըրտվիլակ,  
Ուրվապատկեր՝ ամեն քանով Էնիասին հար և ճըման,  
Որի շուրջը տըրոյացիք և աքայանք դյուցազնազարմ  
Կոփում էին իրար լանջքին վահանակներն իրենց թեթև  
Ու հաստաքեստ, բոլորանն ասպարները արջատամորթ:

450 Այնժամ Գուշակ Ապոլոնը այսպես ասաց բուռն Արեսին.

«Արե՛ս, Արե՛ս արյունառուշտ, պարըսպաքանդ ու մարդակեր,  
Մի՞թե պիտի չըհեռացնես մարտադաշտից դու այդ մարդուն՝

Դիմնեղեսին, որ քիչ մընաց Արամազդ հոր հետն էլ կըրվեր:  
Նախ Կիւրուհու դաստակը նա ձեռքին մոտիկ վիրավորեց,  
Հետո էլ ինձ վըրա նույնպէս գըրոհ տըվեց դևի նըման»:

Այսպէս ասաց, զընաց նըստեց Պերգամայի բարձըր ծայրին,  
Իսկ Ժանտ Արեսն հասալ տրոյանցն անեղ կըրվի հորդորելու  
Թըրակացոց Ժիրածիր պետ Ակամասի կերպարանքով  
Ու Պրիամի որդիներին խըրախուսիչ խոսքեր ասաց.

- 460 «Ո՛վ որդիներ դյուցազարմիկ դուք Պրիամոս թագավորի,  
Մինչ ե՛րբ պիտի թողնեք, որ ձեր գորքը շարդեն աքայեցիք,  
Ըսպասում եք, որ կըրիվը հասնի ձեր կոտ դարբասներին՝ն:  
Ընկել է նա, որին բոլորս պատուում էինք Հեկտորի չափ—  
Էնիսար՝ վըսեմ որդին մեծահոգի Անքիսեսի.  
Եկեք նըրա զենքնկերոջն ազատենք մենք անեղ մարտից»:

Այսպէս ասաց ու բորբոքեց եռանդ ամեն մեկի սըրտում,  
Իսկ Սարպեդոնը Հեկտորին հանդիմանեց այս խոսեքով.

«Ո՛ւր զընաց քո ուժը, Հեկտոր, ու կորովը, ու ունեիր.  
Զէի՛ր ատում, թե դու միայն, առանց գորքի և աստարի

- 470 Կըրպաշտպանես քաղաքը քո եղբայրներով, փեսաներով,  
Մինչդեռ այսօր և ոչ մեկին չեմ տեսնում ես մարտի դաշտում,  
Այլ սուկահար կուչ են եկել, ինչպէս շըներն առյուծի շուրջ,  
Եվ միայն մենք, դաշնակիցներս ենք մարտընչում անախափի:  
Ես ինքըս ձեզ «հզակակից» եկել եմ շատ հեռու տեղից,  
Լիկիայից, ուր հոսում է Քըսանթոսը հորձանապտույտ,  
Ուր թողել եմ մատաղասի որդիք և կին, ինչքերըս ողջ,  
Որոնց այնպե՛ս կարտու է միշտ քաշում աղքատ, չունևոր մարդ:  
Մակայն դարձյալ վառում եմ ես լիկիացոց, և ինքս անձամբ  
Վառված եմ խիստ այդ մարդու դեմ գուպարելու հուր ցանկությամբ,

- 480 Թե՛ն չունեմ այստեղ ոչինչ, որ տանեին աքայեցիք:  
Մինչ դու անշարժ կանգ ես առել և այլոց էլ չես հորդորում,  
Որ դիմանան պատերազմում ու պաշտպանեն իրենց կամանց:  
Տես, որ հանկարծ կեր չըդառնաք ոտխներին, տըրոյացի՛ք,  
Եվ ցանցն քնկնեք ամենորսակ ուղկանի պէս թակարդապատ,  
Ու բարեշեն ձեր քաղաքներն ավեր-ավար անեն նըրանք:  
Այս բոլորի մասին, Հեկտոր, պետք է որ դու լավ մըտածես,  
Եվ աղաչես իշխաններին ու զընդերին հեռվից եկած,  
Որ դիմանան դըժվարության ու մարտընչեն հերոսաբար  
Ու թույլ չըտան նըրանք իրենց լըսելու աստ ու պարսախանք»:

490 Այսպես խոսեց Սարպեղոնը և Հեկտորի սիրտը խոցեց:  
Հեկտորն այնժամ գեճուզարդով իր կառքից ցած թըռավ իսկույն  
Եվ ճոճելով սուր աշտեճեր՝ վազվըզում էր բանակի մեջ,  
Հորդորելով ամեն մեկին, ու վառեց մարտ մի ահավոր:  
Տըրոյացիք էտ դառնալով ճակատ զարկին արայանց դեմ,  
Որոնք անվախ կանգնած էին իրենց տեղում միշտ աննահանջ:

Ինչպես քամին, որ քըշում է հարդը թեթև՝ էրանելիս  
Նըվիրական կալից, երբ որ Դեմետրը շե՛լ, խարտիշագեղ  
Բաժանում է հարդն ու հատիկը հողմերի շընչով ուժգին,  
Ու մըղեղի հըսկայական դեզն ըսպիտակ գույն է առնում,  
500 Ծերմակեցի՜ն արյանք այդպես միճչև երկինք հասնող վուշուց,  
Որ ամպի պես հաճում էին ձիերն իրենց դըրույթներով,  
Երբ էտ դարձած՝ դեսյի խառնուրդն արշավեցին քառատըրրի  
Կորովաջան կառապանաց կուռ ձեռքերից մըտրակահար:  
Իսկ բուռն Արեսն ամենուրեք վազվըզելով՝ բանակը ողջ  
Պատեց մըթին մի գիշերով հօգուտ համայն տըրոյացոց.  
Այդ անելով՝ կատարում էր Ապոլլոնի պատվերը նա,  
Որ հորդորեց՝ տըրոյացոց ալ խըրախույս խիզախության,  
Երբ որ տեսավ Աթենասին պատերազմից հեռանալիս,  
Որ պաշտպան էր և զորավիզ պողընձագգեստ դանայեցոց:  
510 Իսկ Ապոլլոնն արձակելով սըրբարանից Էնիասին՝  
Բոցավառեց նոր կորովով կուրծքը ազգաց սուաջնորդի,  
Եվ Էնիասն հանկարծակի հայտընվեց իր ընկերներին,  
Որոնք անչափ ուրախացան, երբ ողջ առողջ տեսան նըրան,  
Բայց ոչ մի բան չըհարցըրին, զի այն հուզմունքն, իրարանցում,  
Որ հանեցին Արծաթաղեղն ու Արեսը արլուճառուշտ,  
Եվ Քեճն անհագ՝ էլ ժամանակ չէին տալիս դըրս համար:

Իսկ Այաքսները երկուսով, Ոդիսևսն ու Տիդյանն ահեղ  
Մարտի հորդոր էին կարդում, խըրախուսում արայեցոց,  
Որոնք անահ և անասան՝ տըրոյացոց գոչյուններից  
520 Նըրանց հըսկա ուժին ընդդեմ կանգնած էին կազմ ու պատրաստ,  
Ինչպես ամպերն, որ դիզում է Ջրվանյանը խաղաղ ժամի  
Լեռների վես կատարներից, երբ նընչում են Բորեասն ու բուռն  
Մյուս քամիները, որպեսզի ամպակույտը ցըրիվ բերեն,—  
Դանայեցիք տըրոյանց դեմ այդպես կանգնած էին անվախ:  
Իսկ Ատրիդեսը անդադար երթևեկում էր բանակում  
Ու բազմամբոխ իր զորքերին տալիս հորդոր և հըրաման.  
«Մարդ եղեք միշտ, սիրելիներս, և զորավոր սիրտ ունեցեք,  
Եվ քաջամարտ գուպարի մեջ պատկանեցեք մեկ-մյուսից,

Զի քաջերը պատերազմում ավելի շատ ողջ են մընում,  
530 Իսկ փախչողը չի ազատվում, ոչ էլ փառք է վաստակում նա»:

Ասաց, գրցեց գեղարդը նա և ըսպանեց մի այտյան՝  
Պերգասյան քաջ Դեիկոնի՛ն՝ գեղընկերոջն Էնիասի,  
Որին տրոյանք հարգում էին Պրիամոսի որդոց նըման,  
Զի կըովում էր նա քաջաբար նախամարտիկ գընդերի մեջ:  
Ազամեննոն արանց արքան գարկեց քաջի կուռ ասպարհն,  
Որ չըտուկաց նըրա տեգի՛ն, պըղի՛նձն անցավ ուժգին թափով  
Ու կամարի միջից ուղիղ փուրը մըտավ Պերգասյանի.  
Նա թընդյունով գետին ընկավ, ու շաչնցին գեներն իր շուրջ:

Իսկ Էնիասը ըսպանեց երկու կըտրի՛ն դանաչեցոց,  
540 Կրեթոնի՛ն, Որսիլոքի՛ն՝ Դիոկլեսի որդիներին.  
Դիոկլեսը բընակվում էր գեղեցկաշեն Փերեի մեջ,  
Մեծանարուստ և ընչալեւտ, սերում էր նա Ալփես գետից,  
Որ ջըրաշատ հոսում էր հորդ Պելիացոց լայն դաշտերով,  
Որը ծընեց Որսիլոքի՛ն՝ քազմածողով արանց արքա,  
Իսկ Որսիլոքն աշխարհ թերեց Դիոկլեսին մեծահոգի,  
Դիոկլեսը՝ Կրեթոնի՛ն, Որսիլոքի՛ն— երկվորյակներ,  
Քաջախըրոխտ ու փորձառու ամեն տեսակ մարտերի մեջ:  
Երբ չափահաս դարձան սըրանք, արգիացոց հետևելով  
Սև նավերով ելան եկան դեպի Տըրոյա ձիամարզիկ,  
550 Որ Ատրիդես Ազամենի, Մենելայի վըրեժն առնեն,  
Սակայն այստեղ երկուսին էլ հասավ մահվան օրհասը սև:  
Ինչպես թավուտ լեռան վըրա գույգ առյուծներ գեղեցկաբաշ  
Մալրիների անտառի մեջ պարարում են մարմինն իրենց  
Եվ արջառներ ու գեր գառներ ապշուպելով ամեն անգամ  
Ավերակ են դարձընում լիք փարախները հովիվների,  
Մինչև զինված մարդկանց ձեռքով ընկնեն սատկեն պըղընձահար,  
Ալդպես, նըրանք Էնիասի ձեռքով՝ նըկուն, տիգահարված՝  
Ընկան տասպատո դեռարողոջ ու բարձրողեշ եղևնու պես.

Մեղքենալով նըրանց վըրա Մենելայվոսն արիսական,  
560 Առաջ անցավ զինավառված, երկար աշտեն իր ճոճելով.  
Եվ Արեսը խիզախությամբ սիրտն էր նըրա բոցավառում,  
Հուսալով, որ կընըվաճվի Էնիասի հուժկու ձեռքով:  
Տեսավ նըրան Նեստորոդի Անտիլոքոսն ու նախամարտ  
Գընդերի մեջ նետվեց իսկույն, վախենալով, թե մի գուցե  
Ժողովըրդոց հովվի գըլվի՛ն գա մի փորձանք անակընկալ  
Եվ ի դերն հանի նըրանց նեղությունները բովանդակ:

Նըրանք երկուսն էլ բազուկներն ու հիզակները սայրասուր  
Բըռնել էին իրարու դեմ խիզախորեն ընդդիմամարտ.

Անտիոքոսն առաջ գալով՝ ազգապետի կողքին կանգնեց:

- 570 Էնիասը, թեև հուժկու պատերազմող՝ դեմ չըդըրավ,  
Երբ այն երկու դյուցազներին տեսավ կանգնած իրարու մոտ:  
Նըրանք դեպի աքայեցիք քաշ տալով հեզ ընկածներին,  
Տըվին ավանդ համհարզներին, ապա դարձյալ ետ դառնալով  
Մըտան Ըորից նախամարտիկ գընդերի մեջ գուպարելու:

Նըրանք այնտեղ ըսպանեցին Պիեմենին արիաստիպ՝  
Ասպարավոր, մեծահոգի պափլագոնաց գորապետին,  
Որ երբ կանգնած էր կառքի մեջ, Մենելավոսն աշտենազեմ  
Նետեց տեզը երկայնաստվեր և անրակից խոցեց նըրան:

- 580 Անտիոքը զարկեց նըրա կառավարին՝ Մեդոնին քաշ,  
Ատիմնոսի արի որդուն, երբ դարձընում էր ձիերին.  
Զարկեց քարով ճիշտ արմուկկին, ու ցած ընկան նըրա ձեռքից  
Փըղոսկըրով բանված սանձերը ըսպիտակ՝ փոշեթաթալ:  
Ուտնեց արագ Անտիոքոսն քունքից ներս սուրը վարսեց,  
Եվ գեղակերտ, շըքեղ կառքից նա գըլխիվայր գետին ընկավ,  
Փոշիներում, մի պահ գըլխի և ուտերի վըրա ցըցված,  
Ոտքերը վեր, գըլուխը վար, զի ավազի մեջ էր խորվել,  
Մինչ վերջապես ցած փըռեցին նըրան ձիերն ընդհարվելով,  
Որոնց քըշեց Անտիոքոսն աքայեցոց ամբոխի մեջ:

- Այդ տեսնելով՝ վըրա վազեց Հեկտորն ուժգին որոտալով,  
590 Գըրոհեցին իր ետևից տըրոյացոց գընդերը գոռ,  
Իրենց գըլուխն ունեցալով Արեսին և Եհիովհին:  
Սա հետև ուներ Աղմուկն ահեղ պատերազմող խոուն ամբոխի,  
Իսկ Արեսը ձեռքին բըռնած ուներ հիզակ մի անագին  
Եվ ընթանում էր Հեկտորի մերթ առջևից, մերթ ետևից:

Նըկատելով նըրան՝ սուկաց Դիոմեդեսն ահեղագոռ:  
Ինչպես որ մարդ մի անծանոթ և ընդարձակ դաշտ անցնելիս  
Կանգ է առնում, երբ որ հանկարծ հըսկա գետի է հանդիպում,  
Որը ահեղ սըրընչյունով դեպի ծովն է վազում վարար,—  
Ահաքեկված ետ է դառնում,— Դիոմեդեսն այդ ժամանակ

- 600 Ետ դառնալով այսպես ասաց իր քաշարի մարտիկներին.  
«Սիրելիներս, որքա՞ն եմք մենք ըսքանչանում մեծ Հեկտորով,  
Քանզի է քաշ հիզակավոր և խըստասիրտ պատերազմող,  
Աստվածներից մեկը միշտ մոտ՝ պաշտպանում է նըրան մահից.  
Այժմ էլ Արեսն է նըրա հետ մահկանացվի կերպարանքով:  
Ուրեմըն դուք երեսներըդ դեպի սրույանք՝ ետ քաշվեցեք,  
Եվ մի՛ գործեք աստվածների դեմ հարձակում հանդրզնաբար»:

- Այսպես ասաց, բայց տրրոյանք նրանց արդեն շատ էին մոտ:  
 Հեկտորն աչտեղ քաջամարտիկ երկու կըտրին փրոեց գետին—  
 Մեճեպոսին և Անքիային՝ երկուսն էլ նույն կառքի վըրա:
- 610 Ընկածների վըրա գըթաց Տեյամոնյան Այաքը մեճ,  
 Մոտ գընալով՝ փայլակնացալտ տեզը նետեց և ըսպանեց  
 Ամփիոսին՝ որդուն փարթամ և մեծատուն Սելագոսի,  
 Որ Պետսում էր բընակվում, բայց Օրհասը բերեց նըրան  
 Իբբև աստար՝ զինակցելու Պրիամոսին և իր որդոց:  
 Երկայնաստվեր, տեզն իր նետեց Այաքսն ուղիղ նըրա գոտուն,  
 Եվ պըղընձյա սըլաքը սուր նըրա ներքին փորը մըտավ,  
 Եվ նա գետին փըռվեց թընդամաք. վագեց իսկույն Այաքսը քաջ  
 Կողոպտելու գեճքերը պերճ, մինչ տրրոյանք նըրա վըրա  
 Տեղում էին ամեն կողմից սուր տեզերի տեղատարափ,
- 620 Եվ որոնցից շատերը սուր ցըցվում էին ասպարի մեջ:  
 Նա դիակի վըրա չոքած քաշեց հանեց պըղինձ-աշտեն,  
 Բաց անկարող ելալ պոկել մյուս գեճքերը ուսերից.  
 Զի նետերի տարափն անդու նըրան շատ էր տագնապեցնում,  
 Վախենալով, որ մի գուցե տրրոյացիք բըռնեն իրեն,  
 Որոնք զինված նիզակներով նըրա վըրա գըրոնեցին  
 Եվ Այաքսին, թեև հուժկու ու հաղթանդամ հրակալապետ,  
 Հարածեցին, և թողնելով դիակը նա՝ ետ նահանջեց:
- Մըբցում էին սըրանք այսպես իրարու հետ մարտադաշտում:  
 Օրհասը բուն աստվածատիպ Սարպեդոնի դեմ գըրգըրեց
- 630 Հաղթամարմին Տլեպոլեմոս Հերակլյանին առաքինի.  
 Եվ իրարու երբ մոտեցան Արամազդի թոռն ու որդի՝,  
 Սարպեդոնին կանխելով նախ Տլեպոլեմն այսպես ասաց.  
 «Ո՛վ լիկեցոց պետ Սարպեդոն, ասա՛, արդյոք ի՞նչն ըստիպեց  
 Գալ քեզ այստեղ, որ եկել ես մարտի անվարժ և անտվոր:  
 Սուտ եմ ասում, թե որդին ես ասպարակիր Արամազդի,  
 Քանզի դու շա՛տ ալելի ցած ու նըսեմ ես այն մարդկանցից,  
 Որոնք հընում ամպրոպադեզ Չևսի զարմից էին սերել:  
 Բայց ի՞նչ մարդ էր, ասում եմք քաջ Հերակլեսի համար գորեղ,  
 Հերակլեսի, որ իմ հաչըն էր քաջախըրոխտ, առյուծասիրտ.
- 640 Որը իր հետ վեց նավ միայն ու փոքրաթիվ քաջերի խումբ  
 Լավմեդոնի նըժույզների համար երբեմն այստեղ եկավ,  
 Քանդեց Իլիոնն ու փողոցներն անաչացրեց բոլորովին:  
 Իսկ դու վախկոտ՝ քո մարդկանցով կորչես պիտի այս կըռվի մեջ.  
 Զո՛ւր Լիկիայից եկար այստեղ սատարելու տըրրոյացոց:  
 Ինչ էլ լինի զորությունըդ՝ պիտի ընկնես իմ նիզակից  
 Ու պարտըված անցնես գընաս դու դըժոխքի դարբասներից»:

Եվ լիկեցոց պետ Սարպեղոնն այսպես նրան պատասխանեց.  
«Տլեպոլեմե՛, ճիշտ է որ նա քանդեց Իլիոն քաղաքը սուրբ  
Ազնվաշուք Լավմեղոնի խենթ ու խելստ վարքի համար,  
650 Որ դժընդակ լուսանքներով բարերարին իր նախառեց,  
Եվ չըտըվեց նրժույզներին, որոնց համար եկել էր նա:  
Բայց ես ահա ասում եմ քեզ, որ մահվան սև օրհասը ժանտ  
Ինձնի՛ց է որ քեզ պիտի գա, իմ գեղարդո՛ւլ ընկնես պիտի,  
Փառքն ինձ տալով և քո հոգին՝ ձիահրմուտ Պղղոտոնին»:

Սարպեղոնը այսպես ասաց, Տլեպոլեմը բարձրացրեց  
Հուժկու մըկունդն իր հացեճու, և զույգ տեգերն անմիջապես  
Նըրանց ձեռքից իրար վըրա սըլացան սուր բուռն թափով:  
Սարպեղոնը զարկեց ուղիղ ախոյանի պարանոցին,  
Եվ ցավաբեր սըլաքն անցավ ու դուրս եկավ մյուս կողմից,  
660 Եվ մութ գիշերն անդընդային փակեց նրա աչքերն ընդմիշտ:  
Տլեպոլեմի նետը դիպավ Սարպեղոնի ձախ ազդրոսկրին,  
Բայց Արամազդ հայրը որդուց հեռու վանեց մահն անողոք:

Աստվածատիպ Սարպեղոնի զենքերները քաջազուն  
Հանում էին նրան կրովից, մինչ չարաչար տանջվում էր նա,  
Իր ետևից քարշ տալով սուր հացեճու տեզն երկայնաստվեր,  
Որովհետև ընկերներից և ոչ մեկը խելք չէր արել  
Աշտեն հանել նրա ազդրից, որ կառք նըստել կարողանա.  
Այնքա՛ն նրանք ճեպում էին նրան ընդփույթ ազատելու:  
Իսկ մյուս կողմից քաջաըրունք աքալեցիք պատերազմից

670 Հանում էին Տլեպոլեմին. տեսավ նրան արիասիրտ  
Ռդիսևը և ճանաչեց, ու բոց կըտրեց նրա հոգին,  
Եվ ինքն իր մեջ վարանամիտ՝ դըժվարանում էր որոշել՝  
Որոտընդոստ Արամազդի շըքեղ որդո՛ւն հետապընդեր,  
Թե՛ լիկեցոց շատ-շատերի հոգին առնեք վըրիժավառ:  
Ծակատագրի կողմից, սակայն Ռդիսևսին չէր վիճակված  
Սուր պըղինձովն իր ըսպանել Արազամդի արի որդուն.  
Եվ Աթենասն այն ժամանակ դեպ լիկեցիք ուղղեց նրան:  
Նա ըսպանեց Կիրասոսին, Քրոմիոսին, Ալաստորին,  
Ալկադրոսին ու Հալիոսին, Նոյեմոնին, Պրիտանիսին,

680 Եվ շատ ուրիշ լիկիացոց մահ կըքերեր Ռդիսը քաջ,  
Եթե նրան չընդկատեր կորդակաճոճ Հեկտորն ահեղ,  
Որ խոյացավ դեպ ախոյանն իր հըրաշեկ զեճուզարդով,  
Վախ ազդելով դանաչեցոց, և Սարպեղոնն՝ Ջևսի որդին  
Նըրան ի տես՝ ուրախացած ձայն արձակեց աղյողորմ.

«Ո՛ւլ Պրիամյան, մի՛ թողնիր, որ դառնամ ես որս աքալեցոց,  
Օգնիր ինձ արդ, իսկ թող հետո ընկնեմ մեռնեմ ձեր քաղաքում,

Քանզի, գիտեմ, չէ փնճակիւմ ինձ հայրենիք վերադառնալ,  
Ուրսխացնել սիրուն կրնոջս ու սիրասուն իմ մանկիկին»:

Այսպէս ասաց, բայց Հեկտորը կորդակաճոճ ձայն չը հանեց,  
690 Այլ սրլացավ փայլակնացայտ հալածելու աքայեցոց  
Եվ նըրանցից շատ-շատերին ըսպանելու տենչով վառված:  
Մինչ ընկերները քաջազուն՝ աստվածատիպ Սարպեդոնին  
Վահանադրոշ Արամազդի չըքնաղ կաղնու տակը դըրին,  
Եվ Պելասգոնը կորովի՝ զենքերը սիրաւընունդ  
Հացի նիզակը սայրասուր՝ նըրա ազդրից քաշեց հանեց.  
Սարպեդոնի ուչքը գընաց, և աչքերը մեզը պատեց,  
Բայց քիչ հետո ուշքի բերեց հյուսիսային սյուքը նըրան:

Արգիացիք բուն Արեսից ու Հեկտորից հպածվելով՝  
2 Էին փախչում ոչ դեպի սև նավատորմը խոնապահար,  
700 Եվ ոչ էլ դեմ էին դընում, սակայն հետո, երբ իմացան,  
Թե Արեսն է տըրոյանց հետ՝ տեղի տալով նահանջեցին:  
Ո՛ւմ առաջինն ու վերջինն ո՛ւմ մատնեց մահի Հեկտորը քաջ՝  
Պրիամոսի պայծառ որդին պըղընձի բուն Արեսի հետ:  
Նսխ՝ Տլոթրասին աստվածատիպ և ձիավարժ Ռեստեսին,  
Տրեսքոսին՝ քաջամարտիկ էտոյացուն, Ինոմալին  
Եվ Ինոպյան Հելենոսին, Ռեսքոսին գեղականար,  
Նա, որ Հիլե էր քընակվում՝ հարըստության միշտ հետամուտ,  
Որ գըտընվում է Կեփիսիս ծովակի մոտ, և նըրա հետ  
Բընակվում էր բեովտացի ժողովուրդը մեծախարթաւ:

710 Իսկ երբ Հերան՝ լուսածըղի աստվածուհին տեսավ աճել  
Պատերազմում այդ սուկայի ջարդը քազում արգիացոց,  
Իսկույն ևեթ այս սըրաթն խոսքերն ուղղեց Աթենասին.  
«Ավա՛ղ, ո՛վ դու Ասպարակիթ Արամազդի դուստր անվըկանդ,  
Այն խոստովը, որ ես և դու տըվինք Ատրիդ Մենելալին,  
Թե նա պիտի ետ չըդառնար չըկործանած Իլիոնը սուրբ,  
Չո՛ւր էր ուրեմն, եթե թողնենք, որ Արեսը արյունառուշտ  
Ծարունակի դեռ մոլեգնել, եկ, մենք էլ մեր ուժը փորձենք»:

Այսպէս ասաց, և Աթենասը համամիտ եղավ նըրան.  
Հերան՝ դուստրը մեծ Զրվանի, ալագագույն աստվածուհին  
720 Ելավ գընաց, որ պատրաստի երիվարները ոսկեսար:  
Հեքեն կառքի չորս բոլորը անցրեց երկաթ առեղի մեջ  
Ութկապանի կոր անիվներ, որոնց հեցերն էին ոսկի  
Եվ վերևից շորջանակի պըղընձաձուլ կամարներով,



Ճարտարապետ և պնդակոտ զողված իրար անքակտելի,  
Հրրաշալիք մի հոյակապ և տեսարժան գործ հիասքանչ,  
Ականոցներն արծաթակոտ շուրջանակի, բոլորաշեն,  
Գահույքն ոսկի ամբողջապես և արծաթյա լարով կախված,  
Գեղազարդված շուրջը երկու կիսաբուր գոտիներով,  
Եվ ճրրանցից ձրգվում էր կոկ երկար քեղին արծաթեղեն,  
730 Որի ծայրին կապեց Հեքեն լուծն ոսկեձուլ և գեղեցիկ,  
Անցկացնելով սամոտեններն ու սամիները ոսկեղեն:  
Եվ ինքն Հեքան՝ հորդորամիտ պատերազմի և խազմերի՝  
Իր իսկ ձեռքով լրծեց առույգ երիվարներն օդասարիկ:

Իսկ Աթենաս Պալլասը՝ դուստրն ասպարակիր Արամազդի  
Շըղարշանորք շրքեղ խրվան՝ գործը ճարտար իր մատների,  
Հոսեցնելով գեղեցկիրան հասակն ի վար, հոր հատակին,  
Ու հագնելով վարապանակն ամպրոպային Արամազդի  
Զինավառվում էր վերից վար՝ ուզմի համար արյունահեղ:  
Զրգեց ասպարն իր ուսերին փողփողեմեջ, ծուպազարդար,

740 Որ պատում է շուրջանակի Սարասին ահեղ ամեն կուրմից.  
Այնտեղ է Ռիս, այնտեղ Կորովն ու Արշավանքը սարսըռուտ,  
Այնտեղ է և Գորգովնական գրլուխը ժանտ հուշկապարկի՝  
Վահանադորշ Արամազդի խոլ ճիվաղի սոսկատեսիլ:  
Դըրեց գրլխին բազմախորան ոսկյա կորդակ քառավերջյան,  
Որը հարյուր քաղաքների զորք կառներ իր հովանու տակ.  
Ցատկեց ապա ու բարձրացավ բոցաճաճանչ կառքի վըրա,  
Առավ ճիզակը հաստաբեստ, որով գրնդեր է կործանում  
Արիասիրտ դյուցազների, երբ ճրրանց դեմ հույժ բարկանա  
Ահեղազոր դուստրը իր հոր՝ ամպրոպադեզ Արամազդի:

750 Հեքան շուտ-շուտ ու շարունակ մըտրակում էր ճրծույզներին,  
Ու բացվեցին ճրըրնչալով երկնից դրոներն իրենք-իրենց,  
Որոնց ժամերն են պահապան, զի ճրրանց է պաշտոն տրրված  
Մեծ Երկինքն ու Ոլիմպոսը բանալ փակել խիտ ամպերով:  
Նըծույզներին մըտրակելով ելան ճրրանք այդ դրոներից  
Եվ Դիոսին գրտան ճրստած Բազմասարյան Ոլիմպոսի  
Ամենաբարձր կատարին՝ աստվածներից առանձնացած:  
Կանգնեցնելով ձիերն այնտեղ՝ Հեքան դիմեց Արամազդին.

«Հա՛յր Արամազդ, չե՛ս գալրանում Արեսի այս եղեռնի դեմ,  
Քանի՛-քանի՛ քաջակորով աքալեցի դյուցազների

760 Կլանքից զըրկեց պատերազմում, ինձ սաստիկ վիշտ պատճառեցով,  
Իսկ Կիպրուհին ու Ապոլլոնն ուրախանում են վալրաբար,  
Քանզի ճրրանք դրրդապատճառ եղան այս խոլ մոլեգնություն,  
Որը, արդեն ոչ մի օրենք և իրավունք չի ճանաչում:

Հայր Արամազդ, կրքարկանս՝ս դու ինձ վերա, ինքքս եթե  
Հարվածելով այդ Արեսի՛ն՝ հեռու վանեմ պատերազմից»:

Եվ Արամազդն ամայրոպադեզ Գրբան այսպես պատասխանեց.  
«Գրբան՝ գըրգո՛իր Արեսի դեմ ավարտու Աթենասին,  
Սովոր է Ըս Գրբան տանջող դատըն ցավեր պատճառելու»:

- Այսպես ասաց, չըհասպադեց լուսածրդի աստվածուհին,  
770 Մըտրակ զարկեց Գրծույգներին, որոնք թրուան թեթևընթաց  
Աստեղագարդ բիլ երկընթից երկիր տանող լուսե ճամիով:  
Եվ որքան տեղ, որ կըտրում է մարդու աչքը դիտանցից,  
Որ նստում է լուսաթաղանթ օդի միջով դեպի լուրթ ծով,  
Այնքան ճամփա էին կըտրում քառատըրոսի մի ոստյունով  
Նըծույգները՝ երկնաքընակ լուսածրդի աստվածուհյաց:  
Իսկ Տըրոյս երբ որ հասան, ուր Ալամանդր ու Սիմոյիս  
Երկու գետերն առատաջուր խառնըվում են իրարու հետ,  
Արգո Հերա աստվածուհին կանգնեցրեց իր ձիերն այնտեղ,  
Արձակելով Գրբանց կառքից՝ սրտեց թանձր մառախուղով,  
780 Եվ Սիմոյիսը բուցըրեց Գրբանց համար կեր աստվածյան:  
Գրնում էին Գրբանք ինչպես թըրթըռացող աղավնիներ՝  
Հույժ անհամբեր աստարելու արգիացի կըտրիճներին:  
Եվ երբ հասան Գրբանք այնտեղ, ուր բազմամբոխ կանգնած էին  
Չիսմարգիկ Դիոմեդի շուրջը քաջեր կորովասիրտ,  
Ջերդ գիշատիչ գոռ առյուծներ կամ վարազներ ամեհագույն,  
Կանգնեց Հերան Գրմանվելով պրղընձաձայն Ստեղծորին,  
Որ գոռում էր այնքան ուժգին, որքան հիսուն մարդ միատեղ,  
Ու բազմամարդ ամբոխի մեջ այսպես գոչեց անեղանայն.  
«Ամո՛թ, ամո՛թ ձեզ, վատասիրտ ու վեհերոտ արգիացիք,  
790 Երբ Աքիլեսն աստվածագարմ երևում էր պատերազմում,  
Տըրոյացիք մինչև անգամ չէին ելնում դարբասներից,  
Նըրա հուժկու հաղթ Գիզակից հիսագարհուր և անաբեկ.  
Այնինչ հիմա քաղաքից դուրս, ձեր նավերի մոտ են կըուվում»:

- Այսպես ասաց, բոցավառեց բոլորի մեջ ուզմի ոգին,  
Իսկ Աթենաս աստվածուհին վազեց դեպի Տիդյանը շաջ,  
Թուգավորին գըտավ այնտեղ, իր ձիերի ու կառքի մոտ՝  
Պանդարոսի նետով բացված իր խոր վերքը դարմանելիս:  
Ծատ էր Գեղում Գրբան քըրտիճքն իր ասպարի լայն փոկի տակ.  
Հոգնել էին Գրբա ձեռքերն, ու չափազանց տանջվում էր Ըս  
800 Ամեն անգամ, երբ սըրբում էր փոկի տակից արյունը թուխ:  
Մոտենալով Գրբա կառքին աստվածուհին այսպես ասաց.

«Տիդեսն, իրոք, ծընեց որդի, որ իրեն քիչ է նրմանելում,  
Փոքր էր մարմնով Տիդեսը, բայց մարտիկ էր նա քաջակորով,  
Ու թեպեսն էս Տիդեսին՝ իր մուրցքին միշտ անձնատուր՝  
Թույլ չըտրվի մարտընչելու, երբ մի անգամ նա միայնակ  
Պատգամավոր եկավ Թեբե կաղմեացոց մեջ քազամասող.  
Պատվեր տրվի էս Տիդեսին ուրախանալ խորախնամքում,  
Սակայն դարձյալ, ինչպես որ միշտ, մրդված ոգուց իր մարտագող,  
Մըրցման կոչեց երիտասարդ կաղմեացոց, և բոլորին  
810 Հաջողությամբ հաղթում էր նա, զի էս օգնում էի նրբան:  
Այժմ էլ անա քեզ մոտ եմ էս, քեզ օգնական և հովանի  
Եվ ասում եմ, որ հոժարես մարտընչելու տրրոյանց դեմ:  
Բայց քեզ, կարծես, տիրել է մի հոգնատաժան հոգնածություն  
Կամ թե երկյուղ մի անարի իր ճանկերի մեջ առավ քեզ,  
Եվ այլևս զավակը չես դու Ինևսյան քաջ Տիդեսի»:

Դիոմեդեսն արիասիրտ նրբան այսպես պատասխանեց.  
«Ծանաչում եմ քեզ, դուստրըդ մեծ ասպարակիի Արամազդի,  
Որի համար կասեմ սիրով, առանց ոչինչ թաքցրնելու:  
Ո՛չ հոգնությունն է տիրել ինձ, ո՛չ էլ երկյուղը անարի,  
820 Այլ այն, որ էս հիշում եմ դեռ, պատվերներդ, որ ինձ տըվիր՝  
Արգելելով ինձ կըռվելու աստվածների հետ երջանիկ,  
Միայն Աստղիկ աստվածուհին՝ դուստրը անեղ Արամազդի,  
Թե գա, ասիր, հետը կըռվեմ ու խոցեմ իմ սուր պղղնձով:  
Այդ պատճառով, անավասիկ, ետ քաշվեցի ասպարեզից  
Եվ հըրաման տըվի բոլոր աքայեցոց նահանջելու,  
Քանզի գիտեմ, որ Արեսն է տիրում հիմա պատերազմին»:

Եվ Աթենաս աստվածուհին այսպես խոսեց կըրկին անգամ.  
«Դիոմեդես Տիդյանըդ քաջ, դու իմ սրբոտի հույժ սիրելին,  
Մի՛ վախենար ո՛չ Արեսից, և ո՛չ էլ մյուս անմահներից,  
830 Քանի որ դու ինձ պես զորեղ պաշտույան ունես ու զորավիգ:  
Քըշիր շուտով միաարմբակ ձիերըդ դու դեպի Արես  
Ու գա՛րկ նրբան, մի՛ ակնածիր մահկանացու մարդկանց համար  
Բուռն ու մոլի, արյունատուշտ այդ աստըծուց փոփոխամիտ,  
Որը դեռ նոր խոստացավ ինձ և Հերային պատերազմել  
Տըրոյանց դեմ և օժանդակ, սատար լինել աքայեցոց,  
Իսկ արդ, խոստումն իր մոռացած՝ տըրոյացոց զըլուխն անցավ»:

Ասաց ու ցած քաշեց կառքից Աթենելու կստավարին  
Ու նրստեց ինքը եռանդուն աստվածուհին Տիդյանի մոտ,  
Եվ ճըրընչաց կաղնի սըռնին իր ծանրագին բեռան ներքո,

0 Ձի տանում էր սարսափեղի աստվածուհուն և դյուցազնին:  
Երասաններն ու մըտրակը աստվածուհին իր ձեռքն առավ  
Ու դեպ Արեսն ուղղեց իսկույն նըծույզները միասըմբակ,  
Ծիշտ այն պահին, երբ որ Արեսը՝ մարդակեր արյունադբուն  
Ըսպանում էր սուկավիթխար Պերիփասին դյուցազնական՝  
Էտոլացոց քաջակորով Ոքեայաի շըքեղ որդուն:  
Աթենասը իսկույն ևեթ գըլխին դըրեց իր հետն առած  
Դժոխքի կորդակն աներևույթ, որ չերևա բուն Արեսին:

Արյունառուշտ Արեսը հենց տեսավ դյուցազըն Տիդանին,  
Թողեց իսկույն մեծավիթխար Պերիփասին գետնատարած,  
0 Որին նոր էր ըսպանել նա և աչքերը պատել մութով  
Ու շեշտակի դիմեց դեպի Դիոմեդեսը ձիավարծ:  
Երբ դեմ առ դեմ ելան իրար, Արեսը նախ տեզն արձակեց  
Կառքի լուծին, սանձերից վեր, որ դյուցազնի հոգին առներ,  
Բայց Աթենաս աստվածուհին տեզը ձեռքովն իր բըռնելով՝  
Կառքից հեռու շըպըրտեց այն, և սըլաքը անցավ իզուր:  
Երկըրորը տեզն իր նետեց Դիոմեդեսն անեղագոռ,  
Եվ Աթենաս աստվածուհին վարսեց սըլաքն այն կողքի մեջ,  
Որ որ կամարն է պաշտպանում, և այնտեղից խորը խոցեց,  
Եվ ճեղքելով մորթը չըքնաղ՝ քաշեց աշտեն արագ թափով:  
Յ0 Պրղընձի Արեսն այն ժամանակ գոռաց այնպե՛ս անագնաձայն,  
Որ ասես թե ինը հազար կամ տաս հազար մարդ միասին  
Գոռացին այդ ուղմարաշտում, արիսական գուպարի մեջ:  
Սարսափն առավ աքայեցոց և տըրոյանց ջոկատներից  
Մարտի անհագ բուն Արեսի որոտաձայն այդ գոռոցից:

Ինչպես որ մեզն է երևում սև ամպերի մըթին ծոցից,  
Երբ որ փըշե հանկարծահաս սաստիկ խորշակը խըստաշունչ,  
Արդպես Տիդան Դիոմեդեսին պըղընձի Արեսը երևաց,  
Երբ ամպերի հետ խառնըված ելնում էր նա երկինքն ի վեր:  
Հասավ իսկույն նա Ոլիմպոս՝ գահույքն անմահ աստվածների,  
70 Գընաց նըստեց Արամազդի մոտ տրոտնագին, մըռայլադեմ  
Եվ ցույց տըվեց արյունն անմահ, որ բըխում էր իր խոր վերքից,  
Եվ խոր հոգոց արձակելով՝ այս սըրսաթն խոսքերն ասաց.  
«Հա՛յր Արամազդ, չե՛ս գայրանում, տեսնելով այս ոճիրը ժանտ.  
Աստվածներըս ամեն անգամ կըրում ենք խոր ցավեր սաստիկ  
Մըրցակցության երեսից մեր, մարդկանց պաշտոն ըտտանձճելով:  
Դո՛ւ ես պատճառն այս մեր բոլոր կըրիվների ու վեճերի,  
Ձի ծընեցիր եղեռնավոր ու կարճամիտ այդ աղջըկան,  
Որ շարունակ իր մըտքի մեջ դավ ու ոճիր է որոճում:

Հընազանդ ենք բոլորըս քեզ, աստվածներըս ոյիմպական,  
880 Սակայն նրան չես զըսպում դու ո՛չ խոսքերով, ո՛չ էլ գործով,  
Այլ դըրդում ես մինչև անգամ, դո՛ւ ծընար այդ չար աղջրկան,  
Որը դեռ նո՛ր դըրդեց դաժան Դիոմեդես Տիդյանին քաջ  
Անմահական աստվածների դեմ մոլեգին մարտընչելու:  
Նախ և առաջ նա Աստղիկի խոցեց դաստակը փափկամորթ,  
Ապա մոլի, կատաղաբար գըրոն գործեց նա ինձ վըրա,  
Բայց արրավազ սըրունքներըս կարողացան ինձ ազատել,  
Ապա թե ոչ ես ցավերով երկար պիտի տատսպեի  
Դիակների գարշ ու կեղտոտ կույտի վըրա և կամ թե ողջ  
Պըղինձների հարվածի տակ նըվաղեի ուշաթափված»:

890 Եվ Արամազդն ամպրոպադեզ խեթ նայելով նրան՝ ասաց.  
«Մի՛ դու այդպես, փոփոխամիտ, զուր քըրթմընջա նըստած ինձ մոտ.  
Ոյիմպական աստվածներից ամենից շատ քեզ եմ ատում,  
Քանզի սիրում ես շարունակ պատերազմներ, կըռիվ ու վեճ:  
Դու Հեթայի անագորույն, անզըսպելի ոգին ունես,  
Մորըդ, որին հագիվ եմ ես նըվաճում խիստ իմ խոսքերով.  
Քաշածներըդ բոլոր նըրա խորհուրդների արդյունքն են փուչ:  
Բայց և այնպես չեմ ուզում, որ ցավով երկար դու տատսպես,  
Քանզի որդիս ես հարսագատ, մայրըդ քեզ ինձ համար ծընեց՝  
900 Վաղուց ի վեր կըլիների դու անհատակ Դըժոխքի մեջ,  
Ավելի խոր քան որտեղ որ Ուրանյաններն են գըտընըվում»:

Այսպես ասաց և Պեռնին հըրամայեց բուժել նրան,  
Որ դընելով վերքի վըրա ցավահալած ըսպեղանի՝  
Ատողջացրեց, որովհետև մահկանացու չէր ծընված նա:  
Խախացն ինչպես որ տեղնուտեղ մակարդում է կաթն ըսպիտակ,  
Որ հեղուկ էր փոքր-ինչ առաջ, և մածուն է դարձընում այն,  
Այդպես նըրա ըսպեղանին Արեսի վերքն առողջացրեց:  
Որից հետո Հեթեն նըրան լավ լողացրեց ու հագցըրեց,  
Եվ Զըվանյան Արամազդի կողքը բազմեց նա պերճափառ:

910 Այնժամ Հերան արգիուհի և Աթենաս պահպանապետն  
Ամպրոպադեզ Արամազդի արքունիքը վերադարձան,  
Երբ հեռացրին բուն Արեսին մարտախոշոջ պատերազմից:

# Ե ր գ Վ ե ց ե ր ո ր ղ

## ՀԵԿՏՈՐԻ ԵՎ ԱՆԴՐՈՄԱՔԵՒ ՀԱԴԻՊՈՒՄՆ

Տըրոյացոց և աքայանց ամեհի մարտն ամաչացալ,  
Կրոիվն անեղ՝ դաշտում մերթ ալս, մերթ այն կողմն էր տեղափոխվում,  
Երբ Սիմոնիս և Քրսանթոս մեծ գետերի միջև նրբանք  
Նետում էին իրար վըրս սուր աշտեներ պղղնձակուտ:

- Տեղամուկան Այաքսը նախ՝ պատ ու պատվարն աքաչեցոց՝  
Ճեղքեց փաղանգ մի տրրուկան ու լույս ծագեց ընկերներին,  
Զարնելով այր մի քաջագեն թըրակացոց գումարտակից—  
Էխստրյան Ակամասին կորովասիրտ ու հաղթանդամ,  
Որին զարկեց ձիւմարի գըլխանոցի վես ցըցունքից
- 10 Ճակատի մեջ վարսելով տեզն ու խոր մըխեց ոսկորի մեջ,  
Եվ աչքերին Ակամասի իջալ գիշեր խախարակուտ:  
Դիմնեղեն անեղագոռ անշընչացրեց Աքսելոսին՝  
Տեթրապամին, որ ապրում էր վայելչակերտ Արիսքեում.  
Հարուստ էր նա և սիրեցի ամեն մարդու և հյուրընկալ,  
Որովհետև տունը նըրա գըտընվում էր ճամփի վըրս:  
Բայց նըրանցից ոչ ոք նըրան չօգնեց այդ ծանր անեղ ժամին,  
Ազատելու դաժան մահից. երկուսին էլ նա ըսպանեց—  
Նաև նըրա բարեկամին, որ ձիերն էր կառավարում—  
Կալեսիոսին, և երկուսով էլ անբաժան հողը մըտան:
- 20 Եվրիաուլը ըսպանեց Ուփելտիոսին ու Դրեսոսին,  
Նըրանց թողած՝ դեպի Պեդասն ու Հսպեոս վազեց ապա,  
Որունց ծընեց Աքարբարեն՝ հավերժահարսն աղբյուրների  
Բուկոլյունի համար անքիծ, որ զավակն էր Լավմեդոնի,  
Ծնունդով ավագ, բայց գողունի ծընված ուրիշ մորից ծածուկ,  
Որ երբ հովիվ էր Բուկոլյունն, իր հոտի մոտ մըտալ նըրան,



Հեկտոր և Ագորմասթե

Հավերժահարսն հրդանալով՝ երկվորյակներ ծընեց առույգ,  
Սակայն որդին Մեկեսդեսի կորովն գըջլեց նըրանց միջից  
նու կողոպտեց բըռնի կերպով նըրանց ուսից գենքերը պերճ:

- Քաջամարտիկ Պոլիպեդեսը ըսպանեց Աստալիոսին,  
30 Իսկ Ռդիսևը Պիտիդես Պերկոսանցին զարկեց այդտեղ  
Պըղընձակուտ իր աշտեով, Տևկոսը՝ քաջ Արեուսովնցին,  
Անտիլոքոսը՝ Նեստորյան փայլակնացայտ իր աշտեով  
Աքլերոսին փըռեց գետին, իսկ Ատրիդես արանց արքան  
Ելատոսին, որ ապրում էր Սաունիլոնիս գետի ափին  
Բարձրադիտակ Պեդասի մեջ. և Լեիոս քաջն ըսպանեց  
Փիլակոսին, երբ փախչում էր, Ելրիպիլը՝ Մելանթոնոսին:

Մեներալուն անեղագոո՝ Ադրեստոսին բըռնեց ողջ-ողջ,  
Որի ձիերն խըրտնել էին ու դաշտի մեջ փաթաթվելով  
Մոշիներին ու կոտորելով կառքի քեղին՝ փախել քաղաք

- 40 Ու խառնըվել այնտեղ զարհուր խունապահար խունն ամբոխին:  
Նա իր կառքից ցած գըլորվեց քերանքսիվալո, փոշեթաթավ,  
Մեներալուն անեղագոո վըրա հասավ հանկարծակի  
Երկայնաստվեր աշտեն ձեռքին, և Ադրեստոսն աղաչալից  
Մեներալի ծընկան փարած՝ այս խոսքերը ասաց նըրան.

«Խընայիր ինձ, Ատրեսոսյան, և ընդունիր փրրկանք անբավ,  
Մեծահարուստ հորըս տան մեջ պես-պես գանձեր կան պատվական  
Պըղինձ, ոսկի և բազմարվեստ երկաթ որքան որ կամենաս,  
Հայրըս հարուստ տա պիտի քեզ որպես փըրկանք արժանավոր,  
Եթե լլսի, որ ողջ եմ ես աքայեցոց նավերի մեջ»:

- 50 Այսպես ասաց Ադրեստոսը և դյուցազնի սիրտը շարժեց,  
Եվ այն է նա կամենում էր իր ծառային հանձնել նըրան,  
Որ աքայանց նավերն տանի, երբ Ազամենոնն այնտեղ վազեց  
Եվ սաստեղով Մեներալին այս խոսքերը ասաց նըրան.

«Մեներալոս, օ, թուլասիրտ, ինչո՞ւ ես դու դըրանց խըղճում,  
Մի՞թե արդյոք լավ վարվեցին տըրոյացիք քո հարկի տակ:  
Տըրովներից ոչ ոք պիտի չըփըրկըվի դաժան մահից,  
Ոչ իսկ մանուկն մոր արգանդում, մեր ձեռքերից փըրկում չունեն,  
Թող սատակեն ու ջընջըվեն Իլիոնով մեկ անթաղ, անհետ»:

Այսպես ասաց Ազամենոնն և իր եղբոր միտքը փոխեց,

- 60 Որը քաջազն Ադրեստոսին հեռու վանեց իր ծընկներից,  
Եվ թագավոր Ազամենոնն աշտեն նըրա կողքը խըրեց:  
Ադրեստոն ընկավ գետնաթափալ, և Ատրիդը նըրա կըրծքին  
Կոխելով ոտքն իր ուժգնապես՝ քաշեց հանեց տեզը հացի:



Նեստորը ծեր բարձրը ձայնով հորդորում էր արգիացոց.  
«Սիրելիներս, արիսական դյուցազուններ դանակեցի,  
Ձեզնից ոչ ոք թող ավարով տարված՝ կրովից ետ չըմընա  
Եվ դեպ անվերն ագաթաբար աշխատի շա՛տ ավար տանել.  
Այլ ջարդելու հետ լինենք մախ, հետո միայն հանգիստ կերպով  
Կրկողոպտենք դաշտում ընկած շեղջակույտը դիակների»:

- 70 Այսպես ասաց և արծարծեց բոլորի մեջ կրովի կորով:  
Տըրոյացիք այդտեղ արդեն՝ բուն Արեսի կողմից սիրված  
Աքայանցից հաղթահարված կըդառնային դեպի Իլիոն,  
Թե Հելենոս Պրիամյանը՝ մեծահըմուտ հավահըման  
Էնիասին և Հեկտորին մոտենալով այսպես չասեր.  
«Ո՛վ Էնիաս, և դու, Հեկտոր, քանզի տըրոյանց և լիկեցոց  
Հոգան ավելի ձե՛զ է տըրված, զի բարձր եք դուք ամեն բանում՝  
Թե՛ գործերում պատերազմի և թե՛ բոլոր խորհուրդներում,  
Կանգնեք այստեղ և արգելեք զինվորներին դըռների մոտ  
Եվ մի՛ թողնեք, որ վատաբար իրենց կանանց գիրկը փախչեն
- 80 Եվ այդպիսով մեր թըռնամյաց համար դառնանք ծաղր ու ծանակ:  
Իսկ երբ բոլոր գընդերը դուք կարողանաք ոգեկոչել,  
Մենք, թեպետև տաժանաբեկ, այստեղ կանգնած պիտի կըրվենք  
Դանայեցոց գընդերի դեմ, զի հարկն այդպես է պահանջում:  
Բայց դու, Հեկտոր, գընա քաղաք և մեր արգո մորը ասա,  
Որ նա տիկնանց Աթենասի մեհյանի մեջ հավաքի ողջ  
Եվ բացելով բանալիով ապարանքի դըռները սուրբ  
Գիսակագեղ Աթենասի ծընկան վըրա դընի նա իր  
Ամենամեծ ու գեղաշուք շըղարշներից այն, որ ունի  
Իր պավատում, և որը նա ամեն բանից շատ է սիրում.
- 90 Եվ թող ուխտի մեհյանի մեջ տասներկու հատ երինջ գոհել  
Մեկ տարեկան ու դեռ անծիճ, որ թերևս նա ողորմի  
Մեր քաղաքին ու տըրոյանց բոլոր կանանց, մանուկներին,  
Եվ հեռացնի Դիոմեդեսին՝ ճըվիրական Իլիոնից,  
Տիդեսի ծանտ, խուժդուժ որդուն, զարհուրելի և մոլեգին,  
Որ ամենեն անալորն է աքայանց մեջ իմ կարծիքով,  
Զի Աքիլլես արանց իշխանն անգամ այսբան ասրապի չազդեց,  
Որի համար ասում են, թե ծընունդ է վեհ աստվածուհու.  
Իսկ դա սաստիկ է մոլեգնում և հավասար չունի իրեն»:

- Այսպես ասաց, և Հեկտորը հընազանդեց եղբոր խոսքին  
100 Ու կարքից ցած ցատկեց իսկույն իր բովանդակ գեճ ու զարդով,  
Եվ ճոճելով սուր աշտեներ անցավ խըրոխտ գընդից ի գունդ  
Հորդորելով կըրվել անվախ, ու բորբոքեց սոսկալի մարտ:

Տըրոյացիք լսո դառնալով՝ ճակատեցին աքայանց դէմ,  
Եվ աքայանք ետ քաշվեցին կոտորածին դադար տալով,  
Մըռումէով, որ աստղագարդ Երկնից իջած աստված մի մեծ  
Օծանդակում է տըրոյանց, ուստի արագ նահանջեցին:

- Իսկ Հէկտորը բարձրը ձայնով հորդորում էր տըրոյացոց.  
«Արիասիրտ տըրոյացիք և դուք աստար զինակիցներ,  
Խիզա՛խ եղէք, սիրելիներս, հիշեցէք ձեր ուժն անվրկանդ,  
110 Մինչև գընամ նըվիրական Էլիոնը ես, որ տամ պատվեր  
Մեր ծերերին ու մեր տիկնանց, որ աղաչեն աստվածներից  
Եվ խոստանան, ուխտեն նըրանց ընտիր զոհեր մատուցանել»:

Կորդակաճոճ Հէկտորն այսպէս ասաց նըրանց ու հեռացավ,  
Եվ փոկը թոխ, որ կըմբավոր վահանն էր կուռ շըրջապատում՝  
Ընթանալիս բախվում էր իր պարանոցին ու ոտքերին:

Կլավկոսը՝ Հիպպոլոքի որդին և քաջ Դիոմեդէան  
Առաջ անցան երկու կողմից՝ իրարու դէմ գուպարելու.  
Երբ մոտեցան՝ առաջինը խոսեց Տիդյանն անեղագոռ.

- «Ի՞նչ էս դու, քա՛ջ, չեմ ճանաչում մահկանացու մարդկանց մեջ քեզ»  
120 Փառասպարզև պատերազմում ցարդ ոչ մի տեղ քեզ չըտեսա,  
Մինչդեռ դու քո հանդըզնությամբ անցար բոլոր մյուսներից,  
Որովհետև դեմ էլար դու երկայնաստվեր իմ նիզակին:  
Վա՛շ հարերին, որոնց որդիք իմ մոլուցքին են հանդիպում:  
Իսկ եթէ դու անմահներից մեկն էս իջած Ոլիմպոսից՝  
Ես երկնավոր աստվածների հետ մարտընչել չեմ կամենում,  
Զի Դրիասի արի որդին Լիկուրգոսը երկար չապրեց  
Քանզի կըռվում էր երկնավոր աստվածների դէմ երջանիկ:  
Մի ժամանակ մղեզնարար Նիսեոն սուրբ լեռան վըրս  
Նա հալածեց Դիոնիսի դաշակների երամը հոժ,  
130 Որոնք բոլորը միասին՝ տանջված եզի սուր խըթանով  
Եղեռնագործ Լիկուրգոսից՝ ցած գըցեցին ուտերը թալ:  
Դիոնիսը հիագարհոյր՝ ծովի հատակն իջավ խորունկ,  
Եվ Թէտիսը իր գիրկն առավ ահաբեկված Դիոնիսին,  
Որ դողում էր մարդու իրեն տըլված աստից սարսափահար:  
Հեշտակեցաղ դիք այնուհետ հույժ բարկացան նըրա վըրս  
Եվ կուրացրեց Չևսը նըրան, ու նա այլևս երկար չապրեց,  
Քանզի բոլոր աստվածներին դարձել էր նա խիստ ստելի:  
Այդ պատճառով էս չեմ կըռվում աստվածների դէմ երջանիկ,  
Իսկ եթէ դու մահկանացու մարդ էս իրոք ցորենակեր՝  
140 Մոտիկ արի, որ անհապաղ հասնես մահվան դարբասներին»:

- Հիպպոլոթի շրջեղ որդին նրան այսպես պատասխանեց.  
 «Ո՛վ Տիդեսի որդիդ արի, ինչո՞ւ ես ցեղն իմ հարցընում.  
 Ինչպես ծառի տերևներն են, ու անտառում ամեն գարնան  
 Բողբոջելով ուրիշ դալար տերևներ են ծընկում նորից:  
 Այդպես նաև ցեղն է մարդկանց, մին ծընկում է, մյուսը մեռնում:  
 Սակայն, եթե ուզում ես դու ծանոթանալ ազգատոհմիս,  
 Որի մասին շատերն արդեն քեզնից սուսջ տեղյակ են քաջ,—  
 Կա Էփիրե քաղաք մի շեն՝ Արգոսի մեկ խորշում ընկած,  
 Ուր Էոլլան Սիզիփոսն էր ապրում խելոք, բազմահրճար,  
 150 Որը ծընեց Գլավկոսին, Գլավկոսը՝ Բելլերփոնոսին.  
 Աստվածները պարգևեցին նրան չըքնաղ առուգություն:  
 Բայց Պրիտոսն իր սըրտի մեջ չարիք նյութեց այդ մարդու դեմ  
 Եվ իր երկրից դուրս վըտարեց, զի գորեղ էր արգոսյանց մեջ,  
 Որոնց իրեն հնազանդեցրեց Արամազդն իր գավազանով:  
 Պրիտոսի կինը սիրուն՝ Անտիան նրան սիրահարված՝  
 Ցանկանում էր գաղտագողի պատկել նրա հետ միասին,  
 Բայց անկարող եղավ մինչ վերջ չըքնաղ Անտիան համոզելու  
 Առաքինի և անբասիր Բելլերփոնոսին քաջախորհուրդ,  
 Ու զըրպարտիչ բանարկությամբ ասաց Անտիան թագավորին.  
 160 «Մեռի՛ր, Պրիտոս, կամ մեռցըրու դու անպատկառ Բելլերփոնոսին,  
 «Որ փորձ արավ ինձ՝ քո կընոջն հանդըզնաբար թըռնաբարել»:  
 Ի լուր կընոջ այս խոսքերին՝ թագավորը խիստ բարկացավ,  
 Բայց ըսպանել ըզգուշացավ, խըղճաց նրան իր սըրտի մեջ,  
 Եվ ուղարկեց նրան Լիկիա, ձեռքը տալով մահվան նըշան.  
 Պընակիտի վըրա ինչ-որ գըծեր դրոշմեց նա մահատիթ  
 Եվ կընքելով տըվավ նրան, որ այն հանձնի իր աներոջ:  
 Ծամփա ընկավ դեպի Լիկիա աստվածներից սուսջնորդված,  
 Եվ երբ արդեն առատահոս Քըսանթոսի ափը հասավ,  
 Թագավորը պատվեց նրան, հյուրընկալեց սիրահոժար:  
 170 Ինն օր նրան հյուրասիրեց, մորթեց ինը ընտիր արջատ,  
 Եվ տասներորդ վարդամատն Այզը երբ ծագեց երկրի վըրա,  
 Հարց տըվեց նա և կամեցավ տեսնել տախտակն այն մահատիթ  
 Որ բերում էր նա իրեն հետ Պրիտոսից՝ իր փեսայից:  
 Երբ ընդունեց իր փեսայի նիշերը այդ, Բելլերփոնոսին  
 Հըրամայեց, որ ըսպանի նախ Քիմեոնի անպարտելի.  
 Անմահական աստվածների գարմից էր նա և ո՛չ մարդկանց,—  
 Գըլուխն՝ առյուծ, պոչը՝ վիշապ, իրանը՝ այծ, որի բերնից  
 Ծանթեր էին ժայթքում անվերջ անազնացալտ ու բոցավառ:  
 Եվ ըսպանեց նրան՝ վըստահ՝ աստվածների նըշաններից:  
 180 Ապա կըովեց հըռչակավոր Սուլիմացոց դեմ անվանի,  
 Եվ ասում էր, թե ավելի անեղ կըոփվ նա չէր տեսել:

- Երրորդ անգամ նա այրասիրտ ամազոնաց ողջ կոտորեց,  
 Բայց ետ-դարձին դյուցազնի դեմ նյութեց ուրիշ մի նենգություն.  
 Ընտրեց Լիկիո կըտրիճներից մի գունդ, որոնք դարան մըտան,  
 Բայց նըրանցից և ոչ մեկը տուն չըդարձավ իր դարանից,  
 Քանզի անբիժ Բելլերփոնոն ամենքին էլ բընաչընջեց:  
 Երբ հասկացավ արքան, որ նա շատավիղ է մի աստըծու,  
 Պահեց իր մոտ այնուհետև և իր դուստրը տըվավ նըրան  
 Եվ նըրա հետ առհավասար կիսեց պատիվն արքայական:
- 190 Իսկ լիկեցիք նըրան հատուկ հողաքածին առանձնացրին  
 Բարեբեղուն և այգեպետ, որ մըշակի իրեն համար:  
 Բելլերփոնոնի կինը նըրան երեք չըքնաղ զավակ ծընեց՝  
 Իսանդրոսին, Հիպպոլոքին, ապա սիրուն Լավդամիին:  
 Ջևաը ըզգոն՝ Լավդամիին սիրահարված՝ մըտավ նըրան,  
 Եվ նա ծընեց աստվածատիպ Սարպեդոնին պըղընձավառ:  
 Բելլերփոնոնը երբ բոլոր աստվածների աչքիցն էլավ,  
 Ալեյական դաշտավայրում թափառում էր մեն ու մեհակ,  
 Կըծեղով սիրուն ու մարդկային հետքից հեռու փախչելով միշտ:  
 Նըրա որդի Իսանդրոսին զարկեց մարտում Արեսն անհազ,  
 200 Մուլիմացոց պատերազմում երբ որ կըռվում էր քաջաբար,  
 Իսկ Արտեմիսը ոսկեսանձ նետահարեց Լավդամիին:  
 Հիպպոլոքի որդին էմ ես, ասում էմ՝ ինձ նա՛ է ծընել,  
 Նա՛ ուղարկեց ինձ Տրոյա, պատվիրելով, որ քաջ կըռվեմ,  
 Գերազանցեմ ուրիշներից և չանպատվեմ ես վատաբար  
 Ազգատոհմը իմ հայրերի, որ անվանի մարդիկ էին  
 Լայնատարած Լիկիայի մեջ, ինչպես նաև Եփիրեում:  
 Արդ, այդ ցեղից և արյունից ծընվելու մեծ պատիվն ունեմ»:

- Այսպես ասաց, ուրախացավ Դիոմեդեսն անեղագոռ,  
 Եվ խըրելով նիզակն իր սուր՝ արգասավոր ծոցը հողի,
- 210 Այս սիրավիր խոսքերն ուղղեց ազգաց հովիվ Գյավկոսին.  
 «Օ՛, հիրավի հայրենական և վաղեմի հյուր ես դու ինձ.  
 Մի ժամանակ Ինևսը քաջ՝ հըրաշալի Բելլերփոնոնին  
 Հյուր ընդունեց իր պալատում և քըսան օր պահեց իր մոտ  
 Ու մեկ-մեկու տըրվին նըրանք հյուրասիրման շըքեղ ձոներ:  
 Ինևսը վեհ ընծա տըրվեց մի ծիրանի գոտի չըքնաղ,  
 Բելլերփոնոնը Ինևսին՝ ոսկի բաժակ մի կըրկատառաշտ,  
 Որը այստեղ գալիս թողի իմ հայրական ապարանքում:  
 Բայց Տիդեսին չեմ հիշում ես, մանուկ էի, երբ ինձ թողեց  
 Գընաց Թեբե, ուր ըսպանվեց արայեցոց բանակի մեջ:
- 220 Արդ, փիրելի քո հյուրն էմ ես Արգոսի մեջ, դու ինձ՝ Լիկիո,  
 Թե երբևէ այդ կողմերը հանկարծ գալու թախտ ունենամ:

Զգգուշանանք ուստի միմյանց նիզակներից մարտի բուլում,  
Ունեմ ես շատ տղրոյացի և սատարներ ըսպանելու,  
Ում էլ աստված իմ ձեռքը տա, կամ ես ինքըս հասնեմ բըռնեմ,  
Իսկ դու էլ շատ աքայեցի՝ ում ըսպանել որ կարեմաս:  
Բայց զենքերըս արի փոխենք, որ մյուսները հասկանան,  
Թե մենք միմյանց մի ժամանակ հյուր լինելու պատիվն ունենք»:

Այսպես ասաց, և երկուսն էլ կառքից իսկույն ցած ցատկեցին  
Եվ իրարու ձեռք սեղմելով՝ կընթեցին ուխտ եղբայրության:  
**230** Բայց Ջըրվանյան Չևը այդտեղ Գլավկոսի խելքը առավ,  
Որը փոխեց իր զենքերը Դիոմեդեսի զենքերի հետ.  
Տըվեց նրան իր ոսկեդեմքն, պըղընձեղեմն առավ նրա.  
Իրեմն հարյուր և ավելի եզան զընով, նրանր՝ իննի:

Իսկ Հեկտորը երբ որ հասավ Ալեական դարբասի մոտ,  
Տըրոյացի աղջիկ ու կին հավաքվեցին շուրջը նրա  
Ու հարցըրին որդոց, եղբոր, հարազատի մասին իրենց  
Եվ Հեկտորը հըրամայեց բոլոր նրանց զընալ կարգով  
Աղոթելու աստվածներին, զի ահեղ էր աղետը մեծ:

Իսկ երբ հասավ նա գեղապանն պալատը մեծ Պրիամոսի,  
**240** Որ կանգնած էր կամարախալ և կոփածո սըրահներով,  
(Որ սըրբատաշ քարից հիսուն ճոխ սեկյակներ կային շինված  
Իրարու կից՝ Պրիամոսի որդոց, նըրանց կանանց համար,  
Եվ դիմացն էլ, սըրահի մեջ տասներկու հատ ուրիշ սեկյակ,  
Պրիամոսի աղջիկների համար շինված կոկ քարերով,  
Որտեղ քընում էին բոլոր փեսաները Պրիամոսի.  
Պարկեշտասուն ու գեղանի իրենց կանանց հետ պատկելով):  
Այդտեղ որդու առաջն էլավ շնորհապարզև մայրը անուշ,  
Որ զընում էր չըքնադագեղ Լավոդիկե աղջըկա մոտ,  
Որն ամենից գեղեցիկն էր իր մյուս բոլոր դուստրերի մեջ.

**250** Մայրը որդու ձեռքը բըռնեց ու հարց արավ այս ասելով.  
«Որդյակ իմ քաջ, ինչո՞ւ ահեղ մարտը թողած՝ եկել ես տուն,  
Երևի թե աքայեցիք անագորույն մա՞րտ են մըղում  
Ուստանի շուրջ մեր բարեշեն, որի համար եկել ես դու,  
Որ քաղաքի աշտարակից ձեռքըդ պարզես Արամազդի՞ն:  
Բայց ըսպասիր, որ քեզ համար զընամ անուշ գինի բերեմ,  
Որ նախ ձոնես Արամազդ հորն և մյուս անմահ աստվածներին,  
Եվ ապա ինքըդ խըմելով անուշ գինին՝ քեզ կազդուրես,  
Քանզի գինին հոգնած մարդուն կըտա նոր ուժ ու գորություն,  
Դու էլ, որդիս, հոգնած ես շատ՝ ընկերներիդ համար կըուլած»:

260 Կորդակաճոճ Հեկտորը քաջ իր մորն ալապես պատասխանեց.

«Մայր մեծարո, մի՛ բերի ինձ ըզմայրական, անուշ գինի,  
Վախենում եմ ինձ թուլացնես և մոռանամ ուժ ու կորով.  
Իսկ անընթաց ձեռքով հրաշեկ գինի ձոնել Արամազդին  
Մեղքենում եմ, քանզի երբեք պետք չէ արյամբ ու փոշիով  
Թաթալուն ձեռքն աղոթք անի ամպակուտակ Արամազդին:  
Բայց դու, մայր իմ, քեզ հետ առած բոլոր արգո տիկիճներին,  
Գրնա մեհյանն անմիջապես ավարտու Աթենասի  
Եվ լավագույնն ապարանքում ունեցած քո շրդարշներից  
Դի՛ր վարսագեղ Աթենասի ծընկան վըրա և ուխտ արա

270 Զոհաբերել տասներկու հատ մեկ տարեկան երինջ անծին,  
Գուցե գըթա մեր քաղաքին, մանուկներին ու մեր կանանց,  
Եվ վերջապես հեռու վանե նըվիրական Էլիոնից  
Արհավիրքի հընարագետ այդ Տիդեսի վայրագ որդուն.  
Գրնա դու շուտ դեսի տաճարն ավարտու Աթենասի,  
Իսկ ես գընամ Ալեքսանդրին ետ կանչելու, թե ինձ անաս:  
Երանի թե պատեր գետինն ու Պարիսին տակովն աներ.  
Արամազդը սընեց նըրան իբրև պատիժ տըրոյացոց,  
Մեծահոգի Պրիամոսի և նըրա ողջ որդոց համար:  
Թե տեսնեի՞, ահ, ես նըրա գահավիժում դըծոխքն ի վար՝

280 Մոռանալի՞ պիտի բոլոր աղետներն այս դատն ու դըժնի»:

Ալապես ասաց, և Հեկաբեն ըշտապեց տուն և աղախնոց  
Հըրամայեց ոստանի ողջ տիկիճներին հավաքելու,  
Իսկ ինքն արագ գընաց դեսի ըշտեմարանն անուշարույր,  
Որ շրդարշներ կային պես-պես գործ՝ սիդոնցի ճարտար կանանց,  
Որ Սիդոնից իր հետ բերեց ինքը Պարիսն աստվածատիպ,  
Երբ հորամույն, հըրաշագեղ Հեղինեին առնանգած  
Ճեղքում էր նա ծովը ծավի՝ անդընդահերձ իր նավերով:  
Նըրանց միջից ամենագեղ շրդարշներից մեկն էր փայլուն,  
Որ Հեկաբեն առավ տարավ որպես ընծա Աթենասին:

290 Փողփողում էր նա գույնըզգույն՝ ճանանչավետ աստղի նըման,  
Եվ մյուս բոլոր արդուզարդի տակն էր շրդարշն այդ գունըվում:  
Եվ Հեկաբեն ճամա ելավ բամբիշների խունն երամով:

Եվ երբ ամրոց հասան նըրանք, շըքեղ տաճարն Աթենասի,  
Թեանովը գեղեցկադեմ՝ դուռը բացեց նըրանց առաջ,  
Կիսեայանը՝ կինը կըտրիճ ձիահըմուտ Անտեճորի,  
Որ քըրմուհին էր տըրոյանց կողմից Պալլաս Աթենասի:  
Նըրանք ձեռքերն Աթենասին կարկառեցին հեճեճալով,  
Եվ առնելով գեղեցկադեմ Թեանովը շրդարշը նուրբ՝

Դրեց ծավի աստվածուհու ծընկան վըրա որպես նըվեր  
300 Եվ աղոթեց աղերսագիւն դըստերը մեծն Արամագդի.  
«Վեհագո՛ւյնըդ աստվածուհւաց, քաղաքապահ ո՛վ Աթենաս,  
Փըշրի՛ր նիզակն անագորույն Դիոմէդէսի և թող որ նա  
Բերանքսիվայր ընկնի տապաստ Սկեական դըռան առաջ:  
Զոհ ենք բերում այստեղ, ահա՛, քո մեհյանում, տասներկու գեր  
Մեկ տարեկան անծիւն երինջ, որպէսզի դու, գուցե, գըթասս  
Մեր քաղաքին ու մեր կանանց և մեր մատղաշ մանուկներին»:

Այսպես ասաց աղոթելով, բայց չընդունեց աստվածուհին:  
Եվ մինչ նըրանք խընդորում էին դըստերը մեծն Արամագդի,  
Գընաց Հեկտորն շտապելով դէպ Պարիսի տունը շըքել,  
310 Որ շինել էր ինքն իր ձեռքով՝ այն ժամանակ արգասաբեր  
Տըրոյայում ապրող հըմուտ վարպետների հետ միասին,  
Պատրաստեցին նըրա համար սըրահ, սենյակ ամբողջ մեջ,  
Պրիամոսի և Հեկտորի պալատներին ճիշտ առընթեր:  
Այնտեղ մըտալ Արամագդի սիրելագույն Հեկտորը շաց,  
Զեռքն բըռնած ուներ նիզակ մի տասնըմեկ կանգունաչափ,  
Որի պըղինձ սըլաքը սուր փայլիլում էր ոսկի օղով:  
Գըտալ Հեկտորն Ալեքսանդրին նըստած այնտեղ, իր սենյակում  
Փայլուն գեներքն իր գըննելիս՝ ասպար, աղեղ, լանջապանակ.  
Իսկ Հեղինեն արգիուհի նածիշտների միջն նըստած  
320 Պատվերներ էր տալիս նըրանց զարմանազան ձեռագործի:  
Խեթ նայելով եղբոր վըրա՝ հանդիմանեց Հեկտորն այսպես.

«Թըշվատակա՛ն, այստեղ հանգիստ նըստած ես դու, մինչդէռ այնտեղ  
Կոտորվում են բազում մարդիկ քո պատճառով ծագած կըռվում:  
Ինքըդ պիտի կըշտամբէիր, թե տեսնէիր մեկ ուրիշի  
Հեռու քաշված արշունահեղ պատերազմից, վեր կաց շուտով,  
Քանի դեռ հուրն ամենակույ չի լափել մեր ոստանը մեծ»:

Սըրորն այսպես պատասխանեց աստվածասիւ Պարիսը պերճ.  
«Կըշտամբանքը տեղին է քո, Հեկտոր, և ո՛չ հանիրաւի,  
Սիրտըս քո դեմ բաց եմ անում, և դու ինձ լալ մըտիկ արա.  
330 Տըրոյացոց դեմ ունեցած զայրույթից չէ և կամ ոնից,  
Որ նըստել եմ ես իմ տան մեջ, այլ իմ ցալով եմ տապակվում:  
Կինըս հիմա ինձ համոզեց ողորջալոր իր խոսքերով,  
Հորդորեց ինձ պատերազմի, և լալն այդ է, թըվում է ինձ.  
Հաղթութունը հաճախ մեկից մյուսին է ժպտում կըռվում:  
Առայժըս դու ըսպասիր ինձ, մինչև հագնեմ գեներքըս ես,  
Կամ ուզում ես ինքըդ գընա, ես կըհասնեմ քո ետևից»:

Այսպես ասաց, կորդակածո՞՞ Հեկտորը լուռ մընաց սակայն,  
Իսկ Հեղինեն դիմեց նըրան քաղցր ու քընքույշ այս խոսքերով.

- «Տագր իմ, շանըս չարահընար, ինձ անբախտիս, երանի թե  
340 Այն օրը, որ մայրըս ծընեց, չար փոթորիկն առնեք տանեք  
Լեռան վըրս կամ բարձրագոյ խորքը ծովի, ալիքներում  
Եվ ինձ խեղդէր կոհակ մի մեծ, որ չըզայիք դուք այս ցավին:  
Բայց քանի որ աստվածները այսքան աղետ հասցըրին մեզ,  
Ունենայի՞՞ գոնե կըտրին մի ամուսին անկողնակից,  
Որ ըզգացվեք մարդկանց ծանըր նախատիներից և ամաչե՛ր,  
Բայց նա չունի հիմա կուռ միտք և երբեք էլ չի ունենա,  
Որի համար, հույս ունեմ ես, արդյունքը նա կըվայելի:  
Բայց դու, տագր իմ, արի առայժմ ու բազմոցի վըրս նըստիր,  
Քանզի աստիկ հոգնած է քո հոգին կըովի տաժանքներից՝  
350 Ի՛մ պատճառով, անամոթիս, և Պարիսի նըմանապես,  
Որոնց դըժխեմ բախտ վիճակեց Արամազդ հաչրն ամենհիմաստ,  
Որպեսզի մենք գալոց մարդկանց մոտ էլ դատնանք սոսկ ու երգ»:

Սաղվարտածո՞ Հեկտորը քաջ նըրան այսպես պատասխանեց.

- «Ինձ, Հեղինե, նըստելու մի՛ հըրավիրիր, որովհետև  
Սըլանում է սիրտըս այնտեղ, տանելու լույս և օգնություն  
Տըրույացոց, որոնք հիմա ինձ են մընում անձկակարոս:  
Բայց դու սըրան ըշտապեցրու, և ինքն էլ թող անապարի,  
Որ քանի դեռ քաղաքումն եմ հասնի շուտով իմ ետևից:  
Իսկ ես հիմա տուն եմ գընում՝ տեսնելու իմ գերդաստանին՝  
360 Սիրուն կընոջս ու մանկիկիս, քանզի հաստատ ես չըգիտեմ,  
Թե կըդառնա՞մ ես վերըստին ու կըտեսնե՞մ իմ սիրելիաց,  
Թե՞ աստվածներն աքայեցոց ձեռքով պիտի ինձ նըվանեն»:

Այսպես ասաց և հեռացավ կորդակածո՞ Հեկտորը մեծ,  
Եվ շուտափույթ հասավ նա իր ապարանքը բընակավետ:  
Բայց տանը չէր Անդրոմաքեն՝ լուսածըղի կինը նըրս,  
Այդ միջոցին նա իր մանկան և քողազարդ Ասթիշտի հետ  
Աշտարակի վըրս կանգնած՝ հեկեկում էր արտասովալից:  
Երբ Հեկտորը ապարանքում չըզըտավ իր կընոջն անքիծ,  
Ելավ տընից, կանգնեց շեմքում ու ծառայող կանանց ասաց.

- 370 «Ինձ մոտ եկեք, աղախիճներ՛ր, և ճըշմարիտն ասացեք ինձ  
Տընից որտե՞ղ է գընացել Անդրոմաքեն իմ ձյունաթև.  
Իր տպերի մե՞տ է արդյոք, կամ քողազարդ ներքի մո՞տ,  
Թե տաճարումն է Պալլասի, ուր և ուրիշ տըրրվուհիք  
Հաշտեցնում են ծանոաբարո և վարսագեղ աստվածուհուն»:



Եվ պատասխան տըվեց նրան ժըրագըլուխ տընտեսունին.  
«Քանի որ դու պահանջում ես, Հեկտոր, ես քեզ ճիշտը կասեմ.  
Ո՛չ տալերի մոտ է մեկնել, ո՛չ ներերի մոտ քողագարդ,  
Ո՛չ էլ մեհյանն Աթենասի, որտեղ ուրիշ տըրովունիք  
Ողորքում են ժանտաբարո ու վարսագեղ աստվածուհուն:  
380 Այլ նա գընաց դեպի բարձըր աշտարակը Իլիոնի,  
Լուր առնելով, որ աբայանք տըրոյացոց նեղում են խիստ.  
Այնտեղ վազեց նա խենթի պես իր դայակի և մանկան հետ»:

Այսպես ասաց տընօրեն կինն, ու Հեկտորը տընից թըռավ  
Եվ բըռնելով ճամփան՝ անցավ նույն բարեշեն փողոցներով,  
Եվ երբ հասավ նա հապըշտապ Ակեական դարբասներին,  
(Որտեղից նա դուրս պիտի գար դեպի կըովի դաշտը ուղիղ)  
Անդ ընդատաջ վազեց նրան մեծօժիտ կինն իր հարսազտո՝  
Չըքնաղագեղ Անդրոմաքեն— դուստըր մեծամձն Էտիոնի:  
Այն Էտիոնն, որ ապրում էր Իպոպլուկյան Թեթեի մեջ,  
390 Անտառախիտ ըստրոտում, թագավորը կիլիկեցոց:  
Մըրա աղջիկն էր՝ քաջագեն Հեկտորի կինը սիրելի,  
Որ ընդատաջ վազեց նրան իր քողագարդ նաժիշտի հետ,  
Որ բերում էր իր գըրկի մեջ քաջ Հեկտորի սիրուն մանկան,  
Դեռ անթոթով, մատղաջ մանկիկ, աստղի նըման ճաճանչափայլ:  
Հեկտորը իր սիրուն մանկանն Սկամանդրիկ էր անվանում,  
Իսկ ուրիշներն ապարանքում՝ կանչում էին Ոստանիշխան,  
Զի Հեկտորը ինքն էր միայն պաշտպանում մեծ ոստանն Իլիոն:  
Ժըպտաց Հեկտորը լըռելյալն՝ նայելով իր մանկան վըրա:  
Իր ամուսնու առջև կանգնած արտասպում էր Անդրոմաքեն,

400 Ապա բըռնեց նրա ձեռքից ու քացրությամբ այսպես ասաց.  
«Քաջությունըդ քեզ ի կորուստ է մատնելու, քաղցր ամուսին,  
Չես մեղքենում ոչ քո մանկան, և ոչ էլ ինձ տարաբախտիս,  
Որ քեզանից, ա՛հ, վաղաժամ պիտի այրի մընամ շուտով,  
Զի քո վըրա հարձակվելով՝ քեզ կըսպանեն աքալեցիք:  
Իսկ առանց քեզ՝ լավն այն է, որ հողը մըտնեմ, իմ սիրելիս,  
Քո մահից ետ, այլևրս ես ի՞նչ ըսփոփանք պիտ ունենամ,  
Այլ միայն ցավ ու հատաչանք, զի ես չունեմ ոչ հայր, ոչ մայր:  
Աքիլլեսը Պելիասձին ըսպանեց հորն իմ հարսազտ,  
Երբ բարձրադուր Թեթեն քանդեց՝ քաղաքը շեն կիլիկեցոց:

410 Բայց նա խըղճաց Էտիոնին, ըսպանելով՝ չըկողոպտեց,  
Այլ խարուկի վըրա այրեց նրան իր ճոխ գեն ու զարդով,  
Եվ շիրիմ էլ կանգնեց վըրան, տընկեցին շուրջը նըշտարիք  
Հավերժհարսները լեռնային՝ դուստրերը մեծն Արամազդի:  
Յոթ հարսազտ եղբայրներըս ապարանքում, մի օրվան մեջ

Գրծոխք իջան, զի ըստանեց Աքիլը քաջ բոլորին էլ  
Դանդաղաբայլ եզների մոտ և ըսպիտակ ոչխարների:  
Իսկ իմ մորը, որ իշխում էր Պլակիոնի ըստորոտում,  
Այստեղ բերեց իր բովանդակ ճոխ գանձերի հետ միասին,  
Հետո միայն ազատ թողեց առնելով մեծ փըրկանք անքավ:  
Եվ Արտեմիաը նետագրոս զարկեց նըրան հորըս տան մեջ:  
Հիմա, Հեկտոր, դու հայր ես ինձ և մեծարո մայր ինձ համար,  
Դու ինձ եղբայր ես հարազատ և ամուսին ծաղկափրթիթ:  
Գըթա՛ ուստի, սիրելիդ իմ, կաց ամբոցում, այստեղ, ինձ մոտ,  
Որ չըթողնես մանկանդդ որք և կընոջըդ՝ որբևայրի:  
Մոլաթուզի մոտ կանգնեցրու դու գորքը քո, զի այնտեղից  
Հեշտ է մըտնել քաղաքը մեր, պարիսպներն են դյուրամատույց:  
Երեք անգամ փորձ արեցին քաղաք մըտնել այդ ուղղությամբ  
Ջույգ Այաքսներն ու մեծամուն Իդոմենեսն, ապա երկու  
Ատրիդները և Տիդեսի որդին հըսկա, հաստաբազուկ:  
Հավանաբար՝ կամ մի հըմուտ գուշակ նըրանց ասել է այդ,  
Եվ կամ գուցե նըրանց միտքը մըղեց նըրանց դեպի այդ կողմ»:

Կորդակաճոճ Հեկտորը քաջ նըրան այսպես պատասխանեց.  
«Այդ բոլորի մասին և է՛ս եմ մըտածում, Անդրոմաքե՛,  
Բայց ամոթով պիտի մընամ տըրոյացի տըղամարդկանց  
Ու կանանց մոտ երկայնագգեստ, եթե երբեք մընամ այստեղ  
Եվ հետանամ փառապարզև պատերազմից վախկոտի պես:  
Սիրտըս էլ ինձ թույլ չի տալիս, սովորել եմ ես քաջ լինել  
Եվ մարտընչել տըրոյացի կըտրիճների գըլուխն անցած,  
Ի մեծ պարծանս իմ հայրերի փառաց անմահ և իմ անձից,  
Ջի քաջ գիտեմ, և հոգիս էլ վկայում է վաղուց արդեն՝  
Որ պիտի գա, որ կործանվի Իլիոնը նըվիրական,  
Եվ քաջատեգ Պրիամը իր ժողովըրդով պիտի կորչի:  
Բայց ինձ այնքան չեն ցավեցնում աղետները տըրոյացոց,  
Ոչ իսկ վիշտը Հեկաբեի և Պրիամոս թագավորի,  
Ինչպես և իմ եղբայրների, որոնք թեն արիասիրտ՝  
Ընկնելու են ոտխների ձեռքից շուտով փոշեթավալ,  
Որքան քո ցավն, Անդրոմաքե, երբ ոմըն քաջ աքայեցի  
Դեպի Արգոս գերի տանի քեզ՝ լալագին և անազատ:  
Այնտեղ կըտամ գործես պիտի ուրիշ հարուստ տիկնոջ համար,  
) Կամ ջուր կըրես դու Միսելիս և Հիպերե աղբյուրներից  
Դառըն սըրտով, անտանելի, ժանտ կարիքից հարկադըրված.  
Եվ տեսնելով մեկը քո դառն արտասուքներն՝ այսպես ասի.  
«Սա Հեկտորի կինն է, այն քաջ տըրոյացի դյուցազունի,  
Որ մարտընչում էր Իլիոնի շուրջը մըղվող պատերազմում»:

Այսպես կասեն, և դու սրբուհի կըկարոտես քո ամուսնուն,  
Որ կարող էր քեզ ազատել, փրշրել լուծը քո գերության.  
Բայց թող ծածկի սև հողը ինձ, սիրելիդ իմ Անդրոմաքե,  
Նախքան գերվելըդ տեսնեմ ես, և հառաչներդ լքեմ տխուր»:

460 Այսպես ասաց Հեկտորն ահեղ և ուզեց իր որդուն գրկել,  
Բայց մանկիկը ճիչ արձակեց և դայակի կրծքին կըպավ  
Ահաբեկված հոր գեներին և ձիագետ գարգամակից  
Եվ ցըցունքից, որ ճոճվում էր գըլխանոցի վըրս նըրս:  
Ժըպտաց հայրը սիրագորով, ժըպտաց և մայրը մեծարո:  
Հանեց այնժամ Հեկտորն ահեղ գըլխից կորդակն իր ահագին  
Փայակնացայտ ու բոցափայլ և այն դըրեց գետնի վըրս,  
Ապա գըրկեց սիրուն մանկանն ու ձեռքի մեջ օրորվելով՝  
Աղոթք արավ Արամազդին և մյուս բոլոր աստվածներին.

470 «Ո՛վ Արամազդ և դուք բոլոր անմահներըդ ոլիմպական,  
Արեք այնպես, որ իմ որդին դառնա ինձ պես փառքն իմ երկրի,  
Եվ ինձ նըման իր քաջությամբ տեր լինի մեծ Իլիոնին,  
Եվ նայելով նըրան ասեն՝ սա ավելի քաջ է հորից,  
Երբ որ կըովից դառնա հաղթող և արյունոտ ավար բերի,  
Ախոյանին իր ըսպանած, և մայրը թող ուրախանա»:

Այսպես ասաց ու մանկիկին հանձնեց կընոջն իր սիրելի,  
Որ առնելով երեխային՝ սեղմեց կրծքին իր բուրավետ  
Արտասվախառն ուրախությամբ. հայրը հուզվեց այդ պատկերից  
Ու փայփայեց ձեռքով նըրան, տըրվեց անունն ու այս ասաց.

480 «Նազելիդ իմ, թող ինձ համար շատ չըտըխրի սըրտիկը քո,  
Ծակատագրից անհըրաման՝ ոչ ոք դըծոխք չի դըրկի ինձ,  
Իսկ օրհասից, ես չեմ կարծում, որ կարենա մեկը փախչել,  
Ոչ վախկոտը, ոչ էլ արին, որ ծընվել է այս աշխարհում:  
Բայց տուն դարձիր դու, սիրելիս, և ըզբաղվիր քո գործերով,  
Իլիկ մանիր, գործիր ուստայն և աղախնոց տուր հըրաման՝  
Իրենց գործով ըզբաղվելու, կըովի հոգաը թող որ մընա  
Իլիոնում ծընված բոլոր տըղամարդկանց, մանավանդ ինձ»:

490 Այսպես ասաց Հեկտորն ահեղ և գըլխանոցն առավ գետնից,  
Իսկ սիրասուն կինը նորից դեպի պալատ վըրադարձավ  
Ծամփին շուտ-շուտ ետ նայելով և թափելով առատ արցունք:  
Անդրոմաքեն հասավ շուտով Հեկտորի տունը բարեշեն  
Եվ բազմաթիվ իր աղախնոց սիրտը շարժեց լաց ու կոծով:  
Ողբում էին բոլորն այնտեղ քաջ Հեկտորին դեռ կենդանի,  
Որովհետև հույս չունեին, թե նա կըովից ետ կըդառնա  
Ազատվելով աքայեցոց ձեռքից ու մեծ գորությունից:

Պարիսն ինքն էլ չըհապաղեց իր բարձրահարկ ապարանքում,  
 Եվ պղղընձյա, ճանանչափայլ իր գեները հագած բոլոր  
 Սըլանում էր քաջապրունք՝ Իլիոնի փողոցներով:  
 Ինչպես մի ձի ախոռի մեջ մըստրում կուշտ գարի կերած,  
 Կապակոտոր, քառատըրրոփ սըլանում է դաշտով արագ  
 Դեպի ծանոթ գետը վընհտ, ուր սովոր է լողանալու

500 Պերճաստորդ ու բարձրավիզ, բաշն ուտերին ալեծածան,  
 Իր հասակի վայելչության վըրա նագում է սիգապանձ,  
 Եվ սրրունքներն արագընթաց թըռցընում են, տանում նըրան  
 Դեպի ծանոթ մարգագետնի մեջ արածող ծիր զամբիլներն,—  
 Այդպես Պարիսը Պրիամյան Պերգամաչի բարձր ամրոցից  
 Ցոլում-գընում էր գինավառ, պաշտառափայլ ինչպես արև  
 Ու թեթևոտն առաջ թըռչում, ուրախ, հըպարտ ինքն իրենով:  
 Հասավ շուտով նա Հեկտորին այն ժամանակ, երբ այնտեղից,  
 Ուր խոսել էր իր կնոջ հետ՝ հեռանալու վըրա էր նա:  
 Առաջինը աստվածատիպ Պարիսն այսպես ասաց նըրան.

510 «Իսկապես որ ուշանալովս արգելք եղա ըշտապելուդ  
 Ծոտ դուրս չեկա, ինչպես որ դու ինձ հըրաման էիր տըվել»:  
 Սաղվարտաճոճ Հեկտորը մեծ եղբորն այսպես պատասխանեց.  
 «Արդարամիտ և ոչ մի մարդ չի կարող քո, սիրելիդ իմ,  
 Քաշություններդ պարսավել, քանզի քաջ ես դու իսկապես,  
 Բայց դու կամա ես ծուլանում ու չես ուզում պատերազմել:  
 Ցավում է իմ սիրտը սաստիկ, երբ քո մասին վատ եմ լըսում  
 Տըրոյացոց բերնից, որոնք տատապում են քո պատճառով:  
 Բայց գընանք այժմ, ուրիշ անգամ մենք կըհարթենք վեճերը մեր,  
 Թե շընորհի մեզ Արամազդն ի պատիվ մեծ աստվածների

520 Ձոնել բաժակ ուրախության հայրենական մեր հարկի տակ,  
 Երբ ամրաբարձ աքայեցոց հեռու վանենք Տըրոյայից»:

# Ե Ր Գ Յ Ն Յ Ե Ր Ն Ր Պ

## ՄԵՆԱՄԱՐՏ ՀԵԿՏՈՐԻ ԵՎ ԱՅԱՔՍԻ ՄԵՌԵԼԱԹԱՂ

Այսպես ասաց Հեկտորն ահեղ ու դուրս թըռավ դարբասներից,  
Եվ նրա հետ առաց սուրաց Ալեքսանդրոսն աստվածատիպ,  
Երկուսով էլ կորովասիրտ վառված խիզախ ոսպմի համար:  
Ինչպես աստված տա ցանկալի հաջողակ հով նավորդներին,  
Որոնք հոգնած են թիերով ճեղքելով ծովն անծայրածիր,  
Եվ անդամները տաժանքից ջարդըլվում են վաստակաբեկ,  
Տըրոյանք այդպես ուրախացան այդ երկուսի երևալով:

Ըսպանեցին այնտեղ՝ Պարիսն Արեթոս թագավորի  
Որդուն՝ արի Մենեսթրոսին, որ բընակվում էր Առնեում,  
10 Որին ծընեց Արեթոսի Փիլեմիդոս կինն աչագեղ.  
Եվ Հեկտորը իր աշետով խոցեց կոկորդն Էտիոնի  
Պըղընձակոտ սաղավարտի ցածի կողմից և ըզգետնեց:  
Իսկ Գլավկոսն՝ Հիպպոլոքի որդին, իշխանը լիկեցոց  
Դեքսիական Իփիևոսի ուսին զարկեց իր նիզակով  
Պատերազմի ահեղ պահին, երբ որ կառքն էր բարձրանում նա,  
Կառքից գետին գըլորվելով նա տեղնուտեղ շունչը փըչեց:

Եվ երբ տեսավ կապուտաչվի Աթենաս վեհ աստվածուհին,  
Որ արյունոտ պատերազմում կոտորվում են արգիացիք,  
Ոլիմպոսի գագաթներից սուրաց դեպի Իլիոնը սուրբ:  
20 Ապոլլոնը այդ տեսնելով՝ Պերգամայի բարձր ծայրից  
Առաջ վազեց, զի տըրոյանց հաղթությունն էր ցանկանում նա:  
Կաղնի ծառի մոտ հինավուրց հանդիպեցին նրանք իրար,  
Եվ նախ որդին Արամազդի՝ Ապոլլոնը խոսեց այսպես.  
«Ինչո՞ւ դարձյալ, դուստրըդ ահեղ՝ ամենագոր Արամազդի,

Ոլիմպոսից ցած ես իջել՝ հոգիդ ուազմի հըրով վառված.  
Դանայեցո՞ց ես ուզում տալ հաղթությունն այս պատերազմում,  
Զի տըրոյանց կորուստն երբեք սըրտին քո ցավ չի պատճառում:  
Սակայն եթե դու ինձ լըսես, որ անկասկած լավ կըլինի,  
Արի այսօր առժամապես դադարեցնենք կըրոիվը մենք,  
30 Հետո կըռվեն թող վերըստին, մինչև քանդվի Իլիոնը սուրբ,  
Քանի որ դու և այդ Հերան ամբողջ հոգով այդ եք ուզում»:

Եվ Աթենասն անմիջապես նըրան այսպես պատասխանեց.  
«Այդպես լինի թող, Հեռաձի՛գ, ես էլ ահա այդ խորհըրդով  
Ոլիմպոսից եկա դեպի տըրոյացիք և աքայանք,  
Բայց տեսնենք թե ինչպե՞ս պիտի դադարեցնես կըրոիվը դու»:

Եվ Ապոլլոնն՝ արքայորդին Արամազդի պատասխանեց.  
«Եկ գըրգըռենք ձիախըրոխտ այդ Հեկտորի ահեղ հոգին,  
Որ նա ոմըն աքայեցու մեհամարտի հըրավիրե,  
Այն ժամանակ պըղընձասրունք աքայեցիք բորբոքվելով  
40 Հեկտորի դեմ պիտի հանեն դյուցազնասիրտ մի ախոյան»:

Այսպես ասաց, և Աթենաս աստվածուհին համաձայնեց:  
Հելենոսը՝ Պրիամոսի սիրուն որդին ըզգաց հոգով  
Խորհուրդը այդ, որ աստվածներն ընդունեցին իրենց միջև,  
Եվ Հեկտորին մոտենալով՝ նըրան այսպես ասաց արագ.  
«Հեկտոր՛ր, հովի՛վ ժողովըրդի, Արամազդին հանճարակից,  
Պիտի լըսե՛ս դու ինձ արդյոք, որ քո եղբայրն եմ հարազատ:  
Դու նըստեցրու բոլոր այն մյուս տըրոյացոց և աքայանց,  
Եվ ձայն տալով՝ հըրավիրիր աքայեցոց քաջազույնին,  
Որ ամենի մեհամարտում քեզ ախոյան հանդիսանա,  
50 Զի օրհասըդ հեռու է դեռ ու չի հասել օրըդ մահվան.  
Աստվածներից մի այսպիսի շըշունջ հասավ իմ ականջին»:

Այսպես ասաց, և Հեկտորը լըսելով այդ՝ ուրախացավ.  
Սուաջ անցավ անմիջապես և միզակի կիսից բըռնած  
Հըրամայեց, և նըստեցին տըրոյացոց գընդերն ամեն.  
Ազամեմնոնն էլ նըստեցրեց պըղընձագգեստ աքայեցոց:  
Եվ Աթենաս աստվածուհին ու Ապոլլոնն արծաթաղեղ  
Ելան նըստան Արամազդ հոր կաղնի ծառի բարձըր ծալրին,  
Եվ այնտեղից, նըման երկու անգըղների, լի հըրճվանքով  
Դիտում էին իրարու մոտ խիտ նըստոտած գընդերը գոռ՝  
60 Ասպարներով, կորդակներով և տեգերով պլեծածան:  
Ինչպես ծովը, որ վետ ի վետ սարսըրում է հողմի շընչից  
Եվ ալիքներն ըսկըսում են մըթնել, այդպես մարտադաշտում

Աքայեցոց և տրրոյանց գընդերն էին նըստել կարգով:  
Հեկտորն այնժամ կանգնած երկու բանակների միջև՝ ասաց.

«Ինձ լըսեցեք, տրրոյացիք և աքայանք պղղընձագեն,  
Ասում եմ այն, ինչ որ սիրտս է թելադրում ինձ այս վեհ ժամին:  
Ջըրվանյան Ջևար բարձրագահ՝ երդումները մեր չընդունեց,  
Եվ չարիքներ է շարունակ նյութում երկու կողմերի մեջ,  
Մինչև որ դուք առնեք Տրոյան՝ ամրապարիսպ ոստանը մեր,

70 Եվ կամ պարտվեք ինքները ձեր նավերի մոտ ծովագընաց:  
Այդտեղ, ձեր մեջ նըստած են արդ ամենաքաջ աքայեցիք,  
Ով նըրանցից սիրտ է աճում ինձ ախոյան հանդիսանալ,  
Մենամարտել Հեկտորի դեմ, առաջ թող գա, ես եմ կանչում:  
Բայց ասում եմ, և թող ինքը Արամագդը վըկա լինի,  
Եթե նա ինձ սըլաքաշեշտ հարվածե սուր իր պըղինձով,  
Կողոպտելով՝ զենքերը իմ թող նավատորմն առնի տանի,  
Բայց մարմինըս հանձնի մերոնց, որպեսզի իմ մահից հետո  
Ինձ խարոյկի արժանացնեն տրրոյացիք՝ կին, տըղամարդ:  
Իսկ եթե ես ինքս ըսպանեմ, փառք պարգև է Ապոլլոնն ինձ,

80 Նըրա զենքերն ավարելով պիտի տանեն Իլիոնը սուրք,  
Կախեմ այնտեղ՝ կորովաձիգ Ապոլլոնի մեհյանի մեջ,  
Իսկ դիակը ետ դարձընեմ՝ տանեն նավերը գեղատախտ  
Որ վարսագեղ աքայեցիք պատշաճ կարգով թաղեն նըրան  
Եվ լայնասփյուռ Հելլենապոնտի ափի վրա կանգնեն շիրիմ,  
Որ մեզանից հետո ծընված որևէ մարդ այսպես ասի  
Կապույտ ծովի վըրա իր մեծ լաստանավով ճամփորդելիս.  
«Գերեզմանն է դա հինավուրց պատերազմում մեռած մարդու,  
Որը թեն քաջ էր, սակայն ընկավ ձեռքով մեծ Հեկտորի»:—  
Այսպես պիտի ասեն մարդիկ, և մընա փառքն իմ անկորուստ»:

90 Այսպես ասաց, ու մընացին բոլորը լուռ ու կարկամած.  
Հըրաժարվելն ամոթ էր խիստ, իսկ ընդունելն երկյուղալի:  
Սակայն ընդոստ ոտքի ելավ Մենելավոսն ահեղագոռ  
Ու նախատեց նըրանց սաստիկ, սրտի խորքից հառաչելով.

«Վա՛յ ինձ, վատե՛ր մեծաբերան, աքայուհիք, ո՛չ աքայանք,  
Ինչ մեծ ամոթ ու նախատինք կըլինի մեզ, եթե մեզնից  
Չելնի մի քաջ դանայեցի՝ մենամարտի Հեկտորի դեմ:  
Երանի թե դուք բոլորդ էլ լինեիք հող, փոշի և ջուր,  
Նըստած այստեղ ամեն մեկըդ այդպես անսիրտ, անփառունակ:  
Ինքըս կելնեմ Հեկտորի դեմ հագած զըրահ-զենքերըս ողջ,

100 Իսկ հաղթությունն ում կըլինի՝ աստվածները գիտեն միայն»:

Այս ասելով՝ հազար իսկույն իր գեղեցիկ զենքերը նա:  
Այրտեղ, անշուշտ, ո՛վ Մենելայ, մահ կրթերեր Հեկտորը քեզ,  
Ջի քեզանից շատ ավելի գորեղ էր նա և քաջամարտ,  
Թե արքաներն արքայեցոց չարգելեին քեզ մարտ մղտնել:  
Ինքը Ատրիդ Ագամեմնոն իշխանապետն այն ժամանակ  
Բըռնեց նըրա աջ ձեռքը և, տալով անունն՝ այսպես ասաց.

«Խե՛նթ ես դու, քա՛ջ Մենելայոս, անմըտություն հարկավոր չէ,  
Տեղըդ նըստիր և հանդարտվիր, թեև դըծվար լինի քեզ այդ,  
Մի՛ հանդըզնիր քեզնից քաջի դեմ պիտջան հանդիսանալ,  
110 Պրիամյան քաջ Հեկտորի դեմ, որից բոլորն են վախենում:  
Աքիլն անգամ, որ քեզանից շատ ավելի քաջ է, գորեղ,  
Սարսափում է Հեկտորի հետ պատերազմում հանդիպելուց:  
Գընա և քո տեղը նըստիր, ընկերներիդ բազմության մեջ,  
Աքայեցիք նըրա հանդեպ ա՛յլ մըրցակից դուրս կըթերեն:  
Պրիամյանը թեև անվախ ու մըրցության մեջ անհագուրդ,  
Բայց կարծում եմ՝ ուրախությամբ պիտի ծափ ծընկները նա,  
Միայն թե ողջ դուրս պըրծընի անեղ կըռվից և գուպարից»:

Ասաց դյուցազն և իր եղբոր միտքը շըրջեց անմիջապես  
Իրավացի իր խորհըրդով, և եղբայրը հընազանդվեց.

120 Ապա զենքերն առան ուսից ծառաները ուրախությամբ:  
Ելավ այնժամ Նեստորը և այսպես ասաց արքայեցոց.  
«Ո՛վ աստվածներ, մեծ սուգ պիտի հասնի երկրին մեր արքայանց,  
Եվ սուկալի գույժ կըլինի ձիամարզիկ ծեր Պելևսին,  
Հըռչակավոր խորհըրդական և հըռետոր միրմիրոնաց,  
Որ ինձ երթեմըն հաճույքով հարըցնում էր, երբ տանն էի,  
Աքայեցոց ազգ ու զարմի և նըրանց ողջ նախնյաց մասին,—  
Եթե լըսի, որ արքայանքս սարսափում ենք Հեկտորի դեմ,  
Աստվածներին բարձրացնելով իր ձեռքերը պիտի խընդրի  
Որ իր հոգին մարմնից ելած իջնի դըժոխքն անմիջապես:

130 Երանի՛ թե, հայր Արամազդ, և Աթենաս, և Ապոլլոն,  
Երիտասարդ լինեի ես, ինչպես էի այն ժամանակ,  
Երբ սըրընթաց Կելադոնի մոտ գումարված պիլացիներն  
Ու տիգավոր արկադացիք պարիսպների շուրջ Փիասի  
Կըռվում էին կորովաբար Հարդանոսի ափերի մոտ:  
Ելավ նըրանց մեջ նախամարտ Երկթալոնն աստվածատիպ  
Իր ուսերին գըցած զենքերն Արեիթոս թագավորի,  
Որ լախտավոր էր հորջորջվում տղամարդկանց, կանանց կողմից,  
Քանզի երբեք երկար տեգով և աղեղով չէր մարտընչում,  
Այլ իր լախտով երկայթակուտ՝ ջարդում էր ողջ գընդերը նա:

140 Լիկուրգոսը նըրան դավով ըսպանեց, ո՛չ իր քաջությամբ,



Նեղ տեղ վըրան հարձակվելով, ուր որ երկաթ լախտը չօգնեց  
Եվ չըվանեց մահն իրենից. Լիկուրգոսը վըրա հասավ  
Եվ նիզակով նըրան շամփրեց, որը ընկավ գետնատարած:  
Կապտեց պղնձյա բուռն Արեսի նըրան տըված գեները և  
Հետո ինքն էր կըրում նըրանց Արեսի գոռ մարտերի մեջ:  
Լիկուրգոսը երբ իր տան մեջ հասավ արդեն խոր ծերության,  
Տըվեց դըրանք իր սիրելի Երևալյուն զինակցին քաջ,  
Որ նըրանցով ըսպատագեն՝ կոչ էր անում ողջ քաջերին,  
Որոնք զարհուր ու դողահար՝ չէին դուրս գա մենամարտի:

- 150 Բայց ինձ հոգիս հանձնապաստան մըղեց նըրա դեմ կըռվելու,  
Թեպետև ես իմ տարիքով բոլորից էլ կըրտտերն էի:  
Մարտի էլա ես նրա դեմ, և Աթենասն ինձ փառք տըվեց.  
Ըսպանեցի հաղթահասակ ու վիթխարի այդ հըսկային,  
Գետնին փըռված ծածկում էր նա ահագին տեղ իր դիակով:  
Երանի՜ թե նույն տարիքին լինեի ես և նույն ուժին,  
Եվ կունենար կորոպակածո՞՞ Հեկտորն այնժամ մի ախոյան,  
Մինչ ձեր միջից, աքայեցի՞ք, ամենահաղթ քաջերն անգամ  
Չեն հանդըզնում արիաբար խիզախելու Հեկտորի դեմ»:

Այսպես խոսեց Նեստորը ձեր, և ինն հոգի էլան ոտքի.

- 160 Առաջինը հանդես եկավ Ագամեմնոն արանց արքան,  
Երկըրորդը Տիդյանն էլավ՝ Դիոմեդեսն հաղթաբազուկ,  
Ապա երկու Այաքսները հաղթահասակ ու պընդակազմ,  
Սըրանցից վերջ՝ Իդոմենեսն, իր զինակիցն էլավ ապա—  
Մերիոնեսը մարդասպան Ենիային համանըման.  
Եվրիպիլոսը վեր կացավ, շըքեղ որդին Եվեմոնի,  
Եվ Թոսաը Անդրեմոնյան ու Ոդիսևսն աստվածազարմ:  
Տենչում էին նրանք բոլորն էլ կըռվելու Հեկտորի դեմ,  
Բայց Գերենյան Նեստոր ասպետն այսպես ասաց այդ քաջերին.

«Վիճակ պիտի գըցվի ձեր մեջ, և վիճակը ում որ ելնի,

- 170 Նա, անկասկած, ուրախություն կըպատճառի աքայեցոց,  
Եվ կըցնծա ինքն էլ հոգով, եթե երբեք ողջ պըրծընի  
Սարապիելի այդ գուպարից, մըրցամարտից ամենագույն»:  
Այսպես ասաց, և ամեն ոք իր վիճակը նըշանագրեց,  
Ու գըցեցին Ագամեմնոն Ատրիդեսի գըլխանոցում.  
Իսկ ժողովուրդն աղոթում էր աստվածներին բազկատարած,  
Եվ ամեն ոք այս էր ասում՝ հայացքն ողդած երկինքն ի վեր.

«Հա՛յր Արամազդ, վիճակը հան կամ Այաքսին, կամ Տիդյանին,  
Եվ կամ իրեն՝ մեծահարուստ թագավորին Միկենացոց»:

- Այսպես էին ասում նրանք, մինչդեռ Նեստոր ասպետը ծեր
- 180 Վիճակներն էր շարժում նրանց աչքի առաջ, սաղավարտում.  
 Եվ Այաքսի վիճակն էլավ, որին իրենք էին ուզում:  
 Մունետիկը վիճակն առած դյուցազների շարքով անցավ,  
 Ըսկրսելով աջակողմից՝ ցույց տրվեց այն ամեն մեկին.  
 Եվ նրանց մեջ մեկը չեղավ, որ ասեր թե իրենն է այդ:  
 Իսկ երբ հասավ նա վերջապես Տելամոնյան Այաքսին քաջ,  
 Որ վիճակն այդ նըշանագրել ու գրցել էր կորդակի մեջ,  
 Եվ ափի մեջ դրրեց նրա վիճակը այդ, Այաքսն իսկույն  
 Մանաչեց իր նըշանագիրն ու ողջ հոգով ուրախացավ,  
 Եվ գրցելով ոտքերի մոտ, գետինը՝ նա բացականչեց.
- 190 «Վիճակն ի՛մն է, ի՛մն է, այո՛, ուրախ եմ ես, սիրելիներ,  
 Հույս ունեմ թե ես կըհաղթեմ քաջ Հեկտորին դյուցազնագարմ:  
 Սակայն մինչև ես կըհազնեմ ոսգմի գեներն իմ պղղընձյա,  
 Աղոթեցեք դուք Զրրվանյան Արամազդ մեծ թագավորին,  
 Լրոհիկ-մընչիկ, ձեր սրբոյի մեջ, որ չըլլեսն տըրոյացիք,  
 Կամ բարձրաձայն, թեկուզ լըսեն, մենք ոչ ոքից չենք վախենում,  
 Քանզի ոչ ոք չի կարող ինձ ուժով և կամ դավով հաղթել,  
 Որովհետև չեմ կարծում թե խեղճ, անճարակ լինեմ այնքան  
 Ես, որ ծընվել ու սընվել եմ սիրասընունդ Սալամիսում»:

- Ասաց, նրբանք աղոթելով Արամազդ մեծ թագավորին՝
- 200 Այսպես էին ասում իրենց հայացքն հառած երկիճքն ի վեր.  
 «Հա՛յր Արամազդ, տե՛րդ Իդայի ամենափառ և վեհապանձ,  
 Հաղթությունը տո՛ւր Այաքսին և շընորհիր փառք ու պարծանք.  
 Սակայն, եթե Հեկտորին էլ սիրում ես դու, այն ժամանակ  
 Երկուսին էլ տո՛ւր հավասար փառք ու պատիվ և զորություն»:

- Մինչդեռ այսպես աղոթք էին անում նրանք Արամազդին,  
 Այաքսն հագնում էր պղղընձյա իր գեները փայլակնացալտ:  
 Եվ երբ բոլոր գեները նա հագավ, կասկեց իր մարմնի շուրջ՝  
 Վըրա պըրծավ ըսպառագեն, Արեսն ինչպես սոսկատեսիլ  
 Երբ նետվում է իրարու դեմ պատերազմող զընդերի մեջ,
- 210 Որոնց Զևսը իրար ձըգեց աստիկ քենով ու գըծտությամբ:  
 Այդպես առաջ նետվեց Այաքսն՝ աքայեցոց պատվարն ամուր,  
 Ժըպիտն ահեղ դեմքի վըրա. և ճոճելով երկայնաստվեր  
 Նա իր նիզակն ահագնամեծ՝ ընթանում էր հըսկայաքայլ,  
 Եվ նայելով նըրա վըրա հըրճվում էին արգիացիք:  
 Տըրոյացոց մարմնով, սակայն, անցավ սարսուռ մի սոսկալի,  
 Հեկտորն անգամ իր սրբոյի մեջ սոսկաց ահեղ նըրա տեսքից.  
 Առաջ գընալ չեր կարող նա, ոչ էլ վախից ետ նամանջել,

- Ջի ինքն էր որ մենամարտի հրավեր կարդաց որոտաձայն:  
 Այաքսն սուս աճցավ բրոնած պղնձյա ասպարն իր բրբզաձև,  
 220 Յոթ տակ կաշվով ամրապընդված, որը շինեց նրա համար  
 Տիքիոսը հրմուտ փոկհամ, որ բրնակվում էր Հիլեում:  
 Սա՛ պատրաստեց նրկարագարդ նրա ասպարը հաստաբետ  
 Արջառների կաշվով յոթ-տակ և ութերորդ շերտը՝ պղղինձ:  
 Տելամոնյան Այաքսը այն կրծքի սուշն բրոնած հըպարտ՝  
 Հեկտորի դեմ կանգնեց խըրոխտ ու որոտաց ըսպտոնագին.  
 «Հիմա պիտի դու պարզ տեսնես ու հասկանաս, գոռո՛գ Հեկտոր,  
 Թե ինչպիսի քաջեր կան դեռ դանայեցոց պետերի մեջ՝  
 Ռազմից քաշված առյուծասիրտ Աքիլլեսից հետո՛ անգամ,  
 Որը հիմա նըստել է իր ծովագընաց նավերի մոտ  
 230 Քեն պահելով իշխանապետ Ագամեմոնն Ատրիդի դեմ:  
 Բայց կան մեր մեջ դեռ կըտրիճներ, որ կարող են դեմդ ելնել,  
 Եվ այդպիսիք շատերը կան, արդ, ըսկըսի՛ր կըոհվը քո»:

- Սաղվարտաճոճ Հեկտորը մեծ նըրան այսպես պատասխանեց.  
 «Որդի՛դ հըզոր Տելամոնի, ժողովըրդոց իշխան, Այա՛քս,  
 Ինձ հետ երթեք խաղ մի՛ անի երեխայի նըման տըկար  
 Եվ կամ կընոջ՝ անփորձ, անգետ՝ պատերազմի գործերի մեջ:  
 Ես լա՛վ գիտեմ կըոհվները և նախճիրներն մենամարտի,  
 Գիտեմ դեպ աչ և դեպի ձախ տարուբերել այս չոր կաշին,  
 Որ մարտերում ուժ է տալիս և ինձ անհաղթ է դարձընում.  
 240 Գիտեմ աշխույժ նըժույգներով սուրալ, թըռչել դեպի գուպար,  
 Գիտեմ պարել մենամարտում, պատիվ բերել բուռն Արեսին.  
 Բայց չեմ ուզում քեզ պես քաջին զարկել դավով ու գաղտնաբար,  
 Այլ հայտնապես ու համարձակ, եթե միայն կարողանամ»:

- Այսպես ասաց, և ճոճելով գըցեց աշտեն երկայնասուլեր  
 Ու հարվածեց Այաքսի հաղթ յոթընկաշյան կուռ վահանին.  
 Տեզը դիպավ պղնձյա շերտին, որ ութերորդն էր վըրայից,  
 Ծայրը ամուր վեց շերտերը անցավ արագ թափով ուժգին,  
 Բայց կանգ առավ ընկըրկելով նա յոթերորդ շերտի վըրա:  
 Ապա նետեց տեզն իր երկար՝ դյուցասընունդ Այաքսն ահեղ  
 250 Ու շեշտ զարկեց Պրիամյանի բոլորածիր կուռ վահանին.  
 Տեզն հաստաբետ ծակեց անցավ փայլակնացայտ ասպարը պինո  
 Ու մեծարվեստ լանջապանի մեջ մըխըրճվեց իր սուր սայրով,  
 Բըզկըտելով սընակուշտից վարապանակն ախույանի.  
 Հեկտորն իսկույն կըռանալով՝ հագիվ պըրծավ սև օրհասից:  
 Կըրկին անգամ վերընելով նըրանք երկար տեզերն իրենց՝  
 Իրար վըրա հարձակվեցին նըման երկու առյուծների

Կամ անվերկանդ և ամենի վարագների նրման վայրագ:  
Հեկտորն ուժգին զարկեց ճիզակը վահանի ճիշտ մեջտեղին,  
Բայց չըխազեց պըղինձը պինդ, ու սըլաքի ծայրը ծրովեց:

260 Եսկ Այաքսը վըրա պըրծավ, ծակեց ասպարն իր աշտեով  
Եվ ուժգնակի ցընցեց նըրան, երբ նա վըրա էր հարձակվում.  
Մորթը պատուեց պարանոցի ու դորս ցայտեց արյունը թուխ,  
Բայց մըրցումից ետ չընկըրկեց կորդակածոն Հեկտորը քաջ,  
Այլ գընալով ետ-ետ՝ առավ հըսկա մի քար հուժկու ձեռքով,  
Որ ընկած էր այնտեղ դաշտում՝ կոշտուփըռոշտ և ահագին,  
Եվ Այաքսի յոթընկաշվյան կուռ վահանի կումբին զարկեց:  
Այն ժամանակ Այաքսն ինքն էլ առավ մի քար ավելի մեծ,  
Տարավ-բերավ ու շըպըրտեց դյուցազնական իր ողջ ուժով.  
Երկանաքարը վիթխարի փըշրեց նըրա ասպարը կուռ

270 Եվ Հեկտորին խոցեց կըրծքից, և նա ընկավ մեջքի վըրա:  
Սակայն նորից ոտքի հանեց Ապոլլոնն իր պաշտպանյալին:  
Նըրանք մոտից սուսերներով կըխոցեին իրար անշուշտ,  
Եթե վըրա չըհասնեին հըրեշտակներն Արամազդի—  
Քարոզները՝ մեկը տրոյանց, մյուսն աքայանց կողմից եկած—  
Տալթիքիոսն ու Իդեոսը, երկուսով էլ խոհեմազարդ,  
Որ կանգ առան նըրանց միջև, բըռնած ցուպերն իրենց երկար,  
Եվ Իդեոսը՝ իմաստուն խորհըրդականն այսպես ասաց.

«Բավ է, որդյակք իմ սիրելի, դադարեցրե՛ք կըռիվը ձեր,  
Արամազդը ամպրոպադեզ սիրում է ձեզ երկուսիդ էլ,

280 Երկուսդ էլ քաջ պատերազմող ռազմիկներ եք, մենք այդ գիտենք,  
Բայց գիշեր է գալու շուտով, և գիշերվան պետք է անսալ»:

Եվ պատասխան տալով նըրան՝ Տելամոնյան Այաքսն ասաց.

«Ո՛վ Իդեոս, դու Հեկտորին հըրամայիր այդ ասելու,  
Քանզի նա էր, որ քաջերին մենամարտի հըրավիրեց,  
Առաջ թող նա՛ դադարեցնի, և ես նըրան կըհետևեմ»:

Նըրան այսպես պատասխանեց սաղվարտածոն Հեկտորը մեծ.

«Այա՛քս, աստված տըվել է քեզ իմաստություն, հասակ և ուժ,  
Եվ ճիզակով աքայանց մեջ քաջագույնն ես դու բոլորից,  
Արի, այսօր վերջ տանք կըռվին, ապա նորից մենք կըսկըսենք,

290 Մինչև աստված մեկնումեկիս շընորհե փառք և հաղթություն:

Ծուտով գիշեր է լինելու, իսկ գիշերին պետք է անսալ,  
Որպեսզի ողջ աքայեցոց ուրախացնես նավերի մոտ,  
Եվ մանավանդ քո սիրելյաց և զինակից ընկերներիդ:  
Ուրախացնեմ ե՛ս էլ Պրիամ թագավորին մեր քաղաքում,  
Տըրովներին և համորեն տըրովուհյաց երկայնազգեստ,

Որ ինձ համար աղոթում եմ աստվածների մեհյաններում:  
Արի, միմյանց երկուտովս էլ շքեղ ձոներ ընծայենք մենք,  
Որ ամեն մի աքայեցի և տըրովյան այսպես ասի.

300 «Աըրանք թեև ոխերմասիրտ կըովի մըտան իրարու հետ,  
Բայց իրարից բաժանվեցին մըտերմական սիրով և հաշտ»:

Այսպես ասաց և հանելով հըսկա սուրը արծաթազամ  
Իր պատյանով, գոտին էլ հետ ընծա տըվեց նա Այաքսին.  
Իսկ Այաքսը տըվեց նըրան ծիրանավառ կամարն ընտիր,  
Եվ իրարից բաժանվեցին. մեկը գընաց դեպ աքայանք,  
Մյուսը՝ տրոյանք, որոնք անչափ ուրախացան, երբ որ տեսան  
Իրենց քաջին, որ դառնում էր կըովից կենդան ու ողջանդամ,  
Ջերծ Այաքսի բազկից անհաղթ և սուկայի բարկությունից,  
Եվ առնելով նըրան իսկույն քաղաք տարան ուրախությամբ:  
Իսկ մյուս կողմից՝ աքայեցիք՝ իր հաղթությամբ ուրախ-զըվարթ  
310 Քաջ Այաքսին առան տարան Ագամեմոնն արքայի մոտ:

Եվ երբ նըրանք Այաքսի հետ հասան վըրանն Ատրիդեսի,  
Ագամեմոնն արանց արքան զինեց այնտեղ նըրանց համար,  
Հինգ տարեկան պարարտ մի ցուլ՝ զոհ Ջրվանյան Արամազդին:  
Մորթելով այն՝ անմիջապես կըտրատեցին կըտոր-կըտոր,  
Ծամփուրների վըրա զարկած խորովեցին մեծ խընամբով,  
Ապա կրակից վերցընելով պատրաստեցին ձոխ կերուխում,  
Ու կուշտ ու կուռ ճաշակելով համեղ խորտիկը՝ հագեցան:  
Ինքն Ատրիդես Ագամեմոնն իշխանապետը դյուցազուն  
Տելամոնյան քաջ Այաքսին պատվեց զոհի հաղթ թիկունքով:  
320 Եվ լիովի երբ հագեցրին կերուխումի փափագն իրենց,  
Այն ժամանակ Նեստորը ծեր, խոհեմամիտ խորհըրդատուն,  
Որն իր խելոք խորհուրդներով ծանոթ էր ողջ աքայեցոց՝  
Նըրանց բարին կամենալով, խոսք առնելով՝ այսպես ասաց.

«Ո՛վ Ատրիդես և դուք բոլոր աքայեցոց քաջ իշխաններ,  
Պատերազմում մեռան բազում գիսակազեղ աքայեցիք,  
Որոնց արյան ճապաղիքով գեղեցկահոս Ակամանդրի  
Ափերը ողջ ներկեց Արեսն, ու հոգիներն իջան դըժոխք:  
Պետք է, Ատրիդ, առավոտ վաղ դարարեցնես մարտն աքայանց,  
Եվ բաժանված մենք խըմբերի՝ մեռելները կըրենք այստեղ  
330 Ջորիներով ու եզներով, և բոլորին տանք կըրակի  
Փոքր-ինչ հեռու մեր նավերից, որ ոսկորներն ամեն զինվոր  
Տունը տանի՝ զավակներին, երբ հայրենիք վերադառնանք:  
Եվ ընդհանուր մի դամբարան կանգնենք այնտեղ խարույկի շուրջ  
Հողը դաշտից փոխադրելով. և նըրա մոտ շինենք շուտով

Բարձրականգուն աշտարակներ՝ ամուր պատվար մեր նավերին,  
Եվ նրանց մեջ բանաձև դրոներ պընդակառույց ու լայնարձակ,  
Որոնց միջով կարողանան անցնել ձիերը անարգել,  
Դըրսի կողմից, մոտը խորունկ փոսեր փորենք շուրջանակի,  
Որոնք արգելք հանդիսանան նըծույզներին և ամբոխին,  
340 Երբ մեզ վըրա խուժեն խըրոխտ տըրոյացիք անեղ մարտով»:

Այսպես ասաց, և արքաներն հավան եղան այդ խորհըրդին:  
Նույն այդ ժամին Իլիոնում, Պրիամոսի պալատի մոտ  
Բազմագումար ժողով մի մեծ ունեին և՛ տըրոյացիք,  
Եվ Անտենորը իմաստուն խոսք առնելով՝ այսպես ասաց.  
«Ի՛նձ լըսեցեք, տըրոյացիք և դարդանյանք, դաշնակիցներ՛ր,  
Ասում եմ այն, սիրելիներս, ինչ որ սիրոս է թելադրում ինձ,  
Եկեք չըքնաղ արգիացի Հեղինեին իր գանձերով  
Ետ ուղարկենք Ատրիդներին, զի մենք այսօր մարտ ենք մըղում  
Դըրժելով մեր ուխտը երդման, ուստի չունենեմ ես ոչ մի հույս,  
350 Թե մեզ համար լավ կըլինի, մինչև որ այդ չըկատարենք»:

Այսպես ասաց նա և նըստեց, ելավ իսկույն այն ժամանակ  
Ալեքսանդրոսն աստվածատիպ՝ այն վարսագեղ Հեղինեի  
Եվ դառնալով Անտենորին՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
«Ո՛վ Անտենոր, խոսքերըդ ինձ բոլորովին դուր չեն գալիս,  
Կարող էիր ավելի լավ խոսք ասել դու, քան ասացիր.  
Սակայն եթե լուրջ ես խոսում և այդպես ես մըտածում դու,  
Ապա ուրեմն աստվածները խըլել են քո խելքը գըլխեդ:  
Արդ, ես էլ իմ խոսքն եմ ասում տըրոյացոց մեջ ձիավարժ,  
Ասում եմ պարզ ու վըճաբար, Հեղինեին չեմ տա նըրանց,  
360 Իսկ արդ ու գարդն ինչ որ բերել եմ Արգոսից այստեղ, մեր տուն,  
Ետ կըսում ես բոլորն ինչ կա, տալով վըրան և ինձանից»:

Այսպես ասաց նա և նըստեց, ոտքի ելավ նըրանից ետ  
Ծեր Պրիամոսը Դարդանյան՝ խորհըրդականն աստվածիմաստ,  
Եվ ի բարին տըրոյացոց՝ այսպես խոսեց սիրողաբար.  
«Ինձ լըսեցեք, տըրոյացիք և դարդանյանք, և աստարներ,  
Պիտի խոսեմ, ինչ կըրժքիս տակ սիրտըս է ինձ հըրամալում.  
Գընացեք այժմ և ընթրեցեք քաղաքի մեջ, ինչպես առաջ  
Եվ ամեն ոք թող ուշք դընի գիշերային պահպանության,  
Իսկ Իդեոսն առավոտ վաղ թող որ գընա դեպի նավերն  
370 Ու պատգամի Ագամեմնոն և Մենելայ Ատրիդներին  
Խոսքը Պարիս-Ալեքսանդրի, որ այս կըրովի պատճառն եղավ:  
Եվ խելացի մի առաջարկ ավելացնենք, եթե ուզեն,

Դադարեցնել կրոնիվն առժամ, դիակները այրենք մինչև,  
Ապա կրրկին շարունակենք մեր պատերազմն արյունահեղ,  
Մինչ բաժանի մեզ մի աստված, տա հաղթություն մեկնումեկիս»:

- Այսպես ասաց, և բոլորը նըրա խորհուրդն ընդունեցին,  
Եվ ընթրեցին ապա նըստած ըստ գընդերի իրարու մոտ:  
Իսկ Իդեոսն առավոտ վաղ գընաց նավերն աքայեցոց,  
Գըտավ այնտեղ դանայեցոց որդիներին արիսական՝
- 380 Ագամեմնոն Ատրիդեսի նավատորմի մոտ հավաքված.  
Ատլան մըտավ ու բարձրաձայն այսպես ասաց նա համարձակ.  
«Ո՛վ Ատրիդես, և դուք բոլոր աքայեցոց մեծամեծներ,  
Պրիամը ինձ և մյուս ավագ տըրոյացիք պատվեր տըվին  
Պատմել այստեղ, թե հաճելի լինի ձեզ այդ և օգտավետ,  
Խոսքը Պարիս Պրիամյանի, որ այս կրովի պատճառն եղավ,  
Այն ողջ գանձը, որ Տըրոյա բերեց Պարիսն իր նավերով,  
(Ա՛յա, երանի, որ այն վաղուց կորած լիներ թոլորովին)  
Ուզում է նա ետ դարձընել, տալով վըրան և իրենից,  
Իսկ վարսագեղ Հեղինեին՝ Մեներայի նախկին կընոջն
- 390 Ասում է նա վըճռողաբար, որ չի ուզում վերադարձնել,  
Զընաչած որ տըրոյացիք հորդորում են ետ տալ նըրան:  
Պատվիրեցին նըրանք նույնպես ձեզ անելու, եթե ուզեք,  
Դադարեցնել կրոնիվն առժամ, մինչև այրենք դիերը մեր,  
Ապա դարձյալ շարունակենք մեր պատերազմն արյունահեղ,  
Մինչ բաժանի մեզ մի աստված, տա հաղթություն մեկն ու մեկիս»:

- Ասաց, և ողջ արգիացիք խոր լըռություն պահպանեցին,  
Եվ վերջապես այսպես ասաց Դիոմեդեսն անեղազոռ.  
«Ո՛չ, մեզանից և ոչ մի մարդ չի ընդունի Ալեքսանդրից  
Եվ ոչ մի գանձ, մինչև անգամ գեղաչըքնաղ Հեղինեին,  
400 Երեխային անգամ պարզ է, որ տըրոյանց վերջն է հասել»:

Այսպես ասաց, և գոչեցին աքայեցիք միահամուռ,  
Ըսքանչացած ձիահըմուտ Դիոմեդեսի խելոք խոսքից,  
Եվ թագավոր Ագամեմնոնն Իդեոսին դարձավ այնժամ.  
«Ինքք՛դ, ահա, ո՛վ Իդեոս, լըսեցիր խոսքն աքայեցոց,  
Որ տայիս են ի պատասխան, որին և է՛ս եմ համամիտ:  
Իսկ դիակներն հավաքելուն և այրելուն հակառակ չեմ,  
Զի չըպետք է մեռելների հանդեպ երբեք ժըլատ լինել.  
Պետք է անշուշտ այրել նըրանց, որպեսզի շուտ հանգըստանան.  
Եվ թող լըսի ուխտս Արամազդն՝ Հերայի այրն ահագնազոռ»:

410 Ասաց և իր գավազանը բարձրացրեց վեր՝ աստվածներին:

Եվ Իդեոսն վերադարձավ դեպ Իլիոնը նրվիրական:  
Նըստել էին ակըմբահույլ տըրոյացիք և դարդանչանք  
Ժողովի մեջ, քսպասելով Իդեոսի վերադարձին,  
Որը հասավ և հոտընկաչս պատմեց բոլորը յուրայնոց:  
Ու վեր կացան միահամուռ, գործի անցան անմիջապես,  
Ոմանք սայլով դիերն էին կրրում դաշտից և ոմանք՝ փայտ:  
Աքայեցիք նրմանապես՝ նավերից դուրս գալով իրենց,  
Բաժանվեցին երկու մասի ու նույն գործով ըզբաղվեցին:  
Արեգակը նոր էր ծագել ու շողում էր դաշտի վըրս

420 Հանդարտասահ բարձրանալով օվկիանոսից երկինքն ի վեր,  
Երբ որ դաշտում երկու ազգերը իրարու հանդիպեցին:  
Ամեն մեկը դաշտում ընկած իր մեռելն էր փընտրում փութով,  
Եվ շատ դըժվար էր ճանաչում յուրաքանչյուրն իր ընկածին:  
Լըվանալով բիծերն արյան ու թափելով հորոք արտասուք՝  
Ըրոյացիք դիերն իրենց բառնում էին սայլի վըրս:  
Պրիսմ արքան արգելում էր բարձրը ձայնով ողբալ նըրանց,  
Դիակները լուռ դիզելով խարույկների վըրս նըրանք  
Այրեցին ողջ ու լըռելյայն վերադարձան Իլիոնը սուրբ:  
Այդպես նաև մյուս կողմում աքայեցիք պըղընձագեն

430 Խոցված սըրտով դիակները խարույկների վըրս դիզած  
Հըրին տըվին ու դարձան դեպ նավերն իրենց ծովազընաց:

Արշալույսը դեռ չէր ծագել, ու տակավին գիշեր էր մութ,  
Երբ աքայանց ընտիր մի գունդ հավաքվելով խարույկի շուրջ  
Մեծ դամբարան կանգնեց այնտեղ՝ հողը դաշտից փոխադրելով:  
Եվ շինեցին ապա նըրս շուրջը բուրգեր բարձրականգուն,  
Իբրև պատվար ամրակառույց՝ պաշտպան իրենց և նավերին:  
Բացին նըրանց մեջ հաստատուն լայն դարբասներ, որոնց միջով  
Կարենաչին ձիերն իրենց անցնել սոսանց դըժվարությամ:  
Պարիսպներին մոտիկ, դըրսից փորեցին մի խորը խըրամ,  
440 Բավական լայն և տընկեցին մեջը ցըցեր հաստ ու հուժկու:  
Այսպես անդուլ և անդարար տըքնում էին աքայեցիք:

Իսկ աստվածները՝ շանթընկեց Արամազդի շուրջը նըստած  
Ըսքանչանում էին նըրանց այդ մեծագործ աշխատանքով:  
Եվ խոսք առավ նըրանց միջից նախ Պոսելդոնն երկրասասան.  
«Հայր Արամազդ, մահկանացու մարդկանցից ո՞վ այսուհետև  
Իր խորհուրդներն ու մըտքերը հաշտնե պիտի անմահներին:  
Դու չե՞ս տեսնում, ահա՛ դարձյալ գիսակազեղ աքայեցիք  
Նավերի շուրջ կանգնեցրին նոր պարիսպ ու խոր փոս փորեցին՝



Ոչ իսկ առանց աստվածներին շրթեղ ձոներ մատուցելու:  
450 Այս մեծ գործի փառքը պիտի հասնի հեռո՛ւ, ծագե ի ծագ,  
Ու մոռացվեն պիտ այսուհետ պատվարներն այն, որ կանգնեցրինք:  
Ապոլլոնը և ես դյուցազն Լավմեդոնի քաղաքի շուրջ»:

Ամպրոպային Ջևար սաստիկ ցասմամբ ասաց Պոսեյդոնին.  
«Մեծահրզո՛ր երկրասասան, այդ ի՞նչ խոսք էր դու ասացիր:  
Աստվածներից մեկը գո՛ւցե երկյուղ կըրի այդ բաներից,  
Որն իր ձեռքով և զորությանը քեզանից շատ ետ է մընում.  
Բայց քո փառքը արևի պես պիտ տարածվի ամենուրեք:  
Ասում եմ քեզ անավասիկ, աքալեցիք երբ որ նորից  
Վերադառնան անվատորմով դեպ հայրենի աշխարհն իրենց,  
460 Դու պարիսպն այդ կործանելով՝ ծովը թափիր հիմնահատակ,  
Եվ ավազով ծածկիր ապա մեծատարած ծովափն այնպես,  
Որ ջրնջրվի ամբողջովին այդ պարըսպի հետքը անգամ»:

Այսպես էին խոսում նրստած անմահները իրարու հետ:  
Մըտավ արևն, ու գործն իրենց ավարտեցին աքալեցիք,  
Այնուհետև վըրաններում մորթոտելով մի-մի արջառ  
Հավաքվեցին նըրանք խումբ-խումբ ու նըստեցին ճոխ քնթրիքի:  
Հասել էին Լեմնոս կըղզուց գիճի բերող բազում անվեր,  
Որ ողարկել էր Յասոնյան Եվեմոսը նըրանց համար,  
Եվեմոսը, որին ծընեց Հիփսիպիլեն Յասոնեից:  
470 Դըրանցից գատ Յասոնյանը հարյուր մար էլ գիճի դըրկեց  
Ազամեմնոն և Մեներայ Ատրիդների համար հատուկ:  
Գիսակազեղ աքալեցիք առնում էին նըրա գիճին,  
Փոխարենը տայով պըղիճձ, ոմանք երկաթ ջիճջ ու փայլուն,  
Եվ ուրիշներ՝ կաշի, նույնիսկ եզներ տայով և գերիներ:  
Այդպես նըրանք գիշերն ի բուն ուրախացան կերուխումով,  
Ինչպես նաև տըրոյացիք միահամուռ՝ քաղաքի մեջ:  
Իսկ Ջըրվանյան Ջևար նըրանց նոր աղետներ էր պատրաստում,  
Որոտարով ամբողջ գիշեր, նըրանք վախից գունաթափված  
Թափում էին բաժակներից գիճին գետին ամեն անգամ,  
480 Եվ ոչ ոք չէր համարձակվում ըմպել բաժակն իր գիճով լի՝  
Ահեղագոր ու բարկաճայթ Արամազդին դեռ չըձոնած:  
Վերջը ընկան ու քընեցին՝ քընի պարզեն ընդունելով:

# Ե Ր Գ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Պ

## ԿԻՍՍՏ ՄԱՐՏ

Քրքմահանդերձ այգն էր բացվում տիեզերքի վըրա համայն,  
Երբ ժողովի հըրավիրեց Արամագըը շանթազըվարձ՝  
Աստվածների կանառը ողջ՝ Ոլիմպոսի վեհ կատարին:  
Խոսում էր նա և անմահներն ուշադրությամբ լըսում էին.

«Լըսեք խոսքն իմ, ո՛վ երկնավոր աստվածներ և աստվածուհիք,  
Ասում եմ ձեզ, ինչ որ սիրտս է իմ կըրծքի տակ ինձ հորդորում:  
Թող ձեզանից և ոչ մեկը՝ աստված և կամ աստվածուհի,  
Չընդդիմանա հըրամանիս, այլ միաձույլ հավանությամբ  
Ձեռք տըվեք ինձ, որպեսզի շուտ ծըրագիրըս գըլուխ բերեմ:

- 10 Իսկ թե տեսնեմ՝ կամքիս հակառ, որևէ մեկն ինքնագըլուխ  
Օգնության է գընում ծածուկ տըրոյացոց կամ աքայանց,  
Խոշտանգահար ու խայտառակ պիտի դառնա դեպի Ոլիմպ,  
Կամ կըքըռնեմ գըրան և խոր Տարտարոսը կըգըցեմ մութ,  
Հեռու, մինչև անդընդախոր սանդարամետն ըստորերկրյա,  
Որ երկաթից դրոներ ունի և պըղընձյա շեմք-դըրանդի,  
Եվ դըծոխքից այնքան է խոր, որքան բարձր է երկինքն երկրից:  
Այնժա՛մ կըզգա, թե ես որքան հըզոր եմ ողջ անմահներից:  
Հանդես եկեք, ո՛վ աստվածներ, և փորձելով համոզվեցեք,  
Առեք իսկույն ու կախեցեք ոսկի շըղթա մի երկընթից,
- 20 Ու կախվեցեք աչդ շըղթայից բոլորդ՝ աստված, աստվածուհի,  
Սակայն պիտի չըկարենաք երկընթից դեպ երկիր քաշել  
Արամագըդն ըզգոնամիտ, թեկուզ որքան էլ չարչարվեք:  
Իսկ եթե ես ինքքս ուզեմ, վեր կըքաշեմ անմիջապես  
Եվ դեպ երկինք կըբարձրացնեմ երկիրը, ծովն էլ գըրա հետ:  
Ծըղթան ամուր ես կըկապեմ Ոլիմպոսի բարձըր ծայրին,  
Եվ կըմընա աշխարհն ամբողջ օդում առկախ, օրորվելով:  
Այսքա՛ն ահա հըզոր եմ ես աստվածներից ու մարդկանցից»:

Այսպես ասաց ամպրոպադեզն, ու բոլորը պապանձվեցին.  
Նրբա խոսքից սարսափահար, զի սաստալից խոսեց նա խիստ,  
30 Բայց վերջապես խոսեց ծավի Աթենաս վեհ աստվածունիսն.  
«Հա՛յր մեծագոր մեր Ջրրվանյան, վեհագույնրդ արքաներից,  
Մենք էլ գիտենք, որ գորությունդ անընկճելի է, անվրկանդ,  
Բայց մենք ցավում ենք քաջամարտ աքայեցոց համար անչափ,  
Որոնք իրենց օրհասին մոտ՝ պիտի ջրնջվեն դաժանորեն:  
Մարտից հեռու կըքաշվենք մենք, եթե այդ ես հրրամայում,  
Մի օգտակար խորհուրդ միայն ուզում ենք տալ արգիացոց,  
Որ չըկորչեն ըսպառըսպուո՝ զոհ գընալով քո բարկությանն»:

Եվ ժըպտալով, ամպակուտակ Ջևադ այսպես պատասխանեց.  
«Հանգիստ եղիր, Կառափնածին, մի՛ վախենար դուստր իմ սիրուն,  
40 Ես այդ բաներն ամենևին լուրջ չեմ ասում և ի սրբոտե,  
Քո նըկատմամբ ուզում եմ ես ներողամիտ ու հաշտ լինել»:

Այս ասելով՝ կառքին լըծեց նըծույզներն իր պըղընձաթաթ,  
Սըրաթըռիչ, օդապարիկ, ճաճանչագեղ ու ոսկեբաշ,  
Եվ հագնելով համակ ոսկի իր ըզգեստներն, առավ իսկույն  
Վայելչահյուս ոսկյա մըտրակն ու բարձրացավ կառքը շըբեղ:  
Ջարկեց մըտրակն ու սըլացան նըծույզները հոժարակամ  
Աստեղագարդ լայն երկընթի ու երկրի լուրթ միջոցի մեջ:  
Հասավ Իդա աղբյուրաբուխ, մայրը բազում գազանների,  
Գարգարի մոտ, ուր սուրբ անտառ և խընկաբույր ունի բազին:  
50 Աստվածների և մարդկանց հայրն այնտեղ իր կառքը կանգնեցրեց  
Եվ ձիերին արձակելով՝ ծածկեց քողով մառախուղի,  
Իսկ ինքն այնտեղ, լեռան վըրա նըստեց փառքովն իր սիգապանձ  
Ու դիտում էր տրոյանց քաղաքն ու նավատորմն աքայեցոց:

Այդ միջոցին գիսակագեղ աքայեցիք վըրաններում  
Ընթրում էին ըշտապ-ըշտապ, զինավառվում ոսգմի համար:  
Այդպես գինվում էին նաև տըրոյացիք քաղաքի մեջ,  
Սակավաթիվ քան աքայանք, բայց ամեն ոք հըրաբորբոք,  
Քաջախիզախ՝ իր զավակի, կընոջ համար մարտընչելու:  
Դարբասները լայն բացվեցին, ու դուրս խուժեց գորքը գունդ-գունդ՝  
60 Ե՛վ հետևակ, և՛ ձիավոր՝ շըռընդալից մի աղմուկով:

Եվ երբ հասան նըրանք այնտեղ, ուր որ պիտի ճակատեին,  
Իրար առան նիզակ ու տեզ, վահան ասպար, զըրահ ու զեռ:  
Գըղընձագեն կըտրիճների թափն ու կորովն ահեղագայր  
Իրար էին բախվում ահեղ ու խոցոտում, խեղում իրար.

Լըսվում էին ամեն կողմից շրորնդայից շաչ ու շառաչ,  
Կրովողների գոչումը գոռ, մեռնողների ճիչն ու հառաչ,  
Մեռնում էին ու մեռցընում, ու ներկվում էր երկիրն արչամբ:

Առավոտյան, երբ նոր էր դեռ բարձրանում օրն աստվածային,  
Թըռչում էին նետերն անդու, և ընկնում էր գորք անհամար:

- 70 Իսկ երբ ճախրեց արևը վեր և երկրների մեջտեղն հասավ,  
Այն ժամանակ ամենագոր Ջևար ոսկյա կըշեռքն առավ,  
Դըրեց երկու նըծարներում անգարթ քընի երկու վիճակ՝  
Ձիահըմուտ տըրոյացոց և աքալանց պըղընձազգեստ, —  
Ու մեջտեղից բըռնած քաշեց, հակվեց օրհասն աքալեցոց,  
Իջավ, նըստեց նըրանց վիճակն արգասավոր երկրի վըրա,  
Իսկ տըրոյանց վիճակն ելավ, հասավ մինչև երկինքը լայն:

Այն ժամանակ գոռաց անեղ Ջևան Իդայի բարձրությունից՝

Ու նետեց շանթ մի բարկանայթ՝ աքալեցոց բանակի մեջ:

Դըծգունեցին աքալեցիք այդ որոտից սարսափահար,

- 80 Եվ սիրտ չարին մընալ այդտեղ ո՛չ Իդոմենն և ո՛չ Ատրիդ  
Ազամենն ու Այաքսներն՝ արբանյակները Արեսի:

Մընաց միայն արգիացոց պահապանը՝ Նեստորը ծեր

Ա՛յն պատճառով, որ նըրա ձին նըվաղում էր նետահարված,

Որին զարկեց Ալեքսանդրոսն՝ այրը չըքնաղ Հեղինեի,

Ջարկեց գըլխի այնտեղը ճիշտ, որտեղ մազերն են առաջին

Բուսնում ձիու զանգի վըրա՝ վըտանգավոր տեղ մահատիթ:

Ձին ծառս եղավ ցավից, քանզի խըրվել էր ծայրը զանգի մեջ.

Պըտըտվելով ինքն իր վըրա, խըրտնեցրեց նա մյուս ձիերին:

Եվ մինչ ծերը կըտրատում էր սըրով փոկերն երիվարի,

- 90 Վըրա հասան Հեկտորական երիվարները սըրարշավ,

Թըոցընելով հոժ բազմության միջից հանդուգըն Հեկտորին:

Եվ ծերունին այդտեղ անշուշտ կըգըտներ մահն իր չարատանջ,

Եթե Տիդյանն անեղագոռ նըրան իսկույն չընըկատեր,

Որը անեղ ձայնով գոռաց՝ կըշտամբելով Ոդիսևսին.

«Իյուցազնազարմըդ Լայերտյան, բազմահրճար դու Ոդիսևս,

Ո՛ր ես փախչում թիկունք դարձրած դու ամբոխից վատի նըման,

Կարող է մի ոսոխ հանկարծ տեգը վարսել թիկունքը քո.

Կանգ առ իսկույն, որ ծերունուց հեռու վանենք այդ վայրագին»:

Այսպես ասաց, բայց Ոդիսևսը վըշտալից ականջ չարավ,

- 100 Ըշտապելով արագաքայլ դեպի նավերն աքալեցոց:

Իսկ Տիդեսի որդին մենակ կրովողների մեջ խոչացավ,

Գընաց կանգնեց ծեր Նեստորի նըծույզների առաջ անահ

Եվ դառնալով պլորիճ՝ այս թևավոր խոսքերն ասաց.

«Ո՛վ ծերունի, երիտասարդ մարտիկները ներում են քեզ,  
Ջըլատովել են ուժերը քո, ու կըքել են ծերության տակ.  
Ապիկար է ծառադ խղճուկ և ձիերդ դանդաղաշարժ,  
Ուստի արի կառքըս նըստիր, որ տեսնես թե այս տրրոլյան  
Ջիերն որքա՞ն քաջավարժ են դաշտի միջով արշավելու,  
Որոնց ինքըս ավարեցի Էնիասից մի ժամանակ,

110 Երկունս էլ ժիր ու քաջընթաց, արհավիրքի հընարագետ:  
Նըծույզներիդ համար թող որ ծառաներըս հոգան, իսկ մենք  
Տըրոյացոց վըրա վարենք այս ձիերը, որ հասկանա  
Հեկտորը, թե իմ նիզակն էլ մոլեզնում է ձեռքերիս մեջ»:

Այսպես ասաց, ու դեմ չեղավ Նեստոր ասպետը գերեմյան:  
Ալտրի գամբիկների հոգսը առան իրենց վըրա  
Քաջ ծառաներն՝ Սթենելունս ու կորովի Եվրիմեդոնն,  
Իսկ Նեստորը ելավ նըստեց Դիոմեդի կառքը շըքեղ,  
Երասանները պաղպաջուն՝ ծերունին իր ձեռքը առավ,  
Ջարկեց մըտրակն ու սըլացան և Հեկտորին հասան շուտով:

120 Տեղը նետեց Դիոմեդեսն, երբ առաջ էր թըռչում թափով,  
Բայց վըրիպեց, ու տեզն առավ Պըրիամյանի կառավարին՝  
Ենիոպին՝ մեծահոգի Թեբեսոսի արի որդուն,  
Որ ձիերի սանձն էր բըռնել, կառքից իսկույն ցած գըլտրվեց  
Կըրծքից խոցված, և նըծույզներն ընկըրկեցին փախս առնելով:  
Ենիոպի մահը սաստիկ ցավ պատճառեց Պրիամյանին,  
Որը թեև հույժ վըշտահար՝ թողեց նըրան այնտեղ ընկած  
Ու փընտրում էր նոր կառավար. սակայն երկար չըմընացին  
Երիվարներն վարիչից գուրկ, քանզի գըտավ նա վերջապես  
Արքեպտոլեմ Իփիտյանին քաջակորով և ընդունակ,  
130 Որին հանձնեց արագավազ իր ձիերի սանձերը նա:

Այնտեղ սաստիկ ըսպանություն ու նախճիրներ կըլինեին,  
Տրոյացիք գառների պես կըփարվեին Իլիոնի մեջ,  
Թե սըրատես Արամազդն այդ չընըկատեր անմիջապես,  
Որ բարկանայթ որոտմունքով արձակեց շանթ մի բոցաշունչ  
Ու հարվածեց Դիոմեդի նըծույզների դեմ ուղղակի:  
Ծըծումբից բուռն բըռընկված բարձրացավ բոց մի ահավոր,  
Եվ ձիերը խըրտընելով սասանեցին կառքի ներքո.  
Ծեք Նեստորի ձեռքից թըռան երասանները փայլիլումն,  
Եվ ահաբեկ հոգու խորքից այսպես ասաց Դիոմեդին.

140 «Սալաքըմբակ նըծույզներդ փախցըրո շուտ, Դիոմեդես,  
Ձե՛ս հասկանում, որ չի օգնում քեզ Արամազդն ամպրոպային,

Զըրվանյան Զևսն այսօր միայն Հեկտորին է փառք ընձեռում,  
Մի այլ անգամ մե՛զ կընձեռի փառք ու պատիվ, թե կամենա,  
Զըկա մի մարդ, որ կարենա նըրա խորհուրդը խափանել,  
Որքան էլ որ քաջ լինի, քանզի Զևսը հըզոր է բոլորից»:

Բայց Դիոմեդն ահեղագոռ նըրան այսպես պատասխանեց.  
«Այդ բոլորը դու, արդարև, ճիշտ ես ասում, ո՛վ ծերունի,  
Սակայն սաստիկ մի ցավ է իմ սիրտն ու հոգին կըսկըծացնում,  
Որ Հեկտորը մի օր պիտի տըրոյացոց մոտ պարծենա,  
150 Թե Տիդյանը իմ առջևից փախավ դեպի նավատորմիդ,  
Այսպես կասի, այն ժամանակ լավ է որ ես գետին մըտնեմ»:

Եվ գերեկյան ասպետը ծեր նըրան այսպես պատասխանեց.  
«Ավաղ, որդի՛դ քաջ Տիդեսի, անվա խ, այդ դու ի՛նչ ես ասում,  
Եթե Հեկտորն քեզ պես քաջի համար վախկոտ ու վատ ասի,  
Նըրան հավատք չեն ընձալի դարդանացիք և տըրոյանք,  
Զեն հավատա նըմանապես տըրոյուհիք ասպարակիր,  
Որոնց առույգ այրերին դու տապալեցիր հողաթալալ»:

Այս ասելով՝ սալսըմբակ ձիերը ետ դարձըրեց նա  
Ու փախցրրեց աղմըկալից ուզմի միջից, մինչ տըրոյանք  
160 Գոռ ու գոշով թափում էին նետերի խոլ տեղատարափ:  
Գոշեց այնժամ ուժգին ձայնով կորդականո՞ճ Հեկտորը մեծ.  
«Քեզ, Դիոմեդ, դանաչեցիք պատվում էին կոշունքներում  
Միշտ առաջին տեղը տալով, մըսի լավն ու քաժակը լիք,  
Իսկ հիմա քեզ պիտ անարգեն, զի վարվեցիր կընկա նըման,  
Գընա կորի՛ր, վախկոտ աղջիկ, և ես երբեք չեմ թողնի քեզ,  
Որ բարձրանաս մեր անսոիկ աշտարակներն ամրապարիսպ,  
Եվ նավերովդ գերի տանես տըրոյացի չըքնաղ կանանց,  
Այլ շատ շուտով պիտի քերեմ քո սև մահվան օրհասը ես»:

Այսպես ասաց, և Տիդյանի սիրտը սաստիկ պեկոծվեց.  
170 Ծուռ տալ գըլուխը ձիերի ու ճակատե՛լ դեմ-հանդիման:  
Երեք անգամ ծըփաց նըրա սիրտը այդ նույն մըտածումով,  
Եվ երեք հեղ Զևսը ըզգոն գոռաց Իդա լեռնից ահեղ,  
Եվ հուսադրեց տըրոյացոց այդ նըշանով՝ ի հաղթություն:  
Մինչդեռ Հեկտորը բարձրաձայն սիրտ էր տալիս տըրոյացոց.  
«Տըրոյացի՛ք, լիկյանք և դուք՝ ձեռնամարտի՛կ դարդանյաններ»,  
Արի եղեք, սիրելիներս, հիշեցեք ձեր կորովը դուք,  
Տեսնոմ եմ, որ Զևսը ըզգոն հաղթություն է խոստանում մեզ,  
Տըրոյացոց՝ փառք ու պատիվ և աստակումն՝ աքալեցոց:

Անմիտ մարդիկ, որ կանգնեցրին պարիսպ-պատնեշն այդ անճարակ,  
180 Որը, սակայն, չի տոկալու ահագնամեծ իմ գործության.  
Ձիերս առանց դժվարության կըցատկեն այդ փոսի վրայից,  
Իսկ գոգավոր նավերի մոտ երբ որ հասնեն, լավ հիշեցեք,  
Չըմոռանաք հուրն ավերիչ, որպեսզի ես այրեմ բոլոր  
Նըրանց նավերն հրդեհակեզ ու կոտորեմ արգիացոց  
Իրենց վառվող նավերի շուրջ, երբ որ ծըխից շըշմեն նըրանք»:

Այս ասելով՝ նա բարձրաձայն խըրախուսեց իր ձիերին.  
«Օ՛, Օ՛եկ, Օ՛եպճեն, Աշխետ աշխույժ և դո՛ւ, Նըշող աստվածային,  
Հատուցե՛ք ինձ փոխարենը այն խընամքի ամենագութ,  
Որ ձեզ բամբիշ Անդրոմաքեն՝ դուստրը ազնիվ Էտիոնի  
190 Երոսայում է, լըցնելով ձեր առջև առատ ընտիր ցորեն,  
Տալով նաև ազնիվ գինի, որ հագեցնեք ծարավը ձեր,  
Ձեզ հոգալով ինձնից առաջ, որ իր առույգ ամուսինն են:  
Դըռույթ տըվեք, թըռեք արագ, որ կարենանք խըլել բըռնի  
Ծեր Նեստորի վահանն, որի փառքը երկինքն է հասել արդ.  
Ասում են թե ոսկի է զուտ իր հաստապինդ բըռնելիքով.  
Ապա խըլենք ձիահըմուտ Դիոմեդեսի հաղթ ուսերից  
Ջարմանարվեստ զըրահը կոտ՝ գործը նարտար Հեփեստոսի:  
Եթե խըլենք դըրանք, անշուշտ, այս գիշերն իսկ նավ կընըստեն»:

Այսպես ասաց խըրոխտ Հեկտորն, ու զայրացավ արգո Հերան,  
200 Ու շարժվելով գանի վըրա՝ դըղըրդացրեց Ոլիմպն երկար,  
Ապա դարձավ հըզոր աստված Գոսեյդոնիսն այս խոսքերով.  
«Ո՛հ, մեծագո՛ր երկրասասան, ասա, մի՞թե չի վըրդովվում  
Սիրտը քո լայն կըրծքի ներքո դանաչեցոց այս կորուստից,  
Որոնք քեզ միշտ նըվերներ են քերում հաճո և ցանկալի  
Հեղիկեում և Էգասում, և հաղթություն չե՞ս տա նըրանց:  
Եթե բոլորս՝ դանաչեցոց կողմնակիցներս ուզենայինք  
Վանել, փըշրել տըրդացոց, սանձել ահեղ Արամագդին,  
Իդա լեռան վըրա այնժամ նա միայնակ պիտի մընար»:

Երկրաստառան արքան սաստիկ բարկանալով՝ ասաց նըրան.  
210 «Հերա՛, հախտոն ու մեծախոս, այդ ի՞նչ խոսք էր դու ասացիր,  
Քավ լիցի թե մենք մյուսներս թըշմամանանք և ընդվըզենք  
Արամագդի դեմ Ջըրվանյան, զի մեզանից ոժեղ է նա»:  
Նրանք այսպես Ոլիմպոսում խոսում էին իրարու հետ,  
Մինչ աքայանց նավատորմի և պարըսպի միջև եղած  
Տարածությունն ամբողջ էր լի ուզմիկներով ասպարավոր:  
Նըրանց բոլոր իստնիխուղըն՝ Հեկտորն էր քաջ քըշում այնտեղ..

Ջուզն Արեսի, որին փառքով պըսակում էր Ջևար աղօր:  
Նա տոշորիչ հրրով կայրեր արպլեցոց նավերն ամեն,  
Եթե արգո Հերան հանկարծ չըներշընչեր Ագամեմնին՝

220 Ինքը անձամբ գընալ այնտեղ և բոլորին քաջալերել:  
Ագամեմնոնն հուժկու ձեռքով բըռնած թիկնոցն իր ծիրանի  
Վազեց իսկույն դեպի նավերն ու վըրաններն արպլեցոց  
Ու կանգ առավ Ողիսեսի ահագին, սև նավի վըրա,  
Որ մեջտեղն էր, որպեսզի իր ձայնը հասնի երկու կողմին—  
Այաքսի մեծ վըրաններից մինչ խորաններն Աքիլլեսի:  
Քաշել էին նրանք իրենց նավերը դեպ ծայրամասեր,  
Իրենց ուժի և գորընդեղ բազուկների վըրա վըստահ:  
Այդտեղ կանգնած, ահեղ ձայնով աղաղակեց դանայեցոց.  
«Ամո՛թ, ամո՛թ, արգիացիք, գեղեցկադեմ դուք վախկոտներ,

230 Ո՛ր գընաց ձեր խըրոխտանքը, թե ամենից քաջերն եք դուք,  
Որ երբեմըն Լեմնոսի մեջ այնպես մեծ-մեծ էիք ջարդում,  
Ռոտելով միսն առատ-առատ երկար եղջյուր արջառների  
Եվ ըմպելով թակույկներից ընտիր գինին գըվարթարար,  
Թե ձեր ամեն մեկը՝ հարյուր, երկու հարյուր տըրովցու հետ  
Վըմըտնի գոռ մենամարտի և կըհաղթի բոլորին էլ.  
Այնինչ հիմա չեք կարող դուք միայն մեկի՝ դեմը դուրս գալ—  
Հեկտորի դեմ, որ նավատորմն այդելու է լափող հրրով:  
Հայր Արամազո, ո՞ր մեծագոր թագավորի գըլխին այսքան  
Փորձանք բերիր ու գըրկեցիր նըրան իր փառք ու պարծանքից

240 Եվ սակայն ես քո գեղազարդ բազիններից և ոչ մեկի  
Մոտից չանցա,— երբ նավերովս այստեղ եկա կոտորվելու,—  
Առանց ամեն մեկի վըրա ճարպ ու զիստեր ճենճերելու,  
Ցանկանալով հիմնահատակ քանդել Տրոյան ամրապարիսպ:  
Սակայն հիմա, հայր Արամազո, այս խընդիրքըս կատարի լուկ,  
Թույլ տուր գոնե, որ ողջանդամ փախչենք, պըրծենք այս աղետից,  
Չըթողնելով, որ տըրոյանք արպլեցոցս իսպառ ջընջեն»:

Այսպես ասաց, Հայրը նըրա արցունքների վըրա գըթաց,  
Եվ ակնարկեց, որ ազատվեն արգիացիք կոտորվելուց.

Մի մեծ արծիվ ուղարկեց նա, գերհըզորը թըռչուններից,

250 Որ բըռնել էր ճիրաններում մի արագոտն եղնիկի ձագ.  
Գըցեց նըրան Արամազոի գեղեցկաշուք բազնի վըրա,  
Որ արպլանք պատգամահայր Ջեսին գոհեր էին ձոնում:  
Նըրանք այդ մեծ թըռչնին ի տես, որ գալիս էր Արամազոից,  
Սիրտ առնելով, խըրոխտաբար տրոյանց վրա գըրոհեցին:



- Դանապեցոց բազմամբոխից ոչ ոք այնտեղ չըխիզախեց  
 Առաջինը անցնել փոսից և ճակատել թըշմամու դեմ,  
 Տիդյանից գատ, որ իր անգուսպ նըժույգներով դուրս խոյացավ  
 Եվ ըստանեց տըրոյացոց մի կըտրիճի ըստառագեն՝  
 Ագելալոս Փրաթմոնյանին, որի մեջքին զարկեց տեգով,  
 260 Երբ շուռ տալով ձիերը նա դեպի փախուստ էր ըշտապում.  
 Աըլաքն անցավ ուժգին թափով ու դուրս եկավ կըրծքից, և նա  
 Կառքից իսկույն ցած գըլորվեց, ու շաչեցին զենքերն իր շուրջ:  
 Նըրանից ետ Ագամեմնոնն ու Մեներալն առաջ անցան,  
 Ապա երկու Այաքսները ահագնասաստ մի գորոթյամբ,  
 Իդոմենեան ու հետո իր զինակիրը՝ Մերիոնը քաջ,  
 Որը այնպես նըման էր բուռն, արյունառուշտ Ենիալին.  
 Նըրանից ետ Ելիոփիլոսն՝ Եվեմոնի պայծառ որդին,  
 Եվ իններորդը՝ Տեկրոսը, յայնպիսին իր յարած ճապուկ,  
 Որը մըտավ Տելամոնյան Այաքսի մեծ ասպարի տակ:  
 270 Այաքսը մեծ իր վահանը բարձրացնում էր, և նա արագ,  
 Աչք ածելով իր չորս բոլոր, յարում էր մեծ աղեղն ընդփույթ,  
 Եվ երբ խոցեր մի ոտիսի, ու սա ընկներ գետնատարած՝  
 Գալիս էր նա, մանուկն ինչպես, որ դեպի մոր գիրկն է վազում,  
 Ու ծըվարում էր Այաքսի հըսկաչական ասպարի տակ:

- Եվ արդ, հիշենք տըրոյանցից նախ ո՞ւմ զարկեց Տեկրոսը քաջ:  
 Առաջինը՝ Ռոսիլոքին, Ռմենոսին, Ոփելեստին,  
 Քըրոմիոսին և Դեստորին, Լիկոփոնոսին աստվածազարմ,  
 Պոլիմենյան Ամոպավնին, Մելամիաին,— որոնց բոլոր  
 Իրար ետև դիպաթավյալ փըռեց գետին բազմաքեղուն:  
 280 Այդ տեսնելով, ուրախացավ Ագամեմնոն արանց արքան,  
 Որ կորովի իր աղեղով ջընջում է նա տըրոյացոց,  
 Եվ մոտ գալով՝ զարմանալի դյուցազունին այսպես ասաց.  
 «Տեկրո՛ս, գըլուխ դու գեղեցիկ, Տելամոնյա՛ն, իշխան ազգաց,  
 Նետի՛ր այդպես, թերևս դու դանապեցոց մի լույս ցաթես  
 Եվ քո հորը՝ Տելամոնին, որ քեզ սընեց մանկությունից,  
 Ու թեպետև դու հարճորդի՛ քեզ խընամեց նա իր տան մեջ.  
 Փառավորի՛ր նըրան դու արդ, թեև հեռու է այստեղից:  
 Եվ ես ահա՛ ասում եմ քեզ, ու կատարեմ խոսքս պիտի,  
 Եթե տան ինձ Աթենասը և Արամազդն ասպարակիր  
 290 Հիմնահատակ քանդել մի օր գեղեցկակերտ Իլիոնը սուրբ,  
 Ինձնից հետո, նախ և առաջ քո՛ ձեռքի մեջ պիտի դընեն  
 Իբրև նըվեր մեծարանաց՝ եռոտանի և կամ մի կառք  
 Իր ձիերով, կամ թե մի կին, որ անկողնում քեզ հետ պատկի»:

Եվ պատասխան տալով նրան՝ ասաց Տևկրոս ըսքանչեկին.  
«Վե՛ն Ատրիդես, ինչո՛ւ ես դու հորդորում ինձ՝ փութաջանիս,  
Չեմ դադարի ես կրովելուց, քանի դեռ ուժ կա ձեռքիս մեջ:  
Այն օրից վեր, երբ Իլիոն քրջեցինք մենք տըրոյացոց,  
Փոյ եմ բերում կորովաձիգ լայնալիճիս հանդիպողին:  
Մինչև ճիմա արձակեցի ես ութը նետ երկարասայր,  
300 Եվ ո՛չ մեկը չանցավ իգուր, ութը կրտրին տապալեցի,  
Բայց չեմ կարող, չի հաջողվում այդ կատաղի շանը զարկել»:

Այսպես ասաց ու թըրցրեց նա Հեկտորին նըշան բըռնած  
Մի նոր փըքին՝ նըրան սըրտից խոցելու խոր տեճելով տոչոր,  
Բայց վըրիպեց, դիպավ կըրծքին Գորգիթիոն ըսքանչելու՝  
Պըրիամոսի արի որդուն, որին ծընեց Ըսիմեոս  
Հարս եկած մայրը Կաստրիանիոն՝ աստվածուհու պես գեղեցիկ:  
Ինչպես խաշխաշը պարտեզում ծրոում է իր գըլխիկը հեզ  
Ծանրաբեռնված իր պըտուղով, շաղ ու ցողով զարնանալին,  
Այդպես թեքեց սաղալարտով ծանրացած իր գըլուխը նա:

310 Տևկրոսն ուրիշ մի փըքին էլ թըրցրեց լարից դեպի Հեկտոր՝  
Դարձյալ սըրտին դիպցընելու բուռն տեճելով, վըրիժավառ,  
Բայց վըրիպեց և ա՛յս անգամ, Ասուլունը նետը շեղեց,  
Դիպավ կըրծքին, ըստիների մոտ՝ նըրա կրտրին կատավարի,  
Երբ դիմում էր դեպի գուպար. ընկըրկեցին ձիերը սուր,  
Կառքից գետին գըլորվեց նա ու փըչեց շունչն անմիջապես:  
Կատավարի մահը աստիկ ցավ պատճառեց քաջ Հեկտորին,  
Ու թեսպետն հույժ վըշտահար, թողեց նըրան այնտեղ ընկած,  
Եվ իր եղբոր՝ Կեքրիոնին, որը մոտիկ էր գըտնըվում,  
Հըրամայեց սանձերն առնել, և եղբայրը հընազանդվեց:

320 Հեկտորն այնժամ շըքեղ կառքից, ահեղագոչ, գետին ցատկեց,  
Եվ առնելով գետնից մի քար՝ վազեց դեպի Տևկրոսն ողիղ,  
Վըրեժխնդիր, վատված նըրան կործանելու կատաղությամբ:  
Տևկրոսն հագիվ իր կապարճից հանել էր նետ մի դառնաթույն  
Ու գետեղել լարի վըրս, որ Հեկտորը կորդակաճոճ  
Զարկեց ուսի ճիշտ այնտեղին, որտեղ անրակն է բաժանում  
Պարանոցն ու կուրծքն իրարից, և ուր անշուշտ է մահացու:  
Վե՛մն ահագին՝ ջախջախեց ջիլն ու թըմրեցրեց թևը նըրա.  
Տևկրոսն ընկավ իր ծընկներին, և աղետը թըռավ ձեռքից:  
Բայց չըլըքեց, չըհեռացավ Այաքսն ընկած հարազատից,

330 Մոտ վազելով անմիջապես ծածկեց նըրան իր ասսարով:  
Ծալակելով վիրավորին, ընկերները նըրա կրկու՝

Եքիոսի որդին Մեկիստն ու Ալսատորն աստվածային,  
Առան տարան դեպի նավերն, մինչ հեծում էր ծանրամըրունչ:

Ձևը նորից տրրոյացոց ներշնչեց ուժ և քաջություն,  
Ու քըշեցին զընդերն արյանց ուղիղ մինչև խորամը խոր:  
Առաջամարտ ռազմիկներին Հեկտորն էր քաջ առաջնորդում,  
Թոթափելով փայլակնացալս իր աչքերից կըրակ ու բոց:  
Ինչպես բարակ, որը վայրի մի վարագի կամ աղյուծի  
Հետևն ընկած հալածում է արագավազ սրրունքներով,  
340 Փակչում մեջքին և ազդրերին՝ ըզգույշ հանկարծ ետ դառնալուն,  
Այդպես Հեկտորն էր հալածում գիսակազեղ աքալեցոց,  
Ըսպանելով, ըսպառելով ետ մընացած փախչողներին:  
Փախան այդպես աքալեցիք, անցան փուխց ու ցրցերից  
Ծառ-շատերի թողած ճամփին տրրոյացոց ձեռքից ընկած,  
Բայց հասնելով նըրանք իրենց նավերի մոտ, ուր կանգ առան,  
Ըսկըսեցին սիրտ տալ միմյանց և ամեն ոք բազկատարած  
Աղոթում էր ոլիմպական աստվածներին բարձր ձայնով:  
Քըշում էր քաջ Հեկտորը իր նըծույզները այստեղ-այնտեղ  
Եվ գորգունյան իր աչքերով նայում էր նա իր չորս բոլոր:

350 Այդ տեսնելով՝ հուզվեց Հերս լուսածըղի աստվածուհին  
Եվ դառնալով Աթենասին՝ այս թեևալոր խոսքերն ասաց.  
«Ավա՛ղ, դըստրիկդ ամենահաղթ՝ ասպարսալերն Արամազդի,  
Օգնելու չե՞նք դանալեցոց գոնե իրենց ճըզնածամին,  
Որ դըժընդակ ճակատագրին հասած արդե՛հ պիտի կորչեն  
Այդ Հեկտորի բիրտ բըռնությամբ, որի մոլուցքն անհընարին  
Արդեն սահման ու չափ չունի, այնքա՛ն չարիք պատճառեց նա»:

Եվ Աթենաս աստվածուհին նըրան այսպես պատասխանեց.  
«Վաղո՛ւց կորած կըլիներ նա իր մոլուցքով և զորությամբ  
Արգիացոց ձեռքով ընկած իր հայրենի հողի վըրս,  
360 Եթե հայրըս չըմոլեզներ եղեմնական խորհուրդներով  
Անագորույն և ասպիրատ, միշտ հակառակ իմ ջանքերին:  
Նա չի ուզում հիշել երբեք, որ իր որդուն բազում անգամ  
Ես փըրկեցի Եվրիսթեսի տաժանքներից ու փորձանքից:  
Լալիս էր նա աչքն երկընթին, և Արամազդն ինձ ուղարկեց,  
Որ ես գընամ և օգնության ձեռք կարկառեմ նըրան երկնից:  
Սակայն եթե այս բոլորը կանխատեսել կարենայի,  
Այն ժամանակ երբ ուղարկվեց դեպ դըժոխքի դուռն ամրափակ,  
Որ փախցընի դըժոխապետ աստըծու շանը անալոր,  
Չէր ազատվի առատահոս Ստիքսի խոր հորձանքներից:

370 Իսկ նա հիմա ատում է ինձ, Թեոփսի կամքն է կատարում,  
 Որ ծընկներին փարվեց նրրա և ծընոտը ձեռքով բռնեց,  
 Աղաչելով, որ նա պատվի քաղաքավեր Աքիլլեսին:  
 Օր պիտի գա, որ նա նորից սիրուն խաժակ անվանե ինձ:  
 Բայց դու հիմա շուտ պատրաստիր սալաքմբակ ձիերը քո,  
 Մինչև որ ես ասպարակիր Արամազդի ասպարանքում  
 Ջինավալումեմ պատերազմի փայլակնացայտ զեն ու զարդով:  
 Տեսնենք՝ արդյոք սաղվարտաճո՞ն Հեկտորն ուրա՞խ պիտի լինի,  
 Տեսնելով մեզ՝ աստվածներին պատերազմի ասպարեզում:  
 Տրոյանք նո՛ւյնպես պիտ հագեցնեն թռչուններին և շքներին

380 Կիակներով իրենց՝ ընկած աքալեցոց նավերի շուրջ»:

Այսպես ասաց, հրպատակվեց նրան Հերա աստվածուհին,  
 Ելավ գընաց պատրաստելու նրժույզները ոսկեսարյան,  
 Հերան՝ դուստրը մեծ Ջրովանի, երիցագույնը դիցունջաց:  
 Իսկ Աթենասն՝ ասպարակիր Արամազդի դուստրը ահեղ  
 Ծղղարշանորք խըլան շըքեղ— գործը ճարտար իր մատներին—  
 Հոսեցնելով գեղեցկիրան հառակն ի վար, հոր հատակին,  
 Ու հագնելով վարապանակն ամպրոպային Արամազդի՝  
 Ջինավալումեց վերից ի վար՝ ուզմի համար արտասովահեղց:  
 Ցատկեց ապա ու բարձրացավ բոցաճաճանչ կառքի վրրա,  
 390 Առավ միզակը հաստաբեստ, որով գընդեր է կործանում  
 Արիասիրտ դյուցազների, երբ որ նրանց դեմ զայրանա  
 Ահեղազոր դուստրը իր հոր՝ ամպրոպադեզ Արամազդի:  
 Հերան փութկոտ, արագ-արագ մըտրակում էր նրժույզներին,  
 Ու բացվեցին նրանց առաջ երկնից դըռներն իրենք-իրենց,  
 Մրոնց ժամերն են պահապան, զի նրանց է պաշտոն տըրված  
 Երկինքը մեծ և Ոլիմպոսն քանալ-փակել խիտ ամպերով:  
 Ու դուրս եկան այդ դարբասով մըտրակելով նրժույզներին:  
 Տեսավ նրանց բարձր Բդայից հայր Արամազդն ու բարկացավ,  
 Եվ Բրիսին կանչելով շուտ՝ հըրամալեց տանել պատգամ:

400 «Թըրոիր, ասաց, թեթև Բրիս, ետ դարձրրու դըրանց իսկույն  
 Եվ մի՛ թողնիր, որ հանդըզնեն թըշնամանալ նրրանք ինձ հետ,  
 Լավ չի լինի, որ իրար հետ պատերազմով համաձայնվենք:  
 Ատում եմ ես ահավասիկ, և ասածըս կըկատարեմ,  
 Կառքի ներքո ես կըկտորեմ ոտքը նրանց նրժույզների  
 Եվ իրենց ցած գըլորելով կըջախջախեմ կառքը շըքեղ,  
 Չեն բուժվելու տալը տարի նրրանք իրենց խոր վերքերից,  
 Որոնք պիտի բացվեն զարկով իմ բարկաճայթ ահեղ շանթի,  
 Որ հասկանա խաժակն այդ հետո, թե ինչ բան է կըրվել հոր դեմ:

Իսկ Հերայի դեմ այնքան էլ չեմ զայրանում, որովհետև  
410 Սովոր է նա ամեն անգամ խորհուրդները իմ խորտակել»:

Այսպես ասաց հայր Արամազդն, ու հողմաթև Իրիսն իսկույն  
Սուրբաց արագ ու սրլացավ Իդա լեռնից դեպ Ոլիմպոս,  
Ու հովտազարդ Ոլիմպոսի առաջին մեծ դարբասի մոտ  
Հասավ նրբանց ու համբավեց պատգամն անեղ Արամազդի.

«Ո՛ր եք գընում, և ինչո՞ւ է մոլեգնում ձեր սիրտը այդպես.  
Զըրվանյանը թույլ չի տալիս, որ դուք օգնեք արգիացոց.  
Եվ ըսպառնաց այսպես, անա, որը պիտի նա գործադրի.  
Կառքի ներքո կրկոտրի ձեր նըծույզների ոտքերը նա,  
Եվ ձեզ կառքից գըլորելով՝ կըջախջախի կառքը շըբեղ,  
420 Ենք բուծվելու տասը տարի դուք խորախոր ձեր վերքերից,  
Որոնք պիտի բացվեն նրա անեղաճայթ շանթի զարկով.  
Որ հասկանա խաժակը հետո, թե ինչ բան է կրովել հոր դեմ:  
Իսկ Հերայի դեմ այնքան էլ չի բարկանում, որովհետև  
Սովոր է նա հաճախ նրա որոշումները խափանել:  
Իսկ դու, դըծնե, շո՛ւն անպատկառ, թե արդարև համարձակվես  
Նիզակդ անեղ երբևիցե Արամազդի դեմ բարձրացնե՜լ...»:

Ասաց նրբանց ու հեռացավ արագաթև Իրիսն իսկույն:  
Այն ժամանակ արգո Հերան այսպես խոսեց Աթենասին.

«Ո՛չ, մեծագոր դուստրըդ Զևսի, ես չեմ ուզում այսուհետև  
430 Զըրվանյանի հետ վատանալ մահկանացու մարդկանց համար.  
Մեր ինչ գործն է, կրովում թող որ մեկը մեռնի, մյուսն ապրի,  
Որին ինչպե՛ս վիճակված է, թող Զևսն ինքը իր իսկ սըրտով  
Աքայեցոց և տըրոյանց միջև արժան դատը տեսնի»:

Այսպես ասաց ու դարձրեց նըծույզների գըլուխը նա.  
Եվ ժամերը՝ գեղեցկաբաշ նրբանց ձիերն արձակեցին  
Ու կապեցին աստվածային մըսորների առջև առատ,  
Կառքն էլ տարան ու դեմ տըվին լուսաճաճանչ հաստ որմերին:  
Ու գընացին աստվածուհիք աթոռների վըրա ոսկի՝  
Անմահների մոտ նըստեցին հուզված աստիկ ու սըրտաբեկ:

440 Իսկ Արամազդ հայրն Իդայից վարեց կառքն իր գեղեցկանիվ  
Դեպ Ոլիմպոսն ու շուտ հասավ բընակավայրն անմահների:  
Պոսեյդոն մեծ արքան այնտեղ երիվարները արձակեց,  
Կառքը ծածկեց կըտավե մեծ մի ծածկույթով, ասլա տարավ  
Արամազդին ամպակուտակ ու բազմեցրեց դարևանդին:  
Նըստեց անեղ աստվածահայրն իր ոսկեղեն գահի վըրա,

Եվ բովանդակ Ոլիմպը մեծ դողաց նրա ոտքերի տակ:  
Աթենասն ու Հերան մեկտեղ Արամազդից հեռու նրստած  
Ձէին խոսում բոլորովին, ոչ էլ հարցում էին անում:  
Բայց Ջևաը, որ գիտակ էր ողջ անցուդարձին՝ այսպէս խոսեց.

450 «Ինչո՞ւ համար տրբոտում եք դուք այդպէս, Հերա և Աթենաս,  
Ծատ էլ երկար չընթացեցիք փառապարգև պատերազմում  
Ի կորուստ քաջ տրբոյացոց, որոնց դեմ դուք մեծ ոյս ունեք:  
Չըգիտեի՞ք, թե աննըված են բազուկներս ու զորությունս,  
Ոլիմպոսի ողջ աստվածներն վրձիորս չեն կարող փոխել:  
Բայց դողն առավ ձեր ձեռն ու ոտ, ու սուկաց ձեր սիրտը սաստիկ  
Պատերազմը դեռ չըտեսած, չապրած կրովի տագնապը դեռ:  
Ասում են ձեզ ահալասիկ, և ասածըս պիտ կատարվի,  
Իմ կայծակով շանթահարված, այլևս ձեր կառքով պիտի  
Ետ չըդատնաք դեպի Ոլիմպ՝ բընակավայրն անմահների»:

460 Ասաց, Հերան և Աթենասը գայրացած մըմըռացին,  
Նրստած մեկտեղ՝ տըրոյանց դեմ նոր ոճիքներ որոճալով:  
Աթենասը ձայն չըհանեց ընդդեմ ցասկոտ աստվածահոր,  
Թեև սաստիկ մի բարկություն թունդ էր հանում նրա հոգին,  
Սակայն Հերան չըհամբերեց սրտմըտտությանն ու պոռթկաց.

«Անագորո՛ւյն դու Ջըրվանյան, այդ ինչ դաժան խոսք սասցիր,  
Քաջ գիտենք մենք, որ զորությունդ անեղ է քո, անպարտելի,  
Բայց մենք խըղճում, խանդաղատում ենք քաջամարտ աքալեցոց,  
Որոնք պիտի կորչեն իսպառ ի լըրումըն չար օրհասի:  
Կըովին մենք չենք միջամըտի, եթե այդ ես հրբամալում,

470 Բայց ուզում ենք արգիացոց տալ օգտակար խորհուրդ մի լուկ,  
Որ մինչև վերջ գոհ չըգընան անեղասաստ քո բարկությանն»:

Եվ Արամազդն ամպրոպաքեր նրան սլապէս պատասխանեց.

«Վաղն առափոտ ավելի՛ լալ տեսնես պիտի, եթե ուզես,  
Ջորությունը Ջըրվանյանի, մեծապատիվ աչեղ Հերա,  
Երբ ջընջելու լինեն բազում պատերազմող արգիացոց:  
Արագընթաց Հեկտորն արի չի դադարի մարտ մըղկուց  
Մինչև քաջոտն Աթիլետը արթնանա իր նավերի մոտ,  
Մինչև այնօր, երբ սքալանք տագնապահար և հուսահատ  
Պիտի կըովեն նավերի մոտ, Պատրոկլէսի դիակի շուրջ:

480 Ահա՛ այսպէս է վիճակված. և բարկությունդ իմ փուլքը չէ,  
Նույնիսկ եթե դու գընալիր ծայրը ծովի ու ցամաքի,  
Որտեղ Ջըրվանն ու Հապետոտն են արդ նրստած և էլ երբեք  
Ձեն վայելում ո՛չ երկնաճեմ ճառագայթներն արեգակն,  
Ոչ էլ գըվարթ ու գովարար սյուքերի շունչն անուշաբոյր,

Այլ Տարտարոսն է տարածված խոր ու խավար նըրանց չորսդին:  
Այսպէս ահա մինչև այնտեղ անգամ եթէ դու գընայիր  
Մըրընչարով իմ դեմ՝ դարձյա՛լ բարկությունը իմ փույթը չէր,  
Քանզի չըկա ավելի վիրք ուրիշ ոչ ոք, ինչպէս որ դու»:

Այսպէս ասաց, լուսածըղի Հերան ոչ մի ձայն չըհանեց:

490 Փայլուն ճաճանչն արեգակի մըտով Օվկիանն անդընդախոր,  
Սըլփոելով սև, խավար գիշեր կենսապարզ և երկրի վըրա:  
Տըրոյացիք խիստ տըխրեցին դըրա համար, իսկ աքայանք  
Ուրախացան՝ ողջունելով գիշերը հեշտ, հանգըտավետ:

Ու խորհորդի կանչեց Հեկտոր ըսքանչելին տըրոյացոց՝  
Աքայեցոց նավատորմից հեռու, հըսկա գետի ափին,  
Մաքոր մի տեղ, ուր չըկային ոչ դիակներ և ոչ արյուն:  
Բոլորն իրենց կառքից իջան ունկընդդելու Արամազդի  
Սիրելագույն քաջ Հեկտորին, որ կանգնել էր քազմության մեջ.  
Ձեռքին ուներ նա տասնըմեկ կանգունաչափ երկար նիզակ,

500 Որ փողփողում էր առջևից և ոսկի օղ ուներ վըրան,  
Կըրթընելով նըրա վըրա՝ այսպէս ասաց տըրոյացոց.

«Ինձ լըսեցեք, տըրոյացիք, դաշնակիցներ և դարդանչանք,  
Հույս ունեի ես համորեն աքայիկներն ու նավատորմն  
Այսօր ջընջած վերադառնալ դեպի Իլիոնը հողմաշունչ,  
Սակայն արևն ի մայր մըտով, իջալ գիշեր խավարաբեր,  
Ազատելով աքայեցոց և նավերը ծովի ափին:  
Բայց մենք հիմա, քարեկամներս, հըսպատակվենք սև գիշերվան,  
Եվ մեր ընթրիքը սլատրաստենք. նըծույզները գեղեցկաբաշ  
Արձակեցեք ձեր կառքերից և նըրանց կեր տըվեք ուտեն:

510 Քաղաքից շո՛ւտ բերեք արջառ և ոչխարներ բերեք պարարտ,  
Եվ տըներից բերեք առատ հաց ու գինի, և փայտ բերեք,  
Որ ողջ գիշեր մինչ արշալույս, մինչև պալծառ արևածագ  
Վառենք խարույկ, և թող նըրանց ցոլքը մինչև երկինք հասնի,  
Որ մի գուցե աքայեցիք, օգտըվելով մութ գիշերից,  
Փորձեն հանկարծ փախչել ծովով՝ նըտած իրենց նավերը սև:  
Թող գեթ հանգիստ և ապահով նավ չընըստեն արգիացիք,  
Այլ նըրանցից շատերը թող վերբերն իրենց տանը բուժեն,  
Որ վախենան ուրիշ անգամ ամբարտախան հանդըգնությամբ  
Ջիահըմուտ տըրոյացոց բերելու մարտ արտասովանե՛ծ:

520 Եվ արդ, թող որ մունենիկներն՝ սիրելիներն Արամազդի  
Ազդարարեն ուտանով մեկ, որ պատանիք ծաղկափըթիթ  
Եվ ալեզարդ ծերունիները հավաքվեն քաղաքի շուրջ  
Ու բարձրանան բարձրադիտակ աշտարակներն աստվածակերտ:

Իսկ վեհերոտ կանայք թող որ բոլորն իրենց հարկերի տակ  
 Կըրակ վառեն ու պահակներ նըշանակեն ամենուրեք,  
 Որ չըլիճի դարանամուտ թըշնամիներն ուշ գիշերով  
 Փորձեն քաղաք խուժել հանկարծ՝ զորքից թափուր և անպաշտպան:  
 Արդ, մեծասիրտ տըրոյացիք, թող կատարվի, ինչ որ ասի,  
 Եվ օգտակար խորհուրդներըս թող որ նըշտիվ գործադըրվեն:

530 Առայժմ այսքան, իսկ առավոտ ուրիշ պատվեր պիտի տամ ձեզ,  
 Եվ հույս ունեմ, որ օգնությամբ Ջևսի և մյուս աստվածների  
 Կըհալածենք մենք այստեղից անագորույն այդ շըներին,  
 Որոնք օրհասն այստեղ բերին իրենց այդ սև նավատորմով:  
 Գիշերըս մենք լավ ուշք դընենք մեր բանակի պաշտպանությանն,  
 Իսկ առավոտ կանուխ ելենք ու հագնենք մեր զենքերն ամեն  
 Եվ գոգավոր նավերի մոտ արթնացընենք բարկ Արեսին:  
 Տեսնենք՝ Տիդյան Դիոմեդե՞սն ինձ դեպ պարիսպ պիտի քըշի,  
 Թե՞ ես նըրան պըղընձահար պիտի սպանեմ ու կողոպտեմ:  
 Վաղը փորձո՞վ ցույց տա պիտի Դիոմեդեսն իր ուժը մեզ,  
 540 Թե կարո՞ղ է տուկալ իրոք իմ նիզակի հուժկու զարկին:

Բայց կարծում եմ, թե առաջին քաջերի հետ պետք է որ նա՝  
 Գետին փըղվի խորը խոցված համհարզների հետ իր բոլոր,  
 Եվ այս ամենն առավոտ վաղ, արեգակը դեռ չըծագած:  
 Երանի՞ թե ես լինեի անմահ ընդմիշտ, անձերական  
 Եվ մեծարված այնպես, ինչպես Աթենաս մեծ աստվածուհին  
 Եվ Ապոլլոնն արծաթադեղ, այնքան, որքան ըստույգ է, թե  
 Եղավ այս օրն աքայեցոց համար այնպես աղետաբեր»:

Այսպես ասաց Հեկտորը քաջ, ու ծափ տըրվին տըրոյացիք,  
 Եվ քըրտնաթոր նըծույզներին արձակեցին իրենց լուծից՝

550 Ու կապեցին պինդ փոկերով ամեն մեկին իր կառքի մոտ:  
 Բերին ապա գեր արջառներ ու ոչխարներ բերին պարարտ,  
 Եվ տըներից բերին առատ հաց ու գինի, ու փայտ բերին,  
 Եվ զոհեցին աստվածներին ըսպանդ ընտիր և անարատ:  
 Հովը դաշտից ճենձերն անուշ միճչև երկինք էր հասըընում,  
 Սակայն անմահ աստվածները չընդունեցին զոհը նըրանց,  
 Քանզի նըրանք ասում էին նըվիրական Իլիոնը սուրբ,  
 Պրիամոսին և քաջատեզ Պրիամոսի ժողովըրդին:

Տըրոյացիք մեր իղձերով անցկացրին այդ գիշերը ողջ  
 Պատերազմի դաշտում անթիվ վառ կըրակներ բորբոքելով:

560 Ինչպես ասողերն են երևում լուսապայծառ լուսնյակի շուրջ,  
 Երբ խաղաղ է օդն, ու բոլոր բըլուրները, անտառ ու լեռ  
 Ծողշողում են, ու ճեղքելով երկինք-եթերն անվաղափակ



Երևում է ամեն մի աստղ, ու ցընծում է սիրտը հովվի,—  
Յոլում էին այդպես անթիվ կըրակները տըրոյացոց  
Քըսանթոսի և նավերի միջև ընկած բացաստանում:  
Հազար խարույկ էր բոցկըլտում, և ամեն մի խարույկի շուրջ  
Նըստած էին հիսուն մարտիկ, իսկ ձիերը կառքերի մոտ  
Ուտում էին ճերմակ գարի, Արշալույսին ըսպասելով:

# Ե Ր Գ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Ղ

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՔԻԼԵՍԻ ՄՈՏ

Տըրոյանք այսպէս հրակում էին, տակաջն խոնձուրն աստվածաւաք՝  
Յըրուասարտոտ Վախի ընկերն առել էր ողջ աքայնցոց,  
Եվ համակված էին բոլորն անտանելի սուգով սաստիկ:  
Ինչպէս Ջեիյոուն ու Բորեասն անձավներից թորակացոց  
Հարձակվելով հանկարծակի հուզում են ծովը ձրկնավետ,  
Ալիքների հրակա լեռներ կուտակելով ծովի վըրս  
Ու ծովից դուրս ափ շրպըրտում փըրփրակալած մամոտ անքավ,—  
Այսպէս՝ սըրտերն աքայնցոց ծըփում էին փոթորկահուզ:

Ատրիդէսը՝ դառնակըսկիծ ցափով խոցված ու սըրտաբնկ

- 10 Գընում-գալիս էր, հըրաման տալով ձայնեղ քարոզներին,  
Որ ժողովի հըրաւիրեն անուռ-անուն ամեն մարդու՝  
Լուռ, անաղմուկ, և առաջինն ինքն էր անձամբ կանչում հըրանց:  
Եվ էրբ եկան, հաւաքվեցին, ոտքի ելավ Ագամեմնոնն  
Առատահոս արցունքներով, աղբյուրի պէս հըսեմաստվեր,  
Որ բըխում է թըխակայլակ՝ ապստածի բարձրությունից,  
Ու դառնապէս հատաչելով՝ այսպէս խոսել ըսկըսեց նա.

«Ո՛վ սիրելի առաջնորդներ և իշխաններ արգիացոց,  
Արամազըը ամպրոպադեզ ծանրը հոգսեր դըրեց վըրսս.  
Անագորո՛ւյն, որ նախապէս խոստացաւ ինձ և ակնարկեց

- 20 Բանդէլ Իլիոնն ամրապարիսպ ու հաղթությամբ վերադառնալ:  
Բայց նեկոությունն նյութելով արդ, հըրաման է տալիս նա ինձ,  
Որ ձեռնունայն Արգոս դառնամ այսքան մարդու կորըստից ետ:  
Թերևս ա՛յդ է կամքը հըզոր, իմաստնագույն Արամազդի,  
Որ կործանեց հիմնահատակ բարձրակատար շատ քաղաքներ,  
Ու տակաւիին քանդե պիտի, զի մեծապէս գորեղ է նա:  
Սակայն եկեք բոլորըս մեկ համաձայնվենք իմ խորհուրդին

Ու մեր նավերը առնելով՝ փախչենք դեպի մեր հայրենիք,  
Քանզի այլևս անկարող ենք առնել Տրոյան լայնափողոց»:

Այսպես ասաց, և բոլորը մընացին լուռ ու կարկամած.

30 Չէին խոսում աքայեցիք սուզված տըխտը խոհերի մեջ:

Եվ հուսկ ապա այսպես խոսեց Դիոմեդեսն ամեղագոռ.

«Ատրի՛դ, անմիտ խոսքիդ համար նախ ե՛ս պետք է կըռվեմ քեզ հետ,

Մի՛ բարկանար վըրսս, արքա, զի ժողովը թույլ է տալիս:

Դանաչանց մեջ դու մի անգամ քաջությունըս նախատեսցիր,

Բարբաջելով հանիրավի, թե ես վախկոտ եմ, վատասիրտ.

Այդ մասին քաջ գիտեն բոլոր աքայեցիք՝ մանուկ ու ծեր:

Բայց Ջրովանանն իմաստնամիտ քեզ երկուսից մեկը տըվեց.

Տըվեց նա քեզ գավազանով բարձրը լինել ամեն մարդուց,

Բայց չըտըվեց արիություն, որ ի՛սկ զարդն է իշխանության:

40 Այսպես ուրեմն, հավատում ես, որ վախկո՛տ եմ աքայեցիք,

Եվ ապիկա՛ր եմ կըռվի մեջ, ինչպես որ ինքդ ես անվանում:

Իսկ էթե քո սիրտն ուզում է անպայման տուն վերադառնալ,

Վեր կաց գընա՛, բաց է ճամփադ, հավեր շատ կան ծովի ափին,

Որ Միկենքից ըստվարաթիվ քո ետևից ելան եկան:

Բայց մենք մյուսներս հոգով արի պիտի մընանք այստեղ այնքան

Մինչև քանդենք Իլիոնը մեծ, բայց էթե կան և ուրիշներ,

Որ ուզում են վերադառնալ, թող նալ նըստեն անմիջապես:

Մենք երկուսով՝ Սթենելոսն ու ես միայն կըմարտընչենք

Մինչև վախճանն Իլիոնի, աստված է մեզ բերել այստեղ»:

50 Այսպես ասաց, ու գոչեցին աքայեցիք միահամուռ՝

Ըբքանչացած ձիամարզիկ Դիոմեդեսի խոսքի վըրս:

Ոտքի ելավ այն ժամանակ Նեստորը և խոսեց այսպես.

«Պատերազմում, Դիոմեդես, գերազանց ես և կորովի,

Եվ խորհուրդի մեջ առաջինն ես քո բոլոր ընկերներից,

Չըկա ոչ ոք աքայանց մեջ, որ ուզի քեզ հակաճառել,

Եվ անգոսնել խոսքերը քո, բայց դու խոսքըդ չստվարտեցիր:

Երիտասարդ ես տակավին և կարող ես մինչև անգամ

Իմ ամենեն կըրտսերագույն մեկ զավակըս համարվել դու,

Բայց խելացի խոսքեր ասիր աքայեցոց արքաներին,

60 Ուստի և ես, որ քեզանից ավագագույնն եմ տարիքով,

Պիտ լըրացնեմ պակասը, և չըպետք է խոսքըս անգոսնի

Ոչ ոք, ոչ իսկ Ազամեմոն իշխանապետն ամենափառ:

Անհարազատ և անազգի և անօրեն, անտուն է նա,

Ով որ իրեն ընտանիքում կըռիվ ու վեճ կըցանկանա:

Սակայն հիմա պետք է որ մենք հընգանդվենք սև գիշերին

Եվ պատրաստենք ընթրիքը մեր, լուրաքանչյուր պահնորդը թո՛ղ

Արթուն աչքով հըսկի փոսի շուրջը բոլոր՝ պարըսպից դուրս:  
 Ա՛յս է պատվերըս քաջերին, իսկ դու, Ատրի՛դ Ագամեմնոն,  
 Որ ամենեն վեհագույնն ես արքաների մեջ մեր բոլոր,  
 70 Տո՛ւր ծերերին խընջույք, իսկ այդ վայել է քեզ և ձեռընտու.  
 Վըրաններդդ լիքն են գինով, քանզի նավերն աքայեցոց  
 Կըտրելով ծովն, ամեն օր քեզ բերում են այն Թրակիայից:  
 Չի պակասում քեզ ոչ մի բան, շատերին ես հըրամայում:  
 Բոլորն այստեղ եքք հավաքվեն, մըտիկ արա նըրա՝ խոսքին,  
 Ով որ խելոք խորհուրդ կըտա, քանզի հիմա աքայեցիք  
 Կարիք ունեն լավ խորհրդդի, զի նավերին ընդհուպ ահա՛  
 Թըշնամիներն անթըվելի խարույկներ են վառել բորբոք:  
 Եվ ո՛ւմ է այդ ուրախացնում, վըճուական է գիշերն այս խիստ,  
 Որ կամ պիտի փըրկի և կամ ջընջի իսպառ բանակը մեր»:

80 Այսպես ասաց, և անասցին նըրան բոլորն հոժարական,  
 Դուրս ցատկեցին անմիջապես պահանորդներն ըսպառազեն՝  
 Թրասիմիդեսը Նեստորյան և յուրայինքն արիասիրտ,  
 Ասկալափոսն ու Հալմիճոսն արիական, Մերիոնը քաջ,  
 Ալփարեսն ու Դեիպիրեն, ամենքն իրենց ընկերներով,  
 Եվ քաջ որդին Կրիոնի՝ Լիկոմեդեսն աստվածազարմ:  
 Աըրանք էին պահանորդական պետերն ահա— յոթը հոգի,  
 Եվ ամեն մեկն իր ձեռքի տակ ուներ հարյուր կըտրիճ մարտիկ,  
 Որոնք բոլորն իրենց ձեռքին բըռնած մեկ-մեկ երկար նիզակ՝  
 Թըռան իսկույն ու կանգ առան պարըսպի և փոսի միջև,  
 90 Որ ամեն ոք կըրակ վառեց, կազմեց ընթրիք իրեն համար:

Իսկ Ատրիդես Ագամեմնոնը ծերերին աքայեցոց  
 Կանչեց վըրանն իր ընդրածակ ու ճոխ սեղան տըվեց նըրանց.  
 Եվ ամեն ոք ձեռքը տարավ առջև դըրված կերակուրին:  
 Երբ լիացրին նըրանք իրենց կերուխումի փափազը կուշտ՝  
 Բոլորի մեջ ամենածեր Նեստորը նախ ոտքի ելավ  
 (որի խոսքերն ինչպես որ միշտ հաճո էին և հարգելի),  
 Եվ ի խընդիր նըրանց բարուն՝ ըսկըսեց նա այսպես խոսել.  
 «Ո՛վ մեծափառ դու, Ատրիդես, Ագամեմնոն արանց արքա՛,  
 Քեզնից պիտի ըսկըսես ես և քեզանով էլ վերջացնես.

100 Իշխում ես դու բազում ազգաց, և Արամազդն ի՛նքը տըվեց  
 Ձեռքըդ մական և իրավունք, որ դու նըրանց առաջնորդես,  
 Որի համար քե՛զ մանավանդ պարտ է խոսել, կարծիք հայտնել.  
 Բայց և այնպես պարտավոր ես լըսել նաև ուրիշներին  
 Եվ կատարել, եթե մեկը տալիս է քեզ խելոք խորհուրդ,  
 Իսկ թե ո՛րն է իմաստունը՝ այդ պետք է որ ի՛նքը ընտրես:

Եվ այդ, ինչպես ինձ է թըվում, մի լավ խորհույրդ պիտի տամ ես,  
 Քանզի ուրիշ ոչ ոք պիտի տա քեզ խորհուրդ ավելի լավ:  
 Եվ ինչ հիմա եմ ասելու, մըտածում եմ ես այն վաղուց,  
 Այն օրից վեր, երբ գընացիր, ո՛վ թագավոր, ու զայրացած  
 110 Դու խըլեցիր Աքիլլեսից Բրիսեիս օրիորդին,  
 Հակառակ իմ խըրատներին, որ քեզ տըվի այն ժամանակ:  
 Դու մի՛միայն քո մեծամիտ բարկությանը ունկընդրելով,  
 Այդ քաջ մարդուն, որին նույնիսկ աստվածներն են պատիվ տալիս՝  
 Անարգեցիր անգոսնելով և մըրցանակն իր խըլեցիր:  
 Բայց մենք հիմա խորհուրդ անենք, թե ի՞նչ կերպով կարողանանք  
 Աքիլլեսի սիրտը առնել և հաշտեցնել նրան մեզ հետ՝  
 Լինի հարմար նըվերներով կամ խոսքերով սըրտահանո՞ւ:

Նըրան այսպես պատասխանեց Ագամեմնոն արանց արքան,  
 «Սըխալըս դու, ո՛վ ծերունի, ցույց տալով ինձ, սուտ բան չասիր.  
 120 Սըխալվեցի, չեմ ուրանում, նա մի ամբողջ բանակ արժե,  
 Որին սիրում է Արամազդն ու այդ սըրտանց սիրո համար  
 Նա կորցըրեց աքայական այսքան զինվոր ու զորական:  
 Բայց քանի որ սըխալվեցի, անսալով իմ մոլեգնության,  
 Հաշտըվել եմ ուզում հիմա և տալ նրան նըվեր անբավ:  
 Թըվեմ անա բալորիդ մոտ ընծաներըս շըքեղանոխ,—  
 Յոթ հատ նոփ-նոր եռոտանի և տաս տաղանդ մաքուր ոսկի,  
 Եվ բոցափայլ քըսան կաթսա, և տասներկու երիվարներ՝  
 Արագարշավ իրենց ոտքով մըրցանակներ շահած մարտում:  
 Չի լինի մարդ երբեք աղքատ, ոսկու կարոտ չի քաշի նա,  
 130 Ով այս գանձերն ու գեղեցիկ այս պարգևները ունենա,  
 Որ ինձ բերին սալասըմբակ երիվարներն այդ պատվական:  
 Կըտամ նաև յոթը կանաչք ձեռագործի հըմուտ ու վարժ,  
 Լեպունիներ, որոնց, երբ որ Աքիլլեսը Լեսբոսն առավ,  
 Առանձնացրի ես ինձ համար ու պահում եմ վըրանիս մեջ,  
 Որոնք իրենց գեղեցկությամբ գերազանցում են ողջ կանանց:  
 Կըտամ սըրանք ու սըրանց հետ կըտամ նաև Բրիսեիսին,  
 Որին բըռնի այն ժամանակ ես խըլեցի նրա ձեռքից.  
 Բայց երդվում եմ երդմամբ անեղ, որ ես նըրան ծոցըս չառա,  
 Չըպառկեցի ես նըրա հետ ամուսնական անկողնու մեջ,  
 140 Ինչ օրենքով, որ այդ ու կին զուգավորվում են իրար հետ:  
 Այս բոլորը միանգամից կըտամ նըրան հոծարակամ,  
 Իսկ աստվածներն էթե մեզ տան քանդել քաղաքը Պրիամի,  
 Ներս մըրտնելով՝ նավերն իր թո՛ղ լըցնի ոսկով և պըղընձով.  
 Եվ երբ հարուստ ավարը մենք բաժանելու լինենք մեր մեջ,  
 Թո՛ղ իր ձեռքով իրեն համար ընտրի քըսան տըրովուհի,

Հեղինեից բացի բոլոր ամենագեղ չըքնաղ կանանց:  
 Իսկ երբ հասնենք երկրի ըստինք Արգոսը մեր հայրենագետ,  
 Այնտեղ այնժամ ես ինձ փեսա պիտի անեմ Աքիլլեսին  
 150 ևս պիտ պատվեմ Ռիեստոսին իմ հավասար, միակ որդուս,  
 Որ սրնվում է սիրաբողբոջ մեծափարթամ ճոխությամբ մեջ:  
 Երեք սիրուն դուստր ունեմ ես իմ հոյակապ ապարանքում,  
 Անունները՝ Քրիսթեսիս, Լուվոդիկե, Իփիանասս,  
 Թող սըրանցից ուզածն առնի ու Պելևսի տունը տանի.  
 Ճոխ օժիտն էլ ինքքս կըտամ, մեծապայծաս ու թանկագին,  
 Այնպես, որ մարդ երբևիցե դեռ չի տըվել իր աղջըկան:  
 Ու տամ պիտի յոթը քաղաք գեղեցկակերտ ու բազմամարդ՝  
 Կարդասիլեն ու Ենոպեն, արոտառատ Իոեն դալար,  
 Փերե քաղաքն աստվածային և Անթիսն դալարալետ,  
 Եպիան չըքնաղ և վերջապես Պեդասոսը պերճ, այգեշատ,—  
 160 Բոլորըն էլ ծովեզերյա, Պիլոսի ծայրը ավազուտ,  
 Բնակիչները խաշմանարուստ ու նախրալետ, անասնաշատ,  
 Որոնք նրան իբր աստրծու ընծաներով պիտ մեծարեն  
 Եվ հըպստակ նըրս ցուպին՝ տան պիտի հարկ ու գորք սուստ:  
 Այս բոլորը կըտամ նըրան, եթե նա իր քենը թողնի:  
 Թող որ գիջի, Սանդարապետն է լոկ անհաշտ և անողոք,  
 Այդ պատճառով ատելի է աստվածներին նա և մարդկանց:  
 Թող գիջանի, զի նըրանից վեհագույն եմ իշխանությունք,  
 Թե՛ իբր արքա մականակիր, թե՛ նըրանից տարիքով մեծ»:

Եվ գերեմյան Նեստոր ասպետն այսպես նըրան պատասխանեց.  
 170 «Ո՛վ մեծափստ դու Ատրիդես, Ագամեմնոն արանց արքա,  
 Այդ ընծաներն, որ ուզում ես տալ դու արքա Աքիլլեսին,  
 Քամահրելի և անարժեք ընծաներ չեն, ուստի իսկույն  
 Ընտրենք հարմար դեսպաններ մենք, որ Աքիլլի վըրանն երթան:  
 Դեսպաններին ես պիտ ընտրեմ, և պետք է ինձ հընազանդեն:  
 Փենիքսը նախ, որ սիրելին է Զրվանյան Արամազդի,  
 Առաջնորդի նըրանց թող որ Պելիսածին Աքիլլի մոտ.  
 Հետո՝ Ալաքսը մեծամուն և Ռդիսեսն աստվածագարմ,  
 Եվ նըրանց հետ երկու քարոզ՝ Ելիփադեսն ու Ռդիսոն:  
 Զեռնարվայի ջուր բերեք շուտ, հըրամայեք, որ լուռ կենան,  
 180 Աղոթք անենք Արամազդին, Լըսի գուցե ու մեզ գըրթա»:

Այսպես ասաց Նեստորը ծեր, որ բոլորի սըրտից խոսեց:  
 Եվ քարոզները ձեռքերին ջուր լըցրեցին, ու պարմանիք  
 Լըցրին ազնիվ, ընտիր գինով թակույկները բերնե-բերան,  
 Ապա կարգով, նըստածներին բաժանեցին բաժակներով:

Զոհի գիճին հեղելուց վերջ և խըմելուց հետո **Արամը**  
Ադրեսույան Ագամեմնի վըրանից դուրս ելան ըշտաս:  
Պատվերներ էր տալիս Արամը Նեստոր ասպետը գերեզյան  
Աչքերն ամեն մեկին հառած, Ողիսևսին Ամամալանդ,  
Որ աշխատեն համոզելու Պելիսաժին Աքիլլեսին:

- 190 Դեսպանները ճամփա ընկան մըռընչալից ծովի ափով՝  
Աշխարհակալ գետնադուրդին թափելով շատ աղերս-աղաչ,  
Որ Արվաճի խըրոխտապանձ Հակոսի թոռան հոգին:  
Եվ երբ հասան միրմիդոնաց վըրաններին ու նավերին,  
Գըռտան Արամը՝ Աքիլլեսին Արվագելիս իր քընարով.  
Որ չըքնաղ էր ու մեծարվեստ, արծաթե մույթ ուներ վըրան,  
Որը Արամն ավար ընկավ շեն Հտիոնն ավերելիս:  
Քաղցրանընթաց այդ քընարով ամոքում էր իր վիշտը նա,  
Երգելով փառքը քաջերի, Արամը գործերը փառասպանձ:  
Պատրոկլեսը Արրա դիմաց Արստել էր լուռ ու անըըշունջ,  
200 Ըստասելով Հակիդյան թոռան երգի ավարտվելուն:  
Դեսպանները դուրսագնազարմ Ողիսևսին հետևելով  
Առաջ անցան ու կանգնեցին Աքիլլեսի դեմ-հանդիման.  
Եվ Աքիլլեսը սուշահար՝ քընարը ձեռքն էլավ ոտքի  
Թողած թափոք աթոռը այն, որի վըրս Արստել էր նա:  
Պատրոկլեսն էլ Արամը ի տես՝ ոտքի ելավ իսկույն նեթ:  
Քաջոտն Աքիլն երկարելով ձեռքը Արամը՝ այսպես ասաց.  
«Ողջույն ձեզ, ի՛մ բարեկամներ, մի կարևոր գործ կա անշուշտ,  
Թեև քե՛նով, բայց սիրում եմ ձեզ քան բոլոր մյուս աքայանց»:

- Այսպես ասաց աստվածազարմ Աքիլլը և տարավ Արամը  
210 Ու բազմեցրեց ծիրանելառ գորգով պատած բազմոցներում  
Եվ մոտ կանգնած Պատրոկլեսին դառնալով նա՝ հըրամաչեց.  
«Դե՛, Մեմֆիտյան, սիրելիդ իմ, ամենամեծ թակույկը բեր,  
Անասլակով լըցրու և տուր ամեն մեկին լիքը բաժակ,  
Զի ամենեն շատ սիրելի մարդիկ են հյուր իմ հարկի տակ»:

- Այսպես ասաց, լըսեց Պատրոկլն իր սիրելի ընկերակցին.  
Իսկ Աքիլլեսը կըրակի վըրս դրեց մի մեծ կաթսա,  
Մեջը գըցեց գեր ոշխարի և մի այժի ողնը պարարտ,  
Եվ լավ սընված խոզի թիկունք, ճարպով լըցված, գիրապարար:  
Բըռնել էր միսն Ավտոմեդոնն, ու Աքիլլեսն աստվածային  
220 Կըտրատելով՝ շարում էր վարժ շամփուրների վըրս մեկ-մեկ,  
Իսկ Պատրոկլեսն անմիջապես վառեց կըրակ մի բոցավառ:  
Ասլա, երբ թե՛ բոցը անցավ, մընաց միայն կըրակը բարկ,

- Յանեց սուրբ աղ մըսի վըրա և կըրակը տարածելով՝  
 Ծամփուրները ճեցուկների վըրա դըրված՝ շարեց վըրան:  
 Խորովածը երբ որ եփավ ու դըրեցին մեծ սանի մեջ,  
 Պատրոկլեսը գեղեցկահյուս սավառներով հաց բաժանեց  
 Մեղանի շուրջ ճըստածներին, իսկ Աքիլը՝ միայն համեղ:  
 Նըստել էր նա պատին մոտիկ, աստվածային Ռդիսի դեմ  
 Եվ կարգադրում էր ընկերոջն աստվածային զոհ ընծայել:
- 230 Եվ նա նըվերն աստվածային ճետեց կըրակ, որից հետո  
 Նըստածները ձեռքերն իրենց երկարեցին կերակուրին:  
 Երբ որ կերան ու խըմեցին, քաղցը իրենց հագեցնելով,  
 Այաքան այնժամ աչքով արավ Փենիքսին իր մոտը ճըստած:  
 Կըրակելով Ռդիսն ըզգոն՝ լըցրեց բաժակն անապակով  
 Ու խըմելով Աքիլեսի կենացը նա՝ այսպես ասաց.
- «Ողջ լեր, Աքիլ, կարոտ չենք մենք կերակուրի և կամ գինու,  
 Ո՛չ Ատրիդես Ագամեմնի վըրանի մեջ, ոչ էլ այստեղ.  
 Խրոխսճանքի համադամներ մեզ մոտ էլ կան առատորեն,  
 Եվ մենք քեզ մոտ համադամներ ուտելու չենք եկել այսօր:
- 240 Մի վերահաս մեծ աղետի երկյուղն է մեզ տագնապեցնում,  
 Կըփըրկըլ՝ի մեր նավատորմն արդյոք, թե չէ պիտի կորչի:  
 Ծանր է աստիկ վիճակը մեր, թե ցույց չըտես քո ուժը մեծ,  
 Մեր նավերի և պարոսպի մոտ են արդեն բանակ զարկել  
 Տըրոյացիք և օգնական ճըրանց գընդերն հետվից եկած.  
 Բյուր խարույկներ բորբոքելով ըսպառնում են խըրոխտաբար  
 Խուժել դեպի նավատորմիդ և հըրկիզել նավերը մեր:  
 Իսկ Զըրվանյան Զևսը ճըրանց լավ ճըշաններ է ցույց տալիս՝  
 Աքայեցոց վըրա անվերջ շանթ ու կայծակ արձակելով.  
 Եվ վըքվելով կորդականոն Հեկտորն իր հաղթ ուժի վըրա,
- 250 Արամազդին վըստահացած՝ արհամարհում է՝ մեծագոր  
 Աստվածներին և ողջ մարդկանց վարագային վայրագությամբ  
 Եվ մաղթում է, որ շուտ ծագի առավոտը աստվածային,  
 Ըսպառնալով ծայրակոտոր անել բազում նավերը մեր  
 Եվ հըրկիզել նավատորմիդն ամբողջ հըրով աստկատոչոր,  
 Եվ կոտորել ծըխից շըջմած աքայեցոց որդիներին:  
 Անհանգիստ է սիրտըս աստիկ, վախենում են, թե միգուցե  
 Աստվածները ըսպառնալիքն իրենց հանկարծ գըլուխ բերեն  
 Ու սև օրհաս վիճակվի մեզ, մեռնել այստեղ, Տըրոյայում,  
 Հեռու քաղցըր մեր Արգոսից՝ հայրենիքից մեր ցանկալի:
- 260 Բայց դու վեր կաց, արի, ով քաջ, և քո ուժով, թեպետն ուշ,  
 Փըրկիր տրոյանց ծանո մոլուցքից աքայեցոց որդիներին,  
 Թե չէ հետո շատ կըցավես, սակայն արդեն ուշ կըլինի  
 Զարիքներին դարման գըտնել, ուստի խորհիր դու առաջուց,



Թե ինչ ձևով պիտի վանես դանաչեցոց այդ օրը ժանտ:  
Չէ՞ որ, ով քաջ, երբ Փթիայից քեզ ուղարկեց զինակցելու  
Ազամեմնոն Ատրիդեսին, հայրդդ՝ Պելևսն այսպես ասաց.  
«Որդյակ իմ, քեզ, եթե ուզեն, պիտ շընորհեն մեծ զորություն  
«Թե՛ Աթենասն, և թե՛ Հերան, բայց դու սանձիր քո կրթքի տակ  
«Սիրտդ գոռոզ, զի հեզությունն է լավագույն զարդը մարդու:

270 «Դու ժանտածուտ քենը քեզնից հեռու վանիր, որպեսզի քեզ  
«Է՛լ ավելի պատվեն թե՛ ծեր և թե՛ մանուկն աքալեցի»:—  
Հայրդդ այսպես քեզ պատվիրեց, որը, սակայն, շուտ մոռացար:  
Բայց դու արի, հանգըստացիր, վերջ տուր քո այդ քենին դըժնյա.  
Տա՛ պիտի քեզ Ազամեմնոնն՝ արժանավոր շատ ընծաներ,  
Եթե իջնես դու, Աքիլես, քո այդ բորբոք բարկությունից:  
Ականջ արա, որպեսզի ես թըլվեմ բոլորն այն մեկ առ մեկ,  
Ինչ Ատրիդեսն իր վրբամուժ խոստացավ ողջ քեզ ընծայել:  
Յոթ հաստ նոփ-նոր եռոտանի և տաս տաղանդ մաքուր ոսկի,  
Եվ բոցափայլ քրսան կաթսա, և տասներկու երիվարներ՝

280 Արագարշավ իրենց ոտքով մըրցանակներ շահած մարտում:  
Չի լինի նա երբեք աղքատ, ոսկու կարոտ չի քաշի նա,  
Ով այդ զանձերն ու գեղեցիկ այդ պարզեները ունենա,  
Որ քերեցին Ատրիդեսին երիվարներն այդ պատվական:  
Տալիս է և յոթը կանայք ձեռագործի քաջահըմուտ  
Լեպունհիներ, որոնց երբ դու Լեսբոսն առար, Ազամեմնոնն  
Առանձնացրեց իրեն համար ու պահում է իր վրբամուժ,  
Որոնք իրենց գեղեցկությամբ գերազանցում են ողջ կանանց:  
Բոլորի հետ տալիս է նա և քո չըքնաղ Բրիսեիսին,  
Որին բըռնի հափըշտակեց նա քո ձեռքից այն ժամանակ:

290 Բայց երդվում է, որ նա նըրան չի առել իր ծոցը երբեք  
Եվ չի պատկել նըրա հետ նա ամուսնական անկողնու մեջ՝  
Ինչ օրենքով, որ այդ ու կին զուգավորվում են իրար հետ:  
Այս բոլորը պատրաստ այնտեղ տա պիտի քեզ հոժարակամ,  
Իսկ աստվածներն եթե մեզ տան քանդել քաղաքը Պրիամի,  
Ներս մըրտնելով՝ նավերդդ դու լըցրու ոսկով և պըլիճձով,  
Եվ երբ հարուստ ավարը մենք բաժանելու լինենք մեր մեջ  
Ինքքդ անձամբ քո իսկ ձեռքով ընտրիր քրսան տըրդվուհի՝  
Հեղինեցի բացի բոլոր ամենագեղ չըքնաղ կանանց:  
Իսկ երբ հասնենք երկրի ըստինք Արգոսը մեր հայրենական,

300 Այն ժամանակ այնտեղ նա քեզ փեսա պիտի անի իրեն  
Ու պիտ պատվի Որեստոսին իր հավասար, միակ որդուն,  
Որ սընվում է սիրաբողբոջ մեծափարթամ ճոխության մեջ:  
Երեք սիրուն դուստր ունի նա իր հոյակապ ապարանքում,  
Անունները՝ Քրիսթեմիս, Լավողիկե, Իփիանասա.

- Ա՛ն նըրանցից ում ուզում ես և Պելևսի պալատը տար,  
 Ոչ մի օժիտ պիտի չըտաս, օժիտը նոխ ինքն է տալու,  
 Այնպես, որ մարդ երբևիցե դեռ չի տըվել իր աղջըկան:  
 Ու տա պիտի յոթը քաղաք գեղեցկակերտ ու բազմամարդ,  
 Կարդամիլեն ու Ենուպեն, արոտառատ Իռեն դալար,  
 310 Փերե քաղաքն աստվածային և Անթիան դալարավետ,  
 Եպիան չըքնաղ, և վերջապես Պեդաստը պերճ, այգեշատ—  
 Բոլորըն էլ ծովեզերյա, Պիլոսի ծայրը ավազուտ,  
 Բնակիչները խաշնահարուտ ու նախրավետ, անասնաշատ,  
 Որոնք քեզ մեծ ընծաներով պիտի պատվեն իբր աստրծու,  
 Եվ հրպատակ գավազանիդ՝ տան պիտի հարկ ու գորք անթիվ:  
 Այս բոլորը տալիս է նա, եթե դու քո ոխը թողնես:  
 Իսկ եթե քո սրբոսին աստիկ ասելի եմ Ատրիդ արքան  
 Եվ ընծաներն իր բովանդակ՝ գըթա գոնե աքաչեցոց,  
 Որոնք հյուծվում են բանակում և իբր աստված պատվում են քեզ:  
 320 Հետո՛ պիտի ժառանգես դու անհուն պատիվ, փառք ու պարծանք,  
 Ըսպանելով այդ Հեկտորին, որ խելահեղ կատաղությամբ  
 Քեզ վըրա է հարձակվելու, հոխորտում է, թե իրեն պես  
 Չըկա մի քաջ աքաչանց մեջ, որոնք նավերն ալստեղ բերին»:

- Եվ պատասխան տալով նըրան՝ այսպես ասաց Աքիլլը քաջ.  
 «Դյուցազնագարմըդ, Լալերոյան, բազմահընար դու Ռդիսես,  
 Պետք է, որ պարզ և համարձակ պատասխանեմ քո խոսքերին,  
 Ինչպես որ ինքս եմ մըտածում և կատարում, որ դադարեք  
 Չանձրուցնել ինձ ձեր բըզզոցով, ընդմիջելով մեկ-մյուսին:  
 Դըծոխքի տան դարբասի չափ ասելի է այն մարդը ինձ  
 330 Որի վեզուն ուրիշ բան է ասում և սիրտն ուրիշ մի բան:  
 Եվ ես ահա այն եմ ասում, ինչ որ սիրտս է թելադրում ինձ.  
 Ազամեննոն Ատրիդ արքան և մյուս բոլոր դանակեցիք  
 Անկարող են ինձ համոզել, զի չըզըտավ շընորհ երբեք  
 Երախտամոռ այդ մարդու մոտ ոչ մի կըտրին պատերազմող:  
 Իույնն է բաժինը կըովողի, նույնը՝ կըովից խուսափողի,  
 Կըտրինը քաջ և վատասիրտ վախկոտը նույն պատիվն ունեն,  
 Իույն մահով են մեռնում պըղերզն ու ժըրաջան մարդը ձեզ մոտ:  
 Չըշահեցի ավել ոչինչ, ես որ այնքան շատ տանջվեցի  
 Ու մըղեցի մարտեր բազում՝ մահն ամեն ժամ աչքս ստած:  
 340 Ինչպես թըռչնիկն իր դեռ անթև ձագուկներին կեր է բերում  
 Քաշելով շատ նեղություններ՝ իր իսկ անձին վըտանգելով,  
 Այդպես և ես շատ գիշերներ անքուն, արթուն տատապեցի  
 Եվ անցկացրի արյունազանգ ու բազմահոգ շատ ցերեկներ.  
 Դըրանց կանանց համար՝ բազում դյուցազների դեմ մարտընչելով:

- Նապատորմով ավերեցի ես տասներկու շեն քաղաքներ,  
 Հեռուակով՝ Տրրոյալում տասներմեկը նըվաճեցի,  
 Որոնց բոլոր ավարը թանկ ու հատընտիր գանձերը ճոխ  
 Կողոպտելով առա բերի Ագամեմնոն Ատրիդեսին,  
 Որ սրընթաց նավերի մոտ կանգնած ավարն էր ընդունում,  
 350 Բաժանում էր քիչը այլոց, շատը իրեն պահելով միշտ:  
 Պարզում էր երբեմն էլ նա իշխաններին, սպազանուն,  
 Որոնց մրնաց անձեռնամուխ, ի՛մը միայն հափըշտակեց.  
 Առավ ինձնից սիրատարփիկ և անձկալի իմ ամուսնուն,  
 Որի հետ նո՛ւյն անկողնի մեջ պսոկելով թող զըվարճանա:  
 Արգիացիք հանուն ինչի՞ պետք է կրովեն տրրոյանց դեմ,  
 Ագամեմնոնն ինչի՞ համար բերեց լըցրեց գընդերն այստեղ,—  
 Արգիացի գեղեցկափարս Հեղինեի համար հարկաւ:  
 Մի՞թե միայն Ատրիդեները գիտեն սիրել իրենց կանանց.  
 Յուրաքանչյուր սրբոսի տեր մարդ սիրում է իր կընծջը ջերմ,  
 360 Ու խընամում, ինչպէս որ ես սիրում էի ամբողջ հոգով  
 Բրիսեսիսին, թեև նրան իմ նիգակով էի գերել:  
 Իսկ այժմ, նա, որ նենգութեամբ խըլեց պարզւն իմ ինձանից,  
 Թող չըփորձի ինձ համոզել, նրան լավ եմ ճանաչում ես.  
 Այլ թող քեզ հետ, ո՛, Ռդիսևս, և մյուս բոլոր արքաների,  
 Խորհորդ անի՝ ինչպե՛ս վանի նավերից հուրն այդ ոխերիմ:  
 Քանի որ նա առանց ինձ էլ շատ գործեր է տընօրինել.  
 Ծինեց պարիսպ ու նրա շուրջ փորեց և փոս արձակ ու լայն,  
 Եվ փոսի մեջ տընկել տըվեց խիտ-խիտ ցըցեր, բայց և այնպէս  
 Անկարող է սանձահարել Հեկտորի թափն արյունատուշտ,  
 370 Որը, երբ ես աքայեցոց հետ միասին կըովում էի,  
 Միրտ չէր անում մինչև անգամ պարիսպներից հեռանալու,  
 Գալիս էր նա մինչև կաղնին, Սկեական դըրների մոտ.  
 Միայն մի հեղ կանգնեց իմ դեմ և իմ ձեռքից հագիվ պըրծաւ:  
 Արդ, քանի որ չեմ ուզում ես պատերազմել Հեկտորի դեմ,  
 Վաղն առափոտ զոհ ձոնելով Ջևսին և մյուս աստվածներին,  
 Ծանրը բարձած նավերը իմ ծով հանելով, պիտի տեսնես,  
 (Եթե ուզես և ունես փույթ այդ բաները նըկատելու)  
 Նավերիս չուն՝ մըղված աշխույժ թիավարող մարդկանց ուժից,  
 Ու, թե հըզոր Երկրատառանն ուզենա տալ հողմ հաչողակ՝  
 380 Երրորդ օրը ես կըհասնեմ հայրենիքն իմ՝ հուրթի Փթիս,  
 Որտեղ շատ բան թողեցի ես, երբ չարաբախտ այստեղ եկա:  
 Այստեղից էլ պիտի տանեմ հետքս ոսկի, կարմիր պըղինձ,  
 Եվ ըսպիտակ երկաթ տանեմ, տանեմ կիներ գեղեցկիրան,  
 Որոնք որ ինձ բաժին ընկան, իսկ պարզւն այն, որ ինձ տըվեց  
 Ագամեմնոն արանց արքան, ինքն էլ առավ թըշնամարար:

- Այսպէս, Արրան դու բացեբաց ասածներըս պատմիր թողո՛ւ,  
 Ռրպէսզի մյուս աքայեցոց բարկությունն էլ թոցավառլի,  
 Եթէ կըրկին մեկնումեկին նա կամենա խորամանկել,  
 Զի միևնույն լիրբն է նա միշտ և ամոթ բան ասած չունի.
- 390 Թող այսուհետ չըհանդըզնի նա երեսին իմ նայելու:  
 Պիտի չօգնեմ Արրան այլևս ո՛չ խորհրդոյ, և ո՛չ գործոյ,  
 Նա մի անգամ խաբել է ինձ, թող չըփորձի կըրկին խաբել,  
 Բաւական է, հերիք եղաւ, թող որ կորչի խաղաղությամբ,  
 Երբ Արամագոն ըզգոնամիտ խըլեց Արրա խելըզ գըլլիւից:  
 Ատելի են իր ընծաներն, և նա հարգանք չունի ինձ մոտ,  
 Եթէ նա ինձ տասնապատիկ, քսանապատիկ տա միևչև իսկ,  
 Ինչ որ ունի հիմա և դեռ հետո կարող է ունենալ,  
 Եվ կամ ինչքան կա Ռրքմենում և Թերեում եգիպտական,  
 Ռրտեղ անհուն հարըստություն կա կուտակված տըների մեջ,
- 400 Եվ որ հարլուր դուռ ունի նա, և ամեն մի դրոնից Արրա  
 Կանցնեն երկու հարլուր հոգի իրենց կառքոյ ու ձիերոյ.  
 Ո՛չ, եթէ տա նույնիսկ այնքան, որքան երկիրն ավագ ունի,—  
 Պիտի դարձյա՛լ չըկարենա սիրտս ամոթել Ատրիդ արքան,  
 Միևչև լըրիվ չըհատուցի վըրեժը դառն իմ զըրկանքի:  
 Ատրիդենի աղջըկան ես ինձ կընության չեմ առնի, չէ՛,  
 Անգամ եթէ նա իր գեղով մըրցեր Աստղիկ դիցունհու հետ,  
 Հաւխաարվեր ձեռարվեստով կապուտաչլի Աթենասին:  
 Թող որ ընտրի աքայեցոց միջից փեսա ուրի՛շ մեկին,  
 Շատ ավելի հարմար իրեն և թագավոր վըսեմապետ:
- 410 Եթէ պահեն ինձ աստվածներն, և ես բարով տունըս հասնեմ,  
 Պելևսն ինքը հարկաւ կընտրի որդուն հարմար մի հարսնացու:  
 Հեյլադայում ու Փթիայում կան շատ սիրուն աքայուհիք—  
 Քընքույշ դուստրեր ազնըվազարմ քաղաքապահ իշխանների,  
 Ռրոնց միջից ում ուզենամ՝ կարող եմ ես կին առնել ինձ:  
 Արիական սըրտիս տենչն է ինձ արժանի կին ունենալ  
 Եվ միասին վայելել իմ ծերունի հոր գանձերն անբաւ:  
 Ես իմ հոգին չեմ տա երբեք հարստությանն այն թովանդակ,  
 Ռր ասում են՝ Իլիոնն ունեք խաղաղության տարիներին,  
 Երբ դեռ այստեղ չէին եկել որդիները աքայեցոց.
- 420 Ոչ էլ թողոր այն գանձերին, որոնք իր մեջ է ամփոփում  
 Տաճարն Գուշակ Ապոլլոնի՝ այնտեղ, քարոտ Պիթոյի մեջ:  
 Քանզի հեշտ է ավար առնել պարարտ գառներ ու ոչխարներ  
 Ու ձեռք բերել մի ոսկեբաշ, եռոտանի և ամեն բան,  
 Սակայն հոգին, որ մի անգամ ատամների միջից թըռաւ,  
 Էլ չես կարող Արրան բըռնել, ետ չես պահի այնուհետև:  
 Քանզի նաև մայրըս՝ Թետիս արծաթթաթիկ աստվածուհին

- Ասում է թե ճակատագրից երկու օրհաս եմ կրքում ես,—  
 Եթե այստեղ մընամ կրովեմ տըրոյացոց քաղաքի շուրջ՝  
 Դարձիս հուշը պիտի կորչի, ու կըմընա փառքս անեղծ,  
 430 Իսկ թե դառնամ ես դեպի տուն, դեպ հայրենիքն իմ անձկալի՝  
 Կորած է փառքն իմ քաջության, սակայն երկար կյանք կունենամ,  
 Եվ ինձ այնպես շուտ չի հասնի մահվան օրհասն ու չի գրտնի:  
 Ուզում եմ ես խորհուրդ տալ ձեզ, նաև բոլոր աքալեցոց՝  
 Նավել դեպ տուն, որովհետև դուք չըպիտի գրտնեք երբեք  
 Վախճան ու վերջն ամրապարիսպ նըվիրական Իլիոնի,  
 Զի Արամազդն անեղամոռնչ հովանի է նրա վրա,  
 Եվ տըրոյանք մարտընչում եմ քաջակորով խիզախությամբ:  
 Արո, գընացեք, բարեկամներս, և պատմեցեք ինչ սուսցի,  
 Աքալեցոց ավագանուն, զի ծերերին պատիվ է այդ,  
 440 Որ մըտածեն մի այլ միջոց՝ ազատելու նավերն իրենց  
 Եվ բանակը աքալեցոց. այն, ինչ խորհել էին նրանք,  
 Գըրլոխ չեկավ և չի գալու, քանի ես ռխ ունեմ և քեն:  
 Դուք գընացեք, քայց Փենիքսը թող որ մընա, քընի այստեղ,  
 Որպեսզի վաղն ինձ հետ նավով վերադառնա դեպ հայրենիք,  
 Միայն եթե ուզում է նա, նըրան բըռնի չեմ տանի ես»:

- Այսպես խոսեց, և բոլորը մընացին լուռ ու լեզվակապ,  
 Խիստ զարմացած Աքիլլեսի այդ զայրագին պատասխանից.  
 Եվ հուսկ ապա Փենիքսը ծեր խոսեց աչքերն արտասալայից,  
 Զի նա շա՛տ էր աքալեցոց նավատորմի համար ցավում.  
 450 «Հըրաշակերտ ո՛վ Աքիլլես, եթե արդեն վըճեղ ես դու  
 Վերադառնալ և չես ուզում հույն հեռացնել մեր նավերից,  
 Որովհետև զայրույթը քո հոգում ընկած՝ տիրել է քեզ,  
 Ինչպե՛ս, որդյակ իմ սիրելի, ես առանց քեզ մընամ այստեղ:  
 Երբ Փթիայից Պելևսը ծեր՝ Ատրիդեսին զինակցելու  
 Ուղարկեց քեզ՝ դեռևս անփորձ պատերազմի գործերի մեջ  
 Եվ ժողովի, որտեղ մարդիկ փառք ու պատիվ եմ վաստակում,  
 Ինձ ուղարկեց քեզ հետ, որ ես սովորեցնեմ բոլորը քեզ,  
 Որ դու լինես ճարտարախոս և հաջողակ զենքի գործում:  
 Ո՛չ, առանց քեզ, քաղցր իմ որդյակ անկարող եմ մընալ այստեղ,  
 460 Մինչև անգամ աստվածներից մեկը եթե ինձ խոստանար  
 Ծերույթունից ինձ ազատել ու դարձընել երիտասարդ,  
 Ինչպես էի, երբ թողեցի ես Հելլադան գեղեցկակիսն,  
 Փախչելով հորս՝ Ամիմաորի անեծքներից ու զայրույթից:  
 Բարկացել էր նա ինձ վըրա իր վարսագեղ հարճի համար,  
 Որին սիրում և իմ մորը՝ իր ամուսնուն անարգում էր:  
 Իսկ մայրըս միշտ, զօր ու գիշեր աղերսում էր փարած ծունկիս,

- Որ ես փութամ, մըտնեմ հարճին, որպեսզի առ ծերին առի:  
Մորըս խոսքին ես անասցի, բայց իմացավ հայրս այդ մասին,  
Եվ անհծեց ինձ անավոր էրիցնային աղոթելով,
- 470 Որ չընրասի իր ծընկերին ինձնից ծընված ոչ մի զավակ:  
Եվ աստվածներն հորըս այդ դատն անեծքները կատարեցին—  
Արամազդը անդրևդային և սուկայի Պերսեփոնեն:  
Ես զայրացած որոշեցի հորս ըսպանել սուր պղղրնձով,  
Բայց մի աստված միտքըս փոխեց և մարեց հորն իմ բարկության,  
Ըզգալ տալով, թե ինչ տըխուր անուն պիտի թողնեմ տոհմում,  
Ու ենթարկվեմ մարդկանց կողմից նախատալից սլարաավաճքի՝  
Աբալեցոց մեջ ոճրագործ ու հայրասպան հորջորջելու:՝  
Այսպես ահա այնուհետև սիրտըս այլևս չէր հանդուրժում  
Ցասումնայից հոր հետ մեկտեղ ապրելու նույն արարածի մեջ:
- 480 Ազգականներ և ընկերներ շուրջ-բոլորս թախանձագին  
Խընդրում էին, որ ես մընամ, չրհեռանամ իմ հոր տղնից:  
Մորթում էին հաճախ գառներ, գերապարար ու ծանրաբալ  
Կեռակոտոշ, դանդաղ եզներ ու լարպալից խոզեր բազում,  
Խորովելով Հեփեստոսյան բոցի վըրա անմահական,  
Եվ ծերունու կարասներից առատ գինի էին խըմում:  
Ինք գիշեր չորս կողմս սուած նընջում էին ու փոխնիփոխ  
Պահակություն էին անում, կըրակը միշտ վառ պահելով,  
Ոմանք գավթում ապարանքի, ամրապարիսպ մեծ սըրահում  
Եվ ոմանք էլ իմ սենյակի նախամուտքում դըռան առաջ:
- 490 Բայց տասներորդ խավարակուռ գիշերը երբ վըրա հառավ,  
Այն ժամանակ խորտակելով ամուր դըռներն իմ սենյակի,  
Դորս վագեցի և անարգել անցաւ բակի ցանկապատից  
Գալտագողի՝ պահակներից և կանանցից ըսպասալոր:  
Հետո փախա հորըս տղնից և կըտրելով լայն Հեղաղան՝  
Եւ վերջապես հասա Փթիա խաշնահարուստ և սրգավանդ,  
Որտեղ հայրըդ՝ Պելևս արքան հյուրընկալեց ինձ իր տան մեջ  
Եվ ինձ սիրեց, ինչպես մի հաշր սիրում է իր միակ որդուն.  
Ծընված շատ ուշ, ծեր օրերում, մեծափարթամ ճոխության մեջ:  
Հարբստության տեր արավ ինձ ու ճողովորդ տըղվեց անթիվ,
- 500 Ապրում էի ծայրը Փթիո, դուրսների վըրա իշխան:  
Այնտեղ ահա՛, ո՛վ Աքիլէս, քեզ հասցըրի այդ հասակին,  
Որդու նըման քեզ սիրելով, երբեք չէիր կամեմում դու  
Հացկերույթի գընալ մի տեղ, ոչ էլ տանը մի բան ուտել  
Մինչև որ քեզ չստնեի ես, նրատեցնեի իմ ծընկերին  
Եվ կերակրիկն այս իմ ձեռքով քեզ չըտայի, նաև գինին:  
Քանի՛ անգամ կըրծքիս վըրա դու պարեգտուն իմ բըբջեցիր  
Սև գինիով, բերնիցդ թափված ջո մանկության ծանր օրերին:

- Այսպէս եւ շատ տառապեցի և հոգնեցի եւ քեզ համար,  
**Քանի որ մեծ աստվածները չէին ուզում գալստի տալ ինձ՝**
- 510 **Մըտածեցի քեզ որդեգրել, աստվածատիպ ո՛վ Աքիլլէս,**  
 Ռոպէսզի դու դըժբախտության դեպքում փրկես ինձ և օգնես:  
 Արդ, Աքիլլէս, տիրապետիր ոգին բո մեծ, քաջը պետք չէ  
 Կարծր ու անգութ սիրտ ունենա, աստվածներն են լըսում նույնիսկ,  
 Ռոնք փառքով և գորությամբ գերիվերո են բոլորից,  
 Քայց և դարձյալ մարդիկ նրանց նըվերներով և զոհերով  
 Եվ ողորջ աղերսներով, աղոթքներով հաշտեցնում են,  
 Եթէ մեկը նըրանց հանդեպ հանցանք ու մեղք գործած լինի,  
 Ռովհետև Աղերսներն էլ դուստրերն են մեծն Արամազդի,  
 Խորշումներես, կաղ ոտքերով, աչքերով շիւ և ակընկոր,
- 520 **Որ Եղեռնի ետևից են գընում հոգնած ու դեղևում:**  
 Իսկ Եղեռնը, որ հըգոր է և արագոտն՝ առաջ ընկած  
 Շըրջում է ողջ երկրի վըրա վընասելու համար մարդկանց,  
 Իսկ Աղերսները Եղեռնի ետևից միշտ ընթանալով՝  
 Նըրա մարդկանց տըված խորունկ վերքերին են դարման տանում.  
 Ով պատկառի Արամազդի այդ դուստրերից, նըրանց անսա,  
 Աղերսները կօգնեն նըրան և կըլըսեն աղաչանքին,  
 Իսկ եթէ մեկն համատորեն ու կամակոր մերժի նըրանց,  
 Այնժամ նըրանք Ջըրվանյան մեծ Արամազդի մոտ գընալով՝  
 Կըպաղատեն, որ հալածվի նա Եղեռնից և սլատըժվի:
- 530 **Տո՛ւր նաև դու, ո՛վ Աքիլլէս, Արամազդի այդ դուստրերին**  
 Նույն պատիվը, որ շատ ու շատ քաջերի միտքն է ողորքում:  
 Եթէ չըստար Ատրիդը քեզ ճոխ պարգևներ այժմ ու հետո,  
 Այլ մընար միշտ անգիղջ ու չար, թըշնամության մեջ համատեր,  
 Այն ժամանակ ես ինքս էլ քեզ, այո՛, խորհուրդ պիտ չըտայի  
 Քենըդ թողնել, քաջ Աքիլլէս, և օգնության գալ աքայանց,  
 Ռըքան էլ որ նեղը լինեն և քո ուժին պետք ունենան:  
 ՚նա շատ բան է տալիս հիմա, խոստանալով տալ և հետո,  
 Եվ ընտրելով աքայեցոց միջից՝ ազնիվ, ականալոր,  
 Քեզ ամենեն շատ սիրելի մարդկանց աչստեղ ողորկեց նա:
- 540 **Մի՛ անգոսնիր նըրանց որ քո ոտն են եկել աղերսանքով.**  
 Պարսալելի չէ առաջին զայրույթը քո բոլորովին:  
 Վաղընջական կրտրիճներին պարծանք էր մեծ, ինչպես գիտես,  
 Երբ որ նըրանք զայրանային անհընարին սըրտմըտությամբ՝  
 Լըսել, անսալ աղաչանքի, ճոխ պարգևներ ընդունելով:  
 Մի հինավուրց դեպք են հիշում, շատ վաղուցվա բան է, նոր չէ,  
 Որ ես, ինչպես որ եղել է, պատմեմ պիտի, սիրելիներ:
- Անդ, Կալիդոն քաղաքի շուրջ կորեւտներն ու քաջ էտոլյանը  
 Կատուղի մարտ էին մըղում ու կըտորում, ջարդում իրար,—

- Էտոլացիք պաշտպանելով հայրենական քաղաքն իրենց,  
 550 Կուրետները խիզախաբար՝ պատերազմով այն քանդելու:  
 Կըռիվն այդ գոռ զըրգրել էր ինքն Արտեմիսը ոսկեզահ,  
 Որովհետև նա սուկայի զայրացած էր Ինևսի դեմ,  
 Որ պըտղաուտ բերրի դաշտում նրան նըվեր չէր մատուցել,  
 Մինչդեռ բոլոր աստվածներին առատ բաժին էր հանել նա,  
 Եվ մեծափառ Արամազդի դըստեր միայն զոհ չընծայեց,  
 Մոռացության տալով նրան, կամ պարզապես անփութությամբ:  
 Նետագրոս դուստրն Արամազդի զայրանալով նրա վըրա,  
 Մի վայրենի, վայրագասուն, ճերմակատամ կինն բաց թողեց,  
 Որ Ինևսի անդաստանում պատճառում էր մեծ վընասներ:
- 560 Իրար վըրա գետին փրեց ամբարձուղեչ ծառեր բազում,  
 Պըտողներով, ծաղիկներով՝ արմատախիլ արավ նըրանց:  
 Մեղեագրոսը՝ Ինևսի արի որդին զարկեց նրան  
 Քաղաքներից շատ որսորդներ և բարակներ հավաքելով,  
 Որովհետև քիչ մարդկանցով կարելի չէր հաղթել նրան.  
 Ահնելի էր, և շատերին նա խարույկի վըրա հանեց:  
 Եվ Արտեմիսն առաջ բերեց ահեղ աղմուկ և պատերազմ  
 Այդ վայրենի կիննի զըլխի և թավամազ մորթի համար  
 Երկու ուժեղ կողմերի մեջ՝ կուրետների և էտոլացից:  
 Այսպես, քանի դեռ արիսյան Մեղեագրոսն էր մարտընչում,  
 570 Կուրետները հաղթվում էին ու թեպետև ըստվարաթիվ՝  
 Սակայն կրկին չէին կարող պարըսպից դուրս ելնել նըրանք:  
 Բայց երբ տիրեց Մեղեագրին ցասումը բուռն բարկության,—  
 Որ մինչև իսկ իմաստունի միտքն է հուզում և վըրդովում,—  
 (Քանզի նա խիստ զայրացած էր սիրելի մոր՝ Ալթեայի դեմ,  
 Քաշվեց կընոջ մոտ հարազատ՝ գեղաչըքնաղ Կլեոպատրի,  
 Որը աղջիկն էր Եվենյան գեղասըրունք Մարպետասի  
 Եվ Իդեսի— այն ժամանակ ամենաքաջ, զորեղ մարդու:  
 Եվ որպեսզի խըլի չըքնաղ, գեղասըրունք օրիորդին՝  
 Վերցրրեց նա իր լայնալիճն ընդդեմ գուշակ Ապոլլոնի:
- 580 Այդ ժամանակ, ապարանքում, գեղաչըքնաղ Կլեոպատրան  
 Ալկիոնն էր կոչվում իր սիրելի հոր ու մոր կողմից,  
 Քանզի մայրը Ալկիոնի սաստիկ վըշտով էր համակված,  
 Երբ որ իրեն հափըշտակեց Ապոլլոնը կորովաձիգ:  
 Նըստած . . . ժանտ ու քինասիրտ Մեղեագրուն իր կընոջ մոտ,  
 Մաղձոտ՝ իր մոր անեծքներից, որ խընդրում էր աստվածներին,  
 Իր հարազատ եղբոր արյան համար տըրտում ու վըշտահար,  
 Ու ծընրադիր ծեծում էր նա բեղուն երկիրն իր ձեռքերով  
 Աղաչելով Սանդարպետին և դըժընդակ Պերսեփոնին,  
 Ծոցն արցունքով ողողելով, որ իր որդուն մահվան մատնեն:



- 590 Եվ դժոխքից իսկ անդամ Իրիման մութ և անողորմ):  
 Ու բարձրացավ դողիդ, աղմուկ պարիսպների, դռների մոտ,  
 Ծեծվում էին բուրգերն ամեն. ծերունիներն էտուացի  
 Խրնդրարկուններ ուղարկեցին անդամն՝ բուրմեր աստվածընտիր՝  
 Խոստանալով մեծ պարգևներ, որ գա, վաճե ժանտ ոտխիսն:  
 Ազատություն տրվին անդամ, որ նա ընտրի իրեն համար  
 Բարեբեղուն Կալիտոնի մի մասն՝ հիսուն օրավար հող —  
 Կեսն գինեքեր այգու համար ու կեսն՝ ազատ վար ու ցանքի:  
 Եվ ձիավարժ Ինեսն էր ծեր թախանձագին խրնդրում անդամ  
 Ծունրը դրած բարձրաձեղուն իր սենյակի դռան շեմքին.
- 600 Խրնդրում էին անդամ նաև քույրներն ու մայրը մեծարգո,  
 Ինչպես քույր բարեկամներն ու ընկերներն իր սիրելի,  
 Բայց նա համառ, անդրդրվելի մընաց անդամն աղաչանքին,  
 Եվ անկարող եղան անդամք փառիկացրնել սիրտը անդամ,  
 Մինչև որ իր տունը հիմքից դողաց, ցրնցվեց հաճախակի.  
 Կորեւտները սանդուղ դրած ելնում էին բուրգերն ի վեր  
 Կըրակ տալու մեծ քաղաքին. այն ժամանակ գեղեցկիրան  
 Կինը սիրուն՝ Կլեոպատրան գուժկան ձայնով, արտասովոր  
 Աղաչում էր Մելեագրին ու մեկ առ մեկ թրվում անդամ  
 Թե ինչ աղետ ու պատուհաս կարող էր գալ մարդկանց գլխին,
- 610 Երբ թըշնամին անագորույն խուժեր իրենց քաղաքը մեծ:  
 Տըղամարդկանց կրկնորդեն ու քաղաքին կըրակ կրտան  
 Ու կըգերեն գեղեցկալանջ կանանց, մատողաչ մանուկներին:  
 Մելեագրի սիրտը հուզվեց ի լուր այդ ժանտ ոճիրների  
 Ու վեր կացավ, գընաց ըշտապ չըքնաղ գեները հագնելու:  
 Կորըստաքեր օրը այսպես նա հեռացրեց էտուներից՝  
 Մի կողմ դրած գայրույթն ու քեն, թեպետ անդամ չըտրվեցին  
 Ծոխ ընծաներ, բայց նա այնպես էլ եղեռնը հեռու վաճեց:  
 Իսկ դու անդամ մի՛ անմանվիր, սիրելիդ իմ, և դևը թո՛ղ  
 Չըդարձընի նույն կողմը քեզ, գի չափազանց վատ կըլինի
- 620 Գալ օգնության այն ժամանակ, երբ վառված են նախերն արդեն:  
 Ընծաների՛ համար արի, և բովանդակ աքայեցիք  
 Պատվեն պիտի քեզ, Աքիլես, և աստրծու պես մեծարեն:  
 Իսկ թե առանց պարգևների դու մըտնես մարտ արշունատուշտ,  
 Նույն պատիվը չես ըստանա, թեկուզ հաղթես դու թըշնամունն:

Եվ ծերունուն արագտըն Աքիլըն այսպես պատասխանեց.  
 «Փենիքս, օ հա՛յր իմ ծերունի, այդ պատիվներն ինձ պետքը չեն,  
 Ձի կարծում եմ, թե Արամազդն ինձ բավական շատ է պատվում,  
 Նա մահկանան անվերի մոտ ինձ իր ձեռքից բաց չի թողնի,  
 Բանի որ դեռ շունչ կա վըրաս ու սըրունքներս ինձ չեն լըքել:

630 Ես քեզ ուրիշ բան էլ կասեմ, և դու մըտքիդ մեջ պահիր այն,  
Քո ողբերով ու հեծությամբ դու իմ հոգին մի՛ քայքայիր,  
Եվ մի խոսիր այդպես ինձ մոտ դու ի նըպաստ Ասորիդեսին,  
Չըպեսք է դու սիրես նըրան, որ իմ սըրտից չըհեռանաս,  
Այլ ցավեցրու ինձ հետ և դո՛ւ ինձ խորապես ցավեցնողին.  
Թագավորի ինձ հավասար, պատվիս կեսը քեզ լինի թող:  
Թող որ դըրանք գընան, իսկ դու մընա՛ պստեղ, իմ վըրանում,  
Նընչիր փափուկ անկողնու մեջ, և առափոտ երբ որ ծագի,  
Կըմըտածենք՝ մընալ այստե՛ղ, թե՛ մերոնց մոտ վերադառնալ»:

Ասաց Աքիլյն ու հոնքերով նըշան արավ Պատրոկլեսին,  
640 Որ Փեմիքսի հասար փափուկ մի անկողին պատրաստել տու,  
Եվ մյուսներն էլ մըտածեն վերադառնալ, բայց այդ պահին  
Տելամոնյան Այաքսը մեծ խոսք առնելով այսպես ասաց.  
«Կյուցագնազարմըղ Լայերոյան, բազմահանճար դու Ռդիսև,  
Վեր կաց գընանք, որովհետև ես հույս չունեմ թե այս ճամփով  
Մենք կըհասնենք նըպատակին. գընանք պատմենք, ինչ լըսեցինք.  
Թեև հաճո ու քաղցրալուր չըլըսեցինք մենք ոչ մի բան  
Դանաչեցոց համար, որոնք աչքը ճամփին մեզ են մընում:  
Աքիլեսը իր կըրծքի մեջ ունի գոռոզ ու վայրագ սիրտ.  
Խըստաբարո՛, որ անկեղծ սերն ընկերների արհամարհեց,  
650 Որին բոլորս ամենից շատ էինք պատվում նավատորմում:  
Անգո՛ւթ, նույնիսկ մարդ իր եղբոր և իր որդուն ըսպանողից  
Կառնի տույժ ու փըրկանք անբավ, սիրտը կիջնի, կըմեղմանա.  
Բայց քո կըրծքում աստվածները դըրին, դաժան ո՛վ Աքիլես,  
Անագորույն ու չար մի սիրտ մի աղջըկա համար միայն:  
Իսկ մենք հիմա տալիս ենք քեզ ամենագեղ յոթ այլ կանաչք,  
Եվ բացի այդ շատ այլ գանձեր, ուրեմըն հեզ սիրտ ունեցիր,  
Մարդակներիցըղ պատկառիր, զի քո հարկի տակ ենք ահա,  
Դանաչեցոց կողմից դըրկված և ուզում ենք մընալ քեզ միշտ  
Սերտ սիրելի և մըտերիմ՝ քան մի ուրիշ աքաչեցու»:

660 Եվ արագտուն Աքիլեսը նըրան այսպես պատասխանեց.  
«Կյուցասեղո՛ւնդ Տելամոնյան Այաքս, իշխանըղ ազգերի,  
Անժըլատելի բաներ ասիր, և քո սըրտից խոսեցիր հո,  
Սակայն աստիկ մի բարկությամբ ոռչում է սիրտս ամեն անգամ,  
Որ հիշում եմ, թե Ասորիդեսն ինձ անարգեց աքաչանց մեջ,  
Արհամարհեց տարաշխարհիկ և վատանուն մարդու նըման:  
Վերադարձեք պատվիրակներդ ու պատասխան տարեք նըրան,  
Որ արյունոտ մարտ մըտնելու մասին երբեք չեմ մըտածի,  
Մի՛նչև որդին Պրիամոսի, արիասիրտ Հեկտորը քաջ

Քա ու հասնի միրմիրոնաց վըրաններին ու նավերին,  
670 Ըսպառած ո՞ղջ աքայեցոց ու նավատորմն ամբողջ այրած:  
Իսկ վըրանիս ու նավիս շորջ Հեկտորն որքան էլ մոլեգնի,  
Կարծում եմ ես, որ վերջ կըտամ նըրա գոռոզ հոխորտանքին»:

Այսպես սասաց, նըրանք սուան ամեն մեկը մի-մի բաժակ  
Եվ ձոնելով՝ վերադարձան. Ոդիսևսն էր սուաջնորդում:  
Իսկ Պատրոկլեսն հըրամայեց ընկերներին և աղախնոց,  
Որ Փեցիքսի համար շուտով պատրաստեն թավ անկողին:  
Աղախիններն ըշտապեցին հըրամանն այդ կատարելու:  
Պատրաստեցին թավ անկողին, իրոնելով լայն ոչխարենի  
Նըրա վըրա՝ ծաղկանըկար փափուկ բեհեզ մի նըրբահյուս:  
680 Ծերը պառկեց, ըսպասելով աստվածային Առավոտյան:  
Իսկ Աքիլլեսը հոչակերտ իր վըրանի խորքում քընեց՝  
Կողքը չըքնաղ Դիոմեդեն՝ Փորբաղեսի դուստրը սիրուն,  
Որին բերել էր Լեսբոսից Աքիլլը կին իրեն համար:  
Եվ մյուս կողմում Պատրոկլեսը պառկեց քընեց, և նըրա մոտ  
Պառկեց Իփիսը գեղիբան, որ Աքիլլը տըվեց նըրան,  
Երբ Ակիրոնն ավարեց նա, քաղաքը բարձր՝ Ենիևսի:

Պատվիրակներն երբ գընացին հասան վըրանն Ատրիդեսի,  
Աքայեցիք նըրանց ոսկի բաժակներով ընդունեցին  
Եվ անհամբեր սուաջ գալով՝ հարցեր էին տալիս նըրանց:  
690 Առաջի՞ն հարցում արավ Ագամեմնոն արանց արքան.  
«Ասա՛ շուտ ինձ, փառքդ աքայանց, երևեի դու Ոդիսևս,  
Համաձայնվո՞ւմ է ոխերիս հուրը վանել նավատորմից,  
Թե՞ մերժում է և իր գոռոզ սիրտը ոխով մըխում է դեռ»:

Պատասխանեց նըրան դյուզացն Ոդիսևսը հոգնատածան.  
«Ո՛վ մեծափառ Ագամեմնոն, ժողովրդոց դու թագավոր,  
Նա ո՛չ միայն չի կամենում իր բարկության հուրը մարել,  
Այլ ավելի՛ է բորբոքում իր խըստաշունչ մոլեգնությամբ  
Ու քամահրում խոսքերը քո և ընծաներն արհամարհում:  
Պատվիրում է քեզ խորհրդդ նըստելու մյուս աշաչանց հետ,  
700 Թե դու ինչպես փըրկես նավերն և ազատես գորքն աքայանց:  
Ըսպառնում է նա մինչև իսկ վաղն սուսվոտ լուսաբացին  
Ծովը ձըգել ճոճեմ նավերն իր գեղատափա՝ դեպի Փթիս,  
Եվ սսում է՝ պետք է աքայես ամեն և մյուս աքայեցիք,  
Որովհետև Իլիոնի վախճանն երբեք չէր տեսնի դուք,  
Զի Արամազդն անեղագոչ հովանավոր է տըրդանց,  
Որոնք կըսվում են քսջարար և կորովի խիզախությամբ»:

Ահա՛ բոլորն, ինչ որ ասաց, թող որ պատմեն նաև նրանք՝  
Այաքսն ու գույգ քարոզները, երկուսն էլ լուրջ, խելոք մարդիկ:  
Իսկ Փենիքսը մընաց այնտեղ Աքիլեոսի հրրամանով,  
710 Որ առավոտ նավ նրստելով՝ վերադառնա դեպ հայրենիք,  
Միայն՝ եթե ինքն ուզենա, նրանք բրոնի չի տանելու»:

Այսպես ասաց, և բոլորը մընացին լուռ ու կարկամած՝  
Սարասիահար պատասխանից, զի աստույից էր խոսել նա:  
Չէին խոսում մի պահ բոլոր որդիները աքայեցոց,  
Եվ ի վերջո բերան բացեց Դիոմեդեսն անեղագոռ.  
«Ո՛վ մեծափսո դու Ատրիդես Ագամեմնոն արանց արքա,  
Քեզ արժան չէր աղաչելու մեծահոգի Պելիսյանին  
Եվ խոստանալ ճոխ ընծաներ, որ գոռոզի մեկն էր արդեն  
Եվ դու անա առավել ևս գոռոզացրիր քո խընդրանքով:  
720 Գընում է թե մընում այստեղ՝ ինքը գիտե, մենք գործ չունենք,  
Անտարակույս նա վերբստին պատերազմի մեջ կըմբտնի,  
Երբ կըծքի տակ սիրտը եռա, և մի աստված դրոդի նրբան:  
Իսկ արդ լրսեք ինչ ասում եմ և անսացեք իմ ասածին.  
Գընացեք այժմ և սիրտը ձեր կազդորեցեք հաց ու գինով,  
Գինին մարդուն քաջություն է տալիս և ո՛ւժ, առույգություն:  
Իսկ վարդամատն Առավոտը երբ որ ծագի, Ագամեմնո՛ն,  
Դու նավերի առջևը հան հետևակներն ու այրուձին,  
Խըրախուսիր և ինքըդ տար գընդերը գոռ դեպի գուպար»:

Այսպես ասաց, և արքաներն հավանություն տրվին նրան,  
730 Ըսքանչացած ձիախըրոխտ Դիոմեդեսի այդ խոսքերից.  
Եվ հեղելով ձոն ամեն ոք՝ վրբանները ըշտապեցին  
Ու պառկեցին քաղցրը քընի պարզանները վաչելելու:

# Ե ր գ Տ ա ս ն ե ր ո թ ղ

## ԴՈՒՈՆՅԱՆ ԴՐՎԱԳ

Աքայեցոց պետերն ամեն պառկած իրենց նավերի մոտ  
Նընչում էին գիշերն ի բուն տարված անուշ խորը քընով,  
Միայն Ատրիդ Ազամեննի աչքերից էր քունը փախել,  
Ու տանջվում էր միտքը նրա հուզումնակոծ և անհանգիստ:  
Ինչպես երբ որ մեծամրոունչ փալլատակի գեղեցկավարս  
Հերայի այրն ու պատրաստի սաստիկ անձրև, կարկուտ կամ ձյուն,  
Որի բուքով անեղաշունչ ճերմակում են դաշտ ու քըլուր,  
Եվ կամ բանա երախը մեծ կորըստաբեր պատերազմի,—  
Այդպես նաև հոգու խորքից մըռընչում էր Ատրիդ արքան,

- 10 Ու պատել էր սուկումն անեղ նրա հուզված միտքն ու հոգին:  
Ամեն անգամ, երբ նայում էր տըրոյացոց դաշտի վըրս՝  
Զարմանում էր Իլիոնի դեմ վառվող անթիվ կըրակներով  
Եվ փողերի, սրբիզգների ու բազմության ժըխտով մեծ:  
Իսկ երբ նայում էր աքայանց նավերի ու գորքի վըրս՝  
Փետում էր իր գըլխի մազերն ու փունջ առ փունջ երկիզքն ի վեր  
Արամազդին ձոնելով այն՝ հեծեծում էր հառաչալից:  
Նա որոշեց վերջ ի վերջո երթալ Նելլան Նեստորի մոտ  
Եվ նրա հետ գըլուխ-գըլխի տալով՝ միջոց մի մըտածել  
Ազատելու համար բոլոր չարիքներից աքայեցոց:
- 20 Վեր կենալով հագավ շըքեղ իր պարեգոտն Ատրիդ արքան,  
Կապեց մաքուր իր ոտքերին գեղեցկահյուս մուկեր մի գույգ  
Զըգեց ապա նա իր վըրս կարմրատեսիլ սույուծենին  
Պըճըղնավոր և ահագին, և իր երկար նիզակն առավ:

Մենելավն էլ ահի մեջ էր, նա էլ քընել չէր կարենում,  
Վախենալով, թե մի գուցե վըտանգ հասնի արգիացոց,  
Որ կըտրելով անծայրածիր ծով ու ցամաք, իր պատճառով,

- Եկել հասել էին Տրոյա, բերելով մարտ այլունահեղ:  
 Խայտաբրդետ ընձենիով ծածկեց նա իր թիկունքը լայն  
 Գլխին դրեց իր վիթխարի սաղավարտը պողոճաճույն,  
 30 Երկայնաստվեր աշտեն առավ և ըշտապեց, որ արթնացնի  
 Իր թագավոր եղբորն ավագ՝ պետին համայն արգիացոց,  
 Որին բոլոր ժողովուրդը մեծարում էր աստրծու պես:  
 Գըտավ նրան այն միջոցին, երբ իր զենքերն էր հագնում նա:  
 Ագամեմնոնն ուրախացավ եղբոր գալուստը տեսնելով.  
 Եվ առաջինն անեղագոռ Մենելայիսն ինքը խոսեց.  
 «Այդպես, եղբայր իմ, այս ժամին ինչո՞ւ ես դու զինավառվում,  
 Գուցե մա՞րդ ես ուզում հանել տրոյացոց լքրտեսելու.  
 Վախենում եմ դրքա համար դու հանձնառու մարդ չըզտանես,  
 Որ սիրտ անի մեճակ գընալ դեպի բանակը թըշնամու  
 40 Ամմահական մութ գիշերով, շատ սըրտոտ մարդ պետք է լինի»:

Ագամեմնոն արանց արքան եղբորն այսպես պատասխանեց.  
 «Թե՛ ես, թե՛ դու, երկուսովս էլ, դուցասընունդ Մենելայիս,  
 Կարիք ունենք մի իմաստուն ու փրկարար քաջ խորհուրդի,  
 Որ կարենանք փրկել բանակն ու նավատորմն աքայեցոց:  
 Զի Արամազդը Զըրվանյան մեզնից երես է դարձրել,  
 Հեկտորին է ընծայում սեր, նրա զոհերն է ընդունում:  
 Քանզի երբեք չեմ տեսել ես, ոչ էլ լըսել երբևիցե,  
 Որ մարդ մեճակ, մի օրվա մեջ քաջություններ գործի այնքան  
 Եվ աղետներ, որքան Հեկտորն, Արամազդի այդ սիրելին,  
 50 Որ աստրծու զարմից էլ չէ, բայց կատարեց անեղ գործեր:  
 Գործեր, որոնք արգիացիք դեռ շա՛տ երկար պիտի հիշեն,  
 Որովհետև շատ չարիքներ հասցրեց նա աքայեցոց:  
 Բայց դու վագիր անմիջապես դեպի նավերն ու շուտ կանչիր  
 Իդոմենին և Այաքսին, իսկ ես կերթամ Նեստորի մոտ՝  
 Հորդորելու աստվածային այդ ծերունուն, որ հետըս գա,—  
 Թե հոժարի,— պահնորդական գունդը և տա հրրահանգներ,  
 Քանզի նրան լըսում եմ միշտ, պարեկների պետն է որդին,  
 Ինչպես նաև Մերիոնեսը՝ զինակիրը Իդոմենի,  
 Զի հատկապես այդ մեծ գործը նրանց է լուկ հանձնարարված»:

- 60 Մենելայիսն անեղագոռ նրան այսպես պատասխանեց.  
 «Այդ, ի՞նչ պատվեր ես տալիս ինձ, և ինչպե՞ս ես հըրամայում.  
 Մընամ այստեղ ես նրանց մոտ և ըսպասեմ քո գալըստյա՞ն,  
 Թե՞ հայտնելով կամքըդ նրանց՝ վերադառնամ նորից քեզ մոտ»:  
 Ագամեմնոն արանց արքան նրան այսպես պատասխանեց.  
 «Կա՛ց նրանց մոտ, զի գընալիս գուցե հանկարծ մենք մոլորվենք,

Քանզի բազում ճամփաներ են իրար անվերջ խաչաձևում:  
Դու գրնալիս հանձնարարիր, որ ամեն մարդ արթուն հըսկի.  
Ամեն մեկին կոշիք ինքքդ իր հայրական պատվանունով  
Եվ մեծարիր սիրողաբար և մի՛ էրբեք մեծամըտիր:

70 Մենք էլ պիտի ծիր աշխատենք, ասես թե մեր ծրնված օրից  
Արամազդը արկածալից ճակատագիր պարզենց մեզ»:

Այսպես ասաց Ագամեմնոնն ու եղբորը ճամփա դրրեց,  
Իսկ ինքն իսկույն ուղևորվեց դեպի Նելլան Նեստորը ծեր:  
Գըտավ նրան իր վըրանի և թըխաթույր նավին մոտիկ  
Փասիուկ մահճում ընկղմանած և նըկարեն գենքերն իր շուրջ,  
Ասպարն ու գույգ նիզակները և սաղախարտը պաղպաջուն,  
Մոտն էր գոտին խայտաճամուկ, որ կասում էր նա իր մեջքին,  
Երբ գընում էր դեպի գուպար իր ջոկատի գըլուխն անցած,  
Որովհետև ծերությունից նա տակավին չէր խեղճացել:

80 Ռոնաճալներ լըսելով նա, բարձրացրեց իր գըլուխն իսկույն  
Եվ արմունկին հեճված՝ այսպես հարցում արավ Ատրիդեսին.

«Այդ ո՞վ ես դու՝ նավատորմում և բանակում շըրջում մեճակ,  
Այսպես մըթին ու զիշերով, երբ բոլորը քընած են խոր.  
Ո՞ւմ ես փընտրում, ընկերների՞դ, թե՞ պահանորդ խըմքից մեկին,  
Խոսի՞ր, ասա՛, ի՞նչ ես ուզում. ինձ լուռ ու մունջ մի՛ մոտենար»:

Ագամեմնոն արանց արքան նրան այսպես պատասխանեց.  
«Նելլա՛ն Նեստոր, աբայեցոց դու պանծալի՛ խորհըրդակակն,  
Պետք է որ դու լավ ճանաչես Ագամեմնոն Ատրիդեսին,  
Որին Ջևար ամենից շատ է խոշտանգում տաժանքներով,

90 Մինչև շունչըս մընա միայն ու ծընկներումս ուժ շարժվելու:  
Ծըրջում եմ ես, ո՞վ ծերունի, զի աչքերիս քուն չի գալիս,  
Պատերազմի ցավն եմ քաշում ու տանջանքներն աբայեցոց,  
Դանալեցոց համար սաստիկ անհանգիստ եմ և ահաբեկ,  
Խըռովահույզ եմ հոգեպես, սիրտըս կըրծքից դուրս է թըռչում,  
Եվ դողդողում եմ քաջատույզ անդամներըս քըստմընասար:  
Թե ուզում ես մի գործ անել, (քունը քեզ էլ մոտ չի գալիս)  
Պահանորդների խումբը գընանք, տեսնենք, թե միգուցե հանկարծ  
Հոգնած օրվա տաժանքներից՝ խոր քընով եմ ընկել նըրանք,  
Մոռանալով պահպանության ամեն կանոն ու հըրահանգ,  
100 Մինչ թըշնամին շատ է մոտիկ մեր նավերին, և չըգիտենք,  
Թե գիշերով հարձակվելու մըտադըրություն չունե՞ն արդյոք»:

Եվ Գերեմյան Նեստոր ասպետն այսպես ասաց Ատրիդեսին.  
«Ո՞վ մեծափառ դու Ատրիդես, արանց արքա Ագամեմնոն,

Ես չեմ կարծում, որ անպայման Արամազդը ամպրոպադեզ  
հորը հույսերն այդ Հեկտորի կրպորակի հաշողությամբ:  
Կրտստապի նա տագնապած բազմապիսի հոգս ու ցավով,  
Հենց որ դյուցազն Աֆիլլեսն իր սրբոց դրժնյա քենը հանի:  
Ուրախությամբ կրգամ քեզ հետ, ուրիշներին էլ արթնացնենք,  
Քաջ Տիդյանին հիզակափառ, բազմահրճար Ռիսևսին,

- 110 Եվ Այաքսին արագափույթ, և Փիլևսի արի սրդուն.  
Ո՛ր էր, եթե մեկն էլ գրնար, կանչեր նաև Տելամոնյան  
Քաջ Այաքսին աստվածատիպ և Իդոմեն թագավորին,  
Որոնց նավերն ամենից վերջն են գրտնվում, մեզնից հեռու,  
Թեպետն ես շատ եմ սիրում, հարգում արգո Մենելալին,  
Քայց հայնտապես պիտ պարսավեմ, թեկուզ ինձնից դու նեղանաս,  
Որ ամեն հոգսը քեզ թողած՝ ինքը հանգիստ բուն է քաշում:  
Այնինչ հիմա պիտի գրնար նա մեր բոլոր պետերի մոտ  
Ու պառնատեր, քանզի ունենք մենք շատ հոգսեր անտանելի»:

Նրբան այսպե՛ս պատասխանեց Ագամեմնոն արանց արքան.

- 120 «Ուրիշ անգամ, ո՛վ ծերունի, ե՛ս էլ պիտի հորդորեի  
Քեզ մեղադրել Մենելալին, քանզի հաճախ անհոգ է նա  
Եվ մի գործի ձեռք չի զարկում, և այդ ո՛չ թե այն պատճառով,  
Որ ծուլ է նա և ապիկար, կամ թե խելքից աղքատ ու զուրկ,  
Այլ որ աչքը միշտ ինձ վրո՛ւ հրահանգիս է ըսպատում:  
Քայց նա հիմա ինձնից էլ շուտ վեր կենալով, եկավ ինձ մոտ  
Եվ ես նրան ողորկեցի կանչելու քո ուզած մարդկանց:  
Վեր կաց գրնանք, և կրգրտենք նրանց այնտեղ, պահնորդ խրմբում,  
Դրոների մոտ, ուր հրաման տրվի նրանց հավաքվելու»:

Եվ գերեմյան Նեստոր ասպետն այսպես ասաց թագավորին.

- 130 «Եթե այդպես է, այսուհետ նրան ոչ մի արայեցի  
Չի լինի հետս, անհրճագանդ, ում էլ որ նա հրրամայի»:  
Այսպես ասաց Նեստորը ծեր ու պատմունանն հագավ արագ  
Կապեց մաքուր իր ոտքերին մի զույգ մուշկեր վայելչահյուս,  
Եվ կոճկելով կարմրրագույն տառատուկը վերից ի վար,  
Տառատուկը՝ ծածկրված նուրբ աղվամազով ծաղկագանգուր,  
Պրդրճնախաբ ու սաչրատուր առավ հիզակն իր անագին  
Եվ ըշտապեց դեպի նավերն արպեցոց պրդրճնազգեստ:  
Նախ, ձայն տալով Արամազդի հանճարակից Ռիսևսին,  
Նեստոր ասպետը գերեմյան հանեց նրան քաղցրը քրնից:  
140 Այնորի ձայնն առնելով՝ Ռիսևսը անմիջապես  
Վրբանից դուրս թըռավ արագ և ծերունուն այսպես ասաց.



«Ինչո՞ւ այսպես մե՛ն ու մե՛նակ, անմահական ուշ գիշերով  
Ծրրջում ես դու նավից ի նավ, ի՞նչ կարևոր գործի համար»:

Եվ Գերեմյան ասպետն այսպես պատասխանեց Ռդիսակին.  
«Դյուցազնազարմըդ Լայերտյան, գերահանձար դու Ռդիսես,  
Մի՛ բարկանար, զի արքայանց աստիկ վրտանկ է ըսպառնում.  
Հեռքս արի, որ արթնացնենք նաև այլոց, ում որ պետք է,  
Որ միասին խորհուրդ անենք՝ փախչե՞նք արդյոք, թե՞ մարտընչենք»:

- Այսպես ասաց, ու Ռդիսեսն իր վըրանը վերադարձավ,  
150 Նըկարազարդ վահանը մեծ ուսը գրցեց, ու գրեացիկն.  
Երեք հոգով ըշտապեցին Դիոմեդես Տիդյանի մոտ,  
Որին գրտան վըրանից դուրս խորը քընած իր զենքերով:  
Նընջում էին նըրա մարդիկ՝ վահաններն բարձ արած իրենց,  
Եվ նիզակներն իրենց երկար զարկած գետնին բունի կողմից,  
Որոնց պղինձներն փայլում էին Արամազդի շանթի նըման:  
Նընջում էր խոր դյուցազնը քաջ վայրի ցուլի մորթի վըրա,  
Իսկ սընարին սրփրոված էր փաղփունափայլ շըքեղ մի գորգ:  
Մտտեճարով՝ Նեստոր ասպետն ոտքի ծայրով հըրեց նըրան,  
Արթնացըրեց խորունկ քընից ու ծաղրելով այսպես ասաց.  
160 «Վեր կաց, Տիդյան Դիոմեդես, ի՞նչ ես քընում գիշերն ի բուն,  
Դու չե՞ս տեսնում, որ տըրոյանք տեր դառնալով դաշտի բըլլին,  
Բանակել են նավերի մոտ, և մի քայլ է բաժանում մեզ»:

Խորը քընից արթնանալով՝ Դիոմեդեսն էլավ ընդոստ  
Եվ Նեստորին ի պատասխան՝ այս սըրբաթև խոսքերն ասաց.  
«Ժիր ես դու, ծե՛ր, և անհոգնում, չես դադարում աշխատելուց,  
Աքայեցոց մեջ քեզանից կըրստեր մարդիկ չըկա՞ն միթե,  
Որոնք վազ տան այստեղ-այնտեղ ու զարթեցնեն արքաներին:  
Զարմանալի ես, ծերունի, հոգնելն ինչ է՝ դու չըգիտես»:

- Եվ Գերեմյան Նեստոր ասպետն այսպես նըրան պատասխանեց-  
170 «Արդար ես դու խոսում, այո՛, սիրելիդ իմ Դիոմեդես,  
Ես էլ ունեմ բանակի մեջ առույգ որդիք ու զինվորներ,  
Որ մի առ մի կարող էին ձայն տալ բոլոր արքաներին:  
Սակայն մեծ է տազնապը մեր, ուստի բոլորս պիտ աշխատենք,  
Քանզի այսօր սուր աժեղու քեղնի վըրա է համորեն  
Աքայեցոց փըրկությունը և կամ կորուստը չարաչար:  
Գընա իսկույն և արթնացրու Այաքսին ժիր ու Փիլլանին,  
Ինձ խընայիր, դու ինձանից երիտասարդ ես տարիքով»:

Այսպես ասաց, և Դիոմեդն ուս գրցելով շիկակարմիր  
Պրճրդնավոր առյուծենին, առավ մրկունդն իր վիթխարի,  
180 Ելավ գընաց և հանելով նրանց բընից՝ առավ բերավ:

Այսպես նրանք բոլորը մեկ՝ պահնորդների մեջ մըտներով,  
Պարեկապան գընդի բոլոր ավագներին գըտան արթուն  
Նըստած ըզգաստ ու զինավառ, շըրջահայաց շըների պես,  
Որ փարափի շուրջը նըստած՝ ոչխարի հոտն են պահպանում  
Խիստ անհանգիստ, որ ամեհի մի գազանի հոտ են առել,  
Որ իջնում է անտառախիտ լեռնից հանկարծ, բարձրացնելով  
Մի մեծ աղմուկ-իրարանցում շըների մեջ ու բազմության,  
Եվ փախչում է քունը նրանց,— այդպես էին նաև նրանք,  
Նըստած արթուն, տագնապալից, գիշերային մթնության մեջ,  
190 Լարած իրենց լըսողությունն՝ ականջները միշտ դեպի դաշտ,  
Թե կա՞ արդյոք դըռույթ-դուխուն, թըշնամական ոտնատըրով:

Նրանց ի տես՝ ուրախացավ ծերն ու իսկույն մոտ գընալով  
Եըրպախուսիչ այս խոսքերով դիմեց արթուն պահնորդներին.

«Այդպես, արի՛ որդիներըս, լա՛վ հըսկեցեք, հազար աչքով,  
Որ մեզ վըրս չըծիծաղի չարախընդաց ոտխը նենգ»:

Այսպես ասաց և փուն անցավ, գընում էին նրա հետքով  
Թագավորներն արգիացոց, որ խորհրդի էին կանչված,  
Նըրանց մեջ էր և Մերիոնեսն ու Նեստորի շըքեղ որդին,  
Որոնց նույնպես կանչել էին, որ միասին խորհուրդ անեն:

200 Փուն անցնելով նրանք բոլորն էլ նըստեցին մաքուր մի տեղ,  
Որ գետինը գերծ էր դեռևս դիակներից և արյունից,  
Որտեղից որ հըսկաչագոր Հեկտորը քաջ ետ էր դարձել  
Կոտորելով արգիացոց՝ մինչև մոլոր գիշերային:  
Նըստոտելով նրանք այնտեղ, բացին գաղտնի ժողովն իրենց,  
Եվ խոսք առավ նախ Գերենյան Նեստոր սուպետը պեզարդ.

«Սիրելիներս, չըկա՞ ձեր մեջ արիասիրտ մի դյուցազուն,  
Որ սիրտ անի գընալ ճամբարը մեծասիրտ տըրոյացոց:  
Գուցե բըռնել կարողանա բանակից դուրս մի զինվորի՝  
Իմանալու, թե տըրոյանք ի՞նչ մըտքի են, ի՞նչ են անում.

210 Հեռու իրենց պարիսպներից՝ նավերի մո՛տ են մընալու,  
Թե՞ այիտ դառնան դեպի քաղաք աբայեցոցն ընկճելուց ետ:  
Այս բոլորը իմանալով, թե ողջ-առողջ դառնա մեզ մոտ՝  
Երկընթի տակ կըվաստակի նա մեծ պատիվ, փառք ու պարծանք  
Բոլոր մարդկանց կողմից տըրված, և կըստանա ճիս ընծաներ:  
Մեր նավերի յուրաքանչյուր պետն ու իշխանն այդ կըտրիճին

Պիտի շնորհի մի սև մաքի, սիրուն մի գառ կրծքից կախված,  
Որր ոչ մի պարզևի հետ համեմատել չի կարելի,  
Եվ քացի այդ, կրմասնակցի բոլոր ուրախ կոչունքներին»:

Այսպես ասաց, և բոլորը մընացին լուռ, անպատասխան:  
220 Եվ վերջապես խոսեց Տիդյան Դիոմեդեսն անեղազոռ.  
«Հորդորում ես ինձ, ով Նեստոր, սիրտ և աշխույժ արիական,  
Որ ես մրանեմ տրորյացոց բանակն մեզնից ոչ շատ հեռու,  
Բայց եթե ինձ ընկերանա մեկ ուրիշն էլ այս գործի մեջ՝  
Ե՛վս առավել քաջավրատահ ու կորովի պիտի լինեմ.  
Քանզի երբ որ երկուսով են՝ ավելի են հընարագետ,  
Եվ կըլինեն միմյանց համար նըրանք հույս ու խորհրդատու:  
Իսկ եթե ժարդ միայնակ է, թեկուզ լինի ուշիմ ու քաջ,  
Կըտատանվի միտքը նըրա, և ինքն իրեն կըկորցընի»:

Երբ վերջացրեց՝ շատերն էին ուզում նըրան ընկերանալ,—  
230 Զույգ Այաքսներն արիասիրտ՝ արբանյակները Արեսի,  
Մերիոնեսն, և մանավանդ ծեր Նեստորի շըքեղ որդին.  
Ծատ էր ուզում և Ատրևսյան Մենելալոսն անեղազոռ,  
Ողիսևը համբերատար՝ տրորյացոց մեջ մըխվելու,  
Որի սիրտը խիզախության համար վառվում էր կրծքի տակ:  
Այնժամ Ատրիդ Ագամեմնոնն այսպես ասաց իշխանաբար.

«Ո՛վ Տիդեսի որդիդ խիզախ, սիրելիդ իմ Դիոմեդես,  
Ընտրիր, ում որ ուզում ես դու, քանզի շատերն են ցանկանում.  
Բայց դու ինձ-որ ամաչելով քո մըտքի մեջ, լավին թուլած՝  
Չառնես վատին քեզ ուղեկից, զիջանելով՝ ակնածելուց,  
240 Կամ նայելով նըրա տոհմին ու ճոխությանն իշխանաշուք»:

Այսպես ասաց՝ վախենալով խարտիշագեղ եղբոր համար:  
Սակայն կըրկին դարձավ նըրանց Դիոմեդեսն անեղազոռ.  
«Եթե իրոք ինձ եք թողնում դուք ընտրությունն այս գործի մեջ,  
Որենն ինչպե՞ս ես մոռանամ դյուցազնազարմ Ողիսևսին,  
Իրի քաջ սիրտն ու խելքը մեծ ամեն դեպքում գերիվերո՝  
Ինքը Պալլաս Աթենասն է զընահատում մինչև անգամ:  
Եթե նա ինձ ընկերանա, թեկուզ հըրի-ջըրի միջից  
Ողջ ու առողջ ետ կըդատնանք,— այնքան խելոք ու քաջ է նա»:

Եվ Ողիսևն համբերատար նըրան այսպես ասաց այնժամ.  
250 «Ծատ մի՛ գովիր կամ պարապիր ինձ, ո՛վ Տիդյան Դիոմեդես,  
Արզիացոց հետ ես խոսում, որոնք լավ են ճանաչում ինձ:  
Բայց ըշտապենք, զի գիշերն էլ ըշտապում է, և լույսն է մոտ.

Քոնարնիում եմ աստղերն ահա, գիշերն վալուց կես է եղել,  
Երեք մասից երկուսն անցել, և մընում է մեկը միայն»:

- Այսպես ասաց, ու երկուսով հագան զեկքեր սարսափելի:  
Քրասիմիդեսն իր երկասյրի սուրը տըվեց Դիոմեդեսին,  
(Որովհետև իրենը նա նավատորմի մոտ էր թողել)  
Եվ վահանը, դրեց գըլխին իր սաղավարտն արջառամորթ՝  
Անգարգմանակ և անխորան, որ կոչվում է զազաթնադաշն
- 260 Ու ծածկում է գըլուխները ծաղկավիթիթի պատանեկաց:  
Իսկ Մերիոնը Ռդիսեսին տըվավ աղեղ, կապարճ ու սուր,  
Դյուցազունի գըլխին դրեց կաշվից շինած մի գըլխանոց,  
Որը ներքուստ պըլլված էր փոկերով պինդ և արտաքուստ  
Շուրջանակի շարված խիտ-խիտ սուռ ժանիքներ վայրի կինճի,  
Մեջը դըրված լավ լըմկըված թանձրը թաղիք, որ կողոպտեց  
Ավտոլիկոսն Ռոմեոհոյան Ամեմտրից մի ժամանակ  
Ելեոնում՝ ավերելով ամրակառույց տունը նրա,  
Եվ կիթերյան Ամփիդամին ընծայեց նա Սկանդիայում.  
Իսկ Ամփիդամն էլ պարգևեց այն՝ Մոլոսին ասպընջական,
- 270 Սա էլ տըվեց Մերիոնեսին՝ որդուն իր քաջ, որ այն կըրի:  
Արդ, պըտակեց նա դրրանով Ռդիսեսի գըլուխը պերճ:  
Այսպես ահա՛, նըրանք հագած զեկքերն իրենց սարսափելի՝  
Ծամփա ընկան, աքայեցոց ավագանուն թողած այնտեղ:  
Աթենասը մի ծովայինն ճաչ ոտարկեց նըրանց՝ նըշան,  
Սակայն նըրանք գիշերայինն խավարի մեջ այն չըտեսան,  
Միայն կրոհնչը լըսեցին, որը գալիս էր աջ կողմից:  
Այդ նըշանով Ռդիսն ուրախ՝ աղոթք արավ Աթենասին.  
«Լըսի՛ր ինձ, դո՛ւստր ասպարակիր Արամազդի, որ հետս ես միշտ՝  
Վըտանգի թե վըշտի ժամին, քեզնից ոչինչ չեմ թաքցընում.
- 280 Այժմ ավելի՛, քան երբևէ, սիրիր դու ինձ, ո՛վ Աթենաս,  
Տո՛ւր մեզ փառքով վերադառնալ դեպի նավերն աքայեցոց՝  
Մի կարևոր գործ կատարած, որ տըրոյանց սիրտը այրի»:

- Եվ նըրանից հետո խընդրեց Դիոմեդեսն անեղագոռ.  
«Լըսիր և իմ աղոթքը դու, դուստրդդ հըզոր, անպարտելի:  
Ընկերացիր և ինձ այսօր, ինչպես որ հորս՝ աստվածային  
Տիդեսին դու ընկերացար, երբ որ դեսպան գընաց Թեբե  
Աքայեցոց կողմից դըրկված, նըրանց թողած ասին Ասուպի:  
Տանում էր նա կաղմեացոց խաղաղության քաղցրը խոսքեր.  
Բայց այնտեղից ետ դառնալիս անեղ գործեր կատարեց նա
- 290 Քեզ հետ, ով վեհ աստվածոհի, որին սիրով ընկերացար:  
Ընկերացիր հիմա էլ ինձ և պաշտպանիր նույն սերտ սիրով.

Պիտի ձոնեմ քեզ միամյա երինջ մի գեր, լայնաճակատ,  
Ու պարանոցն իր տակավին լուծ չըտեսած, անգրսպելի,  
Նըրան ես քե՛զ պիտի ձոնեմ եղջյուրները ոսկեգօծած»:

Այսպես ասին, երկուսին էլ լրսեց ծավի աստվածուհին:  
Աքամազդի դրստերն այդպես աղոթելուց հետո նրանք  
Սուաջ անցան, ինչպես երկու սեգ առյուծներ, մուօ գիշերով,  
Նախճիրների, դիակների, գեներերի և արյան միջից:

- Այնտեղ Հեկտորն էլ յուրայնոց չըթողեց որ հանգիստ քրնեն,  
300 Այլ խորհրդի կանչեց բոլոր տըրոյացոց ավազանուն՝  
Իշխաններին ու պետերին, խորհրդրդական խելոք մարդկանց  
Եվ կանգնելով նրանց միջև այսպես ասաց խրրոխտ ձայնով,  
«Ո՛վ է ձեզնից խոստանում ինձ մի արժանի գործ կատարել,  
Որի համար նա ինձանից մեծ պարգևներ պիտ ըստանա:  
Կըտամ մի կառք, և կառքի հետ երկու չըքնաղ երիվարներ,  
Ընտրագույններն աքայեցոց նավերի մեջ եղածներից,—  
Ա՛յն կըտրիճին, որ սիրտ կանի (ինչպիսի՞ փառք նըրա համար)  
Գընալ հինա և մոտենալ մեր թըշնամու նավատորմին  
Եվ իմանալ, թե սըրարչավ նավերի մոտ, ինչպես առաջ,  
310 Հըսկողության համար արդյոք կա՞ն պահակներ, թե աքայունք  
Հաղթահարված մեր ձեռքերից՝ մըտածում են փախչել շուտով  
Եվ տանջահար՝ պահպանության վըրա էլ ուշք չեն դարձընում»:

Այսպես ասաց Հեկտորը քաջ, և բոլորը լուռ մընացին:  
Տըրույանց մեջ Դուռն անվամբ կար մի զինվոր, որ էր որդին  
Եվմեդ անքիճ նըվիրակի՝ հարուստ ոսկով և պըղինձով:  
Դեմքով տըզեղ էր Դուռնը, քայց ոտքերով թեթև ու ժիր.  
Հինգ հարազատ քույրերի մեջ ինքն էր միայն արու զավակ:  
Խոսք աննելով՝ նա Հեկտորին և տըրոյանց այսպես ասաց.

- «Ո՛վ քաջ Հեկտոր, արիական սիրտս ու հոգիս դըրդում են ինձ  
320 Երթալ ընդհուպ աքայեցոց նավերի մոտ ու լըրտեսել:  
Գավազանըդ բարձրացրու վեր և նըրանով երդվիր դու ինձ  
Տալու ձիերն անհիպարան ու պըղընձյա կառքը չըքեղ,  
Որն իր վըրա կըրում է քաջ, չընաշխարհիկ Պելիսյանին:  
Անօգուտ դետ չեմ լինի քեզ, և քո կարծած վատերից չեմ.  
Այնքան խորը պիտի խըրվեմ աքայեցոց բանակի մեջ,  
Որ Սադրիդի նավին հասնեմ, որտեղ, անշուշտ, իշխաններն են  
Խորհուրդ անում՝ փախչե՞ն արդյոք, թե՞ կանգնեն ու պատերազմեն»:

Այսպես ասաց, և Հեկտորը բարձրացրեց ցուպն ու երդվեց.  
«Վըկա լինի թող Արամազդն՝ անեղագոչ այրն Հերայի,

330 Որ այդ ձիերն ուրիշ ոչ մի սըրոյացու պիտ չըկըրեն,  
Երդվում եմ ես՝ այդ ձիերը դո՛ւ հաւիտյան պիտ վայելես»:

Այսպես ասաց՝ երդվելով, և Դողունը տեղից թրուով  
Կախեց ուսից կամարածն աղեղն իր նա քաշի նըման,  
Հագավ գայլի ճերմակ մորթին, գըլխին դըրեց մերկ սաղաւարտ,  
Նիզակն առավ ու դեպ նավերն ճամփա ընկավ անմիջապէս.  
Բայց նա պիտի ետ չըդառնար Հեկտորին լուր մի քերելու:  
Գընում էր նա՝ թողած մարդկանց ու ձիերի հոծ բազմություն,  
Ծամփան արագ կըտորում էր նա, երբ Ողիսեսը դյուցազարմ  
Նըկատելով նըրան՝ դարձավ Դիոմեդին այս խոսքերով.

340 «Դիոմեդես, այդ մարդն անշուշտ նըրանցից է գալիս այս կողմ,  
Բայց չըգիտեմ՝ գալիս է նա մեր նավերը լըրտեսելո՞ւ,  
Թե՞ գընում է կողոպտելու դիակները դաշտում ընկած:  
Սակայն թողնենք, որ մեզանից մի ասպարեզ սուս անցնի,  
Ապա վըրան կըհարձակվենք ու կըբըռնենք անակընկալ:  
Իսկ եթէ մենք չըկարենանք հասնել նըրա արագ վագքին,  
Դու շարունակ նըրան դեպի նավերն քըշիր քո նիզակով,  
Որպէսզի նա դեպի քաղաք փախչել երթեք չըկարենա»:

Այսպես ասաց, և երկուսով ճամփից ելած թաքնըվեցին,  
Իսկ Դողունը խելակորույս առաջ սուրաց թափառնակի:

350 Եվ երբ որ նա հեռացել էր ջորիների ակոսի չափ,  
(Զի եզներից, վար անելիս, շատ ավելի վարժ են սըրանք  
Քաշում արորը ծանրաշեն՝ բարեբեղուն հողում հյութեղ)  
Հարձակվեցին նըրա վըրա. նա կանգ առավ ոտնաձայնից,  
Մըտածելով, թէ Հեկտորը իր ետևից մարդ է դըրկել:  
Բայց հագիվ թէ տեզընկեցի չափ իրենից հեռու էին,  
Իմացավ որ թըշնամի են, ու դեպ փախուստ դիմեց արագ,  
Իսկ մյուսներն ընկան ետև՝ կըրընկակոյխ հալածելով:  
Ինչպէս ճարպիկ, սըրածանիք, որսի հըմուտ երկու բարակ  
Նասպատակի կամ եղնորթի հետապընդում են անդադրում,  
360 Մինչ նա գոչուն արձակելով փախչում է թափ, արագավագ,  
Այդպէս Տիդյան Դիոմեդեսն ու Ողիսեսն քաղաքավեր  
Քըշում էին նըրան մի կողմ իր բանակից, ետևն ընկած:  
Եվ երբ արդեն աքայական պահնորդ խըմբին կըհասներ նա,  
Աթենասը Դիոմեդին ներշընչեց նոր կորով և ուժ,  
Որ մի գուցե սըղընձագեն ուրիշ մի քաջ աքայեցի  
Իրենից շուտ գարկի նըրան ու պարծանքը ինքը առնի:  
Ոստի վըրան գըրոհելով գոչեց Տիդյանն անեղագոռ.

«Կանգ առ, թէ չէ իմ նիզակով քեզ շանաստակ կանեն իսկույն»:

Ասաց, նետեց նա սայրասոր տեզն ու դիտմամբ վերիպեցրեց.  
 370 Սըլաքը սուր թափ անցնելով տըրոյացու աջ ուսն ի վեր՝  
 Գրնաց ուժգին խըրվեց գետին, ու կանգ առավ նա դողահար,  
 Ատամները նըրա բերնում իրար էին զարկվում ուժգին,  
 Գունասովել էր մետեյի պես, երբ ունիսն հասան նըրանք,  
 Պինդ բըռնեցին նըրա ձեռքից, և Դոյունը լայով ասաց.  
 «Ողջ թողեք ինձ, մի՛ ըստանեք, և կրգընեմ ես ինքըս ինձ.  
 Մեր տանն ունենք պղղինձ, ոսկի, նակ երկաթ արվեստագործ,  
 Իմ հայրը իր որդու համար կըտա փըրկանք, որքան ուզեք,  
 Լոկ իմանա, թե ողջ եմ ես աքալեցոց նախատորմում»:

Եվ Ողիսուրը հանձարեղ այսպես ասաց տըրոյացուն.  
 380 «Մի՛ վախենար, մըտքիցըդ հան մահվան հիմար ցընորքը դու,  
 Եվ ինձ լըսիր, միայն թե տես, որ նըշմարիտ ես ասելու,  
 Ինչո՞ւ մեռակ, մուտ գիշերով դեպի նավերն ես գընում դու,  
 Մինչ այս ժամին քաղցըր քընով նընջում եմ ողջ մահկանացուք,  
 Դաշտում ղնկած դիակները կողոպտելու համա՛ր արդյոք,  
 Եվ կամ գուցե Հեկտորը քեզ դե՛տ ուղարկեց նավերի մոտ,  
 Եր լըրտեսես ամեն մի քան, թե՞ քո սիրտը դըրդեց քեզ աղ»:

Ամբողջ մարմնով դողդողարով Դոյունն այսպես պատասխանեց.  
 «Հեկտորն առավ խելքը գըլխես և ինձ ծանըր գործի մղեց,  
 Խոստանալով տալ ինձ պարգև չընաշխարհիկ Աքիլլեսի  
 390 Նըծույզները սալասըմբակ՝ պըղընձամիշ կառքով հանդերձ:  
 Եվ հըրաման տըվեց նա ինձ, որ ես մըռալլ այս գիշերով  
 Մըտնեմ ճամբարն աքալեցոց և լըրտեսեմ՝ իմանալու,  
 Թե սըրընթաց նավերի մոտ պահակներ կա՞ն, ինչպես առաջ,  
 Թե՞ մեր ձեռքից հաղթահարված, կորագըրոյս ու հոսաբեկ  
 Խորհուրդ էք դուք անում ձեր մեջ՝ փախչել արագ ձեր նավերով  
 Եվ հոգնատանջ՝ էլ չէք ուզում դընել դետեր գիշերասպան»:

Եվ Ողիսուրը խորամանկ ծիծաղելով վըրա բերեց.  
 «Արդարն մե՛ծ պարզեկի ես աչք դըրել դու, ինչ եմ ասել,  
 Էակիդյան Աքիլլեսի սըրաթորիչ նըծույզների՛ն...  
 400 Սակայն ոչ մի մահկանացու անկարող է գըսպել նըրանց  
 Պեչանից զատ, որին ծընեց աստվածուհի մար մեծարո:  
 Բայց դու արի ա՛յն ասա ինձ, և նըշմարիտ պիտի խոսես:  
 Այստեղ գալիս ո՞րտեղ թողիր դու Հեկտորին՝ հովվին ազգաց.  
 Ո՞ր եմ նըրա ձիերն հիմա, ո՞ր եմ գեկեքերն արիսանքան,  
 Պահպանությունն ու վըրաններն ինչպե՛ս եմ մյուս տըրոյացոց,  
 Ի՞նչ դողում ունեմ նըրանք, հեռու իրենց պարիսպներից՝

Մընայ արժեքի, նայէրին մո՞տ, թե՞ էտ դառնայ դեպի բաղաք  
Պըրընձագգեստ արաչէցոց գորոթյունը ընկնելոց էտ»:

- Եվ Դորնը՝ տըրոյացոց լըրտեսն աչապես պատասխանեց.  
410 «Այդ բորոյի մասին էս քեզ ճըշմարիտը պիտի խոսեմ:  
Հեկտորն աչնտել, սատվածաչին սուրբ Էլիոսի շիրմին մոտի՛ւ  
Խորհորդի է նըստել բոլոր տըրոյացոց պետերի նետ,  
Իսկ պահակներ, որ ստում էս, աղապիսիներ չըկան հատուկ,  
Որոնք ըզգաստ և աչալուրջ պահպանություն անեն գորքին,  
Այ խոսք առ խոսք, կըրակի շուրջ նըստած բոլոր տըրոյացիք  
Պահակներ են հարկադրված և իրարու սիրտ են տալիս:  
Իսկ մյուս բոլոր դաշնակիցներն ընկողմանած քընում են խոր.  
Անհոգ կերպով, նըսկողութան գործը թուլած տըրոյացոց,  
Քանգի նըրանք իրենց կողքին չունեն ոչ կին, ոչ նրեխա»:

- 420 Ու հարց տրվեց կըրկին անգամ, Ողիսևս բազմահանձնար.  
«Որեմն ինչպե՞ս, առանձի՞ն են քընած նըրանք բոլորովին,  
Թե՞ տըրոյանց նետ միասին, աչս էլ սաս, ո՛ր հասկանամ»:

- Ու Եվնեդյան Դորնն աչապես պատասխանեց Ողիսևսին.  
«Այդ բորոյի մասին նույնպես ճըշմարիտը կասեմ էս քեզ:  
Կարիացիք ու կորաղել պետները և լելեզանք,  
Կազգոնները ու Պելեագյանք ծովի կողմն են գրեղնվում արդ,  
Իսկ Թիմբրեի կողմն են լիկյանք և ձիավարժ փորոցացիք,  
Միացիներն խըրոխտապսեմ և մեռնյանք ձիաձարտիկ:  
Բայց դուք ինչո՞ւ աչս բոլորը հարցընում էք ինձ մի առ մի,  
430 Քանգի, էթե ուզում էք դուք մըտնել բանակի տըրոյանց,  
Խորհորդ կըրտամ ձեզ հարձակվել դաշտի ծարին բանակ զարկած  
Թըրակացոց վըրս, որոնք դեռ նոր հասած՝ հոգնած են խիստ,  
Նըրանց մեջ է Հոնեսս արբան՝ որդին արի Էլոնի:  
Տեսն նըրա երիվարներն ըսքանչելի, հաղթամարմին  
Եվ ալելի ձերմակ քան ձյուն, արշավում են հողմի նըման.  
Կառքը ոսկով և արծաթով պընձագարդված ամբողջապես,  
Եվ զենքերը բոլոր ոսկուց, անեղաշուք, նըաշատեսիլ,  
Որ վայել են սատվածներին և ոչ մարդկանց մահկանացու:  
Թե ուզում էք՝ անեք տարեք ինձ սըրընթաց նազերը ձեր,  
440 Կամ կապկապած պիկո կապերով թողեք մընամ աչստեղ, իսկ դուք  
Գընացեք և ըստուգեցեք՝ տո՛ւտ են ստում, թե՞ ճըշմարիտ»:

Խեթ նայելով՝ անեղազոռ Դիմնեդեսն աչապես սասց.  
«Դույն, փախչելի չըմըտածես, այդ միտքը դու գըրխեղ հանիր,  
Որ մի անգամ ձեռք էս ընկել, էլ մեզանից չես տըրծընի,



Թեպետև դու շատ կարևոր նորություններ հայտնեցիր մեզ:  
 Որովհետև եթե հիմա քեզ արձակենք, թողնենք ազատ,  
 Անշուշտ նորից դու պիտի գաս դեպի նավերն աքալեցոց  
 Լըրտեսելու նըպատակով և կամ մեր դեմ մարտնչելու:  
 Բայց եթե իմ ձեռքով սատկես և զըրկըվես քո արևից՝  
**450** Այստե՛տև արգիացոց խոչ ու արգելք չես լինի դու»:

Այսպես սասց, և Դոլունը մինչդեռ համկու ձեռքով բըռնած  
 Ծընոտն անեղ Դիոմեդի՝ կրանքի համար կըպաղսատեր,  
 Դիոմեդեսն անեղասաստ վաղակալորը քարձրացրած՝  
 Պարանոցը մըլսեց նըրս ու կըտըրտեց ջըլերն երկու,  
 Եվ մինչ լեզուն բըլբըլում էր կատախն հողի մեջ զըլորվեց:  
 Կըզմենի լերկ կորդակն սուսն նըրս զըլխից գալլենու հետ,  
 Առան ձեռքից ճապուկ աղեղն ու հիզակը երկալնաստվեր,  
 Որոնք Ողիսը դուցազարմ դեպի երկինք կարկատելով՝  
 Աղոթելով ավարառու Աթենասին՝ այսպես սասց.

**460** «Տընձա՛, անմահ աստվածուհի, այս նըվերով, Ոլիմպոսում  
 Նախ և սուսջ քե՛զ կաղերսենք. եղիք նսև մեզ առաջնորդ  
 Դեպի ձիերն ու վըրաններն արիասիրտ թըրակիացոց»:

Այսպես սասց և իրերն այդ մի մոշեննու վըրս դըրեց,  
 Ծածկեց ալսա եղեգներով, ու մոշեննու ճյուղիքով թավ՝  
 Իբրև աչքի զարնող նըշան, որ վերըստին էտ դառնալիս,  
 Արագալսաց մույթ գիշերով, թաքուստը այդ չըկորցընեն:  
 Ալսա հապճեպ առաջ անցան գենքերի և արլան միջով  
 Ու շատ չանցած հասան նըրանք թըրակիացոց հոգևած գընդին:  
 Որոնք անհոգ քընում էին՝ գենքերն իրենց գեղեցկաշուք  
**470** Նըրանց չորս կողմ երեք կարգով շարված ուղիղ գետնի վըրս.  
 Եվ ամեն մի զինվորի մոտ կային մի զույգ լըծկան ձիեր:  
 Հոռուս արքան նըրանց միջև նընջում էր խոր, վաստակաբեկ,  
 Եվ ձիերը պիրկ փոկերով կապված էին շըքեղ կառքից:

Նախ Ողիսը տեսավ նըրան և Տիդլանին այսպես սասց.  
 «Դիոմեդե՛ս, անա նըրանք և թագալորն իր ձիերով,  
 Ինչպես որ մեզ Դոլունն սասց, որին դեռ նոր ըսպանեցինք:  
 Դե՛, ցույց տուր քո քաջությունը, հարկալոր չէ անգործ մընալ.  
 Ընտ արձակիր երիվարներն և կամ մարդիկ կոտորիլ րու,  
 Իսկ ձիերի հոգսը ամբողջ կառնեմ իսկույն ես ինձ վըրս»:

- 480 Այսպէս ասաց, և Աթենասն աշխույժ վառեց նրրա սրբոսում,  
 Աջ ու ահչակ ջարդում էր նա, և տակալի աղմուկ փրրթաւ:  
 Կըտրում էր սուրն ու ոտքի տակ կարմըրում էր գետինն արշամբ:  
 Առյուծն ինչպէս, որ անտերունչ հոտի վըրա է հարձակվում,  
 Մոլեգնեանդ Տիդյանն այդպէս խոյանում էր նրանց վըրա:  
 Նա տասներկու մարդ ըսպանեց. իսկ Ռդիսևան բզգոնամիտ,  
 Երբ Դիոմեդն հըսկա սըրով գարկում էր մի թըրակացու,  
 Ըսպանվածի ոտքից բըռնած քաշ էր տալիս, գըցում մեկդի,  
 Որ գեղաքաշ երիվարներն անցնելու տեղ ունենային,  
 Եվ դեռ անվարժ՝ չըսուկային դիակները կոխտտելուց:
- 490 Երբ Տիդեսի որդին արի հասավ Հոնտս թագաւորին,  
 Հեծում էր սա ու հառաչներ էր արձակում խոր քընի մեջ,  
 Զի այդ գիշեր մի չար երագ եկել կանգնել էր սընարին՝  
 Ինքն՝ Տիդեսի որդին՝ Պալլաս Աթենասի նորդորանքով:—  
 Տիդյանն սրբան էլ ըսպանեց՝ տասներեքը լըրացնելով:  
 Իսկ Ռդիսևան արձակելով երիվարները կտոքերից,  
 Կասկապում էր նրանց փոկով և բանակից դուրս էր հանում,  
 Խըթանելով իր աշնդով, որովհետև մոռացել էր  
 Նըկարագարդ ու երիկնափայլ կառքի միջից մըտորակն սունել:  
 Սուլեց ասա՝ նըշան տարով դշուցագնական Դիոմեդին,
- 500 Որը կանգնած խորհում էր նոր քաջություններ սըլարատեսիլ՝  
 Կառքը բարձված գեւ ու գարդով բըռներ քաշեր իր ետևի՞ց,  
 Թե՞ բարձրացներ հոմկու ձեռքով ու վեր բըռնած՝ տաներ այդպէս,  
 Եվ կամ ուրիշ թըրակացոց գետներ այդտեղ դիաթավայ:  
 Մինչ մըտասասց ծըփում էր քաշ Դիոմեդեան այս խոհերով՝  
 Մտտենայով նըրան ծաւլի Աթենասը այսպէս ասաց.  
 «Վերադարձիր դեպ նավախումբ, որդի՞դ վեկաննըն Տիդեսի,  
 Եթե այնտեղ հաշածական վերադառնալ չես կամենում,  
 Զի կարող է մի աստված էլ տըրոյացոց արթնացրնել»:
- Այսպէս ասաց, և Տիդյանը աստվածոհոմ ձայնին ի լուր՝
- 510 Նըժույզների վըրա ցատկեց, խըթեց Ռդիսն իր աղեղով,  
 Ու նապընթաց թըրան դեպի նաւատորմիլն սըբայեցոց:

Բայց Ապոլլոնն արծաթապեղ գուր չէր նըստել դիտանոցում,  
 Նա նըկատեց Աթենասին Դիոմեդես Տիդյանի հետ,  
 Հույժ գայրացած մըտալ իսկույն տըրոյացոց բանակը մեծ  
 Եվ արթնացրեց թըրակացոց խորհըրդական Հիպոկոնոն՝  
 Հոնտսի հոր եղբոր որդուն, որը քընից վեր թըռչելով,  
 Երբ որ տեսավ դաշտն ամայի, որտեղ ձիերն էին կանգնած,  
 Եվ քաշերին դիաթավայ՝ արդան ւսեղ նապաղիքում՝  
 Խոր հառաչեց ու ձայն տըվեց իր ընկերոջն անմիջապէս:

520 Փըրթավ աղմուկ և աղաղակ ու սուկալի իրարանցում,  
Երբ խուժեցին միահամուռ տըրոյացիք խառնիճաղանջ  
Ականատես՝ գարծամ անեղ ոճիրներից այն երկուսի,  
Որոնք արդեն ձիավորված դեպի նավերն էին թըռչում:

Եվ երբ նըրանք հասան այնտեղ, ուր Դողունն ըսպանեցին,  
Ողիսն այնտեղ նըժույզների սանձը քաշեց, ու կանգ առան:  
Տիղյանն իսկույն ցած ցատկելով առավ կասրտն արշունազանգ  
Ու հանձնելով Ողիսսին՝ հեծավ իր ձին ու սըլացան  
Դեպ խորագոգ նավերը սև, շուտ հասնելու տենչով վխտված:

Նեստորը նախ լրսեց դուփյունն ու մեծաձայն բացազանչեց.

530 «Ո՛վ սիրելի գորավարներ արգիացոց և իշխաններ,  
Սըխավո՞ւմ եմ արդյոք, թե ոչ, սակայն սիրտս է հորդորում ինձ,  
Նըժույզների դուփյուններով ականջները թընդում են իմ:  
Ա՛յ թե հանկարծ Ողիսսը և Տիղյանը քաջակորով  
Աստ քըշեին տըրոյացոց նըժույզները սալասըմբակ...  
Բայց դողում է սիրտըս սաստիկ, թե մի գուցե տըրոյացոց  
Խաժամուժից խոշտանգահար լինեն խիճախ քաջերը մեր»:

Նա իր խոսքը չէր վերջացրել, երբ որ նըրանք ժամանեցին:  
Յուրալիններն իրար անցած, ուրախությամբ անլատմելի  
Ողջունեցին աս ձեռքերով ու խոսքերով քաղցր ու ջերմին:

540 Եվ առաջին հարցը նըրանց ուղղեց Նեստոր ասպետը նախ.  
«Ասա՛, գովված դու Ողիսս, արքայեցոց պարծանքոյ մեծ,  
Երիւթարներն ինչպե՞ս առաք, տըրոյացոց մեջ մըխալելո՞վ,  
Թե՞ շընորհեց ձեզ երջանիկ աստվածներից մեկը դըրանց.  
Գեղեցի՞կ են՝ նըման անմահ արեգակի նանանչներից:  
Տըրոյացոց մեջ եմ ես միշտ, նավերի մոտ քիչ եմ լինում,  
Ու չեմ մընում անգործ երբեք, թեպետև ձեր ոսպմիկ եմ ես,  
Բայց չեմ տեսել այսպիսիներ, ոչ էլ մըտքովս եմ անցկացրել,  
Թըվում է, թե աստվածներից մեկը դըրանց տըվել է ձեզ,  
Սիրում են ձեզ երկուսիդ էլ՝ Արամագոյը ամպակուտակ  
550 Եվ Աթենասն՝ ասպարակիի Արամագոյի դուստրը ծալի»:

Նըրան այսպես պատասխանեց Ողիսսը մըտահարուտ.  
«Ո՛վ դու պարծանք արքայեցոց, ծերունագարդ Նելլան Նեստոր,  
Աստվածները եթե ուզեն՝ կարող են մեզ է՛լ ավելի  
Լավերը տալ, զի աստվածներն ամենագոր են հանապազ:  
Բայց այս ձիերն, ո՛վ ձերունի, նոր են եկել Թրակիայից.  
Դըրանց տիրոջն ըսպանեց ինքը Դիոմեդն անեղագոր,  
—203—

Ինչպես նաև գետին փրոնեց տասներկու այլ իշխանների,  
Եվ լըրտեսին, որին այստեղ նավերի մոտ բրոնեցիներ մենք,  
Որին Հեկտորն էր ուղարկել և մյուս պետերը տրոյական»:

- 560** Այսպես առաց և անցկացրեց փոսից չըքնաղ նըժույզներին,  
Եվ նըրանց հետ գընում էին մյուս աքայանք ուրախացած:  
Իսկ երբ հասան գեղեցկաշուք վըրանը քաջ Դիոմեդի,  
Պինդ փոկերով նըժույզներին կապեցին լի մըսուրի մոտ,  
Ուր Տիդյանի սըրաթըռիչ երիվարներն էին կանգնած  
Եվ մըսուրից ուտում էին քաղցրաճարակ ցորենն առատ:  
Իսկ Ոդիսևսը Դոյոնից՝ Եվմեդեսի որդուց խըլած  
Կողոպուտներն արյունազանգ՝ նավախելի վըրա դըրեց,  
Մինչև որ գոհն Աթենասի պատրաստեին աքայեցիք:  
Այնուհետև ծով մըտներով լավ լողացան ու լըվացին
- 570** Քըրտինքն իրենց, որ կար նըրանց սըրունքներին, պաշանցին:  
Եվ երբ ծովի ջուրը ջընջեց, մաքրեց քըրտինքն իրենց մարմնից,  
Ու զովացան զըվարթարար ջըրով նըրանց սիլոն ու հոգին,  
Ելան ծովից ու սըրքասուաշ կոնքերի մեջ լըվացվեցին  
Եվ օծվեցին պարարտ լուղով ու ընթրիքի նըստան ապա,  
Անուշ գինով լի բաժակներ նըվիրելով Աթենասին:

# Ե Ր Գ Տ ա ս ն մ ե կ ե ռ ո ղ

## ՔԱԶՈՒԹՅՈՒՆ ԱԳԱՄԵՄՆՈՆԻ

- Թողած չըքնաղ իր Տիթոնին՝ Առավոտն էր ելնում մահճից,  
Որ լույս քերի անմահներին և համորեն մահկանացոց,  
Երբ Արամազդն աքալեցոց նավատորմը հրդեհ ըշտապ  
Գըժճնա Ոյսին, որն իր ձեռքում նըշանն ուներ պատերազմի:  
Ոխը կանգնեց Ռդիսուսի վիթխարամեծ նավի վըրա,  
Մեջտեղ պըրված, որպեսզի իր ձայնը հասնի երկու կողմին—  
Աշաքսի պերն վըրաններից մինչ խորաններն Աքիլլեաի,  
Որոնք իրենց ուժին վրասահ՝ երկու թևերն էին բըռնել:  
Կանգնած պնտեղ՝ աստվածունիին գոչեց ուժգին ձայնով անեղ
- 10 Եվ գորություն, ուժ ներշընչեց յորաքանչյուր աքալեցու,  
Ու պատերազմը քաղցրացավ նըրանց սըրտին շատ ավելի,  
Քան անձկալի դարձը դեպի հայրենի տուն սև նավերով:

- Եվ Ատրիդեսը քարձրածայն հըրաման տըվեց արգիացոց  
Զինվորվելու, ինքն էլ հագավ փայլակնացալտ պըղիճճն իր շենկ:  
Նախ և առաջ սըրունքները պատեց չըքնաղ սըռնապանով,  
Որ կոճկըվում էր արծաթյա ճարմանդներով ճանճանչափայլ:  
Ազգս կըրծքի վըրա հագավ լանջապանակն իր գեղաշուք,  
Որը իբրև հյուրույթի ձոն Կիներևսն էր տըվել նըրան,  
Երբ համբալի ձայնը հասավ մինչև Կիպրոս, թե աքալանք
- 20 Նավելու են շուտով դեպի Տրոյա՝ անեղ պատերազմի,  
Ուստի և այն՝ թագավորին ընծայեց նա սիրանըվեր:  
Նըրա վըրա կար պողպատի տասը փայլուն ծիր սևաթույր,  
Իսկ ոսկեդեճ՝ տասներկու ծիր և անագե՝ քըսանի չափ:  
Եվ կապտագույն երեքական վիշապ օձեր երկու կողմից  
Զըգվում էին դեպ պարանոց ծիածանի հար և նըման,  
Որ կապում է Ջևան ամպերի վըրա իբրև նըշան մարդկանց:

Ուսընդանութ կախեց սուներն ոսկիակուռ բեռներով,  
 Իսկ պատշանը զուտ արծաթից՝ ոսկի փոկով և ամբաստինդ:  
 Առավ ասպարն հասակաշափ, ճարտարաշեն ու հաստաբետտ,  
**30** Որն իր վըրա շորջանակի ուներ պղնձյա տաս շրջանակ  
 Եվ անագե քրսան կումբեր, ճերմակավուն, մեջը պողպատ,  
 Որ պատում էր շորջանակի դրժնեհալաց Գորգոնը ծանտ,  
 Ծորջը Խունապն ու Արհավիրքը միասին տեղավորված:  
 Բըռնելու տեղն էր արծաթյա, վըրան վիշապ երեքգլխյան,  
 Գըլուխները ճըրա երեք կուռ փաթաթված մեկը-մյուսին:  
 Գըլխին դըրեց սաղավարտը քառախորան և ձիաբաշ:  
 Որի շըբեղ գարգամանկը ճոճվում էր վերն անեղորեն:  
 Առավ ձեռքը երկու միզակ պըղընձասայր սըլաքներով,  
 Որոնց շողյունը շանթարձակ մինչև երկինք էր բարձրանում:  
**40** Եվ ի պատիվ Միկենեի թագավորին՝ վեր-երկընթից  
 Ռոտուցին արգո Հերան և Աթենաս աստվածուհին:

Ամեն մի պետ հըրաման էր տալիս իր ժիր կառավարին,  
 Որ փոսի մոտ դասավորեն երիվարներն իրենց կարգով:  
 Իսկ մչուս կողմից հորդան տըվին հետևակներն ըսպառագեն:  
 Եվ հագիվ թե Այգը ծագած՝ փըրթավ աղմուկ մի անավոր,  
 Հետևակ գունդը գըրոհեց՝ փոսի առաջ դասավորված,  
 Եվ ճըրանցից փոքր-ինչ հետո ձիավորներն առաջ անցան,  
 Որոնց շարքում առաջ բերեց Ջևաղ աղմուկ մի դըժընդակ  
 Եվ արճագույն մի ցող շաղեց լայն երկընթի բարձրությունից:  
**50** Այդ օր նա շա՛տ կառասիներ էր թափելու ծանտ դըժոխքն ի վար:

Տըրոյացիք ճըմանապես՝ դարևանդի վըրա, դաշտում  
 Ծարվում էին Հեկտորի շուրջ և անըստգյուտ Պուլիդամի,  
 Եվ Էմիասի, որին տրոյանք աստըծու պես էին պատվում:  
 Անտենորի երեք որդոց՝ Պուլիքի և Ագենորի,  
 Ակամասի՝ դեռ պատանի՝ աստվածային գեղեցկությամբ:  
 Հեկտորը մեծ նախահարձակ զընդի զըլուխն անցած խըրոխտ  
 Հուժկու ձեռքին քըռնած ուներ հըսկա ասպար մի բոլորակ՝  
 Աստղի ճըման, որ ամպերից դուրս է գալիս շողշողալով,  
 Մեկ էլ ասպա ծածկըվում է մութ ամպերի ետև ճորից:  
**60** Այսպես անա, մերթ առաջին ու մերթ վերջին շարքերի մեջ  
 Հըրամաններ էր տալիս նա՝ հասակն ամբողջ պըղընձավառ,  
 Փայլակնացայտ՝ վահանադրոշ Արամագդի շանթի ճըման:

Ինչպես որ ժիր հընձվորները երկկարգ շարված իրար դիմաց  
 Հարուստ մարդու արտն են հընձում մեկն այս զըլխից, իսկ մյուսը՝ այն,

Եվ խիտ առ խիտ, իրարու կողք խըրձերն ընկնում են անդադար,  
 Այսպես տրոյանք և աքայանք հարձակվելով իրար վրրա՝  
 Փրովում էին, և փախուստի մասին ոչ ոք չէր մըտածում.  
 Երկու կողմից կատաղաբար կըրվում էին գալչերի պես,  
 Եվ նաչելով նըրանց վըրա՝ Ոխը ուրախ ծափ էր տալիս:  
 70 Աստվածներից նա էր միայն կըրվողների բազմության մեջ,  
 Իսկ մյուս բոլոր աստվածները կըրվից հեռու, անմասնակից  
 Բազմել էին անփույթ, անհոգ՝ Ոլիմպոսի վեհ բարձունքում,  
 Որ ամեն ոք իր հարկն ուներ գեղեցկակերտ և մեծաշուք:  
 Յուրաքանչյուրն ամպրոպային Արամազդին էր մեղադրում,  
 Ասելով թե ուզում է նա տըրոյացոց փառք ընձեռել:  
 Բայց հոգը չէր Արամազդի, աստվածներից առանձնացած  
 Խաչում էր նա իր մեծ փառքով և ակնապիշ նաչում այնտեղ՝  
 Դեպի քաղաքը տըրոյանց ու նավատորմն աքայեցոց,  
 Որ պըղինձն էր փաչատակում, մեռնում էին ու մեռընում:

80 Դեռևս վաղ առավոտից մինչև կեսօր աստվածային  
 Թըռչում էին նետերն անդուլ, ու երկուստեք ընկնում էին:  
 Իսկ երբ ճաշիկն իր պատրաստեց անտառաբլուր պուրակներում  
 Փայտանասը, որի ձեռքերն փայտ կրտրելով դադարեցին  
 Ու ձանձրացավ հոգին նըրա, և ուտելու կարիք ըզգաց,—  
 Այն ժամանակ աքայնցիք խրախուսելով մեկ-մյուսին՝  
 Խորտակեցին արիաբար տըրոյացոց գընդերը գոռ:  
 Առաջինը առաջ անցավ Ազամեմնոն արանց արքան  
 Եվ ըսպանեց ժողովըրդոց հովիվ արի Բիենորին,  
 Ապա նըրա կտաւաբին՝ Ոլիլևսին ըսպանեց նա,

90 Երբ իր կտրքից ցած ցատկելով ընդդիմացավ Ատրիդեսին:  
 Ատրիդեսը խոլանալով՝ շեշտ ճակատին զարկեց նըրա,  
 Սաղալարտի պղնձյա պսակն արգելք չեղավ սուր սըլաքին,  
 Որը ծակեց, անցավ թափով, խոբը խըրվեց ոսկորի մեջ,  
 Իրար խառնեց ուղեղը ողջ ու մոլուցքը մարեց նըրա:  
 Եվ թողնելով նըրանց այնտեղ, գետնատարած, մերկ կըրծքերով,  
 Որոնց շըքեղ գեներն արդեն կողոպտել էր, Ատրիդ արքան  
 Առաջ անցավ ըսպանելու Անտիփոսին և Իսուսին՝  
 Պրիամոսի որդիներին— մեկն հարճորդի, մյուսն հարազատ,—  
 Երկուսն էլ նույն կտրքի վըրա, և կտաւաբն էր հարճորդին,

100 Իսկ Անտիփոսն ըսպառագեն մարտընչում էր կողքը նըստած:  
 Մի ժամանակ նըրանց բըռնեց արագտըրն Աքիլլը քաջ  
 Իդա լեռան ըստորոտում իրենց խաշներն արածելիս,  
 Կապեց դալար ճիպտոներով ու փըրկանքով ազատ թողեց:

Իսկ այժմ Ասորիդ Ազամեմնոն իշխանապետն իր նիզակով  
Ծակեց մեկի՝ Իսուսի կուրծքն ըստիւնքներից փոքր-ինչ վերև,  
Եվ Անտիպիոն սուսերանար կառքից իսկույն ցած գլորեց:  
Եվ երբ գընաց կողոպտելու գեներն երկու եղբայրների՝  
Նո՛ր ճանաչեց, քանզի նըրանց տեսել էր նա նավերի մոտ,  
Երբ Իդայից Աքիլեար նըրանց կապած գերի բերեց:

- 110 Ինչպես սույումն արագավազ եղևիկի որջը նասնելով  
Գազանային ժանիքներով նոշոտում է խեղճ ձագերին,  
Ու պատռելով կուրծքը նըրանց գողտրիկ նոզին դուրս է կորզում,  
Ու թեպետև մոտ է մայրը, բայց չի կարող օգնել նըրանց,  
Որովհետև ինքը նույնպես սարսափի մեջ է սուսկայի  
Ու փախչում է մացառուպատ ու ծառախիտ պուրակներով  
Տաճնապալից ու քրրոնաթոր՝ գազանային նարձակումից,—  
Այդպես ոչ մի տրրոյացի չլինանըզգնեց գալ օգնության  
Աքայեցոց զարհուրելի զորությունից սարսախանար:

Հիպպոլոքին ու Պիսանդրին՝ որդիներին Անտիմաքի,

- 120 Որ Պարիսից անբավ պարզև ու ոսկիներ ընդունելով,  
Դեմ էր չըքնաղ Հեղիներն տալու իարտյաշ Մենելային,—  
Ազամեմնոն արքան նըրանց երկուսին էլ մեկտեղ բռնեց,  
Որոնք նույն կառքն էին նըստած և միասին էին վարում:  
Ծըփթվեցին, և ձիերի սանձերն ընկան նըրանց ձեռքից,  
Իսկ Ասորիդեսն առյուծաբար նետվեց ուղիղ նըրանց վըրս,  
Որոնք կառքում ծունկի եկած խընդրում էին աղերսագին.

«Մեզ իրնայիր, Ազամեմնոն, և ա՛ն փըրկանք արժանավոր,

Անտիմաքի սպարանքում կան կարասիք բազմապիսի,  
Պըղինձ, ոսկի և այլ գանձեր ու բազմապիեստ երկաթեղեն,

- 130 Մեր նայրը քեզ, մե՛ծ թագավոր, կըշընորի՛ անբավ փըրկանք,  
Եթե լըսի, որ ողջ ենք մենք արայեցոց նավատորմում»:

Խընդրում էին նըրանք այսպես պաղատելով թագավորին,

Բայց նըրանից չըլըսեցին քաղցրաբարտ մի պատասխան:

«Քանի որ դուք,— ասաց արքան,— որդիներն եք Անտիմաքի,

Որ տըրդանց ժուլովի մեջ հըրամայում էր ըսպանել

Մենելային՝ դեսպան եկած Ոդիսևսի հետ միասին,

Եվ չըթողնել, որ նա դառնա դեսպի նավերն արայական,

Պետք է, որ ձեր մահով հիմա քավեք ձեր հոր ոճիրը դուք»:

Այսպես ասաց նա և կառքից ցած գլորեց Պիսանդրոսին՝

- 140 Տեզը կըրծքի մեջ մըխելով, և նա մեջքի վըրս ընկավ:  
Հիպպոլոքը կառքից ցատկեց, բայց նըրան էլ Ասորիդ արքան  
Գետին վըռեց անմիջապես ու տեղնուտեղ հրակա սըրով  
Կըտրեց գըլուխն ու իբրև սանդ գըլորեց այն՝ ամբոխի մեջ:



Ապա, նրբանց թողած այնտեղ, դիմեց դեպի գրեհերը գոռ,  
Իր հետն առած արիասիրտ ա՛յլ ամրաքարձ աքալեցոց:  
Հետևակներն հետևակաց էին վանում խառնախունճապ,  
Եվ հեծյալներն՝ հեծյալներին, բախըվելով անվերջ իրար:  
Բարձրանում էր փռշին նրբանց սրմբակներից ամպի նըման.  
Ագամենճոն արանց արքան հետապընդում էր անդադար

150 Եվ կոտորում՝ հորդորելով քաջամարտիկ աքալեցոց:  
Ինչպես հանկարծ խիտ անտառում ընկնի հրրդեհ մի վիթխարի,  
Եվ հողմն ուժգին տանի նրրա հուր լեզուներն ամենուրեք,  
Ու տապալվեն նրդակոտոր բոցավառված ծառեր հրակա,  
Այսպես փախչող տրրոյացոց գլուխներն էին թափվում գետին  
Ագամենճոն Ատրիդեաի բազկի հուժկու հարվածներից:  
Ահիպարան շատ նըժույզներ կառքեր էին քաշում դատարկ՝  
Ռազմադաշտում այս ու այնտեղ՝ աղմուկալից դըղըրդյունով,  
Զըրկված իրենց վարողներից, որ դիտապաստ ընկել էին  
Ծառ ալեկի սիրելի սև ուրուրներին, քան թե կանանց:

160 Բայց Արամազը Հեկտորին հեռու և գերձ էր պահում միշտ  
Փըքիններից, մահից, փռշուց, խուռն ամբոխից և՛ արյունից:  
Ատրիդն առաջ էր խոյանում հորդորելով աքալեցոց,  
Իսկ տըրոյանք դաշտի միջից հըրոսելով դիմում էին  
Դեպ վաղեմի դարդանացու Իլիոսի շիրիմը սուրբ,  
Մոլաթուզի մեծ ծառի մոտ, որպեսզի շուտ մըտնեն քաղաք:  
Ագամենճոնն անեղ գոչմամբ հետապընդում էր անդադար  
Ահպարտելի ձեռքերն իր զույգ ամբողջովին արնաթաթալ:  
Տըրոյացիք էրր որ հասան Սկեական դարբասներին,  
Կաղնի ծառի մոտ կանգ առան՝ մյուս գընդերին ըսպասելով,

170 Զի կեսը դեռ դաշտում՝ զարհուր փախչում էին խուճապահաօր  
Երկնցների նըման, որոնց հալածում է առյուծն անեղ,  
Փախցընում է բոլորին նա, բայց բըռնելով մեկնումեկին՝  
Իր ժանտածուտ ժանիքներով պարանոցն է կոտորում առաջ,  
Ապա լափում ամբողջապես նրրա արյունն ու փորոտին:  
Այդպես արքա Ագամենճոնն էր հալածում տըրոյացոց՝  
Ըսպանելով վերջին մարդուն. փախչում էին ասրաստիսհար  
Ընկնում կառքից՝ քերանքսիվայր ու շատերը մեջքի վըրա  
Ատրիդեաի հըզոր ձեռքից, որ մոլեգնում էր նիզակով:

Բայց էրր արդեն հասնում էր նա պարիսպներին, քաղաքի տակ,  
180 Աստվածների ու մարդկանց հայրն այնժամ երկնից ցած իջնելով  
Գընաց նըստեց աղբյուրաշատ Իդա լեռան վըրա՝ անեղ,  
Փայլակնացալտ կայծակների ու շանթերի խուրձը ձեռքին  
Եվ Իրիսին արագաթև պատգամավոր հըղեց ըշտապ.

«Գընա՛ իսկույն, թեթև Իրիս, ու տար պատգամ քաջ Հեկտորին,  
Քանի դեռ նա տեսնում է որ Ագամեմնոն արանց արքան  
Առաջամարտ զընդերի մեջ գոռում է մահ տարածելով՝  
Թող նրանից խույս տա ինքը և մյուսներին խըրախուսի  
Մարտի մտնել արիաբար արյունարբու թըշնամու դեմ:  
Իսկ երբ որ նա խոցված նետով տիգահար կառքը նըստի,  
190 Այնժամ կըտամ Պրիամյանին մահացուցիչ ուժ ու կորով,  
Որ նա գընա հասնի նավերը ամրաբարձ աքայեցոց,  
Մինչև արևն ի մայր մըտնի ու սըրբազան գիշերը գա»:

Այսպես ասաց, ու թեթևուն Իրիսն անասց Արամազդին,  
Եվ Իդայից ցած իջնելով տուրաց դեպի Իլիոնը սուրբ:  
Գըտավ այնտեղ Պրիամոսի դյուցազնական շըքեղ որդուն՝  
Արիսաիրտ քաջ Հեկտորին իր ամրակուռ կառքի վըրա.  
Մոտ զընալով՝ արագաքայլ Իրիսն այսպես ասաց նըրան.

«Պրիամոսի որդիդ, Հեկտոր, հանճարակիցդ Արամազդի,  
Ասովածահայրն ինձ ուղարկեց քեզ մոտ որպես պատգամախոս,  
200 Ասաց՝ քանի տեսնում ես դու Ագամեմնոն արանց արքան  
Նախամարտիկ զընդերի մեջ գոռում է մահ տարածելով,  
Խույս տուր նըրան հանդիպելուց և մյուսներին հորդորիր դու  
Մարտի մըտնել արիաբար արյունարբու թըշնամու դեմ:  
Իսկ երբ որ նա իոցված նետով կամ տիգահար կառքը նըստի,  
Այն ժամանակ պիտի տա քեզ Ջևան ըսպանիչ ուժ ու կորով,  
Որ դու գընաս, հասնես նավերը ամրաբարձ աքայեցոց,  
Մինչև արևն ի մայր մըտնի, և սըրբազան գիշերը գա»:

Իրիսն այսպես պատգամելով՝ դեպի Ոլիմպ վերադարձավ,  
Իսկ Հեկտորը շըքեղ կառքից ցատկեց գետին իր գեներոլով  
210 Եվ ճոճելով տեգերն իր գույգ վազվըզում էր բանակի մեջ  
Հորդորելով ամեն մեկին, ու բորբոքեց անեղ մի մարտ:  
Տըրոյացիք ետ դառնալով նակատեցին աքայանց դեմ,  
Մյուս կողմից էլ արգիացիք զընդերն իրենց ամրացնելով՝  
Բորբոքեցին տըրոյանց դեմ մի պատերազմ արյունալից:  
Ագամեմնոնն առաջ նետվեց իր զընդերի զըլուխն անցած:

Արդ, ասացեք ինձ, Մուսաներ, բնակիչներդ Ոլիմպոսի,  
Առաջինը ո՞վ դուրս եկավ Ագամեմնոն արքայի դեմ  
Տըրոյանց միջից կամ դաշնակից մարտիկներից քաջակորով:—  
Նախ՝ կորովի ու հաղթանդամ Իփիդամասն Անտենորյան,  
220 Որ մեծացավ արոտաշատ ու խաշնավետ Թրակիայում,  
Իր մանկություն տարիներին Կիսեսն եղավ նըրան դայակ՝  
Մորական պապն, որը հայրն էր գեղեցկադեմ Թեսևոփի:

- Իսկ երբ դարձավ նա չափահաս, առավ հասակ վայելչագեղ,  
 Պահեց նրբան Կիսեսն իր մոտ և աղջիկը տըվեց նրբան:  
 Նորասրբասկ՝ առագաստից թըռավ դեպի Իլիոնը նա  
 Ու տանում էր մահիկաձև տասներկու նավ իր ետևից,  
 Բայց թողնելով Պերկոտեում բոլոր նավերն իր համաչափ՝  
 Հետիոտըն եկավ հասավ մինչև Իլիոն նըվիրական:  
 Սա էր ահա, որ առաջինն Ատրիդեսի դեմ դուրս եկավ:
- 230 Եվ երկուստեք ախոյաններն իրար վըրա երբ խոչացան,  
 Վըրիպելով՝ Ատրիդեսի աշտեն գընաց ընկավ հեռու,  
 Իսկ Իփիդամն Ատրիդեսի գոտուն զարկեց, զըրահամերձ,  
 Եվ իր ծանրը ձեռքի վըրա քաջավըստահ՝ հենկեց տեգին,  
 Բայց չըճեղքեց նըկարագարդ կամարը, այլ առաջակողմ  
 Կուռ արծաթին հանդիպելով՝ ծըովեց սըլաքն ինչպես կապար:  
 Վըրա հասավ այն ժամանակ Ագամեմնոնն առյուծարար,  
 Խըլեց աշտեն նրբա ձեռքից և քաշելով սուրն ահագին  
 Պարանոցը խըրեց նրբա ու տապալեց անշընչացրած:  
 Այսպես տապաստ ընկած այնտեղ՝ պղնձյա քընով քընեց ընդմիշտ
- 240 Հեզ պատանին, որ եկել էր քաղաքացոց իր օգնության՝  
 Իր հարագատ հարսից հեռու և տակալին չըվայելած  
 Ծընորհները, որոնց համար տըվել էր նա շատ պարգևներ:  
 Տըվել էր նախ հարյուր արջատ, խոստացել էր տալ և հետո  
 Հագար ոչխար և հագար այծ, զի նա հոտեր ուներ անթիվ:  
 Եվ արդ, նրբան կողոպտելով Ագամեմնոն Ատրիդ արքան  
 Առավ նրբա չըքնաղ զեճքերն ու գընաց դեպ քաջեցիք:  
 Այդ որ տեսավ Կոռնը քաջ՝ Անտենորի ավագ որդին,  
 Հըռչակավոր պատերազմող՝ սաստիկ մի սուգ աչքերն առավ  
 Հարագատի անկման վըրա, տեգը ձեռքին, գաղտագողի
- 250 Գընաց կանգնեց Ագամեմնոն դյուցագունի ետևը նա  
 Եվ արմունկից ներքև զարկեց նրբա բազկի ճիշտ մեջտեղին:  
 Փայլուն սըլաքն անցավ թափով ու դուրս եկավ մյուս կողմից:  
 Մոսկումն առավ արանց արքա Ագամեմնոն Ատրիդեսին,  
 Բայց ձեռընթափ չեղավ մարտից և գուպարից չըհեռացավ,  
 Այլ հողմասուն իր նիզակով Կոռնի վըրա խոչացավ նա,  
 Որն համահար իրեն եղբոր՝ Իփիդամի ոտքից քըռնած  
 Քարշ էր տալիս և քաշերին բարձրը ձայնով կանչում իր մոտ:  
 Մինչ նա այդպես դեպի ամբոխն էր քարշ տալիս իր եղբոր դին,  
 Զարկեց տեգով Ատրիդ արքան վահանի կուռ կումբի տակից
- 260 Եվ գըլուխը նրբա կըտրեց Իփիդամի մարմնի վըրա:  
 Այսպես, որդիք Անտենորի Ատրիդեսի ձեռքով՝ իրեճց  
 Ծակատագիրը լըրացրած՝ ըշտապեցին դեպի դըճոխք:

Իսկ Ատրիդեսն հրակա սրբով, մեծ քարերով և նիզակով՝  
Դեպի ուրիշ-ուրիշ քաջեր էր խոյանում առյուծաբար  
Քանի դեռ տաք նրա վերքից թուխ արյունն էր հոսում առատ,  
Իսկ երբ արդեն վերքը սառեց ու կանգ առավ արյունը տաք,  
Ատրեոսի որդու սիրտը կրակը ծագ սուր ցավով սաստիկ,  
Ինչպես երբ ժանտ նետը սուրապր՝ ծընդնդկանի ծոցն է խրվում  
Իլիթների ձեռքով նետված՝ Հերայի այն աղջիկներից,  
270 Որոնց ձեռքումն են երկունքներն,— այդպես կրակի ծն առավ նրան,  
Ու նետվելով կառքը իսկույն, հըրամայեց կառավարին  
Քըշել դեպի նավերն ուղիղ, զի հաղթել էր ցավը նրան:  
Հեռանալիս նա բարձրագոչ աղաղակեց աքայեցոց.  
«Ո՛վ սիրելի առաջնորդներ արգիացոց և իշխաններ,  
Հեռու պահեք առաջժըմ դուք անախոր մարտն արյունահեղ  
Ծովագընաց մեր նավերից, զի Արամազդն ամենագոր  
Ինձ չըթողեց օր ցերեկով կռիվ մղել տրոյանց դեմ»:

Այսպես սասաց, ու կառավարն ուղղեց ընթացքն անմիջապես  
Դեպի նավերն ու մըտրակեց գեղեցկաբաշ նըժույցներին,  
280 Որոնք թըռան հոժարակամ փոշեթաթթավ ու քըրտնաթոր,  
Դուրս հանելով մարտադաշտից վիրավորված թագավորին:

Հեկտորը, երբ տեսավ մեկնումն Ագամեմնոն Ատրիդեսի,  
Խրախույս կարդաց բարձր ձայնով տրոյացոց և լիկեանց.  
«Տըրոյացի՛ք և դուք, լիկյանք, դարդանյաններ ընթերա՛նարտ,  
Արիացե՛ք, սիրելիներս, հիշեցեք ձեր կորույր մեծ,  
Ամենաքաջն անավասիկ թողեց ուզմի դաշտն ու գընաց,  
Եվ Արամազդն ինձ փառք տըվեց, առաջ վարեք ձիերը ձեր,  
Ուղիղ դեպի դանայեցիք, որ ավելի՛ փառք ըստանանք»:

Այսպես սասաց և արժարծեց բոլորի մեջ եռանդ ու թափ:  
290 Ինչպես որսորդն է գըրգըրում սըրածանիք պառականին  
Վայրի կինճի կամ առյուծի վըրա՛ նըրան բաց թողնելով,  
Այդպես Հեկտորը Պրիամյան՝ գուգակիցը բուռն Արեսի  
Գըրգըրում էր արիասիրտ տըրոյացոց աքայանց դեմ,  
Եվ ինքն անվախ՝ առաջամարտ կըտրիճների գըլուխն անցած  
Գըրոհում էր դեպի գուպար մեծամըրունչ մըրըրկի պես,  
Որ վերևից վար խուժելով փոթորկում է ծովը կապույտ:

Իսկ նախ որի՞ն և հետո ո՞ւմ հարվածելով գըրկեց կյանքից  
Հեկտորը քաջ, որին Ջևար ընձեռեց փառք և հաղթություն:  
Նախ ըսպանեց Ասետին, Ավտոնոսին, Ոպիտեսին,

300 Եվ Դոլոսիսին Կիտյան, ապա Ոսկելտիոսին, Ագելավին,  
 Էսիմոսին և Օվրոսին, Հիպպոնոսին քաջամարտիկ՝  
 Դանալեցոց սալարներից և ամբոխից դարձալ ապա:  
 Ջեփյունը ինչպես, որ կոծում է և հալածում է Հարավի  
 Դիգաժ ամպերն՝ ահեղաշունչ մի մրրորկով թանձրատարափ,  
 Ու թավալվում են խունընթաց պիքները լեռնակուտակ,  
 Եվ ցայտում է փըրփուրը վեր թափառական հովի շընչով,—  
 Գլուխներն այդպես թափվում էին, որ Հեկտորն էր կըտրում-զըցում:  
 Այդտեղ սաստիկ կոտորածներ ու կորուստներ կրիճեհեն,  
 Աքալեցիք խունապահար կրիփախեհին նավերն իրենց.

310 Եթե Ողիսը Տիդյանին բողոքելով այսպես չասեր.  
 «Այս ի՞նչ եմ ես տեսնում, Տիդյան, քաջությունը մեր մոռացա՞նք,  
 Այստեղ արի, սիրելիդ իմ, քանզի սաստիկ ամիթ է մեզ,  
 Եթե հանդուգն այդ Հեկտորը տիրանա մեր նավատորմին»:

Եվ պատասխան տալով նրան՝ Դիոմեդեսն այսպես ասաց.  
 «Ես կրկանզենեմ, կրդիմանամ, քայց օգուտը քիչ կրիճի,  
 Ջի Արամազդն ամպրոպահույզ՝ տըրոյացոց է գորավիզ  
 Եվ հաղթությունն ուզում է տալ նրանց, քան թե մեզ՝ արալանց»:

Ասաց, կառքից ցած զըլորեց նա Թիմրեոս թագավորին,  
 Հարվածելով ձախ ըստիճքից և ըսպանեց միզակահար.

320 Իսկ Ողիսեսն՝ արքանչակից՝ Մոլիոնին աստվածատիպ:  
 Եվ թողնելով նրանց այնտեղ, իրենց արյան նապաղիքում,  
 Ամբոխի մեջ մըտան նրանք, աղմուկ, շրփոթ տարածելով:  
 Ինչպես երկու վայրագ վարագ, որ զայրացած ետ դառնալով,  
 Բարակների վըրա ընկած՝ բըզկըտում են բուրդը նրանց,  
 Այդպես նրանք ետ դառնալով ջարդում էին տըրոյացոց,  
 Եվ Հեկտորից փախչող աքյանք ուրախացած շունչ քաշեցին:

Նըրանք այնտեղ առան մի կառք ու բըռնեցին երկու քաջի—  
 Պերկուսացի Մերոփսի գույզ որդիներին երիտասարդ,  
 Որոնց հալոր հըռչակավոր հըմաչող էր, բախտագուշակ,  
 330 Ու չէր թողնում, որ իր որդիք զընան կըռիվ մարդախողող,  
 Սակայն նրանք չըլըսեցին, զի օրհասն էր տանում նրանց:  
 Դըրանց ահա՝ Տիդյանը քաշ, միզակավորը անվանի  
 Գետին զարկեց իր միզակով ու կողոպտեց զենքերը պերճ,  
 Իսկ Ողիսեսը ըսպանեց Հիպպոտամին և Հիպոոքին:

Ձևը, սակայն, որ նայում էր Իդայի վեհ բարձունքներից,  
 Տարածեց մարտ մի հավասար կըռվող երկու կողմերի մեջ.  
 Ու կատաղի գոտեմարտում զարկում էին—զարկվում նրանք:

Դիմենդերը ըսպանեց Ագաստրոփոս Պեոնյանին,  
Որը փախչել չըկարեցալ, քանզի ձիերն հեռու էին:  
340 Օ, կարճամիտ, որ մահացու սըխալ գործեց անողողելի,  
Կառավարը կառքը նըրա կանգնեցրել էր հեռու, իսկ նա  
Առաջամարտ գընդերի մեջ հետիտուն էր կըրիվ մըղում,  
Որ և ընկալ գիստից խոցված՝ տեգով Տիդյան Դիմենդի:  
Այդ տեսնելով՝ Հեկտորն իսկույն վըրա վազեց որոտալով  
Տըրոյացոց գընդերն ահեղ տանելով նա իր ետևից:  
Նըրան ի տես՝ սուկաց Տիդյան Դիմենդեսն ահեղագոռ  
Ու քարծրաձայն ալապես ասաց Ողիսևսին կանգնած իր մոտ.  
«Մեզ երկուսիս վըրա է դա գալիս այդպես խուռն ամբոխով,  
Բայց արի մենք կանգնենք ամուր և դեմ դընենք, կոտրենք նըրան»:

350 Այսպես ասաց և ճոճելով նետեց աշտեն երկայնասուլեր՝  
Ողիդ գըլխին նըշան բըռնած ու կորդակի եզրին գարկեց.  
Բայց պըղինձը վանեց պըղինձն ու չըհասալ չըքնաղ մորթին,  
Զի հարվածին արգելք եղալ եռապատիկ ու քարծրաձայր  
Սաղավարտը, որը Գուշակ Ապոլլոնն էր տըվել նըրան:  
Հեկտորն ընդոստ ցատկեց հեռու, խառնըվելով խուռն ամբոխին,  
Եվ ընկնելով ծունկի վըրա՝ հուծկու բազկով հողին հենկեց  
Եվ աչքերը ծածկըվեցին խավարախիտ մի գիշերով:  
Իսկ երբ գընաց Դիմենդեսն իր նիզակը վերցընելու,  
Որ քաջերի խըմբի միջից թըռած գետինն էր խըրվել խոր,  
360 Հեկտորն հանկարծ ոգի առալ և ցատկելով իր կառքը նա  
Անհետացալ ամբոխի մեջ և ազատվեց սև օրհասից:  
Տեգով նըրա ետևն ընկած՝ այսպես գոռաց Տիդյանը քաջ.

«Նորից դու, շո՛ւն, մահից պըրծար, հասել էր քո չարը արդեն,  
Սակայն Գուշակն Ապոլլոնը, որին ուխտ ես անում անշուշտ,  
Երբ գալիս ես տեգերի դեմ, փըրկեց նաև քեզ ա՛յս անգամ:  
Բայց ես պիտի հոգիդ սոճենմ, հանդիպելով քեզ վերջապես,  
Ատուվածներից մեկն էլ եթե ի՛նձ գորավիզ, պաշտպան լինի:  
Հիմա գընամ ուրիշների՝ ըսպանելու, ում հանդիպեմ»:

Այսպես ասաց ու կողոպտեց նիզակավոր Պեոնյանին:  
370 Սակայն Պարիսն՝ այրը չըքնաղ ու գեղավարս Հեղինեի  
Թաքնըվելով վաղընչական դարդանացու՝ ծեր Իլոսի  
Գեղակառույց դամբարանի պերճ սյուներից մեկի ետև՝  
Լարում էր իր լայնալիճը Դիմենդես Տիդյանի դեմ:  
Եվ այն պահին, երբ Տիդյանը ըզբաղված էր գերծանելով  
Ագաստրոփի նըկարագարդ գըրահն կըրծքից և ուտերից,  
Ասպարը հաստ ու ծանրաքերձ սաղավարտը՝ Պարիսն ուժգին

Քաշեց լարն իր լայնալիճի, և սըլաքը գուր չըթռավ,  
Այլ աջ ոտքի գարշապարը հարվածելով Դիոմեդէսի՝  
Անցավ գընաց խըրվեց հողում, Պարիսն այնժամ ծիծաղելով  
380 Դարաւնից դուրս ցատկեց արագ ու բարբառեց խըրոխտապանձ.  
«Դու խոցվեցի՞ր, իզուր չանցավ սըլաքըս սուր, բայց երանի՞  
Կողերիցըդ ներս խըրնի ու քաղնի քաղցըր հոգիդ,  
Այն ժամանակ տըրոյացիք մի փորձանքից կազատվեին,  
Որոնք քեզնից վախենում են, ինչպես այժերը՝ առյուծից»:

Դիոմեդէսը համարձակ նըրան այսպես պատասխանեց.  
«Օ՛, դու ըստո՛ր աղեղնավոր, հերապանձ ու կընամոլի,  
Եթէ բոլոր քո զենքերով դու փորձեիր դեմըս կըռվել,  
Ձէին օզնի քեզ ոչ աղեղ, ոչ էլ նետերըդ բազմաթիվ,  
Եվ այժմ իզուր ես հոխորտում դիպչելով լոկ գարշապարիս:  
390 Իմ հոգն էլ չէ, ասես մի կին կամ երեխա զարներ անմիտ,

Քանզի կընատ և ապիկար մարդու փըքինն անգոր է, բուր,  
Բայց իմ սըլաքն ուրիշ բան է, նույնիսկ եթէ շըփվի թեթն՝  
Կըպատճառի մահ անվըրեպ ու տեղնուտեղ կառնի հոգին,  
Եվ նըրա կինն իր այտերը կընանկըոթի ու կարյունի,  
Ջավակները որք կընընան, և ներկելով հողն իր արյամբ՝  
Կընէխի՛ նա, և նըրա շուրջ սիրակարոտ կանանց տեղակ  
Կըվըխտա տարմը գիշատիչ ագռավների և անգղերի»:

Այսպես ասաց, և Ոդիսէսն ընդհուպ նըրան մոտիկ գալով  
Կանգնեց նըրա առաջ և նա Ոդիսէսի ետև չոքած՝  
400 Գարշապարից քաշեց հանեց նետը՝ սաստիկ ցավ ըզգալով.  
Ապա իր կառքը նըստելով՝ հըրամայեց կառավարին  
Քըըել դէպի նավերն արագ, կըսկըծում էր սիրտը ցավից:

Ոդիսէսը այն ժամանակ մենակ մընաց իր նիզակով,  
Չըկար ոչ մի աքայեցի, վախը ստել էր բոլորին:  
Եվ նա խորունկ հառաչելով՝ այսպես ասաց իր սըրտի մեջ.  
«Վա՛յ ինձ, վատ է, եթէ փախչեմ ես ամբոխից անաքեկված.  
Եվ ավելի վատ է, եթէ թըշնամու ձեռքն ընկնեմ մենակ.  
Մյուս համորեն դանայեցոց Ջովանյան Ջևան անաքեկեց:  
Բայց ինչո՞ւ է սիրտս իրեն հետ այսպես իզուր խորհըրդածում.  
410 Լավ գիտեմ ես, որ վատասիրտ, վախկոտն է լոկ փախչում կըռվից,  
Իսկ ով քաջ է պատերազմում՝ նա կըկանգնի ու կըկըռվի,  
Եվ կըտոկա արիաբար, կամ կըսպանի, կամ կըսպանվի»:

Դ Եվ մինչ Արրա սիրտը այդպես ծըրհում էր այդ մըտքերի մեջ  
Վըրա հասան տըրոյացոց ջոկատները ասպարավոր  
Եվ Ողիսին կայմեջ արին, ոճիրն իրենց մեջ ամփոփած:  
Ինչպես առույգ երիտասարդ որսորդները բարակներով  
Վազեն վայրի կինճի վըրա, որն իր որջից դուրս է եկել,  
Սրբելով իր ժանիքները ծընոտների մեջ ծամածոտ,  
Եվ մինչ մարդիկ հարձակվում են, նա ատամներն է կըրճըտում,

420 Բայց քաջերը չեն ընկըրկում, որքան էլ որ անեղ է նա,—  
Այդպես նաև տըրոյացիք հարձակվեցին ամեն կողմից  
Ողիսեսի վըրա՝ սիրված Արամազդից ամպակուտակ:  
Ոստնեց Ողիսն ու նախ խոցեց իր նիզակով Դեյսիդեսին,  
Ռիցց հետո Եննոմոսին և Թոռնին ըսպանեց նա,  
Քերսիդամին զարկեց ասպա, երբ սա կտոքից ցած էր իջնում,  
Որն իր պորտից վիրավորված՝ Ողիսեսի սուր սըլաքով՝  
Փոշիների մեջ զըլորվեց, չանգոնելով հողն արյունազանգ:  
Թողած դըրանց՝ մըկընդահար արավ Քարոփա Հիպպասյանին,  
Որ եղբարն էր քաջ Սովկոսի, աստվածակերպ Սովկոսն իսկույն

430 Հասավ եղբորն իր օգնության և Ողիսին այսպես ասաց.  
«Ո՛վ նենգության ու մարտի մեջ հրոչակավոր դու Ողիսես,  
Կամ դու պիտի փառավորվես մարտում այսօր, ըսպանելով  
Հիպպասյան քաջ եղբայրներին և կողոպտես զենքերը մեր,  
Եվ կամ խոցված իմ նիզակով՝ պիտի փըչես շունչդդ այստեղ»:

Ասաց. զարկեց Ողիսեսի բոլորածիր կուռ վահանին,  
Եվ անցնելով նիզակն հուժկու փայլակնացալո կուռ ասպարից՝  
Խըրվեց թափով Լայերոյանի ամենարվեստ զըրահի մեջ  
Ու թույլ քերծեց կողքը, սակայն Աթենասը թույլ չըտըրվեց,  
Որ սըլաքը խորանալով՝ հասնի Արրա աղիքներին:

440 Եվ հասկացավ Ողիսեսը, որ սըլաքը մահաոխիջ չէ,  
Եվ փոքր-ինչ ետ ընկըրկելով՝ այսպես ասաց նա Սովկոսին.  
«Թըշվտակա՛ն, այժըմ նեթ գալու է քո օրհասը սև,  
Քանզի դու ինձ արգելք եղար տըրոյացոց կոտորելու.  
Բայց ասում եմ անավասիկ, այսօր պիտի դու աստակես,  
Հասել է քո օրհասն արդեն, և դու պարտված իմ նիզակով՝  
Փառքն ու պարծանքն ինձ պիտի տաս և քո հոգին Սանդարպետին»:

Այսպես ասաց, ու Սովկոսը փախավ թիկունք դարձընելով,  
Բայց փախչելիս՝ Ողիսեսը զարկեց Արրա թիկնամեջքին,  
Եվ Սովկոսը մեծ թընդյունով ցած տապալվեց մեջքի վըրա,  
450 Եվ Ողիսեսը դյուցազարս այսպես խոսեց խըրոխտարար.  
«Սովկո՛ս, որդիդ դու Հիպպասի քաջամարտիկ և ձիավարժ,



Հասավ մահվանդ օրհասն ահա ու քեզ բռնեց, չազատվեցիր:  
Վա՛յ թըշվառիդ, ո՛չ հայրդդ հեզ, և ո՛չ էլ մայրդդ մեծարո  
Չեն փակի քո՝ մահացյալիդ աչքերը բաց, այլ գիշակեր  
Թըռչունները քեզ կըկըտցեն դիակիդ շուրջ թնածելով:  
Իսկ եթե ես մեռնեմ փառքով, դյուցազնական աքայեցիք  
Ինձ կըպատվեն արժանապես՝ կատարելով շքեղ թաղում»:

Այս ասելով նա իր մարմնից և կրմբավոր վահանից կտո՛ւ՝  
Քաշեց հանեց քաջ Մովկոսի իրեն զարկած տեզը սուրսայր,  
480 Եվ տաք արյունը դուրս ցայտեց՝ սոսկալի ցավ պատճառելով:

Ողիսեսից ցայտող արյունն այդ տեսնելով տըրոյացիք  
Սըրտապընդված, միահամուռ հարձակվեցին նրա վըրս,  
Իսկ նա ետ-ետ ընթանալով ձայն էր տալիս ընկերներին:  
Երեք անգամ գոռաց, կանչեց իր թոքերի ամբողջ ուժով:  
Լըսեց ուժգին կանչը նրա Մենելավոսն արիսական  
Եվ Այաքսին, որ իր մոտն էր, դառնալով նա՛ այսպես ասաց.

«Ո՛վ դյուցազարմ Տելամոնյան, Այաքս, իշխանդ ժողովըրդոց,  
Քաջախիզախ Ողիսեսի ձայնն է հընչում իմ չորս բոլոր,  
Թըվում է թե գուպարի մեջ մեն ու մենակ բըռնած նըրան՝  
470 Նեղն են գըցել տըրոյացիք, եկ օգնության հասնենք շուտով,  
Քանզի օգնելն ազնիվ քան է նըրան, ով որ կարիք ունի:  
Վախենում են, որ միայնակ քաջի գըլխին փորձանք բերեն  
Եվ պատճառեն աքայեցոց վիշտ ահագին ու մեծ կորուստ»:

Այս ասելով՝ առաջ անցավ դյուցազնական Այաքսի հետ.  
Գըտան նըրանք Արամազդից փրված խիզախ Ողիսեսին  
Տըրովցիներից շըրջապատված, հանց եղջերու եղջերագեղ,  
Որին զարկեց, վիրավորեց ոմըն որսորդ իր սուր նետով,  
Բայց եղջերուն փախավ արագ սըրունքներով և ազատվեց՝  
Քանի դեռ իր վերքը տաք էր, և ուժ ուներ իր ոտքերում:  
480 Իսկ երբ արդեն նետը սուրսայր ուժասպառ է անում նըրան,  
Նըրա վըրս են հարձակվում շընագայլերը լեռներում:  
Բայց եղջերվի բախտից հանկարծ հայտնըվում է առյուծ մի հաղթ,  
Ու փախչում են շընագայլերն ահաբեկված մեծ զազանից,  
Որը նըրանց բոլորին էլ կըհոշոտեր պատառ-պատառ,—  
Շըրջապատել էին այդպես տըրոյացիք Ողիսեսին,  
Միճշդեռ դյուցազնը նիզակով հեռացնում էր մահն իրենից:  
Հասավ Այաքսն այն ժամանակ բըրգանըման ասպար ձեռքին,  
Կանգնեց կողքը Ողիսեսի, և տըրոյանք սարսափահար  
Ահագնակերպ նըրա տեսքից՝ ցըրիվ եկան անմիջապես:  
490 Իսկ Մենելավն արիսական՝ Ողիսեսի ձեռքից բըռնած՝  
Ամբոխից դուրս հանեց նըրան, և կառքը մոտ բերեց ծառան:

Իսկ Այաքսը տրոյացոց բազմության մեջ մըխըրճվելով՝  
Անընչացրեց Դորիկլոսին, որ հարճորդին էր Պրիամի,  
Ասա զարկեց Պանդոկոսին, Լիանդրոսին զարկեց հետո,  
Իրար ետև ըսպանեց նա Պիրատոսին, Պիլարդեսին:  
Ինչպես մի գետ, որ հորդառատ հեղեղվում է լեռներն ի վար  
Դեպ դաշտավայր՝ առաջ մղված Արամազդի տարափներից,  
Գըլորվելով տանում իր հետ չոր կաղնիներ ու սոճիներ,  
Եվ դեպի ծով ընթանալիս կուտակում է տիղմ իր ճամփին,—

500 Ռազմադաշտում այդպես Այաքսն էր փոթորկում ահեղորեն  
Մարտիկներին ու ձիերին. բայց Հեկտորը դեռ լուր չուներ,  
Սկանանդրոս գետի ափին՝ գուպարի ձախ թևումն էր նա,  
Որ կատաղի մարտ էր զընում, և կար աղմուկ մի ահավոր  
Արիսական Իդոմենի և գերեցյան Նեստորի շուրջ:  
Հեկտորն այնտեղ սարսափելի կոտորած էր անում ահեղ  
Իր միզակով և իր կառքով, խրլում կյանքեր ծաղկափրթիթ,  
Բայց և այնպես ասպարեզը չէին թողնի աքայեցիք,  
Եթե Պարիսը՝ վարսագեղ Հեղինեի այրը չընկճեր  
Ժողովըրդոց արի իշխան Մաքավոնին քաջամարտիկ՝

510 Աջակողմյան ուսից նրան խոցելով սուր եռասայրով:  
Այդ տեսնելով՝ սարսափեցին աքայեցիք, թե մի գուցե  
Կրոնիլը իր դեմքը փոխի այդ դյուցազնի ըսպանվելով:  
Եվ այս խոսքերն ուղեց իսկույն Իդոմենեսը Նեստորին.

«Ո՛վ դու Նեստոր Նելիսածին, աքայեցոց պարծանքդ մեծ,  
Ծոտ բարձրացիր դու կառքը քո և կողքդ առ Մաքավոնին,  
Եվ թրոցըրու սալաքմբակ նրժույզներդ դեպի նավեր,  
Որովհետև քրժիշկ է նա ու շատերից ավելի թանկ.  
Նետեր է նա քաշում-հանում, դընում վերքին ըսպեղանի»:

Այսպես ասաց Իդոմենեսն, ու Նեստորը չընդդիմացավ,  
520 Ցատկեց իր կառքն անմիջապես ու կողքն ստավ Մաքավոնին,  
Որ որդին էր բըժըշկապետ Ասկլեպիոս ըսքանչելու:

Նրժույզները մըտրակահար թըռան իսկույն հոժարական  
Դեպի նավերն, և այդ ճամփան հաճելի էր նրանց համար:  
Կերբիոնը, որ նըստել էր Հեկտորի հետ նույն կառքի մեջ,  
Տըրոյացոց շրփոթությունը տեսնելով՝ այսպես ասաց.

«Մինչ մենք այստեղ, ո՛վ քաջ Հեկտոր, դեգերում ենք դանաչանց հետ

Գուպարի այս թևի վըրա, տըրոյացիք այն մյուս թևում  
Իրարանցման մեջ են սաստիկ, թե՛ մարդ, թե՛ ձի սոհասարակ:  
Տեղամոնյան Այաքսն է քաջ նրանց այդպես ալեկոճում.  
530 Նըրան ես լավ ճանաչեցի՝ ուսին դըրած լայն վահանից:

Արի՛, մենք շուտ այնտեղ վարենք կառքը թըռչող մեր ձիերով,  
Որ հետևակն ու այրուձին մըղելով մարտ արյունասեղ՝  
Կոտորում են, ջարդում իրար, աղաղակում ահեղաձայն»:

- Այսպես սասց ու մըտրակեց գեղեցկաբաշ նըծույզներին,  
Ու մըտրակի ահեղ շաշմամբ երիվարներն ըզգաստացած՝  
Կառքը տարան՝ թըռցընելով դեպի կրովի կըրակը տաք,  
Սըմբակների տակ առաթուր կոխտուելով դիակ ու գենք,  
Կառքի սրունին և անիվներն ամբողջ արչան մեջ թաթալումն,  
Որոնց վըրա արչան շիթեր էին ցաչտում անիվների
- 540 Ծըրըջանակից և սըրարշավ նըծույզների սըմբակներից:  
Վառվում էր շուտ տեղ հասնելու հուր ցանկությանը Հեկտորն արի  
Եվ ջոկատներ ջախջախելու արյունառուշտ մղեգնությանը.  
Եվ նա ձըգեց դանայանց մեջ սաստիկ աղմուկ և աղաղակ:  
Տեգը ձեռքին ամեհորեն վազում էր նա գընդից ի գունդ  
Եվ մղեգին մարտ էր մըղում սըրով, տեգով և քարերով:  
Տեկամոնյան Այաքսից էր նա մի-միայն ըզգուշանում,  
Զի Արամազդն ամպրոպադեզ բարկանում էր նըրա վըրա,  
Երբ իրենից ավելի քաջ դյուցազնի դեմ շահատակեր:  
Բայց Արամազդը բարձրագահ երկյուղ գըրեց սիրտն Այաքսի,
- 550 Որ կանգ առավ ահաբեկված և շուտափույթ ուսն առնելով  
Յոթընկաշվյա սասարը մեծ՝ կրովի բովից դուրս սըլացավ:  
Գընում էր նա դանդաղաքալլ՝ շուտ-շուտ դեպի ետ նայելով  
Ամբոխի դեմ ոխերմացած չարախընդիր գազանի պես:  
Ինչպես գամփոներն ու հովիվները դաշտային նախատեղից  
Հարածում են սովալըլով մի շեկ աղյուծ, որին նըրանք,  
Ամբողջ գիշերը հըսկելով, չեն թողել որ հափըշտակի  
Արջառների ճարպը, մինչ նա հարձակվել է մըսի կարոտ,  
Սակայն իզո՛ւր, որովհետև անդուլ տարափը նետերի  
Կորովակուտ բազուկներից տեղացել է նըրա վըրա,
- 560 Եվ հըրրավառ հըսկա ջահեր, որոնցից նա, թեն խիզախ՝  
Խըրրտչում է խիստ, չեն թույլ տըվել նըրան իր քաղցն հագեցնելու,  
Եվ առավոտ լուսաբացին հեռացել է տըրտում-տըխտուր,—  
Այդպես Այաքսն էր հեռանում սըրտակոտոր և ակամա,  
Վախենալով աքայեցոց նավատորմի համար սաստիկ:  
Ինչպես մի էշ դանդաղաշարժ, որ անխըռով և անտարբեր  
Մարմնի վըրա իր կոտորատվող մահակների հարվածներին՝  
Արտն է մըտնում և արածում ցորենը դեռ նոր կանաչած,  
Ու տըղաներն ավանակին մահակներով ծեծելով պինդ  
Հագիվ արտից դուրս են հանում, երբ արդեն կուշտ կերել է նա,—
- 570 Այդպես տրոյանք ու դաշնակից սատարները հեռվից եկած՝

Մըկունդահար էին անում Տեղամոնյան մեծ Այաքսի  
Ասպարի կումբն ու հալածում ճորան անդու, կըրրնկակոխ:  
Իսկ Այաքսը մերթ հիշելով քաջութունն իր արիսակն՝  
Ետ էր դառնում ու դեմ դընում ճետապնդող հանդուզներին,  
Ապա կըրկին դեպի նավերն էր դիմում նա հըսկարաքայլ,  
Արգելելով տըրոյացոց մոտենալու նավատորմին:  
Այսպես, երկու բանակների միջև կանգնած կըույում էր նա,  
Եվ կորովի բազուկներից թըռած հուժկու տեգերն հաճախ  
Գալիս էին ահեղ թափով ոմանց կումբի մեջ խորվելու

580 Ու շատերն էլ տեղ չըհասած՝ ընկնում էին ճամփի կեսին:

Նըկատելով Եվեմոնի Եվրիպիլոս որդին արի  
Մեծ Այաքսին՝ նեղված սաստիկ սըլաքների այդ տարափից՝  
Եկավ կանգնեց կողքը ճորս, և նետելով տեգը փայլուն  
Զարկեց որդուն Փավսիոսի՝ ազգաց հովիվ Ապիսակին  
Եվ խոցելով լարդից ճորան՝ վազեց գեներն ավարելու:  
Այդ որ տեսավ սատվածատիս Ալեքսանդրոսն անմիջապես  
Լարեց աղեղն իր լայնալիճ Եվրիպիլոս դյուցազնի դեմ  
Եվ աչ գիստից խոցեց ճորան, որը ցավով ետ ընկորկեց  
Ընկերները բազմության մեջ՝ ազատվելու համար մահից

590 Եվ մեծագոչ ձայն արձակեց դեպի գըրնդերն աքայեցոց.

«Ո՛վ սիրելի գորապետներ արգիացոց և իշխաններ,  
Վերադարձեք և վանեցեք վատթարագույն ժամն Այաքսից,  
Որ տագնապի մեջ է սաստիկ սըլաքների տարափի տակ,  
Եվ հույս չունեմ, որ ազատվի այս կըրովի մեջ ահագնագոռ:  
Պատվա՛ր կանգնեք դյուցազնի շուրջ ու ողջ ուժով դիմադրեցեք»:

Այսպես սասց վիրավորված Եվրիպիլոսն, ու մոտ եկած  
Աքայեցիք վահանները թեքած իրենց ուսի վըրս  
Ու վեր ցըցված նիզակներով. Այաքսն արագ ընդատացեց  
Եվ հասնելով ընկերներին՝ դարձավ դեպի տըրոյացիք,  
600 Բոցածավալ կըրակի պես սաստիկ կըրով բորթոքելով:

Իսկ Նետտորին և ճորս հետ Մաքսակնին մարտադաշտից  
Դեպի նավերն էին տանում Նեյլան ձիերը քըրտնաթոր:  
Տեսավ ճորանց և ճանաչեց գերեմյանին Աքիլլը ժիր,  
Որ կանգնած էր այդ ժամանակ իր վիթխարի նավի վըրս  
Եվ կատաղի մարտն էր դիտում խուճապի հետ արտատվալի.  
Ու ձայն տըվեց Աքիլլը քաջ իր սիրելի Պատրոկլեսին,  
Որ դյուցազնի ձայնն առնելով վըրանից դորս թըռավ արագ  
Արեսի պես, և այդ ըսկիզբն եղավ ճորս դառն աղետի:

Եվ առաջինը Մեհիտյան արի որդին ինքը խոսեց.

610 «Ի՞նչ ես ասում, ո՛վ Աքիլլես, ինչո՞ւ դու ինձ ձայն տըվեցիր»

Եվ արագոտն Աքիլլը քաջ պատասխանեց Պատրոկլեսին.  
«Ո՛վ իմ սրբոտի սիրելագույն դյուցազնը դու, քաջ Մեհիտյան,  
Հիմա արդեն, կարծում եմ ես, որ պիտի գան աքայեցիք  
Ու ծընկներիս փարած խընդրեն, որպեսզի ես օգնեմ նըրանց,  
Քանզի տագնապն անհընարին պաշարել է նըրանց արդեն:  
Գընա իսկույն, սիրելիդ իմ, և հարցըրու դու Նեստորին,  
Այն վիրավորն ո՛վ է, որին մարտադաշտից տանում է նա:  
Նա ետևից շատ էր նըման Ասկլեպիոսյան Մաքալոնին,  
Սակայն դեմքը ես չըտեսա, զի չափազանց արագ անցան

620 Երիվարներն իմ առջևից արագանեայ մի ճախրանքով»:

Ասաց, Պատրոկլն իր սիրելի ընկերոջը հընազանդեց  
Ու վագ տըվեց դեպի նավերն ու վըրաններն աքայեցոց:

Իսկ երբ նըրանք արագարշավ՝ Նելիասձնի վըրանն հասան,  
Իջան կառքից անմիջապես դալարավետ գետնի վըրա:  
Ու միևնդեո ծեր Եվրիմեդոնն արձակում էր զամբիկների՛ն՝  
Նըրանք կանգնած ծովի ափին, զըվարթաշունչ հովի դիմաց  
Ցամաքեցրին քըրտնաթաթավ շապիկները իրենց վըրա,  
Ապա վըրան մըտան մեկտեղ ու նըստեցին աթոռներին:  
Այն ժամանակ նըրանց համար պատրաստեց քաղցր օշարակ

630 Եկամեդեն գեղեցկաձամ՝ դուստրը մեծանձն Արսիևոյի,  
Որին, որպես պարզև առած խորհըրդական Նեստորը ծեր  
Հետն էր բերել Տենեդոսից, երբ Աքիլլեսն այն ավերեց:  
Եկամեդեն նըրանց առաջ դըրեց սեղան մի գեղեցիկ,  
Սև ոտքերով ու սըրբատաշ, ու սեղանի վըրա դըրեց  
Պըղընձըս մի խան լիքը սոխով, որ ախորժակ է քաց անում.  
Դըրեց և մեղըր ծորածո, դըրեց ծաղիկ սուրբ փոխիևդի,  
Եվ ծերունու՝ տընից բերած բաժակը պերճ ու կըրկնատակ,  
Դըրվագագարդ ու ոսկեգամ, որը չորս կանթ ուներ վըրան,  
Եվ ամեն մի կանթի վըրա՝ երկուական աղավնիներ:

640 Երբ բաժակն այդ լիքն էր լինում, ուրիշն հագիվ էր վերցընում,  
Իսկ ծերունի Նեստորը այն վերցընում էր շատ հեշտությամբ:  
Այդ բաժակում աստվածուհու նըմանվող կինն այն գեղաձամ  
Լըցրեց գինի պըրամընյան, վըրան քերեց այժի պանիր  
Պըղընձեդեն մի քերոցով, և ըսպիտակ ալյուր ցանեց:  
Այսպես ահա Եկամեդեն պատրաստելով քաղցր ըմպելին

Տըվեց նըրանց, որ խըմեցին ու հագեցրին ու պապակն իրենց,  
Ապա հանգիստ ըսկըսեցին զըրույց անել իրարու հետ:

Հանկարծ Պատրոկլն աստվածատիպ կանգնեց նըրանց դըրան առաջ,  
Որին Նեատրն էրք որ տեսալ, վեր կացալ իր փայլուն գահից,  
650 Եվ բըռնելով նըրա ձեռքից՝ հըրապիրեց նըրան նըստել,  
Բայց Պատրոկլեար մերժելով՝ այսպես ասաց ալևորին.  
«Նըստելու ժամ չէ ինձ համար, աստվածային ո՛վ ծերունի,  
Պատկանելի է, մեծարո, նա՛, որ հըղեց ինձ հարցընել,  
Թե ո՞վ էր այն վիրավորը, որին բերում էիր կառքով.  
Սակայն արդեն ճանաչում եմ Մաքսավոնին, հովիվ ազգաց:  
Պետք է որ շուտ վերադառնամ Աքիլլեային լուր տանելու.  
Ինքը՞ր գիտես, դյուցազնը՞ր ծեր, թե ինչպիսի խիստ մարդ է նա,  
Անմեղ մարդուն հսկ հեշտությամբ նա հանցավոր դուրս կըբերի»:

Եվ գերեմյան Նեատր ասպետն այսպես ասաց Պատրոկլեային.  
660 «Այդ ինչպե՞ս է, որ արագոտն Աքիլլեար աստվածազարմ  
Մեղք է գալիս աքայեցոց վիրավորված որդիներին.  
Նա չըգիտե, թե բանակին ինչպիսի սուգ է համակել:  
Պատկան եմ արդ վիրավորված պետերն իրենց վըրաններում:—  
Նեոտահարված է կորովի Դիոմեդես Տիդյանը քաջ,  
Տեգով խոցված եմ Ոդիսևսն և Ատրիդես արանց արքան,  
Եվրիպիլն էլ նըրանց նըման՝ վիրավորված նետով՝ գիտից,  
Սըրան էլ նո՛ր մարտադաշտից դուրս հանեցի նեոտահարված,  
Բայց Աքիլլի հոգն անգամ չէ, նա չի խըղճում դանալեցոց:  
Ըսպասում է նա երևի, որ մեր նավերը ծովափին  
670 Ի մեծ վընաս արգիացոց՝ վատվե՛ն ոսոխ հըրով անգութ,  
Ու կոտորվե՛նք մենք մի առ մի թավալզըրոր իրար վըրս:  
Ափսո՛ս, որ էլ նախկին ուժը չի մընացել թևերիս մեջ:  
Ո՛ր էր, եթե մեկը տար ինձ՝ դառնալ այնպես երիտասարդ,  
Ինչպես էի, երբ վե՛ճ ծագեց էլիացոց ու մեր միջև,  
Էլիացիք բըռնի կերպով ավարեցին եզները մեր:  
Ըսպանեցի ես քաջարի Հիպիրոքյան Իտիմոնին.  
Իր եզներն էր պաշտպանում նա, երբ իմ ձեռքից ընկալ տասպաստ,  
Որից հետո ողջ գյուղացիք թողին փախան սարսափահար:  
Իսկ մենք դաշտից տուն քըշեցինք արջառների հիսուն նախիր,  
680 Եվ նույնքան էլ ոչխարի հոտ, և խոզերի երամակներ,  
Եվ այծերի նույնքան հորան, հարյուր հիսուն աշխետ գամբիկ,  
Որոնց շատի ըստինքներից ժիր մըտրուկներ կային կախված:  
Եվ այս բոլորը գիշերով քըշեցինք մենք դեպի քաղաք՝  
Նեպան Պիլոս, և ծերունի Նելևար շա՛տ ուրախացալ,

Զի պատանհի ասպատակիս բայական մեծ բաժին ընկավ:  
 Նոր էր բացվում լույսը, երբ ժիր մունետիկներն ամենուրեք  
 Զայնում էին էլիաներից տուժվածներին հավաքվելու:  
 Պելիացոց իշխանները բաժանեցին ավարն ամբողջ,  
 Ողովհետև էլիացիք մեզ շատերիս պարտք ունեին,  
 690 Սակավաթիվ լինելով մենք, նըրանք մեզ շատ էին նեղում:  
 Դեռ առաջին տարիներին Հերակլեսը եկավ հըզոր  
 Ու շատ տանջեց, չարչարեց մեզ, շատ քաջերի կոտորեց նա:  
 Մենք տասներկու եղբայր էինք, որդիներըս ծեր 'Նելեսի,  
 Եվ միայն ե'ս ողջ մընացի, մյուս եղբայրներս կորան թուր:  
 Պըղընձագգեստ եպիսցոս այս բաներով գոռոզացած՝  
 Դաժան էին վարվում մեզ հետ, չարչարելով մեզ շարունակ:  
 Ծերը ջոկեց շատ արջառներ և այծերի ըստվար մի հոտ՝  
 Իր ընտրությանք երեք հարյուր գըլուխ՝ իրենց հովիվներով,  
 Զի ամենից ավելի շատ նա էր տուժել էլիսի մեջ:  
 700 Գուպարահաղթ չորս նըժույգներ իրենց կառքով, որը 'Նելեսն  
 Ուղարկել էր կառարշավի՝ եռոտանո համար՝ էլիս,  
 Գոռոզ Ավգիաս արանց արքան այդ ամենը գըրավելով՝  
 Ետ դարձըրեց կառավարին միայն՝ տըրտում ձիանց համար:  
 Եվ ծերունին, որ չափազանց զայրացած էր այդ վարմունքից,  
 Ընտրեց, շատը առավ իրեն, մյուսը տըլեց ժողովըրդին,  
 Որ բաժանեն, և ամեն ոք արդար բաժինն իր ըստանա:  
 Այսպես ահա մեծաքանակ ավարն էինք մենք բաժանում  
 Եվ քաղաքում գոհեր էինք մատուցում մեծ աստվածներին,  
 Երբ երրորդ օրը թըշնամիք վըրս տըլին միահամուտ,  
 710 Մեծ բազմությանք և ամենի, սալաւըմբակ նըժույգներով:  
 Գընդերի մեջ էին երկու Մոլիոնները ըսպտագեն,  
 Բայց դեռ մանուկ և անհըմուտ քաջահանդուզն արհուրջան:  
 Ալփիոսի ափից հեռու, քարձրավանդակ բըլրի վըրս  
 Թրիոես քաղաք մի կա, Պիլոսի ծայրն ավազապատ:  
 Նըրանք քաղաքն այդ պաշարած՝ ուզում էին քանդել իսպառ,  
 Բայց երբ դաշտից անցնում էին, Ոլիմպոսից ցած իջնելով  
 Աթենասը ուշ գիշերով պատգամաբեր եկավ մեզ մոտ,  
 Որ զենք առնենք անմիջապես. և Պիլոսի մեջ հավաքվեց  
 Մարտընչելու տենչով վառված հոժարակամ մի բազմություն:  
 720 Բայց Նելեսը թույլ չէր տալիս, որ ես զինվեմ ռազմի համար,  
 Որի համար նա ինձանից երիվարները թաքցըրեց,  
 Կարծելով, որ անփորձ եմ ես պատերազմի գործերի մեջ:  
 Բայց ես թեպետև հետիոտն, այրուձիում էլ քաջ եղա  
 Եվ անվանի, զի Աթենասն էր վարում ինձ դեպի գուպար:  
 Արեւնէի մոտ կա մի գետ, որ կոչվում է Միւնիէլոս,

- Կանգնեց այնտեղ, այդ գետի մոտ մեր այրուծին, ըսպասելով  
 Աստվածային առափնոյան, որ հետնակ գրնդերն հասնեն:  
 Եվ այնտեղից ձիավորներս զըրահալոր և զինավառ  
 Եկանք հասանք կեսօրի մոտ Ալփիոսի սուրբ շրթերին
- 730 Եվ զոհեցինք այնտեղ ըզգոն Արամազդին ընտիր զոհեր:  
 Ընծայեցինք մեկական ցով՝ Պոսելորնին և Ալփիոսին,  
 Եվ մի երինջ նախի միջից՝ կապուտաչյա Աթենասին:  
 Ապա բանակը գունդ առ գունդ ընթերելուց ետ, երկույան  
 Ամեն մարտիկ իր զենքերով քրնեց Ալփիոս գետի ափին:  
 Իսկ մեծասիրտ եպիսոփոս քաղաքի շուրջ բըռնած արդեն  
 Այրվում էին այն քանդելու, ավերելու տենչով մոլի:  
 Սակայն հանկարծ տեսան ճրրանք իրենց սուսջ գործն Արեսի:  
 Արևը վառ ճոր էր սրփուել իր ճանանչներն երկրի վըրա,  
 Որ մենք կըռիվն ըսկըսելով՝ ողջ ճակատով զըրոհեցինք,
- 740 Արամազդին աղաչելով և կապուտաչ Աթենասին:  
 Երբ իրարու խառնըվեցին պեղիացիք ու եպիսոփոս,  
 Ըսպանեցի ես մի քաջի, ճրրա ձիերն ավարելով.  
 Ավգիասի փեսան էր նա՝ Մուլիսը քաջամարտիկ,  
 Որի կինն էր՝ դուստրը ճրրա խարտիշագեղ Ագամեդեն,  
 Որ ծանոթ էր երկրի սընած բուծիչ բոլոր բույսերի հետ:  
 Զարկի ճրրան իմ ճիգակով, և նա ընկավ փոշեթավալ,  
 Իսկ ես ճրրա կառքը ճըստած՝ մըտա գրնդերն սուսջամարտ:  
 Մեծահոգի եպիսոփոս ամեն մեկը մի կողմ փախան,  
 Երբ որ տեսան Մուլիոսի ընկնելը իմ պղնձյա տեգից,
- 750 Զի նա պետն էր այրուծի և անվեհեր պատերազմող:  
 Ես քաջաբար ճրրանց վըրա խոյացա սև մըրըրկի պես,  
 Առա հիսուն կառք ճրրանցից, ամեն մեկում երկու հոգի,  
 Որոնք տեգովն իմ ըսպանված՝ ծամեցին հողն ակռաներով:  
 Կըսպանեի ես Ակտորի երկու որդոց՝ Մուլիոններին,  
 Թե չազատեր ճրրանց ահեղ պատերազմի մեջ մեռնելուց  
 Երկրասասանն ամենիշխան՝ ճրրանց թանձրը մեգով պատած:  
 Արամազդը պեղիացոց պարզեց մեծ մի հաղթություն.  
 Քըշում էինք ծայրածավալ դաշտի միջով հայածական,  
 Կոտորելով ճրրանց անվերջ և զենքերը կողոպտելով,
- 760 Մինչև հասանք մենք ձիակոխ՝ Բուպրասիոնը ցորենավետ,  
 Վեմն Ոլենյան և Ալիսյան կոշվող բըլուրը բարձրավանդ:  
 Այնտեղից էր, որ Աթենասն ետ դարձրեց գրնդերը մեր:  
 Այնտեղ էլ ես ըսպանելով մեկին՝ թողի. և աքայանք  
 Արագայօտիչ ձիերն իրենց ետ վարելով դեպի Պիլոս,  
 Աստվածներից՝ Արամազդին, և մարդկանց մեջ ինձ՝ Նեստորիս  
 Ծընորհակալ էին լինում: Այսպես էի մի ժամանակ:



- Իսկ Աքիլլեսն իր ուժն անբավ պահում է լոկ իրեն համար.  
**Պիտի** զըղջա շատ ուշ, գիտես, երբ շընջըվի գորքը թուր:  
 Սիրելիդ իմ, Մեհիդիոսը արդարև ճիշտ էր պատվիրում,  
 770 Այն օր, երբ նա քեզ Փթիայից Ագամեմնին էր ուղարկում.  
 Եվ մենք այնտեղ, ներսումն էինք, ես և դյուցազն Ոդիսսևսը,  
 Ու բոլորը լըսում էինք, ինչ որ նա քեզ պատվիրում էր:  
 Եկել էինք մենք Պելևսի վայելչակերտ պալատը պերճ,  
 Պարարտարոտ Աքայիայում գորածողով կատարելու.  
 Այնտեղ էիք այն ժամանակ Մեհիտիոսը դյուցազն ու դու,  
 Ինչպես նաև Աքիլլը ժիր. իսկ ձիավարժ Պելևսը ծեր  
 Նախագավթի սրբահակում ի պատիվ մեծ Արամազդի  
 Գեր ազդրեր էր այրում եզան և ոսկեղեն մեծ բաժակով  
 Հեղում էր սև, ազնիվ գինին ողջակեզի վըրա ի ձոն:  
 780 Մենք բակ մըտանք այն ժամանակ, երբ միսն էիք պատրաստում դուք,  
 Իսկ Աքիլլեսը զարմացած վազեց արագ մեզ ընդատաջ  
 Ու բլունելով նա մեր ձեռքից՝ տարավ մեզ ներս ու նըստեցրեց,  
 Եվ հյուրույթի հատուկ կարգով հյուրասիրեց առատորեն:  
 Իսկ երբ կերանք ու կըշտացանք, այն ժամանակ խոսք առա ես  
 Եվ հըրավեր կարդացի ձեզ՝ միանալու մեր արշավին:  
 Դուք այդ սիրով ընդունեցիք և ըստացաք շատ պատվերներ:  
 Պելևսը ծեր պատվիրում էր զավակին իր՝ Աքիլլեսին  
 Արի լինել և քաջությամբ գերազանցել ուրիշներին,  
 Իսկ Ակտորիան Մեհիտիոսը քեզ ուղղելով իր խոսքն՝ ասաց.  
 790 «Որդյակ իմ դու, Աքիլլեսը զարմով քեզնից բարձր է, գիտես,  
 «Դու տարիքով նըրանից մեծ, իսկ նա ուժով՝ գերիվերո.  
 «Ինքքդ նըրան միշտ խելացի խորհուրդներ տուր և խըրատիր,  
 «Հըրահանգիր նըրան, և նա սիրով թող քեզ հընազանդի»:  
 Հայրըդ այդպես պատվիրեց քեզ, բայց դու պատվերն այդ մոռացար.  
 Հիշեցրու այդ բոլորը դու քաջամարտիկ Աքիլլեսին,  
 Եվ օգնությամբ աստվածների գուցե նա քո խոսքը լըսի:  
 Ընկերական խորհուրդը միշտ բարի է հույժ ու պատվական:  
 Իսկ եթե նա մի որևէ պատգամից է ըզգուշանում,  
 Եվ կամ նըրան մեծարո մայրն Արամազդից բան է ասել,  
 800 Գոնե թող նա քե՛զ ուղարկի միրմիդոնաց քաջերի հետ,  
 Եվ այսպիսով գուցե մի լույս բերես գորքին աքայեցոց:  
 Նա գեղեցիկ իր գեները թող որ տա քեզ, որ տըրոյանք  
 Քեզ նըրա տեղ ընդունելով հեռու քաշվեն ռազմադաշտից,  
 Եվ արիսյան աքայեցիք պատերազմից ասատիկ հոգնած՝  
 Ոգի առնեն ու շունչ քաշեն գեթ կարճատև ժամանակով:  
 Դուք հանգիստ ենք և հեշտությամբ կըկարենաք մեր նավերից  
 Քըշել՝ կըովից հոգնած արդեն տըրոյացոց դեպի քաղաք»:

- Այսպէս ասաց և կրօնքի տակ սիրտը շարժեց Պատրոկլէսի,  
 Որ ըշտասպէց դեպի նավերն էակիդյան Աքիլլէսի:
- 810 Եվ վագ տալով ճանապարհին, Պատրոկլէսը երբ որ հասավ  
 Ռոփսևսի յաստափայտին, ուր կար ստյան-հըրապարակ,  
 Եվ ուր կանգնած էին նաև քագիւնները աստվածների,—  
 Այնտեղ նըրա սուաջն ելավ Եվեմոնի արի որդին՝  
 Եվրիպիլոսը վիրավոր, որ ազդրից էր վիրավորված:  
 Կաղում էր նա և քըրտինք էր հոսում գըլխից և ուտերից,  
 Եվ նըրա խոր վերքից դեռ տաք՝ խոխոջում էր արյունը թոխ,  
 Սակայն ուշքը վըրան էր դեռ. Մենիտյանը նըրան ի տես՝  
 Հուզվեց սաստիկ և հեծելով՝ այս սըրսթև խոսքերն ասաց.  
 «Օ՛, դուք դըժբախտ գորավարներ և իշխաններ դանապեցոց,  
 820 Այսպէս՝ս ուրեմն, ձեր հայրենի երկրից հեռու, Տըրոյայում  
 Զեր ըսպիտակ ճարպով պիտի հագեցնէիք դուք շըներին:  
 Բայց դու արի ա՛յս ասա ինձ, դյուցաւընունդ Եվրիպիլոս,  
 Արդոյք ահեղ այդ Հեկտորին պիտի տոկա՞ն աքայեցիք,  
 Թե՛ ի մտտո պիտի ջընջվեն նըրա տեգից հաղթահարված»:

- Եվ վիրավոր Եվրիպիլոսն այսպէս նըրան պատասխանեց.  
 «Այլևս ոչինչ չի օգնի մեզ, դյուցազնագարս ո՛վ Պատրոկլէս,  
 Աքայեցիք բոլոր պիտի ընկնեն իրենց նավերի մոտ,  
 Ռոյվհետն բոլոր նըրանք, որ ամենից քաջերն էին,  
 Տըրոյացոց ձեռքից խոցված՝ պսակած են արդ նավերի մեջ,  
 830 Իսկ տըրոյանց ուժն օրեց-օր ավելանում է շարունակ:  
 Բայց դու օգնիր ինձ, Պատրոկլէս, դեպ իմ նավը տանելով ինձ,  
 Եվ հեռացրու նետն իմ ազդրից, ու գոյ ջըրով լըվա՛ մաքուր՝  
 Վերքից հոսող արյունը թոխ և դիր վըրան ըսպեղանի,  
 Որ, ասում են՝ Աքիլլն է քեզ սովորեցրել, իսկ նըրան էլ՝  
 Քիրոնը, որ հուշկապարկաց մեջ ամենեն արդար մարդն է:  
 Մեր երկու մեծ բըծիշկներից՝ Մաքավոնը վըրանի մեջ  
 Պսակած է արդ, ինքն էլ կարոտ քաջահըմուտ մի բըժըշկի,  
 Իսկ Պոդալիրն այնտեղ, դաշտում մարտընչում է տըրոյանց դեմ»:  
 Մենիտյանը քաջակորով նըրան այսպէս պատասխանեց.  
 840 «Ի՞նչ կըլինի այս բոլորի վերջը, և ի՞նչ պիտի անենք,  
 Ասա դու ինձ, Եվրիպիլոս, դյուցազնըդ քաջ, սիրելիդ իմ:  
 Ես ինքս հիմա Աքիլլէսի մոտ եմ գընում ասելու այն,  
 Ինչ պատվիրեց Աքայեցոց խընամակալ Նեստորը ձեր,  
 Բայց և այնպէս քո ցալի մեջ քեզ չեմ թողնի անօգնակալ»:

Այսպէս ասաց և գըրկելով տարավ վըրանն ազգաց հովվին:  
 Ծառան իսկույն իր տիրոջ տակ փըռեց մի մեծ արջառենի:

Պատրոկլեսը նըրա վըրա սատկեցնելով վիրավորին,  
Կըտրեց սըրով նետը նըրա ազդրում մըտած ու գոլ ջըրով  
Լըվաց վերքի արյունը սև, և շըփելով իր ափի մեջ  
850 Ախտաբուծիչ մի դառն արմատ՝ ցանեց նըրա վերքի վըրա,  
Որը կըտրեց ցավերն իսկույն, դադարեցրեց հոսումն արյան,  
Չորացնելով վերքի բերանն, ու վիրավորն հանգըստացավ:

# Ե ր գ Տ ա ս ն ե ր կ ու ե ր ո ր դ

## ՄԱՐՏ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՇՈՒՐՋՆ

Այսպես, մինչդեռ վերանի մեջ արի որդին Մենիտիոսի  
Դարմանելով բըժըշկում էր նետահարված Եվրիպիլին,  
Կըովում էին միահամուռ արայեցիք և տըրոյանք:  
Չէին օգնում դանայեցոց փոսն ու պարիսպը բարձրադիր,  
Որ շինեցին որպես պատվար նավատորմի համար իրենց,  
Բայց գոհ չարին աստվածներին, որ պաշտպանեն նավերն արագ  
Եվ պահպանեն նավերի մեջ եղած պարեն-պաշարն անբավ.  
Շինվեց պարիսպն այն ո՛չ կամքով և գիտությամբ աստվածների,  
Որի համար էլ կարճատև եղավ նորա կյանքը այնպես:

10 Քանի ողջ էր Հեկտորը դեռ, և Աքիլլեսն իր քենի մեջ,  
Եվ կանգուն էր Պրիամոսի բարեբընակ ոստանը դեռ  
Աքայեցոց մեծակատույց պատվարը այդ մընաց կանգուն,  
Իսկ երբ մեռան ու գնացին տըրոյացոց քաջերն ամեն,  
Աքայեցիք ոմանք ընկան և ոմանք էլ ողջ մնացին,  
Եվ տասներորդ տարում ընկավ քաղաքը ծեր Պրիամոսի,  
Եվ նավագնաց արգիացիք վերադարձան երկիրն իրենց,—  
Պոսեյդոնն ու Ապոլլոնը խորհուրդ արին այն ժամանակ  
Քանդել պարիսպն այդ հիմնովին՝ Իդա լեռնից գահավիժող  
Բոյոր գետերն ամբողջ թափով բաց թողնելով նորա վըրա—

20 Հոնեսու, Կարես, Հեպտապորոս, Գրենիկոս և Հոնդիոս,  
Էսեպոսն ու Սիմոնիսը, Սկամանդրոսն աստվածային,  
Որոնք այնտեղ արջառամորթ շատ ասպարներ ու կորդակներ  
Ու կիսաստված դյուցազների զարմեր տիղմի մեջ թաղեցին:  
Այդպես, բոյոր այդ գետերի երախը շուռ տըվեց այդ կողմ  
Ինքը Գուշակ Ապոլլոնը, և շարունակ ինն օր անվերջ  
Նըրանց ջըրերն անագնագոչ գոռում էին պարոսպի դեմ,  
Եվ Արամազդն անվերջորեն անձրևում էր այդ ընթացքում,

Որ ծովասույզ անի իսպառ պարիսպը այդ հիմնահատակ:  
Երկրատատան արքան այնտեղ երեքարձեն իր ձեռքն առած  
30 Հեղեղին էր տալիս հիմքի բոլոր քարերն ու գերաններն,  
Որոնց վրրա աքայեցիք թափել էին մեծ ճիգ ու ջանք:  
Հարթեց դարձյալ ու հարդարեց ափունքը հորդ Հելլեսպոնտի  
Ու վերըստին ավազի հաստ շերտով ծածկեց ծովեզրը նա  
Ու գետերը ետ դարձրեց, դրրեց նրանց այն հունի մեջ,  
Որով առաջ տանում էին գեղավըտակ ջրրերն իրենց:

Մի օր այդպես պիտ անեին Ապոլլոնն ու Պոսեյդոնը,  
Իսկ այդ ժամին փրրթավ հանկարծ աղմուկ անեղ ու պատերազմ  
Պընդակատույց պարըսպի շուրջ. հաստ հեծանները բուրգերի  
Թընդում էին ու դըղըրդում ուժգընակի բախումներից:

40 Արգիսցիք Արամազդի խարազանից խոշտանգահար  
Փախան գումար ու փակվեցին նավերի մեջ՝ ահաբեկված  
Խունապների հընարագետ կորդակաճոճ քաջ Հեկտորից,  
Որը դարձյալ, ինչպես առաջ մարտ էր մղում մըրրրկի պես:  
Ինչպես առյուծ մի կամ վարազ հանձնապաստան, ահագնատես  
Ընկած խըմբում որսորդների և շըների ոհմակի մեջ,  
Որոնք շուրջը շըղթա կապած հարձակվում են նրա վըրրա  
Ու տեղում են ամեն վայրկյան սըլաքների տեղատարափ,  
Բայց քաջալանջ սիրտը նրա չի դողդողում բոլորովին,  
Այլ անհողդողդ արիությանը մաքառում է բոլորի հեմ,

50 Միգ թափելով համատորեն շըրջապատող շըղթան փըշրել,  
Եվ որ կողմն էլ դառնում է նա՝ ընկըրկում են տեղի տալով,  
Այդպես Հեկտորն էր ամբոխի միջով խիզախ գընում-գալիս,  
Հորդորելով ընկերներին գըրոհ տալով անցնել փոսից,  
Սակայն ձիերն արագաթոփչ անցնելու սիրտ չէին անում,  
Այլ պոռունկին կանգնած փոսի՝ խուլ վընջում էին նրանք  
Ու խրտչելով գնում ետ-ետ, զի դժվար էր ցատկել փոսից,  
Որովհետև երկու կողմից խորխորատներ ուներ իր շուրջ,  
Ու վերևից սուր ցըցերով պատնեշված էր ամուր կերպով,  
Որոնք շարել էին խիտ-խիտ իրարու կողք աքայեցիք,

60 Որպես պատվար և ամբարտակ պաշտպանության՝ թըշնամու դև:  
Գեղեցկանիվ կառքը քաշող ձին դըժվար էր մըլտնում այնտեղ,  
Հետևակները խորհեցին այդ գործն ա՛յլ կերպ գըլույս բերել:  
Այն ժամանակ Պուլիդամասն ասաց Հեկտոր Պրիամյանին.

«Հեկտոր՝ և դուք տըրոյացոց պետեր բոլոր և իշխաններ,  
Հանդըգնություն կըլինի խիստ փոսը անցնել մեր ձիերով,  
Այն անցնելը դըժվար է շատ, որովհետև նըրա մեջ կան  
Ցըցեր սուր-սուր, իսկ ետևում աքայեցոց պատվարն է պինդ:

- Անհընար է, որ այրուձին վար իջնելով պատերազմի,  
 Քանգի այնտեղ նեղվածք է խիստ և կարող են վերք ըստանալ:
- 70 Իսկ թե պիտի ահեղամոռնչ Արամազդը դավադրելով  
 Ջընջե իսպառ արայեցոց և տրրոյանց հաճի օգնել,  
 Այդ ժամանակ ես կուգեի շուտ կատարվեր կամքը նրա՝  
 Աքալեցիք Արգոսից դուրս ընկնեին աստ անփառունակ:  
 Բայց եթե ետ դառնան նրանք և նավերից մեզ հալածեն,  
 Եվ մենք թափվենք այս փուսը խոր՝ խունապահար ու խունամարոխ,  
 Այն ժամանակ, ես չեմ կարծում, որ գըտնըվի մեկը մեր մեջ,  
 Որ սև լուրը Իլիոն տանի, ուր կրխուժեն արայեցիք:  
 Բայց դուք հիմա ինձ լրսեցեք և համամիտ եղեք ինձ հետ.  
 Կառավարները ձիերին այստեղ փոսի մոտ պահեն թող,  
 80 Իսկ մենք ոտքով ու զինավառ, բոլորըս մեկ մարդու նըման  
 Քաջ Հեկտորի հետ գըրոհենք, ու նրանք չեն կանգնի մեր դեմ,  
 Չեն դիմադրի արայեցիք, եթե նրանց ժամն է հասել»:

- Այսպես ասաց Պուլիդամասն, և Հեկտորը համաձայնվեց,  
 Կառքից գետին ցատկեց իսկույն իր զենքերի հետ միասին:  
 Այդ տեսնելով՝ մյուսներն էլ իջան իրենց նըծույզներից,  
 Եվ ամեն ոք պատվեր տըվեց կառավարին, որ փոսի մոտ  
 Դասավորած պահեն ձիերն, ու հընգական գունդ կազմելով  
 Առաջ անցան ուղիղ շարքով, ամեն մի գունդ իր պետի հետ:  
 Ջորքի մեծ մասը Հեկտորին հետևեց և Պուլիդամին,  
 90 Որոնք և շատ էին և քաջ, և առավել բոցավառված  
 Հընկա պարիսպը քանդելով՝ մարտընչելու նավերի մոտ:  
 Նըրանց հետ էր Կեքքիոնեսը անվեհեր, զի նրանից  
 Նըվազ քաջին թողեց Հեկտորն իր ձիերի և կառքի մոտ:  
 Երկրորդ գընդին Պարիսն էր պետ, Ալկաթոսն ու Ագեմոնը,  
 Իսկ երրորդի՝ Հելենոսը և Դեիփոբն աստվածատիպ—  
 Գրիամոսի գույգ որդիներն, Ասիոսն էլ նրանց հետ էր՝  
 Հիրտակլանը, որ Արիսթից, Սելեիսի վըտակներից  
 Բերում էր շեկ երիվարներ հաղթամարմին ու պըսպըղուն:  
 Չորրորդ գունդը իր ետևից Էնիասն էր բերում շըքեղ,  
 100 Անքիսեսի արի որդին՝ Անտենորի գույգ որդոց հետ—  
 Արքելոքոսն ու Ակամասն՝ ամեն կըովի քաջահըմուտ:  
 Իսկ դաշնակից փաղանգներին Սարպեդոնն էր առաջնորդում,  
 Իր հետն առած Գըլավկոսին և արիայան Աստրոպետոսին:  
 Սըրանք էին ամենեն քաջ համարվածներն Հեկտորի մոտ  
 Իյենից ետ, զի Հեկտորը քաջագույնն էր քաջերի մեջ:  
 Այսպես սըրանք խիտ շարքերով և ասպարներն իրարու կից  
 Գընում էին խիզախաբար ուղիղ դեսի արայեցիք,

Հուսալով թե նրանց կողմից դիմադրության չեն հանդիպի  
Եվ անարգել կրհարձակվեն սև նավերի վրրա նրանց:

- 110 Այդպես բոլոր տրրոյացիք և դաշնակից գրեղերն ամեն  
Հետևեցին հրոչակավոր Պուլիդամի այդ խորհրդին,  
Իսկ Ասիոսը Հիրտակյան՝ իշխանն ազգաց չըկամեցալ  
Թողնել այնտեղ երիվարներն ու կառավար արքանակին,  
Այլ նրա հետ գրնաց կառքով դեպի նավերն արագաթև:  
Խելակորո՛յս, որովհետև պիտ չազատվեր սև օրհասից  
Ու նավերից ետ չըդառնար դեպի Ելիոնը հողմակոծ՝  
Իր ձիերով և իր կառքով, որոնցով շատ էր պարծենում:  
Չարաքաստիկ ճակատագիրն իր օղակում առալ նրան՝  
Պերճապայծառ Դևկալիոնի՝ Իդոմենի սուր նիզակով:
- 120 Դիմում էր նա նավատորմի դեպի ձախ կողմը, որտեղից  
Դառնում էին աքայեցիք կրովից կառքով և ձիերով:  
Դեպի այդ կողմ քըշեց ուղիղ երիվարներն ու կառքը նա:  
Աքայեցիք դուռը ծածկել, նիզը չէին գըցել սակայն,  
Այլ հենց այնպես թողել էին, որ եթե մեկը իրենցից  
Կըռվից դառնար՝ նավերի մոտ ներս առնեին ու փըրկեին:  
Ասիոսն այդ կողմն էր վարում իր նըծուզները եռանդագին,  
Գընում էին գոչուններով յուրայիններն իր ետևից,  
Նըրանք այնպես էին կարծում, թե աքայանք սուանց կըռվի,  
Առանց իրենց դիմադրելու կըթափվեն սև նավերի մեջ:
- 130 Բայց, անմիտնե՛ր, դարբասի մոտ հանդիպեցին երկու քաջի՝  
Քաջամարտիկ լապիթեցոց հաղթահասակ որդիներին,  
Մեկը որդին Պիրիթոսի՝ Պոլիպետեսը կորովի,  
Մյուսը՝ նըման բուն Արեսի՝ Լեոնդեսը արյունառուշտ,  
Որոնք կանգնած էին այնտեղ, պընդակատուց դըռների մոտ,  
Ինչպես կաղնիք բարձրաաղլաց կատարներով՝ լեռան վըրա  
Հողում ամուր խըրած իրենց երկարաձիգ արմատներով  
Դիմանում են հողմերին խղ և անդադրում տեղումներին:—  
Այդպես երկուսն էլ անասան, իրենց ուժի վըրա վըստահ՝  
Կանգնած էին ըսպասելով Հիրտակյանի հարձակվելուն:
- 140 Տըրոյանք Ասիոս թագավորի, Յամենոսի և Որեստի,  
Ադամասի և Ալյանի, Ինոմաչի, Թոոնի հետ  
Դիմում էին գոռգոռոցով դեպի պատնեշը հաստակերտ՝  
Իրենց չորցած քեմոխտները տընկած վերև փոշոտ օդում:  
Իսկ այն երկուսն, որ ներսն էին, խրախույս էին տալիս խիզախ  
Պըղընձագեն աքայեցոց՝ նավատորմը պաշտպանելու:  
Իսկ երբ տեսան դեպի պարիսպը արշավող տըրոյացոց  
Եվ լըսեցին դանայեցոց գոռում-գոչումն արհալիրալից,

- Այն ժամանակ դուրս թողնելով կրովի մըտան դըրան առջև երկու քաշերն այն լայնալանջ՝ վարագների նըման վայրի,
- 150 Որ լեռներում իրենց վըրա վազող մարդկանց և շըրներին հեմ են դընում ու խելահեղ, խտտորնակի հարձակվելով Փետըրտում են մացառ ու թուփ, ու ծառախիտ անտառով մեկ Տարածվում է կափկափյունը նըրանց կարծըր ժանիքների, Մինչև որ մեկն իր աշտեով նըրան գետին փըրոի անշունջ,— Այսպես նըրանց կըրծքի վըրա պղինձն էր շաչում ու շառաչում Նիզակներից ծեծկըվելով. կրովում էին կատաղորեն Խըրախուսված իրենց ուժից ու վերևի խտուն ամբոխից, Որոնք բուրգից քարեր էին տեղում անդուլ և անդադար Ոգորելով իրենց համար, վըրանների և նավերի:
- 160 Եվ, ինչպես բուք տեղատարափ, որը մըրրիկն է աստուկաշունջ, Փոթթրկելով մըռայլամած ամպերի խումբը ձյունաքեր Թափում առառ ու թանձրախիտ՝ արգասավոր դաշտի վըրա,— Տեղում էին աքայեցոց և տըրոյանց նետերն այդպես, Ու շուրջ-բոլոր թընդում էին կերկերաձայն՝ սաղավարտներն Ու վահանները կըմբավոր հաղթ քարերից ծեծկըվելով:

Այնժամ Ասիոսը Հիրտակյան հոգու խորքից հառաչելով, Ծեծեց երկու ազդրերը իր և բարկությամբ այսպես ասաց.  
 «Հայր Արամազդ, դու էլ ուրեմն եղար խարդախ և խաբեքա, Մըտածել իսկ չէի կարող, թե դյուցազուն աքայեցիք

170 հեմ կըրընեն մեր գորության և մեր ուժին անպարտելի: Սակայն, ինչպես բըրեւոները, կամ մեղուները նըրբամեջ, Որ շինում են բույնը իրենց սպառաժուտ ճանապարհին, Ու չեն լըքում խորափոր տունն, այլ կրովում են համառորեն Որսորդներին ընդդիմադիր՝ ձագերն իրենց պաշտպանելով,— Նույն և սըրանք, թեն երկու՝ չեն հեռանում իրենց դըրոնից, Մինչև որ մեր ձեռքով սատկեն և կամ գերի ընկնեն մերոնց»:

Այսպես ասաց, քաչց Արամազդն ուշադրություն չըդարձըրեց, Զի նըրա սիրտն ուզում էր դեռ Հեկտորին տուլ փառք ու պատիվ:

- Իսկ մյուսներն այլ դըրոների առաջ էին կըրով մըղում:
- 180 Դըժվար է ինձ ամեն բանի մասին պատմել աստվածորեն. Պատենչի տակ ամեն կողմից բըրոնկվեց մարտ մի սուկալի, Արգիացիք թեն անհույս, քաչց ըստիպված կրովում էին Նավատորմին ի փորկություն, և աստվածները մըռայլված Տըխրել էին բոլոր, որոնք պաշտպան էին դանաչեցոց:



Բայց վառեցին լապիթեցիք այնտեղ կրոիվ մի ահավոր:  
Պիրիթոսի շքեղ որդին՝ Պոլիպետեսն հաստաբազուկ  
Զարկեց տեգով Դամասոսի պղընձածընոտ սաղավարտին,  
Եվ գըլխանոցը պղընձյա չըղիմադրեց, սըլաքը սուր  
Գանգը փըշրեց և ուղեղը նըրա ամբողջ շինեց շաղախ:  
190 Ապա սպանեց նա Պիլոնին, Որմենոսին՝ նըրանից էտ:  
Իսկ Լեոնդեսն արիսագարմ՝ Հիպպոմաքին զարկեց տեգով—  
Անտիմաքի պարթև որդուն՝ հարվածելով նըրան գոտուց,  
Եվ պատյանից սուրը հանած՝ ամբոխի մեջ խոյացավ նա  
Ու հարվածեց Անտիփատին, որ պորտն ի վեր ընկավ տապաստ:  
Յամենոսին զարկեց ապա, Ռեեստեսին և Մեոնին,  
Որոնց բոլոր իրարու մոտ փըռեց բեղուն գետնի վըրա:

Մինչ կողոպտում էին նըրանք փաչուն գենքերն ընկածների,  
Պուլիդամի և Հեկտորի ետևից հոծ մի բազմություն  
Երիտասարդ ռազմիկների՝ հոխորտաբար խիզախելով  
200 Ջըգտում էին քանդել պատվարն ու տալ կըրակ նախատորմին:  
Բայց դեռ տարտամ խորհում էին կանգնած այնտեղ փոսի առաջ,  
Հորդորելով իրենք իրենց հանդիպակաց ախն անցնելու,  
Երբ մի հըմայք տեսան հանկարծ հիագարհուր և ակնարկիչ:  
Սըրաթըռիչ արծիվ էր մի, որ կանգնեցրեց գորքը ձախ կողմ.  
Մագիլներում ուներ մի օձ արյունառուշտ ու վիթխարի,  
Որ կրովում էր դեռ կենդանի, մաքստում էր թըռչունի դեմ,  
Զարկեց նըրան սուր խայթոցով ուղիղ կըրծքից, վըզին մոտիկ  
Ու շոտ եկավ գալարվելով. աստիկ ցավից արծիվն իսկույն  
Օձն իրենից նետեց հեռու, և նա ընկավ ամբոխի մեջ.  
210 Թըռչունը սուր ճիչ արձակեց ու վեր սուրաց հողմի ջընչով:  
Սարսափեցին տըրոյացիք տեսնելով օձն այդ իրենց մեջ  
Գետնին փրոված,— նըշանն ահեղ ասպարակիր Արամագդի:

Պուլիդամասը Հեկտորին մոտենալով՝ ասաց նըրան.  
«Հեկտո՛ր, դու ինձ ժողովներում գըրեթե միշտ ես կըշտամբում,  
Մերծում ես իմ խորհուրդները՝ անգամ եթե ճիշտը խոսեմ.  
Բայց վայել չէ քաղաքացուն, որ կեղծելով՝ ծուռը խոսի  
Պատերազմում թե ժողովում միշտ քո ուժը ներբողելով:  
Ասում եմ ես նաև հիմա, ինչ որ լավ է իմ կարծիքով:  
Պետք չէ, որ մենք կրոիվ գընանք դանայեցոց նավերի դեմ,  
220 Որովհետև, կարծում եմ ես, որ վերջն այսպե՛ս պիտի լինի,  
Եթե իրոք եկավ հըմայք տըրոյացոց, որոնք ահա՛  
Հորդորում են իրենք իրենց հոխորտաբար այն կողմն անցնել:  
Ինչպես հըզոր արծիվն այն մեծ, որ կանգնեցրեց գորքը ձախ կողմ,

Ծիրանների մեջ կըրելով օձ թունավոր ու վիթխարի,  
 Որին նա վայր ձրգեց դեռևս անձկալի բույնն իր չըհասած  
 Եվ սողունին չըկարեցավ տանել նա կեր իր ձագերին,  
 Այդպես էլ մենք անել ուժով անգամ եթե կարողանանք  
 Քանդել պատմեշն ու խորտակել դարբասները դանայեցոց,  
 Եվ տեղի տան արայեցիք, բայց նույն ճամփով մենք ջախջախված  
 230 Ետ գանք պիտի՝ շատ տըրովներ թողնելով մեր ճանապարհին,  
 Որոնց անգութ պըղիճներով պիտի սպանեն արայեցիք,  
 Յուրաքանչյուրը նըրանցից կըովելով իր նավի համար:  
 Այսպե՛ս պիտի մեկներ հըմայքն այդ՝ մի գուշակ քաջահըմուտ  
 Եվ ժողովուրդն անտարակույս նըրան հավատ պիտ ընծայեր»:

Սուրսայր տեգերն իր աչքերի գեներկերոջ վըրս հառած՝  
 Կորդակաճոճ Հեկտորն այնժամ այսպես ասաց խըրոխտաբար.

«Պուլիդամա՛ս, խոսքերդ ինձ հաճելի չեն ամենևին,  
 Կարող էիր ավելի լավ և օգտակար մի բան ասել:  
 Բայց եթե դու սըրտի մըտոք և իսկապես լուրջ ես խոսում,  
 240 Ապա ուրեմն ասովածները առել եմ քո խելքը գըլխեդ,  
 Որ հըրաման ես տալիս ինձ մոռանալ մեծ Արամազդի  
 Խորհուրդները, որ ակնարկեց և խոստացավ ինձ՝ կատարել:  
 Իսկ ինքըդ ինձ պատվիրում ես հընազանդվել թըռչուններին,  
 Որոնց բանի տեղ չեմ դընում, ու փույթս էլ չեմ բըղրովիմ,  
 Կուզեմ՝ թող աջ, դեպ Առավոտ, դեպի արև երթան նըրանք,  
 Կուզեմ՝ դեպի ձախը թևեն, կուզեմ՝ դեպի արևամուտ.  
 Մենք պետք է սոսկ Արամազդի խորհուրդներին հընազանդվենք,  
 Որ տերն է ողջ մահկանացոց և համորեն անմահների:  
 Կըովել՝ հանուն հայրենիքի,— ա՛յս է միակ հըմայքը մեծ.  
 250 Եվ ինչո՞ւ ես վախենում դու պատերազմից, Պուլիդամա՛ս,  
 Եթե բոլոր տըրոյացիքս արայեցոց նավերի մոտ  
 Ընկնենք մարտում, միևնույն է, դու մեռնելուց մի՛ վախենա,  
 Զի թըշնամուն հանդիպելու և կըովելու հոգի չունես.  
 Իսկ եթե դու դուրս գաս կըովից, և կամ եթե դատալըքես  
 Հրապուրելով մեկնումեկին՝ թողնել կըովն ու ետ դառնալ,  
 Այնժամ իսկույն իմ իսկ ձեռքով պիտի ընկնես նիզակահար»:  
 Այսպես ասաց, ատաշ անցավ, տանելով նա իր ետևից  
 Քաջերի գունդն ըստվարաթիվ ահագնագոջ աղաղակով:  
 Եվ Արամազդն ամպրոպադեզ Իդայի վես բարձունքն ի վար  
 260 Խոլ հողմերի ահեղաշունչ մի փոթորիկ հանեց հանկարծ,  
 Որ քըշում էր փոշին դեպի նավատորմիդ և քաչեցոց,  
 Ծըմեցնելով նըրանց և փառք ընձեռելով քաջ Հեկտորին:  
 Տըրոյացիք Արամազդի այդ նըշանից խըրախուսված

Եվ քաջությանն իրենց վըստան՝ ձրգտում էին քանդել պատվարն  
Ու պոկելով բուրգի քարերն նետում էին արգիացոց,  
Լըծակներով խախտում էին հրակա վեմերն, որոնք հողում  
Դըրել էին աքայեցիք բուրգերին՝ հիմք ու հենարան:  
Խարխըլելով հրակայական հիմնաքարերն այդ բուրգերի,  
Հույս ունեին քանդել նըրանք ամուր պատվարն աքայեցոց,  
270 Բայց քաջամարտ աքայեցիք չէին թողնում դիրքերն իրենց,  
Այլ մարտկոցներն արջառեցի ասպարներով ամուր պատած՝  
Կըրվում էին հերոսաբար պարըսպամարտ ոտխի դեմ:

Ջույգ Այաքսներն արիասիրտ աշտարակից դեպ աշտարակ  
Վազվըզելով հորդոր էին կարդում բոլոր աքայեցոց,  
Տալով գովեստ քաջաարքրտին և մյուսին կըշտամբելով,  
Ով վատաբար ու վեհերոտ՝ թուլացել էր գուպարի մեջ.

«Սիրելիներս, արգիացոց դուք ամենեն քաջագույններ,  
Ինչպես և դուք, որ միջակ էք և կամ նըվազ ձեր քաջությամբ,—  
280 Ամեն մեկըդ ձեզ ցույց տալու ժամը հասավ ահավասիկ.  
Այդ դո՛ւք էլ էք տեսնում արդեն, թող ոչ ոքի մըտքով չանցնի  
Փախել կըովից՝ ըսպառնական այս աղմուկից ահաբեկված.  
Այլ միշտ առա՛ջ, առա՛ջ նետվեք հորդորելով մեկ-մյուսին.  
Ձի Արամազըը շանթածիգ, հույս ունեմ որ տա պիտի մեզ  
Վանել այս մարտը մեզանից և թըշնամուն քըշել քաղաք»:

Խըրախույսն այս հորդորական բորբոքեց մարտն աքայեցոց:  
Ինչպես ձըմնան մըռալլ օրով ձյուն է տեղում թանձրատարափ,  
Երբ Արամազըն ըզգոնամիտ փըշում է բուքն իր նյունաբեր,  
Ցույց տալով իր սըլաքների տարափն իբրև նըշան մարդկանց.  
290 Քընացնելով քամիներին թափում է նա ձյուն անընդհատ,  
Մինչև ձյունի թանձըր շերտով ծածկում է ողջ լեռ ու բըլուր,  
Անդաստանները ծաղկաբեր, մարդկանց գործերն արգասավոր.  
Սըփում սավանն իր ըսպիտակ՝ նավակայքում ու ծովափին,  
Բայց չեն թողնում ալյակները, որ ձյուն նըստի իրենց վըրս,  
Մինչ ծածկում է ամենուրեք տեղատարափն Արամազդի,—  
Այդպես քարերը շարունակ թըռչում էին երկու կողմից՝  
Հարվածելով մեկ տըրոյանց, մեկ՝ քաջագեմ աքայեցոց:  
Ու պատենշի վըրս փըրթավ թիմդ ու թընդյուն անասելի:

Բայց ո՛չ բոլոր տըրոյացիք, ոչ էլ Հեկտորն ահեղաշուք  
300 Չէին կարող խորտակել նիզն ու պարըսպի դուռը կտորել,  
Եթե ըզգոն Արամազըը չըզըրգըրեր Սարպեդոնին

Աքայանց դեմ, ինչպես առյուծը՝ կորեղջյուր եզների դեմ:  
Վահանն իր մեծ, պողընձափայլ, կրոնակոտ, թիթեղապատ,  
Որը ներսից ուներ իր մեջ արջառների հաստ մորթիներ,  
Եվ շուրջ բոլոր հավերժական գավազաններ ոսկեքանդակ,—  
Վահանն իր այդ առջև բըռնած և ճոճելով զույգ նիզակներ՝  
Սարպեղոնը դիմեց առաջ, իբրև առյուծ մի լեռնասուն  
Վաղուց ի վեր մըսի կարոտ, մրդված հանդուգն իր բընույթից,  
Որ փորձում է ոչխարների փարախից ներս մըտնել բըռնի,

310 Որ թեպետև տեսնում է նա նիզակավոր հովիվների,  
Որոնք հուժկու գամփռերի հետ հըսկում են հոտն ու պահպանում.  
Բայց չի ուզում թողնել փարախն ու հեռանալ, այլ ուստնելով  
Ճանկում է որսն ու սըլանում, կամ թե վերք է առնում հանկարծ  
Հետապընդող կըտրիճներից մեկի ձեռքով մըկընդահար,—  
Այսպես ոգին աստվածային Սարպեղոնի՝ մրդեց նըրան  
Հարձակվելու դեպի պարիսպն մարտկոցները խորտակելու.  
Եվ դառնալով Գըլավկոսին՝ Հիպպոլոթի որդուն՝ ասաց.

«Գըլավկո՛ս, ինչո՞ւ ամենից շատ մենք ենք Լիկիո մեջ մեծարվում  
Թե՛ր աթոռով, թե՛ խորտիկով, և թե՛ լեցուն բաժակներով,

320 Ու մեզ վըրա նայում են ողջ, ինչպես անմահ աստվածների:  
Քըսանթոսի ասիին ջոկ-ջոկ հողեր ունենք մեծատարած,  
Այգեստաններ արգասավոր և արտորայք ցորենաբեր:—  
Նըրա՛ համար, որ մենք հիմա առաջ նետվենք արիաբար,  
Եվ որպեսզի ըսպառազեն մի լիկեցի այսպես ասի.  
«Չոր չէ, որ մեր թագավորներն իշխում են մեծ փառք ու շուքով  
Եվ ուսում են գեր ոչխարներ, խըմում գինի անմահական,  
Երբ ունեն ուժ անպարտելի, քանզի ահա՛ հերոսաբար  
Մարտընչում են առաջամարտ լիկեցոց մեջ թըշնամու դեմ»:

Սիրելիդ իմ, էթե կովից լինեի՞նք մենք ազատ ու գերծ,  
330 Բողորովին անձերական և միշտ անմահ լինեի՞նք մենք,  
Այնժամ ինքըս չէի կըռվի նախամարտիկ քաջերի դեմ,  
Քեզ էլ հորդոր չէի կարդա փառապարզ և գուպարների,  
Բայց քանի որ մահն անխուսափ ըսպասում է մեզ ամեն ժամ,  
Որից ոչ մի մահկանացու անկարող է փախչել բընավ,  
Ուստի գըրանք, կամ մե՛նք նըրանց փառք կընձեռենք և կամ կառնենք»:

Այսպես ասաց, և Գըլավկոսը շառարկեց, չընդդիմացավ:  
Եվ երկուսով առաջ անցան լիկիացոց գըլուխն անցած:  
Մենեպթեսը՝ Պեղեոսի որդին սոսկաց այդ տեսնելով,  
Դեպի իր բուրգն էին դիմում՝ բերելով մահ ու ավերած.

340 Ծորջը նայեց, որոնելով իշխաններից մեկնումեկին,  
Որ հեռացնի ահեղ օրհասն իր գինակից ընկերներից:

Տեսավ երկու Այաքսներին պատերազմի մեջ անհագուրդ,  
Որ մոտ էին, և Տևկրոսին՝ նոր դուրս ելած իր վըրանից,  
Բայց անհրճար էր լըսելի դարձրնել իր կանչը նրանց,  
Այնքան մեծ էր աղմուկն այնտեղ. մինչև երկինքն էր բարձրանում  
Վահանների և ձիագես կորդակների կոփյունն անհեղ,  
Եվ դըռների, որ փակ էին, բայց տըրոյանք խըրոխտալով  
Մըգնում էին միահամուռ ուժով կոտրել ու ներս խուժել:  
Եվ Թոողես մունետիկին Այաքսի մոտ ուղարկեց նա.

350 «Վագի՛ր, դյուցազն իմ Թոողես, և Այաքսին կանչիր այստեղ,  
Լավ է՝ կանչես երկուսին էլ, այդ ավելի լավ կըլինի,  
Թող ըշտապեն, ապա թե ոչ մեզնից ոչ ոք չի ազատվի,  
Զի լիկեցոց պետերն ահա՛ մեզ վըրա են գալիս ողիղ,  
Որոնք վաղուց են անվանի որպես ահեղ պատերազմող:  
Իսկ թե այնտեղ էլ գործ ունեն և գուպարով են շըռնըված,  
Այն ժամանակ թող որ միայն Տելամոնյան Այաքսը գա,  
Եվ նրա հետ մեծահըմուտ աղեղնավոր Տևկրոսը քաջ»:

Այսպես ասաց, և Թոողեսն անասց նրա հըրամանին,  
Վագեց գընաց պատենագեն աքայեցոց պարիսպներով  
360 Եվ հասնելով Այաքսներին՝ հուժկու ձայնով բացականչեց.

«Ո՛վ Այաքսներ, պըղընձագեն աքայեցոց գորավարներ՛ր,  
Դյուցասընունդ Պետետսի սիրուն որդին խընդրում է ձեզ,  
Գընալ իր մոտ և սատարել կըովին փոքր-ինչ մասնակցելով.  
Եվ ավելի լավ է, եթե երկուսովդ մեկտեղ գընաք,  
Ապա թե ոչ՝ դաժան մահով կորչելու են բոլորն այնտեղ,  
Զի լիկեցոց պետերն այնտեղ են գըրոհում խուռն ամբոխով,  
Որոնք վաղուց են անվանի որպես դաժան պատերազմող:  
Իսկ թե այստեղ էլ գործ ունեք, պատերազմով եք ըզբաղված,  
Այն ժամանակ թող գա գոնե Տելամոնյան Այաքսը մեծ,

370 Եվ նրա հետ քաջահըմուտ աղեղնավոր Տևկրոսը գա»:

Այսպես ասաց, և դեմ չեղավ Տելամոնյան Այաքսը մեծ,  
Որ դառնալով Ոյիլյանին՝ այս սըրաթև խոսքերն ասաց.

«Այաքս և դո՛ւ, Լիկոմեդես, դուք երկուսովդ կացեք այստեղ  
Եվ սիրտ տըվեք դանայեցոց, որ քաջաբար պատերազմեն,  
Իսկ ես ինքըս կերթամ այնտեղ պատերազմին մասնակցելու  
Եվ, օգնելով նրանց մարտում, ետ կըդառնամ ձեզ մոտ նորից»:

Այսպես ասաց Տելամոնյան Այաքսը մեծ և հեռացավ,  
Գընաց նաև Տևկրոսը քաջ՝ նրա եղբայրը հարազատ,  
Պանդիոնի հետ, որ Տևկրոսի կոր աղեղն էր առած տանում:

380 Եվ երբ մեծանձըն Մեներթի աշտարակը հասան նըրանք  
Ու պատնեշից ներս մըտնելով ընկերների մոտ կանգնեցին,  
Լիկիացոց պետերն արդեն և իշխաններն այն ժամանակ  
Ելնում էին մըրըրկի պես մարտկոցների բուրգերն ի վեր:  
Եվ ըսկըսվեց նըրանց միջև ահագնագոռ մի գոռեմարտ:

Տելամոնյան Այաքսն այնտեղ գետին փըռեց նախ և առաջ  
Մեծահոգի Էպիկլեսին՝ ընկերակցին Սարպեդոնի  
Պարըսպի տակ, մարտկոցի մոտ ընկած քարով մի ահագին,  
Որ քաջառույգ մի պարմանի մեր օրերում ապրողներից  
Անկարող է երկու ձեռքով մինչև անգամ գետնից կըտրել:

390 Ես հեշտությամբ բարձրացրեց այն ու շըպըրտեց նըրա վըրա  
Եվ ջախջախեց քառակողմյան գըլխանոցը ու կառափի  
Ոսկորները փըշոեց բոլոր. ջըրում սուզվող լողորդի պես  
Աշտարակից վար ընկավ նա ու տեղնուտեղ շունչը փըշեց:  
Իսկ Տևկրոսը ամբարտակից նետահարեց Գլավկոսին՝  
Հիպպոլոթի արի որդուն, երբ իր վըրա էր հարձակվում.  
Զարկեց բազկի մերկ մասից նա ու դուրս հանեց նըրան կըովից:  
Գլավկոսը վազեց իսկույն ու պատնեշի ետև մըտավ,  
Պահվեց այնտեղ, որ չըլինի աքաչեցի ոմըն մարտիկ  
Տեսնի նըրան վիրավորված ու ծաղրելով՝ չարախընդա:  
400 Սարպեդոնը Գլավկոսի մեկուսացումն իմանալով՝  
Սըրտի խորքից շատ վըշտացավ, բայց կըովելուց ձեռք չըքաշեց,  
Այլ Թեստորյան Ալկմավոնին գարկեց տեգովն իր մահաբեր,  
Քաշեց աշտեն, ու տեգի հետ վայր ընկավ նա պորտի վըրա,  
Եվ նըկարեն, պըղընձաշեն գեներեն իր շուրջ շառաչեցին  
Սարպեդոնն իր հուժկու ձեռքով մարտկոցներից մեկին կըսած՝  
Քարշ էր տալիս, և պոկելով՝ ձեռքերի հետ տարավ նըրան,  
Մերկացնելով պարիսպն վերից՝ ճամփա բացեց գորքի համար:

Այդտեղ Այաքսն ու Տևկրոսը հարձակվեցին նըրա վըրա,  
Եվ Տևկրոսը գարկեց նետով Սարպեդոնի կուրծքը ծածկող  
410 Արծաթափայլ մեծ ասպարի փոկին, սակայն Ջևար ըզգոն  
Վանեց օրհասն իր գավակից, որ չըսպանվի նավերի մոտ:  
Այաքսն իսկույն վըրա տալով՝ գարկեց նըրա մեծ վահանին.  
Տեգը ուժգին թափով անցավ և մոլեկանը մարտկոցից  
Ետ ընկըրկեց, սակայն կըովից չընահանջեց բոլորովին,  
Հույս ուներ նա հաղթանակել և վաստակել փառք ու պատիվ,  
Եվ Սարպեդոնը դառնալով լիկիացոց՝ այսպես գոչեց.  
«Լիկիացիներ, ինչո՞ւ եք դուք թուլացնում ձեր ուժն անվըկանդ,  
Որքան էլ որ քաջ լինեմ ես, անկարող եմ ինքըս մեճակ

Ծեղքել պատվարն ու ճանապարհ բանալ դեպի նավատորմիդ:  
420 Օ՛ն, ուրեմըն, բոլորըդ մեկ գրոհ տվե՛ք իմ ետևից,  
Զի շատերի ուժի առաջ կըխորտակվի ամեն արգելք»:

Այսպես ասաց, և լիկեցիք ճրրա սաստից ակնածելով՝  
Խըռնըվեցին միահամուռ շուրջը իրենց թագավորի:  
Իսկ մյուս կողմից արգիացիք հաստ պարըսպի ետև՝ իրենց  
Գընդերն էին ամրապընդում. և ճրրանք շատ չարչարվեցին,  
Ոչ լիկեցիք էին կարող խըրամատել պատվարը պինդ,  
Եվ ոչ էլ գոռ դանակեցիք կարող էին վանել ճրրանց,  
Որոնք հորդել էին այնտեղ ու պարըսպից չէին պոկվում:  
Ինչպես երկու հոգի դաշտում մի սահմանի վըրա վիճեն  
430 Չափը իրենց ձեռքը բըռնած, որ բաժանեն հողն հավասար  
Ու կըռվում են իրարու հետ տարածության վըրա մի նեղ,—  
Այդպես ահա՛ բուրգերն էին սըրանց միայն անջըրպետում,  
Եվ երկուստեք միմյանց կըրծքին թընդում էին բոլորաձև  
Վահանիկներն ու հաստաբետ լայն վահաններն արջառենու:  
Անագորույն պըղիճճներով շատերն էին վիրավորվում,  
Ոմանք իրենց մերկ թիկունքից, երբ ի փախուստ էին դիմում,  
Ծատերն էլ հենց արջառենի վահանների միջից իրենց:  
Երկու կողմից՝ աքայեցոց և տըրոյանց մարտիկների  
Կարմիր արյամբ ներկվում էին պարիսպ ու բուրգ և աշտարակ,  
440 Սակայն դարձյալ չէին կարող երկյուղ ազդել աքայեցոց:  
Ինչպես մի կին, որ ապրում է ձեռքի արդար աշխատանքով,  
Կըշեռքն ու բուրդը ձեռքն առած կըշոռում է ճիշտ ճըժար-ճըժար,  
Որ վաստակն իր չարչարանքի տանի նա իր զավակներին,—  
Այդպես սըրանք պատերազմում համակըշոռում էին միմյանց,  
Քանի դեռ մեծ Արամազդը չէր պարզել փառք Հեկտորին,  
Որն առաջինը նետվելով դեպի պարիսպն աքայեցոց՝  
Ահագնագոչ ձայնով գոռաց տըրոյացի մարտիկներին.  
«Օն, քաջաձի՛ տըրոյացիներ, կործանեցե՛ք արգիացոց  
Պարիսպը և աստկատոչոր կըրակ տըվե՛ք նավատորմին»:

450 Այսպես ասաց, և այդ խըրոխտ մարտակոչին ի պատասխան՝  
Տըրոյացիք միահամուռ հըրոսեցին պատվարն ի վեր  
Մարտկոցների վըրա ելան իրենց սուրսայր նիզակներով:  
Հեկտորն առել ու բերում էր հըսկայական մի որձաքար,  
Որ ընկած էր դըռան առջև ծանրը ճըստած ու ծայրը սուր,  
Որը այսօր երկրի վըրա ապրող երկու հաղթ տըղամարդ,  
Ինչքան էլ մեծ ուժ ունենան, անկարող են կըտրել գետնից  
Ու դընել այն սալի վըրա,— իսկ նա մենակ ճոճում էր այն.

Զըրվանյանը կորովամիտ թեթևացրեց քարն այդ հըսկա:  
 Հովիվն ինչպես, որ տանում է այրու գառան բուրդը խուզած  
 460 Իր մեկ ձեռքով շատ հեշտությամբ, առանց բեռից իր նեղվելու,  
 Հեկտորն այդպես առել բերում էր որձաքարն այդ ահագին  
 Տախտակներին ուղղելով այն, որոնք պատում էին ամուր  
 Բարձրակառույց և ամրապինդ երկփեղկ դրոները հաստաքեստ,  
 Որ մեջեմեջ գույգ սողնակներ փակում էին դուռը ներսից:  
 Մոտենալով՝ կանգ առավ նա և սըրունքները իրարից  
 Հեռացնելով, ու գամելով ոտքերն ամուր գետնի վըրա,  
 Որ հարվածին տա ավելի մեծ ու թափ՝ տարավ-բերավ,  
 Զարկեց դրոան մեջտեղը ճիշտ ու ջախջախեց երկու ծըխնին,  
 Եվ քարն ամբողջ իր ծանրությամբ գընաց ընկավ պարըսպից ներս:  
 470 Ծըռընչացին փեղկերն ուժգին, չըդիմացան փակ ու սողնակ,  
 Տախտակները ջարդ ու փըշուր թըռան իսկույն այստեղ-այնտեղ:  
 Ոստնեց Հեկտորն հըրաշայի, ինչպես մըռայլ ու մոյթ գիշեր,  
 Եվ պըղինձով, որ հագել էր իր մարմնի շուրջ ահեղորեն  
 Փայլատակում էր շանթի պես՝ ձեռքին բըռնած երկու նիզակ:  
 Ոչ ոք, բացի աստվածներից, նրբան անգոր էր արգելել,  
 Երբ դրոներից ներս խուժեց նա՝ աչքերն ամբողջ կըրակ ու բոց:  
 Եվ դառնալով տըրոյացոց խոռոհամբոխին՝ հորդոր կարդաց  
 Պարըսպից ներս խուժել իսկույն, և անսալով նրբա խոսքին  
 Մի մասն աղմուկ-աղաղակով պարիսպն անցած խուժեցին ներս  
 480 Եվ ոմանք էլ ներս թափվեցին ջարդուփըշուր դարբասներից:  
 Դանալեցիք սարսափահար փախան դեպի նավերն իրենց.  
 Եվ ամենուր խառնախուճապ փրոթավ աղմուկ և աղաղակ:



# Ե ր գ Տ ա ս ն ե ր ե ք ե ր ո ր դ

## ՄԱՐՏ ՆԱՎԵՐԻ ՄՈՏ

Տըրոյացոց և Հեկտորին Ջևառ դեպի նավատորմի  
Մտեցնելով, թողեց այնտեղ նըրանց անդուլ մաքսաման մեջ  
Եվ ինքն աչքերն իր լուսալիր շուռ տըվեց ծանո պատերազմից  
Ու նայում էր դեպի երկիրը ձիավարժ թըրակացոց,  
Եվ միացոց մըրցամարտիկ և անվանի ձիակըրթաց,  
Որոնք ապրում են սոսկ կայծով և արդարներն են մարդկանց մեջ:  
Փայլակնացալտ աչքերն այլևս դեպի Տրոյա չէր դարձընում,  
Որովհետև չէր կարծում նա, որ մեկն անմահ աստվածներից  
Սատարկու պիտի գընա տըրոյացոց կամ աքսյանց:

- 10 Սակայն կույր չէր Պոսեյդոնը՝ երկրասասան արքան ահեղ.  
Թըրակիայի անտառախիտ Սամոս լեռան վըրա նըստած,  
Ամենաբարձըր կատարին, դիտում էր նա հիացմունքով  
Գուպարն ահեղ. Իդան ամբողջ պարզ երևում էր պղտեղից,  
Երևում էր և՛ Տըրոյան, և՛ նավատորմն աքսյեցոց:  
Ծովից ելած նըստել այնտեղ ու ցավում էր աքսյանց համար  
Տըրովներից նըկուն եղած և զայրանում Ջևսի վըրա:  
Նա վեր կացավ հանկարծակի ու վայր իջավ ապառաժուտ  
Բարձըր լեռնից ըշտապ-ըշտապ. և բարձրաբերձ անտառ ու լեռ  
Դողում էին անմահական ոտքերի տակ Պոսեյդոնի:
- 20 Երեք հըսկա քայլ արավ նա ու չորրորդին տեղը հասավ—  
Էզաս, որտեղ բարձրանում էր իր ապարանքն ըսքանչագեղ,  
Ծովի խորքում, ոսկեկառույց, լուսաքանդակ, հավերժ անեղծ:  
Պոսեյդոնը այնտեղ իսկույն կառքին լըծեց պղնձասմբակ  
Երիվարներն իր ոսկեբաշ, սըրայթըռիչ և օդապար.  
Հագավ զենքերը ոսկեզարդ և առնելով գեղեցկահյուս  
Մըտրակն ոսկի՝ կառքը ցատկեց ու մեղքեց ծովն ալեծածան:

Կետերն իրենց որջից ելած, հավաքվելով ամեն կողմից  
Կայտում էին իրենց հրգոր թագավորի կառքի չորս դին.  
Բացվում էր ծովն ուրախությամբ, արշավում էր կառքը նըրա,  
30 Ու չէր թըրջվում բոլորովին տակից առեղն պղնձամույլ:  
Գընում էր նա աշրպես ըշտապ դեպի նավերն աքայեցոց:

Կա մի քարայր լայնածավալ այնտեղ, ծովի խոր հատակում,  
Առապարտու Տենեդոսի և Իմբրոսի միջև ընկած,  
Ու կանգնեցրեց ձիերն՝ ահեղ Պոսեյդոնը երկրադըրորդ:  
Արձակելով նրժույգներին՝ աստվածյան կեր տըվեց նըրանց  
Եվ ոտքերին նըրանց ոսկի ոտնակապեր անցկացրեց նա  
Անլուծելի, որ ըսպասեն այնտեղ իրենց թագավորին.  
Իսկ Պոսեյդոնն ինքը դիմեց դեպի բանակն աքայեցոց:

Տըրոյացիք միահամուռ, նըման բոցի ու փոթորկի,  
40 Մըռընչալով ու գոռալով գընում էին Հեկտորի հետ՝  
Նավատորմիղն աքայեցոց գըրավելու հույսով հաստաա  
Եվ ջարդելու, կոտորելու աքայեցոց գորքը բոլոր:  
Բայց Պոսեյդոնն աշխարհակալ, երկրատառանն ելած ծովից  
Հորդորում էր արգիացոց՝ Կալքասի ձայնն ու դենքն առած  
Եվ նախ այսպես ասաց երկու Այաքսներին ինքնահորդոր.  
«Ո՛ր Այաքսներ, դո՛ւք միմիայն պիտի փըրկեք աքայեցոց,  
Մի՛ մոռանաք, որ քաջ եք դուք և խունապի մի՛ մատնըվեք,  
Ես ուրիշ տեղ երկյոռ չունեմ տըրովներից անպարտելի,  
Որ խոռոմամբոխ անցան հիմա բարձրակառույց ձեր պարըսպից,  
50 Ձի ամքաբարձ աքայեցիք բոլորին էլ դեմ կըդընեն:  
Այստեղի՛ց եմ վախենում ես, որ մի փորձանք գա մեր գըլխին,  
Որտեղ Հեկտորն է մոլեգնոտ, բոցատեսիլ գորավարում,  
Նա՛, որ որդին է հոխորտում լինել հրգոր Արամազդի:  
Բայց երանի՜ աստվածներից մեկը կորով ներշընչեր ձեզ,  
Որ օրինակ լինեիք դուք ուրիշներին ձեր քաջությամբ,  
Այն ժամանակ ձեր նավերից նըրան հեռո՛ւ կըվըրընդեք,  
Նույնիսկ եթե նըրան դըրդի ինքն Արամազդը ոյիմույլան»:

Այսպես ասաց երկրատառան աշխարհակալն ու մականով  
Հարվածելով Այաքսներին, լըցրեց նըրանց մեծ գորությամբ,  
60 Աշխուժացրեց, թեթևություն տըվեց նըրանց անդամներին:  
Բազեի պես արագաթև, որ վեր ցըցված բարձրը ժայռից  
Դեպ դաշտավայր է խոյանում ուրիշ թըռչուն հալածելու՝  
Պոսեյդոնը Այաքսներից սավառնաթև ստրաց հեռու:  
Նախ ույիլան Այաքսն էր, որ ճանաչեց մեծ Պոսեյդոնին

Եվ դառնալով Տեղամոնյան մեծ Այաքսին՝ ասաց նրան.

«Նա, որ հինա մեզ հորդորեց նավերի մոտ մարտընչելու  
Հարցուկի դեմք առած՝ հըմա-ըղձապատում Կայքաւը չէր,  
Այլ մի աստված ոլիմպական, որին իսկույն ճանաչեցի  
Թեթևընթաց իր ոտքերից, երբ հեռացավ նա մեր մոտից:  
70 Աստվածներին, ուր էլ լինի, կարելի է հեշտ ճանաչել:  
Ես իմ կրթծքում ըզգում եմ նոր ուժ ու կորով գուպարելու.  
Վարից ոտքերս ու ձեռքերըս վերից՝ կարծես թինդ եմ առնում»:

Տեղամոնյան Այաքսն արագ նրան այսպես պատասխանեց.  
«Ի՛նչ էլ ահա բազուկները խայտում են իմ նիզակի շուրջ.  
Ուժըս հորդել, և ոտքերըս կարծես առել տանում են ինձ,  
Ու վառվում են ինքըս մեռակ մեռամարտի մղտնել խիզախ  
Պրիամոսի շրթեղ որդու՝ ամենաշունչ Հեկտորի հետ»:

Այսպես, երկու Այաքսները խոսում էին իրարու հետ  
Լի ավյունով պատերազմի, որ ներշնչեց նրանց՝ աստված:  
80 Պոսեյդոնը խըրախուսեց ետ մընացող աքայեցոց,  
Որոնք հանգիստ էին առնում կանգնած իրենց նավերի շուրջ:  
Նըրանք հոգնել էին աստիկ պատերազմի տաժանքներից,  
Եվ տեսնելով տըրոյացոց, որ խոռոնամբոխ խուժում էին  
Պարըսպից ներս՝ լըցվում էին նրանց աչքերն արտասուքով,  
Քանզի այնպես էին կարծում, թե էլ մահից չեն ազատվի:  
Բայց հեշտությամբ ոգևորեց Պոսեյդոնն այդ գընդերը գոռ,  
Խըրախուսեց նախ և առաջ Լեիդոսին ու Տևկրոսին,  
Դեիպիրին և Թոասին, Պենելիոսին դուցազնական,  
Անտիլոքին ու Մերիոնին՝ պատերազմի քաջահըմուտ,  
90 Որոնց արքան խըրախուսիչ այս թեավոր խոսքերն ասաց.  
«Ամոթ է ձեզ, ո՛վ քաջառու՛գ երիտասարդ աքայեցիք,  
Դո՛ւք եք հույսըս՝ ձեր քաջությամբ նավերը մեր ազատելու,  
Իսկ եթե դուք հեռու քաշվեք ու ձեռընթափ լինեք մարտից՝  
Տըրոյացոց ձեռքով այնժամ մոտ է օրը մեր պարտության:  
Ո՛վ աստվածներ, մի ահավոր ու մեծ հըրաշք եմ տեսնում ես,  
Որը բընավ չէի կարծում թե պիտի գար ու կատարվեր:  
Մեր նավերին են մոտեցել, հասել ահա՛ տըրոյացիք,  
Որոնք առաջ նըման էին փախըստական եղնիկների,  
Որ վեհերոտ՝ չախկալներին և ինձերին ու գայլերին  
100 Կեր են դառնում թավ անտառում այստեղ-այնտեղ թափառելով:  
Այդպես էին՝ տըրոյացիք, որ սիրտ չէին անում նույնիսկ  
Դիմադրելու աքայեցոց բազուկներին և զորության:  
Իսկ այժմ հեռու Իլիոնից՝ կըռվում են մեր նավերի մոտ,

- Քաջալերված Ասորիդեսի և զորքերի թուլությունից,  
 Որոնք նրա հետ գըժտղված՝ էլ չեն ուզում պաշտպան կանգնել  
 Արագընթաց Աավատորմին ու ջարդվում են նավերի մոտ:  
 Ու թեպետև ճըշմարտապես հանցավոր է Ասորիդ արքան,  
 Որ արագտուն Աքիլլեսին արհամարհեց անարգաբար,  
 Բայց այդ պատճառ թող չըլինի, որ մենք կըովից հեռու քաշվենք:
- 110 Այլ պետք է որ ջանանք ընդփույթ դարման տանել մեր վընասին,  
 Քանզի հեշտ է ազնիվ մարդկանց վիրավորված սիրտը բուժել:  
 Ուստի պետք չէ, որ թուլանաք և մոռանաք կորովը ձեր,  
 Դուք, որ ջիղն եք մեր բանակի ու քաջերն եք քաջերի մեջ:  
 Ձեմ զարմանում, որ վախկոտն է փախչում կըովից, բայց ձեր հանդեպ  
 Ես ի սըրտե զայրացած եմ, վատահոգի՝ կընամարդիկ,  
 Ձեր թուլությամբ վըտանգը դուք է՛լ ավելի եք մեծացնում:  
 Թո՛ղ ձեզանից յուրաքանչյուրն ամոթ ըզգա իր սըրտի մեջ  
 Եվ ինքն իրեն հանդիմանի, զի մեծ կըռիվ պայտեց ահա:  
 Անեղագոռ Հեկտորն արդեն նավերի շուրջն է մարտընչում՝
- 120 Փըշրած դըռներն ու խորտակած սողնակները երկայնաձիգ»:

- Երկրասասան աստվածն այսպես ոտքի հանեց աքայեցոց:  
 Այաքսների շուրջը նորից խըռնըվեցին զընդերը գոռ,  
 Որոնց ո՛չ ինքն Արեսը բուռն, ո՛չ Աթենասն ամբոխավար—  
 Եթե այնտեղ գըտընըվեին— նըրանց չէին արհամարհի,  
 Ջի այրընտիր, նահատակներ էին կանգնած կազմ ու պատրաստ՝  
 Տըրոյացոց և դյուցազնյա Հեկտորի դեմ նակատելու:  
 Ծըփվում էին՝ տեզը տեզի և սաղավարտ սաղավարտի,  
 Վահանները՝ վահանների, մեկ սապարին մյուսը հենած,  
 Եվ մարդ մարդու՝ ձիագիսակ ցըցունքներով խորանափայլ
- 130 Կորդակները կորդակների՝ այնքան որ խիտ էին կանգնած:  
 Նիզակները հոխորտագին իրենց ձեռքի մեջ առնելով  
 Նըրանք զինված ու բոցավառ զընում էին գուպարելու:  
 Նախ տըրոյանք հարձակվեցին. կորդակաճոճ Հեկտորն էր քաջ  
 Նըրանց առաջն ընկած զընում, ինչպես ժայռից պոկված մի վեմ,  
 Որին հեղեղն ահեղասաստ գըլորում է բարձունքներից,  
 Խորտակելով ապառաժի կապերը՝ հորդ իր հորձանքով:  
 Ու գահավեժ բարձրությունից գըլորվելով գալիս է նա,  
 Դըղըրդում է անտսուն իր տակ, բայց գըլորվում է անարգել  
 Մինչև հասնում է դաշտավայրն ու կանգ առնում իր ընթացքից:—
- 140 Այդպես Հեկտորն էր ըսպստնում կոտորելով հասնել մինչև  
 Ծովն ըսպիտակ, նավատորմիդն ու վըրաններն աքայեցոց:  
 Բայց իր ճամփին դեմ առնելով ընդդիմադիր փաղակների՝  
 Կանգ առավ նա, իսկ աքայանք նըրա առաջն էլան վագըրով—

Նիզակներով զինված համակ ու երկապրի սուսերներով,  
Վըրա ընկան, և Հեկտորը սասանելով՝ տեղի տրվեց  
Եվ իր գործին անեղագոչ ձայնով այսպես որոտաց նա.

«Ամո՛ր կացեք, տրոյացիներ, լիկիացի՛ք և դարդանչանք,  
Քանզի երկար դեմ դընել ինձ անկարող են արայեցիք  
Նույնիսկ եթե ամբարտակի նըման ամուր լինեն նըրանք,  
150 Որովհետև հույս ունեմ ես, որ արքայանք իմ նիզակից  
Տեղի պիտ տան, եթե իրոք ամենագորն աստվածներից՝  
Ահեղամուռնչ այրն Հերայի՝ Արամագդն ինձ դըրդեց ի մարտ»:

Ասաց Հեկտորն, ու բուրի սիրտն ու հոգին բոցավառեց:  
Նըրանց մեջ էր Դեիփոբոսը՝ սեգ որդին Պրիամոսի,  
Որը փըքված ինքն իրեն մեջ՝ անց էր կացել փոքր-ինչ սուսչ,  
Հասակն ամբողջ ծածկած հըսկա ու հաստաբետս իր վահանով:  
Նըշան առավ նըրան փայլուն իր նիզակով Մերիոնեսն  
Ու անվըրեպ գարկեց նըրա արջառամորթ մեծ վահանին,  
Բայց չըծակեց վահանը հաստ, այլ կոտորվեց տեգն իր բընից:

160 Դեիփոբոսը իրենից հեռացրեց իր վահանն իսկույն  
Քաջամարտիկ Մերիոնեսի հաղթ աշտեից սարսափահար.  
Բայց դյուցազն այն փախավ մըտավ ընկերների բազմության մեջ  
Հույժ բարկացած, որ կորցըրեց թե՛ հաղթություն և թե՛ նիզակ:  
Գընաց դեպի նավերը նա ու վըրաններն արայեցոց՝  
Բերելու նոր երկար մի տեգ, որ թողել էր իր վըրանում:

Վըրվում էին մյուսները գոռ աղաղակով և աղմուկով:  
Տելամոնչան Տեկրոսը նախ ըսպանեց այր մի քաջազեն՝  
Մենտորչան հաղթ Իմերիոսին, որ արայանց գալուց սուսչ  
Բընակվում էր Պեդեոնում, ամուսնացած Պրիամոսի

170 Հարճից ծընված անեղեկատես Մեդսիկադե աղջըկա հետ:  
Բայց երբ եկան դւանայեցոց ճոճուն նավերն, այնժամ նորից  
Իլիոն դարձավ և մեծ անուն էր հանել նա տըրոյանց մեջ՝  
Պրիամոսի մոտ ապրելով և սիրվելով որդու նըման:  
Արդ, ականջի տակից նըրա՝ Տելամոնչան Տեկրոսը քաջ  
Զարկեց երկար իր նիզակով, և նա ընկավ հացեմու պես,  
Որը հեռվից երևում էր կանգնած բարձր բըրի վըրա  
Եվ գետին է թափում նա իր սաղարթները պըղընձահար:—  
Այդպես ընկավ նա դիտապաստ, ու շաչեցին զենքերն իր շուրջ:  
Վըրա վազեց Տեկրոսն իսկույն նըրա զենքերն ավարելու.

180 Այդ տեսնելով՝ Հեկտորն անեղ հուժկու աշտեն իր արձակեց,  
Բայց շուտ եկավ Տեկրոսն արագ ու մահապորժ եղավ տեգից,  
Որը դիպավ Ամփիմաքի՝ որդուն Ակտոր Կտեսաի,

- Կըրծքին, երբ նա մարտ էր մղում, ու վայր ընկավ մեծ թընդյունով:  
 Վազէց Հէկտորն ավարելու պէրն սաղափարուն Ամփիմաքի:  
 Այաքսն այնժամ իր շողշողուն աշտեն նետեց նըրա վըրա,  
 Բայց չըհասավ տեգը մարմնին, որ զըրահված էր պըղընձով,  
 Այլ բախվելով Պրիամյանի վահանի կուռ կումբին ուղիղ՝  
 Հուժկու ուժով հըրեց նըրան, և Հէկտորը ետ-ետ գընաց,  
 Թողած այնտեղ երկու դիակ, որոնց տարան աքայեցիք:
- 190 Ամփիմաքին Ստիքիոսը և Մենեսթեաը դուցազարս՝  
 Իշխանները աթենացոց՝ տարան բանակն աքայական.  
 Իսկ Իմբրոսին առին տարան Այաքսները վըրեժխընդիր:  
 Ինչպէս երկու հաղթ առյուծներ, որ գամփոներից սըրածանիք  
 Հափըշտակած այծին դէպի մացառուտներն են փախցընում,  
 Քետնից բարձըր բըռնած ավարն իրենց հուժկու ծընոտներով,—  
 Այդպէս նըրան վեր բարձրացրած Այաքսները ահեղագոռ  
 Առին տարան ու զենքերը նըրա բոլոր կողոպտեցին:  
 Եվ Ոչիլյանն Ամփիմաքի մահվան վըրեժը լուծելով՝  
 Կըրտեց գըլովսն ու գըլորեց զընդակի պէս դէպի ամբոխ,  
 200 Որը գընաց և Հէկտորի ոտքերի մոտ ընկավ գետին:

- Այդ սուկալի գոտեմարտում թոռան ընկնելը տեսնելով՝  
 Պոսէյդոնի սիրտը սաստիկ ցավեց, ու նա խիստ զայրացավ,  
 Ու սըլացավ դէպի նավերն ու վըրաններն աքայեցոց,  
 Հորդորելու համար նըրանց՝ դավ նշուծելով տըրոյանց դէմ:  
 Պոսէյդոնի սուաջն ելավ Իդոմենեսն աշտենավոր,  
 Երբ մըտերիմ մի ընկերոջ մոտից էր նա վերադառնում,  
 Որին դէռ նոր էին քերել սըրունքներից վիրավորված,  
 Եվ հանձնելով բըժիշկներին, որ դարմանեն վերքը նըրա՝  
 Իր վըրանն էր վերադառնում՝ նորից կըովի մեջ մըտնելու:
- 210 Հանդիպելով Իդոմենին՝ Պոսէյդոնը սասց նըրան  
 (Անդրեմոնի Թոսս որդու ձայնով՝ նըրա դէմքը սուած,  
 Որը ամբողջ Պըկրոնում ու բարձրաբերձ Կալիդոնում  
 Էտոլացոց իշխանն էր մեծ ու հարգվում էր աստըծու պէս).  
 «Կրետացոց պետ Իդոմեն, ո՞ր գընացին այն մեծամիտ  
 Սպառնանքներն, որ աքայանք տալիս էին տըրոյացոց»:

- Կրետացոց պետ Իդոմենն այսպէս նըրան պատասխանեց.  
 «Թոռա՛ս, ոչ ոք, իմ կարծիքով, մեղավոր չէ այդ քանի մեջ.  
 Բոլորս էլ լավ գիտենք կըովել, հըմուտ ենք քաջ պատերազմի.  
 Զըկա մեր մեջ ոչ մի վախկոտ ու վատորեն կըովից փախչող,  
 220 Այլ, երևի, հաճելի է գերահըզոր Զըրվանյանին,  
 Որ Արգոսից հեռու, անշուք, կորչեն այստեղ աքայեցիք:

Բայց դու, Թոաս, որ առաջ էլ մի մարտագոռ մարտիկ էիր,  
Ու սիրտ էիր տալիս, երբ որ տեսնէիր թույլ ուրիշներին,  
Մի՛ դադարի նաև հիմա ետանդ և ուժ ներշնչելուց»:

Պոսելդոնը՝ գետնադըրդորդ արքան այսպես պատասխանեց.  
«Տըրոյայից, Իդոմենես, ողջ ու առողջ ետ չի՛ դառնա  
Այն մարդը, որ այսօր կամքով ետ է քաշվում պատերազմից,  
Այլ շքերհին առ ու ավար, և կերակուր դառնա պիտի:  
Բայց դու գեներդ առ և արի, պարտավոր ենք փութալ և մենք,  
230 Ու թեպետև երկու հոգի՝ գուցե օգուտ կարենանք տալ,  
Քանզի թույլերն անգամ եթե միավորվեն՝ կըզորանան,  
Իսկ մենք գիտենք և կարող ենք քաջերի դեմ կրովել նույնիսկ»:

Աստվածն այսպես ասաց նրան ու դեպի մարտ վերադարձավ.  
Իսկ Իդոմենն արագաքայլ հասավ վըրանն իր բարեկերտ,  
Հագավ, կապեց գենք ու զըրահ, և առնելով երկու մըկունդ՝  
Վըրանից դուրս թըռավ նորից ու զընում էր կայծակի պես,  
Որ Զըրվանյանը թըռնելով թափում էր վար Ոլիմպոսից  
Ծաճանչափայլ շողյուններով՝ մահկանացոց իբրև նըշան:—  
Ընթանալիս՝ նըրա կըրծքին շողշողում էր պըղինձն այդպես:  
240 Եվ ընդառաջ ելավ նըրան Մերիոնեսն արիասիրտ,  
Վըրանի մոտ, որ մըտել էր պըղընձյա տեգերն իր առնելու:  
Եվ քաջասիրտ Իդոմենեսն այսպես ասաց Մերիոնեսին.  
«Ո՛վ Մոլոսյան Մերիոնես, քաջոտն ընկեր իմ սիրելի,  
Ինչո՞ւ թողած գուպարն ահեղ՝ այստեղ ես դու եկել, ասա՛.  
Նետահարվա՞ծ ես դու միթե, ու տանջո՞ւմ է փըքինը թեզ,  
Կամ թե գո՞ւյժ ես բերել դու ինձ. չեմ սիրում ես կըռվի ծամփն  
Անգործ նըստել վըրանի մեջ, այլ մարտընչել թըշնամու դեմ»:

Պատասխանեց նըրան ուշիմ Մերիոնեսն արիասիրտ.  
«Իդոմենես՛ս, պըղընձավառ կրետացոց իշխանըդ մեծ,  
250 Եկել եմ ես, որ եթե կա, մի տեզ առնեմ քո վըրանից,  
Որովհետև իմ նիզակը կոտրեցի ես հարվածելով  
Խըրոխտապանձ Դեիփորի կուռ ասպարի վըրա մարտում»:

Վըրետացոց պետ Իդոմենն այսպես ասաց Մերիոնեսին.  
«Ոչ թե մի տեզ, այլ քըսանը դու կըզըտնես իմ վըրանում,  
Հենած պատին, ու բոլորն էլ նիզակներ են տըրոյական,  
Որոնց տերերն ըպանելով՝ ավարել եմ պատերազմում.  
Թըշնամուս դեմ ոչ թե հեռվից, այլ կըռվում եմ ես դեմ առ դեմ»:

Տեգեր ունեմ վըրանիս մեջ ու կըմբալոր կոտ վահաններ,  
Սաղավարտներ ու զըրահներ լուսանաճանջ, փաղակնացայտ»:

260 Մերիոնեսը կըրկին անգամ նըրան այսպես պատասխանեց.

«Ե՛ս էլ ունեմ վըրանիս մեջ և թըխաթույր իմ նավակում  
Տըրոյական կողոպտուներ, բայց մոտիկ չեմ, որ առնեի:  
Կարծում եմ, որ ինքքս նույնպես քաջությունը չեմ մոռացել,  
Այլ նախամարտ կըտրիճների փառապարզև շարքումն եմ միշտ,  
Այնտեղ, ուր տաք ու բորբոքված մարտ է մըղվում արյունահեղ:  
Գո՛րցե թե մյուս աքալեցիք պատերազմում չեմ տեսել ինձ,  
Բայց դու, կարծեմ, ականատես եղել ես իմ կըրիվներին»:

Կըրեոսացոց պես Իդոմենն այսպես ասաց Մերիոնեսին.

«Քաջությամբդ ծանոթ եմ ես, քո ասելուն կարիք չըկա:

270 Նավերի մոտ եթե ընտրեն մեզ քաջերիս դարան նըստել,  
(Որ հատկապես քաջությունը երևան է գալիս մարդկանց,  
Հայտնի դառնում, թե ո՛վ է քաջ, և ո՛վ վախկոտ ու վատասիրտ,  
Զի վախկոտի դեմքի գույնը փոփոխվում է ամեն վայրկյան,  
Եվ սիրտն երբեք կըրծքի ներքո հանգիստ մընալ չի կարենում.  
Նըստում է նա ծունկը ծալած, կուշ եկած գույգ ոտքի վըրս,  
Եվ լանջքի տակ սիրտը ուժգին բարախելով դուրս է թըռչում,  
Կափկափում են ատամները, կարծելով մահն իր մոտալուտ:  
Այնինչ ոչ գույնն է փոփոխվում, ոչ էլ սիրտն է դողում քաջի.  
Երբ մի անգամ վըճռել է նա դարան նըստել մարդկանց շարքում,

280 Ու տեճում է որ շուտ մըտնի տաք կըռվի մեջ թըշնամու դեմ):—

Ոչ ոք պիտի արհամարհեր ձեռքերդ հաղթ ու սիրտըդ քաջ,  
Եվ եթե վերք առնեիր դու կըռվում հեռվից կամ մոտիկից,  
Սըլաքը չէր դիպչի երբեք քո ծոծրակին կամ թիկունքին,  
Այլ քո փորից և կամ կըրծքից հարված պիտի ըստանայիր,  
Նախամարտիկ զընդերի մեջ դեմ-հանդիման զըրոհելիս:  
Սակայն բավ է խոսքով ընկնենք ինչպես փոքրիկ երեխաներ,  
Որ տեսնելով մեկնումեկը սընսպարծի տեղ դընի մեզ:  
Ծուռ վագիր դու դեպի վըրան և ա՛ն միզակ մի քեզ հարմար»:

Այսպես ասաց, ու Մերիոնեսն Արեսի պես սուրաց արագ,

290 Մըտավ վըրանն ու այնտեղից վերցընելով պղնձյա մի տեզ,  
Իդոմենի հետ միասին դիմեց ըշտապ դեպի գուպար:  
Ինչպես Արեսն արյունառուշտ, որ զընում է պատերազմի,  
Եվ նըրա հետ զըրոհում է նըրա որդին Խունապն անահ,—  
Որից կըտրիճ պատերազմող մարդն է նույնիսկ ահաբեկվում,—  
Եվ դուրս գալով Թրակիայից ըշտապում են մարտ տանելու  
Եփիրացոց զինավառված կամ մեծասիրտ Փլեգացոց:



Բայց չեն լքում ամենևին ճորանք երկու այդ կողմերին,  
 Այլ մեկն ու մեկ կողմին միայն տալիս են փառք ու հաղթություն,—  
 Այդպես նաև Մերիոնեսն ու Իդոմենն արանց իշխան

300 Հրաշեկ պղնձով զինավառված գըրոհեցին դեպի գուպար:  
 Եվ առաջինն ինքը ուշիմ Մերիոնեսն այսպես ասաց.  
 «Ով Դեկալյան, ո՞ր կողմից ես ուզում մըտնել ամբոխի մեջ,  
 Բանակի այժ կողմի՞ց արդյոք, թե՞ մեջտեղից և կամ ձախից,  
 Որովհետև, իմ կարծիքով, մարտադաշտում չըկա մի տեղ,  
 Որտեղ անեղ մարտ չըմըղեն գիսակազեղ աքայեցիք»:

Կրետացոց իշխանն այսպես պատասխանեց իր զինակցին.  
 «Նավատորմի մեջտեղը կան ա՛յլ պաշտպաններ ընդդիմադիր,—  
 Այաքսները և քաջադեղն աքայեցոց՝ Տեկրոսը գոռ,  
 Որ քաջ է.և՛ ոտնամարտում, որոնք պատվար պիտի կանգնեն

310 Մոլեգնաշունչ մարտընչողի՝ Պրիամյան բունն Հեկտորի դեմ,  
 Որը թեև մոլի մարտիկ, բայց հագիվ թե կարողանա  
 Հաղթել՝ ճորանց և տալ կրրակ նավատորմին, եթե միայն  
 Ջևաք անեղ մի վառ խանձող չըզբցի մեր նավերի մեջ:  
 Ապա թե ոչ Տելամոնյան Այաքսը մեծ տեղի չի տա  
 Մահկանացու ոչ մի մարդու, որ Դեմետրի բերքն է ուտում  
 Եվ կարող է պղնձով խոցվել կամ քարերով առհասարակ:  
 Չի՞ փախչի նա մինչև անգամ ամենահաղթ Աքիլլեսից  
 Երբ կանգնած է, իսկ ոտքերով անհրճար է հետը մըրցել:  
 Արդ, գորքի ձախ կողմը դարձիր, որ շուտ տեսնենք և իմանանք,

320 Թե մե՞նք պիտի փառք ընձեռենք մեկ ուրիշի, թե չէ՞ նա՞ մեզ»:

Այսպես ասաց, ու Մերիոնեսն Արեսի պես աշխույժ ու ժիր  
 Առաջ անցավ, մինչև հասան այնտեղ, ուր նա հըրամայեց:  
 Տըրոյացիք երբ որ տեսան բոցանըման Իդոմենին  
 Եվ ճորա քաջ արբանյակին արվեստագործ զեն ու զարդով՝  
 Խրախույս տալով մեկը մյուսին՝ վըրա հասան միահամուտ,  
 Ու նավերին մոտիկ պայթեց երկուստեք մարտ մի հավասար:  
 Ինչպես փըչող քամիներից առաջացած հողմերը խոլ  
 Չոր օրերին, երբ որ բոլոր ճամփաները լիքն են փոշով,  
 Վեր են հանում դեպի երկինք փոշու ամպեր հըսկայական,—

330 Այդպես ճորանք առան իրար, ու վառվում էր սիրտը ճորանց  
 Ըսպանելու, կոտորելու մեկը-մյուսին սուր պըղընձով:  
 Բորբոքվեց մարտ մի խելահեղ՝ երկայնաստվեր նիզակներով,  
 Որ ունեին իրենց ձեռքում ախոյաններն ընդդիմամարտ:  
 Ծողունը շեկ պըղինձների՝ փըրթած փայլուն կորդակներից,  
 Ջըրահներից, ասպարներից, տեգերից՝ աչք էր շըլացնում,

Երբ համագունդ քայլում էին, և մարդ քարսիրտ պիտի լիներ,  
Որ տեսնելով մարտն այդ՝ հրրճվեր և չընդնցվեր ամբողջ հոգով:

- Բայց Ջրրվանի երկու հըգոր որդիները իրար ներհակ  
Նյութում էին դյուցազների համար դրժնյա ցավեր բազում:
- 340 Ձևն ուզում էր տալ հաղթություն տըրոյացոց և Հեկտորին  
Եվ Արագոտն Աքիլլեսին ցանկանում էր փառավորել,  
Բայց միտք չունեի աքալեցոց բընաջընջել Իլիոնի մոտ,  
Այլ Թետիսին ու քաջասիրտ Արրա որդուն պատվել միայն:  
Իսկ Պոսեյդոնը ծածկաբար ելած ծովիցն իր ըսպիտակ  
Մարտ մրտնելով՝ հորդորում էր աքալեցոց տըրոյանց դեմ,  
Ցավում էր նա, որ աքալանք՝ հաղթահարվեն տըրովներից  
Եվ իր սըրտում զայրացած էր Արամազդի վըրա սաստիկ:  
Եվ չընայած՝ երկուն էլ նույն զարմից էին ու նույն հորից,  
Բայց Արամազդն անդրանիկն էր ու ավելի շատ բան տեսած,  
350 Այդ պատճառով Պոսեյդոնը չէր հանդըզնում Արրանց օգնել  
Հայտ-հանարձակ, այլ միշտ գաղտնի և զինվորի կերպարանքով  
Ոգևորում էր բանակում աքալեցի մարտիկներին:  
Այսպես, Արրանք փոփոխակի, երկու կըռվող կողմերի մեջ  
Պըրկեցին հաղթ ու համագոր կըռվի անլույծ, ամուր մի լար,  
Որ երկուստեք շատ-շատերի ծունկեր ծալեց պատերազմում:  
Իդոմենը թեպետև ծեր, խըրախույս տալով դանալեցոց,  
Տըրոյացոց մեջ մըխըրճվեց և խունապի մատնեց Արրանց:  
Նա ըսպանեց իր նիզակով կաբեսացի Ռթիոնեսին,  
Որը նոր էր եկել հասել պատերազմին բազմաշատաչ  
360 Եվ ուզում էր Պրիամոսի գեղաչըքնաղ աղջիկներից  
Կասանդրեին առանց օժտի առնել իրեն կին հարազատ,  
Որի համար խոստացել էր մի ակներև գործ կատարել—  
Տըրոյայից վանել բըռնի աքալեցոց որդիներին:  
Հավանել էր Պրիամը ծեր՝ իր դըստերը տալու Արրան,  
Որի խոստման վըրա վրատահ՝ ոգորում էր նա ողջ ուժով:  
Բայց շողշողուն իր աշտեով Իդոմենեսը անվըրեպ  
Ջարկեց քաջին, երբ սիգաքայլ առաջ էր նա գալիս վըստահ:  
Պըղընճապատ գըրահն հուժկու այդ հարվածին չըդիմացավ.  
Իդոմենեսն աշտեն ուժգին ախոյանի փորը խըրեց,  
370 Ողջ հասակով փըռեց գետին ու պանծալով այսպես սասց.  
«Ռթիոնե՛ս, քեզ արդարև ամենից շատ պիտի գովեմ,  
Եթե ճըշտիվ կատարես այն, ինչպես որ դու խոսք ես տըվել  
Դարդանյան ծեր Պրիամոսին, որ խոստացավ դուստրը տալ քեզ:  
Կըհարզեիճք մեր խոսքը մենք, էթե երբեք խոստանալինք  
Եվ Արգոսից աստ բերելով պիտի տալինք քեզ կընուոյան

Գեղաչքքնաղ դրստերն անգամ Ազամեմնոն Ատրիդեսի,  
Եթե մեզ հետ կործանեիր Իլիոնը բարեբընակ:  
Արդ, եկ ինձ հետ, որ հարսանիքդ անենք մեր սև նավերի մեջ,  
Քանզի բոլորս էլ վեհագնյա աներներ ենք յընամախոս»:

- 380 Այսպես ասաց Իդոմենեսն ու քարշ տըվեց նրան ոտքից  
Ռագմի միջից դուրս հանելով, որ զինագերծ անի նրան:  
Ասիոսն այնժամ վըրիժավառ՝ նրա վըրա վազեց իսկույն,  
Նա, որ կըրվում էր հետիոտն՝ իր ձիերի առջև կանգնած,  
Ռրոնց նրա ետևն էր միշտ կառավարը պահում պատրաստ,  
Եվ որոնց տաք հեքը Ասիոսն ըզգում էր միշտ իր ուսերին:  
Ամբողջ սրբտով ուզում էր նա զարկել դյուցազն Իդոմենին:  
Բայց սա կանխեց և իր տեգով կոկորդից խոր խոցեց նրան.  
Ու տապալվեց Ասիոսն, ինչպես հրսկա կաղնին է տապալվում,  
Բարդին և կամ բարձրը սոճին, որ նավերի պետքի համար
- 390 Հյուսներն են սուր տապարներով գետին փըռում լեռան վըրա:  
Այդպես ընկավ նա իր կառքի և ձիերի առջև տապաստ,  
Կըրճըտացող ատամներով ծամելով հողն արնաթաթալ:  
Իսկ կառավարն ապուշ կըտրած չըկարեցավ անապարել՝  
Ձիերը ետ դարձընելով փախչել ու գլուխն իր ազատել:  
Վըրա հասավ Անտիլոքոսն ու նիզակով շամփրեց նրան.  
Ու պըղընձյա զըրահը, որ կըրում էր նա, չըդիմացավ,  
Աշտեն նրա փորը յըրվեց, և նա կառքից գըլորվեց վար,  
Իսկ նըծույզները Նեստորի Անտիլոքոս արի որդին  
Քըշեց դեպի բանակն իսկույն պըղընձագետտ արաչեցոց:
- 400 Ասիոսի մահվան վըրա Դեիփոբոսն անչափ տըրտում,  
Մոտիկ գալով Իդոմենին՝ փալլուն աշտեն նետեց նրան:  
Իդոմենեսն այդ տեսնելով՝ հագիվ գըլուխն իր ազատեց,  
Կուշ գալով իր բոլորածն ասպարի տակ, որ նա ուներ՝  
Աըջառամորթ, պըղընձապատ, զույգ փոկերով ամրապընդված:  
Պահվեց այդ հաստ ասպարի տակ, և վըրայից տեգը անցավ,  
Ու նիզակը թափ անցնելիս վահանն հընչեց կերկերածայն:  
Սակայն հուժկու նրա ձեռքից նետված նիզակն իզուր չանցավ,  
Այլ հարվածեց ազգաց հովիվ Հիպասասծին Հիփսիճորին.  
Սաքը յըրվեց լյարդի մեջ, ու ծավլեցին ծընկներն իսկույն:
- 410 Եվ Դեիփոբը փըքվելով գոռոզաբար գոչեց ուժգին.  
«Գոնե Ասիոսն առանց վըրեժ չընկավ, և ես կարծում եմ, որ  
Հիմա արդեն նա կարծրանիզ դժոխքի դըռնից անագորույն  
Ուրախ սըրտով պիտի մըտնի, զի ուղեկից տըվի նրան»:  
Այսպես ասաց, և արաչանը դառնացան այդ հոխորտանքից,

Եվ մանավանդ խիստ խրոտվեց սիրտը արի Անտիոքի,  
 Որը թեև սաստիկ տըխտր, բայց չըլըքեց բարեկամին,  
 Այլ ըշտապեց պաշտպանելու և ասպարով ծածկեց նորան:  
 Ապա երկու մոտ ընկերներ մըտան նորա թների տակ—  
 Մեկիստեար Եբիոյան և Ալաստորը դշուցագնչա—  
 420 Ու նավերը տարան նորան, մինչ նա հեծում էր ծանրապես:

Իսկ Իդոմենն անդու վատված ուզմի տենչով, ուզում էր միշտ  
 Տըրոյացի մի ընկըղմել գիշերի մեջ խավարասույզ,  
 Կամ ի՛նքն ընկնել՝ հեռացնելով նախնիրն աքյանց որդիներից:  
 Եվ նա այնտեղ գետին գարկեց Էսիեդի սիրուն որդուն՝  
 Դյուցագնական Ալկաթոսին, որ փեսան էր Անքիսեսի:  
 Առել էր նա աղջիկներից նորա մեծին՝ Հիպպոդամին,  
 Որին հայրն ու մայրը սըրտանց սիրում էին, երբ տանն էր դեռ,  
 Քանզի նա իր գեղեցկությամբ, արարմունքով և իր խելքով  
 Գերազանցում էր իր բոլոր հասակակից ընկերներին:

430 Իբրև համար նա հարսնացավ Տըրոյայում քաջագույնին,  
 Որին, սակայն, Պոսեյդոնը ընկնեց ձեռքով Իդոմենին:  
 Մըթագնելով լույսն աչքերի, կապեց նորա ոտքերն առույզ,  
 Որ չէր կարող ոչ ետ փախչել, ոչ էլ խուչս տալ անխյանցից,  
 Այլ քարացած, ինչպես արձան, կամ ծառի պես բարձրաստղարթ  
 Մինչդեռ անշարժ կանգնել էր նա, Իդոմենը դշուցագնաբար  
 Պըղընձչա գըրահը հերձելով, (որը նորանցից մի ժամանակ  
 Հեռացնում էր օրհասը սև) տեգը վարսեց թոքերի մեջ.  
 Սուր սըլաքից ճեղքըվելով գըրահը՝ խուլ շառաչ հանեց,  
 Եվ նա գետին ընկավ թընդամաք՝ տեգը խըրված իր սըրտի մեջ,

440 Որը դեռ տաք, տըրոփելով՝ շարժում էր սուր սայրը տեգի:  
 Եվ, վերջապես, այնտեղ միայն Արեսն իջավ բուռն իր թափից,  
 Եվ Իդոմենն հաղթանակած գոչեց հըպարտ, հոխորտագին.

«Դեիփոքոս, ձեր մեկի դեմ երեքը մենք քսպանեցինք.

Էլ ի՛նչ ես դու ամբարհաված այդպես՝ գովում գըլովար քո:  
 Դու ի՛նքդ արի, դեմըս կանգնիր, որ լավ տեսնես, թե ինչպիսի  
 Բողոքջ եմ ես Արամազդի՝ Կրեստեից հասած այստեղ,  
 Որը ծընեց նախ Մինոսին՝ պահապանին կրետացոց,  
 Եվ Մինոսը ծընեց հետո ըսքանչելի Դևկալիոնին,  
 Իսկ Դևկալիոնն էլ ծընեց ինձ՝ արքա բազում մարդկանց վըրա

450 Կրեստեի մեջ ընդարձակ. նավերոս ինձ բերին այստեղ  
 Որպես պատիժ քեզ և քո հոր և բովանդակ տըրոյացոց»:

Այսպես ասաց. Դեիփոքը տատանվում էր երկմըտությամբ—  
 Վերադառնա՝ գընա իրեն ընկե՛ր գըտնի տըրոյանց մեջ,

Թե՛ միայնակ ինքը դուրս գա Իդոմենին դեմ-հանդիման:  
Եվ ի վերջո՛ նա որոշեց գրեալ գրտնել Էնիասին,  
Որին գըտավ կանգնած այնտեղ՝ մարտիկների վերջին շարքում,  
Քանզի ընդդեմ Պրիամոսի սըրտում նա ոխ ուներ պահած  
Այն պատճառով, որ ծերն իրեն ըստ արժանվույն չէր մեծարում:  
Դեհփոքը մոտենալով՝ այս թևավոր խոսքերն ասաց.

—460 «Քա՛ջո՛ Էնիաս, տրոյանց իշխան, եթե իրոք սիրում ես ինձ,  
Պարտավոր ես քո քեռայրին դու օգնության հասնել շուտով:  
Արի գընանք՝ Ալկաթոսին մենք ի թիկունք և ի սատար,  
Որը, երբ դեռ փոքր էիր դու, քեզ խընամեց նա իր տան մեջ.  
Նըրան հենց նոր գետին փըռեց Իդոմենը կորովատեզ»:

Այս ասելով նա թունդ հանեց սիրտը խիզախ Էնիասի,  
Որ խոչացավ դեպ Իդոմենն՝ արյան ծարավ ու կըռվատենչ.  
Բայց Իդոմենը մանկան պես չըվախեցավ, այլ անասան  
Կանգնեց մընաց, ինչպես վարագ ուժին վըստահ, լեռան վըրս,  
Որ ըսպասում է քազմամբոխ որսորդների աղաղակին,

— 470 Ու ցըցվում են մազերն ըստվար, աչքերն ահեղ բոցավառվում  
Եվ ժանիքներն է սըրում իր՝ մըռըլտալով մոլեզնաբար,  
Որ հալածի որսորդներին և ջըների ոհմակը ողջ:—  
Ըսպասում էր Իդոմենենն այդպես անահ և աննահանջ  
Էնիասի հարձակվելուն, և նայելով իր շուրջը նա  
Ջայն էր տալիս ընկերներին՝ Ասկալափին, Դեհփոքին,  
Ափարեսին, Անտիլոքին և Մերիոնին ռազմի հըմուտ:  
Եվ դիմելով նա բոլորին՝ այս հորդորիչ խոսքերն ասաց.

«Այստեղ եկեք, սիրելիներս, և օգնեցեք միայնակիս,  
Ձի ես ասատիկ վախենում եմ քաջոտն ու բուռն Էնիասից,

480 Որ կատաղի է կըռվի մեջ և կարող է մարդ հոշոտել.  
Եվ իր ծաղկուն տարիքի մեջ ունի նա մեծ կորով և ուժ:  
Այս իմ հոգով եթե նըրան հասակակից լինեի ես,  
Այն ժամանակ կամ ե՛ս պիտի առնեի փառք, և կամ թե՛ նա՛»:

Այսպես ասաց, և համամիտ ու համաշունչ բոլորը մեկ  
Նըրան իրենց միջև առան, ամեն մեկն իր ասպարն ուսած:  
Մյուս կողմից էլ Էնիասն էր կանչում գեների ընկերներին՝  
Դեհփոքին և Պարիսին և դյուցազնյա Ագեճորին,  
Որոնք նըրա հետ միասին պետերն էին տըրոյացոց:  
Գալիս էին իր ետևից մի խումբ խիզախ քաջարիներ,

490 Ինչպես խոյին է հետևում ոչխարների ըստվար մի հոտ  
Դեպի աղբյուր ընթանալիս, ու հըրճվում է հովիվն անչափ:

Էնհասն էլ ուրախացաւ իր սրբոսի մեջ, երբ որ տեսաւ  
Ռազմիկների այդ բազմությունն, որ գալիս էր իր ետևից:

- Այկաթոսին շքրջապատած՝ ախոյաններն առան իրար  
Երկայնաձիգ մրկունդներով մեկ-մյուսին նըշան բըռնած.  
Եվ պըղինձը նըրանց վըրա շտապչում էր ահագնաձայն:  
Իսկ բոլորի մեջ գերափառ երկու խիզախ ռազմիկներն այն՝  
Իդունենեսն ու Էնհասն Արեսի պես արյունառուշտ  
Ջանում էին խոցել միմյանց անագորույն պըղինձներով:
- 500 Նախ Էնհասն արձակեց տեգ, Իդունենեսն այդ նըկատեց  
Ու խույս տալով ճարպըկորեն պընձյա տեգից՝ մահից պըրծաւ,  
Եվ սըլաքը Էնհասի թըռաւ զընաց, խըրվեց հողում,  
Ջի ընդունայն էր սըլացել աշտեն նըրա հուժկու ձեռքից:  
Իսկ Իդունենեսն Ինոմավին գարկեց ուղիղ նըրա պորտին,  
Պըղինձն հերձեց զըրահն ամուր ու փորոտին խստեց իրար,  
Եվ նա ընկաւ գետնաթափալ ճանկըթելով հողն արյունոտ:  
Իդունենեսը դիակից քաշեց հանեց երկար աշտեն,  
Բայց կողպտել չըկարեցաւ ախոյանի գեները պերճ՝  
Սըլաքներից տագնապելով, քանզի հոգով թեպետև ժիր,  
510 Բայց ծեր էր նա ու չէր կարող սըրունքներով իր դեղևուն  
Վազել զընալ, կորզել նիզակն ու ոտխի տեգից խույս տալ:  
Կարող էր նա օրն անողոք վանել կանգնած գուպարի մեջ,  
Բայց փախցընել նըրան մարտից՝ սըրունքները չէին գորում:  
Եվ երբ ահա դանդաղաքայլ ուզում էր նա ետ նահանջել,  
Դեփիոբոսն արձակեց իր փայլուն աշտեն նըրա վըրա,  
Ջի նըրա հետ քեն էր մըտել ու պահում էր ղխ շարունակ:  
Սակայն նորից նա վըրիպեց՝ հարվածելով Սակալափին՝  
Ենհալի որդուն, և սուր աշտեն ծակեց ուսն ու անցաւ.  
Եվ նա ընկաւ փոշիներում ու չանկոեց հողն ագուռներով:
- 520 Բայց տակալին չէր իմացել ահեղագոչ Արեսն հըզոր  
Որդու անկումը բազմամբոյս պատերազմի եռուզեռում:  
Նըստել էր նա Ոլիմպոսի ծայրը ոսկյա ամպերի տակ  
Արամազդի ահեղ կամքով արգելափակ ու կաշկանդված,  
Այնտեղ էին և մյուս բոլոր աստվածները կըովից հեռու:

Խիտ շարքերով զըրոճ տըվին Սակալափի շուրջը նըրանք.  
Փայլուն կորդակն Սակալափի զըլխից խըլեց Դեփիոբոսն,  
Իսկ Մերիոնեսը խոյացաւ փայլակնաթափի Արեսի պես  
Եվ նիզակով վիրավորեց նըրա բազուկն, ու բարձրածայր  
Կորդակն ընկաւ նըրա ձեռքից շոռընդալից շտապելով:  
530 Մերիոնեսն անզդի նըման սուրաց դեպի նա նորի՛ց, նորի՛ց,

Ու դուրս կորգեց ճորս ձեռքից երկայնաբուն հիզակը հաղթ,  
Ապա կըրկին փախալ մըտալ ընկերների բազմության մեջ:  
Իսկ Պոլիդեսն իր հայրազատ Դեիփոքին մեջքից գըրկած  
Հանեց մարտից ահեղագոռ ու դեպ ձիերն առալ տարալ,  
Որոնք կըռվից հեռու կանգնած իրենց տիրոջն էին մընում՝  
Կառավարի և ճըկարեն չըքնաղ կառքի հետ միասին,  
Որոնք իրենց տիրոջն առան ու փախցըրին դեպի քաղաք,  
Մինչ խորապես հեծում էր նա ու հառաչում չարալըլունկ,  
Եվ նոր խոցված ճորս բազկից հոսում էր հորդ արյունը տաք:

- 540 Իսկ մյուսները կըռվում էին, ու բարձրացալ աղմուկ ահեղ:  
Էնիսար հարձակվելով՝ իր սայրասուր տեգով խոցեց  
Վըրան վազող Կալեդորյան Ափարեսին, ճորս ուսից  
Գըլուխն ընկալ և գըլխի հետ ընկան վահանն ու սաղավարտ,  
Ու հոգեառ օրհասը սև շըրջապատեց ճորան իսկույն:  
Անտիլոքոսը Թոռնին, երբ փախչում էր նա թիկնադարձ,  
Զարկեց տեգով ու կըտրատեց ճորս վըզի ջիղը ամբողջ,  
Որ անցնելով թիկնամեջքից՝ պարանոցն է հասնում միճն:  
Կըտրեց այդ ջիղն ամբողջովին, ու նա փըլվեց փոշիներում,  
Կարկանդակով երկու ձեռքերն իր սիրելի ընկերներին:  
550 Անտիլոքոսն աչքը չորս դին՝ խըլեց ճորս գենքերն ուսից,  
Մինչդեռ ամեն կողմից ճորան շըրջապատած տըրոյացիք  
Կոփում էին ճորս լայնչի, խալտաճամուկ վահանն անդուլ,  
Սակայն չէին կարողանում Անտիլոքի մորթը փափուկ  
Վհրավորել, ցըտել իրենց անպարտելի պըղինձներով,  
Որովհետև ամեն կողմից Պոսելդոնը Երկրադըրորդ  
Պահպանում էր տեղատարափ փըքիններից Անտիլոքին,  
Որ ոտխից չէր հեռանում ու ճորանց մեջ մըխված էր միշտ:  
Չէր դադարում ճորս հիզակն, այլ շարունակ ճոճելով այն  
Սըլանում էր փոթորկի պես, միտք անելով՝ տեգը թըռցնի՞,  
560 Թե՞ խոչանա և մոտիկից գոտեմարտի ոտխի հետ:  
Սակայն ծածուկ չըմընացին ճորս մըտքերն Ադամասից,  
Որ հարձակվեց և սայրասուր իր պըղինձով զարկեց ճորս  
Կուռ սապարի կուսքին ուղիղ, բայց Պոսելդոնը կապտահեղ  
Նըրս սըլաքը բըթացրեց և խընայեց կյանքը քաշի:  
Սլաքի կեսն Անտիլոքի կուռ սապարի վըրս մընաց  
Մի կիսավառ ձողի ճըման և մյուս կեսը գետին ընկալ:  
Ադամասը փախուստ տըլեց, որ ազատվի ծանր օրհասից,  
Բայց Մերիոնեսն ետևն ընկած՝ զարկեց հուժկու իր աշտեով  
Պորտից նըրքև առականքին, ուր ամենից ավելի շատ  
570 Մահառիթ է Արեսը խիստ՝ մահկանաց ու մարդկանց համար:

Ադո, Ադամասն ընկնելով ադ իրեն խոցող տեգի վըրա  
Տապըլտկում էր տըվալտագին, արջստի պես, որ լեռներում  
Կապկապում են պարաններով տալարածներն ու քաշ տալիս:  
Այդպես և նա տեգի վըրա գալարվում էր աղեմորմոք,  
Մինչև որ մոտ գալով նըրան Մերիոնետը դյուցազնական  
Քաշեց հանեց տեգը մարմնից, և նա թաղվեց խավարի մեջ:

Հելենոսը մոտիկ գալով Թրակյան թըրով իր ահագին  
Զարկեց քունքին Դեիպիրի և սաղավարտը ջախջախեց,  
Որ թընդյունով գետին ընկավ, և մի մարտիկ աքալեցի  
580 Վերցըրեց այն, որ գըլորվել, ընկել էր իր ոտքերի մոտ:  
Եվ աչքերին Դեիպիրի իջավ խավար ու խոր գիշեր:  
Կըսկիծն առավ ահեղագոռ Մենելալոս Ատրիդեսին,  
Որ սուր նիզակն իր ճոճելով առաջ եկավ ըսպառնալից.  
Դեպ Հելենոս դյուցազն արքան, որը լարեց աղեղն իր մեծ.  
Եվ երկուսով առան իրար,— մեկը սուրսայր իր գեղարդով  
Ըսպառնում էր ախոյանին, և մյուսը իր լայնալիճով:  
Հելենոսը նետն արձակեց, որը դիպավ կուրծքը ծածկող  
Զըրահի կուռ կարավանդին, բայց նետը ժանտ թըռավ դեպ ետ,  
Ինչպես որ մեծ մի կալի մեջ էրանելիս հոսելից

590 Դուրս են թըռչում սև գըլույներ, կամ սիսեռներ են ուտոստում  
Փըչող հողմի շընչից և կամ էրանողի հուժկու ուժից:  
Այսպես շըքեղ Մենելալի կուռ գըրահին գարնըվելով  
Ուտոստելով ուժգընորեն դատըն նետը թըռավ հեռու:  
Իսկ Ատրիդես քաջամարտիկ Մենելալոսն ահեղագոռ  
Զարկեց տեգով հենց ա՛յն ձեռքին, որով աղեղն էր բըռնել նա:  
Մըլաքն անցավ թաթից թափով ու մըխըրճվեց աղեղի մեջ.  
Ետ փախչելով յուրայնոց մոտ՝ հագիվ պըրծավ նա օրհասից:  
Հելենոսի կախված ձեռքից քարշ էր գընում տեգն հացեճու,  
Որը մեծանձն Ագեճորը քաշեց հանեց նըրա ձեռքից

600 Ու փաթաթեց թաթը նըրա՝ պարսատիկի նուրբ ասվիով,  
Որ բերում էր ծառան իր հետ ժողովըրդից հովվի համար:  
Ահեղաշուք Մենելալիճ էր հետամուտ համատորեն  
Պիսանդրոսը, որին դեպի մահ էր տանում օրհասը չար,  
Որ քո ձեռքով, Մենելալե՛, ընկներ ահեղ գոտեմարտում:  
Եվ երբ նըրանք հասան իրար՝ մեկն այս կողմից և մյուսը՝ այն,  
Վըրիպեց Ատրիդեն և ի դերև անցավ աշտեն նըպատակից.  
Իսկ Պիսանդրոսը հարվածեց Մենելալի կուռ ասպարին,  
Բայց չըգորեց ուժը նըրա թափով պըղիճն իր անցկացնել,  
Լայնջի վահանն արգելք եղավ, և կոտըրվեց աշտեն բընից,  
610 Այնինչ նա իր մըտքում ցընծաց հաղթանակի խինդով լեցուն:  
Այն ժամանակ քաջամարտիկ Մենելալոսն ահեղագոռ



Արծաթագամ սուրն իր քաշեց և խոյացավ նրա վրա.  
 Մա էլ հանեց իր վահանի տակից տապարն պողընձեղեն  
 Ձիթենիի երկար կոթով, և իրարու վրա ընկան:  
 Պիսանդրոսը զարկեց նրա գլխանոցի ճիշտ խորանիճ՝  
 Գարգամակի ներքնակողմից, իսկ Մենելավը հարվածեց  
 ճակատամերձ քրթարմատին, ու ճարճատեց ոսկորն իսկույն,  
 Եվ արնամած աչքերն երկու ընկան գետին, ոտների մոտ:  
 Կուչ եկավ նա ինքն իր վրա, ու տապալվեց յիռշեթավալ,  
 620 Իսկ Մենելավն անմիջապես ոտքը դրեց նրա կրծքին  
 Եվ գենքերը կողոպտելով՝ այսպես խոսեց խրոխտապանձ.  
 «Այսպե՛ս պիտի թողնեք նավերն արագածի դանաչեցոց,  
 Ամբարտավա՛ն տըրոյացիք, դուք, որ կընվից չեք հագեցնում:  
 Ծրնե՛ր, կարծես քիչ էր այն գարշ թըշնամանքն, որ հասցորիք  
 Ինձ իմ տան մեջ, չերկրնչելով ձեր սրբոսի մեջ՝ որոտագոչ  
 Եվ վանատուր Արամագոի վրեժխրնդի բարկությունից,  
 Որը մի օր ջընջելու է քաղաքը ձեր հիմնահատակ:  
 Քի՛չ էր, կարծես, որ բլուր գանձերս ու սիրատատ կընոջրս դուք,  
 (Որ ձեզ սիրով հյուրընկալեց) տարաք առանց մի պատճառի,  
 630 Եվ հիմա էլ մոլեգնում եք մեր ծովաչու, նավատորմին  
 Կըրակ տալ դուք և կոտորել քաջակորով աքալեցոց:  
 Ի՛նչ էլ լինի մոլուցքը ձեր՝ ռազմից պիտի քըշվեք շուտով:  
 Հայր Արամագո, ճիշտ է, որ քեզ իմաստնագույն են համարում  
 Աստվածներից ու մարդկանցից, բայց դո՛ւ ես այս բոլորն անում,  
 Ինչպես որ արդ գորավիզ ես և հովանի տըրոյացոց—  
 Ամբարտավան ու չար մարդկանց, որոնց հոգին բոլորովին  
 Հագուրդ չունի հանիրավի և ապօրեն պատերազմից:  
 Ամեն բանից հագեցնում է մարդը՝ քրնից, սիրո՛ց անգամ,  
 Եվ քաղցրաձայն նըվագներից, երգ ու պարից, որ առավել  
 640 Սիրելի են մարդու սրբոսին, քան թե կրոիվ մըղել դաժան,  
 Սակայն սըրանք, տըրոյացիք պատերազմից չեն հագեցնում»:

Այսպես ասաց Մենելավոսն ու կաստելով նրա մարմնից  
 Բոլոր գենքերն արյունազանգ տըվեց իր մոտ ընկերներին  
 Եվ նա նորից վերադարձավ դեպի գընդերն առաջամարտ:  
 Պիլեմենես թագավորի որդին վազեց նրա վրա—  
 Հարպալիոնը, որն իր հոր հետ Տըրոյա էր եկել կընվի,  
 Բայց չըդարձավ նա այնտեղից իր հայրենի երկիրն անուշ:  
 Նա մոտ գալով՝ Ատրիդեսի ասպարի ճիշտ կումբին զարկեց,  
 Բայց չըգորեց ուժը նրա՝ տեզն անցկացնել կուռ պողընձից,  
 650 Եվ իր չորս դին աչք ածելով, որ չըխոցվեր մեկից հանկարծ,  
 Փախավ մըտավ յուրայնոց մեջ, ազատվելու համար մահից:

Բայց Մերիոնեսն առաջ անցած՝ նետեց մի նետ սրղընձակուն  
Ու ետևից՝ մեջքին գարկեց. սրղաքն անցավ ողնաշարից  
Ու խոր խըրվեց առավուշտում և դուրս եկավ անմիջապես:  
Հարպալիոնը ծղնկակոտոր՝ ընկերների գիրկն ընկնելով  
Հոգին փռչեց, ապա փրովեց գետնի վերս որդի նրման,  
Ու սև արունն առատահոս վրտակի պես հողը թըրջեց:  
Մեծահոգի պապիագոններն Հարպալիոնի դին առնելով  
Կառքը դըրին ու սըրտաբեկ տարան դեպի Իլիոնը սուրբ:  
660 Բոլորի նետ գընում էր և հայրը նրա արտավակոծ,  
Տըխար, որ իր որդու համար վըրեժխընդիր չեղավ ոչ ոք:

Բայց Պարիսը մեծ բարկությանը լըցվեց նրա մահվան վըրս,  
Ձի բազմամարդ պապիագոնաց երկրում նըրան հյուր էր եղել,  
Ու նա ցասկոտ՝ մի սաչքասուր նետ ուղարկեց Մերիոնեսին:  
Կար Եվթեոնը անվամբ մի մարդ, որդին գուշակ Պոլիվիդի,  
Մեծահարուստ ու քաջառողջ, որ ապրում էր Կորընթոսում.  
Գիտակ էր նա իր չար բախտին, երբ նավ նըստեց մարտ մեկնելու,  
Ձի հաճախ էր ասում նըրան Պոլիվիդես ծերը բարի,  
Որ կամ պիտի տանն ավարտեր իր կյանքը նա հիվանդությանը,  
670 Կամ աքայանց նավերի մոտ տըրոյացոց ձեռքով ընկներ:  
Ուզել էր նա գլուխն ազատել աքայեցոց լուսանքներից  
Եվ դառն ախտից օրհասաբեր, որ իր հոգին չըտանջըվի:  
Սըրան էր, որ ականջախառն խոցեց Պարիսն իր սուր նետով  
Եվ բաժանեց հոգին մարմնից ու խավարի գիրկն ուղարկեց:

Կըրվում էին սըրանք այսպես կըրակ կըտրած իրարու դեմ:  
Միհչընտ Հեկտորը՝ սիրելին Արամագոի դեռ լուր չունեի  
Եվ չըգիտեր, թե նավերի ձախակողմից աքայեցիք  
Կոտորում են իր գորքերին և թերևս հաղթեն նըրանք,  
Ձի Պոսեյդոնն աշխարհակալ հորդորում էր հարկադրաբար:  
680 Եվ ինքն անձամբ աքայեցոց գորավիզ էր հանդիսանում:  
Գըտընվում էր Հեկտորն այնտեղ, ուր նախ ինքը իր փաղանգով  
Գըրոնեելով փոթորկի պես՝ մըտավ դըրոնից ու պարըսպից,  
Ջախջախելով ասպարավոր գումարտակներն աքայեցոց:  
Այնտեղ էր նա, ուր Սչաքսի ու Պրոտեսի նավերն էին,  
Անդ, ըսպիտակ ծովի ափին, քաշված հանված դեպի ցամաք,  
Որ պարիսպը շատ բարձր չէր, որտեղ ձիերն ու քաջազունք  
Անեղ աղմուկ-աղաղակով կըրվում էին մոլեգնաբար:  
Բիովտացիք այնտեղ բոլոր ու յավոններն երկայնագետտ,  
Լոկրացիներն ու փթիացիք և եպիանք պերճապայծառ  
690 Եըզնում էին միահամուր՝ փայլակընդթաց դյուցազունին

- Հեռու պահել նավատորմից, քայց և այնպես չէին կարող  
 Հաղթահարել բոցանրման աստվածային քաջ Հեկտորին:  
 Առաջամարտ գընդումն էին ընտիր քաջերն աթենացոց,  
 Ռրոնց՝ որդին Պեդեոսի՝ Մենեաթեսն էր հրրամայում,  
 Եվ նրա հետ գընում էին Փիդասն, Ստիքիոսն ու Բիասը քաջ:  
 Եպիանց պետերն էին՝ Մեդեսն ու Դրակիոսն ու Անփիոլն,  
 Իսկ փթիացոց՝ Պոդարկեսը-կըովի տոկուն և անվըկանդ,  
 Մեդոնը քաջ, որ հարճորդին էր դյուցազարմ Ոչիլեսի  
 Եվ եղբայր էր Այաքսի հետ, քայց սարում էր Փիլակեոսն,  
 700 Հեռու երկրից իր հայրենի, զի սայանել էր այնտեղ մի մարդ՝  
 Եղբորն՝ իր խորթ Երիովյ մոր, որը կինն էր Ոչիլեսի:  
 Իսկ Պոդարկեսն էր Փիլակյան Իփիկլոսի շըքեղ որդին:  
 Սըրանք էին, որոնք վեհանձնըն փթիացոց գըլովսն անցած  
 Բիովտացոց հետ միասին կըովում էին արիաբար  
 Պաշտպանելու համար իրենց նավերն՝ ահեղ Հեկտորի դեմ:  
 Իսկ Այաքսը՝ Ոչիլեսի աշխույժ որդին բոլորովին  
 Չէր հեռանում Տելամոնյան մեծ Այաքսից թեկուզ մի քայլ,  
 Այլ ինչպես և երկու եզներ քաշում են ծանր արորն արտում,  
 Եվ հոսում է քրտիմքն առատ՝ եղջյուրների արմատներից,  
 710 Եվ լուծն է լոկ, որ երկուսին բաժանում է մեկը-մյուսից,  
 Երբ քայլում են նույն ակոսով միշտ միաշունչ և անբաժան,  
 Այդպես էին նաև նըրանք իրարու կիպ և համընթաց:  
 Բայց զհնակից մարտիկներից և՛ շատերը, և՛ կորովիք  
 Գընում էին Տելամոնյան դյուցազնակյան որդու հետքով,  
 Եվ փոխնիփոխ առնում էին նրա ասպարն ընկերաբար,  
 Երբ նա քըրտներ, կամ հոգնեին նրա ծընկերն ընթանալիս:  
 Իսկ լոկրացիք չէին գընում Ոչիլյանի հետ մեծարիստ,  
 Քանզի նըրանք սովոր չէին դեմ-հանդիման գոտեմարտի  
 Եվ չունեին հացեճու տեզ և ասպարներ բոլորաձև,  
 720 Պըղընձաձույլ սաղավարտներ ձիաձարի ցըցունքներով:  
 Այլ մի-միայն վըստահ իրենց աղեղների ու գառների  
 Պինդ ոլորած բըրդի վըրա՝ ելել էին եկել Իլիոն,  
 Եվ անդադրում տեղատարափն իրենց սուրսայր սըլաքների  
 Տըրոյացոց ըսովարաթիվ գումարտակներն էր խորտակում:  
 Տելամոնյանք այնտեղ իրենց ճարտարարվեստ ճոխ զենքերով  
 Կըովում էին պըղընձավառ Հեկտորի դեմ և տըրոյանց,  
 Իսկ լոկրացիք նըրանց ետև, թիկունք մըտած, թափում էին  
 Տըրոյացոց վըրա անդույ նետերի սուր տեղատարափ,  
 Որից նըրանք խուճապահար՝ թողին գուպարն ահեղագոռ:  
 730 Տըրոյացիք այդտեղ, անշուշտ, վըրաններից ու նավերից  
 Կըփախչեին ջարդուփըշուր դեպի Իլիոնը հողմակոծ,

Թե չըմտաներ Պուլիդամասն ու Հեկտորին այսպես չասեր.

- «Անհրճագլուխ ես դու, Հեկտոր, խորհուրդների և խըրատի:  
Եթե աստված տըվել է քեզ ուզվի հանճար և զորություն,  
Ուզում ես, որ խելքո՞վ էլ դու գերազանցես ուրիշների:  
Սակայն ամեն բան միասին կարելի չէ, որ ունենաս:  
Պարզևում է մեկին աստված ուզվի հանճար և զորություն,  
Մեկին տալիս ձիրք պարելու, և մյուսին քընար ու երգ,  
Մեկ ուրիշի շնորհում է մեծ Արամազդն ահեղագոչ
- 740 Իմաստություն ու միտք բարի, որից շատերն են օգտըվում.  
Քաղաքներ է ազատում նա և գիտե հարգն իր հանճարի:  
Բայց ես պիտի ասեմ քեզ այն, ինչ լավագույնն է թըվում ինձ:  
Շուրջըդ բոլոր բըռնել է գոռ պատերազմի կրակն ահա՛,  
Եվ մեծասիրտ տըրոյացիք, որոնք անցան պատնեշներից՝  
Կեսը կըռվից հեռու քաշված, կեսը կըռվում են տակավին  
Շատերի դեմ կանգնած քըչեր, նավերի շուրջ ցաք ու ցըրիվ:  
Արդ, դեպի ես նահանջելով՝ կանչիր բոլոր քաջերին՝ դու,  
Որ միասին հավաքվելով խորհուրդ անենք մենք մեր միջն,  
Թե նավերի վըրա արդյոք պե՞տք է գործենք մենք հարձակում,
- 750 (Եթե աստված մեզ հաղթություն կամենա տալ) թե՛ պետք է մեզ  
Նավատորմից ողջ ու առողջ թողնել իսկույն և հեռանալ:  
Վախենում եմ, որ աքայանք երեկվան ռիսն առնեն մեզնից,  
Քանզի այնտեղ, նավերի մեջ նըստել է մի ուզվիկ անհաղթ,  
Որ չեմ կարծում, թե ընդերկար նա ձեռընթափ մընա մարտից»:

Այսպես ասաց, և Հեկտորը հավան կացավ այդ խորհըրդին,  
Եվ իր կառքից գեմ ու զարդով գետին ցատկեց անմիջապես  
Ու դառնալով Պուլիդամին՝ խըրոխտաձայն այսպես՝ ասաց.

- «Պուլիդամա՛ս, առայժրմ դու քաջերի հետ մընա՛ այստեղ  
Իսկ ես գընամ աչք տամ կըռվին՝ տեսնեմ ինչպես են մարտընչում,  
760 Ու պատվերներ տալով նըրանց՝ վերադառնամ այստեղ նորից»:  
Այսպես ասաց ու սըլացավ նա ձյունապատ լեռան նըման.  
Ու գոռալով որոտաձայն անցավ արագ գընդից ի գունդ  
Տըրոյացոց և՛ դաշնակից կըռվողների փաղանգներով:  
Հեկտորի ձայնն սոնելու պես նըրանք մեկեն, միահամուռ  
Գըրոն տըվին այնտեղ, ուր քաջ Պուլիդամասն էր Պանթոյան.  
Իսկ Հեկտորը որոնում էր նախամարտիկ գընդերի՝ մեջ  
Դեիփոքին արիասիրտ և Հեյենոս թագավորին,  
Ադամասին և Հիրտակյան Ասիոսին, բայց ոչ մի տեղ  
Նա չըգըտավ նըրանց անխոց ու կենդանի կամ անկորուստ:  
770 Արգիացոց ձեռքով ոմանք ընկած էին նավերի մոտ,  
Եվ ոմանք էլ պարըսպից ներս՝ խոցված տեգով կամ նետահար:

Սակայն այնտեղ, արյունահեղ պատերազմի ձախակողմում  
Գըտավ Հեկտորն Ալեքսանդրին՝ այրը չըքնաղ Հեղինեի,  
Որ քաջերին սիրտ էր տալիս և կրովելու կոչ էր անում:  
Նըրա առաջ կանգնեց Հեկտորն ու դառնալից այսպես խոսեց.

«Դո՛ւ, դըժ-Պարիս, գեղեցկատես, կընամոյի և զըրավիչ,

Ո՛ր եմ, ասա՛, Դեիփորոսն ու Հելենոս հըզոր արքան,

Ո՛ր՝ Ադամասն ու Ասիոսը Հիրտայչան, Ոթրիոնեսն:

Հասել է արդ հիմնահատակ կործանման ժամն Իլիոնի.

780 Նըմանասպես, հասել է և քո սատակման ժամը դաժան»:

Ալեքսանդրոսն աստվածատիպ նըրան այսպես պատասխանեց.

«Իզո՛ւր ես դու ուզում, Հեկտոր, անմեղ մարդու ամբաստանել.

Որիչ անգամ թերևս ես ծուլացել եմ մարտի գործում,

Բայց ո՛չ այսօր, զի չըծրնեց մայրս ինձ երկշոտ յոտորովին:

Այն վայրկյանից, որ քաջերիդ մարտի տարսը նավերի մոտ,

Այստեղ կանգնած կըովում եմք մենք դանայեցոց դեմ անդադար:

Իսկ քաջերն այն, որոնց մասին հարց ես անում՝ կոտորվեցին.

Լոկ Դեիփորոսն ու Հելենոս արքան խիզախ պատերազմող

Մարտը թողին և հեռացան իրենց ձեռքից վիրավորված

790 Երկայնարուն հիզակներով, փըրկված՝ կամքովն Արամազդի:

Տա՛ր մեզ հիմա, ուր ուզում ես, ուր հոգիդ է հըրամայում,

Եվ մենք սիրով քո ետևից գըրոհ կըտանք միանամոտ

Ու չեմ կարծում, որ քաջություն և խըրախույս պակասի մեզ,

Կըմարողնչենք արիաբար, որքան որ մեր ուժն է զորում,

Իսկ ուժից վեր անհընար է կըովել, թեկուզ քաջ լինի մարդ»:

Իր եղբոր սիրտն այս խոսքերով սիրաշահեց դյուցազնը քաջ:

Ու գընացին երկու եղբայր այնտեղ, ուր մարտն էր սուկալի,

Որտեղ էին Պուլիդամասն ըսքանչելի ու Կեթրիոնն,

Որթեոսը, Փակեսը և Պոլիպեդեսն աստվածատիպ,

800 Եվ Պալմիսը, և Ասկանիոսն ու Հիպպոդնչան որդին Մորիս,

Որ արգավանդ Սականիից էին եկել մի օր առաջ.

Զըրվանչան Զևսն այն ժամանակ մըղեց նըրանց պատերազմի,

Եվ սըլացան ուժգին թափով, փոթորկաշունչ հողմի նըման,

Որ Արամազդ հոր որոտմամբ գըրոհում է դաշտի վըրա,

Եվ ահագին դըղըրդյունով ընկնելով ծով այնժաման,

Լըցնում է այն լեռնակուտակ ու փըրփրադեղ կոհակներով,

Որոնք անվերջ հըրում իրար, շառաչում են ահագնաձայն:

Այսպես ահա, տըրոյացիք պըղընձավառ, փայլակնացայտ

Հըրում էին մեկ-մյուսին և ընթանում դեպի առաջ:

810 Եվ Պրիամչան Հեկտորը բուռն Արեսի պես արյունառուշտ

Առաջնորդում էր բոլորին՝ բոլորածիր, պղղընձապատ  
Ու կարծրակուռ մորթով պատված ապարը մեծ առջև բրոնած,  
Եվ ճոճելով ճակտի վըրա սաղավարտը փայլակնացալս:  
Պաշտպանված մեծ իր վահանով՝ այս ու այնտեղ փորձում էր նա,  
Թե թըշնամի գընդերն արդյոք կընահանջե՞ն իր ուժի դեմ:  
Բայց երբեք էլ չըսասանեց աքայեցոց սըրտերը նա:  
Տեղամոնյան Այաքսը նախ առաջ գալով հըսկաչաքայլ՝  
Զայն արձակեց ու գըրգըրեց նըրան հանդուգն այս խոսքերով:  
«Մոտ արի, քա՛ջ, ի՞նչ էս այդպես աքայեցոց դու ան տայիս.

- 820 Պատերազմի գործերի մեջ մենք անհըմուտ և անգետ չենք,  
Այլ խըստագույն խարազանն է Արամազդի մեզ խեղճացնում:  
Անշուշտ քո միտքն այն է, որ մեր նավատորմիդը հըրդեմես,  
Սակայն մենք էլ ունենք ձեռքեր՝ պատրաստ միշտ այն պաշտպանելու:  
Անտարակույս ավելի շուտ պիտի ընկնի ոստանը ձեր՝  
Իլիոնը բարեբընակ ու կործանվի մեր ձեռքերով:  
Եվ էս, անհա՛, ասում եմ քեզ, թե հասել է ժամը արդեն,  
Որ դու, Հեկտոր՛ր, հպածական փախչես պիտի արտասալալից  
Աղաչելով Արամազդ հորն ու մյուս բոլոր աստվածներին,  
Որ նըծուզներդդ գեղարաշ առնեն թեև արրաթըրիչ
- 830 Բազեներից ավելի սուր՝ քեզ քո քաղաքն հասցընելու,  
Փոթորկելով դաշտը՝ իրենց սըմբակների հանած փոշով»:

Խոսքը նըրա բերանն էր դեռ, երբ որ նըրա գըլխավերև  
Ծախրեց արծիվ մի օդանեմ— որպես նըշան հաջողության,  
Եվ գոչեց գունդն աքայեցոց՝ այդ հըրաշքից քաջալերված:  
Եվ Այաքսին ըսքանչելի Հեկտորն այսպես պատասխանեց.

- «Այդ ինչե՞ր էս ասում, Այաքս, հոխորտամիտ, ունայնախոս:  
Ո՛ր էր, եթե էս ամեն օր լինեի մեծ Արամազդի  
Հըգոր որդին և նազելի Հերաչի ծնունդ, և երանի՞  
Մեծարվեի գերդ Աթենաս և Ապոլլոն՝ ինչպես այսօր,
- 840 Որ ճիշտ է, թե բերելու է արգիացոց գըլխին աղետ:  
Ծատերի հետ և դո՛ւ պիտի սատկես իսկույն, թե սիրտ անես  
Դեմ դընելու երկար տեգիս, որ մարմինըդ պիտ հոշոտի,  
Եվ քո մըսով ու քո ճարպով պիտ հազեցնես տըրոչացոց  
Շըններին դու, տապալվելով աքայեցոց նավերի մոտ»:

Այսպես առաց և իր գորքի գըրուխն անցած խաղաց առաջ,  
Ու ետևից գըրոճ տըլեց ամբոխն աղմուկ-աղաղակով:  
Մյուս կողմից էլ արգիացիք էին գոռում-գոչում ուժգին,  
Ըսպասելով արիաբար տըրոչացոց հարձակվելուն:  
Ու երկինք էր հասնում նըրանց գոռում-գոչյունն անագնաձայն:

# Ե ր գ Տ ա ս ն չ ո ր ս ե ր ո ր դ

## ԽԱՔԵՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄԱԶԴԻ ԴԵՄ

Լըսեց Նեստորն աղմուկն այդ մեծ, որ խըմում էր վըրանի մեջ,  
նս դառնալով Սակեայանին՝ այս սըրաթն խոսքերն սասաց.

«Ո՞ր է վսխճանն այս բոլորի, ասա՛, դյուցազըն Մաքալոնն,  
Քանի գընաց ուժեղացավ քաջամարտիկ կրովողների  
Գոռոմ-գոշյունն անեղածայն մեր գեղատափստ նավերի մոտ:  
Բայց դեռ նըստիր դու, բարեկամ, և կազդորիր քեզ գինիով,  
Մինչև որ ջուր կըտաքացնի գեղեցկաժամ Հեկամեդեն,  
Կըլըվանա արևաթաթավ թո վերջը խոր, իսկ ես գընամ  
Դեպ դիտանոց, որ ամեն բան տեսնեմ աչքով իմ սեփական»:

- 10 Այսպես ասաց և իր որդու՝ ձիամարտիկ Թրասիմեդի  
Արվեստակերտ վահանն առավ, որ շողշողում էր վըրանում.  
Զի Թրասիմեդն իր հոր վահանն էր վերցըրել և գընացել:  
Առավ ապա նիզակ մի մեծ պողընճասայր սուր սըրաթով  
Եվ վըրանից դուրս եկավ նա ու սուկալի պատկեր տեսավ:—  
Տըրոյացոց կողմից բոլոր աքալեցիք հալածական  
Խունճապահար և ամաբեկ ու կործանված սրարիսայ ու դուռ:  
Ինչպես երբ որ կոհակներով մըթագնում է ծովը անծայր,  
Որ նըշան է, թե ի մոտո գոռ փոթորիկ է պայթելու,  
Բայց տակավին չի տատանվում այս ու այն կողմ, հանդարտ է դեռ,
- 20 Մինչև իջնի Արամազդից երկարաշունչ բուռըն մի հողմ,  
Այսպես ծըփում էր ծերունու սիրուն այդ պահին երկընտրանքով՝  
Արագածի դանայեցոց բանա՞կն երթա, թե՞ ազգապետ  
Ազամենոն Ատրիդի մոտ, և Նեստորը վերջինն ընտրեց,  
Որտեղ նըրանք մարտընչելով ջարդում էին մեկ-մյուսին,  
Եվ շաչում էր նըրանց մարմնի շուրջը պատած պըղինձը կոռ՝  
Երկայնաբուն նիզակների և սըրերի հարվածներից:

- Դյուցաարճուհի թագավորներ՝ Ագամեմոնը Ատրիդյան,  
Դիոմեդեսն ու Ռիսուսն, որոնք խոցված էին պղնձով,  
Նավերից դուրս ելած իրենց՝ ծեր Նեստորին հանդիպեցին:
- 30 Նըրանք նավերն իրենց հեռու էին քաշել պատերազմից,  
Ծերմակ ծովի ափի վրա. առաջինները՝ հարթավայր,  
Որտեղ պատվարն էր կառուցված, զի ծովափը թեպետև լայն՝  
Անկարող էր տեղավորել ողջ նավատորմն իրեն վրա,  
Եվ զորքն անձուկ տարածության վրա պիտի նեղվեր սաստիկ:  
Դըրս համար շարել էին բոլոր նավերը կարգ առ կարգ  
Երկայնաձիգ ափի վրա՝ հրովանդանից մինչ հրովանդան:  
Եվ արդ, նըրանք կամենալով ռազմաճակատն հետագոտել,  
Գընում էին տըխտը սրտով, հենված իրենց միզակներին:  
Նեստորն այդտեղ հանկարծակի հանդիպելով արքաներին,  
40 Նըրանց սաստիկ վախ պատճառեց՝ դող հանելով սիրտը նըրանց:  
Մոտենալով վեճ ծերունուն Ատրիդ արքան թացականչեց.  
«Նեստոր՛, ծերըդ աստվածային, աքալեցոց՝ պարծանքըդ մեծ,  
Ո՛ւմ թողիդ դու արշունահեղ պատերազմն ու եկար այստեղ:  
Վախենում եմ, որ միգուցե Հեկտորն ասածն իր կատարի,  
Այն, որ տըրոյանց ատլանի մեջ նա ըսպառնաց հոխորտաբար,  
Թե նա պիտի ետ չըդառնա նավատորմից դեպի Իլյոն,  
Չաչրած նավերն արգիացոց և չըսպանած մեզ բոլորիս:  
Աչսպես էր նա ճամարտակում, և կատարվում է խոսքն անա՛:  
Ո՛վ աստվածներ, անա և մյուս պըղընձազեն աքալեցիք  
50 Աքիլլեսի պես իմ հանդեպ քեն պահելով իրենց սրտում՝  
Չեն կամենում կրովի մըտնել նավատորմի հետին կողմից»:  
Եվ գերեկյան Նեստոր ասպետն այսպես ասաց Ատրիդեսին.  
«Ծիշտ որ բոլորն այդպես եղավ, և մինչև իսկ որոտագոչ  
Ինքն Արամազդն անկարող է քանն ուրիշ կերպ տընօրինել:  
Քարոքանդվեց պատվարն անա, որի վրա և ունչ ունեինք,  
Թե կրլինի պաշտպան ամուր՝ մեր նավերի ու մեզ համար:  
Տըրոյացիք նավերի մոտ մարտ են մըղում համատորեն,  
Եվ չի կարող մարդ իմանալ, որքան էլ որ ուշք դրնի,  
Թե ո՞ր կողմից են խոճապում աքալեցիք տագնապայից.  
60 Կտորվում են, ու երկինքն է հասնում նըրանց զոռոցն անեղ:  
Բայց մենք խորհենք, բարեկամներ, թե վերջն ինչպե՛ս պիտի լինի,  
Խելքով գուցե մի քան անենք, կրովի մըտեք չեն ասում ձեզ,  
Որովհետև վիրավորին պատերազմել չի կարելի»:

Նորան այսպես պատասխանեց Ագամեմոնն արանց արքան.  
«Քանզի, Նեստոր, տըրոյացիք կըրվում են աչժմ նավերի մոտ,  
Եվ չօգնեցին մեզ ոչ փոսը, ոչ էլ սրաբիսպն անրակառույց,



- Որոնց վըրա այնքան քրրտինք և աշխատանք թափեցինք մենք,  
 Հույս դընելով նըրանց վըրա պաշտպանության իբր ապավեն,  
 Անտարակույս Արամազդի կամքն է ուրեմն, որ աքայանքս
- 70 Անփառունակ մահով կորչենք այստեղ՝ հեռու մեր Արգոսից:  
 Մի ժամանակ դանայեցոց գորավիզ էր Ջևար սիրով,  
 Այնինչ հիմա, տեսնում եմ, որ երջանկախառ աստվածներին  
 Հավասար փառք է ընծայում տըրոյացոց՝ մեզ մոռացած:  
 Բայց լըսեցեք իմ խոսքը դուք և համաձայն եղեք ինձ հետ,  
 Եկեք ծովին ամենից մոտ ցամաք քաշված նավերը մեր  
 Քըշենք բոլորն այծըմենթ ու գըրցենք ծով աստվածային  
 Եվ խարըսխենք այնտեղ ամուր, մինչև որ գա գիշերն ամման,  
 Ապա, եթե չըխանգարեն մեզ տըրոյանք, այնուհետև  
 Մընացած ողջ նավերն էլ մենք ծով կըհանենք ամբողջապես,
- 80 Ջի չարիքից փախչելն երբեք ամոթալի չէ գիշերով,  
 Լավ է փախչել, փըրկվել չարից, քան թե նըրա ձեռքը ընկնելք»:

- Խեթ նայելով նըրան այսպես ասաց Ոդիսը հանճարեղ.  
 «Այդ ի՞նչ խոսք էր, ո՛վ Ատրիդես, որ դուրս թըռավ քո բերանից.  
 Թըշվառակա՛ն, երանի թե լինեիր դու հրամանատար  
 Վա՛տ բանակի, և ոչ թե մեզ, որոնց տըվեց մեծն Արամազդ  
 Մինչև վերջը տանել բոլոր պատերազմները զըծընդակ՝  
 Երիտասարդ տարիներից մինչև խորին մեր ծերություն,  
 Մինչև ամենքս էլ ըսպատվենք ու վերջանանք բողբոլվին:  
 Այսպես ուրեմն ուզում ես դու թողնե՛լ տրոյանց ստանը մեծ,
- 90 Որի համար շատ տարիներ տառապում ենք բլուր ցավերով:  
 Լըռի՛ր, թող այդ խոսքըդ ուրիշ աքայեցու ականջ չընկնի,  
 Որպիսի խոսք իր բերանից դուրս չեր հանի և ոչ մի մարդ,  
 Որ խելամիտ խոսել գիտե, և որ մական ունի ձեռքին,  
 Ժողովրդի պես է և գորք ունի անթիվ իր ետնից:  
 Պարսավում եմ քեզ, Ատրիդե՛ս, այդ անխորհուրդ խոսքիդ համար,  
 Որ հըրաման ես տալիս դու ռազմի անեղ այս աղմուկում  
 Ծովը ձըզել գեղեցկատախտ նավերը մեր, որ աչդպիսով  
 Է՛լ ավելի գոհացում տաս տըրոյացոց գոռոզության,  
 Որոնք իրենց անտարակույս արդեն հաղթող են համարում,
- 100 Եվ վիճակվի մեզ չարաչար ոչընչացումն ամենաձանտ:  
 Նավերն հենց որ ծովը հանվեն, էլ չնն կըովի աքայեցիք,  
 Եվ փախուստից բացի ուրիշ քանի մասին չեն մըտածի,  
 Խորհուրդդ այնժամ, ո՛վ ազգապետ, սղետարեր կըլինի խիստ»:

Ազամեննոն արչան այնժամ նըրան այսպես պատասխանեց.  
 «Ո՛վ Ոդիսես, դու խոցեցիր սիրտըս քո խիստ կըշտամբանքով,

Սակայն ես չեմ հրրամայում, որ հակառակ իրենց կամքին  
Ծովը ձրգեն արայեցիք նավերն իրենց գեղեցկատախտ:  
Արդ, թող որ տա մի այլ խորհուրդ ավելի լավ, ով էլ լինի,  
Երիտասարդ թե ակոբ, և ես սիրով կրնդունեմ այն»:

- 110 Այն ժամանակ այսպես խոսեց Դիոնեդեան անեղագոռ.  
«Այդ մարդն այստեղ, ձեր մեջն է հեռոյ, և փրճարելու կարիք չըկա,  
Եթե միայն դուք ցանկանաք ականջ դրնել նրա խոսքին.  
Եվ թող ոչ ոք չարհամարհի խոսքըս՝ վերստ քարկանալով  
Այն պատճառով, որ ես ձեր մեջ կըրտտերագույնն եմ տարիքով,  
Բայց պարծենում եմ քաջագուն մի հոր զավակ լինելուս մեջ,  
Դուցազնական Տիդեոսի, որի շիրիմն է Թեբեում:  
Պորթեսը երեք որդի ծընեց, երեքն էլ անվամի,  
Որ ասրեցին Պլերոնում ու բարձրադիր Կալիդոնում,  
Արիստն ու Մելասը քաջ և երրորդը Ինես ասպետն՝  
120 Հորըս հայրը, որ մյուսներին գերազանցում էր քաջությամբ:  
Սա քննակվեց այնտեղ, իսկ հայրըս Արգոսում արտրական,  
Արամոզդի և մյուս բոլոր աստվածների կամքով անշուշտ:  
Ազրեւոսի աղջիկներից մեկին այնտեղ կին առավ նա,  
Եվ ասրում էր մի ճոխ տան մեջ, ուներ արտեր ցորենարեր,  
Դրոսխաւ-այգի ու խաշների բազում հոտեր ըստվարաթիվ,  
Եվ տեգի մեջ գերազանցում էր բովանդակ արայեցոց:  
Այս բոլորը ծանոթ եմ ձեզ, և գիտեք, որ ճիշտ եմ ասում,  
Ուստի և արդ ինձ վեհերոտ ու վատազգի համարելով՝  
Մի մերժեք դուք խոսքըս արդար և իմ խորհուրդը խելացի:  
130 Եկեք, թեպէտև վիրավոր՝ գրնանք դեպի գուպարը գոռ  
Եվ մեզ հեռու պահելով միշտ միզակներից ու նետերից,  
Որպէսզի հին վերքի վրրա մի նոր վերք էլ չավելացնենք,  
Խըրախուսենք ուրիշներին, որոնք ասաց այնպես խիզախ,  
Սակայն հիմա չեմ կամեւում կրոիվ մըղել թըշնամու դեմ»:

Այսպես ասաց, նըրանք սիրով ընդունեցին խոսքը նրա  
Եվ գրնացին՝ իրենց գըլոյս ունենալով Ատրիդեսին:  
Պոսէպոնը՝ երկրադըրորդ արքան հըզոր տեսավ նըրանց  
Եվ ծերունու կերպարանքով մոտենալով Ատրիդեսին,  
Բըռնեց նրա աջ ձեռքը նա և հորտորիչ խոսքեր ասաց.

- 140 «Ո՛վ Ատրիդես, այժմ արդեն ցընծում է սիրուն Աքիլլեսի,  
Տեսնելով ջարդն արայեցոց և փախուստը խունապահար,  
Որովհետև չունի իր մեջ նույնիսկ փոքր-ինչ ըզգոնություն:  
Բայց նա աչդպես պիտի կորչի ու վերջանա աստվածահար:  
Սակայն քո դեմ զայրացած չեմ աստվածները գերեջանիկ,

Եվ շատ շուտով տըրոյացոց պետերն իրենց բանակներով  
Պիտ մըրրրկեն դաշտը փոշով, և դու պիտի տեսնես նըրանց  
Փախուստն անարգ դէպի ոստան՝ վըրաններից ու նավերից»:

Այս ասելով գոռաց ուժգին ու դէպ ուզմի դաշտը վազեց.  
Եվ ինչպիսի անագնագոռ աղմուկ ասեղ ու աղաղակ,  
150 Որ կը հանեն պատերազմում ամենատաք կըռվի ժամին  
Ինը կամ տաս հազար մարդիկ էր միատեղ գոռան մեկեն՝  
Այդպիսի մեծ գոռոց էր, որ հանեց արքան երկրառատուսն,  
Ու ներշնչեց յուրաքանչյուր քաջամարտիկ արայեցու  
Անվերջ, անդու մարտընչելու համար նոր ուժ ու նոր կորով:

Իսկ ոսկեզամ Հերան նրաւած Ուիմպոսի վեճ քարձուներու՝  
Նայեց ներքև և ճանաչեց իր եղբորն ու տագերն իսկույն,  
Որ օգնում էր աշխուժորեն, օժանդակում արգիացոց  
Փառապարգև պատերազմում, ու ողջ հոգով ուրախացաւ:  
Աստվածունիսն տեսաւ նաև Արամազդին՝ իր ատելուն,  
160 Նըրաւած քարձըր, աղբյուրաշատ Իդա լեռան վեճ գազաթին:  
Ու միտք արաւ աչեղ Հերան, թե ի՞նչ ձևով կարողանա  
Ասպարակիր Արամազդի միտքը խաբել, նըրապորել,  
Եվ այս միջոցն ամենալավն ու խելացին թըվաց նըրան:—  
Հագնի բոլոր զարդերն իր ճոխ ու վեր կեճա գընա Իդա,  
Գուցե ցանկա Ջևըր իր հետ պառկել այնտեղ/ու սեր անել,  
Եվ թափելով նըրա վըրա հանգըստավետ քաղցըր մի քուն՝  
Նըրա ըզգաստ, արթուն մըտքին թըմբիր բերի առժամանակ:  
Վըճեց Հերան ու վեր կացաւ գընաց սենյակն իր վեհաշուք,  
Որը շինեց իր Հեփեստոս որդին ճարտար ու բազմարվեստ.  
170 Ծեմքին դըրեց նա հաստապինդ դըռներ՝ գաղտնի փականքներով,  
Որ չէր կարող իրենից գատ բանալ ուրիշ ոչ մի աստված:  
Հերան այնտեղ մըտաւ հապճեպ, փակեց դըռներն իր ետևից,  
Նախ ամբոստով անապական մաքրեց մարմինն իր տենչալի,  
Ապա օծելեց աստվածային պարարտ յողով անուշաբույր,  
Որի շարժելն Արամազդի սըղընձահիմն ասպարանքում  
Լըցնում էր ողջ երկինք-երկիրն անուշ հոտով զըվարթարար:  
Չըքնաղ մարմինն օժեղուց ետ, սանրելով իր մագերը ճոխ՝  
Խոպոպիկներ հյուսեց գողտրիկ՝ վայելչագեղ իր մատներով  
Աստվածային և հոտավետ անմահական իր գըլխի շուրջ:  
180 Հագաւ խըլան անուշահոտ, որը գործեց նըրա համար  
Աթենասը ճարտարարվեստ ու զարդարնց ժանայեներով,  
Եվ լանջագեղ կուրծքը պընդեց նա ճարմանդով մի ոսկեղեն,  
Հարլուրծույլան գեղապաւնու՛ն գոտին կապեց շըքեղ մեջքին

Եվ գեղածակ ականջների բըլթակներից կախեց գինդեր  
Արվեստակերտ, եռակընյա, շընորհաշուք ու շողշողուն,  
Գըցեց գըլխին վեհ դիցունիին շըղարշանուրք շըքեղ մի շող  
Դեռ նոր հյուսված, ճաճանչաւիալ արեգակի պես, ըսպիտակ  
Կապեց ոտքի ջինջ թաթերին պերճապաճույն մուլկեր մի զույգ:  
Եվ երբ այսպես պըճեց նա իր մարմինն ամեն զարդարանքով  
190 Առագաստից դուրս թըռավ շուտ ու կանչելով մոտն Աստղիկին,  
Աստվածներից ծածուկ՝ այսպես ասաց քընքույշ այդ դիցունիին.  
«Կանեն՝ս արդյոք դու ինձ համար, սիրուն դրստրիկ, ինչ որ ասեմ,  
Թե՛ գըլանաս կատարելու, բարկանալով դու ինձ վըրա,  
Զի դու տրոյանց ես գորսվիզ, իսկ ես ինքըս՝ արայեցոց»:

Եվ դուստրը մեծ Արամազդի՝ Աստղիկն այսպես պատասխանեց.  
«Ո՛վ մեծարո աստվածուհի, Հերա՛, դուստրդ մեծ Զըրվանի,  
Հայտնի՛ր միտքըդ, քո խոսքը ես կըկատարեմ սիրահոժար,  
Եթե միայն կարողանամ և կատարելն կարելի է»:

Եվ խորամանկ, պատկառելի Հերան այսպես ասաց նըրան.  
200 «Տուր ինձ հիմա սերն ու տարփանքն ամենահաղթ, որոնցով դու  
Նըվաճում ես բոլոր մարդկանց, ինչպես նաև աստվածներին,  
Գընում եմ ես հեռու, մինչև ծայրը երկրի ամենաբարձր՝  
Անմահների հայր Օվկիանին և Տեթիսին այցելության,  
Որոնք սիրով ինձ սընեցին ու հոգ տարան իրենց տան մեջ  
Վերցընելով ինձ Ռեայից, երբ գոռոզ Զևսը Զըրվանին  
Գըցեց երկրի և անբերրի ծովի խորքերը անհատակ:  
Տեսության եմ գընում նըրանց ու վերջ տալու դեռ անալարտ  
Նըրանց միջև ծագած վեճին, զի վաղուց է, որ գըծտրված՝  
Բաժանված են մընում սիրուց և անկողնուց ամուսնական:  
210 Պառակտումը այդպես մի հեղ բույն է գըրել նըրանց սըրտում,  
Եվ եթե ես կարողանամ նըրանց սըրտերն ողորբելով  
Նըրանց նորից դարձնել դեպի անկողինը ամուսնական՝  
Պիտի մընամ նըրանց համար միշտ սիրելի և մեծարգո»:

Եվ ժըպտասեր Աստղիկն այսպես պատասխանեց աստվածուհուն.  
«Խոսքըդ մերժել ես չեմ կարող, և օրենք չէ առհասարակ,  
Որովհետև նընչում ես դու ամենագոր Զևսի գըրկում»:

Այս ասելով նա իր կըրծքից քանդեց գոտին ասնղնագործ  
Նըկարագեղ ու նըրբահյուս, ուր հեշտանքներն են համորեն,  
Այնտեղ եմ սերն ու տարփանքը ու շըշուկներն ամուսնական,  
220 Կիրքը կիզիչ, որ իմաստուն մարդկանց խելքն է տանում անգամ,

Հանձնեց գոտին այդ՝ Հերային և այս խոսքերն ասաց նրան.

«Ահա՛ գոտին իմ նըկարեն, առ ծոցըդ դիր, չըքնա՛ղ Հերա, Որ ամեն բան ունի իր մեջ. չեմ կարծում որ դու այնտեղից Ոլիմպ դառնաս՝ չըկատարած այն ինչ որ ինքդ ես մըտածում»:

Այսպես ասաց, և սըրտախնդ ժըպտաց Հերան լուսածըդի, Եվ ժըպտալով՝ կամարն առավ ու դրրեց ծոցն անմիջապես: Աստղիկը՝ դուստրն Արամազդի, ապարանքն իր գընաց ընդփույթ:

- 230 Հերան թողեց Ոլիմպոսի կատարն ու վար սըլանալով Անցավ արագ Պիերիան ու Եմաթյան հանգըստավետ, Եվ ձիավոր թըրակացոց ձյունապըսակ վեա լեռների Գագաթներից, առանց գողտրիկ ոտքերն երկրին կըպընկու, Ցած իջնելով Աթոս լեռից՝ իջավ ծովը կոհակավետ Եվ Թոասի աստվածային Լեմնոս քաղաքն նկավ հասավ Ու հանդիպեց Քընին այնտեղ, մահվան եղբորը հարագատ Եվ բրոնելով նրա ձեռքից՝ տըվեց անունն, այսպես ասաց.

«Քո՛ւն, թագավոր դու համորեն աստվածների ու ողջ մարդկանց, Լըսեցիր ինձ դու մի անգամ, խընդրեմ, լըսիր նաև հիմա, Եվ ես քեզնից ընդհալիտյան շընորհակալ պիտի լինեմ:

- 240 Թարթիչների տակ թըմրեցրու զվարթ աչքերն Արամազդի Այն ժամանակ, երբ պիրատարի պառկեմ նրա գըրկի մեջ ես: Որպես պարզև կըտամ ես քեզ ոսկյա մի գահ հավերժ անեղծ, Որ նըկարիչ կաղ իմ որդին Հեփեստոսն է պատրաստելու Մարտարապես և պատվանդան պիտի դընի ոտների մոտ, Որի վըրա պիտ հանգչեցնես մաքուր ոտքերդ խընջույքներում»:

Եվ Քունն անուշ ու քընքշածայն նրան այսպես պատասխանեց.

«Վըսեմաշո՛ւք աստվածուհի, մեծ Ջըրվանի դուստրըդ, Հերա, Ուրիշ ամեն աստըծու ես կարողանում եմ քընացնել, Քընացնում եմ նույնիսկ շըրերն հորձանահոս Օվկիան գետի, Որը ծընող հայր է բոլոր արարածոց առհասարակ,

- 250 Սակայն երբե՛ք ես Ջըրվանյան Արամազդին չեմ մոտենա, Եվ թըմբիր չեմ բերի վըրան առանց նրա հըրամանի: Ես մի անգամ քեզ լըսելու համար արդեն խելքի նկա, Այդ այն օրն էր, երբ մեծափառ որդին հըզոր Արամազդի Տրոյանց քաղաքն ավերելով՝ նավով մեկնեց Իլիոնից: Ես քընացրի միտքը արթուն ասպարակիր Արամազդի Քաղցր ու հեշտին մի թըմրությանը, մինչ դու սըրտիդ մեջ, խորամա՛լ Երկնում էիր դավադրաբար Հերակլեսի դեմ նեցոյություն: Բարձրացնելով անեղաշունչ հողմ ու մըրրիկ ծովի վըրա, Տայար նըրան ու հանեցիր Կովը շըքեղ ու շինանիստ,

260 Հենու բոլոր ընկերներից. իսկ Արամազդն արթնանալով՝  
Տակնովըրա արավ ամբողջ Ոլիմպոսն ու աստվածներին,  
Եվ մյուս բոլոր աստվածներից ավելի ի՛նձ էր հետամուտ:  
Բըռնելով ինձ կընեսեր նա ծովը անտակ անտարակույս,  
Եթե հանկարծ վըրա հասած անմահ Գիշերն ինձ չազատեր,  
Որ տիրողն է բոլոր մարդկանց ու համորեն աստվածներին:  
Ես Գիշերի գիրկը ընկա. Ջևաջ թեպետև զայրացած,  
Բայց ակնածեց սուր Գիշերին դըծընդակ գործ կատարելուց:  
Եվ արդ, դարձյա՛լ անկարելին ես պահանջում դու ինձանցից»:

Կըրկին անգամ աչեղ Հերան նըրան աչապես պատասխանեց.

270 «Ի՞զո՛ւր ես, Քուն, մըտաքերում դու այդ բաներն ու վախենում:  
Ի՞նչ ես կարծում, մըտածում ես, որ Արամազդն անեղազո՛չ  
Այն աստիճան պաշտպան լինի տըրոյացոց, որ բարկանա՞,  
Ինչպես որ նա հույժ բարկացավ իր Հերակլես որդու համար:  
Ծընորհներից մանկագույնին քեզ որպես կին պիտի տամ ես,  
Գեղաչըքնաղ Պասիթենն քեզ ամուսին պիտի կոչվի,  
Որին այնպես գիշեր ու գօր կարոտագին տենչում ես դու»:

Ասաց, և Քունն ուրախացած նըրան աչապես պատասխանեց.

«Երդվի՛ր հապա Ստիքիական անդըրժեկի ջըրերով արդ,  
Քո մեկ ձեռքով բըռնած երկիրն ամենաքեր և մյուսով  
280 Լուսածիծաղ ծովը, որ մեզ վըկա լինեն Ջըրվանի շուրջ  
Եղուլ բոլոր աստվածները, թե պիտի տաս ինձ կընության  
Ծընորհներից մանկագույնին՝ Պասիթեին ամենագեղ,  
Որին այնպես գիշեր ու գօր տենչում եմ ես հուր տարփանքով»:

Աչապես ասաց. լըսեց Հերա լուսածըղի աստվածուհին,  
Երդվեց նըրա ուզածի պես, իբրև վըկա կանչելով ողջ  
Ստորերկրյա աստվածներին, որոնք Տիտան են հորջորջվում:  
Եվ երբ երդումն իր ավարտեց, նըրանք թողին անմիջապես  
Իմբրոս, Լեմնոս քաղաքները և գընացին միգով պատված  
Եվ բյուրակնյա Իդայի մոտ, որ մայրն է ողջ գազանների,

290 Լեկտովն հասան արագապես, ապա ծովից ցամաք ելած  
Գընում էին, և անտառի ծառերն ամեն բարձրակատար  
Սըփոում էին սոսափն իրենց նըրանց թեթև ոտների տակ:  
Ու կանգ առավ Քունը այնտեղ, որ չերևա Արամազդին:  
Իդե լեռան վըրա այնժամ կար եղևնի մի բարձրաբուն,  
Որի ճյուղերն երկայնուղեջ մինչև երկինք էին հասնում.  
Ելավ նըստեց նըրա վըրա, սաղարթախիտ ճյուղերի մեջ

Թաքնըվելով այն քաջաձայն թրոշունի պես, որին բոլոր  
Դիք Բըվիհանկ են անվանում, մահկանացու մարդիկ՝ Կասկամ:

Իսկ աչագեղ Հերան հասպնեպ էլավ կատարն ամենաբերձ՝  
300 Գարգաբոնը, և Արամազդն ամպրոպային տեսավ նրան:  
Տեսավ թե չէ, սերը գերեց նրա ըզզոն միտքն ու հոգին,  
Ինչպես այնօր, երբ երկուսով, ծընողներից իրենց թաքուն  
Առաջին հեղ իրար գրկած նույն անկողնի մեջ միացան:  
Եվ ընդառաջ գալով կընոջն՝ աստվածահայրն այսպես ասաց.  
«Հերա՛, ինչո՛ւ Ուխմպոսից ելել ես դու եկել այստեղ,  
Բ՛ար ես գընում, կառք էլ չունես և նրժույզներ, որ նրստեիր»:

Եվ նեգ սըրտով վեհապատիվ Հերան այսպես ասաց նրան.  
«Գընում եմ ես արգասավոր Երկրի ծաշք այցելության  
Աստվածների հայր Օվկիանին և Տիթեսին աստվածամայր,  
310 Որոնք սիրով ինձ սընեցին իմ մանկության տարիներում:  
Տեսության եմ գընում նրանց ու վերջ տալու դեռ անավարտ  
Նըրանց միջև եղած վեճին, զի վաղուց է, որ գըծտըված՝  
Բաժանված եմ մընում սիրուց և անկողնուց ամուսնական,  
Պատակառամը մըտել նրանց սիրտը և էլ դուրս չի գալիս:  
Թողի ձիերքս բյուրակնյա Իդա լեռան ըստորոտում,  
Ռյունք պիտի ինձ թրոցընեն, տանեն ծովով ու ցամաքով:  
Ուխմպոսից եկա այստեղ, որ այդ մասին ասեմ ես քեզ,  
Որովհետև վըրաս հետո կարող էիր դու բարկանալ,  
Եթե ստանց քեզ ասելու վեր կենայի ու գընայի»:

320 Եվ Արամազդն ամպրոպային նրան այսպես պատասխանեց.  
«Հետո կերթաս Օվկիանն, Հերա՛, իսկ այժմ արի պառկենք այստեղ  
Ու լ՛սցե՛լենք սերը անուշ, քանզի ոչ մի աստվածուհու  
Եվ երկրային ոչ մի կընոջ սերը այնպես ինձ չըվառեց,  
Չըողողեց կուրծքս երբեք, չընըվանեց հոգին իմ վես՝  
Ո՛չ Իքսիոնի կինը, որին ցանկանալով մըտա մի օր,  
Որը ծընեց Պիրիթոսին աստվածների պես իմաստուն.  
Ո՛չ գեղեցկուտըն Դանայեն՝ Ակրիեսի դուստրը չըքնաղ,  
Որը ծընեց Պերսետոսին՝ բոլոր մարդկանց մեջ անվանի.  
Ո՛չ մեծանուն և հըռչակված Փիցիքսի դուստրը մանկամարդ,  
330 Որ Միևուվսին ծընեց և պերճ Ռադամանդին աստվածակերպ.  
Ո՛չ Սեմելեն, ո՛չ Ալկմենեն, որոնց մըտա Թեբեի մեջ.  
Եվ Ալկմենեն աշխարհ բերեց Հերակլեսին ուժգընասիրտ,  
Իսկ Սեմելեն՝ Դիոնիսին— ի խընդություն մահկանացոց.  
Ո՛չ Դեմեդրեն գեղազանգուր, շըքեղ բամբիջն ու գերափառ

Լեստովնը վեհ,— և ոչ մեկին չեմ ցանկացել երբևիցե,  
Եվ ոչ էլ քեզ մի այլ անգամ՝ այնպիսի վատ, կիզիչ կորոքով,  
Ինչպես որ արդ քե՛զ եմ տեճչում բրորնկլիւած հոր մի ցանկությամբ»:

Եվ խորամանկ ու մեծարգո Հերան այսպես ասաց Ջևսին.  
«Սարսափելի՛ դու Ջորվանյան, այդ ի՞նչպիսի խոսք ես ասում:  
340 Ինչպե՞ս ես դու ուզում պատկել ինձ հետ և սեր անել այստեղ՝  
Իդա լեռան այս բարձունքում, ուր ամեն բան ակներև է:  
Աստվածներից մեկը հանկարծ էթե այստեղ մեզ նրկատի  
Գրրկած իրար ու տեղնուտեղ լուր տա բոլոր աստվածներին,  
Այն ծամանակ, քալ լիցի թե, վեր կեճալով այդ անկողնից  
Ապարանքըդ վերադառնամ, զի խայտառակ բան է սաստիկ:  
Սակայն էթե դու իսկապես ցանկանում ես պատկել ինձ հետ,  
Սուգաստի սենյակ ունես, որ Հեփեսոսու որդիդ շինեց  
Եվ հաստապիճդ դրոներ դրրավ շեմքի վրրա. գրճանք այնտեղ  
Ջուգավորվենք իրար գրրկած, էթե իրոք տարփում ես ինձ»:

350 Եվ Արամազդն ամպրոպային նրբան այսպես պատասխանեց.  
«Մի՛ վախենար, Հերա՛, ոչ ոք աստվածներից ու մարդկանցից  
Մեզ չի՛ կարող տեսնել այստեղ. ոսկյա ամպով մի անթափանց  
Այնպես պիտի ծածկեմ ես քեզ, որ արևն էլ մեզ չըտեսնի,  
Որի շողերն ամենուրեք թափանցում են արագապես»:

Այսպես ասաց և Ջորվանի որդին գրրկեց իր ամուսնուն.  
Եվ նրանց տակ ծընեց երկիրն աստվածեղեն ծաղկաբույսեր,  
Եղջերավույտ ցողաթաթավ, քրրքում, հորուտ նրբաթերթիկ,  
Որոնք նրբանց պահում էին երկրից վերև, էթերի մեջ:  
Այնտեղ նրբանց մեջ պատկեցին, պատված ամպով մի ոսկեղեն,  
360 Որ ցողում էր նրբանց վրրա գրվարթարար շաղ, շիթ առ շիթ:

Նրճչում էր Հայրն այսպես խաղաղ՝ Գարգարոնում բարձրակատար,  
Հեշտապարզև քաղցրր քընով և գրրկապիճդ իր կընոջ հետ:  
Իսկ Քունն անուշ սուրաց դեպի նավատորմիդն աքալեցոց  
Լուր տանելու Երկրասասան աշխարհակալ թագավորին.  
Եվ կանգնելով նրրա կողքին այս սրրաթև խոսքերն ասաց.  
«Օ՛հ, Պոսեյդո՛ն, շուտ օգնության հասիր բոլոր դանայեցոց,  
Եվ տուր փոքր-ինչ հաջողություն, քանի Ջևսը քընած է դեռ:  
Թափել եմ ես նրրա վրրա քաղցրր թըմթիթ մի քընաբեր,  
Եվ գրրկապիճդ Հերալի հետ քուն է մըտել Գարգարոնում»:



370 Այսպէս ասաց ու սրլացավ դեպ մյուս մարդիկ ազնըվաշուք,  
 Հորդորելով Պոսելդոնին սատարելու աքայեցոց,  
 Որ սրլացավ հըսկայաքայլ դեպի շարքերն առաջամարտ  
 Ու խըրայտոյս կարդաց նըրանց սըրաթըրիչ այս խոսքերով.  
 «Արգիացի՛ք, թողնե՛՛նք դարձյալ, որ Պրիամյան Հէկտորն հաղթի,  
 Եվ տիրանա մեր նավերին ու վաստակի փառք ու պարծանք:  
 Հէկտորն այդպէս խըրոխտում է, որովհետև Աքիլլը քաջ  
 Քինով լըցված մըխում է դեռ անգործ նըստած նավերի մոտ.  
 Մակայն նըրա օգնոթյանը մենք այնքան էլ չենք կարոտի,  
 Եթէ թիկունք կանգնենք իրար ու կըռվի մեջ իրար օգնենք:  
 380 Լըսեք, ինչ որ ասում եմ ձեզ, և անսացեք իմ ասածին.  
 Բանակի մեջ եղած ընտիր վահանները մենք վերցընենք,  
 Ու ծածկենք մեր գըլուխները փայակնացայտ կորդակներով  
 Եվ առնելով երկայնաբուն մեկ-մեկ նիզակ գըրոն գործենք:  
 Կառաջնորդեմ ես ինքքս ձեզ, և չեմ կարծում, թէ Պրիամյան  
 Հէկտորը մեզ կարողանա դիմադրել ողջ իր գըրոթյամբ:  
 Հիմա, ով որ քաջ է, սակայն փոքըր վահան ունի ուսին,  
 Թուլաւըրտին թող որ տա այն, և ինքն առնի հուծկու վահան»:

Այսպէս ասաց, ու բոլորը հավան եղան այդ խորհըրդին:  
 Եվ անհապառ, թագավորներն իրենք թեպետև վիրավոր՝  
 390 Տիդյանը քաջ և Ռիսևան, Ագամեմնոն արանց արքան  
 Փործի անցան եռանդագին ու շըրջելով գընդից ի գունդ  
 Փոխանակել էին տալիս արիսական գենքերն իրար:  
 Հագնում էր քաջն ընտիր գենքեր, վատը տալիս էր տըկարին:  
 Եվ երբ փայլուն պըղինձներով շուրջպատեցին մարմինն իրենց  
 Առաջ անցան միահամուտ, և տանում էր նըրանց անեղ  
 Պոսելդոնը՝ ձեռքում բըռնած երկար մի սուր սարսափելի,  
 Որը, սակայն, թույլ չէր տըրվում գործածելու պատերազմում,  
 Այլ սուկ սարսափ էր տարածում, ըստիպելով ետ ընկըրկել:

Մյուս կողմից էլ Հէկտորն էր վեհ կարգավորում տըրոյացոց:  
 400 Եվ երկուսով արծարծեցին այնտեղ մի գոռ ճակատամարտ—  
 Պոսելդոնը կապուտավարս և Հէկտորը խարտիշահեր՝  
 Մեկը տըրոյանց, մյուսն աքայանց մարտահրավեր և գորավիզ:  
 Ետում էր ծովն արգիական վըրանների, նավերի շուրջ.  
 Ու բախվեցին նըրանք իրար ամբոխասատ աղաղակով:  
 Երբե՛ք այնպէս չեն շառաշում այիքները դեպի ցամաք  
 Բորեափ շընչով քըշված անդընդախոր ծովի վըրա.  
 Երբե՛ք այնպէս չի ճարճատում բոցաբորբոք կըրակը բարկ,  
 Երբ հըրդեհվում է ծառախիտ անտառը թալ լեռնալանջին.

Երբե՛ք այնպես չի մըռընչում հողմը իր ողջ մղեգնությամբ  
410 Երկայնավարս կաղնիների ըսովերախիտ անտառի մեջ,  
Ինչպէս աղմուկն ահագնալոր՝ աքայեցոց և տըրոյանց,  
Երբ գոռալով որոտաձայն իրար վըրա հարձակվեցին:

Շըքեղանոյս Հեկտորը նախ նետեց Գիզակն իր Այաքսին,  
Որ կանգնած էր նըրա դիմաց. և հարվածը չըվըրիպեց,  
Զարկեց կըրծքի ճիշտ այնտեղին, ուր գոտիներ կային երկու՝  
Մեկն հաստաբետտ իր վահանի, մյուսը սըրիհն արծաթազամ,  
Որոնք նըրա մարմինը գիրգ պահպանեցին այդ հարվածից:  
Ու գայրացավ Հեկտորը խիստ, որ տեգն իզուր թըռավ ձեռքից,  
Եվ սարսափած ետ ընկըրկեց. Այաքսն այնժամ առավ մի քար,

420 Այն քարերից, որ նավերին մույթ ու նեցուկ էին դընում  
Եվ գըրտում կըռվողների ոտքի առաջ որպես արգելք:  
Այդ քարերից մեկը առավ, տարավ բերավ ու շըպըրտեց:  
Քարը գընաց հըսկայական հոյի նըման պըտըտվելով  
Եվ վահանի շուրթից դիպավ պարանոցին մոտիկ՝ կըրծքին:  
Ինչպէս որ հայր Արամազդի շանթի զարկից՝ արմատախիլ  
Կընկնի կաղնի՝ անտանելի ծըծըմբահոտ արձակելով,  
Եվ չի կարող այդ պատկերը տեսնող մարդու սիրտը տոկալ,  
Զի ահավոր է քարկանայթ կայծակն ահեղ Արամազդի,—  
Այդպէս իսկույն փոշեթավալ գետին ընկավ Հեկտորը քաջ:

430 Նիզակը դուրս թըռավ ձեռքից, ընկան վահան և սաղավարտ,  
Եվ մեծաձայն շատաչեցին պըղընձազարդ գեներն իր շուրջ:  
Ահագնագոչ աղաղակով գըրոհեցին աքայեցիք,  
Կամենալով քաջ տալ քաջին և իրենց հետ տանել նըրան,  
Տեղալով սուր սըլաքների և նետերի տեղատարափ:  
Սակայն ոչ ոք չըկարեցավ նետահարել և կամ խոցել  
Դյուցազունին, որովհետև շուրջպատեցին նըրան իսկույն  
Պուլիդամասն ու Էնիասն, Ագեևորը աստվածատիպ  
Եվ լիկացոց պետ Սարպեդոնն ու Գլավկոսն ըսքանչելի.  
Եվ այլ քաջեր չըթողեցին նըրան անտեր ու անպաշտպան,  
440 Այլ ասպարներն առաջ քըռնած՝ պաշտպանեցին իրենց քաջին:  
Վերցընելով ձեռքի վըրա՝ ընկերները տարան նըրան,  
Դուրս հանեցին կըռվի վայրից և ձիերին հասցընելով  
Կառքը գըրին ու դառնապէս հեծեծելով տարան ոստան:

Բայց երբ հասան հորձանահոս Քըսանթոսին գեղավըտակ,  
Որին ծընեց Զևսը անմահ, տըրոյացիք այն ժամանակ  
Քաջին կառքից ցած առնելով, շուր ցանեցին նըրա վըրա:  
Ուշքը վըրան եկավ իսկույն, բացեց աչքերն ու նայեց շուրջ,

Ու ծընկնէրի վըրա չոքած՝ փըսխեց արյուն սևաթորմի  
Եվ թիկունքի վըրա նորից գըլորվելով՝ գետին ընկավ:  
450 Իջավ գիշեր մի սևաթուր և աչքերը ծածկեց նըրա.  
Կըրծքին իջած հարվածն ուժգին այրում էր դեռ սիրտը քաջի:

Արգիացիք, երբ Հեկտորի հեռանալը տեսան, իսկույն  
Տըրոյացոց վըրա ընկան մարտ մըղելով ամենորեն:  
Նախ, բոլորից առաջ ընկած, ոստնեց Այաքսը Ոյիլյան  
Եվ սուր տեգով վիրավորեց Ենոփսյան քաջ Սատնիոսին,  
Որին ծընեց հավերժահարս Նեխսն անքիծ Սատնիոսի  
Ջըրերի մոտ՝ հըղիացած այնտեղ Ենոփս տավարածից:  
Ոյիլյանը նիզակազեն մոտիկ գալով Սատնիոսին՝  
Ջարկեց նըրա սընակուշտին, և նա մեջքի վըրա ընկավ,  
460 Եվ նըրա շուրջ բորբոքվեցին կատաղի մարտ մի երկուստեք:  
Պուլիդամասը Պանթոյան՝ վըրեժխընդիր ոգով վառված՝  
Երկար աշտեն իր ճոճելով զարկեց որդուն Արեյիկի՝  
Պրոթեկնորին, և աջ ուսը ծակեց անցավ տեգը սուրսայր.  
Եվ նա գետին տապալվելով՝ ագուռներով հողը չանգոեց:  
Պուլիդամասն իր հաղթությամբ խըրոխտացած՝ զոչեց ուժգին.  
«Ես չեմ կարծում, թե մեծասիրտ Պանթոյանին հուժկու քազկից  
Արձակված սուր սըլաքն իզուր և ընդունայն անցած լինի,  
Այլ անկասկած մի աքայիկ իր մարմնի մեջ այն ընդունեց,  
Որին որպէս ցուպի հեճված՝ պիտի դըժոխքն իջնի շուտով»:

470 Այսպէս ասաց, և խըրոխտանքն այդ ցավեցրեց աքայեցոց,  
Եվ մանավանդ Տելամոնյան Այաքսի սիրտը փոթորկեց,  
Որովհետև Պրոթեկնորն ընկավ նըրա ոստների մոտ:  
Պուլիդամասն ընկըրկելու վըրա էր, որ Այաքսն ուժգին  
Նետեց աշտեն իր շողշողուն, քայց ոստյունով մի շեղակի  
Պուլիդամասն իրեն փըրկեց օրհասաբեր այդ հարվածից,  
Որն ընդունեց Արքիլոքոս Անտեկոյանն արիասիրտ,  
Քանզի վերուստ աստվածները նըրան էին մահ սահմանել:  
Ջարկեց նըրա վերջին ողին, որ գողում է գլուխն ու վիզն,  
Ու կըտրելով ջըղերը գույգ՝ սըրունքներից ու ծընկներից  
480 Ավելի շուտ՝ թավազըլոր, նըրա գըլուխն ընկավ գետին:  
Եվ իր հերթին հոխորտալով՝ այսպէս ասաց Այաքսը քաջ.  
«Լավ մըտիկ տուր, Պուլիդամաս, և նըշմարիտն ասա դու ինձ,  
Պրոթեկնորին իբր արժանի հատուցում չե՞ս համարում դու  
Մահն այս մարդու, որն արդարև չէ աննշան վատագարմիկ,  
Այլ հարազատ եղբայրն է նա ձիամարտիկ Անտեկորի  
Կամ թե որդին, քանզի զարմով նըրան այնչափ նըման էր նա»:

Այսպես ասաց, ու կրկին ինքնուրույն տրոջացոց:  
Ակամասը վրրա հասավ պաշտպանելու համար եղբորն  
Ու տեղնուտեղ տիգահարեց Պրոմաքոս Բիովտացուն,  
490 Որն իր եղբոր ոտքից բրնձած քարշ էր տալիս կողոպտելու,  
Ու հաղթությամբ խորոխտապանձ՝ Ակամասը բացականչեց.  
«Արգիացի՛ նետամուկներ, ըսպառնալու սովոր դուք միշտ.  
Տասապանքն ու ցավը անհուն միայն մենք չէ, որ պիտ կըրենք,  
Այլ մերթընդմերթ և դո՛ւք պիտի ալապես մահվան բաժին դառնաք:  
Տեսեք, ինչպե՛ս նրնջում է ձեր Պրոմաքոսն իմ աշտեով,  
Որ չըմբնար եղբորս մահը անհատուցում և անվրեժ:  
Այսպես անա՛ յուրաքանչյուր ոք ուզում է տանը թողնել  
Մի մերձավոր և հարազատ եղբայր, որ իր վըրեժն առնի»:

Այսպես ասաց, և խորոխտանքն՝ այդ ցավ ազդեց արգիացոց,  
500 Եվ մանավանդ աստիկ հուզեց սիրտը արի Պենելեի,  
Որ խոյացավ նրա վրրա, բայց Ակամասն ընկրկեց ետ,  
Զրդիմացավ Պենելեոս թագավորի այդ հարձակման,  
Եվ նա զարկեց Իլիոնեսին, որը որդին էր Փորբասի,  
Որին Հերմեսն ամենից շատ էր սիրում ողջ տըրոյանց մեջ,  
Եվ արել էր նրան ըստվար հոտերի տեր ու մեծատուն.  
Իլիոնեսը միամորիկ նրա որդին էր մինունար:  
Պենելեոսը հարվածեց հոնքի տակից ակնակապճին,  
Աչքի գունդը դուրս թըռցրեց. արլաքն անցավ աչքի միջով  
Ու ծոծրակից ելավ թափով, և նա նրստեց բազկատարած:  
510 Պենելեոսն իսկույն քաշեց վաղակավոր սուրն իր անեղ,  
Վիզը կըտրեց և գըլուխը կորդակի հետ զըցեց գետին.  
Իսկ հաստաբետս գեղարդը դեռ մընացել էր ակնակապճում:  
Պենելեոսը խաշխաշի պես գըլուխը այդ ձեռքում բրնձած՝  
Դառնալով դեպ տըրոյացիք՝ այսպես գոռաց հոխորտաբար.  
«Դե՛հ, զընացեք, տըրոյացիք, և քաշափառ Իլիոնեսի  
Միրելի հորն ու մորն ասեք, որ ողբ ու կոծ անեն տան մեջ,  
Քանզի կինը այսուհետև՝ Ալգենոբյան Պրոմաքին  
Պիտ չըսպասի էրկան դարձին ու խընդասիրտ չընդառաջի,  
Երբ աքայանքս մեր նավերով մեկնենք մի օր Տըրոյայից»:

520 Այսպես ասաց, և բոլորի ոսկորները սարսըռացին,  
Եվ ամեն ոք մըտածում էր՝ ինչպե՛ս գըլուխն իր ազատի:  
Արդ, օգնեցեք ինձ ասելու, ոլիմպաբնակ ո՛վ Մուսաներ,  
Թե աքայանց մարտիկներից, այդ դըժընդակ պատերազմում,  
Ո՞վ առաջինն հախըշտակեց կողոպուտներ արյունազանգ,  
Երբ շուռ տըլեց կըրիվն անեղ Պոսելոնը երկրասասան:

Տելամոնյան Այաքսը նախ վիրավորեց Հիրտիոսին՝  
Գիրդաւայանին— ուժգընասիրտ զորավարին քաջ միասցոց.  
Անտիլոքոսը կողոպտեց Մերմերոսին ու Փալկեսին,  
Իսկ Մերիոնէսը ըսպանեց Հիպպոտիոնին և Մորիսին.  
530 Չարկեց Տևկրոսն ու կողոպտեց Պերփիդեսին, Պրոթովնին.  
Եվ Ատրիդեսն՝ ազգաց հովիվ Հիպերնորին տիգահարեց  
Ու խոցելով կողքը նըրա՝ առիքները խստնեց իրար,  
Եվ լայն բացված նըրա վերքից հոգին թըռավ անմիջապես,  
Պարուրելով աչքերն ընդմիշտ մուօ ու մուայլ մի գիշերով.  
Իսկ Ոլիլյան Այաքսը ծիր շատ-շատերի հոգին խըլեց,  
Քանզի չըկար նըրա նըման քաջասըրունք ուրիշ ոչ ոք  
Փախչողներին հալածելիս, երբ Չևսը ահ ազդեր նըրանց:

# Ե ր գ Տ ա ս ն հ ի ն գ ե ր ո ր դ

## ՀԱԼԱԾՈՒՄՆ ՆԱՎԵՐԻՑ

Փախչող տրոյանք անց կենալով շերտափակից ու խոր փոսից,  
Որտեղ շատերն աքալեցոց ձեռքով ընկան գետնատարած,  
Նահանջեցին դեպի կառքերն՝ ահաբեկված ու դալկադեմ:  
Իսկ Արամազդն, որ Իդայի բարձրը ծայրին քրճած էր խոր  
Հերային իր գիրկը առած, զարթնեց քրճից և նըկատեց,  
Որ տրոյանց ետևն ընկած հալածում են աքալեցիք,  
Որոնց մեջ նա տեսավ հըզոր թագապաճույճ Գոսեյդոնին  
Եվ Հեկտորին՝ ընկած դաշտում, ընկերներով շրջապատված:  
Հևում էր նա ուշագրնաց, և արյուն էր ժայթքում բերնից,

10 Քանզի նրան զարկել էր մի ո՛չ անարի աքալեցի:  
Այդ տեսնելով՝ խրդճաց արքան աստվածների ու ողջ մարդկանց  
Եվ Հերային խեթ նայելով՝ ալապես ասաց խոժոռադեմ.

«Չարահրճար քո նենգությունն, անշուշտ, Հերա՛, անողդելի,  
Հանեց մարտից քաջ Հեկտորին ու փախուստի մատնեց տրոյանց:  
Բայց չըգիտեմ, թե քեզ ինչո՞ւ չեմ բըռնում ես ու չեմ տա քե՛զ  
Նախ ճաշակել պըտուղը դառն՝ եղեռնավոր խարդավանքիդ  
Ու չեմ ջարդում կողերըդ ես հարվածներիս տակ անխընճա:  
Մոռացե՛լ ես միթե, որ քեզ ցած կախեցի ես երկընքից՝  
Երկու մեծ սալ քո ոտքերին ու ձեռքերիդ ոսկե շրղթա.

20 Եվ դու ալդպես կախ մընացիր օդում, մըթին ամպերի մեջ:  
Ու վըրդովված էին թեպետ ողջ աստվածներն Ոլիմպոսում,  
Թևածելով քո շուրջ-բոլոր, սակայն ոչ ոք սիրտ չէր անում  
Կապանքները քո արձակել, քանզի ում էլ որ բըռնեի,  
Նըրան ես ցած կընետեի Ոլիմպոսի բարձրը շեմից,  
Ալնպես որ նա կիսակենդան հազիվ հասներ միմչև երկիր:  
Ալտոհանդերձ սըրտիս սաստիկ ցավը դարձյալ չէր փարատվում,  
Որ պատճառեց վիճակը դառն՝ աստվածային Հերակլեսի,

Որին չարիք նյութելով դու գրցեցիր ծովն ալեկոծյալ  
Եվ հանեցիր վերջիվերջոն Արրան Կովը բարեբընակ:  
30 Այնտեղ բազում չարչարանքներ կրրեց որդիս, ու նո՛ր միայն  
Ազատելով Արրան նորից դեպի Արգոս դարձրո՛ւ ես:  
Հիշեցնում եմ սրբանք ես քեզ, որ դու վերջ տաս քո դավերին  
Եվ հասկանաս, որ չի՛ օգնի քեզ անկողինն ամուսնական,  
Որի համար, թողած կաճառն աստվածների, եկար այստեղ  
Եվ խորամանկ քո այդ խաղով ինձ խաբեցիր դու նենգաբար»:

Այսպես ասաց, ու սարսափեց շրջեղաշուք, աչեղ Հերան  
Եվ զայրացած իր ամուսնուն այս սրբաթև խոսքերն ասաց.  
«Երդվում եմ ես անա՛ երկրով և երկրներով ամենավե՛հ,  
Եվ շրթերով անդրնդաբուխ Ստիքյանի, որ անավոր  
40 Երդումն է մեծ հավերժ անմահ երանելի աստվածների,  
Եվ խրճկելի գրվխով քո թանկ, և կուտության մեր անկողնով,  
Որի վրրա դատարկ բանի համար երբեք չեմ երդվում ես,  
Որ Պոսելդոնն երկրասասան իմ խորհրդո՛ւ չի վրձատում  
Տըրդյացոց և Հեկտորին և սատարում աքալեցոց,  
Այլ իր սրբոտի թելադրանքո՛ւ, ինքնակամ է այդ բանն անում՝  
Հուզված ի տես աքալեցոց կորուստների՝ նավերի մոտ:  
Բայց ես Արրան կրհորդորեմ, այժմնեթ զընալ այնտեղ,  
Որտեղ ինքո՛ւ ես, ամպրոպայի՛ն, հըրամայում, որ նա զընա»:  
Այսպես ասաց Հերան հուզված, և ժըպտալով հայրը մարդկանց  
50 Եվ համորեն անմահների՝ պատասխանեց իր ամուսնուն.  
«Եթե, Հերա՛ դու աչագեղ և մեծարո, այսուհետև  
Աստվածների միջև Արստած խորհես այնպես, ինչպես որ ես,  
Այն ժամանակ Պոսելդոնը ունենա իսկ ա՛յլ ցանկություն,  
Փոխի՛ պիտի մրտադրությունն ու մըտածի ինձ ու քեզ պես:  
Եվ արդ, եթե ինչ որ ասիր, ճըշմարիտ է և ի սրբոտե,  
Աստվածների մոտ զընա շուտ և Իրիսին կանչիր այստեղ:  
Ինչպես նաև չըմոռանաս Ապոլլոնին աղեղնավոր:  
Իրիսը թող զընա իսկույն դեպի բանակն աքալեցոց  
Եվ Պոսելդոն թագավորին հըրամայի իմ անունից,  
60 Որ նա կրուփից հեռանալով՝ իր պալատը վերադառնա:  
Իսկ Ապոլլոն գուշակը թող շընչի նոր ուժ ու նոր կորով  
Քաջ Հեկտորին ու գըրգըռի Արրան դարձյալ պատերազմի,  
Մոռացության տալով Արրան՝ հոգին տանջող ցավերը խոր,  
Եվ հալածի՛ աքալեցոց, որոնք թող որ ամոթալի  
Խուճապումով զըցեն իրենց Պելիսածնի նավերի մոտ:  
Աքիլլն այնժամ ոտքի հանի թող իր ընկեր Պատրոկլեսին,  
Եվ հույակապ Հեկտորը թող Իլիոնի դեմ-հանդիման

Զարկի նրբան իր հիզակով, երբ նա շարդի շատ քաջերի  
Եվ նրբանց հետ նաև որդուս՝ Սարպեղոնին աստվածային:

70 Ապա Աքիլը գայրացած թող ըստանի Հեկտորին քաջ:  
Այնուհետև չեմ դադարի տրրոջացոց հալածելուց  
Աքալական նավատորմից, մինչև որ քաջ աքալեցիք  
Աթենասի վեճ խորհրդով առնեն Իլիոնն ամրապարիսպ:  
Բայց նախքան այդ, ոչ ես սաստիկ իմ ցասումից կրդադարեմ,  
Եվ ոչ էլ թույլ կրտամ մեկին՝ թիկունք կանգնել դանալեցոց,  
Մինչև հասնի Պելիսածին Աքիլը իր նրպաստակին,  
Ինչպես որ ես խոստացել եմ գրլխիս վրոս ակնարկելով,  
Երբ որ Թետիս աստվածուհին իմ ծրնկներին փարած այն օր  
Ինձ աղաչեց, որ ես պատվեմ քաղաքավեր Աքիլեսին»:

80 Այսպես ասաց, անասց նրբան լուսածրդի աստվածուհին  
Եվ մեկնելով Իդա լեռնից գրնաց ուղիղ դեպի Ոլիմպ  
Արագ, ինչպես միտքը մարդու, որ շրջելով շատ աշխարհներ,  
Միտք է անում իմաստնաբար, խորհրդածում ինքն իրեն հետ՝  
Եղա այստեղ, այնտեղ եղա, ասում է նա իր մըտքի մեջ,—  
Այսպես արագ, սրբաթորոնչ ստրաց արգո Հերան շրքեղ  
Եվ հասնելով բարձր Ոլիմպ՝ մըտավ կանառն աստվածների,  
Որոնք բազմել էին շրքեղ ապարանքում Արամազդի:  
Ոտքի ելան բոլորն իսկույն և ամեն ոք բաժակն իր լի  
Պարզեց նրբան, իսկ նա թողեց մյուս բոլորին և գեղատես  
90 Թեմիսի լի բաժակն առավ, որը նրբան ընդատաչեց  
Եվ մեծարտ աստվածուհուն այս սրբաթն հարցումն արավ.  
«Հերա՛, ինչո՞ւ եկար այստեղ, վախեցած ես թրվում դու ինձ,  
Անեղամոռնչ ամուսինդ վախեցրել է քեզ երևի»:

Լուսածրդի աստվածուհին նրբան այսպես պատասխանեց.  
«Մի՛ հարցընիր, չըքնաղ Թեմիս, քանզի ինքրդ շատ լավ գիտես,  
Թե ինչպիսի անբարեհաճ և անողոք սիրտ ունի նա:  
Մակալն արի, նըստիս բոլոր աստվածների հետ հավասար  
Հաղորդակից այս խընջույքին և դու ինքրդ բոլորի հետ  
Պիտի լըսես Արամազդի առաջարկը եղեռնավոր,

00 Որի համար ես չեմ կարծում՝ ուրախաման բոլորովին  
Ո՛չ աստվածներն հավերժ անմահ և ո՛չ մարդիկ մահկանացու»:

Այս ասելով՝ գրնաց Հերան ու բազմեց իր գահի վըրա.  
Եվ աստվածներն Արամազդի ապարանքում գըժղըմնեցին,  
Բայց նա հազիվ շորթի ծայրով ժըպտաց, և այդ ժըպիտը թույլ  
Թուխ հոնքերից վերև չանցավ, չըշողացրեց ճակատը լայն:



Եվ դառնալով աստվածներին այսպես ասաց Հերան ցասկոտ.

«Իզո՞ւր եմք մենք թըշնամանում Արամազդի հետ, աստվածներ,

Եվ ընդունա՞յն ձրգտում սանձել ճրբան խոսքով և կամ ուժով:

Նրասած մեզնից նա մեկուսի՝ իր հանգիստն է նայում միայն

110 Եվ ճոզն էլ չէ բոլորովին, զի պարծենում է, որ բոլոր

Աստվածներից գերազանց է նա իր ուժով և գորությամբ:

Պետք է տանել՝ ինչ չարիք էլ որ հըղելու լինի նա ձեզ,

Վախենում եմ, թե Արեսին դրժբախտություն հասած լինի,

Նըրա որդին՝ Ասկալափոսը՝ մարդկանց մեջ գերախրելին

Մեռալ մարտում, որի համար Արեսն «ի՛մն է» ասում էր միշտ»:

Այսպես ասաց, և Արեսը երկու ձեռքի սիներով իր

Առույգ ազդրերը ծեծելով՝ հառաչագին բացականչեց.

«Չըմեղադրե՛ք դուք ինձ երբեք, բընակիչներ՝ող Ոլիմպոսի,

Եթե իջնեմ նավերն աքյանց և իմ որդու վըրեժն անեմ,

120 Թեկուզ գըրված լինի ճակտիս, որ ես Ջեսից կայծակնահար

Ընկնեմ խառըն մեռելներին՝ փոշեթավալ, արյունըրվա»:

Այս ասելով նա Սարսափին ու Եղեռնին հըրամայեց

Լըծել ձիերն և ինքն հագալ փայլակնացալու զենքերն իր պերճ:

Արամազդի ցատումն այնժամ սարսափելի պիտի լիներ

Անմահների վըրա, եթե Աթենասը գահն իր թողած,

Որի վըրա նըստել էր նա, գալթից իրեն դուրս չընետեր,

Ի մեծ սարսափ և ի զարմանս բոլոր անմահ աստվածների,

Որ խըլելով գըլխից կորդակն և ուտերից ասպարը հաղթ,

Եվ նիզակը պըղընձակուռ դուրս կորզելով նըրա ձեռքից

130 Այս աստալից, խըրատական խոսքերն ասաց բուն Արեսին.

«Հիմա՛րըղ դու, խելացընո՛ր, կորցըրե՛լ ես խելքըդ, ի՛նչ է,

Չըլըսելո՛ւ համար եմ քո ականջները, ինչ ես անում.

Չըլըսեցի՞ր, թե ինչ ասաց լուսածըղի աստվածուհին,

Որը դեռ նո՛ր ամենահաղթ Արամազդից եկալ մեզ մոտ:

Մի՞թե դարձյալ ուզում ես դու խոշտանգահար և գանակոծ

Դեպ Ոլիմպոս վերադառնալ տառապալից ու ցավատանջ,

Եվ բոլորիս գըլխին նորից քերել փորձանք ու պատուհաս:

Որովհետև թողնելով Ջեսն աքայեցոց և տըրոյանց

Այստեղ, մեզ մոտ, դեպ Ոլիմպոս պիտի վագի անմիջապես

140 Եվ խըռովի, իրար խառնի մեզ բոլորիս և անխըտիր

Բըռնի մեկ-մեկ, պատուհասի մեղավորին և անմեղին:

Ուստի ես քեզ, ահապասիկ, պատվիրում եմ՝ խոհեմաբար

Սանձե՛ս որդուդ մահվան առթիվ քո մեջ եղած զայրույթը բարկ,

Ջի նըրանից շատ ավելի կորովասիրտ, ուժեղ մարդիկ

Ընկած են ցարդ ու տակապիճ պիտի ընկնեն այսուհետև.  
Դըժվար է խիստ և անհրճար փըրկել բոլոր մարդկանց մահից»:

Այսպես ասաց ու նրստեցրեց գահի վըրս բուն Արեսին:  
Միճշդեռ Հերան Ապողոնին դուրս կանչելով արքունիքից,  
Եվ Իրիսին՝ ոլիմպական աստվածների պատգամատար  
150 Սուրհանդակին արագահաս՝ այս թևավոր խոսքը ասաց.  
«Հըրամայեց Ջևար, որ դուք անմիջապես Իդա երթաք,  
Եվ երբ որ տեղ ժամանելով տեսնեք երեսն աստվածահոր,  
Կատարեցեք դուք անհատաղ, ինչ հըրաման որ նա ձեզ տա»:

Այս պատվերը տալով Հերան՝ դարձավ նորից բազմեց գահին,  
Իսկ Ապողոնն ու սըրընթաց Իրիսն իսկույն թըռան թեթև  
Ու հասնելով աղբյուրաշատ Իդա՝ մայրը գազանների,  
Ջըրվանյաևին գըտան նըստած Գարգարոնի վեհ կատարին,  
Որի շուրջը ամպ էր կապել, ոսկի մի ամպ անուշաբույր.  
Ու կանգնեցին դեմ-հանդիման ամպոտպալին Արամազդի:  
160 Տեսնելով, որ անասցել են իր սիրելի կընոջ խոսքին՝  
Աստվածահայրն ամենևին չըբարկացավ նըրանց վըրս,  
Ու դառնալով նախ Իրիսին՝ նըրան պատկեր հըրամայեց.  
«Գընա՛ իսկույն, թեթև՛ Իրիս, սուրհանդա՛կ իմ նըշտապատում,  
Եվ տար պատգամ դու ինձանից Պոսելդոն մեծ թագավորին,  
Հըրամայիր, որ դադարի անմիջապես մարտ մըղելուց  
Եվ երթա դասն աստվածների կամ դեպի ծովն աստվածային:  
Իսկ եթե նա անհընազանդ գըտընվի իմ հըրամանին,  
Թո՛ղ մըտածի իր սըրտի մեջ և իր մըտքում, թող հասկանա՛,  
Որ երբ վըրան հարձակվեմ ես, նա չի կարող դեմ դընել ինձ  
170 Հակատակ իր հըսկա ուժին, որովհետև կարծում եմ ես,  
Որ նըրանից շատ ավելի գերազանց եմ իմ գորուջամբ,  
Տարիքով էլ ավագ եմ ես, քայց դընում է հանդըզմարսը  
Անձն իր՝ անձին իմ հավասար, որից բոլորն են վախենում»:

Այսպես ասաց, հընազանդեց հողմոտն Իրիսն արագաթև  
Եվ Իդայի կատարներից սուրաց դեպի Իլիոնը սուրբ:  
Ինչու, ես ձյունը տեղատարափ և կամ կարկուտը ամպերից  
Բորեասի բուռըն շընչով ուժգընորեն թափվում է ցած,  
Այդպես թեթև ու սըրընթաց սուրաց Իրիսն արագահաս  
Եվ մոտ գալով այսպես ասաց վըսեմափստ Պոսելդոնին.  
180 «Բանքեր եկա, ո՛վ Պոսելդոն, կապուտավարս աշխարհակալ,  
Որ քեզ բերեմ պատգամը մեծ ասպարակիր Արամազդի,  
Հըրաման է տալիս նա քեզ պատերազմից մեկնել իսկույն

Եվ գրնալ դասն աստվածների կամ դեպի ծովն աստվածային:  
Իսկ եթե դու անհրճազանդ՝ չանասս Գրրա հրրամանին,  
Նա ըսպառնաց, որ ինքն անձամբ կըգա այստեղ կըռվի քո դեմ.  
Եվ խորհուրդ է տալիս նա քեզ, որ իր բազկից ըզգուշանաս,  
Զի նա իրեն քեզանից շատ գերիվերո է համարում,  
Տարիքով էլ մեծ է քեզանից, մինչ դու անաստ, հավակնում ես  
Քեզ հավասար դրնել Գրրան, որից բոլորն են վախենում»:

190 Եվ Պոսելդոն արքան սրբամիտ Գրրան այսպես պատասխանեց.

«Այո՛, թեև հրզոր է նա, բայց թող այդպես չըխրոխտա  
Եվ չըփորձի բրոնի ուժով արգելել ինձ՝ հավասարիս:  
Երեք եղբայր ենք ծընվել մենք Զըրվանից և Ռեայից՝  
Զսար ահեղ, ես և ինքը դըժոխսպետ Հադես արքան:  
Աշխարհն երեք մասի բաժնած՝ ամենքըս մեր բաժինն ունենք:  
Բաժին ընկավ ճերմակափառ ծո՛վն ինձ հավերժ բընակավայր,  
Եվ Հադեսին՝ իրեն բախտից բաժին ընկավ դըժոխքը մութ,  
Եվ երկինքը լայնատարած, ամպն ու եթերն՝ Արամազդին.  
Իսկ երկիրը և բարձրաբերձ Ոլիմպոսը երեքիս են:

200 Ուստի և ես Արամազդի քիմքին գերի չեմ լինելու.

Թեև հրզոր, բայց թող խաղաղ մընա նա իր երրորդ բաժնում  
Եվ թող որ ինձ նա չըփորձի ահաբեկել իր ձեռքերով:  
Աղջիկներին և իր որդոց, որոնց ինքը ծընեց, թող որ  
Հըղի պատգամ և վախեցնի ըսպառնալից իր խոսքերով,  
Որոնք Գրրա պատվերներին պետք է հարկավ հընազանդեն»:

Հողմոտն Իրիսն՝ Արամազդի բանբերն այսպես ասաց կըրկին.

«Ուրեմն հիմա, ո՛վ մեծափառ, կապուտավարս աշխարհակալ,  
Ա՛յո պատասխանն Արամազդին պիտի տանեմ ես քեզանից,  
Այդպես սաստիկ և խըստամբե՛ր, թե՞ փոխելու մի բան ունես,

210 Զի ճըկուն եմ և դյուրադարձ խոհեմ մարդկանց մըտքերը միշտ:

Զե՛ որ ինքը շատ լավ գիտես, թե դահիճները դըժոխքի  
Ինչպես են միշտ օժանդակում ու հետևում հրզորներին»:

Պոսելդոնը երկրասասան Գրրան այսպես պատասխանեց.

«Այո խոսքդ, Իրի՛ս աստվածուհի, շատ ճըշմարիտ ասացիր դու.  
Հաճելի է, երբ բանբերը տեղին, խելոք բան է ասում:  
Բայց դառնագույն մի ցավ ահա՛ ճըմլում է իմ սիրտը սաստիկ,  
Երբ Արամազդն անարգական իր խոսքերով նախատալից  
Անպատվել է ուզում իրեն վիճակակից հավասարին:  
Բայց հակառակ վըրդովմունքիս՝ հեռանում եմ պատերազմից

220 Եվ ի սըրտե ըսպառնալով, ասում եմ ես ահավափկ,

Որ եթե նա ի հեճուկս ինձ, ալարառու Աթենասի

Եվ Հերայի, ու Հերմեսի, և Հեփեստոս թագավորի՝  
Խընայելով բարձր Իլիոնին, չըկամենա կործանել այն  
Եվ պարգևել արգիացոց մեծ հաղթանակ այս գուպարում,  
Թող իմանա, որ մեր միջև մի մեծ կրոնիվ պիտի ծագի»:

Այսպես ասաց Երկրատատանն, ու թողնելով աքայեցոց  
Կարոտ աչքերն իր ետևից՝ գընաց ու խոր ծովը սուզվեց:  
Եվ Արսմազդն այն ժամանակ այսպես ասաց Ապոլլոնին.

- «Միրելիդ իմ Գուշակ, գընա պըղընձագեն Հեկտորի մոտ,  
30 Քանզի արդեն Երկրատատան Պոսելդոնը տեղի տալով՝  
Գընաց դեպ ծովն աստվածային, որ ազատվի իմ ցասումից,  
Այա թե ոչ մեր կրոնի ձայնն ամեն աստված պիտի լըսեր,  
Մինչև անգամ Զըրվանի շուրջ եղողները դըժոխքի մեջ:  
Բայց շահավետ եղավ այսպես թե՛ ինձ համար և թե՛ իրեն,  
Որ ինձ անաց և ըշտայեց ըզգուշանալ իմ ցասումից,  
Թե չէ աստիկ կրոնիվ մեր հեշտ ու հանգիստ չէր վերջանա:  
Արի հիմա, ձեռքդ առած քըղանցավոր ասպայը քո  
Ցընցի՛ր ուժգին ու վախեցրու աքայեցի դյուցազներին:  
Քեզ եմ հանձնում ես, հեռաձի՛գ, հոգսն ու խընամքը Հեկտորի,  
40 Տուր այնպիսի կորով նըրան և զորություն, որ աքայանք  
Խոճապահար փախչեն դեպի նավատորմիդն ու Հելլեսպոնոս:  
Այնուհետև ինքքս արդեն կըմըտածեմ և կըհոգամ,  
Թե՛ ի՛նչ կերպով աքայեցիք առնեն նորից ուժ ու կորով»:

Այսպես ասաց, և Ապոլլոնն անաց իր հոր հըրամանին,  
Եվ Իդայի բարձունքներից մեծաշտառ Վար սըլացավ  
Աղավնեսաբան բազեի պես, որ սըրաթևն է ամենեն,  
Եվ գըտավ ծեր Պրիամոսի դյուցազն որդուն՝ վե՛ն Հեկտորին,  
Որ նըտած էր, ոչ թե պատկած, և դեռ նոր էր ուշքի եկել,  
Ճանաչում էր իրեն սիրով շըրջապատած ընկերներին:

- 50 Դարարել էր քըրտիճքն առատ ու չէր այլևս ուշաթափվում,  
Զըրվանյանի միտքը ըզգոն կազդուրել էր նըրան արագ.  
Կորովածիզ Ապոլլոնը մոտենալով նըրան՝ ասաց.

«Հեկտոր՛ր, որդիդ Պրիամոսի, ինչո՛ւ ես քո ընկերներից  
Հեռու՛ այդպես նըստել տըրտում, ի՛նչ վիշտ արդյոք քեզ հարվածեց»:

Կորդակածո՛ Հեկտորն այսպես պատասխանեց հիվանդագին.  
«Իսկ ո՞վ ես դու, երկնաքընակ, որ իմ մասին ես հարցընում.  
Դեռ չըգիտե՞ս, որ աքայանց նավերի մոտ, այն ժամանակ,  
Երբ ես գետին էի փըռում աքայեցի կըտրիճներին,  
Ահեղագոռ Այաքսը քաջ հըսկա մի քար ամբողջ ուժով

260 Զարկեց կրթօքիս և ջըլատեց կորովն իմ ողջ, կարծում էի,  
Թե կըտեսնեմ ըստորերկրյա ուրուներին մինչև անգամ.  
Քիչ էր մընում, որ տեղնուտեղ վերջին շունչըս ես փըչեի»:

Եվ Ապողոն աղեղնաձիգ արքան այսպես ասաց նըրան.  
«Սիրտ առ անա՛, գի Ջըրվանյանը Իդայից առաքեզ քեզ  
Մի այնպիսի մեծ գորավիզ, որ քեզ օգնի և պահպանի,  
Ինձ՝ Գուշակիս ոսկետուներ, Ապողոնիս, որ առա՛ջ էլ  
Պահապան եմ եղել միշտ քեզ և քաղաքին քո բարձրաբերձ:  
Վե՛ր կաց, հորդոր կարդա բազում հեծելագոր քո գընդերին,  
Որ դեպ նավեր ասպատակեն երիվարներն արագավազ:

270 Իսկ ես նըրանց առաջն ընկած՝ փառքիդ ճամփան պիտի հարթեմ  
Ու փախուստի մատնեմ բոլոր աքայեցոց որդիներին»:

Այսպես ասաց և Հեկտորի սիրտը լըցրեց մեծ այլունով:  
Ինչպես նըթուզ մի ամեհի, որ մըսուրում գարի կերած,  
Սանձակոտոր, դըռույթ տալով արշավում է դաշտի միջով  
Լողանալու համար դեպի հունը գետի գեղեցկահոս,  
Ահիպարան, ուերն ի վար ծածանելով բաշը շըքեղ՝  
Վալեչագեղ իր հասակով հըպարտ՝ ճախրում է սիգանեմ,  
Դեպի ծանոթ արոտավայրն է ըշտապում զամբիկների:—  
Այսպես և քաջ Հեկտորն էր իր սըրունքները շարժում արագ,  
280 Հորդորելով հեծելագորն՝ աստըծու ձայնն առնելուց ետ:  
Եվ ինչպես մի եղջերագեղ եղջերուի կամ այծյամի  
Հալածում են արագավազ բարակներն ու որսորդ մարդիկ,  
Բայց կենդանուն բարձըր մի ժալո և կամ անտատ մի ծառախիտ  
Ազատում են, քանզի նըրանց չէր վիճակվել բըռնել նըրան,  
Եվ նըրանց մեծ աղաղակից հանկարծ առյուծ մի սիգաբաշ  
Երևում է ճամփի վըրա և հալածում է բոլորին,—  
Այսպես մինչև այդ ժամանակ դանակեցիք միասնամուտ  
Վանում էին սըրոյացոց հիզակներով և սըրերով.  
Իսկ երբ տեսան քաջ Հեկտորին, որ վազում էր գընդից ի գունդ,  
290 Զարհուրեցին, ու փուլ եկավ նըրանց ամբողջ կորովն իսկույն:

Անդրեմոնյան Թոասն այնժամ, ամենաքաջ էտոլացին,  
Որ անվանի էր կըովի մեջ որպես կըտրիճ հիզակավոր,  
Իսկ ժողովում աքայանցից քըչերն էին հաղթում նըրան,  
Երբ ջահելներն իրարու հետ խոսքով մըրցման մեջ մըտնեին,—  
Աքայեցոց լավն ուզելով՝ այսպես ասաց խոհեմաբար.

«Ո՛վ աստվածներ, զարմանալի մի հըրաշք եմ տեսնում անա,  
Հարություն է առել Հեկտորն, ազատվել է մահվան ձեռքից.

2Է՞ որ բոլորս հույս ունեինք, թե նա հոգին իր վերջապես  
Փռչեց, ընկալ Տեխամոնյան Այաքսի հաղթ ձեռքով հրզոր:  
300 Բայց մի աստված անտարակույս փրկեց դաժան մահից նրան,  
Որ դանաչանց կրտսիճներից շատ-շատերի ծունկը ծալեց,  
Եվ տակավին պիտի ծալի, քանզի ստանց Արամազդի  
Չի մղեզնի ստաջամարտ գընդի գըլովսն անցած այդպես:  
Բայց ես խորհուրդ պիտի տամ ձեզ, և անասցեք իմ խորհրդին,  
Տանք հրրաման մենք ամբոխին՝ դառնալ դեպի նավատորմիդ,  
Իսկ մենք կանգնենք հաստատակամ, որ քաջերն ենք բանակի մեջ  
Եվ դեմ դընենք տըրոյացոց այդ գըրոհին մեր տեզերով,  
Եվ որքան էլ, կարծում եմ ես, նա բոցարշավ ստաջ խաղա՝  
Կըվախենա ինքն իր սըրտում քաջերիս մեջ մըխըրճվելուց»:

- 310 Այապես ասաց, և անասցին նրան բոլորն հոժարակամ:  
Այաքսն այնժամ, Տևկոտը քաջ և Իդոմեն արի արքան,  
Մերիոնենն ու Արեսի հավասարորդ Մեզեսը հաղթ,  
Յուրաքանչյուրն իր քաջընտիր մարտիկներին հավաքելով  
Պատրաստվեցին ընդդիմադրել տըրոյացոց և Հեկտորին,  
Իսկ ամբոխը խառնիճաղանջ դարձավ դեպի նավատորմիդ:  
Նախ տըրոյանք գըրոհեցին միահամուռ ու խուռնամբոխ,  
Առաջն ընկած հրակայաքաչը ընթանում էր Հեկտորը քաջ,  
Եվ նրա հետ Ապոլլոնը՝ ուսերն ամպով պարածածուկ,  
Զեռքին ասպար մի ահարկու, հրաշանըշան և ծոպագարդ,  
320 Որը տըվավ Հեկեստուրը՝ ճարտարագործն Արամազդի,  
Որ նրանով ասրատի ազդի մահկանացու մարդկանց սըրտին:  
Վահանն այդ մեծ ձեռքին բըռնած՝ տանում էր նա տըրոյացոց:

Արգիսցիք միահամուռ էլան ընդդեմ այդ գըրոհի,  
Եվ երկուստեք, ահագնագոչ, փրթալ աղմուկ մի խառնաձայն:  
Սուլում էին ու սըլանում նետերն անդուլ՝ աղեղներից  
Եվ ձեռքերից դյուցազնական թըռչում էին տեզեր սուրսայր.  
Ոմանք մըխվում էին թափով մարտիկների մարմիններում,  
Եվ ոմանք էլ դեռ ըսպիտակ մարմինների համը չառած՝  
Ընկնում գետին, խըրվում հողում, կարոտ մըսի և տաք արյան:  
330 Քանի գուշակ Ապոլլոնը բըռնել էր իր վահանն անշարժ՝  
Խոցում էին նետերն անդուլ, և երկուստեք ընկնում էին,  
Իսկ երբ նայեց արագածի դանայեցոց երեսն ի վեր  
Եվ ցընցելով վահանն իր մեծ, գոչեց անեղ որոտունով՝  
Սարսափն առավ արայեցոց և մոռացան կորովն իրենց:  
Ինչպես երկու անեղ գազան մութ գիշերով հարձակվելով,  
Ընկնեն հանկարծ մեծ հոտի մեջ կամ եզների նախրի վըրս

Եվ խուճապի մատնեն ճրրանց, երբ տավարածն է բացակա,—  
Այդպես փախան աքալեցիք ահաբեկված, խուճապահար,  
Զի Ապոլլոնն աղեղնավոր սարսափ գրցեց սիրտը ճրրանց  
340 Եվ ընձենեց փառք ու պատիվ տըրոյացոց ու Հեկտորին:

Այնժամ շատերն ընկան այդտեղ՝ ըսպանելով մեկ-մյուսին:  
Զարկեց Հեկտորն Արկեալասին, Ստիքիոսին փրոնեց տապաստ,—  
Առաջինը պրղընձագեն բիովտացոց զորազրլուխ,  
Մյուսը ընկերն հավատարիմ՝ մեծահոգի Մենեսթեսի:  
Եվ Էնիասը Մեդոնին ու Յասոնին զարկեց գետին:  
Մեդոնն եղբայրն էր Ալաքսի և հարճորդին Ոչիլևսի,  
Որ տարագիր հայրենիքից՝ բընակվում էր Փիլակեոս,  
Զի իր խորթ մոր՝ Ոչիլևսի կընոջ եղբորն էր ըսպանել:  
Իսկ Յասոնը աթենացոց ըսպարապետ իշխանն էր քաջ,  
350 Եվ որդին էր հորջորջվում նա Բուկոլեանյան Սփիլոսի:  
Պուլիդամասը ըսպանեց Մեկիստեսին նախամարտիկ,  
Պուլիդեսը՝ Եքիոսին, և Ագեմորն՝ Կրոնիոսին,  
Իսկ Պարիսը առաջամարտ քաջերի մեջ զարկեց ուսից  
Դեիոքին, երբ փախչում էր. պրղինձը սուր ծակեց անցավ:

Մինչ տըրոյանք զինագերծում էին մարտում ընկածներին՝  
Աքալեցիք տագնապահար, շերտափակից ու լայն փոսից  
Այս ու այն կողմ փախուստ տալով խուճում էին պարըսպից ներս:  
Իսկ Հեկտորը տըրոյացոց խըրախուսում էր քարձրածայն  
Թողնել ավարն արյունազանգ և գըրոհել դեպ նավատորմ.  
360 «Ում նավերից հեռու տեսնեմ՝ ըսպանելու եմ տեղնուտեղ,  
Եվ դիակը չաչրեն պիտի խարուկի սուրբ բոցի վըրս  
Ո՛չ քույրերը ճրրա, և ո՛չ եղբայրները, այլ անտերունչ  
Մարմինն անթաղ պիտ հոշոտեն շըները մեր քաղաքի դեմ»:

Այսպես ասաց Հեկտորն ահեղ և ձիերին մըտորակելով  
Առաջ անցավ ու շարքառշարք խըրախուսեց տըրոյացոց,  
Որոնք ճրրա հետ միասին ահեղագոչ աղաղակով  
Գըրոհեցին միահամուռ, և Ապոլլոնն առաջն ընկած  
Խորունկ փոսի ափերն իսկույն փով բերելով իր ոտքերով՝  
Փոսը լըցրեց և կամըրջեց, բանալով լայն մի ճանապարհ—  
370 Տեգընկեցի երկարությամբ, երբ որ մեկը, փորձի համար,  
Զափելով ուժն իր հաղթ քազկի՝ արձակի այն ուժգընորեն:  
Եվ խտունամբոխ խուճում էին ճրրանք այդ նոր ճանապարհով,  
Իսկ Ապոլլոնը առջևից, ձեռքին ասպարն իր ահարկու՝  
Քարուքանդ էր անում հեշտիվ պատ ու պատնեշն աքալեցոց:

Ինչպես փոքրիկ մի երեխա նըստած անհոգ՝ ծովի ափին  
Ավազներից իրեն համար խաղալիքներ շինի պես-պես,  
Ապա վերջում ուս ու ձեռքով ցրրիվ թերի հեշտ ու հանգիստ,  
Այդպես և դո՛ւ, ո՛վ Ապոլլոն, բազում վաստակն աքայեցոց  
Փոլ բերեցիր ու ձրգեցիր նըրանց սըրտում ահ ու տագնապ:

380 Եվ վերջապես, նավերի մոտ կանգ առնելով աքայեցիք,  
Ըսկըսեցին սիրտ տալ իրար, և ամեն ոք բազկատարած  
Աղոթում էր աստվածներից մեկնումեկին բարձրը ձայնով:  
Մինչ պահապանն աքայեցոց Նեստոր ասպետն աղերսագին  
Աղոթք արավ դեպ աստղագարդ երկինք ձեռքերն իր տարածած..  
«Հա՛յր Արամազդ, թե մեկնումեկն Արգոսի մեջ ցորենաշատ  
Քեզ ճենճերեց պարարտ ազդրեր ոչխարների կամ եզների,  
Աղերսելով, որ ետ դառնա, և դու նըրան այդ խոստացար,  
Հիշի՛ր նըրան, ո՛վ Ոլիմպյան, և հեռացրու օրն այս դըժնի,  
Եվ մի մատնիր աքայեցոց ի պարտություն անփառունակ»:

390 Այսպես ասաց աղոթելով, և Արամազդն իմաստնագույն  
Ի պատասխան այլևորի այդ աղոթքին՝ թունդ որոտաց.  
Իսկ տըրոյանք Արամազդի ահեղ որոտն այդ լըսելով,  
Է՛լ ավելի ուժգին թափով գըրոհեցին դեպ աքայանք:  
Լեռնանըման ալիքն ինչպես լայնածավալ ծովի վըրս  
Նավի կողքից վեր է խուժում մըրըրկաշունչ հողմի ուժով,  
Որ շարունակ կուտակ-կուտակ կոհակներ է մըղում առաջ,—  
Այսպես տըրոյանք մեժ աղմուկով պարըսպից ներս էին խուժում:  
Եվ վարելով ձիերն առաջ՝ կըրվում էին նավերին մոտ:  
Աըրանք երկասյր աշտեններով՝ նըժույզների վըրս նըստած,  
400 Նըրանք իրենց սև նավերի բարձրությունից, ուր որ էլան,  
Երկայնաձիգ մըկունդներով՝ ծայրերը կուտ պըղընձասրատ—  
Նավամարտի համար հարմար— կըրվում էին իրարու դեմ:

Քանի դեռևս աքայեցիք և տըրոյանք դեմ-հանդիման  
Պարըսպի շուրջ էին կըրվում, հեռու արագ սև նավերից,  
Պատրոկլեսը նըստած էր քաջ Եվրիպիլի վըրանի մեջ  
Ջըվարճացնում էր խոսքերով և տանջալից վերքի վըրս  
Ցանում էր նա ցավափարատ և ամոքիչ ըսպեղանի:  
Իսկ երբ տեսավ, որ տըրոյանք հըրոսեցին պարըսպից ներս  
Ու բարձրացավ դանալեցոց տագնապալից աղմուկը մեժ՝  
410 Ծիչ արձակեց, երկու ձեռքով ծեծեց ազդրերն ու ցավագին  
Հատաչելով հոգու խորքից՝ այսպես ասաց վիրավորին.

«Է՛լ չեմ կարող մընալ այստեղ, Եվրիպիլե, թեպեսև դեռ



**Կարոտ ես դու իմ խընամքին. անեղ կըռիվ պայտեց անս,  
Քեզ ըսպապակդ ըսփոփի թող, իսկ ես վագեմ անմիջապէս  
Աքիլլէսի մոտ, որպէսզի նըրան մարտի հորդոր կարդամ.  
Թերևըս ես կարողանամ շարժել նըրս սիրտն աստուծով,  
Ռոյվհետև բարեկամի հորդորն ազդու, բարի է միշտ»:**

Այսպէս ասաց ու վագ տրվեց վըրանն Աքիլլէսի,  
Իսկ աքալանք կանգնած ամուր տըրոյացոց գըրոհի դեմ՝  
420 **Չէին կարող վանել նըրանց, թեպետև քիչ էին նըրանք.  
Տըրոյանք էլ անգոր էին խորտակել ուժն աքալեցոց  
Եվ խոբանայ դէպի նավերն ու վըրաններն արգիական:  
Կարկինն ինչպէս որ կոկում է նավափայտը հարթ-հավասար  
Հըմուտ հյուսնի ձեռքերի մեջ, հըրահանգված Աթենասից,  
Որ արվեստի գաղտնիքներին քաջատեղյակ է մըշտապէս,—  
Այսպէս, նըրանց մարտն ու գուպարն էր ընթանում հարթ-հավասար.  
Եվ երկուստեք արիաբար կըռվում էին նավերի շուրջ:**

Հեկտորը քաջ և հոյակապ Այաքսն իրար դեմ-հանդիման  
Կըռվում էին մի նավի շուրջ. սակայն չէին կարող ընկնել  
430 **Ոչ Հեկտորը հաղթ Այաքսին, որ նավատորմը հըրդեհներ,  
Ոչ էլ Այաքսը Հեկտորին, որին աստված էր գորսովից:  
Եըքեղանոխ Այաքսն այնժամ Կիդիոսյան Կալեդորին,  
Որ կըրակ էր տալիս նավին, զարկեց կըրծքին իր նիզակով:  
Խանձողն ընկավ նըրա ձեռքից և նա թընդմամբ գետին փըռվեց:  
Եվ երբ Հեկտորն իր հորեղբոր որդուն տեսավ նիզակահար,  
Փոշթթավայ գետինն ընկած սևաթուր աչք նավի առաջ՝  
Խըրախուշս կարդաց բարձըր ձայնով լիկիացոց և տըրոյանց.  
«Տըրոյացի՛ք, լիկյանք և դուք դարդանյաններ ձեռնամարտիկ  
Մի՛ հեռանաք, մի՛ ընկըրկէք տագնապայից այս գուպարում.  
440 Դո՛ւրս հանեցեք Կալեդորին, որ նավերի առաջն ընկավ,  
Եվ մի՛ թողնեք, որ կողոպտեն նըրա զենքերն աքալեցիք»:**

Այսպէս ասաց, և Այաքսին նետեց աշտեն փայլակնացալտ,  
Բաջց վըրիպեց և Մաստորի որդուն դիպավ՝ կիթերացի  
Լիկոփրոնին, որ Այաքսի ըսպապակն էր հավատարիմ  
Եվ Այաքսի տանն էր սպրում, հարեհիքից վըտարանդի,  
Քանզի մարդ էր ըսպանել նա աստվածային Կիթերայում:  
Սոր սըղընձով՝ ականջից վեր զարկեց գըլխին Կալեդորի,  
Որ կանգնած էր Այաքսի մոտ. նավախելից գըլորվելով՝  
Մեջքի վըրս գետինն ընկավ ու տեղնուտեղ շունչը լիըչեց:  
450 **Փըշաբաղվեց Այաքսը քաջ և իր եղբորն այսպէս ասաց.**

«Քաղցր իմ Տևկրե, ընկա՛վ ահա ընկերը մեր հավատարիմ՝  
Մաստոյանը, որը վաղուց մեզ մոտ եկավ Կիթերայից,  
Պատվում էինք մեր պալատում՝ ծրնողներին մեր հավասար:  
Զարկեց ճրքան Հեկտորը՝ քաջ, իսկ ո՛ր եմ քո օրհասաբեր  
Վայնալիճն ու նետերը սուր, որ Ապոլլոնն ընծայեց քնձ»:

Այսպես առագ, նա հասկացավ և նրա մոտ գընաց կանգնեց,  
Եվ ձեռքն առած ճրկուն աղեղն ու նետընկալ կապարճը իր՝  
Տըրոյացոց վըրա թափեց նետերի սուր տեղատարափ:  
Նետահարեց Կլիտոսին՝ Պիսենորի պարթև որդուն՝

- 460 Վըսեմասյանն Պանթեոսյան Պուլիդամի թիկնասպանին,  
Որը բըռնած երասաններն՝ նըժույզներին հոգ էր տանում  
Եվ ի պատիվ տըրոյացոց ու Հեկտորի՝ վարում այնտեղ,  
Որ խոտնախիտ գունդ-գընդի դեմ կանգնած կըռիվ էին մղում:  
Աղետն արագ վըրա հասավ, որն արգելել չըկարեցան,  
Մըխվեց սըլաքը մահաբեր՝ պարանոցին, իր ետնից,  
Եվ նա կառքից ցած տապալվեց, երիվարներն ընկըրկեցին  
Ու գարկվելով դատարկ կառքին՝ ցընցեցին այն դըղըրդյունով:  
Գըլխի ընկալ Պուլիդամասն ու ձիերի առաջ վազեց,  
Որոնց հանձնեց Աստինոսին, նըրան խըստիվ պատվիրելով,  
480 Որ լավ հըլսկի նըժույզներին և նըրանց միշտ մոտիկ պահի:  
Իսկ նա նորից գընաց դեպի գունարտակներն առաջամարտ:

Տևկրոսն այնժամ ուրիշ մի նետ էլ արձակեց դեպի Հեկտորն  
Ու վերջ կըտար պատերազմին՝ աքայեցոց նավերի մոտ,  
Թե այդ նետով կարողանար առնել գոռոզ քաջի հոգին:  
Բայց միտքն ըզգոն Արամազդի հաստ եղավ դըրան իսկույն,  
Որ Հեկտորին պահպանելով՝ փառագըրկեց քաջ Տևկրոսին:  
Կըտրեց հանկարծ նըրա չըքնաղ աղեղի լարը պընդոյր,  
Երբ այն դեպի գիրկն էր ձըգում, թըռավ պըղինձ նետը մի կողմ,  
Որը գընաց այլ ուղղությամբ, և լայնալիճն ընկավ ձեռքից:

- 480 Մարսասիահար Տևկրոսն այնժամ դառնալով իր եղբորն՝ առագ.  
«Աստվածն, ավա՛ղ, փըշրում է մեր հույսերը այս գոտեմարտում.  
Գըցեց ձեռքիցս աղեղը նա և քաջոյր լարը կըտրեց,  
Որը դեռ նո՛ր, այս առավոտ անցկացրի լավ ոլորելով,  
Որ կարենար երկար տոկալ թանձրատարափ իմ նետերին»:

Տեխանչյան Այաքսը մեծ նըրան այսպես պատասխանեց.  
«Դե՛հ, սիրելիս, դու էլ թողած աղեղը և նետերդ անթիվ,—  
Զի դանաչանց դեմ թըշնամի աստված էր, որ խանգարեց այն,—  
Վեցըրու տեգ երկայնաձիգ, ծածկիր ուներդ սապարով

Ու մարտ մըտիր տըրոյանց դեմ, սըրտապընդիր: նաև այլոց,  
490 Որ թըշնամին թեկուզ հաղթի, սակայն անվիշտ չըտիրանա  
Գեղեցկատախտ մեր նավերին. օ՛ն, մարտընչենք արիաբար»:

Այսպես ասաց. Տևկոսն իսկույն վագեց դեպի վըրանն արագ,  
Լայնալիճը դըրեց այնտեղ և ուտերը ծածկեց՝ ամուր,  
Բոլորաձև, չորս տակ թիթեղ պատած անեղ իր ասպարով,  
Առավ և իր գըլխին դըրեց գեղապանույճ մի սաղավարտ՝  
Վերից շըքեղ տարուբերվող անեղակերպ գարգմանակով,  
Եվ առնելով պըղընձասայր, հուժկու մի տեգ երկայնաձիգ՝  
Արագ վագքով վերադարձավ Այաքսի մոտ անմիջապես:

Հեկտորն անեղ, երբ նըկատեց, որ Տևկոսի աղեղն ընկավ,  
500 Տըրոյացոց և լիկեցոց խրախույս կարդաց բարձըր ձայնով.

«Տըրոյացի՛ք, լիկյանք և դուք դարդանյաններ ձեռնամարտիկ,  
Բարեկամներս, արի եղեք նավատորմի մոտ խորափոր.  
Ամո՛ւր կացեք, միշտ անվըկանդ, քանզի ես իմ աչքով տեսա,  
Որ Արամազդն ինքը փըշրեց փըքիները մի քաջագնի:  
Ջորոյությունը հըզոր Ջևսի հեշտ է հայտնի լինում մարդկանց  
Թե՛ գերագույն փառք ու պարծանք ընձեռելիս, և թե՛, երբ որ  
Տըկարացնի և չուգենա լինել ռատար և զորավիգ,  
Ինչպես որ արդ թուլացնելով արգիացոց՝ մեզ է օգնում:  
Եղեք արի և կըովեցեք նավերի մոտ միահամուռ,

510 Եվ ով ձեզնից ընկնի մարտում նետահարված կամ տիգախոց,  
Մեռնի՛ թող որ, քանզի փառք է մեռնել հանուն հայրենիքի,  
Որովհետև ազատ պիտի ապրեն նըրա կիճն ու որդիք,  
Եվ անվընաս մընան նըրա կալվածքն ու տունն, անձեռնամուխ,  
Երբ նավերով աքայեցիք վերադառնան երկիրն իրենց»:

Այսպես ասաց ու բոլորին բոցավառեց մի նոր ուժով:  
Մյուս կողմից էլ Այաքսն էր իր մարտիկներին հորդոր կարդում.  
«Ամո՛թ է մեզ, արգիացիք, կամ պետք է մենք մեռնենք այսօր  
Եվ կամ ապրենք ու չարիքը հեռու վանենք մեր նավերից:  
Կորդակաճոճ Հեկտորն եթե մեր նավատորմը գորավի,

520 Ի՛նչ է, ոտքո՛վ պիտի դառնաք ձեր հայրենի երկիրը դուք:  
Չե՛ք լըսում, թե Հեկտորն ինչպե՛ս խըրախույս է կարդում զորքին  
Ու վառվում է նավատորմը հրդեհեմբու բուռն տենչով.  
Եվ նա նըրանց պարի՛ չէ որ կաճչում է արդ, այլ կըովելո՛ւ:  
Իսկ մեզ համար չըկա այլ միտք ու որոշում ալելի լավ,  
Քան թե շարժել մեր ձեռն ու ոտն ու մարտընչել թըշնամու դեմ:  
Լավ է մեռնել միանգամից և կամ ապրել ազատ կյանքով,

**Քան թե երկար հավել-մաշվել աղետալոր պատերազմում  
Այսպես իզուր, նավերի մոտ, վատթարագույն մարդկանց ձեռքից»:**

- Այս ասելով բոցավառեց բոլորի մեջ կամք ու կորով:
- 530** **Հեկտորն** այնտեղ տիգահարեց **Պերիմեդյան Աքեդիուսին՝**  
Չորավարին փովկեացոց, իսկ **Այաքսը՝** հետևակաց  
Հրամանատար **Լալոդամին՝** Անտենորի շքեղ որդուն:  
**Պուլիդամասը** ըստանեց **Կիլենյան քաջ Ուլիսուսին՝**  
Չորավարին **Եպիացոց,** որ համհարզն էր **Փիլեայանի:**  
**Վրրա** պրծավ **Մեգեսն** այնժամ, **Պուլիդամասը** հարվածից  
Խուսափելով քաշվեց մեկդի, **Աստլոնը** թույլ չըտքվեց,  
Որ **Պանթոյանն** ընկնի այդտեղ՝ **նախամարտիկ քաջերի մեջ:**  
**Եվ** նիզակը **Արրա** գրնաց, խրրվեց կուրծքը **Կրիզմոսի,**  
Որ տեղնուտեղ փոշեթալալ գետին փրովեց մեծ թընդունով:
- 540** **Մեգեսն** իսկույն վրրա վազեց և զինագերծ արավ **Արրան:**  
**Այնժամ** **Արրա** դեմ դուրս եկավ **Դուլոփսը** քաջ **նիզակաձիգ՝**  
**Լամպեդյանը,** որ հըզոր էր մըրցության մեջ ու փորձառու,  
Որին ծընեց **Լավմեդոնյան Լամպոսը՝** այրն ազնրվագույն:  
**Ջարկեց** տեգով **Փիլեայանի** կուռ վահանի ճիշտ մեջտեղին,  
**Բաց** սաշտպանեց զըրահը հաստ, զողված գոգլալ թիթեղներով,  
Որ բերել էր մի ժամանակ **Մելլեիսի** վրտակներից  
**Եվ** փետեւը— արանց արքան և իր հյուրին էր **Արվիրել,**  
Որ այն հագնի պատերազմում պաշտպանվելու ուստիներից.  
Որ և **անա՝** հեռու վանեց որդուց օրհասն այդ ժամանակ:
- 550** **Սըլաքասուր** իր գեղարդով զարկեց **Մեգեսը** **Դուլոփսի**  
**Պըղընձածույլ** ու թավաքաշ սաղավարտի ճիշտ զագաթին,  
**Եվ** ձիագես զարգմանակը, որ փայլում էր ծիրանեզույն,  
**Կըտրեց** իսկույն ու գըլորեց փոշիներում ջարդուփըշուր:  
**Ոգորում** էր **Մեգեսն** այդպես հաղթանակի հույսով անդու,  
**Երբ** օգնության հասավ **Արրան** **Մեմելալոսն** արիակառ,  
**Եվ** **Դուլոփսի** ետև կանգնած՝ զարկեց **Արրա** թիկնամեջքին:  
**Սըլաքն** անցավ հուժկու թափով ու դուրս եկավ **Արրա** կըրծքից,  
**Եվ** **Դուլոփսը** բերանքսիվայր թավալգըրը ընկավ գետին.  
**Եվ** երկուսով հարձակվեցին կողոսյտելու զենքերն ուսից:
- 560** **Իսկ** **Հեկտորը** հորդորելով իր ազգական բոլոր մարդկանց,  
**Հանդիմանեց** արիասիրտ **Մելանիպպոս** **Հեկտավոնյանին,**  
Որ հովիվ էր մի ժամանակ, և ծանրաքալ էզներ էր **Աս**  
**Արաժացնում** **Պերկոտեում,** երբ թըշնամին դեռ չէր եկել:  
**Իսկ** երբ եկան դանալեցոց **ճոճճեմական** **Ասուերն,** հասան,  
**Իրին** դարձավ և քաջությամբ անուն հանեց տըրոյանց մեջ.  
**Պրիամոսի** մոտ էր ասորում ու սիրվում էր որդու **Արման:**

Նըրան էր, որ Հեկտորն անա խիստ կըշտամբեց այս խոսքերով.

«Մեյանհիպպե՛, մի՞թե այսպես մենք անտարբեր պիտի մընանք: ]

Չի՞ մորմոքվում սիրտըդ միթե մեր հորեղբոր որդու համար.

570 Դու չե՞ս տեսնում, թե ինչպես են ուզում նըրան զինագերծել:

Ինձ հետ արի՛, պետք չէ այլևս հեռվից կըռվել արայանց դեմ,

Մինչև նըրանց մենք չըսպանենք, և կամ նըրանք հիմնահատակ

Չըկործանեն Իլիոնը բարձր ու կոտորեն բնակիչներին»:

Այս ասելով՝ առաջ անցավ աստվածատիպ դյուցազնի հետ:

Իսկ Այաքսը Տելամոնյան սըրտապընդում էր արայանց.

«Արի՛ եղեք, սիրելիներ, ամաչեցեք մեկըդ մյուսից,

Պատերազմում պետք է որ մարդ ընկերներից իր պատկառի:

Այլի՛ շոտ՝ պատկառողներն են ողջ մընում պատերազմում,

Իսկ փախչողներն՝ անփառունակ, անարգ մահով են կորչելու»:

580 Այսպես ասաց, և նըրանք որ արդեն պատրաստ էին կըռվի, \*

Ազդու խոսքերը դյուցազնի դըրոշմեցին իրենց սըրտում,

Եվ նավերը պարըսպեցին պըղընձակուտ մի պատնեշով,

Մինչ Արամազը նըրանց դեմ էր դըրդում գոռ տըրոյացոց:

Մենեքսվոսն ահեղագոռ գըրգըռեց քաջ Անտիլոքին.

«Անտիլոքե՛, չըկա քեզնից կըրտներագույնն արայանց մեջ, \*

Ոչ էլ քեզ պես արագալիզ կորովի պատերազմում.

Չե՞ս խոչանա մի որևէ տըրոյացի ըսպանելու»:

Այս ասելով նա ետ դարձավ, բորբոքելով Անտիլոքին,

Որը իսկույն դուրս խոյացավ առաջամարտ գընդի միջից

590 Եվ շուրջ-բոլոր աչք անելով՝ արձակեց իր փայլուն աշտեն.

Տըրոյացիք ընկըրկեցին, սակայն հիզակն իզուր չանցավ,

Այն Հեկտավնի խիզախ որդու Մեյանհիպպի կուրծքը խոցեց.

Ընկավ թընդմամբ, և խավարը ծածկեց նըրա աչքերն ընդմիշտ:

Ինչպես բարակն արագավազ, որ հարձակվում է եղնիկի

Չափ վըրս վիրավորված, որին, որջից դուրս ցատկելիս

Չարկեց որսորդն իր սուր նետով ու շընչասպառ արավ նըրան,— \*

Անտիլոքուն ադպես ընդուտ վըրսդ վազեց, Մեյանհիպպե՛,

Որ կողոպտի գեները քս, սակայն Հեկտորն այդ նըկատեց

Եվ խոյացավ արշավակի նըրա վըրս անմիջապես:

600 Անտիլոքուն այդ տեսնելով, թեպետև ծիր պատերազմող,

Չըդիմացավ ու փախավ ետ սարսափանազ գուզանի պես,

Որը գամփոին հոշոտելով և կամ հովվին՝ եզների մոտ,

Թողնում փախչում է հապըշտուպ, քանի դեռ չեն հասել մարդիկ: \*

Փախավ այդպես ծեր Նեստորի որդին տրոյանց և Հեկտորի

Գոչյունների ու նետերի արքայապետի տարափի տակ,  
Բայց հասնելով ընկերներին կանգնեց ու ետ դարձավ դեմքով:

- Այդ ժամանակ տրրոյացիք սոյունների պէս արձառուշտ  
Դեպի նավերը խուժեցին Արամազդի թելադրանքով,  
Որ մեծ ուժ էր տալիս նրանց ու դըրդում էր խիզախ կրովի,  
**610** Իսկ արքայանց թույլացնելով՝ փառքը խըլում էր նրանցից,  
Որովհետև ուզում էր նա փառք ու պարծանք տալ Հեկտորին,  
Որ նավատորմը հրդեհի սաստկատուչոր հըրով անջեջ,  
Եվ Թետիսի խընդրանքը մեծ ի գլուխ հանի ամբողջապես:  
Ըսպատում էր ըզգոնամիտ Ջևառ այնքան, մինչև տեսներ  
Գեթ մի նավի բոցավառվելն իր աչքերով, որից հետո  
Պիտ պատրաստներ տրրոյացոց փախուստը նա նավատորմից,  
Դանաչեցոց պարգևելով հաղթության փառքն այնուհետև:  
Այս մըտքով էր նա Հեկտորին մըղում դեպի նավատորմիդ,  
Որին Հեկտորն ինքն էր արդեն ձըգտում իր ողջ հանդըզնությանը
- 620** Մոլեզնում էր միզակաճոճ Արեսի պես կամ հրաբորբ  
Ինչպես կըրակ, որ վառվում է կատաղորեն լեռան վըրա,  
Որ անտառը խիտ է՝ անթիվ թըրփուտներով ու ծառերով:  
Բերանն ամբողջ փըրփուրի մեջ, և աչքերը կըրակով լի  
Ահագնատես հոնքերի տակ շանթեր էին փայլատակում:  
Ծըքեղ կորդակն անեղորեն տատանվում էր Պըրիամյանի  
Խըրոխտապանձ գըլխի վըրա, երբ մարտընչում էր մոլեզին  
Քանզի հըզոր Ջևան էր նըրան հովանավոր և գորափիզ,  
Որ բազմաթիվ քաջերի մեջ նըրան էր լույ փառավորում,  
Որի կոնքը կարճ էր այնպես, զի Աթենաս Պայլասն արդեն
- 630** Փոյթացնում էր նըրա օրհասն Աքիլլեսի հուժկու ձեռքով:  
Ջանում էր նա խըրվել այնտեղ, խորտակելու շարքերը խիտ,  
Որ տեսնում էր խիզախ գընդեր ու շողշողուն գեները ընտիր:  
Բայց և այնպես չէր կարող նա, թեպետև շատ էր ըշտասպում,  
Ծեղքել գընդերը բազմամարդ՝ շարակարգված բուրգի ձևով,  
Ինչպես ժայռը ճերմակ ծովի ափին ցըցված երկնակարկատ,  
Որ անսատան դեմ է դընում փըշող սաստիկ քամիներին,  
Ալիքներին, որ բախվելով՝ խորտակվում են նըրա վըրա:  
Դանաչեցիք այդպես անաս տոկում էին տրրոյացոց:  
Բայց Հեկտորը հըրաբորբոք, փայլակնացայտ նետվեց առաջ
- 640** Եվ ամբոխի վըրա ընկավ հողմից ոռած ալիքի պես,  
Որ խուժում է նավի վըրա ու փըրփուրով ծածկում է այն,  
Ու մեծաշունչ մըրրիկը ժանտ մըղընչում է առագաստում՝  
Դող հանելով անհարեկված նավազների միտքն ու հոգին,  
Զի հագիվ փոքր-ինչ անջըրպետ բաժանում է նըրանց մահից,—

- Սասանում էր այսպես և սիրուն արայեցոց իրենց կրծքում:  
Ինչպես աչուծ մի ամեհի, որ հարձակվում է բազմաթիվ  
Երինջների նախրի վրա՝ փրոված անծայր մարգագետնում,  
Որ տավարածն անփորձ է դեռ գազանի հետ մարտընչելու  
Եվ երինջի համար անվերջ վազվրզում է ետ ու առաջ,
- 650 Մինչ աչուծը ոստնում թափով ու լափում է մի երինջի,  
Եվ սյուսներն ահաբեկված խուլս են տալիս խառնիճաղանջ,—  
Այդպես նաև արայեցիք աստվածային ահով լրցված՝  
Փախչում էին քաջ Հեկտորի և Արամազդ հոր առջևից:  
Փախան բոլորն ու ըսպանեց Հեկտորն այնտեղ միայն մեկին՝  
Պերիփետես միկենացուն՝ սիրուն որդուն Կոպրեոսի,  
Որ Եվրիսթես թագավորի սուրհանդակն էր և նըրանից  
Հըրամաններ ու պատգամներ էր տանում հաղթ Հերակլեսին:  
Պերիփետեսն ընտիր գավակ՝ վատ, անպիտան հորից ծընված,  
Ուներ պես-պես արժանիքներ, թեթևտորն, մարտի մեջ քաջ
- 660 Եվ իր խելքով առաջինն էր միկեանց մեջ ճոխապաճույճ,  
Որը այնտեղ Պրիամյանին շընորհեց փառք մի գերագույն:  
Ետ դառնալիս նա զարնըվեց իր ասպարի սուր պրոդնկին,  
Որը մինչև ոտքն էր իջնում, իբրը պատնեշ տեգերի դեմ:  
Սալթաքելով ցած գըլորվեց անմիջապես մեջքի վրա,  
Եվ աաղավարուն ահեղորեն հրնչեց նըրա քունքի բոլոր:  
Հեկտորն իսկույն այդ նըկատեց և վազելով հասավ նըրան,  
Աշտեն նըրա կործքը մըխեց և ըսպանեց լուրպնոց մոտ,  
Տրոնք թեև շատ ցավեցին, սակայն օգնել չըկարեցան,  
Իրենք նույնպես վախենալով քաջ Հեկտորից աստվածային:
- 670 Աքայեցիք փախուստ տալով նավատորմի դիմացն հասան,  
Անցան նավերն առաջնաշարք ու պահվեցին նըրանց ետև:  
Այսպես, թողին արգիացիք առաջին շարքը նավերի  
Ու կանգ առան միահամուռ՝ վըրանների առաջ իրենց,  
Չըցըրվելով ճամբարի մեջ. ահն ու սարսափն առավ նըրանց,  
Եվ իրարու ըսկըսեցին բարձըր ձայնով խըրախուսել:  
Իսկ Գերենյան Նեստորը ծեր՝ նահապետը արայեցոց,  
Պաղատում էր ամեն մեկին հանուն իրենց ծընողների.  
«Արի եղեք, սիրելիներս, ու մարդկանցից ամաչեցեք,  
Հիշեցեք ձեր ծընողներին, գավակներին ու ձեր կանանց՝  
680 Մեռած լինեն, թե կենդանի, որոնք թեպետև այստեղ չեն,  
Բայց ես նըրանց անունից ձեզ աղաչում եմ ահավասիկ,  
Ամո՛ր կացեք և մի՛ դիմեք դեպի փախուստ ամոթալից»:  
Այսպես սսաց ու թունդ հանեց նա բոլորի սիրուն ու հոգին:  
Աթենասը աստվածառաք մեզը ցըրեց նըրանց աչքից  
Ու մեծ մի լույս ծագեց նըրանց, լուսավորեց առհավասար

Երկու կողմից՝ թե՛ նավերից, և թե՛ մարտից արշունագանգ:  
Եվ Հեկտորին տեսան ճրրանք՝ համհարզների հետ միասին,  
Նըրանք, որոնք նավաշարքի ետև մըտած չէին կրովում,  
Ինչպես նաև ճրրանք, ովքեր կրովում էին նավերի շուրջ:

- 890 Իսկ մեծասիրտ Ալաքսը քաջ չուզեց կանգնած մընալ այնտեղ, /  
Որտեղ քաշված կանգնել էին մյուս որդիներն աքայեցոց,  
Այլ մեծաքալ վազվրզում էր նավից ի նավ՝ ձեռքերի մեջ  
Մոճելով բիր մի անհեթեթ՝ նավամարտի համար հարմար,  
Քրսաներկու կանգունաչափ երկարությամբ, երկաթազամ:  
Ինչպես մի վարժ ձիախաղաց երանակի միջից ըստվար  
Զոկելով չորս ընտիր ձիեր, դաշտամիջյան ճանապարհով  
Անօրինակ արագությամբ դեպի ոստանն է արշավում,  
Ու նայում են ըսքանչացած հանդիսատես կին, տղամարդ,  
Իսկ ինքը վարժ՝ սրլանալիս մեկից մյուսի վրա է ցատկում,—  
700 Այաքսն այդպես նավից ի նավ ցատկում էր ժիր, հըսկայաքալ,  
Եվ ճրրա ձայնն ահագնագոչ մինչև երկինքն էր բարձրանում.  
Ամենուրեք հուժկու ձայնով հորդորում էր աքայեցոց,  
Որ սաշտպանեն նավատորմիդն ու վըրանները թըշնամուց:  
Մյուս կողմից էլ Հեկտորն էր քաջ տըրոյացոց խըրախուսում:  
Ինչպես մի մեծ, հըզոր արծիվ, խարտիշագեղ ու գիշատիչ,  
Որ հարձակվում է սըրաթև՝ թըռչունների տարմի վըրա—  
Երկարավիզ կարապների, կըռունկների կամ սագերի,  
Որոնք անհոգ իրենց համար արածում են գետեզերքում,—  
Խոյանում էր Հեկտորն այդպես արշավասույր ու շեշտակի  
710 Դեպ նավերի առաջին շարքն՝ Արամազդի բուռն դըրդմամբ,  
Որ առաջ էր մըղում ճրրան և ճրրա հետ՝ տըրոյացոց:

Նավերի մոտ փըրթավ այնժամ մի այնպիսի տուկալի մարտ,  
Որ ասես թե դեռևս թարմ երկու բանակ իրարու դեմ  
Կըրիլը մո՛ր ըսկըսեին, այնպես սաստիկ էին կրովում:  
Ամեն կրովող իր մըտածումն ուներ այդ գոռ գոտեմարտում:—  
Աքայեցիք ազատվելու հույս չունեին բոլորովին  
Եվ հուսահատ, օրհասական կըրիվ էին մըղում, այնինչ  
Յուրաքանչյուր տըրոյացի խիզախում էր այն հավատով,  
Որ նավերը կըհըրկիզեն և կըջընջեն աքայեցոց:

- 720 Այս մըտածմամբ էին ճրրանք գոտեմարտում ահեղորեն:  
Հեկտորն այնտեղ բըռնեց ամուր մի գեղեցիկ և ծովաչու  
Նավի գըլխից, որը իր հետ Պրոտեպլավն էր բերել Տրոյա  
Եվ որ այլևս չըդարձըրեց նա հայրենի երկիրը իր:  
Այդ նավի շուրջ, դեմ-հանդիման աքայեցիք և տըրոյանք



Կրոնում էին խելակորույս կոտորելով մեկ-մյուսին,  
 Չբարասելով հեռվից-հեռու կրովել մետով կամ միգակով,  
 Այլ կուրծք կրրծքի, ձեռքը ձեռքի և միևնույն ոգով վառված  
 Կրոնում էին, զարկում իրար հեսանասուր տապաղներով,  
 Փաշտասաներով և թըրերով ու երկաայրի տեգերով սուր:  
 730 Բագում ընտիր սըրեր ահեղ և սևագամ դաստապանով  
 Ջարդուփըշուր՝ գետին ընկան նըրանց ձեռքից և ուտերից,  
 Եվ արյունը հեղեղի պես հոսում էր սև հողի վըրա:  
 Հեկտորն ամուր բըռնած նավից՝ էլ չէր ուզում բաց թողնել այն  
 Եվ գոռում էր տըրոյացոց ահագնաձայն աղաղակով.  
 «Կըրա՛կ բերեք, կըրա՛կ բերեք, ու կըովեցե՛ք կորովակամ,  
 Արամագըը տալիս է մեզ ամենալավ օրը այսօր՝  
 Տիրանալու նավատորմին, որ ի հեճուկս աստվածների  
 Այտեղ բերին աքայեցիք ու մեծ վընաս հասըրին մեզ՝  
 Մեր ծերերի վատությունից, որոնք չէին թույլ տալիս ինձ  
 740 Եվ բանակին՝ արգելելով նավատորմին մոտիկ կըովել:  
 Մա՛նգս, եթե Արամագըը կուրացրեց մեր միտքը այնժամ,  
 Հի՛նա նույն ի՛նքն է մեզ, քաջե՛ր, տալիս հորդոր և հըրաման»:

Այսպես ասաց Հեկտորն ահեղ, և տըրոյանք միահամուռ  
 Ե՛վս առավել բուրն թափով արգիացոց վըրա ընկան:  
 Չըղիմացալ Այաքսն այլևս սըլաքների սուր տարսսինն  
 Եվ, որպեսզի գուր չըկորչել, թողեց նավի հարթակը նս  
 Ու նահանջեց փոքր-ինչ հեռու, դեպի տախտակ մի յոթոտնյա:  
 Այնտեղ կանգնած դիտում էր նս և միգակով իր անդադար  
 Հեռու վանում տըրոյացոց, ով կըրակ էր բերում հըրձիգ,  
 750 Եվ իր ահեղ ձայնով անվերջ հորդորում էր դանայեցոց.  
 «Դանայեցի՛ դյուցազուններ, պաշտոնյանե՛ր դուք Արեսի,  
 Արի՛ եղեք, սիրելիներս, միչեցեք ձեր ուժն ահագին:  
 Կարծում եք դուք, որ մեր էտև պաշտպանողներ՝ ունենք կանգնած,  
 Կամ թե պարի՞սպ կա հաստապինդ, որ պահպանի մեզ կորըստից:  
 Չունենք մոտիկ ոչ մի ամրոց, քաղաք, որին ասպավինենք,  
 Որ յինեին մեզ գորսալիզ փոխարինող պատրաստ գընդեր,  
 Ո՛չ, գըտընվում ենք քաջազեն տըրոյացոց բաց դաշտի մեջ.  
 Մեր էտև ծո՛վն է թավալվում, ու հեռու ենք մենք մեր երկրից:  
 Մեր կյանքը մեր ձեռքի՛ մեջ է, և ո՛չ կըովից փախչելու մեջ»:  
 760 Այսպես ասաց, մոլեզնարար հալածելով բոլոր նըրանց,  
 Որոնք Հեկտոր Պրիամյանի հորդորանքով, նըրա դըրդամաք  
 Բոցավառվող խանձողներով դեպ նավատորմն էին խուժում:  
 Բոյարին էլ խոցում էր նս երկալմաստվեր իր միգակով.  
 Եվ տասներկու մարդ ըսպանեց Այաքսն այնտեղ, նավերի մոտ:

# Ե Ր Գ Տ ա ս ն վ ե ց ե ռ ո ռ ղ

## ՊԱՏՐՈՎԷՅԱՆ ԴՐՎԱԳ

Այսպես կրովում էին ճորանք գեղեցկատախտ նավերի շուրջ։  
Իսկ Պատրոկլեսն այդ ժամանակ Աքիլլեաի առջև կանգնած  
Թափում էր ջերմ արտասուքներ աղբյուրի պես թըխակայլակ,  
Որ բարձրաբերձ ապառաժից ցած է թափում ջրրերն իր մոլթ։  
Աստվածային Աքիլլը ծիր այդ տեսնելով հուզվեց սաստիկ  
Եվ գրթալով Պատրոկլեսին՝ այս թևավոր խոսքերն ասաց.

«Սիրելիդ իմ, ինչո՞ւ ես դու արցունք թափում աղջըկա պես,  
Որ վազելով մոր ետևից աղաչում է գրրկել իրեն,  
Եվ քաշում է մոր փեշերից ու արգելում առաջ գրնալ,

- 10 Հեկեկալով աղեկըստոր, լալով, որ մայրն իրեն գրրկի:  
Այդպես և դու, ո՛վ Պատրոկլե, լաց ես լինում գորովալիր:  
Գուցե տըխտը լո՛ւր ես բերել միրմիդոնաց և կամ թե ինձ,  
Կամ Փթիայից ընտանեկան մի առանձին գո՛ւյժ ըստացար:  
Ասում են, թե ողջ է հայրըդ՝ քաջ Մենիտիոսը Ակտորյան,  
Եվ ապրում է միրմիդոնաց մեջ Էակյան Պելևսը դեռ,  
Որոնց մեկի կամ մյուսի մահը մեզ վիշտ կըսրատճատեր:  
Եվ կամ այդպես լալիս ես դու արգիացոց վըրա՞ գուցե,  
Որ կորչում են ըստորության համար իրենց՝ նավերի մոտ:  
Միտքըդ ինձնից մի՛ ծածկիր դու, ասա, որ ես էլ յմանամ»:

- 20 Եվ ասացիր խոր հեծությամբ, ազնիվ ասպետ դու Պատրոկլե՛.  
«Օ՛, Պելիպյան, դու ամենեն քաջը բոլոր աքայանց մեջ,  
Մի՛ բարկանար, քանզի սաստիկ աղետ հասավ աքայեցոց:  
Բոլոր քաջերն այն անվանի, որոնք կային քանակի մեջ,  
Պառկած են արդ վըրաններում նետահարված կամ տիգախոց:  
Դիոմեդես Տիդյանը քաջ վիրավոր է նետով խոցված,  
Տեգով՝ արքա Ագամեմոնն ու Ոդիսսը դյուցազարմ,  
Եվ իր ազդրից սուր փըքինով Եվրիպիլոսն է վիրավոր,

- Որոնց հիմա դարմանում են բըծիշկները բազմահընար.  
Իսկ դու դեռ քո դըծոխային քենի մեջ ես, ո՛վ Աքիլլես:
- 30 Չունենա՞մ ես այնպիսի քեն, ինչպիսին քոնն է ժանտածուտ:  
Ո՛վ քեզանից այսուհետև շահ և օգուտ պիտի տեսնի,  
Եթե ադետն աքայեցոց չըհալածես քո քաջությամբ:  
Անագորո՛ւյն, Պելևսը չի՛ եղել հաչրոդ մեծահոգի,  
Ոչ էլ Թետիսը մայրը քո, այլ ծընեցին քեզ ծովը լուրթ  
Եվ ապառած-ժայռերը պինդ, զի անողոք սիրտ ունես դու:  
Իսկ եթե քեզ ետ է պահում գուշակություն մի կամ պատգամ,  
Որ քեզ բերեց արծաթաթաթիկ մեծարո մայրդ Արամազդից,  
Այն ժամանակ ինձ ուղարկիր, տալով զորքը միրմիդոնաց,  
Որ օգնությամբըս դանայանց համար փոքր-ինչ լո՛ւյս լինեմ ես:
- 40 Տուր ինձ՝ հազնեմ զենքերը քո շրթեղանդիս և փառահեղ,  
Որ ինձ քո տեղը դընելով՝ էլ չըկրովեմ տըրոյացիք  
Եվ բազմատանջ աքայեցիք հանգըստանան ու շունջ առնեն,  
Զի մարտի մեջ փոքր-ինչ հանգիստն անհրաժեշտ է, կազդուրիչ:  
Մենք, որ հանգիստ ենք, թարմացած՝ հեշտիվ պիտի կարողանանք  
Վանել դեպի ոստանն իրենց վաստակաբեկ տըրոյացոց»:

- Այսպես խընդրեց աղերսագին, օ՛, միամի՛տ, չէր իմանում,  
Որ խընդրում էր իրեն համար մահու օրհաս աղետաբեր:  
Իսկ Աքիլլեսն հառաչելով Ջրրան այսպես պատասխանեց.  
«Ո՛հ, սիրելի՛դ իմ Մենիտյան, Պատրոկլ, այդ ի՛նչ ես ինձ ասում»,
- 50 Աստվածային ո՛չ մի պատվեր-պատգամից էլ երկյուղ չունեմ,  
Եվ ոչ էլ մայրն իմ նագելի՛ Ջևսից մի բան է ասել ինձ:  
Այլ սուկալի ա՛յն ցավն է իմ սիրտն ու հոգին տանջում սաստիկ,  
Երբ տեսնում եմ մի մարդ, որ իր ինչքով, դիրքով գոռոզացած  
Համարձակվում է նեղությունք զըրկել իրեն հավասարին  
Եվ կարող է նըրա ձեռքից մըրցանակը հափըշտակել:  
Ա՛յս է իմ ցավը դըծընդակ, շա՛տ մեծ վըշտեր կըրեցի ես  
Այն աղջկա համար, որին իբրև պարզև ես ըստացա,  
Իմ նիզակովն առա նըրան, քաղաքն ամուր քանդելուց ետ.  
Որին ձեռքիցս առալ Ատրիդ Ագամեմնոնն, ասես թե ես
- 60 Լինեի մարդ մի անարժան, անաշխարհիկ, վըստարանդի:  
Բայց մոռանանք անցյալը մենք, ո՞խը պետք չէ տևի հավերժ:  
Վընե՛լ էի ես իմ մըտքում չըթողնել քենն իմ, Պատրոկլե՛,  
Մինչև հասներ մարտամբոխի աղմուկը իմ նավատորմին:  
Իսկ դու հիմա ծածկիր ուսերդ ոազմի չըքնաղ իմ զենքերով  
Եվ մըրցասեր միրմիդոնաց զըլուխն անցիր պատերազմում,  
Քանզի տրոյանց փոթորկալից մույթ ամպն արդեն շըրջապատեց  
Նավատորմիդն, և աքայանք քըշված դեպի ծովն ըսայտակ՝

Խըռնըվում են շորջապատված մի ափ ցամաք գետնի վըրս:  
 Տըրոյացոց քաղաքը ողջ խիզախելով խուժել է դուրս,  
 70 Զի չեն տեսնում ճակտիս վըրս փայլատակումը կորդակիս:  
 Կըլըցնեի՝ն ճըրանք իրենց դիակներով փուր անշուշտ,  
 Եթե արքա Ագամեմնոնն հաշտ ու անենգ լինեի ինձ հետ.  
 Այնինչ ահա՛ տըրոյացիք ճամբարի շուրջն են ճակատում,  
 Քանզի Տիդյան Դիոմեդի նիզակը հաղթ իր ձեռքի մեջ  
 Զի մոլեգնում՝ հալածելու համար սուետն աքսլեցոց,  
 Եվ չի հասնում իմ ականջին Ագամեմնոն Ատրիդեսի  
 Զայնը ժըպիրի գըլխից ելած, այլ արնատուշտ Հելտորի գոռ  
 Զայնն է միայն, որ հընչում է տըրոյացոց ի խըրախույս,  
 Որոնք ամբողջ դաշտն ընդարձակ լըցրին գոռում ու գոշումով  
 80 Արյունալից պատերազմի մեջ ընկնելով արգիացոց:  
 Քայց դու արի, ո՛վ Պատրոկլե, գընա՛ իսկույն ըսպատագեն  
 Եվ այդ ժանտախտն արիաքար հալածիր մեր նավատորմից,  
 Քանզի գուցե նավերը մեր այրեն հըրով բոցածավալ  
 Ու մեր ձեռքից խըլեն դըլանք տենչալի դարձն ի հալլենիք:  
 Լըսիր, սակայն, այն ինչ որ ես դըրոշմում եմ քո մըտքի մեջ  
 Որպեսզի դու, ո՛վ Պատրոկլե, բերես ինձ փառք ու մեծ պատիվ  
 Դանալեցոց կողմից բոլոր, վերադարձնեն ճըրանք թող ինձ  
 Գեղաչըքնաղ այն աղջըկան՝ մեծապայծառ պարզեներով:  
 Վանի՛ր ճըրանց նավատորմից, ապա ինձ մոտ վերադարձիր,  
 90 Եվ, եթե քեզ մինչև անգամ այրն Հերալի ահագնաթունը  
 Տա հաղթություն, դու առանց ինձ մի՛ մըխըրճվիր տըրոյանց մեջ.  
 Որովհետև ինձ այդպիսո՛վ փառազըրկած պիտի լինես:  
 Եվ մի՛, տարված պատերազմում ունեցած քո հաջողությամբ,  
 Կոտորելով տըրոյացոց՝ գորքդ մինչև Էլիոն տանի.  
 Զի կարող է պատահել որ քեզ հավատակ և թըշնամի  
 Աստվածներից մեկը հանկարծ Ոլիմպոսից իջնի քո դեմ,  
 Զի Ապոլլոնը հեռաձիգ շատ է սիրում տըրոյացոց:  
 Այլ, փըրկելով նավերը մեր, նորից ինձ մոտ վերադարձիր,  
 Թողած ճըրանց, որ իրար հետ մըրցեն այնտեղ մարտադաշտում:  
 100 Երանի թե, հայր Արամազդ, և Աթենաս, և Ապոլլոն,  
 Կոտորեին մեկ-մյուսին տըրոյացիք և աքսլանք,  
 Եվ մընայինք երկուսըս ողջ, որ մե՛նք մեճակ կործանեինք  
 Տըրոյական սըրբանըվեր մարտկոցները այնդակատույց»:

Աքրանք այսպես խոսում էին իրարու հետ, մինչդեռ այնտեղ  
 Աչաքսն այլևս անկարող էր ընդդիմադրել սըլաքներին.  
 Ընկնում էին ճըրան Ջևար և նետաձիգ տըրոյացիք:  
 Նըրա քունքերը շուրջպատող գըլխանոցը գեղափայլում

Որոտագոչ թընդում էր խուլ՝ բախումներից, և սրղընձյա  
Բեռները գեղասպանույճ՝ հարվածների տակ էին միշտ:

- 110 Հոգնած էր ողջ մարմինը խիստ և ձախ ուտը նամանավանդ՝  
Հըսկայական ասպարն անվերջ այս ու այն կողմ դարձըներուց,  
Մակայն դարձյալ չէին կարող նըրան երբեք տեղաշարժել,  
Թեև նեղում էին աստիկ թափվող նետերն ամեն կողմից:  
Հևևում էր արագ-արագ մարմինն ամբողջ քըրտիճքի մեջ՝  
Նա հագիվ-հագ շունչ էր քաշում, բայց իր դիրքում անդըրդելի  
Կանգնել էր նա ամեն վայրկյան, ամեն կողմից վըտանգի տակ:

Արդ, ասացե՛ք ինձ, Մուսաներ, որ ապրում եք՝ Ռիմպոսում,  
Կըրակը նախ ինչպե՞ս ընկավ նավատորմիդն աքայեցոց:

- 120 Մյաքսի հաղթ հացի տեզին, սըլաքից ցած, և այն կուտեց.  
Եվ Այաքսը, որ իր ձեռքում ճոճում էր դեռ բունը ծայրատ,  
Ռից բոցի պես վայր ընկավ պղնձյա սըլաքն ըշկահելով,  
Անքիժ սըրտով իր հասկացավ աստվածների գործն ու սուկաց,  
Ձի Արամազդն անեղագոչ խըլեց նըրա ձեռքից բուրբ  
Հընարքները և ուզում էր տըրոյացոց տալ հաղթություն:  
Սըլաքներից նա խույս տըլեց. տըրոյացիք այն ժամանակ  
Արագաթև նավի վըրա գրցեցին հուրն ամենակույ,  
Որ բըղընկվեց անմիջապես և շուտափույթ տարածվելով  
Անշիջելի բոցը բըռնեց նավը ամբողջ ծայրեծայր:

- 130 Ծեծելով իր ազդրերը գույգ՝ այսպես ասաց Աքիլը այնժամ.  
«Օ՛, ըշտապիր, Պատրոկլ իմ քաջ, մի՛ դանդաղիր այլևս դու,  
Ոխերիմ հուրն եմ տեսնում ես նավատորմի վըրա անա՛:

Գուցե սըրեն նավերը մեր, և էլ փախչել չըկարենանք,  
Հագի՛ր գևնքերը շուտափույթ, և ես գորքը համախըմբեմ»:

Այս ասելով՝ ելավ գընաց, իսկ Պատրոկլեն արագ-արագ  
Ձինախտովեց փաղակնացալտ պըղիճներով Աքիլլեոսի:  
Նախ և առաջ պրոունքներին կապեց չըքնաղ պոննապաններ,  
Որ կոճկրվում են արծաթյա նարմանդներով ճանանչափայլ.  
Ապա առավ և իր լանջքի վըրա հագավ աստղանանանչ,

- 140 Նըկարագարդ գըրաճը կոտ Հակիդյան արագուճի.  
Հետո կախեց ուղնդանոթ պըղընձյա թուրն արծաթագամ,  
Ռրից հետո նա վերցըրեց վամանը հաղթ ու հաստարեստ.  
Հըզոր գըլխին դըրեց ապա կոտ սողալարտն արվեստավոր,  
Ռրի վերև անեղակերպ գարգմանակն էր ճոճվում շըքեղ.  
Առավ ապա երկայնատվեր մի գույգ աշտե՛՛ ձեռքին հարմար,  
Ձըդիպչելով Հակիդյան քաջի ծանրը հաստ միզակին,  
Ռրը շարժել չէր կարենում ոչ ոք, բացի Աքիլլեոսից.

Պելլան հացին, որ Քիրոնը տրվեց նրա հորը՝ Պելլան  
 Բարձունքներից կըտրելով այն, դյուցազներին ըսպանելու:  
 150 Երբ վերջացրեց, նա պատվիրեց լրծել ձիերն՝ Ավտոմեդին,  
 Ռրին հարգում էր Պատրոկլեսն Աքիլլեսից հետո սրրտանց  
 Եվ մըտերիմն էր ամենեն՝ կըոիվների մեջ մարտագոռ:  
 Ավտոմեդոնն իսկույն լրծեց սըրաթըոիչ ձիերն աշխույժ՝  
 Աշխետը ծիր, Պիսակն անգուսպ հողմի նըման արագարշավ,  
 Ռրոնց ծընեց Մեպտոընյա Մըրրիկն անսանձ սուր Չեփյուոից,  
 Երբ արածում էր Օվկիանի առափընյա մարգագետնում:  
 Նըրանց կողքին փոկից կապեց Ավտոմեդոնը Կայտաոյն  
 (Ռրն Աքիլլեսն Էտիոնից ավար բերեց մի ժամանակ,  
 Երբ նա այդ պերն քաղաքն ստավ), որը թեև մանկանացու,  
 160 Բայց մյուս անմահ նըժույզների հետ համընթաց էր արշավում:

Իսկ Աքիլլեսն ընթանալով մի վըրանից մյուս վըրան՝  
 Ձիանվատում էր քաջերին: Ինչպես գայլերը գիշատիչ,  
 Ռրոնք իրենց կըրծքում ունեն անհաղթելի ուժ անագյուն,  
 Երբ բըզկըտում են լեռներում եղջերագեղ մի նղջերու  
 Ու ներկում են կարմիր արլամբ երախն իրենց ու դունչը ժանտ,  
 Ապա դիմում են միասին դեպ աղբյուրը ձորամիջյան  
 Լափելու նուրբ լեզուներով լուսակայլակ ջուրն աղբյուրի.  
 Փըպխում են սև արլուն ու միս, որոնք ունեն ամենի պիրտ  
 Եվ պայթելու է կըշտապիճը փորը նըրանց՝ տիկերի պես,—  
 170 Այդպես վըխտում էին պետերն ու իշխաններն միրմիրոնաց՝  
 Էակիոյան աքիասիրտ և արագոտն արքանյակի  
 Չորս բուրը. և նըրանց մեջ էր Աքիլլեսն արիսական  
 Հորդորելով նըժույզներին ու քաջերին սասարավոր:

Հիսուն արագ նավ էր բերել դեպի Տրոյա Աքիլլը քաջ՝  
 Արամազդի գերսիրելին, և ամեն մի նավի վըրա  
 Նըստած էին հիսուն հոգի, որոնց վըրա կարգել էր նա  
 Հինգ սալարներ՝ վըստահ նըրանց կարողության և կորույին.  
 Եվ ինքն էր վեհ ամենիշխան հրամանատարն այդ թուրի:  
 Ըսպարապետն էր մի գընդին Մենիսթիոսը խայտազյըրան,  
 180 Ռր էր որդին Սպերքիոսի՝ Արամազդի գետից բըխած,  
 Ռրին ծընեց նըրա համար գեղաչըքնաղ Պելլան դըստրիկ  
 Պոլիդորան— մանկանացու կին՝ աստըծու հետ պտակելով:  
 Բայց անունով համարվում էր որդին Բորոս Պերիեդյանի,  
 Ռր հայտնապես Պոլիդորին կին ստավ մեծ օժիտ տալով:  
 Երկրորդ գընդին գորավարում է Եվդորոն արիսական—  
 Աղջըկորդի, որին ծընեց Փիլասս դուստրը պարոմի

- Պոլիմելեն, Արրան ցանկաց հրգոր Հերմեսն արգոսասպան,  
 Երբ որ տեսավ ոսկեփրքին Արտեմիսի շորջսարի մեջ  
 Վարձակների հետ միասին, որ գեղեցիկ պար էր գալիս:
- 190 Եվ Արրա հետ անմիջապես վերնահարկը բարձրանալով՝  
 Հերմեսն այնտեղ գաղտնաձածուկ մըտավ Արրան, և գեղանի  
 Պոլիմելեն տըվեց Արրան մի լուսագեղ, պայծառ զավակ՝  
 Եվդորոսին՝ սըրունքներով հույժ քաջարշավ ու գոռ մարտիկ:  
 Եվ մանկաբարձ Իյիթն հետո երբ որ ի լույս հանեց մանկան  
 Ու նա տեսավ լուսապայծառ ճառագայթները արևի,  
 Ակտորյանը՝ քաջակորով Եկեքեքը աղջիկն առավ  
 Եվ ապարանքն իր տարավ ճոխ, անբավ օժիտ տալով Արրան:  
 Իսկ ծեր Փիլասը Աորածնին դայելելով սընուցանեց  
 Ու խընամեց խանդաղակաթ՝ իր հարագատ զավակի պես:
- 200 Երրորդ գընդին գորավարում էր Պիսանդրոսն արիսական՝  
 Մեմալյանը՝ գուպարի մեջ իր հիզակով հրոշակավոր  
 Քան բոլորը՝ Աքիլլեսի ընկերոջից՝ Պատրոկլից էտ:  
 Չորրորդի պետն էր ալևոր Փինիքս ասպետը փառահեղ.  
 Հինգերորդին Ալկիմեդոնն՝ անքիծ որդին Լայերկեսի:  
 Եվ երբ Աքիլլը բոլորին ոտքի հանեց կազմ ու պատրաստ՝  
 Կանգնեց այնժամ իշխանաբար և այս ազդու խոսքերն ասաց.  
 «Միրմիդոննե՛ր, հիշեցեք արդ ձեր այն խոսքերն ըսպառնալից  
 Որ սըրայթն Աավերի մոտ ուղղում էիք տըրոյացոց:  
 Երբ ետում էր ոխը իմ մեջ, այսպես էիք ասում դուք ինձ.
- 210 — Պեխածի՛ն, անագորո՛ւյն, մայրող լեղի է ջամբել քեզ,  
 Որ պահում ես բըռնի կերպով ընկերներիդ՝ Աավերի մեջ:  
 Գեթ դառնայինք մենք հաշրենիք ծովագընաց մեր Աավերով,  
 Քանի որ այդ դառնայեղի սև մաղձը քո սիրտն է ընկել:—  
 Այսպես էիք ասում հաճախ ինձ հետ գըլուխ-գըլխի տալով.  
 Եվ արդ, ահա՛, հասավ կըռվի ժամը, որին տենչում էիք.  
 Ով որ քաջ է, թող դուրս գա շուտ պատերազմի տըրոյանց դեմ»:

- Այս ասելով բոցավառեց բոլորի մեջ ուժ ու կորով:  
 Ու շարվեցին բոլորն իսկույն, լըսելով քաջ թագավորին:  
 Ինչպես որ մարդ խիտ քարերով շարի բարձրը պատերն իր տան,
- 220 Որ դեմ դընեն փոթորկաշունչ քամիների բուռըն թափին՝  
 Սաղավարտներն ու վահաններն աչդպես կըպած էին իրար:  
 Եվ ձիագես կորդա՛նների գարգմանակները ճոճվելով  
 Իրար էին շրփվում ընդհուպ, այնպես կըպած էին իրար:  
 Եվ բոլորի առաջն ընկած ըսպառնագեն երկու քաջեր՝  
 Պատրոկլեսն ու Ավտոմեդոնն միախորհուրդ և միաշունչ  
 Գընում էին մարտընչելու միրմիդոնաց գըլուխն անցած:

- Իսկ Աքիլլեսն անմիջապես վերադարձավ դեպի վըրանն  
 Ու մըտնելով այնտեղ բացեց խուփը արկղի նարտարարվեստ,  
 Որ դըրել էր սև նավի մեջ մայրը՝ Թետիսն արծաթաթաթիլ։
- 230** Արկղում կային շատ շապիկներ և հողմապահ պարեգոտներ,  
 Եվ օթոցներ տերևազարդ, կար և այնտեղ արվեստագործ  
 Ըսկան մի մեծ, որով ոչ ոք չէր ըմպում սև գինի ընտիր,  
 Ոչ էլ ձոնում աստվածներին գինի՝ բացի Արամազդից։  
 Ըսկանն արկղից դուրս հանելով՝ նախ ծըծումքով մաքուր սըրբեց,  
 Ապա լըվաց և ողողեց ականակիտ, հըստակ ջըրով.  
 Հետո լըվաց և իր ձեռքերն, լըցրեց գինին ըսկանի մեջ  
 Ու կանգնելով անդաստանում աղոթք արավ դեպի երկինք,  
 Եվ շանթղնկեցն անեղագոռ լըսեց աղոթքն Աքիլլեսի.  
 «Վե՛հ Արամազդ, Պելասգունի և Դոդոնյան, տե՛րդ հեռաբնակ
- 240** Դոդոնների ձըմեռնաճոխ, ուր նըստում եմ քո շուրջքոյոր  
 Գուշակներդ անոտնալվա, սելյանները գետնախըշտի.  
 Մի ժամանակ դու լըսեցիր աղոթքը իմ աղերսագին  
 Ու սաստկապես հարվածեցիր աքայեցոց՝ ի պատիվ ինձ.  
 Լըսիր և արդ աղոթքըս, հա՛յր, և կատարիր խընդիրըս դու։  
 Մընում եմ ես նավատորմում և սիրելի ընկերակցիս՝  
 Մեանիտյանին ողարկում եմ մարտընչելու տըրոյանց դեմ։  
 Հաղթությունը հետն ողարկիր անեղամոռնչ մեծ Արամազդ,  
 Եվ գորացրու նըրա հոգին, որ հասկանա Հեկտորը գոռ՝  
 Կարո՞ղ է մեր քաջ պաշտոնյան և միայնակ պատերազմել,
- 250** Թե՞ իր ձեռքերն անպարտելի ա՛յն ժամանակ կըմոլեգնեն,  
 Երբ ես անձամբ հետը գընամ դեպի կըռիվ արիսական։  
 Բայց թող որ նա մեր նավերից հեռու վանի սղմուկն ու մարտն  
 Ու ողջ-առողջ վերադառնա դեպի արագ նավերն ինձ մոտ  
 Իմ գեներով և հաղթական զինվորներիս հետ միասին»։

Այսպես սասց աղոթելով, և Ջըրվանյանն ըզգոնամիտ  
 Ընորհեց նըրան իր խընդրանքի մի մասը և մյուսը մերժեց։  
 Տըլեց Ջևսը Պատրոկլեսին վանել տրոյանց նավատորմից,  
 Սակայն մարտից ողջ ու առողջ վերադառնալը՝ զըլացավ։  
 Աքիլլեսը Արամազդին աղոթելուց, ձոնից հետո

**260** Մըտավ վըրանն իր վերըստին, ըմպանակը դըրեց արկղում  
 Ու դուրս ելավ անմիջապես, քանզի պըրտանց ուզում էր նա  
 Տեսնել աչքով մարտը դըժնյա՝ տըրոյացոց և աքայանց։

Միրմիդոններն ըսպատագեն հետևելով Պատրոկլեսին  
 Գընում էին դասակ-դասակ տողաշարված և հաղթաբալլ,  
 Մինչև հասան տըրոյացոց ու թափվեցին նըրանց վըրս,



Տըրիվ գալով այստեղ-այնտեղ ճամփաբընակ բռների պես,  
 Ռրոնք այնտեղ, արահետի վըրա իրենց բույնը ունեն,  
 Ու տըղաներն հաճախ ճըրանց չարացնում են ու գըրգըրում:  
 Անըզգամներ՝ որ շատերին պատճառում են ցավ ու վընաս:  
 270 Եթե հանկարծ ակամայից դըրդի ճըրանց մի ուղևոր,  
 Բոյորն իսկույն դուրս են թափվում պաշտպանելու ձագերն իրենց:  
 Այդպես անս արիասիրտ միրմիդոններն էին խիզախ  
 Թափվում իրենց նավերից դուրս՝ ուզամի աղմուկ-աղաղակով:  
 Իսկ Պատրոկլեսն իր քաջերին խրախուսում էր բարձրաձայն.  
 «Միրմիդոններ՝ մարտակիցներ՝ Պելիսածին Աքիլլեսի,  
 Արի՛ եղեք, սիրելիներս, մի՛ մոռանաք, որ քաջ եք դուք,  
 Պատիվ բերե՛ք Պելիսյանին ուզամիկներըս ձեռնամարտիկ,  
 Որ արգոսյան քաջերի մեջ քաջագույններն ենք նավերում:  
 Թո՛ղ հասկանա Ագամեմնոնը մեծասաստ, թե ինչպիսի  
 280 Սըխալ գործեց՝ չըպատվելով աքայեցոց քաջագույնին»:

Այսպես ասաց, բոցավառեց բոլորի մեջ ուժ ու կորով.  
 Ու խուռներամ գըրոհեցին տըրոյացոց վըրա ճըրանք  
 Խրախուսված այդ խոսքերով, և նավերը շուրջանակի  
 Գոռ արձագանք տըվին անեղ՝ աքայեցոց աղաղակին:  
 Տըրոյացիք երբ որ տեսան Մեմիտյանին հաղթահասակ  
 Եվ գինակցին ճըրա շըքեղ՝ գեճուզարդով պըղընձավառ,  
 Իրար անցան ահաբեկված, կարծելով որ Աքիլլը քաջ  
 Թողած իր քենը դըժընդակ՝ հաշտըվել է Ատրիդի հետ,  
 Եվ ամեն ոք սարսափահար աչք էր ածում իր շուրջ բոլոր,  
 290 Որ փախչելով փըրկի իրեն այդ սուկալի պատուհասից:

Նախ Պատրոկլեսն արձակեց իր փալլուն մըկունդը անագին  
 Դեպ բազմությունն այն խուռնախիտ, որը եռ էր գալիս այնտեղ՝  
 Մեծահոգի Պրոտեսիլավ դյուցազունի նավերի մոտ,  
 Եվ հարվածեց Պիրեքմեսին, նա որ բերեց պեռնների  
 Հեծելագունը՝ հորդահոս Աքսիոսի ափունքներից:  
 Վիրավորված իր աջ ուսից՝ նա վայր ընկավ մեջքի վրա  
 Հեծեծալով, փոշեթավալ, պեռնները փախան իսկույն.  
 Պատրոկլեսը ճըրանց սըրտում գըցեց սարսափ մի սուկալի,  
 Ըսպանելով ամենաքաջ ճըրանց պետին պատերազմում:  
 300 Վանեց ճըրանց նավատորմից հեռու և բորբ հուրը մարեց,  
 Ու մընաց նավը կիսավառ. տըրոյացիք տազնապահար  
 Ետ քաշվեցին, իսկ աքայանք սուսջ անցան գըրոհելով  
 Դեպի նավերը գոգավոր, ու փըրթալ մեծ գոռում-գոչում:  
 Ինչպես երբ մեծ ու բարձրաբերձ լեռան գըլխից ուժգին շընչով

- Զըրվանյան Զևար շանթընկեց՝ թանձրակուտակ ամսը քըշի,  
 Ու երևան գան լուսափայլ անտառ ու լեռ բարձրադիտակ,  
 Ու ճեղքըփի անպարունակ եթերն անհուն վերից ի վար,—  
 Այդպես կըրակն աքայեցիք հեռացնելով նավատորմից  
 Փոքր-ինչ ազատ շունչ քաշեցին, բայց կրոփը չէր դադարում,
- 310 Որովհետև տըրոյացիք բոլորովին չէին փախել,  
 Այլ ըստիպված փոքր-ինչ հեռու քաշված նըրանք պատերազմից՝  
 Տոկում էին, դեռ դիմադրում արիսական աքայեցոց:  
 Ընդարձակվեց ճակատն այնժամ, և ամեն մի գորագըլուխ  
 Ըսպանեց մարդ մի քաջագուն. նախ Մենիտյանն իր նիզակով  
 Արեվիկի ազդրին զարկեց, երբ սա թիկունք էր դարձընում,  
 Պըղինձն անցավ մարմնի միջով ու դուրս էլավ անմիջապես  
 Աշուն փըշրեց ոսկորն իսկույն, և նա ընկավ երեսնիվայր:  
 Իսկ Թոսսին վիրավորեց Մենելավոսն արիսական  
 Կըրծքից, որ մերկ էր ասպարից և դիտապաստ փըռեց գետին:
- 320 Փիլիդեսը նրկատելով վըրա քըշող Ամփիկլոսին՝  
 Անուպարեց ու ոլոքից, գիստի տակից զարկեց նըրան,  
 Տեգը սուրսայր կըտրատելով մըկան ու ջիդ՝ Ամփիկլոսին  
 Փըռեց գետին և աչքերը պատեց մոլթով մըռայլամած:  
 Իսկ Նեստորի որդիներից մեկը՝ արի Անտիլոքոսն  
 Ատիմնիոսին խոցեց տեգով, որ տեղնուտեղ շունչը փըչեց:  
 Եվ Մարիսը կըրակ կըտրած հարազատի մահվան վըրա՝  
 Անտիլոքի վըրա վազեց ու կանգ առավ դիակի մոտ,  
 Բայց էլբայրը Անտիլոքի՝ Թրասիմիդեսը դյուցատիպ  
 Կանխեց նըրան ու շեշտակի նըրա ուսին զարկեց տեգով:
- 330 Սըլաքը սուր բազուկն ուսին կըցող ջըդերը կըտրատեց,  
 Եվ Մարիսը գետին փըռվեց՝ փակելով իր աչքերն ընդմիշտ:  
 Այսպես երկու եղբայրների ձեռքով ընկան երկու եղբայր  
 Եվ անդունդներն իջան խավար քաջ ընկերներն Սարպետոնի,  
 Որոնց ծընեց Ամիսովդարը տիգանոն, նա որ սընեց  
 Անընկճելի հաղթ Քիմեոնին՝ ի պատուհաս բազում մարդկանց:  
 Ոյիլևայան Այաքսն այնտեղ ողջ-ողջ բըռնեց Կըրքուլոսին՝  
 Ըըփոթված այդ ժըխտի մեջ, բայց տեղնուտեղ հոգին առավ՝  
 Իջեցնելով իր մեծակոթ սուրը նըրա պարանոցին:  
 Մուսերն արյամբ ամբողջովին կարմիր ներկվեց ու տաքացավ,
- 340 Եվ ծիրանի մահը ծածկեց նըրա աչքերն անմիջապես:  
 Պենելոյան ու Լիկոնն այդտեղ հարձակվեցին իրար վըրա,  
 Ջի երկուսի նիզակներն էլ վըրիպելով թըռան հեռու,  
 Եվ իրարու հասան նըրանք իրենց հըսկա սուսերներով:  
 Զարկեց Լիկոնը ձիագես գըլխանոցի ճիշտ խորանին,  
 Բայց փըշըրվեց սուրը նըրա դաստապանի մոտից ընդհուպ:

- Պենելեոսն ախոյանի պարանոցին զարկեց ուղիղ  
 Եվ այն կըտրեց ամբողջովին, թողեց բարակ մորթը միայն,  
 Որից գըլուխն ի վայր կախվեց, և նա ընկավ դիպթաւալ:  
 Մերիոնեսն Ակամասին հասավ, երբ սա կառք էր նըստում,  
 350 Եվ աչ ուսից հարվածելով՝ նըրան կառքից ցած գըլորեց.  
 Ու մատախող-մեզն անփարատ լըցվեց նըրա աչքերի մեջ:  
 Իդոմենեսը պըղընձով զարկեց բերնին Երիմասի,  
 Ու պըղընձյա սըլաքը սուր խըրվեց ուղեղն ու դուրս եկավ,  
 Փըշոեց ճերմակ ոսկորները, և ատամները թափվեցին,  
 Երկու աչքերը լըցվեցին քըթից-քերնից ցայտող արյամբ,  
 Եվ պաշարեց ամեն կողմից մահվան մըթին ամպը նըրան:  
 Դանաչեցի պետերն այսպես՝ մեկ-մեկ մարդիկ ըսպանեցին,  
 Ինչպես գայլերը քանասար հարձակվում են հոտի վըրա  
 Հոտից հեռու ցըրիվ եկած ոչխար կամ այծ փախընձելու  
 360 Օգտըվելով երիտասարդ անփորձ հովվի խակությունից,—  
 Այսպես նաև դանաչեցիք գըրոհեցին տրոյանց վըրա,  
 Որոնք վախից խուճապահար փախուստ տըվին շարաշըշուկ:

- Տելամոնյան Այաքսը մեծ աշխատում էր իր նիզակով  
 Վիրավորել քաջ Հեկտորին, քայց սա կըուլի մեջ փորձառու՝  
 Արջառենի իր ասպարով պարածածկած ուսերը լայն՝  
 Հետևում էր ուշի-ուշով սըլաքների շըշյուններին  
 Ու շըրիմդին աշտեների. անտարակույս նա լավ գիտեր,  
 Թե հաղթությունը կըուլի մեջ շուռ է տըվել երեսը իր,  
 Բայց մընում էր անդըրդվելի և անասան կըուվում էր նա,  
 370 Որ կարենա իր սիրելի ընկերներին փըրկել գոնե:

- Ինչպես որ վեհ Ոլիմպոսից պարզ ու պայծառ օդի միջով  
 Մուրա մի ամպ դեպի երկինք, երբ Ջևար մեծ մըրրիկ հանի,  
 Ադրպես փըրթավ տըրոյացոց փախուստն հանկարծ նավատորմից:  
 Կանոնավոր շարքով արդեն չէին անցնում փոսը նըրանք,  
 Այլ խուճապով խառնիճաղանջ, մեկ-մյուսին խանգարելով:  
 Հեկտորն էլ էր փախչում հապճեպ սըրաթըրոշ իր ձիերով.  
 Տըրոյացոց բանակը նա թողեց փոսի շուրջ խըռնըված,  
 Որ կառածիզ շատ նըժույզներ կոտորտեցին արքաների  
 Կառքի քեղին ու փախս առան՝ կառքը թողած խոր փոսի մեջ:  
 380 Իսկ Պատրոկլեսն արժարծելով դանաչեցոց եռանդն անդուլ  
 Հայածում էր կըրընկակոխ տըրոյացոց, որ ցիրուցան՝  
 Լըցրին բոլոր ճանապարհներն աղաղակով և խուճապով:  
 Փոշու մըրրիկն ամպանըման բարձրանում էր երկինքն ի վեր:  
 Դեպի քաղաքն էին թեքում երիվարներն ընթացքն իրենց՝

- Սալարմբակ փախուստ տալով վըրաններից ու նավերից:  
 Պատրոկլեսը որոտալով վարում էր իր ձիերն այնտեղ,  
 Ռոտեղ տեսնում էր խրոնրված խառնաշըփոթ ամբոխակույտ:  
 Մարդիկ իրենց կառքերից ցած էին ընկնում բերանքսիվայր,  
 Ու շուռ էին գալիս ճամփին կառքերը խուլ դըզըրդյունով:
- 390 Արագ վարգով անցան փոսից Պատրոկլեսի ձիերն անմահ,  
 Որ աստվածներն էին տըվել չըքնաղ պարզև՝ վեհ Պելեսին:  
 Վառվում էր սիրտը Հեկտորին ըսպանելու բուռն տեճշով,  
 Բայց ճըծույզներն արշավասույր՝ առած տանում էին ճըրան:  
 Ինչպես աշնանն ամպերն ոռած ծանրանում են երկրի վըրա,  
 Երբ Ջըրվանյանը սըրտմըտած՝ տեղատարափ է ջաղքում վար՝  
 Ի պատուհաս ճըրանց, որոնք հասարակաց ատյաններում  
 Դատաստան են տեսնում սըխալ ու ժըխտում են արդարությունն՝  
 Անտեսելով աստվածների վըրեժխընդիթ ցասումն ահեղ,  
 Ռոնց բոլոր գետերն այնժամ վարարում են, ու հորդահոս
- 400 Հեղեղները առատաջուր սեպ բըլուրները ճեղքելով՝  
 Լեռների թեք գառիթափից դեպի ծովն են գահավիժում  
 Ահագնագոչ որոտմուճքով, ու քանդում են գործերն մարդկանց,—  
 Տրոյանց ձիերն այդպես ուժգին վըրընջյունով փախչում էին:  
 Երբ Մենիտյանն արագ ճեղքեց գումարտակներն առաջնաշարք,  
 Տըրոյացոց քըշեց նորից նավերի կողմ, թույլ չըտալով,  
 Որ նահանջեն դեպի քաղաք, ինչպես իրենք էին ուզում,  
 Այլ հետապինդ՝ գետի կողմից և պարըսպից ու նավերից  
 Կտտորում էր նա անխընձ՝ շատերի վրեժը առնելով:  
 Պատրոկլեսը սուր նիզակով նախ հարվածեց Պրոնոսին,
- 410 Որի կուրծքը ասպարից մերկ՝ երևում էր. հոգին առավ,  
 Եվ նա գետին ընկավ ուժգին. հարձակվելով երկրորդ անգամ՝  
 Ջարկեց Թեստոր Ենոփսյանին, որ այժոռի վըրա ճըստած  
 Կուչ էր եկել, կըծիկ դարձած, վախից միտքը մըլար ու մութ,  
 Վախենալուց երասաններն ընկել էին ճըրա ձեռքից:  
 Պատրոկլեսը սուր նիզակով զարկեց ճըրա աջ կըզակին,  
 Տեգն անցկացրեց առամներից և կառքից ցած քաշեց ճըրան  
 Սըլմակոթով, ինչպես երբ մարդ ճըստած քարձր ժայռի վըրա՝  
 Լարից կապված փայլուն կարթով ծովից ձուկ է քաշում հանում:  
 Պատրոկլես այդպես կառքից քաշեց Ենոփսյանին երախաբաց,
- 420 Որն ընկնելով բերանքսիվայր՝ շունչը փըշեց անմիջապես:  
 Երիվախին զարկեց ապա քարով, երբ նա խիզախում էր,  
 Ու ճեղքելով ճըրա գըլույսն ուղիղ երկու տապակ արավ  
 Գըլխանոցի տակ ամրակուռ, գետին ընկավ երեսնիվայր  
 Ու տեղնուտեղ մահն անողոք ճըրա կյանքի թելը կըտրեց:  
 Մեկ-մյուսի ետև ապա գետին փըռեց՝ Երիմասին,

Ամփոտրոսին, Եպպլոնեսին, Դամաստորյան Տլեպոլեմին,  
Եքփոսին և Պիրիսին, Եվիպպոսին և Իփևսին.

Այս բոլորից հետո նաև Պոլիմեդին Արգեսոսյան:

Սարպետոնը երբ որ տեսավ իր բազմաթիվ ընկերներին

**430** Մենիտյան քաջ Պատրոկլեսի ձեռքով ընկած, դիաֆալայ,  
Ամբողջ ուժով ձայն արձակեց կըշտամբելով լիկյաններին.

«Ամոթ է ձեզ, լիկեացի՛ք, ո՛ր եք փախչում, ըսթափվեցե՛ք,  
Ի՛նքըս պիտի ելնեմ հիմա այդ մարդու դեմ, որ իմանամ,  
Թե ո՛վ է այդ դյուցազնը քաջ, որ այսքան մեծ ոճիր գործեց,  
Մընկակոտոր անելով շատ մեծակորով մարտիկներին»:

Այսպես ասաց ու զենքերով նա իր կառքից գետին ցատկեց.

Պատրոկլեսը այդ տեսնելով ինքն էլ կառքից իջավ իսկույն,

Եվ երկուսով՝ կեռակըսուց, կեռամագիլ անգղերի պես,

Որոնք բարձր ժայռի վրրա կրուվում են ճիշ ու գոշյունով,

**440** Ահագնաձայն աղաղակով հարձակվեցին իրար վրրա:

Նրրանց ի տես՝ հուզվեց սաստիկ Զըրվանի մեծ որդին անեղ  
Ու Հերային՝ իր քըրոջը և ամուսնուն այսպես ասաց.

«Վա՛յ ինձ, մարդկանց մեջ ամենեն իմ սիրելի Սարպետոնին  
Վիճակված է ճակատագրից ընկնել ձեռքով Պատրոկլեսի.  
Սակայն սիրտըս հուզումնակոծ երկմըսում է տարակուսված.  
Արտասովալից մարտից նրրան վերցընեմ ես ողջ և առողջ  
Ու փոխադրեմ մեծահարուստ դեպի Լիկիա՞, թե հանդուրժեմ,  
Որ Մենիտյան քաջի ձեռքով հաղթըվի նա ու մահ առնի»:

Եվ նազելի, աչեղ Հերան իսկույն այսպես պատասխանեց.

**450** «Զարհուրելի դու Զըրվանյան, այդ ինչ խոսք է, որ ասում ես,  
Մահկանացու մարդուն՝ մահվան կանխորոշված ճակատագրից՝  
Կամենում ես դու չարաշուք և անողոք մահից փըրկե՛լ:

Արա՛, բայց մյուս աստվածներըս համաձայն չենք քեզ այդ բանում:

Ուրիշ բան էլ ասեմ ես քեզ, և այն դու քո սըրսում պահիր.

Եթե փըրկես Սարպետոնին ու ողջ-առողջ տուն ուղարկես,

Տես, որ գուցե և մյո՛ւս անմահ աստվածներն էլ կըկամենան

Կորըստաբեր կըռվից հանել իրենց սիրած որդիներին:

Պըրիամոսի քաղաքի շուրջ, պատերազմում որդի ունեն

Ծատ անմահներ, որոնց պիտի դու զայրացնես քո վարմունքով:

**460** Եթե որդուդ շատ ես սիրում ու գուրջ ունես նըրա վըրա,

Թող որ ընկնի պատերազմում Պատրոկլեսի հըզոր ձեռքով,

Եվ, երբ կյանքի շունչն ու ոգին թողնեն նըրան, հըղիր Մահին

Եվ Քընին խոր, որ փոխադրեն նըրան դեպի Լիկիա հարուստ:

Հարազատներն ու բարեկամք այնտեղ նրան թաղեն թող որ  
Եվ հուշարձան կանգնեն վրբան՝ տալով պատիվ մահացյալին»:

Այսպես ասաց, և Ջրբվանի որդին անասց այդ խորհրդոյին  
Ու երկրնքից արշունագույն ցող տեղաց վար, երկրի վրբա,  
Իր սիրելի որդու պատվին, որին հետու հայրենիքից  
Վիճակված էր Պատրուկլեսի ձեռքով ընկնել Տըրոյայում:

- 470 Երբ երկուսով հասան իրար, Պատրուկլեսը առաջին հեղ  
Ջարկեց ներքին որովայնին հրոշակավոր Թրասիմելի,  
Որ Սարպեդոն թագավորի ըսպասչակն էր հավատարիմ.  
Սարպեդոնը վրբա վագեց փայլակնացայտ իր աշտնով,  
Բայց վրբիպեց, և հարվածը Կայտառի աջ ուսին առավ.  
Ջին փրորնչաց ու դառնաղի վրբընջյունով փրովեց գետին  
Ու տեղնուտեղ շունչը փրչեց, իսկ մյուս անմահ ձիերն անգուսպ  
Խըրտընեցին, լուծը ճոնչաց, երասաններն խառնըվեցին,  
Քանգի դըրսի կողմից կապված նըծույզն ընկավ փոշեթալիս:  
Բայց քաջատեգ Ավտոմեդոնն անմիջապես ելքը գրտավ,  
480 Իր թանձրաթամբ ազդրից քաշեց սուրը երկար, ձրգվեց առաջ  
Եվ տապալված երիվարի կասերն ամուր կըտրեց արագ:  
Մյուս նըծույզներն ուղղըվեցին ու սամետի տակը մըտան  
Եվ Պատրուկլեսն ու Սարպեդոնն ահեղորեն առան իրար:

Բայց վրբիպեց կըրկին անգամ Սարպեդոնի փայլուն աշտեն,  
Որ ձախ ուսով Պատրուկլեսի՝ անցավ գընաց աննըպատակ:  
Վըրբա հասավ այն ժամանակ Պատրուկլեսը իր պըղընձով,  
Եվ մըկունդը նրբա ձեռքից չըթըռավ գուր և ապարդյուն,  
Այլ հարվածեց այն թաղանթին, որը սիրտն է անըրբատում:  
Եվ Սարպեդոնն, ինչպես քարդի, կաղնի, թեղոշ մի քարձրաբուն,

- 490 Որ հյուսները լեռան վրբա կըտրում են սուր կացիներով  
Նավափայտի համար, այդպես գետին ընկավ հասակով մեկ  
Իր ձիերի, կառքի առաջ, ակռաները կըրճըտելով,  
Ազուռներով, եղունգներով ճանկոնելով հույն արշունագանգ:  
Ինչպես առյուծը համըրընթաց երինջների նախրի վրբա  
Հարձակվելով ըսպանում է մեծամարմին, խարտյաշ մի ցուլ,  
Որ կորչում է հաղթ առյուծի ժանիքների տակ, երախում,  
Այդպես խոցված Պատրուկլեսից լիկեցոց պետն ասպարավոր՝  
Մահվան շեմին ձայն արձակեց իր սիրելի ընկերակցին.

«Արդ, սիրելի՛դ իմ Գըլվակոս, քաջերի քա՛ջ, ժամ է, որ դու

- 500 Ցույց տաս ուժըդ անպարտելի և կորովըդ պատերազմում.  
Քեզ ցանկալի պետք է լինի կըովել, եթե քաջ ես իրոք:

Նախ լիկեցոց պետերին դու հորդոր կարդա գընդից ի գունդ,  
Որ ոգորեն Սարպեդոնի շուրջը կանգնած արիաբար,  
Եվ ինքրդ ինձ պաշտպան կանգնիր արայանց դեմ թո պըղընձով,  
Զի քեզ համար, ո՛վ Գըլավկոս, պիտի լինեն այսուհետև  
Ամոթ ընդմիշտ և նախատինք, եթե՛ երբեք արայեցիք  
Կողոպտեն իմ գեներն այստեղ, ուր ես ընկա մարտընչելիս:  
Օ՛հ, ուրեմըն կանգնիր ամուր և խըրախույս կարդա գընդին»:

Խոսքը նըրա բերանն էր դեռ, երբ որ մահը վըրա հասավ,  
510 Փակեց աչքերն, իսկ Պատրոկլեսն արացելով նըրա կըրծքին,  
Կորզեց աշտեն նըրա մարմնից, փորոտիքը դուրս թափելով.  
Եվ Պատրոկլը տեզն ու հոգին քաշեց մեկտեղ ու դուրս հանեց:  
Միրմիրոններն հասան իսկույն ու բըռնեցին նըրուզգներին,  
Որոնք փախչել էին ուզում, երբ կառքն անտեր էր մընացել:

Լըսելով ձայնն իր ընկերոջ՝ Գլավկոսը ցավեց սաստիկ,  
Միրտը կըտոր-կըտոր եղավ, որ չէր կարող օգնել նըրան,  
Բըռնած բազուկն իր վիրավոր սեղմում էր նա, ճըմիում ձեռքով,  
Որ Տևկոսն էր խոցել նետով այն միջոցին, երբ վազելիս  
Ելնում էր նա պարիսպն ի վեր՝ ընկերներին իր օգնելու:  
520 Եվ Գըլավկոսն Ապոլլոնին աղոթելով՝ այսպես ասաց.  
«Լըսիր, արքա՛, ուր էլ լինես, լիկեցոց մեջ թե տըրոյանց,  
Ամեն տեղ էլ կարող ես դու վըշտատոշոր մարդուն լըսել.  
Որ ինձ նըման տառասպում է անտանելի ցավերի մեջ:  
Վիրավորված եմ կարեվեր, տանջում եմ ինձ ցավերը սուր,  
Զի դադարում արյունն երբեք, ծանրացել է ոսկն իմ թըմբած,  
Ու չեմ կարող անդեղևուն բըռնել նիզակս ու մարտընչել:  
Ընկավ արի մի մարդ ահա՛, շըքեղ որդին Արամազդի՛  
Սարպեդոնը և չըհասավ Զևսը որդուն իր գորավիզ:  
Բայց դու, արքա՛դ արծաթադեղն, առողջացրու այս վերքըս խոր,  
530 Մեղմիր ցավերս, տուր գորություն, որ հորդորեն ընկերներինս,  
Խըրախուսեն իմ լիկեցի ուզամիկներին՝ պատերազմի  
Եվ ես կըովել կարողանամ իմ մըտերմի դիակի շուրջ»:

Այսպես ասաց աղերսագին, Ապոլլոնը լըսեց նըրան,  
Մեղմեց ցավերն անմիջապես և նըրա խոր վերքից հոսող  
Արյունը սև ցամաքեցրեց ու ներշնչեց ուժ ու կորով:  
Գլավկոսն ըզգաց իր սըրտի մեջ ու մեծապես ուրախացավ,  
Որ Ապոլլոն այդպես արագ լըսեց աղոթքն իր սըրտագին:  
Գընաց իսկույն հորդորելու լիկիացոց քաջ իշխաններին  
Սարպեդոնի շուրջ կըովելու, որ զինազերծ չանեն նըրան,  
540 Ապա դիմեց նա մեծաբայ՝ տըրոյացոց պետերի մոտ՝

Պուլիդասի մոտ Պանթոյան և Ազենոր դյուցազնի,  
Գըտավ ապա Էնիասին և Հեկտորին պղղընձագեն,  
Որոնց իսկույն մոտենալով՝ այս թևավոր խոսքերն ասաց.

«Եվ դու, Հեկտոր, բոլորովին մոռացել ես ճիզակակից  
Ընկերներին, որ քեզ համար իրենց կյանքն են զոհում այստեղ,  
Հեռու իրենց հայրենիքից՝ կարոտ իրենց որդոց, կանանց.  
Մինչդեռ ինքքդ չես կամենում օգնել ճրրանց ու պաշտպանել:  
Ընկալ մարտում Սարպեդոնը՝ լիկյանց իշխանն ասպարավոր,  
Որ պահպանում էր ողջ Լիկիան արդարությամբ և իր ուժով:  
550 Պղնձի Արեսն ընկնեց ճրրան՝ հուժկու տեգով Պատրոկլեսի:  
Եկե՛ք հիմա, և թո՛ղ վառի վըրեժը ձեր սըրտերը սեժ,  
Մի՛ հանդորժեք, սիրելիներս, որ միրմիդոնք մոլեգնաբար  
Նըրա զենքերը կողոպտեն, և անպատվեն դյուցազնի դին,  
Հույժ բարկացած դանաչեցոց կորուստների համար, որ մենք  
Պատճառեցինք ճրրանց մեք սուր ճիզակներով՝ նավերի մոտ»:

Այսպես ասաց ու սաստիկ սուգն ասավ համայն տըրոյացոց,  
Քանզի թեև տարաշխարհիկ՝ Սարպեդոնը սյունն էր ճրրանց  
Եվ քաղաքին, բերում էր նա քազում զինվոր իր ետևից,  
Որոնց մեջ ինքն էր ամենեն քաջը մարտում արիական:

560 Տըրոյացիք միահամուռ ու քինավառ զըրոհեցին  
Դանաչեցոց վըրա, և քաջ Հեկտորն ինքն էր առաջնորդում՝  
Վըրիժատենչ ու խիստ ցասկոտ՝ Սարպեդոնի մահվան վըրա:  
Իսկ Պատրոկլեսն աքաչեցոց կրծքում վառեց կրովի կըրակ  
Եվ նախ երկու Ալաքսանդրին ինքնահորդոր՝ այսպես ասաց.

«Ձեզ, Ալաքսանդր, հաճելի է հիմա վանել ոտխներին.

Ցույց տըվեք ձեզ, ինչպես որ միշտ պանծացել էք ձեր քաջությամբ:  
Ընկալ նա, որ առաջինն էր պարիսպն ի վեր ելնողներից՝  
Սարպեդոնը, օ՛հ, եթե մենք կարողանանք կորզել մարմինն  
Ու կողոպտել զենքերն ուսից, և ըսպանել սուր պղղընձով

570 Նըրա դիակը պաշտպանող վըրեժխընդիր ընկերներին...»:

Այսպես ասաց Պատրոկլը քաջ ու բոլորի սըրտից խոսեց:  
Երկու կողմից խըտացնելով ուժերն իրենց ընդդիմամարտ—  
Տըրոյացիք և լիկեցիք, միրմիդոններն ու աքաչանք՝  
Իբար ատան դիակի շուրջ ահագնագոչ աղաղակով,  
Ու պղղընձա ճրրանց զենքերն ահեղորեն շատաչեցին:  
Բայց Արամազդն ուսգմի վըրա սըփռեց գիշեր մի ժանտաժուտ,  
Որ իր որդու համար մըղվող մարուն ավելի՛ դաժան լինի:

Նախ տըրոյանք հալածեցին աքաչեցոց աչակաքավ,



- Քանզի ընկալ ո՛չ անըջան մեկը գընդից միրմիրոնաց—
- 580 Որդին մեծանձն Ազակլեսի՝ Եպիգեսը արիասիրտ,  
 Որ էր երբեմն թագավոր քարեքրնակ Բողիոնի:  
 Այն ժամանակ կըտրին որդին իր հորեղբորն ըսպանելով,  
 Փախալ իսկույն արծաթաթօիկ Թետիսի մոտ ու Պելևսի,  
 Որ ապաստան-պաշտպանություն գըտնի նըրանց հովանու տակ,  
 Որոնք նըրան պատերազմիկ Աքիլլի հետ ուղարկեցին  
 Դեպի Իլիոնը քաջաձի՝ մարտընչելու տըրոյանց դեմ:—  
 Եվ երբ արդեն մոտեցել էր նա դիակին՝ կողոպտելու,  
 Հեկտորն հանկարծ ահագին քար մի իջեցրեց նըրա գըլխին,  
 Որը երկու տապակ եղալ սաղավարտի տակ ամբակուռ.
- 590 Եվ դիակի վըրա փըռվեց բերանքսիվայր, արնաշաղաղ.  
 Ու վերահաս մահը իսկույն նըրա կյանքի թելը կըտրեց:  
 Ընկերոջ մահը սուկայի ցալ պատճառեց Պատրոկլեսին,  
 Ու հարձակվեց նա շեշտակի նախամարտիկ գընդի վըրա  
 Սըրաթըրոյ շահենի պես, որ հալածում է անխընայ  
 Չըղջիկներին ու մանրաթև թըռչնոց՝ նըրանց ետև ընկած:  
 Այդպես և դո՛ւ հարձակվեցիր, ձիամարտիկ ո՛վ Պատրոկլե,  
 Դեպի տրոյանք ու լիկեցիք՝ քաջիդ վըրեժը լուծելու:  
 Զարկեց նա մե՛ծ քըռնաքարով Իթեմենի կըտրին որդու՝  
 Սթենեի պարանոցին և ջըլաբեկ արսւլ նըրան:
- 600 Ետ ընկըրկեց շըքեղանոյս Հեկտորը իր քաջերի հետ  
 Մի տեգընկեց տեղի չափով, որ նեսում է ոմըն մարզիկ՝  
 Փորձելու ուժն իր խաղի մեջ կամ գուպարում՝ թըշնամու դեմ:  
 Տրոյանք այդքան տեղի տըվին՝ հալածվելով աքայանցից:  
 Գըլավկոսը նախ ետ դարձալ, լիկեցոց պետը քաջամարտ,  
 Եվ ըսպանեց մեծահոգի Բաթիկլեսի Քակոն որդուն,  
 Որ ապրում էր Հեղլադայում իր ճոխ փառքով և մեծությամբ:  
 Գլավկոսն հանկարծ ետ դառնալով տեգը մըխեց կուրճըր նըրա,  
 Երբ նա քաջի ետևն ընկած՝ այն է, պիտի քըռներ նըրան:  
 Քակոնն ընկալ, սուկայի ցալ պատճառելով աքայեցոց:
- 610 Տըրոյացիք ուրայացած՝ խուռն ամբոխով վերադարձան  
 Ու կանգ առան միահամուռ՝ Գլավկոսին պաշտպանելու  
 Բայց աքայանք նըրանց վըրա ընկան թափով, արիաքար:  
 Մերիոնն այնտեղ ըսպանեց քաջ Ոնենտրի խիզախ որդուն՝  
 Լավոդոնին, որ Իլիոնում քուրմն էր Զևսի Եդայակրան,  
 Եվ բովանդակ ժողովըրդից մեծարվում էր աստըժու պես:  
 Ծընտրից ցած և ականջի տակից տեգով վիրավորված՝  
 Փըչեց նա շունչն իսկույններթ, ու մահվան մոթն իջալ վըրան:  
 Մերիոնեսի դեմ արձակեց Էնիասն իր պըլիճն-աշտեն,  
 Երբ առաջ էր խոյանում նա պատըսպարված իր վահանով:

620 Բայց նա տեսավ ու խոյս տրվեց տեգից՝ առաջ կրռանալով,  
Սրվինն անցավ անճրպատակ ու ետևում խրրվեց գետին,  
Ուր սրվնակոթն ուժգրնորեն տարուբերվում էր դուրս ցրցված:  
Այդտեղ արդեն Արեսը բուռն իր սաստկությունը կորցրեց,  
Երբ Էնիասի կըշռած հիզակն այդպես գրնաց, մըտավ գետին,  
Անճրպատակ և ապարդյուն արլանալով հուժկու ձեռքից:  
Էնիասը դեպի Մերիոնն այսպես գոչեց հույժ բարկացած.  
«Մերիոնն՛ս, թեպետև դու քաջակաքավ ես իսկապես,  
Բայց շատ շուտով կըլըռեիր, եթե նըշանս ճիշտ առնեիր»:

Կորովաստեզ Մերիոնեսն այսպես սասց Էնիասին.

630 «Ո՛վ Էնիաս, որքան էլ քաջ լինես, դարձյալ դըժվար է քեզ  
Ջըլատել ուժն ու ըսպանել քեզ ախոյան ամեն մարդու,  
Որովհետև բոլորի պես դու ինքդ էլ ես մահկանացու:  
Ե՛ս էլ եթե հաջողեի կործքըդ խըրել հիզակն իմ սոր՝  
Որքան էլ որ քաջ լինեիր, անտարակոյս պիտի տաչիր  
Դու փառքը ինձ և քո հոգին Տարտարոսի թագավորին»:

Այսպես սասց, քայց Մենիտյանն արիասիրտ սաստեց նըրան.

«Մերիոնն՛ս, քաջակորով, ինչո՛ւ ես դու խոսում իզուր.

Տըրոյացիք խըրոխտապանձ՝ ոչ թե խոսքով նախատական,

Այլ շատերին կորուստ տալով պիտ մեռելից հեռու քաշվեն:

640 Մարտում բազուկն է հաղթողը և ատյանում՝ ճարտար լեզուն,  
Ուստի այստեղ ոչ թե լեզվով, այլ բազուկով՝ պետք է կըռվենք»:

Այս ասելով՝ առաջ անցավ, Մերիոնեսն էլ նըրա հետ:

Ինչ շառաչյուն, որ հանում են փայտահատներն լեռան վըրա,

Անտառախիտ թավուտներում, որ լըսվում է հեռվից-հեռու,—

Գետինն այդպես դըղըրդում էր, թընդում հուժկու սուսերների

Ու երկապրի հիզակների, վահանների արջառամորթ

Քեմոխտապատ գըրահների բախումներից շառաչաձայն:

Ծանոթն անգամ չէր ճանաչի աստվածային Սարպեդոնին,

Զի նա ուղքից մինչև գըլուխ սըլաքներով էր ծածկըված

650 Ու թաթավուն ամբողջովին թանձրը փոշու և արյան մեջ:

Կըռվում էին նըրանք այդպես դուցազունի դիակի շուրջ:

Ինչպես գարնանը մեղուներն տըզտըզում են փարախի մեջ

Կաթով լեցուն դուլերի շուրջ, երբ առատ է կաթն ամեն տեղ,—

Այդպես նըրանք խոնվել էին գետնատարած դիակի շուրջ:

Ջևար աչքերն այդ դըժընդակ կըռվից երբեք շուտ չէր տալիս,

Այլ նըրանց էր նայում անթարթ, միտք անելով ինքն իրեն մեջ

Պատրոկլեսի մահվան վըրա և երկմըտում էր մըտահույզ,

Թե ըսպանի՞ Գրքան արդյոք Պրիամյանի պղնձյա գեներով  
 Սարպետոնի մարմնի վրա և կողոպտի գեներն ուսից,  
 660 Թե՞ տակավին դրժոխատանջ ցավ ու տաժանք տա շատերին:  
 Ծառ մշտածեց և ի վերջո այս միտքը նա հարմար գրտավ,  
 Որ քաջ ընկերը մեծագոր Պելիսածին Աքիլլեսի,  
 Կրրընկակոխ՝ տրրոյացոց և Հեկտորին պղղընձագեն  
 Դեպի քաղաքը հալածի՝ կոտորելով շատ-շատերին:  
 Ուստի և նա նախ և առաջ Հեկտորի սիրտն ահաբեկեց,  
 Որ նըստեց իր կառքը շրքեղ ու ետ դարձավ, փախավ արագ,  
 Եվ հորդորեց տրրոյացոց, որ նըրանք էլ փախչեն շոտով,  
 Զի նա Զևսի սուրբ կըշեռքի մետն ըմբռնեց անմիջապես:  
 Զըմընացին այնտեղ նույնիսկ լիկեցիներն արիասիրտ,  
 670 Երբ որ տեսան նըրանք իրենց թագավորին կրծքից խցված՝  
 Դիակների շեղջակույտում, զի նըրա շուրջ շատերն ընկան  
 Արյունահեղ գուպարի մեջ, որ Արամազդը բորբոքեց:  
 Աքալեցիք կողոպտեցին Սարպետոնի գեներն ուսից,  
 Եվ Մենիտյանն արիասիրտ՝ պղղընձափալ գեներն այլ ողջ  
 Հանձնեց իր քաջ ընկերներին, որ նավատորմ տանեն իսկույն:  
 Եվ Զըրվանյանն այն ժամանակ Ապոլլոնին հըրամայեց.  
 «Ծո՛ւտ, Ապոլլոն, գընա և դուրս քաշիր իսկույն Սարպետոնին  
 Տեղատարափ արլաքներից և, մաքրելով արյունը սև,  
 Առ տար հեռու ու գետի մեջ լըվա՛, օծիր անուշ յուղով,  
 680 Եվ հագցըրու անմահական ըզգեստները, և Քուն ու Մահ  
 Երկվորյակին՝ ճեպընթացիկ դիահանաց հանձնիր նըրան,  
 Որպեսզի շոտ տանեն ու լայն Լիկիո հարուստ ազգին հանձնեն.  
 Հարագատներն այնտեղ նըրան թաղեն պատշաճ հանդեսներով,  
 Կանգնեն շիրիմ և մահարձան, որ մեռելի պատիվն է մեծ»:

Այսպես ասաց, և Ապոլլոնն անասց իր հոր հըրամանին,  
 Եվ իջնելով բարձր Իդայից՝ գընաց դեպի գուպարն ահեղ,  
 Ու կորզելով անմիջապես Սարպետոնին արլաքներից՝  
 Տարավ հեռուն, լըվաց գետում, օծեց յուղով անուշահոտ  
 Ու հագցըրեց անմահական ճոխ հանդերձներ և Քուն ու Մահ  
 690 Երկվորյակին՝ ճեպընթացիկ դիահանաց հանձնեց նըրան,  
 Որոնք տարան ու ցած դըրին Լիկիայի լայն հրապարակում:

Իսկ Պատրոկլեսն Ավտոմեդին և ձիերին հորդորելով  
 Հալածում էր տրրոյացոց և լիկեցոց ետևն ընկած:  
 Օ, անխոհե՛ս, նա աշդպիտով սատոիկ աղետ բերեց գըլխին,  
 Եթե լըսեր նա խելացի պատվիրաններն Աքիլլեսի,  
 Պիտ ազատվեր նա անկասկած մահու դաժան սև օրհասից:

Սակայն Ջևսի միտքն ավելի հրգոր է քան միտքը մարդկանց,  
 Որ քաջին էլ փախցրնում է ու հեշտությամբ փառազրկում,  
 Նույնիսկ եթե ինքը նրան մղած լիներ դեպի գուպար,  
 700 Ինչպես որ քաջ Պատրոկլեսին, որին ինքը դրոշեց ի մարտ:  
 Ո՞ւմ առաջին անգամ այդտեղ և ո՞ւմ վերջում ըսպանեցիր,  
 Երբ աստվածները, Պատրոկլե, քեզ դեպի մահ հրավիրեցին:  
 Ադրեստոսին նախ և առաջ, Ավտոնոսին, Եկեքլոսին,  
 Եվ Մեգասյան Պերիմոսին, Մելանիպպին, Մուլիոսին,  
 Ելասոսին զարկեց ապա, Պիլարոնեսին, Եպիստորին  
 Ըսպանեց նա, իսկ մյուսներն ազատվեցին փախուստ տալով:  
 Անշուշտ այդ օրն իսկ կաննեին աքայեցիք բարձր Տրոյան  
 Պատրոկլեսի ձեռքով, քանզի խիզախում էր իր նիզակով,  
 Եթե Գուշակն Ապոլլոնը կանգնած ամուր բուրգի վրա՝  
 710 Մահ չընկոթեր Պատրոկլեսին, պաշտպանելով տրոյացոց:  
 Պատրոկլեսը երեք անգամ գրոհեց պատի անկյունն ի վեր,  
 Եվ Ապոլլոնն երեք անգամ նրան հեռու վանեց պատից,  
 Ետ հրրելով նրա վահանն անմահական իր ձեռքերով:  
 Իսկ երբ չորրորդ անգամ ուժգին գրոհ գործեց աստվածորեն,  
 Արծաթադեղ արքան այնժամ ըսպանալից սաստեց նրան.  
 «Հեռո՛ւ, դյուցազրն Պատրոկլես, նակատագրից քեզ չի տրրված  
 Քո նիզակով քանդել քաղաքը քաջազուն տրոյացոց,  
 Ոչ էլ նույնիսկ քեզանից քաջ Պելիսսածին Աքիլեսին»:

Այսպես ասաց, ու Պատրոկլեսն ընկրկելով՝ տեղի տրվեց,  
 720 Անաքեկված կորովաձիգ Ապոլլոնի բարկությունից:  
 Հեկտորը իր սրբաթռոչն նրժույզները սպասարմբակ  
 Կանգնեցրել էր Սկեսկան դրոհների մոտ, երկմրտելով՝  
 Մըտրակելով նրանց արդյոք մղեր նորից դեպի գուպա՛ր,  
 Թե՛ հորդորեր գորքին գալու, հավաքվելու պարբուսի մոտ:  
 Երկմրտում էր Հեկտորն այսպես, երբ Ապոլլոնն հասավ այնտեղ  
 Քաջակորով, երիտասարդ մի կրտրիճի կերպարանքով՝  
 Ասիոսի, որ ձիախրոխտ քաջ Հեկտորի մորեղբայրն էր,  
 Հարազատը Հեկաբեի և Դիմասի որդին շրթեղ,  
 Որ ապրում էր Փոյուգիսյում, Սանգար գետի ափերի մոտ:  
 730 Արամազդի որդին նրա դեմքն առնելով՝ այսպես ասաց.  
 «Ինչո՞ւ ես դու մարտը թողել, Հեկտո՛ր, այդ քեզ չի վայելում,  
 Եթե այնքան քաջ լինեի, որքան թույլ եմ ես քեզանից,  
 Ծուտով պիտի դու գրդջայիր, որ արյունոտ մարտը թողիր:  
 Պատրոկլեսի վրա՛ վարիր նրժույզներդ կարծրասարմբակ,  
 Գուցե նրան դու ըսպանես և առնես փառք Ապոլլոնից»:

- Ասաց աստվածն ու վերըստին դիմեց դեպի մարտը մարդկանց:  
 Եվ Հեկտորը հրրամայեց կորովասիրտ Կեբրիոնին,  
 Որ մըտրակի անժույզներին ու դեպի մարտ վարի անրանց:  
 Ապրիլունը զրնաց մըտալ պատերազմող բազմության մեջ
- 740 Եվ աքայանց զորքերի մեջ զըցեց աղմուկ, խրոփություն,  
 Ընձեռելով փառք ու պարծանք տըրոյացոց և Հեկտորին:  
 Հեկտորը մյուս աքայեցոց հետամուտ չէր, այլ միմիայն  
 Պատրոկլեսի դեմ էր վարում երիվարներն իր ամենի:  
 Այդ տեսնելով Պատրոկլեսը կառքից գետին ցատկեց իսկույն  
 Նիզակը ձախ ձեռքով բըռնած, աչով գետնից ստալ արագ  
 Մի քսպիտակ ապառաժ քար, որ իր ամբողջ բուռը լըցրեց,  
 Ու պըտտելով նետեց ուժգին, որ անշահին չստալ թեև,  
 Բայց զուր չանցաւ, այլ հարվածեց Հեկտորի քաջ կառավարին՝  
 Կեբրիոնին, որ հարճորդին էր մեծափառ Պրիամոսի:
- 750 Քարը դիպաւ անրա ճակտին՝ ջախջախելով հոնքերը զույգ,  
 Եվ աչքերը ոտքերի մոտ գետին ընկան փոշեթաթաթալ,  
 Կեբրիոնը ջըրսուզակի անման իսկույն ցած գըլորվեց  
 Չըքնաղ կառքից, ու դուրս թըռաւ անրա հոգին ոսկորներից:  
 Որին, ո՛վ քաջ դու Պատրոկլես, դառն հեզանությամբ այսպես սսիր.  
 «Վա՛հ, այս ինչ ժիր, անկուն մարդ է, և ինչպե՛ս է թեթև թըռչում.  
 Եթե լիներ ան որևէ ձըկնով հարուստ ծովի վըրա՛  
 Կըկըշտացներ շատ-շատերին խեցեմորթեր որոնելով,  
 Ցած ցատկելով իր անվակից՝ անյնիսկ ծովում ալեկոծված,  
 Ինչպես հիմա, որ հեշտությամբ կառքից գետին ցատկեց թեյթև:
- 760 Տըրոյացոց մեջ էլ ուրեմն եղել են քաջ լողորդ մարդիկ»:  
 Այսպես ասաց ու դեպի քաջ Կեբրիոնը վազեց արագ,  
 Առյուծի պես, որ դեպ փարախ արշավելիս վերք է առնում  
 Իր հաղթ կըրծքից ու վայր ընկնում՝ զոհ զընալով իր քաջությանն:—  
 Այդպես և դո՛ւ, ո՛վ Պատրոկլես դեպ Կեբրիոնն արշավեցիր:  
 Մյուս կողմից էլ Հեկտորը իր կառքից արագ գետին ցատկեց,  
 Եվ իրարու վըրա փըրթան Կեբրիոնի շուրջ երկուսով,  
 Առյուծների պես սովաստանջ, որ իրար հետ, լեռան վըրա  
 Մաքառում են մղեզնաբար մի եղնիկի դիակի շուրջ:  
 Այսպես ահա՛, պատերազմի երկու հըմուտ դյուցազուններ՝
- 770 Մեկը Պատրոկլը Մեհիտյան, մյուսը Հեկտորը փառաշուք՝  
 Տըքնում էին բըրտինք մըտած՝ Կեբրիոնի դիակի շուրջ  
 Ըսպանելու մեկ-մյուսին իրենց անգութ պըղինձներով:  
 Հեկտորը պինդ գըլխից բըռնած, և Պատրոկլը ոտքից ամուր,  
 Ու ոչ մեկը բաց չէր թողնում. այդպես անս անուն ժամանակ  
 Տըրոյացիք ու դանայանք էին կըռվում ամենաբար:

Ինչպես Հարավն ու Հյուսիսակն են ոգորում իրարու դեմ  
 Լեռնային խիտ թավտոտներում՝ դըղըրդեղով անտառը խոր,  
 Որ բարձրուղեշ հացին, փիճին և հոնի ծառը կարծրափայլ  
 Իրենց աճուն ճյուղերն անդույ իրարու են զարկում ուժգին,  
 780 Խարշափում են ահագնալուր ու կոտորտվում ճարճատյունով,—  
 Այսպես տրոյանք և աքայանք հարձակվելով իրար վըրա՝  
 Ջարդում էին մեկ-մյուսին ու ոչ ոք չէր փորձում փախչել:  
 Կերթիոնի շուրջը իրար կողք մըխվեցին շատ աշտեններ,  
 Եվ թևավոր նետեր թըռան աղեղների ձիգ լարերից,  
 Ու քարերի շատ տարափներ ջախջախեցին նըրա շորս դին  
 Կըովողների կոտ վահաններ, բայց նա փրոված մեծատաբած՝  
 Իր ահագին հասակով մեկ, փոշու սաստիկ մըրըրկի մեջ  
 Մոռացել էր ձի վարելու հըմտությունն ու արվեստն ընդմիշտ:  
 Այդպես երկար, քանի արևն երկինքն ի վեր էր բարձրանում,  
 790 Երկու կողմից թըռչում էին նետեր, և շատ քաջեր ընկան.  
 Իսկ երբ թեքվեց գունդն արևի, խոնարհվելով դեպ մայրամուտ,  
 Աքայեցիք իրենց բախտից վեր գորավոր հանդիսացան  
 Եվ տեգերի տարափի տակ տըրոյացոց խոուն ամբոխից  
 Դուրս քաշեցին Կերթիոնին ու զինազերծ արին նըրան:

Բայց Պատրոկլեսը չարամետ գըրոն գործեց տրոյանց վըրա  
 Եվ խոյսցավ երեք անգամ ժիր Արեսի պես քաջընթաց՝  
 Որոտալով ահեղաբար, և ըսպանեց ինը մարդու:  
 Իսկ երբ չորրորդ անգամ խիզախ գըրոն գործեց աստվածորեն,  
 Այնժամ արդեն քեզ երևաց կյանքիդ վախճանն, ո՛վ Պատրոկլե.  
 800 Դեմըդ եղավ Ապոլլոնը, որ ահավոր է մարտի մեջ:  
 Չէր տեսնում նա ամբոխի մեջ երթևեկող Ապոլլոնին,  
 Որ դեպի նա առաջացավ թանձրր ամպով մի պարուրված,  
 Պատրոկլեսի ետև կանգնեց ու հարվածեց ծանրը ձեռքով  
 Լայն թիկունքին և ուսերին, և աչքերից կայծեր թըռան:  
 Սաղավարտը նըրա գըլխից գըցեց արքան արծաթաղեղ,  
 Եվ փողածն գըլխանոցն այն մեծ թընդունով ցած գըլորվեց  
 Նըծույզների ոտքերի տակ. գիսակները թաթախվեցին  
 Փոշիների և արյան մեջ. ցած չէր ընկել բոլորովին,  
 Հողաթավալ չէր եղել դեռ այդ սաղավարտը ձիագես,  
 810 Որ ծածկում էր շընորհագեղ գլուխն Աքիլիի աստվածային:  
 Ջևար հիմա տըվեց, որ այն Հեկտորը իր գըլխին կըրի,  
 Բայց ոչ երկար ժամանակով, քանզի մոտ էր մահը նըրա:  
 Պատրոկլեսի երկար աշտեն սըլաքասուր ու հաստաբեստ  
 Երկու կըրտը եղավ ձեռքում, և ուսերից գետին ընկավ  
 Պըճըղնալոր վահանը կոտ իր ամբապինդ փոկով հանդերձ:

Եվ Ապոլլոնն՝ Արամազդի որդին զըրահը արձակեց:  
Ծանրը թըմբիր տիրեց մըտքին, անդամները ընդարմացան,  
Ապուշ կըտրեց ամբողջովին, և մոտ գալով մի դարդանյան  
Սըլաքասուր իր նիզակով զարկեց նըրա թիկնամեջքին:

820 Դա Եվփորբոսն էր Պանթոյան, որ գերազանց էր տարեկից  
Քաջերի մեջ կառք վարելում և թե՛ ոտքով արշավելիս:  
Քըսան քաջեր իրենց կառքից գետին էր նա զարկել, երբ դեռ  
Սուաջին հեղ կառք վարելով՝ հըմտանում էր ուզմի գործին:  
Սուաջինը նա՛ զարկեց քեզ իր աշտեով, ո՛վ Պատրոկլէ,  
Սակայն չընկնեց, այլ քաշելով մարմնից աշտեն երկայնաստովեր՝  
Փախավ մըտավ բազմության մեջ, սիրտ չանելով դեմը կանգնել,  
Չընայած մերկ էր Մենիտյանն ու զինագերծ բոլորովին:  
Պատրոկլէսը աստվածահար և մըկունդով վիրավորված  
Դեպ ընկերներն իր խույս տըվեց, որ ազատվի ու օրհասից:

830 Բայց Հեկտորը հենց որ տեսավ մեծահոգի Մենիտյանին  
Գուպարից ետ ընկըրկելիս և վիրավոր սուր պըղընձով՝  
Ջոկատների միջից իսկույն վըրա վազեց և սայրասուր  
Տեզը խըրեց կողքը նըրա ու դուրս հանեց մյուս կողմից:  
Փուլ եկավ նա գետնատըրրոփ, ու սուզն առավ աքայեցոց:  
Ինչպես առյուծն ընկնում է հաղթ և աննըվան կինճին կըռվում,  
Մաքանելով մոլեգնաբար լեռան վըրա՝ ջըրի համար,  
Որից խըմել էին ուզում երկուսով էլ, բայց վերջապես  
Առյուծն իր մեծ ուժով հաղթում է շընչասպառ ախոյանին,—  
Այսպես Հեկտորը մոտիկից զարկեց հուժկու իր նիզակով

840 Պատրոկլէսին,— որ շատերին էր ըսպանել պատերազմում,—  
Ու պարծենկոտ խըրոխտանըքով այս թևավոր խոսքերն ասաց.

«Ո՛վ Պատրոկլէս, հույս ունեիր անշուշտ քանդել քաղաքը մեր  
Ու տրովուհյաց, ազատության արևը վառ խավարելով,  
Գերեվարել սև նավերով դեպ ցանկալի երկիրը քո:  
Խե՛նթ, չըգիտե՛ս, որ սըրավազ երիվարները Հեկտորի  
Նըրա՛նց համար են արշավում դեպի գուպար քառատըրրոփ,  
Եվ ես տեգով բարձր եմ բոլոր պատերազմիկ տըրրովներից  
Ու նըրանցից հեռու եմ ես վանում սև օրը գերության:

Իսկ դու այստեղ, դաշտում ընկած, անգղերին կեր դառնաս պիտի:  
850 Թըշվա՛ռ, չօգնեց քեզ մինչևիսկ Աքիլլէսը հըսկայազոր,  
Որ քեզ այստեղ ուղարկելիս շատ պատվերներ տըվեց անշուշտ,  
Ասաց.— թող քեզ, սիրելիդ իմ, երիվարներդ ետ չըքերեն  
Դեպի նավերն արագաթև, մինչև որ դու մարտախողոդ  
Եվ արնատուշտ այդ Հեկտորի շապիկը իր կըրծքի վըրա  
Պատառ-պատառ չանես նըրա տաք արբան մեջ ողողելով:—  
Այսպես ասաց նա անկասկած և համոզեց քեզ՝ հիմարիդ»:

Եվ դու հոգիդ ավանդելիս այսպես ասիր, ո՛վ Պատրոկլէ.  
«Հըպարտացիր այժմ, Հէկտո՛ր, մեծաբանիր, որովհետև  
Ձևսն ու արքան արծաթադեղ՝ հաղթությունը քեզ տրվեցին.  
860 Նըրա՛նք էին, որ քո ձեռքով ի սարսուծություն մատնեցին ինձ,  
Եվ ուներես նըրա՛նք էին, որ գեներըս կողոպտեցին:  
Նույնիսկ եթե քեզ պես քրտան քաջ ախոյան դեմըս էլներ,  
Բոլորին էլ իմ նիզակով իսկույն գետին կըփռոնէի,  
Բայց չարաբախտ ճակատագիրն Լադոնէի որդու ձեռքով  
Ու մարդկանցից Եվփորթոսը ըսպանեցին ինձ գուպարում,  
Իսկ դու միայն երրորդն ես, որ ավարում ես մարմինը իմ.  
Բայց քեզ այլ բան պետք է ասեմ, և դու այն քո մըտքում պահիր,  
Դու էլ երկար չես ապրելու, մոտ է նաև օրհասը քո  
Կընկնես շուտով Էակիոյան Աքիլլէսի հըզոր ձեռքով»:

870 Այսպես ասաց վերջին շրնչում և կընքեց իր մահկանացուն:  
Հոգին մարմնից դուրս թըռչելով՝ իջավ խավար Դըծոխքն ի վար,  
Ողբալով իր բախտը դըծխեմ, թողած հասակն իր ծաղկատի:

Պատրոկլէսին— մեռելին իսկ՝ այսպես ասաց Հէկտորը վետս.  
«Օ՛, միրմիրո՛ն, ինչպե՞ս ես դու ինձ դառնագույն մահ գուշակում.  
Ո՛վ իմանա, թե Աքիլլը, որդին Թետիս վարսագեղի  
Ինձնից առաջ չի մեռնելու իմ իսկ ձեռքով տիգահարված»:

Այսպես ասաց և սուր աշտեն քաշեց ու դուրս հանեց վերքից՝  
Աքացելով դին ու տեգով գըլորեց այն մեջքի վըրս,  
Ապա իսկույն իր նիզակով Ավտոմեդի վըրս վազեց՝  
880 Դեպ ըսպատչակն աստվածատիպ և արագոտն Աքիլլէսի  
Ըսպանելու տենչով վառված, քայց թըրցընում էին նըրան  
Զիերն անմահ, որ իբրև ճոխ պարզև տըվին դիք Պելևսին:



# Ե Ր Գ Տ ա ս ն յ ո թ է ր ո ր ղ

## ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՄԵՆԵԼԱՎՈՍԻ

Բոթը հասավ Ատրեոսի արի որդի Մենելային  
Թե Պատրոկլեսն ըստանալ է ահեղ մարտում տղրովներից,  
Եվ նա փախում իր պրղընձով մըտավ գընդերն առաջամարտ  
Պաշտպանելու Պատրոկլի դին. ինչպես երինջ մատաղատի  
Անդրանկածին իր երկունքի տանջանքներին դեռ անտվոր,  
Որ դառնում է հորթի չորս դին սրրտանըմիկ մըրմընջումով,—  
Պըտըտվում էր խարտիշագեղ Մենելայիսն այդպես անվերջ  
Պատրոկլեսի դիակի շորջ, առաջ պարզած վահան ու տեգ,  
Պատրաստ՝ գետնին տարածելու իր դեմ էլնող ախոյանին:

- 10 Իսկ Եվփորբուը քաջատեգ՝ Պանթեոսի շքեղ որդին  
Չէր հեռանում Պատրոկլեսից և դիակին մոտիկ կանգնած՝  
Ձայն արձակեց ու սրանձալով այսպես ասաց Մենելային.  
«Դյուցասըն՝նդ դու Ատրիդես, Մենելայի՛ս, իշխանըդ մեծ,  
Քաշլիր գընա, ինձ թող մեռելն ու կողոպուտը արյունոտ,  
Քանզի ահեղ պատերազմում ոչ ոք ինձնից ավելի շուտ  
Տըրովներից ու դաշնակից կըտրիճներից տարաշխարհիկ՝  
Չըհարվածեց իր պրղընձյա հուժկու տեգով Պատրոկլեսին:  
Ուստի թող որ ե՛ս ժառանգեմ պատիվն այդ մեծ տրրոյանց մեջ.  
Ապա թե ոչ իմ միզակով կառնեմ և քո՛ անուշ հոգին»:
- 20 Գոչեց այնժամ խարտիշահեր Մենելայիսն անհուն ցասմամբ.  
«Հա՛յր Արամազդ, վատ է ճիշտ որ գոռոզությունն ամբարտավան,—  
Ո՛չ հովազը, ո՛չ առյուծը, ո՛չ էլ վայրագ վարազը ժանտ,  
Որ փքքվում է ինքն իրեն մեջ հույժ մեծամիտ հըպարտությամբ՝  
Չեն հոխորտում այնպես գոռոզ հանդըգնությամբ, ինչպես որ այս  
Կորովատեգ Պանթեոսյան որդիները կոկոզալիզ:  
Եվ սակայն քո Հիպերեևոր եղբայրը քաջ չըվախեցե  
Երիտասարդ իր կյանքը, երբ անգոսնելով՝ դեմ էլավ ինձ

Եվ հանդրգնեց ասել, թե ես վատասիրտ եմ դանախանց մ'ջ:  
Կարծում եմ թե նա իր ոտքով չըդարձավ իր հայրական տուն  
30 Ուրախություն պատճառելու ծընողներին և իր կրնոջ:  
Այդպե՛ս պիտի փռշտեմ և քեզ, եթե դեմքս կանգնած մընաս.  
Սակայն ես քեզ խորհուրդ կըտամ զընայ մըտնել ամբոխի մեջ  
Եվ չըկանգնել ինձ ախոյան, թե չէ աղետ կըրերես քեզ,  
Մինչև անգամ երեխան էլ կարող է այդ լավ հասկանալ»:

Այսպես ասաց, բայց Պանթոյանն անդըրդվելի՛ պատասխանեց.  
«Ուրեմն այստեղ, ո՛վ Ատրիդյան դյուցաւրնունդ Մենեյավոս,  
Պետք է որ դու հատուցանես վըրեծը իմ եղբոր մահվան,  
Որին ինքքդ ըսպանեցիր և այժմ ահա պարծենում ես,  
Որ նորահարս՝ առագաստում թողիր նըրա կընոջն այրի,  
40 Եվ ծընողաց՝ սըրտակեղեք, սուկալի սուգ պատճառեցիր:  
Արդ, ապարախտ թըշվառների ողբին պիտի վեռջ դընեմ ես,  
Եթե գըլուխդ ու պըղընձյա գեներքը քո ավարելով  
Տանեմ հանձնեմ դյուցազնուհի Փըրոնտեսին ու Պանթոսին:  
Բայց ո՛ն և ո՛ն, թողնենք երկար այս խոսքերի պայքարը զուր.  
Ուժը թող որ ցույց տա մեզնից ո՛վ է քաջը, ո՛վ անարին»:

Ասաց, զարկեց բոլորածիր հաստ ասպարին, բայց չըփռշտեց,  
Սըլաքի սուր ծայրը ծըռվեց զարնըվելով կոռ ասպարին:  
Երկըրորդը առյուծաբար վըրա հասավ իր պըղընձով  
Մենեյավոսը Ատրիդյան՝ աղոթելով Արամազդին:  
50 Եվ մինչդեռ ետ էր ընկըրկում Պանթոյանը, Ատրիդն արագ  
Ջարկեց նըրան իր նիզակով և կորույի բազկի վըրա  
Քաջավըստահ՝ հեռվեց նըրան, սըլաքն անցավ պարանոցից,  
Եվ փոքրոսը ցած տապալվեց, ու շաչեցին գեներն իր շուրջ:  
Վարսերը ճոխ՝ Ծընորհների վարսերի պես, ու գանգուրներն  
Արծաթ-ոսկով ընդելուզված՝ թաթախվեցին իր արյան մեջ:  
Ծաղկափրթիթ ձիթենու պես, որին սիրով սընում է մարդ  
Ու հոգ տանում մաքուր մի տեղ, առատահոս ջըրի ափին,  
Կանաչազար՝, վաղելչագեղ, որ հովերից օրորվելով  
Ջարդարվում է ամենագեղ ծաղիկներով ձյունասպիտակ,  
60 Մինչև որ մի հանկարծահաս մըրրիկ ուժգին՝ արմատախիլ  
Պոկում է այն ու տապալում հասակով մեկ գետնատարած,—  
Այսպես ահա Մենեյավոս Ատրիդեսյանն ըսպանելով  
Պանթոյանին՝ գետին փըռեց և զինագերծ արավ նըրան:  
Ինչպես առյուծ մի լեռնասուն, հանձնապաստան, որ արածող  
Նախրի միջից հափըշտակած երինջ մի գեր ու գեղեցիկ,  
Նախ և առաջ վիզն է ջարդում անեղազոր ժանիքներով,

- Ապա հետո, կըտոր-կըտոր հոշոտելով, լափում է նա  
 Նըրա արյունն ու փորոտին, մինչդեռ նըրան շըրջապատած  
 Բոլոր շըներն ու հովիվներն աղմըկելով սիրտ չեն անում
- 70 Նըրա վըրա հարձակվելու և գունաթափ են ասրափից,  
 Այդպես նաև տըրոյացոց միջից ոչ ոք սիրտ չէր անում  
 Դուրս գալ կըովի խիզախորեն Մենելավի դեմ մեծափառ:  
 Եվ կավարեր շատ հեշտությամբ Մենելավոս Ատրիդն այդտեղ  
 Պանթոյանի գեները ճոխ, թե Ատրիդին նախանձելով՝  
 Ապոլլոնը չըզըրզըրեր քաջ Հեկտորին դյուցազնի դեմ:  
 Կիկոնացոց ըսպարապետ Մենտեսի կերպարանքով  
 Նա Հեկտորին մոտենալով՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
 «Հեկտոր, այդպես անհասների ետևից դու գոյ ես վագում՝  
 Էակիդյան դյուցազնի ժիր նըծույզների, մահկանացու
- 80 Եվ ո՛չ մի մարդ անկարող է հաղթահարել, հեծնել նըրանց,  
 Բացի միայն Աքիլլեսից, որին ծընեց աստվածուհի:  
 Փոքր-ինչ առաջ, քեզ մոտ, Ատրիդ Մենելավոսն արիսական  
 Պատրոկլեսին պաշտպան կանգնած՝ տըրոյացու մի ըսպանեց՝  
 Պանթեոսյան Եվփորբոսին, նըրա հուժկու ուժն ընկճելով»:

- Ասաց աստվածն ու վերըտին մըտավ մարդկանց գուպարի մեջ:  
 Մի սըրտակեզ, սոսկալի ցավ Պրիամյանի սիրտը պատեց,  
 Եվ իր շուրջը աչք ածելով՝ նա ճանաչեց Մենելավին,  
 Որ կողոպտում էր գեղեցիկ գեները քաջ Եվփորբոսի,  
 Որի վերքից արյունը սև հոսում էր դեռ աղբյուրի պես:
- 90 Գընաց Հեկտորն ըսպատագեն դեպի գընդերն առաջամարտ  
 Հեփեստոսյան հըրի հանգույն և որոտաց աֆեղածայն:  
 Ծանաչեց այդ գոչյունը գոռ Մենելավոսն Ատրեոսյան  
 Ու հեծելով այսպես խոսեց իր մեծասիրտ հոգու խորքում.  
 «Վա՛յ ինձ, էթե թողնեմ չըքնաղ այս գեներն ու Պատրոկլեսին,  
 Որ վըրեծիս և իմ պատվի համար ընկավ այստեղ տապաստ,  
 Կըզըրզըրեմ ես այդպիսով դանաչեցոց զայրույթն իմ դեմ:  
 Իսկ ամոթից էթե մեռնալ ելնեմ ընդդեմ քաջ Հեկտորի,  
 Այն ժամանակ գուցե ամբոխը պաշարե միայնակիս,  
 Քանզի բոլոր տըրոյացոց այստեղ է նա առաջնորդում:
- 100 Բայց ինչո՞ւ է սիրտըս այսպես այս խոսքերը շըշընջում ինձ,  
 Երբ որ մի մարդ հանդըգնում է կըովի մըտնել աստվածընդդեմ՝  
 Նա իր գըլխին անտարակոյս կարող է մեծ աղետ բերել:  
 Ուստի ոչ մի դանաչեցի ինձ դեմ պիտի չըզայրանա  
 Հեկտորից խոյս տալուս համար, որին աստված է հովանի:  
 Այս, էթե գեթ աֆեղագոռ Այաքսի ձայնն առնեի ե՛ս,  
 Այն ժամանակ մենք երկուսով դեպի գուպար կըդառնայինք,

Թեկուզ նույնիսկ աստվածընդդեմ, և կորզած դին՝ Պատրոկլեսի՝  
Կըտանեիք Աքիլլեսին, ու մեր վիշտը կըմեղմանար»:

- Մինչ նա այսպես մըտորում էր, եկան հասան տըրոյացոց
- 110 Գումարտակներն, որոնց ինքը քաջ Հեկտորն էր առաջնորդում:  
Մենեւալոսը թողնելով Պատրոկլի դին՝ ետ ընկըրկեց  
Եվ շարունակ շուտ էր գալիս, նաչում նըրանց ոխերնասիրտ  
Առյուծի պես շըքեղաքաշ, որին քըշում են փարափից  
Գամփոները հաղթ ու քաջ մարդիկ մըկունդներով, աղաղակով,  
Ու չընայած մեծամըրունչ ուռչում էր իր սիրտը արի,  
Բայց ականա տեղի տալով՝ թողնում է բակն ու հեռանում:—  
Այսպես՝ խարտյաշ Մենեւալոսը հեռացավ Պատրոկլեսից  
Եվ հասնելով ընկերներին, դարձավ նա ետ ու նայեց շուրջ,  
Բազմության մեջ որոնելով Տեյամոնյան մեծ Այաքսին:
- 120 Եվ նա տեսավ նըրան այնտեղ, պատերազմի ձախակողմում,  
Որտեղ նա իր ընկերներին խըրախուսում, սիրտ էր տալիս,  
Զի Ապոլլոնն աստվածաաստ ահ էր գըցել սիրտը նըրանց:  
Մենեւալոսն այնտեղ վազեց և Այաքսին դիմեց այսպես.  
«Միրելիդ իմ Այաքս, արի, փոթանք փըրկել Պատրոկլի դին  
Եվ գեթ նըրա մարմինը մերկ տանենք հանձնենք Աքիլլեսին,  
Քանզի նըրա զենքերը պերճ հափըշտակեց Հեկտորն ահեղ»:

- Ասաց, հուզեց քաջամարտիկ Այաքսի սիրտն ու մեծ հոգին,  
Եվ երկուսով առաջ անցան դեպի գընդերը նախամարտ:  
Հեկտորը, որ մինչ այդ արդեն զինագերծել էր Պատրոկլին,  
130 Այն է, ուզում էր պըղընձով նըրա գըլուխը թըրցընել  
Եվ շըներին տըրոյական նետել մեռած դյուցազնի դին,  
Երբ Այաքսը իր քըրգաձև վահանի հետ վըրա հասավ:  
Հեկտորն իսկույն ետ քաշվելով դեպ ընկերներն իր ընկըրկեց,  
Կառքը ցատկեց ու Պատրոկլի զենքերն հանձնեց տըրոյացոց,  
Որպեսզի շուտ ոստան տանեն՝ ի փառս իրեն և ի պարծանս:  
Իսկ Այաքսը Մենիտյանի վըրա քըռնած ասպարը լայն,  
Կանգնեց, ինչպես առյուծը իր կորյուններին է պաշտպանում,  
Որոնց երբ որ տանում է նա դեպի անտառ՝ նանապարսիհ  
Որսորդներ են էլնում առաջն, և նա իր հաղթ ուժին վըստահ՝  
140 Ցած է առնում իր աչքերը ծածկող ահեղ հոնքերը թավ,—  
Այդպես Այաքսն էր պաշտպանում դյուցազնագարն Պատրոկլեսին:  
Կողքը կանգնած էր Արեսի սիրելի քաջն ահեղագոռ  
Մենեւալոսն Ասրեոսյան սիրտն անհընար ցավով լեցուն:  
Գլավկոսը Հիպոլոքսան՝ իրկեցոց պետը Հեկտորին  
Խեթ նայելով՝ այս աստտալից ծանըր խոսքերն ասաց նըրան.

- «Հէկտո՛ր, հերոս լոկ անունով, իրականում խիստ փոքրոգի  
 Ջուր է, որ դու վեհերտորդ քաջի համբավ ես տարածել:  
 Մեկ մըտածիր, ինչպե՛ս պիտի փրկէս հիմա քաղաքը քո,  
 Դու մի-միայն Իլիոնի մեջ բընակվող քո ժողովըրդով,  
 150 Երբ լիկեցի ոչ մի զինվոր չի կրովելու դաճալանց դեմ,  
 Քանզի ոչինչ չի վաստակում թըշնամու դեմ մաքառելով.  
 Ինչպէս պիտի փրկէս դու պարզ և հասարակ մի զինվորի,  
 Երբ լըբել ես, թողնելով այժմ որս ու ավար արայեցոց՝  
 Մարպեդոնին, որ հյուրն էր քո և բարեկամըդ զինակից,  
 Որ քանի դեռ ողջ էր, եղսվ քո քաղաքին և քեզ նեցուկ,  
 Որից հիմա շըներին իսկ հալածելու սիրտ չես անում:  
 Լիկիացիք թե ինձ լըսեն՝ տուն կըդառնան այժըմնեթ,  
 Եվ կըհասնի այն ժամանակ ծանրը կորուստ Տըրոյային:  
 Եթե տըրոյանք ունենային քաջահանդուզն արիւթյուն,  
 160 Ինչպէս քաջերն այն անասան, որոնք անվախ և անձնորաց  
 Մարտընչում են թըշնամու դեմ հայրենիքի սիրո համար,  
 Այն ժամանակ մենք Տըրոյա կըտանէինք Պատրոկլէսին:  
 Եթե մարմինն այդ կորզէինք ու տանէինք ոստանը մեր՝  
 Պրիամոս մեծ թագավորին, արգիացիք կըստիպվէին  
 Մեզ տալ, անշուշտ, չըքնաղ զենքերն ու զարդերը Մարպեդոնի,  
 Եվ մինչևիսկ կարող էին նաև նըրա՛ն Իլիոն տանել.  
 Ջի այնպիսի մարդու ընկեր և զինակից մեռալ մարտում,  
 Որ արքայանց մեջ ամենեն գորավորն է և անվանին,  
 Եվ որ իր հետ ունի բազում նիզակակից դյուցազուններ:  
 170 Բայց սիրտ չարիք դու մեծահաղթ Այաքսի դեմ կանգնել անգամ,  
 Տեսնելով լոկ նըրա աչքերն ոսոխների գուպարածում,  
 Էլ ո՛ր մընաց, թե կրովէիր. նա բյուր անգամ քաջ է քեզնից»:

- Կորդակածո՞ն Հէկտորն այնժամ խեթ՞ նայելով նըրան՝ ասաց.  
 «Ինչո՞ւ այդպէս, ո՛վ Գըլլավկոս, հանդունզն ես դու խոտում իմ դեմ,  
 Հազա՛ր ափսոս, զի բարեբեր ողջ Լիկիո մեջ ապրողներից  
 Կարծում էի քեզ ամենեն իմասնամիտն ու խելացին,  
 Մինչդեռ մինչ արդ ասածներըդ ցույց են տալիս, որ խելք չունես:  
 Ասում ես դու, թե Այաքսին դիմադրելու սիրտ չեմ արե՛լ,  
 Ո՛չ, վախ չունեմ ես ո՛չ մարտից, ո՛չ ձիերի դոփյուններից,  
 180 Ասպարապերն Ջևսի միտքը մարդկանց մըտքից հաղթող է միշտ,  
 Նա վանում է քաջին անգամ ու հաղթությունն հափըշտակում,  
 Որին թեկուզ ի՛նքն է դըրդել ու հորդորել պատերազմի:  
 Բայց դու արի, սիրելիդ իմ, կանգնիր այստեղ, ինձ մոտ և տես,  
 Թե ամբողջ օր, ասածիդ պէս, վատ ու վախկո՞տ պիտի լինեմ,  
 Թե՞ հալածեմ յորաքանչյուր քաջահանդուզն արայեցու,

Ով սիրտ անի և կամենա պաշտպան կանգնել Պատրոկլեսին»:

- Այսպես ասաց և մեծաձայն խորախուսեց տրրոյացոց.  
«Տրրոյացի՛ք, լիկյա՛նք և դո՛ւք, դարդանյաններ քաջամարտիկ,  
Արի եղէք, սիրելիներս, հիշեցեք ձեր ուժն անվրկանդ,  
190 Մինչև որ ես չընաշխարհիկ Աքիլլեսի զենքերն հագնեմ,  
Որ խըլեցի Պատրոկլեսից՝ ըսպանելով նրան մարտում»:  
Այս ասելով՝ անագորույն մարտը թողեց անմիջապես  
Կորդականո՞ճ Հեկտորը և սըրաթըռիչ իր ոտքերով  
Մըլանալով արագանեպ հասավ իսկույն ընկերներին,  
Որոնք քաղաք էին տանում Պելիսյանի զենքերն անեղ:  
Աշխարահե՛ծ ուզմից հեռու փոխեց այնտեղ զենքերը նա,  
Իրենները տալով տրրոյանց, որ դեպի սուրբ Էլիոն տանեն,  
Եվ ինքը հագավ Պելիսածին Աքիլլեսի զենքերն անեղձ,  
Որ տրվին հորն իր սիրելի՝ աստվածները երկնաբընակ,  
200 Հայրն էլ հետո, իր ծերության հասակի մեջ տըվեց որդուն,  
Սակայն որդին այդ զենքերով չըհասավ իր հոր տարիքին:

Երբ Զըրվանյանն ամպրոպային տեսավ նրան ուզմից հեռու  
Հագած-կապած զըրահ ու զենն աստվածային Աքիլլեսի,  
Տարութեց գըլուխն անեղ և ինքն իրեն այսպես ասաց.

- «Ա՛յ դու թըշվառ, մահրդ երբեք միտ չես քերում, որ մոտ է քեզ,  
Որ հագնում ես, կապում այդպես անմահական զենքերն այդ պերճ  
Արիասիրտ ա՛յն դյուցազնի, որից բոլորն են սարսափում:  
Ըսպանեցիր հեզահամբույր նըրա կըտրիճ ընկերակցին  
Եվ անարժան թըշնամանքով կողոպտեցիր զենքերն ուսից,  
210 Բայց և այնպես ուզում եմ քեզ տալ հիմա մե՛ծ մի հաղթություն,  
Քանզի շուտով, Հեկտոր, երբ որ պատերազմից վերադառնաս,  
Անդրոմաքեն պիտ չընդունի Պելիսածնի զենքերը պերճ»:

- Այսպես ասաց և ակնարկեց նա կապտուակ իր հոնքերով  
Եվ Հեկտորի մարմնի վըրա պատշանեցին զենքերն այդ ճոխ,  
Եվ նըրա մեջ մըտավ Արեսն անեղասաստ ու մարտագոռ,  
Եվ լըցվեցին անդամները նոր կորովով ու գորությամբ,  
Եվ գոռալով վազեց դեպի զինակիցներն իր անվանի,  
Փայլակնացայտ զեն ու զարդով՝ ասես Աքիլլն ինքը լիներ:  
Գընդից ի գունդ ընթանալով նա բոլորին խըրախուսեց՝  
220 Գլավկոսին ու Մեաթլեսին, Թերսիլոքին ու Մեդոնին,  
Աստրոպեոսին և նըրանց հետ Հիպպոթոսին, Գիսենորին,  
Քրոմֆոսին ու Փորկիսին և հավադետ Ենեոմոսին:—  
Այդպես՝ նըրանց նա գըրգըռեց արագաթև այս խոսքերով.

«Ի՛նձ լքեցեք, ժողովուրդներ շրջաբռնակ և բարեկամ,  
230 Չըբերեցի ես ձեզ այստեղ, հանելով ձեր քաղաքներից՝  
Ունենալու մեծ բազմություն, որին երբե՛ք ես կարոտ չեմ,  
Այլ որպեսզի պաշտպան կանգնեք աքայեցոց դեմ մարտագոռ՝  
Տըրոյացի կանանց և մեր մատաղահաս մանուկներին,—  
Որի համար ըսպտում եմ երկրիս հարուստ գանձերն անբավ  
230 Եվ պարարում ամեն մեկիդ՝ հիացնելով սրտերը ձեր:  
Ուստի և արդ պետք է կըրվեք, ապրեք և կամ մեռնեք մարտում,  
Որովհետև պատերազմի առևտուրը ա՛յս է հիմա:  
Ձեզնից ով որ Պատրոկլեսին կարողանա կորզել մարտից  
Ու քարշ տալ դեպ տըրոյացիք՝ քաջ Այաքսին ետ մղելով,  
Ավարի կեսն ինձ առնելով, մյուս կեսը նըրա՛ն կըտամ,  
Եվ նա պիտի տըրոյանց մեջ ինձ հավասար փառք ունենա»:

Ասաց Հեկտորն, ու բոլորը նիզակները վերև ցըցած,  
Միահամուռ, ուղիղ դեպի դանաչեցիք գըրոհեցին՝  
Լի այն հույսով, որ կըկորզեն դին Այաքսից Տեյամոնյան:  
240 Խեկթե՛ր, նա շա՛տ խիզախների կյանքի թե՛րը կըտրեց այդտեղ:  
Այաքսն այնժամ այսպես ասաց ահեղագոռ Մեներային.

«Գուցաբըն՛ունդ Մեներայե, սիրելիդ իմ, չեմ հավատում,  
Որ երկուսս էլ, թե՛ ես, թե՛ դու ողջ կըդառնանք պատերազմից:  
Պատրոկլեսի համար այնչա՛ն չեմ վախենում, որ քիչ հետո  
Կեր կըդառնա տըրոյացոց թըռչուններին ու շըներին,  
Որքան որ մե՛ր կյանքի համար, որովհետև ահավասիկ  
Մարտի ամպրոպ Հեկտորը մեզ պաշարում է ամեն կողմից  
Եվ երկուսս գըլխի վըրա կախված է մահ եղերական:  
Բայց դու ձայն տուր աքայեցոց կըտրիճներին, եթե լքեն»:

250 Այսպես ասաց, և Մեներայվն ահեղագոռ անսաց նըրան,  
Ու մեծաձայն աղաղակով գոչեց ի լուր աքայեցոց.

«Ո՛վ սիրելի գորավարներ արգիացոց և իշխաններ,  
Բարձակիցներդ Ագամեմնոն և Մեներայվ Ատրիդների,  
Որ արքունուստ եք ըմպում դուք և գըլուխ եք բազում գորաց,  
Եվ Արամազդն ինքն է տալիս ձեզ արժանի փառք ու պատիվ:  
Անհընար է ամեն մեկիդ տեսնել հիմա, թե ուր եք դուք,  
Ջի առակալի ուժով պայթեց աղմըկալի կըրիվ մի գոռ,  
Ամեն մեկըդ ինքնահոժար թող վըրեժով վառված փութա՛ր՝  
Որ չըդառնա Պատրոկլի դին տըրոյացոց շըներին կեր»:

260 Այսպես գոչեց, և Ոլիլյան Այաքսն ըսկույն լքեց նըրան  
Եվ առաջինն ի՛նքն օգնության վազեց նըրան մարտի միջից,  
Նըրանից ետ՝ Իդոմենեսն ու գինակիրն Իդոմենի՛

Մերիոնեսն արյունառուշտ Ենիալին հար և նրման.  
Եվ աքայան մյուս քաջերի, որոնք կրոնիվն արծարծեցին,  
Անուններն ո՛վ կարող է տալ և հիշելով՝ թըվել մեկ-մեկ:

- Նախ տըրոյանք միահամուտ հորձանք տըվին Հեկտորի հետ:  
Ինչպես ահեղ Արամազդից իջնող գետի բերանի մոտ  
Ծովից ժայթքած ալիքը մեծ մըղընչում է հոսանքի դեմ,  
Եվ ծովեզերքը ծայրեծայր շտառչում է ահեղաձայն,—
- 270 Նո՛ւյն ահագին աղաղակով դիմում էին տըրոյացիք,  
Իսկ աքայանք կանգնած էին Մեմփոյանի շուրջը ամուր  
Ասպարափակ, ցանկապատած պըղընձակոտ վահաններով:  
Ջևըր նըրանց փայլակնացալտ կորդակները մեզով պատեց,  
Որովհետև Մեմփոյանին առաջ էլ չէր ատել երբեք,  
Երբ ողջ էր դեռ և արբանյակն էր Պելիպյան Աքիլլեսի:  
Ջևըր չուզեց, որ նա դառնա ոտխների շըներին կեր,  
Ուստի դրոդեց ընկերներին՝ Պատրոկլեսին պաշտպանելու:  
Տըրոյացիք նախ ընկըրկել տըվին խալտակն աքայեցոց,  
Որոնք փախան դին թողնելով, բայց մեծամիտ տըրոյացիք
- 280 Չըսպանեցին աքայանցից և ոչ մեկին իրենց տեզով,  
Դիակն էին ուզում կորզել. աքայեցիք չըմընացին  
Հեռու երկար ժամանակով, վերադարձրեց նըրանց նորից  
Այաքսը, որ գերազանցում էր իր տեսքով և քաջությամբ  
Աքայեցոց որդիներին՝ բացի Պելյան Աքիլլեսից:  
Դեպ յըջնամին խոյացալ նա այն ամեհի վարագի պես  
Որ լեռներում փախցընում է որսորդներին և շըներին,  
Թըփուտների միջից հանկարծ նըրանց վըրա հարձակվելով:  
Այդպես՝ որդին զարմանագեղ Տելամոնի՝ Այաքսը պերճ  
Խոյանալով՝ ցըրիվ տըվեց ջոկատները տըրոյական,
- 290 Որ պաշարած Պատրոկլի դին՝ ուզում էին հափըշտակել,  
Տանել դեպի քաղաքն իրենց և ժառանգել փառք ու պատիվ:  
Հիպպոթոսը՝ պելասգունցի Լեթոսի վեհ որդին արդեն  
Պատրոկլեսի ոտքից բըռնած քարշ էր տալիս եռանդագին  
Կոճերից պինդ մի փոկ կապած՝ պըճեղների շուրջ ջըլասպինդ:  
Անում էր նա աչք ի պատիվ տըրոյացոց և Հեկտորի,  
Բայց մեծ աղետ բերեց գըլխին, ու չըփըրկեց նըրան ոչ ոք:  
Տելամոնյանը ճեղքելով ամբոխակույտն առաջ անցալ  
Եվ մոտիկից զարկեց նըրա պղճածընուտ սաղավարտին:  
Նիզակի սուր սայրը ճեղքեց ձիաձարի կորդակը կուռ
- 300 Ջի կըշռել էր իր զարկը նա մեծ միզակով ու հաղթ բազկով:  
Սաղավարտի փողից վիժեց արյունը խառն ողեղի հետ,  
Կորալ նըրա կորովն իսկույն, և նա ձեռքից բաց թողնելով



Ոտքը՝ մեռած Պատրուկեայի՝ թողեց որ այն ընկնի գետին,  
Ու քարշ տըված իր դիակի վըրա ընկավ բերանքսիվայր,  
Հեռու՝ հուրթի Լարիսայից մեռավ՝ առանց հասուցելու  
Ծընողներին իր բազմերախտ, որ սընեցին նըրան սիրով,  
Զի մեծահաղթ Այաքսի մեծ տեզը մարեց նըրա արևն,  
Ու կարճատև եղան նըրա կյանքի օրերն այս աշխարհում:  
Հեկտորն այնժամ դեպի Այաքսն արձակեց տեզն իր փայլացայտ,

310 Տեսավ Այաքսն ու պըղընձյա տեզից մի կողմ թեքվեց արագ,  
Գընաց սըլաքն ու մեծասիրտ Իփիդոսի որդուն դիպավ—  
Աքեդիոսին՝ փովկեսացոց դյուցազնին քաշ, որ անվանի  
Պանուպեուն պալատ ուներ և իշխւմ էր բազում մարդկանց:  
Ծիշտ անրակին դիպավ աշտեն, պըղընձաձուլ սըլաքն անցավ  
Ուժգին թափով ու դուրս եկավ ուսի ծայրից անմիջապես.  
Գետին ընկավ նա թընդյունով, ու շաչեցին զենքերն իր շուրջ:  
Զարկեց Այաքսը Փեմոփսի որդուն ապա՝ քաշ Փորկիսին,  
Որ Հիպպոթին էր պաշտպանում, զարկեց պորտին, և սուր աշտեն  
Զախջախելով զըրանը կուտ՝ ողջ փորտին խառնեց իրար:

320 Փորկեան ընկավ փոշեթավալ, չանգռելով հողն ագուռներով:  
Տըրոյացիք ետ քաշվեցին, նույնիսկ Հեկտորը նահանջեց,  
Իսկ աքայանք գոռգոռոցով քաշ տըվեցին Հիպպոթոսի  
Եվ Փորկեայի դիակները՝ նըրանց զենքերն ավարելով:

Շուտով նորից տըրոյացիք դեպի Իլիոն կըփախչեին  
Պարտված իրենց թուլությունից, աքայանցից հալածական,  
Եվ աքայանք իրենց ուժով մեծ հաղթություն կըտանեին,  
Մինչև անգամ Արամազդի կամքին ընդդեմ, եթե այդտեղ  
Ապոլլոնը չոգեշընչեր գըրգըռելով Էնիասին՝

Պերիփասի կերպարանքով, որը հոր մոտ իր այնոր  
330 Ծերացել էր նըվիրակի իր պաշտոնում և էր խոհեմ:  
Արամազդի որդին նըրա դեմքն առնելով՝ այսպես ասաց.  
«Էնիաս՛ս, ինչպե՛ս պիտի փըրկեք բարձրապարիսպ Իլիոնը դուք,  
Աստվածների կամքին ընդդեմ, մարտընչելով իրենց ուժի  
Եվ գորքերի արիության վըրա վըստահ մարդկանց նըման,  
Որ տեսել են ես ուրիշ տեղ, թեև թըվով ձեզնից էլ քիչ:  
Զևսն ուզում է հաղթությունը մե՛զ տալ և ո՛չ աքայեցոց,  
Բայց մի երկյուղ անհընարին ստեղ է ձեզ ու չեք կրովում»:

Այսպես ասաց, և Էնիասն Ապոլլոնին ճանաչելով՝  
Դարձավ իսկույն դեպի Հեկտորն ու ձայն տըվեց կըշտամբայից.

340 «Հեկտոր՛ր, և դուք պետե՛ր տրոյանց ու դաշնակից փաղանգների,  
Մեզ մեծ ամոթ պիտի լինի, եթե ուզմիկ աքայանցից

Հաղթահարված մեր թուլությանը՝ փախչենք զընանք դեպի քաղաք:  
Աստվածներից մեկը հիմա մոտենալով ինձ համբավեց,  
Թե Արամազդն իմաստնագույն գորավիզ է մեզ մարտի մեջ,  
Դառնանք ուստի դեպ աքայանք և թույլ չըտանք, որ անարգել  
Տանեն նրանք Պատրկյի դին ու հասցընեն նավերն իրենց»:

Այսպես ասաց և նախամարտ կրտիճներից առաջ անցավ:  
Տըրոյացիք էտ դառնալով՝ ճակատեցին աքայանց դեմ:

- Էնհասն այդտեղ տեգով խոցեց Արիսբասյան Լեոկրիտին՝
- 350 Լիկոմեդի քաջ ընկերոջն, որ սիրելին էր Արեսի:  
Առաջ գալով, գընաց մոտիկ և արձակեց փայլուն աշտեն  
Ու հարվածեց ազգաց հովիվ Ապիսավոն Հիպպասյանին,  
Պորտի տակից՝ լյարդին զարկեց և ջըլատեց ուժը նրա,  
Որ ելել էր, հասել այդտեղ բազմաբեղուն Պեոնիսից  
Եվ երկըրորդն էր մարտի մեջ Աստրուպից էտ՝ իր քաջությանը:  
Աստրուպիտը նըրա անկման վըրա աստիկ վըշտանալով՝  
Առաջ անցավ արիաբար դանայանց դեմ մարտընչելու,  
Սակայն ի գուր, որովհետև ամեն կողմից վահանափակ  
Կանգնած էին աքայեցիք Պատրկյի շուրջ տիգակարկատ:
- 360 Տելամոնյանն ամեն մեկին հանդիպելով հաճախակի,  
Պատվիրում էր դին չըլըքել և մյուսներից չանցնել առաջ,  
Այլ դի՛պի շուրջը բըռնած՝ կանգնել, կրոփ մըղել մոտից:  
Այսպես էր նա տալիս պատվեր, ոռոզվում էր երկիրն արյամբ,  
Եվ խիտ առ խիտ իրարու կողք ընկնում էին խորը խոցված  
Տըրոյացիք և քաջասիրտ դաշնակիցներն ու աքայանք:  
Աքայեցիք նո՛ւյնպես արյուն էին թափում այդ մարտի մեջ,  
Բայց նըրանցից ավելի՝ քիչ թըվով քաջեր էին ընկնում,  
Քանզի նըրանք իրար հանդեպ միշտ ուշադիր և հոգատար՝  
Վանում էին մեկ-մյուսից մահը դաժան և դառնագույն:

- 370 Կըռվում էին սըրանք այսպես կըրակ կըտրած, կորովասիրտ,  
Եվ ասես թե չիներին ո՛չ արեգակ, և ո՛չ լուսին,  
Քանզի ուզամի ասպարեզում մատախլապատ էին բոլոր  
Քաջերը, որ կըռվում էին Մենիտյանին շըրջապատած:  
Իսկ մյուս կողմում, տըրոյացիք և աքայանք արիաբար  
Մըղում էին մարտ սպահով պարզ ու պայծառ երկընքի տակ,  
Շանամչում էր արևը վառ և մատախուղ չըկար բըռնավ  
Երկրի երես ու լեռներում, ու մարտընչում էին հանգիստ.  
Խուսափելով հեռվից եկող մեկ-մյուսի սըլաքներից:  
Իսկ մեջտեղում կըռվողները տանջվում էին անագորույն
- 380 Մատախուղից ու տաք կըռվից և ըսպառվում ժանտ պըղընձով:

Թրասիմեդեսն ու Անտիլոք զույգ եղբայրներն արիասիրտ  
Չէին լքել դեռևս անբիժ Պատրոկլեսի մահվան մասին.  
Կարծում էին, թե նա դեռ ողջ մարտղնշում է տըրոյանց դեմ:  
Նըրանք երկու եղբայրներով, ընկերներից առանձնակի,  
Կըռվում էին թըշնամու դեմ. այդ Նեստորն էր ասել նըրանց,  
Հողորելով, որ պատերազմ մըդեն հեռու սև նավերից:

Ողջ օր տեց անօրինակ այդ մաքառումն արյունահեղ.  
Հոգնած էին նըրանք սաստիկ, նըրանց ծընկներն ու սըրունքներն,  
Աչքն ու երես, և ոտն ու ձեռ քըրտնաթաթալ էին բոլոր,  
390 Ոգորելով ողջ օր քաջուն Աքիլլեսի ընկերոջ շուրջ:  
Ինչպես մի մարդ, որ վիթխարի եզան կաշին ճարպակալած  
Տալիս է իր ծառաներին, որ ողջ ուժով ձիգ տա՛ն, քաշեն՝  
Շըրջանաձև կանգնած բոլորն, ու քամվելով հյութը շուտով  
Տարբալուծվում, ծըծվում է ներս, ու բացվում է ամեն կողմից,  
Ընդարձակվում կաշին հուժկու կըտրիճների ճիգ ու ջանքով,—  
Այդպես, նըրանք երկու կողմից, տարածության վըրա փոքրիկ  
Քաշում էին դիակն անվերջ,— տըրոյացիք դեպի քաղաք,  
Իսկ աքայանք դեպի նավերը տանելու մըտադրությամբ:  
Եվ Պատրոկլի դիակի շուրջ բորբոքվեց մարտ մի այնպիսի,  
400 Որ ո՛չ Արեսն ամբոխալար, ո՛չ Աթենասն այդ տեսնելով,  
Թեկուզ վառված հուր բարկությամբ՝ պիտի պարսալ չըկարդային:

Եվ Ջըրվանյանն այսպես ողջ օր Պատրոկլեսը համար տանջեց  
Մարտիկներին ու ձիերին մահահրավեր պատերազմում.  
Բայց Աքիլլեսը լուր չունե՛ր Պատրոկլեսի մահվան մասին,  
Զի սըրընթաց նավատորմից հեռու էին կըռվում նըրանք,  
Տըրոյայի պարըսպի տակ, և նա երբեք չէր ըսպատում  
Որ Պատրոկլեսն ընկած լինի, այլ հուշս ունե՛ր, թե ողջ է նա  
Եվ հասնելով դարբասներին՝ ետ կըդառնա ըստ պատվերի.  
2էր հավատում բոլորովին, որ Պատրոկլեսն առանց իրեն,  
410 Նույնիսկ իր հետ՝ կըկործանի Իլիոն քաղաքն ամրապարիսպ.  
Նա այդ մասին շատ անգամ էր լքել մորից իբրև գաղտնիք,  
Որ հայտնում էր Արամազդի խորհուրդներն ու կամքը, սակայն  
Այդ ողբայի դեպքի մասին չէր հայտնել մայրն իր նազելի,  
Թաքցըրել էր իր սըրտակից բարեկամի կորուստը թանկ:

Այդպես անդու և անդադար կըռվում էին դիակի շուրջ  
Ու սայրասուր սըլաքներով գետին փըռում մեկ-մյուսին:  
Պըղընձագետտ աքայեցոց միջից այսպես գոչեց մի քաջ.  
«Դանայեցի՛ բարեկամներ, պատիվ չէ մեզ դառնալ դեպի

Նավերը մեր. սև հողը թող կույ տա այստեղ մեզ բոլորիս,  
420 Այդ մեզ համար հազար անգամ պատվաբեր է, ողջունելի,  
Քան թե թողնենք, որ անարգել ձիախըրրոխտ տըրոյացիք  
Քաղաք տանեն Պատրոկլի դին և ժառանգեն փառք ու պարծանք»:

Իսկ մեկ ուրիշը մեծամիտ տըրոյցիներից այս էր ասում.  
«Բարեկամներ, թե բախտը մեզ վիճակել է մեռնել այստեղ,  
Դիակի մոտ, մեռնենք, սակայն կըովից երբեք ձեռք չըքաշենք»:

Այսպես անա երկու կողմից խըրախոսում էին իրար  
և մաքառում մոլեգնաբար, և երկաթի շաչ ու շառաչն  
Ըշկահյունի հետ պըղընձի՝ մինչև երկինքն էր բարձրանում:

Երիվարներն Աքիլլեսի արյունահեղ ռազմից հեռու՝

430 Լաիս էին այն վայրկյանից, երբ Հեկտորի ձեռքով անգութ  
Փոշեթավալ ընկավ իրենց տերը անեղ պատերազմում:  
Եվ շատ իզուր Ավտոմեդոնն՝ կըտրիճ որդին Դիորեսի  
Հաճախ ճապուկ իր մըտորակով ըստիպում էր ճըրանց սուրալ,  
Ուղղելով մերթ փաղաքշական խոսքեր ու մերթ ըսպառնալիք:  
Ձէին ուզում ճըրանք ոչ էտ՝ Հելլեսպոնտոս վերադառնալ,  
Ոչ էլ դեպի աքայեցոց պատերազմի դաշտն արյունոտ.  
Այլ, ինչպես մի անշարժ արձան, որ կանգնում է անըրդվելի՝  
Մի որևէ տըղամարդու և կամ կընոջ շիրմի վըրա,  
Այդպես կանգնած էին ճըրանք՝ գեղակատուց կառքին կըպած,

440 Տըրտում-տըխտըր ու գըլխիկոր, և արցունքներն առատորեն  
Հոսում էին լուսակալակ ճըրանց կարմիր կուպերն ի վար  
Իրենց տիրոջ ջերմ կարոտով, փոշոտելով բաշերն իրենց,  
Նըրանց այդ սուզը տեսնելով՝ հուզվեց սիրտը Արամազդի,  
Որոնք լուծի երկու կողմից մինչև գետին էին հասնում:  
Եվ նա գըլուխն օրորելով՝ այսպես խոսեց ինքն իրեն հետ.

«Ո՛հ, թըշվառներ, ինչու մենք ձեզ տըլինք Պելևս թագավորին՝  
Մահկանացվի, քանի որ դուք անմահ էք և անձերական,  
Մի՞թե ճըրա համար, որ դուք տառապեիք մարդկանց ձեռքին,  
Որովհետև շունչ ու շարժում ունեցող ողջ էակներից

450 Երկրի վըրա թըշվառագույն արարածը մարդն է միայն:  
Բայց ես երբեք չեմ թողնելու, որ տիրանա Հեկտորը ձեզ  
Եվ ձեր չըքնաղ ու նորակերտ կառքը ճըստած՝ պըրաբշավի:  
Բավական չէ՞, որ ժառանգեց զենքերը պերն ու պարծեցավ:  
Ես պիտի ձեր սըրունքներին ու սըրտերին ուժ՝ ներարկեմ,  
Որ դուք մարտից դուրս հանելով՝ տանեք նավերն Ավտոմեդին,  
Որովհետև ես դեռ պետք է փառք ընձենեմ տըրոյացոց,

Մինչև գրնան ու գեղաստախտ մախատորմին հասնեն նըրանք,  
Մինչ արեգակն ի մայր մըտնի, և սըրբազան գիշերը գա»:

- Այսպես ասաց ու ներշնչեց նըծույգներին բուռն կորով,  
460 Որոնք փոշին իրենց բաշի թոթափելով գետնի վըրա՝  
Տանում էին կառքը ճեպով ու դուրս հանում մարտադաշտից:  
Ավտոմեդոնն իր ընկերոջ մահվան վըրա թեպետ տըրտում,  
Բայց խոյանում էր ձիերով՝ անգղը ինչպես սագերի դեմ՝  
Սըլանում էր նա շատ արագ տըրոյացոց մարտամբոխից  
Ու հալածում, ցըրում նըրանց գումարտակները խուռնախիտ:  
Բայց կոտորած չէր անում նա արշավասույր ընթանալիս,  
Որովհետև ինքը մեռակ՝ նըվիրական կառքի վըրա  
Անկարող էր և տեգ նետել և ձիերին վարել առաջ:  
Եվ վերջապես տեսավ նըրան Ալկիմեդոնը՝ մարտակից  
470 Նըրա ընկերն, որ Էմոնյան Լայերկեսի որդին էր քաջ  
Եվ կանգնելով կառքի ետև՝ այսպես ասաց Ավտոմեդին.

«Ավտոմեդոն՝, աստվածներից ո՞վ ներշնչեց վըրամագավոր  
Այդ միտքը քեզ, յսելքդ առավ, որ դու այդպես մեն ու մեռակ  
Խիզախում ես տըրոյացոց առաջամարտ քաջերի դեմ,  
Մինչ ըսպանված է ընկերդ, և Հեկտորը ցընծում է արդ  
Մածկած ուներն՝ Էակոսի թոռան չըքնաղ գնն ու զարդով»:

- Եվ Դիորյան Ավտոմեդոնն այսպես նըրան պատասխանեց.  
«Ո՞ր աքայիկն, Ալկիմեդոն, կըկարենար իր ձեռքն առնել,  
Քեզնից բացի սանձն ու մըտրակն անմահական այս ձիերի,  
480 Եթե ոչ ինքն աստվածատիպ Պատրոկլեսը մարտարամիտ,  
Երբ դեռ ողջ էր, բայց օրհասը հասավ, և նա մահ ընդունեց:  
Ուրեմըն ա՛ն մըտրակը դու և այս սանձերը շողշողուն,  
Իսկ ես ինքըս կառքից իջնեմ մարտընչելու ոտխի դեմ»:

Այսպես ասաց. Ալկիմեդոնը թըռավ կառքն այն մարտական  
Ու ձեռքն առավ անմիջապես մըտրակն ու սանձը շողշողուն,  
Իսկ Ավտոմեդն իջավ կառքից. տեսնելով այդ, Հեկտորը մեծ  
Չայն արձակեց և մոտ կանգնած Էնիասին ասաց արագ.

- «Քա՛ջ Էնիաս, պըղընձագեն տըրոյացոց՝ խորհըրդական,  
Տեսնում եմ ես Էակիդյան արագոտնի ձիերն ահա՛  
490 Պատերազմում շողշողալիս իրենց խըղճուկ վարիչներով:  
Հույս ունեմ ես, թե կըքըռնես նըրանց հիմա, եթե ուզես:  
Եվ եթե մենք արշավակի գըրոհ գործենք նըրանց վըրա,  
Նըրանք երբեք սիրտ չեն անի մեզ ախոյան կանգնել կըովում»:

- Այսպես սասց, հընազանդվեց արի որդին Անքիսեսի.  
Եվ երկուսով առաջ անցան՝ ուներն իրենց ծածկած ամուր  
Արջառենի ասպարներով, որոնք ծալ-ծալ, շորջամակի  
Ամուր կերպով պատված էին պղղընձեղեն թիթեղներով:  
Առաջ անցան և՛ Քրրոմիոսն ու Արեստոսն աստվածագեղ,  
Որոնք հաստատ հույս ունեին սոխներին ըսպանելով՝
- 500 Ավար առնել հըրանց շըքեղ երիվարներն ահիպարան:  
Խելագարներ՝, առանց արյան հըրանք երբեք չէին դառնա  
Ավտոմեդոն քաջի մոտից, որ սըրտագին աղոթելով  
Արամագը հորն՝ առավ նոր ուժ ու նոր կորով, սըրտասյընդվեց  
Եվ դառնալով հավատարիմ իր ընկերոջն՝ այսպես սասց.
- «Ալկիմեդոն, երիվարներն ինձնից հեռու մի՛ կանգնեցնի,  
Ծունշը հըրանց՝ մոտ ի մոտո թող որ ըզգամ իմ թիկունքին:  
Կարծում եմ ես, թե Պրիսմյան Հեկտորը քաջ իր մոլուցքից  
Չի՛ դադարի, մինչև որ մեզ ըսպանելով՝ չաշտանակի  
Աքիլլեսի շըքեղաբաշ հըճույզների վըրա հըստած
- 510 Եվ չըփըջրի, հալածելով, գումարտակներն աքայեցոց,  
Կամ թե ինքը առաջամարտ զընդում գերի չըբըռնըվի»:

Ասաց, ձայնեց Մենելային և երկու քաջ Այաքսներին.  
«Մենելայի՛ս և Այաքսներ՝, առաջնորդներ՝ արգիացոց,  
Մեռածի հոգսը հանձնեցեք ձեր քաջասիրտ ընկերներին,  
Որ պաշտպանեն Պատրոկլի դին՝ հալածելով տըրոյացոց,  
Իսկ դուք մեզնից, որ ողջ ենք դեռ, հեռացրեք օրն անագորոյն:  
Քանզի Հեկտորն ու Էնիասն՝ այրընտիրները տըրոյանց  
Արտավալից պատերազմի դեպի այս կողմն են արշավում.  
Բայց ամեն ինչ աստվածների գոգի մեջ է պահված միայն:  
520 Կետո՛ւմ եմ տեգս, մընացածը թողնում եմ մեծ Արամագդին»:

Այսպես սասց և ճոճելով՝ երկար միզակն իր արձակեց  
Ու հարվածեց Արեստոսի բոլորածիր հաստ ասպարին,  
Որ սըլաքին չըդիմացավ. պղղինձն անցավ ուժգին թարիով,  
Ծակեց գոտին ու խոր խըրվեց որովայնից ներքև փոքր-ինչ:  
Ինչպես որ մի երիտասարդ բարձրացնելով կացինը սուր՝  
Վայրագասուն խոլ արջառի եղջյուրների միջև զարկի  
Եվ բընաջիղը կըտրելով՝ ցած տապալի անասունին,—  
Արեստոսը այդպես ընդոստ՝ ցած տապալվեց մեջքի վըրա,  
Ու սայրասուր տեգը փորում պըտըտվելով՝ հոգին առավ:  
530 Բայց Հեկտորը փայլակնացայտ աշտեն նետեց Ավտոմեդին.  
Սա դիմացից տեսնելով այդ՝ դեպի առաջ թեքվեց իսկույն  
Ու խույս տըվեց պղնձյա տեգից, որը ուսից անցավ զընաց

Խըրվեց գետին, ու հողից դուրս երերվում էր բունը երկար,  
Եվ այդտեղ էր, որ Արեսը կորցրեց թափն իր վերջապետ:  
Փոքրը մի ևս, և իրարու նրբանք մոտից կըվիշշոեին,  
Եթե երկու Այաքսները բազմամբոխից մոտ վազելով  
Չըբաժնեին իրար վըրա հարձակվող այդ անաստներից:  
Այաքսներից վախենալով՝ ընկըրկեցին անմիջապես,  
Հեկտորն ահեղ, Էնիասը և Քրոմիոսն աստվածակերպ,  
540 Արեստոսին թողած այնտեղ տիգահարված, դիաթավալ,  
Որի զենքերն ալարելով Արեսի պես արագաշարժ  
Ավտոմեդոնն այսպես ասաց խըրոխտաբար պարծենալով.  
«Մենհիտյանի մահվան ատօփվ ցավըս փոքր-ինչ ես մեղմացրի,  
Թեպետև իմ ըսպանածը նըրանից շատ ցած է մընում»:

Այսպես ասաց ու կտքի մեջ դըրեց ավարն արունազանգ,  
Ինքն էլ ելավ կտքի վըրա, ոտք ու ձեռներն արյունաճերկ,  
Առյուծի պես, որ ահագին մի արջառ է պատառոտել:

Պատրոկլեսի շուրջը դարձյալ վառվեց գուպար մի դըծընդակ,  
Արտոսրալից, ցատումնավառ. Աթենասը բորբոքեց այդ՝  
550 Որտուագոչ Արամագոի հըրամանով երկնից իջած,  
Որ հորդորի դանայեցոց խիզախելու տըրոյանց դեմ,  
Զի Զըրվանյանն ահեղագոչ փոխել էր իր միտքը արդեն:  
Եվ, ինչպես Զևսն ըզգոնամիտ՝ մահկանացու մարդկանց համար  
Ծավալում է ծիրանեզույն իր ծիածանը երկընթուս  
Իբրև ահեղ պատերազմի կամ խըստաշունչ ձըմոսն նըշան,  
Որ երկրագործ մըշակների աշխատանքին վերջ է դընում,—  
Եվ հոտերին պատճառելով մի տխրություն, քըշում փարախ.  
Այդպես ահա՝ աստվածուհին ծածկված ամպով ծիրանեզույն  
Մըտավ բանակն աքայեցոց հորդորելու մարտիկներին,  
560 Եվ նախ դիմեց Ատրիդեայան Մենելային ահեղագոռ,—  
Քանզի նա իր մոտ էր կանգնած,— և Փենիքսին նըմանկելով՝  
Հաղթ հասակով և կորույի ձայնով ուժգին՝ այսպես ասաց.  
«Մենելայի՛ն՝, քեզ մեծ ամոթ և նախատինք պիտի լինի,  
Տըրոյայի շըներն եթե պատերի տակ պատառոտեն  
Ծըբեղապանձ Աքիլլեսի մըտերմագույն ընկերոջ դին:  
Բայց պինդ կաց դու և խըրախույս կարդա բոլոր ընկերներիդ»:

Նըրան այսպես պատասխանեց Մենելայիսն ահեղագոռ.  
«Փենիքս հայրիկ, ծեր հինավուրց, պատկառելի, ո՛ր էր էթե  
Տար Աթենասն ինձ գորություն և տեգերի թափը մերժեր:  
570 Այնժամ պիտի կանգնեի պինդ ու Պատրոկլին պաշտպանեի,

- Որի մահը անհնարին ցավով սաստիկ սիրտըս ճըմլեց:  
 Բայց կըրակի սարսափելի գորությունը ունի անգութ  
 Հեկտորն ահեղ, որ չի դադրում խողխողելուց իր պըղինձով,  
 Քանզի հըզոր Ջևան է նըրան տալիս և՛ փառք, և՛ զորություն»:
- Այսպես սասց, և Աթենաս սատվածուհին ուրախացավ,  
 Որ Մենելավն սատվածների մեջ նախ իրեն աղերս արավ:  
 Եվ նա լըցրեց նըրա ծընկերն և ուները անհաղթ ուժով,  
 Ու դյուցազնի կըրծքում դըրեց հանըղգնությունն համառ ճանճի,  
 Որին որքան քըշես քեզնից՝ այնքան խայթել է ցանկանում,
- 580 Ջի մարդկային արյունը խիստ քաղցր է նըրա քիմքի համար:  
 Այդպիսի բուռն արիությանը սևաթույր սիրտն Ատրիդյանի  
 Լըցրեց մեղույշ սատվածուհին, և Մենելավն արագաքայլ  
 Գընաց կանգնեց Պատրոկլի մոտ և շողշողուն տնճն արձակեց:  
 Տըրոյանց մեջ Պոդես ամվամբ կար ոմն՝ որդին Էտիոնի,  
 Հարուստ ու քաջ, որին Հեկտորն ամենից շատ էր մեծարում,  
 Քանզի նըրա սեղանակից և սիրելի ընկերն էր նա:  
 Մենելավը խարտիշազեղ զարկեց նըրան ճիշտ այն պահին,  
 Երբ դիմում էր դեպի փայտուտ. տեզը գոտին ծակեց անցւով,  
 Պըղինձը դուրս ելավ թափով, և նա թընդմամբ ընկավ գետին:
- 590 Մենելավուն, անմիջապես նըրա մարմինը կորզելով  
 Քաշ տըվեց այն դեպ բազմախումբ իր ընկերներն աքաշեցի:  
 Մինչ Ապոլլոնը Հեկտորին մոտենալով սիրտ էր տալիս  
 Առած Այան Փենոփսի դեմքն, որին բոլոր իր հյուրերից  
 Նա ամենից շատ էր սիրում, ապրում էր նա Արիտոսում.  
 «Ո՞ր աքաշիկն այսուհետև կըվախենա քեզնից, Հեկտոր,  
 Երբ դու այդպես խույս ես տալիս Մենելավոս Ատրիդյանից:  
 Առաջ նա թույլ մարտիկ էր մի, իսկ այժմ նա մեծ ու ճեմակ  
 Տանում է դին տըրովներից՝ ըսպանելով սերտ մըտերմիդ՝  
 Քաջակորով ախոյանին՝ Էտիոնի Պոդես որդուն»:
- 600 Այսպես սասց, և Հեկտորին պատեց ցավի մըռայ մի ամպ,  
 Զինավառված շեկ պըղընձով՝ մըտավ շարքերն առաջամարտ:  
 Եվ Ջըրվանյանն առավ այնժամ քըղանցքավոր ու պաղպաջուն  
 Ասպարը իր և Իդա լեռն ըսքողելով թանձըր ամպով՝  
 Որոտընդուտ ու սաստկակոծ փայլատակմամբ դըղըրդացրեց.  
 Հաղթությունը տըվեց տրոյանց, վախն ու փայտուտն՝ աքաշեցոց:

Առաջինը փախավ ահով Պենելեոս Բիովտացին,  
 Քանզի թեթև մի վերք առավ դեմ-հանդիման ճակատելիս.  
 Պուլիդանը մոտիկ գալով՝ զարկեց նըրա ուսին տեզով,  
 Որը միսը բըզկըտելով՝ ծայրը մինչև ոսկրը հասավ:



- Յ10 Ապա Հեկտորն առաջ գալով խոցեց դաստակը Լեիտի՝  
Որդուն մեծանձն Ալկեոթիոնի և ջըլատեց ուժը նրա,  
Որ մայելով շուրջը՝ փախավ, զի այլևըս նա հույս չուներ  
Նիգակ բըռնել իր այդ ձեռքով և մարտընչել տըրոյանց դեմ:  
Այն ժամանակ, երբ Հեկտորը Լեիտի վրա էր հարձակվում,  
Իդոմենեան Հեկտորի լանջապամին զարկեց տեգով  
Ծըծին մոտիկ, բայց կոտորվեց երկար աշտեն կոթի մոտից:  
Այդ տեսնելով տըրոյացիք գոռգոռացին ահագնաձայն:  
Հեկտորն էլ իր աշտեն նետեց Դևակլյանի վըրա, կառքում,  
Բայց նըրանից շեղվեց փոքր-ինչ ու հարվածեց Կիրանոսին,  
620 Մերիոնեսի կառավարին և զինակրին, որ նըրա հետ  
Լիկոտսից էր եկել այստեղ (Իդոմենեսն այնտեղ եկավ  
Նախ հետիոտն՝ հեռանալով ծովագընաց իր մավերից,  
Եվ տըրոյանց անտարակույս կըսարգևեր մեծ հաղթություն,  
Թե Կիրանոսն արշավասույր ձիերն այնտեղ չըհասցըներ:  
Նըրա համար լույս եկավ նա և դըժպընի օրը վանեց,  
Սակայն ինքը մահ ընդունեց մարտախողխող Պրիամյանից):  
Հեկտորը իր տեգով զարկեց Կիրանոսի լայն ծընոտին,  
Ատամները փըշրեց բոլոր ու մեջտեղից կըտրեց լեզուն,  
Պախուրցները ձեռքից թըռան ու նա կառքից ցած գըրորվեց:  
630 Մերիոնը կըռանալով երասաններն առավ գետնից  
Եվ դառնալով Իդոմենին՝ բարձըր ձայնով այսպես ասաց.  
«Զա՛րկ ձիերին, Իդոմենե՛ս, մինչև հասնենք մավերն արագ,  
Ինքըդ պիտի տեսնես, որ էլ արսւյեցոց չի՛ք հաղթություն»:

Այսպես ասաց, և Իդոմենն իր նըժույզները գեղաբաշ  
Վարեց դեպի մավատորմիդ՝ սիրտը սաստիկ սարսափահար:  
Չանգիտացան Մենելայիոսն ու Այաքսը, որ հեղհեղուկ  
Հաղթությունը պատերազմում Զեսն ուզում է տալ տըրոյանց.  
Եվ առաջինն այսպես ասաց Տելամոնյան Այաքսը մեծ.

- «Ո՛հ, ամենեն պակասամիտն անգամ պիտի լավ հասկանա,  
640 Թե Արամազդ հայրն ուզում է տըրոյացոց տալ հաղթություն.  
Քանզի նըրանց սըլաքները, թույլ թե ուժեղ ձեռքից նետված՝  
Նըշանին են դիպչում ուղիղ շընորհիվ մեծ Արամազդի.  
Մինչ մեր տեգերն անընդատակ՝ զընում գետնի մեջ են ցցվում:  
Սակայն եկեք, որ միասին մի խելացի հընար խորհենք,  
Թե մենք ինչպես քաշենք տանենք Պատրոկլի դին, ապա դարձյալ  
Ետ դառնալով բերենք բերկրանք մեր սիրելի ընկերներին,  
Որոնք մեր կողմ մայելով միշտ՝ տըխրում են և չեն հավատում,  
Թե կըտոկանք արյունատուշտ Հեկտորի բուռըն գորույթյան,  
Այլ կըկորչենք ու կըսպառվենք մեր ծովաշու մավերի մոտ:

650 Երանի թե ընկերներից մեկը արագ լուր տաներ շուտ  
Պելիսյանին, որ կարծում եմ չի էլ լրսել բոլորովին  
Բոթը տըխուր, թե սիրելին իր ըսպանվեց պատերազմում:  
Բայց չեմ կարող ես այդպիսին արայեցոց մեջ նըկատել,  
Որովհետև թե՛ մարդ, թե՛ ձի մառախուղով եմ ծածկըված:  
Հա՛յր Արամազդ, ազատիր այս մառախուղից արայեցոց,  
Պարզիր երկինքն ու շընորհիր մեր աչքերին լույսը տեսնել,  
Ապա ջընջի՛ր մեզ լույսի մեջ, երբ որ այդպես դու կամեցար»:

Այսպես ասաց, և հայրը մեծ գըթաց նըրա արցունքներից.  
Ցըրեց մըշուշն անմիջապես և շամանդաղը փարատեց:  
660 Ծանանչափայլ արևն ելավ, պարզ երևաց ճակատն ամբողջ:  
Եվ Այաքսը Տելամոնյան ասաց Ատրիդ Մենելավին.  
«Նայի՛ր հիմա, դյուցասընունդ Մենելավե, եթե տեսնես  
Որ ողջ է դեռ Անտիոքոսն՝ որդին մեծամձըն՝ Նեստորի,  
Ծո՛ւտ ուղարկիր գուպարահաղթ Աքիլլեսին լուր տանելու,  
Թե ամենե՛ն սիրելի իր ընկերն ընկավ պատերազմում»:

Այսպես ասաց, և Մենելավն անեղագոռ անասց նըրան,  
Բայց ակամա թողեց գընաց, ինչպես սույուծը փարախից,  
Որ հոգնել էր հովիվների, շըների հետ մաքատելուց,  
Որոնք նըրան չէին թողել խըլելու ճարպն արջառների  
670 Ամբողջ գիշեր տագնապահույզ, բայց մըսատե՛նչ գազանն անեղ  
Հարձակվում է հաճախակի, սակայն իզուր, որովհետև  
Պըղընճասայր արլաքների տարափն անդույ և անդադար  
Թափվում է միշտ նըրա վըրա՝ նետված հըզոր բազուկներից,  
Եվ ջահերը, որոնցից նա թեպետև քաջ խըրոշում է խիստ,  
Եվ լույսի հետ միայն թողնում հեռանում է տըխուր պըրսով,—  
Պատրոկլեսի մոտից այդպես՝ Մենելավոսն անեղագոռ  
Գընաց դըժգոհ և ակամա, մըսածելով, թե մի գուցե  
Աքայեցիք վախից նըրան թողնեն ավար տըրույացոց:  
Ուստի այսպես նա պատվիրեց Այաքսներին ու Մերիոնին.  
680 «Ո՛վ Այաքսներ, և դո՛ւ, Մերիոն, առաջնորդներդ արգիացոց,  
Մի՛ մոռանաք տարաբախտիկ, բարեհամբույր Պատրոկլեսին,  
Հիշեցեք որ, երբ ողջ էր նա, բարի էր միշտ բոլորի հետ,  
Իսկ արդ գըտավ մահը նըրան և օրհասը ճակատաճրի»:

Այսպես ասաց և հեռացավ Մենելավոսն անեղագոռ,  
Իր շուրջ-բոլոր աչք ածելով, ինչպես արծիվ, որի համար  
Ասում են թե թըռչունների մեջ սըրատեսն է ամենե՛ն,  
Որ ամպերից նըկատելով արագավազ նապաստակին

Մացառուտի մեջ ծրվարած, խոյանում է Արրա վերա  
 Հափշտակում անհիջապես ու զըրկում է Արրան կյանքից:  
 690 Այդպես և քո, Մեներավե՛, փալլուն աչքերն ամենուրեք  
 Դառնում էին քո շուրջ-քոլոր աքալեցոց բազմության մեջ,  
 Թե կըտեսնե՛ս դու Արրանց մեջ տակավին ողջ Նեստորյանին:  
 Եվ նա շուտով տեսավ Արրան պատերազմի ձախակողմում,  
 Որ հորդորում, սիրտ էր տալիս ընկերներին մարտընչելու:  
 Մոտենալով Արրան խարտյաշ Մեներավոսն այսպես ասաց.  
 «Այստեղ արի, Անտիլոքե՛, որ լըսես գույժ մի ցավալի,  
 Մի դառն աղետ, որը պիտի չըկատարվեր թողորովին:  
 Ինքըդ նույնպես, կարծում եմ ես, տեսնում ես պարզ ու հասկանում,  
 Թե սուկալի պատուհաս է բերում աստված դանայեցոց,  
 700 Հաղթությունը տալով տըրոյանց. ընկավ դյուցազնը սիրելի՛  
 Պատրոկլը քաջ, սուկալի սուգ պատճառելով աքալեցոց:  
 Բայց դու վազիր դեպի նավերն ու լուր տար շուտ Աքիլլեսին,  
 Որ գա շուտով և ազատի գոնե Արրա մարմինը մերկ,  
 Զի Հեկտորը կորդականճոճ ավարել է զենքերն արդեն»:

Լըսելով բոթճ այդ սուկալի՛ Անտիլոքոսը սարսափեց,  
 Ու պապանձվեց Արրա լեզուն, աչքերն լացով ողողվեցին,  
 Զայնը խեղդվեց կոկորդի մեջ, և անկարող եղավ խոսել,  
 Բայց և այնպես հրնազանդեց Մեներավի հըրամանին,  
 Եվ հանձնելով զենքերն՝ անբիժ իր ընկերոջն՝ Լավոդոկին,  
 710 Որ Արթույզներն էր մոտ բերում, գընաց իսկույն նա վազելով:  
 Արագ-արագ տանում էին Արրան ոտքերն ուզմի դաշտից,  
 Լաց լինելով գընում էր նա պատմելու բոթճ Աքիլլեսին:

Սիրտը սակայն, դյուցասընունդ Մեներավե. չուզեց մընալ  
 Սատարելու Պիլիսացոց, որ ոգեսպառ էին եղած  
 Եվ կորագլուխ էին արդեն Անտիլոքի հետանալով:  
 Նա Արրանց պետ Աըշանակեց դիցանըման Թրասիմեդին  
 Եվ ինքն էլի՛ վերադարձավ Պատրոկլեսին պաշտպանելու:  
 Այաքսների մոտ հասնելով Մեներավոսն այսպես ասաց.  
 «Անտիլոքին միրմիդոնաց նավատորմիդն ուղարկեցի,  
 720 Աքիլլի մոտ, բայց չեմ կարծում, որ նա էլնի ու գա հիմա,  
 Որքան էլ որ Հեկտորի դեմ լըցվի ցասկոտ ասելությամբ.  
 Զի նա անզեն ինչպե՛ս պիտի պատերազմի տըրոյանց դեմ:  
 Ուստի եկեք մենք ինքներըս ուրիշ միջոց մի մըտածենք,  
 Թե ի՞նչ ձևով կարողանանք հանել մարտից Պատրոկլի դին  
 Եվ ազատվենք տըրոյացոց ձեռքից դաժան և օրհասից»:

Տելամոնյան Այաքսն այսպե՛ս պատասխանեց Ատրիդեսին.  
«Այդ բոլորը ճիշտ ասացիր, ո՛վ մեծափառ Մենելայնու:  
Մերի՞նն ու դու անմիջապէս վերցրէք դին Պատրոկլէսի  
Եվ մարտից դուրս հանէք արագ, իսկ մենք այստեղ, ձեր ետևից  
730 Կրոնիվ կըտանք տըրոյացոց և մեծամիտ Հեկտորի դէմ,  
Մենք, որ ունենք նույն անունը և սիրտը նույն, որ անվեճեր  
Տոկացել ենք բարկ Արեսին ու միմյանցից չենք բաժանվել»:

Այսպէս ասաց, ու գըրկելով նըրանք գետնից դիակն առան  
Եվ այն վերև բարձրացըրին. գոռոռացին տըրոյացիք,  
Երբ որ տեսան, թե աքայանք առին տարան Պատրոկլի դին:  
Ինչպէս որ ծիր բարակները որտորդների առաջն ընկած  
Հարձակվում են վիրավորված կինճի վըրա, որ զըզըզեն,  
Իսկ երբ վարագն ինքնավըստսաճ էտ է դառնում հանկարծակի՝  
Խուճապահար փախա են տալիս մեկը այս կողմ և մյուսը այն,—  
740 Այդպէս նակ տըրոյացիք բավական տեղ առժամանակ  
Հայածեցին նըրանց սըրով ու երկասայրի հիզակներով:  
Բայց նենց որ էտ էին դառնում զույգ Այաքսներն ըսպտոնալից,  
Գըցում էին գույնը նըրանք և ո՛չ մեկը սիրտ չէր անում  
Առաջ նետվել և մարմինը հափըշտակել նըրանց ձեռքից:

Այսպէս նըրանք եռանդագին տանում էին դին ճակատից  
Գեպի նավերը ծովաչու, բայց բըռընկվեց նըրանց միջև  
Մարտ մի անեղ, ինչպէս հուրը, որ խոժելով հանկարծակի  
Մի քաղաքի վըրա մարդկանց՝ լսվում է այն հըրդեճակեզ  
Ու տարածվում է մեծաշունչ հողմի ուժով մըռընչալից,—  
750 Հետևում էր նըրանց այդպէս մի մեծ աղմուկ և աղաղակ  
Ահեղագոռ, պըղընճափառ մարտիկների և ձիերի:  
Միճչդեռ նըրանք ինչպէս ուժեղ ու ժըրաշան պինդ ջորիներ,  
Որոնք լեռան առապարոտ ճանապարհով քարշ են տալիս  
Նավափայտի համար գերան մի անագին և կամ հեճան,  
Ու հոգնատանջ, ըշտապելուց ողողվում են քըրտինքի մեջ,—  
Տանում էին նըրանք այդպէս Պատրոկլի դին ճիգ ու ջանքով:  
Ու ետևից նըրանց երկու Այաքսները հաղթամարմին,  
Ինչպէս բըլուրն է ծառախիտ արգելակում ջըրի ճամփան,  
Երկարելով դաշտի վըրա՝ հեղեղներ է սանճահարում  
760 Եվ ընթացքը շուտ է տալիս դեպի ուրիշ կողմ դըւրահու,  
Եվ հոսանքի ուժը հըսկա անգոր է աղ թումբը ճեղքել,—  
Այդպէս երկու Այաքսները, դէ՛մ դըննելով տըրոյացոց,  
Զըսպում էին թափը նըրանց, նամանավանդ երկու հոգու՝  
Էնիառի Անքիսեսլան և Հեկտորի շըքեղանդիս,

Եվ ինչպես ամպը խռոնախիտ սարչակների կամ սևաթույր  
Ագռավների, որ ահաբեկ խուչս են տալիս ճիչ ու կանչով,  
Երբ որ տեսնում են վերևում ուրուրին ժանտ ու գիշատիչ,  
Որ բերում է ան ու սարսափ բոլոր փոքրիկ թռչուններին,  
Այդպես նաև արայեցիք առանց կրույի մեջ մըտնելու  
770 Փախչում էին Էնիասից և Հեկտորից աղաղակով,  
Ու փախչելիս դանաչեցիք փոսի չորս կողմ ու փոսի մեջ  
Թողին բազում զենք ու զրրան. և կրույին վերջ ու դույ չըկար:

# Երգ Տաւնու թերորդ

## ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կըովում էին սրբանք այսպես կըրակի պես բոցաբորբոք.  
Իսկ Անտիոքն արագընթաց՝ Աքիլեւսի մոտ հասնելով՝  
Գըտաւ Արբան իր բարձեղջյուր նալատորմի առջև նրատաձ.  
Միտք էր անում ինքն-իրեն մեջ այն, ինչ արդեն կատարվել էր:  
Ու հեծելով հառաչալից խոսում էր մեծ իր սրբոյ հետ.

«Ավա՛ղ, ինչո՛ւ համար նորից գիսակագեղ արայեցիք  
Ահաբեկված՝ դաշտի միջով դեպի նավերն են խուճապում:  
Երանի՛ թե աստվածները հեռացնէին աղետն այն մեծ,  
Որի մասին մի ժամանակ մայրըս պատմեց, ասելով, թե

- 10 Միրմիդոնաց ամենաքաջն ինձնից առաջ պիտի մեռնի  
Տըրոյացոց ձեռքով անգույթ և զըրկըվի արև լուսսից:  
Անտարակոյս մեռել է քաջ Մեցիտյանն իմ սիրելագույն,  
Անքա՛խտ, չէ՞ որ պատվիրեցի, թե երբ վանի հուրն ոխերիմ՝  
Ինձ մոտ դառնա և չըմըտնի պատերազմի Հեկտորի դեմ»:

Եվ մինչ այսպես խորհում էր նա տարված տըխտը իր մըտքերով,  
Հասավ որդին վըսեմափառ ծեր Նեստորի՝ Անտիոքոսն  
Ու թափելով ջերմ արտասուք սըրտանըմիկ բոթը գուժեց.

«Վա՛յ ինձ, որդի՛դ քաջ Պելեւսի, տամ պիտի քեզ անհընարին  
Դառնության բոթ, աղետ, ավաղ, որը պիտի չըկատարվեր.

- 20 Պատրկկեսը ընկավ և մերկ դիակի շուրջ կըովում են արդ,  
Իսկ Հեկտորը կորդակաճոճ՝ նրա գեներն հափըշտակեց»:

Այսպես ասաց, և տրիբության ամպը պատեց Աքիլեւսին,  
Եվ առնելով աճյունախառն մոխիրը գույգ իր ավերով  
Ցանեց գըլխին ու փոշոտեց շընորհագեղ իր դեմքը նա.  
Եվ բուրավետ պատմունանին նըստեց մոխիր սևաթորմի:

- Փըռվել էր նա փոշիներում ողջ հասակով, մեծատարած  
 Ու փեսում էր գըլխի մազերն իր ձեռքերով, աղափաղում:  
 Աղախհաններն, որոնց ինքը և Պատրոկկեսն էին գերել,  
 Դուրս վազելով, կորովազեն Աքիլլեսին շրջապատած
- 30 Սըգում էին սըրտաճըմիկ ու բարձրաձայն ողբում աղի,  
 Ծեծում իրենց կործքը ձեռքով ու կըսկըծում ծընկակոտոր:  
 Լաց էր լինում Անտիլոքոսն էլ վըշտաբեկ և իր սըրտում  
 Վախենալով, որ մի գուցե երկաթը սուր վիզը մըլխի՝  
 Բըռնել էր նա արտասովակոծ Աքիլլեսի ձեռքերը գույգ:  
 Լաց էր լինում Աքիլլը քաշ ու հեծեծում հառաչալից:  
 Լըսեց որդու լացն աղեկեզ՝ մեծարո մայրն աստվածուհի,  
 Որ նըստել էր ծեր ամուսնու կողքը, ծովի խոր հատակում,  
 Ու դառնահեծ ճիշ արձակեց. հավաքվեցին ծովի բոլոր  
 Դիցուհիներն անմիջապես՝ դըստրիկները Ներեիդյան՝
- 40 Կիմոդոկեն և Թալիան, և Գլավկեն, Նիսեն, Թոչեն,  
 Լիմնորիան և Ակտեան, Մելիտն, Երան և Ազավեն,  
 Ամփիթոյեն, Դողան, Պրոտան, Դինամենեն և Փերուզան,  
 Դեքսամենեն, Ամփիհնոմեն, Կալիանիրան և Դորիսան,  
 Եվ Պանոպեն, և Գալատեան շընորհաշուք և անվանի,  
 Եվ Աըրանց հետ Նիմերիտան, Կալեանասան և Ափսիդեն,  
 Կլիմենեն և Յանիրան, և Յանասան, Ուլիթթն, Մերան,  
 Եվ Ամաթիան գեղահյուսակ և մյուս Ներյան դուստրերն ամեն,  
 Որ ծովի խորքն էին ապրում՝ լըցրին անձավն արծաթափայլ.  
 Ու բոլորով ծեծում էին կործքը իրենց բըռունցքներով,
- 50 Եվ ողբաձայն լաց ու կոծին ըսկիզբ դըրեց Թետիսը նախ.  
 «Քույրեր դուք իմ Ներեիդյան, լըսեք բոլորդ և իմացեք  
 Թե ի՞նչ տըխտոք ձայն լըսեցի, ի՞նչ մեծ վիշտ է վիճակվել ինձ:  
 Վա՛յ ինձ, ավաղ, վա՛յ թըշվառիս, դյուցազուհի մորրս անբախտ,  
 Ես, որ որդի մի ծընեցի արիասիրտ և անբասիր,  
 Դյուցազների մեշ անվանի, աճում էր նա բողբոջի պես,  
 Ու սընվում էր բերրի դաշտում բուսած դալար տունկի Աըման.  
 Նըրան Իլիոն ուղարկեցի նավով՝ տրոջանց դեմ կըռվելու,  
 Եվ այնտեղից չի դառնալու նա Պելլեսի տունը այլևս.  
 Ու քանի դեռ ապրում է նա և տեսնում է լույսն արևի,
- 60 Պետք է տանջվի, ու չեմ կարող հասնել Աըրան նս օգնության:  
 Բայց պիտ գընամ, տեսնեմ որդուն իմ սիրելի և իմանամ,  
 Թե ի՞նչ մեծ վիշտ հասավ Աըրան, մի՞նչ հեռու էր նա գուպարից»:

Ասաց, էլավ նա անձավից, և Աըրանից միշտ անբաժան  
 Գընում էին Ներեիդյան Աըրա քույրերն արտասովալից,  
 Ծեղքըվում էր ծովն աղմուկով ու ճանապարհ տալիս Աըրանց:

- Եվ երբ Արքանք ծովն անցնելով հասան Տրոյա արգասավոր,  
 Ծովափ ելան, ուր խիտ առ խիտ կանգնած էին միրմիդոնաց  
 Գեղեցկատախտ Ասվերը սև՝ Աքիլլեսի մեծ Ասվի շորջ:  
 Հեծում էր նա ու հառաչում. մոտեցավ մայրը Աագելի
- 70 Եվ բարձրաձայն կականելով գըրկեց որդու գըլուխը նա  
 Ու գըզվելով գորովալից այս թեւավոր խոսքերն ասաց.  
 «Ինչն՞ էս ես դու լալիս, որդիս, այն ի՞նչ սուգ է սիրտըդ պատել,  
 Ասա՛, ինձնից մի՛ ծածկիր դու, Ջըրվանյան Ջևար կատարեց  
 Այն բոլորը, ինչ Արքանից խընդրում էիր բազկատարած.  
 Աքայեցոց որդիք բոլոր դեպի Ասվերն հալածվեցին  
 Անհընարին տաջանքներով և քո կարտուն են քաշում արդ»:
- Եվ արագոտն Աքիլլը դառն հառաչելով ասաց Արքան.  
 «Այո՛, մայր իմ, ոլիմպականն ամեն խընդիրըս կատարեց,  
 Բայց դըրսանից ինձ ի՞նչ բերկրանք, երբ որ կորավ իմ սիրելի
- 80 Ընկերը թանկ, Պատրոկլեսը, որին բոլոր ընկերներիցս  
 Հաննից շատ էի սիրում, և մի՞նչև իսկ ինձ հավասար:  
 Բայց կորցրի՞. ըսպանելով Արքան Հեկտորն՝ հափըջտակեց  
 Բոլոր գեներն այն ահարկու, որ աստվածները ոլիմպյան  
 Պարզևեցին Պելևսին վեհ իբրև օծիտ ամենաճոխ  
 Այն օր, երբ քեզ՝ աստվածուհուդ մահկանացվի ծոց պսակեցրին:  
 Երանի՛ թե դու ծովային անմահների մոտ մընայիր,  
 Եվ Պելևսին իբր ամուսին տալին մի կին մահկանացու:  
 Հիմա պետք է և քե՛զ հասնի սուգ սուկալի ու վիշտ անվերջ  
 Որդուդ մահվամբ, որ այլևըս չի դառնալու հայրական տուն,
- 90 Որովհետև սիրտս այսուհետ չի կամենա արև տեսնել,  
 Եթե առաջ իմ հիզակով Հեկտորն հոգին իր չըփըջի,  
 Հատուցելով վըրեժն իմ թանկ Պատրոկլեսի մահվան համար»:

Եվ Թեսիսը արտասավաթոր Արքան այսպես ասաց կըրկին.  
 «Որեմըն շո՛ւտ ես մեռնելու, քա՛ղցր իմ որդյակ, քո ասելով,  
 Զի Հեկտորի մահից հետո քո օրհասն է գալու շուտով»:

- Եվ արագոտն Աքիլլը խոր հառաչելով պատասխանեց.  
 «Թող որ մեռնեմ թեկուզ հիմա՛, քանի որ ես չըկարեցա  
 Օգնել զարկված բարեկամիս, որ իր երկրից հեռու ընկավ,  
 Ինձ կանչելով, որպեսզի ես վանեի ժանտ մահն իրենից:
- 100 Ես այլևըս չեմ դառնալու իմ հայրենի երկիրն աճուշ,  
 Ես չըհասա՞ Պատրոկլեսին և չեմ օգնում ընկերներինս,  
 Որոնք ընկնում են Հեկտորի ձեռքով անեղ պատերազմում,  
 Այլ Արստել եմ Ասվերի մոտ իբր անօգուտ քեռ իմ երկրին,  
 Մի՞նչդեռ ոչ մի աքայեցի չէր հասնի ինձ պատերազմում,



Թեպետ ճիշտ է, որ ասյանում ետ եմ մընում ուրիշներից:  
Երանի՜ թե կորչեք քեզը աստվածների, մարդկանց միջից,  
Եվ զայրույթը, որ դըրդում է ի չար Աույնիսկ իմաստունին,  
Զայրույթը, որ շատ ավելի քաղցր է, քան թե մեղրը ծորուն,  
Եվ աճում է մարդկանց սըրտում, կուտակվում է ծըխի նըման,

- 110 Ինչպես որ արդ ինձ բարկացրեց Ագամեմնոն արանց արքան:  
Բայց անցածը մենք մոռանանք, թեև ցաված ենք, վըշտահար,  
Եվ մեր կըրծքում սանձահարենք զայրույթը մենք հարկադըրված:  
Հիմա պիտի գընամ գըտնեմ ես Հեկտորին, որ սիրելու  
Գըլլիսի դահիճն եղավ դաժան, ապա թող մահ ընդունեմ ես,  
Որ վըճեմ եմ Զևսը և մյուս անմահները ամենագոր:  
Չըփըրկըվեց իր օրհասից մինչև անգամ ամենահաղթ  
Հեթակեսը, որ սիրելի որդին էր մեծ Զըրվանյանի.  
Ծակասագիրն ու Հերայի ցատումն ահեղ ընկճեց նըրան:  
Ադպես և ես եմ մեռնելու, եթե մահ է վիճակված ինձ,  
120 Բայց ուզում եմ նախքան օրհասն՝ ինձ պըսակել պայծառ փառքով  
Եվ ըստիպել տըրոյացոց գեղեցկալանջ, չըքնաղ կանանց  
Հառաչելու կականալիր և սըրբելու երկու ձեռքով  
Արտասուքներն իրենց աչքից և այտերից իրենց գողտրիկ,  
Որ հասկանան, թե շատ օրեր հեռու էի մընում մարտից:  
Մի՛ արգելիր կըրվել ինձ մայր, ոչ մի բանով չես համոզի»:

Արծաթթաթիկ աստվածուհի Թետիսն այսպես ասաց նըրան.  
«Շըշմարիտ ես ասում, որդյակ, ազնիվ քան է անտարակույս  
Օգնել հոգնած ընկերներին և ազատել նըրանց մահից.

- Բայց գեղեցիկ զենքերը քո, պըղընձակերտ ու պաղպաջուն  
130 Ավարեցին տըրոյացիք, և նըրանցով սաղվարտաճոճ  
Հեկտորը իր կուրծքը ծածկած՝ խըրոխտում է, քայց չեմ կարծում,  
Թե նա երկար պիտի նագի այդ զենքերով, զի մահն է մոտ:  
Բայց դու, որդիս, մի նետիր քեզ պատերազմի տագնապի մեջ,  
Մինչև որ դու քո աչքերով ինձ չըտեսնես հասած այտեղ:  
Վաղը հագիվ այգը ծագած այտեղ պիտի վերադառնամ  
Եվ Հեփեստոս թագավորից քեզ վայելուչ զենքեր բերեմ»:

Այսպես ասաց աստվածուհին ու շուտ եկավ անմիջապես  
Եվ դառնալով նա ծովային իր քույրերին՝ ասաց նըրանց.

- «Հիմա մըտեք դուք վերըստին ծոցը ծովի անծայրածիր,  
140 Տեսեք ծովի ծերունափառ ալևորին իր պայատում  
Ու պատմեցեք ինչ որ տեսաք. իսկ ես գընամ դեպի Ոլիմպ  
Ծարտարարվեստ Հեփեստի մոտ, որ տեսնեմ թե ուզո՞ւմ է նա  
Տալ իմ որդուն՝ Աքիլլեսին ճանանչափայլ զենքեր արդյոք»:

- Այսպես ասաց, ու սուգվեցին ճորանք ծովի ափքներում,  
 Իսկ դիցուհին արծաթաթիկ դեպի Ոլիմպ ուղևորվեց,  
 Որպեսզի իր որդու համար բերի գեներ գեղեցկահատ:  
 Նըրան դեպի Ոլիմպ էին տանում ոտքերն, իսկ աքաչանք  
 Փախուստ տալով մարդախողխող Հեկտորից մեծ աղաղակով՝  
 Հասան մինչև Ասվերն իրենց, Հելլենպոնտի ափերի մոտ:
- 150 Սակայն դարձյա՛լ չըկարեցան պըղընձագեն աքաչեցիք  
 Աքիլլեսի ընկերոջը՝ Պատրոկլեսին տեղ հասցընել:  
 Քանզի նորից հասան ճորան հետևակներն ու այրուծին,  
 Եվ Պրիամյան Հեկտորը ճոխ բոցատեսիլ իր զորութեամբ:  
 Երեք անգամ Հեկտորը՝ պինդ՝ Պատրոկլեսի ոտքից բըռնեց,  
 Փորձեց քաշել տանել ճորան ու ձայն տըրվեց տըրոչացոց,  
 Եվ երեք հեղ Այաքսները հուժկու ուժով՝ Պատրոկլեսից  
 Ետ մըղեցին խիզախ քաշին, բայց նա ուժին հանձնապատան  
 Հարձակվում էր մերթ ամբոխի միջից ու մերթ մընում կանգնած,  
 Աղաղակում էր մեծաձայն, սակայն երբեք չէր նահանջում:
- 160 Ինչպես որ չեն կարող վանել հովիվները բաց դաշտի մեջ  
 Սովալըլուկ շեկ առյուծին հափըշտակած իր կերակրից,  
 Այդպես երկու կորովագեն Այաքսները չէին կարող  
 Ահաբեկել Պրիամյանին և դիակից հեռու վանել:  
 Եվ կբտաներ Հեկտորն անշուշտ մարմինն ու փառք կըվաստակեր,  
 Եթե Իրիսը մըրըրկոտն՝ Ոլիմպոսից ցած իջնելով,—  
 Որին Հերան՝ լուսածըղի աստվածուհին էր ուղարկել  
 Ծածուկ Ջևսից և մյուս բոլոր աստվածներից ոլիմպաբնակ,—  
 Պատգամավոր չերթար ըշտապ Պելիսածին Աքիլլի մոտ,  
 Հորդորելու, որպեսզի նա զինավառվի անմիջապես:
- 170 Մոտենալով Աքիլլեսին այս թևավոր խոսքերն ասաց.  
 «Ո՛վ մարդկանց մեջ ամենեն քաջ, անեղագո՛ւյն դու Պելիսյան,  
 Հասիր պաշտպան Պատրոկլեսին, որի համար Ասվերի մոտ  
 Սոսկալի մարտ է բըռընկվել ու ջընջում են մեկ-մյուսին:  
 Աքաչեցիք ոգորում են, որ պաշտպանեն մարմինն անշունչ,  
 Իսկ տըրոչանք մոլեգնեռանդ ուզում են այն տանել Իլիոն:  
 Եվ մանավանդ Հեկտորը վեստ հափըշտակել է ցանկանում  
 Եվ գըլուխը անջատելով փափուկ վըզից՝ ցըցի գարնել:  
 Վե՛ր կաց և էլ մի՛ դանդաղիր, սիրտըդ պիտի ցալի սաստիկ,  
 Եթե դառնա ջըներին կեր և խաղալիք Պատրոկլի հին:
- 180 Արատ է քեզ, եթե ճորա մարմինն հասնի մի անարգանք»:

Եվ արագոտն Աքիլլը քաջ ճորան այսպես պատասխանեց.  
 «Աստվածուհի՛, անմահներից ո՛վ քեզ բանքեր հըղեց ինձ մոտ»:



Զինագործություն

Եվ մըրըրկոտն Իրիսն այսպես պատասխանեց Աքիլլեսին.  
«Ինձ ատաքեց Հերան քեզ մոտ, շըքեղ բամբիշն Արամազդի,  
նու չըգիտեն՝ ո՛չ Ջըրվանյանը բարձրագան, ո՛չ էլ ուրիշ  
Աստվածները, որ ձյունեղեն Ոլիմպոսում են բընակվում»:

Աքիլլեսը կըրկին անգամ պատասխանեց աստվածուհուն.  
«Իսկ ես ինչպե՛ս գընամ կըրիվ. կըրանց մոտ են գեներընս ողջ,  
Եվ սիրելի մայրըս էլ ինձ թույլ չի տալիս զինավառվել,  
190 Մինչև կըրան իմ աչքերով ես չըտեսնեմ այստեղ դարձած:  
Նա խոստացավ Հեփեստոսից չըբնաղ զենքեր քերելու ինձ.  
Իսկ ուրիշ ո՛ւմ զենքերով ես կարող եմ արդ զինավառվել,  
Ի բաց առյալ Տելամոնյան Այաքսի մեծ կոռ ասպարից.  
Նա էլ, կարծեմ, առաջամարտ գընդերի մեջ իր հիզակով  
Նախհիքներ է գործում այնտեղ Պատրոկլեսի դիակի շորջ»:

Եվ մըրըրկոտն Իրիսը ժիր ասաց դարձյալ Աքիլլեսին.  
«Մենք լավ գիտենք, որ ավարված են գեղեցիկ զենքերը քո,  
Բայց դու այդպես փոքր գընա ու երևա՛ կըրանց աչքին,  
Գուցե քեզինց վախենալով՝ մարտը թողնեն տըրոյացիք,  
200 Եվ աքայանք ոգի առնեն իրենց աստիկ հոգնությունից.  
Զի կըրվի մեջ հանգըստանալն անհըրածեշտ է զինվորին»:

Այսպես ասաց աստվածուհի Իրիսը ժիր և հեռացավ:  
Իսկ Աքիլլեսը՝ սիրելին Ջևսի, ոտքի ելավ արագ,  
Եվ Աթենասն իր ասպարը կըրա կարշնեղ ուսը գըցեց,  
Եվ գըլուխը ոսկե ամպով սըրսակեց վեհ աստվածուհին.  
Եվ կըրանից մի հըրաշեկ, շողշողուն բոց փայլատակեց:  
Ինչպես ծովան է երկինք ելնում հեռու կըրգու մի քաղաքից,  
Որ պաշարված է թըշնամուց, և բընիկներն ամբողջ ցերեկ  
Մարտ են մըղում անեղորեն ոտխի դեմ բարկ Արեսով,  
210 Իսկ արևը մըտնելուց ետ կըրակներ են վառվում այնտեղ,  
Որոնց լույսը մինչև երկինքն է բարձրանում, որ այն տեսնեն  
Սահմանակից ժողովուրդներն և օգնության գան նավերով,—  
Այսպես՝ փայլակն Աքիլլեսի գըլխից երկինք էր բարձրանում:  
Պատնեշից դուրս գալով կանգնեց փոսի առաջ, բայց հարգելով  
Նա իմաստուն պատվերն իր մոր՝ աքայեցոց մեջ չըմըտավ,  
Այլ փոսի մոտ կանգնած գոչեց. Պալլասն էլ միտս կողմից գոռաց,  
Եվ տըրոյանց մեջ սուկալի իրարանցում առաջ քերեց:  
Ինչպես փողի ձայնն է ուժգին հըստակ լըսվում ուսումնի մեջ,  
Որ պաշարված է դխերիմ ոտխներով ամեն կողմից,  
220 Այդպես լըսվեց Էակոսի թոռան ձայնի՝ որոտն ամեղ:

Տըրոյացիք երբ լըսեցին պղընձյա դողանջն Աքիլեայի,  
Բոլորի սիրտը թունդ առավ, և ձիերը գեղեցկաբաշ  
Կառքերը դեպ ետ շըրջեցին՝ մեծ վըտանգի հոտ առնելով:  
Կառավարները սուկացին տեսնելով վեհ, մեծահոգի  
Աքիլեայի գըլխի շուրջը ցոլացող հուրն անշիջական,  
Որ վառել էր կապուտաշյա Աթենաս մեծ աստվածուհին:  
Կանգնած այդտեղ, փոսի առաջ դյուցազն Աքիլն ահագնաձայն  
Երեք անգամ գոռաց ահեղ, և երեք հեղ աղմըկեցին

- Տըրոյացիք և դաշնակից զորքերը խառն ու խոռոնամբոխ:  
230 Իրարանցման մեջ այդ ասատիկ տասներկու մարդ մեռան այդտեղ  
Իրենց կառքի մեջ՝ սեփական միզակներից վիրավորված:  
Այդ ընթացքում արգիացիք սըլաքներից դուրս կորզելով  
Պատրոկլի դին՝ դըրին մահճում, և ընկերներն ողթում էին  
Մեկիտյանին շըրջապատած, և ընթանում էր նըրանց հետ  
Աստվածային Աքիլը քաջ, թափելով ջերմ, առատ արցունք  
Տեսնելով իր շատ սիրելի բարեկամին պատգարակում,  
Սուր պըղընձով վիրավորված, որին նա իր նըժույգներով  
Ողարկեց մարտ, քայց չընդունեց նըրան դարձած ողջ և առողջ:

- Այդ ժամանակ Արեգակին՝ նըրա կամքին իսկ հակառակ՝  
240 Հըրամայեց Հերան իսկույն դեպի Օվկիան վերադառնալ:  
Արևն արագ ի մայր մըտավ, և դյուցազնյա արքայեցիք  
Դադար տըվին իրենց կըովին և ընդհանուր պատերազմին:

- Մյուս կողմից էլ տըրոյացիք ետ քաշվեցին ահեղ մարտից.  
Եվ կառքերից արձակեցին նըժույգները սըրաթըռոխ,  
Եվ ժողովի հավաքվեցին ընթրիքի հոգսն անտեսելով:  
Բայց սիրտ չարավ ոչ ոք նըստել, այլ մընացին ոտքի վըրս,  
Զի հայտընվելն Աքիլեայի սարսափեցրել էր բոլորին,  
Նա որ երկար ժամանակով ձեռընթափ էր եղել մարտից:  
Եվ խոսք առավ նախ իմաստուն Պոլիդամասը Պանթոյան,  
250 Որը ներկան տեսնում էր պարզ և ապագան նախատեսում:  
Հասակակից էր Հեկտորին, երկուսն էլ նույն գիշեր ծընված,  
Ծարտասան էր նա անվանի, Հեկտորը քաջ միզակաձիգ:  
Եվ նա հոգուտ տըրոյացոց այսպես խոսեց այդ ժողովում.  
«Լա՛վ կըշոնեցեք, բարեկամներ, ես ինքքս ձեզ խորհուրդ կըտամ  
Ոտոսն դառնալ և չըսպասել աստվածային Արշալույսին,  
Այստեղ դաշտում, նավերի մոտ, շատ եհք հեռու մեր պարըսպից:  
Քանի որ դեռ Ագամեմնի հետ քեն ուներ Աքիլը շաջ,  
Հեշտ էր կըովել արքայանց դեմ, հաճելի էր մարտն ինձ համար,  
Որովհետև հուշս ունեի տիրանալու նավատորմին:

- 260 Այնինչ հիմա ես չափազանց վախենում եմ Դեյիսյանից,  
 Զի նա իր բուն հոգուց մղոված էլ չի ուզի դաշտը մընալ,  
 Ուր տըրոյանքս ու աքայանք մինչև այսօր իրարու դեմ  
 Մղդեցինք մարտ բուն Արեւով, այլ նա պիտի կըրվի հիմա  
 Մեր քաղաքին ու մեր կանանց տիրանալու համար արդեն:  
 Ուստի ուսումն վերադառնանք, ինձ լըսեցէք, պիտի լինի  
 Այնպես, ինչպես ես եմ ասում, առայժմ գիշերն աստվածային  
 Սանձահարեց արագոտնչա Աքիլլեսի ցաւումն ահեղ,  
 Բայց վաղը, երբ ըսպառագեն գըրոհ գործի նա մեզ վըրս՝  
 Նըրան շատ լավ պիտ ճանաչի, ով մեզանից մընա այստեղ,
- 270 Եվ Տըրոյա փախչողն իրեն բյուր երանի պետք է որ տա:  
 Մեզնից շատերը շընեթին և անգղերին պիտ կեր դառնան,  
 Ո՛հ, երանի, թե այդ բոթը չըհասներ իմ ականջներին:  
 Սակայն, եթե ինձ կըլըսէք, թեև տըլտոր ենք, վըշտացած,  
 Գիշերը մենք հրապարակում կանցկացնենք մեզ կազդուրելով,  
 Իսկ քաղաքին պահպանություն թող որ անեն աշտարակներն  
 Ու բարձրադիր դըրներն ամուր, տախտակամած, երկար ու պինդ:  
 Իսկ առավոտ, դեռ շատ կանուխ վառված մեր ճոխ գեղուզարդով՝  
 Աշտարակները բարձրանանք, և վա՛յ նըրան, ով հանդըզնի  
 Գըրոհ գործել նավատորմից մեր պարըսպի ու մեզ վըրս:  
 Գիտի դառնա նա վերըստին դեպի նավերն՝ իր բարձրավիզ  
 Զիերն իզուր այստեղ-այնտեղ վազեցնելով քաղաքի շուրջ.  
 Իսկ քաղաքից ներս հըրոսել, կամ այն քանդել սիրտ չի անի,  
 Քանզի այնտեղ նա շատ շուտով կեր կըդառնա մեր շընեթին»:

Խեթ նայելով նըրան Հեկտոր կորդակաճոճն այսպես ասաց.  
 «Խոսքերըդ ինձ բոլորովին հաճելի չեն, Պուլիդամա՛ս,  
 Որ խորհուրդ ես տալիս դառնալ ու պարփակվել քաղաքի մեջ:  
 Աշտարակաց մեջ փակվելուց, ինչ է, դուք դեռ չըկըշտացա՛ք:  
 Առաջներում պարզաբարբառ բոլոր մարդիկ ասում էին,  
 Թե Պրիամի քաղաքը շեն լի է ոսկով և պըղընձով,  
 290 Իսկ այժմ անհետ կորան ընտիր ըսպասները մեր տըրներից.  
 Մեր ունեցվածքը Փըոյուզիս, Մեոնյա գընաց վաճառվելու,  
 Որից հետո Արամազըը բարկացավ մեզ վըրս սաստիկ:  
 Իսկ դու հիմա, երբ Ջևար մեզ փառք է տալիս նավերի մոտ  
 Եվ գորություն պարզելում ինձ՝ ծո՛վ թափելու աքայեցոց,—  
 Ժողովըրդի առաջ, անմի՛տ, ամոթ է քեզ խոսել այդպես  
 Տըրովներից ոչ ոք պիտի քեզ չըլըսի, թույլ չեմ տա ես:  
 Ի՛նձ լըսեցէք, բարեկամներ, ահա թե ես ինչ եմ ասում:  
 Հիմա դուք ձեր ընթրիքն արեք բանակի մեջ՝ դասակ-դասակ,  
 Ապա արթուն՝ ամեն մեկըդ ուշք դարձըրեք պահպանության:

- 300 Իսկ տըրոյանց միջից ով շատ է հոգ տանում ունեցվածքին,  
Թող հավաքի և բաժանի ժողովըրդին, որ վախէն,  
Ավելի լավ է ժառանգեն մերոնք, քան թե աքայեցիք:  
Վաղ առավոտ, արշալույսին կազմ ու պատրաստ, ըսպառագեն,  
Նավատորմի մոտ գողավոր բորբոքենք մարտ մի վընուական:  
Եթե իրոք Աքիլը քաջ նավատորմի մոտ երևա  
Եվ ուզենա պատերազմել, վայը պիտի գա իր գըլխին:  
Ահեղագոռ գուպարի մեջ ես նըրանից փախչողը չեմ,  
Այլ՝ անհողողդ պիտ դիմադրեմ, կամ նա՛ պիտի հաղթի կամ ե՛ս.  
Խըտրություն չի դընում Արեսն. ըսպանում է ըսպանողին»:
- 310 Ասաց Հեկտորն, ու տըրոյանք որոտացին միահամուտ:  
Օ, անմիտնե՛ր, զի Աթենաս Պալլասն ստավ խելքը նըրանց,  
Որ Հեկտորի վընասակար այդ խորհըրդին հետևեցին,  
Եվ չըգովեց ոչ ոք խելոք խորհուրդները Պուլիդամի:  
Ապա խումբ-խումբ նըստած դաշտում նըրանք իրենց ընթրիքն արի ն:  
Իսկ աքայանք ամբողջ գիշեր Պատրոկլի սուզն էին անում.  
Եվ նախ Պելլանն ինքը դըրեց ըսկիզբ այդ մեծ լաց ու կոծին,  
Իր մըտերմի կըրծքի վըրա դըրած ձեռքերն իր մարդասպան,  
Հաճախ ծանըր հատաչելով,— ինչպես սոյուն մի թավաքաշ,  
Որի փոքրիկ կորյուններին գողանում է խիտ անտառում
- 320 Ոմըն որսորդ, և ինքը ուշ գալով այնտեղ՝ տըխում է խիտ  
Ու թափառում հովտից-հովիտ մարդու հետքը որոնելով,  
Որ ուր որ է գըտնի նըրան, քանզի սաստիկ է զայրացած,—  
Միրմիդոնաց միջև այդպես հատաչալից հեծում էր նա,  
«Ավա՛ղ, ուրեմըն, արդարև, սին խոսք էր այն, որ հանեցի  
Բերնիցս այն օր, երբ Մենիտիոս դյուցազունին մեր հարկի տակ  
Ասում էի թե իր որդուն ես Ուլոյիս կըղարձընեմ՝  
Իլիոն քաղաքը քանդելով և ավարի մեծ մասն առած:  
Մակատագիրն ուզում է, որ երկուսս էլ մեր արյամբ ներկենք
- 330 Նույն հողն այստեղ Տըրոյայում. ինձ էլ հայրըս՝ Պելեսը ծեր  
Չի՛ ընդունի իր պալատում՝ պատերազմից վերադարձած,  
Եվ ոչ էլ մայրն իմ սիրելի, այլ պետք է որ մեռնեմ այստեղ:  
Եվ քանի որ քեզից հետո ես գերեզման իջնեմ պիտի,  
Չեմ կատարի, ի՛մ Պատրոկլե, դիահանման հանդեսը քո,  
Մինչև այստեղ ես չըբերեմ գլովսն ու զենքերը Հեկտորի,  
Որ քո դահիճն եղավ դաժան և բացի այդ, խարուկկիդ մոտ  
Պիտի մորթեմ տըրոյացի տաաներկու քաջ պատանիներ,  
Ի հագեցումն իմ ցասումի և ի վըրեժ քո ըսպանման:  
Իսկ մինչև այդ, ո՛վ Մենիտյան, պիտի մընաս պառկած այսպես

340 Մահիկաձև նավերի մոտ, և շուրջ-բոլոր քո զօր-գիշեր  
Քայլեն պիտի արտասովակոճ տրորվուհիք և դարդանյան  
Կանաչք, որոնց քեզ հետ մեկտեղ նիզակներով մեր գերեցիցք  
Բազմաբարբառ ուզմիկ մարդկանց ճոխ բաղաբներն ավերելով»:

Այսպես սասց Աքիլը քաջ ու հրամայեց ընկերներին,  
Որ կրրակի վըրա դընեն եռոտանի սան մի հըսկա  
Ու լըվանան Պատրոկլի դին, մաքրեն փոշուց և արլունից:  
Նըրանք իսկույն լոգանքի մեծ, եռոտանի սանը դըրին  
Վառ կըրակի վըրա ու ջոր լըցրեցին մեջ քերնե-քերան  
Եվ տակը չոր փայտ դընելով բորբոքեցին կըրակը բարկ:  
350 Բոցը առավ կաթսայի տակն ու շուրջ-բոլոր առհավասար,  
Իսկ երբ փայլուն պըղընձի մեջ ջորն ըսկըսեց եռավ արդեն՝  
Նախ լըվացին մարմինն, ապա օձեցին այն պարարտ լուղով,  
Ու վերքերը՝ ինը տարվա անուշաբույր լուղով լըցրին,  
Եվ դընելով անկողնու մեջ՝ դին ծածկեցին նորք կըտավով  
Ու սընարից մինչև ոտներն՝ ըսպիտակ քող մի վըռեցին:  
Այա ամբողջ գիշեր իրենց արքայի շուրջ միջմիդոնյանք  
Ողբում էին լալահառայ Պատրոկլեսի սուգն անելով:

Այն ժամանակ Ջևար սասց իր քըրոջը և ամուսնուն.  
«Եվ վերջապես արածդ արիր, գերամեծար, աչեղ Հերա.  
360 Վերջը ոտքի հանեցիր դու արագասուր Աքիլեսին,  
Գիսակագեղ արայեցիք քեզանից եմ ծընված ճիշտ որ»:

Մեծապատիվ աչեղ Հերան նըրան այսպես պատասխանեց.  
«Ջարհուրելի՛ դու Ջըրվանյան, այդ ինչպիսի՞ խոսք ես ասում:  
Ի՞նչպես, մարդը մարդու համար նույնը կաներ մինչև անգամ,  
Մահկանացու մարդը, որ մեր խորհուրդը և խելքը չունի.  
Իսկ ես, որ ողջ դիցունիցս մեջ վեհագույնն եմ՝ երկու բանով՝  
Առաջինը՝ իմ ծագումով, և մյուսը, որ կինդ եմ կոչվում,  
Քե՛զ, որ բոլոր անմահների արքան ես մեծ, ամենիշխան,  
Պետք չէ՞ր, որ ես տըրոյանց դեմ հուզված՝ չարիք պատրաստեի»:

370 Եվ մինչ այսպես խոսում էին ոլիմպյաններն իրարու հետ,  
Հասավ Թեոխիսն արծաթաթփիկ՝ Հեփեստոսի տունը շըքեղ,  
Աստեղագարդ, պըղընձակերտ, Ոլիմպոսի մեջ ամենեն  
Գեղեցիկը, որ կատուցեց կաղոտանին ինքը անձամբ:  
Գըտավ նըրան փուքսերի շուրջ քըրտինք մըտած աշխատելիս  
Փուփկոտ ու ժիր. պատրաստում էր նա քըսան հատ եռոտանի,  
Իբրև պերճանք իր գեղաշուք, հաստակաուուց ապարանքի:



Մենք մեկի տակը ոսկի անիվներ էր հարմարեցրել,  
Որ ինքնաշարժ գրնան մըտնեն աստվածային ատյանը ճոխ,  
Ապա նորից դառնան դեպ տուն,— ըսքանչելիք մի տեսարժան:  
380 Գործն ավարտված էր գրբեթե, միայն կանթերն արվեստագեղ  
Չէր հագցրել նա տակալին իրենց կապին ամրացնելով:  
Ներհուն մըտքով նա այս նրբին աշխատանքով էր ըզբաղված,  
Երբ մոտեցավ նրան Թեոխ արծաթաթիկ: աստվածունին:  
Խարիսը նախ տեսավ նրան՝ կաղոտանու երիտասարդ  
Կինը սիրուն՝ ծածկրված նուրբ ու ըսպիտակ շրդարշներով,  
Որ բըռնելով աստվածունու ձեռքը սիրով՝ այսպես ասաց.  
«Ինչպե՞ս եղավ՝ մեր տունն եկար, քողածածուկ չըքնա՛ղ Թեոխս,  
Գերամեծար և սիրելի, հագիվ ես մեզ մըտաբերում:  
Բայց ներս արի, որպեսզի քեզ արժանապես հյուրասիրեն»:

390 Այս ասելով՝ չըքնադագեղ աստվածունու ձեռքից բըռնած՝  
Տարավ նրան ու նրստեցրեց արծաթագամ գահի վըրս,  
Արվեստակերտ, գեղահարմար, ոտքերի տակ պատվանդաններ:  
Եվ կանչելով ճարտարարվեստ Հեփեսոսին՝ ասաց նրան.  
«Դուրս եկ, Հեփեստ, արծաթաթիկ Թեոխը գործ ունի քեզ հետ»:

Հրոչակավոր կաղոտանին նրան այսպես պատասխանեց.  
«Իմ տանն է արդ հավերժ անմահ ու մեծափառ մի դիցուելի,  
Որը փըրկեց ինձ ցավերից, երբ ես հեռու ընկա իմ խենթ  
Մորըս խելքով, որ կամեցավ կաղոթյունըս ծածուկ պահել:  
Կըտանջեին այն ժամանակ սիրտըս ցավերն անասելի,  
400 Եթե դըստրիկն հորձանապտույտ Օվկիանոսի՝ Եվրիմոսեն  
Եվ Թեոխը արծաթաթիկ ինձ իրենց գիրկը չառնեին:  
Ինը տարի ես նրանց մոտ դարբընեցի զարմանարվեստ  
Ջարդեր պես-պես՝ ճարմանդ, քողեր, և ապարոշ, ապարանջան,  
Խոր ու խավար մի անձավում, որի չորս կողմ Օվկիանը մեծ  
Թավալում էր իր փըրփրադեզ շըրերն անդուլ մըռնչալով,  
Եվ չըգիտեր տեղըս ոչ ոք աստվածներից ու մարդկանցից.  
Փըրկիչներըս լուկ գիտեին՝ Թեոխը և Եվրիմոսեն:  
Արդ, քանի որ տունս է եկել, ուստի պետք է որ վարսագեղ  
Թեոխսին ես հատուցանեմ կրանքիս համար, որ նա փըրկեց:  
410 Առայժըմ դու նրան վայել պատիվներով հյուրասիրիր,  
Մինչև որ ես իմ գործիքներն ու փուքսերը ցած կըղընեմ»:

Ասաց ու վեր կացավ սայից անեղատես ու հըրադեմ  
Կաղոտանին՝ շարժելով իր նուրբ սըրունքներն արագ-արագ:  
Նախ կըրակի մոտից փուքսերն հեռացրեց նա, որից նետո

Գործիքները ողջ հավաքեց և արծաթոյս արկղում դրեց.  
 Այնուհետև թաց ըսպունգով սրբեց ձեռքերն ու դեմքը նա,  
 Հաստ պարանոցն ու թավամազ կործքը մըրոտ ու քրրտնաթոր.  
 Հագուստները հագավ և դուրս եկավ իր հաստ գավազանով:  
 Գընում էին թագավորի հետ ոսկեձուլ աղախիճներն  
 42) Աղջիկների պես շքնավոր, որոնք ունեն միտք ու լեզու,  
 Եվ ձեռագործն անմահական աստվածներից են սովորել:  
 Ծարժվում էին իրենց տիրոջ շուրջը նըրանք, որ ծանրաքալ  
 Առաջ եկավ ու Թեոխի կողքը՝ պայծառ գահին բազմեց.  
 Ու բըռնելով ձեռքը նըրա, տալով անունն այսպես ասաց.  
 «Ի՞նչ բան է քեզ բերել իմ տուն, քողածածուկ, չըքնաղ Թեոխ.  
 Գերամեծար և սիրելի, հագիվ ես մեզ մըտաբերում:  
 Ասա, ինչ որ ցանկանում ես, պատրաստ եմ ես սիրահոծար  
 Առատարելու, եթե միայն հընարավոր է կատարել»:

Եվ Թեոխը արտասվաթոր՝ նըրան այսպես պատասխանեց.  
 43) «Ո՛հ, Հեփեստոս, կա՞ թեկուզ մի աստվածուհի Ոյիմպոսում,  
 Որ այսքան շատ ծանըր վըշտեր կըրած լինի երբևիցե,  
 Որքան որ ինձ սըրտակեղեք ցավեր տըվեց հայրն Արամազո:  
 Ծովային ո՛րջ դիցուհյաց մեջ նա միմիայն ինձ նըվաճեց  
 Էսկուպան Պելևսին կին, որին եղա անկողնակից  
 Ակամայից, բըռնադատված. Պելևսն իր տանն ընկած հիմա  
 Թո՛ւլլ ու տըկար՝ խոր ծերության ծանր օրերն է ապրում արդեն:  
 Բայց հասավ ինձ ավելի խոր ուրի՛շ մի վիշտ սըրտակեղեք,  
 Զնայը ծընել շընորհեց ինձ արու գավակ մի մեկ հատիկ,  
 Առաջինը քաջերի մեջ, որ բողբոջի պես էր աճում,  
 44) Ես սընեցի նըրան, ինչպես այգում բուսած դալար մի տունկ.  
 Եվ նավերով ուղարկեցի Իլիոն՝ կըրովի տըրոյանց դես:  
 Բայց նա էլ ետ չի դառնալու, և Պելևսի ապարանքում  
 Զե՛՛ն տեսնի ես նըրան այլևս. թեև ողջ է նա տակալին,  
 Բայց վիշտ ունի, ու չեմ կարող ես օգնության հասնել նըրան:  
 Ագամեմոնն արքան խըլեց օրիորդին նըրա ձեռքից,  
 Որին որդու աքայեցիք որպես պարգև էին տըվել:  
 Գըրա համար նա շատ տըխրեց: Տըրոյացիք նավերի մեջ  
 Պինդ փակելով աքայեցոց, չէին թողնում դուրս գալ նըրանց.  
 Արգիսցոց ծերերն այնժամ եկան որդու աղաչեցին  
 45) Խոստանալով երևելի շատ պարգևներ տալու նըրան.  
 Բայց նա անձամբ չուզեց գընալ աղետներն այն հեռացնելու,  
 Այլ ուղարկեց իր սիրելի ընկերոջը՝ Պատրոկլեսին  
 Հագցընելով գեճերն իր պերճ և իր գորքը տալով նըրան:  
 Մը ամբողջ օր մարտ մըղեցին Ակեական դըրան առջև.

Ու կաննեին Իլիոնն այդ օր, եթե կըտրի՞ն Մեմիտյանին,  
 Որ նախամարտ շարքերի մեջ շահատակում էր քաջարար՝  
 Չըսպաներ ինքն Ապոլլոնը ու հաղթություն տար Հեկտորին:  
 Սըրա համար եկել էմ ես ու ծընկներդ եմ ընկել ահա՛,  
 Որ կարճակյաց որդուս հաճես շնորհել ասպար և սաղավարտ,  
 480 Եվ գեղեցիկ սըռնապաններ՝ ճարմանդներով ընդերուզված,  
 Նաև զըրահ, զի այն բոլոր զենքերը որ ուներ որդիս՝  
 Կորցրեց ընկերն հավատարիմ, տըրովներից ըսպանվելով:  
 Իսկ Աքիլլեսն արտասովակո՞ծ ընկած է արդ գետնի վըրա»:

Եվ անվանի կաղոտանին նըրան իսկույն պատասխանեց.  
 «Հանգընտացիր, և սիրտըդ թող չըվըշտանա դըրա համար:  
 Երանի՛ թե կարենայի Աքիլլեսից հեռու վանել  
 Մանը այնպես ես հեշտությամբ, երբ օրհասը վըրա հասներ,  
 Ինչպես Քիսս կարող եմ տալ չըքնաղ զենքեր նըրա համար,  
 Որոնց ի տես ամեն մի մարդ պիտի ապշի և հիանա»:

475 Ասաց Հեփեստոն ու թողնելով նըրան՝ գընաց փուքսերի մոտ:  
 Որոնց դեպի հուրն ուղղելով՝ հըրամայեց, որ աշխատեն:  
 Ու փըչեցին քըսան փուքսեր մեկեն քըսան բուլերի մեջ,  
 Ամեն մեկը իր տեսակի օդ շընչելով դյուրաբորբոք—  
 Մերթ մեղմաշունչ ու մերթ ուժգին, ինչպիսին որ պետք էր նըրան  
 Ըստ պահանջի, որ կարենար նա իր գործը գըլուխ բերել:  
 Գըցեց կըրակ պըղինձը պինդ և չըծըրվող, անպարտելի,  
 Անագն ապա. և պատվական ոսկին՝ փայլուն արծաթի հետ.  
 Կոճղին դըրեց սավն ահագին, ասյա վերցրեց իր մի ձեռքով  
 Կըռա՞ն՞ ճուժկու և գորավոր, իսկ մյուսով աքցանն տառվ:

485 Նախ պատրաստեց ասպար մի մեծ ու հաստաբետ, ճարտարագործ,  
 Կարկըճակերտ, և եզերեց առատամով գեղապայծառ,  
 Լուսաճաճանչ ու եռակող՝ իր արծաթյա ամուր փոկով:  
 Վահանը Ֆիևգ պատվածք ուներ, որի վըրա իմաստնաբար  
 Հեփեստոսը հրաշակերտեց զարմանագեղ շատ քանդակներ:  
 Նըրա վըրա նա հորինեց երկինք-երկիրն ու ծով անձայր,  
 Եվ արեգակն անխոնչ ուղորդ, և լուսընկան լուսապայծառ,  
 Եվ աստղերը ճաճանչափայլ, որոնք երկինքն են պըսակում,  
 Բուլլըր, Բազումքը շողշողուն ու գորությունն Օրիոնի,  
 Ինչպես նաև Արշը, որին Սայլ են կոչում մարդիկ հաճախ,  
 490 Որ դառնալով նույն տեղը միշտ նայում է պիշ Օրիոնին,  
 Եվ միաչն նա՛ է անհաղորդ լոգանքներին մեծ Օվկիանի:

Քանդակեց նա պարզաբարբառ մարդկանց երկու շքեղ քաղաք.  
 Առաջինում հարսանիքներ, ճոխ խրճուղներ ու խըրախճանք.  
 Հարսին հանում էին տընից բոցածանճանչ ջահերով վառ,  
 Հարսանեկան ցրվագներով, ու կեցտրախ պարմանիներ  
 Պարում էին փանդիոների ու փողերի ցրվագի տակ.  
 Կանաչք կանգնած դըրների մեջ նայում էին և հիանում:  
 Մի քիչ այն կողմ, հրապարակում խըռնրվել էր հոծ բազմություն,  
 Որ երկու մարդ աղմըկելով վիճում էին իրարու հետ

500 Մի ըսպանված մարդու համար վըճարվելիք տույժի առթիւ:  
 Ինչն ասում էր ժողովըրդին, թե հատուցել է լիովին,  
 Իսկ մյուս մարդը համառորեն պընդում էր, թե չի ըստուցել.  
 Եվ երկուսն էլ ուզում էին դատալորով վերջ տալ վեճին:  
 Գոռում-գոչում էին մարդիկ՝ մեկին, մյուսին պաշտպանելով.  
 Մունեսիկներն հանդարտեցնում էին հուզված ժողովըրդին.  
 Եվ սրբատաշ քարի վըրա, ցրվիրական մի տեղ նըստած  
 Ծերունիները քաջաձայն քարոզների գավազաններն  
 Իրենց ձեռքում, ոտքի ելած՝ տալիս էին վըճիոն իրենց:  
 Նըրանց առջև, կար մեջտեղում դըրված երկու քանքար ոսկի՝

510 Տալու նըրան, ով նըրանցից արդար վըճիո մի կարձակեր:

Իսկ մյուս քաղաքն էր պաշարված երկու ըստվար, ըսպառազեն  
 Բանակներով, որոնք ամեն մեկն առանձին խորհուրդ ուներ—  
 Կամ կործանել հիմնահատակ քաղաքն այդ շեն, կամ քաճեսնել  
 Բոլոր գամձը, որքան որ կար այդ քաղաքում՝ երկու մասի:  
 Բայց պաշարված քաղաքացիք տեղի չէին տալիս նըրանց,  
 Եվ զինավառ, ըմբոստացած դարան էին մըտել ծածուկ.  
 Ծերունիներն ու սիրելի կանաչք իրենց մանուկներով  
 Պարիսպների վըրա ելած՝ պահպանություն էին աճում:  
 Քաջերը դուրս էին գալիս, առաջնորդում էին նըրանց

520 Արեսը բուռն ու Աթենասն՝ երկուսն էլ ձուլլ ոսկեհանդերձ,  
 Բարձրահասակ և գեղեցիկ, իրենց ամբողջ զեն ու զարդով,  
 Աստվածներին վայել շուքով և բուրդին երևելի.  
 Իսկ զինվորներն առհասարակ նըրանցից ցած էին մընում:  
 Եվ երբ նըրանք հասան գետասի (դարանելու վայրը հարմար),  
 Որտեղ հոտերն էին գալիս ծարավն իրենց հագեցնելու,—  
 Նըստոտեցին՝ զինավառված իրենց հրաշեկ պըղիճներով,  
 Եվ մեկուսի բազմությունից նըստեցըրին երկու դետեր,  
 Որ իմաց տան, երբ խաշների ու եզների գալը տեսնեն:  
 Ու գալիս են հոտերն ահա երկու հովվի հետ միասին,

530 Տարված իրենց սրբիճակներով, դավլին անգետ և անտեղուկ:  
 Այդ տեսնելով հարձակվում են դարանամուս մարդիկ իսկույն

Եվ ավարում են եզների երամակներ և ըսպիտակ  
 Ռշխարների ըստվար հոտեր՝ ըսպանելով հովիվներին:  
 Պաշարվածներն, որոնք ժողով էին անում հրապարակում,  
 Լքելով աչդ աղմուկն անել, Արստում են շուտ կառքերն իրենց  
 Եվ ըշտապում դեպի գետափ, ուր դեմ առ դեմ ճակատելով՝  
 Իրենց պղնձյա նիզակներով խողխողում են մեկ-մյուսին:  
 Այնտեղ էին Ոխն ու Խըրովքն և Օրհասը կորչստաբեր,  
 Ոմանց բրոնսձ դեռ Աոր խոցված ու կեղտանի, ոմանց՝ անխոց,  
 540 Ու ոմանց էլ մեռած արդեն քաշ էր տալիս ոտքից բրոնսձ,  
 Իր ուներին ձրգած ըզգեստ մի թաթալուն մարդկանց արշամբ:  
 Այսպես զարկում-զարկվում էին Արրանք ինչպես շրնչավորներ.  
 Եվ երկուստեք Արրանք իրենց ըսպանվածներն էին կրքում:

Ու քանդակեց Արրա վըրս դեռսներկ արտ մի արգավանդ,  
 Երեք անգամ հերկված, անծայր, ուր մանկակները բազմաթիվ  
 Տանում բերում էին անդույ հարկիք հողի երկարությամբ,  
 Որոնք երբ որ հասնում էին արտի գլըմխն ու դառնում էտ,  
 Մի մարդ ձեռքին բրոնսձ գիճու գավաթ Արրանց էր մատուցում:  
 550 Նրանք խըմում ու Աոր ակոս էին բացում խանդավառված  
 Նույն ուղղությամբ միջև արտի վերջն հասնելու որոշումով:  
 Հողը թեպետև ոսկեզույն, սակայն Արրանց ետևից միշտ  
 Սևանում էր ակոսներով:— Այսպիսի գործ էր հիսաբանչ:

Այնուհետև Արրա վըրս քանդակեց արտ մի հսակաթուռ,  
 Որ հունձ էին անում մարդիկ փայլուն ու սուր մանգաղներով:  
 Հունձքը թափվում էր անդադար ստատրեն ու թանձրախիտ,  
 Որոնք խտրձ-խտրձ կապվում էին ուռու դալար ընձյուղներով:  
 Խտրձ կապողներն էին երեք, հընձողների հետ համընթաց.  
 Տըղաները ետևներից թափված հասկերն հավաքելով  
 Գիրկ-գիրկ բերում ու խտրձ կապող մըշակներին էին տալիս:  
 560 Տերը կանգնած Արրանց միջև, մի գալխազան բրոնսձ ձեռքին  
 Ուրախ սըրտով մայում էր գոհ՝ հրակա դեզին, որի Աերքո  
 Ծառաները հացկերության պատրաստություն էին տեսնում,  
 Մորթելով եզ մի անագին. մինչդեռ կանաչք մի քիչ հեռու  
 Ալյուր էին մաղում աշխույժ երեկոյան հացի համար:

Եվ խաղողի փարթամ աչգի քանդակեց նա Արրա վըրս  
 Համակ ոսկի, ըսքանչագեղ ու սևաթույր ողկույզներով,  
 Ծայրեփծայր արծաթակուռ խըչմար զարկած վազերի տակ:  
 Գըծեց կապույտ առվամեջեր և անագով ցանկապատեց  
 2ըքնաղ աչգին աչդ չորս կողմից և մի ճամփա թողեց միայն,

570 Որով այգի կըթողները գընում-գալիս էին աշխույժ:  
Պատանհներն ուրախասիրտ և աղջիկները կուսագեղ՝  
Զամբյուղներով անուշահամ խաղողն էին կըրում անվերջ,  
Որոնց մեջ դաշըն քընարով մի մանուկ էր երգում զըվարթ  
Եվ լարերի հետ ներդաշնակ գեղգեղում էր քաղցրը ձայնով:  
Եվ կըթողներն այդ երգի տակ կայթում էին, դոփում ուրախ:

Նա պատկերեց այնտեղ նաև բարձրաեղջյուր երինջների  
Նախիր մի մեծ. և երինջներն էին ոսկուց և անագից,  
Որ գոմերից բառաչելով գընում էին դեպի արոտ  
Կարկաչահոս վըտակի մոտ, որ հոտում էր շամբուտն ի վար:  
580 Գընում էին երինջների հետ չորս ոսկի տավարածներ,  
Ետևներից արագավազ ինը գամփոեր էին գընում:  
Առաջընթաց երինջների մեջ ամեհի երկու առյուծ  
Բըռնել էին պարարտ մի ցուլ, որ բառաչում էր մեծածախն.  
Դեպի այնտեղ էին վազում հովիվները գամփոերի հետ,  
Մինչ առյուծները մեծահաղթ ցուլի կաշին պատառելով՝  
Լափում էին նըրա բոսոր արյունը տաք և փորտոհն:  
Տավարածներն իզուր էին գամփոերներին քաջալերում,  
Որոնք խըրտնած՝ սոսկում էին զազաններին վըրա տալուց,  
Այլ ոտ առ ոտ ետ քաշվելով հաչում էին տագնապահար:  
590 Փոքր-ինչ հեռու հըռչակավոր Հեփեստոսը գեղակերտեց  
Արևափայ հովտում ընկած արոտավայր մի ընդարձակ,  
Որ արածում էր ըսպիտակ ոչխարների ըստվար մի հոտ.  
Եվ հովվական տաղավարներ շինեց այնտեղ և փարախներ:

Եվ դըրվագեց այնտեղ մի պար, նըման պարին այն գեղեցիկ,  
Որ Դեդալոսը հորինեց Կոնոսոսի մեջ մեծանիստ՝  
Գեղահյուսակ Արիստոհեի համար. ստույգ պարմանհներ  
Եվ աղջիկներ իրար ձեռքից պարում էին ուրախ:  
Աղջիկները գեղեցկահյուս նուրբ շըղարշներ էին հագած,  
Պարմանհները՝ բաճկոններ ամուր հյուսված՝ ձեթի գուլնով:  
600 Աղջիկները պերճ պըսակներ ունեին ճոխ և գեղահյուս,  
Իսկ պարմանհք՝ ոսկի դաշույն՝ իրենց արծաթ գոտուց կախըխած:  
Մերթ ոտքերով շընորհալի շըրջանաձև իրենց վըրա  
Պըտուլտ էին գալիս թեթև, անիվն ինչպես, որի առաջ  
Նըստած բրուտն փորձում է, թե արդյոք լա՛վ է պըտըտվում նա,—  
Ու մերթ դարձյալ իրար ետև կարգով կայթում էին նըրանք:  
Հոծ բազմություն մի նըրանց շուրջ՝ ըսքանչանում էր այդ պարով,  
Եվ մի գուսան աստվածալին քընարերգում էր այդ խըմբում.  
Երկու ճարպիկ ծաղրածուներ զըվարճացնում էին նըրանց՝

Գլուխկոճի տալով, երբ որ երգիչը իր երգն ըսկըսեր:

610 Ներկայացրեց նրրա վրրա և գորությունն Օվկիան գետի,  
Եզերելով բոլորան վահանը այդ ճարտարարվեստ:

Երբ Հեփեստոսն ամբողջապես ավարտեց այդ վահանը մեծ,  
Ծիճեց գրահներ ավելի վառ քան կըրակի լույսը կարմիրը.  
Կոփեց կորդակ մի ամբակոտ՝ Պելիսյանի գըլխին հարմար,  
Գեղեցկաշուք, բազմաքանդակ և ոսկեփունջ զարգամանակով.  
Ծիճեց նաև սրոնապաններ անագյա կոտ թիթեղներով:  
Եվ երբ ամեն բան ավարտեց հրոշակավոր կաղոտանին,  
Տարավ բոլորն ու Թետիսի առջև, գետնի վրրա դրրեց:  
Թետիսն առավ Հեփեստոսից փայլուն գեճքերն ու ձյունեղեն  
620 Ոլիմպոսից վար սըլացավ անմիջապես, ինչպես բազե:

# Երգ Տաւնի ննէրնրդ

## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ ՔԵՆԻՑ

Քըրքնագգեցիկ Այգն, Օվկիանի ալիքներից ելնում էր վեր  
Լույս բերելու անմահներին նաև բոլոր մահկանացոց,  
Երբ Թ՛նտիսը նավերն հասավ Հեփեսոտոսի պարգևներով  
Եվ սիրելի որդուն գըտավ փարած դարձյալ Պատրոկլեասին՝  
Ընկերներով շրջապատված մեծակաման ողբ անելիս:  
Արծաթթաթիկ աստվածուհին եկավ կանգնեց նրանց միջև  
Եվ որդու ձեռքն իր ձեռքի մէջ վերցընելով՝ այսպես ասաց.

«Է՛հ, որդյակ իմ, թողնենք դրոսն, — թեև ցավ է բոլորիս էլ, —  
Քընի հանգիստ, զի նա մարտում աստվածների կամքով ընկավ,  
10 Եվ ընդունիր Հեփեսոտոսի ըսքանչագործ զենքերը դու,  
Որոնց նըման և ո՛չ մի մարդ դեռ չի կրել իր ուսերին»:

Այս ասելով՝ աստվածուհին Աքիլլեսի առջև դըրեց  
Զարմանաւարանչ զենքերը պերճ, որոնք ուժգին շառաչեցին.  
Մորսիդոնները սուսկացին, ու ոչ մի մարդ սիրտ չէր ւննում  
Նախել նրանց, և ահաբեկ վախում բոլորն այս ու այն կողմ:  
Իսկ Աքիլլի ցատումն անգուսպ քոցալստվեց դըրանց ի տես,  
Կայծակեցին կասիճներում փայլակնացաչտ աչքերն ահեղ,  
Եվ հըրճվում էր Հեփեսոտոսի պարգևներն այդ բըռնած ձեռքում:  
Հրաշալիքներն այդ հաճույքով մեկիկ-մեկիկ գըննելուց ետ  
20 Դարձավ իր մորն ու թեւալոր այս խոսքերը ասաց նրբան.  
«Մայր իմ, աստված ինձ շընորհեց շըքեղ զենքեր աստվածարժան,  
Որոնց նըման մահկանացու մարդն անկարող էր պատրաստել:  
Հիմա պետք է զինավառվեմ, բայց վախեւնում եմ մեծապես,  
Որ այդընձով բացված վերքից ճանները ներս սըպորդելով  
Որդէր ծընեն և այդպիսով սպակաւենն Մենիստյանին,





Ափիկս

Որի արևն ի մայր մըտավ, ու դարձել է դիակ մի ցուրտ,—  
Եվ մարմինը նեխի անքիծ, աստվածային Պատրոկլեսի»:

Արծաթաթաթիկ աստվածունին Արթուրն այսպես պատասխանեց.

- «Քաղցր իմ որդյակ, հոգսերն այդ թող քեզ նեղություն չըպատճառեն,  
30 Ես Արթուրից կըհեռացնեմ ճանճերի գունդն արյունատուշտ,  
Որ Արեսից պղղընձահար ընկածների միսն են ուտում:  
Եվ եթե նա մի ողջ տարի այդպես պառկած մընա այստեղ՝  
Դիակն աննեխ պիտի մընա, թարմ ու անքիծ բոլորովին:  
Բայց դու դյուցազն արքայեցոց շուտ ժողովի հըրավիրի  
Եվ, Ատրիդի դեմ ունեցած դժմյա քենդո մոռանալով,  
Զինավառվիր՝ ուզվի համար և գորացիր աստվածորեն»:

Այսպես ասաց և Արթուրն Արթուրն կորով և խըրախույս,  
Ու կաթեցրեց Պատրոկլեսի ունգերի մեջ աստվածային  
Ամբոս, Անկտար, որ անարատ մընա մարմինն ու միշտ անեղծ:

- 40 Եվ արագոտն Աքիլն իսկույն ելավ գընաց ծովեզերքով  
Եվ արթնացրեց անեղ գոչմամբ արքայեցի դյուցազներին:  
Նույնիսկ Արթուրն, որ մինչև այդ նավերի մոտ էին մընում—  
Ղեկավարները նավերի և պետերը ամբարապահ,  
Որոնք գորքին սընունդ ու կեր հայթայթելու հոգն են տանում,—  
Գընում էին դեպի ատյան, ուր երևաց Աքիլը քաջ,  
Նա, որ երկար ժամանակով հեռացել էր պատերազմից:  
Գընում էին և կաղ ի կաղ պաշտոնյաները Արեսի՝  
Դիոմեդես Տիդյանն արի և Ոդիսևսն աստվածային  
Աշտեներին հենած իրենց, զի տակավին չէին բուժվել,  
50 Եվ Արթուրեցի ժողովի մեջ առաջավոր շարքում Արթուրն:  
Եվ վերջապես ելավ այնտեղ Ագամեմնոն արանց արքան  
Վիրավորված, որին խոցել էր դըժընդակ պատերազմում  
Անտենորյան Կոռնը իր պղղընձավառ հաղթ մըկունդով:  
Եվ երբ բոլոր արքայեցիք հավաքվեցին ակըմբահույլ,  
Ուրքի ելավ վըսեմաշուք Աքիլը և խոսեց այսպես.  
«Այս հաշտությունն, ո՛վ Ատրիդես, թե՛ ինձ, թե՛ քեզ համար անշուշտ

Ըստ ավելի լավ կըլիներ ա՛յն ժամանակ, երբ ես ու դու  
Մի աղջըկա համար միայն քենի մըտանք իրարու հետ:

- 60 Երբ ես Արթուրն իմ նավն առա կիռնեսուր քանդելուց ետ,  
Զի այսքան շատ արայորդիք չէին կըրծի ասամներով  
Երկիրն անհուն՝ ոսոխների ձեռքից, երբ ես քենով էի:

Այդ օգտակար եղավ միայն տղրոյացոց և Հեկտորին,  
Ու շահ բերեց միայն Արքա՛նց. սակայն, կարծեմ, արայեցիք  
Դեռ շատ երկար պիտի հիշեն գրծտոյությունը մեր երկուսի:  
Բայց մոռանանք անցածը մենք, թեև ցաված ենք իրարից,  
Եվ առհարկի սանձահարե՞նք խղրովահույզ սրբոտերը մեր:  
Ես ինքս ահա՛ հարկադրաբար թողափում եմ զայրոյթըս բարկ,  
Որովհետև չի վայելում ինձ յխոյության մեջ համատել:

70 Ուստի մարտի բոցավառի դու հերապանձ արայեցոց,  
Որպեսզի ես մի անգամ էլ հարձակվելով տրոյանց վրբա՛  
Տեսնեմ՝ պիտի ուզե՞մ արդյոք մընալ մեր սև նավերի մոտ:  
Բայց կարծում եմ, թե Արքանցից շատերը պիտ հոժարակամ  
Ծալեն ծունկերն ու փախուստի դիմեն իսկոյն, որ ազատեն  
Գըլոյխն իրենց՝ ահեղ մարտից և մըկունդից իմ մահաբեր»:

Այսպես ասաց, ու բարձրագեն արայեցիք ուրախացան  
Մեծահոգի Պելիսյանի քեճից հրաժեշտ տալու համար:  
Այն ժամանակ Ազամեմնոն արանց արբան այդ ժողովում  
Առանց տեղից վեր կենալու այսպես ասաց բազմականին.

80 «Ո՛վ սիրելի դանայեցի դյուցազուննե՛ր արիսական,

Հարկավոր է ուշադրությամբ ականջ դընել ճառախոսին  
Եվ չընդհատել խոսքը Արքա, քանզի ճառի հրմուտն անգամ  
Կըտագնապի, ո՛վ կարող է ժըխորի մեջ խոսել հանգիստ.  
Թեկուզ լինի նա քաջաձայն խոսող՝ դարձյա՛լ կըշրփոյվի:  
Ես իմ խոսքը Աքիլլեսին ուղղեմ պիտի, իսկ դուք ամենքդ  
Ունկընդդեցե՛ք ինձ ուշադիր և ասածիս եղեք հասու:  
Աքայեցի մեծամեծներն հաճախ ինձ հետ վեճի մըտան,  
Մեղադրեցին, բայց ես բընավ հանցավոր չեմ այդ բանի մեջ,  
Մեղքը Ջեսի՛նն է, մըթնաճեմ Պատուհասին, Ծակատագրին,

90 Որոնք միտքըս եղեռնաբար կուրացըրին ու խելքս ստան

Այն օրը, երբ Աքիլլեսի մըրցանակը ես խալեցի:

Ես ի՞նչ կարող էի անել, երբ որ այդպես էր կամեճում  
Եղեռնը՝ դուստրն Արամազդի, որը խաբում է բոլորին.

Ունի նա նուրբ, փափուկ ոտքեր, որոնք գետնին չի դիպընճում

Այլ քայլում է միայն մարդկանց գըլոյխների վըրայով միշտ,

Վընասեղու համար Արքանց ու թույն տալու մեկն ու մեկին:

Արամազդի՛ն մինչև անգամ նա վընասեց մի ժամանակ,

Որն ասում են, թե հըզորն է աստվածների և մարդկանց մեջ.

Սակայն Հերան, իր կին տեղով, խարեց Արքան Աննգմըրտոյությամբ:

100 Այդ այն օրն էր, երբ Այկմենեն պատրաստվում էր ամրապարհույ

Թեբեի մեջ աշխարհ բերել հըզորագույն Հերակլեսին,

Քանզի Ջեսը պարծենալով աստվածների միջև՝ ասաց.

«Մըլտիկ արեք ինձ, աստվածներ և համրե՛մ աստվածուհիք.

- «Պիտի ասեմ այն, ինչ կըրծքիս տակ իմ սիրտն է թելադրում ինձ.  
 «Ծընընդախնամ Իլիթիան լույս պիտի հանի մի մարդ այսօր,  
 «Որն իր բոլոր սահմանորդաց վըրս պիտի թագավորե  
 «Եվ տոհմակից է այն մարդկանց, որ սերում են իմ արյունից»:  
 Ու նեճ մըտքով արգո Հերան նրան այսպես պատասխանեց.  
 «Սուտ ես արում և քո խոսքը դու մինչև վերջ չես պահելու.
- 110 «Երդվի՛ր հապա ոլիմպուպան անդրժեղի մեծ երդումով,  
 «Թե իր բոլոր սահմանորդաց վըրս պիտի իշխե իրոք  
 «Այն մարդը որ ի լույս պիտի ընկնի այսօր մի կընդջից,  
 «Եվ մեկն է նա, որ սերում է քո արյունից և քո զարմից»:  
 Այսպես ասաց, Ջևաը, սակաչն, գըլխի չընկալ դավն ու երդվեց  
 Երդում մի մեծ, որի համար նա չափազանց զրոջաց հետո:  
 Հերան իսկույն Ոլիմպոսի գագաթից վար սըլսնալով  
 Ըշտապ-ըշտապ հասավ Արգոս արաչական քաղաքն, ուր նա  
 Ծանաչում էր Պերսեսուպան Սթենեկի կընդը պերճ,  
 Որ հըղի էր յոթն ամսական մի սիրասուն երեխայով,
- 120 Եվ ըշտապեց՝ ժամանակից առաջ աշխարհ բերել նրան.  
 Ցըրեց ցավերն Ակլմենեի, նըրս ծընունդն արգելելով.  
 Ապա դարձավ դեպի Ոլիմպ Ջրվանչանին լուր տանելու:  
 «Մեծագոր հայր,— ասաց Հերան,— ես քեզ մի բան պիտ հիշեցնեմ.  
 «Անա ծընվեց այն մարդը, որ իշխելու է արգիացոց,—  
 «Եվրիսթեսը՝ Պերսեսուպան Սթենեկի որդին է դա,  
 «Տեճ տոհմակից, և անարժան թագավոր չէ արգիացոց»:  
 Այսպես ասաց՝ աստիկ մի ցավ պատճառելով Արամազդին,  
 Որ Եղեռնի գեղեցկահյուս գիտակներից ամուր բըռնած  
 Եվ զայրացած ամբողջ հոգով՝ անեղ երդում արավ այսպես.
- 130 «Եղեռնը թող այտուհետև, որ վընասում է բոլորին,  
 «Է՛լ չըդատես դեպի Ոլիմպն ու երկինքը աստեղագարդ»:  
 Այսպես ասաց և աստղագարդ երկընթից ցած նետեց նրան,  
 Որ օդի մեջ պըտըտվելով ընկավ երկիրը՝ մարդկանց մեջ:  
 Իսկ Արամազդն այնուհետև հեծում էր միշտ ու հստայում,  
 Իր սիրեցյալ որդուն ի տես, որ տառապում էր անարժան  
 Եվ անվայել տաժանքներով Եվրիսթեսի ձեռքի ներքո:  
 Այդպես և նա, այն ժամանակ, էրբ Հեկտորը կորդականոճ  
 Կոտորում էր արաչեցոց որդիներին Ըավերի մոտ,  
 Մըտքիցս երբեք դուրս չէր գալիս Եղեռնը, որ ինձ վընասեց:
- 140 Եվ բանի որ սըլսալվեցի, և Ջևաը իմ խելքը ստավ,  
 Ուզում եմ արդ սիրտըդ առնել անբավ գանձեր ընծայելով:  
 Իսկ դու, ո՛վ քաջ, թըմիր ի մարտ և խըրախույս կարդա գրքքին,  
 Եվ ես պիտի տամ քեզ բոլոր այն պարգևները, որ երեկ  
 Վրանըդ ցալով քեզ խոստացավ Ողիսեսը աստվածային:

Եվ կամ եթե ուզում եմ՝ կաց, զրուսած մարտի եռանդորդ մեծ,  
Որ ծառաներս իմ ճալերից հանեն քերեն, դիզեն այստեղ  
Ընծաներն այն սրբոսմանս, որոնք քեզ եմ շնորհում եմ»:

Եվ արագումն Աքիլը քաջ հրքան աչապես պատասխանեց.  
«Ո՛վ մեծափառ դու Ատրիդես, արանց արքա Ագամեմնոն,  
150 Արծանապոր մըրցանակներ պարգևել ինձ և կամ թե ոչ՝  
Այդ քո՛ գործն է, իսկ մեզ հիմա հարկավար է մարտի նետվել,  
Եվ ժամանակ չըկորցրենքք այստեղ իզուր բուսասերով,  
Քանզի շատ մեծ և կարևոր գործեր ունենք կատարելու:  
Տըրոյացոց զընդերը թող նորի՛ց տեսնեն Աքիլլեսին  
Առաջամարտ գումարտակներն իր մըկունդով վըկանդելիս:  
Այդպես և դո՛ւք ըշտապեցեք մըտներու մարտ թըշնամու դեմ»:

Բայց Ոդիսևսը իմաստուն աչապես ասաց Պելիսյանին.  
«Մի՛ աչդպես դու, թեպեսու քաջ, աստվածային ո՛վ Աքիլլես,  
Աքալեցոց որդիներին դըրդիր քաղցած մարտընչելու,  
160 Որովհետև այժմ ահեղ մարտն այնքան շուտ չի վերջանա,  
Երբ մի անգամ իրար քախվեն փաղանգները քաջակորով  
Եվ ներշընչի երկու կողմին աստված եռանդ և գորոթյուն:  
Նախ և ասուջ հըրսամաշիր աքալեցոց որդիներին,  
Որ ճալերի մոտ սըրընթաց վազելեն կուշտ հաց ու գինի  
Եվ առնեն ուժ ու գորոթյուն, գի ամբողջ օր մինչ մայրամուտ  
Իր բերանը բան չըդընող գինվորն ինչպե՛ս պիտի կըովի,  
Որքան էլ որ հոժար հոգով պատերազմել մա կամենա.  
Անդամները հանկարծակի կոժասսպտվեն, կըծանրանան,  
Եվ կըհասնի քաղցն ու ծարավն ու կըծալի ծունկը նըրանց:  
170 Իսկ այն մարդը, որ հագեցած է կերակրով և գինիով,  
Ամբողջ օրը թըշնամու դեմ ճակատամարտ կարող է տալ,  
Խիզախելու սիրտ կունենա և չի հոգնի թորորովին,  
Մինչև վերջին մարդը կըովից տեղի տալով չըհեռանա:  
Ուստի ցըրիր ժողովըրդին ու պատվիրիր ճաշ պատրաստեն,  
Իսկ Ատրիդես արանց արքան թող որ քերի, դիզի այստեղ  
Մըրցանակներն իր խոսուացած, որ տեսնեն ողջ աքալեցիք,  
Եվ դու ինքըդ, ո՛վ Աքիլլես, ուրսխանաս քո սրբտի մեջ:  
Ժողովրդի ներկայությամբ թող երդըվի արանց արքան,  
Որ չի մըտել սղջըկա ծոցն ու նըրա հետ չի պատկել դեռ,  
180 Ինչ օրենքով, որ մարդ ու կին զուգավորվում են իրար հետ:  
Եվ թող սիրտըդ հանգըստանա, հոգիդ լինի խաղաղ ու հաշտ:  
Հետո թող որ իր խորանում սեղան բանա մա քեզ համար  
Որ քո արդար իրավունքից ոչ մի պակաս բան չըմընա:

Ազատմեան, ո՛վ Ատրիդես, պետք է լինել է՛լ ավելի  
Սրբարամիտ այլոց հանդեպ. և անվայել բան չէ բընավ  
Զիջող լինել մեկի հանդեպ, ում դեմ նախ ինքն է մեղանշել»:

Ազամեմնոն արքան այսպես պատասխանեց Ռդիսեսին.  
«Ռեբախանում եմ, Լայերոյան, լլսելով այդ խոսքերը քո,  
Զի ամեն ինչ տեղը տեղին և ճըշմարիտ ասացիր դու:  
190 Բեզում եմ ես երդվել, այո՛, սիրոս էլ այդպես է թելադրում,  
Եվ աստուծով, ասում եմ, որ երդմնագանց չեմ լինելու:  
Սուսյծըմ դեռ թող ըստասի աստվածային Աքիլլը քաջ,  
Թեպետ և նա անհամբեր է մարտ մրտնելու անմիջապես.  
Ըստասեցեք այստեղ և դուք բոլորդ, մինչև իմ վըրանից  
Ընծաները բերվեն այստեղ և կընքենք ոխտ անդրոժեյի:  
Եվ հենց քե՛զ եմ հըրամայում, ո՛վ Ռդիսես, որպեսզի դու  
Քեզ հետ առած աքայեցի բոլոր ընտիր կըտրիճներին  
Գոնաս և իմ նավից բերես ընծաները, որոնք երեկ  
Խուտացանք տալ Աքիլլեսին. բոլորի հետ բեր և՛ կանանց:  
200 Իե՛կ Տայթիբիոսն իսկույն թող որ աքայական մեծ բանակում  
Պատրաստի կինն մի գոհելու Արամազդին և Արևին»:

Եվ արագոտն Աքիլլն այսպես պատասխանեց Ատրիդեսին.  
«Ո՛վ մեծափառ դու Ատրիդես Ազամեմնոն արանց արքա,  
Ծատ ավելի լավ կըլինի, որ այդ մասին հոգաք հետո,  
Երբ պատերազմը վերջանա, և եռանդըս սունի դադար,  
Եվ վըրեժը, որ վառվում է կըրծքիս ներքո, հանգրստանա:  
Ա՛յն ժամանակ, երբ վիրավոր կամ դիտապաստ ընկած են մեր  
Քաջագունները Հեկտորի ձեռքով՝ շնորհիվ Արամազդի,  
Շա՛հ՞ եք դուք հըրավիրում, իսկ ես ուզում եմ հենց հիմա  
210 Հըրամայել աքայեցոց որդիներին կրովել քաղցած,  
Եվ արևի մայրամուտից հետո միայն նըստել հացի,  
Երբ որ լուծած կըլինենք մենք վըրեժը մեր անարգանաց:  
Մինչ այդ ոչ մի հաց ու գինի իմ որկորից ցած չի գընա,  
Քանզի մեռավ ընկերն իմ թանկ, որ պառկած է վըրանիս մեջ  
Վհրավորված սուր պողընձով, դեմքը դեպի դրոներն ուղղած,  
Որի չորս կողմ ընկերները լաց ու կոծ են անում հիմա:  
Ուստի ոչինչ չեմ ուզում ես, կամե՛նում եմ այժըմ միա՛յն  
Արյուն, նախճիր ու դառնահեծ մըղընչյուններ մեռնող մարդկանց»:

Եվ Ռդիսեսը հանճարեղ ճըրան այսպես սուսց նորից.  
220 «Պեղխասժին ո՛վ Աքիլլես, արիագո՛ւյնդ աքայանց մեջ,  
Քաջ ես ինձնից դու ավելի և կորովի՛ քո նիզակով,

Բայց եւ քեզնից իմաստությամբ և իմ խելքո՛վ եմ առավել,  
Զի տարիքով մեծ եմ քեզնից և ավելի շատ բան տեսած.  
Ուստի և դու խոհեմաբար պետք է անասս իմ խորհրդոյն:  
Մարդիկ շտաով կը հագեանան պատերազմից, ուր անողոք  
Պղզիճճը սուր շատ ցողուններ կը տրած պիտի փրոյ գետին,  
Հուճճը սակայն քիչ կըլինի, երբ նըծարը ծըռել ուզի  
Զեւը, որ ինքն է արծարծում պատերազմներ մարդկանց միջև:  
Փորս՛վ չէ որ արքեղեցիք պետք է սրգան մահացցալին,

- 230 Ամեն օր էլ շատ մարդիկ են մեռնում անեղ պատերազմում,  
Ուրեմն մենք էլ ե՛րբ պիտի շունչ առնեինք լաց ու կոծից:  
Մահացցալի վըրս պետք է մի օր միայն լալոց հետո  
Ամուր ճոգով ու սըրտասիւնդ հողին հանձնել պատշաճ կարգով.  
Իսկ ովքեր որ անեղ մարտից ազատվում են ողջ և առողջ,  
Նըբանք պետք է ուտեն-խըմեն, որ կազդուրվեն և ամբաւան,  
Որ ճար ուժով կարողանան կրովի մըտնել թըշնամու դեմ՝  
Հագած պղղինձ անպարտելի, և հոգու մեջ կամք ու կորով:  
Ռեստի ոչ ոք թող չըսպասի այլ խըրատի ու խորհուրդի,  
Զի արդպիսին աղետաբեր պիտի լինի նըրա համար,  
240 Ի՞նչ կը մընա արգիացոց արագաթև նավերի մոտ,  
Այլ պետք է որ միահամուտ ու խոտնախոտըն գըրոհենք  
Զիս՛նըրոխտ տըրդանց դեմ՝ բորբոքելով բարկ Արեւին»:

Լեսաց, ստավ վեհ Նեստորի որդիներին իրեն ընկեր,  
Ե՛վ Մեգեսին Փիլյան, սպա Մերիոնեսին և Թուսին,  
Մեղանիսպին հետն առնելով և Կրիոնոյան Լիկոմեդին՝  
Գընաց դեպի Ագամեմոնն Ատրիդեսի վըրսն ընդփույթ,  
Ե՛վ այ՛ն, ինչ որ խոսք էր մինչ այդ՝ գործի փոխվեց նըրանց ձեռքով:  
Ե՛վ վըրանից ստան բերին խոստացված յոթ եռոտանին  
Ե՛վ նըրասիայլ քըսան հատ սան, ու տասներկու երիվարներ,

- 250 Դեպս հանեցին ձեռագործի վարժ ու հըմուտ յոթը կանանց  
Ե՛վ ութերորդը՝ գեղեցկայտ Բրիսեիսին, ու կը շոռելով  
Տասը տաղանդ մաքուր ոսկի, Ողիսեսը առաջն ընկած  
Բեքին բոլոր պարգևները և ատյանի մեջտեղ դրին:  
Ոտքի ելավ Ագամեմոնն, ու Տալթիբիոսն աստվածաձայն՝  
Կինճին բըռնած տարավ կանգնեց ժողովըրդոց արքայի դեմ:  
Ատրիդեսը դուրս քաշելով իր սայրասուր դանակը մերկ,  
Որ շարունակ կախում էր նա իր մեծ սըրի պատյանի մոտ,  
Կըտրեց կինճի մազից որպէս երախայրիք ու ձեռնամբարձ  
Աղոթք արավ Արամազդին. արգիացիք այնտեղ բոլոր  
260 Նըստած անձայն, ըստ օրինի, լըսում էին թագավորին,  
Որ աչքերը երկինքն ուղղած՝ այսպէս ասաց աղոթելով.

«Թո՛ղ նախ ինքը ամենամեծ Արամազդը լինի վընա,  
Ապա Երկիրն ու Արեգակն ու Վրիժուհիք դըժոխազին,  
Որոնք պատժում են սրտերդունն և ոխտազանց դըրոժներին,  
Որ ես երբեք ձեռք չեմ տըվել Բրիս՛իսին մինչև այսօր  
Ո՛չ մըտնելու նըպատակով, ո՛չ էլ ուրիշ բանի համար,  
Այլ վըրաճիս մեջ անարատ մընաց անմերձ և անշաղափա:  
Իսկ եթե ես սուտ եմ արում, աստվածները թող որ գըլխիս  
Թախեն այնքան աղետ ու ցավ, որքան որ սուտ երդվողներին»:

- 270 Ասպես ասաց և վարագի վիզը կըտրեց սուր պըղըճով,  
Եվ Տալթիքիսուն այն գըլտրեց ծովը անտակ՝ ձըկներին կեր,  
Այն ժամանակ ոտքի ելավ Պելիսածին Աքիլը վեհ  
Եվ կանգնելով քաջամարտիկ արգիացոց միջև՝ ասաց.  
«Հա՛յր Արամազդ, դո՛ւ ես, որ մեծ վնասներ ես տալիս մարդկանց,  
Ազամենմունը լանջքիս տակ չէր գըրգըռի հոգիս երբեք,  
Եվ ո՛չ էլ նա ի հեճուկս ինձ կառներ աղջիկն ու կըտաներ.  
Այլ Ջևան ի՛նքն էր, որ աքաչանց շատ քաջերին մահ կամեցավ:  
Բաց արդ՝ նաչի գընացեք դուք, որ ըսկըսեճք մարտն անհապաղ»:

- Այսպես ասաց և արձակեց ակըմբախույլ ծովովն արագ,  
280 Ու ցըրվելով անմիջապես ամեն ոք իր նավը գընաց:  
Իսկ մեծասիրտ միրմիրոցնիք ընծաները վերցընելով  
Տարան դեպի նավը քաջոտն աստվածային Աքիլլեսի,  
Ջետեղեցին խորաններում ու նըստեցրին կանանց այնտեղ.  
Եվ ձիերին դեպ երամակ տարան մարդիկ քաջագոտի:

- Բրիսեհիսը գեղեցկապտ՝ Աստղիկի պես ոսկեղիճիկ,  
Երբ որ տեսավ Պատրոկլեսին խորը խոցված սուր պըղըճով,  
Ծիչ արձակեց ու դիակի վըրա ընկավ արտասովակոճ.  
Չանգոտմ էր իր դեմքը չըքնաղ, պարանոցն ու կուրծքը փարթամ  
Եվ ասում էր աստվածուհու պես գեղեցիկ կինը լարով.  
290 «Ո՛հ, Պատրոկլես, դու թըշվառիս սըրտի համար հո՛ւյժ սիրելի,  
Ողջ ու առողջ թողի ես քեզ այս խորանից հեռունալիս,  
Եվ այժմ անա ետ դառնալով մեռած եմ քեզ գըտնում այստեղ:  
Ախ, ինչպե՛ս են վիշտը վըշտի վըրա անվերջ թափվում վըրա...  
Քաղաքի մոտ սուր պըղըճով վիրավորված տեսա նըրան,  
Որին տըվին ինձ ամուսին հաղըս և մայրն իմ մեծարո.  
Տեսա երեք եղբայրներիս (միննույն մոր ծոցի պըտուղ),  
Միրելիճե՛րս, որոնք բոլորն իրենց օրհասն այնտեղ գըտան:  
Չէիր թողնում դու, Պատրոկլես, որ լաց լինեմ, երբ ըսպանեց  
Քաղաքավեր քաջ Աքիլլեսն իմ ամուսնուն օրինական



**300** Եվ ավարեց դուցազնագարսն Մինեսի ճոխ քաղաքը նա:  
Ասում էիր՝ օրհնասսես կամունացնես տարաբախտիս  
Աստվածային Աքիլլի հետ, և դուք Փթիս տանելով ինձ  
Հարսանեկան խրճշույք կանեք միրմիրոնաց մեջ բազմամարդ:  
Ընկար, ով քաջ, և ինձ մրնաց միայն ողբա՛լ քեզ հավիտյան»:

Այսպես ասաց արտասվելով, ու լաց եղան բոլոր կանայք  
Պատրուկեսի վերա, սակաչն ամեն որ իր վիշտն էր լալիս:  
Իսկ աքայանց ծերունիներն Աքիլլեսի չորս կողմն առած՝  
Խընդրում էին ճրրան ճաշել, բայց նա մերժում էր բոլորին.

«Եթե կա դեռ մի բարեկամ, որ ինձ լքում է, սիրելի՛ք,  
**310** Աղաչում եմ, մի՛ ըստիպեք, որ հագեցնեմ ինձ որևէ  
Ընպելիքով կամ կերակրով, զի մեծ մի վիշտ պատել է ինձ,  
Պիտի սպասեմ և դիմանամ մինչ մայրամուտն արեգակի»:

Այսպես ասաց և իրենից հեռացրեց մյուս արայեցոց,  
նու մրնացին Ատրեորդիք և Ողիսեսն աստվածային,  
Իդոնենեսն ու Նեստորը և Փենիքար ծերունախառ,  
Որոնք ջանում էին անդույ մըխիթարել վըշտացյալին:  
Սակայն քաջի սիրտը վըշտոտ չէր ըստիպվում ոչ մի բանով  
Քանի դեռ նա ներս չէր մըտել արնոտ կրովի լայն երակից.  
Պատրուկեսի մասին միայն միտք անելով՝ ասում էր նա.

**320** «Մի ժամանակ, ա՛յ իմ թըշվառ, իմ սիրելի ընկե՛ր անգին,  
Դո՛ւ էիր ինձ, քո իսկ ձեռքով ճաշ մատուցում վըրամիս մեջ,  
Ժամը ժամին, աշխույժ ու ժիր, երբ աքայանք՝ արտասավալից  
Կըռիվ էին մըղում անեղ՝ ձիախըրոխտ տըրոյանց դեմ:  
Իսկ արդ աչտեղ պանկած ես դու վիրավորված, և ես անա  
Միրտս անըրվաղ կերուխումից՝ ծոմ եմ պահել սիրուդ համար:  
Չէի ըզգա աչքան խորունկ ցավ ու կըսկիծ իմ սըրտի մեջ,  
Եթե նույնիսկ, օ՛, հարազատ հորըս մահվան գույժն առնեի,  
Որ Փթիայում աչժըն գոցե թափում է դառն արտասուքներ  
Իր մեկ հատիկ որդու համար, իսկ ես աչտեղ, օտար հողում  
**330** Մարտ եմ մըղում տըրոյանց դեմ Հեղինեի համար անարգ.

Ոչ էլ եթե որդուս մահվան բոթը հասներ իմ ականջին,  
Որ սընվում է սիրաբողբոջ՝ Ակիրոսում, եթե ողջ է  
Եվ ապրում է իմ սիրելի Նեոպտոլեմն աստվածագեղ:  
Առաջ այնպես էի կարծում, թե միայն ես եմ մեռնելու  
Հեռու երկրիցն իմ հայրենի, օտար հողում տըրոյական,  
Իսկ դու Փթիս կըդառնայիր և սևաթույր նավի վըրա  
Նըստեցնելով իմ զավակին՝ կըտանեիր Ակիրոսից  
Եվ մեկ առ մեկ ցույց կըտայիր ճրրան բոլոր կավածքներըս,

Ծառաներիս և աղախնոց և ապարանքն իմ բարձրահարկ:  
340 Ձի Պելևար, կարծում եմ ես, արդեն մեռած պիտի լինի,  
Իսկ եթե դեռ ապրում էլ է՝ հյուծվում է խոր ծերության մեջ,  
Ամեն մի ժամ մահըս գուժող բոթաբերին ըսպասելով»:

Ասաց լալով, և նրա հետ հեծկըստում էր ավագանին,  
Ամեն մեկը տանը թողած հարազատին իր հիշելով:  
Նրբանց այդ լացը տեսնելով՝ գուրջ շարժվեց Զըրվանյանի,  
Որ դառնալով Աթենասին՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
«Իուստր իմ, իսպառ անտե՛ս ասար արի մարդուն ազնըվաշուք,  
Աքիլեսի մասին այլևս բուրբուլին հոգ չե՛ս տանում,  
Որ բարձրածայր նավերի մոտ նրստած ահա տըրտում-տըխուր,  
350 Դառնակըսկի՞ծ ողբում է մահն իր սիրելի ընկերակցի,  
Եվ մինչ ճաշում են ուրիշներն, ինքը նրստել է անըվաղ:  
Գընա՛ իսկույն ու քաղցր ամբրուն աստվածային նեկտարի հետ  
Նրբա սըրտի մեջ կաթեցրու, որ նա քաղցից չընըվաղի»:

Ասաց, դըրդեց Աթենասին, որը այդ էր ուզում արդեն,  
Եվ սըլացավ սավառնաթև ու սըրածայն արծվի նըման,  
Արիիստիպլ բարձր երկնից սուրաց կապույտ եթերն ի վար:  
Այդ ժամանակ ճամբարի մեջ զինվում էին աքալեցիք:  
Աստվածուհին՝ հավերժ անմահ աստվածների նեկտարն անուշ  
Եվ ըմպելին կաթիլ-կաթիլ Աքիլեսի սիրտը ծորեց.  
360 Որ չըհասնի դըժոխատանջ սուլը նրա սըրունքներին,  
Ապա նորից վերադարձավ հաստատաշեն պալատն իր հոր:  
Աքալեցիք ծովագընաց նավերից դուրս գըրոհեցին,  
Ինչպես ձյունի տեղատարափն է թանձրախումոն՝ Արամազդից  
Թափվում երկիրն՝ արիիստին Հյուսիսակից խարազանված:  
Նավերից դուրս էին թափվում աչուպես անթիվ և անհամար  
Գըլխանոցներ փալլակնացալտ և վահաններ կուռ ու կըմբշա,  
Եվ գըրահներ կարծրածածկույթ կարավանդով, և նիզակներ,  
Որոնց շողչունն ակնախըտիդ մինչև երկինքն էր բարձրանում.  
Եվ պըղընձի փալլ ու ցուլից ծիծաղում էր երկիրը ողջ,  
370 Ու թընդում էր գետինն անթիվ մարդկանց ոտքի դոփշուններից,  
Եվ նրբանց մեջ զինավալվում էր Աքիլեսն աստվածային:  
Ատամները կըրճտում էին, և աչքերը կաչծակնացալտ  
Վառվում էին կրրակի պես, և սըրտի մեջ աստիկ մի ցավ,  
Մըմըռալով տըրոյանց դեմ՝ հագնում էր նա աստվածային  
Պարզևները, որ դարբընեց Հեփեստոսը ճարտարապետ:  
Նախ և սուաջ պատեց նա իր սըրունքները՝ չըքնաղագեղ  
Սըռնապանով, որ արծաթյա ճարմանդներով էր կոնկըրվում.

- Ապա ծածկեց կործքը շըքեղ լանջապանով պատենագեն  
 Եվ կախելով արծաթազամ պողընչյա սորն ուրընդանոյթ՝
- 380 Առավ ասպարը մեծահաղթ, ճարտարագործ ու հաստաքետտ,  
 Որի փայլը լուսնանըման հեռուներն էր հասնում մինչև:  
 Ինչպես ծովով նավողներին երևում է ճաճանչը վառ  
 Մի կըրակի, որ վառվում է լեռան վըրա մի բարձըր տեղ,  
 Բայց սըրրիկները՝ ձրկնավետ ծովի վըրա բըռնի կերպով  
 Նըրանց ի բաց են հալածում իրենց սիրած ընկերներից,—  
 Աչքպես նաև Աքիլեսի աստվածակերտ, քանդակագարդ,  
 Գեղապանույն վահանը փայլն մինչև երկիկքն էր բարձրանում:  
 Առավ ապա իր ամրակրու սաղավարտն ու դըրեց գըլխին,  
 Եվ գըլխանոցն այդ ձիաբաշ շողշողում էր աստղի նըման,
- 390 Ու ծածկավում էին ոսկի գիսակները նըրա չորս կողմ,  
 Որ ճեփեստուն էր փընջածն համասըփուել գագաթի շորջ:  
 Եվ ինքն իրեն փորձում էր նա այդ նրաբանչ գեներքի մեջ  
 Թե հարմա՞ր են գալիս արդոք, ու շարժվո՞ւմ են անդամները,  
 Որոնք ասես թևի վըրա առած՝ տանում էին նըրան:  
 Եվ վերջապես պահարանից հանեց նիզակն հայրենատուր,  
 Ծանրածանըր և հաստաբուն, որը ոչ մի աքաչեցի  
 Անկարող էր նույնիսկ շարժել, և միայն ինքն՝ աստվածային  
 Աքիլեսն էր ճոճում հըմուտ Պելլան հացին այդ հաստապինդ,  
 Որ Քիրոնը տըվեց նըրա հորը Պելլան բարձունքներից:
- 400 Ավտոմեդոնն ու Ակիմոնն երկվարներն էին լըծում.  
 Եվ անցկացրին շորջանակի սամեղները գեղապարույր,  
 Ու զարնելով սանձեր նըրանց ծընոտներին՝ պինդ պըրկեցին  
 Երասաններն՝ ասպանդակի վըրա դեպի ետ քաշելով:  
 Ավտոմեդոնն իր ձեռքն առավ վայելչահչուս սըտրակը պինդ  
 Ու նետվեց կառք անմիջապես, և ետևից բսպտագեն  
 Ելավ Աքիլն արեգնափայլ, փայլակնացաչտ իր գեներքով  
 Ու ձայն տըվեց որոտագոչ իր հայրական նըծույզներին.  
 «Հըռչակավոր Ճեպոտներից սերած օ դո՛ւք, Աշխե՛տ, Պիսակ,  
 Տեսեք, որ ողջ ետ դարձընեք դուք ձեր կառքը նըստող քաջին  
 410 Դեպի բանակն աքաչեցոց, երբ դադարենք մարտընչելուց,  
 Եվ չըթողնեք Պատրոկլի պես գետին ընկնի դիսթավալ»:

Լըծան տակից Աշխետը ժիր անակընկալ խոսեց այսպես.  
 Խոճարհելով գըլուխն իսկույն, և ճոխ քաշերն առատորեն  
 Հոսելով ցած սամիներից հասան մինչև գետինը գորշ  
 (Եվ խոսեցրեց նըրան Հերա լուսածըղի աստվածուհին).  
 «Այս անգամ էլ քեզ արդարև պիտ ազատենք, քա՛ջ Աքիլես,  
 Բայց քո վերջին օրը մոտ է, որի մեջ մենք հանցանք չունենք,

Այլ մեծ աստվածն ու ինքնիշխան Ճակատագիրն ամենագոր:  
Քապ լիցի, ո՛չ, մեր ծուլության ու հեղգության պատճառով չէր,  
420 Որ տըրոյանք կողոպտեցին Պատրոկլէսի զենքերն ուսից,  
Այլ վարսագեղ Լեռովնի քաջ որդին՝ աստվածն էր մեծագոր,  
Որ ըսպանեց Մենհոյանին առաջամարտ ջոկատներում  
Դյոցագնարար մարտընչելիս, և պարգևեց փառք Հեկտորին:  
Քեկուզ վագենք մենք սըրընթաց Ջեփոտի պէս թեթևաշունչ,  
Որն, ասում են, հովերի մեջ ամենեն ժիրն է, քաջընթաց,  
Բայց ի՞նչ օգուտ, երբ գըրված է քո ճակատի վըրս, որ դու  
Պարտվես պիտի մի աստըծոց և մի մարդոց մահկանացու»:   
Պատմահասաներն\* ընդհատեցին ձայնը և ըրա, երբ խոսում էր:

Իսկ արագտուն Աքիլլէսը սաստիկ ցասմամբ ասաց ձիուն.  
430 «Է՛ դու, Աշխե՛տ, ինչո՛ւ ես ինձ մահ գուշակում, քո ի՞նչ գործն է.  
Ինքս էլ գիտեմ, որ ինձ շուտով վիճակված է մեռնել այստեղ  
Հեռու հորիցն ու իմ մորից. սակայն ես չեմ դադարելու  
Կըռվից, մինչև տըրոյացիք պատերազմից կուշտ հագենան»:

Այսպես ասաց որոտալով և ձիերը վարեց սուսջ:

---

\* Էրիննաները

# Ե ր գ Ք ա ա ն Ե ր ո ր ղ

## ԴԻՏԱՄԱՐՏ

Այսպէս անա նավերի մտտ աքալեցիք պղղընձավտ  
Զինվում էին քո շուրջ-բոլոր, ուազմի անհազ ո՛վ Աքիլես,  
Տըրոյացիք էլ մյուս կողմից՝ հանդիպակաց սարահարթում:

Իսկ Արամազդը Թեմիսին հըրամայեց, որ ժողովի  
Կանչի բոլոր անմահներին Ոլիմպոսի վեճ բարձունքում:  
Գընաց Թեմիսն ու բոլորին ազդարարեց հոր անունից,  
Որ ըշտապեն անմիջապէս դեպի տաճարն Արամազդի:  
Ժողովից չէր բացակայում և ոչ մի գետ Օվկիանից զատ,  
Այնտեղ էին հարսները, որ ապրում էին անտառներում,

- 10 Մարգագետնում դալարավետ կամ գետերի ակունքներում:  
Ամպրոպային Արամազդի ապարանքը գալով նըրանք,  
Բազմեցին այն մեծ դահլիճում, որ Հեփեստոսն էր կառուցել  
Հանճարամիտ իմաստոյթյամբ՝ Արամազդի— իր հոր համար:  
Այսպէս բոլոր անմահները հավաքվեցին ակրմբահույլ,  
Հընազանդեց և Պոսէյդոն՝ անասվածուհու հըրավերին.  
Ելավ ծովից ու բազմելով բոլորի հետ այդ ասոյանում՝  
Զնսի միտքը հասկանալու համար հարցում արավ նըրան.

«Ինչո՞ւ ես մեզ, ո՛վ շանթընկեց, դու ժողովի կանչել նորից,  
Աքալեցոց և տըրոյանց համար խորհո՛ւրդ ունես արդշոք,

- 20 Որոնք շուտով պիտի վառեն պատերազմի հուրը անեղ»:

Եվ Արամազդն ամպրոպային նըրան այսպէս պատասխանեց.  
«Միտքըս դու ճիշտ ըմբռնեցիր, ո՛վ ահավոր Երկրասասան,  
Դրրա համար եմ ձեզ կանչել, ցալում եմ ես նըրանց համար,  
Ինքըս պիտի նըստած մընամ ամենաբերձ Ոլիմպոսում  
Ու նապելով նըրանց կըրովին՝ զըվարճանամ իմ սըրտի մեջ.  
Իսկ դուք դեպի տըրոյացիք և աքալանք ըշտապեցեք

Եվ օգնեցեք երկուսին էլ, ամեն մեկըդ ում ուզում է.  
 Քանզի եթե տըրոյանց դեմ միայն Աքիլլն ինքը կրովի,  
 Չեն դիմանա նրանք երբեք Պելիսածնի ահեղ ուժին:  
**30** Առաջ նրա միայն երե՛սն էլ տեսնելով փախչում էին,  
 Իսկ հիմա, որ իր ընկերոջ մահվան վըրա ցասկոտ է խիստ՝  
 Վախենում են, որ տարածամ քանդի Իլիոնն ամրապարիսպ»:

Այսպես ասաց և արծարծեց խրոտվություն երկնայնոց մեջ,  
 Որոնք դեպի մարտ դիմեցին երկպառակված հոգիներով:  
 Հերան, Պալլա Աթենասը և Պոսեյդոնն աշխարհակալ,  
 Հերմեսը ծիր, օգտամատուց, որ խոհեմ է և նրբամիտ,  
 Եվ Հեփեստոսն իր վիթխարի ուժի վըրա վըստահացած  
 Կաղ սրբունքներն իր շարժելով,— աստվածները միախորհորդ  
 Դիմում էին արագընթաց դեպի նավերն աքայեցոց:

**40** Իսկ Արեսը սաղվարտանոն և Ապոլլոնն երկայնավարս,  
 Արտեմիսը նետազըվարն, Քրսանթոսը, Լեդովնը և  
 Միրածըլպիտ Աստղիկը՝ մեկ՝ տըրոյանց կողմն էին գընում:

Քանի դեռևս աստվածները հեռու էին կըրվողներից՝  
 Խըրոխտ էին աքայեցիք Աքիլլեսի հանդես գալով,  
 Նա, որ երկար ժամանակով ձեռընթափ էր եղել մարտից:  
 Սաստիկ սարսուռ մի սողակեց տըրոյացոց սըրտերից ներս,  
 Երբ որ տեսան զարհուրելի Պելիսածին Աքիլլեսին  
 Փալլակնացաչտ, ըսպատագեն արյունառուշտ Արեսի պես:  
 Իսկ երբ եկան ոլիմպյաններն ու մարդկանց մեջ մըտան խումբ-խումբ».

**50** Հառնեց դարձյալ Ոյսը դածան, դըռույթ տըվեց ամբոխի մեջ:  
 Աթենասը մերթ փոսի մոտ, մերթ պարըսպից դուրսը կանգնած,  
 Եվ երբեմն էլ ծովի ափին՝ որոտում էր ուժգընորեն:  
 Իսկ մչուս կողմից Արեսն էր բուռըն մըռընչում մըրըրկի պես՝  
 Տըրոյացոց դըրդելով մերթ բարձրապարիսպ Իլիոնից,  
 Մերթ դիմելով դեպ Գեղասար բլուրն— ափը Սիմոլիսի:

Այսպես ահա գըրգըռեցին երկու կողմերն իրարու դեմ  
 Ոլիմպյաններն՝ արծարծելով սաստիկ մի մարտ նըրանց միջև:  
 Գոռաց վերից աստվածների և մարդկանց հալըն ահեղածաչն,  
 Իսկ Պոսեյդոնը դըրըրդեց տակից երկիրն անվաչրափակ  
**60** Եվ լեռները բարձրակատար ցընցեց ուժով իր վիթխարի.  
 Դողաց նաև բլուրակընչա Իդան բոլոր իր հիմքներով,  
 Իլիոն քաղաքն ամրապարիսպ և նավատորմն աքայեցոց:  
 Սոսկյաց սաստիկ սանդարապետ Աչիդոնեսն իր անըընդում,  
 Սարասփահար փըռընչալով ոստնեց գահից, թե մի գուցե

Պոսեյդոնը երկրադրողորդ պատռի վերից երկիրն հանկարծ  
 Եվ ճեղքըվեն կացարաններն անմահների, նաև մարդկանց  
 Դրժմատեսիլ և ահավոր, որոնք մինչև անգամ անմահ  
 Աստվածներին են պատճառում խորշանք ո՛ր դող քրատըմնեյի:  
 Աչսպիսի մեծ թրնդյուն ելավ, երբ աստվածներն ի մարտ մըտան:

70 Կանգնեց ընդդեմ Պոսեյդոնի իբր ախոյան արծաթադճող  
 Ապոլլոնը կորովաձիգ սրբաթրոնիչ իր նետերով,  
 Եվ Արեսի դեմ Աթենաս կապուտաչվի աստվածուհին,  
 Իսկ Հերային ընդդիմամարտ՝ ոսկեփըքին, ամբոխահույզ  
 Արտեմիսը նետազրվարճ՝ բույրն աստրծու կորովաձիգ.  
 Լետուլիի դեմ իբր ախոյան կանգնեց Հերմեսն օգոտամատուց,  
 Հեփեստոսին՝ Գետն ահագին, հորձանահոս, որին անմահ  
 Աստվածները Քասնթորու են կոչում, մարդիկ՝ Սկամանդրոս:

Աչսպես՝ աստված աստրծու դեմ կրովում էին, իսկ Աքիլլեսն  
 Իր սրբաի մեջ եփ էր գալիս հանդիպելու լոկ Հեկտորին:

80 Ուզում էր նա վրբիժավառ՝ Պրիամոսի որդու արչամբ  
 Կուշտ հագեցնել անհատեյի պատերազմող բուն Արեսին:  
 Ապոլլոնը ամբոխադուրոյթ՝ Էնիասին նախ հորդորեց,  
 Ներշընչելով նրան կորով, որ Աքիլլի վըրս վազի:  
 Եվ Պրիամյան Լիկայոնի կերպարանքն ու ձայնն առնելով  
 Ապոլլոնը՝ Արամազդի որդին աչսպես ասաց նրբան.  
 «Էնիա՛ս, տրոյանց իշխանավորդ, պատճանաքներդ ո՞ր գընացին,  
 Երբ գինու լիք բաժակը ձեռք՝ ասում էիր ավագանուն,  
 Թե կըկըղովես դու քաջարար Պելիասձին Աքիլլի դեմ»:

Եվ Էնիասն իսկույն նեթ նրբան աչսպես պատասխանեց.

90 «Ինչո՞ւ ես դու, ո՛վ Պրիամյան, հակառակ իմ կամքին, աչսպես,  
 Գըրգըրում ինձ հանդըզնելու անպարտեյի Պելլասի Կնն:  
 Այս առաջին անգամը չէ, որ նրբան եմ հանդիպում ևս.  
 Առաջ էլ նա իր նիզակով ինձ փախցըրեց Իդա սարից,  
 Հարձակվելով մեր եզների նախրի վըրս, և կործանեց  
 Լիոնեսոսն ու Պերասոսը, բայց Արամազդն ինձ ազատեց,  
 Արծարծելով կորով իմ մեջ և զորություն իմ ծընկներին,  
 Ապա թե ոչ բոլորովին կըկորչեի նրբա ձեռքից,  
 Որին ինքը Աթենասն էր առաջնորդում, հորդորելով  
 Պղնձյա տեգով ըսպանելու լելեզներին և տըրոյանց:

100 Ո՛չ, չի կարող և ոչ մի մարդ Աքիլլեսի դեմ ճակատել,  
 Զի նա իր հետ աստվածներից մեկն ունի միշտ իրեն պաշտպան.  
 Եվ բացի այդ, սըլաքները նըրբա ուղիղ են թըռչում միշտ,  
 Ու թըռչելուց չեն դադարի, մինչև չանցնեն մարդու մարմնից:

Ապա թե ոչ, եթե աստված անկողմնակալ լինի մարտում՝  
Հազիվ թե նա կարողանա ինձ հեշտությամբ հաղթահարել,  
Նույնիսկ եթե ամբողջովին նա պղղընձից լինի ձուլված»:

Եվ Ապոլլոնն՝ Արամազդի որդին այսպես ասաց նրան.  
«Յ՛ն, աղոթիր և դո՛ւ հավերժ աստվածներին, ո՛վ դուցազուն,  
Զի ասում եմ, թե քեզ ծընեց Աստղիկը՝ դուստրն Արամազդի,  
110 Իսկ նա ծընված է աննըշան, ըստորադաս մի դիցուհուց.  
Աստղիկին Զևսն ի՛նքն է ծընել, իսկ Թեոփսին՝ Ծերը ծովի:  
Ցըցի՛ր ուստի պղղինձդ անհաղթ և դու երբեք մի՛ վախենա  
Ո՛չ Աքիլից, ո՛չ էլ նրա ըսպանալից հոխորտանքից»:

Ասաց և ուժ ներշնչեց նա ժողովրդոց արի հովվին,  
Որը գընաց ըսպառագեն դեպի գընդերն առաջամարտ:  
Լուսածրդի Հերան տեսավ Անքիսեսի արի որդուն,  
Որ ամբոխի միջից ողիղ դեպ Աքիլեսն էր ընթանում,  
Եվ կանչելով աստվածներին իր մոտ՝ այսպես ասաց նրանց.

«Մետածեցե՛ք, ո՛վ աստվածներ, դուք, Պոսեյդոն և Աթենաս,  
120 Մըտածեցե՛ք իմաստնաբար, թե վերջը ո՞ր պիտի հանգի:  
Էնիսն անա հրաշեկ պղնձով ըսպառագեն, խըրոխտապանծ,  
Ապոլլոնից դըրդված դեպի Պելիասծինն է ընթանում:  
Պետք է որ մենք, ո՛վ աստվածներ, ե՛տ դարձընենք Էնիսին,  
Եվ կամ մեկն էլ Աքիլեսին թող գորավիզ լինի մեզմից,  
Ու ներշնչի կորով նրան, որ ոչ ոքից տեղի չըտա  
Եվ իմանա, թե սիրվում է նա մեծագույն աստվածներից,  
Եվ անգոր են բոլոր այն մյուս աստվածները, որոնք մինչ արդ  
Զանք են թափում պաշտպանելու տըրդացոց՝ պատերազմում:  
Մենք բոլորըս Ոլիմպոսից այստեղ իջանք նրա համար,  
130 Որ Աքիլեսն այսօր ոչինչ չըկրրի այդ տըրովներից,  
Իսկ թող հետո կըրի, ինչ որ Բախտը մանեց նրա համար  
Այն օր երբ նա աշխարհ եկավ. մայրը ցավով ծընեց նրան:  
Բայց թե Աքիլն աստվածներին իրենց ձայնից չընանաչի՝  
Կըվախենա, եթե կըլուի մի աստըծու հանդիպի նա,  
Զի անեղ են աստվածները մահկանացոց երևալիս»:

Պոսեյդոնը անմիջապես նրան այսպես պատասխանեց.

«Այդ բարկությունը անխոհեմ անվայել է քեզ, ո՛վ Հերա,  
Ես չեմ ուզում բոլորովին, որ գըրգըռենք ամենագոր  
Աստվածներին իրարու դեմ՝ մասնակցելով պատերազմին,  
140 Այլ դուրս գալով ճանապարհից՝ գընանք նըստենք մի բարձր տեղ  
Եվ արյունոտ կըրիվների հոգսը թողնենք մահկանացոց:



Սակայն եթե Արեւը բուռն ու Ապոլլոնն ըսկրսեն մարտն  
Ու արգելեն Աքիլլեսին, թույլ չտալով մարտընչելու,  
Այն ժամանակ և մե՛ր միջև մի պատերազմ պիտի պայթի:  
Ու կարծում եմ, որ հապըշտապ նըրանք այնժամ հարկադրոված  
Եվ հակառակ իրենց կամքին՝ պիտի դառնան դեպի Ուլիմա,  
Դեպի կաճառն անմահների՝ մեր ձեռքերից հաղթահարված»:

- Այս ասելով առաջնորդեց կապուտավարս արքան նըրանց  
Դեպի պատվարը երկնաքերձ աստվածային Հերակլեսի,  
150 Որ շինեցին նըրա համար Աթենասն ու տըրոչացիք  
Իբրև պաշտպան և ապավեն ծովի հըսկա հըրեշի դեմ,  
Եթե ճիվաղն այդ հալածեր նըրան ծովի ափից դեպ դաշտ:  
Իր կողմնակից աստվածների հետ Պոսեյդոն արքան հըզոր  
Նըստեց այնտեղ՝ անհերձելի թանձըր ամպով շըրջապատված.  
Իսկ Գեդաաար բըրրի վըրս նըստեցին քո և Արեսի  
Ծուրջն, Ապոլլոն, մյուս աստվածներն, որ Իլիոնին էին պաշտպան:  
Այսպես ջոկ-ջոկ, հեռու նըստած նըրանք խորհուրդ էին անում,  
Ու ոչ մեկը սիրտ չէր անում ըսկրսել մարտն աղետավոր,  
Բայց Արամազդն ըստիպում էր նըրանց նըստած Ուլիմոսում:  
160 Ծայրե ի ծայր դաշտը լըցվեց ուազմիկներով և ձիերով  
Զինավառված փայլակնացաչտ. և թընդում էր լայնատարած  
Դաշտը նըրանց ոտքերի տակ, երբ ընթանում էին գունդ-գունդ:  
Հակառակորդ բանակներից՝ քաջերի մեջ ամենաքաջ  
Երկու հոգի առաջ անցան ու քինալից հասան իրար՝  
Անքիսեսի որդի Էնիասն ու Աքիլլեսն աստվածազարմ:  
Նախ Էնիասն անեղակերպ առաջ եկավ ըսպանակից  
Ցընցելով իր կորդակը կուռ և հաստաբետս վահանը հաղթ  
Իր լայն կըրծքի առջև բըռնած, պղնձյա նիզակն իր ճոճելով:  
Իսկ մյուս կողմից Պելիասծինն առաջ անցավ, ինչպես ւռչում,  
170 Որին կըտրին մարդկանց ամբոխն, հավաքվելով ավանն ամբողջ  
Ծիգ են թափում ըսպանելու, բայց գալիս է նա հավակնոտ,  
Իսկ երբ խիզախ մի պարմանի գարնի նըրան տոր նիզակով՝  
Գալարվում է կոկորդաքաց, ու ժայթքում է փըրփուր բերնից,  
Եվ ամենի հոգին կըրծքում հեծում է խոր, և իր պոչով  
Մըտրակում է, ձաղկում կողերն իր և ազդրերը անդադար,  
Գըրգըռելով իրեն՝ կըովի մըտնելու գոռ ամբոխի դեմ,  
Ու հարձակվում է խելամեղ կատաղությանը գազանային,  
Որ հոշոտի մեկն ու մեկին և կամ ընկնի նըրանց առաջ:—  
Այսպես եռանդն ու զայրույթը դըրդում էին Աքիլլեսին  
180 Դուրս գալ ընդդեմ Անքիսեսյան արիասիրտ Էնիասի:  
Խըրոխտաբար առաջ գալով, երբ մոտեցան նըրանք իրար,

Առաջինը խոսեց ինքը՝ աստվածագարմ Աքիլը շաջ.

«Էնիա՛ս, ինչո՛ւ ընկերներիցդ այդքան առաջ ես անցել դու.

Մի՞թե սիրտդ դըրդում է քեզ պատերազմի ելնել իմ դեմ,

Հուսալով, որ տըրոյացոց վըրա պիտի թագավորե՞ս

Պրիամոսյան փառքով շըքեղ. բայց դու թեկուզ ինձ ըստանես,

Պրիամ արքան այդ մըրցանակ-պատիվը քեզ չի՛ ընձեռի,

Քանզի ունի նա որդիներ և տակավին չի զտամել:

Կամ գուցե քեզ տըրոյացիք խոստացան տալ բաժին մի հո՞ղ

190 Արգասսալոր ու բարեբեր՝ մըշակության համար հարմար,

Եթե սպանես Աքիլլեսին, բայց այդ դըժվա՛ր հաջողվի քեզ:

Կարծեմ թե քեզ մի այլ անգամ ես փախցըրի իմ հիզակով:

Մոռացե՛լ ես միթե, Էնիա՛ս, որ Իդալի վըրա մեռակ

Գըտնելով քեզ՝ հալածեցի արագավազ իմ ոտքերով.

Թողիր նախիրն ու փախչելիս ետևդ անգամ չէիր նայում:

Դու այնտեղից հալածական թողիր փախար դեպ Լիոնեսոս,

Որ քանդեցի հիմնահատակ՝ շնորհիվ Ջևսի ու Պալլասի,

Ու կանանց էլ գերի տարա՛ նըրանց ազատ կյանքից զըրկած:

Ջևսը այդ օր և մյուս անմահ աստվածները քեզ փըրկեցին,

200 Բայց չեմ կարծում թե քեզ փըրկեն երկնայիններն և ա՛յս անգամ:

Խորհուրդ կըտամ, որ հեռանաս և ձերոնց մեջ մըտնես նորից,

Եվ չըկանգնես ինձ ախոյան, քանի փորձանք չի հասել քեզ,

Քանզի ինչ որ պիտի լինի՛ հասկանում է հիմարն անգամ»:

Իսկ Էնիասն ի պատասխան Աքիլլեսին՝ բացականչեց.

«Ձո՞ւր ես փորձում, որպես մանկան, ինձ վախեցնել քո խոսքերով»,

Եւ էլ, Պելլաս՛ն, գիտեմ անաստ լուտանք կարդալ և նախատել,

Մենք իրարու զարմը գիտենք, գիտենք նաև ծընողների

Իմանալով մեր միմալորց զըրուցներից շնորհացի,

Ո՛չ դու ես քո աչքով տեսել իմոնց, ոչ էլ քոնոնցը՝ ես:

210 Ասում եմ թե սերել ես դու քաջ Պելլեսից, ո՛վ Աքիլլես,

Եվ ծովային հալերժահարս Թետիսն է մայրդ վարսագեղ:

Իսկ ես ինքքս որդին եմ՝ վեհ, մեծահոգի Անքիսեսի,

Մայրքս՝ Աստղիկ աստվածուհին. մեր մայրերից մեկը այսօր

Պիտի ողբա իր սիրելի որդու վըրա անտարակույս,

Որովհետև չեմ կարծում թե տըղայական փուջ խոսքերով

Ըսպտոնայիք տալով իրար կըբաժանվենք առանց կըրովի:

Իսկ եթե իմ տոհմն ես ուզում իմանալ դու, կասեմ ես քեզ,

Որ քաջ գիտեն շատերն արդեն:— Արամազդը ամպրոպային

Ծընեց առաջ Դարդանոսին, որ Դարդանիան ձեռակերտեց,

220 Զի տակավին այն ժամանակ դաշտավայրում չէր կառուցված

Պարզաբարբառ մարդկանց քաղաքն՝ Իլիոնը մեր նըվիրական,

- Այլ դեռ Իդա բշտակընչա լեռան թիկունքն էին ապրում:  
Դարդանոսը ծընեց որդի՝ Երեքթոնչոս թագավորին,  
Որը բոլոր մահկանացոց մեջ ամենեն մեծատունն էր.  
Երեք հազար զամբիկ ուներ մարգագետնի մեջ արածող,  
Որոնք խաչտում էին իրենց մատաղատի մըտորուկներով:  
Բորեաւը սիրահարվեց զամբիկներից մի քանիսին,  
Եվ առնելով կապուտաբաշ հովատակի մարմին ու կերպ  
Ջամբիկների վըրա ելավ, և նըրանից հըղանալով՝
- 230 Տասներկու ժիր մըտորուկ բերին, որոնք երբ որ կենսապարզ  
Երկրի վըրա խաչտում էին, այնքան թեթև էին ստորում,  
Որ հասկերի ծայրերն անգամ չէին կտորում արտերի մեջ.  
Իսկ խընդասիրտ երբ վազեին ծովի ծըվումն մակերեսով,  
Մերմակ ալյաց վրայով էին թըռչում թեթև թըռչունի պես:  
Երեքթոնը ծընեց Տրովսին՝ թագավորին տըրոյացոց.  
Տրովսն ունեցավ հետագայում նըշանավոր երեք որդի  
Իլոսն անբիծ, Ասսարակոսն ու Գանիմեդն աստվածատիպ,  
Ողջ մարդկանց մեջ ամենագեղ տըղամարդը, որի համար  
Աստվածները տարան երկինք, որ մատըռվակ լինի Ջևսին,
- 240 Եվ դասեցին ոլիմպական անմահների կարգը նըրան:  
Իսկ Իլոսը ծընեց որդի ըսքանչելի Լավմեդոնին,  
Եվ Լավմեդոնն աշխարհ բերեց Տիրթոնոսին և Պրիամին,  
Կլոդիոսին ու Լամպոսին, Հիկետավնին՝ ոստ արիսյան,  
Ասսարակոսը՝ Կապիսին, և Կապիսը՝ Անքիսեսին,  
Իսկ Անքիսեսն էլ ծընեց ինձ, և Պրիամը քաջ Հեկտորին:  
Պարծենում եմ ահա՛, որ այս զարմից եմ ես և արյունից:  
Բայց Արամազդն է տալիս ուժ դյուցազներից և կամ առնում՝  
Ինչպես ուզի, զի բոլորից ուժեղ է նա և զորավոր:  
Սակայն արի, որ մենք փոքրիկ մանուկների պես ընդունանք
- 250 Չըբարբաջե՞նք այսպես այստեղ՝ պատերազմի դաշտի վըրա.  
Քանզի երկուսս էլ կարող ենք տեղալ այնքան լուտանք իզուր,  
Որպիսի բեռ հարչուր թիակ ունեցող նավն իսկ չի տանի:  
Նըլկուն է խիստ մարդու լեզուն, ունի բազում խոսքեր պես-պես,  
Եվ ամեն կողմ ցըրիվ եկող բառերի պերճ արոտավայր:  
Ինչպիսի խոսք որ ինքդ ասես, այն էլ պիտի լըսես անշուշտ.  
Ինչո՞ւ իզուր վեճի մըտնենք ու կըովեցնենք խոսք իրար հետ  
Կանանց նըման, որ հոգեմաշ ոխով լըցված իրարու դեմ  
Փողոցի մեջ, ճամփի վըրա, հաճախ տեղի կամ անտեղի  
Հայհոյում են մեկ-մյուսին, թափում լուտանք ու նախատինք:
- 260 Քո խոսքերով դու չես կարող սանձել եռանդն իմ, Աքիլլես,  
Որ ախոյան էլնեմ քո դեմ սուր պըղընձով ըսպառազեն:  
Օ՛հ, իրարու համը առնենք պըղընձակոտ մեր տեգերով»:

- Ասաց, զարկեց պրղընձակոտ մրկունդն իր նա՝ զարհուրելի  
 Հաղթ ասպարհն, որ դողանջեց աշտեի սուր սըլաքի տակ:  
 Պեղյանն իսկույն արագապես հեռացրեց իր հուժկու բազկով  
 Ասպարն ահեղ, վախենալով, որ մի գուցե մեծահոգի  
 Էնիասի հիգակն ուժգին ծակի անցնի այն շեշտակի:  
 Օ՛, մանկամիտ, որ չըմբըռնեց ո՛չ իր խելքով և ո՛չ հոգով,  
 Որ հեշտությամբ չեն տեղի տա մահկանացոց հարվածներին
- 270 Անմահական աստվածների այդ ընծաներն ըսքանչարվեստ:  
 Քաջամարտիկ Էնիասի հուժկու տեզը չըջախջախեց  
 Ասպարը հաստ, աստվածային պարզև-սուկին արգելք եղավ.  
 Անցավ երկու թիթեղներից, բայց երեքն էլ կային դեռևս,  
 Քանզի կրոնել կաղոտանին, կոփել էր հինգ թիթեղաշերտ—  
 Երես՝ երկուսը պրղընձյա, մեջտեղն երկուսը անագից,  
 Մյուսը սուկի, որի վըրա կանգ առավ սուր տեզը հացի:  
 Ապա նետեց քաջոտն Աքիլն իր մրկունդը երկայնաստվեր  
 Եվ Էնիասի բոլորածիր մեծ ասպարի եզրին զարկեց,  
 Որ պրղինձը բարակ էր շատ, ինչպես նաև աղջտեանին,
- 280 Ու թափ անցավ Պեղյան հացին թընդացնելով ասպարն իր տակ:  
 Էնիասն ահից կրծիկ եկած՝ ի բաց վանեց վահանն իսկույն,  
 Ու սրընթաց հիգակն ուսից սըլանալով՝ խըրվեց գետին,  
 Խորտակելով բոլորածիր կոտ ասպարի եզրերն երկու:  
 Ծողոպրելով երկար տեզից՝ Էնիասը ելավ ոտքի,  
 Անհրճարին մի ցավ սաստիկ նըրա աչքերը մըշուշեց,  
 Ու ողջ մարմնով դողաց ահից, տեսնելով տեզն իր մոտ ընկած:  
 Վըրա վազեց Աքիլն արագ, մերկացրած իր սոււտըր սուր,  
 Որոտալով ահագնաձայն, իսկ Էնիասը առավ գետնից  
 Հըսկա մի բար, որպիսին այժմ ապրողներից երկու հոգի
- 290 Անկարող են գետնից կըտրել, իսկ նա մեռակ՝ ճոճում էր այն:  
 Ու կըղիպչեր վեմն Աքիլի սաղավարտին կամ ասպարհին,  
 Եթե Պեղյանը խուչս չըտար ու չըփըրկեր իրեն մահից:  
 Եվ Աքիլեսն իր մեծ սրբով նըրա հոգին կտոներ այդտեղ,  
 Եթե շուտով չընըկատեր Պոսեյդոնը երկրադըրդող,  
 Որ դիմելով աստվածներին՝ այսպես ասաց տագնապահույզ.  
 «Էնիասի համար սրբոտանց ցավում եմ ես, ո՛վ աստվածներ,  
 Որ Պեղյանի ձեռքով պարտված պիտի դըժոխք իջնի շուտով,  
 Ունկընդրելով կորովաձիգ Ապոլլոնի թելադրանքին  
 Որը սակայն չի փըրկելու նըրան մահից անագորույն,
- 300 Բայց նա ինչո՞ւ իզուր տեղը գըրխին փորձանք պիտի բերի  
 Զոհ գընալով ուրիշների տեղակ այդպես անհեղորեն.  
 Նա, որ միշտ էլ աստվածներին հաճոյական ձոն է բերել:  
 Եկեք նըրան մենք ազատենք սարսափելի մահվան ձեռքից

Չքրվանյանն էլ կրգայրանա եթե սպանի Աքիլը քաջ  
Անքիսյանին, քանզի նրա ճակատագիրն է ազատվել,  
Որ անորդի և անժառանգ չըկորչի զարմը Դարդանի,  
Որին Ջևաբ շատ ավելի սիրում է քան բոլոր նրանց,  
Որոնք ծընվել են իրենից կամ կանանցից մահկանացու:  
Վաղուց է ինչ ատում է նա սերունդը ծեր Պրիսմոսի,  
310 Եվ արդ Ջևաբ կամքով անշուշտ իշխե պիտի տրոյանց վրա  
Էնիասը քաջ և իր որդոց որդիք՝ ցեղից-ցեղ հավիտյան»:

Նրբան այսպես պատասխանեց Հերա արգո ասումածունին.  
«Գետնադըրդորդ, քո սեփական խելքով դու լավ կըշտադատիր,  
Պե՞տք է փրկել Էնիասին անագորույն մահից դաժան,  
Թե՞ թույլ տալ, որ Պելիսածին քաջի ձեռքով ընկնի մարտում:  
Չէ՞ որ ես ինքս և Աթենաս Պալլասն այնտեղ երբում արհնք  
Ոլիմպոսում, հավերժ անմահ աստվածների ատյանի մեջ՝  
Չարարաստիկ օրը երբեք չըհեռացնել տրոյաներից  
Նույնիսկ եթե Իլիոնն ամբողջ տոչորակեզ հըրով վառվի,  
320 Մոխիր դառնա աքայեցոց արիսական թեժ կըրակով»:

Այդ լրսելով երկրասասան Պոսեյդոնը ելավ գընաց  
Դեպի գուպարն ու պատերազմն աղմըկահույզ, արյունահեղ:  
Հասավ այնտեղ, ուր Էնիասն էր Աքիլլեսի հետ գերափառ:  
Պատեց իսկույն Պելիսածին Աքիլլեսի աչքերը նա  
Մի մըշուշով ու պըրընձյա տեզը հացի դուրս քաշելով  
Անքիսյանի հաղթ ասպարից՝ Աքիլլեսի առջև դըրեց,  
Եվ Էնիասին հափըշտակած՝ իր ձեռքերի վըրա առավ:  
Եվ Էնիասն աստվածային ձեռքերի մեջ վեր քարձրացած  
Ոստնեց բոլոր դյուցազների և ձիերի վըրայով ծիր  
330 Եվ շուտափույթ՝ չարաշըշուկ պատերազմի ծայրը հասավ,  
Այնտեղ, ուր քաջ կավկոնացիք զինվում էին ռազմի համար:  
Պոսեյդոնը երկրասասան մոտ գընալով Էնիասին  
Կանգնեց նըրա առաջ և այս խըրախոսիչ խոսքերն ասաց.  
«Աստվածներից ո՞վ է դըրդում քեզ, Էնիաս՛ս, անխոհեմիդ,  
Որ ախոյան հանդիսանաս վայրենամիտ Աքիլլեսին,  
Որին սիրում են անմահներն և քեզանից ուժեղ է շատ:  
Այսուհետև ըզգուշացիր նըրան մարտում հանդիպելուց,  
Որ դըժոխքի տունը չընկնես նախքան օրհատը, անժամանակ:  
Իսկ երբ հասնի մահը նըրան, այնուհետև արդեն վըստահ  
340 Կարող ես դու պատերազմել առաջամարտ գընդերի դեմ,  
Քանզի մի այլ աքայեցի անկարող է քեզ ըստանել»:

Այսպես պատվեր տալով նրան՝ Պոսելոնը թողեց գրնաց  
Եվ աչքերից Աքիլեոսի փարստեց մեզն աստվածասիրաւ:  
Աքիլլեսը բաց աչքերով տեսավ օրվա լույսը նորից  
Եվ խոր հետաշ արձակելով այսպես խռնեց իր սրբոսի մեջ.  
«Ո՛վ աստվածներ, մի մեճ հրբաշք եմ տեսնում ես իմ աչքերով.  
Նիզակս այստեղ գետնի վըրս ընկած է, իսկ մարդը չըկս,  
Որին ես տեգս ուղարկեցի՝ ըսպանելու նըպատակով:  
Ուրեմն էնիս՝սն էլ սիրելի եղել է մեճ աստվածներին,

**350** Միգնդեո ինքքս կարծում էի, թե նա իզուր է պարծենում:  
Թող որ գընա՛, բայց նա այլևս չի խիզախի չափվել ինձ հետ,  
Եվ թո՛ղ անչափ ուրախ լինի, որ փախչելով՝ մահից պըրծավ:  
Բայց ես հիմնս հորդորելով քաջամարտիկ դամաչեցոց՝  
Պետք է որ ա՛յլ տըրովների վըրս արդեն շահատակեմ»:

Ասաց, թըրավ շարքից ի շարք՝ հորդորելով ամեն մեկին.  
«Քա՛շ աքայանք, այսուհետև տըրովներից մի՛ յտասափեք,  
Այլ ամեն ոք թո՛ղ մեկի դեմ գտեմարտի՛ արիարար,  
Որովհետև որքան էլ քաջ՝ դըժվար է ինձ համար մեճակ  
Պատերազմել բոլորի դեմ. անմահ աստված Արե՛սն անգամ

**360** Եվ Աթենասն անկարող են աստվածային իրենց ուժով  
Բուռն այս կըովի կոկորդից ներս մըխվել մեճակ ու մարտընչել:  
Իսկ ինչ որ ես հընար ունեմ անել ուժով իմ սեփական,  
Չեոք ու ոտքով՝ մի վայրկյան իսկ չեմ դադարի կատարելուց,  
Այլ պիտ խըրվեմ գընդերի մեջ ու չեմ կարծում, թե որևէ  
Տըրոյացի ուրախ լինի իմ աշտեիմ հանդիպելուց»:

Այսպես ասաց ի խըրախույս, մյուս կողմից էլ Հեկտորն էր քաջ  
Հորդոր կարդում տըրոյացոց, հոխորտալով Աքիլլի դեմ.

«Տըրոյացի՛ դյուցազուհներ, մի՛ վախենաք Աքիլլեսից.  
Խոսքով ե՛ս էլ կըհոխորտամ ընդդեմ անմահ աստվածների,

**370** Բայց դըժվար է տեգով կրովել, գի ավելի՛ քաջ են նըրանք:  
Աքիլլե չի կարող բոլոր իր ասածներն ի գլուխ բերել,  
Մեկն ի կատար ածի եթե, բայց կըթողնի մյուսն անկատար:  
Պիտի ելնեմ ես նըրա դեմ, թեկուզ ձեոքերն լինեն բոցե,  
Լինեն բոցե նըրա ձեոքեր ն կողովը՝ հրաշեն երկար»:

Այսպես ասաց, ն տըրոյանք տեգերը վեր բարձրացնելով,  
Կորովն իրենց բերին ի մի ու գոռացին միահամուռ:

Եվ Ապոլլոնն արձաթաղել այսպես ասաց քաջ Հեկտորին.

«Հեկտո՛ր, երբեք չանցնես սուս Աքիլլի դեմ խիզախելու,

Այլ կաց այստեղ գրողերի մեջ, զի մի գուցե իր նիզակով  
380 Խոցի հետոյից և կամ մոտից սուտերահար անի նա քեզ»:

Այսպես սասց, և Հեկտորը մըրտավ նորից բազմութեան մեջ  
Սարսափահար աստվածաշին ճալհից ահեղ և պատգամից:  
Իսկ Աքիլլեսն ամբողջ ուժով որոտալով, առյուծաբար  
Տըրոյացոց մեջ խոչացավ և քսպանեց նախ Իփիտրին՝  
Ոտրինտեսի արի որդուն, բազում զորաց զորավարին,  
Որին ծընեց հավերժահարս Նեխսն՝ ահեղ Ոտրինտոսից  
Չյունապըսակ Տնոլոսի քստորոտում, Հիդեի մեջ:  
Առաջ էր նա գալիս, երբ որ Աքիլլեսը զարկեց տեգով  
Նըրս գըլխի ճիշտ մեջտեղին և երկու կես արավ իսկույն:  
390 Ընկավ թընդմամբ թավալգըլոր, և Աքիլլես քաջը պանծաց.  
«Ահա ընկա՛ծ էս, Ոտրինտյան, ահավորըդ դու մարդկանց մեջ.  
Մահըդ այստեղ, իսկ ծընունդըդ եղավ Գիգյան լըճի ափին,  
Որտեղ ունես դու արգավանդ անդաստաններ հայրենատուր՝  
Հիլլոսի մոտ ձըկնով հարուստ ու հորդահոս Հերմոսի շուրջ»:

Այսպես սասց, ու մուօն իջավ, ծածկեց աչքերն Իփիդիոնի,  
Որին ձիերն աքայեցոց՝ անիվների տակ ջարդեցին  
Առաջամարտ գրողերի մեջ: Աքիլլն ապա Դեմոլլոնի՝  
Պատերազմում քաջակորով Անտենորի արի որդու  
Քունքին զարկեց՝ պղընձածընոտ սաղավարտից, և չըտոկաց  
400 Սաղավարտը պղընձածույլ, այլ անցնելով տեգը ուժգին  
Փըշոեց ոսկորն ու գանգուղեղը խարխըլեց ամբողջապես  
Եվ ամենուն փըրեց գետին: Թողած նըրան այնտեղ ընկած՝  
Հիպպոդամի թիկնամեջքին զարկեց ապա իր նիզակով,  
Երբ նա կառքից ցած իջնելով՝ խուլս էր տալիս Աքիլլեսից:  
Հոգին տալիս գոռում էր նա այն ցուլի պես, որին երբ որ  
Քարջ են տալիս պատանիներն Հելիկոնյան արքայի շուրջ՝  
Բառաչում է, ու ցընծում է գետնադըրորդ արքան ահեղ:  
Մըրընչում էր այսպես և նա՝ հոգին մարմնից բաժանվելիս:  
Գընաց ապա նիզակահո՛ճ՝ դեպ Պոլիդորն աստվածատիպ,—  
410 Պրիամի ա՛յն որդին, որին հայրը ճակատ չէր ուղարկում,  
Որովհետև կըրտներն էր նա և սիրելին մյուսներից  
Եվ ոտքերի թեթևութեամբ գերազանցում էր բոլորին:—  
Եվ նա, ահա՛, իր ոտքերի շընորհքը ցույց տալու նամար  
Առաջ անցավ ջոկատներից, մինչև հոգին իր կորցըրեց:  
Վըրս վագեց Աքիլլն ա՛յն ժամ, երբ սուաջ էր արշավում նա,  
Եվ աշտեով զարկեց մեջքին, ուր կամարի ոսկըս երկու  
Ծարմանդներն են կոճկըվում պինդ և ուր զըրահն է կըրկնակի:

Սուր նիզակի սըլաքն ուժգին անցնելով այն՝ ելավ պորտից.  
Գոռաց, ընկավ ծընկան վըրա, և ամալը մութ ծածկեց նըրան,  
420 Ու ժողովեց ձեռքով՝ թափված իր աղիքներն ու փորոտին:  
Հեկտորը հենց տեսավ թե չէ իր հարսզատ Պոլիդորին՝  
Աղիքները ձեռքում բըռնած, գետնի վըրա թավալվելիս,  
Մառախուղը պատեց աչքերն ու սիրտն այլևս չըհամբերեց  
Հեռու մընալ և բոցի պես Աքիլլեսի վըրա վազեց:  
Աքիլլեսը այդ տեսնելով՝ ցոլաց դեպ նա և որոտաց.  
«Ահա՛ այն մարդն, որ իմ սըրտում խոր վերք բացեց անբուժելի,  
Ըսպանելով իմ սիրելուն. անուարակույս այլևս երկար  
2եանք խուսափի մենք իրարից պատերազմի ճանապարհին»:

Այսպես ասաց ու դեպ Հեկտորն ահեղաձայն աղաղակեց.  
430 «Մոտի՛կ արի, որպեսզի շո՛ւտ հասնես կյանքի քո վախճանին»:

Կորդակաճոճ Հեկտորն անվախ նըրան այսպես պատասխանեց.  
«Պեղիսածի՛ն, մի՛ աշխատիր ինձ խոսքերով ահաբեկել,  
Ինչպես փոքրիկ երեխայի, և ե՛ս կարող եմ որոտալ:  
Քաջ ես, գիտեմ, և ես քեզնից ետ եմ մընում իմ գորոթյամբ,  
Բայց մեծագոր աստվածների մոտ է պահված դեռևս այն,  
Թե քեզանից թեպեսև թույլ կարո՞ղ եմ ես հոգիդ առնել  
Իմ նիզակով, քանզի և իմ մըկունդը սուր սըլաք ունի»:

Ասաց, ճոճեց տեզն ու նետեց, բայց Աթենասն իր մի շընչով  
Թեքեց ու ետ դարձըրեց այն՝ վըսենապանձ Աքիլլեսից.  
440 Ել ահարկու տեզն Հեկտորի ոտքերի մոտ ընկավ գետին:  
Աքիլլեսը որոտալով վըրա վազեց եռանդալից  
Ըսպանելու համար նըրան, բայց Ապոլլոն իբրև աստված  
Խըլեց իսկույն Պրիամյանին ու պարուրեց թանձրր մեզով:  
Երեք անգամ վըրա վազեց աստվածային Աքիլլը շաջ,  
Եվ երեք հեղ նա միմիայն վիրավորեց մըշուշը մառ.  
Իսկ երբ չորրորդ անգամ ահեղ նա հարձակվեց աստվածորեն՝  
Ահագնագոչ աղաղակով այս թևալոր խոսքերն ասաց.  
«Այս անգա՛մ էլ փախար դու, շո՛ւն, մահից պըրծար, մինչդեռ այնպե՛ս  
Մոռացել էր օրհասըդ սև, բայց ազատեց քեզ Ապոլլոնն,  
450 Որին, անշուշտ, ուխտ ես անում, երբ տեզերի դեմ ես գալիս:  
Սակայն վերջըդ պիտի քերեմ քեզ այլ անգամ հանդիպելով,  
Աստվածներից մեկն էլ եթե ի՛նձ գորավիզ լինի մարտում.  
Իսկ ես հիմա գընամ այլոց ըսպանելու, ով ձեռքս ընկնի»:

Ասաց, զարկեց իր աշտեով Դըրիոփսի պարանոցին,  
Որ ոտքերի առաջն ընկավ. և թողնելով նըրան այնտեղ,



- Հըսկայագոր ու հաղթանդամ Փիլետորյան Դեմոքրսի  
 Ծունկը տեգով վիրավորեց ու կանգնեցրեց նըրան տելում,  
 Ապա սըրով գարկեց նըրան և հոգին դուրս հանեց մարմնից:  
 Հետո կառքից ցած գըլորեց նա Պիասի որդիներին՝
- 460 Լավոգնոսին, Դարդանոսին, հարձակվելով նըրանց վըրա.  
 Վիրավորեց մեկին տեգով և մյուսին սըրով՝ մոտից:  
 Եկավ Տրոփսն Ալաստորյան ու ծընկնեցին փարվեց նըրա,  
 Աղաչելով, որ խընայի ու չըսպանի Աքիլլն իրեն,  
 Մըլտածելով, որ նա գուցե գըթա որպես հասակակցի:  
 Խե՛նթ, չըգիտեր, որ չի կարող ի գութ շարժել Աքիլլեսին,  
 Զի նա երբեք չէր նեզասիրտ, այլ թիրտ էր խիստ և անողոք.  
 Եվ մինչ ուզում էր աղերսել՝ սուրը նըրա կողքը մըխվեց,  
 Լըարդը պատռեց և սևաթուր արյամբ լըցվեց գոգը նըրա,  
 Եվ խավարը ծածկեց աչքերն Ալաստորի թըշվատ որդու:
- 470 Հասավ Աքիլլն Մուլետոսի մի ականջին գարկեց տեգով,  
 Եվ սըլաքը պըղընձաշեշտ էլավ թափով մյուս ականջից:  
 Ապա սըրով իր մեծակոթ հարված տըվեց Ագենորի  
 Որդու գըլխին՝ Եքեկլոսին, ու տաքացավ սուրն արյունով,  
 Եվ ծիրանի մահը նըրա ծածկեց աչքերն անմիջապես:  
 Դեկալիոնին խոցեց հետո, նըրա բազկից, արմունկի մոտ.  
 Դեկալիոնը մընաց անշարժ, թըմրած թևով, մահն առաջին.  
 Աքիլլեսը սուրն իջեցրեց նըրա փափուկ պարանոցին,  
 Եվ գըլուխը գեղապաճույճ կորդակի հետ թըռավ հեռու  
 Ու դուրս ցայտեց հատման տեղից ողնաշարի ուղեղն իսկույն,
- 480 Եվ Դեկալիոնը անգըլուխ գետին փըրովեց հասակով մեկ:  
 Աքիլլեսը թողած նըրան Հոիգմոսի վըրա վազեց,  
 Պիրոսյանի, որ եկել էր դարարավետ Թըրակիայից.  
 Տեգը մըխեց մեջքը նըրա, պղինձը խըրվեց թոքերի մեջ,  
 Եվ նա կառքից ցած գըլորվեց. նըրա ծառան՝ Արեիթոսն  
 Ուզեց փախչել իր ձիերով, որ թիկունքին գամվեց աշտեն.  
 Կառքից ընկավ թավալգըրոր ու ձիերը խըրտընեցին:

Ինչպես որ հուրն աստվածառաք տարածվում է անեղորեն  
 Եվ լափում է լեռնահովտում թավ անտառներն, ու մոլեգին  
 Հողմի շընչով բոցերը բորբ մըրըրկվում են ամենուրեք,  
 490 Այդպես Աքիլլն աստվածորեն մոլեզանում էր տեգով չորս կողմ,  
 Խողխողում էր ձեռքն ընկնողին և հողը սև արյամբ ներկում:  
 Ինչպես որ մարդ լըծում է հաղթ, լայնաճակատ իր եզներին,  
 Որ ըսպիտակ գարին կալսեն հարթահատակ կալատեղում,  
 Ու բառաչող արջատների կընդակների տակ ճըզմվելով  
 Փըշըրվում են հասկերն իսկույն,— շըքեղալանջ Աքիլլեսի

Սալաւըմբակ ձիերն ալդայես զըրահ ու զեն և դիակներ  
Սըմբակակոխ անելով ողջ՝ թըռչում էին դէպի առաջ:  
Կառքի սրունին ամբողջապես ու շրջապատն արյուն էր ողջ,  
Որ ցալտում էր արշավասույր նրծուզների սըմբակներից  
500 Ու նէցերից անիվների. իսկ Աքիլը ձըգտում էր լոկ  
Փառք ու պանծանք վաստակելու, անպարտ ձեռքերն արնաթաթով:

# Ե Ր Վ Ք ա ա ն մ է կ է ր ո թ ղ

## ՄԱՐՏ ԳԵՏԻ ԾՈՒԲԶԸ

- Իսկ երբ փախչող տըրոյացիք կարկաչանոս ու հորդաւաստ  
Քսանթոս գետի հունը հասան, որին ծընեց Ջևար անմահ,  
Աքիլն այդտեղ նրանց երկու մասի բաժնած՝ քրշեց կեսին  
Դաշտի միջով դեպի քաղաք, որտեղից դեռ երեկ փախան  
Աքայեցիք քաջ Հեկտորի մոլուցքներից՝ խուճապահար:  
Փախչում էին նրանք այդպես ցրրիվ եկած, տագնապայից,  
հայց տարածեց նրանց սուսը Հերան մըշուշ մի թանձրամած,  
Եվ մյուս կեսը սարսափահար գրցեց իրեն արծաթահոս  
Խոր գետի մեջ մեծ ճողփյունով, ափքները շտապեցին,  
10 Եվ ափերը որոտացին ահագնաձայն արձագանքով:  
Ալիքներում այստեղ-այնտեղ ցրրված լողում էին նրանք  
Մորեխների նըման, որոնք դաշտում վառված կրրակներից  
Ազատվելու համար դեպի գետն էին դիմում մեծ բազմությամբ,  
Եվ երբ աճում է հորն անասնձ՝ ջուրն են թափվում խելակորույս,—  
Այդպես նրանք թե մարդ, թե ձի հալածվելով Աքիլլեսից՝  
Լըցվում էին հորձանահոս Քսանթոսի ջրերի մեջ:  
Իսկ Աքիլլեսն աստվածորեն, թողած տեզն իր գետի ափին,  
Մոշիների թփին հեռած, սուրը ձեռքին վազեց սուսը,  
Սաստիկ սպանդ ու կոտորած որոճալով իր մտքի մեջ:  
20 Հարվածում էր նա աջ ու ձախ, ու բարձրացավ հեծումն անեղ  
Սըրախողխող ընկածների, ու կարմըրեց գետն արյունով:  
Եվ ինչպես մեծ մի Դելիիկից մանրը ձըկներն փախըստական  
Ապաստանում են նավերի զոգում խաղաղ և սպահով,  
Որովհետև անմիջապես կուլ կըտա նա, ում որ թըռնի,  
Այսպես նաև տըրոյացիք փախչում մըտնում էին գետի  
Ալիքներում, ժայռերի տակ՝ սրաշտարակվելու Աքիլլեսից:  
Իսկ նա ձեռքերն ըսպանելուց արդեն հոգնած, գետի միջից  
Ընտրեց մեկ-մեկ տասներկու ժիր տըրոյացի պատանիներ,

Բրոնեց ողջ-ողջ քաղության գրեւ և ի վըրեժ Պատրոկլեսի.  
30 Գետի միջից քաշեց հանեց եղնորթների պես ահաբեկ  
Եվ ձեռքները ետև կապած ճարտարագործ փոկերով պիրկ,  
Որոնք ամուր կապված էին պարեգոտի վըրա նըրանց,  
Համձնեց նա իր ընկերներին, որ նախատորմը հասցընեճ.  
Իսկ նա նորից նետվեց սուաջ ծարավ արյան և ըսպանդի:

Եվ հանդիպեց նա Պրիամի որդիներից մեկին այնտեղ,  
Լիկայոնին, ա՛յն ժամանակ, երբ փախչում էր գետից ելած:  
Աքիլեսը մի ժամանակ նըրան իր հոր այգեստանում  
Բրոնել էր ու գերի տարել, հարձակվելով հանկարծակի  
Ուշ գիշերով նըրա վըրա, երբ ապրաստոր իր պողընձով  
40 Մոլաթուզի մորճ էր կըտրում, որ շըրջանակ շինի կառքին:  
Աքիլեսը անակընկալ նըրա վըրա հարձակվելով  
Բրոնեց նըրան և նախկերով տարավ դեպի բարեբընակ  
Լեմնոս կըղզին և վաճառեց. Յարոնյանը գընեց նըրան.  
Հետո նըրա հյուրը Էտիոն Իմբրոսացին փըրկանք տալով  
Փըրկեց նըրան և ողարկեց դեպ Արիստե գեղեցկաշեն,  
Որտեղից նա փախավ թաքուն, վերադարձավ հայրական տուն:  
Նա Լեմնոսից տուն դառնալով, տասնըմեկ օր ուրախ-գըրվարթ  
Իր պիրեյաց հետ անցկացրեց, տասներկուսին նըրան նորից  
Աստված դյուցազն Աքիլեսի ձեռքը մատնեց, որն այս անգամ

50 Լիկայոնին արդեն պիտի դեպի դըժոխք ողարկեր շուտ:  
Երբ արագոտն Աքիլը քաջ տեսավ նըրան գեներքից մերկ,  
Անսաղտվարտ և անգըրահ, առանց սըրի և նիզակի  
(Գըցեց բոլոր գեներքը նա, երբ քըրտնակոխ, գետից ելած  
Խույս էր տալիս, և ծընկները ծալվում էին հոգնությունից),  
Զարմանահար ու զայրացած ալապես խոսեց իր հոգու ճեւ.

«Ո՛վ աստվածներ, մի մեժ հըրաշք եմ տեսնում ես իմ աչքերով,  
Երևում է, որ այն բոլոր մեծահոգի տըրույացիք,  
Որոնց ես ինքս սպանեցի, պիտի ելնեն մութ անդունդից,  
Ինչպես սա է ողջ մընացել, ժանտ օրհասից ազատվելով,  
60 Օրին ինքքս մի ժամանակ վաճառեցի Լեմնոսի մեջ:  
Ծովն անհատակ, որն իր ծոցում կաշկանդում է շատ-շատերին,  
Զըկարեցավ բըրնել նըրան, և նա նորից ելավ եկավ:  
Բայց, օ՛ն, թող որ փորձի և արդ համը Պեյլան իմ նիզակի,  
Որ տեսնեմ ես և իմանամ, թե կըդառնա՞ այնտեղից էլ,  
Թե՞ կըբռնի հողը նըրան, որ բըրնում է քաշի՛ն անգամ»:

Այսպես, կանգնած միտք էր անում, երբ Լիկայոնն առաջ եկավ  
Կամեմալով փարվել նըրա սըրունքներին՝ սարսափահար,

- Որովհետև անասելի կերպով ուզում էր անկայման,  
 Որ ազատվեր դաժան մահից և օրհասից իր սևադեմ:
- 70 Եվ այն պահին, երբ արագոտն Աքիլը իր երկայնաատվեր  
 Տեզն արձակեց ճրբա վրբա, Լիկայոնը ծունկի եկավ  
 Որ դյուցազնի ոտքը ընկնի. ու մարդկային արյան ծարավ  
 Տեզը ուսից սլլանալով՝ գընաց թափով խրովեց գետին:  
 Լիկայոնը իր մեկ ձեռքով Աքիլեասի ծունկին փարած  
 Եվ մյուսով ամուր բրոնած սարսափելի ճիզակը մեծ,  
 Աղաչելով Աքիլեասին՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
 «Ծղնկներիդ եմ փարվել, ահա՛, գըթա վրբաս, ո՛վ Աքիլեա.  
 Ոտքըդ ընկած աղերսագին խընդրում եմ քեզ, դյուցաւընո՛ւնդ,  
 Հիշիր, որ նախ քեզ մոտ կերա Դեմետրեի պըտողն ընտիր,  
 80 Այն օր, երբ դու մեր գեղեցիկ այգում հանկարծ ինձ բըռնեցիր,  
 Տարաք հեռու ինձ իմ հորից, ընկերներից իմ հարազատ  
 Ու Լեմնոտում վաճառեցիր հարցար եզան արժողությամբ:  
 Այժմ երեք անգամ այդքան կըտամ ես քեզ իբրև փըրկանք:  
 Տասներկու օր հազիվ լինի, որ Իլիոն եմ վերադարձել,  
 Եվ ահա՛ բախտն անագորույն ինձ վերըստին քո ձեռք հանձնեց.  
 Երևի թե ստելի եմ եղել անբախտս Արսեմազդին,  
 Որ ինձ քո ձեռք մատնեց նորից. ինձ կարճակյաց ծընեց մայրըս՝  
 Լավիթոյեն, դուստրը Ալտես պեոթի, մըրցամարտի՛կ  
 Լեկեզների թագավորի, որ տիրում էր բարձրավանդակ  
 90 Պետասոսին՝ սուստաջուր Սատնիոսի արմըքներում:  
 Ծատերի հետ սըրա դըստերն էլ կին ստավ Պրիամ արքան,  
 Որը ծընեց երկու որդի, ու այսանում ես երկուսիս էլ:  
 Հետևակաց գընդում եղբորս՝ աստվածատիպ Պոլիդորին  
 Զարկիր տեգովդ սըլաքաշեշտ ու փըռեցիր գետնատարած,  
 Այժմ էլ ի՛նձ ես պատուհասում, և քո ձեռքից ազատվելու  
 Ես հույս չունեմ, քանզի նորից աստված ինձ քո ձեռքը մատնեց:  
 Բայց քեզ այլ բան պետք է ասեմ, և այն սըրտովդ ընդունիր դու,  
 Ինձ մի՛ ապանիր, քանի որ ես համահայր չեմ Հեկտորի հետ,  
 Որն ըսպանեց բարեհամբույր ու քաջարի բարեկամիդ»:
- 100 Այսպես խոսեց պաղատագին շըքեղ որդին Պրիամոսի,  
 Բայց նըրանից այս անողոք պատասխանին արժանացավ.  
 «Ի՞նչ փըրկանքի մասին ես դու խոսում, անմի՛տ, մի՛ խընդրիր գուր,  
 Զի քանի դեռ Պատրոկլեսը չէր գըրկըվել իր արևից,  
 Տըրոյացոց խընայելլ հանելի էր սըրտիս համար,  
 Եվ նըրանցից ես շատերին ողջ բըռնելով վաճառեցի:  
 Սակայն հիմա ոչ ոք ձեզնից թող ինձանից գուր չըմայցի  
 Եվ մանավանդ Պրիամոսի որդիներից ամբարտապան.  
 Մ՛տնե՛ք պիտի դուք բոլորդ էլ Տըրոյա՛յի պատերի տակ

Անագորույն իմ նիզակով, ում էլ աստված ձեռքս մատնի:  
110 Սիրելիդ իմ, մեռիր և դո՛ւ, այդքան ինչո՛ւ ես պաղատում,  
Մեռա՛վ ճակ Պատրկիկեք, քեզանից շատ ավելի լավ:  
Չե՛ս տեսնում դու, թե ինչ առույգ եմ, կորովի ու քարեկազմ,  
Քաջ հոր որդի և մեծարո աստվածուհի մորից ծրնված,  
Բայց և այնպես մահն անողոք ի՛նձ էլ պիտի հասնի շուտով,  
Լինի այդ բանն առափոխյան, կեսօրին թե երեկոյան.  
Երբ մի մարդ էլ բուն Արեսի ձեռքով խլլի և ի՛մ հոգին  
Տեգով և կամ իր ալեղից թրոսած նետով մի սայրասուրք»:

Այսպես ասաց և թույացան Լիկայոնի ծրնկներն իսկույն,  
Եվ թողնելով աշտեն՝ ճրատեց թևերը թույլ տաքածելով:  
120 Եվ Աքիլեք քաշելով վաղակափորն հեռանասուր՝  
Չարկեց ճրքա պարանոցի մոտ անրակին, ու երկասլորի  
Սուրը ամբողջ ներսը խրրվեց, և Լիկայոնն ընկավ տապաստ  
Բերանքսիվայր, թըրջելով հողն իր սև արյամբ առատահոս:  
Աքիլեք ճրքան իսկույն ոտքից բրոնած գետը նետեց  
Եվ խնդասիրտ խըրոխտալով՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
«Պառկի՛ր այդտեղ՝ ձրկներին կեր, որոնք անվախ պիտի լիզեն  
Վերքիդ արյունն ու հագեճան, և մայրդ քեզ մահին դքրած  
Չի՛ որբալու վըրսդ այլևս, այլ պիտ քըշի ու տանի քեզ  
Սկամանորուն հորձանասույզ դեպ լայնարձակ ծոցը ծովի.  
130 Եվ ձուկը լուրթ ալիքների տակից ընդոստ վեր ցատկելով  
Պիտ ըշտասպի Լիկայոնի քո ըսպիտակ ճարպն ուտելու:  
Օ՛ր, սատկեցե՛ք բոլորդ այսպես, մինչև սոճենք Իլիոնը սուրբ՝  
Դուք առջևիցս փախըստական, ես էտկից կոտորելով:  
Արծաթահոս և հորդառատ ձեր գետն էլ ձեզ չի օգնելու,  
Որին վաղուց գոհաբերում եք անհամար զըվարակներ.  
Ու կենդանի՝ ջուրն եք գըցում երիվարներ միասըմբակ:  
Բոլո՛րդ այսպես՝ դաժան մահով պիտի կորչեք, մինչև որ դուք  
Հատուցանեք Պատրկիկեքի մահվան վըրեժն և այն բոլոր  
Աքալեցոց մահվան համար, որոնց արագ ճապերի մոտ  
140 Ըսպանեցիք, երբ ես քեճով՝ բացակայում էի կրովից»:

Այսպես ասաց, մինչ բարկությանը լըցվելով Գետն ինքն իրեն մեջ,  
Միտք էր անում՝ ինչպե՛ս անձի ցասումը քաջ Աքիլեքի  
Եվ հեռացնի այդ դըժընդակ կոտորածը տըրովներից:  
Բայց Պելևսի որդին անեղ երկայնասուլեք տեօք ձեռքին  
Աստրուպենոսի վըրա վազեց դուրս կորզելով իր նիզակով  
Պեխասոնի որդու հոգին, որին ծընեց Աքսիոսը հորդ՝  
Պերիֆեից, որ աղջիկն էր Ակեասոնի, և որի հետ

Զուգավորվել էր դիցական Աքսիոս գետն առատաջուր:  
Աքիլլեսը վերս վազեց, Աստրոպեն դուրս գալով գետից,  
150 Ձեռքին երկու նիզակ բռնած՝ Պելիսյանի սուաջն էլավ.  
Եվ Քսանթոսն ուժ ներշնչեց Աստրոպետսին, հուժ սրբամըտած  
Այն քաջերի մահվան համար, որոնց Աքիլլն անգրթորեն  
Կոտորում էր ու տալիս էր առատահոս գետի բերան:  
Եվ երբ երկու ախոյաններն դեմ-հանդիման եկան իրար,  
Առաջինը աստվածային Աքիլլը քաջ ինքը խոսեց.  
«Այդ ո՛վ ես դու և ո՞րտեղից, աչդպես հանդուգն ու համարձակ,  
Վա՛լ այն հորը, որի որդին իմ հաղթ ուժին է հանդիպում»:

Պելեգոնի շլքեղ որդին նրան այսպես պատասխանեց.  
«Մեծանձրն դու Պելիսածին, ինչո՞ւ ես տոհմն իմ հարցնում.  
160 Ես արգավանդ և խոտավետ Պեոնիայից եմ նեոավոր  
Եվ բերել եմ ինձ հետ քազում երկայնատեգ քաջ պեոներ,  
Եվ տասնըմեկ օր է, ինչ ես Իլիոնումն եմ իմ քաջերով:  
Իսկ իմ զարմը սերել է սուրբ Աքսիոսից առատահոս,  
Որ իր ջրերն ամենագեղ՝ Երկրի վրա է ծավալում,  
Նա՛ ծրնեց քաջ Պելեգոնին նիզակավոր, ասում են, թե  
Պելեգոնն էլ ի՛նձ է ծրնել, քայց օ՛ն, կրուկենք, քաջ Աքիլլես»:

Այսպես ասաց ըսպանալից, և բարձրացրեց Աքիլլը քաջ  
Պելլան հացին, Աստրոպետն էլ՝ նիզակները իր կրկնակի,  
Քանգի երկու ձեռքով էլ նա վարժ էր նիզակ նետելու մեջ:  
170 Մեկով զարկեց Աքիլլեսի հաստ ասպարին, քայց չընկոյթեց  
Վահանը հաղթ, աստվածատուր ոսկին նրան արգելք եղավ.  
Մյուսով զարկեց աջ արմունկին թեթևակի, մորթը քերծեց,  
Ցայտեցնելով արյունը սև, ու մարդկային մըսից անհագ  
Սըլաքն ուժգին անցավ գընաց և ապարդյուն խըրվեց գետին:  
Երկբորոզը Աքիլլը իր սըրաթորիչ Պելլան հացին  
Աստրոպետսի վրա նետեց ըսպանելու մոլեգնությամբ,  
Բայց վըրիպեց նըպատակից ու դիպավ բարձր գետափին,  
Եվ կիսով չափ ցրցված հողում՝ օրորվում էր հուժկու հացին:  
Պելլանն այնժամ քաշեց ազդրից վաղակալորն իր վիթխարի  
180 Ու հարձակվեց նրա վրա, իսկ նա նիզակն Աքիլլեսյան  
Անկարող էր դարևանդից կորզել՝ ջանքին իր հակառակ:  
Երեք անգամ ցընցեց հացին, աշխատելով դուրս հանել այն,  
Երեք անգամն էլ չըզորեց, և չորբորդի վըրա միայն  
Ուզեց ծըռել ու մեջտեղից կտորել մըկունդն Էակիոյան,  
Բայց Աքիլլեսն անապարեց առնել սրբով նրա հոգին:  
Սուրը պորտից փորը խըրեց և աղիքներն դուրս թափեց ողջ.

Եվ խավարը ծածկեց նրա աչքերը մինչ տըճքում էր նա:  
Աքիլլեսը չորեք կրծքին ու զինագերծ արավ նրան,  
Եվ հաղթողի հրպարտությանը այսպես խոսեց խորոխտապանձ.

190 «Պսոկի՛ր այդպես, դըժվար է քեզ կրոնիվ մըղել ամենագոր  
Արամագրի քաջ որդոց հետ, թեկուզ լինես Գետի ծընունդ:  
Ասում էիք, թե հորդահոս Գետից ես դու ծագում անել,  
Իսկ ես հրգոր Ջևի գարմից լինելու մեծ պատիվն ունեմ:  
Ծընունդ տրվեց ինձ քազմագունդ միրմիդոնաց քաջ թագավոր  
Էակոսյան Պեյլաը մեծ, իսկ Էակոսն էր Գիոսի՛ց.  
Եվ որքան որ վեհ է Ջևը քան ծովամուտ Գետերը հորդ,  
Այնքան և գարմն Արամագոյան վեր է ու վեհ Գետի գարմից:  
Մոտ ես անա դու մեծ Գետին, թե կարող է, թող օգնի քեզ,  
Բայց Զրվանյան Արամագրի հետ մըրցակից չըկա կըովում.

200 2ի՛ կարող իսկ Աքելոյոս արքան նրան հավասարվել,  
Եվ ոչ էլ ոժն անեղագույն անդընդախոր Ծվկիանոսի,  
Որից բոլոր գետերն են հորդ և աշխարհի ծովերն ամեն,  
Աղբյուրները բոլոր-բոլոր, և ջրհորները խորախոր,—  
Սակայն նա՛ էլ է սարսափում հրգոր Ջևի կայծակներից,  
Որոտներից, երբ որ գոռա բարձր երկնից և ամպրոպի»:

Այսպես ասաց, դարևանդից քաշեց հանեց նիզակն իր նա,  
Թողեց այնտեղ ախոյանի մարմինը իր հոգուց թափուր՝  
Ավագների վըրա փրոված,— ուր թըրջում էր ջուրը նըրան,  
Եվ չորս բոլոր օձամըկներն ու այլ ձըկներ ետուզետով

210 Կըրծում էին ցըցըտելով երկկամներն ճարպակալած,—  
Եվ խոչացավ Աքիլլն ինքը պեռնների վըրա հեծչալ,  
Որ հորձանուտ Գետի ափից փախչում էին անաբեկված,  
Երբ որ տեսան ամենամեծ իրենց քաջին անեղ մարտուն  
Պեյխյանի հրգոր քազկից դիաթավալ գետին փրոված:  
Թերսիլոքին ըսպանեց նա, Աստիպլուսին և Միդոնին,  
Մճեսոսին, Թրասիոսին, Էնիոսին, Ոփելեստին:  
Եվ ուրիշ շատ պեռնների հոգին կտոներ Աքիլլն այնտեղ,  
Եթե չառներ սըրտմըտությանը Սկամանդրոսը մարդու դեմը  
Եվ իր խորքից մըրընչալով Պեյխածնի հետ չըխտեր.

220 «Ուժեղ ես դու, ո՛վ Աքիլլես, ոճիրները գերմարդկային,  
Քանզի իրենք աստվածներն են քեզ գորավիզ. ասկայն էթե  
Ջևը հրգոր թույլ տրվեց քեզ բընաջընջել տըրոյացոց,  
Գեթ ինձնից դուրս, դաշտում գործիր ոճիրները սարսափելի:  
Իմ ցանկազի ջըրերն արդեն ճըղփում են լի դիակներով.  
Եվ ես այլևս անկարող եմ հոսել դեպ ծով աստվածային,



Արգելակված մեռելներով, իսկ դու անդով ջարդ ես տալիս.  
Վերջ տուր, ո՛վ քաջ, կոտորածիդ, զի սարսափը ստել է ինձ»:

Եվ արագտուն Աքիլն այսպես պատասխանեց հուզված գետին.  
«Լինի՛, ինչպես դու ես սառն, դյուցաարևունդ Սկամանդրե,  
230 Բայց ես երբեք չեմ դադարի տըրոյացոց կոտորելուց,  
Մի՞նչն նըրանց ես չըփակեմ ոստանի մեջ ամեն կողմից.  
Ու դուրս գալով Հեկտորի դեմ՝ ես չըփորձեմ և չիմանամ,  
Թե՛ նա՞ պիտի ըսպանի ինձ, թե՛ ե՛ս նըրա հոգին քաղեմ»:

Այսպես սասց և խոյացավ դեպի փախչող տըրոյացիք,  
Այն ժամանակ հորձանահոս գետը դարձավ Ապոլլոնին.  
«Ավա՛դ, որդի՛դ Արամազդի, արծաթաղեղ ո՛վ Ապոլլոն,  
Չնախ պատվերն անտես առար, չե՞ որ նա քեզ հըրամայեց՝  
Պաշտպան լինել տըրոյացոց և գորավիզ մինչև մըտնի  
Արևն ի մայր, ու մութն իջնի դաշտի վըրա արգասաբեր»:

240 Այսպես սասց Սկամանդրոսն, իսկ քաջատեղ Աքիլն արագ  
Գարևաձեղից ամբողջ թափով գետը ցատկեց աստվածորեն.  
Պըղտորվեց Գետն ալիասաստ և ալիքներն ուռեցնելով  
Աքիլեսի ձեռքով մեռած տըրոյացոց դիերն ամեն  
Քըշեց ու դուրս հանեց ցամաք, մըռընչալով ցույն նըման,  
Իսկ ողջերին փըրկեց նա իր աստվածային ջըրերի մեջ  
Թաքցնելով նըրանց իր խոր ու հորձանոտ պըտույտներում:  
Կուտակվեցին անելասաստ ալիքները Աքիլի շուրջ  
Եվ ասպարհն զարնըվելով հըրում էին, քըշում նըրան.  
Եվ որպեսզի չըգըրորվի, բըռնեց նա հաստ մի կընձեռնուց,  
250 Որ դուրս գալով արմատախիլ՝ փուլ բերեց ողջ դարափն իր հետ  
Եվ թանձրախիտ իր ճյուղերով ջըրի հոսանքն արգելակեց,  
Ու մի կամուրջ կազմեց ինքնին տարածվելով գետի մեջտեղ:  
Իսկ Աքիլեսն անարեկված դուրս նետվելով ալիքներից,  
Դաշտի միջով սուրաց առաջ արագավազ իր հոռքերով:  
Բալջ աստվածը չըմեղմացավ, ալիքների վըրալով սև  
Վըրա վազեց, որ կաշկանդի աստվածային Աքիլեսին  
Եվ ազատի տըրոյացոց սարսափելի կոտորածից:  
Իսկ Պելիսյանը ոստյունով տեգընկեցի չափով ցատկեց  
Սուր պըլացքով սևափետուր որսկան արծվի, որը թուր  
260 Թըռչունների մեջ ամենեն ուժեղ է և սըրաթըռիչ:  
Սուրաջ աղբյուս. պըղիճն անեղ շտուպում էր լանջքի վըրա.  
Տասկոտ գետից փախչում էր նա խոտորընթաց և սոխշել,  
Իսկ գետն ամեղ մըռընչյունով հալածում էր ետևն ընկած:

Ինչպես, երբ մարդ, որ կորիներ քաց անելով, աղբյուրների  
Ջուրը դեպի իր տունները ու պարտեզներն է շտա տալիս,  
Բահր ձեռքին կոտորում է արգելքները ու դուրս թափում,  
Եվ իր ճամփին մանրը քարեր գլորելով ընթացքի հետ  
Ջուրը արագ խոխոջունով զանոթափից ցած է հոսում,  
Իրեն տանող առաջնորդից անգամ առաջ ընթանալով,—

270 Այսպես անվերջ ափքները Աքիլեսին էին հասնում,  
Չընկալած որ արագաշարժ էր Պեխլյանն ու քաջարշավ,  
Որովհետև աստվածները մեծագոր են քան թե մարդիկ:  
Ամեն անգամ, երբ արագուն Աքիլեսը ճիգ էր թափում  
Դիմագրավել, որ իմանա, թե աստվածներն երկնաքրճակ  
Դավ են լարել բոլորն իր դեմ՝ հալածելու համար իրեն,  
Նույնքան Ջևից բխող գետի կոհակը մեծ հուժկու թափով  
Հարվածում էր նրա ուսին, և նա աղբյուրն դուրս էր թըռչում  
Ու դեպ դարասին էր վազ տալիս. իսկ սրբընթաց գետն հետամուտ՝  
Հոգնեցնում էր նրա ծրնկներն ու ընթացքը շեղում անվերջ

280 Եվ տրդվախառն հողը նրա կրրունկների տակից գերվում:  
Եվ Աքիլեսն աչքերն ուղղած լայն երկընթին այսպես ասաց.

«Հա՛յր Արամազդ, մի՞թե արդյոք աստվածներից մեկը չըկա,  
Որ թըշվախս վըրա գըթա և ազատի ինձ այս գետից,  
Որից հետո պատրաստ եմ ես տանել ինչ էլ որ պատահի:  
Ոչ մի ուրիշ երկնաքրճակ վընասակար չէ ինձ այնքան,  
Ինչպես որ իմ մայրը, որ ինձ սուտ խոսքերով մոլորեցրեց.  
Ասում էր նա, թե զինավառ տրրոյացոց պարըսպի տակ  
Պիտ ընկնեի արագաթև սրլաքներով Ապոլլոնի:  
Երանի՜ թե ինձ քապանած լիներ ինքը Հեկտորը քաջ,

290 Գեթ կըսպաներ քաջը քաջին և զենքերը կըկողոպտեր:  
Այնինչ հիմա խըղճուկ մահով պիտի մեռնեմ անփառունակ  
Այս մեծ գետի մեջ չորահեղձ, մի խոզաբաժ տըղալի պես,  
Որ հեղեղից անցկենալիս խեղդըվում է քամուց քըշված»:

Այսպես ասաց, և Պոսեյդոնն ու Աթենասը մարդկային  
Կերպարանքով եկան իսկույն ու կանգնեցին նրա առջև  
Եվ քըռնելով նրա ձեռքից՝ սրբոսպընդիչ խոսքեր ասին:  
Եվ առաջինն այսպես խոսեց Պոսեյդոնը երկրադպրոդ.

«Պեյա՛նըդ քաջ, մի՛ խըռովիր և ոչընչից մի՛ վայսենար,  
Քանզի անա՛ Ջևի կամքով աստվածներըս մեռք երկուսով՝

300 Ես և Պալլաս Աթենասը սատար ենք քեզ և գորավիզ:  
Ծակատագրից չի սահմանված, որ դու պարտվես Գետի կողմից.  
Պիտի տեսնես դու քո աչքով, որ նա շուտով կըհանդարտի:  
Բայց ուզում ենք քեզ խելացի մի խորհուրդ տալ, եթե լըսես

Եվ մեզ անաս. ձեռք մի քաշիր պատերազմից բոլորովին,  
Մինչև բոլոր տըրոյացոց ահեղ սըրից քո մազապուրծ՝  
Իլիոնի շըքեղապանձ պարիսպներից ներս չըփակես,  
Որից հետո դու Հեկտորին ըսպանելով՝ հաղթանակած  
Վերադարձիր դեպի նավերն. այս լիառքն ենք մենք ուզում տալ քեզ»:

Այսպես սահն և գընացին միանայու անմահներին,  
310 Իսկ Աքիլլեսն աստվածներից սըրտապընդված դաշտը գընաց.  
Ողողված էր ծայրեհիծայր դաշտը ջըրի հոսանքներով,  
Ուր շատ շըքեղ գեներ էին ջարդված ստույգ կըտրիճների,  
Եվ դիակներ էին ծըփում. ալիքները հասնում էին  
Մինչև ծընկներն Աքիլլեսի. վագում էր նա հոսանքի դեմ  
Աթենասից կորով առած, և չարգելեց Գետը նըրան:  
Բայց Սկամանորը զայրացած արյունառուշտ Աքիլլի դեմ  
Չէր դադարում իր մոլուցքից, այլ ավելի ունեցնելով  
Ալիքներն իր մեծաշառաչ՝ ձայն էր տալիս Սիմոլիսին.

«Սիրելի՛դ իմ, մենք այդ մարդու ուժը պետք է սանձահարենք,

320 Թե չէ շուտով նա կըքանդի Պրիամոսի քաղաքը պերճ,  
Որովհետև տըրոյացիք նըրան անզոր են դիմադրել:  
Հասի՛ր դու շուտ ինձ օգնության, հոսանքներըդ լըցրո՛ւ բոլոր  
Աղբյուրներով և հա՛ն ոտքի վըտակները քո համորեն,  
Կուտակի՛ր հաղթ կոհակներըդ և ահավոր թոմբուներով  
Քըշիր քարերն ու կոճղերը, որ կաշկանդենք այդ վայրագին,  
Ջի ուր որ է աստվածորեն հաղթություն է տանելու նա:  
Բայց ասում են, չեն օգնելու նըրան ո՛չ գետն աստվածային,  
Ոչ էլ ուժն ու գեները պերճ, որ սուզվելու են անհատակ  
Խորքը ջըրի տըղմաթաթավ, և ես նըրան ամբողջովին

330 Թաղեմ պիտի ավազներում, նըրա չորս դին լըցնեմ խիճով  
Եվ այնպիսի հաստ շաղախով պիտի նըրան ծեփեմ անհետ,  
Որ աքայանք ոսկորները նըրա գըտնել չըկարենան:  
Գերեզմանը նըրա պետք է լինի ջըրում, հողակույտի  
Չարծանանա, որ աքայանք նըրա թաղման հանդեսն անեն»:

Ասաց, խուժեց Աքիլլեսի վըրա վայրագ մըղընչունով,  
Փըրփրակուտակ ալիքներով, դիակներով արյունազանգ:  
Եվ կոհակները կապուտակ՝ Արամազդից քըխած գետի  
Ելնում էին լեռնակարկառ, որ կըլանեն Պելիսյանին:  
Ծիչ արձակեց Հերան այ՛ժամ, վախենալով քաջի համար,

340 Թե մի գուցե ալեկոճյալ գետը նըրան առնի տանի,  
Եվ սիրելի որդուն դիմեց՝ Հեփեստոսին այս խոսքերով.

«Վեր կաց իսկույն, որդյակ իմ կալ, զի այնպես ենք նախարում մենք,  
Որ Քաանթուն հորձանահոս քո դեմ է այս մըրցամարտում.

Փութա՝ քաջին դու օգնության և ցույց տուր քո բոցերն անհուն:  
 Իսկ ես ինքքս ըշտապում եմ Ձեփյուտի և Հարափի մոտ,  
 Որ շուտափույթ ծովից ահեղ մլըրրիկ հաճեմ անհրճարհին,  
 Որ հըրդենը բոցաբորբոք լափի, այրի տըրոյացոց  
 Կառափներն ու գեներն ամեն. իսկ դու այրիր Քասնթոսի  
 Ափի ծառերն ու կըրակըդ, ուղղիր նըրա դեմ շեշտակի:  
 350 Եվ թող Գետը քեզ չարգելի քաղցըր խոսքով և կամ սաստով,  
 Մի՛ դադարիր հըրկիզելուց, մինչև որ ես քեզ ձայն չըտամ.  
 Այն ժամանակ միայն մարիր դու քո հուրը անշիջանուտ»:

Այսպես սասց, ու Հեփեստոսն աստվածասաստ հուրն իր սըփոնց:  
 Կըրակն ամբողջ դաշտը բըռնած՝ լափում, այրում էր բովանդակ  
 Դիակներն անթիվ և անհամար, որ Աքիլլեսն էր ըսպանել:  
 Այիք-այիք ջուրը քաշվեց, չորացավ դաշտն ամբողջովին,  
 Եվ ինչպես որ Հյուսիսակն է ցամաքեցնում աշնանային  
 Արտերը դեռ նոր ռոռաված՝ ի ցընծություն հողագործի,  
 Հեփեստն այդպես չորացրեց դաշտն ու դիակներն այրեց բոլոր,  
 360 Այսու դեպի Գետը դարձրեց նա իր բոցերն ամենակեզ:  
 Վառվում էին մոշիները, կընձիները և ուռիներն,  
 Ինչպես նաև ներգյումները, և կընյունը վաղայթառամ,  
 Որոնք վըճիտ գետի ափին բուսել էին առատորեն:  
 Օձաձըկներն և այլ տեսակ ձըկներն, որոնք ջըրերի մեջ  
 Մինչ այդ խաղում էին աշխույժ, կայտոում ուրախ այս ու այնտեղ,  
 Տանջվում էին այժմ հըմուտ Հեփեստոսի ահեղ շընչից.  
 Եվ Գետն ամբողջ կըրակ առած՝ այսպես սասց Հեփեստոսին.  
 «Ձըկա՛ ոչ ոք աստվածներից, որ դեմ դընի քեզ, Հեփեստո՛ս,  
 Եվ ես անգոր եմ կըրվելու բոցերիդ հետ անշիջանուտ:  
 370 Դադարեցրու ռիպդ, և թող դյուցազն Աքիլլն այսօրնեք  
 Քաղաքից իսկ քըշի հանի տըրոյացոց, եթե այդ է  
 Կամենում նա, իմ ի՛նչ գործն է նըրանց կըրվին միջամըտել»:

Ասաց Գետը հըրատոշոր. ետում էին ջըրերը ջինջ  
 Կըրակ կըտրած, ինչպես ուժեղ բոցի վըրա դըրված կաթսան,  
 Որտեղ հապվող ու ճենճերվող գիրսպարսը ճարպը խոզի  
 Գուրս է տալիս պըղպըջալով, երբ տակը չոր փայտ են դընում:  
 Այսպես վառվում էին նըրա ալիքները փըրփըրակուտակ,  
 Ետում էր ջուրն ու չէր հոսում, կանգ էր առել տագնապահար  
 Ու տանջվում էր հընարամիտ Հեփեստոսի գորությունից:  
 380 Եվ Գետն այնժամ աղերսագին սասց Հերա աստվածուհուն.  
 «Հերա՛, ինչո՛ւ որդիդ թողած մյուս բոլոր աստվածներից,  
 Եկավ միայն ի՛նձ տանջելու, մի՛թե քեզ մոտ ես ավելի

Մեղավոր եմ, քան մյուս բոլոր պաշտպանները տրորյացոց:  
Կրճանդարտեմ ես, ո՛վ Հերա, եթե այդ ես հրրամայում,  
Բայց թող Հեփեստն էլ դադարի. երբվում եմ ես մինչև անգամ  
Չընեռացնել տրորվներից չարաբաստիկ ժամը երբեք,  
Թեկուզ Տրոյան հրդեհակեզ վատվի իսպառ և մոխրանա  
Աբալեցոց արիասիրտ որդիների թեժ կրրակով»:

1. ըսելով այս խոսքերն Հերա աստվածուհին անմիջապես
- 390 Ձայն արձակեց իր սիրելի որդուն՝ հըզոր Հեփեստոսին.  
«Հանգրստացիր, Հեփեստ, որդյակ իմ գերափառ, բավական է  
Մահկանացոց համար այդքան տանջել անմահ աստվածներին»:  
Այսպես ասաց, ու Հեփեստոսն աստվածասատ հորն իր մարմ.ց.  
Ալիքները ետ քաշվեցին գեղեցկամիտ ափերից ներս.  
Սկամանդրոսը հանդարտվեց, և Հեփեստոսն հանգրստացավ.  
Հերան թեպետև զայրացած, բայց վերջ տրվեց նրանց կրովին:  
Բայց մյուս կողմից անմահների մեջ տակալի կրոխի ծագեց,  
Երկպառակված դաժանորեն ընդհարվեցին իրարու հետ:  
Մոնչաց Երկիրը լայնարձակ, շեփոր հընչեց Երկինքը մեծ,
- 400 Որի շոնհոն հասավ մինչև Ոլիմպոսը՝ Արամագոհին:  
Ուրախացավ նա իր սքրտում և ծիծաղեց, երբ որ տեսավ  
Աստվածներին երկպառակված, իրարու հետ ընդհարվելիս:  
Նրբանք երկար չըմընացին մեկ-մյուսից հեռու կանգնած.  
Առաջինը մարտն ըսկըսեց Արեսը բունն ասպարախաղ  
Եվ ճոճելով պղղընձաձույլ նիզակն իր նա,՝ հույժ գալլացած՝  
Աթենասի վրա վագեց նախատալից այս խոսքերով.  
«Ինչո՞ւ դարձյալ դու, շընանա՛նն, վե՛հ ու կրոխի՛ ես բորբոքում  
Աստվածների միջև այդպես ահեղասատ հանդըզնությամբ:  
Մոռացե՛ր ես, որ Տիդյանին գըրգըռեցիր ինձ խոցելու
- 410 Եվ առնելով ինքըդ մի տեզ փալլակնացալտ, բոլորի մոտ  
Ջարկեցիր ինձ և իմ չըքնաղ մարմինը դու բզկըսեցիր:  
Հույս ունեմ, որ կըհատոցես չարիքներիդ համար հիմա»:

Ասաց, զարկեց աստվածուհու ահեղասիրաշ կոտ ասպարին,  
Որին հաղթել անկարող են նույնիսկ Ջևսի շանթերն ահեղ:  
Ջարկեց Արեսն արյունատուշտ երկպարսուն իր նիզակով,  
Իսկ Աթենասն ընկըրկելով հըզոր ձեռքով ստավ մի քար,—  
Հընկալական, գորշ ու դըժնե, ընկած դաշտում, դըրված այդտեղ  
Վաղընչական մարդկանց կողմից իբր արտերի սահմանանիշ,—  
Եվ Արեսի պարանոցին զարկեց ուղիղ և ուժն առավ:

420 Ընկավ Արեսն ու գըրավեց յոթ արտավար տարածություն,  
Փոշեթաթավ եղան մագերն, ու շաչեցին գեղքերն իր շուրջ:

Ժըպտաց Պալլասն ու թևավոր այս խոսքերը ուղղեց նրան.

«Անմիտ, դեռևս չե՛ս հասկացել, թե քեզանից շատ ավելի  
Հըզոր եմ ես, որ հանդրգնում ես չափվելու ուժովդ ինձ հետ:  
Գընա՛ հինա և այդպիսով քավիր քո մոր անեծքը դու,  
Որ քեզ վըրա բարկանալով՝ չարիքներ է պատրաստում քեզ,  
Նըրա համար, որ թողնելով աքալեցոց անօգնական,  
Ելել ես դու ամբարտավան տրրոյացոց ես պաշտպանում»:

Այս ասելով նա շուռ տըվեց իր աչքերը արփաբոխ.

430 Եվ Աստղիկը՝ դուստրը Ջևսի բուն Արեսի ձեռքից բըռնած  
Տարավ նրան, մինչ հետմ էր, ուշքը հագիվ եկած վըրան:  
Այդ որ տեսավ լուսածըլի Հերան ցասկոտ ու տագնապած  
Իսկույն ևեթ այս սըրաթն խոսքերն ուղղեց Աթենասին.

«Ավա՛ղ, դո՛ւստրը դու մեծահաղթ ասպարակիր Արամագդի,  
Երևանաննն այդ նորի՛ց դուրս է հանում անեղ պատերազմից  
Մարտախոշոշ բուն Արեսին. օ՛ն, ետևից հասիր շուտով»:

Աչպես ասաց, և Աթենասն հետապընդեց ուրախամիտ,  
Եվ հասնելով նա Աստղիկին, ծանըր ձեռքը բըռունցք արած՝  
Ջարկեց կըրծքին, ու թուլացան նրա ծընկներն ու սիրտն իսկույն:

440 Ու երկուսով ընկան այդտեղ բյուրաբեղուն երկրի վըրա,  
Եվ Աթենասը պարծանքով այս սըրաթն խոսքերն ասաց.

«Եթե այսպես լինեին ողջ պաշտպանները տրրոյացոց  
Երբ զինագզեստ արգիացոց ընդդեմ կըովի ելնեն նրանք,  
Այնքան խիզախ և սըրտապինդ, ինչպես Աստղիկն այս թուլամորթ,  
Որ Արեսին աստաբելու համար բազկիս դիմացն ելավ,  
Վաղուց ի վեր պատերազմը վերջը քերած կըլինեինք  
Եվ Պրիամոս թագավորի քաղաքը շեն՝ վաղուց քանդած»:

Աթենասի խոսքի վըրա ժըպտաց Հերա աստվածուհին.  
Բայց Պոսեյդոնը դառնալով Ապոլլոնին՝ ասաց նրան.

450 «Ինչո՛ւ եմք մենք հեռու կանգնել, երբ ուրիշներն ըսկըսեցին.

Ամոթ է մեզ, եթե առանց պատերազմի մեջ մըտնելու  
Վերադառնանք Ոլիմպ՝ Ջևսի ասպարանքը պըղընձակերտ:  
Դե՛ ըսկըսիր, որովհետև դու տարիքով փոքր ես ինձնից.  
Ես քեզանից շուռ եմ ծընվել և ավելի շատ բան գիտեմ:  
Մոռացե՛ղ ես միթե, անխե՛լք, ու չե՛ս հիշում, թե ինչպիսի  
Չարչարանքներ կըրեցինք մենք, ի՛նչ մեծ վըշտեր Իլիոնի շուրջ,  
Աստվածներից երբ միայն մենք Արամագդի կողմից եկանք,  
Որ ծառայենք մի ողջ տարի գոռոզամիտ Լավմեդոնին,  
Սակարկեցինք, և տիրաբար որոտում էր նա մեզ վըրա:

- 460 Տըրոյացոց քաղաքի շուրջ եւ շինեցի պարիսպ մի լայն  
 Եվ հաստապինդ, որ անտիկ լինի ուտանն ու անվըտանգ.  
 Իսկ դու՛ դանդաղ և կորեղջյուր եզներն էիր արածացնում  
 Բարձրավանդակ Իդա լեռան արոտառատ հովիտներում:  
 Եվ ցընծավետ ժամերը երբ հատուցումի օրը քերին,  
 Այն ժամանակ ամբարտավան Լավմեդոնը պսլմանազանց՝  
 Մեզ մեր վարձից զըրկեց իսպառ ու ետ ճամփեց ըսպառնալով:  
 Քեզ ըսպառնաց՝ կապկապելով քո ձեռն ու ոտ, տանել հեռու  
 Եվ վաճառել իբրև գերի տարաբընակ կըղզիներում.  
 Ըսպառնում էր, թե երկուսիս ականջներն էլ նս կըկըտորի:
- 470 Եվ մե՞նք թողինք ու ետ դարձանք քինախընդիր սրտամըտությամբ,  
 Խիստ վըրդովված վարձի համար, որ խոստացավ և չըտըվեց:  
 Ա՛յդ է, որ քեզ դըրդում է արդ՝ օգնելու այդ ժողովրդին  
 Ու մեզ հետ չես միանում դու, որ ուխտադրուժ տրոյացիք  
 Ջարդվեն իսպառ իրե՛նց պարկեշտ հարսներով ու մանուկներով»:

Եվ հեռաձիգ Ապոլլոնը նըրան այսպես պատասխանեց.  
 «Երկրադըղո՛րդ, կարող էիր խենթ կոչել ինձ, եթե քեզ հետ  
 Ընդհարվելի թըշվառական մահկանացոց պատճառով ես,  
 Որոնք նըման տերևների անում են մերթ ատուգությամբ  
 Երկրի պըտուղը ուտելով ու մերթ հյուծվում, մեռնում իսպառ:  
 480 Պատերազմից հեռու քաշվե՛նք, թող որ կըովեն մահկանացուք»:  
 Այսպես սասց Ապոլլոնը ու ետ քաշվեց վախենալով  
 Ձեռք բարձրացնել նըրա վըրա ու կըովել իր հորեղբոր հետ:  
 Բայց թագուհին գազանների՝ Արտեմիսը անտառասուն  
 Հանդիմանեց իր եղբորը՝ Ապոլլոնին այս խոսքերով.  
 «Փախչո՛ւմ ես դու, ո՛վ հեռաձիգ, պատկասելով Պոսեյդոնից  
 Ու թողնելով, որ նս այսպես առանց կըովի փառք վաստակի:  
 Անմի՛տ, ինչո՛ւ էլ իզուր տեղ աղեղ ես դու կըրում ուսիդ.  
 Էլ չըլըսեմ այսուհետև, որ հոխորտաս հորըդ տան մեջ,  
 Ինչպես հաճախ պարծեցել ես աստվածների կանառում դու,  
 490 Թե կարող ես երկրադըղորդ Պոսեյդոնի դեմ մարտընչել»:

Այսպես սասց, բայց Ապոլլոնն ամենևին ձայն չըհանեց,  
 Իսկ ամուսինն Արամազդի՝ աչեղ Հերան խիստ բարկացավ  
 Եվ այս սաստող, նախատալից խոսքերն ուղղեց Նետազբուսին.  
 «Իսկ ինչպե՞ս ես դու հանդըզնում էլնել իմ դեմ, շո՛ւն անամոթ,  
 Անկարող ես տոկալ դու ինձ, թեկուզ լինես աղեղնավոր:  
 Արամազդը քեզ միմիայն մահկանացու կանանց վըրա  
 Առյուծ դըրեց, որ մեռցընես քո աղեղով՝ ում կամենաս,  
 Քեզ համար հեշտ է լեռներում նետահարել գազանների՝

Եղնիկ, երե, քան թե քեզնից ուժեղների դեմ մարտընչել.  
500 Սակայն եթե ուզում ես դու մըրցել ինձ հետ, առաջ արի,  
Որ հասկանաս, թե քեզանից ուժով որքան բարձր եմ ես»:

Այսպես ասաց ու ձախ ձեռքով բրոնեց երկու ձեռքը նրբա  
Գաստակներից, իսկ աջ ձեռքով խրվեց նրբա աղեղն ուսից  
Եվ նրբանով խրվեց նրբա ականջներից ծիծաղելով:  
Արտեմիսը հողի նրման պըտըտվում էր ինքն իր վըրա  
Ցըրիվ տալով իր շուրջ-բոլոր նետերն ամեն այս ու այնտեղ,  
Եվ ի վերջո լալով՝ հագիվ նա Հերայի ձեռքից փախավ,  
Հանց աղավնին, որ փախչում է շահեն հավքի ճիրաններից,  
Մոլուպրում է և խորափոր ժայռի խորշում ապաստանում,  
510 Որովհետև ճակատագրից չէր ասհմանված որս լինելու:  
Այդպես և նա փախավ լալով, նետ ու աղեղն այնտեղ թողած:

Իսկ պատվիրակ Արգոսասպանն այսպես ասաց Լադոնեին.  
«Լետո՛վն, քեզ հետ չեմ կըռվի ես, որովհետև ամպոսպսից  
Արամազդի կանանց հետ խիստ վըտանգավոր է մարտընչել:  
Գընա՛ հինա և համարձակ՝ անմահների կանառի մեջ  
Հըպարտացիր, թե հաղթեցիր ինձ քո անեղ հըզորությամբ»:

Այսպես ասաց, իսկ Լատոնեն հավաքեց իր աղեղն ու նետ,  
Որոնք այստեղ-այնտեղ ցիր-ցան ընկած էին փոշիներում,  
Հավաքելով նետերն այդպես՝ հետևեց նա իր աղջըկան:  
520 Իսկ նա գընաց հասավ Ոլիմպ, պղնձյա պալատն Արամազդի.  
Գընաց լալով, արտասվաթոր ու նըստեց հոր ծընկան վըրա.  
Աստվածային շըղարշը նուրբ թըրթըռում էր նրբա հագին:  
Զըրվանյանը գըրկեց նրբան ու ծըպտալով հարցում արավ.  
«Միրուն դըստրիկ, աստվածներից ո՞վ քեզ այդպես հանդըզնարար  
Վիրավորեց, իբրև թե դու ինչ-որ չարիք արած լինես»:

Նըրբան այսպես պատասխանեց գեղասպրսակ աստվածուհին.  
«Լուսածըղի Հերան, հայր իմ, ամուսինըդ վիրավորեց,  
Նա, որ կըռիվ է արծարծում անմահների մեջ շարունակ»:

Ոլիմպոսում սըրանք այսպես խոսում էին իրարու հետ,  
530 Իսկ Ապոլլոնն արծաթաղեղ գընաց մըտավ Իլիոնը սուրբ  
Հոգ տանելու պարիսպներին, որ մի գուցե դանայեցիք  
Մակատագրի կամքին ընդդեմ կործանեին քաղաքն այդ օր:  
Իսկ մյուս բոլոր աստվածները վերադարձան դեպի Ոլիմպ,  
Մի քանիսը քինավըրոով, և մի քանիսը հաղթասպանծ,



Եվ ամպաթոյս Արամազդի մտ թագմեցին. իսկ Աքիլեան  
Առհավասար կոտորում էր տըրոյացոց և ձիերին:  
Ինչպես ծովաը, որ անսահման երկինքն ի վեր է բարձրանում  
Երբ մի քաղաք է հըրդենվում աստվածների բարկությունից  
Ու պատճառում է շատերին ցավ ու կըսկիծ, Աքիլլն այդպես  
540 Տըրոյացոց գըլխին այդ օր բերեց աղետ և պատուհաս:

Աստվածանվեր բուրգի վըրս, ուր կանգնած էր Գրիամ արքան,  
Նայեց, տեսավ, որ տըրոյանք փախչում էին սարսափահար  
Ահեղագործ Աքիլլեսի առջևից խառն ու խուճապով,  
Գուժկան ձայնով ճիչ արձակեց և իջնելով աշտարակից՝  
Հըրամայեց դարբասապան քաջագոտի ծերուններին.

«Դարբասները ձեռքով բըռնած բաց պահեցեք, մինչև դաշտից  
Խուճապահար քաղաք փախչող զինվորները մըտնեն ոստան,  
Զի այդ անշուշտ Աքիլլն է, որ հալածում է ճըրանց մտտից,  
Ու կարծում էմ, որ հասել է աղետավոր մեր վերջն արդեն:  
550 Իսկ երբ բոլոր փախչողները պարբսպից ներս մըտած լինեն,  
Դարբասները փակե՛ք նորից ու սեղմեցեք փեղկերն ամուր.  
Վախենում էմ, որ այդ ժամտը խուժի քաղաք պարբսպից ներս»:

Ասաց, բացին դարբասները, վերցընելով սողնակ ու ճիգ,  
Ու փրկություն լույս ծագեցին դեպի քաղաք փախչողներին:  
Իսկ Ապոլլոնն այն ժամանակ առաջ վագեց անմիջապես  
Փարատելու տըրոյացոց ըսպառնացող կորուստը մեծ:  
Տըրոյացիք դեպի քաղաքն ու պարիսպներն երես արած՝  
Փախչում էին դաշտի միջով փոշեթաթավ, ծարավակեզ:  
Աքիլլեսն իր անեղ տեգով հալածում էր ճըրանց անդույ  
560 Ու տենչում էր փառք վաստակել վըրիժավառ մոլեգնությամբ:

Եվ կսոնեին աքայեցիք բարձրադարբաս Իլիոնն այդօր,  
Եթե Գուշակ Ապոլլոնը չըզըրգըրեր Ագեճորին՝  
Անտենորի արի որդուն— այր մեծաշուք և անպարսավ:  
Հանըրգնություն ներշընչեց նա Ագեճորին և կաղնուն հեց՝  
Կանգնեց մոտը, իրեն թանձր մտախոտի մեջ ծըրարած,  
Որ ճըրանից հեռու վանի անագորույն օրհասը սև:  
Բայց Ագեճորն հագիվ տեսած քաղաքավեր Աքիլլեսին,  
Անշարժացավ կանգնած տեղում, սիրտը հուզման մեջ արկնոծ  
Եվ խոր հոգոց արձակելով այսպես խոսեց ինքն իրեն հետ.  
570 «Վա՛յ ինձ, եթե ես էլ փախչեմ սարսափելի Աքիլլեսից  
Մյուսների պես ահաբեկված, որոնք փախչում են խելահեղ.  
Կըհասնի նա իմ կտևից ու վախկոտի՛ս էլ կըսպանի:

Իսկ եթե ես սըրանց թողած, պարիսպներից հեռուստով  
Պեյխյանից փախչեմ դեպի դաշտավայրը Տըրոյայի,  
Եվ Իդայի հովիտն հասած՝ թըփուտների մեջ թաքնըվեմ,  
Այնուհետև իրիկվան դեմ գետ մըտնելով կըլողանամ  
Ու նոր ապա կարող եմ ես վերադառնալ դեպի Իլիոն:  
Բայց ինչո՞ւ եմ ես այս մասին գուր մըտմըսում իմ սըրտի մեջ.  
Կարող է նա ինձ նրկատել, որ փախչում եմ դաշտի միջով,  
580 Եվ իր թեթև սըրունքներով հետևա ընկած՝ գա ինձ բըռնի.  
Այն ժամանակ անտարակույս էլ ինձ մահից փրկում չըկա.  
Որովհետև նա իր ուժով գերազանցում է բոլորին:  
Բայց եթե ես քաղաքի դեմ նըրա առաջ ելնեմ անվախ,  
Նըրա մարմինն էլ կարող է վերք ըստանալ սուր պղղընձով,  
Զի նա էլ է մահկանացու և ինձ նըման մի շունչ ունի.  
Կամ Զըրվանյան Զևար նըրան կըպըսակի անմահ փառքով»:

Այսպես ասաց քաջ Ագեևորն ըսպասելով Աքիլլեսին,  
Եվ հըզոր սիրտը կըրծքի տակ եփ էր գալիս կըռվի համար:  
Ինչպես ինձը, որ թըփուտից դուրս թըռչելով հանկարծակի  
590 Դեպի որսորդն է խոյանում առանց երբեք վախենալու  
Պառականի հաչոցներից, ու որսորդն իսկ եթե կանխի,  
Վիրավորի նըրան, քայց նա չի դադարում խիզախելուց,  
Մինչև կըռվի մեջ չըմըտնի և կամ պարտված չընկնի անշունչ,—  
Այսպես նաև հըռչակավոր Անտեևորի արի որդին  
Ըսպասում էր հանըրգնաքար Աքիլլեսի հետ չափվելու,  
Եվ իր հուժկու, բոլորածն ասպարը նա առաջ պարզած  
Ու նիզակը դեպի վերև՝ աղաղակեց ահագնաձայն.

«Երևի թե հույս ունես դու քո սըրտի մեջ, ո՞վ Աքիլլես,  
Քանդել այսօր իսկ քաջափառ տըրոյացոց քաղաքը մեծ:  
600 Օ, ո՞չ, անգետ, շատ աղետներ կան քեզ համար պահված այնտեղ,  
Զի քաղաքի ներսում անթիվ մարտիկներ կան քաջակորով,  
Որոնք իրենց ծընողների, որդիների, կանանց համար  
Կըպաշտպանեն Իլիոնը սուրք, և որքան էլ քաջ լինես դու,  
Սարսափելի պատերազմող՝ պիտի գըտնես մահըդ այնտեղ»:

Այսպես ասաց և արձակեց նիզակը նա ծանրը ձեռքով  
Եվ անվըրեպ գարկեց նըրա ծընկան տակից հաստ ոլոքին.  
Եվ նորակերտ սըռնապանը, որ անագից էր պատրաստված,  
Հընչեց ուժգին, քայց պղղընձա սըլաքն առանց այն շամփրելու  
Դարձավ դեպ ետ. աստվածային պարզեն արգելք եղավ նըրան:  
610 Պեյլանն այդտեղ աստվածատիպ Ագեևորի վըրա վազեց,  
Բայց Ապոլլոնը խանգարեց, որ նա այդտեղ փառք վաստակի.

Խըլեց իսկույն Ագեճորին, ծածկեց նրան թանձր մեզով  
Եվ գուպարից դուրս հանելով տարավ հեռու, ապա դարձավ  
Ու Պելյանին խաբեությամբ խոտն ամբոխից մի կողմ մըղեց:  
Ապուլունը Ագեճորի կերպարանքով առաջն ելավ  
Եվ հալածեց Պելիսյանին արագաքայլ իր ոտքերով:  
Գուշակն այսպես Պելիսյանին հալածելով դաշտի միջով՝  
Պըտտեցնում էր հորձանահոս Ակամանդրի ափով նրան  
Մի քանի քայլ առաջ ընկած. Ապուլունը այս նենգությամբ  
620 Խաբս էր տալիս Աքիլլեսին, որ հույս ուներ հասնել նրան:  
Մինչդեռ փախչող տըրոյացիք միահամուռ և գունդագունդ  
Խունձապելով խուժում էին քաղաքը բաց դարբասներից:  
Լըցվում էր մեծ քաղաքն ամբողջ կրովից փախչող փաղանգներով,  
Ու ոչ մեկը սիրտ չէր անում պարբսպից դուրս ըսպասելու՝  
Իմանալու, թե ո՛վ էր ողջ և ո՛վ մեռած՝ պատերազմում,  
Այլ բոլորը խառնախուճապ, որոնց ծընկներն ու սրբուճքներն  
Ուժ ունեին՝ խելակորույս քաղաքից ներս էին խուժում:

# Ե Ր Գ Ք Ա Ա Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Պ

## ՀԵԿՏՈՐԻ ՄԱՀԸ

Այսպես երկշոտ եղնիկների նրման նրբանք սարսափահար  
Քաղաքն ընկան ու կրոթընած գեղեցկակերտ պարիսպներին՝  
Մարում էին ծարավն ըրենց և քրրտինքը ցամաքեցնում:  
Իսկ աքաչանք վահաններով դեպի պարիսպն էին խուժում:  
Բայց կսպկասեց կորըստաբեր մահվան օրհասը Հեկտորին,  
Որ նա մընա Իլիոնից դուրս, Սկեսկան դրոսն առաջ:

Իսկ Ապոլլոնն Աքիլլեսին դառնալով այս խոսքերն ասաց.

«Ի՞նչ ես այդպես, Պելիսածի՛ն, արագավազ քո ոտքերով

Մահկանացուդ ինձ հավածում. մի՞թե դու դեռ չըհասկացար,

- 10 Որ ես աստված եմ մեծագոր և գուր ես ինձ հետապնդում,  
Մոռանալով տըրոյացոց, որոնք փախան մըտան քաղաք  
Եվ ամրացան պարըսպից ներս, զո՛ր ես վազում իմ ետևից,  
Ինձ ըսպանել դու չես կարող, զի անմահ եմ ես հավիտյան»:

Եվ Աքիլլեսն անհուն ցամամբ նրբան այսպես պատասխանեց-

«Այսպես ուրեմն, ո՛վ հեռաձիգ, ամենամեղձդ աստվածներից,

Ինձ խաբեցիր դու չարաչար՝ պարիսպներից դաշտ քըշելով,

Ապա թե ոչ շատերը դեռ պարիսպներից ներս չըմըտած

Պիտ ծամեի՛ն, ո՛վ Ապոլլոն, հողը իրենց ատամներով:

Բայց դու անա քո նեղգությամբ խըլեցիր փառքը ինձանից,

- 20 Եվ վըրկեցի՛ր տըրոյացոց, զի վախ չունես դու իմ դիմից:  
Օ՛ր, կառնեի՛ վըրեժըս ես, եթե հընար ունենայի»:

Այսպես ասաց ու դեպ քաղաք դիմեց հախտուն որոշումով,

Ոստոստելով կառքին լըծվող գուպարահաղթ ձիու նրման,

Որ թեթևոտն արշավում է սրբանալով դաշտի միջով,—

Աքիլլն այդպես շարժում էր իր ոտք ու ձեռքերն արագ-արագ:

Առաջինը Պրիսմը ծեր տեսավ քաջոտն Աքիլլեսին,  
Որ ցոլում էր դաշտի միջով՝ աշնանային աստղի նրման,  
Որ փայլիլում է շողարձակ բյուր աստղերի մեջ գիշերով,  
Որին մարդիկ հորջորջաբար անվանում են Օրիոնի շուն:

- 30 Փայլում է նա մյուս աստղերից, բայց նրան է չարագուշակ,  
Որը թըշվառ մահկանացոց բերում է տոթ անտանելի:—  
Քաջի կրծքին պրդինձն այդպես փայլատակում էր վազելիս:  
Ծերը ուժգին ճիչ արձակեց ու ձեռները վեր բարձրացրած  
Զարկեց գրվիսին ու լալագին, սրբտաճրմիկ աղաղակով  
Կանչեց որդուն իր սիրելի, որը կանգնած դրոսն առաջ  
Ըսպասում էր բորբոք սրբտով Աքիլլեսի դեմ կրովելու:  
Ծերը ձեռքերն առաջ պարզած այսպես խոսեց արտասովալից.  
«Հեկտոր, որդյա՛կ իմ սիրելի, մի՛ ըսպասիր այդպես մեճակ  
Ռու այդ մարդուն պարբուսից դուրս, որ չըհասնի օրհասըդ շուտ
- 40 Հուժկու բազկից Պելիսյանի, զի քեզանից հըզոյ է նա:  
Արյունարբո՛ւն, ո՛ւր էր էթե աստվածների՞ն լիներ այնքան  
Նա ասելի, որքան որ ինձ, այն ժամանակ վաղուց ի վեր  
Կեր կրլիներ նրա մարմինն ուրուրներին ու շրներին.  
Եվ իմ սրբտից կըփարատվեր դառնակըսկի՞ծ ցավըս խորունկ:  
Քանի՛-քանի՛ քաջակորով որդիներիս խըլեց ինձնից  
Ըսպանելով կամ ծախելով հեռո՛ւ-հեռո՛ւ կըղզիներում:  
Այստեղ, իմ շուրջ քաղաք մըտնող տըրոյանց մեջ ես չեմ տեսնում  
Երկու իմ քաջ որդիներին՝ Պոլիդորին, Լիկայունին,  
Որոնց ծընեց ողջ կանանց մեջ ամենագեղ Լավոթոյեն:  
50 Սակայն էթե ողջ են նրանք աքայեցոց բանակի մեջ,  
Հետո ոսկով և պըղընձով կարող ենք մենք փըրկել նրանց:  
Դըրանցից շա՛տ ունենք տանը, մեծահարուստ Ալտեար ծեր  
Իր աղջըկա համար շատ մեծ օժիտ տըվեց ժամանակին:  
Իսկ թե մեռած լինեն նրանք և դըժոխքի տունը իջած  
Սոսկալի ցավ կըլինի ինձ՝ ալևորիս և մոր համար:  
Բայց այդ սուգը դյուրամոռաց կըլինի իմ ժողովըրդին,  
Եթե, Հեկտոր, դո՛ւ էլ չընկնես Աքիլլեսից հաղթահարված:  
Պարբուսից ներս մըտիր, որդիս, եղիր մեզ հետ, որ պաշտպանես  
Կանանց բոլոր, տըղամարդկանց և չընձեռես Պելիսյանին
- 60 Փառք ու պարծանք ու գըրկըվես ինքդ էլ անուշ քո արևից:  
Գըթա՛, որդիս, դեռ ողջամիտ ալևորիս վըրա թըշվառ,  
Որին Ջևար ծերության մեջ դըժնի բախտով պիտ կորցընի  
Իմ ըսպանված որդիների և գերեվար աղջիկների,  
Քարուքանդված իմ հարկերի և դեռ մատղաջ զավակներիս  
Պատերազմի մեջ ըսպանված, և աքայանց ժանտ ձեռքերից  
Քաշըշված հեզ իմ հարսների վիշտը կըրել տալուց հետո:

Իսկ վերջում էլ, երբ սեկը ինձ զարկի նետով կամ նիզակով  
Ու մարմնիցըս շունչն իմ խըլի, պիտի շըներն ինձ հոշոտեն,  
Որոնց ես ինքս իբր հացակից պահապաններ՝ կերակրեցի,  
70 Եվ արյունովս գազանացյալ պիտի փըռվեն գավիթի մեջ:  
Վայելուչ է երիտասարդ մարդուն՝ խոցված սուր պըղընձով՝  
Ընկնել դաժան պատերազմում, զի այդպիսի մահացյալի  
Մարմինը միշտ գեղեցիկ է, որ կողմն էլ որ մերկ երևա:  
Իսկ ըսպանված մի ծերունու ճերմակ գըլովսն ու այեզարդ  
Մորուքը և առականքը երբ անպատվեն շըներն, սվա՛ղ,  
Այդ ամենից ցավալին է մահկանացու մարդու համար»:

Այս ասելով, փետում էր նա գըլիսի մագերն իր ըսպիտակ  
Երկու ձեռքով, բայց չէր կարող ողորքել սիրտը Հեկտորի:  
Մյուս կողմից էլ մայրն էր ողբում արտասովակոծ, լալահառաչ,  
80 Իր մեկ ձեռքով կուրծքը բացած և մյուսով իր մայրական  
Ըստինքները հանած՝ լալով ասում էր նա պաղատագին.  
«Հեկտոր, որդիս, գեթ սըրանցից պատկառիր դու, գըթա՛ վըրսա,  
Թե երբևէ քո մանկության օրերում քեզ ծիծ եմ տըվել,  
Հիշիր, որդյակ իմ սիրասուն, փախի՛ր մարդուց այդ անողորմ,  
Պարըսպից ներս մըտիր իսկույն ու նըրա դեմ մի՛ խիզախիր.  
Զի եթե նա քեզ ըսպանի, այլևս քեզ մահին դըրած՝  
Ես չեմ կարող ողբալ վըրսադ, բողբո՛ջ, որին ես ծընեցի,  
Ոչ էլ կինը քո մեծօժիտ, այլ մարմինըդ մեզնից հեռու,  
Արգիացոց նավերի մոտ շըները պիտ պատառոտեն»:

90 Սըրանք այսպես արտասովագին կանչում էին իրենց որդուն,  
Պաղատելով լալահառաչ, բայց Հեկտորը անդըրդվելի  
Դուրսը կանգնած՝ ասրսափելի Աքիլլեսին էր ըսպասում:  
Ինչպես վիշապ մի կատաղի, որ թունավոր խոտ ծամելով,  
Ըսպասում է մարդուն՝ որջում, լի գայրույթով և շարույթամբ  
Ու նայում է վայրագաբար իր որջի մեջ ոլորվելով,—  
Հեկտորն այսպես հըրաբորբոք հոգով, առանց տեղի տալու  
Ըսպասում էր ասպարն հեճած աշտարակի սուր ցըցվածքին,  
Ու նեղսըրտած, ինքնակըշտամբ խոսում էր նա իր հոգու հետ.  
«Վա՛յ ինձ, եթե անցնեմ դըրնից ու պարըսպից ներս մըտնեմ ես,

100 Առաջինը Պուլիդամասն ինձ սոսկալի պիտ նախատի,  
Որ ինձ խորհուրդ տըլվեց դեպի քաղաք վարել տըրոյացոց  
Այն գիշերը, երբ ահավոր Աքիլլեսը ոտքի ելավ.  
Զըլըսեցի նըրան այնժամ, որն արդարև լավ կըլիներ:  
Եվ քանզի ես ժողովըդիս կորցըրի իմ համատույթամբ,  
Ամաչում եմ իմ քաջերից ու կանանցից մեր քողաշուք:

- Եվ կարող է Տըրոյայում վատթար մի մարդ այսպես ասել.  
 «Հեկտորն ուժին հանձնապաստան՝ կորչրեց իր ժողովրդին»:  
 Այսպես կասեն. ուստի լավ է, որ Աքիլլի դեմ ելնելով՝  
 Կամ ըսպանեն ցրրան կրովում և ապա ետ վերադառնան
- 110** Կամ քաղաքի առջև ընկնեն դիպաժավալ, մեռնեն փառքով:  
 Իսկ... եթե ես կըմբյա վահանս և սաղավարտըս հաստաբեստ  
 Հանած, անգեմ բողորովին և ցիգակըս պատին հեճած  
 Աքիլլեսի սուաջ երթամ և խոստանամ Ատրիդներին  
 Տալու չըքնաղ Հեդիներին և գանձերը ցրրա բոլոր,  
 Ռոռնք Պարիսն իր նավերով քերեց լըցրեց Իլիոնը սուրբ  
 Եվ այս կրովի պատճառն եղավ, և դըրս հետ տամ այն բողորն,  
 Ինչ որ ունի քաղաքը մեր՝ աքայանց մեջ բաժանելու,  
 Ապա երդվել տամ ծերերին, որ ոչ մի բան չըթաքցընեն,  
 Այլ բաժանեն երկու մասի, ինչ որ ունի ուսանն իր մեջ...
- 120** Սակայն ինչո՞հ համար է սիրոսս այս բաները շըշընջում ինձ:  
 Ո՛չ, չեմ գընա ես ցրրա մոտ աղաչելու, որպեսզի նա  
 Անգըթորեն ինձ ըսպանի՝ անգեմ, ինչպես տըկար կընոջ:  
 Ժամանակ չէ, որ ցըրս հետ խոսենք հանգիստ, հեզարարո,  
 Կանգնած բարձր ժայռի վըրս կամ ըստվերում կաղնի ծառի,  
 Ինչպես աղջիկն ու պատանին, որ խոսում են անուշ-անուշ:  
 Այլ լավագույնն է ճակատել դեմ-հանդիման, որ շուտ տեսնենք,  
 Թե Ոլիմպյանը երկուսիցս ո՞ւմ է տալու փառք ու պարծանք»:

- Կանգնած՝ այսպես էր խորհում նա, երբ որ ցըման սաղվարտանոն,  
 Արյունառուշտ բուռն Արեսի՝ Աքիլլեսը հասավ ցրրան
- 130** Իր աջ ուսին դըրած աճեղ ու վիթխարի Պելլան հացին:  
 Վառվում էր նա վերից ի վար պըղիճներին մեջ հըրաչեկ  
 Ինչպես հըրդեհ, շանթ ու կայծակ և կամ թե նոր ծագած արև:  
 Տեսավ Հեկտորն ու սիրտ չարավ այլևս այնտեղ ըսպասելու,  
 Թողած դըռներն իր ետևում՝ փախավ իսկույն սարսափահար.  
 Ու Պելիսյանն ետևն ընկավ արագավագ իր ոտքերով:  
 Ինչպես բազեն, որ սըրաթեն է հավքերի մեջ, լեռներում  
 Խոյանում է սըրաթըռիչ դեպ դողդոջուն մի աղավնի,  
 Որ առիշեղ խոյս է տալիս, իսկ բազեն սուր կանչյուններով  
 Նըրս վըրս է սըլանում և ուզում է բըռնել ցըրան,—
- 140** Աքիլլն այդպես վըրիժատենչ հետապընդում էր Հեկտորին,  
 Որը փախչում էր պարըսպի մոտից թեթև սըրունքներով:  
 Ծըրջանցելով ցըրանք բըլուրն ու մոլաթուզն հողմաշատաչ՝  
 Վազում էին պարըսպի տակ ձոզվող բարակ արահետով.  
 Եկան հասան գեղեցկահոս ակունքներին, որ բըխում են  
 Խոխոջելով գույգ աղբյուրներն առատահոս Սկամանդրի,—

- Մին ջերմախառն, որից ծուխ է ելնում, ինչպես վառ օջախից,  
 Եվ մյուսն հոսում է ամուսնը սատրոն սաստիկ, ինչպես կարկուտ:  
 Կային այնտեղ լվացքարաններ գեղեցկաշեն ու քարակերտ,  
 Ուր հարսները տըրոյացոց և աղջիկները գեղանի
- 150 Լըվացք էին անում հաճախ խաղաղության այն օրերին  
 Երբ դեռ աշտեղ չէին եկել աքայեցիք սև նավերով:  
 Վազում էին ճրրանք աշտեղ, մեկը փախչող, մյուսն հավածող.  
 Փախչում էր քաջն ու ետևից հավածում էր քաջագույնը:  
 Մըրցանակ չէր դըրված վագրին՝ երե և կամ արջառենի,  
 Որ տըրվում են իբրև պարզև արագավազ սըրունքներից,  
 Օ, ո՛չ, կլանքն էր դըրված մեջտեղ ձիահրմուտ քաջ Հեկտորի:  
 Ինչպես դըրված կենտի շուրջը արշավում են արագընթաց  
 Մըրցման մըտած գուպարահաղթ ճըժույզները սալաքմբակ,  
 Եվ դըրված է մեջտեղը մի մեծ մըրցանակ-եռոտանի
- 160 Կամ թե մի կին երիտասարդ՝ ի պատիվ մի մեռած քաջի,  
 Ադրպես ճրրանք երեք անգամ Պրիամոսի քաղաքի շուրջ  
 Պըտըտվեցին, և աստվածներն հանդիսատես էին բոլոր:  
 Եվ Արամազդն՝ աստվածների ու մարդկանց հալոն սասց այնժամ.  
 «Ո՛վ աստվածներ, մի սիրելի մարդ եմ տեսնում իմ աչքերով  
 Պարբսպի շուրջ հավածական, որին սըրտանց ցավում եմ ես,  
 Հեկտորն է դա, որ ինձ համար քազում զոհեր է մատուցել  
 Բազմաքըլուր Իդա լեռան վըրա հաճախ և Պերգամոն  
 Բարձր ամրոցում, որին հիմա հավածում է Աքիլլը քաջ  
 Արագընթաց իր ոտքերով՝ Պրիամոսի քաղաքի շուրջ:
- 170 Խորհուրդ արեք, ո՛վ աստվածներ, և վըճոհեք արագապես,  
 Թե մենք արդյոք պե՞տք է փըրկենք ճրրան մահից և ապրեցնենք,  
 Թե՞ թողնենք, որ հաղթահարվի Պելիսածնի հուժկու քազկով»:

Եվ Աթենաս կապուտաչյա աստվածուհին սասց ճրրան.  
 «Ծանթախաղաց հա՛յր ամպաթուխ, այդ ինչպիսի՞ խոսք ես ասում.  
 Մըտադիր ես փըրկե՞լ միթե դու այն մարդուն մահկանացու  
 Որին վաղուց ճակատագրից մահու օրհաս է սահմանված:  
 Կամքը քոնն է, քայց մյուսներս համաձայն չենք քեզ այդ բանում»:

- Եվ Արամազդն ամպրուպային ճրրան այսպես պատասխանեց.  
 «Հանգիստ եղիր բոլորովին, կառափնածին դո՛ւստր իմ սիրուն  
 180 Ես այդ մասին լուրջ չեմ խոսում, այլ ուզում եմ քեզ հետ սիրով  
 Ու հաշտ լինել, մի՛ տըրտընջար, արա՛, ինչպես կամենում ես»:

Այսպես սասց և ավելի՛ բոցավառեց Աթենասին,  
 Որ ցած իջավ անմիջապես Ոլիմպոսի վեճ գազաթից:



- Իսկ արագոտն Աքիլն անդուլ հետապնդում էր Հեկտորին,  
 Ինչպես բարակը եղնիկի ջահել ձագից լեռների մեջ  
 Որջից հանած հալածում է թավուտներով ու ձորերով.  
 Եվ եղնիկի ձագը թեկուզ թաքնըվի թավ թըփերի մեջ,  
 Բայց բարակը միշտ հետամուտ՝ վազ է տալիս մինչև գրտնի,  
 Հեկտորն ինքն էլ չըկարեցավ թաքնըվել քաջ Աքիլեսից:
- 190 Ամեն անգամ, որ դիմում էր դեպի դրոները Դարդանյան  
 Եվ ամրաշեն աշտարակաց տակից վազում արշավատույր,  
 Որ թերևս վերից նրան շուտ օգնության հասնեն նետով,  
 Աքիլը միշտ, թույլ չըտալով, նրան դեպի դաշտն էր քըշում.  
 Բայց Հեկտորը արագ վազքով ձրգտում էր միշտ դեպի քաղաք:  
 Ինչպես որ մարդ մարդու հասնել անկարող է երազի մեջ,  
 Ոչ էլ փախչել մեկ-մյուսից և կամ բռնել է կարելի,  
 Այդպես Աքիլն իր ոտքերով անկարող էր հասնել նրան,  
 Ոչ էլ Հեկտորն էր նրանից փախչել փրկվել կարողանում:  
 Սակայն Հեկտորն ինչպե՞ս պիտի փրկվեր մահից իր վերահաս,
- 200 Եթե վերջին մի անգամ էլ չըմոտենար Պրիամյանին  
 Ապոլլոնը ու ծընկերին նրա նոր ուժ չըներշնչեր:  
 Իսկ Աքիլեսն աքայեցոց՝ գըլխով աստում էր շարունակ  
 Ու չէր թողնում, որ դառնաթույն նետ արձակեն Հեկտորի դեմ՝  
 Վախենալով, որ մի գուցե խըլեն հանկարծ փառքն իրենից:  
 Իսկ երբ արդեն չորրորդ անգամ հասան նրանք աղբյուրներից,  
 Այն ժամանակ Ջևաղ առավ ոսկի կըշեռքն ու վեր բրոնած  
 Նըծարներում երկարաքուն մահվան վիճակ դըրեց երկու,  
 Մեկը դյուցազն Աքիլեսի, մյուսն Հեկտորի համար խըրոխտ,  
 Ու մեջտեղից բրոնած քաշեց. և Հեկտորի վիճակն իջավ
- 210 Դեպի դըժոխք, և Ապոլլոնը հեռացավ Պրիամյանից:  
 Վըրա հասավ այն ժամանակ ինքն Աթենաս աստվածուհին  
 Ու Պելլանին մոտենալով՝ այս թեավոր խոսքերն ասաց.  
 «Հույս ունեն արդ, ո՛վ Աքիլես, դու սիրելիդ Արամազդի,  
 Որ մեծ պարծանք պիտի տանենք դեպ աքայանց նավատորմիդ,  
 Ըսպանելով՝ պատերազմի մեջ անհազուրդ քաջ Հեկտորին.  
 Այլևս մեր ձեռքից փախչել ու ազատվել չի՝ կարող նա  
 Որքան էլ որ Ապոլլոնը թափի ամեն ջանք ու լեզու,  
 Թավալվելով վահանադրոշ Արամազդ հոր ոտների տակ  
 Բայց դու այստեղ կանգնիր հիմա, շունչ առ փոքր-ինչ, իսկ ես գընամ
- 220 Հորդորելու քաջ Հեկտորին, որ հանձն առնի կըռվել քեզ հետ»:

Այսպես ասաց աստվածուհին, և Աքիլեսն անսաց ուրախ  
 Ու կըոթընած պըղընձասայր հացի տեզին՝ կանգնեց այդտեղ:  
 Աթենասը թողած նրան՝ գընաց իսկույն դեպի Հեկտորն

Ու առնելով Դեիփոքի կերպարանքն ու ձայնն անվըկանդ՝  
Մոտիկ գընաց ու Հեկտորին այս թևավոր խոսքերն ասաց.  
«Եղբայր իմ քաջ, Աքիլլը քո ետևն ընկած ժիր ոտքերով  
Նեղում է քեզ, հարածելով Պրիամոսի քաղաքի շուրջ,  
Արի ամուր կանգնենք այստեղ ու դիմադրենք արիաբար»:  
Կորդակաճոճ Հեկտորը մեծ նրբան այսպես պատասխանեց.  
230 «Դեիփոքե, մի՛շտ էլ դու ինձ սիրելի ես եղել, իրոք,  
Եղբայրներես մեջ իմ բոլոր, որոնց ծընեց մայրս՝ Հեկաբեն.  
Իսկ այսուհետ ուզում եմ քեզ է՛լ ավելի մեծարել ես  
Քանզի մեճակ տեսնելով ինձ դաշտում միայն դո՛ւ սիրտ արիր  
Պարըսպից դուրս գալու, միճչդեռ մյուսներն այնտեղ փակված են պիճոք»:

Կապուտաշյա աստվածուհին երկրորդ անգամ պատասխանեց.  
«Ծատ խընդրեցին ինձ իսկապես հայրն ու մայրը մեր մեծարո,  
Ինչպես նաև ընկերները, որ ես, Հեկտո՛ր, մընամ այնտեղ,  
Վախեցած եմ բոլորը խիստ, քայց սաստիկ ցավն այրում էր ինձ:  
Հիմա, եղբայր իմ, աներկյուղ կըրվենք նրա դեմ-հանդիման,  
240 Չըխընայենք բոլորովին երկայնաբուն մեր տեգերին,  
Որ հասկանանք, թե Աքիլլե՛սն ըսպանելով պիտի տանի  
Դեպի նավերն մեր երկուսի կողոպտուներն արյունազանգ,  
Թե՞ դիտապաստ ընկնի պիտի նա ի՛նքը մեր նիզակներով»:  
Այս ասելով՝ առաջ անցավ Աթենաար նեճաբարո,  
Եվ երբ հասան ու կանգնեցին Աքիլլեսին դեմ-հանդիման,  
Կորդակաճոճ Հեկտորը նախ այսպես խոսեց խրոխտաբար.  
«Ո՛վ Պելևսի որդիդ, քեզմից էլ չեմ փախչի, ինչպես առաջ,  
Որ Պրիամի ոստանի շուրջ պըտույտ եկա երեք անգամ,  
Սիրտ չանելով ըսպասելու, որ դու հասնես, սախայն հիմա  
250 Խիզախում է հոգիս քո դեմ, կամ կըսպանեմ, կամ կըմեռնեմ:  
Բայց արի մեզ վըկա բըռնենք աստվածներին, և թող նըրանք  
Երաշխավոր և ոստիկան լինեն մըրցման մեր պայմանին:  
Թե Արամազդն ինձ պարզևի կորով, և ես քեզ ըսպանեմ,  
Դիակիդ հետ ես չըվարվեմ դաժանորեն, թըջնամաբար,  
Այլ գեղեցիկ գենքերդդ ես կողոպտելուց հետո հանձնեմ  
Մարմինը քո՝ աքալեցոց, դո՛ւ էլ պետք է նույնը անես»:

Ասաց Հեկտորն հանդըզնաբար, և Աքիլլը խոժոռադեմ՝  
Աչքերի գույգ նիզակները ուղղած նըրան՝ պատասխանեց.  
«Դու պայմանի վըրա, Հեկտո՛ր, ինձ հետ ոչ մի խոսք մի անի,  
260 Ինչպես աննենգ ուխտ չի լինի առյուծների ու մարդկանց մեջ,  
Ու չեմ կարող համաձայնվել գայլն ու գառը երբևիցե,  
Այլ իրար հետ անհամերաշխ՝ չարիք են միշտ նշուխում միմյանց:

Այդպես նաև իմ և քո մեջ ոչ մի դաշինք չի լինելու,  
 Մինչև մեզ հից մեկնումեկը չընկնի այստեղ դիաթավալ  
 Եվ իր արյամբ չընկազեցնի պատերազմող բուն Արեւիկն:  
 Արիության ամեն արվեստն աչքիդ առջև բեր և հիշի՛ր,  
 Պետք է, որ քեզ ցույց տաս հիմա կորովատեզ որպես ռազմիկ:  
 Էլ իմ ձեռքից չես փախչի դու, և Աթենաս Պալլասը քեզ  
 Պիտի ընկնի՛ իմ հիզակով, և դու պիտի ինձ վրձարես  
 270 Միանգամից բոլոր ցավերն ու վրրեծն իմ ընկերների,  
 Որոնց ինքքը մոլեզնաբար ըսպանեցիր քո հիզակով»:

Ասաց, ճոճեց և արձակեց երկայնաստվեր հիզակն իր նա.  
 Այդ տեսնելով, նրստեց իսկույն շրքեղածոխ Հեկտորը քաջ,  
 Ու պղդիճճ տեզն իր վրրայից թըռավ գընաց, խըրվեց հողում:  
 Աթենասը վերցըրեց այն և Հեկտորից ծածուկ, անտես  
 Տըվեց նորից Աքիլլեսին, իսկ Հեկտորը այսպես ասաց.  
 «Վըրիպեցիր, աստվածատիպ ո՛վ Աքիլլես, չի՛ հասել դեռ  
 Օրհասը իմ՝ Արամազդից, ինչպես որ դու բարբաջեցիր:  
 Դու մի ճարտար շաղակրատ ես և նեմգամիտ քո խոսքերով

280 Ծըզնում ես ինձ ահաբեկել, որ մոռանամ կորովըս ես:  
 Ո՛չ, չե՛մ փախչի, հիզակը քո իմ թիկունքից չես խըրի դու,  
 Այլ կըխըրես վըրադ վազող Հեկտորիս կուրծքը շեշտակի:  
 Եթե աստված քեզ հաջողի, փախիր պըղընձյա տեզիցս ահա,  
 Որ երանի ամբողջությամբ քո մարմնի մեջ ընդունես այն:  
 Կընեշտանա՛ մարտն արյունոտ՝ տըրոյացոց համար այնժամ,  
 Թե ըսպանես քեզ, Աքիլլես, զի մեզ համար փորձանք ես դու»:

Այսպես ասաց արիաբար և արձակեց երկար աշտեն,  
 Ու դիպցրեց Պելիսյանի հաղթ ասպարի ուղիղ պորտին,  
 Մակայն առանց վընասելու հեռու թըռավ տեզը սուրսայր,  
 290 Եվ Հեկտորը խիստ զայրացավ, որ տեզը գուր թըռավ ձեռքից.  
 Մընաց վըհատ ու գլխիկոր, քանզի ուրիշ հիզակ չուներ  
 Եվ նա ուժգին ձայնով կանչեց ճերմակասպար Դեիփոքին,  
 Խընդրելով տեզ երկայնաբուն, քայց նա արդեն չէր երևում:  
 Հեկտորն այնժամ գըլխի ընկավ չար խարդավանքն ու հառաչեց.

«Ավա՛ղ, ուրեմն աստվածները ինձ հայտնապես տարան դեպ մահ,  
 Կարծում էի, թե ինձ հետ է Դեիփոքուն՝ եղբայրըս քաջ:  
 Նա պարբասից ներսն է սակայն, և Աթենասն ինձ դավ նյութեց.  
 Չարաբաստիկ մահն ինձ մոտ է և նըրանից փըրկում չըկա:  
 Ա՛յս է եղել կամքը Ջևաի և իր որդի Ապոլլոնի,

300 Որոնք ինձ հետ էին առաջ. այսպես մահըս վըրա հասավ,  
 Մակայն պիտի վախկոտի պես ես չըմեռնեմ անփառունակ,  
 Այլ պանծալի հերոսությամբ, որ միշտ հիշվի ասպագայում»:

Այս ասելով նա դուրս քաշեց վաղակապորն իր վիթխարի,  
Սուրբ հրակա ու ծանրաքաշ, որ կահում էր ազդրոյն ի վար,  
Ու կրծկվելով, թըռամ, ինչպէս հրզոր արծիվ բարձրագրնա,  
Որը մըթին ամպի ծոցից սըլանում է դեպ դաշտավայր՝  
Մատղաշ մի գառ և կամ երկշոտ մի նապաստակ ապշուպելու:—  
Հեկտորն այդպէս վըրա վազեց, շողացնելով սուրն իր ահեղ.

- Սուրաց նաև Աքիլը ժիր սիրտն ամենի ցասումով լի,  
310 Կուրծքը ծածկած արվեստակերտ ու գեղեցիկ իր ասպարով  
Եվ ճոճելով փայլակնացալտ սաղավարտը քառախորան,  
Որի ծայրին ծածանվում էր ոսկեգիսակ ցըցուցքը վես,  
Որ Հեփեստոսն ինքն էր փընջել խորաններում՝ խիտ ու վետ-վետ:  
Բայց ինչպէս աստղն աստղերի մեջ, որ ընթանում է գիշերով  
Գիշերավարն, որ ամենն գեղեցիկ աստղն է երկընթում,  
Ծայտում էին շողեր այդպէս սուր սըլաքից, որ ճոճում էր  
Աստվածազարմ Աքիլը քաշ Հեկտորի մահն որոճալով,  
Աչքը՝ կայտառ նըրա մարմնին, թե որտեղից հեշտ է խոցել:  
Պրիամյանի մարմինը ողջ պատած էր պերճ գեճ ու զարդով,  
320 Որ խըլել էր Պատրոկլեսից՝ ըսպանելով նըրան մարտում:  
Բաց էր այնտեղ, ուր անրակներն վիզն ուտերին են միացնում,  
Որտեղից շոտ դուրս է թըռչում մահկանացու մարդու հոգին:  
Ախոյանի այդ տեղն ահա մըխեց մըկունդն իր Աքիլեսն,  
Ու սըլաքը ծակեց անցավ պարանոցը նըրա փափուկ,  
Սակայն հացին պըղընձագեն կոկորդն մինչև վերջ չըկըտրեց,  
Որ մեռնողը կարողանար դեռ մի քանի խոսք մըրմընջալ:  
Հեկտորն ընկավ փոշեթավալ, և Աքիլեսն ասաց հրպարտ.

«Գուցե կարծում էիր, Հեկտոր՛ր, որ պանծալի Պատրոկլեսին  
Կողոպտելուց հետո ազատ և անպատի՛ժ պետք է մընաս:

- 330 Օ դու անմի՛տ, անգիտացար, թե նըրանից ավելի քաջն  
Ըսպասում էր նավերի մեջ, որ պիտ ծայեր ծընկները քո:  
Ծըներն հիմա ու թըռչուններն ուտեն պիտի մարմինըդ մերկ,  
Միճչդեռ նըրան պատշաճ կարգով թաղելու են արգիսցիք»:

Եվ Հեկտորը վերջին շընչում թախանձագին ասաց նըրան.  
«Ի սեր կյանքիդ ու ծընկներիդ, ծընողներիդ՝ խընդրում եմ քեզ,  
Մի՛ թողնիր որ մարմինը իմ գըզեն շըներն աքայեցոց,  
Այլ առնելով փըրկանք անքավ՝ պըղիճձ, ոսկի, որքան ուզես,  
Որ պիտի տան քեզ հայրըս ծեր ու մեծարո մայրըս անուշ,  
Նըրանց դարձրու մարմինը իմ, որ տրոյանք ու տրոյուհիք  
340 Ողբան վըրաս ու կըրակի վըրա պատվեն մահացյալիս»:

Խեթ նայելով նըրա վըրա Աքիլեսը պատասխանեց.

«Ծընողներին ու ծընկերներին անունով մի՛ խընդրիր ինձ, շո՛ւն:  
Օ՛, եթե սիրտըս քինավատ ու ոխըս ինձ հորդորեից,  
Ես կուտեի՝ մարմինդ հում-հում, մանրը ջարդած, կըտոր-կըտոր,  
Բոլոր այն ժանտ չարիքների համար, որ դու ինձ հասցրիր:  
Ձեմ թողնի ես, որ շըներին քեզնից հեռու վանի ոչ ոք,  
Եթե նույնիսկ քերեն քեռ-քեռ, դիզեն այստեղ տասնապատիկ  
Եվ ավելի՛ պարզև-փըրկանք, ու խոստանան Էլի՛-Էլի՛,  
Ոչ իսկ եթե քո քաշով մեկ հըրամայի ոսկի տալ ինձ  
350 Իլիննի ծեր Պրիամ արքան. այդպես, մայրդ մինչև անգամ,  
Քեզ անկողնում դըրած՝ վըրադ պիտի չողբա ու սուգ չանի,  
Այլ թըռչուններն ու շըները պիտի ուտեն մարմինը քո»:

Կորդակաճոճ Հեկտորը իր մահվան շեմին ասաց նըրան.  
«Գիտեի՛, որ չէր կարելի աղերսանքով քեզ ողորել,  
Քանզի քո կարծըր կըրծքի մեջ երկաթե սիրտ ես կըրում դու.  
Սակայն պիտի թափվի վըրադ վըրեժն ահեղ աստվածների  
Այն օրը, երբ Սկեական դըռների մոտ, ո՛վ Աքիլլես,  
Ապոլլոնն ու Պարիսը քեզ փըռեն պիտի գետնատարած»:

Խոսքը նըրա բերանն էր դեռ, որ մահը սև վըրա հասավ,  
360 Ու դուրս գալով հոգին մարմնից գահավիժեց դըժոխքն ի վար,  
Ողբալով իր բախտի վըրա, թողած ուժն ու կորովն առուչգ:  
Քայց Աքիլլեսը մեռածի գըլխավերև կանգնած՝ գոռաց.

«Մեռի՛ր, իսկ ես կընդունեմ մահն իմ քաջի պես, երբ էլ ուզե՞մ  
Ամպրոպայինն ու մյուս բոլոր աստվածները հավերժ անմահ»:

Այսպես ասաց և մեռածի մարմնից քաշեց հանեց աշտեն  
Եվ ըսկըսեց կապտել նըրա շըքեղ գեներն արշունագանգ:  
Այնժամ այնտեղ ըշտապելով մյուս որդիներն արաչեցոց,  
Դիտում էին հիացմունքով գեղն ու հասակը Հեկտորի,  
Չեղավ մեկը, որ մոտենար ու չըխոցեր նըրան տեգով,  
370 Եվ նայելով մեկ-մյուսին՝ այսպես էին ասում իրար,  
«Չարմանում ես, Հեկտորն հիմա որքա՞ն մեղմ է ու մատչելի.  
Քան երբ բորբոք բոցով կըրակ էր տալիս նա մեր նավերին»:

Այսպես էին ասում միմյանց ու մոտ գալով խոցում նըրան:  
Իսկ Աքիլլես դյուցազնը երբ նըրան իսպառ զինագերծեց,  
Աքաչեցոց միջև կանգնած՝ այս սըրաթև խոսքերն ասաց.

«Ո՛վ սիրելի գորավարներ արգիացոց և իշխաններ,  
Աստվածներն ինձ շընորհեցին, որ ըսպանեմ ես այս մարդուն,  
Որ մեզ բոլոր տըրովներից շատ ավելի չարիք գործեց:  
Եկեք հիմա, որ քաղաքի վըրա գընանք զինավառված,

- 380 Որ հասկանանք, թե տրրոյանք ի՞նչ նշանակուի ու միտք ունեն,  
Թողնելո՞ւ են ամբողջ արդոյք Պրիամոսի որդու անկմամբ,  
Թե՞ Հէկտորի մահից վերջն էլ նրանք կրոնքն են կամենում:  
Բայց ինչո՞ւ է սիրոս աշայիսի խոսքեր ճիմա թելադրում ինձ,  
Երբ նավերի մոտ դեռ անթաղ պատկած է դին Պատրոկլէսի,  
Իմ սիրելի ընկերք քաջ, որին երբեք չեմ մոռանա,  
Քանի ողջ եմ ու սիրելի սրբունքներըս շարժվում են դեռ:  
Դըժոխքի մեջ մինչև անգամ, ուր չեն հիշում մեռելներին,  
Ես ընկերոջն իմ սիրելի պիտի հիշեմ միշտ անմոռաց.  
Եկեք հիմա, քաջ աքայանք, հաղթական երգ հրնչեցնելով,  
390 Վերադառնանք դէպի նավերն ու մարմինն այս տաննք մեզ հետ:  
Մենք մեծ պարծանք ժառանգեցինք ըսպանելով քաջ Հէկտորին,  
Որին բոլոր տրրոյացիք իբրև աստված էին պաշտում»:

Այսպես ասաց ու Հէկտորի վրբա խորհեց գործ անարժան:  
Ներքանցներից մինչև կռճերն, երկու ոտքի կրրունկներից,  
Ծակեց ջրղերն ու միջից մի արջառի փոկ անցկացնելով՝  
Կապեց կառքին, թողնելով որ քարշ գա գլուխն գետնի վրբա,  
Իսկ ինքը պերճ գեներն առած՝ կառքը ցատկեց թեթևաշարժ,  
Եվ սրլացան մըտրակահար նըժույզները դաշտի միջով:  
Հէկտորի դին քաշքըշվելով՝ հանում էր ամպ մի փոշեղեն,  
400 Ու սև մազերը գանգրագեղ ավլում էին գետինն անվերջ.  
Գըլուխն ամբողջ փոշեթաթավ— առաջ այնպե՛ս շընորհագեղ,  
Չևսը սակայն անագորույն թըշնամու ձեռք մատնեց նրբան,  
Որ հայրենի իր երկրի մեջ նրբան այդպես նախաստեին:—  
Նըրբա չըքնաղ գըլուխն ընդքարշ թավալվում էր հողերի մեջ:  
Մայրը մազերն էր փետտում իր փայլուն քողը հեռու նետած,  
Մեծակական ճըչում էր նա, նայելով իր որդու վըրբա.  
Ողբում էր հայրն աղիողորմ իր սիրելի որդու համար:  
Քաղաքն ամբողջ համակված էր անասելի սուգով սաստիկ,  
Այնքան մեծ էր կըսկիծը խոր, որ ասես թե Իլիոնը ողջ  
410 Կործանվում էր հիմնահատակ, ճարճատում էր հըրդեհակեզ:  
Ամբոխն հագիվ էր կարենում զըսպել թըշվատ ալևորին,  
Որ դարդանչան դարբասներից ուզում էր դուրս ելնել բըռնի:  
Աղբ ու տիղմում թավալվելով թախանձում էր նա բոլորին,  
Աղաչում էր լալահատաչ՝ տալով անուցն ամեն մեկի.

«Հենո՞ւ կացեք, սիրելիներս, ու թույլ տըվեք, որ քաղաքից  
Դուրս ելնելով մենակ գընամ դէպի նավերն աքայեցոց  
Աղաչելու այդ ժանտաժուտ ոճրագործին, թերևրս նա  
Ակնածելով իմ ալեճամ ծերությունից վըրբա գըթա,  
Որովհետև ինքն էլ ունի իմ հասակին ծերունի հայր,

420 Պեկսը, որ ծընեց Արրան իբրև պատիժ ու պատուհաս  
Տրոյացոց համար և ինձ, որ կըքեց ինձ վըշտերի տակ,  
Ըսպանելով քանի՜-քանի՜ ծաղկահասակ զավակներին,  
Որոնց համար սիրտըս այնքան չի կըսկըծում, որքան սրբա,  
Որի վիշտը ավտրիս պիտի դըժոխք տանի շուտով:  
Հեկտոր, որդյա՛կ իմ սիրելի, գոնե գըրկիս մեջ մեռնելի,  
Այն ժամանակ լալով վըրադ կըմեղմեի՞նք մեր վիշտն անհուն  
Ես ապաբախտ հայրըդ ծերուկ և սըզավոր մայրըդ թըշվառ»:

Այսպես ասաց հայրն արևոր հոծ բազմությանը շըրջապատված:  
Իսկ կանանց մեջ լալահատաչ ըսկըսեց ողբն իր Հեկսբեն.

430 «Քա՛ղցր իմ որդյակ, քեզնից հետո ինչո՞ւ համար ապրեմ այլևս,  
Արև տեսնեմ քո մահից ետ ես մայրըդ հեզ, ա՛յ իմ Հեկտոր:  
Ուտանի մեջ գիշեր-ցերեկ փառք ու պարծանք էիր դու ինձ,  
Հույս-ապավեն տըրոյացոց և բովանդակ տըրոյմոհյաց,  
Հրոնք որպես աստված էին ընդունում քեզ քաղաքի մեջ,  
Ջի քանի դեռ ողջ էիր դու, փառք ու պարծանքն էիր Արրանց,  
Եվ այժմ քեզ մեզնից հեռու հասավ օրհասդ անագորոյն»:

Ասաց լալով, իսկ կինը դեռ անտեղյակ էր դառն աղետին,  
Ջի տակավին ոչ ոք Արրան լուր չէր տարել Արշտապատում,  
Թե Հեկտորը դարբասից դուրս, բաց դաշտի մեջ էր մընացել.  
440 Իր բարձր տան ներքնահարկում Արստած չըքնաղ Անդրոմաքեն  
Ձեռագործով էր ըզբաղված, ուտայն էր Ըս գործում Արրիին՝  
Ծիրանի ձորձ, որի վըրա ծաղիկներ էր բանում պես-պես:  
Պատվիրել էր Ըս վարսագեղ աղախնոցն իր ասպարանքի,  
Որ կըրակի վըրա դընեն ամենամեծ եռոտանից,  
Ջուր տաքացնեն, որ լողանա Հեկտորը երբ դառնա կըովից:  
Խեղճ կին, երբեք չէր մըտածում, որ Հեկտորին տընից հեռու  
Նըվաճել էր Աթենասը Աքիլլեսի հուժկու ձեռքով:  
Աշտարակի կողմից հանկարծ լաց ու կոծի ձայներ լըսեց,  
Ցընցվեց անից Անդրոմաքեն, քարկահն ընկավ Արրա ձեռքից,  
450 Եվ դառնալով իր գանգրագեղ նածիշտներին՝ այսպես ասաց.  
«Երկու հոգի եկեք ինձ հետ, գընանք տեսնենք՝ ինչ է եղել,  
Իմ մեծարո ըսկետուրիս ձայնն եմ լըսում, և կըրծքիս մեջ  
Թըպըրտում է սիրտըս, դողում, ու ծընկներըս կըթոտում են  
Վայ թե վատ բան է պատահել Պրիամոսի որդիներին:  
Օ՛, չըլըսեմ այդպիսի գույժ, վախենում է սիրտըս սաստիկ,  
Թե Աքիլլեսը քաղաքից կըտրած հանդուզն իմ Հեկտորին,  
Մե՛ն ու մե՛նակ հալածելով դաշտի միջով՝ մարի Արրա  
Արիությանը կըրակը բորբ, որով վառված էր շարունակ.

Բազմության մեջ չէր մընում նա, այլ առաջ էր նետվում խիզախ  
480 Ու ոչ մեկից գուպարի մեջ իր քաջությամբ ետ չէր մընում»:

Այսպես ասաց Անդրոմաքեն ու դուրս թըռավ ապարանքից  
Խելացընոր ու սիրտ ի դող՝ նաժիշտների հետ իր երկու,  
Եվ հասնելով աշտարակին, ուր հոժ ամբոյս էր հավաքված,  
Կանգ առավ նա, նայեց դեպ դաշտ ու նրկատեց իր Հեկտորի  
Մարմինը, որ կառքին կապված քաշում էին ձիերն արագ,  
Ու քարշ տալով տանում էին դեպի նավերն արալեցոց:  
Տեսավ թե չէ՝ ուշքը գընաց, ու մըթնեցին աչքերն իսկույն,  
Վայր գըլորվեց մեջքի վըրս, ասես մեկեմ շուկը փըչեց:  
Նըրս գըլխից հեռու ընկան գեղեցկաշուք զարդերը ճոխ՝  
470 Պերճ վարսակալն ու ապարոշն ու փողոշուկը հյուսվածո,  
Եվ քողը, որ ոսկեղինիկ Աստղիկն էր ձոն տըվել նըրան  
Այն օրը, երբ սաղվարտաճոճ Հեկտորը ճոխ վարձանք տալով  
Մեծահարուստ Էտիոնի տընից ասավ բերավ նըրան:  
Ծըրջապատված էր նա քագում իր տալերով ու ներերով,  
Որոնք բըռնել էին նըրան ուշագընաց ու կիսամեռ.  
Իսկ երբ հագիվ ուշքի եկավ, ճիշ արձակեց Անդրոմաքեն  
Եվ կանանց մեջ կանգնած լալով՝ այսպես ասաց արտասալից.  
«Վա՛յ ինձ, Հեկտո՛ր, երկուսս էլ նույն ճակատագրի տակ ծընվեցինք,  
Դու՝ Իլիոնում, Պրիամոսի արթունքի մեջ պերճաշուք,  
480 Ես՝ Թեբեում, անտառախիտ Պլակիոն լեռան ըստորոտում,  
Ապարանքում Էտիոնի, որը սընեց մանկությունն իմ,  
Ինձ, եղկելուս, երանի թե չըծընվեի՞ բոլորովին:  
Ըստորերկրյա դըժոխքն էս դու իջնում հիմա, ա՛յ իմ Հեկտոր,  
Ու թողնում էս ինձ քո տանը այրի՝ սկի ու սուգի մեջ,  
Ու որք՝ մատղաշ մեր մանկիկին, որին էս ու դու ծընեցինք—  
Թըշվատներըս, և էլ նըրան չես լինի դու նեցուկ ու հույս,  
Ոչ էլ նա քեզ՝ ծերությանըդ, քանգի մեռար դու, քա՛ջ Հեկտոր:  
Եթե նույնիսկ նա ազատվի արալեցոց անգութ խազմից,  
Վիշտն ու տանջանքն այսուհետև պիտի բաժին մընան նըրան,  
490 Զի նըրա անդն ու արտորայք օտար մարդիկ պիտի խըլեն:  
Որբությունը երեխայից խըլում է իր ընկերներից,  
Ման է գալիս միշտ գըլխահակ, աչքերը թաց՝ արտասուքով:  
Գընում է խեղճ տըղան իր հոր բարեկամաց մոտ խընդրելու  
Եվ մերթ մեկի ու մերթ մյուսի վերարկուի փեշից քաշում:  
Թե մեկնումեկն էլ ողորմի՝ կըտա միայն փոքրիկ մի ումպ,  
Որ թըշվատի շըրթունքներն է թըրջում միայն և քիմքը՝ ո՛չ:  
Իսկ բախտավոր, ուրախ տղան, որն ունի հայր ու մայր, նըրան  
Խընջույքից դուրս կըվըռընդի բըռընցքահար, նախատալից.





Այրումաքի տըը

—417—

«Գընա կորի՛ր,— կասի նրան,— հայրը մեզ հետ հացակից չէ՛»:

- 500 Եվ կըդառնա՛ լաց լինելով որբուկը իր այրի մոր մոտ,  
Ռստանիշխանս, որը առաջ հոր գրկի մեջ, նրա ծընկանն  
Ուղեղով էր սընկում միայն ու գեր խոյի պարսրտ ճարպով:  
Իսկ երբ հոգնում էր մանկական իր խաղերից, քընկ ուզեր,  
Նընջում էր նա մահճում կամ իր ըստընտուի փափուկ գրկում,  
Հանգըստավետ մաքրության մեջ, սիրտը լեցուն ըզմայլանքով:  
Այնինչ հիմա իր սիրելի հորից զըրկված պիտի տանջվի՛  
Ռստանիշխանս, տըրոյացիք այդպես էին կոչում նրան,  
Զի դու էիր պաշտպան նրանց պարիսպներին ու դրոներին:  
Իսկ արդ հեռու ծընողներդ, մահիկաձև նավերի մոտ
- 510 Որդերը պիտ ուտեն մարմինդ, երբ կըշտանան շըներն այլևս:  
Մե՛րկ ես պառկում, սինչ տանն ունես դու նըրբահյուս պատմունճաններ,  
Ծընորհաշուք, որ գործել են կանայք իրենց վարժ մատներով:  
Պիտի կըրակ գըցեմ դըրանք, այրեմ բուլորն, որովհետև  
Նըրանց այլևս դու պետք չունես, չե՛ս հագնելու, ա՛յ իմ Հեկտոր,  
Կայրեմ տրոյանց ու տրովուհյաց խըմբում դըրանք՝ ի փառքս քեզ»:

Այսպես ասաց, ու լալագին ձայնակցեցին կանայք նրան:

# Երգ Բ ա ա ն եր ե ք եր ուր դ

## ՊԱՏՐՈՎԼԵՍԻ ԹԱՂՈՒՄԸ. ԽԱՂԵՐ

Մինչդեռ այսպես ողբում էին տրրոյացիք քաղաքի մէջ,  
Աքայեցիք ետ դառնալով Հելլետայոնտի ափերն հասան  
Ու հապըշտապ ցըրիվ գալով՝ ամեն մարդ իր նավը գընաց:  
Բայց Աքիլը թույլ չըտըվեց միրմիդներին ցըրիվ գալու,  
Եվ կանգնելով իր քաջերի միջև՝ այսպես ասաց նրանց.

«Արագամի՛ միրմիդոններ, բարեկամներս հալատարիմ,  
Մի՛ արձակեք ձեր կառքերից նըծույզներին սալաւըմբակ,  
Այլ մենք այսպես, մեր ձիերով ու կառքերով՝ Պատրոկլէսի  
Մոտ գընալով— ողբանք նըրան ու տանք պատիվ մահացալիին:  
10 Իսկ երբ ողբով ու հեծոյթայմբ հագեման մեր սըրտերն, այնժամ  
Երիվարներն արձակելով՝ բոլորս մեկտեղ ընթրիք կանենք»:

Ասաց և ողբն իր ըսկըսեց, ու ձայնակցեց գունդը նըրան:  
Դիակի շուրջ երեք անգամ պըտըտցըրին նըծույզներին,  
Եվ Թետիսը սըրտանըմլիկ լաց ու կոծի դըրդեց նըրանց:  
Թըրջվեց ավազն արտասուքով, թըրջվեցին և գենք ու գըրան:  
Այսպես լալիս էին նըրանք կարոտն իրենց մեռած քաջի.  
Եվ նըրանց մէջ բազմահատաչ ողբ ըսկըսեց Աքիլը նախ՝  
Մարդախոշոջ իր ձեռքերը ընկերոջ սառ կըրծքին դըրած:

«Ուրախացիք, Պատրոկլի իմ քաջ, դըծոյթում էլ մի՛ տըխրի դու,  
20 Կատարում եմ բոլորն ահա, ինչ որ ես քեզ խոստացել եմ:  
Հեկտորի դին բերի, որ տամ հոշոտելու մեր շըներին,  
Եվ տասներկու տըրոյացի գեղատեսիլ պատանհներ  
Խարույկիդ մոտ խողխողելու ի վըրեծ քեզ, ի՛մ սիրելիս»:

Ասաց, արարք մի անարժան որոճալով Հեկտորի դեմ:  
Բերանքսիվար գըցեց նըրան Մենիտլանի դագաղի մոտ,  
Փոշիներում. իսկ մյուսները գենքերն իրենց մերկանալով՝  
Արձակեցին մեծախըրխինջ նըծույզներին սալաւըմբակ  
Եվ խիտ առ խիտ նըստոտեցին Աքիլէսի նավերի շուրջ.

Իսկ Աքիլը նրանց համար սուգի սեղան բացեց առատ:  
30 Մեծամարտին ճերմակ ցուլեր թավալվեցին երկաթի տակ,  
Հոտից բերված գառներ բազում, այծեր պարարտ ու պապաչուն,  
Եվ ճարպակից խոզեր մարմնեղ՝ ճյունասպիտակ ծանիքներով,  
Եփվում էին խորովվելով Հեփեստոսյան բոցի վրրա:  
Մեհիտյանի դիակի շուրջ արյունն առվի պես էր հոսում:

Բայց արքաներն աքայեցոց առած քաջոտն Աքիլեսին,  
Տանում էին Ագամեմնոն թագավորի մոտ, հագիվ-հագ  
Հանոզելով նրան՝ ցակոտ՝ իր մըտերմի մահվան վրրա:  
Երբ Ատրիդի վրրանն հասան՝ պատվիրեցին անմիջապես  
Քաջախոսնակ քարոզներին, որ կըրակի վրրա դընեն  
40 Ամենամեծ եռոտանին և հորդորեն Պելիսյանին  
Լըվացվելու, մաքրովելու համար փոշոց և արյունից:  
Իսկ նա մեղծեց հաստատապես ու մինչև իսկ երդում արավ.  
«Երդվում եմ ես Արամազդով՝ վեհագույնովն աստվածների,  
Որ գըլուխը ջուր չի տեսնի, մինչև որ ես Պատրկլեսին  
Չայրեմ հըրով ամենատորբ ու չըկանգնեմ շիրիմ նըրան,  
Եվ չըկըտրեմ մազերըս ես. ուրիշ ոչ մի ցավ այսքան խոր  
Չի խոցելու սիրտըս երբեք, քանի դեռ ես կենդանի եմ:  
Սակայն հիմա հըպատակվենք մենք տաղտկալի կերակորին,  
Իսկ առավոտ, լույսը բացված, ո՛վ թագավոր Ագամեմնոն,  
50 Հըրամայիր դու քո մարդկանց, որ անտառից փայտ փոխադրեն  
Ու պատրաստեն ինչ որ պետք է մահացյալի թաղման համար,  
Խավարի գիրկը գընալու. որպեսզի հորն այրի նըրան,  
Անհետացնի իմ աչքերից, և գորքը իր գործին անցնի»:

Այսպես ասաց, և բոլորը հավանություն տըվին նըրան.  
Ապա ընթրիք պատրաստելով կերան մեկտեղ ու խըմեցին,  
Մինչ հագեցան նըրանց սըրտերը ընդհանուր կերովխումից:  
Իսկ երբ քաղցի և ծարավի նըրանց փափագը լիացավ,  
Ոտքի ելան ու գընացին վըրանների մեջ քընելու:  
Միայն Աքիլն արտասովալից՝ բազմաշատաչ ծովի ափին  
60 Պտկած տըխտը հառաչում էր շըրջապատված միրմիդներով,  
Որ մըշտածուփ ծովն էր անվերջ ծեծում իր ափն ալիք-ալիք:  
Նինչն իր թեթև թևերն այնտեղ Պելիսյանի վըրա փըռեց  
Փարատելով նըրա սըրտից բոլոր վըշտերը ծանրագին,  
Քանզի աստիկ հոգնած էին անդամները նըրա բոլոր  
Մըրըրկաշունչ Իլիոնի շուրջ քաջ Հեկտորին հայածելուց:  
Այդտեղ ահա, հոգին անբախտ Պատրկլեսի ներկայացավ  
Աքիլեսին՝ ամեն բանով իրեն նըման, գույն ու գեղով,

- Եվ աչքերով, և հասակով, ձայնով,— ամեն ինչով նրման,  
Եվ վերից-վար նույն իր շրթեղ հանդերձները հագած բոլոր
- 70 Եվ Պելլանի գրլխավերև կանգնած՝ այսպես սասց նրբան.  
«Նընջում ես դու, ո՛վ Աքիլլես, արդեն իսպառ ինձ մոռացած.  
Սիրում էիր կենդանությանս, իսկ երբ մեռա ինձ լըքեցի՞ր:  
Թաղիր ինձ շուտ, որ դըժոխքի դըռնից մըտնել կարողանամ,  
Մեռելների ուրվականներն ինձ հեռու են քըշում դըռնից,  
Ու չեն թողնում անցնեմ գետից մեռելների հետ խառնըված,  
Եվ շըրջում եմ թափստական՝ լայնադարբաս դըժոխքի շուրջ:  
Ձեռքըդ տուր ինձ՝ կարոտյալիս. ես դըժոխքից ետ չեմ դառնա  
Եթե դուք ինձ, սիրելիդ իմ, կրակի վրա պատվեք մի հեղ:  
Քեզ հետ այլևս, ինչպես առաջ, ընկերներից հեռու նըստած
- 80 Սիրով խորհուրդ չեմք անելու. դըժնյա օրհասն ինձ կուլ տըվեց,  
Օրհասը, որ ծընված օրես վիճակված էր ինձ ի վերուստ:  
Եվ քե՛զ համար, աստվածատիպ ո՛վ Աքիլլես, պահված է աստ  
Ընկնել, ավաղ, բաջամարտիկ տըրոյացոց պարբապի տակ:  
Մի այլ խընդիր էլ ունեմ քեզ, թե կամեճաս դու կատարել.  
Ոսկորներըս, ո՛վ Աքիլլես, քոնոցից մի՛ հեռու դընի,  
Այլ ամփոփիր ի միասին, ինչպես մեկտեղ եճք մեծացել  
Ձեր հարկի տակ, երբ դեռ մանուկ՝ ձեզ մոտ քերեց Մեկիտիոսն ինձ  
Ոպոյիսից՝ մի ցավալի ըսպանության համար, որ ես  
Ի գործ դըրի Ամփիդամի որդու վըրա ակամայից,
- 90 Ինչ-որ փոքրիկ ուլի համար իրարու հետ վեճի մըլտած:  
Այն ժամանակ Պելես ասպետն առավ ինձ իր սպարանքում  
Եվ խընամեց որդու նըման, ինձ քեզ ընկեր անվանելով:  
Այսպես նաև թող որ նույն տեղն ամփոփի մեր ոսկերտտիճ  
Ոսկի սափորն այն գեղեցիկ, որ քեզ տըվեց մայրդ արգո»:
- Մոտենալով նըրան իսկույն Աքիլլն այսպես պատասխանեց.  
«Ասա՛, ընկեր իմ սիրելի, ինչո՛ւ համար նկար այստեղ.  
Եվ մի առ մի, ամուր-ամուր պատվիրում ես այդ բոլորն ինձ:  
Որախոթյամբ կըկատարեմ բոլորն, ինչ որ ասում ես դու,  
Բայց ավելի՛ մոտեցիր ինձ, որ գըրկըվեճք մի ակընթարթ
- 100 Եվ ըսփոփվեճք իրար գըրկում աղելըտուր արտասվելով»:

Ասաց, պարզեց ձեռքերը նա, բայց գիրկը իր թափուր մընաց,  
Քանգի հոգին ծըխի նըման գընաց մըտավ խորքը երկրի:  
Զարթնեց Աքիլլն ու ծափ տալով այս ցավագին խոսքերն ասաց.  
«Ո՛վ աստվածներ, դըժոխքումն էլ ուրեմըն կա, երևում է,  
Մարդու ոգի և ուրվական, թեկուզ մարմինն անթաղ լինի.  
Քանգի անբախտ Պաստրոկլեսի հոգին այս ողջ գիշերն ի բուն

Եկավ կանգնեց գրլխիս վերև արտասվագին և սրգավոր  
Ամեն ինչով իրեն նրման ու տրվեց ինձ պատվիրաններ»:

Այսպես ասաց և բոլորի մեջ արծարծեց ողբի եռանդ:

- 110 Եվ վարդամատն Առավոտը գըտավ նրանց ողբ անելիս  
Այդ ցավալի դիակի շուրջ. Ազամեմնոն արանց արքան  
Առավոտ վաղ հանեց բոլոր վըրաններից զինվորներին,  
Որ փայտ բերեն ջորիներով, և նրանց պետ նըշանակեց  
Մերիոնեսին արիասիրտ՝ Իդոմենի քաջ ծառային:  
Եվ գընացին փայտատներով ու պընդոլոր պարաններով,  
Զորիներին առաջն արած, ու կըտրեցին երկար ճամփա.  
Ելան դեպ վեր, իջան դեպ վար, երբեմըն աջ, երբեմըն ձախ,  
Ու հասնելով բյուրակընյա Իդա լեռը անտառապատ,  
Ըսկըսեցին հեռանասուր պողիճներով աշխոժորեն
- 120 Կըտրել հըսկա կաղնի ծառեր ու շառաչմամբ գըցել գետին:  
Ապա կարճ-կարճ կըտրատելով փայտը բարձին ջորիներին  
Ու բըռնեցին դարձի ճամփան աքալեցիք ըշտապ-ըշտապ  
Թավոտներից դեպ դաշտավայր շուտ հասնելու տենչով վառված:  
Զինվորներից յուրաքանչյուրն իր հետ մի մեծ կոճղ էր բերում  
Իդոմենի ծիր ըսպասյակ Մերիոնեսի հըրամանով:  
Ու թափեցին ծովեզերքում, ուր Աքիլլեսն էր որոշել  
Կանգնել շիրիմ մի բարձրաբերձ՝ Պատրոկլեսի և իր համար:

Երբ ամեն կողմ առատորեն լըցվեց փայտի մեծ կույտերով,

- Զինվորները բոլորն այնտեղ նըստոտեցին շորջանակի,  
130 Եվ Աքիլլեսն հըրամայեց քաջամարտիկ միրմիրոնաց  
Զինավառվել անմիջապես ու կառքերը լըծել բոլոր:  
Եվ անհասպաղ էլան նըրանք, հազան իրենց զըրահ ու գեճն  
Ու նըստեցին կառքերն իրենց թե՛ կառավար և թե՛ ոսգմիկ:  
Զիավորներն առաջ անցան, ետևից ամպն հետևակաց,  
Որոնց միջից ընկերները տանում էին Պատրոկլեսին,  
Ծածկելով դին իրենց գըլխից կըտրած գըցած գիսակներով:  
Իսկ Աքիլլեսը ետևից գըլուխն էր բըռնել տըրտմաթաթալ  
Զի ընկերոջն իր անբասիր՝ դըժոխքի տուն էր ողարկում:  
Եվ երբ նըրանք Աքիլլեսի նըշանակած տեղը հասան,  
140 Պատրոկլեսին դըրին գետին ու դիզեցին փայտը շեղջ-շեղջ:  
Այնժամ դյուցազն Աքիլլեսի միտքը ուրիշ մի բան ընկավ.  
Փայտակույտից հեռու կանգնած կըտրեց իր շեկ մազերը նա,  
Որ թողնում էր երկարելու Սպերքիոս գետին ի ձոն,  
Եվ աչքերը ծովին հառած՝ այսպես խոսեց հառաչելով.  
«Ապերիթե՛, Պելևս հայրըս ի գուր սըրտանց ուխտ արավ քեզ,

Որ եւ կըովից երբ ողջ-առողջ դառնամ սիրուն իմ հայրենիք,  
Գանգուրներըս քե՛զ նըվիրեմ, մատուցելով զոն արբազան,  
Մորթեմ հիսուն պարարտ խոյեր աղբյուրներիդ ակունքի մոտ,  
Ռրտեղ ունես դու մի սուրբ դաշտ ու մի բազին անուշաբույր:  
150 Այսպես ուխտեց ծերը, ասկայն թողիր իղձը դու անկատար:  
Եվ արդ, քանզի չեմ դառնալու եւ հայրենիքն իմ սիրասուն,  
Գիտակներըս տալիս եմ եւ Պատրոկլեսին առնի տանի»:

Այսպես ասաց ու մազերը իր սիրելու ձեռքում դրեց  
Եվ ամենքի սիրտը լըցրեց աղեկըստոր լաց ու կոծով:  
Անտարակույս կըողբային նըրանք մինչև արևամուտ,  
Եթե Աքիլլն Ագամեմնին մոտենալով չասեր նըրան.  
«Ո՛վ Ատրիդես, զի աքայանք քեզ ավելի շուտ եմ լըսում,  
Ասա՛ նըրանց, որ բավական համարեն լաց ու կոծն այսբան,  
Եվ խարույկից հեռանալով, հըրամայիր զորքի համար  
160 Առատ ընթրիք պատրաստելու, իսկ մենք մոտիկ սըրտակիցներս  
Մահացալի մասին հոգանք, պետերն էլ թող մընան այստեղ»:

Եվ անալով Աքիլլեսին, Ագամեմնն արանց արքան  
Հըրամայեց զորքին իսկույն ցըրվել դեսպի նավերն իրենց:  
Եվ մընացին այնտեղ միայն հողարկավոր մարդիկ, որոնք  
Պատրաստեցին խարույկ՝ հարչուր ոտնաչափ լայն տարածությամբ  
Եվ խարույկի վըրս դըրին մահացալին՝ խոցված սըրտով:  
Փայտակույտի առջև ապա փողոտեցին իրար ետև  
Պարարտ խաշներ և ծանրաքայլ ու կորեղջուր ցուլեր բազում,  
Եվ առնելով մեծահոգի Աքիլլեսը ճարպը նըրանց՝  
170 Ոտքից գըլուխ ամբողջովին ծեփեց մարմինը Պատրոկլի  
Ու շուրջ-բոլոր շարեց մորթված միսը մեծ-մեծ կըսորներով,  
Եվ գետեղեց դիակի շուրջ յուղ ու մեղրի շատ սըրվակներ,  
Փայտակույտի վըրս նետեց հըսկա ուժով հանկարծակի  
Ահիպարան չորս նըժույզներ, հառաչելով հոգու խորքից:  
Սըբան ուներ ինը հատ շուն իր սեղանից կերակըրված.  
Փողոտելով նա երկուսին՝ փայտակույտի վըրս նետեց:  
Եվ մըտադրած ոճիրը ժանտ ի գործ դըրսւմ, սուր պըղընձով  
Խողխողելով տըրոյացի տասներկու քաջ պարմաններին  
Նետեց այնտեղ, որ խարույկի բոցը ահեղ լափի նըրանց,  
180 Եվ սիրելի իր ընկերոջն այսպես ասաց հուժկու ձայնով.

«Ոհրախացի՛ր, ով Պատրոկլե, դու դըժոխքի տան մեջ անգամ.  
Կատարում եմ ահա ինչ որ քեզ խոստացա եւ նախասպես.  
Տըրոյացի տասներկու քաջ պատանիներ նըշանավոր  
Այրըվում եմ քեզ հետ ահա ամենակույ բոցերի մեջ.  
Իսկ Հեկտորին ոչ թե հըրին, այլ շըներին տամ պիտի կեր»:

Այսպէ՛ս սպառնաց, բայց շըները մարմնին մոտիկ չէին գալիս,  
Զի Աստղիկը՝ դուստրը Զևսի հետու էր միշտ վանում Արրանց  
Գիշեր-ցերեկ և օծում էր վարդի յուղով Հեկտորի դին,  
Որ Աքիլլեան այն քարշ տալիս՝ վերք չըբացվի մարմնի վըրա:  
190 Իսկ Ապոլլոնը պարտրեց դիակն ամպով մի կապտտակ,  
Որ երկընթից մինչև գետինն իջած ծածկում էր այնքան տեղ,  
Որքան մարմինն էր գըրավում, որ բոցավառ արևը բարկ  
Չըշորացնի թարմ անդամներն ու մըկանները Հեկտորի:

Բայց փայտակույտը Պատրոկլի դիակի տակ չէր բըռընկվում:  
Այն ժամանակ Աքիլլը ժիր ուրիշ միջոց մի մըտածեց.  
Փայտակույտից հեռանալով խընդրեց երկու քամիներին՝  
Բորեասին ու Զեփյուռին, ովստեց ընտիր-ընտիր զոհեր,  
Եվ ոսկեղեն իր բաժակով ճոխ ցըրվերներ հեղելով ցա  
Աղաչում էր Արրանց, որ գան ու բորբոքեն հուժկու շընչով  
200 Խարույկի հուրն ու դիակներն այրեն ուժգին բոցերի մեջ:

Արագաթն Իրիսն այնժամ ի յոր Արրա աղերսանքին,  
Փութաց իսկույն, որ մեծաշունչ քամիներին պատգամ տանի:  
Զեփյուռի տանը հավաքված ուրախանում էին Արրանք.  
Ու կանգ առավ կըճյա շենքի վըրա Իրիսն անմիջապէս:  
Ուտքի էլան բոլոր հողմերն իսկույն, հենց որ տեսան Արրան,  
Եվ ամեն մեկը Արրանցից Արրան իր մոտ էր հրավիրում,  
Բայց Իրիսը չուզեց Արատել ու հողմերին այսպէս ասաց.  
«Ես ժամանակ չունեմ այստեղ Արատելու ձեր խրախճանքին,  
Պետք է գընամ դեպ հոսանքներն Օվկիանոսի, էթովպացոց  
210 Երկիրն հետու, որտեղ զոհեր են մատուցում աստվածներին.  
Գընում եմ, որ ցըրվերներին հաղորդակից լինեմ և ե՛ս:  
Բայց Աքիլլեան աղաչում է, խոստանալով ընտիր զոհեր,  
Որ դուք, Զեփյու՛ր ու Բորեա՛ս, գընաք իսկույն ու բորբոքեք  
Խարույկը այն, որի վըրա Պատրոկլեաի դին է դըրված,  
Որի համար ողբում են ողջ արայեցիք միահամուռ»:

Ասաց Իրիսն ու հեռացավ. էլան հողմերն անեղագոչ  
Եվ քըշելով ամպերն իրենց առջևից մեծ դըղըրդյունով  
Թըռան դեպ ծով, ուր բարձրացան ալիքների հըսկա լեռներ  
Ու հասըշտասպ ժամանելով Արրանք Իլիոն՝ հուժկու շընչով  
220 Փայտակույտի վըրա ընկան, ու ճարճատեց կըրակն անեղ:  
Փըշում էին գիշերն ի բուն, արծարծելով կըրակը բորք.  
Եվ Աքիլլեան ամբողջ գիշեր կըկնատաշտակ իր բաժակով  
Ոսկյա կըծից գինին առնում ու հեղում էր գետնի վըրա.



- Թըրջում էր հողն ու ձայն տալիս Պատրոկլէսի թըշվառ հոգուն:  
 Ինչպէս հայրն է դառնակըսկիծ սուգ անում իր նորափեսա  
 Միակ որդու ոսկորները խարուկի մէջ այրելիս,—  
 Այդպէս ողբում էր դառնապէս Աքիլլէսը խելակորույս  
 Եվ անդադար հառաչելով պըտըտվում էր խարուկի շուրջ:  
 Իսկ լուսաբեր Արուսակը, երբ որ էլավ երկրի վըրս,  
 230 Որից հետո ծովի վըրս քըրքմահանդերձ Այգն է ծագում,  
 Բոցը մարեց Պատրոկլի տակ, ու խարուկի հուրը հանգավ:  
 Թողին հողմերն ու տուն դարձան, սըլանալով Թրակլյան ծովից:  
 Հուզված էր ծովն ալեծածան ու մըռընչում էր հողմակոծ:  
 Աքիլլէսը հոգնած էր խիստ և խարուկից հեռանալով,  
 Գընաց պտակեց, և քունն անուշ իջավ վըրան անմիջապէս:  
 Մյուսներն ալնժամ Ատրիդէսի շուրջը եկան հավաքվեցին,  
 Որոնց ոտքի ձայնից զարթնեց Աքիլլէսն ու այսպէս սասաց.  
 «Ազամեմնոն, և դուք բոլոր իշխանները սքայեցոց,  
 Նախ և սուսչ սև գինիով մարեք խարուկն ամբողջապէս,  
 240 Որքան տեղ որ կըրակի մեծ զորությունը տեղ է բըռնել,  
 Որից հետո հավաքեցեք Մենիտլանի ոսկերտոին  
 Եվ խընամքով առանձնացրեք. նըրանք շատ հեշտ են ճանաչվում,  
 Զի խարուկի մեջտեղն էր նա, իսկ մյուսները, խստնիխոուն,  
 Երիվարներն ու պատանիք կրակի եզրերն էին վառվում:  
 Եվ աճյունը զետեղելով մի ոսկեղեն սափորի մէջ  
 Ծեփեցեք այն երկտակ ճարպով, մինչև ինքս էլ կիջնեմ դըծոխք:  
 Չեմ ուզում որ այնքան էլ մեծ դամբան շինվի նըրա համար,  
 Այլ լոկ համեստ մի հողաթումբ, իսկ հետո դուք աքայանքըդ,  
 Որ պիտ ապրեք ինձանից ետ, նավերի մոտ կըկառուցեք  
 250 Մեծատարած ու բարձրաբերձ մի դամբարան՝ մեզ երկուսիս»:

- Այսպէս սասաց, և անասցին նըրանք դյուցազն Աքիլլէսին:  
 Նախ մարեցին սև գինիով նըրանց խարուկն ամբողջապէս,  
 Որքան տեղ որ բոցն էր բըռնել, աճյունը իջավ, նըստեց.  
 Ապա լալով հավաքեցին հեզաբարո Պատրոկլէսի  
 Ռսկորները սափորի մէջ, ծածկեցին այն երկտակ ճարպով  
 Եվ խորանի խորք դընելով՝ նուրբ կըտավով ըսքողեցին:  
 Խարուկի շուրջը զըծեցին բոլորաձև մի գերեզման,  
 Խոր փորեցին ու պեղելով հողը փըխրուն՝ կուտակեցին  
 Եվ կանգնելով մեծ հողաթումբ, թողին նըրանք ու հեռացան:  
 260 Իսկ Աքիլլը ժողովըրդին շըրջանաձև նըստեցնելով,  
 Նավից հանեց մըրցանակներ՝ եռոտանի, փայլուն սաներ,  
 Երիվարներ ու ջորիներ, ու կատափներ հաղթ եզների,  
 Բազմապիսի փայլուն իրեր ու գեղիբան սիրուն կանաչք:

Նախ և առաջ նա գեղեցիկ մըրցանակներ նըշանակեց  
 Կառքով արագ թըռչողներին,— ձեռագործի հըմուտ մի կին  
 Եվ կանթավոր մի մեծ կաթսա՝ քըսաներկու կապիճանոց:  
 Սա առաջնին. իսկ երկրորդի համար դըրեց նա մի զամբիկ  
 Վեց տարեկան, դեռևս անվարժ, որ հըղի էր ջորու սաղմով:  
 Եվ երրորդին՝ չորս կապիճանոց մի սան, կըրակ դեռ չըտեսած

270 Արծաթափայլ ու պաղպաջուն. և չորրորդի համար ապա  
 Դըրեց երկու տաղանդ ոսկի. հինգերորդին՝ մի դաշխտրան:  
 Ապա ոտքի ելած Աքիլլն՝ այսպես սասց արգիացոց.

«Ո՛վ Ատրիդես և դուք բոլոր պըղընձազգեստ աքայեցիք,  
 Այս պարգևներն ըսպասում են այստեղ կառքով մըրցողներին:  
 Եթե հանդեսն այս աքայանք սարքեին ա՛յլ մարդու համար,  
 Ես առաջին պարգևն անշուշտ ստած՝ վըրան կըտանեի:  
 Գիտեք, որ իմ երիվարներն աննըման են արիությանը.  
 Չի սերում են անմահներից. Պոսեյդոնը տըվեց նըրանց  
 Պելևս հորըս իբրև պարգև, իսկ Պելևսն էլ ինձ պարգևեց:

280 Բայց ես մըրցման չեմ մըտնելու, ձիերս պետք է հանգըստանան:  
 Ծ՛, կորցըրին մի այնպիսի փառապըսակ վարիչ նըրանք,  
 Որը հաճախ լուրն հոսանուտ վար էր թափում նըրանց բաշից,  
 Լըվանալով մաքուր ջըրով. կանգնած հիմա արտասովաթոր  
 Նըրս սուգն են անում նըրանք, բաշով գետինը ավլելով:  
 Իսկ դուք մյուս քաջ աքայեցիքդ, ով որ վըստահ է ձեզանից  
 Իր ձիերի և ամրակազմ կառքի վըրս, թող գա հանդես»:

Ասաց Պելևսն, ու շատերը աշխուժորեն առաջ եկան:  
 Առաջինը հանդես եկավ Եվմեդուր՝ մարդկանց արքան,  
 Որ քաջ որդին էր Ադմետի և գերապանձ կառահըմուտ:

290 Նըրանից ետ ելավ Տիդյան Դիոմեդեսն հըսկայազոր,  
 Տրովյան ձիերը լըծելով, որ Էնիասից էր ավարել,  
 Իսկ Էնիասին ինքն Ապոլլոնը ազատեց ահեղ ժամին:  
 Ապա ելավ խարտյաշ Ատրիդ Մենելայիը դյուցազնազարմ,  
 Լըծեց կառքին արագաթոփչ երկու աշխույժ նըժույզներին՝  
 Ազամեմնի Ճայիկը սև և իր Ճեպուկը սեփական:  
 Եքեպոլոսն ընծայեց այն Ազամեմնոն թագավորին  
 Այն պայմանով, որ նըրս հետ ինքը հողմոտ Իլիոն չըգա,  
 Այլ մընա տանն ու վայելի ճոխ պարգևներն Արամազդի,  
 Բընակվում էր հանգըստավետ Սիկիոնի մեջ արձականիստ:

300 Լըծեց Ճայիկն այդ սըրընթաց, որը պատրաստ էր արշավի:  
 Անտիլոքոսն ապա կազմեց նըժույզներն իր գեղեցկաքաշ,  
 Ծըքեղ որդին Նելլան Նեստոր մեծահոգի թագավորի,  
 Կառքին լըծած Պիլոսածին սըրաթըրոփչ երիվարներ:

Հայրը մոտիկ գալով որդուն՝ այս խորատիչ խոսքերն ասաց.

«Քեզ, Անտիլոք, Արամազդը և Պոսելոհոնը դեռ մանկությո՜ւն  
Սերտ սիրելով՝ սովորեցրին ձի վարելու ամեն արվեստն,  
Ուստի, որդիս, երկար-բարակ խորատների կարիք չունես,  
Դու քաջ գիտես նրանի շուրջ դառնալ արագ, բայց ձիերըդ  
Արշավի մեջ դանդաղ են շատ, վախենում են, թե վրնաավես:»

310 Մուր են ձիերը մյուսների, սակայն նրանք չունեն քեզ չափ  
Խելք ու շքնորհք, ոչ էլ քեզ պես հըմուտ են ձի վարելու մեջ:  
Ուստի, որդիս, արա այնպես, որ չըմընաս անըրբացանակ:  
Հյուսնը խելքով, քան թե ուժով պետք է որ իր գործը տեսնի.  
Նավավարն էլ իմաստությամբ ու խելքով է ղեկավարում  
Իր սրբընթաց նավը մըթին մըրըրկածուփ ծովի վրա.  
Կառավարն էլ կառավարին անցնում է իր իմաստությամբ:  
Իսկ ով որ իր կառքին միայն ու ձիերին վըստահանա,  
Կըպըտըտվի ասպարեզում խելակորույս այստեղ-այնտեղ  
Ու չի կարող հաղթահարել իր ձիերին արշավելիս:

320 Իսկ խելացի կառավարը թեկուզ վատթար նըծույզներով,  
Աչքը հառած նըպատակին, մոտից կանցնի և գիտե թե  
Նա ե՞րբ պետք է որ թուլացնի արջառենցի փոկերը պիրկ,  
Բայց նրանց միշտ ամուր բըռնած՝ առաջն է նա մըտիկ անում:  
Նըշանակետն անա ցույց տամ, որ քո աչքից չըվըրիպի.  
Մի գըրկաչափ չոր փայտ այնտեղ, գետնի վըրա խըփված է, տես,  
Կաղնի է նա և կամ սոճի, որ չի փըտում անձրևներից,  
Եվ երկու կողմ, աչից-ձախից կան ըսպիտակ երկու քարեր  
Ճամփի բերան, և նըրա շուրջ ասպարեզը հարթ է բոլոր:  
Թերևս դա գերեզման է մի հինավուրց մահկանացվի

330 Եվ կամ թե քար ասահմանանիշ՝ հին մարդկանցից այդտեղ դըրված  
Որը Աքիլն արշավանքի դըրեց իբրև նըշանակետ:  
Դու այդ քարի մոտից քերիք, վարելով քո ձիերն ու կառք,  
Եվ պընդակապ աթոռիցըդ փոքր-ինչ դեպի ձախը ծրուփիք,  
Ըսպառնաձայն մըտրակելով աջակողմյան երիվարին  
Եվ թուլացրու բավականին երասաններն այդ նըծույզի:  
Իսկ ձախ կողմի ձին նըշանի մոտից թող որ անցնի ալնպես,  
Որ կարծել տա, թե անիվը նըպատակին պիտի քըսվի:  
Բայց այդ պահին ըզգուշացիր, որ չըլինի քարին դիպչես,  
Ծուռ տաս, փըշրես կառքըդ և քո նըծույզները վիրավորես,

340 Ուրախություն առթես այլոց և մընաս ինքըդ ամոթահար:  
Ուրեմն եղիր ըզգուշավոր, և խելացի եղիր, որդիս,  
Ձի եթե դու նըպատակին շըփվես ընդհուպ և անց կենաս,  
Ոչ ոք պիտի չըկարենա այլևս հասնել քեզ, կամ անցնել,  
Նույնիսկ եթե քո ետևից Ադրեադի վեճ որդին Արիոնն

Իր ձին վարի սրբաթռոչ, որը ծընունդ էր աստըծու,  
Եվ կամ այստեղ սրնված ընտիր նրծույզները լավմեղոնյան»:

Այսպես ասաց Նեյյան Նեստորն ու դարձավ իր տեղը նըստեց,  
Այս կարևոր խորհուրդները տալով որդուն՝ Անտիլոթին:

- Հինգերորդը Մերիոնեսն իր ձիերը կարգավորեց  
350 Կառք նըստելով, և զըցեցին բոլորն իրենց վիճակները.  
Եվ շարժում էր Աքիլն ինքը վիճակներն այդ՝ սաղավարտում:  
Եվ առաջինը Նեստորյան Անտիլոթի վիճակն էլավ,  
Նըրանցից ետ էլավ վիճակը Եվմեյոս թագավորի.  
Հետո էլավ Մենեյավոս Ատրիդիանը կորովատեգ.  
Նրանցից ետ արշավելու վիճակն ընկավ Մերիոնեսին  
Եվ վերջինը արիագույն Դիոմեդի վիճակն էլավ:  
Եվ կանգնեցին հրրանք կարգով, ու ցույց տըվեց Աքիլն այնժամ,  
Նըշանակետն հեռու դաշտում, և նըրա մոտ իբրև վըկա  
Նա նըստեցրեց աստվածատիպ Փիհիքսին՝ հոր կապարճակրին,  
360 Որ հետևի արշավանքին ու նըշմարհուն ասի արդար:

Այնժամ նըրանք բոլորն իրենց մըտրակները բարձրացնելով  
Մըտրակեցին նրծույզներին, հորդորելով ուժգընաձայն:  
Ձիերն իսկույն տեղից պոկված արշավեցին սրբաթռոչ,  
Փռշին նըրանց յանջքի տակից բարձրանում էր ամպի նըման,  
Ու բաշերը հողմի շընչով ծըփում էին ու ծածանվում:  
Կառքերը մերթ սողում էին բարեբեղուն գետնի վըրս,  
Ու մերթ կարծես թըռչում օդով. կառավարներն ամուր նըստած  
Վառվում էին հաղթանակի տենչով բորբոք, սըրտասըրրով,  
Հորդորելով նրծույզներին, որոնք թըռչում էին փոշում:

- 370 Իսկ երբ արդեն ձիերն իրենց վերջին ընթացքն էին առնում,  
Ծուռ գալով դեպ ծովն ըսպիտակ, այդտեղ արդեն կըրկնապատկվեց  
Արիությունն, ու լավում էր տարածությունն ամեն նըծույզ:  
Անդ Փերեսյան ձիերն արագ անցան բոլոր նըծույզներից,  
Նըրանցից ետ ցուլում էին Դիոմեդյան գեղազատներն  
Տըրրույացից, ոչ թե հեռու, այլ շատ մոտիկ, կառքին ընդհուպ,  
Որ թըվում էր ամեն վայրկյան պիտ էլենին կառքի վըրս,  
Որոնց շունչը տաքացնում էր թիկունքը լայն՝ Եվմեյոսի.  
Գըլովները նըրա վըրս բըռնած սուրում էին նըրանք,  
Որոնք գուցե և անցնեին, կամ թողնեին երկբայելի  
380 Հաղթությունը, եթե Տիդյան Դիոմեդի վըրս Գուշակ  
Ապոլլոնը դիս չունենար, որ մըտրակը զըցեց ձեռքից:  
Նա գայրացավ և աշքերից Դիոմեդի արցունք հոսեց,  
Երբ տեսավ, որ գավթիկները թըռչում էին արշավատուր,

- Մինչ իրենները անմըտրակ դանդաղեցրին ընթացքն իրենց:  
 Բայց աննգությունն Ապոլլոնի Դիոմեդես Տիդյանի դեմ  
 Չրվորիպեց Աթենասի սուր աչքերից, որ շուտ հասավ,  
 Տըվեց մըտրակը Տիդյանին և ձիերին ուժ ներշնչեց,  
 Եվ Ադմետի որդու ետևն ընկած ցասկոտ աստվածուհին  
 Կոտրեց լուծը նրծույզների ու ճալիկները խորտնեցին,  
 390 Արշավեցին ճամփից ելած, քեղին անլուծ ընկավ գետին,  
 Եվ Եվմեդուն անվի մոտից նըստարանից վայր գըլորվեց.  
 Արմունկները, քիթն ու քերանը քերծվեցին արյունոտոված,  
 Ծեղքվեց ճակատն հոնքերի մոտ, և լրցվեցին արտասուքով  
 Նըրա աչքերն ու կոկորդում նըվաղեց ձայնը զորավոր:  
 Իսկ Դիոմեդը թեքելով իր նըծույզներն առաջ անցավ  
 Մյուս բուրից, զի Պալլասը տըվեց կորով նըծույզներին  
 Ու նըրան՝ փառք, որից հետո Մենելավոսն էր սըլանում:  
 Բայց Անտիլոքն այսպես հորդոր տըվեց իր հոր նըծույզներին.  
 «Դո՛ւք էլ թըռեք, երիվարներ՛ս, արագացրե՛ք ընթացքը ձեր.  
 400 Չեմ պահանջում ես ձեզանից, որ դուք մըրցման մըտնեք խիզախ  
 Քաջ Տիդյանի ձիերի հետ, որոնց տըվեց Պալլասը ուժ  
 Եվ պարզենց դյուցազունին հաղթանակի փառք ու պարծանք:  
 Բայց շո՛ւտ հասեք Ատրիդյանի նըծույզներին, ետ մի մընաք,  
 Որպեսզի ձեզ չամաչեցնի նըրա Սևուկ զամբիկը ծիր,  
 Եվ նա ինչո՛ւ զամբիկ տեղով պիտի ձեզնից առաջ անցնի:  
 Ասում եմ ձեզ ահավասիկ, և սասածըս կըկատարվի,  
 Այլևս ձեզ հոգ չի տանի ազգաց հովիվ Նեստորը ծեր,  
 Այլ սայրասուր պըղընձով ձեզ նա կըսպանի, եթե երբեք  
 Անփույթ լինեք ու մըրցման մեջ տանեք պարզև նըրվաստագույն:  
 410 Օ՛ն ուրեմն, Մենելավի նըծույզներին հասեք իսկույն,  
 Իսկ ես պիտի ի գործ դընեմ մի խորամանկ խաղ ու հընարք՝  
 Սըպըրդելու մի նեղ տեղից, և կարծում եմ՝ չեմ վըրիպի»:

Այսպես ասաց, և իշխանի սաստից ձիերն ակնածելով՝  
 Փոքըր մի պահ սուր սըլացան, և Անտիլոքն արիասիրտ  
 Ծուտով տեսավ, որ նեղանում էր ճանապարհը գոգավոր:  
 Չըմեռային անձրևն այնտեղ լըճանալով ճամփան քանդել,  
 Փոս էր գըցել բավական տեղ, Մենելավոսը այնտեղից  
 Սըլանում էր, վախենալով մյուս կառքերին զարնըվելուց:  
 Անտիլոքն էլ այդ ուղղությամբ ընթանալով, փոսի եզրից  
 420 Փոքր-ինչ շեղվեց և քըշում էր նըծույզները սալաըմբակ:  
 Մենելավոս արքան սուկաց ու ձայն տըվեց Անտիլոքին.  
 «Անտիլոքե՛, ո՛ւր ես քըշում կառքըդ այդպես խելակորույս,  
 Նըծույզներիդ սանձը քաշիր, տեսնում ես, որ նեղ է ճամփան.

Ըստասիր որ քիչ լսյնանա, այն ժամանակ առաջ կանցնես.  
Գուցե կտոքներս ընդհարվելով՝ վընաս հասնի երկուսիս էլ»:

Այսպես ասաց. Անտիլոքը չըրքսելու տալով նըրան,  
էլ ավելի շատ տաքացավ ու մըտրակեց իր ձիերին:  
Եվ որքան տեղ, որ կըտրում է գունդը հուժկու ձեռքից նետված,  
Երբ մի կըտրի՞՞՞ երիտասարդ իր տարիքի ուժն է փորձում,—  
430 Ձիերն այդքան առաջ անցան, ու ճայիկներն ետ մընացին,  
Մենելավոնսն ինքը դիտմամբ քաշեց նըրանց սանձերը ձիզ,  
Որ մի գուցե սպասըմբակ նըժույզները ճանապարհին  
Ընդհարվելով իրար հանկարծ շոտ տան կտոքերն, ու մինչ իրենք  
Դեպ հաղթանակն են սըլանում՝ ցած գըլրովեն փոշեթավալ:  
Եվ կըշտամբեց նըրան խարտյաշ Մենելավոնսն անեղ ճայնով.  
«Անտիլոքե՛, չըկա քեզմից ավելի չար, անօրեն մարդ.  
Չըքվի՛ր, ճիշտ չէ, որ աքայանքս խոհեմ էինք համարում քեզ.  
Բայց այդպիսով, առանց երդման դու մըրցանակ չես տանելու»:

Այս ասելով՝ անեղաձայն խորախուսեց իր ձիերին.  
440 «Ինչո՞ւ եք ետ մընում, ձիերս, ինչո՞ւ համար եք վըհատվում.  
Նըրանց ծընկները ձերինից ավելի շոտ պիտի հոգնեն,  
Քանզի վաղուց ուժից ընկած՝ երկուսով էլ ծեր են արդեն»:

Այսպես ասաց, և արքայի սաստից նըրանք պատկանելով՝  
Սըրաթըրոյն առաջ անցան ու շատ շոտով հասան նըրանց:

Աքայեցիք մըրցարանում նըստած՝ հանդեսն էին դիտում,  
Մինչ կտոքերը թըռչում էին դաշտից փոշի բարձրացնելով:  
Նախ նըկատեց Իդոմենեսն արշավասույր նըժույզներին,  
Որովհետև նըստած էր նա հրապարակում բարձր մի տեղ  
Եվ լըսելով կառավարի ձայնը հեռվից՝ նա ճանաչեց  
450 Ու նըշմարեց առաջընթաց երիվարին երևելի:  
Ոտքից գըլուխ ամբողջովին աշխետ էր նա, բայց ճակատին  
Բոլորաձև, լուսնաըման մի ըսպիտակ միշ ուներ նա:  
Ոտքի ելավ Իդոմենեսն ու աքայանց այսպես ասաց.  
«Ո՛վ սիրելի առաջնորդներ և իշխաններ արգիացոց,  
Միմիայն ե՛ս, թե դո՛ւք էլ եք տեսնում արդյոք նըժույզներին:  
Թըլվում է ինձ, թե առաջից ուրիշ ձիեր են այդ սուրում,  
Կառավա՛րն էլ ուրիշ մարդ է, բայց Եվմելի զամբիկներին  
Ինչ-որ մի բան ետ է պահում, առաջ աչքի էին ընկնում:  
Ես տեսա, որ նըշանակետն առաջինը նըրանք անցան,  
460 Սակայն հիմա և ոչ մի տեղ ես չեմ կարող տեսնել նըրանց,

Որքան էլ որ պըտտեցնում եմ աչքըս դաշտում տըրոյական:  
Կառավարի ձեռքից գուցե սանձը ընկավ, կամ կետի շուրջ  
Չըկարեցավ ամուր բըռնել և այն անցնել հաջող կերպով,  
Եվ կամ գուցե ընկավ այնտեղ, ու շուտ եկավ կառքը նրա,  
Խըրտընեցին ձիերն անգուսպ ու դուրս եկան ճանապարհից:  
Դո՛ւք էլ ելեք և նայեցեք, գուցե ես լավ չեմ որոշում,  
Բայց թըվում է, թե հաղթողը էտուացի զարմիկ է մի—  
Դիտմեղը՝ քաջ Տիդեսի որդին իշխանն արգիացոց»:

Եվ Ոյիլյան Այաքսն այսպես պատասխանեց կուպիտ կերպով.  
470 «Իդոմենե՛ս, ի՞նչ ես այդպես անժամանակ դու բարբաջում,  
Որովհետև ահավասիկ բարձր արայանց զամբիկներն են  
Որ դեպի մեզ են սըլանում լայնատարած դաշտի միջով:  
Աքայանց մեջ դու փոքրը չես քո տարիքով, ծեր ես արդեն  
Եվ քո գըլխից աչքերըդ լավ չեն նըշմարում, բայց շարունակ  
Ծաղփաղփում ես, վայել չէ քեզ զըրախոսել բոլորովին,  
Որովհետև այստեղ քեզնից ավելի լավ տեսնողներ կան:  
Նույն զամբիկներն են արշավում, որ ըսկըզբից առաջ էին,  
Եվ կառավարն էլ Ադմետյան Եվմեյն ինքն է առաջընթաց»:

Կըրետացոց պետը ցամամը նրան այսպես պատասխանեց.  
480 «Ո՛վ Ոյիլյան Այաքքս դու, չարալեզու և կըովարար,  
Ըստորագո՛ւյնդ արայանց մեջ, ապերասան մըտքի՛ տեր մարդ,  
Արի գըրավ դընենք այստեղ եռոտանի կամ թե մի սան,  
Եվ դատավոր թող լինի մեզ Ագամեմնոնն արդարամիտ,  
Թե ո՞ր ձիերն են նախարշավ, որ հասկանաս տույժ կըրելով»:

Այսպես ասաց, և Ոյիլյան Այաքսն արագ ոտքի ելավ,  
Բարկությունից մըռմըռալով, որ պատասխան տա խըստասիրտ:  
Եվ նըրանց ռխն անտարակույս հետու կերթար, եթե իսկույն  
Աքիլեսը վեր չըկենար և չըսաստեր նըրանց այսպես.

«Իդոմենե՛ս, Այա՛քս, այլևս վերջ տըվեք ձեր խիստ խոսքերին,  
490 Ձեզ վայել չէ ժողովըրդի առաջ այդպես բանակըրովել:  
Ինքներդ պիտի բարկանայիք, թե ուրիշներն այդ անեին:  
Հանգիստ նըստած, բարեկամներս, նըժույզներին նայեցեք դուք,  
Որոնք շուտով այստեղ, մեզ մոտ պիտի հասնեն հաղթանակած՝  
Մըրցանակներ ըստանալու, այն ժամանակ պիտի տեսնեք,  
Թե նըրանցից ո՞րը առաջ կըժամանի, ո՞րը հետո»:

Խոսքը հազիվ էր վերջացրել, երբ երևաց Տիդյանն ահա՛  
Մըտրակելով ուներն անդու իր ժիրածիր նըժույզների,

Որոնք լսւիում էին ճամփան օդապարիկ մի թռուիչքով:  
Ու դիզվում էր կառավարի վըրա փոշին ճանապարհի:  
500 Ոսկեսար կառքն անագազարդ գըլորվում էր արագորեն,  
Եվ անհիվներն հագիլ էին հետքեր թողնում իրենց ետև,  
Այնքան արագ էին թռչում երիվարներն արշավասույր:  
Դիմեղենն հասավ իսկույն ու շրջանի մեջ կանգ առավ.  
Քըրտինքն հոսում էր ձիերի պարանոցից ու լայն կըրծքից.  
Դիմեղենն անմիջապես փայլուն կառքից ցատկեց գետին  
Եվ մըտրակը հեռեց լրծան. Սթենեյունս այն ժամանակ  
Մըրցանակներն առավ փութով՝ մի կին և մի եռոտանի  
Ընկերներին տըվեց տանեն, ինքն ըզբաղվեց նըծույզներով:

Նըրանից էտ կառարշավում էր Անտիլոքն երիտասարդ,  
510 Դավով և ո՛չ արագությանը անց կենալով Մենեյալին,  
Բայց Մենեյալն ընդհուպ նըրա ետևից էր կառարշավում:  
Որքան միջոց, որ լինում է կառքի միջև և ձիերի,  
Երբ որ տերը կառքում նըստած սըլանում է դաշտի միջով,  
Ձիու պոչի մագերի ծայրն քըսվում է գիլ եկող անլին,  
Այնպես մտոից է վագում ձին, որ միջոցը չընչին է շատ,—  
Այդքանով էր էտ Մենեյալն ըսքանչելի Անտիլոքից,  
Մինչդեռ առաջ գընդակաչաչի կար անըրբալետ նըրանց միջև:  
Բայց նա արագ հասավ նըրան, գի բորբոքվում էր գընալով  
Աշխուժությունն Ատրիդեյան գիսակագեղ Սուկ ճակի:

520 Եթե փոքր-ինչ ևս երկարեր նըրանց վագքի տարածությունն,  
Այն ժամանակ Մենեյալուն անտարակույս կանցներ նըրան  
Եվ հաղթությունն էլ վիճելի չէր մընալու նըրանց միջև:  
Իսկ Մերիոնենն՝ արիասիրտ ըսպասալորն Իդոմենի  
Տեգընկեցի չափով էտ էր մընացել քաջ Մենեյալից,  
Ձի գեղաբաշ նըծույզները դանդաղաշարժ էին նըրա,  
Եվ ինքն անվարժ էր, անհըմուտ կառարշավի արվեստի մեջ:  
Իսկ Ադմետի որդին հասավ ամենից վերջ, քարշ տալով իր  
Կառքը չըքնալ և առջևից երիվարները վարելով:  
Աքիլլեոսը այդ տեսնելով՝ նըրա համար ցավեց սաստիկ

530 Եվ կանգնելով արայանց մեջ այս թևալոր խոսքերն ասաց.  
«Առաջին քաջն ամենից վերջ է վարում իր ձիերն աշխույժ,  
Բայց տանք երկրորդ մըրցանակը, որին անշուշտ այժման է նա.  
Իսկ առաջինն առնի տանի Դիմեղեն Տիդյանը թող»:

Այսպես ասաց, և բոլորը հավան եղան նըրա վըճոհին:  
Եվ կըտային նըրան ճայկն արայեցոց հավանությամբ,  
Եթե որդին վեճ Նեստորի՝ Անտիլոքը վիրավորված,  
Վեր կենալով՝ Պելիսյանի դեմ այդպիսի դատ չըքանար.



«Եթե այդպես վարվես, Աքիլ, վըրադ ես շատ պիտ բարկանամ:  
Այդպես պատճառ բրոնելով դու, թե Եվմելի արագավազ  
540 Ձիերն ու կառքն հարվածվեցին, բայց քաջ է նա, կառամարտիկ,  
Մըրցանակըս պետք է խըլե՞ս. անմահների՛ն աղերսեր թող,  
Այն ժամանակ անշուշտ այդպես բոլորից ետ չէր մընա նա:  
Իսկ թե նըրան խըղճում ես դու, սիրելի է նա քեզ այդքան՝  
Վըրանիդ մեջ ունես անբավ ոսկի, պըղիմձ, խաշներ ունես,  
Աղախիմներ ունես բազում և նըծույզներ սախարմբակ.  
Տո՛ւր նըրանցից նըրան հետո, պարզև՝ թեկուզ իմից էլ մեծ,  
Կամ ուզում ես՝ թեկուզ հիմա, որ քեզ գովեն աքայեցիք:  
Ես զամբիկըս չեմ տա նըրան, աքայեցոց որդիներից  
Ով ուզում է հանդես գա թող, բազուկներով մըրցի ինձ հետ»:

550 Այսպես ասաց. Աքիլը ժիր ժըպտաց նըրա խոսքի վըրա,  
Ուրախացավ, սիրում էր նա երիտասարդ Անտիլոքին,  
Եվ դառնալով նըրան սիրով՝ այս թևավոր խոսքերն ասաց.  
«Անտիլոքե՛, քանի որ դու պահանջում ես, որ Եվմելին  
Պարզև տամ ես իմ վըրանից՝ ցանկությունըդ կըկատարեն:  
Կըտամ նըրան գըրահը, որ ավարեցի Աստրոպեից,  
Որը վերջում շըրջապատված է անագով ճերմակափայլ.  
Եվ կարծում եմ նըրա համար մի թանկարժեք պարզև է դա»:

Ասաց Պելյանն ու ընկերոջն՝ Ավտոմեդին հըրամայեց  
Գընալ բերել իր վըրանից. և նա իսկույն վազեց բերեց  
560 Տըվեց ձեռքը Եվմելուսի, որն ընդունեց ուրախությամբ:

Ուոքի ելավ ցաված սըրտով Մենելավը խարտիշահեր՝  
Անտիլոքի դեմ սըրտմըտած. և պատվիրակն Ատրիդեայան  
Դըրեց նըրա ձեռքում մականն արքայական ու պատվիրեց,  
Որ լուռ կենան արգիացիք, և դյուցառիպ մարդը ասաց.  
«Այդ ի՞նչ արիր, Անտիլոքե՛, դու որ ուշիմ էիր միշտ էլ.  
Ըստվերեցիր իմ փառքը դու, նըծույզներին իմ նեճեցիր,  
Մըղելով քո վատթարագույն ձիերն առաջ իմիճներից:  
Եվ արդ, ո՛վ դուք արգիացոց առաջնորդներ խորհըրդական,  
Մեր երկուսի միջև եղեք դատավորներ անկողմնակալ:  
570 Թող իմ մասին չասի ոչ մի պըղընձագեւտ աքայեցի,  
Թե Մենելավն հանիրավի փառագըրկեց Անտիլոքին  
Եվ ճայիկը առավ գընաց, մինչ իր ձիերն էին հոռի,  
Սակայն ինքը գենքի ուժով ու բըռնությամբ գերահըզոր:  
Լըսեք, ես ինքս եմ դատելու ու չեմ կարծում, թե մեկը իմ  
Դատաստանից դըժգոհ մընա, դատըս արդար է լինելու:

Արդ, Նեստորի որդի՛դ շըքեղ, Անտիոքե, այստեղ արի  
Եվ ձիերիդ ու քո կառքի առջև կանգնած, ըստ օրինի,  
Ձեռքըդ բրոնած ճապուկ մըտրակդ, որով դեռ նոր վարում էիր,  
Եվ դիպչելով նըծույզներիդ, երգվիր արքա Պոսելոնով,  
580 Թե նեհգությամբ ու դավով չէր, որ խոչընդոտ եղար կառքիս»:

Եվ Անտիոքն ուշիմ՝ այսպես պատասխանեց Մենելավին.  
«Ջըսպիր գայրույթըդ, Մենելավ, զի քեզանից կըրտսեր եմ ես,  
Դու ինձանից թե՛ տարիքով, թե՛ վեհությամբ մեծ ես, Ատրի՛դ,  
Ու լավ գիտես պատանեկան թերություններն ու սրխալներն.  
Պատանու միտքն աշխույժ ու ժիր, դատաստանը՝ կարճ կըլիմի:  
Հանգրստացրու սիրտըդ ուստի, իսկ զամբիկը, որ ըստացա,  
Քե՛զ կըտամ ես, ու թե ուզես՝ ուրիշն էլ իմ ունեցածից.  
Կըտամ, քան թե կընկնեմ աչքիցդ ես հավիտյան, դյուցասընճունդ,  
Եվ մեղավոր կըլիմեմ մեծ աստվածների առաջ ընդմիշտ»:

590 Այսպես ասաց երիտասարդ որդին մեծանձրն Նեստորի  
Ու ձին հանձնեց Մենելավին, և Ատրիդի սիրտը ցընճաց,  
Ջըվարթացավ, ինչպես երբ ցողն է հասկերի վըրս իջնում,  
Եվ արտերը սրբսրվալով ծածանվում են, ծըփում վետ-վետ:  
Այդպես և քո, Մենելավի՛ս, սիրտը ծըփաց, զըվարթացավ:  
Եվ նա այնժամ այս թևաժիր խոսքերն ասաց Անտիոքին.  
«Բարկացած եմ թեև, բայց քեզ պետք է զիջեմ ինքքս հիմա,  
Ջի դու երբեք, Անտիոքե, խենթ ու խելատ մարդ չես եղել,  
Պատանությունդ է հանցավոր, որ դու այսօր սրխալվեցիր:  
Ըզգուշացիր այսուհետև խորամանկել մեծերի հետ.

600 Ուրիշ ոչ մի դանայեցի չէր մեղմացնի ինձ այդպես հեշտ,  
Բայց քանի որ շատ տանջվեցիր այս կրուլի մեջ դու ինձ համար,  
Ինչպես հայրըդ ու եղբայրըդ, ուստի աղերսըդ լըսելով,  
Չամբիկը քեզ պիտի զիջեմ, թեև ինձ է պատկանում այն,  
Որպեսզի ողջ աքալեցիք լավ հասկանան, ինչպես և դու,  
Որ ես երբեք մեծամիտ չեմ ու չեմ եղել ժանտ ու անսիրտ»:

Ասաց, տըվեց Անտիոքի ընկերոջը՝ Նոյեմնին  
Չամբիկը, որ սունի տանի, իսկ ինքն առավ սանը փայլուն:  
Իսկ Մերիոնեսն իբրև պարգև՝ ոսկու երկու տաղանդն առավ,  
Ջի չորրորդն էր տեղ հասել նա, հինգերորդին մընաց պարգև  
610 Դաշխորանը կըրկնատաշտակ. Աքիլլեսը վերցըրեց այն,  
Առաջ եկավ ու Նեստորին տալով՝ այսպես ասաց նըրան.

«Այս էլ դո՛ւ առ, ո՛վ ծերունի, ու պահիր այն իբր հիշատակ  
Պատրուկեպի թաղման առթիվ, որին էլ չես տեսնելու դու  
Աքայանց մեջ. տալիս եմ քեզ այնպե՛ս, զի չես մասնակցելու

Ոչ բըռունցքով և ոչ տեգով, ոչ էլ ոտքով մըրցամարտի,  
Զի ծերությունը ծանրակիր տառապեցնում է քեզ արդեն»:

Ասաց, հանձնեց դաշխութանը. ծերն ընդունեց ուրախությամբ  
Եվ ուղեց այս սրբաթըռիչ խոսքերը վեճ Աքիլլեսին.

«Ծըշմարիտ ես ասում, որդյակ, և խելացի խոսեցիր դու.

620 Տըկարացել եմ անդամներըս. ո՛չ ոտքերըս, սիրելիդ իմ, ո՛չ էլ ձեռքերս

Էլ չեն շարժում աշխուժորեն թեթև, արագ, ինչպես ասաց:

Եթե լինե՛ր երիտասարդ տարիների ուժըս վըրաս,

Ինչպես դեռևս այն ժամանակ, երբ Եսիացիք թաղում էին

Ամարիանկես թագավորին Բուպրասի մեջ, ու սարքեցին

Աքայորդիք մըրցություններ ի պատիվ մեժ թագավորի:

Չըկար այնտեղ ինձ մըրցակից և ոչ մի մարդ, ոչ էպյանց մեջ

Ոչ պիլացոց մեջ միևչև իսկ, և ոչ վեհանձն Էտոլացոց:

Բըռնամարտում ես հաղթեցի այնտեղ կըտրիճ Կլիտոմեդին.

Պլերոնյան Անկեոսը գոտեմարտի էլավ իմ դեմ,

630 Նըրա՛ն էլ ես գետնով տըվի, վագքով անցա Իփիկլեսին,

Քաջ էր թեև, Պոլիդորին և Փիլեսին անցա տեգով:

Միայն ձիո՛վ հաղթեցին ինձ Ակտորյաններն արշավի մեջ,

Այն էլ թըլվով հաղթող եղան, նախանձելով հաղթանակիս,

Զի մեծամեծ մըրցանակներ էին դըրված այդ հանդեսում:

Երկու հոգով էին նըրանք, եղբայրներից մեկը ամուր

Սանձն էր բըռնել նըժույզների, մըտրակում էր մյուսն անդադար:

Այդպես էի մի ժամանակ, ջահելները թող որ հիմա

Առաջ անցնեն մըրցության մեջ, ծերությանըս պետք է անսամ.

Ես, որ փայլում էի առաջ դյուցազների մեջ փառապանձ:

640 Ծարունակիդ հիմա հանդեսն ի պատիվ քո ընկերակցի:

Քո ինձ տըրված այս մըրցանակն ընդունում եմ ուրախ սըրտով,

Որովհետև չես մոռանում քո ծերունի բարեկամին

Եվ կարող ես արժանապես մեծարել ինձ աքայանց մեջ:

Աստվածները թո՛ղ փոխարենն առատ շնորհներ պարգևեն քեզ»:

Այսպես ասաց, և Աքիլլեսն այդ գովեստները լըսելով՝

Ելավ զընաց դեպ աքայանց հրապարակն ակըմբահույլ,

Դըրեց այնտեղ դըժվարագույն կըռփամարտի մըրցանակներ:

Բերել տըրվավ, կապեց մեջտեղ վեց տարեկան մի էգ ջորի,

Հուժկու ուժով, դեռ անսովոր քեռան, անսանձ ու խըստերախ,

650 Իսկ հաղթվողի համար դըրեց փայլուն բաժակ մի կըրկնատաշտ,

Եվ կանգնելով բազմության մեջ այսպես ասաց արգիացոց.

«Ատրեորդի՛ք, և դուք բոլոր պղընձազգեստ աքայեցիք,

Այստեղ եղած ուժեղներից երկու մարդ եմ հըրավիրում,

Որ հանդես գան բըռնցքամարտ գուպարածով, և Ապոլլոնն

Ում էլ որ տա հաղթությունը աքաղեցոց արդար վընոով,  
Աշխատասեր ջորին այս թող առնի տանի վըրանը իր,  
Իսկ կըրկնատաշտ բաժակը թող պարտվողը ինքն ըստանա»:

Այսպես ասաց, և բազմության միջից ելավ հըսկա մի մարդ,  
Կըրփամարտի հըմուտ ու վարժ քաջ Եպետըր Պանոպյան  
680 Եվ բըռնելով աշխատասեր ջորու վըզից՝ բացականչեց.  
«Առա՛ջ թող գա, ով որ պիտի տանի բաժակը կըրկնատաշտ.  
Իսկ այս ջորին, ասում եմ ես, անկարող է խըլել ոչ ոք  
Ինձ հաղթելով բըռնամարտում, զի ամենից գորեղն եմ ես.  
Հերիք չե՞ որ պատերազմում անըրջան եմ,— դե ինչ արած,  
Երբ չի կարող մահկանացուն ամեն բանում հըմուտ լինել:  
Բայց ասում եմ բոլորիդ մոտ, և ասածըս կըկատարեմ,  
Կըջախջախեն ախոյանիս, ոսկորները կըփըշըրտեմ:  
Ուստի պատրաստ թող ըսպասեն նըրան մոտիկ բոլոր մարդիկ,  
Որ վերցընեն բըռունցքներովըս ջախջախված իրենց մարդուն»:

670 Այսպես ասաց, և բոլորը խոր լըռություն պահպանեցին:  
Եպետի դեմ ելավ միայն Եվրիպուն աստվածաստիպ,  
Որ էր որդին Տարպոնյան Միկեասես մեծ թագավորի:  
Եղել էր նա մի ժամանակ Թեթե՛ թաղմանն Իդիպոսի  
Եվ հաղթող էր հանդիսացել այնտեղ բոլոր կարմնացոց:  
Նըրան մոտիկ կանգնած էր քաջ Դիոմեդեսն արիատեզ,  
Հորդորում էր ջերմ խոսքերով ու հաղթություն մատթում քաջին,  
Տըվեց նըրան գոտի, ապա վայրի ցուլից քաշված մի փուկ:  
Այսպես կազմ ու պատրաստ նըրանք երկուսով էլ մեջտեղ եկան  
Եվ մեկ-մյուսի դեմ բարձրացրած թևերն իրենց մըկանակյուր  
680 Գըրոհեցին իրար վըրա, ծանըր ձեռքերն իրար խառնած:  
Նըրանց ծանըր ծընոտներից փըրթավ կոփյուն մի տակալի,  
Քըրտինքը հորդ ցած էր հոսում նըրանց բոլոր անդամներից.  
Աստվածային Եպիոսն հանկարծ վըրա վազեց ամբողջ ուժով  
Եվ իջեցրեց իր վիթխարի կըռուփն այտին ախոյանի:  
Եվրիպուրը հըսկայի այդ հարվածին չըդիմացավ,  
Դողդողացին պերճ անդամներն, ու փուլ եկավ հասակով մեկ:  
Ինչպես ձուկը, որ Բորեսսի շընչով հուզված ծովից էլած  
Թըրթըռում է մամոտտ ափին ու ծածկըվում է ալիքով,—  
Եվրիպունն ընկավ այդպես բըռնցքահար, բայց մեծասիրտ  
690 Եպիուրը հոժկու ձեռքով բըռնեց նըրան ու բարձրացրեց,  
Եվ ընկերներն անմիջապես առան տարան վիրավորին:  
Ոտքերն ընդքարշ էին գընում, գըլուխն ընկնում այս ու այն կողմ  
Ու թըքում էր թանձըր արյուն. տարան ու ցած դըրին նըրան

Ապա իրենք ետ դառնալով՝ առան բաժակը կըրկնատաշտ:

Պելյանն այնժամ աղետավոր ըմբշամարտի համար դըրեց Նոր՝ մեծարժեք մըրցանակներ ու ցույց տըվեց դանայեցոց. **Հաղթող քաջի համար մի մեծ ու հըրափորձ եռոտանի Սահմանեց նա, որին մարդիկ գին կըտրեցին տասներկու եգ:** Իսկ հաղթողի համար բերեց ու կանգնեցրեց առյանի մեջ **700 Մի կին հըմուտ ձեռագործի ու բազմարվեստ՝ չորս եգ արժող, Եվ կանգնելով նըրանց առջև՝ այսպես ասաց արայեցոց.**  
«Օ՛ն, ձեզանից ով ուզում է, ելնի թող արդ ըմբշամարտի»:

Այսպես ասաց, ու դուրս եկավ Տելամոնյան Այաքսը մեծ, Ելավ նույնպես հընարամիտ Ողիսևը բազմահանձար. Եվ գոտիները պընդելով՝ երկուսով էլ մըտան կըրկես, Ու գըրկեցին իրար հոժկու, մըկանակուտ բազուկներով, Հանց գերաններ, որոնցով տան հաստ պատերն է կապում իրար Հյուսնը հըմուտ, որ դիմանան քամիների բուռն թափին: Այդ ջըլապինդ բազուկների պըրկումների տակ գորավոր **710 Մըրընչացին մեջք ու թիկունք, հոսեց քըրտինքն առատորեն, Ու դուրս եկան նըրանց ուսին և կողքերին արյունով լի Ու կապուտկած շատ ոտուցքներ. երկուսով էլ ձըգտում էին Հաղթել իրար և տիրանալ եռոտանուն այն թանկարժեք:** Բայց չէր կարող ոչ Ողիսևը գետնով տալ հաղթ Այաքսին, Ոչ էլ Այաքսը Ողիսին, որ դիմադրում էր ողջ ուժով: Իսկ երբ արդեն խիստ ձանձրացրին հանդիսատես արայեցոց, Այսպես ասաց Ողիսևսին Տելամոնյան Այաքսը մեծ.  
«Իյուցասընձո՛ւնդ. Լայերտածին, բազմահընար ո՛վ Ողիսևս, Բարձրացրու ինձ, և կամ՝ ես քեզ, և վընիոր թողնենք Ջևսին»:

**720** Ասաց, վերցրեց. բայց Ողիսը չըմոռացավ խորամանկել, Եվ ուրքի կարթին զարկեց ետևից իր գարշապարով, Մեջքի վըրս գետնեց նըրան և ինքն ընկավ նըրա կըրծքին: Նայում էին ապուշ կըտրած հանդիսատես արգիացիք: Ապա փորձեց Ողիսն ինքն էլ բարձրացընել վեր Այաքսին: Գետնից հագիվ կըտրեց նըրան, բայց բարձրացնել չըկարեցավ, Նըրա ծընկները ծալվեցին, և երկուսով իրարու մոտ Ընկան այնտեղ թավալգըրո՛ր՝ փոշիների մեջ թաթախված: Երրորդ անգամ, վեր կենալով, նըրանք մըրցման կըմըտնեին, Եթե ոտքի չելներ Աքիլն ու չարգելեր՝ այս ասելով.

**730** «Վերջ տըվեք ձեր ըմբշամարտին և իրարու մի՛ խոշտանգեք, Երկուսովդ էլ հաղթողներ եք և ձեր ուժով դուք հավասար,

Ոստի երկուսդ էլ հավասար պարզև առեք և գընացեք,  
Որ ուրիշներն էլ կարենան մըրցման մըտնել իրարու հետ»:

Այսպես ասաց, և հընագանդ նըրա խոսքին, նըրանք իսկույն  
Թոթափվելով փոշուց՝ հագան պարեգոտներն իրենց կըրկին:  
Իսկ Աքիլլեսն այլ պարզևներ դըրեց մեջտեղ վազքի համար.  
Նախ՝ արծաթե ճարտարագործ թակույկ մի վեց կապիճանոց  
Այնքան չըքնաղ, որի նըմանն երկրի վըրա չէր գըտնըվի,  
Որովհետև շինել էին այն բազմարվեստ սիդոնացիք:

740 Փյունիկեցիք թակույկը այդ փոխադրելով մութ ծովերով  
Բերել էին հեռու-հեռուից և նըվիրել այն Թոասին,  
Իսկ Եվեմուր Յասոնյան տըվել էր քաջ Պատրոկլին այն,  
Որպես փըրկանք Լիկայոնի՝ Պրիամոսի որդու համար:  
Եվ Աքիլլեսն այդ թակույկը, ի պատիվ իր բարեկամի,  
Ղըրեց մեջտեղ, որպես պարզև վազքում հաղթող առաջինին.  
Երկըրորդի համար դըրեց մեծամարմին մի գեր արջառ  
Եվ վերջինի համար դըրեց նա կես տաղանդ մաքուր ոսկի,  
Ապա արագ վեր կենալով՝ այսպես ասաց արգիացոց.

«Հիմա էլ թո՛ղ ով ուզում է դուրս գա վազքի այս մըրցումին»:

750 Ասաց, ելավ անմիջապես Ոլիլյան քաջ Այաքսը ժիր,  
Ռդիսևը, ելավ ապա, և Անտիլոքը Նեստորյան,  
Որ ամենեն թեթևոտն էր երիտասարդ մարտիկներից,—  
Ու շարվեցին իրարու կողք՝ կազմ ու պատրաստ արշավելու:  
Աքիլլը ցույց տըվեց նըրանց նըշանակետն հեռվում դըրված:  
Ու պոկվելով տեղից մեկեն՝ ամբողջ թափով թըռան առաջ  
Երեք քաջերն արագավազ. սըլանում էր Այաքսը ժիր,  
Ու ետևից Լայերտի քաջ որդին՝ Ռդիսն էր արշավում՝  
Այնքան մոտից, հանց գեղիրան կընոջ կըրծքին բեճն է մոտիկ,  
Որը քաշում է վարժ ձեռքով, երբ որ անցնի թելն առեչքից,—

760 Ռդիսևը այդպես մոտից սըլանում էր կըրընկակոխ  
Փոշին դեռ վեր չըբարձրացած, և հասնում էր շունչը նըրա՝  
Ոլիլյանի գըլխին,— այդպես սըրընթացիկ սուրում էր նա:  
Աքայեցիք միահամուռ գովում էին Ռդիսևի  
Հաղթանակի ձըգտումը բուռն ու հորդորում էին նըրան.  
Եվ երբ մոտ էր նըշանակետն, ու հասնելու վըրա էին,  
Ռդիսն աղոթք արավ սըրտանց կապուտաչյա Աթենասին.

«Լըսիր դու ինձ, աստվածուհի, տոբ ոտքերիս ուժ ու կորով»:

Ապես ասաց աղոթելով, աստվածուհին լըսեց նըրան  
Ու պարզևեց թեթևություն Ռդիսևի անդամներին:

- 770 Եվ մինչ Այաբար սրբունթաց մոտ էր արդեն մըրցանակին,  
Սահեց հանկարծ ու սայթաքեց (Աթենասը հըրեց նըրան),  
Ընկավ այնտեղ, ուր կորեղջուր արջառները մեծաբառաչ  
(Որոնց քաջոտն Աքիլլեսը Պատրոկլեսի պատվին մորթեց),  
Թըրթել էին, և քակորով լըցվեց նըրա քիթն ու բերան:  
Ողիսեսը համբերատար՝ առաջ անցավ իր մըրցակցից,  
Առավ թակույկն, իսկ Ոյիլանն առավ վայրի արջառը գեր  
Եվ բըռնելով վայրի եզան եղջուրներից՝ կանգնեց մեջտեղ  
Եվ թըքելով բերնից թըրիթն՝ այսպես ասաց արգիացոց.  
«Աթենասն էր, որ սահեցրեց ոտքըս, խաժակ աստվածունիսն,  
780 Որը մոր պես վաղուց ի վեր հոգ է տանում Ողիսեսին»:

Այսպես ասաց, ու բոլորը քաղցըր-քաղցըր ծիծաղեցին,  
Իսկ Նեստորի որդին առավ վերջին պարգևն ու ժրպտալով,  
Արգիացոց միջև կանգնած՝ այս սրբաթև խոսքերն ասաց.

«Բարեկամներ, գիտեք արդեն, և հիմա էլ աչքով տեսաք,  
Որ աստվածներն հավերժ անմահ՝ պատվում են միշտ տարեց մարդկանց:

Ոյիլեսի որդին ինձնից շատ էլ մեծ չէ իր տարիքով,  
Մինչ մյուսը հին սերընդից է— Ողիսեսը, որի մասին  
Ասում են ծեր է ջըլապինդ, և չի կարող ոչ ոք նըրան  
Անցնել վագրի մըրցության մեջ բացի քաջոտն Աքիլլեսից»:

- 790 Գովեց այսպես Աքիլլեսին շըքել որդին ծեր Նեստորի,  
Եվ Աքիլլեսն Անտիլոքին դառնալով այս խոսքերն ասաց.

«Անտիլոքո՛ս, գովեստրդ ինձ չեմ թողնի ես անհատուցում.  
Մըրցանակիդ վըրս պիտի ավելացնեմ և կես տաղանդ»:  
Այս ասելով հանձնեց պարգևն, ու պատանին ուրախացավ:

Այս Պելլանն այդտեղ դըրեց երկայնաստվեր միզակ մի մեծ,  
Դըրեց ասպար և սաղավարտ, որ Պատրոկլեսն էր կողոպտել  
Սարպեդոնից, ու կանգնելով՝ այսպես ասաց արգիացոց.

- 800 «Այժըմ թող գան երկու հոգի ամենաքաջ կըտրիճներից,  
Որոնք զինված վերից ի վար, առած պրդինձը մարմնահերձ,  
Հանդիսատես այս բազմության առաջ իրենց ուժը փորձեն:  
Ով առաջինը հասնի իր ախոյանի չըքնաղ մարմնին,  
Անդամները խոցի նըրա, արյուն հանի բոսորաբուխ՝  
Կըպարգևեն նըրան այս թուրն արծաթազամ, թըրակիական,  
Որ խըլեցի Աստրոպեից, ապա բաժնեն թող իրար մեջ  
Սարպեդոնի գենքերն այս պերճ, իբրև հարուստ ժառանգություն,  
Եվ ես նըրանց վըրանիս տակ պիտի տամ ճոխ մի ճաշկերույթ»:

Ասաց Աքիլլն, ու վեր կացավ Տելամոնյան Այաբար մեծ

- Եվ նրա հետ առաջ եկավ Դիոմեդես Տիդանը քաջ:  
 Եվ երկուսով երբ զինվեցին ժողովրդի աչքից հեռու
- 810 Եվ ապարեզ մըտան մըրցման, իրար վըրա միգակելով  
 Խեթ նայվածքներ ահեղասատ, սարսափն առավ աքայեցոց:  
 Իսկ երբ եկան հասան իրար ու կանգնեցին դեմ-հանդիման,  
 Երեք անգամ ուժգին թափով հարձակվեցին իրար վըրա:  
 Զարկեց Այաքսը Տիդանի բոլորանն կուռ ապարին,  
 Բայց չըհասավ նրա մարմնին, ներքուստ՝ զըրահը պահպանեց:  
 Իսկ Դիոմեդը Այաքսի հաստ ապարի վերին կողմից  
 Նիզակի սուր սայրով անդույ նրա վըզին էր հետամուտ:  
 Եվ Այաքսի համար աստիկ վախենալով աքայեցիք,  
 Գոռում էին, որ վերջ դընեն արյունալից գոտեմարտին
- 820 Եվ որ երկուսն էլ արժանի են հավասար մըրցանակի:  
 Այնժամ Աքիլը Տիդանին տըվեց մեծ թուրն արծաթազամ  
 Իր պատյանի հետ միասին ու բարեկազմ գոտով հանդերձ:

Դըրեց Պելլանը երկաթի մի գունդ մեջտեղ՝ շանթ ինքնաձույլ,  
 Որ նետում էր մի ժամանակ Էտիոնն իր հըսկա ուժով.  
 Բայց Էտիոնին ըսպանելով Աքիլեսը քաղաքավեր  
 Բերել էր գունդն այդ նավերով՝ մյուս գանձերի հետ միասին:  
 Այդ, կանգնելով աքայանց մեջ, այսպես առաջ Աքիլը քաջ.

- «Ո՞վ է ուզում ցույց տալ իրեն և ա՛յս խիզախ մըրցության մեջ  
 Որքան հեռու էլ տարածվեն անդ ու արտերն իր բարեբեր,  
 830 Հինգը կըրոր տարի նրան բավական է երկաթն այս ձույլ,  
 Եվ էլ քաղաք չեն գընալու՝ երկաթ գընեն պետքի համար  
 Նըրա հովիվն ու հողագործն այդքան երկար ժամանակով»:

- Այսպես առաջ, ու վեր կացավ Պոլիպեդեսն արիասիրտ,  
 Ելան նաև աստվածատիպ Լեոնտեսը բոցակորով,  
 Տելամոնյան Այաքսը և Եպիոսը դյուցազնազարմ,  
 Ու կանգնեցին կարգով. առավ գունդն Եպիոսն աստվածային,  
 Պըտտեցնելով նետեց, բոլոր աքայեցիք ծիծաղեցին:  
 Երկըրորդը Լեոնտեսը նետեց՝ բողբոջն արիսական,  
 Երրորդ հերթին գունդը նետեց Տելամոնյան Այաքսը մեծ,  
 840 Նետեց նա իր զորեղ ձեռքով և անցկացրեց երկուսին էլ:  
 Իսկ երբ առավ երկաթը ձույլ՝ Պոլիպեդեսը կորովի,  
 Որքան տեղ որ կարող է մարդ հեռու գըցել ցուպն հովվական,  
 Որ թըռչում է պըտույտ գալով՝ երինջների նախրի վըրա,—  
 Գունդը այդքան հեռու ընկավ, և ամբոխը ծափահարեց:  
 Հո՞ծ բազմությունը ճեղքելով՝ ընկերները Պոլիպեդի  
 Թագավորի պարզեն առան ու տարան դեպ նավերը սև:



Բերել տըվեց Աքիլն ապա, դըրեց մեջտեղ երկաթ մըթին  
 Աղեղնածիգ մարդկանց համար, տաւը փայտատ և տաս կացին,  
 Սևացրոուկ մի ցալի կայմ տընկեց հեռու, ավագի մեջ  
 850 Բարակ թելով կապեց ճըրան ոտքից երկչոտ մի աղավնի,  
 Ու հըրամայեց թըռչնի վըրա ուղղել իրենց նետերը սուր.  
 «Ով որ,— ասաց,— դիպցընի նետն այդ դողդոջուն աղավնյակին,  
 Թող վերցընի փայտատներն այս բոլոր և իր վրանը տանի.  
 Իսկ ով թըռչնից վըրիպելով իր սուր նետով դըպչի լարին,  
 Թո՛ղ այդպիսին, որպես պարտվող այս կացիներն առնի տանի»:

Այսպես ասաց, ու վեր կացավ Տևկրոս արքան կորովասիրտ,  
 Մերիոնեսն ելավ ապա, քաջ զինակիցն Իդոմենի  
 Եվ գրցեցին սաղավարտում երկու վիճակ ու շարժեցին:  
 Նախ Տևկրոսի վիճակն ելավ, և արձակեց իր նետը նա,  
 860 Բայց նա չուխտեց աղեղնավոր աստվածորդուն՝ Ապոլլոնին  
 Մեծապայծառ զոհ մատուցել անդրանկածին իր գառներից,  
 Ուստի վրիպեց, որովհետև Ապոլլոնը արգելք եղավ,  
 Եվ թըռչունի ոտքին մոտիկ առասանին դիպցըրեց նա,  
 Թելը կըրտեց, և աղավնին թըռավ ազատ դեպի երկինք,  
 Լարը կայմից մընաց կախված, ու ծախ տըվին աքայեցիք:  
 Մերիոնեսն այնժամ արագ խըլեց աղեղը Տևկրոսից  
 (Իսկ նետն արդեն ձեռքում ուներ) և երբ դեպի գիրկն էր քաշում,  
 Աղոթք արավ կորովածիգ Ապոլլոնին ու խոստացավ  
 Մեծապայծառ զոհ մատուցել անդրանկածին իր գառներից,  
 870 Եվ թըրթըռուն աղավնյակին նայելով վեր, ամպերի մեջ,  
 Նըշան առավ ու թըռչելիս՝ թըռչնին թևից վիրավորեց:  
 Նետը եկավ և Մերիոնի ոտքերի մոտ ընկավ գետին:  
 Թըռչունն իջավ, սևացրոուկ լաստափայտի կայմին ճըստեց՝  
 Վիզը ծըռված ու փետրառատ թևերը թույլ կախված ի վար.  
 Հոգին թըռավ փոքրիկ մարմնից և նա անշունչ ընկավ հեռու:  
 Եվ բազմությունն հանդիսատես նայում էր լուռ, ըսքանչահար:  
 Փայտատները բոլորն առավ Մերիոնեսն իբրև հաղթող,  
 Իսկ ուրագներն առավ տարավ իր վըրանը Տևկրոս արքան:

Բայց Պելլանը մեջտեղ դըրեց երկայնաստվեր միգակ մի հաղթ  
 880 Եվ դեռ կըրակ չըտեսած սան ծաղկանրկար՝ մի եզան գին:  
 Ու վեր կացան իրենց տեղից երկու գորեղ տեգընկեցներ՝  
 Նախ Ատրիդես Ագամեմնոն իշխանապետը վեր կացավ,  
 Ապա ելավ Մերիոնը քաջ՝ զինակիցը Իդոմենի:  
 Բայց Աքիլեսն աստվածային այսպես խոսեց ճըրանց միջև.  
 «Ագամեմնո՛ն, գիտենք, որ դու գերազանցում ես բոլորին

**Քո քաջությանը, ուժով և քո թափով նիզակ նետելու մեջ.  
Ուստի ա՛ն այս պարգևը դու և տար դեպի քո նավը սև,  
Իսկ այս աշտեն երկայնաստվեր թող ըստանա Մերիոնը քաջ,  
Ես ինքս ադպես եմ կամենում, եթե հոգով հավան ես դու»:**

**890 Այսպես ասաց, և Ատրիդես արքան նրան չընդդիմացավ:  
Աքիլլեսը աշտեն տըվեց Մերիոնեսին, իսկ Ատրիդեսն  
Իր սանն հանձնեց Տալթիբիոսին, որ վերանը տանի շուտով:**

# Ե Ր Գ Ք Ա Ս Ա Ն Հ Ո Ր Ա Ե Ր Ո Ր Ղ

## ՓՐԿԱՆՔ ՀԵԿՏՈՐԻ

- Բազմությունը ցրիվ եկավ, ամեն ոք իր նավը գրնաց,  
Ընթրիք արին ու քընեցին քաղցրը քընով մինչ այգաբաց:  
Աքիլլեսի աչքերից էր փայլել միայն բունը անուշ,  
Լաց էր լինում ընկողմանած՝ ընկերներից իր մեկուսի:  
Նա մի կողքից մյուսն էր դառնում անկողնու մեջ ու դառնապես  
Ողբում էր իր վաղամեռիկ երիտասարդ Պատրոկլեսին,  
Որի հետ նա վաղ հասակից տեսել էր շատ վիշտ ու բերկրանք  
Թե՛ պեծուսի ծովի վըրա, թե՛ արյունոտ կրոկվներում:  
Հիշում էր նա մեկիկ-մեկիկ և արտասուք թափում առատ,  
10 Ընկնում մերթ այս, մերթ այն կողքին, մեջքի վըրա, բերանքսիվայր:  
Եվ վերջապես վեր կացավ նա, գրնաց ծովափ թափառելու  
Անքուն աչքերն արցունքով լի, տըխտը-տըրտում, անմըխիթար:  
Իսկ երբ ծագեց ծովի վըրա ծիրանածին այգը ծիծղուն,  
Կառքին լըծեց սրբաթըռիչ իր ամենի ձիերը նա  
Եվ կապելով կառքի ետև իր ըսպանած Հեկտորի դին՝  
Երեք անգամ քարշ տըվեց այն՝ Պատրոկլեսի շիրմի շուրջ  
Ու ետ դարձավ ձըգած դաշտում դիակը բաց երկընթի տակ:  
Բայց Ապոլլոնն ամեն անգամ կարեկցելով մեռած մարդուն,  
Պաշտպանում էր մարմինը մերկ, ծածկում ոսկյա իր ասպարով,  
20 Որ քարշ տալուց չապականվի, չըբըզկըտվի Հեկտորի դին:  
Խոշտանգում էր Աքիլլն այսպես դյուցազնի դին անգըթաբար:  
Այդ տեսնելով՝ գութը շարժվեց երանալետ աստվածների,  
Եվ Հերմեսին հորդորեցին դին գողանալ գաղտագողի:  
Խորհուրդը այդ հաճո թըվաց բոլոր անմահ աստվածներին,  
Բացի խաժակն Աթենասից, Պոսեյդոնից և Հերայից,  
Որոնք դեռևս, ինչպես առաջ, ատում էին Իլիոնը սուրբ,  
Պըրիամոսին և իր ցեղին՝ Ալեքսանդրի մեղքի համար,

- Որ ծաղրել էր աստվածուհւյաց, անբոլորելով լոկ Աստղիկին,  
Որը նըրան տըվեց հեշտանք և շընորհեց կին գեղեցիկ:
- 30 Բայց երբ անցավ ինն օր այդպես, ու տասներորդ այգը ծագեց,  
Այնժամ Գուշակ Ապոլլոնը այսպես ասաց աստվածներին.  
«Անգութ եք դուք, ո՛վ աստվածներ, չէ՞ որ երբեմն Հեկտորը ձեզ  
Արջատների և այծերի պարարտ ազդրեր է ճեմճերել,  
Իսկ դուք մահից հետո էլ դեռ չեք ցանկանում փըրկել նըրան,  
Որ կարենան տեսնել իրենց հարազատին վերջին անգամ՝  
Ծընողները ծերունափառ, անձկակարոտ կինն ու որդին,  
Եվ ժողովուրդն իր սիրեցյալ դյուցազունին հայրենասեր,  
Որ կըրակով պատվեն նըրան և կատարեն թաղման հանդես:  
Ուզում եք դուք, ո՛վ աստվածներ, պատվել վարազ Աքիլլեսին,
- 40 Որ ճըշմարիտ ոչ խելք ունի, և ոչ էլ սիրտ մեղմաբարտ:  
Ժանտաբարտ առյուծի պես, որն իր ուժով ամբարտավան՝  
Մարդկանց խաշներն է հոշոտում, հարձակվելով հոտի վըրա,  
Աքիլլեսը կորցըրել է ամոթն ու գութն ամբողջովին,  
Որը մարդկանց թե՛ մեծապես վընասում է, և թե՛ օգնում:  
Ո՞չ ապաքեն կորցընում է մահկանացու մարդը հաճախ  
Իր հարազատ և համամայր եղբորը կամ սիրած որդուն,  
Լաց է լինում, ողբում երկար, բայց դադարում է վերջապես,  
Զի մարդկանց մեջ դըրին Պարկյանք համբերատար սիրտ ու հոգի:  
Բայց դա, դյուցազըն Հեկտորին, նըրա արևն առնելուց ետ,
- 50 Կտոքից կապած քարշ է տալիս իր ընկերոջ շիրիմի շուրջ,  
Մինչդեռ նըրա համար այդ բանն անվայել է և անօգուտ:  
Գուցե վերջում մենք բարկանանք, չընայելով իր քաջությանն,  
Քանի որ նա մոլեգնաբար անարգում է հողն անըզգա»:

- Չայրանալով նըրա վըրա՝ լուսածրդի Հերան ասաց.  
«Ասածներըդ, Արծաթաղեղ, թերևս իրոք ճիշտ լիներն,  
Թե Հեկտորին Աքիլլի հետ համապատիվ համարեինք:  
Բայց Հեկտորն է մահկանացու, որը կընոջ կաթ է ծըծել,  
Իսկ Աքիլլի մայրն է Թետիս արծաթաթաթիկ աստվածուհին,  
Որին ինքըս մեծացնելով՝ ամուսնացրի Պելևսի հետ,
- 60 Պելևսի, որ եղել է միշտ աստվածների սըրտին մոտիկ:  
Մասնակցեցիք աստվածները բոլոր՝ նըրանց հարսանիքին.  
Եվ դո՛ւ նույնպես ձեռքիդ փանդիո՞՛ ներկա էիր այդ կոչունքին,  
Դո՛ւ, չարերին միշտ գործակից, ուխտադըրոժ ո՛վ Ապոլլոն»:

Եվ Արամազդն ամպրոպաչին նըրան այսպես պատասխանեց.  
«Աստվածների վըրա, Հերա՛, մի՛ բարկանար բոլորովին:  
Ծիշտ է, թեպետ չեն հավասար, բայց Իլիոնի մեջ ամենից

Հեկտորն էր ինձ շատ սիրելի, ինչպես բոլոր անմահներին,  
Զի նա երբեք չէր զրլանում իր նրվերներն աստվածահաճ,  
Ու զոհերն իմ բազիմներին երբեք պակաս չէր անում նա:

- 70 Սակայն թողնենք Հեկտորի դին գողանալու միտքն անխոհեմ,  
Որովհետև չի կարելի այդ թաքցընել Աքիլլեսից,  
Քանի որ մայրն այնտեղ է միշտ և հըսկում է գիշեր ու զօր:  
Բայց եթե մեկն աստվածներից Թետիսին շուտ կանչի այստեղ,  
Նըրան խելոք խորհուրդ կըտամ, որ Աքիլլեսն ընդունելով  
Ճոխ պարզևներ Պրիամոսից՝ նըրան հանձնի Հեկտորի դին»:

Այսպես ասաց, ու մըրըրկոտն Իրիսն իսկույն ոտքի ելավ,  
Որ անհասպաղ տանի պատգամն աստվածահայր Արամազդի,  
Ու սըրաթև՝ Սամոս-Իմբրոս կըղզիների միջև ժայռուտ՝  
Ծով ցատկեց նա ամբողջ թափով, ճըղփացնելով ջըրերը լուրթ:

- 80 Վայրի ցուլի եղջյուրներին կապած ծանրը կապարի պես,  
Որ ձըկներին մահ է տանում, ընկըղմվելով անմիջապես՝  
Ծովը սուզվեց Իրըսն արագ, հասավ մինչև հատակը խոր  
Ու Թետիսին գըտավ նըստած ըստրջըրյա քարանձավում,  
Ծուրջը ծովի դիցունիներ, որդու համար ողբ անելիս,  
Որ հայրենի երկրից հեռու՝ մեռնելու էր Տըրոյայում:  
Մոտենալով աստվածուհուն՝ ժըրոտն Իրիսն ասաց նըրան.  
«Վե՛ր կաց, Թետիս, կանչում է քեզ մե՛ծ Արամազդն ամենազետ»:

Ու հարց տըրվեց նըրան Թետիս արծաթթաթիկ աստվածուհին.  
«Իսկ ինչո՞ւ է կանչում նա ինձ այդպես ըշտասպ, ինչո՞ւ համար:

- 90 Ամաչում եմ այս վիճակովս աստվածների առաջն ելնել,  
Որովհետև սըրտիս ցավերն իմ անթիվ են և անհամար:  
Բայց թե գընանք, զի իզուր տեղ նա ինձ պատգամ չէր ողարկի»:

Այս ասելով՝ սև քողն առավ վըսեմաշուք աստվածուհին,  
Ամենասևն ու սըգերանգն իր բոլոր ճոխ հանդերձանքից,  
Եվ գընացին. արագընթաց Իրիսն ինքն էր առաջնորդում.  
Ալիքները ճեղքըվելով՝ ճամփա էին տալիս նըրանց:  
Ասի դուրս գալով, անմիջապես երկինքն ի վեր թըրան թեթև,  
Որտեղ նըրանք գըտան նըստած Ջըվանյանին անեղազոչ  
Եվ նըրա շուրջ բազմած բոլոր աստվածներին երջանկավետ:

- 100 Նըստեց Թետիսը Ջևսի մոտ և առընթեր Աթենասի:  
Հէրան ընդփույթ ոսկեճաճանչ բաժակը լի տըրվեց նըրան  
Եվ ըսփոփիչ մեղմ խոսքերով ուրախացրեց սըգավորին:  
Խըմեց Թետիսն ու բաժակը վերադարձրեց աստվածուհուն:  
Աստվածների ու մարդկանց հայրն այսպես խոսեց այն ժամանակ.

«Իմ պատվերով Ոլիմպոս եւ եկել, Թեոփ'ս աստվածունի,  
Մի անմոռաց սուգ սրբոտի մեջ, որին ինքըս գիտակ եմ քաջ:  
Բայց պարզ ասեմ, որ իմանաս, թե ինչու եմ կանչել եւ քեզ:  
Ինն օր է, որ վեճի մեջ եմ աստվածները իրարու հետ  
Աքիլլեսի անգործության և Հեկտորի մարմնի համար:

110 Դըրդում եմ դիք Արգոսասպան սուրհանդակին՝ դին գողանալ,  
Եվ սակայն եւ ուզում եմ տալ փառքն ու պատիվն Աքիլլեսին,  
Մինչև վերջը պահպանելով հարգանքըս քո վերաբերմամբ:  
Գընա բանակն աքայեցոց և տար պատգամ քո զավակին,  
Պատմիր նըրան ցասման մասին իմ և բոլոր անմահների,  
Որ նա անսանձ կատաղությամբ և անխընս անարգելով  
Պահել է քաջ Հեկտորի դին ու չի հանձնում մինչև հիմա:  
Թող որ հանձնի անմիջապես, թե ինձանից սարսում է նա:  
Իսկ Իրիսին այժըմ կեթ եւ կողարկեմ Գրիամի մոտ,  
Որ ըշտասի գընալ իսկույն դեպի նավերն աքայեցոց

120 Ու հաշտարար ընձաներով առնելով սիրտն Աքիլլեսի՝  
Խոշտանգումից փըրկի որդուն իր սիրելի և տանի տուն»:

Այսպես ասաց, արծաթաթաթիկ Թեոփիսն անսաց հըրամանին,  
Վար սըլացավ Ոլիմպոսի վըսեմապանձ գագաթներից  
Եվ հասնելով իր վըշտահար որդու վըրանն անմիջապես՝  
Գըտավ նըրան արտասովակոճ ու սըրտաքեկ սուգ անելիս:  
Իսկ ընկերները մըտերիս՝ մորթած ոչխար մի վըրանում,  
Ծաշի համար աշխույժ ու ժիր պատրաստություն էին տեսնում:  
Մոտիկ գընաց մայրն ու նըստեց իր սիրելի որդու կողքին  
Եվ, շոյելով նըրա գըլուխն, այսպես ասաց գորովաձայն.

130 «Մինչ ե՛րբ այդպես, որդյակ իմ քաջ, թաղված քո խոր վըշտերի մեջ

Միրտըդ մաշես այս ու վախով, մոռացած քուն և կերակուր:  
Հաճելի է, սակայն, պատկել մի կընոջ հետ և հեշտանալ,  
Քանզի, ավա՛դ, չէ՞ որ երկար չես ապրելու այս աշխարհում.

Մահըդ, որդիս, ցահավասիկ, կանգնած է քո ոտքերի մոտ:  
Լըսիր դու ինձ ուշի-ուշով, գալիս եմ եւ Արամազդից.

Աստվածները, ասում է նա, խոժոռվել են քո դեմ սաստիկ,

Եվ ամենից ավելի շատ՝ աստվածահայրն ինքը անեղ,

Ջի խըստասիրտ կատաղությամբ պահում ես դու Հեկտորի դին

Մահիկաձև նավերի մոտ ու չես հանձնում մինչև հիմա:

140 Հանձնիր, որդիս, դիակը հորն ու ճոխ փըրկանք առ փոխարեն»:

Եվ արագտուն Աքիլլն իսկույն իր մորն այսպես պատասխանեց.  
«Դեմ չեմ, թող որ այդպես լինի, թող տան փըրկանք ու դին տանեն,  
Եթե այդ է ամենագոր Ոլիմպյանի պատվերը ինձ»:

Մայր ու որդի նըստած այսպես խոսում էին ճավերի մոտ,  
Իսկ Ջովանյան Ջևան Իրիսին դեպ Իլիոնն էր ճամփու դընում.

«Եվ արդ, Իրի'ս արագահաս, թողած գահըդ ոլիմպական,  
Իլիոն գընա ու տար պատգամ մեծահոգի Պրիամոսին,  
Որ նա իսկույն ողևորվի դեպի ճավերն աքայեցոց  
Որդու մարմինն ազատելու, ողորբելով Աքիլլեսին

150 Որպես փրկյալնք իր հետ տարած սըրտահաճո ընծաներով:

Եվ առանձին թող որ գընա, ընկեր չառնի նա ոչ մեկին,  
Միայն մի ծեր վերցընի թող, որ տանի սայլն ու ետ դառնա,  
Մայի վըրա դըրած դյուցազն Աքիլլեսի ըսպանած դին:  
Եվ թող երբեք չըվախենա, մահվան մասին չըմըտածի,  
Առաջնորդի՝ պիտի նըրան Արգոսասպանն իմ քաջարթուն,  
Որն ապահով տանելու է մինչև խորանն Աքիլլեսի:  
Երկյուղ չսնի Պելլանից թող, նա ոչ միայն չի ըսպանի,  
Այլև այլոց չի թողնելու, որ՝ վընասեն ավերին.

Զի Աքիլլեսն ապիրատ չէ, եղեռնագործ կամ անպատկատ,

160 Նա չի դիպչի աղերսարկու ավերի մազին անգամ»:

Այսպես սասց, ու մըրըրկոտն Իրիան իսկույն թըռավ արագ,  
Որ անհասպաղ տանի պատռամն աստվածահայր Արամազդի,  
Եվ հասնելով Պրիամոսի պալատը նա անմիջապես՝  
Տեսավ այնտեղ սուգ ընդհանուր, սըրտաճըմիկ լաց ու կական:  
Որդիք իրենց ծերունի հոր շուրջն հավաքված արձակ գավթում  
Թըրջում էին պատմուճաններն առատահոս արտասուքով.  
Եվ ծերունին նըրանց միջև իր թիկնոցի մեջ փաթաթված՝  
Գետնից բուռ-բուռ փոշին առնում ու ցանում էր իր մազերին:  
Իսկ աղջիկներն ու հարսները ի մի խըմբված արթունիքում

170 Ողբում էին լավահառաչ, հիշելով ա՛յն կըտրիճներին,

Որոնք ընկել էին ահեղ մարտերի մեջ արյունալի:  
Պատգամախոսն Արամազդի մոտենալով Պրիամոսին,  
Որ սարսըռաց ամբողջ մարմնով, մեղմիկ ձայնով սասց նըրան.

«Ո՛վ Դարդանյան դու Պրիամոս, սիրտ առ և մի՛ սուկար ինձնից,

Քանզի գուժկան չեմ եկել ես, այլ բերել եմ քեզ բարի լուր.  
Բանքերն եմ ես Արամազդի՝ լավ խորհուրդով եկած քեզ մոտ:  
Խըղճում է քեզ աստվածների և մարդկանց հայրն ամենագոր.  
Պատվիրում է նա քեզ մեկնել դեպի ճավերն աքայեցոց  
Որդու մարմինն ազատելու, ողորբելով Աքիլլեսին

180 Իբրև փրկյալնք քեզ հետ տարած սըրտահաճո ընծաներով:

Եվ առանձին պետք է գընա, թող ոչ մի մարդ քեզ չողեկցի,  
Միայն մի ծեր, որ տանի սայլն ու դեպ Իլիոն վերադառնա,  
Մայի վըրա դըրած դյուցազն Աքիլլեսի ըսպանած դին,

Բողորովին չըվախենաս, մահվան մասին չըմըտածես,  
Զի քեզ պետք է առաջնորդի Արգոսասպանն ամենադեռ  
Եվ ապահով հասցընի քեզ մինչև վերանն Աքիլլեսի:  
Երկյուղ չանես Պելիսյանից, ոչ միայն չի՛ վրնասի նա,  
Այն ալոց չի թողնելու, որ քեզ վրրա ձեռք բարձրացնեն,  
Զի Աքիլլեսն անբարիշտ չէ, եղեռնագործ կամ անպատկառ,  
190 Եւ չի դիպչի պետրիդ մի ըսպիտակ մազին անգամ»:

Այսպես ասաց թեթև Իրիսն ու դեպ երկինք վերադարձավ:  
Իսկ ծերունին վեր կենալով, հըրամայեց որդիներին,  
Որ պատրաստեն ջորիների աշլն ու արկղը դընեն վըրան,  
Եվ ինքն իջավ բորումնավետ ըշտեմարանն ապարանքի  
Եղևնաշեն, բարձրաձեղուն՝ լի պատվական, թանկ իրերով,  
Ու կանչելով կընոջն այնտեղ՝ Հեկաբեին՝ այսպես ասաց.

«Ա՛յ իմ խեղճ կին, Ոլիմպոսից Արամազդի բանքերն եկավ  
Ու պատվիրեց, որ անհապաղ աքայեցոց նավերն երթամ,  
Աքիլլեսին տանեմ փըրկանք և ազատեմ մեր զավակին:  
200 Ի՞նչ ես խորհում դու այս մասին, ի՞նչ է ասում քո սիրտը քեզ,  
Քանզի հոգիս ամբողջապես և սիրտըս ինձ հորդորում են  
Գընալ նավերն աքայեցոց, Պելիսածին Աքիլլի մոտ»:

Այսպես ասաց, ու սուկահար կինը մի սուր ճիչ արձակեց.  
«Վա՛յ թըշվառիս, ո՞րք է խելքըդ, որով անուն էիր հանել  
Օտարների մոտ երբեմըն և քո բոլոր ժողովըրդի:  
Այդ ինչպե՛ս ես ուզում գընալ նավատորմիդն աքայեցոց  
Եվ դեմ առ դեմ կանգնել մեռակ այն ռխերիմ մարդու առաջ,  
Որ բազմաթիվ քաջակորով որդիներիդ անգըթաբար  
Սըրախողխող արավ մարտում, երկաթե սիրտ ունես անշուշտ»:

210 Բավական է որ ձեռքն ընկնես, ու քեզ տեսնի իր վըրանում.  
Այդ ուխտադրուժն անագորույն քեզ չի խըղճա, չի խընայի,  
Զի ակնածի բոլորովին նա ըսպիտակ քո մազերից:  
Ո՛չ, մի՛ գընա, կաց մեր տան մեջ ողբանք սիրուն մեր զավակին,  
Զի բըռնավոր բախտը նըրան մանեց այս թելն իր ծընդնդից,  
Որ շընեթին դառնա նա կեր՝ հեռու իր ծեր ծընողներից,  
Ա՛յն մարդու մոտ, ո՞հ, որի ժակտ լարողը կըրծքից կըպոկեի՛,  
Կըծամեի՛՝ ատամներովըս, որ առնեի ռխն իմ որդու:  
Զի մեր որդին իր վատուխյան համար չէր որ ընկավ մարտում,  
Այլ տըրովյանց ու լանջագեղ տըրովուհյաց պատվի՛ համար  
220 Հերոսաբար գոհեց իրեն՝ մարտընչելով ոսոխի դեմ»:

Աստվածատիպ Պրիամը ծեր՝ կընոջն այսպես պատասխանեց.  
«Ո՛չ, Հեկաբե, մի՛ աշխատիր փոխել վընճիդն իմ անասան,



Ու մի՛ լինիր չարագուշակ թրոչուն դու իմ հարկի ներքո,  
 Միևնույն է, չես կարող դու քո խոսքերով ինձ համոզել:  
 Եթե ունըն մի երկրածին ինձ ուղարկած լիներ պատգամ,  
 Լյարդահրմա մի գուշակող և կամ մի քուրմ ըղձապատում,  
 Կարող էինք չըհավատալ և գըհալուց հըրաժարվել,  
 Բայց քանի որ աչքովս տեսա և ականջովս էլ լըսեցի  
 Աստվածունուն իմ դեմ-դիմաց, սուրհանդակին Արամազդի՝  
**230** Պիտի գըհամ ես անպատճառ, չի խաբի Ջևան այլորիս:  
 Իսկ թե գըրված է ճակատիս մեռնել այնտեղ՝ Գավատորմում,  
 Հոգ չէ, միայն թե մի անգամ սըրտիս սեղմեմ ես իմ որդուն,  
 Փափագս առնեմ, այն ժամանակ թող Աքիլլեսն ինձ ըսպանի»:

Այս ասելով, բացեց սիրուն արևոկների խուփերը ևս  
 Ու դուրս հանեց տասներկու հատ ամենաճուրք ընտիր քողեր,  
 Տասներկու հատ պերճ պատմունճան, նույնքան շապիկ ու վերարկու:  
 Կըշեց ապա ու վերցըրեց տասը քանքար մաքուր ոսկի,  
 Առավ երկու փայլուն կաթաս ու չորս հատ սան, եռոտանի,  
 Առավ բաժակ մի գեղեցիկ, որն իբր ընծա մի ժամանակ  
**240** Թրակիացիք էին տըվել, երբ դեսպան էր գըհացել ևս:  
 Հեզ ծերունին չըխընայեց և հիշատակն այդ թանկագին,  
 Քանգի սըրտանց ուզում էր ևս փըրկել որդուն իր սիրելի:  
 Երբ այս բոլորն առանձնացրած՝ դուրս էր գալիս գանձարանից,  
 Տեսնելով շուրջն իր հավաքված հետաքըրքիր մի բազմություն,  
 Դուրս վըրընդեց վըշտոտ արքան ճըրանց սաստող այս խոսքերով.  
 «Կորե՛ք իսկույն դուք այստեղից, անպիտաննե՛ր, անամոթնե՛ր,  
 Դուք սուգ չունե՛ք ձեր տըներում, որ եկել էք, ցըցվել այստեղ.  
 Ու ցավերիս վըրա անթիվ մի նոր ցավ էք ավելացնում:  
 Մի՞թե քիչ է իմ ցավը ինձ, որ Արամազդն ինձ ուղարկեց,  
**250** Խըլլելով քաջ իմ գավակին. բայց դուք շուտով կըհասկանաք,  
 Որ Հեկտորի մահից հետո ձեզ կըչընջեն արպեցիք:  
 Բայց երանի՛ թե մեռնեի, սանդուղամե՛տն իջնեի ես  
 Որ կործանումն իմ քաղաքի չըսեսնեի՛ իմ աչքերով»:

Այսպես ասաց և բոլորին գավազանով ևս դուրս քըշեց,  
 Որից հետո ծեր թագավորն իր մոտ կանչեց որդիներին:  
 Եկան՝ Պարիսն ու Հեյեմոսն, Ագաթոնը, Պամոնը վես,  
 Անտիփոնոսն ու Դեփոքն, եկավ Դիոս գարմանալին,  
 Եվ ծերունին սաստող ձայնով ճըրանց այսպես հըրամայեց.  
 «Ըշտապեցե՛ք, չար գավակներ, դուք թուլամորթ ու վատասիրտ,  
**260** Երանի թե Հեկտորի տեղ դո՛ւք սատկեիք Գավերի մոտ:  
 Վա՛յ ինձ, թըշվառ թագավորիս, որ Լիլոնի մեջ լայնանիստ

Բազում որդոց եղա ես հայր, ու չըմբռնե՞ց ոչ մեկը ինձ,—  
Մեստորը իմ դիցանըման, Տրովիլուը կառամարտիկ,  
Եվ Հեկտորըս, որ նրման չէր ամենին մահկանացվի,  
Այլ ասոված էր ողջ մարդկանց մեջ... Տարա՛վ Արեսն այս լավերին,  
Խըլեց ինձնից, ու մընացին այս ապիկար պարսավելիք,  
Սըտախոսնե՛րն այս խեղկատակ, միմոսները, որոնք միայն  
Պարել գիտեն և գողանալ գառն ու ուլեր ժողովըրդից:  
Ո՛ր եք, ինչո՛ւ չեք պատրաստում սայլն ու նըրա վըրա դընեք  
270 Այն ամենը, որ ընտրեցի, որպեսզի շուտ ճամփա ընկնենք»:

Այսպես ասաց, և իրենց հոր սաստից որդիք անաբեկված՝  
Դուրս հանեցին գեղեցկանիվ ու նորաշեն սայլը իսկույն,  
Մի մեծ արնդուկ դըրին վըրան, ապա ցըցից ցած իջեցրին  
Տոսախաշեն լուծը կըմբշա՛ լամբակներով հարմարեցրած.  
Եվ լըծան հետ փոկն էլ բերին երկար՝ ինը կանգունաչափ  
Ու ամրացրին երկայնաձիգ քեղու ծալրին երկաթագամ,  
Որից օղակն անցկացնելով երեք անգամ պինդ պըրկեցին  
Կումբի պորտի ամեն կողմից ոլորելով ծալրը փոկի:  
Եվ բերելով գանձարանից հեկտորական փըրկանքն անբավ՝  
280 Ջետեղեցին գեղեցկանիվ ու սըրբատաշ սայլակի մեջ.  
Ապա բերին ու լըծեցին ջորիներին կարծրասըմբակ,  
Որ միսիացիք էին տըվել Պրիամոսին որպես ընծա:  
Դուրս հանեցին նըմանապես ու կառքի մոտ բերին իսկույն  
Պրիամոսի ձեռքով սընված նըժույզներին շըքեղաբաշ,  
Որ լըծեցին Պրիամն ինքը և նըվիրակն իր ծերունի:

Եվ Հեկտրեն այն ժամանակ մոտենալով Պրիամոսին,  
Իր աջ ձեռքում բըռնած ոսկի մեծ մի բաժակ գինով լեցուն՝  
Պարզեց նըրան և ձիերի առջև կանգնած այսպես ասաց.  
«Ա՛ն և ձոնիր Արամազդին, աղոթք արա աղաչելով,  
290 Որ նա անփորձ ետ դարձընի քեզ դիսերիմ մարդկանց մոտից,  
Քանի որ դու որոշել ես, վըճուել՝ կամքին իմ հակառակ  
Գընալ դեպի նավերը մեր արշունարբու ռախմների:  
Աղաչիր դու ամպրոպաթուխ Ջովանչանին Իդայաճեն,  
Որ իր գանից բարձրադիտակ տեսնում է ողջ Տըրովադան,  
Թըոցընելու քո աջ կողմից իր սըրբաթև սուրհանդակին,  
Որին բոլոր թըռչունների մեջ ամենից շատ է սիրում,  
Որպեսզի դու քո աչքերով տեսնես նըշանն այդ գեղահրաշ  
Եվ ապահով ճամփա ընկնես դեպի նավերն աբալեցոց:  
Իսկ թե նըշանն այդ ցույց չըտա քեզ Արամազդն անեղազոչ,  
300 Այն ժամանակ լավ կըլինի, որ չըգընաս նավերը դու,

Եվ ես ինքքս չեմ թողնի քեզ, որքան էլ դու ուզես գրնալ»:

Աստվածատիպ Պրիամն այնժամ կրնոջն այսպես պատասխանեց.  
«Խորհուրդը քո լըսում եմ, կին, ու չեմ մերժի ես այն երբեք.  
Արամազդին ձեռք կարկանդն անշուշտ լավ է, գուցե գըթա»:

Այս ասելով, մատակարար աղախնունն նա հըրամայեց,  
Որպեսզի շուտ լըվացվելու ջինջ ջուր բերի իրեն համար:  
Աղախինը եկավ իսկույն ձեռքին բըռնած կոնք ու սափոր:  
Պրիամ արքան լըվացվելով, կընոջ ձեռքից բաժակն առավ  
Եվ կանգնելով բակի մեջտեղ՝ աղոթք արավ, գինին ձոնեց  
310 Եվ հայացքը դեպի երկինք հառած՝ ասաց աղերսագին.  
«Հա՛յր Արամազդ, տե՛րդ Իդայի, ամենափառ և ամավոր,  
Տո՛ւր ինձ հասնել Աքիլլեսին և գութ շարժել նըրա սըրտում:  
Եվ ողարկիր հըզոր արծվիդ՝ սուրհանդակիդ սըրաթըռիչ,  
Որին բոլոր թըռչունների մեջ ամենից շատ ես սիրում,  
Որպեսզի ես իմ աչքերով տեսնեմ նշանդ գեղահըրաշ  
Եվ ապահով ճամփա ընկնեմ դեպի նավերն արայեցոց»:

Այսպես ասաց աղոթելով, Արամազդը լըսեց նըրան  
Եվ ողարկեց անմիջապես սավառնաթև իր սեզ արծվին,  
Որին մարդիկ այլ անունով կոչում են և խայտախարիվ:  
320 Մեծահարուստ տընատիրոջ առագաստը բարձրաձեղուն  
Որքան դը մեր ունի ամուր ու պընդափակ փեղկեր որքան՝  
Թըռչունն այդ սեզ երկու կողմից ուներ այդքան հուժկու թևեր,  
Որ աջ կողմից վար սըլացավ և քաղաքի վըրա ճախրեց,  
Տոգորելով տեսնողների սըրտերը խոր ուրախությամբ:

Պրիամն այնժամ ըշտապելով նըստեց իր կառքն անմիջապես  
Եվ գավիթից դուրս սըլացավ մըտրակելով նըժույզներին:  
Իսկ առջևից էլ քառանիվ սայլն էր գընում բեռնավորված,  
Որ ջորիներն էին քաշում, և Իդեոսն էր վարում նըրանց:  
Սայլի հետքով կառքին լըծված ձիերն առաջ էին թըռչում,  
330 Որոնց քըշում էր ծերունին՝ մըտրակելով հաճախակի:  
Մեծաթափոր մի բազմություն արտավայից լաց ու կոծով  
Մանապարհ էր դընում նըրան, ասես մեռել էին տանում:  
Իսկ քաղաքից երբ դուրս ելան ու մըտան դաշտն արյունազանգ,  
Մերձավորները լալագին դեպի քաղաք վերադարձան:  
Ուղևորներն Արամազդի աչքից անտես չըմընացին.  
Տեսավ նըրանց դաշտով գընալն ու ծերունու վըրա գըթաց,  
Եվ կանչելով իր սիրելի Հերմոս որդուն՝ ասաց նըրան.

«Հերմես, քանզի հաճելի է քեզ ավելի, քան թե այլոց  
Ընկերանալ մարդկանց հաճախ և ունկրնդիր լինել նրանց,  
**340** Ուստի արի իջիր երկիր և Պրիամին առաջնորդիր  
Դեպի նավերն աքաչեցոց, բայց տար այնպես, որ նրանցից  
Ոչ ոք նրան չընդկատի, մինչև հասնի Պելիսյանհին»:

Այսպես ասաց, հընազանդեց պատգամավորն Արգոսասպան  
Եվ ոտքերին կապեց անեղծ թևամուկերն իր ոսկեղեն,  
Քրոնք նրան տանում էին թեթևորեն թըրցընելով  
Ե՛վ ծովերով, և՛ ցամաքով՝ արագաշունչ հողմի նըման:  
Առավ նաև գավազանը, որով մարդկանց, ում կամենա՝  
Քրնեցնում է և ոմանց էլ արթնացընում խորը քընհից,  
Ու դեպ երկիր վար արլացավ Արգոսասպանն ամենահաղթ  
**350** Եվ անհասպող հասավ իսկույն Հելլեսպոնոս ու Տրոյա:  
Գընում էր նա իշխանագուն մի պատանու կերպարանքով՝  
Դեռափրթիթ և գեղանի, ծընոտն հագիվ դեռ մըրազարդ:

Ողևորներն երբ որ հասան Իլիոսի գերեզմանին,  
Իջան այնտեղ, որ գետի մեջ ջրրեն իրենց գըրաստներին:  
Մըթընշաղն էր իրիկնային փըովում արդեն երկրի վըրա:  
Իդեոսը տեսավ փոքր-ինչ հեռվում Հերմես հըրեշտակին  
Եվ երկյուղից դողդողալով Պրիամոսին այսպես ասաց.

«Նայիր, ահա՛, ով Դարդանյան, ինչ-որ մարդ է մոտենում մեզ,  
Հարկավոր է ըզգուշանալ, կարող է նա մեզ ըսպանել:  
**360** Աչի՛ փախչե՛նք մեր ձիերով, իսկ եթե այդ ուշ է արդեն,  
Եվ ծընկներից փարվենք նըրա, գուցե խըղճա և խընայի»:

Այսպես ասաց, և ծերունու հոգին եղավ տակնուվըրա.  
Անդամները կարկամեցին, և ողջ մարմնով փըշաքաղվեց.  
Մարասիխար նայում էր նա, բայց Հերմեսը մոտենալով,  
Ալևորի ձեռքը քըռնեց ու հարցըրեց մըտերմաբար.

«Իսկ ո՞ր ես դու քըջում, հայրիկ, ձիերը քո, և ջորիներն  
Այս գիշերով, մինչդեռ բոլոր մահկանացուք նընշում են խոր:  
Չե՞ս վախենում միթե երբեք դու ահարկու աքայանցից,  
Որ վըխտում են քո շուրջ-բոլոր և ոխերիմ ոտխ են քեզ:  
**370** Թե նրանցից մեկը հանկարծ տեսնի քեզ, մութ այս գիշերով  
Մայլիդ այդքան գանձեր բարձած, այն ժամանակ դու ի՞նչ կանես:  
Երիտասարդ էլ չես գոնե, ողելիցդ էլ. ծեր է քեզ պես,  
Որ կարենաք դիմադրելով՝ չարագործին վանել ձեզնից:  
Իսկ ինձանից, ո՛վ ծերունի, բոլորովին մի՛ վախենա,  
Խս քեզ չարիք չեմ գործելու, այլ չարերին պիտի վանեմ,

Ռրովհետև իմ սիրելի ծերունի հոր շատ ես նրման»:

Միրտ առնելով, աստվածատիպ Պրիամն այսպես ասաց նըրան.  
«Այո՛, որդյակ իմ սիրելի, հավատում եմ քո խոսքերին.  
Աջը անմահ աստվածների հովանի է դեռ ինձ վըրա,  
380 Որ քեզ նրման շընորհալի մի ուղեկից ուղարկեց ինձ,  
Գեղատեսիլ և իմաստուն զավակ՝ ազնիվ ծընողների»:

Պատասխանեց Արամազդի պատգամավորն Արգոսասպան.  
«Այդ բոլորը շատ ճըշմարիտ ասացիր դու, ո՛վ ծերունի,  
Բայց եկ ա՛յս էլ ասա ըստույզ, թե պատվական գանձերն այդ դու  
Օտարագզի՞ մարդկանց մոտ ես տանում արդոք, թե՞ բարեկամ,  
Որ գեթ դըրանք ձեռքըդ մընան, երբ որ Իլիոնը կործանվի:  
Թե՞ դուք արդեն ահաբեկված փախչում եք սուրբ Իլիոնից,  
Քանզի ընկավ պատերազմում ազնիվ որդիդ՝ Հեկտորը քաջ,  
Որ կըովի մեջ ո՛չ մի արի աքայեցուց ետ չէր մընում»:

390 Աստվածատիպ Պրիամը ծեր նըրան այսպես պատասխանեց.  
«Ո՛վ ես, դու, քա՛ջ, և ինչպիսի՞ ծընողների զավակ ես վեհ,  
Որ գեղեցիկ գովեստներով հիշեցիր մահն իմ Հեկտորի»:

Նըրան այսպես պատասխանեց պատգամավորն Արգոսասպան.  
«Փորձո՛ւմ ես ինձ դու, ծերունի, հարցընելով քաջ Հեկտորից:  
Ծատ անգամ եմ տեսել նըրան ես աչքերովն իմ սեփական՝  
Փառապարզև պատերազմում, դեպի նավերն արշավելիս,  
Երբ սաչրասուր իր պըղընձով կոտորում էր արգիացոց:  
Նաչում էինք մենք հիացած, զի Աքիլլեսն Ատրիդի հետ  
Քեն պահելով՝ չէր թողնում մեզ պատերազմին մասնակցելու:  
400 Աքիլլեսի զինվորն եմ ես, նույն նավն է մեզ բերել այստեղ.  
Միրմիդոն եմ, նըրա երկրից և որդին եմ Պոլիկտորի,  
Որ հարուստ է, սակայն արդեն քեզ պես դողոջ մի ծերունի:  
Յոթ եղբայր ենք, վերջինն եմ ես, կըրտսեր, որդին ծընողներիս,  
Նըրանց միջից ինձ վիճակվեց Աքիլլեսի հետ գալ այստեղ:  
Նավերից եմ գալիս հիմա, և ասեմ, որ վաղ առավոտ  
Աքայեցիք քաղաքիդ մոտ պիտի ճակատ տան վերըստին,  
Զի նըստելուց ձանձրանալով՝ ծարավի են պատերազմի,  
Եվ արքաներն անկարող են սանձահարել աքայեցոց»:

Նըրան այսպես պատասխանեց աստվածատիպ Պրիամը ծեր.  
410 «Թե որ իրոք զինվորն ես դու Պելիսածին Աքիլլեսի,  
Պատմիր ուրեմն ինձ ամեն բան ըստուգապես և ճըշմարիտ.

Նավերի մոտ ընկա՞ծ է դեռ իմ Հեկտորի մարմինն արդյոք,  
Թե՞ Աքիլլը հոշոտելով կեր է գրցել իր շըներին»:

Նըրան այսպես պատասխանեց պատգամավորն Արգոսասպան.

«Ո՛չ թողչուններն են գիշատել, ո՛չ էլ շըներն, ո՛վ ծերունի,  
Այլ տակավին պսոկած է նա Աքիլլեսի վըրանի մեջ.

Եվ չընայած որ տասներկու օր անկենդան ընկած է նա՝  
Ո՛չ նեխում է, ո՛չ էլ որդերն են ուտում դին քո զավակի,  
Որդեր, որոնք մեռելների միս ուտելու սովոր են միշտ:

- 420 Ու թեպետև Պելիսաժինն իր ընկերոջ շիրիմի շուրջ  
Քարշ է տալիս կտոբից կապած մարմինն ամեն այգաբացին,  
Բայց մընում է բոլորովին դին անապակ և անվըթար:  
Ինքդ էլ պիտի շատ զարմանաս, ո՛վ ծերունի, եթե տեսնես  
Նըրան այնպես թա՛րմ ու մաքուր պսոկած, .քընա՞ծ լինի ասես.  
Վըրան ոչ մի արյունի բիծ, ու վերքերն էլ փակված բոլոր,  
Որ բաց արին շատերն իրենց անագորոյն պողիճճներով:  
Այսպես, ո՛վ ծեր, աստվածները հոգում են քո որդու մասին՝  
Նույնիսկ նըրա մահի՛ց հետո, զի շա՛տ էին սիրում նըրան»:

Ասաց, և ծերն ուրախացած՝ նըրան այսպես պատասխանեց.

- 430 «Լավ է, որդյա՛կ իմ սիրելի, ձոն նըվիրել աստվածներին,  
Ինչպես օրենքն է պատվիրում. երբ տակավին ողջ էր որդիս,  
Չէր մոռանում բոլորովին աստվածներին դիմպական,  
Դըրա համար էլ հիշում են նըրան մահից հետո՝ անգամ.  
Բայց դու արի և ընդունիր ինձնից բաժակն այս գեղեցիկ,  
Պաշտպան եղիր և օգնությամբ անմահական աստվածների  
Տար ինձ մինչև վըրանը ձեր Պելիսաժին Աքիլլեսի»:

Եվ պատվիրակն Արգոսասպան պատասխանեց Պրիամոսին.

«Փորձո՛ւմ ես, ծեր, դու պատանուս, սակայն դու ինձ չես համոզի,  
Ըստիպելով Աքիլլեսից ծածուկ՝ պարզև ընդունելու:

- 440 Վախենում եմ ես գեղեցիկ այդ նըվերից գրկել նըրան,  
Ձի նա գըլխիս ապագայում կարող է մեծ աղետ բերել:  
Առանց այդ էլ, ո՛վ ծերունի, ես քեզ սիրով կառասնորդեմ,  
Թեկուզ մինչև Արգոս գընաս, թե՛ ցամաքով և թե՛ ծովով,  
Լինի նավով արագահոս, թե հետիտուն ուղնկցելով:  
Եվ քանի որ քեզ հետ եմ ես, քեզ ոչ մի մարդ չի վընասի»:

Այսպես ասաց, և ցատկելով կտոբի վըրա, Հերմեսն իսկույն  
Իր ձեռքն առավ երասաններն ու մըտրակը շաչեցնելով՝  
Ներշընչեց նոր եռանդ ու թափ ջորիներին և ձիերին.

- Պարեկները դեռ նոր էին ավարտում ճոխ ընթրիքն իրենց.
- 450 Երբ որ հասան նավատորմի մարտկոցներին ու փոսերին:  
 Պարեկների վերա խոր քուն թափեց Հերմեսն Արգոսասպան,  
 Բացեց դրոներն անմիջապես, փականք ու նիզ հեռացնելով  
 Ու ներս տարավ Պրիամոսին ընծաների հետ միասին:  
 Իսկ երբ հասան Պելիսածնի վերանը մեծ և վեհաշուք,  
 Որ արքայի համար իրենց միրմիդոններն էին շինել  
 Եղևնու կոկ տաշած փայտով ամուր ծածկած և վրբայից  
 Մարգագետնից հընձած դալար եղեգներով պատած ամբողջ:  
 Ծորջը մեծ բակն էր տարածվում հաստ ցըցերով ցանկապատված,  
 Ու եղևնյա մի նիզ միայն փակում էր դուռն ամրակառույց:
- 460 Երեք հուժկու աքալեցի պետք էր, որ դուռն այդ փակեին,  
 Երեք հոգի, որ բանալին ծանրը սողնակը հաստաբետտ.  
 Մինչ Աքիլլեսն ինքը միայն՝ փակում էր այն ու բաց աճում:  
 Օգտամատույց Հերմեսն իսկույն դուռը բացեց ծերի առաջ  
 Ու ներս տարավ պետրին նրա բերած ընծաներով,  
 Ապա կառքից ցած իջնելով այսպես ասաց Պրիամոսին.  
 «Արդ, ճանաչիր ինձ, ծերունի, անմահ աստված Հերմեսն եմ ես,  
 Հայր Արամազդն ինձ ուղարկեց քեզ ուղեկից և առաջնորդ:  
 Հեռանում եմ ինքքս հիմա, որ չըտեսնի Աքիլլը ինձ,  
 Պատշաճ բան չէ բողբոլվին, որ մի աստված երանավետ
- 470 Ցույց տա իր սերը հայտնապես մի երկրային մահկանացվի:  
 Մըտիր վրբանն ու փարվելով քաջի ծընկանն՝ աղերսագին  
 Խընդիրը նըրան հանուն իր հոր ու վարսագեղ մորն ու որդու,  
 Եվ դու պիտի կարողանաս շարժել նըրա սիրուն ապատած»:

- Ասաց Հերմեսն ու սըլացավ դեպի Ոլիմպ աստվածաբնակ:  
 Իսկ Պրիամոսն իջավ կառքից և թողնելով Իդեոսին,  
 Որ հոգ տանի ու պահպանի ջորիներին և ձիերին,  
 Ինքը գընաց և ուղղակի մըտավ վրբանն այն վեհաշուք,  
 Որտեղ նըստած գըտավ նըրան՝ Արամազդի սիրեցյալին:  
 Ընկերներից Աքիլլի մոտ երկու հոգի կային միայն՝
- 480 Դյուցազնազարմ Ավտոմեդոնն ու Ալկիմոսն արիաական,  
 Ամեն վայրկյան պատրաստ իրենց թագավորին ծառայելու:  
 Նոր էր ընթրիքն իր ավարտել, ու սեղանը փըռած էր դեռ:  
 Պրիամն ըզգույշ, ըստվերի պես դեպ Աքիլլեսն առաջացավ  
 Եվ ընկնելով բերանքսիվայր ամուր գըրկեց ծունկը նըրա  
 Ու համբուրեց աջն արյունոտ՝ դահիճն իր քաջ որդիների:  
 Ինչպես մի մարդ, որ իր երկրում ծանրը ոճիր գործի հանկարծ  
 Եվ թողնելով իր տունն ու տեղ, փախչի գընա օտար երկիր,  
 Մըտնի հարուստ մի մարդու տունն ու զարմացնի տեսնողներին,—



Պրիամոսը փրկագնում է Հեկտորի դին



- Այդպես Աքիլը զարմացավ տեսնելով ծեր Պրիամոսին:
- 490** Մյուսներն էլ ապուշ կըտրած իրար երես էին նայում:  
 Իսկ Պրիամոսն աղերսալից ձայնով դիմեց Աքիլլեսին.  
 «Աստվածագարմ ո՛վ Աքիլլես, հիշիր հորըդ ինձ տարեկից,  
 Որ ինձ նրման կանգնել է արդ զստամության դատրն շեմքին:  
 Նրբան էլ՝ ե՛ն նեղում գուցե թըշնամիներն, ինչպես որ ինձ  
 Եվ չըկա ոք, որ նրբանից դառն աղետները հեռացնի:  
 Բայց ողջությանդ լուրն առնելով՝ ուրախանում է ծերունին  
 Եվ հույս ունի տեսնել որդուն մի օր, կըովից երբ տուն դառնա:  
 Իսկ ես թըշվասու, որ հայր էի Տրոյայում բազում որդոց,  
 Եվ ոչ մեկից, վա՛՛շ ծերունուս, աճյունն անգամ ինձ չըմընաց:
- 500** Թըվով հիսուն էին նրբանք, երբ որ եկան աքայեցիք.  
 Տառնկիներ մի մոր զավակ, իսկ մյուսները այլ կանանցից:  
 Նրբանց շատի ծունկը ծայեց արյունատուշտ Արեսը ժանտ.  
 Իսկ նա, որ իմ մեկ հատիկն էր, պաշտպան և մեզ և քաղաքին,  
 Նրբան էլ ինքըդ ըսպանեցիր, հայրեհիքի հերոսին քաջ,  
 Հեկտոր որդուս, որի համար եկել եմ ես անավասիկ  
 Նավատորմիդն աքայեցոց ու բերել քեզ անբավ փրկանք:  
 Եկ ակնածիր աստվածներից, ո՛վ Աքիլլես, և ինձ գըթա՛,  
 Հիշելով հորըդ ծերունի, իսկ ես թըշվա՛ն եմ նրբանից:  
 Դեռ չի կըրել ոչ ոք ինձ չափ ծանրը վըշտեր այս աշխարհում,  
**510** Ինձ, որ որդուս ըսպանողի ձեռքն եմ անա ես համբուրում»:

- Այս խոսքերից Աքիլլեսի սիրտը լըցվեց հոր կարոտով  
 Ու հեռացրեց ծերունու ձեռքն իր ծընկներից արտասովելով:  
 Լալիս էին երկուսով էլ՝ Պրիամը իր որդու համար  
 Թավալվելով արտասովակո՛ծ՝ Աքիլլեսի ոտքերի մոտ,  
 Իսկ Աքիլլեսն իր հոր համար և սիրելի Պատրոկլեսի.  
 Եվ վըրանի հարկը թընդաց նրբանց ողբով կականալիր:  
 Աքիլլեսը լաց լինելուց երբ հագեցավ ու հանդարտվեց,  
 Ելավ տեղից ու ծերունուն, ձեռքից բըռնած, հանեց ոտքի.  
 Եվ գըթալով ակտրի ձերմակ գըլխին ու մորուքին՝
- 520** Պրիամոսի ձեռքից բըռնած ա:սպես ասաց կարեկցաբար.  
 «Իսկապես որ շա՛տ վըշտեր ես տարել դու, ծե՛ր տառապալից,  
 Բայց մե՛ն-մե՛նակ ի՛նչ սիրտ արիք գալու նավերն աքայեցոց  
 Եվ էլնել այն մարդու առաջ, որ ըսպանեց որդիներիդ:  
 Երկաթե սիրտ ունես անշուշտ. բայց եկ նըստիր այս աթոռին,  
 Ու թեպետև ցաված ե՛նք խիստ, բայց մեր խորունկ վիշտը զըսպե՛նք,  
 Բանգի ոչ մի օգուտ չըկա դառնակըսկի՛ծ սուգ անելուց:  
 Ծակատագիրն է մարդկային՝ աստվածների ձեռքով գըրված՝  
 Տանջվել անվերջ ու տառապել, աստվածներն միայն անվիշտ:

- Երկու հրակա կարասներ կան Արամազդի շենքին դըրված,  
**530** Երկուսն էլ լի այն տուրքերով, որոնցից միշտ բաշխում է նա.  
 Բարիքներ են մի կարասում, իսկ մյուսի մեջ՝ չարիքներ:  
 Երբ Արամազդն ամպրոպալին այդ երկուսից խառն է տալիս,  
 Մերթ քարու է հանդիպում մարդ ու մերթ չարի— փոփոխակի:  
 Իսկ ում չարից է տալիս նա, վիշտն է բաժին դառնում նրան,  
 Ու տանջում են նրան անվերջ դատրն ցավերն այս աշխարհում,  
 Որ շրջում է աստվածներից ու մարդկանցից արհամարհված:  
 Այսպես՝ տրվին դիք Պելեպին ճոխ պարզներ ծընված օրից.  
 Թագավորեց միրմիրոնաց վրրա փառքով և ճոխությամբ  
 Ու, թեպետև մահկանացու, աստվածուհի կին առավ նա:  
**540** Բայց և այնպես աստվածները նաև նրան տրվեցին վիշտ.  
 Նա չունեցավ արու զավակ, որ իր գանձին պայազատեր,  
 Բացի ինձնից, որ վաղաժամ մահ է գրված իմ ճակատին,  
 Ու ծերությունն իր խրճամեկ չեմ կարող ես, քանզի շուտով  
 Հեռու երկրից իմ հայրենի՝ մեռնեմ պիտի Տըրոյայում,  
 Որ նրստած եմ՝ ի պատմհաս քեզ և բազում որդիներիդ:  
 Լըսել ենք, որ երբեմն ղու տիրել ես շատ աշխարհների.  
 Լեսրոս կըղզուց մինչ Փոչուգիա, ուր Մակարն էր թագավորում,  
 Մինչև անձայր Հելլեպոնոսու քոնն են եղել մի ժամանակ.  
 Եղել ես ճոխ, բազմազավակ ու գանձերով մեծահարուստ:  
**550** Բայց այն օրից, երբ աստվածներն այս աղետը քերին գրվիտիդ,  
 Քաղաքիդ շուրջ, ո՛վ ծերունի, արյուն է միշտ ու պատերազմ:  
 Տոկա՛ վըշտիդ համբերությամբ, մի՛ լար անվերջ լալախառաչ,  
 Զի ողբալով դու չես կարող հարություն տալ քո զավակին,  
 Եվ կարող ես գրվիտի մի նոր աղետ քերել, ո՛վ ծերունի»:

Աստվածատիպ Պրիամը ծեր նրան այսպես պատասխանեց  
 «Մի՛ տար աթոռ ինձ նրստելու, աստվածագարմ ո՛վ Աքիլլես,  
 Քանի Հեկտորս անթաղ է դեռ՝ ես չեմ կարող հանգրստանալ:  
 Ինձ դարձըրու իմ զավակին, որ ժամ առաջ տեսնեմ նրան,  
 Եվ ընդունիր հետըս քերած ճոխ ընծաներն իբրև վորկանք:  
**560** Դրբանք բարո՛վ վայելես դու, բարո՛վ դառնաս քո հայրենիք,  
 Քանի որ դու ինձ գըթացիր, խընայելով պևորիս,  
 Որ կենդանի մընամ դեռևս ու տեսնեմ լույսն արեգապան»:

Խեթ նայելով Պրիամոսին՝ Աքիլլն այսպես առաջ նրան.  
 «Մի՛ գըրգըռիր ինձ, ծերունի՛, քանզի արդեն վըճեղ եմ ես՝  
 Աստվածների հըրամանով քեզ հանձնելու Հեկտորի դին.  
 Մայրըս քերեց աստվածային այդ հըրամանն Արամազդից:  
 Գիտեմ նույնպես, որ քեզ այստեղ քերել է մի անմահ աստված,

Քանզի ոչ մի մահկանացու սիրտ չէր անի վըրանը գալ,  
Պարեկներից անցնել անտես և դարբասի միզը բանալ:  
570 Ուտի, ո՛վ ծեր, էլ մի՛ հուզիր ավեկոծյալ սիրտըս իզուր,  
Կարող եմ ես, մեղանշելով Արամազդի պատվերի դեմ,  
Չըխընայել աղերսարկու ակտրիդ աղաչանքին»:

Այսպես ասաց, և ծերունին նըստեց նրա սաստին հըլու:  
Իսկ Աքիլլեսն առյուծաբար վըրանից դուրս վազեց արագ.  
Եվ նըրա հետ դուրս զընացին Ավտոմեդոնն ու Ալկիբոսն՝  
Աքիլլեսի մըտերիմներն Մենիտյանի մահից հետո:  
Նըրանք լըծից արձակեցին ջորիներին և ձիերին,  
Խոբոսին կանչեցին ներս ու նըստելու աթոռ տըվին.  
Ապա սայլից ցած իջեցրին հնկտորական փըրկանքը նոխ,  
580 Թողնելով լոկ երկու շապիկ ու մի լողիկ սայլակի մեջ,  
Որ փաթաթեն Հեկտորի դին. ապա Աքիլլն անմիջապես  
Հըրամայեց իր սղախնոց, որ առանձին, ծածուկ մի տեղ  
Լըվանան դին, օծեն լողով՝ Պրիամոսի աչքից հեռու,  
Քանզի գուցե որդուն ի տես՝ ծերը վըշտից չիշխի իրեն,  
Եվ Աքիլլը բարկանալով՝ զարկի նըրան և ըսպանի,  
Մեղանշելով մեծամըռունչ Արամազդի պատվերի դեմ:  
Կանայք աշխույժ լըվանալով և օծելով Հեկտորի դին,  
Շըքեղ շապիկ մի հագցըրին ու ձըզեցին վըրան մի քող,  
Եվ Աքիլլը վերցընելով՝ դըրեց նըրան անկողնու մեջ.

590 Ապա երկու հոգով առան ու սայլակի վըրա դըրին:  
Աքիլլն այնժամ հատաչալից ձայն արձակեց իր սրբելուն.  
«Մի՛ սըրտմըտիր դու ինձ վըրա, ո՛վ սիրելիդ իմ Պատրոկլես,  
Եթե լըսես դըժոխքի մեջ, որ իր հորն եմ վերադարձնում  
Մարմինը քեզ ըսպաճողի. քերել է նա հարուստ փըրկանք,  
Որից, անշուշտ, քեզ արժանի մեծ բաժին եմ հսանելու ես»:

Գոչեց Աքիլլն ու դառնալով մըտավ վըրանը վերըստին,  
Եվ նըստելով հանդիպակաց պատին հենած բազմոցի մեջ,  
Որտեղից նա վեր էր կացել, այսպես ասաց Պրիամոսին.  
«Որդիդ փըրկված է, ծերունի, ինչպես որ ինքդ էիր ուզում,  
600 Անկողնու մեջ պատկած է արդ, և երբ ծագի այգը ուրախ,  
Տեսնես պիտի ու տանես տուն. իսկ եկ հիմա ընթրիք անենք:  
Վերակտրի հոգ էր տանում և Նիոբեն գիսակագեղ,  
Որ կորցըրեց մի օրվա մեջ իր տասներկու զավակներին,  
Որոնցից վեցն աղջիկ էին, և մընացած վեցը՝ տըղա:  
Տըղաներին նետահարեց Ապոլլոնը արծաթաղեղ՝  
Նիոբեի դեմ զայրացած, իսկ Արտեմիսն՝ աղջիկներին,

- Ջի Նիորեն բաղդատել էր Ապոլլոնի հետ ինք իրեն  
 Եվ Լետովնի, թե նրանց հետ հավասար է գեղեցկությանը  
 Ու պարծեցել, որ Լետովնը ունի միայն երկու զավակ,  
 \*610 Միհնչեղ ինքը բազմածընունդ՝ վեցը տղա ու վեց աղջիկ:  
 Սակայն նրանք թեն երկու, բայց շրջեցին տասներկուսին:  
 Ինն օր ամբողջ ընկած էին դիակները արնաշաղախ.  
 Եվ քաղաքում սիրտ չէր անում և ոչ մի մարդ նրանց թաղել,  
 Ջի Ջովանյանն ամենագոր քարացրել էր բոլոր մարդկանց,  
 Եվ տասներորդ օրը միայն թաղեցին դիք երկնաքընակ:  
 Այսպես անա, և Նիորեն մինչև անգամ իր խոր վըշտում  
 Չըմոռացավ ուտել— խըմել ու հոգ տանել կերակուրի:  
 Հինա այնտեղ, Միսիլի լերկ ու ամալի լեռների մեջ,  
 Որ ասում են, թե ապրում են աստվածուհի հարսներ անհոգ.  
 \*620 Ու խաղում են Աքելոյի ափուքներից, պարում ուրախ,  
 Այնտեղ է նա, թեպետև քար, կըրում իր վիշտն աստվածառաք:  
 Արի ուրեմն, ո՛վ ծերունի, ընթրենք և մենք, իսկ քո որդուն  
 Դու կըողբաս երկա՛ր-երկա՛ր, երբ որ նրան տուն կըտանես»:

- Այսպես ասաց Աքիլլը ժիր և իր տեղից վեր կենալով՝  
 Մորթեց ոչխար մի ըսպիտակ, իսկ ընկերներն այն քերթեցին,  
 Միսը մանրիկ կոտորելով շամփուր գարկին աշխուժորեն  
 Ու կըրակի վըրս դըրած՝ արնաթաթախ խորովեցին:  
 Սեղան գրցեց Ավտոմեդոնն ու բաշխեց հացն աստվածային,  
 Իսկ Աքիլլը միսը բաժնեց, և ճաշակել ըսկըսեցին:  
 \*630 Եվ երբ կերան ու կըշտացան, նրստած իրար դեմ-հանդիման՝  
 Ուրանչանում էր ծերունին Աքիլլեսին մըտիկ տալով,  
 Ինչ վե՞հ հասակ, ինչպիսի՞ դեմք, ասես աստված լինի անմահ:  
 Իսկ Աքիլլեսն էլ Դարդանյան Պրիամոսով էր հիանում,  
 Նըրս տեսքով վըսեմաշուք ու խոսքերով իմաստալից:  
 Եվ երկուսով իրար երես շատ նայելուց երբ հագեցան,  
 Առաջինը խոսեց Պրիամն ու Աքիլլեսն այսպես ասաց.  
 «Դիցաքնո՛ւնդ, ցույց տոր հինա այլորիս մի անկողին,  
 Որպեսզի ես ընկողմանած փոքր-ինչ անուշ քուն վայելեմ,  
 Ջի աչքերըս դեռ չեն փակվել կուպերիս տակ բոլորովին  
 \*640 Այն օրվանից, որ քո ձեռքով ընկավ որդին իմ կարեվեր.  
 Այլ հառաչում եմ շարունակ, արցունք թափում, հեծում անվերջ  
 Գիշերները զավիթիս մեջ փոշիներում թավալվելով:  
 Ծոմ էի դեռ մինչև այսօր, բերանըս բուն չէի դըրել,  
 Այժըմ միայն քո ըստիպմամբ կերս փոքր-ինչ ու խըմեցի»:

Այսպես ասաց, և Աքիլլեսն հըրամայեց ընկերներին

Եվ աղախնոց, որ պատրաստեն գավթում երկու ձեռք անկողին: Կանայք աշխույժ՝ ջահերն առած վրրանից դուրս ելան իսկույն, Բերին մաքուր նուրբ պաստառներ և օթոցներ ծիրանեգույն, Բըրդից գործած պատմունաներ բերին փափուկ ու թավարծի  
650 Ու փութեռանդ պատրաստեցին գավթում երկու ձեռք անկողին: Աքիլն այնժամ կատակելով Պրիամոսին այսպես ասաց.

«Քընիք այստեղ, սիրելի ծեր, վըրանից դուրս հանգըստացիր, Քանգի ինձ մոտ գուցե դարձյալ իշխան մարդիկ գան այս գիշեր, Որոնք հանախ, սովորաբար, խորհուրդի են գալիս ինձ մոտ. Եվ նըրանցից մեկը եթե այստեղ տեսնի քեզ գիշերով Ու լուր տանի իշխանապետ Ագամեմոն Ատրիդեսին, Այնժամ գուցե հետաձըգվի որդուդ փըրկանքն առժամանակ: Հիմա հայտնիր, ո՛վ ծերունի, ըստուգապես ինձ ա՛յն մասին, Թե Հեկտորի թաղման համար քանի՞ օր է քեզ հարկավոր,  
660 Որ ըսպասեմ և թույլ չըտամ աքայեցոց հարձակվելու»:

Աստվածատիպ Պրիամն այնժամ նըրան այսպես պատասխանեց.  
«Եթե որդուս թաղման համար դադարեցնես կըրովն առժամ, Անուարակույս ինձ մեծ շընորհ կանես, վեհագն ո՛վ Աքիլես: Ինքըդ գիտես, թե մենք ինչպես փակված ենք մեր քաղաքի մեջ. Փայտն էլ հեռու է բավական, պետք է բերենք այն՝ լեռներից, Իսկ տըրոյանք վախենում են, թե հարձակվեն աքայեցիք: Ընորհիր ուրեմն մեզ ինը օր, որ սուգ անենք նըրա վըրս, Ու տասներորդ օրը թաղենք, ու հոգու հաց ուտեն մարդիկ. Տասնըմեկին կըկանգնեցնենք վըրան շիրիմ, որից հետո՝  
670 Տասներկուսի առավոտյան նո՛ր կըկըովենք, թե հարկ լինի»:

«Այդ էլ, ո՛վ ծեր, թող որ լինի այնպես, ինչպես դու ես ուզում. Վըստահ եղիր, որ այդքան օր ձեզ հետ կըրով չենք անելու»:— Ասաց Աքիլն ու բըռնելով Պրիամի ձեռքն ամուր սեղմեց, Որ ծերունին չըվախենա, վըստահ լինի, և հեռացավ: Ապա նըրանք՝ Պրիամ արքան և նըվիրակն իր՝ ապահով, Գավթում, իրենց մահիճներում ընկան հոգևած ու քընեցին: Աքիլեսն էլ եղևնաշեն իր վըրանի խորքում պառկեց, Իսկ նըրա կողքն ընկողմանեց Բրիսեիսն ամենագեղ:

Այսպես ահա բոլոր մարդիկ և աստվածները անխըրով  
680 Նընջում էին հանգըստապետ՝ քաղցըր քընից հաղթահարված. Միայն Հերմեսն օգտամատուցց չըկարեցավ քընել երբեք, Միտք էր անում, թե Պրիամին ինչպե՞ս պիտի պարեկներից Գաղտնածածուկ կարողանա ետ դարձընել նավատորմից:

Եկա՛վ կանգնեց Պրիամոսի սընարի մոտ և շըշընջաց.

«Մի՞թե սըրտումըդ, ո՛վ ծերունի, երկյուղ չունես բոլորովին,  
Որ թըշնամի բանակի մեջ այդպես հանգիստ քընում ես դու:  
Աքիլլեսը քեզ խընայեց, բայց ամեն մարդ չի խընայի:  
Կարողացար փըրկել որդուդ մարմինը դու մեծ փըրկանքով,  
Բայց որդիներդ կյանքիդ համար եռապատիկ պետք է որ տան,  
690 Եթե Ատրիդ Ագամեմնոնն իմանա, որ այստեղ ես դու»:

Այսպես ասաց, ծերը սուկաց և արթնացրեց Իդևոսին:  
Հերմեսն օգնեց նըրանց՝ լըծել ջորիներն ու ձիերն իսկույն  
Ու հապըշտապ՝ արայեցոց. բանակից դուրս հանեց նըրանց:  
Եվ գընալով, երբ որ հասան հորձանահոս Քասնթոսի  
Գեղավըտակ հունը նըրանք, որը ծընեց Ջեսը անմահ,  
Հերմեսն այնժամ թողեց նըրանց ու բարձրացավ դեպի Ոլիմպ:

Քըրքմագեւտ այգն էր տարածվում տիեզերքի վըրս համայն,  
Երբ Տըրոյա հասան նըրանք աղեկըտոր լաց ու կոծով:  
Ջորիները քըրտինք մըտած տանում էին Հեկտորի դին:  
700 Տըրոյայում ոչ ոք նըրանց գալը այնպես շուտ չիմացավ,—  
Ոչ տըղամարդ և ոչ էլ կին,— բացի չըքնաղ Կասանդրայից,  
Որ իր գեղով ոսկեդիմիկ Ատոդիկին էր նըմանատիպ:  
Պերգամոնի աշտարակից, ուր ելել էր վաղ առավոտ,  
Տեսավ նա հորն ու նըրա հետ՝ քաղաքի ծեր մունետիկին.  
Տեսավ եղբոր՝ Հեկտորի դին պառկած մահճում, սայլի վըրս  
Եվ իր ճիշով սըրտաճըմլիկ լըցրեց ամբողջ քաղաքը նա.  
«Տրովացիք ու տրովուհիք, ելեք տեսեք ձեր Հեկտորին,  
Որին ռազմից ետ դառնալիս դիմավորում էիք ուրախ,  
Ջի քաղաքի և բոլորիս ուրախությունն ու փառքն էր նա»:

710 Այսպես ձայնեց և բոլորին ոտքի հանեց քաղաքի մեջ:  
Անտանելի սուգով սաստիկ համակվեցին կին, տըղամարդ  
Ու խուժեցին դեպի դըռներն, ուր իջեցրին Հեկտորի դին:  
Սայլին ընկան նախ կինը հեզ ու պստավ մայրն արտասվահեղձ,  
Եվ գըլուխը գըրկած նըրա՝ մազերն իրենց փետըրտեցին,  
Ու նըրանց հետ լալիս էին, ողբում բոլոր տըրոյացիք:  
Այդպես, ամբողջ օրը նըրանք մինչ մայրամուտ, դըռների մոտ  
Կըկոծեին արտասվալից շըրջապատած աճյունը թանկ,  
Եթե կառքից Պրիամը ծեր չաղաղակեր ժողովըրդին.  
«Ծամփա՛ տըվեք ջորիներին, որպեսզի դին հասընեն տուն,  
720 Որից հետո ինչքան կուզեք լացեք վըրսն ու ողբացեք»:

Այսպես ասաց վըշտոտ արքան, ու բազմությունն անմիջապես  
Շտ ընկրրկեց, քաշվեց հեռու, ճամփա տալով դիասայլին:  
Հոծ բազմության ուղեկցությամբ դյուցազնի դին տարան պալատ  
Ու պառկեցրին ապարանքում քանդակածո անկողնու մեջ.  
Դիակի շորջ բերին ապա ողբանրվագ երգիչներին,  
Որոնց ողբին ձայնակցեցին եղերամայր լավան կանայք:  
Ըսկիզբ դըրեց դառըն ողբին լուսածըղի Անդրոմաքեն  
Գըրկած գըլուխը գանգրահեր վաղաթառամ իր ամուսնու.

- «Ծաղկափրթիթ» հասակիդ մեջ հանգավ, Հեկտոր, արևըդ վառ,  
730 Թողնելով ինձ տանըդ այրի և որբ՝ որդուն քո դեռ մանուկ,  
Որին ես ու դու ենք ծընել, թըշվառներըս, և որ, ալա՛ղ,  
Հույս չունեմ թե կասրի երկար. կըքանդըվի Տրոյադան,  
Քանզի ընկար դու, սիրելիս, դու, որ պաշտպանն էիր համայն  
Մեր քաղաքի, պարկեշտ կանանց, քո և բոլոր մանուկների,  
Որոնց գերի՛ պիտի տանեն աքայեցիք սև նավերով:  
Բոլորի հետ, խեղճ իմ մանկիկ, տանեն պիտի մորըդ և քեզ.  
Օտար երկրում պիտ տատապես ծանր ու անարգ աշխատանքով  
Դըժնաքարո մի տիրոջ մոտ, և կամ թե ոմն աքայեցի  
Քեզ բրոնելով՝ գազանաքար ցած գըլորի աշտարակից  
740 Դառըն դիտվ և վըրեժով լըցված քո հոր՝ Հեկտորի դեմ,  
Որի ձեռքով ըսպանվել է հայրը, եղբայրն և կամ որդին:  
Քանզի բազում աքայեցիք ընկան խիզախ քո հոր ձեռքով  
Ու կըրծեցին ակռաներով հողը իրենց արնով ներկած:  
Քաջ էր հայրըդ պատերազմում, ոչ ահ գիտեր և ոչ էլ մահ,  
Որի համար ուտանն ամբողջ այսօր նըրա սուգն է անում:  
Դառնագին վիշտ պատճառեցիր ծընողներիդ, այ իմ Հեկտոր,  
Բայց ամենից ավելի շատ ի՛նձ ցավ տըվիր անտանելի:  
Գեթ մեռնելիս դու անկողնից ձեռքերըդ ինձ չերկարեցի՛ր,  
Ոչ էլ խելոք, քաղցըր մի խոսք ասացիր ինձ վերջին անգամ,  
750 Որ հիշեի՛ ես շարունակ, օր ու գիշեր քեզ սըգալիս»:

Այսպես ողբաց Անդրոմաքեն, ձայնակցեցին նըրան կանայք,  
Որից հետո աղեկըտոտ ըսկըսեց ողբն իր Հեկաքեն.  
«Հեկտոր՛, բոլոր որդիներիս մեջ ամենեն, դու սիրելիս,  
Դու սիրելի էիր նաև աստվածներից, որոնք ահա՛  
Քո մահից ետ միգչև անգամ հոգ եմ տանում վըրադ, որդիս:  
Անագորույն Աքիլլը քո եղբայրներից ծախեց բոլոր՝  
Ծովից առդին՝ Սամոս, Իմբրոս և անմատույց Լեմնոսի մեջ,  
Բայց նա միայն հոգի՛դ խըլեց երկայնաշեշտ իր սըլաքով  
Ու քարշ տըվեց քո ըսպանած Պատրոկլեսի շիրիմի շորջ  
760 (Որին սակայն Աքիլլեսը հարություն տալ չըկարեցավ),

Եվ դու ահա քո պայատում թարմ ես, անեղծ ու անվրթար,  
Նրման նրբա, որին խոցեց Ապոլլոնը հանկարծահառ  
Արծաթափայլ իր աղեղից թռուած թեթև նետերով դյուր»:

Այսպես ասաց մայրը լալով, և բոլորը ձայնակցեցին,  
Ապա ողբի հերթը հասավ Հեղինեին լալահառաչ.

«Հեկտոր՛ր, բոլոր տագրերիս մեջ սիրելագույնը իմ հարգարժան.

Ա՛յս, երանի չըլիների ես ամուսինն Ալեքսանդրի,

Որ չըբերեր ինձ՝ Տըրոյա. ո՛ր էր թե վաղ մեռնեի ես:

Լըրանում է իմ հարսնության քրսաներորդ տարին ահա՛,

770 Որ հայրենիքն իմ հարազատ թողած հեռու՛ աչստեղ եմ ես,

Բայց չեմ լըսել մի՞նչն հիմա քեզնից մի խոսք նախատալից:

Թե տագրերես ու տալերես մեկը հանկարծ, կեսուրբս կամ,

Ինձ՝ կըշտամբեր,— իսկ կեսուրբս հոր պես է միշտ եղել ինձ հետ,—

Դու քաղցրությամբ, խոհեմաբար հանդիմանում էիր նրբան:

Դրբա համար, ա՛յ իմ Հեկտոր, քեզ հետ նաև ի՛նձ եմ ողբում,

Ինձ՝ թըշկառիս, որ մընացի առօգնական բոլորովին,

Քանզի ամբողջ Տըրոյայում չունեմ ուրիշ մի բարեկամ,

Որ կարեկցի, գըթա վըրաս. խույս եմ տալիս բոլորն ինձնից»:

Այսպես ասաց և բոլորով լացին երկար, հառաչեցին,

780 Որից հետո Պրիամը ծեր առաջ գալով՝ այսպես ասաց.

«Արդ, գընացե՛ք, տըրոյացիք, և փայտ բերեք Իդա սարից.

Աքայեցոց հարձակումից մի՛ վախենաք բոլորովին:

Աքիլլեսը հանդիսավոր խոսք տըվեց ինձ նավատորմում,

Թե չի կըովի ու չի թողնի, որ նեղություն պատճառեն մեզ

Մի՞նչն չանցնի տասներմեկ օր, ու տասներկորորդ այգը շողա»:

Այսպես ասաց, և լըծեցին մարդիկ իրենց եզն ու ջորին

Ու սայլերով, իրար ետև քաղաքից դուրս ելան իսկույն:

Ինձ օր անվերջ փայտ կըրեցին ու դիզեցին քաղաքից դուրս,

Իսկ տասներորդ այգը երբ որ արշարուավեց երկրի վըրա,

790 Դուրս բերեցին ապարանքից Հեկտորի դին լաց ու կոծով

Եվ հանելով խարույկն ի վեր՝ կըրակ տըվին փայտակույտին:

Եվ վարդամատն Առավոտը երբ որ ծագեց ծիրանափառ,

Քաղաքից դուրս եկած մարդիկ հավաքվեցին խարույկի շուրջ.

Նախ հանգըրին կարմիր գինով մեծ խարույկի կըրակը վառ,

Ապա ընկեր ու ազգական, հարազատներն այրեցյալի

Հավաքեցին ճերմակ աճյունն ու թըրջելով արտասուքով՝

Դըրին ոսկյա սափթթի մեջ, որ ծիրանի քողով ծածկած



Իջեցրին խոր ու խավարչուտ գերեզմանում ու ծածկեցին:  
Ապա բերին մեծ-մեծ քարեր ու շարեցին նրա վըրս,  
300 Կանգնեցրին մեծ մի հողատուբ, դետեր դըրին շիրմի մոտ,  
Որ հետևեն աքալեցոց հանկարծական հարձակվելուն:  
Թաղման հանդեսն ավարտելով քաղաք դարձան տըրոյացիք  
Ու հավաքված դիցասընունդ Պրիամոսի ապարանքում,  
Սըգո առատ սեղանի շուրջ՝ կերան թուրք ու խըմեցին:

Քաջ Հեկտորի թաղումն այսպես շըքեղ կերպով կատարեցին:

-----  
-----  
-----

# Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո ԻՆ Ն Ե Ր

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

- տ. 5.— **Արամազդ**— հայ դիցաբանության մեջ համապատասխանում է հունական Զևսի՝ կամ Դիոսի:
- տ. 7.— **Ասորիդես**— Ասորեսի որդին՝ Ագամեմոնը:
- տ. 15.— **Ապոլլոնի ցուպը ոսկա**— Կրոնական իշխանության խորհրդանիշ է:
- տ. 20.— **քաղաքը Պրիամի**— Տրոյան:
- տ. 29.— **վարսակալն ասավածային**— «պսակն Ապոլլոնի», որ Քրիստոսը կրում էր իբրև աստծո սպասավոր:
- տ. 44.— **թող...տուժեն քո սուրսայր սլաքներով**— Հանկարծակի վրա հասնող մահը հին հույները բացատրում էին նրանով, որ Ապոլլոնը կամ նրա քույր Արտեմիսը նետահարում էին մարդկանց (Ապոլլոնը՝ տղամարդկանց, Արտեմիսը՝ կանանց):
- տ. 54.— **վառ խարույկներ բորբոքելով**— Հոմերոսյան ժամանակաշրջանում սպանվածներից հիմնականում դիակիզում էին:
- տ. 89.— **ճենճեր**— այստեղ՝ իբրև զոհ մատուցվող կենդանու լույք, որը մսեղիքի որոշ մասերի հետ աչրվում էր՝ ի պատիվ տվյալ աստծո:
- տ. 168.— **շաներես**— «Անամոթ», շունը «անամոթության» խորհրդանիշն էր:
- տ. 175.— **պարզների մեծը քոնն է**— «Պատերազմական ավարը» բաժանելիս թագավորն առաջինը ընտրելու իրավունքն ուներ: Ավարը բաշխվելուց հետո մասնավոր սեփականություն էր դառնում:
- . 204—208.— Ինչպես պատեղ, այնպես էլ վիպերգության բազմաթիվ այլ դրվագներում ակնատու է, որ հոմերոսյան հերոսների արարքները ղեկավարվում են աստվածների կամքով:
- տ. 235.— **եղջերվասիրա**— Եղնիկը (եղջերուն) հին հույները համարում էին վախկոտության խորհրդանիշ:
- տ. 244.— **մական**— Աստ՝ գալիսոնի իմաստով, որպես իշխանության խորհրդանիշ: Ժողովում տրվում էր նրան, ով ձայն էր խնդրում:
- տ. 272—74.— **ձեզանից էլ քաջ մարդկանց հետ ես ապրեցի**— Հոմերոսյան ըմբռնումներով՝ հերոսների ամեն մի նոր սերունդ նախորդից թույլ էր:
- տ. 280.— **քաջերի դեմ լեռնարմակ**— նկատի ունի կենսավրոսների՝ կես-մարդ, կես-ձի: Մի անգամ հարսանիքի ժամանակ հարբած կենսավրոսները հարձակվեցին կանանց վրա. այդ պատճառով պատերազմ սկսվեց նրանց և հերոսների միջև:
- տ. 291.— **աստվածուհի մորից ծնված**— Հին Հունաստանի հերոսները համարվում էին «աստվածազարն», մինչդեռ հասարակ ժողովուրդը «երկրածին» էր:
- տ. 345.— **սուրհանդակներ Արամազդի**— Պատգամաբերները, սուրհանդակները աստվածների հառուկ հովանավորության տակ էին գտնվում և անձնոմխելի էին:
- տ. 364.— Աքիլեսը Պելևս արքայի և ծովային Թետիս աստվածուհու որդին էր:

- տ. 378.— Թեքն՝ նվիրական քաղաքը Էտիոնի— Նկատի ունի փոքրասիական Թեքնը, որտեղ իշխում էր Էտիոնը՝ Անդրոմաքեի հայրը:
- տ. 471—77.— Քրիստեսի այդ աղոթքից— Նկարագրվում է զոհաբերության ծեսը:
- տ. 482.— Կուշտ ու կուտ վայելելով ճաշակեցին— Հին հույների պատկերացմամբ՝ զոհը մատուցելիս աստվածները և զոհաբերողները միասին բնջույքի էին նստում:
- տ. 500.— Տակը որին երկար մույթեր՝ իբրև նեցուկ ու հեհարան— Դա արվում էր նաև այն նպատակով, որպեսզի նավի հատակը չփտեր:
- տ. 513—14.— Ճախ ձեռքով նրա ծունկը բռնած, աջով՝ կզակն— Խնդրանք, աղերսանք արտահայտող շարժում (ծեստ):
- տ. 563.— աչեղ Հերան— Դիցաբանության մեջ Հերան պատկերված է կովի մեծ աչքերով և սպիտակ մարմնով, գեղավարս մի կին: Ոչ միայն հին Եգիպտոսում, այլև հույների մոտ, Հռոմերույց շատ առաջ գոյություն ունեւ կենդանակերպ աստվածների պաշտամունքը: Օրինակ, Հերային պաշտում էին կովի կերպարանքով, Ջևսին՝ ցույի և այլն:

#### ԵՐԳ ԵՐԿՐՈՐԿ

- տ. 52—53.— առաջ խորհուրդ արավ... Ծերերի հետ խոհեմազարդ— Այսինքն՝ ծերակույտի, որտեղ խնդիրները բնմվում էին՝ նախքան ժողովրդական ատյանի բնութայանը ենթարկելը:
- տ. 259.— Վերաբերուից միմէն շապիկ— Վերաբերում հույների վերնագետն էր, որ հագնում էին քիտոնի (անթև շապիկի) վրայից:
- տ. 338—39.— Հրի՞ն պիտի տրվեն միթե... նվերները մաքուր գինու և աջ ձեռքերն՝ առհավաաշյա մեր միության— Հավատարմության երդում տալիս հույները աստվածներից գինի էին հեղում (կամ ձոնում), այսինքն՝ գինով ցողում էին գետիմը, և միացնում էին ձեռքերը:
- տ. 359.— զաախր ցեղ-ցեղ և առհմ առ տոհմ— Նեստորի այս խորհուրդը պատասխարում է այն իրողությունը, որ տոհմական կարգերում, հոմերոսյան ժամանակաշրջանից էլ առաջ, բանակը կազմակերպվում էր ըստ տոհմերի ու ցեղերի:
- տ. 382.— Ջննի կառքի մասերն տմեն— Հռոմերուսի դարաշրջանում հեծելազոր չկար. առաջնորդները կովում էին մարտակառքերով, որոնց գույգ ձիեր էին լծված, իսկ շարքայիցները հետևակ էին:
- տ. 397.— Ամեն գինվոր հավերժական աստվածներից մեկն ու մեկին— Ամեն մի ցեղ իր հովանավոր աստվածն ուներ:
- տ. 446.— Եզը (ցույը) հոմերոսյան դարաշրջանում սպրանքափոխանակության համար ծեքն էր:
- տ. 607.— Ձի ծովային գործերի մեջ ջանախնդիր չէին նրանք— Արկադիան էլք չուներ դեպի ծով:
- տ. 649.— խիզախ Տիպուենը— Հերակլեսի որդին:
- տ. 747.— Ստիքսի ծանր երդման ուղիներից մի վասկ է նա— Ստիքսը ստորերկրյա թագավորության գետն է, որի ջրերով երդվում էին աստվածները:
- տ. 774.— Տիփոնաը (Տիփոն) հարյուր գլխանի մի հրեջ էր, որին Հերան ծնել էր Տարտարոսից՝ ընդդեմ Ջևսի: Ջևսը նրան հաղթեց իր կայծակներով, նետեց Երկրի ընդերքը և վրան լեռներ քարձրացրեց:

## ԵՐԳ ԵՐՐՈՐԳ

- տ. 3-6.— «Թզուկները» առասպելական ցեղ էին, որոնք իբր ապրում էին առասպելական Օվկիանոսի ծայր հարավում: Նրանց հետ ամենափա պատերազմներ էին մղում դեպի հարավ չվող կռուկները:
- տ. 16.— **աստվածատիպ Պարիսը**— Նույն ինքը՝ Ալեքսանդրը, որը Ափրոդիտե աստվածուհու օգնությամբ առևանգեց Մենելալիոսի գեղեցկուհի կնոջը՝ Հեղինեին: Պարիսը ընկավ Տրոյական պատերազմում, դառնալով նաև Տրոյայի կործանման պատճառը:
- տ. 55.— **քարե շապիկ հագած էիր**— Այսինքն՝ քարկոծվելով սպանված կլիներ:
- տ. 64.— **Աստղիկ**— Հայկական դիցաբանության մեջ համարվում է սիրո և հեշտասիրության աստվածուհին և համապատասխանում է հունական Ափրոդիտեին:
- տ. 121.— Իրիսը աստվածների, հատկապես Հերայի և Զևսի, սուրհանդակն է:
- տ. 189.— **ամազոնները այրասիրտ**— Ամազոնները միաստիճք, պատերազմամոլ կանայք էին, որոնք, առասպելի համաձայն, ոչնչացնում էին իրենց արու զավակներին, իսկ դուստրերին պահում էին և դարձնում ռազմիկներ:
- տ. 309—11.— Անտենորը Պրիամոսի ընկերն է, ոչ թե որդին:

## ԵՐԳ ԶՈՐՐՈՐԳ

- տ. 43—48.— Ոլիմպոսի աստվածներից յուրաքանչյուրն ուներ իր սիրելի քաղաքը (կամ քաղաքները), որը և նա հովանավորում էր: Իլիոնը Զևսի սիրելի քաղաքն էր:
- տ. 69.— **դժեն դաշինքն**— Դաշինքը դրժելով, տրոյացիները դրանով իսկ դատապարտում էին Տրոյան անխուսափելի կործանման:
- տ. 215.— Քիրոնը կենտավրոս է, համարվում է դիցաբանական շատ հերոսների, այդ թվում է նաև Աքիլլեսի, ուսուցիչը, սովորեցնելով նրանց քշկություն, երաժշտություն, մարմնամարզություն, որսորդական արվեստ և այլն:
- տ. 256.— **Նոսոնարանում խառնում էր** ու ընաիր գինին— Հույները միշտ ջրով քացած գինի էին խմում:
- տ. 292, 296.— Հեծելագոր, պրուծի պատեղ կոչվում են այն ռազմիկները, որոնք պատերազմում են ձիեր լծած մարտակառքերով (Տե՛ս Գլ. 2, տ. 981-ի ծան.-ը):
- տ. 349.— Տելեմաքը Ռիսևսի և Պենելոպեի որդին է:
- տ. 333.— Կապնեացիները թերեացիներն են:
- տ. 436.— Արեսը, ըստ դիցաբանության, պատերազմի աստվածն է, որ տրոյական պատերազմում հովանավորում է տրոյացիներին և պարտվում Աթենասից:

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ

- տ. 5.— **աշխանային աստղի նման**— Նկատի ունի Սիրիուսը:
- տ. 49.— **կոզոպտեցին**— Այսինքն՝ հանեցին սպանվածի սպառազենքը, որը հաղթողի ավարի ամենապատվավոր մասն էր:
- տ. 62—63.— Ալեքսանդրի **նավերն...** նախապատճառ տրոյացոց աղետների — Այսինքն այն նավերը, որոնցով Պարիսը մեկնեց Սպարտա՝ Հեղինեին առևանգելու:
- տ. 245.— Էնրասը Ափրոդիտեի (Աստղիկ) որդին է, Տրոյական պատերազմի հերոսներից:
- տ. 263.— **Տրոյկ (Տրոս)**— Պրիամոսի նախահայրը, Տրոյայի հիմնադիրը, որի Գանիմեդես գեղեցկադեմ որդուն Զևսը տարավ Ոլիմպոս և աստվածների մատույն դարձրեց:

- Դրա փոխարեն Ջևաղ Տրոսին նվիրեց անմահ ձիերով լծված մի մարտակառք:
- տ. 331.— Եճիով— Պատերազմի և ավերածության աստվածուհի:
- տ. 368.— Դիոնեն՝ Ափրոդիտեի մայրը, դիցաբանական հետագա պուժեմերում նույնացվում է Հերայի հետ:
- տ. 382.— Համաձայն մի առասպելի, Ռոտուն ու Եփիալտեը՝ Պոսեյդոնի թոռները (կամ որդիները), որոնք աչքի էին ընկնում իրենց անսովոր ուժով, Արեսին շոթայակապ են անում և 18 ամիս քանտարկում. այդ ընթացքում երկրի վրա երանելի խաղաղություն է տիրում: Արեսին ազատում է Հերմեսը:
- տ. 389.— Ամփիտրիոնի հզոր որդին— Հատ դիցաբանության, Ջևաղ Ամփիտրիոնի կերպարանքով կենակցում է Ալքմենեի հետ, որը զույգ զավակներ է ունենում. դրանցից ալիսգին՝ Ջևաի որդուն, Ալկիդոս են կոչում: Հետագայում գուշակունի Պիլասն նրան Հերակլես անվանեց: Կրտսերը, որ Ամփիտրիոնի որդին էր, անվանվեց Իփիկլես: Այստեղ նկատի ունի Հերակլեսին:
- տ. 397.— Պեոնն այժմամ որեց վերջին պեղանի— Պեոնը քժչության աստվածն է:
- տ. 418.— Կիպրոսին Ափրոդիտեն է (Աստղիկ), որը, ըստ դիցաբանության, ծնվել է ծովի փրփուրներից և ջամաք ելել Կիպրոս կղզու վրա:
- տ. 515.— Արծաթադեղը Ապոլլոնն է:
- տ. 630—32.— Սարպեդոնը՝ լիկիացոց արքան, Ջևաի որդին էր, իսկ Տլեպոլեմը՝ Հերակլեսի որդին էր, ուրեմն՝ Ջևաի թոռը:
- տ. 640—44.— Տրոյացի թագավորը՝ Լավմեդոնը, որ Պրիամոսի հայրն է, հրաժարվեց Տրոյացի շուրջ պարիսպներ կառուցելու համար վճարել Պոսեյդոնին և Ապոլլոնին: Զայրացած Պոսեյդոնը Տրոյացի վրա մի հրեշ ուղարկեց, որին պետք է զոհաբերվեր Լավմեդոնի դուստրը՝ Հեսիոնեն: Հերակլեսը հանձն առավ փրկել աղջկան, պայմանով, որ Լավմեդոնն իրեն կտա Տրոսի նշանավոր ձիերը (տե՛ս տ. 263-ի ծան.-ը): Սակայն երբ նա սպանեց հրեշին և ազատեց աղջկան, Լավմեդոնը նրան դատարկաձեռն վռնդեց: Մի քանի տարի անց Հերակլեսը վերադարձավ, գրավեց Տրոյան, սպանեց Լավմեդոնին և նրա որդիներին, բացի կրտսեր որդուց, որին փրկեց Հեսիոնեն: Այդ ժամանակվանից ի վեր Լավմեդոնի կրտսեր որդին կոչվեց Պրիամոս, որ նշանակում է «զնված»:
- տ. 693.— Աքամազոյի չքնաղ կաղնու— Կաղնին Ջևաի սրբազան ծառն էր:
- տ. 847.— Գժոխքի կորդակն աներևույթ— Կան Հադեսի սաղախարտ, որ նշանակում է «անտեսանելի գլխարկ» (Հ տ դ ե ս հենց նշանակում է անտեսանելի):
- տ. 901.— Ուրանանները, այսինքն տիտանները, Ռուսն-երկնքի և Գեա-երկրի զավակներն էին, որոնք ապստամբեցին Ջևաի դեմ՝ ի պաշտպանություն իրենց կյոթը՝ Բրոնոսի: Ջևաղ նրանց հաղթեց և փակեց Տարտարոսում՝ երկրի մութ խորքերում:

## ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

- տ. 150 և 6ևառ.— Բեյլերոփոնտի՝ Գլավքոսի որդու, Սիզիփոսի թոռան առասպելն իր էությանը հիշեցնում է աստվածաշնչյան Հովսեփի պատմությունը (Ճճճ., գլ. 1Թ):
- տ. 165.— Պնակիաի վրա ինչ-որ գծեր դրոշմեց նա մահաոթիք— Սա Հոմերոսի վիպկազության մեջ եզակի հիշատակությունն է տվյալ դարաշրջանում գրության ելյանակի վերաբերյալ: Անտիկ դարաշրջանում հույներն ու հռոմեացիները գրագրության համար օգտագործում էին հատուկ ծալովի, մոմածածկ գրատախտակներ (պնակիտ), որի վրա սրածայր գրչով տառեր էին փորագրում:
- տ. 196.— Բեյլերոփոնտը երբ քոթոր ասավածների աչքիցն եղավ— Բեյլերոփոնտը, թևա-

վոր Պեգասին հեծած, հաղթեց եռադեն հրեշ Քիմերին: Այնուհետև նա ուզեց Պեգասի օգնությամբ թռչել Ուլիմպոս, բայց Պեգասը նրան վայր նետեց, և Բեյլերոփոնը, ասելի դառնալով աստվածներին, երկար ժամանակ թափառում էր երկրի վրա՝ կուրացած ու կաշալով:

- ա. 225—20.— Օտարազգի մեկին հյուրընկալելով, հյուրասիրելով և նվերներ տալով, հյուրընկալն ինքը դատում էր մի տեսակ իր հյուրի «հյուրը» և կարող էր համոզված լինել, որ ինքն էլ նույն ընդունելությանը կարժանանա նրա հպարեհիքում, նրա տանը: Այսպես կոչված «հյուրույթի» (прокормя) այս երևույթը շատ կարևոր նշանակություն ուներ հնում, երբ օտարերկրացիները որևէ իրական ապահովորությունից զուրկ էին: «Հյուրույթ»-ի հարաբերությունները անցնում էին ժառանգարար, Դիոմեդեսին և Գլավկոսին դրանք նույնպես անցել էին իրենց նախնիներից:
- տ. 395.— Հեկատորը իր սիրուն մանկան Սկամանդրիկ էր անվանում— Հեկատորը որդուն այդպես է կոչում ի պատիվ Սկամանդրա գետի աստծո, իսկ տրոյացիները նրան, ի պատիվ հոր, կոչում են Աստիանաքոս, որ թարգմանաբար նշանակում է «քաղաքի առաջնորդ», «Ուստանիշխան»:

### ԵՐԳ ՅՈՒԵՐՈՐԿ

- տ. 63.— երդումները մեր չընդունեց— Հեկատրոն այստեղ ակնարկում է Երրորդ երգում հիշատակված դաշինքի դրժումը:
- տ. 135—38.— Եփրունի Նեստորի այս պատմությունը հիշեցնում է աստվածաշնչյան Դավթի և Գողիաթի մասին պատմվածքը (Ա. Թագ., գլ. ԺԷ):
- տ. 178.— մեծամարտառ թագավորին Միկենացոց— Ազամեմնոնն է:
- տ. 274.— Քարոզները— Այսինքն՝ պատվիրակները, բանբերները, մունետիկները:
- տ. 426.— Թշնամու ներկայությամբ արգելված էր բարձրաձայն լացուկոծելը (ջայլակոծ), ինչպես և՛ շէր կարելի բարձրաձայն աղոթել, այլ «լուիկ-մնջիկ», որպեսզի թշնամին որևէ կերպ չկարողանար շեղել աղոթքի գործողությունը (տե՛ս տ. 194):

### ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԿ

- տ. 13.— Տարտարոսը գտնվում էր երկրի խոր ընդերքում և համարվում էր Քրոնոսի և տիտանների ստորերկրյա բանտը: Նրա դարպասները պղնձածույլ փականներով էին փակվում: Տարտարոսը Հադեսի թագավորությունից նույնքան հեռու էր, որքան երկիրը երկնքից:
- տ. 39.— Կառափնածին— Աստվածուհի Աթենա-Պալլասն է՝ Ջևաի և Մետիսի դուստրը: Մետիսը շատ խելացի կին էր, և Ջևաը, իմանալով, որ նա հղի է, վախեցավ, թե չիմի՞ հանկարծ իրենից ավելի խելացի ու քաջ գավալ ծնվի ու տիրի իր գահին, դրա համար էլ կույ ավեց Մետիսին: Սակայն ծննդաբերության ժամանակը մտենալուն հետ Ջևաի գլխացավերն ուժեղացան: Հեփեստոսը՝ Ջևաի որդին, հոր հրամանով ճեղքեց նրա գլուխը, և հոր գանգից (կառափից) դուրս եկավ Աթենաը:
- տ. 249.— արծիվ ուղարկեց նա՝ գերհզորը թռչուններից— Հնում թռչնագուշակությունը (գուշակությունն ըստ թռչունների) շատ ասարածված էր: Արծիվը համարվում էր Ջևաի սրբազան թռչունը, այդ պատճառով անվանվում է «գերհզորը թռչուններից»: Արծիվի հայտնվելը նշան էր Ազամեմնոնին, որ Ջևաը լսել է նրա աղոթքը:

- դռ. 291.— Ինձնից հետո նախ և առաջ քո ձեռքի մեջ պիտի դնեմ... Գվեր— Ազատենանքը, որպես գերագույն առաջնորդ, իրավունք ունի մինչև ավարի բաշխելը (վիճակահանությանը)՝ ընտրելու նրա ցանկացած մասը (տե՛ս Երգ Ա, տ. 175-ի ծան.-ը):
- տ. 362.— Իր որդուն... ես փրկեցի— Նկատի ունի Հերակլեսին, որն իր բաշագործությունները կատարում էր Եվրիսթեսի հանձնարարությամբ:
- տ. 368.— դժոխապետ ասածու շունը ահավոր— Հերակլեսը, Եվրիսթեսի պահանջով, Հանեսի թագավորությունից քերեց եռագլուխ Յերբեր (Կերբեր) շանը:
- դռ. 523.— քարձքադիսակ աշատարակներն ասավածակներտ— Նկատի ունի Իլիոնի աշտարակավոր պարիսպները, որ կառուցել էին Պոսեյդոնն ու Ապոլլոնը:

### ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԳ

- տ. 49.— աստված է մեզ թերև յայտեղ— Ալսինքն՝ աստվածների քարենախատ ճշանկերով առաջնորդելով են եկել, համոզված լինելով, որ պիտի գրավեն Տրոյան:
- տ. 165.— Սանդրապետ— Ստորերկրյա թագավորության՝ Սանդրամետի իշխանը՝ Հադեսը:
- տ. 175.— Փեմիքսը Աքիլլեոսի դաստիարակն է, որը նրան սովորեցրել է պերճախոսություն և ուզմանկան գործ:
- տ. 200.— Էակիդյան թռու— Աքիլլեսը Էակոսի թռու էր: Պատրոկլեսն սպասում էր, որ Աքիլլեսն ավարտի երգի քառատողը, որպեսզի ինքը շարունակի:
- տ. 407.— Հավասարվեր ձեռքովեստով... Աթենասին— Աթենասը ձեռագործող կանանց հովանավորուհին էր և ինքն էլ հմուտ ձեռագործ անող էր:
- տ. 469.— Էրիննա (Էրինի)— Վրիժառության անողորմ ուժեր, որոնք հետապնդում են մեղավորներին՝ ձեռքներին խարազաններ և օձեր:
- տ. 470.— չնասի իր ծնկներին ինձնից ծնված ոչ մի գավակ— Փեմիքսի հայրը աստվածներին խնդրում է, որ իր որդին անգավակ մնա: Սովորաբար, պապը իր ծնկներին էր նստեցնում նորածին թոռանը, դրանով իսկ ընդունելով, որ թոռն իր ցեղից է:
- տ. 579.— Վերքոցն նա իր լուցալիճն ընկեմ գուշակ Ապոլլոնի— Երբ Մարպետսան Իդեսի հարսնացուն էր, նրան սիրահարվեց Ապոլոնը և փորձեց առևանգել: Իդեսը կովի քունկեց Ապոլլոնի հետ, քայք Ջևսը միջամտեց և թույլ տվեց Մարպետսային, որ ինքն ընտրություն կատարի երկուսի միջև: Մարպետսան նախընտրեց մահկանացու ամուսնուն:
- տ. 589—90.— Արտեմիսի արձակած կինը որսալու համար հավաքվում են Հունաստանի շատ հերոսներ, այդ թվում նաև Մելեագրոսի մորեղբայրը՝ Պլեքսիպոսը: Մելեագրոսն ընդհարվում է մորեղբոր հետ ու սպանում նրան և նրա եղբորը՝ արծաճաճալով մոր անեծքին, որն ի վերջո կատարվում է. Մելեագրոսը, կոտրետներին հեռացնելով հայրենի քաղաքից, զոհվում է:

### ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԳ

- տ. 6.— գեղեցկավարս Հերայի այրն— Ջևսը:
- տ. 110.— Այաքսին արագափուշ— Ոլիկսի որդին: Ի պատիվ Պատրոկլեսի հուղարկավորության կազմակերպված մրցումներում աչքի ընկավ իր արագավազությամբ:
- տ. 112.— Բաջ Այաքսին ասավածատիպ— Տելամոնի որդին, որ մեծամարտեց Հեկտորի հետ:

- տ. 174—75.— Այսօր ռուս անկու բերնի վրա է... արտյեցոց փրկությունը— Հին հույներն ասացվածք ունեն. «Ապագան կախված է ճոճվող սրի ծայրից»:
- տ. 198.— Նեաստրի շքեղ որդին— Անտիոքոսը, Աքիլլեսի ընկերը. սպանվեց տրոյացիների դաշնակից Մեմնոնից:
- տ. 263.— Գիշերն վաղուց կես է եղել— Գիշերը այն ժամանակամիջոցն էր, որ տևում էր արևմուտքի մինչև արևածագ: Այն բաժանվում էր երեք մասի, և նրա ժամանակը որոշում էին՝ առաջնորդվելով աստղերով:
- տ. 274.— Աթենոսը մի ծովային ճայ ուղարկեց նրանց՝ նշան— Աշակողմում հայտնված ճայը հաջողության նշան էր:

### ԵՐԳ ՏԱՄՆԵԿԵՐՈՐԳ

- տ. 1.— Տիթոնը՝ Լատմեդեի որդին, այնքան գեղեցիկ էր, որ նրան սիրահարվեց Արշալույսը և առևանգեց:
- տ. 22—23.— Այստեղ Ակարագրվող սպասագեմի պողպատը, պղինձը, անագը, ինչպես ցույց տվեցին պեղումները, հոմերոսյան դարաշրջանում արտադրվում էին Կիպրոս կղզում:
- տ. 58.— Աստղի նման— Նկատի ունի Սիրիուսը. նրա հայտնվելը հորիզոնում (որ 800—900 տարի մ. թ. ա. տեղի էր ունենում ամառվա կեսին) ազդարարում էր տարվա ամենաշոգ շրջանի, նաև՝ երաշտների ու դողերոցքի սկիզբը:
- տ. 225.— Իփիդամասը, լսելով աքայացիների արշավի մասին Տրոյայի վրա, շտապում է այնտեղ, թեև նորապսակ էր, և հին տվորության համաձայն, միաժամանակ պետք է խուսափեր պատերազմների ու արշավանքների մասնակցելուց:
- տ. 415.— Ռեթրոն իրենց մեջ ամփոփած— Ինաստն այն է, որ տրոյացիների ջոկալը Ոդիսևսին շրջապատելով, դրանով իսկ դարձավ իր կործանման պատճառը:
- տ. 623.— Նեյխածինը Նեստորն է:
- տ. 643.— Գիմի պրամնյան— Պրամնա լեռան այգիների խաղողից պատրաստված թունդ կարմիր գինի:
- տ. 692.— Հերակլեսը... չարչարեց մեզ— Հերակլեսը, համաձայն առասպելի, մաքրեց Ալգիոսի սխտոները, բայց խոստացված պարգևը չստացավ, այդ պատճառով պատերազմեց Ալգիոսի և նրա դաշնակիցների, այդ թվում նաև Նեյխի դեմ, որի քոյր որդիներին սպանեց, բացի Նեստորից:
- տ. 838.— Պողալիրը Մաքավոնի եղբայրն է, որդին Ասկլեպիոսի, որը համարվում էր քժըշկության աստվածը:

### ԵՐԳ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

- տ. 29.— Երկրատառան արքան— Պոսելյոնը: Երեքարձենը եռաժանին է, որը, ըստ դիցաբանության, միշտ Պոսելյոնի ձեռքին էր և որով նա ամասարտու փոթորիկներ էր առաջ բերում:
- տ. 245—46.— Կուզեն թող աջ... կուզեն թող ձախ թևեն— Թուրազուշակության ժամանակ աջից թևելը համարվում էր քարենկաստ նշան, ձախիցը՝ անքարենկաստ (տե՛ս գլ. Ժ. տ. 274-ի ծան-ը):
- տ. 429.— Հին Հունաստանում գոյություն ունեւ համայնքային նողատիրություն: Հողամասերի միջև իբրև սահմանակիչ դրված քարերը հաճախ տեղաշարժվում էին և պատճառ դառնում հողատերերի միջև ծագող վեճերի ու կոիվների:



## ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ

- տ. 44.— Կալքսան այն նշանավոր գուշակն է, որ վիպերգության Առաջին երգում արքայանց քանակի կոտորածն ու համաճարակը բացատրեց Քրիստես քուրմին հասցրած վիրավորանքով և որը գուշակել էր, որ Տրոյական պատերազմը կտևի 10 տարի:
- տ. 315.— **Դեմտրի քերքն է ուտում**— Դեմետրան երկրագործության և հողի արգավանդության աստվածուհին է, Քրոնոսի և Բեայի դուստրը:
- տ. 343.— **Թետիսին ու քաջասիրա նրա որդուն պատվել միայն**— Ջևալը, ընդառաջելով Թետիս աստվածուհու աղերսանքին, տրոյացիներին է աստարտու պատերազմում, որպեսզի արքայանք զգան Թետիսի որդու՝ Աքիլլեսի կարիքը (տե՛ս գլ. Ա):
- տ. 457.— **ընդդեմ Պրիամոսի սրտում նա ոխ ուներ պահած**— Լևիսաը Տրոյացի թագավորական կրտսեր ցեղի ներկայացուցիչն էր ու զրկված էր թագավորական իշխանությունից, ուստի և լարված էր Պրիամոսի դեմ: Տրոյացի կործանումից հետո Լևիսասի փրկության վերաբերյալ առասպելի որոշ տարբերակներ պահպանում են թշնամու հետ նրա հարաբերությունների նաև ուղղակի վկայություններ:
- տ. 461.— **քո քեռայրին... օգնության հասնել**— Ալկաթոսը Լևիսասի քրոջ՝ Հիպպոդամի անունահին էր և ապրում էր աներոջ տանը (Անքիսեսի), այնպես, ինչպես Պրիամոսի փեսաներն ապրում էին նրա տանը:
- տ. 753.— **Նուալ է մի ռազմիկ ահադո**— Այսիքն՝ Աքիլլեսը, որը կարող էր վերադառնալ մարտադաշտ:

## ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԳ

- տ. 155.— **Հերան ճանաչեց իբ եղբորն ու աագերը**— Հերան Ջևի կինն է, միաժամանակ նաև՝ բույրը, ուստի Ջևի եղբայր Պոսեյդոնը միաժամանակ Հերայի և՛ եղբայրն է, և՛ տագրը:
- տ. 173.— **Ամբրոսը Ոլիմպիական աստվածների ամենահական կերակուրն է, նշանակում է նաև անուշահոտ բալասան, օծանելիք:**
- տ. 203.— **Օվկիանին և Տեթիսին այցելության**— Օվկիանոսն ու նրա կինը՝ բույր գետերի ու ջրերի մայր Տեթիսը (կամ՝ Տեթյուս) Ռեայի՝ Ջևի և Հերայի մոր, ծնողներն էին: Երբ կռիվ ծագեց Ջևի, նրա հայր Քրոնոսի և տիտանների միջև, Օվկիանոսն ու Տեթիսը Հերային վերցրին իրենց մոտ ու խնամեցին նրան:
- տ. 264.— **Գիշերը դիցաբանության մեջ նկարագրվում է սևաթույր ձիերը լճած երկանվով երկնքում սահելիս: Գիշերը համարվում է Մահվան ու Քնի աստվածուհի մայրը:**
- տ. 298.— **Բվինական ու կասկանը նույն թոչնի՝ բուռի, տարբեր տեսակներն են:**
- տ. 329.— **Փինիքսի դուստրը մաճկամարդ**— Փյունիկան սրբա Փինիքսի (Ֆենիքս) դուստրը՝ Եվրոպան: Ջևալը, ցլի կերպարանք ընդունելով, ասանգեց նրան, երբ նա ծովափին ծաղիկ էր հավաքում, և տարավ կրետոս:
- տ. 401—5.— **Երբ ծովերի աստված Պոսեյդոնը կռվի էր բռնվում, այն անպայման ուղեկցվում էր ծովի ալեկոծությանը և հուզումով:**
- տ. 531.— **Ատրիդեսը Մենելայի մահը, վիրավորված Ազամեսնոնն այդ ժամանակ արդեն չէր մասնակցում կռիվին:**

## ԵՐԳ ՏԱՍՆՆԻՆԳԵՐՈՐԳ

- ա. 18—31.— Այստեղ, ինչպես և նախորդ գլխի տ. 252—264-ում հիշատակվում են Հերակլեսի ատասպեի այն դրվագները, որտեղ Հերան խարդավեց Հերակլեսին՝ օգնական ունենաճալով դարձյալ նույն Գունը:
- տ. 73.— Աթենասի խորհրդով առնեն Իլիոնն ամրապարիսպ— Ակնարկվում է այն ատասպելը, համաձայն որի, երբ աքայեցիք չեն կարողանում ուժով գրավել Տրոյան, Աթենաս-Պալլասի խորհրդով դիմում են խորամանկության. սարքում են հսկայական փայտե ձի, որի օգնությամբ աքայեցի լավագույն ռազմիկները մտնում են քաղաք, դարպասները բացում իրենց զորքերի առաջ և կոտորած սարքում Տրոյայում: «Տրոյական ձիու» դրվագը մեզ հայտնի է «Ողիսականից», ինչպես նաև հոմերոսի քանաստեղծ Վիրգիլիոսի «Էնեական» պոեմից:
- տ. 90.— Թեմիլը օրենքի, արդարադատության աստվածուհին է:
- տ. 122.— Սարուսիս ու Եղեռնը Արես աստծո զավակներն են համարվում:
- տ. 233.— Զովանի շուրջ եղողները (ասավածները) դժոխքի մեջ— Նկատի ունի տիտաններին (տե՛ս Երգ Ե, տ. 901-ի ծանր):
- տ. 671—72.— Անցան ճավերն առաջնաշարք— Սրանք այն ճավերն էին, որոնք առաջինն էին ափ դուրս բերվել, այդ իսկ պատճառով առաջին՝ ծովից անենահեռուն գտնվող շարքն էին կազմում:
- տ. 685.— մեծ մի լույս ծագեց նրանց— Պալծառ լույսը, որ Աթենաս աստվածուհին ուղարկում է ի պատասխան ծերունի Նեստորի քաջազորանքի, բարեհաջող ճշան էր:
- տ. 747.— դեպի տախասկ մի յոթոտնյա— «Իլիականի» ռուսերեն թարգմանչի՝ Ն. Գնեդիչի կարծիքով, այստեղ Հոմերոսը նկատի ունի ոչ թե թիավարների նստարանը, այլ ճավատանրուղը: Ի հաստատումն իր կարծիքի, նա վկայակոչում է հին հունական ճավատորմի բազմաթիվ պատկերումները:

## ԵՐԳ ՏԱՍՆՎԵՅԵՐՈՐԳ

- տ. 18.— կորչում են սաորության համար իրենց— Աքիլլեսն իրեն հասցված վիրավորանքի համար մեղադրում էր ոչ միայն Ագամեմնոնին, այլև ողջ աքայական զորքը:
- տ. 91—103.— Այս հատվածը հետաքրքրական է «Պատրոկլյան դրվագը» հասկանալու համար: Աքիլլեսը, տեսնելով աքայական զորքերի ծանր վիճակը, թույլ է տալիս Պատրոկլեսին իր զորքով օգնության հասնել նրանց՝ վանել տրոյացիներին արգիսկան ճավերից, սակայն արգելում է նրան հաղթությամբ հասնել մինչև Իլիոն, որպեսզի ինքը չգրկվի իր վիրավորանքների համար բավարարություն ստանալու հնարավորությունից:
- տ. 180.— Արամազդի գետից բխած— Ըստ Հոմերոսի, բոլոր գետերը բխում են Զևսից, քանի որ սնվում են նրա կողմից առաքված անձրևներով:
- տ. 187.— Հերմեսն արգոսասպան— Նախդի և հոտի պահապան աստված Հերմեսը «արգոսասպան» մականունը ստացել է այն քանից հետո, երբ սպանեց հարյուրակնյա հսկա Արգոսին:
- տ. 234.— ձծումբով մաքուր սրբեց— Հին հույները ձծմբալին գոլորշին համարում էին կրոնական մաքրագործման միջոց:
- տ. 239 և հետո.— Դողոնը Զևսի գուշակալայրն էր, սուրբ տաճար, ուր գտնվում էր Զևսի գուշակը, որը կաղնու ծառի ստափյունից գուշակություններ էր անում: Ընդունված ծիսակարգի համաձայն, դողոնյան քուրմերը քնում էին «գետնախշտի», երբեք չէին լվացվում և չէին լվանում ոտքերը:

- տ. 445—48.**— սիրաս երկվտոմ է ասարկուսած— Ջևար՝ աստվածներից վեհագույնը, որ իշխում է թե՛ մարդկանց, թե՛ աստվածներին, և տնօրհնուհի Երանց ճակատագիրը, երբեմն, սակայն, հանդես է գալիս որպես Մոյրային՝ ճակատագրին ենթակա արարած, ինչպես այս հատվածում՝ իր որդի Սարպեղոնի և Պատրկլեսի կույի դժբախտություն:
- տ. 627.**— դու քաջակաքավ ես իսկապես— Էհիասը Մերիոնեսին ձեռնացնելու նպատակով, Երան քաջակաքավ (լավ կաքավոր, պարող) է անվանում, ակնարկելով Երա կրկնակամ ծագումը: Կրետե կղզու բնակիչները հռչակված էին իրենց պարարվեստով:

**ԵՐԳ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԳ**

- տ. 34.**— Մինչեւ անգամ երեխան էլ կարող է այդ լավ հասկանալ— Հին հունական առածն ասում է. «Շոր դժբախտություն է պատահում, անգամ հիմարն է այդ հասկանում»:
- տ. 54.**— Ծնորհների վարսերի պես— Ալսինքն՝ Քարիտների՝ ճազկիտության ու զվարճության երեք գեղունի աստվածների մագերի պես:
- տ. 153—54.**— Երբ լքել ես Սարպեղոնին— Ըստ երևույթին, Գլավկոսը չգիտեր, որ աստվածները Սարպեղոնի դին տեղափոխել են Լիկիա, ուստի և առաջարկում էր դիակների փոխանակություն, որի այս հիշատակումը եզակին է հոմերոսյան վիպերգության մեջ:
- տ. 335.**— տեսել եմ ես ուրիշ աեղ, թեև թվով ձեզնից էլ քիչ —Ապոլլոնը ակնարկում է Հերակլեսին՝ իր ուղեկիցներով, որոնք Տրոյան գրավեցին ավելի փոքրաթիվ զորքով, քան աքայական զորքն էր:
- տ. 519.**— Բայց ամեն ինչ աստվածների գոգի մեջ է պահված միայն— Սա հին հունական առած է, որ նշանակում է՝ գործը տակավին անհայտ է:

**ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԳ**

- տ. 39.**— դասրիկները Ներեիդան— Ներեիդները՝ ծովային հավերժահարսերը, որոնցից մեկն էր նաև Աքիլլեսի մայրը՝ Թետիսը, ապրում էին ծովի խորքերում, քարեհան էին մարդկանց նկատմամբ, օգնում էին նավարկելիքներին: Նրանց թիվը հոմերոսյան էպոսում 34 է, ըստ ուրիշ առասպելների՝ 100 և ավելի, բայց հաճախ՝ 50:
- տ. 309.**— Խարություն չի դնում Արեսն— Ալսինքն՝ մարտական բախտը միշտ մեկին չի ուղեկցում. այսօր սրան, վաղը՝ մեկ ուրիշին:
- տ. 361.**— գիսակազեղ աքայեցիք քեզանից են ծնված միշտ որ— Այստեղ Հերան հանդես է գալիս որպես աքայեցիների տոհմական աստվածուհի:
- տ. 374.**— կառուցեց կաղոտահին ինքը անձամբ— Հեփեստոսը՝ Ջևսի և Հերայի որդին, կրակի և դարբնության աստվածը, ի ծնե թուլակազմ էր ու կաղիկ:
- տ. 397—409.**— փրկեց ինձ ցավերից— Հերան (տարբերակ՝ Ջևար), տեսնելով նորածին կաղիկին, խիստ զայրացավ և Երան Ոլիմպոսից ցած նետեց ծովը: Մովսին փերիները՝ Թետիսն ու Եվրիմոսեն, գթացին մանկանը և խնամեցին Երան:
- տ. 419—20.**— ոսկեձող աղախիճներն աղջիկների պես շնչավոր— Հեփեստոսին քայլելիս օգնում էին ոսկեկերտ աղախիճներ, որոնք Երա իսկ ձեռքով էին ստեղծված:
- տ. 471.**— Որոնց (փուքսերին)... հրամայեց, որ աշխատեն— Հեփեստոսի փուքսերը, ինչպես և Երա սարքած աղախիճները, աստծո խոսքին ենթարկվելով՝ ինքնուրույն են գործում:

- տ. 488—90.— Օրինը առասպելական որսորդ էր, որին աստվածները, նրա նախից հետո, համաստեղություն դարձրին: Երբ Օրինը ծագում է, Մեծ Արջը բարձրանում է հորիզոնի վրա, և ստացվում է պնպես, կարծես երկնքում արջը փախչում է որսորդից:
- տ. 491.— միայն նա է անհաղորդ լուսանքներին մեծ Յվկիաճի— Մեծ Արջի համաստեղությունը հորիզոնում մայր չի մտնում:
- տ. 528.— գիմվորներն առհասարակ նրանցից ցած էին մնում— Հռենսկան արվեստի մնուշները վկայում են, որ աստվածները մարդկանցից ավելի բարձրահասակ են պատկերվում:
- 551—52.— Հողը թեպետև ոսկեզույն... սևանում էր ակունկրով— Հեփեստոսին հաջողվում էր անգամ ոսկու վրա արտացոլել հերկած հողի բնական մուգ գույնը, ըստ երեվոյթի, արդեն հոմերոսյան ժամանակաշրջանում հույները կարողանում էին արծնապատել ոսկին:

### ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԳ

- տ. 125.— Եվրիսթեսը՝ Պերսեոսյան Սթենելի որդին— Պերսեսը՝ Ջևախ և Դանապալի որդին, երեք զավակ ունեցավ՝ Սթենելը, Ալկեսը և Էլեկտրիոնը: Ալկեսը ծնեց Ամփիտրիոնին, Էլեկտրիոնը՝ Ալկմեոնին: Ամփիտրիոնն ու Ալկմեոնն ամուսնացան: Բայց Ալկմեոնն Ջևախից պետք է երեխա ունենար՝ Հերակլեսին: Ցանկանալով որդուն իշխանություն տալ, Ջեսը հանդիսավոր կերպով երդվեց, որ նա, ով առաջինը կծնվի Պերսեսի ցեղում, նրան ինքը իշխանություն կտա: Սակայն Հերան արագացրեց Սթենելոսի որդու՝ Եվրիսթեսի ծնունդը, որը և ստացավ իշխանություն: Սրան ծանուցելիս Հերակլեսը կատարեց իր զջանավոր 12 սխրագործությունները:
- տ. 334.— Նեոպտոլեմը Աքիլլեսի և Գեիդամեի որդին էր, որ ծնվել էր Սկիրոս կղզում. այնտեղից նրան բերում են Տրոյա, ըստի որ, ըստ գուշակության, առանց Նեոպտոլեմի մասնակցության Տրոյական պատերազմը չէր ավարտվի:
- տ. 401.— Սամեոնը լծափոկն է, լծի կապը:
- տ. 421.— վարսագեղ Լեաուլնի որդին՝ առավածն էր մեծագոր— Ալսիոնը՝ Ապոլլոնը, որը Ջևախ կնոջ՝ Գիշերվա սևազգեստ աստվածուհի Լետոյի որդին էր:
- տ. 427.— պարտվես պիտի մի աստծուց ու մի մարդուց մահկանացու— Աքիլլեսը պետք է սպանվեր Պարիսի արձակած ճետով, որին ուղղություն պիտի տար Ապոլլոնը:

### ԵՐԳ ՔՍԱՆՆԵՐՈՐԳ

- տ. 106.— ամբողջովին նա պղնձից լինի ձուլված— Ըստ երկույթի, Էնիասը ակնարկում է Աքիլլեսի անխոցելիությունը:
- տ. 131.— Բախտը մանեց նրա համար— Ըստ հունական դիցաբանության, ճակատագրի երեք աստվածուհիներից Կլոտոն մանում էր մարդու կյանքի թելը, Լաքսիսը այդ թելն անցկացնում էր մարդու կյանքի խորությունը, իսկ Մորտյան կտրում էր թելը: Ըստ հայկական դիցաբանության, Բախտի աստվածուհին ձեռքով արագ պտտում է աշխարհի անիվը:
- տ. 152.— Իբրև պաշտպան և ապավեն ծովի հսկա հրեշի դեմ— Նկատի ունի այն ծովային հրեշին, որ Պոսեյդոնն ու Ապոլլոնը ուղարկեցին տրոյական Լավմեդոն արքային ի պատիժ և որից երկիրն ազատեց Հերակլեսը (տես Երգ Ե, տ. 640-ի ծանր):
- տ. 192.— Կարծես թե քնզ մի այլ անգամ ես փախցրի— Էնիասը գծոված էր իր ազգական Պրիամոսի հետ, դրա համար էլ սկզբում չէր մասնակցում Տրոյական պատերազմին:

մին: Երբ Աքիլլեսը հարձակվեց նրա նախիրների վրա, Էնհասն անցավ տրոյացի-  
ների կողմը՝ ընդդեմ աքալանց:

- տ. 237—39.— **Գանիսեդն...** որին աստվածները տարան երկինք, որ մատուպկ լինի Ջե-  
սին— Տե՛ս Երգ Ե, տ. 263-ի ծանուց:
- տ. 294 **և այլոք**— Պունդոն աստծու «Երկրադորդ», «Գետնասառան», «Երկրատատպան»  
և հման Էպիտետները ենթադրել են տալիս, որ նա նախապես ոչ թե ծովի, այլ  
Երկրի աստվածն էր: Ըստ երևույթին, Պունդոնն սկզբում, մինչև Ռիմպոպան դի-  
ցարանի կազմավորվելը, հողի բերրությունն ապահովող ընդերկրյա խոնավության  
(ջրերի) աստվածությունն է եղել (հնում երկրաշարժերը բացատրում էին ստոր-  
երկրյա ջրերի շարժմամբ):
- տ. 310—11.— **Իշխե պիսի տրոյանց վրա Էնիասը**— Ավանդության համաձայն, Էնիասը  
տրոյացի փոխաստականների հետ միասին նավեց դեպի Իտալիա և այնտեղ հոր  
թագավորություն հիմնեց: Հոմերոսի կարծիքով իրենց քաղաքը հիմնել են  
Էնիասի սերունդները, ուստի և նրանք իրենց համարում են «Էներիդներ»: Հույիս  
Կեսարը Էնիասին համարում էր իր նախահայրը: Հոմերոսի բանաստեղծ Վիրգի-  
լիոսի «Էնեական» պոեմի հիմքում Էնիասի կյանքի պատմությունն է ընկած:
- տ. 406.— **Քարշ են տալիս պաասանիներին Հեյիկոնան արքայի շուրջ**— Հեյիկոնան արքան  
Պունդոնն է: Այդպես է կոչվում Պելոպոնեսում գտնվող քաղաքի անունով, որտեղ  
այդ աստծո խոշոր սրբավայրն էր գտնվում:

### ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԿ

- տ. 418— Իբր արսերի սահմանանիշ— Տե՛ս Երգ ԺԲ, տ. 429-ի ծանուց:
- տ. 496.— **քեզ միայն մահկանացու կանանց վրա առյուծ դրեց**— Կանանց անժամանակ  
մահը հույները բացատրում էին նրանով, որ Արտեմիդը նետահարում էր նրանց  
(տե՛ս Երգ Ա տ. 44-ի ծանուց):

### ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԿ

- տ. 29.— **Փրիոնի շուն**— Սիրիոսն է (տե՛ս Երգ ԺԱ, տ. 53-ի ծանուց):
- տ. 124.— **կանգնած բարձր ժայռի վրա կամ ըսվեքում կաղնի ծառի** — Ասագլածք է, որ  
նշանակում է «ամենասկզբից»: Առաջացել է այն ժամանակ, երբ, հին հույների  
պատկերացմամբ, մարդը ծնվում էր կաղնուց կամ քարից: Հեկտորը մտածում է,  
որ այլևս ժամանակ չկա Աքիլլեսի հետ խոսելու Հեդիսի ու Տրոյական պատե-  
րագմի դրդապատճառների մասին:
- տ. 315. — **Գիշերավարն, որ ամենե՛ն գեղեցիկ աստղն է երկնքում**— Արուսյակն է, Վեներան:

### ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԿ

- տ. 46.— **չկարե՛ս մազերս ես**— Իբրև սգո նշան մազերի զոհաբերումը մահացածին հնում  
ընդունված էր շատ ազգերի մոտ: Հույներն իրենց կտրած մազերը դնում էին դիս-  
կի կամ գերեզմանի վրա (տե՛ս տ. 136):
- տ. 143.— **մազերը, որ թողնում էր երկարելու Սպերթիոս գեաին ի ձեռն**— Սպերթիոսը գետ է  
Թեսալիայում՝ Աքիլլեսի ծննդավայրում: Սովորույթի համաձայն, մազերը զոհա-

- բերում էին տեղական գեո-աստծուն՝ չափահաս դառնալու օրը: Աքիլեսը հայ-րենիքից հեռացել էր երեխա ժամանակ, դրա համար էլ դեռ պահում էր Սպերքիոսին ձոնած մազերը:
- տ. 225—26.— Ինչպես հույրն է... սուգ անում իր նորափեսա որդուն— Անժառանգ մեռելը-հույները մեծ դժբախտություն էին համարում:
- տ. 350.— գցեցին թուրքն իրենց վիճակները— Վիճակ էին գցում, որպեսզի որոշեն, թե ով իր մարտակառքը պետք է վարի ավելի կարճ՝ ներքին շրջանով:
- տ. 358—59.— Նշանակեան հետո դաշտում, և նրա մոտ... ճատեցրեց... Փիճիքսին— Քանի որ նշանակետը մեկնարկից չէր երևում, դրա համար այնտեղ պետք է մեկը լիներ, որպեսզի հետևեր, որ մրցողները չկարճեին տարածությունը, այլ հասնեին մինչև նշանակետը:
- տ. 438.— առանց երդման դու մրցանակ չես տանելու— Անտիլոքոսը պետք է երդվեր, որ ինքը դիտմամբ չփակեց Մեճելավոսի ճանապարհը, հակառակ դեպքում նրան մրցանակ չէր տրվի:
- տ. 271.— դաշխուրան— տաշտ, կոնք:
- տ. 674.— Կադմեացիք— Տե՛ս Երգ Դ, տ. 383-ի ծան-ը:
- տ. 677.— Տվեց նրան գոտի, ապա վայրի ցույց քաշված մի փոկ— Հին Հունաստանում բունցքամարտիկները բռունցքները փաթաթում էին հատուկ կաշեփոկով:
- տ. 697.— հրափորձ ետառանի— Կրակի վրա դրվող ետոռանի:
- տ. 758.— բեճ— Ուս, թիկունք, ողն:

#### ԵՐԳ ՔՍՆՆՈՐՍԵՐՈՐԿ

- տ. 27—29.— Ալեքսանդրի սեղքի համար, որ... ծաղրել էր աստվածուհիաց— Ալեկարկ է Պարիսի դատաստանի առանկելի վերաբերյալ: Պելևսի և Թետիսի հարսանիքին մասնակցում էին բոլոր աստվածները, միայն պատակտության աստվածուհի Էրիսը չէր հրավիրվել խնջույքի: Վիրավորված Էրիսը հարսանյաց սեղանին մի ոսկե խնձոր է գցում, որի վրա գրված էր՝ «ամենագեղեցիկին»: Ռրա պատճառով վեճ է սկսվում Հեռայի, Աթենասի և Ափրոդիտեի (Աստղիկ) միջև: Այդ վեճը պետք է լուծեր Պարիսը (Ալեքսանդրը), որն այդ ժամանակ հովիվ էր Էրալուն (դեռ նորածին՝ նրա մայրը՝ Հեկաբե, նրան գցել էր հովիվների մոտ, որովհետև երազում տեսել էր, որ ինքը մի այրվող խանձող է ծնել, որից ամբողջ Տրոյան բռնկվել է): Հեռմեսը երեք աստվածուհիներին բերում է Պարիսի մոտ, Հեռան նրան խոստանում է իշխանություն, Աթենասը՝ մարտական փառք, իսկ Ափրոդիտեն՝ գեղեցկագույն կնոջ սեր: Պարիսը խնձորը տալիս է Ափրոդիտեին, որն էլ հետագայում օգնում է նրան առևանգել Հեղինեին: Այդ ժամանակից էլ Հեռան և Աթենասը ատում էին Պարիսին և Տրոյան:
- տ. 48.— Պարկյանք— Պարկյան քույրերը ճակատագրի աստվածուհիներն են (տե՛ս Երգ Ի, տ. 131-ի ծան-ը):
- տ. 547.— Լեսբոս կղզուց մինչև Փոյուզիա, ուր Մտրկոսն էր թագավորում— Մարկոսը Լեսբոսի առասպելական արքան է, նրա անունը նշանակում է «երանելի»:
- տ. 621.— թեպետև քար— Նիոբեն, զավակների կորստից հետո, վշտից դառնում է արտավոդ ապստամբ:
- տ. 769.— Լրանում է իմ հարսնության քսաներորդ տարին— «Իլիականում» նկարագրվում են Տրոյական պատերազմի տասներորդ տարվա իրադարձությունները: Տրոյական պատերազմն սկսվեց Հեղինեի առևանգումից տասը տարի անց: Այսպիսով, Հեղինեն իրոք, քսան տարի էր, ինչ Տրոյայում էր:

## ԲԱՌԱՐԱՆ

### ԳԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՃԻՍԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ

- ԱԲԻԴՈՍ**— Քաղաք Փոքր Ասիայում՝ Հելլենագոնտոսի ափին:
- ԱԳԱԹՈՆ**— Պրիամոսի որդին:
- ԱԳԱՄԵՄՆՈՆ**— Ատրևսի որդին, Միկենաչի և Արգոսի արքան. Մենելավոսի եղբայրը, աքալացիների գերագույն հրամանատարը Տրոյացի մտա:
- ԱԳԱՄԵՂԵ**— Ալգիասի դուստրը, կախարդուհի:
- ԱԳԱՍՏՐՈՓՈՍ**— Պեոնացի գորական:
- ԱԳԵՆՈՐ**— Անտեոնրի և Թեովնի որդին, տրոյական հերոս:
- ԱՐՄԵՏՈՍ**— Թեսալական Փերես քաղաքի արքան: Աստվածները սրա՞ն հնարավորությամբ տվին հետաձգել մահը, եթե մեկ ուրիշը համաձայնի մեռնել նրա փոխարեն: Ադմետոսի կինը՝ Ակկեստրիսը, համաձայնվեց մեռնել ամուսնու փոխարեն, սակայն Հերակլեսը, որն այդ պահին հյուր էր Ադմետոսի տանը, Ակկեստրիսին խլեց մահվան աստծուց:
- ԱՐԻԵՍՏԻԱ** (Ադրաստիա) — Քաղաք Փոքր Ասիայում:
- ԱՐԻԵՍՏՈՍ** (Ադրաստոս) — 1. Տրոյացիների դաշնակիցը Ադրեստիայից: 2. Արգոսի և Սկիոնի արքան, ընդդեմ Թերեի կատարված «լոթի արշավանքի» գլխավոր կազմակերպիչներից մեկը: 3. Ադրեստոս եւս փոշվում նաև տրոյացի երկու զինվորականներ, որոնք հիշատակվում եւս «սեռածների ցուցակում»:
- ԱԹԵՆԱՍ ՊԱՆԼԱՍ**— Զևսի դուստրը՝ ծնված հոր գլխից: Հավերժ կուսական ռազմիկ-աստվածուհի, իմաստության աստվածուհին, ձեռագործության և ջուլնավության հովանավորը:
- ԱԹԵՆՔ**— Ատտիկայի մայրաքաղաքը՝ Հին Հունաստանի բաղաբաղկորության պատմական կենտրոնը: Ըստ դիցաբանության, այդպես է կոչվել քաղաքի հովանավորուհու՝ Աթենասի պատվին:
- ԱԹՈՍ**— Աթոն լեռը Հունաստանի արևելյան մասում:
- ԱՂԱՍՏՈՐ**— 1. Լիգիացի, Սարպեդոնի զինակիցը: 2. Տրոյացի ռազմիկ Տրոսի հայրը:
- ԱԼԵՔՍԱՆԴՐ**— Պրիամոսի որդին՝ Պարիսը:
- ԱԼԻՍԱ**— Էլիսական քաղաք:
- ԱԼԿԱԹՈՍ**— Էսիեդի որդին, Անքիսեսի փեսան՝ Հիպոդամեի ամուսինը:
- ԱԼԿԵՍՏՐԻՍ**— Տե՛ս ԱՐՄԵՏՈՍ:
- ԱԼԿԻՄԵԴՐՈՆ**— Միքմիդոնցի, Աքիլևսի գորբի հինգերորդ գնդի գորահրամանատարը և նրա մտերիմ ընկերը:
- ԱԼԿՄԵՆԵ**— Միկենական թագուհի, կինը Տիրինսի արքա Ամփիտրիոնի, որը Միկենեից փախավ Թերե: Ամուսնու բացակայության ժամանակ Զևսը նրա կերպարանքով կենակցեց Ակմենեի հետ, որը Զևսից ծնեց հունների մեծագույն հերոսին՝ Հերակլեսին:
- ԱԼՈՎԵ**— Կալատեդի աստված, Ոտոսի և Եփիալտեսի հայրը:
- ԱԼՈՍ**— Աքիլևսի տիրապետությանը ենթակա մի քաղաք:
- ԱԼՏԵՍ**— Լիեզների թագավորը, Լավոթոյեի հայրը:

**ԱՎՓԵՍ** (Ալփիոս) — Գեո Պեյուրոնեստում:

**ԱԿԱՄԱՍ** — 1. Անտոնոսի և Թեանովի որդին: 2. Տրոյացիների դաշնակից թրակացիների առաջնորդը: 3. Ասիոսի որդին:

**ԱԿԵՍԱՄ** — Թրակիական արքա:

**ԱԿՏՈՐ** — 1. Դեիվոնի որդին՝ Մեմիտիոսի հայրը, այսինքն՝ Պատրոկլեսի պապը: 2. Ասիոսի հայրը: 3. Ելիփոսի և Կիևատոսի հայրը:

**ԱԿՏՈՐՑԱՆՆԵՐ** — Իրար կպած մարմիններով երկվորյակ եղբայրներ, Էլիացի Ակտորի որդիները:

**ԱԿՐԻՍՏՈՍ** — Դանապայի հայրը, Պերսևսի պապը:

**ԱՄԱԶՈՆՆԵՐ** — Հյուսիսում բնակվող ռազմիկ-կանայք, որոնց հետ կռվել են Հերակլեսը և Թեուսը: Ըստ Մի առասպելի, Տրոյական պատերազմում, Հեկտորի մահվանից հետո, ամազոնոսիները օգնության հասան տրոյացիներին: Նրանց թագուհուն՝ Պենտեսիլեին, ապանեց Աքիլլեսը (տե՛ս նաև Երգ 9, տ. 189-ի ծան-ը):

**ԱՄԻՂՈՆ** — Քաղաք Մակեդոնիայի հյուսիսում:

**ԱՄԻՍՈՎՂԱՐ** — Կարիայի արքան:

**ԱՄԻՆՏՈՐ** — Աքիլլեսի դաստիարակ Փենիքսի հայրը:

**ԱՄՓԻՂԱՄԱՍ** — 1. Կրետական Սկանդրիա քաղաքի թագավորը: 2. Պատրոկլեսի ձեռքով Օպունում (Ոպոլիս) սպանված երիտասարդի հայրը:

**ԱՄՓԻՄԱՔՈՍ** — 1. Կոևատոսի որդին՝ եպիացիների առաջնորդը: 2. Նոմիոնի որդին՝ կարիացիների առաջնորդը:

**ԱՄՓՈՒՈՎՆ ԵՎ ԶԵԹՈՍ** — Երկվորյակ եղբայրներ, Զևսի և գետային աստված Աստաի դուստեր՝ Անտիոպեի որդիները: Նրանք թագավորում էին Թեբեում և պարսպապատեցին քաղաքը: Ահուելի ուժի տեր Զեթոսը ձեռքով հսկայական քարեր էր կրում, իսկ Ամփիովնը, որ հմուտ երամիշտ էր, իր կիթառի հնչյուններով ստիպում էր քարերին շարժվել և տեղավորվել պատերի մեջ:

**ԱՄՓՐՏԻՈՆ** — Ալկմենեի ամուսինը, Հերակլեսի երկրային հայրը:

**ԱՅԱԹԱ** — 1. Ոչիլևսի որդին, լուրերի արքան և առաջնորդը Տրոյական պատերազմում: Տրոյացից վերադարձի ճանապարհին նրան շանթահարեց Աթենասը, որը բարկացել էր Այաքսի վրա այն բանի համար, որ նա Տրոյայի առման ժամանակ իր տաճարում բռնաբարել էր Պրիամոսի դստերը՝ Կասանդրային: 2. Ապամիոնի արքա և Պելևսի եղբայրը Տելամոնի որդին, Աքիլլեսից հետո ամենատեղ հերոսը Տրոյայի մոտ: Այաքսը Աքիլլեսի մահից հետո Ողիսևսի հետ վեճի բռնվեց հերոսի գեներալ-գրամի համար, որոնք, Թետիսի կարգադրությամբ, պետք է տրվեին նրան, ով առավել աչքի կընկներ Աքիլլեսի դիակը փրկելիս: Վեճը պետք է լուծեին գերված տրոյացիները, որոնք էլ, Աթենասի ներշնչմամբ, այն լուծեցին հօգուտ Ողիսևսի: Վիրավորված Այաքսը խելահեղության մեջ սկսեց կոտորել անասունները, կարծելով, թե արջայական առաջնորդներին է կոտորում: Սթափվելով, նա ինքնասպան եղավ: Այաքսի կործանման պատմությունը հայտնի է Սոֆոկլեսի «Այաքս» ողբերգությունից:

**ԱՅԻՂՈՆԵՍ** — Տե՛ս ՀԱՂԵՍ:

**ԱՆՂՐՈՍԱՔԵ** — Կիլիկյան Թեբեի արքա Էտիոնի դուստրը, Հեկտորի կինը:

**ԱՆՏԵՆՈՐ** — Պրիամոսի ընկերը, հայրը բազում որդիների, որոնք պաշտպանում էին Տրոյան:

**ԱՆՏԻԱ** — Պրիտոսի կինը, որը զրպարտեց հելլենոփոնոսին:

**ԱՆՏԻՆՔՈՍ** — Նեատորի ավագ որդին, Աքիլլեսի մտերիմ ընկերը՝ Պատրոկլեսից հետո: Անտիլոքին պատերազմի վերջում սպանեց եթովպական արքա Մեմոնը՝ Արշալույսի որդին, որը օգնության էր եկել տրոյացիներին: Նրա հիզակից Անտիլոքը մարմնով պաշտպանեց հորը և սպանվեց:

**ԱՆՏԻՍԱՔ(ՈՍ)** — Տրոյացի իշխան, որ դեմ էր Հեղինեին վերադարձնելուն:

**ԱՆՏԻՓՈՍ** — Պրիամոսի որդին:



**ԱՏԻՄՆԻՈՍ և ՄԱՌԻԱ**— Եղբայրներ, Կարիայի արքա Ամիսովդարի որդիները, Սարգսդոճի ընկերները, որոնց սպանեցին Նեստորի երկու որդիները՝ Անուկորն ու Քրասիմիդեսը:

**ԱՆՔԻՍՍ**— Էնիասի հայրը, տրոյական արքայական կրտսեր ճյուղի ներկայացուցիչ: Աստվածները բարկացել էին Ափրոդիտեի վրա այն բանի համար, որ նա շարունակ իրենց սեր էր ներընչում մահկանացուների նկատմամբ, իսկ ինքը երբեք ոչ մի մահկանացուի չէր սիրել: Նրանք ստիպեցին, որ Ափրոդիտեն սիրի Անքիսսին, որը նովիվ էր Իդա լեռան վրա: Նրանց սիրուց ծնվեց Էնիասը: Ափրոդիտեն Անքիսսին արգելեց իրենց գաղտնի սերը հրապարակել, բայց Անքիսեսը չլսեց նրան, որի համար Ափրոդիտեն շանթահարեց Անքիսեսին:

**ԱՎՈՒՆԻՍ**— Աստված Արեի լույսի, որը խորհրդանշվում է այդ աստծո ոսկե նետերով (Ապոլլոնի ճիմնական ատրիբուտը Աղեղն է): Ապոլլոնը նաև երածշտության ու պոեզիայի հովանավորն է, Մուսաների խմբապետը, և ինքն էլ ճմուռ երաժիշտ է: Նա նաև Գուշակ-աստված է և Բժիշկ-աստված: Ապոլլոնը Չևսի և Լատոնի որդին է, Արտեմիսի երկվորյակ եղբայրը:

**ԱՌՅՎԱՏ**— Քարգամնիչն այսպես է անվանում Լուսարացի աստվածուհի Էոսին:

**ԱՌՆԵ** - Փաղաք Բեովթիայում:

**ԱՍԻԱԿԱՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ**— Դաշտավայր Փոքր Ասիայում՝ Լիդիայում:

**ԱՍԻՈՒ**— Փղուզիացի, Հեկտորի մորեղբայրը:

**ԱՍԻՐԸ** ՆԻՐՏԱԿՅԱՆ— Տրոյացիների դաշնակիցը Արիսթեից:

**ԱՍԿԱՆԻԱ**— Փոքրասիական երկրամաս Միսիայում:

**ԱՍԿԱՆՔՈՒՍ**— Բեովթիական գորավար, Արեսի և Աստիոքեի որդին:

**ԱՍՈՒԵԿՈՒՈՍ**— Ապոլլոնի որդին, բժիշկ-աստված, որի պաշտամունքը շատ տարածված էր ավելի ուշ շրջանում: Հուներոսի պոեմում Ասկլեպիոսն աստված չէ, այլ մահկանացու, նա Մարավոնի և Պողարիոսի հայրն է, որոնք նունական բանակի բժիշկներն էին:

**ԱՍՈՊՈՍ**— Գետ Բեովթիայում, նաև՝ այդ գետի աստվածը:

**ԱՍԱՌԱՍԿՈՍ**— Տրոսի որդին, տրոյական արքայական կրտսեր ճյուղի նախահայրը, Անքիսեսի և Էնիասի նախնին:

**ԱՍՏՈՒՔԵ**— 1. Փյասի դուստրը, Տրիպոլեմի և Իսպենոսի մայրը: 2. Ակտորի դուստրը՝ Սելպասիոսի մայրը:

**ԱՍՏՂԿ**— Հայկական դիցաբանության մեջ համապատասխանում է աստվածուհի Ափրոդիտեին (սիրո և հեշտասիրության աստվածուհի):

**ԱՍՏՐՈՎԵՈՍ**— Պելագոնի որդին, պեոնացիների առաջնորդը:

**ԱՎԳԵՆԱՍ**— Էլիսայի արքան, որն ուներ մեծ նախիրներ: Նրա ակոռները, որ չէին մաքրովիկ երեսուն տարի, մեկ օրում մաքրեց Հերակլեսը՝ երկու գետերի հոսանքն ուղղելով դեպի ակոռները: Խոստացված պարգևը չստանալով, Հերակլեսը, որոշ ժամանակ անց, վերադարձավ Էլիսա և սպանեց Ավգիասին ու նրա դաշնակիցներին:

**ԱՎԼԻԱ**— Նավանանգիստ Բեովթիայում, որտեղ հավաքվեցին հույները՝ Տրոյա նավերուց ստաջ և որտեղ, համաձայն առասպելի, զոհաբերվեց Ազամենոնի դուստրը՝ Իփիգենիան:

**ԱՎՏՈՒԿՆԸՍ**— Ռդիսի մայրական պսակը, որ բնակվում էր Պեոնաս լեռան մոտ: Լինելով Հերակլեսի որդին, Ավտոլիոսը նրանից որպես պարգև ստացավ զարմանալի ննարագիտություն, ճարավորություն ու խորամանկություն: Նա կարող էր անտեսանելի դարձնել ցանկացած գողացված իր և երդվում էր այնպես խորամանկորեն, որ նետո կարողանում էր չկատարել երդումը՝ ձեռկանորեն չխախտելով այն:

**ԱՎՏՈՒՄԵԿՈՆ**— Պիոնեի որդին, Աքիլլեսի կատավարը: Ըզտագործվում է որպես հասարակ անուն՝ «ճարպիկ, ճմուռ կատավար» իմաստով:

**ԱՏՐԵՎԱ (ԱՏՐԵՆԱ)**— Պելոպոսի որդին, Միկենեի արքան, Ագամեմնոնի և Մենելայոսի հայրը, որոնք նրա անունով կոչվում են Ատրիդես:

**ԱՐԱՍԱԶԴ**— Հայկական դիցաբանության մեջ համապատասխանում է հունական Ջևսին՝ գերագույն աստված, մարդկանց ու աստվածների ճակատագրերի տնօրենը:

**ԱՐԳԻԱՑԻՔ**— Արգոսի քնակիչները: Հոմերոսն ազգայն է անվանում նաև բոլոր հույների՝ ի հակադրություն ոչ հույների:

**ԱՐԳՊԱ**— Նահանգ Պելոպոնեսում՝ Միկենե մայրաքաղաքով: Ավելի ուշ այդ նահանգում բարձրացավ Արգոս քաղաքը՝ Ագամեմնոնի տիրույթը: Երբեմն աղբյուր է կոչվում ողջ Պելոպոնեսը: **ՊԵՆԱՍԳԻԱՎԱՆ ԱՐԳՈՍ**— հարթավայր Թեսալիայում, Պենեսոս գետի ափին, որտեղ Աքիլլեսի տիրույթներն էին:

**ԱՐԵՒԹԱ**— Առնեի արքան, որ միշտ լախտով էր կալում: Նա սպանվեց նեղ կիրճում, քանի որ աղտոնող չէր կարող ճոճել լախտը:

**ԱՐԵՆԵ**— Քաղաք Էլիսիայում:

**ԱՐԵՍ**— Ջևսի և Հերայի որդին՝ պատերազմի աստված:

**ԱՐԵՏՈՍ**— 1. Նեստորի որդին: 2. Պրիամոսի որդին:

**ԱՐԻԱԴՆԱ**— Կրետական Միկենոս արքայի դուստրը: Երբ Թեսևոս Աթենքից Կրետե եկավ՝ Միկենոսավորսին ապանելու, Արիստոնան սիրահարվեց նրան, և, որպեսզի Թեսևոսը կարողանա հեշտությանը դուրս գալ Լարիիթիոսից՝ ավտոնո գտնվող Միկենոսավորսին ապանելուց հետո, նրան տվեց կծիկ, որը Թեսևոսը բանդեց ճանապարհին, իսկ վերադառնալիս կծկելով հեշտությանը դուրս եկավ Լարիիթիոսից: Թեսևոսն իր հետ տարավ Արիստոնային, սակայն, աստվածների կամքով, նրան լքեց Նաքսոս կղզում, երբ նա քնած էր: Արիստոնան, արթնանալով, հուսահատության մատնվեց, սակայն նրա մոտ հայտնվեց գիճու աստված Դիոնիսոսը և հայտնեց, որ Արիստոնան կդառնա իր կինը:

**ԱՐԻՈՆ**— Ադրեստոս արքայի հրաշայի ձին, որը նրան փրկել էր ընդդեմ Թրեի կազմակերպած «յոթի արշավանքի» պարտությունից հետո: Այդ ձին ծնվել էր ձիու կերպարանք ստանալուց հետո Դեմետրիոսից և Պոսեյդոնից:

**ԱՐԻՍԲԵ**— Տրոյական քաղաք:

**ԱՐԿԱԴԻԱ**— Անտառապատ նահանգ Պելոպոնես թերակղզու կենտրոնական մասում:

**ԱՐԿԵՍԻԱՍ**— Բեովթացիների գորազուլուխներից մեկը:

**ԱՐՄԻՆՈՍ**— Նեստորի սարկոնոս՝ Եկամեդեի (Հեկամեդե) հայրը:

**ԱՐՏԵՄԻՍ**— Ջևսի և Լետոյի (Լատոնե) դուստրը՝ որսորդության աստվածուհին, Ապոլլոնի քույրը, ավելի ուշ՝ նաև Լուսնի աստվածուհին, ծննդաբերությանը օգնող աստվածուհին: Արտեմիսը եղբոր նման զինված էր նետ ու աղեղով:

**ԱՐՔԵԼՈՔՈՍ**— Անտեոսի որդին:

**ԱՔԱՅԱՑԻՔ**— Հունական հնագույն ցեղերից մեկը, որ գաղթել էր հյուսիսից և ձուլվել բնիկ պելոպոնեսից: «Իլիականում» այդ անվանումն օգտագործվում է իբրև բնորոշում բոլոր հույների՝ ի հակադրություն ոչ հույների:

**ԱՔԱՅԻԱ**— Աքալացիների երկիրը:

**ԱՔԻՂԵՍ**— Հին Հունաստանի մեծագույն հերոսը, Պելոսի և ծովային աստվածուհի Թետիսի որդին:

**ԱՔԵԼՈ**— Գետ Միջին Հունաստանում:

**ԱՔՄԻՈՍ**— Գետ Մակեդոնիայում:

**ԱՎԻՐԱ**— Բոլոր Տրոյայի մոտակայքում. համարվում էր ամազոնների Միդիանի գերեզմանաբլուրը:

**ԱՎՋՈՒՄՔ**— Համապատասխանում է ռուսերեն Гряды համաստեղությանը, որի անունը թարգմանաբար նշանակում է «ամճրևտ»:

**ԱՎԽՏ**— Մակառագրի աստվածուհիներից:

**ԲԵԼԼԵՐՈՓՈՒՍՏ**— Հերոս, որը հաղթեց Քիմերին (տե՛ս Երգ 2, տ. 150—200):

**ԲԵՈՎԹԻԱ (ԲԻՈՎՏԻԱ)**— Նահանգ Միջին Հուճախանում:

**ԲԻԱՍ**— 1. Նեստորի զգնականը: 2. Աթենացի: 3. Տրոյացի:

**ԲՈՐԵԱՍ**— Հյուսիսային բաժի, Հյուսիսակ:

**ԲՐԻԱՐԵՎՍ**— Արեւելի ուժի տեր հարյուրամեռն հսկա, Գեա-երկրի և Ուրան-երկրի որդին:

**ԲՐԻՍԵԻՍ**— Աքիլլեսի ստրկուհին, որը նրան բաժին էր ընկել իբրև ռազմավար: Ազամեմ-նոնը Աքիլլեսից խլեց Բրիսեիսին, որը և պատճառ դարձավ նրանց գժտությանը:

**ԲՈՒՅԼԸ**— Բազմաստեղք, Պելյադա:

**ԲՈՒՊՐԱՍԻՈՆ**— Եսթիացիների գլխավոր քաղաքը Էլիսպոսում:

**ԳԱՆԻՄԵՐ**— Տրոյական արքա Տրոյի (Տրոս) որդին, որին նրա գեղեցկության պատճառով առևանգեց Ջևը և տանելով Ոլիմպոս, դարձրեց աստվածների մատովակը: Ողորտ փոխարեն Ջևը Տրոյից նվիրեց հրաշալի անմահ ձիեր:

**ԳԱՐԳԱՆ**— Իդայի գազաթներից մեկը:

**ԳԵՂԱՍԱՐ**— Բլուր Տրոյայի մոտակայքում (καλλιπολοβα):

**ԳԵՐԵՆԻԱ**— Քաղաք Լալոնիայում, ուր դաստիարակվել էր Նեստորը:

**ԳԻԳԵԱՆ ԼԻՄ**— Լին Փոքր Ասիայում՝ Լիդիայի շրջանում, Հերմու գետից հյուսիս:

**ԳԼԱՎԻՄ**— Լիկիական արքա, Բելլերոփոնոսի թոռը, Տրոյայի դաշնակիցը: Գլավիմոս է կոչվում նաև սրա նախնին:

**ԳՈՐԳՈՆՆԵՐ**— Թևալոր հրեշներ, որոնց գլխին մազերի փոխարեն օձեր էին աճում: Նրանց վրա մի հայացք նետողը քար էր դառնում: Գոգոն-Մեդոլան մահկանացու էր, նրան սպանեց Պերսևսը:

**ԴԱՆԱՅԱ**— Արգոսյան արքա Աքրիսիոսի դուստրը, որի որդին, համաձայն գուշակության, պետք է սպաներ նրա հորը: Աքրիսիոսը թաքցրեց գեղեցկուհի Դանաևսին երկրի խորքերում, որպեսզի չամուսնացնի նրան: Սակայն Ջևը սիրահարվեց Դանաևային և նրա մոտ թափանցեց ոսկե անձրևի տեսքով: Դանաևան Ջևից ծնեց Պերսևսին:

**ԴԱՆԱՅԵՑԻՔ**— Արգոլիդայում բնակվող ցեղ: Հոմերոսը հաճախ այսպես է կոչում բոլոր հույներին՝ ի տարբերություն ոչ հույների:

**ԴԱՐԳԱՆ**— Ջևի որդին, տրոյական թագավորների նախահայրը, Հելլոտրի և Էնիասի նախնին:

**ԴԱՐԳԱՆԻԱ**— Հնագույն քաղաք Հելլեսպոնտոսի ափին: Հիմնադրված է իբրև թե Դարդանի կողմից: Պատմական ժամանակաշրջանում այս քաղաքը գոյություն չուներ:

**ԴԱՐԵԱ**— Հեփեստոս աստծու քրմապետը:

**ԴԵՂԱԼՈՍ**— Առասպելական արծնացի քանդակագործ և վարպետ-գլուխարար, ճարտարապետ: Իր մի ազգականին սպանելուց հետո Դեղալոսը փախավ Միմոսի մոտ՝ Կրետե, որտեղ սարքեց Լաբիրինթոսը: Քանի որ Միմոսը չէր ուզում Դեղալոսին բաց թողնել իր մոտից, դրա համար էլ Դեղալոսը փախավ օդային ճանապարհով՝ մոսից և փետուրներից թևեր սարքելով իր համար: Դասական դարաշրջանում հնագույն քանդակները կոչվում էին «Դեղալոս»:

**ԴԵՒՓՈՐ**— Պրիամոսի որդին, խզախ մարտիկ: Պարիսի մահից հետո Հեղինեն կնության տրվեց Դեիփոքին:

**ԴԵՄԵՏՐԱ**— Քրոնոսի և Ռեայի դուստրը, հողագործության և հողի բերրիության աստվածուհին, Պերսեփոնեի մայրը:

**ԴԵՄՈՒՐՈՆ**— Անտենորի որդին:

**ԴԺՈՒՔ**— Հադեսի թագավորությունը:

**ԴԻՈՍԵՐԵՍ**— Տիդեսի որդին, Արգոսի արքան, Տրոյական պատերազմում արայացիների դաշնակիցը, մեծագույն հերոսներից մեկը:

ԳԻՌՆԵ— Ափրդիսեի (Աստիկ) մայրը, հնագույն աստվածություն, որի պաշտամունքը պատմական ժամանակաշրջանում իսպառ վերացել էր:

ԳԻՌՆԻՍ— Գիճու և գինեգործության աստված, Ջևաի և Սեմեչի որդին:

ԳԻՌՍ— 1. Ջևաի այլ անվանումը: 2. Պրիամոսի որդիներից մեկը:

ԳԻՌՄԱ— 1. Ավտոմեդոնի հայրը: 2. Ամարինկեսի որդին:

ԳՈԳՐՆԵ— Քաղաք Էպիրայում, որտեղ Ջևաի գուշակավայրն էր գտնվում:

ԳՈՂՐՆ— Տրոյացի Եվմեդեսի որդին, տրոյական լրտես:

ԴՈՂՐՆԵՐ— Թեսսալական ցեղ:

ԴՈՂՐՓՍ— Լամպրոսի որդին, Լավոմեդոնի թոռը:

ԴՈՐԻԿՆՍ— Պրիամոսի հարճորդին:

ԴՐԻԱՍ— 1. Լապիթներից մեկը: 2. Լիկուրգոսի հայրը:

ԴՈՒԼԻՔՐՈՆ— Կղզի, ըստ Հոմերոսի՝ ոչ հեռու Իթակեից: Պարզ չէ, թե հատկապես որ կղզին նա նկատի ունի այդ անվան տակ:

ԴԵՎԿԱԼԻՈՆ— Կրետական արքա Մինոսի որդին, Իդոմենեսի հայրը: Վերջինս հաճախ հոր անունով անվանվում է Դեկալյան:

ԵԹՈՎՎԱՑԻՔ— Երկրի երկու ծայրերում՝ արևելքում և արևմուտքում, օվկիանոսին մոտ բնակվող առասպելական երանելի ժողովուրդ:

ԵԼԵՆՆ— Քաղաք Բեոլթիայում:

ԵՎԱՄԵԴԵ (Հեկամեդե)— Արսիճոյի դուստրը, Նեստորի ստրկուհին:

ԵՎԱՍԴԻՈՆ— Լապիթներից մեկը:

ԵՍԱԹԻԱ— Հունաստանի հյուսիսում՝ Մակեդոնիայում գտնվող ծովափնյա նահանգ:

ԵՆԻԱԼ— Արեսի մականունը:

ԵՆԻՈՎ— Պատերազմի աստվածուհի:

ԵՆՈՍ— Քաղաք Թրակիայում:

ԵՊԵՆԱ— Պանոպեի որդին, նկարիչ, արքայական զորքի ռազմիկ, որը սարքեց փայտե ձին և որի շնորհիվ արքայացիները մտան Տրոյա:

ԵՊԵՍՑԻՔ— Էլիսայում բնակվող հնագույն ցեղ:

ԵՊԻՏԱՎԻՎ— Քաղաք Հին Հունաստանում:

ԵՎԳՐՈՎՍ— Պոլիմեդեի և Հերմես աստծու որդին, միրմիդոնցիների առաջնորդը:

ԵՎԵՄՈՆ— Եփրիպիոսի որդին:

ԵՎԲԻԱ— Մեծ Կղզի Էգեյան ծովում, Միջին Հունաստանի ափերին շատ մոտ:

ԵՎՄԵՆՈՆ— Ալսևաոսի և Ալկեստրիսի որդին:

ԵՎՄԵԴ— Տրոյացիների լրտես Դոլոնի հայրը:

ԵՎՆԵՈՍ— Լեմնոսի արքան, Յատոնի և Լեմնոսի թագուհու՝ Հիփոխիլիդեի որդին, որ աքալացիներին գինի և սննդամթերք էր մատակարարում և գնում էր նրանց ավարը:

ԵՎՎԵՆՆՈՆ— Մեկեսաոսի որդին, արգիացիների առաջնորդներից մեկը:

ԵՎՐԻՅԱԳ— Ողիսևի սուրհուհուհու:

ԵՎՐԻՄԵԴՈՆ— 1. Ագամեմնոնի կառավարը: 2. Նեստորի ծառայներից մեկը:

ԵՎՐԻՍՆՆ— Եռլաչին աստվածուհի, Օվկիանոսի դուստրը:

ԵՎՐԻՎԻՎ(ՈՍ)— 1. Պոսեյդոնի որդին, Կոս կղզու արքան: 2. Թեսսալական Ռոմենիոն քաղաքի արքան, Եվմեդնի հայրը: 3. Թելեփոսի որդին՝ միսիական արքա, տրոյացիների դաշնակիցը:

ԵՎՐԻՎԹԵՎԱ— Միկենեի արքան, Սթեմելի որդին, սրա հաճմանարարությամբ Հերակլեսը օրթեց իր 12 սխրագործությունները:

ԵՎՐԻՏՈՍ— Թեսսալական Երալիա քաղաքի արքան, նշանավոր նետամիգ, Հերակլեսի թշնամին:

ԵՎՓՈՂՈՍ— Տրոյացի, Պանթոսի որդին, Պոլիդամասի եղբայրը:

ԵՎՔԵՆՈՆ— Կորնթոսի գուշակ Պոլիփոյի որդին:

**ԵՐԵՎԱՆ**— Աթենքի երրորդ առասպելական արքան, Երկրի գավառը, որին **Աթենքում** պաշտում էին աստծո պես:

**ԵՐԵՎԱՆԻՆՈՒ**— Դարդանոսի որդին, Պրիամոսի նախահայրը:

**ԵՐԻՈՎՊ**— Ուլիկսի կինը:

**ԵՐԻՏՐԱ**— Քաղաք Եվբիա կղզում:

**ԵՐԵՎՈՒՆՈՒ**— Արկադիացի հսկա, որին իր երիտասարդությանը հաղթել էր Նեստորը:

**ԵՓԻՐՈՍ**— Կորնթոսի, մահ ուրիշ շատ քաղաքների հնագույն անվանումը:

**ԵՔԵՎԼԵՍ**— 1. Ագենորի որդին: 2. Տրոյացի:

**ԵՔԵՊՈՒՆՈՍ**— Միկիոնի արքան, որը Ագամեմնոնին ընծաներ էր Եփե (Իփրևագին), որպես-  
զի ինքը չմահանալի Տրոյական պատերազմին:

**ԶԵՆԻԱ**— Պանդարոսի տիրույթը՝ քաղաք Իդայի ստորբունում:

**ԶԵՓՑՈՒՈՒ**— Արևմտյան քամի:

**ԶՐԿԱՆ**— Ըստ գրադաշտական վարդապետության՝ հայրը Ռոմեոսի և Աֆրիմեանի, որն ապա նույնացված է Քրոնոսի հետ: Թարգմանության մեջ «Զրվահյան», «Ռոմեոս» է անվանվում Զևսը:

**ԶԵՎԱ**— Քրոնոսի և Ռեայի որդին, որը տապալեց հորը և գրավեց նրա իշխանությունը: **Մարդկանց և աստվածների** արքան, երկնքի, որոտի ու կալծուսի աստված, սու-  
դարադատության գերագույն պահապանը, պանդուխտների ու խնդրարկունների հովանավորը:

**ԷԱԿԻՆ**— Էակոսի որդիները և թոռները (Աքիլես, Այաքս):

**ԷՊԱԼԻԱ** (Էգիպտե) — Ատրեստեսի դուստրը, Դիոմեդեսի կինը:

**ԷՊԱՍ**— Պելոպոնեսի հյուսիսում՝ Արալայում գտնվող քաղաք, Պոսեյդոնի սրաշա-  
մունքի կենտրոններից մեկը:

**ԷՔԵՆՈՍ**— Աթենքի արքան, Թեսևի հայրը: Երբ Թեսևը Մինոտավրոսին հաղթելուց հե-  
տ վերադառնում էր Կրետեից, մոռացավ մեկնելուց առաջ հոր հետ կրթած սրա-  
յանը՝ ի նշան հաջողության բարձրացնել ճերմակ առաջատոները: Էգեստը հե-  
վից նկատելով սև առագաստները և Էգրակացնելով, որ որդին գոհվել է, նետ-  
վեց ծովը, որը նրա անունով կոչվեց Էգեյան:

**ԷՊԻՊ** (Իդիսոս) — Թեբեի արքա Լայոսի և Էպիկաստեսի որդին: Եպոսը, իմանալով, որ պետք է սպանվի որդու ձեռքով, կարգարեց ոչնչացնել Իրեխային, սակայն Էդիպը փրկվեց և դաստիարակվեց հսկրեներից հետո: Պատահի հասակում Էդիպն իմացավ, որ իրեն վիճակված է սպանել հորը և ամուսնանալ մոր հետ: Իրեն մեծագույն ծնողներին համարելով իր հարազատ ճնողները, նա հեռացավ նրան-  
ցից՝ խուսափելու համար դժբախտ գուշակությունից: Ծանուցությունը, պատմա-  
կան հանդիպման ժամանակ Էդիպը սպանեց մի ձերուհու, և, զարդ Թեբե, դա-  
դարն ազատեց արքայիցի հրեշ Աֆինքսից: Երախտագետ թեբեացիները նրան արքա հռչակեցին, և Էդիպն ամուսնացավ Լայոսի այրու հետ: Այնուհետև պարզ-  
վեց, որ ճանապարհին սպանված ձերուհին Լայոսն էր, հետևաբար, կատարվել էր գուշակությունը՝ Էդիպն սպանել էր հորը և ամուսնացել մոր հետ: Սարսափա-  
հար Էպիկաստրեն ինքնասպան եղավ, իսկ Էդիպը կուրացրեց ինքն իրեն:

**ԷՐԻՆ**— Թեսևի մայրը, Լեդիանի ստրկուհին, որը նրա հետ միասին բեշվեց Տրոյա:

**ԷԼԻՍԱ** (Էլիդա) — Նահանգ Պելոպոնեսի արևմուտքում:

**ԷՆԻԱՍ**— Անքիսեսի և Ափրոդիտեսի որդին, Պրիամոսի ազգահանը, Տրոյական պատե-  
րազմի գլխավոր հերոսներից մեկը: Տրոյայի անկումից հետո Էնիասը փրկվեց  
այրվող քաղաքից ուտերի վրա տանելով հորը և որդուն: Երկար թափառումներից  
հետո Էնիասը Իտալիայում հիմնեց իր թագավորությունը:

**ԷՊԻԱՆՔ**— Տե՛ս ԵՊԻԱՑԻՔ:

**ԷՊԻՏՈՍ**— Արկադիական առասպելական թագավոր:  
**ԷՏԻՈՆ**— Անդրոմաքի հայրը՝ փոքրասիական թերթի արքան:  
**ԷՏՈՒՎԱ**— Միջին Հունաստանի արևմտյան նահանգը:  
**ԷՐԻԲԵ**— Ռոտի և Եփիալտեսի խորթ մայրը:  
**ԷՐԻՆՆԻՆՆԵՐ**— Հրեշ-աստվածուհիներ, որոնք հետապնդում էին արյուն հեղած մարդկանց. արյան վրեժի աստվածուհիներ: Թարգմանության մեջ կոչվում են նաև Պատուհասներ (Երգ ԺԹ, տ. 428), Վրիժուհիներ (Երգ ԺԹ, տ. 283):  
**ԷՓԻՐԵ**— Տե՛ս ԵՓԻՐՈՍ:

**ԹԱՄԻՐ**— Թրակացի առասպելական երգիչ, որ հանդգնեց Մուսաներին երգի մրցության կանչել և դրա համար կորացվեց նրանց կողմից:  
**ԹԵԱՆՈՎ**— Անաեմոսի կինը, Աթենասի քրմուհին Տրոյայում:  
**ԹԵԲԵ**— Քաղաք հեռվորայում:  
**ԹԵՄԻՎ**— Արդարադատության աստվածուհին:  
**ԹԵՄԱՆՈՍ**— Հերակլեսի որդին:  
**ԹԵՄԱՒԻՎ**— Միջին Հունաստանի արևելյան նահանգ:  
**ԹԵՍՏՈՒՅԱՆ**— Թեստոսի որդին՝ Կալքասը:  
**ԹԵՍԵՎՍ**— Ատտիկյան հերոս, որը շատ սկրագործություններ է կատարել՝ Հերակլեսի մասն ազատելով հարազատ երկիրը ավազակներից ու հրեշներից: Թեսեսը Պուսկրոնի և արևմտյան արքա Էգեսոսի կնոջ՝ Էթրեի որդին էր, և ինքն էլ թագավորում էր Աթենքում:  
**ԹԵՏԻՍ**— Մովսեսի մեծ քույրը (Ներեիդ), Պելևսի կինը, Աքիլլեսի մայրը: Սրա հարսանիքին վիճեցին երեք աստվածուհիները «սպառակտության խնձորի» համար:  
**ԹԵՐԱԻԵՍ**— Հույն զինվոր, որ աչքի էր ընկնում իր արտաքին այլանդակությամբ և ըմբոստ բնավորությամբ:  
**ԹԻԵՍ**— Խոշոր քաղաք Կրետեում:  
**ԹԻՄԲՐԵ**— Հարթավայր Տրոյադայում:  
**ԹՐԱՍ**— Անդրեմոնի որդին, Էտոլիայում գտնվող Պլերոն և Կալիյոն քաղաքների արքան:  
**ԹՐՈՐԵՍ**— Մենեսթևսի սուրհանդակը:  
**ԹՐՈՆ**— 1. Տրոյացի, սպանված Ռոդսկի ձեռքով: 2. Տրոյացի, որին սպանեց Աքիլլեսը: 3. Փենոպեի որդին, որին սպանեց Դիոմեդեսը:  
**ԹՐԱԿԻԱ**— Հունաստանի հյուսիս-արևելքում գտնվող ընդարձակ նահանգ:  
**ԹՐԱԿԻՄԵՆՆԱ**— Մարսեդոնի սպասակը:  
**ԹՐԱՍԻՄԻՐԵՍ**— Նեստոր ծերունու որդին:

**ԺԱՄԵՐ (Շոքե)**— Տարվա ժամանակի աստվածուհիները, Ոլիմպոսի պահապանները, որոնք մերթ քացում, մերթ փախում էին ամպե դաբալանները:

**ԻՂԱ**— Բարձր անտառածածկ լեռ Փոքր Ասիայում, որի ստորոտում գտնվում էր Տրոյան:  
**ԻՂԵՆՈՍ**— Պրիամոսի սուրհանդակը, որը նրան ուղեկցեց Հեկտորի դին բերելիս:  
**ԻՂԵՍ**— Աթարևսի որդին, Կաստորի և Պոլիդեի ազգականն ու զինակիցը, որը մարտնչեց ընդդեմ Ապոլլոնի՝ Մարսեսայի համար: Ընդհարվելով ազգականների հետ, Իղեսը նրանց դեմ կռվելիս սպանեց Կաստորին, քաջ Պոլիդեկոսի հետ մարտչելիս Ջևսը նրան շանթահարեց:  
**ԻՂՈՄԵՆԵՍ**— Դեկալիոնի որդին, կրեոսական գորահրամանատար:  
**ԻԹԱԿԵ**— Ռիսեսի հայրենիքը՝ լեոնապատ կղզի Հունիական ծովում՝ Հունաստանի արևմտյան ափերից ոչ հեռու:

- ԻԼԻԹՆԵՐ**— Երկունքի ցավերի աստվածուհիները:
- ԻԼԻՌՆ**— Տրոյացի այլ անվանումը:
- ԻԼԻՌՈՍ**— Տրոսի որդին, Լավոմեդոնի հայրը, Իլիոն թաղաքի հիմնադիրը:
- ԻԼԻՌՆԵՍ**— Բեովթացի Փորբասի որդին, Հերմես աստծո սիրելին:
- ԻԿԱՐՅԱՆ** ԾՈՎ— Միջերկրական ծովի՝ Սամոս կղզու մոտ գտնվող մասը, որն այդպես է կոչվել ի պատիվ Դեդալոսի որդու՝ Իկարոսի, որն այնտեղ էր գտնվել Կրետեից փախչելիս:
- ԻՍԲՐԻՈՍ**— Մեցնորի որդին, Պրիամոսի փեսան:
- ԻՍԲՐՈՍ**— Կղզի Թրակիական ափերին մոտ:
- ԻՆԵՎՍ**— Կալիդոն թաղաքի արքան, Տիդեսի և Մելեագրոսի հայրը, Դիոմեդեսի պապը:
- ԻՍՈՍ**— Պրիամոսի հարճորդին:
- ԻՐԻՍ**— Երանճանի աստվածուհին, աստվածների թևավոր սուրհանդակը:
- ԻՓԻԱՆԱՍԱ**— Ագամեմնոնի դուստրը: Հավանաբար՝ Իփիգենիա անվան տարբերակն է: Իփիգենիան զոհաբերվեց Ավլիսում, որովհետև Արտեմիսը երկար ժամանակ արայացիներին դեսի Տրոյա նավելու համար հաջողակ (հաջողաց) քամի չէր ուղարկում: Որպես հատուցում Ագամեմնոնի սպանած սրբազան եղջիկի՝ Արտեմիսը պահանջեց զոհաբերել Իփիգենիային: Հոմերոսը լռույցան է մատնում այս առասպելը և նույնիսկ նախընտրում է Իփիգենիա անվան այլ տարբերակը: Իփիգենիայի զոհաբերման առասպելը մեզ հայտնի է Եվրիպիդեսի «Իփիգենիան Ավլիսում» ողբերգությունից:
- ԻՓԻԴԱՄԱՍ**— Անտենորի որդին:
- ԻՓԻԿՆԵՆ**— Ռոդոսյան և հավերժահարս Նեխի որդին:
- ԻՓԻԿԼՈՍ**— Թեսալական Փիլակե թաղաքի թագավորը, որ մարդկանցից ամենաարագավազն էր և սքանչելի նախիրներ ուներ. Պողարկեսի հայրը:
- ԻՓԻՏՈՍ**— 1. Եվրիդեսի որդին, Անտաճիզ, որին սպանեց Հերակլեսը: 2. Աբեդիոսի հայրը: 3. Կալբոսի որդին:
- ԻՔԱԼԵՏԻ** (ԵՔԱԼԻԱ)— թաղաք Էտոլիայում:
- ԻՔՄԻՐՆ**— Լապիթների արքան Թեսալիայում, Պրիթոսի երկրային հայրը:
- ԷԱԿԵԴԵՄՈՆ**— Պելոպոնեսի հարավ-արևելքում գտնվող շրջան՝ Սպարտա մայրաքաղաքում, Մենելայոսի տիրույթը:
- ԷԱՍՊՈՍ**— Պրիամոսի եղբայրը, Լավոմեդոնի որդին:
- ԷԱՅԵՐԿԵՆ**— Ավլիմեդոնի հայրը:
- ԷԱՅԵՐՍ**— Ռոդոսի հայրը:
- ԷԱՎՈՍԵՆԵ**— Բելերոփոնտի դուստրը:
- ԷԱՎՈՐԻԿԵ**— 1. Պրիամոսի և Հելաքեի դուստրը: 2. Ագամեմնոնի դուստրը:
- ԷԱՎՈՐԱՄ(ԱՍ)**— Անտենորի որդին:
- ԷԱՎՈՐՈՆ**— Ոմեաորի որդին, Ջևի թուրմը Իլիոնում:
- ԷԱՎՈԹՈՅԵ**— Պրիամոսի կինը՝ Լիկայոնի մայրը:
- ԷԱՎՈՒՐՈՆ**— Պրիամոսի հայրը, Տրոյացի արքան:
- ԷԱՊԻԹՆԵՐ**— Թեսալիայում բնակվող առասպելական ժողովուրդ:
- ԷԵԼԵԳՆԵՐ**— Հնագույն ժողովուրդ, որ բնակվում էր հայկական բերավողում՝ մինչև արայացիների մուտք գործելը:
- ԷԵՅՏՈՎՆ**— Լեոնային հրվանդան Փոքր Ասիայում՝ Լեսբոս կղզու դիմաց:
- ԷԵՄՆՈՍ**— Կղզի Էգեյան ծովում, որտեղ, ըստ առասպելի, Հեփեստոսի դարբնոցն էր գտնվում:
- ԷԵՈՎՐԻՏ**— Հույն, Արիստոսի որդին, Լիկոմեդեսի ընկերը:
- ԷԵՍԲՈՍ**— Կղզի Էգեյան ծովում:
- ԷԵՏԻՈՍ**— Բեովթացիների առաջնորդներից մեկը:

- ԼԵՏՏՈՒ**— Քերամոսի որդին, պելասգների արքան Լարիսաշում:
- ԼԵՏՈՎՆ (ԼԵՏՈ, ԼՍՏՈՆԵ)**—Ապոլլոնի և Արտեմիսի աստվածուհի մայրը:
- ԼԻԿԱՅՈՆ**— 1. Պանդարոսի հայրը, լիկիացի արքա: 2. Պրիամոսի որդին, որին Աքիլլեսը գերի վերցրեց ու վաճառեց, ապա, երբ տա վերադարձալ Տրոյա, սպանեց:
- ԼԻԿԻՍ**— «Լիկականում» պապես են կոչվում երկու շրջաններ. ա) Փոքր Ասիայի հարավային նահանգը և բ) Իրա լեռան ստորոտում՝ Տրոյայի մոտ գտնվող շրջանը, որտեղից էին Լիկայոնը և Պանդարոն:
- ԼԻԿԻՄՆԻՈՍ**— Հերակլեսի մորեղբայրը, որին սպանեց Հերակլեսի որդին՝ Տլիպոլեմը
- ԼԻԿՈՄԵՂԵՍ**— Բեոպյոսցիների ասաջնորդներից մեկը:
- ԼԻԿՈՒՐՊՈՍ**— Գրիասի որդին, որ սպանեց Առնեի արքա Արեհիոսին:
- ԼԻԿՈՓՐՈՆ**— Կիթերոսի ռազմիկ, Այաքսի սպասալիկ:
- ԼԻԿՏՈՍ**— Քաղաք Կրետե կղզում:
- ԼԻՌՆԵՍՈՍ**— Տրոյայի դաշնակից քաղաքներից մեկը:
- ԼՈԿՐԱՏԻՆԵՐ**— Միջին Հունաստանում ապրող ժողովուրդ:
- ԽԱՐԻՍ**— Հեփեստոս աստծո կինը:
- ԿԱՔԵՍՈՍ**— Քաղաք Փրակիայում:
- ԿԱՎՍՈՍ**— Փրակիկան Ագեմոր արքայի որդին, Ջեսի ատենագած Եվրոպայի կղբայրը, որը գնաց քրոջը որոնելու, բայց չգտալ նրան, և Դելփյան պատգամախոսի հրահանգով քաղաք հիմնեց այն տեղում, ուր նրան բխել էր աստծո մոտ հանդիպած կովը: Այդ քաղաքը Բեոպյոսկան Թեբե է. Բեոպյոս անց նշանակում է «կովի երկիր»:
- ԿԱԼԻՌՈՆ**— Քաղաք Էտոլիայում, Մելևագրոսի հայրենիքը:
- ԿԱԼՔՍՍ**— Աքայացի գուշակ: Կալքսաը, մեկնելով երազը. գուշակել էր, որ Տրոյական պատերազմը պետք է տևի տասը տարի:
- ԿԱՅԻՍՏՐԱ**— Գետ Լիդիայում:
- ԿԱՊԱՆԵՍ**— Վիթխարանառակ նույն, Թեբեի դեմ կազմակերպված «յոթի արշավանքի» մասնակիցներից, որին Ջեսը շահարհարեց՝ Թեբեի գրավման ժամանակ ցուցաբերած անազնություն և աճբարտալանություն համար:
- ԿԱՊԻՍ**— Տրոսի թողը՝ Աստարտոսի որդին, Անքիսեսի հայրը, Էնիոսի պապը:
- ԿԱՍԱՆՂԻՍ**— Պրիամոսի դուստրը, գուշակուհի, որին այդ շնորհի պարգևել էր Ապոլլոնը: Սակայն երբ Կասանդրան մերժեց Ապոլլոնի սերը, նա արձակեց արեք, որ մարդիկ հավատ չէին ընծայում Կասանդրայի գուշակություններին. յեւս դրանք միշտ ճշմարիտ էին լինում:
- ԿԱՍՏՈՐ և ՊՈԼԻՎԵՎԿՈՍ**— Լեդայի որդիները, Հեղինեի եղբայրները: Պոլիդեկոսը Ջեսի անմահ որդին էր, իսկ Կաստորը՝ Տինդարիոսի մահվանացու որդին: Եղբայրները միշտ անբաժան էին, միասին մասնակցել էին արգոնավորդների արշավանքին, սկիզբադրծություններ կատարել: Երբ Կաստորն սպանվեց Իդիսի հետ մենամարտելիս, Պոլիդեկոսը աստվածներից թույլտվություն խնդրեց եղբոր հետ կիսել իր անմահությունը: Այդ թույլանից եղբայրները մեկ օր անցկացնում էին Ոլիմպոսում, մեկ օր՝ Հադեսի թագավորությունում:
- ԿԱՎԳՈՆՆԵՐ**— Փոքրասիական ցեղ:
- ԿԱՐԵՍ**— Գետ Միսիայում:
- ԿԱՐԻՍՏԻՔ**— Կարիայի Փոքր Ասիայի հարավ-արևմտյան նահանգի բնակիչները:
- ԿԵԲՐԻՈՆ**— Պրիամոսի հարճորդին:
- ԿԵՆԵՎԱ**— Լապիթ գիմվորական:
- ԿԵՓԱԼԵՆԻՍ**— Կղզիախումբ Հունաստանի արևելյան ափերին մոտ՝ Իրակից ոչ հեռու: Նրա մեջ մտնում էին Ջամոսը, Ջակինթոսը և Դուլիբիոնը:
- ԿԵՓԵՍՍԻ ԵՌՎԱԿ**— Լիճ Բեոպյոսիայում:



**ԿԻՔԵՐՍ**— Պետպոնեւի ակտերին մտտ գտնվող կղզի, որը հայտնի էր Ափրոդիտեի տաճարով. այն կղզու անունով կոչվում էր Կիթերեա:

**ԿԻԼԵՆԵ**— Լեռ Արկադիայում, որտեղ, ըստ ավանդության, ծնվել է Հերմեսը:

**ԿԻԼԼԱ**— Աճհայտ կղզի կամ քաղաք՝ Տրոյայից ոչ հեռու:

**ԿԻԿՆՆԱՑԻՔ**— Թրակիական ցեղեր:

**ԿԻՆԵՐԵՎԱ**— Կիպրոսի անասպեղական արքան, որ այդ կղզում հիմք դրեց Ափրոդիտեի պաշտամունքին:

**ԿԻՊՐՈՍ**— Կղզի Միջերկրական ծովի արևելյան մասում: Կիպրոսի Պաթոս քաղաքում էր գտնվում Ափրոդիտեի ամենազանազան տաճարը:

**ԿԻՊՐՈՒՀԻ**— Ափրոդիտեի (Աստղիկ) մականունը, ըստ ավանդության, Ափրոդիտեն ծընվել էր ծովի փրփուրներից և ափ դուրս եկել Կիպրոս կղզում:

**ԿԻՍԵԱ**— Թեսալոյի՝ Աճտեճորի կնոջ հայրը:

**ԿԻՐԱՆՈՍ**— Մերիոնեւի կառավարը և զինակիցը:

**ԿԼԵՆՊԱՏՐՈՍ**— Իդէսի և Մարպիսապի դուստրը, Մելեագրոսի կինը:

**ԿԼԻՄԵՆԱ**— Լապիթների արքա Պիրիփոսի մայրը, Հեղինեի տղուհին, որը նրա հետ միասին Տրոյա բերվեց:

**ԿԼԻՏԻՈՍ**— 1. Պրիամոսի եղբայրը, հայրը Կպետորի, որին տղանց Ալաքսը նախերի մտ: 2. Պիսեճորի որդին, Պուլիդամասի կառավարը:

**ԿԼԻՏԵՄՆԵՍՏՐՈՍ**— Լեդայի դուստրը, Հեղինեի քույրը և Ագամեմոնի կինը: Մինչդեռ Ագամեմոնը կոչվում էր Տրոյայում, Կլիտեմնեստրան նրան դավաճանեց նրա ազգականի՝ Էգիստեսի հետ, և երբ Ագամեմոնը վերադարձավ պատերազմից, Կլիտեմնեստրան Էգիստեսի հետ միասին տղանց ամուսնուց: Սակայն մի քանի տարի անց նրանց որդին՝ Որեստեսը, հոր համար վրեժխնդիր լինելով, սպանեց մորը:

**ԿՆՈՍՈՍ**— Քաղաք Կրետե կղզում, անասպեղական Միճոս արքայի մայրաքաղաքը: Կնոսոսի պեղումներն ի հայտ բերեցին կրետական մշակույթի զարմանալի նմուշներ:

**ԿՈՈՆ**— Աճտեճորի ավագ որդին:

**ԿՈՊՐՆՈՍ**— Ելիփսեւի տարհանդակը, որը նրա հրահանգները հաղորդում էր Հերակլեսին, անկախ սզնքան վախկոտ էր, որ գերադասում էր չնանդիպել ներսին:

**ԿՈՍ (ԿՈՎՈՍ)**— Կղզի Լեզյան ծովում:

**ԿՐԵՏԵ**— Խոշոր կղզի Միջերկրական ծովում, հին հունական քաղաքակրթության կենտրոն, որ գոյություն ուներ Հոմերոսյան ժամանակաշրջանից շատ առաջ:

**ԿՈՒՐԵՏՆԵՐ**— Կալիդոնա քաղաքից ոչ հեռու բնակվող ցեղ:

**ՀԱՂԵԱ**— Քրոնոսի և Ռեայի որդին, Ջևսի և Պուսկոնի եղբայրը, մեդուզների ստորերկրյա թագավորության արքան: Նրա անունը նշանակում է «Աճտեսանելի»:

**ՀԱԼԻՋՈՆԵՐ**— Փոքր Ասիայի շեծովյան ակերին բնակվող ժողովուրդ:

**ՀԱԼՄԻՆՈՍ**— Արեսի և Աստիոքեի երկրորդ որդին, որքմենական գորահրամանատարը Տրոյայի մտ:

**ՀԱՊԵՏՈՍ**— Տիտան, Պրոմեթեւի հայրը:

**ՀԱՐՊԱՆՈՍ**— Գեո Էլիսայում Պելոպոնեւում:

**ՀԱՐՊԱՆՈՆ**— Կապիագոնեացիների Պիլեմնես արքայի որդին:

**ՀԵԲԵ**— Ջևսի և Հերայի դուստրը՝ հավերժ երիտասարդ աստվածություն, մարմնավորումը մարդկային ուժերի ծաղկման, որն, ըստ հույների, վրա է հասնում 18 տարեկանից հետո: Հեբեն սպառավորում է աստվածներին խնջույքների ժամանակ: Հերակլեսի աստվածացումից հետո Հեբեն նրան կնության տրվեց:

**ՀԵԼԵՆՈՍ**— 1. Աքայական ռազմիկ, որին սպանեց Հեկտորը: 2. Պրիամոսի որդին, գուշակ: Տրոյայի անկումից հետո սա դարձավ Աքիլլեւսի որդի Եւոպտոլեւի սարուկը, իսկ տիրոջ մահից հետո ժառանգեց նրա թագավորության մի մասը Էպիրոսում և այժմ տեղ հիմնադրեց «փոքր Տրոյան»:

- ՀԵԼԻԿԵ— Քաղաք Պելոպոնեսի հյուսիսում, որտեղ Պոսեյդոնի խոշոր սրբավայրն էր:
- ՀԵԼԻԿՈՆ— Տե՛ս ՀԵԼԻԿԵ:
- ՀԵԼԼԱԳԱ.— 1) Առհասարակ Հուճաստանը: 2. Թեսսալական երկրամաս:
- ՀԵԿԱԲԵ (ՀԵԿՈՒԲԱ)— Պրիամոսի կինը, նրա 10 որդիների, այդ թվում Ջան Հելտորի և Պարիսի մայրը:
- ՀԵԿԱՄԵՆԵ— Արևելոսի դուստրը, Նեստոր ծերունու ստրկուհին:
- ՀԵԿՏՈՐ— Պրիամոսի որդին, Տրոյական պատերազմի գլխավոր հերոսներից մեկը:
- ՀԵՂԻՆԵ— Լեոպի և Ջևի դուստրը, Հելլադայի ամենագեղեցիկ կինը, որին հարսնախոստելու էին եկել ամենաբազմաթիվ հերոսները: Սակայն Հեղինեի հայրը՝ Տիդարխոսը, Ոդիսևսի խորհրդով, թույլ տվեց, որ դուստրն ինքն ընտրի իր ամուսնուն, իսկ մնացած թեկնածուներից խոսք առավ, որ նրանք կշարունակեն բարեկամությունը և կաստատեն Հեղինեի ընտրության: Հեղինեն ընտրեց Մենելայիսին, որը աներոջ մահից հետո թագավորեց Ագոստոսում: Երբ Պարիսն առևանգեց Հեղինեին, Մենելայիսը հավաքեց բոլոր ախիլից փեսացուներին և պատերազմ փչեց Տրոյայի դեմ:
- ՀԵՐՍ— Քրոնոսի և Ռեայի դուստրը, Ջևի թույրը և կինը, աստվածների թագուհին և ամուսնության հովանավոր աստվածուհին:
- ՀԵՐՍԿԵԼԵ— Հուճական դիցաբանության ամենապրկած և ամենաբազմաթիվ հերոսը, Ջևի և Ալկմեդեի որդին, որին մահից հետո աստվածները բարձրացրին Ռիմպոս և դարձրին աստված:
- ՀԵՐՄԵՍ— Անևորի, ճարտարախոսության աստված, աստվածների պառզամավորը, զոդերի և ճանապարհորդների խնամակալը:
- ՀԵՐՄՈՍ— Գեո Փոքր Ասիայում:
- ՀԵՓԵՆՍՈՍ— Ջևի և Հեբայի որդին, կրակի աստված, դարբնության հովանավորը, ինքն էլ՝ հմուտ դարբին: Հույների պատկերացմամբ, Հեփեսոսը հզոր աստված էր, սակայն տգեղ էր և զույգ ոտքերից կալ:
- ՀԻԿԵ— Քաղաք Լիդիայում:
- ՀԻԼԼՈՍ— Հերմոս գետի վտակներից:
- ՀԻՊԵՐԵՆԵ— Աղբյուր Թեսսալիայում:
- ՀԻԿԵՏԱՎՈՆ— Պրիամոսի եղբայրը, Լավոմեդոնի որդին:
- ՀԻՊԵՐԵՆՈՐ— Եվփորոսի և Պոլիդամասի եղբայրը՝ սպանված Մենելայոսի ձեռքով:
- ՀԻՊՊԱՍ— 1. Քարեպսի հայրը: 2. Հիփսեոնորի, Ապիսավոնի հայրը:
- ՀԻՊՊՈՂՍՄԱՍ | Պերկոսացի Մեթոսի որդիները:  
ՀԻՊԵՐՈՒՔ
- ՀԻՊՊՈՂՍՄԵ— 1. Պիրիթոսի կինը, որոնց հարսանիքին կոխվ ծագեց լապիթների և կենտավրոսների միջև: 2. Էնիասի թույրը, Անքիսևսի դուստրը:
- ՀԻՊՊՈՒՌՈՐՈՍ— 1. Պելասգական զորքի առաջնորդը: 2. Պրիամոսի որդիներից մեկը:
- ՀԻՊՊՈՒՐՈՒՔ— 1. Բելլերոփոնտի որդին, Գլավկոսի հայրը: 2. Տրոյացի Անտիմաքոսի որդին:
- ՀԻՊՊՈՂՈՆ— Թրակացի խորհրդական, Հոնեսոսի հորեղբոր որդին:
- ՀԻՐԵՏՈՍ— Գիրտասի որդին, միսիացիների զորավարը:
- ՀԻՓՍԻՈՐ— Հիպպասի որդին:
- ՀԻՓՍԻՊՈՒԼԵ— Լեմնոսի թագուհին, որի ներկայությամբ լեմնոսուհիները ծեծում էին իրենց դավաճանող ամուսիններին: Երբ Արգոնավորդները Լեմնոս եկան, նրանք ծամանակավորապես ամուսնացան լեմնոսուհիների հետ: Հիփսիպիեն Յատոնից ունեցավ Եվենոսին:
- ՀՐԵՍՈՍ— Թրակիացի արքա, Էրոնի որդին, տրոյացիների բազմակիցը:
- ՀՐԻԳՄՈՍ— Թրակիացի ռազմիկ:
- ՀՐՈՒՐՈՍ— Խոշոր կղզի Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ափերի մոտ:
- ՀԵԼԵՍՊՈՆՏՈՍ— Նեղոց, որ լրբարից բաժանում է Փոքր Ասիան և թրակիական Խերսո-

Վեպը, այժմ՝ Դարդանեկի ներուց: Այս անվան ստուգաբանության հիմքում ընկած է առասպել, համաձայն որի Բևովթիայի Աթամաու արքայի որդիները՝ Հեկեը և Ֆրիքսոսը իրենց խորթ մոր հալածանքներից խույս տալու համար նեճնում են ոսկեգեղմ խոյը և փախչում: Հասնելով նեղուցին, Հեկեը խոյից վայր է ընկնում և ինդովում, որտեղից էլ նեղուցը ստացել է իր անունը: Փրիքսոսը, ոսկեգեղմ խոյը նեճած, լողալով հասնում է Կոլխիդա, ուր և հետագայում գալիս են Արգո-նավորդները՝ ոսկե գեղմը որոնելու:

**ՄԱԿԱՊ**— Փոյուզիայի առասպելական արքան:

**ՄԱՐՊԵՍԱՂԱ**— Իդեաի կինը, Կլեոպատրայի մայրը:

**ՄԱՔԱՎՈՆ**— Ասկեպիոսի որդին, հունական բանակի բժիշկներից:

**ՄԵԱՆԳՐ**— Գետ Փոքր Ասիայում:

**ՄԵԳԵՍ**— Փրիկսի որդին, Ավգետի թոռը:

**ՄԵԴՈՆ**— Ոլիլեաի և Ռեմեի որդին, Ոլիլեան Ալաքսի խորթ եղբայրը:

**ՄԵԴՈՆԿԼԱՍԳԵ**— Պրիամոսի դուստրը՝ ծնված հարձից, Մենոտրյան Իմբրիոսի կինը:

**ՄԵԼԱՆԻՊՊՈՍ ՀԵԿՏԱՎՆՅԱՆ**— 1. Հույն մարտիկ: 2. Տրոյացի:

**ՄԵԼԵԱՊՈՍ**— Կալիդոնի արքա Իմեաի որդին: Երբ սա ծնվեց, նրա մորը կազում հալածվեցին ճակատագրի աստվածուհիները և սասցին, որ նրա որդին կմեռնի այն ժամանակ, երբ օջախում լրիվ կայրվի խամձողը: Մայրը՝ Ալթեան խամձողը հանեց և թաքցրեց սնդուկում: Երբ Մելեագրոսը մեծացավ, նա դեկավարից Կալիդոնական կենճի որսը, որին Արտեմիսն էր ուղարկել՝ ի պատիվ Իմեաի, այն բանի համար, որ նա քերթաբավաթի ժամանակ իրեն զոհ չէր մատուցել: Երբ վարազը սպանված էր, նրա մորթի և գլխի համար Մելեագրոսի և իր նորեղբայրների միջև վեճ ծագեց. այն վերանվեց պատերազմի, որի ժամանակ Մելեագրոսը սպանեց մորեղբորը: Եղբորն սպանելու համար Ալթեան անհիժեց որդուն, որից վիրավորված Մելեագրոսը հեռացավ կովից, և երբ թշնամիները քաղաք խուժեցին, միայն այդ ժամանակ Մելեագրոսը, կնոջ՝ Կլեոպատրայի սղերաներին ընդատաշեղով, նորից կովի մեջ մտավ: Սակայն Ալթեան չներեց որդուն. նա հանեց թաքցրած խամձողը և նետեց կրակը: Երբ խամձողը լրիվ այրվեց, Մելեագրոսը մեռավ:

**ՄԵԿԵՍՊԵՍ (Մեկիստես)**— 1. Արգոսի արքան, Եվրիպի հայրը: 2. Աքայական զինվոր, որին սպանեց Պոլիքամաբը:

**ՄԵՆԵՍԹԵՎՍ**— Պետեոսի որդին, Տրոյական պատերազմում արենական զորքի հրամանատարը: Մենեսթեսն իշխեց Աթենքում արենական մեծ հերոս Թեսևսին հաղթելուց հետո:

**ՄԵՆԵԼԱՎՈՍ**— Ատրևսի կրտսեր որդին, Ագամեմոնի եղբայրը, Հեղինեի ամուսինը:

**ՄԵՆԻՏԻՈՍ**— Պատրոկլեսի հայրը:

**ՄԵՆԻՏՏԱՆ**— Պատրոկլեսն է, որը հոր անունով հաճախ այրպես է անվանվում:

**ՄԵՆՏԵՆՍ**— Կիկոնացիների առաջնորդը:

**ՄԵՆԻՆԻՍ**— Լիդիայի հին անվանումը: Մեոնացիները լիդիացիներն էն:

**ՄԵՍՏՈՐ**— Պրիամոսի որդին:

**ՄԵՐՈՓՍ**— Պերկոսացի, ճշամետր բախտագուշակ:

**ՄԻԳՏՈՆ**— Փոյուզիական արքա:

**ՄԻԿԱԼԵ**— Հրվանդան Փոքր Ասիայում՝ Մամոս կղզու դիմաց:

**ՄԵՐԻՈՆ(ԵՍ)**— Մուլեսի որդին՝ կրեստացի. Էդոմեանի զինակիցն ու օգնականը:

**ՄԻԿԵՆԱ (ՄԻԿԵՆՔ)**— Հոմերոսի ցկարագրած դարաշրջանում՝ Արգոլիդայի գլխավոր քաղաքը, Ագամեմոնի մայրաքաղաքը:

**ՄԻՐՄՈՆՆԵՐ**— Պեկաի և Աքիլեսի տիրույթների բնակչությունը: Ըստ ավանդության, Աքիլեսի պապը՝ Էակոսը, Հերայի կողմից առաքված համաճարակից կորցրեց իր

ողջ ժողովուրդը: Սակայն նրա խնդրանքով հայրը՝ Ջուսը, միջուկներին մարդ դարձրեց, այդ նոր ժողովուրդը կոչվեց «միրմիրներ» («միրմել» հունարեն նշանակում է մրջյուն):

ԵՄ— Լիոնեստս քաղաքի արքայազնը, Բրիսեիսի ամուսինը, սրին սպանեց Աքիլյեսը՝ Լիոնեստսը գրավելիս:

ԻԵՅՈՍ— Գետ Էլիսայուն:

ՈՍ— Ջուսի և փունիկացի թագուհի Եվրոպայի որդին: Մինոսն աչքի էր ընկնում արտակարգ իմաստությամբ և աշդարամտությամբ, այդ պատճառով մահվանից հետո մեռյալների թագավորությունում դատավոր նշանակվեց: Մինոսը Խոյմեհեսի՝ Տրոյայի մոտ կրեոնացիների առաջնորդի Կուպի էր:

ԱՅՆՆԵՐ— Միսիսի թնակիչները. 1. Բուց Միսիսան Փոքր Ասիայում: 2. Մյուսիսան Թրակիայում:

ԻՆՆԵՐ— Ամազոնուհի, որի զերեզմանաբլուրը գտնվում էր Տրոյայի պարիսպների մոտ: Սրա մասին ոչ մի առասպել հայտնի չէ:

ԵԻՍ— Աղբյուրի կամ ակունքի անուն, հավանաբար՝ ստասպելական. հնում կարծում էին, որ այն գտնվում էր Բաբելոնյան, Հունաստանում, բայց վիճում էին, թե հատկապես որ նախնազում:

ԻՈՆՆԵՐ— Ակտորի երկվորյակ որդիները:

ԼԻՈՍ— Ալգիասի դստեր՝ Ագամեդեի ամուսինը:

ՍԱ— Երգեցողության, երաժշտության, պարի ու պոեզիայի աստվածուհի: Մուսաների թիվն, ավանդաբար, ինն է, սպրում են Պաոնաս լեռան վրա և նրանցից յուրաքանչյուրը արվեստի որևէ տեսակի հովանավորն է: Մուսաների հայրը Ջուսն է, մայրը՝ Մենեդիան՝ հիշողության աստվածուհին: Հոներուն ավելի հաճախ դիմում է մի մուսայի, որին ամեն ինչ հայտնի է և որից ամեն բան իմանում է նրանով ոգեշնչված բանաստեղծը:

ՈՆ— 1. Ետնի՝ Պելիասի եղբոր որդին, Արգոնավորդների՝ դեպի Կոլխիդա կատարած արշավանքի առաջնորդը: 2. Աթենացիների գորահրամանատարը, Սիդիուսի որդին:

ՆՆՆԱՆ— Աթենացիների գորահրամանատար Յասոնի որդին՝ Եվմելուրը:

Յ (ՆԱՅԱՆՆԵՐ)— Աղբյուրների և գետերի հավերժամարմել, փերիներ:

ԿՄ— Պոսեյդոնի որդին, Պիլոսի արքան, Նեստորի հայրը, որի անունով Նեստորը հաճախ կոչվում է Նեյլան:

ՈՏՈՆԵՄ— Աքիլլեսի որդին: Հստ ավանդության, Աքիլլեսի մայրը՝ Թետիսը, իմանալով, որ որդին պետք է մտնի Տրոյայան պատերազմում, նրան կանացի հագուստներ հագցրեց և թաքցրեց Սկիրոս կղզու արքա Լակոմեդոնի պալատում՝ նրա դուստրերի մեջ: Նրանցից մեկին՝ Գալդամեին սիրեց Աքիլլեսը, և երբ նա մեկնեց Տրոյա, Գալդամեն ծնեց Նեոպտոլեմին: Հոր վախճանից հետո Ոդիսևսն ու Պիոմեդեսը Նեոպտոլեմին բերին Տրոյա, որտեղ նա բազմաբար մարտնչեց արաբացիների հետ միասին և Տրոյայի գրավման ժամանակ արտակարգ դաժանություն ցուցաբերեց՝ սպանելով Պրիամոսի բոլոր որդիներին, նաև հենց իրեն՝ Պրիամոսին:

ԻՈՐ— Նելևսի որդին, Պիլոսի արքան:

ԻԳՆԵՐ— Ծովային հավերժամարներ, ծովային արքա Նելևսի հիսուն դուստրերը, որոնցից մեկն էր Աքիլլեսի մայրը՝ Թետիսը:

ԻԾ— Տասնապոսի դուստրը, թեթևական արքա Ամփիոնի կինը: Նա ծնեց վեց որդի և վեց դուստր: Հսգարտ իր զավակներով, նա հրամարվեց զոհ մատուցել Լատո-

նեին՝ Ապոլոնի, և Ալեքսանդրի մորը, արհամարհանելով անշուք, որ նա միայն նրկու զավակ է ունեցել: Կառաղած Լատոնն ինչորեք իր զավակներին, որպեսզի նրանք նետա նարեն Նիոբեի որդիներին ու դուստրերին: Ամփիոնոսը, չդիմանալով արդ վշտին, ինքնասպան եղավ, իսկ Նիոբեին աստվածները խղճացին և տեղափոխեցին նրա հայրենիքը՝ Լիդիա, Սիսիլի լեռը և քար դարձրին: Սակայն քար դարձած Նիոբեն դեռ շարունակում է արտասվել՝ օղբալով իր զավակներին:

**ՆՈՅԵՄՈՆ**— Անտիոքի ընկերը:

**ՇՆՈՐՀՆԵՐ**— Քարիտներ՝ գեղեցկության, ուրախության կրեք գեղունի ատվածուհիները:

**ՈՂԻՈՍ**— Հայիզբանների ստաջնորդը, տրոյացիների դաշնակիցը, սպանվեց Ագամեմոնից:

**ՈՂԻՍԵՎՍ**— Հին Հուճատանի մեծագուն հերոսներից մեկը, Լաչերոսի որդին, Էրսովի արքան, Պենելոպեի ամուսինը, Տելեմաքի հայրը:

**ՈԹՐԻՈՆՆԱ**— Կաբեսացի ռազմիկ, որ ուզում էր ամուսնանալ Պրիամոսի դստեր Կասանդրայի հետ:

**ՈՒՆՆՈՍ**— Էտոլական քաղաք:

**ՈՒՄՊՈՍ**— Առապելական լեռ, անմահ աստվածների բնակավայրը:

**ՈՅԻԼԵՎՍ**— 1. Լոկիդացի արքան, «սարագավազ» Այաքսի հայրը: 2. Բլենդրի կուսակալը, որին սպանեց Ագամեմոնը:

**ՈՊՈՅԻՍ** (ՕՊՈՆՏ) — Լոկիդացի գլխավոր քաղաքը, Պատրոկլեսի հայրենիքը:

**ՈՏՈՍ և ԵՓԻԱԼՏԵՍ**— Իփիմեդեայի և Ալովեի (կամ Պոսեյդոնի) որդիները: 9 տարեկանում սրանք արդեն աչքի էին լինկնում նակաչական ուժով և հասակով: Արանք բամտարկեցին Արեսին, և միայն Հերմուսին հաջողվեց ազատել նրան: Ոտոսն ու Եփիալտեսը սպառնում էին քարձրանալ Ոլիմպոս, դրա համար Ապոլլոնը նրանց նետահարեց:

**ՈՐՆՍԵՍ**— Ագամեմոնի և Կլիտեմեստրայի որդին: Հոր մահվանից հետո նա օտարության մեջ դատարարակվեց և, առնականանալով, վերադարձավ և հոր մահվան վրեժը լուծեց Եգիստոսից ու մորից, բայց հետո ենթարկվեց Էրիցնիների հետապնդումներին: Միայն Ապոլլոնն ու Աթենասը կարողացան արդարացնել Որևտեսին և ազատեցին Էրիցնիներից ուղարկվող խելագարության նույաններից:

**ՈՐՄԵԼԻՈՆ**— Թեսալական քաղաք:

**ՈՐՔՈՄԵՆ**— 1. Քաղաք Բեովթիայում: 2. Քաղաք Արկադիայում:

**ՈՎՊՈՍ**— Եպիսոսոց գոյազուխներից մեկը, Փիլևական Մեգեսի համահարզը:

**ՈՓԵԼՏՈՍ**— 1. Տրոյացի: 2. Պեոնացի:

**ՊԱՄՈՆ**— Պրիամոսի որդին:

**ՊԱՆԴԱՊՈՍ**— Լիկիացի աբրալագն, Լիկայոնի որդին, հմուտ նետաձիգ տրոյական զորչից:

**ՊԱՆԴԻՈՆ**— Տեկրոսի գլխավորը:

**ՊԱՆԹՈՅՍ** (ՊԱՆԹՈՅ)— Ապոլլոնի քույրը Դելֆիքում: Անտեմորը նրան Դելֆիքից տարավ Տրոյա, որ նա Ապոլլոնի տանարի քույրը դարձավ:

**ՊԱՆԹՈՅԱՆ**— Պանթոսի որդին՝ հուլիդամալը:

**ՊԱՆՈՊԵ**— Քաղաք Փոնիսում:

**ՊԱՍԻԹԵՆ**— Քարիանների (Շնորհներ) մեկը:

**ՊԱՏՐՈՆԵՍ**— Մեցիսիոսի որդին, Աքիլլեսի մտերիմ ընկերը, որին սպանեց Հելատորը:

**ՊԱՐԻՍ**— Պրիամոսի որդին՝ Ալեքսանդրը, որն առևանգեց Հեղինեին և պատճառ դարձավ Տրոյական պատերազմի:

**ՊԱՐԿՏԱՆՔ** (Պարկան քույր) — Ճակատագրի աստվածուհիները՝ Մոյրաները:

- ՊԱՓԱՂԱՌՆԻՍ**— Փոքր Ասիայի հյուսիսային մասում գտնվող նրա սևծովյան ափերին:
- ՊԵՂԱՍԳՅԱՆՔ**— Հունաստանի հնագույն բնակիչները, որոնք ապրում էին այդ տարածքում մինչև արալացիների գալը:
- ՊԵՆԻՍԱ**— Պոսեյդոնի որդին, որ իր եղբայր Եստինոսը գրկեց թագից և ինքն իշխեց թեսալիական Յոլք քաղաքում: Իր եղբոր որդուն՝ Յասոնին, որ էս էր պահանջում հոր իշխանությունը, Պենիսան ուղարկեց Կոլկիդա՝ ոսկե գեղմը բերելու:
- ՊԵՆԻՆ**— Լեռ Թեսալիայում, Ուիմպոսից ոչ հեռու:
- ՊԵՆՈՊՈՆԵՍ**— Թերակղզի Հունաստանում՝ Բալկանյան թերակղզու ծայր հարավում: Ըստ դիցաբանության, պողպատ է կոչվել հերոս Պելոպի անունով:
- ՊԵՆՆՎՍ**— Ըսկոսի որդին, միմիդոնների արքան, Աքիլլեսի հայրը: Աստվածները Պեննան կենդանի սովին ծովային աստվածուհի Թետիսին, որովհետև Ջևին հաշտանի դարձավ, քի էթե ինքը Թետիսից գավակ ունենա, ապա այդ գավակը կգերազանցի նորը իր ունով: Պեննան և Թետիսի հարսանիքին «պատակտության խնձորի» պատճառով վեճ սկսվեց երեք աստվածուհիների միջև, որն էլ, ի վերջո, հանգեցրեց Տրոյական պատերազմին:
- ՊԵՆՆԵՎՍ**— Բիովթացիների գորավարը:
- ՊԵՆՈՍ**— Կեն Թեսալիայում:
- ՊԵՐՊԵՄԱ**— Տրոյական միջնաբերդի (ակրոպոլ) անունն է:
- ՊԵՐՓԵՏԵՍ**— Միկենացի, Ելիսիսի Կոպրեոս սուրհանդակի որդին:
- ՊԵՐՓՈՍ**— 1. Որեսոսի որդին՝ Էտոլացի: 2. Ուլիսիսի որդին՝ տրոյացի:
- ՊԵՐՓՈՍՆՆ**— Ենուոդով Պերկոտե քաղաքից, ուր գտնվում էր Տրոյայից հյուսիս՝ Հելլեոպոնտոսի մոտ:
- ՊԵՐՍԵՍՍ** (ՊԵՐՍԵՎՍ) — Ջևի և Դանայայի որդին, հերոս, որը կտրեց Գոլդոն-Մեդոուայի գլուխը, ազատեց Անդրոմեդա թագուհուն, որին պետք է խուրճ ծովային հրեշը: Պերսեսը Հերակլեսի նախահայրն է:
- ՊԵՐՍԵՓՈՆ** — Ջևի և Դեմետրայի դուստրը, որին առևանգեց Հադեսը և սմունացալ հետը: Հուսանատության մատնված Դեմետրան փնտրում էր դստերը ամբողջ աշխարհով մեկ: Այդ ընթացքում դաշտերը չորացել էին, հողը անպտուղ էր: Ջևսը, Դեմետրային հանգստացնելու համար, որդեց, որ Պերսեփոնեն տարվա մի կեսը կանցկացնի Ուիմպոսում, մյուս կեսը՝ Հադեսի թագավորությունում: Պերսեփոնեի ստասպելը խորհրդանշում է բնության մահացումը ձմռանը և նրա նարությունը՝ գարնանը:
- ՊԵՐՆ** — Բժշկության հնագույն աստված:
- ՊԵՐՆՆԵՐ** — Հունաստանի հյուսիսային մասում գտնվող Պեոնիայի բնակիչները. այժի ուշ այդ տեղում Մակեդոնիան էր:
- ՊԵՏԵՍՍ** — Մեգեսթեսի հայրը:
- ՊԻԵՐԻԵ** — Նահանգ Հունաստանի հյուսիսում՝ Մակեդոնիայում:
- ՊԻԼՆՆԵՍՍ** — Տրոյացի դաշնակից պարիսպների արքան, Հարպալիոնի հայրը:
- ՊԻԼՈՍ** — Նեստորի թագավորանիստը. ծովային քաղաք Պելոպոնեսի հարավ-արևմուտքում:
- ՊԻՍԱԿՈՍ(ՈՍ)** — 1. Տրոյացի Անտիմաքոսի որդին, որին սպանեց Մենելաոսը: 2. Միմիդոնցի ռազմիկ:
- ՊԻՍՏՈՍ** — Ջևի որդին, լապիթների՝ թեսալական առասպելական ժողովրդի արքան, Թեսեսի քարեկամը: Նրա հարսանիքին հարթած կենտավրոսները հարձակվեցին լապիթ կանանց վրա, այդ պատճառով պատերազմ սկսվեց կենտավրոսների և լապիթների միջև, որին մասնակցում էր նաև Նեստորը: Պիրիթոսը Թեսեսի հետ իջավ Հադեսի թագավորությունը, որպեսզի առևանգի Պերսեփոնեն, ուսկայն Հադեսը նրանց անտեցրեց գարնանարաշ նստարանի վրա, որին նրանք կպան-մնա-

ցին: Թեստին ազատեց Հերակլեսը, որ եկել էր Կերքեր շան ետևից, իսկ Պիրիթոսն այդպես էլ մնաց այնտեղ:

**ՊԱԿԻՈՆ**— Լեռ Թեբեի մոտ:

**ՊԼԵՎՐՈՆ**— Լեռ Էտոլիացում:

**ՊՂՈՒՏՈՆ**— Հադեսն է:

**ՊՈՒԱԼԻՐ(ԻՍ)**— Ասկլեպիոսի որդին, թիշկի հունական բանակում:

**ՊՈՒԱՐԿԵՍ**— Պրոտեսիլավի եղբայրը, փիլական գորքերի առաջնորդը:

**ՊՈԳԵՍ**— Տրոյացի Էտիոնի որդին, Հեկտորի ընկերը:

**ՊՈԼԻԲ**— Անտեոսի որդին, տրոյական հերոս:

**ՊՈԼԻԳԵՍ**— Պրիամոսի որդին:

**ՊՈԼԻԳՐՈ**— Պրիամոսի և Լավոթոյեի կրտսեր որդին, որին հայրը շեր ուզում ուղարկել պատերազմ, Լիկայոնի եղբայրը:

**ՊՈԼԻԳԵՎԿՈՍ**— Տե՛ս ԿԱՍՏՈՐ:

**ՊՈԼԻՄԵԼԵ**— Փիլասի դուստրը, Եվդորոսի մայրը:

**ՊՈԼԻՄԵԼԵ**— Էդիսի որդին, որին Թեբեից արտաքսել էր հրա եղբայրը՝ Էթեոկլեսը և որի ընտանիքի կրակիցիս ստեղծվեց: «Տորթի արջավանքը» անհնաշողության մատնելից, Պոլիմելեն ու հրա եղբայրը մեհամարում սպանեցին միմյանց, Պոլիմիկի բոլոր դաշնակիցները զոհվեցին, բացի Ադրեստոսից:

**ՊՈԼԻՄԵԼ(ԵՍ)**— Պիրիթոսի որդի, Տրոյայի մոտ թեսալական գորահրամանատարներից մեկը:

**ՊՈԼԻՓԵՄ**— Լապիթ գորական:

**ՊՈՍԵՅՐՈՆ**— Քրոնոսի և Ռեայի որդին, Ջևի և Հերակլի եղբայրը, ծովերի աստված:

**ՊՐԻԱՄՈՍ**— Լավոնեդոնի որդին, Տրոյայի արքան: Հեկտորի, Պարիսի հայրը:

**ՊՐԻՏՈՍ**— Տրիինոսի արքան, որը հաղվածեց Բելլերոփոնոսին և մտադիր էր կոյծանել հրան:

**ՊՐՈԹԵՅՆՈՐ**— Արեյլիոսի որդին, բեովթացիների գորավարը:

**ՊՐՈՄԱՐՔՈՍ**— Բեովթացիների առաջնորդներից մեկը:

**ՊՐՈՏԱՄԻԱՎ**— Իփիլիոսի որդին, թեսալացիների առաջնորդը Փիլակեից: Երբ արքայացիները հասան Տրոյային, Պրոտեսիլավն առաջինը հերքե ցատկեց հավից և, գուշակության համաձայն, տեղնուտեղը սպանվեց Հեկտորի ձեռքով:

**ՊՐՈՎԻԱՄՍԵՍ**— Տրոյական հերոս, որ Լամախ մարտնչում էր Հեկտորի հետ կողք-կողքի:

**ՌԱԴՍՄԱՆԳ**— Ջևի և Եվրոպայի որդին, Միմոսի եղբայրը: Նրա արդարամտության համար աստվածները հրան մանվանից հետո հավերժական երանություն պարգևեցին և մեռյալներին դասելու իրավունք տվին:

**ՍԱԼԱՄԻ**— Կղզի Ատտիկայի ափերի մոտ, Տեպանոնի՝ Ալաքսի և Տելքոսի հոր հայրենիքը:

**ՍԱՄՈՍ**— Կղզի Թրակիացի ափերի մոտ:

**ՍԱՆԳԱՐԱՄԵՏ**— Հադեսի թագավորությունը:

**ՍԱՆԳԱՄՊԵՏ**— Ատրիդիլոս թագավորության արքան՝ Հադեսը:

**ՍԱՆԳԱՎՈՍ**— Գետ Փոքր Ասիացում, որ թափում է Սև ծովը:

**ՍԱՐԳԵՐՈՆ**— Ջևի և Բելլերոփոնոսի դստեր՝ Լավոդամեի որդին, լիկիական արքա, տրոյացիների դաշնակիցը:

**ՍԵԼՅԱՆՆԵՐ**— Ջևի՝ Գոդոնում գտնվող պատգամախոսարանի գուշակ-քույրերը, որոնք ապագան գուշակում էին սրբազան կալնու տերևների սուսափյունով կամ հրա վրա նստած թռչունների դալալով:

**ՍԵԼԵՆԻՍ**— Գետ ա) Էլիդայում, ք) Տրոյական երկրում:

**ՍԵՄԵԼԱ**— Կադմոսի դուստրը, որ Ջևից ծնեց գիմու աստված Դիոնիսին:

**ՍԵՍՏՈՍ**— Թրակիական քաղաք:

**ՎԹԵՆԵԼ(ՈՍ)**— 1. Տրոյական պատերազմի մասնակիցներից, Կապանյան որդին, Գիոմ-  
դեաի ընկերը: 2. Գերսեսի և Անդրամեդայի որդին, Եվրիսթեսի հայրը: 3. Իթևենի  
որդին:

**ՄԻՂՈՆ**— Խաչոյր առևտրական քաղաք Փյունիկիայում:

**ՄԻՋԻՓՈՍ**— Կորնթոսի խորամանկ աղբան, որին հաջողվեց նույնիսկ իր Լուկից եկած ման-  
վանը շղթայել: Առավանճների դեմ գործած հանցանքների համար նա պետք է Հա-  
դեսի թագադրությունում անվերջ վեր բարձրացներ ծանր քարը, որը, գազաթին  
չհասած, դարձյալ վաղը էր գլորվում (այստեղից է առաջացել «սիդիփյան աշ-  
խատանք» արտահայտությունը, որ նշանակում է ապարդյուն, անօգուտ):

**ՄԻԿՈՆ**— Քաղաք Պելոպոնեսի կրեսիայում:

**ՄԻՆՏԱՅԻՔ**— Լեմնոս կղզու առասպելական բնակիչները:

**ՄԻՄՈՅԻՍ**— Գեո Տրոյացի մոտ, Սկամանդրի վտակը:

**ՄԻՊԻԼ**— Լևո կիլիկիայում:

**ՄԿՅՄԱՆԴՈ(ՈՍ)**— 1. Գեո Տրոյացի մոտ, որ թափվում է Հելլեսպոնտոսը, (նաև՝ այդ գետի  
աստվածը: 2. Սպարտիկոսի որդին, նմուտ որսորդ, որին սպանեց Մենելավոսը:

**ՄԻԻՐՈՍ**— Կղզի Էգեյան ծովում: Որպեսզի Աքիլլեսը չմասնակցի Տրոյական պատերազ-  
մին, Թետիսը նրան բացքրեց Սկիրոսի արքան Լիկոմեդեսի ապարանքում, նրա  
դուռերիցի մեջ, նրան ևս կանացի հագուստներ հագցնելով: Սակայն Ռիլիսը  
բացեց յաթևությունը, նա եկավ Ալիլոս վանատակացի տեղում, բերելով կամանց  
համար հրապարակյ շատ ապրանքներ, որոնց մեջ որեց նաև զենքեր: Երբ Լիկոմե-  
դեսի դուռերիցը, որոնց մեջ էր նաև զգեստափոխված Աքիլլեսը, զննում էին թան-  
կարժեք իրերն ու կատրուկները, Աքիլլեսը փոխյան զենքերին էր նայում: Այդ ժա-  
նանակ Ռիլիսի ընկերները կեղծ տազնապ բարձրացրին ամրոցի հրատարա-  
կում. արքայադուռերը դեռ ու դեռ փակաան, իսկ Աքիլլեսը նետվեց դեպի զեն-  
քերը: Դրանով նա մասնեց իրեն և առիավում էր Ռիլիսի հետ մեկնել պատե-  
րազմ:

**ՄՈՎԿՈՍ**— Հիպպասի որդին, Քարոսի եղբայրը. սրոյացի:

**ՄՊԱՐՏԻՍ**— Մենելավոսի արքայանիստ քաղաքը:

**ՄՊԵՐՔԻՈՍ**— Գեո Պետալիայում, նաև՝ գետաստված:

**ՄՏԻՔՍ**— Գեո Հադեսի թագադրությունում, որի ջրերով երջվում էին աստվածները:

**ՄՈՒԼԻՄԱՏԻՔ**— Փոքր Ասիայի հարավում բնակվող ժողովուրդ:

**ՄՔԵՂՈՍ**— Իփիդոսի որդին, փովկիացիների առաջնորդը:

**ՏԱԹԻԲԻՈՍ**— Ագամեմոնի ստրիանդակը, ալեյի ուշ նրա որդու՝ Ռիստեսի դաստիա-  
րակը:

**ՏԱՐՆԻ**— Քաղաք Կիլիկիայում:

**ՏԱՐՏԱՐՈՍ**— Քրոնոսի և տիտանների ստորերկրյա բանաղ:

**ՏԵԹԻՍ**— Ուրանոսի և Գեայի դուստրը, Օվկիանոսի կինը:

**ՏԵԼԱՄՈՆ**— Սպարտին կղզու արքան, Էամոսի որդին, Պելեոսի եղբայրը. Ալաթի և Տելկոսի  
հայրը:

**ՏԵԼԵՄԱՔ**— Ռեյսեսի որդին, որին դեռ նորածին, հայրը թողել էր Իրակեում: Նրա անունը  
նշանակում է «նկուսվոր կովոք»:

**ՏԵՆԵՐՈՍ**— Տրոյացի ասիերին նմու փոքրիկ կղզի, որտեղ թաքնվեցին աքայացիները, երբ  
Տրոյացի դարպասների մոտ որպես ծուղակ թողեցին հուկուսական փայտե ձին:

**ՏԻՂԵՍ**— Ինեսի որդին, Արգոսի արքա Գիոմեդեսի հայրը: Սա նույնպես մասնակցում էր  
ընդդեմ Թեթի «որի արշավանքին» և զոհվեց հենց այն պահին, երբ նրա հովա-  
նակոր աստվածուհի Արեմասը նրա համար անմահություն ձևոր բերեց: Հոր անու-



նով Գիտնէդեսը հաճախ անվանվում է Տիպան:

**ՏԻԹՈՆ**— Արեւածագի աստվածուհի Լուսի (Առափառ) սիրականը, Լափոմեդոնի որդին, Պրիամոսի եղբայրը: Լուսի Տիրոնին ստեղծել է տարավ Երկիրը, որտեղ նա ամսահոսքում ստացավ:

**ՏԻՏԱՆՆԵՐ**— Ուրանոսի և Գեայի զավակները, Քրոնոսի եղբայրները: Ելքը Ջևոր սապարլեց Քրոնոսին, տիտանները հանդես եկան ի պաշտպանություն իրենց Էդրո, սակայն պարտվեցին և բանտարկվեցին Տայտարտարոս:

**ՏԻՓԻՆՍ**— Հնագույն քաղաք Արգոլիդայում՝ Պելոպոնեսում:

**ՏԼԻՊՈՒԵՄՈՍ**— Հերակլեսի որդին, Տրոյական պատերազմի մասնակիցներին:

**ՏՄՈՒՍ**— Լեռ Լիդիայում:

**ՏԻԿԵ**— Թեսալական քաղաք:

**ՏՐՈՅԱ**— Իլիոն, Պիլամոսի արքայաճեղար:

**ՏՐՈՒՍ (ՏՐՈՍ)**— Տրոյական արքաների նախահայրը, որի անունով կոչվել է Տրոյան:

**ՏՐՈՒՎՈՍ**— Պրիամոսի որդին:

**ՏԵՎԻՐՈՍ**— Տեպանոնի ապրիոնի որդին, Այաքսի խորթ եղբայրը, հմուտ ճետամկ:

**ՈՒՐԱՆՅԱՆՆԵՐ**— Ուրանոսի և Գեայի զավակները՝ տիտանները:

**ՓԵՒԵՍ**— Տրոյացի Դարեսի որդին, սպանվեց Գիտնէդեսի ձեռքով:

**ՓԵՆՈՔՍ**— Աքիլլեսի դաստիարակը և ավագ ընկերը:

**ՓԵՆՈՓՍ**— Ասիոսի որդին, Փորկեսի հայրը:

**ՓԵՍՏՍ**— 1. Խոշոր քաղաք Կրետե կղզում: 2. Մեծանցի սազմիկ:

**ՓԵՆԵՍ**— 1. Քաղաք Պելոպոնեսում՝ Պիլոսի և Սպարտայի միջև: 2. Գեղար թեսալոսյանում:

**ՓԵՐՆԵՒՍ**— Այն ճավի շինարարը, որով Պարիսն առևանգեց Հեղինեին:

**ՓԹԻՍ**— Պելեսի և Աքիլլեսի թագավորաճեղարը, միրմիդոնների գլխավոր բաղադր:

**ՓԻԼԱԿԵՍ**— Թեսալական Փիլակե քաղաքի ստասպելական ճիմնադիրը, Իփիկլեսի հայրը:

**ՓԻԼԱՍ**— Պոլիմեդեսի հայրը:

**ՓԻՆԿՏԵՏ**— Պեսաի որդին, ճշանավոր ճետամիգ, որն, իբրև ծառանգություն, ստացել էր Հերակլեսի աղեղն ու պարները:

**ՓԻԼԵՍՍ**— Մեգեսի հայրը, որդին Ալգիաս արքայի, որի պատճենը մարդեց Հերակլեսը: Երբ Ալգիասը հրաժարվեց Հերակլեսին տալ խոստացված պարգևը, Փիլեսը հանդես եկավ Հերակլեսի պաշտպանությամբ, որի համար վանդակեց հայրական տնից:

**ՓԼԵՐԱՏԻՔ**— Թեսալական ցեղ, որ մշտական պատերազմների մեջ էր հազուադեպ կախացիների հետ:

**ՓՈՍԱ ԷՏՈՒՅԱՆ**— Էտոլիայում գտնվող Կալիդոն քաղաքի արքան:

**ՓՈՎԿԵԱՏԻՔ**— Փոկիսի (Փոկիդա)՝ Միջին Հունաստանի կենտրոնական նահանգի բնակիչները:

**ՓՈՏՈՒՆՈՒՍ**— Ընդարձակ երկրամաս Փոքր Ասիայում, արևելքում Տրոյարայի անմիջական սահմանակիցը: Հետագայում Տրոյադան դարձավ Փոյուդիայի մի մասը, ուստի և հետագա անսիկ հեղինակների ստեղծագործություններում փոյուդիացիները նույնն են տրոյացիներին:

**ՔԱՂԱԵՐԱՍ**— 1. Լեռ Եվրիա կղզում: 2. Քաղաք Լարդիայում:

**ՔԱՐՈՓՍ**— Հիպպասի որդին, Սովկոսի եղբայրը, արքայացի:

**ՔԵՄԻՎԱՍ (ԱՍ)**— Պրիամոսի որդին:

**ՔԻՄԵՐ**— Հրեշ, որն, ըստ ավանդության, առյուծի գլուխ ուներ, աչծի մարմին և վիշապի սրտ:

**ՔԻՐՈՆ**— Իմաստուն կենտավրոս, Հերակլեսի, Յասոնի, Աքիլլեսի և ուրիշ հերոսների դաստիարակը:

**ՔՍԱՆԹՈՍ**— Գեո Տրոյացի մոտ. կոչվում է նաև Սկամանդր: «Քսանթ» նշանակում է «շեկ, բուռն», ուստի հաճախ այդպես են կոչվում ձիերը (ինչպես, օրինակ, Աքիլլեսի և Հեկտորի ձիերը):

**ՔՐԻՍԵ**— Ապոլլոնին նվիրված առասպելական կղզի:

**ՔՐԻՍԵՆ**— Ապոլլոնի քուրմը, Քրիսեիսի հայրը:

**ՔՐԻՍԵԻՍ**— Քրիսե քրմի դուստրը, Ագամեմնոնի գերուհին, որին նա հրաժարվեց վերադարձնել հորը և պատճառ դարձավ բազում աղետների աքաջական բանակում:

**ՔՐՈՄԻՈՍ**— 1. Մեդեոնի որդին, միսիացիների առաջնորդը: 2. Պրիամոսի որդին:

**ՓՎԿԻԱՆՈՍ**— Շրջանաձև հոսող գետ, որից այն կողմ գտնվում էր անդրաշխարհը: Օվկիանոս-աստվածը տխտան էր, Ուրանոս-երկնի և Գեա-երկրի որդին, Քրոնոսի եղբայրը:

**ՓՐՈՆ**— Առասպելական հսկա-որսորդ, Արշալույսի աստվածուհու սիրեկանը, որ սպանվեց Արտեմիսի նետով: Նրա անունով մի համաստեղություն կոչվեց:

**ՓՐՈՆՏՈՍ**— Պանթեոսի կինը:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|  |     |
|--|-----|
| Թարգմանչի կողմից   | 5   |
| Հոմերոսի պոեմները  | 6   |
| <b>ԵՐԿ ԱՌԱՏՎԻՆ</b>   |     |
| Արածություն, Գևն   | 82  |
| <b>ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ</b>   |     |
| Երազ, Բիովսիա կամ հովանանդես                                 | 40  |
| <b>ԵՐԿ ԵՐՐՈՐԳ</b>  |     |
| Երդումներ, Տեսարան պարսպից, Ալեյանների և Մենելավի մեհակարոտը | 72  |
| <b>ԵՐԳ ԶՈՐՈՐԻՔ</b>   |     |
| Ուխտաթոթություն, Ագամեմնոնը զորանանդես է ունում              | 80  |
| <b>ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ</b>   |     |
| Քաջություն Դիոմեդեսի   | 101 |
| <b>ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ</b>  |     |
| Հեկտորի և Անդրոմաքեի հանդիպումն                              | 120 |
| <b>ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ</b>  |     |
| Մենամարտ Հեկտորի և Այաքսի, Մենելաթաղ                         | 141 |
| <b>ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ</b>  |     |
| Կիսատ մարտ   | 154 |
| <b>ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ</b>  |     |
| Սուաքելություն Աքիլլեսի մոտ                                  | 170 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ</b>   |     |
| Դիոմեդան դրվագ   | 189 |
| <b>ԵՐԿ ՏԱՍՆՄԻԿԵՐՈՐԴ</b>                                      |     |
| Քաջություն Ագամեմնոնի  | 205 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ</b>                                    |     |
| Մարտ պարիսպների շուրջը                                       | 223 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ</b>                                     |     |
| Մարտ նավերի մոտ  | 241 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ</b>                                     |     |
| Խաբեություն Արամազդի դեմ                                     | 263 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ</b>                                     |     |
| Հապածումն նավերից  | 278 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ</b>                                      |     |
| Պատրուկյան դրվագ   | 298 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ</b>                                      |     |
| Սխրագործություն Մենելավոսի                                   | 321 |
| <b>ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ</b>                                      |     |
| Ջինագործություն  | 342 |

|   |     |
|---|-----|
| ԵՐԳ. ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ                             |     |
| Հրամարումն քեհից                              | 360 |
| ԵՐԳ. ՔԱՆՆԵՐՈՐԴ                                |     |
| Դիցամարտ                                      | 373 |
| ԵՐԳ. ՔԱՆՄԵԿԵՐՈՐԴ                              |     |
| Մարտ գետի շուրջը                              | 387 |
| ԵՐԳ. ՔԱՆՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ                           |     |
| Հեկտորի մահը                                  | 404 |
| ԵՐԳ. ՔԱՆՆԵՐԵՔԵՐՈՐԴ                            |     |
| Պատրիկեսի թաղումը. Խաղեր                      | 419 |
| ԵՐԳ. ՔԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ                             |     |
| Փրկանք Հեկտորի                                | 443 |
| Ծանոթագրություններ                            | 466 |
| Բառարան դիցաբանական և աշխարհագրական անունների | 479 |

ՀՈՄԵՐՈՍ

ԻԼԻԱԿԱՆ

Հրատարակության է ներկայացրել համալսարանի արտասահմանյան գրականության  
և գրականության տեսության ամբիոնը

Հրատարակության խմբագիր՝ **Գ. Գ. Բրտյան**  
Նկարիչ՝ **Լ. Ա. Մաղոյան**  
Գեղարվեստական խմբագիր՝ **Ն. Ա. Թովմասյան**  
Տեխնիկական խմբագիր՝ **Հ. Ա. Ալվրջյան**  
Վերստուգող սրբագրիչներ՝ **Ջ. Հ. Մկրտչյան**  
**Ս. Ա. Ղալթախչյան**

ԻՂ 762

Հանձնված է շարվածքի 15.12.1986 թ.: Ստորագրված է ապագա ուղղան 30.01.1987 թ.:  
Չափը 70x90<sup>1/16</sup>: Թուղթ № 1: Տառատեսակը «Նոյր»։ Տպագրության երանակը «Բարձր»։  
Հրատարակչական 28,15 մամուլ: Տպագրական 31,25 մամուլ: 30,56 պրոպանակային մամուլի:  
Տպաքանակ 30000: Պատվեր 2431: Գինը՝ 2 ռ. 70 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մուսկյան փ. № 1:  
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мухоман № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արտվան փ. № 52:  
Типография Ереванского университета, Ереван, ул. Абелая № 52.

